Another feature of Sweden's modernity is its individualism. The findings of the World Values Survey show that Sweden stands out as the country with the highest scores in secular-rational and self-expression values globally.⁵⁵ This is connected to individualism, as the self-expression values focus on the right of every individual to shape his or her life independent of family and society. Swedish individualism has been called "state individualism"⁵⁶ as the state is the guarantor for every individual's choices. When people in Sweden need help—when growing old, becoming sick or unemployed, for example—they do not have to rely on their families. Instead, the state will provide them with the support they need. One of my respondents found it strange, even horrifying, that some people in Sweden only visit their parents once or twice a year. This is very different from traditional Armenian life, which is family-oriented. When Armenians—and others from family-centered cultures—come to Sweden, they find the country's individualism strange, while for those who want to go their own way and maybe challenge their community's norms, Sweden is a good country as it cherishes individual choice above all. Most Armenians in Sweden combine the best of both cultures: they respect the freedom given to the individual but appreciate strong family ties.

Another aspect of Swedish modernity is secularism. Sweden is one of the most non-religious countries in the world, with only a small minority of respondents in a number of different surveys claiming that religion is important to them. A 2018 study by Pew Research Center ranked 34 European countries according to how religious their population was; Sweden was ranked number 30 (Armenia number 2).⁵⁷ Representatives of both the Armenian Apostolic and the Armenian Catholic Church in Sweden claimed that the Swedish-Armenian community generally has remained loyal. However, they admitted that younger Armenians in the country are somewhat influenced by secularist ideas and that this might increase in the future.⁵⁸ Another respondent told me that her

⁵⁵ Ronald Inglehart et al. (eds.), *Human Beliefs and Values. A Cross-Cultural Sourcebook on the 1999-2002 Values Surveys*, Mexico City, Siglo XXI Ed, 2004, pp. 11-14.

⁵⁶ Henrik Berggren & Lars Trägårdh, *Är svensken människa? Gemenskap och oberoende i det moderna Sverige* [Is the Swede a human being? Community and independence in modern Sweden], Stockholm, Norstedt, 2014.

⁵⁷ <https://www.pewresearch.org/fact-tank/2018/12/05/how-do-european-countries-differ-in-religious-commitment/>.

⁵⁸ In the much older Armenian community in Manchester one person put it like this: "Back home the church was much more connected to the community and the priest used to visit

teenage daughter was the only person in her class in school who believed in God, while a young man active in the church was pessimistic about the future. According to him young Armenians are already estranged from the church and the faith, and the church is not willing to make the necessary changes to present itself in a more attractive light to the young.

So why have Armenians chosen to settle in Sweden? Some of my respondents came to Sweden because their families knew people who were already living there. Others chose Sweden because the country is known for being a democratic and well-functioning welfare state, which offers a high degree of personal freedom, good education prospects and a fair degree of tolerance and security to ethnic minorities. Some have come to Sweden to study, but have decided to stay permanently. The culture shock associated with moving to another country is moderated by the existence of Armenian networks in many, although not all, places. As with other immigrant groups, Armenians in Sweden tend to settle in cities and towns with a substantial number of compatriots (Stockholm, Uppsala, Södertälje, Västerås).

Another reason for many Armenians coming to Sweden is that the country had a very generous immigration and refugee policy for a long time. People escaping wars in Iraq or Syria could easily get asylum in Sweden. This policy changed dramatically in the autumn of 2015.⁵⁹ Immigrants who settle in Sweden have the right to apply for citizenship after five years, and such applications would normally be approved. Once they become citizens, these new Swedes have the same rights and responsibilities as other Swedes.

CONCLUSIONS

Sweden has dramatically changed from a homogenous to a genuinely multicultural country. Although most Swedes find this development positive, there are also those who see “mass immigration” as a major source of problems like segregated neighborhoods and growing gang violence. Compared to many other countries, it takes a long time in general for most of the refugees arriving in Sweden to get a job and be able to earn a living.⁶⁰

us regularly, they do here but you have to make an appointment. It is not the same. The young over here are not interested in going to church... it is boring for them, maybe they will change when they get older... I would like my boys to attend the church, but I cannot force them; they come with us sometimes on special occasions.” Aghanian, p. 157.

⁵⁹ The Social Democratic Prime Minister Stefan Löfven has stated, “It became particularly clear after the autumn of 2015 that Sweden’s migration policy was not sustainable” and therefore needed to be reformed (i.e., tightened). “Swedish Social Democrats want to halve refugee numbers”, *The Local* May 4, 2018 (<https://www.thelocal.se/20180504/swedish-social-democrats-aim-to-halve-refugee-numbers>).

⁶⁰ Half of all refugee job seekers do not have a job after eight years in Sweden. “Not utilizing the skills of immigrants is a huge waste of resources”, *The Local* February 27, 2019

This is not the case for Armenians in Sweden. Their tradition of loving and valuing education and their skills as entrepreneurs have guaranteed them remarkable upward mobility. The fact that Sweden is characterized by tolerance, democracy and rule-of-law has made them appreciate their new homeland. Sweden is also generous towards immigrant communities, supporting ethnic organizations economically. It is therefore possible to integrate into Swedish society and at the same time preserve one's Armenian identity. However, in a free and welcoming society assimilation is an attractive option. While the young Armenians I have spoken to tell me that, despite being Swedish in many ways, they still self-identify primarily as Armenians, the Armenian community in Sweden is young. The more time that passes, the further along the assimilation scale it, or at least many of its members, will find themselves.

So what will happen in the long run? Experience shows that with the third generation of immigrants the struggle to preserve one's ethnic identity becomes hard. In Sweden the Armenians are now first and second generation immigrants, so the real challenge lies before them. The present Swedish-Armenians will no doubt have Armenian children. The question remains, however: Will they have grandchildren who self-identify as Armenians?

ԿՏՈՐ ՄԸ ԱՐԵՒԵԼՔ՝ ՀԻՒՍԻՍԻ ՄԷՋ. ՇՈՒԵՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ
(Ամփոփում)

ԱՎԱՆԹԷ ԼԻԻՆՏԿՐԷՆ (Svante.Lundgren@ctr.lu.se)

1950ականներին Շուեդ չունէր այլեւ միատարր էթնիք բնակչութիւն: Յիրափ, Ի. դարու երկրորդ կէտէն սկսեալ մեծաթիւ *օտարներ* բնակչութիւն հաստատեցին Շուեդի մէջ, այն համեմատութեամբ որ 2016ի Շուեդի բնակչութեան 17,8%ը օտարածին է, այսինքն չէ ծնած Շուեդի մէջ:

1950ականներէն սկսեալ հատուկեւտ հայեր սկսած են հաստատուիլ Շուեդ: Անոնց թիւը աւելցաւ մանաւանդ վերջին տասնամեակներուն՝ Լիբանանի, Իրաքի, Սուրիոյ տագնապներուն եւ Հայաստանէն արտագաղթի հետեւանքով:

Այսօր Շուեդի հայութիւնը կը հաշուէ 10-13,000 հոգի:

Հեղինակը այս յօդուածով կը ներկայացնէ համառօտ դիմանկարը շուեդահայութեան. անոր կազմաւորումին, կազմակերպութեան, կազմակերպութեանց հարցերը, ինքնութենական խնդիրները, համարկում-ծովում իրավիճակը, Հայոց Յեղասպանութեան ճանաչողական դրսեւորումները եւ՝ շարք մը նշանատր շուեդահայեր:

(<https://www.thelocal.se/20190227/not-utilizing-the-skills-of-immigrants-is-a-huge-waste-of-resources>).

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՇՔՇՈՒԿՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՔ (2010-2020)

ՎԱՀՐԱՄ ՀՈՎԵԱՆ (vhovyan@yandex.ru)

ՄՈՒՏՔ

Վերջին 2010-20 տասնամեակում, սկսած 2011ից, մի շարք գործօնների բերմամբ, Թուրքիայում քրիստոնեայ փոքրամասնություններից բռնագրանում է եկեղեցական գոյքի վերադարձի թեման պարբերաբար աշխուժանում է հասարակաբաղաբական եւ գիտավերլուծական խօսույթում: Պետութիւնը, հետապնդելով արտաքին աշխարհում իր համար ժողովրդավարական, կրօնական փոքրամասնությունների հանդէպ հոգացող երկրի պատկեր կերտելու նպատակ, արտաքուտ բարեացականութիւն է ցուցաբերում հարցի լուծման խնդրով: Գործնականում, սակայն, տարատեսակ խնչնդոտներով տապալում գործը: Պետութեան օգտագործած եղանակներից է դիանակալական քաջքշուկները¹: Իսկ դրա դրսետուման ձեւերից՝ տեսական դատական գործընթացներ, որոնք ձգտում են տարիներով:

Գարագիտի (Կ. Պոլիս) Սանասարեան խան-պանդոկի շէնքի օրինակը թերեւս դրա լաւագոյն եւ ամենաթարմ ապացոյցն է: Վերջինիս վերադարձի ձգձգման պատումի եւ յօդաածում ներկայացում մի շարք այլ օրինակների համադրութիւնը ցոյց կը տայ թուրք պետական քաղաքականութեան ընթացքը համայնքային գրաւեալ-իրացում գոյքերի խնդրով: Դրա ընդհանրացումին դէմ գործող, հակառակ ընթացք որդեգրած դատական գործողութիւնները չնչին բացառութիւններ են: Նոյնն է ընթացքը նաեւ ոչ-հայ քրիստոնեայ փոքրամասնութեանց (յոյներ, քրիստոնեայ արաբներ, ասորիներ, անտարանական տարբեր եկեղեցիներ) խնդրով: Ապացոյցը Պոլսին մերձակայ Հէլլեի կղզու յոյն աստուածաբանական ճեմարանի վերաբացման ձգձգումն է. իշխանութիւնները այն արհեստականօրէն կապում են Յունաստանում մուսուլմանների դրոպեան «բարելաման» խնդրի հետ²:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԽԱՆԻ ՀԱՐՅՈՒ

2018ի սկզբին Թուրքիայի վճռաբեկ դատարանի վճռով ճանաչուել էր Պոլսոյ հայոց պատրիարքութեան սեփականութեան իրատւնքը Սանասար-

¹ Վահրամ Հովեան, «Եկեղեցական գոյքի վերադարձման խնդիրը որպէս հայոց պահանջատիրութեան բաղկացուցիչ», *Հայկազեան հայագիտական հանդէս, հրդ. ԼԵ.*, Պելրոպ, 2015, էջ 613:

² Աւելի մանրամասն տե՛ս՝ *Greece Calls for Reopening of Constantinople's Orthodox Seminary (Vid & Pics)*, https://www.thenationalherald.com/archive_politics/arthro/greece_calls_for_reopening_of_constantinople_s_orthodox_seminary_vid_pics-53327/ (մատչում 7 Յունիս 2021):

եան խան շէնքի նկատմամբ³: Թում էր՝ մօտ 4 տարի տեաճ դատական գործընթացը հասել է հանգուցալուծմանը, եւ հայ համայնքը անասելի ջանքերով վերջապէս կարողացել է ետ վերցնել այդ շէնքը, ինչը տնտեսական առումով կարեւոր նշանակութիւն ունի նրա համար: Սակայն պետութիւնը՝ ի դէմս Հիմնադրամների (վաքըֆ) Ընդհանուր Տնօրինութեան (ՀԸՏ), նոր դատ էր բացել, եւ 2019 Փետրուարի սկզբին նոյն դատարանը մէկ այլ վճռով բեկանել է ի՛ր իսկ որոշումը, ինչը նշանակում է, որ Սանասարեան խանը չի ճանաչում որպէս հայոց պատրիարքութեան սեփականութիւն:

Դատարանի այս վճիռը խորը հիասթափութիւն պատճառեց հայ համայնքին: Այնուամենայնիւ, Պատրիարքութիւնը մտադիր է շարունակել իրաւական պայքարը եւ «կը պատրաստուի նոր դիմում կատարելու Թուրքիոյ Բարձրագոյն Սահմանադրական Արեան»⁴: Թէ որքան կը տեփ այս դատական գործընթացը եւ ինչ հանգուցալուծում կ'ունենայ՝ դժուար է ասել:

1881ին էրզրումցի հայ քարեքար Մկրտիչ Սանասարեանի⁵ կողմից կառուցուած հայկական այս պատմական շինութիւնը, որի կառուցման նպատակն էր եկամտոներ ապահովել էրզրումի համանուն հայկական վարժարանի⁶ համար եւ որը Թուրքիայի Հանրապետութեան հռչակումից յետոյ պետականացուել է եւ օգտագործուել այլ նպատակներով (բանտ, դատարանի շէնք), ներկայում վարձակալութեան է տրուած ՀԸՏի կողմից⁷: Ցաաւի է, որ վարձակալն իրականացրել է վերանորոգման աշխատանքներ՝ «... վնաս պատճառելով շէնքի պատմական դիմագծութեան»⁸:

Սանասարեան խանի վերաբերեալ Թուրքիայի վճռաբեկ դատարանի նոր վճիռը ամրապնդում է այն վարկածը, որ նախորդ վճիռը, որով ճանաչուել էր Պոլսոյ հայոց պատրիարքութեան սեփականութեան իրատունքը շէնքի նկատմամբ, կայացուել էր այն ժամանակ պատրիարքական ընտրութիւնների ձախողումից յետոյ հայ համայնքում առաջացած վրդովմունքը մեղմելու նպատակով: Ժամանակի ընթացքում այդ վրդովմունքի հանդարտումից յետոյ այլեւս կարիք չկար զիջումների գնալ: Հետեաբար, կարելի էր նաեւ վերանայել նախկինում կայացուած հայանպաստ վճիռը:

³ «Արամ սրբազան շահեցալ վազըֆներու ընդհանուր տնօրէնութեան դէմ բացուած դատը», *Նոր Մարմարա*, 16 Փետրուար 2018:

⁴ «Սանասարեան խանը պատրիարքարան վերադարձնելու հարցի կապակցութեամբ դատարանը յանկարծ փոխեց իր նախորդ որոշումը, որ հայոց պատրիարքարանի ի նպաստ էր», *Նոր Մարմարա*, 6 Փետրուար 2019:

⁵ Մկրտիչ Սանասարեանի մասին տե՛ս՝ *Հայկական սովետական հանրագիտարան*, *Կոր.* 10, Երեւան, 1984, էջ 175:

⁶ Սանասարեան վարժարանի մասին տե՛ս՝ *Հայկական սովետական*, էջ 175:

⁷ «Ստամբուլի հայկական «Սանասարեան խան» շէնքը վերածնուել է հիւրանոցի», *Ազգ.* 13 Դեկտեմբեր 2019:

⁸ «Սանասարեան խան»ը դարձեալ քանավէճի առարկայ...», *Նոր Մարմարա*, 3 Դեկտեմբեր 2019:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾԸ ԵՒ ԿՐԿՆՈՒՈՂ ԱՅԼ ՆՄՈՒՇՆԵՐ

Այլ այլ վառ օրինակ է Երուսաղեմի հայոց պատրիարքութեան⁹ Մրցոց Յակոբեանց միաբանութեանը պատկանող կալուածների վերադարձման դատական գործընթացը: Խօսքը անելի քան 100 կալուածների մասին է, որոնք հիմա պատկանում են ՀԸՏին: Պատրիարքութիւնը նախ դիմել էր թուրքական վարչական դատարան՝ այդ կալուածները ետ ստանալու պահանջով: Հարցով անձամբ զբաղում է Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արք. Մանուկեանը: Վարչական դատարանի կողմից՝ մերժուելով՝ 2016 Օգոստոսի 26ին, պատրիարքութիւնը դիմել է սահմանադրական դատարան: Անելի քան երեք տարի յետոյ վերջինս կայացրել է վճիռ, թէ վարչական դատարանը պատշաճ չէր քննել գործը, ինչը նշանակում է դիմողի՝ արդար դատաքննութեան իրատնքի խախտում: Հետեաքար գործը ենթակա է վերաքննութեան Անկարայի 15րդ վարչական դատարանում¹⁰:

Այսպիսով, սահմանադրական դատարանը ոչ թէ լուծել է թնճուկը, այլ ուղարկել նոր քննութեան, ինչը նշանակում է դատական գործընթացի նոր շրջափուլ: Իսկ թէ որքան կը տեւի գործի վերաքննութիւնը եւ ինչպիսին կը լինի ելքը՝ դժուար է կանխատեսել:

Բացի խնդրի լուծումը տարիներով ձգձգելու եւ այդկերպ խափանելու նպատակից, նման մարտավարութիւնը թուրքական կողմի համար արդիւնաւէտ է նաեւ այն առումով, որ կանխում է գործի քննութիւնը միջազգային ատեաններում՝ Մարդու Իրաւունքների Եվրոպական Դատարանում (ՄԻԵԴ), քանի որ վերջինս քննում է միայն այն գործերը, որոնք անցել են տուեալ երկրի դատական համակարգի բոլոր ատեաններով:

Այդ հիմքով էր, որ ՄԻԵԴ-ը 2017ին մերժեց¹¹ քննել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դիմումը¹²: Նախապէս կաթողիկոսութիւնը դիմել էր Թուրքիայի

⁹ Օսմանեան շրջանում պատրիարքութեան գերիշխանութիւնը տարածուել է Սիրիայի, Լիբանանի, Կիպրոսի եւ մինչեւ 1839՝ Եգիպտոսի թեմերի վրայ: Այժմ նրա իրաւասութեան տակ են միայն Պաղեստինի ու Իսրայէլի հայկական եկեղեցիները, նաեւ՝ Յորդանանի հոգեւոր հովուութիւնը («Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի», *Հայ Ափիոսք հանրագիտարան*, Երեւան, Տիգրան Մեծ հրատ., 2003, էջ 697-98):

¹⁰ «Թուրքիոյ սահմանադրական ատեանը Երուսաղեմի հայոց պատրիարքութեան ի նպաստ որոշում արձակեց», *Նոր Մարմարա*, 2 Հոկտեմբեր 2019:

¹¹ «Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս քննադատեց Եվրոպայի Մարդկային Դատարանի անարդար մօտեցումը Սիսի կաթողիկոսարանի վերադարձի դատին գծով», *Հասկ*, 2017(9-10) Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 637-8:

¹² Քեմալական իշխանութիւնների պարտադրմամբ 1921ի վերջին Սահակ Բ. Խաչայեան կաթողիկոսը լքում է Սիսի կաթողիկոսարանը, որից յետոյ այն դադարում է լինել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նստավայր, իսկ 1922ի սկզբին այն անբնակ է ու թալանւում («Հայաստանայաց Առաքելական», էջ 695-6):

ասհմանադրական դատարան (2018 Ապրիլ 28)¹³, իսկ վերջինս էլ մերժել էր հայցի քննութիւնը՝ պատճառաբանելով որ դիմումի հասցեատերն ինքը չէ:

Դատական քաջքնուկները երբեմն այն աստիճանի են հասնում, որ արդէն իսկ կայացուած դատավճիռներն իրականացնելու համար հայ համայնքի պատկան մարմինները ստիպուած են լինում դիմել դատական նոր գործընթացի: Օրինակ՝ Բէլքըզի հայկական Ա. Նիկողայոս եկեղեցու տարածքում գտնուող հողամասի բռնագրաման առնչութեամբ կայացուած դատավճիռը: Ստամբուլի մայր քաղաքապետարանը 2015-16ին կատարուած մի ճանապարհաշինարարական նախագծի հիմամբ բռնագրաւել էր յիշեալ հողամասը, որի դիմաց եկեղեցու թաղային խորհուրդը դիմել էր դատարան: Վերջինս կայացրել էր 24 միլիոն թուրքական լիրա հատուցելու որոշում:

Այս խնդիրն ունի երկու հարթութիւն: Առաջինն այն է որ բռնագրաւուած եկեղեցական գոյքի փոխարէն տրուած դրամական փոխհատուցումը գուցէ համարժէք է (թէեւ գումարի մի մասն օգտագործուելու է փաստաբանների վարձատրութեան եւ դատական գործընթացի ծախսերի համար), սակայն նշանակութեան առումով այն համարժէք չէ: Բանն այն է, որ հատուցուելիք գումարը՝ անկախ իր մեծութիւնից, մէկանգամեայ «եկամուտ» է: Մինչդեռ հայ համայնքին պատկանող գոյքը շարունակական եկամուտ է ապահովում համայնքային կառոյցներին՝ վարձակալութեան եւ այլ միջոցներով: Կը կարողանա՞յ արդեօք թաղային խորհուրդը յիշեալ գումարով ձեռք բերել բռնագրաւուած հողամասին համարժէք հողամաս, թոյլ կը տա՞ն արդեօք դա թուրքական իշխանութիւնները՝ դժուար է ասել: Դատելով նմանատիպ այլ դէպքերից՝ կարելի է ասել, որ տարւում է հայկական համայնքային հաստատութիւնների շարունակական եկամտի աղբիւրից զրկելու – հետեւաբար եւ աղքատացնելու - քաղաքականութիւն:

Երկրորդ հարթութիւնն այն է, որ անգամ դատարանի վճռով որպէս հատուցում նախատեսուած գումարը եկեղեցու թաղային խորհուրդը չի կարողանում ստանալ, քանի որ քաղաքապետարանը ...չի շտապում իրականացնել դատարանի վճիռը: Արդիւնքում նշուած գումարի վրայ անելանում են տոկոսներ: 2019 Ապրիլի դրութեամբ գանձուելիք գումարը հասնում էր 24,4 միլիոն թ.լ.: Իվերջոյ, թաղային խորհուրդը ստիպուած էր «դատական գանձումի հետապնդումի» դիմում կատարել քաղաքապետարանի դէմ¹⁴: Կը վճարուի՞ արդեօք այդ գումարը միանուագ, թէ մաս-մաս՝ յընթացս փոշիացուելով, կամ գուցէ նո՞ր դատական գործընթաց կը յարուցուի քաղաքապետարանի կողմից՝ նոր ձգձգմանը համար...: Վերջապէս, հաշտի առնելով

¹³ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դատ քացաւ Թուրքիոյ ասհմանադրական դատարանին մօտ», *Հասկ*, 2015:4 Ապրիլ, էջ 240-1:

¹⁴ «Պէլքըզի թաղային խորհուրդը կը սպասէ որ քաղաքապետութիւնը վճարէ դատարանէն ճշտուած գումարը որ 24 միլիոն 400 հազարի հասած է», *Նոր Մարմարա*, 20 Ապրիլ 2019:

թուրքական լիրայի շարունակական արժեզրկումը՝ վճարուելիք գումարը չի ունենայ այն նոյն գնողունակությունը՝ ինչ վճռի արձակման պահին:

Աւելի ցցուն օրինակ է Գեդիքփաշայի թաղային խորհրդից բռնագրավուում 3100 քառ.մ. հողամասի դեպքը, որի պատմությունը սկսում է դեռես 1944ին: Այդ թուականին պետությունը բռնագրաւել էր սոյն հողատարածքը, սակայն յետագայում գտնուած արաբերէն մի արձանագրութիւնից պարզուել է, որ հողամասը իրականում պէտք է լինէր ոչ թէ 3100, այլ 1900 քառ. մ., եւ պետութիւնը խորհրդին վճարել է 1900ի համար՝ իրականում, սակայն, բռնագրաւած լինելով 3100 քառակուսի մետր:

Գեդիքփաշայի թաղային խորհուրդը դիմել էր դատարան մնացեալ 1200 քառ.մ.ի համար եւս հատուցում ստանալու: Աւելի քան 10 տարի անց, դատարանը վճռել է, որ քաղաքապետարանը պէտք է վճարի 8.5 միլիոն թ.լ.՝ իրրեւ փոխհատուցում յիշեալ 1200 քառ.մ. հողատարածքի համար: Քաղաքապետարանը մինչ օրս վճարել է յիշեալ գումարի փոքր մասը (2.5 միլիոն թ.լ.)՝ խոստանալով մնացեալ մասը (6 միլիոն թ.լ.) վճարել յետագայում, այն էլ՝ ոչ թէ միանուագ, այլ մաս-մաս¹⁵:

Այս պատմութեան արժեւորումն կարելի է ամփոփել հետեւեալ կէտերով.

1. Պետութիւնն ի սկզբանէ Գեդիքփաշայի թաղային խորհրդին մասնակիօրէն է փոխհատուցել պետականացուած հողամասի դիմաց:
 2. Մնացած մասի փոխհատուցման համար սկսուած դատական գործընթացը տեւել է անտրամաբանական երկար՝ աւելի քան 10 տարի:
 3. Քաղաքապետարանը դատարանի վճռի իրականացումը համարում է ոչ թէ պարտաւորութիւն, այլ՝ բարիկամեցողութեան դրսեւորում իր կողմից:
 4. Հետեւաբար, այն իրեն իրաւունք է վերապահում փոխհատուցուելիք գումարը վճարել իր հայեցողութեամբ՝ մաս-մաս, ինչը նշանակում է նախատեսուած գումարի փոշիացում:
 5. Յարդ քաղաքապետարանի կողմից վճարուել է գումարի մօտ 30%ը:
 6. Մնացած մասի վճարման ժամկետերի եւ չափաքանակների մասին յստակութիւն չկայ, ինչը նշանակում է, որ այն կարող է յետաձգուել անորոշ ժամանակով կամ էլ առկասարակ չիրականացուել:
 7. Պետականացուած գոյքի դիմաց դրամական փոխհատուցումը համարժեք չէ, քանի որ, ինչպէս նշուեց վերը, դա մէկանգամեայ «եկամուտ» է, մինչդեռ գոյքի առկայութիւնը շարունակական եկամտի աղբիւր է համայնքային հաստատութիւնների համար:
- Ուստի, վճիռը միայն առաջին հայեացքից է յաջողութիւն համայնքի համար, իսկ մանրամասների մէջ ոգետրիչ շատ քիչ բան կայ:

¹⁵ «Կետիկփաշայի թաղային խորհուրդը շահեցաւ բռնագրաւուած 1200 մետր քառակուսի հողամասի 'ոխարժեքը», *Նոր Մարմարա*, 22 Նոյեմբեր 2019:

ԴԱՆԴԱՂԱՇԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ... ՀՐԱՆԴ ԴԻՆՔ

Թուրքական դատական համակարգի դանդաղաշարժությունը ակնյայտ է ոչ միայն եկեղեցական գոյքի վերադարձման, այլև հայ համայնքին առնչուող այլ հարցերում եւս: Նկատելի է նաեւ խնդիրն արհեստականորէն այնքան ձգձգելը՝ մինչեւ առարկայական հանգամանքների բերումով այն այլեւս դադարի գոյություն ունենալուց: Այդպիսին է Պոլսոյ հայոց պատրիարքի ընտրութեան նախաձեռնարկ մարմնի բողոքի քննութիւնը սահմանադրական դատարանում: Դեռեւս 2016ին մարմինը (ձեւատրուած 2008ին՝ պատրիարքի հիւանդութիւնից յետոյ¹⁶) դիմել էր սահմանադրական դատարան՝ պետութեան կողմից պատրիարքական ընտրութիւններ անցկացնելու թոյլտուութեան մերժումը զանգատարկելու նպատակով: Այս դատական գործընթացը սկսուել էր դեռեւս 2010ից: Երկու անգամ մերժում ստանալով՝ մարմինը խնդիրը տեղափոխել էր սահմանադրական դատարան: Վերջինս գործը քննել է...երեք տարի անց՝ 2019 Մայիսի 22ին¹⁷: Եւ չնայած վճիռը՝ հիմնուած սահմանադրութեան 24րդ յօդուածի վրայ, եղել է յօգուտ մարմնի, թէ՛ «Պատրիարքական ընտրութիւնները զանազան պարճատնէրով խախտելը կրօնի ազատութեան խախտում է»¹⁸, այնուամէնայնիւ, դա արդէն ժամանակավրէպ որոշում էր, քանի որ նոյն թուականի Մարտի 8ին մահացել էր պատրիարքը, եւ յաջորդ՝ 85րդ պատրիարքի ընտրութիւններն ինքնաբերաբար դարձել էին օրակարգային¹⁹: Այսպիսով, ընտրութիւններ անցկացնելու թոյլտուութիւն ստանալու համար համայնքի յարուցած իրական գործընթացը (Թուրքիայի դատական համակարգում ձգձգուեց մօտ 9 տարի՝ մինչեւ առարկայական հանգամանքների բերումով դրա դուրս գալը օրակարգից:

Իսկ 2007ին սպանուած հայ լրագրող, *Ակոս շարքաթերթի* գլխատր խմբագիր Հրանդ Դինքի ոճիրի գործով դատավարութեան մասին երկար կանգ առնելն իսկ աւերորդ է, քանի որ այն վերածուել է անվերջանալի թուացող մի գործընթացի. շարունակուած է արդէն անելի քան տասնչորս տարի, իսկ ելքն այդպէս էլ չի երեւում:

¹⁶ Ռ. Մելքոնեան, «Պոլսոյ հայոց պատրիարքութեան ներկայ վիճակի մասին», http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4918 (մատչում՝ 18 Դեկտեմբեր 2019):

¹⁷ «Սահմանադրական առեանը այսօր պիտի քննարկէ պատրիարքական ընտրութեան առնչութեամբ ներկայացուած թղթածրարը», *Նոր Մարմարա*, 22 Մայիս 2019:

¹⁸ «Սահմանադրական առեանի վճիռը՝ պատրիարքական ընտրութիւններու հարցի մասին», *Նոր Մարմարա*, 24 Մայիս 2019:

¹⁹ Նոր պատրիարքի ընտրութիւնների երկփուլ գործընթացը տեղի ունեցաւ 2019 Դեկտեմբերի 8ին եւ 11ին. պատրիարք ընտրուեց Սահակ եպս. Մաշալեանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

Չի քաջառոււմ, որ հայկական խնդիրներով գործերի տեսական քննութեան համար առկայ են նաեւ առարկայական պատճառներ, օրինակ՝ դատարանների ծանրաբեռնուածութիւնը, քննուող գործերի բարդութիւնը են.: Այնուամէնայնիւ, եթէ թուրքական իշխանութիւններն անկեղծ են հայապատկան գոյքը վերադարձնելու հարցում, ապա դրա համար կան դիրքին հնարատրութիւններ, օրինակ՝ նուիրատուութիւնը կամ խորհրդանշական գներով վաճառքը: Այս միջոցները, ըստ էութեան, նոյնպէս իրաական են կամ գոնէ ոմեն այդպիսի երանգ, եւ թոյլ են տալիս խուսափել երկարատեւ դատական գործընթացներից: Ամենամեծ ցանկութեան դէպքում անգամ անհնար է ենթադրել, որ թէ՛ Թուրքիայում, թէ՛ հայ համայնքում չկան արհեստավարժ իրաւաբաններ, ովքեր քաջատեղեակ են բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձման այս եւ այլ դիրքին միջոցների մասին:

Դրանց փոխարէն բարդ եւ ժամանակատար դատավարութիւնների ընտրութիւնը ցոյց է տալիս, որ թուրքական իշխանութիւնների՝ դեռեւս 2011ին ընդունած որոշումը քրիստոնեայ համայնքներից գրաւուած գոյքը վերադարձնելու մասին, սոսկ ժողովրդավար եւ իր փոքրամասնութիւնների նկատմամբ հոգ տանող պետութեան պատրանք ստեղծելու նպատակ է հետապնդում: Գործնականում թուրքական պետութիւնն իր զինանոցում ունի բազմաթիւ գործիքներ իր իսկ որոշման իրականացումը վիժեցնելու համար եւ կիրառում է դրանք: Իսկ այդ գործիքներից մէկն էլ երկարատեւ, հիմիչ եւ յոգնեցուցիչ դատական գործընթացներն են՝ անորոշ հեռանկարով: Նման անօգուտ իրաական քաջբշուկները, որոնք նաեւ ծախսատար են՝ հաշտի անտելով, օրինակ, փաստաբանական ծառայութիւններից օգուտելու համար վճարուող գումարները, կարող են յուսահատութիւն առաջ բերել հայ համայնքի մօտ՝ ստիպելով նրան կամաւոր հրաժարուել եկեղեցական գոյքի վերադարձման գործողութիւններից:

Հայկական համայնքային կառոյցները Թուրքիայում այսօր դրամական լուրջ խնդիրներ են դիմագրաւում: Օրինակ՝ կրթական հաստատութիւններն իրենց ամավարկը հասասարակշռելու համար ամէն տարի ստիպուած են լինում կազմակերպել հանգանակութիւններ: Մինչդեռ կալուածների վարձակալութեան կամ այլ միջոցներով շահագործման դէպքում այդ խնդիրը հնարաւոր կը լինէր հեշտութեամբ լուծել:

Հայկական կալուածները մեծօրինող թաղային խորհուրդները ստացուող եկամուտներից վճարումներ են կատարում նաեւ այնպիսի կարեւոր համայնքային հաստատութիւնների, ինչպիսիք են մամուլի օրգանները (իրենց ծանուցումները հրապարակելու դիմաց)՝ այդկերպ ֆինանսատրելով նրանց գործունէութիւնը: Ընդ որում, վճարումները, թէեւ տարբեր չափերով, այնուամէնայնիւ, բաժին են հասնում Պոլսում հրատարակուող բոլոր հայկական օրգաններին՝ առանց խտրականութեան: Օրինակ՝ Բլեյրլուի թաղային խորհուրդը 2018ին ժամանակ օրաթերթին վճարել է 135,000 թ.ւ.,

Նոր Մարմարա օրաթերթին՝ 77,000, Փարոս ամսաթերթին՝ 11,000, Լոյս երկշաբաթաթերթին՝ 5900, Ակօսին 2900²⁰:

Հաշուի առնելով, որ վանքապատկան կալուածները եկամտի լուրջ աղբիւր են հայկական համայնքային հաստատութիւնների համար, կարելի է պնդել, որ վերը նկարագրուած քաղաքականութեամբ պետութիւնը նպատակ է հետապնդում վերջիններիս պահել տնտեսապէս տկար պայմանում դրանից բխող հետեանքներով: Ճակատագրի հեգնանքով այդ հարցում որպէս գործիք են կիրառում բոլորովին այլ՝ արդարադատութեանը ծառայելու առաքելութիւն ունեցող դատական մարմինները:

Չնայած բարդ հանգամանքներին, արդար պայքարը եկեղեցական գոյքի վերադարձման համար, այնուամէնայնիւ, պէտք է շարունակել թէ՛ իրական են թէ՛ քաղաքական եղանակներով: Քաղաքական ուղիները ընդգրկում են ինչպէս բանակցութիւնները թուրքական իշխանութիւնների հետ, այնպէս էլ այլ երկրներում հայկական լոբբիստական կառոյցների գործունէութիւնը յիշեալ խնդրով: Պայքարի արդիւնաւէտութիւնը կարող է բարձրացնել միջարանական գործակցութիւնը Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիների միջեւ, ինչպէս նաեւ համատեղ ջանքերը Թուրքիայի այլ քրիստոնեայ փոքրամասնութիւնների հետ:

JUDICIAL PROCRASTINATIONS – A MEANS TO INTERCEPT THE RETURN OF ARMENIAN COMMUNAL PROPERTY (2010-2020)

(Summary)

VAHRAM HOVYAN (vhovyan@yandex.ru)

The paper discusses the issue of the return of Armenian church property confiscated by the state in Turkey...

Basing his argument on details of diverse, newly developing judicial cases, the author maintains that the Turkish authorities are not at all interested in the return of Armenian Church properties to their rightful owners.

The paper notes that the Turkish authorities have adopted a dual track, both tracks serving Turkish state interests. On the one hand the authorities claim that property is being returned, thus crafting the image of a fair, democratic Turkish state that cares for its ethno-religious minorities, yet, on the other hand, it uses bureaucratic procrastinations to intercept the return of the confiscated property.

The author gives examples of several such cases which have lasted for years and even decades. He argues that in certain cases such delays are expensive and exhausting judicial processes, while in other cases the compensation paid becomes almost valueless due to inflation and/or the spreading out of the payment over years and years. The author notes as well that in certain cases the verdict comes out too late, at a time when the case has been resolved by those concerned.... Furthermore, by maintaining the

²⁰ «Հոգեգալստեան տօնը՝ Պէլոյլոյի Ա. Երրորդութիւն եկեղեցոյ երկիւքին տակ», *Նոր Մարմարա*, 10 Յունիս 2019:

upper hand in the juridical discussions, the Turkish state keeps the Armenian community of Istanbul and its institutions at its “mercy and grace” and under economically unfavorable conditions.

Taking into consideration that Armenian communal structures nowadays face serious monetary hardships and church property is a source of significant income, it can be insisted that by intercepting the return of Armenian communal property the Turkish authorities, among other purposes, have the purpose of suppressing Armenian communal institutions, which, in turn, has ramifications. Finally, the author underlines the case of the Istanbul-based journalist Hrant Dink, who was assassinated, and for which there still has not been a final verdict.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀՈՒՆՎՈՅԹԸ 2016-2020

ԶԱԻԷՆ ՄԱՐԿԵԱՆ

Հայոց վրայ գործադրում է Ցեղասպանության հարիւրամեակին յաջորդող հինգ տարիներուն արձանագրուեցան որոշ եղելութիւններ Հայկական Հարցի հոլովոյթին մէջ: Հիմնականին մէջ նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ: Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները պաշտօնապէս չեղեալ յայտարարուեցան, "թաւշեայ յեղափոխութիւն"էն ետք վարչապետ Նիկոլ Փաշինեան ՄԱԿի ամբիոնէն յայտարարեց թէ «Թուրքիա կը մնայ անվտանգութեան լուրջ սպառնալիք հայ ժողովուրդին համար», ինչ որ դժբախտաբար իրականացաւ 2020ին թուրքեագերիական Արցախի վրայ նախայարձակումով, Թանէր Աքչամ թրջական աղբիւրներէ փաստերով պարզեց թէ Թալէաթի ցեղասպանական հրահանգներու Արամ Անտոնեանի հրատարակած հեռագիրերը վաւերական են, շարունակուեցաւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը, անշուք նշուեցաւ Սեփի Դաշնագրի հարիւրամեակը եւ 9 Նոյեմբեր 2020ի եռակողմանի յայտարարութիւնը ցնցեց հայութիւնը: Այս բոլորին յաջորդաբար պիտի անդրադառնանք ստորեւ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԿԻԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՂԱՐԿՈՒՄԸ

10 Հոկտեմբեր 2009ին Ցիւրիխի մէջ ստորագրուած Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները 1 Մարտ 2018ին պաշտօնապէս չեղեալ յայտարարուեցան Հայաստանի Հանրապետութեան ատենի նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ¹:

Նախագահը նշեց թէ շրջանին մէջ ապահով եւ համերաշխ ապագայ կերտելու մտօք Հայաստան ուզած էր երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները կարգադրելու բեռը գալիք սերունդներուն չճգել եւ առանց նախապայմանի ուզած էր կարգաւորել, սակայն արձանագրութիւններէն ի վեր անցած ինը տարիներուն Թուրքիա որեւէ քայլ չառաւ եւ պնդեց անհիմն նախապայմաններու վրայ եւ չվաւերացուց եւ իզօրու չդարձուց արձանագրութիւնները: Նախագահը յիշեցուց որ Սեպտեմբեր 2017ին ՄԱԿի Ընդհանուր Ժողովի ամբիոնէն յայտարարած էր, թէ «Թուրքիոյ կողմէ արձանագրութիւններու վաւերացման գործընթացը ըստ պատշաճի չիրականացնելու պարագային» 2018ի գարնան այդ արձանագրութիւնները չեղեալ պիտի յայտարարէր: Նկատելով որ հասած էր ժամանակը, ինք հարցը բերած էր ազգային անվտանգութեան խորհուրդի նիստին: Ազգային անվտանգութեան

¹ «Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները պաշտօնապէս չեղեալ համարուեցան», *Ազգակ օրաթերթ*, 2 Մարտ 2018:

խորհուրդը միաձայնությամբ համամիտ եղաւ արձանագրութիւններու կնքման ընթացակարգերու դադրեցումին»²:

Միաժամանակ, նախագահը նշեց թէ Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը կը մնայ անփոփոխ եւ թէ զոյգ երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելը կը բխի զոյգ երկիրներու ժողովուրդներու շահերէն: Ապա անցցուց թէ պատրաստ կ'ըլլանք Թուրքիոյ հետ յարաբերութիւններ հաստատելու եթէ այս գիտակցումը ըլլայ նաեւ թրքական կողմէն, այլապէս կը զարգանանք ինչպէս առ այսօր առանց դիւանագիտական յարաբերութիւններ ունենալու Թուրքիոյ հետ³:

Հակառակ անոր որ Ցիլիիի արձանագրութիւնները առանց նախապայմանի էին, Թուրքիա միշտ պնդեց Լեռնային Ղարաբաղի հարցին Ազրպէյճանը գոհացնող կերպով լուծումի քայլերուն վրայ: Այս պարագան ՀՀ նաաջին իսկ օրէն մերժեց:

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԶՈՅԳ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Փաշինեան 13 Փետրոս 2020ին ազգային ժողովին մէջ նշեց թէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը չէր դիտարկեր զուտ հայթրքական յարաբերութիւններու ծիրէն ներս, այլ ցեղասպանութեան համաշխարհային կանխարգիլման եւ համաշխարհային անվտանգութեան ապահովման ծիրէն ներս, որովհետեւ ակնյայտ է, որ ցեղասպանութիւններու ճանաչումն ու դատապարտումը նոր ցեղասպանութիւններու կանխարգիլման ամենէն արդիւնաւէտ գործիքներէն են⁴:

ՄԱԿի ամբիոնէն, Սեպտեմբեր 2019ի իր խօսքին մէջ վարչապետը իմիջիայլոց անդրադարձաւ ՀՀ սահմանակից երկիրներու հետ յարաբերութիւններու կարգավիճակին, նշելով թէ անոնցմէ երկուքը՝ Թուրքիա եւ Ազրպէյճան, փակ են: Ան անցցուց, Թուրքիա «հրաժարելով Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելէ, Ազրպէյճանի աջակցելով ընդդէմ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի՝ կը շարունակէ մնալ անվտանգութեան լուրջ սպառնալից հայ ժողովուրդին համար, որ արդէն մէկ անգամ եղած է ցեղասպանութեան զոհ եւ ականապրեսն է պատմական ճշմարտութեան ժխտումին եւ կարաղի դիմադրութեան»: Վարչապետը անցցուց, թէ ՌԴ-ն Հայաստանի հիմնական ռազմավարական գործընկերն ու դաշնակիցն է, իսկ Վրաստանն ու Իրանը՝ ռազմավարական դրացիներ⁵:

² Նոյն:

³ Նոյն:

⁴ «Հայաստան Հայոց Յեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը կը դիտարկէ համաշխարհային անվտանգութեան ապահովման ծիրէն ներս. Նիկոլ Փաշինեան», *Չարթօսք օրաթերթ*, 14 Փետրոս 2019:

⁵ «Վարչապետ Փաշինեան ելոյթ ունեցաւ ՄԱԿի ամբիոնէն», *Ազգակ*, 27 Սեպտեմբեր 2019:

Յտակ էր վարչապետին խօսքը Հայոց Ցեղասպանությունը ջանաչցող եւ ժխտող Թուրքիան կրնայ կրկին Ցեղասպանություն գործել, երբ կ'ըսեր թէ Թուրքիան Հայաստանի անվտանգութեան սպառնալիք է:

ԹԻՔԱԿԱՆ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԾՐԱԳԻՐԸ

Ապտովաի Պոզդրոթ *Նորփր Մոնիթորը*ի մէջ փաստաթուղթերով բացայայտեց թրքական բանակի սպայակոյտի վաներաթուղթերու արտահոսքէն թէ թրքական օդուժը Հայաստանի վրայ յարձակումի ծրագիր մը պատրաստած էր որ իր վերջնական ձեւը ստացած էր 13 Յուլիս 2001ին: Թրքական սպայակոյտի գեկուցումէն էջեր անյայտացած էին 23 Մայիս 2016ին⁶:

ՏԱԻՈՒՇԻ ՄԱՐՏԸ ԵՒ ԱՐՅԱՄԻ ԴԷՄ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Խօսքէն գործի անցնելով, Էրտողանի ղեկավարած Թուրքիան 12-16 Յուլիս 2020ի Տաւուշի արհմարտի ճակատումին եւ Արցախի դէմ 27 Սեպտեմբերէն 9 Նոյեմբեր 2020ի պատերազմին ոչ միայն քաջալերեց Ազրպէյճանի նախապարճակումը, այլեւ գործնական ռազմական աջակցութիւն ցոյց տուաւ, Անդրկովկասի մէջ իր ազդեցութիւնը զօրացնելու մտօք:

ՌԴ արտաքին գործոց նախարար Լաւրով, Տաւուշի մարտերուն դրդապատճառները նշեց «Հայկական կողմի որոշումը՝ վերականգնելու սահմանային հին անցակէտերէն մէկը, որ ազրպէյճանական ուժանիւթ արտածող խողովակներէն 15 քմ.հեռաւորութեան վրայ է, մէկուն մօտ զգալի մտահոգութիւն յառաջացուցած է, միաներուն մօտ՝ չհիմնաւորած պատասխան առձագանգ, է իրր հետեանք տագնապի թեժացման «կայծը» բռնկեցաւ՝ հաւանական բոլոր անկանխատեսելի հետեանքներուն սպառնալիքով»⁷:

Թրքամէտ Մեթիու Պրայզա, որ նախապէս ԵԱՀԿի Մինսքի խմբակի ամերիկեան համանախագահներէն մին էր, գրեց. «12 Յուլիսի առաջին զարկը ով տուաւ յստակ չէ: Երկու կողմերը համաձայն են որ երկու ազրպէյճանցի զինուորներ գիշերանց ճիւղով մը յառաջացած են երկու երկիրներու չսահմանանշուած միջազգային սահմանին: Երեան կ'ըսէ թէ ազրպարարած է երկու ազրպէյճանցի զինուորներուն՝ նահանջելու եւ Ազրպէյճանի հրետանիի կրակոցով պատասխանած է: Պաքու կ'ըսէ թէ առանց գրգռութեան հայկական հրետանին կրակ բացաւ: Վերջին հաշուով 15 ազրպէյճանցի զինուորներ, ներառեալ զօրավար մը՝ Փոլատ Հաշիմով, սպանուեցան, Թաւուզ նահանգին մէջ, մէկ քաղաքացիի հետ: Չորս զինուորներ եւ մէկ քա-

⁶ «Հայաստանի դէմ թրքական բանակի յարձակումի մասին գաղտնի ծրագիրը բացայայտուած է», *Արարար օրաթերթ*, 2 Դեկտեմբեր 2019:

⁷ «Ռուսիան աշխուժ կերպով կ'աշխատի դարաքաղեան տագնապին լուծման բանակցային հողվոյթը շտապիոյթ վերսկսելու ուղղութեամբ կ'ըսէ Լաւրով», *Ազդակ*, 22 Օգոստոս 2020:

դաքացի իրենց կեանքը կորսնցուցին սահմանին միա կողմը Հայաստանի Տաուշի նահանգին մէջ»⁸:

Ռուսիա յաջողեցաւ իրավիճակը կայունացնել և կոհիները դադրեցան:

Թուրքիան Տաուշի մարտերուն առաջին օրէն Հայաստանը իբրև նախայարձակ ամբաստանեց և Ազրայէճանի թիկունք կանգնեցաւ: Անքարայէն Հայաստանի նկատմամբ սպառնական յայտարարութիւններ եղան: Անոնցմէ ամէնէն յատկանշականը Էրտողանի սպառնալիքն էր: Ան յայտարարեց թէ «այս բախումը միայն սահմանային կոհի մը չէ, այլ ներխուժում Ազրայէճանի հողամասէն ներս: Հայաստան տուած է հարուած մը որ իր կարողութենէն վեր է, մենք պիտի պաշտպանենք մեր բարեկամ և եղբայր Ազրայէճանը: Մենք պիտի իրականացնենք մեր նախահայրերէն մեզի մնացած առաքելութիւնը Կովկասի մէջ»⁹: Էրտողան նաեւ նշեց թէ ասարտին պիտի հասցնեն «այդ առաքելութիւնը որ դարեր շարունակ կապարած են մեր պապերը, Կովկասի շրջանին մէջ»¹⁰:

Թուրք ազգայնականները թոյն ժայթքեցին Հայաստանի դէմ: Նմուշ մը տալու համար նշենք թուրք ազգայնական «Մեծ Միութիւն» կուսակցութեան նախագահ Մուսթաֆա Տեպէճճի սպառնալիքը. «Եթէ Հայաստան շարունակէ Թուրքիոյ և Ազրայէճանի դէմ իր նախայարձակումը, շուրջով շրջանին մէջ ոչ Հայաստան պիտի ըլլայ, ոչ ալ հայկական զօրք»¹¹:

Տաուշի մարտերէն կարճ ատեն մը ետք, Յուլիս 29ին Օգոստոս 10ին Թուրքիա և Ազրայէճան այս վերջին երկրին մէջ ցամաքային զօրքերու և օդային ուժերու մասնակցութեամբ նաեւ Նախիջեանի մէջ լայնածաւալ ռազմափորձեր ըրին, որոնց ներգրատուած էին երկու երկիրներու զինանձնակազմը, զրահամեքենաները, հրետանային միջոցները, ականանետները, ինչպէս նաեւ ռազմական թռիչքներ F-16 ռազմօդանաւերու օգտագործումով և հետախուզական միաժամանակ հարուածող անօդաչու թռչող «Պայրաքտար» և այլ անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ):

Թրքական լրատուամիջոցներ ռազմափորձերուն անդրադառնալով գրեցին թէ եղածը կապուած է հայ-ազրայէճանական սահմանին տեղի ունեցած յոյսեան կոհիներուն հետ և անլցուցած որ «Թուրքիոյ և Ազրայէճանի կողմէ իրականցուող նշեալ զօրավարժութիւններուն նպատակն է «ահաբեկել Հայաստանը»¹²:

⁸ Mathew Bryza, “Russia and Turkey fill in the diplomatic vacuum on Armenia-Azerbaijan conflict”, [https://www.atlanticcouncil.org/blogs/newatlanticist/August 27, 2020](https://www.atlanticcouncil.org/blogs/newatlanticist/August%2027,%202020):

⁹ Խմբագրական, *Պայքար շաբաթաթերթ*, 26 Յուլիս 2020, էջ 2:

¹⁰ *Ազրակ*, 16 Նոյեմբեր 2020, էջ 8:

¹¹ «Թուրք Ազգայնական Կուսակցութիւնը կը սպառնայ Հայաստանի» 8 Օգոստոս 2020, էջ 4:

¹² «Թուրք-ազրայէճանական զօրավարժութիւններուն նպատակը Հայաստանը ահաբեկելն է. թրքական ՁԼՄներ», *Ձարթօնք*, 29 Յուլիս 2020:

Ռազմափորձերու աւարտէն ետք օգտագործուած բոլոր ռազմական գրահատորանը եւ բարձրաստիճան մեծաթի սպաներ, որոշ թիով զինուորներ մնացին Ազրպէյճան: Թուրքիան սկսաւ Ազրպէյճան տեղափոխել 2000է աւելի թուրքմէն եւ այլ ծագումներով սուրիացի իսլամական վարձկաններ: Ազրպէյճանի բանակը, վարձկանները եւ թուրք հրամանատարական սպաները սկսան տեղատրոփի Արցախի սահմանին երկայնքին:

Կանխամտածուած նախադրեալով Ազրպէյճան Թուրքիոյ օժանդակութեամբ Արցախի պատերազմը սկսաւ 27 Սեպտեմբեր 2020ին: Արցախի հիմնահարցի 2015-2020ի ժամանակաշրջանը առանձին նիստ ըլլալով մեր այս գրութեան ծիրին մէջ չ'իյնար: Հոս կ'ուզենք նշել Թուրքիոյ դերը: Թուրք սպաներ հրամանատարական պաշտօններ ստանձնած էին եւ իրենք է որ կը ծրագրէին եւ կը հրահանգէին ազերի զինուորներուն եւ սուրիացի վարձկան ահաբեկիչներուն: Լեռնային կոիներու մէջ մարզուած 1200 թուրք զինուորականներ եւս օգտագործուեցան: Թրքական 'Պայրաքտար' ԱԹՍերը եւ Ազրպէյճանի ձեռք ձգած իսրայէլեան արտադրութեամբ նմանօրինակ սարքերը աւեր գործեցին եւ Արցախի հակօդային պաշտպանութիւնը, ռատարները, քանդելով պատերազմի սկիզբին իսկ: Օգտագործեցին նաեւ թրքական F-16 ռազմօդանաւերը: Ոչ միայն զինուորներու դէմ, այլեւ քաղաքային բնակչութեան վրայ անոնց բնակարաններուն եւ Արցախի անտառներուն մեծ վնաս հասցուցին գործածելով միջազգային օրէնքով արգիլուած զինատեսակներ: Թուրքիոյ պաշտպանութեան եւ արտաքին գործոց նախարարները պատերազմի ընթացքին քանիցս Պաքու գալով ամէն տեսակ օգնութիւն տրամադրեցին: Նիւթական գորութեամբ կրցան ազդել միջազգային լրատուական միջոցներուն:

Բազմաթիւ ռազմագետներ նշեցին թէ թուրքեագրպէյճանական զինուոր 4-5 օր տետղ կայծակնային հարուածով (պիլքըրիկ) ծրագրած էին գրաւել Արցախը եւ շրջակայ տարածքները, բայց հանդիպեցան, 5000 զոհերու գնով, հայերու մարտնչումին եւ իրենց նպատակը իրագործեցին 44 օրեր տետղ պատերազմով: 8 Նոյեմբերին Շուշի անկումէն ետք երբ թուրք եւ ազրպէյճանական ուժերը շնորհիւ իրենց օդային առաւելութեան, Ստեփանակերտի մատոյցներուն մօտ էին, ռուսական միջնորդութեամբ կասեցուեցաւ պատերազմը: Թուրք եւ ազերի դաշնակիցները յաջողեցան պարտադրել զինադադարի շատ խիստ պայմաններ: Ռուս խաղաղապահ զօրքեր արագօրէն հասան Արցախ:

ՆԱԹՕի անդամ եւ ՆԱԹՕի սպառազինութեամբ 82 միլիոն բնակիչ ու զօրեղ բանակ ունեցող Թուրքիան եւ 11 միլիոն բնակիչ ունեցող Ազրպէյճանը 100,000նոց իր զօրքով եւ ԱԹՍներու առաւելութեամբ պարտութեան մատնեցին 2-3 միլիոն բնակիչ ունեցող Հայաստանը եւ 150,000 բնակիչ ունեցող Արցախը: Արցախի Հանրապետութիւնը ոչ միայն կորսնցուց Ազրպէյճանէն գրաւումով ազատագրած եօթ տարածքները, այլեւ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզէն հարաւային եւ հիւսիս-արեւելեան

կարետոր շրջաններ: Հայաստան ինքզինք գտա Խորհրդային Միության ժամանակաշրջանի հայ-ազրպեյճանական սահմանին, ինչ որ հարցեր ստեղծեց Սինիքի մարզի արեւելեան եզրին:

Թուրքիոյ նախագահ Էրտողան Պաքուի մէջ ներկայ եղա յաղթանակի զօրահանդէսին, ուր Ալիե յայտարարեց թէ Զանգեզուրը, Սեւանը եւ Երեւանը «պատմական ազրպեյճանական» շրջաններ են, իսկ Էրտողան իր կարգին ոգեկոչեց ցեղասպան Էնվերը¹³ եւ անոր եղբայրը՝ Նուրի փաշան, որ 1918ին Ղարաբաղի մէջ ջարդերով ուղղուած էր Պաքու: Այս զօրահանդէսին տողանցեցին նաեւ 2500 թուրք զինուորներ:

Տողանցքէն քանի մը օր առաջ արտաքին գործոց նախարար Զաուրօղլու յայտարարած էր որ Թուրքիա Հայաստանի հողերուն վրայ աչք չունի¹⁴:

9 Նոյեմբեր 2020ին ստորագրուած Հայաստան-Ազրպեյճան եւ Ռուսիա եռակողմանի հայոց համար նուաստացուցիչ յայտարարութեան 9րդ կէտին համաձայն «*քարածոքաշրջանին կը բացուին բոլոր տնտեսական եւ փոխադրական կապերը: Հայաստանի Հանրապետութիւնը կ'ապահովէ փոխադրական հաղորդակցութիւնը Ազրպեյճանի Հանրապետութեան եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան արեւմտեան շրջաններու միջեւ երկու ուղղութիւններով քաղաքացիներու , փոխադրական միջոցներու եւ բեռներու անարգել երթեւեկութիւն կազմակերպելու նպատակով: Փոխադրական հաղորդակցութեան վերահսկողութիւնը կ'իրականցնեն Ռուսիոյ ԱԳՄ սահմանապահ ծառայութեան մարմինները*»¹⁵:

Այսպէս, Մերդիի վրայով Ազրպեյճան Նախիջեւան ուղղակի կապ կը ստեղծուի եւ Թուրքիայէն Նախիջեւան եւ անկէ ՀՀ հարաւային սահմանէն Ազրպեյճան փոխադրամիջոցներով կապ կը ստեղծուի:

Ըստ ամերիկացի վերլուծաբան Մայքըլ Ռուպընի եռակողմ յայտարարութիւնը «կը բովանդակէ վտանգները յառաջիկայ պատերազմին»: Ըստ Ռուպընի, *The National Interest* 3 Դեկտեմբեր 2020 թիւին մէջ լոյս տեսած յօդուածին վերեւ մէջբերուած 9րդ կէտը ամենէն վտանգատուր կէտն է: Յօդուածագիրը դիտել կու տայ որ «զոյգ ուղղութիւնները» կ'ենթադրեն երկու ճանապարհ, այսինքն Ազրպեյճանը երկու անգամ պիտի հատէ ՀՀ հողը: Սակայն ան մահացու վտանգը կը տեսնէ թրքական մեքենաներու անցքի պարագային, ուր կրնայ պատահիլ որ թուրք մեքենավար մը սպանուի, անելի ճիշտը թուրքերը մասնագէտ են կեղծ պատճառներ ստեղծելու: Այդ պարագային Թուրքիա պիտի պահանջէ ապահովութեան գօտի մը ճամ-

¹³ «Ալիե յայտարարած է որ Զանգեզուրը, Սեւանը եւ Երեւանը պատմական ազրպեյճանական հողեր են», *Ջարթօնք*, 11 Դեկտեմբեր 2020: Թերթը լրատուութեան բաժնին մէջ խորագրէն տարբեր փոխանակ երեւանի «Իջեան» նշած էր:

¹⁴ «Մենք Հայաստանի հողերուն վրայ աչք չունինք. Թուրքիոյ ԱԳ նախարար», *Ջարթօնք*, 8 Դեկտեմբեր 2020, էջ 7:

¹⁵ «Հայաստանի, Ազրպեյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու յայտարարութիւնը», *Ջարթօնք*, 10 Նոյեմբեր 2020, էջ 2:

փաներու զուգահեռ»։ Հեղինակը կը յիշեցնէ Թուրքիոյ կողմէ Սուրիոյ հողին վրայ [Իտլիպ եւ Իիսիսային այլ շրջաններ] ստեղծուած ապահովութեան գոտին, որ ըստ Ռուպինի «փաստօրէն վերածուած է թրքական գրաման հողամասի մը ուր Թուրքիան [կը] պարտադրէ իր անձնագիրերը, իր դրօշները եւ մինչեւ իսկ իր դպրոցները»¹⁶։

30 Դեկտեմբեր 2020ին Սոչիի մէջ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Լաւրովի հետ հանդիպումէն ետք, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը յայտարարեց թէ «Եթէ [Լ. Ղարաբաղի]մէջ կայուն խաղաղութիւն ըլլայ, մենք պիտի կարենանք կարգաւորել Թուրքիա-Հայաստան, Հայաստան-Ազրայէճան յարաբերութիւնները»¹⁷։ ՀՀ իշխանութիւններէն անմիջական արձագանգ չլուծեցաւ։

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԵՐՈՒ ԱՌԿԱՅՈՒԹԻՒՆ ԹԻՔԱԿԱՆ ԱՐԽԻՒՆԵՐՈՒ ՄԷՋ

2016ին թուրք պատմաբան Թանէր Աքչամ հրատարակեց Նաիմ էֆենտիի յուշերը եւ Թալէաթ փաշայի հեռագիրերու գիրքը, ապացոյցներ տալով թէ Նաիմ էֆենտին իսկապէս օսմանեան պետական պաշտօնեայ եղած է, ըստ թրքական զինուորական արխիւներու 2007ին հրատարակուած 7րդ հատորին։ Նմանապէս՝ Թալէաթի հեռագիրերը իսկական են հիմնուած օսմանեան ծածկագրութեան վրայ, եւ թէ այդ դրժող թուրք պատմագրողները ստախօսներ են։ Այդ հեռագիրերուն մէջ են 22 Սեպտեմբեր 1915 եւ 29 Սեպտեմբեր 1915 թուակիր երկու հեռագիրերը, որոնք Հայոց Ցեղասպանութեան գործադրման հրահանգներ են։ Այս կարեւոր բաց մը կը լեցնէր եւ Հայոց Ցեղասպանութեան փաստերը ժխտողներուն սուտերը կը չէզոքացնէր նոյնինքն թրքական արխիւներէն¹⁸։

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

2016էն 2020ին Գերմանիոյ, Հարաւային Ամերիկայի Անտեան Երկիրներու խորհրդարանը, Չեխիա, Լիպիոյ Ժամանակատր կառավարութիւնը, Փորթուկալ, Սուրիա եւ ԱՄՆ իրենց օրէնսդիր մարմիններուն միջոցով կամ այլապէս ճանչցան Հայոց Ցեղասպանութիւնը, իսկ Վատիկան, Իտալիա եւ Հոլանտա վերահաստատեցին այդ։

¹⁶ «Հայաստանի մարտահրաւերները Մինսքի խոսքի ձախաւեր առաջնորդութեանց դիմաց», *Պայքար*, 6 Դեկտեմբեր 2020, էջ 15։

¹⁷ «Եթէ կայուն խաղաղութիւն ըլլայ, մենք պիտի կարենանք կարգաւորել Թուրքիա-Հայաստան, Հայաստան-Ազրայէճան յարաբերութիւնները կ'ըսէ Չաուշօղլու», *Ազդակ*, 31 Դեկտեմբեր 2020, էջ 1։

¹⁸ "Akcem: The authenticity of the Naim Effendi memoirs and Talat Pasha telegrams", *Armenian weekly*, October 15, 2016։

2 Յունիս 2016ին Գերմանիոյ խորհրդարանը՝ պունտրութեամբ ընդունեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւը. «1915 թուականի հայերու եւ միա քրիստոնէայ փոքրամասնութիւններու ցեղասպանութեան իշխարակի ոգեկոչման մասին» խորագրով բանաձեւը ընդունուեցաւ մեծամասնութեամբ ընդդէմ մէկ քուէի եւ մէկ ձեռնպահի: Նիստին ներկայ չէին վարչապետ Անկէլա Մերքել եւ արտաքին գործոց նախարար Ֆրանք Վալթեր Շթայնմայեր եւ փոխվարչապետ Սիկմար Կապրիէ: Գերմանիոյ խորհրդարանի անդամ թրքական ծագում ունեցող 11 երեսփոխաններէն 7ը կողմ քուէարկեցին բանաձեւին, ներառեալ նախարար Այտան Օղազուլ, իսկ երկու թրքագոյի երեսփոխաններ չէին մասնակցած քուէարկութեան: Կանաչներու Կուսակցութեան ղեկավար Ճէմ Օզտեմիր Յեղասպանութեան ճանաչման օգտին խօսք առաւ: Բանաձեւը կը սգայ Երիտրօրբերու կատարած Օսմանեան Կայսրութեան տարածքին հայերու գրեթէ ամբողջութեան բնացնման համար: Բանաձեւը կ'ընդգծէ Օսմանեան Կայսրութեան դաշնակից Գերմանիոյ դերակատարութիւնը Հայոց Յեղասպանութեան մէջ: Իսկ Գերմանիան կը պատրաստով յաջորդ սերունդներուն պատմել հայերու տեղահանութեան եւ կոտորածին եւ կը խոստանայ աջակցիլ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ հաշտեցման¹⁹:

Հայութիւնը շնորհակալութեամբ ընդունեց բանաձեւը, որ ոչ մէկ խօսք կը պարունակէր հատուցման, հակառակ անոր որ խորհրդարանը կ'ընդունէր Գերմանիոյ մեղակցութիւնը Յեղասպանութեան: Հայկական ոչ մէկ կազմակերպութիւն եւ որքան որ գիտենք ոչ մէկ անհատ, հատուցման դիմում կամ դատ բացաւ:

Հարաային Ամերիկայի Անտեան Երկիրներու (Զիլի, Պոլիվիա, Փերու, Էքուատոր եւ Քոլումպիա) Անտեան խորհրդարանը 17 Սեպտեմբեր 2016ին Ուրուկուայի մայրաքաղաք Մոնթեվիտէոյի մէջ, միաձայնութեամբ ընդունեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ, որուն հեղինակն էր Էքուատորի ներկայացուցիչ Փետրո Տէ Լա Քրուզը: Երեք կէտերէ բաղկացած բանաձեւին երկրորդ կէտը կ'ըսէր «ճանչնալ 1915-1923 թուականներուն Օսմանեան Կայսրութեան իշխանութիւններուն կողմէ ծրագրուած Հայոց Յեղասպանութիւնը եւ համերաշխութիւն յայտնել հայ ժողովուրդի եւ անոնց ժառանգներուն, որոնք ողջ աշխարհի վրայ կը կազմեն հայկական համայնքը: Դատապարտել՝ որեւէ ժխտողական քաղաքականութիւն ուղղուած Հայոց Յեղասպանութեան եւ հայ ժողովուրդին հանդէպ իրականացած մարդկութեան դէմ յանցագործութեան»²⁰:

¹⁹ «Գերմանիոյ խորհրդարանը բացարձակ մեծամասնութեամբ որդեգրեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը», *Ազդակ*, 4 Սեպտեմբեր 2016:

²⁰ «Հարաային Ամերիկայի Անտեան Երկիրներու խորհրդարանը ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 21 Սեպտեմբեր 2016:

25 Ապրիլ 2017ին Չեխիոյ խորհրդարանը 104 կողմ եւ ոչ մէկ դէմ կամ ձեռնպահ ձայներով ընդունեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեռն: 96 երեսփոխաններ ջքուէարկեցին: Բանաձեռնին մէջ հիմնական կէտն է «Չեխիոյ խորհրդարանի պարզամատրններու փունը կը դատարարուի համաշխարհային Բ. պարերազմին ընթացքին նացիներու կողմէ գրաստած փարածքներուն մէջ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւնները հրեաներու, գնչուներու եւ սլաւոններու նկատմամբ, համաշխարհային Ա. պարերազմի ընթացքին Հայոց Յեղասպանութիւնը եւ ազգային ու կրօնական այլ փոքրամասնութիւններու ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութեան փարածքին մէջ...»²¹:

Ատորին պալատի որոշումէն երեք տարիներ ետք, 20 Մայիս 2020ին Չեխիոյ վերին պալատը՝ ձերակոյտը, իր լիագումար նիստին միաձայնութեամբ ընդունեց ձերակոյտի փոխնախագահ ընկերվար ժողովրդավար Միլան Շուլէի բանաձեռն որ կը դատարարուի զոյգ համաշխարհային պատերազմներու ընթացքին գործադրուած մարդկութեան դէմ ոճրագործութիւնները, որոնց կարգին Հայոց Յեղասպանութիւնը²²:

Զօրավար Հաֆթարի ղեկավարած Լիպիոյ ժամանակաւոր կառավարութիւնը, որ ՄԱԿէն ճանչցուած չէ, իր արտաքին գործոց նախարար Ապտըլ Հատի Հուլէյի առաջարկով 22 Ապրիլ 2019ին ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը: Կառավարութիւնը մամուլը հաղորդագրութեամբ մը յայտնեց թէ իր օրէնսդրական վարչութիւնը աշխատանք պիտի տանի որոշում մը բանաձեռնելու որ Լիպիոյ մէջ ամէն տարի 24 Ապրիլին ոգեկոչուի Հայոց Յեղասպանութեան զոհերուն յիշատակը²³:

Փորթուկալի խորհրդարանը 26 Ապրիլ 2019ին որդեգրեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեռն մը: Բանաձեռնը կ'անդրադառնայ Պոլսոյ մէջ ձերբակալուած հայ մտաւորականներու եւ համայնքային ղեկավարներու ձերբակալումին եւ սպանդին, զոհուած հայերուն թիւը կը նկատէ 800,000էն 1,5 միլիոն, իսկ անոնց ոչնչացումը՝ 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Կ'անդրադառնայ հայոց կիներու, երախաներու եւ տարեցներու Սուրիա տեղահանուելուն եւ անոնց կրած տառապանքին, նաեւ ասորիներու եւ օսմանեան յոյներու հալածանքին, օսմանեան ռազմական դատարանի ցեղասպաններուն նկատմամբ մահապատիժի եւ այլ պատիժներու վճիռներուն եւ ցաակցութիւն կը յայտնէ 1915 թուականի Յեղասպանութեան զոհերուն «պահպանելով յիշողութիւնը իբրեւ ժողովուրդներու

²¹ «Չեխիան ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 26 Ապրիլ 2017:

²² «Չեխիայի ձերակոյտը դատարարուեց Հայոց Յեղասպանութեան գործադրութիւնը», *Ձարթօք*, 21 Մայիս 2020:

²³ «Լիպիոյ ժամանակաւոր կառավարութիւնը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 23 Ապրիլ 2019:

հաշտեցման եւ մարդկային հիմնարար արժէքներու պաշտպանութեան կարեւոր տարր»²⁴:

13 Փետրուար 2020ին Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ճանչցաւ եւ դատապարտեց Հայոց վրայ գործադրուած Յեղասպանութիւնը: Բանաձեւին հեղինակն էր երեսփոխան Դոկտ. Նորա Արիսեան: Բանաձեւին մէջ հետեւեալ պարբերութիւնը կար. «նկատի առնելով որ ըստ սուրիական աղբիւրներուն, Օսմանեան Կայսրութեան ժամանակաշրջանին Հայոց Յեղասպանութեան ու ջարդերու մեծ մասը տեղի ունեցաւ սուրիական հողատարածքին վրայ, իսկ սուրիացի ժողովուրդը դարձաւ ականատեսը այս ոճիրին՝ 19րդ դարու վերջին եւ 20րդ դարասկիզբին թուրք սմանցիներու կողմանով տեղի ունեցաւ 1,5 միլիոն հայերու կանխամտածուած Յեղասպանութիւնը»²⁵:

Նախքան ԱՄՆի ներկայացուցիչներու տան ճանաչումը, ԱՄՆի վեց նահանգներ 2016-2019ին եկան միանալու այն 43 նահանգներուն որոնք արդէն ճանչցած էին Հայոց Յեղասպանութիւնը: Ասոնք էին.- Արեւմտեան Վերձինիան²⁶, Ուայոմինկը²⁷, Թեքսասը²⁸, Այօան²⁹, Ինտիանան³⁰ եւ Ալպաման³¹ թիւը հասցնելով 49ի: Դուրս մնացած միակ նահանգն է Միսիսիփին: Նմանապէս ԱՄՆի մայրաքաղաք Ուաշինկթընը ընդգրկող Քոլումպիա շրջանը Նոյեմբեր 2019ին ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը³²:

Պէտք է դիտել տալ թէ նախագահ Օպամայի պաշտօնավարութեան աւարտման շրջանին ՄԱԿի մօտ ԱՄՆ ներկայացուցիչ Սամանթա Փաուլըր Ուաշինկթընի մէջ նուազեան մրցանակակիր էլի Վիզելի յիշատակի ձեռնարկին յիշած էր թէ կան այնպիսի երետոյթներ, ինչպէս «Հայոց Յեղասպա-

²⁴ «Փորթուկալ ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 30 Ապրիլ 2019:

²⁵ “Le parlement Syrien reconnait le genocide armenienne”, *L’Orient-Le Jour*, Պէյրութ, 14 Փետրուար 2020:

²⁶ «Արեւմտեան Վերձինիա նահանգը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Նոր օր*, Լոս Անճելըս, 5 Մայիս 2016:

²⁷ «Ուայոմինկ նահանգը կը ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 1 Մայիս 2017:

²⁸ «Թեքսաս դարձաւ Յեղասպանութիւնը ճանչցած 46րդ նահանգը», *Ազդակ*, 20 Մայիս 2017:

²⁹ «Միացեալ Նահանգներու Այօա նահանգը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 22 Օգոստոս 2017:

³⁰ «Ինտիանա ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 6 Նոյեմբեր 2017:

³¹ «Միացեալ Նահանգներու Ալպաման նահանգը ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 26 Մարտ 2019:

³² «ԱՄՆ Քոլումպիա շրջանի խորհուրդը Հայոց Յեղասպանութիւնը հաստատող քանաձեւ ընդունած է», *Արարաց*, 29 Նոյեմբեր 2019:

նութեան ժխտումը»³³: Զարմանալիօրէն թրքական հակազդ չտեսանք այս առթիւ:

ԱՄՆի ներկայացուցիչներու տունը 29 Հոկտեմբեր 2019ին քննկրտականներ Էտրմ Շիֆի եւ Կաս Պիլարիքիսի համահեղինակած Հայոց Յեղասպանութեան թիւ 296 բանաձեւը 405 քուէով, ընդդէմ 11ի եւ 3 ձեռնպահի ու 13 քննկրտականներու բացակայութեան ընդունեց: Բանաձեւը կ'անդրադառնար երեք կէտերու.- ա) ոգեկոչել Հայոց Յեղասպանութիւնը՝ պաշտօնապէս ճանչնալու եւ յիշատակելու միջոցով, բ) Արգիլել ԱՄՆի կառավարութեան Հայոց Յեղասպանութեան ժխտումին մէջ ներգրատուելու կամ անչուտելու փորձերուն, գ) խրախուսել Հայոց Յեղասպանութեան փաստերու, ներառեալ ԱՄՆի մարդասիրական օգնութեան եւ ներկայիս իրականացուող յանցագործութիւններուն եւ Հայոց Յեղասպանութեան միջեւ անչուտութիւններու վերաբերեալ կրթութիւնը եւ հանրային իրազեկութիւնը³⁴:

12 Դեկտեմբեր 2019ին, որոշ ձգձգումներէ ու քննարկումը ծախողցնելու Էրտողանի եւ այլոց փորձերէն ետք, ԱՄՆի ձերակոյտը, միաձայնութեամբ որդեգրեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող թիւ 150 բանաձեւը³⁵:

Չոյգ բանաձեւերը, ընդունուած ամերիկեան-թրքական յարաբերութիւններու լարուած շրջանին, օրէնքի ուժ չունէին եւ ոչ ալ պարտադիր էին գործադիր իշխանութեան վրայ: Այսպէս, 24 Ապրիլ 2020ին նախագահ Թրամփ իր պաշտօնավարութեան սկիզբէն իվեր 24 Ապրիլի իր նախկին հաղորդագրութիւններուն նման նշեց. «այսօր կ'ոգեկոչենք Մեծ Եղեռնի 20րդ դարու ամէնէն զանգուածային վայրագութեան զոհերուն յիշատակը»³⁶, կրկին խոսափելով Յեղասպանութիւն բառէն:

ԱՄՆի նախագահութեան թեկնածու, դեմոկրատ նախկին փոխնախագահ Ծօ Պայտըն յայտարարեց թէ «նախագահ ընտրուելու պարագային պիտի ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը»³⁷:

Կեդրոնական ամերիկեան խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու եւ գաղթականներու հարցերու յանձնախումբի նախագահ Տանիլ Օրթեկան Հայոց Յեղասպանութեան 105ամեակին յայտարարութեամբ մը ճանչցաւ եւ դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը: Խորհրդարանը կը

³³ «Հայկական Լուրեր. Մամնթա Փաուըր իշեցուցած է Հայոց Յեղասպանութեան մասին», *Խօսունակ ամսագիր*, Պէյրութ, Դեկտեմբեր 2016, էջ 75:

³⁴ «Ներկայացուցիչներու տունը ջախջախիչ մեծամասնութեամբ ընդունեց Հայոց Յեղասպանութեան բանաձեւը», *Ազդակ*, 30 եւ 31 Հոկտեմբեր 2019:

³⁵ «Պատմական քայլով մը Սիացեալ Նահանգներու ձերակոյտը միաձայնութեամբ ընդունեց Հայոց Յեղասպանութեան բանաձեւը», *Ազդակ*, 30 եւ 31 Հոկտեմբեր 2019:

³⁶ «Թրամփ. "այսօր կ'ոգեկոչենք Մեծ Եղեռնի՝ 20րդ դարու ամէնէն զանգուածային վայրագութեան զոհերու յիշատակը"», *Ազդակ*, 27 Ապրիլ 2020:

³⁷ «Պայտըն կը խոստանայ աջակցիլ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի որդեգրման», *Ազդակ*, 28 Ապրիլ 2020:

գտնուի Կուսթեմալայի մէջ եւ մաս կը կազմէ Կեդրոնական Ամերիկայի պետութիւններու համարկման համակարգին: Միապալատ օրէնսդիր մարմինի մաս կը կազմեն Կուսթեմալայի, Սալվատորի, Հոնտուրասի, Նիքարակուայի, Փանամայի եւ Տոմինիքեան Հանրապետութեան 120 պատգամատրներ, դէտի կարգավիճակ ունին Մեքսիքա, Վենեզուելա, Փորթո Րիքո, Մարոք եւ Թայուան³⁸:

Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած Ֆրանսայի ազգային ժողովը միաձայնութեամբ ընդունեց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրէնքը Յուլիս 2016ին³⁹, իսկ ձերակոյտը այդ օրէնքը որդեգրեց Հոկտեմբեր 2016ին⁴⁰: Իսկ 5 Փետրուար 2019ին նախագահ էմմանուէլ Մաքրոն յայտարարեց թէ Ապրիլ 24ը պիտի դառնայ Հայոց Յեղասպանութեան յիշատակման ազգային օր⁴¹: Այս վերջինը իրականացաւ:

Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած երկիրներէն Իտալիոյ եւ Հոլանտայի խորհրդարանները իրենց որոշումները վերահաստատեցին տարբեր երանգներով: Իտալիոյ խորհրդարանը 10 Ապրիլ 2019ին 382 ինպաստ եւ 42 ձեռնպահ ձայներով ու ոչ մէկ դէմ քուէով, Իտալիոյ կառավարութեան կոչ ուղղեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու եւ անոր տալու միջազգային հնչեղութիւն⁴²:

Իտալական մարզեր եւ քաղաքներ Հայոց Յեղասպանութեան բանաձեւեր ընդունեցին: Ատոնք էին Սիկիլիոյ նահանգային խորհրդարանը⁴³, Բանոզա քաղաքի քաղաքապետական խորհուրդը⁴⁴, Չիվիթա Արթելանա քաղաքի խորհուրդը⁴⁵, Պազիլիքաթա մարզը⁴⁶, Թուլֆա քաղաքը⁴⁷, Լացիո մար-

³⁸ «Կեդրոնական ամերիկեան խորհրդարանի յանձնախումբի նախագահը դատապարտած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ջարթօւք*, 1 Մայիս 2020:

³⁹ «Ֆրանսայի ազգային ժողովը միաձայն ընդունեց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրէնքը», *Ջարթօւք*, 4 Յուլիս 2016:

⁴⁰ «Ֆրանսայի ձերակոյտը որդեգրեց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը», *Ազդակ*, 15 Հոկտեմբեր 2016:

⁴¹ «Ապրիլ 24ը պիտի դառնայ "Հայոց Յեղասպանութեան յիշատակման ազգային օր" կ'ըսէ Մաքրոն», *Ազդակ*, 7 Փետրուար 2019:

⁴² «Իտալիոյ խորհրդարանը ընդունեց Հայոց Յեղասպանութիւնը», *Ջարթօւք*, 11 Ապրիլ 2019, էջ 4:

⁴³ «Սիկիլիոյ նահանգային խորհրդարանը միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 22 Ապրիլ 2016:

⁴⁴ «Իտալիոյ երկու քաղաքապետութիւններ կը ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 20 Մայիս 2016, էջ 1:

⁴⁵ Նոյն:

⁴⁶ «Իտալիոյ Պազիլիքաթա մարզի խորհուրդը միաձայնութեամբ ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 2 Հոկտեմբեր 2016, էջ 10:

⁴⁷ «Իտալիոյ Թուլֆա քաղաքը ընդունած է Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւ», *Ջարթօւք*, 4 Մայիս 2017:

զը⁴⁸ եւ Փիոմպինօ⁴⁹ քաղաքի խորհուրդը: Այսպէսով, շուրջ 110 քաղաքապետական խորհուրդներ ճանչցած եղան Հայոց Յեղասպանութիւնը:

Հոլանտայի խորհրդարանի ստորին պալատը ծայնէրու բացարձակ մեծամասնութեամբ 16 Փետրուար 2018ին Հայոց Յեղասպանութեան ճանաչման երկու բանաձեւեր որդեգրեց, որոնցմէ մին կը նշէր պարտատրութիւնը՝ Հոլանտայի նախարարի մը կողմէ Ծիծեռնակաբերդ այցելութեան⁵⁰: Իսկ 12 Յունիս 2019ին Հոլանտայի խորհրդարանը դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը ուրանալու Էրտողանի քայլը⁵¹:

Հոմի Ֆրանչիկոս Ա. պապը, երբ 24ին 26 Յունիս 2016ին Հայաստան այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, ամենայն հայոց կայթողիկոս Գարեգին Բ.ի հետ համատեղ իր հաղորդագրութեան եւ նախագահական պալատի պաշտօնական ճաշկերոյթին, յիշեց եւ դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը, այսպէսով վերահաստատելով Վատիկանի ճանաչումը⁵²:

Այս բաժինին մէջ կարեւոր է նշել ԱՄՆի ազդեցիկ հրեական «Ընդդէմ Վարկաբեկման Լիկա»ի (որ տասնամեակէ մը առեւի կը մերժէր ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը), 13 Մայիս 2016ի իր համացանցի էջին վրայ հրապարակած յայտարարութիւնը որ կ'ըսէր. «այն ինչ որ պատահեցաւ հայերուն առանց տարակոյսի Յեղասպանութիւն է»⁵³:

Նմանապէս, «Աշխարհի Պոպկարներու Ընկերակցութիւն»ը 2016ի աշնան Վարնայի մէջ գումարած իր Է. Նիստին դատապարտեց հայոց վրայ գործադրուած Յեղասպանութիւնը⁵⁴:

Դանիոյ խորհրդարանը 19 Յունուար 2017ին որձեւէ գ բանաձեւ մը քուէարկեց 89 քուէով ընդդէմ 9ի եւ 11 ձեռնպահութեամբ, ուր կը վերահաստատէր իր թիւ 54 որոշումը տրուած 19 Մայիս 2015ին «ողբերգական եւ արիւնոտ դէպքերուն որոնք տեղի ունեցած էին Արեւելեան Անատոլիոյ մէջ 1915-1923» եւ կը թելադրէր որպէս հաշտութեան միջոց անաչտ պատմական ուսումնասիրութեան, ցաւ կը յայտնէր որ թրքական օրէնքը չի թոյլատ-

⁴⁸ «Իտալիոյ Լաջիօ մարզը միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 20 Մարտ 2017:

⁴⁹ «Փիոմպինօ քաղաքի խորհուրդը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 29 Յուլիս 2020, էջ 1:

⁵⁰ «Հոլանտայի խորհրդարանը Հայոց Յեղասպանութեան երկու բանաձեւ ընդունեց», *Ջարթօք*, 24 Փետրուար 2018:

⁵¹ «Հոլանտա դատապարտեց Յեղասպանութիւնը ուրացող Էրտողանի քայլը», *Ազդակ*, 13 Յունիս 2019:

⁵² «ՆԱՍՏՏ Գարեգին Բ. կայթողիկոսի եւ նորին սրբութիւն Ֆրանչիկոս պապի համատեղ հռչակագիրը սուրբ Էջմիածնի մէջ», 27 Յունիս 2016:

⁵³ Յովսէփ Մելքոնեան, «Ամերիկայի հրեական լիկան ընդդէմ վարկաբեկման (ADL)», *Արարար*, 17 Մայիս 2016, էջ 2:

⁵⁴ "World Association of Bulgarians adopts declaration condemning the Armenian Genocide", *Zartok English edition*, October 31-November 6, 2016:

րեր իր քաղաքացիներուն եւ լրատոամիջոցներուն «Յեղասպանութիւն» բառը օգտագործել եւ կ'աւելցնէր թէ պատմական դէպքերու առթիւ կը պահպանէր դատավճիռներ չարձակելու իր ասանդութիւնը: Հայկական թերթեր գրեցին «Դանիոյ խորհրդարանը ընդունեց Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւը», գրելով թէ դժուար է այդ համարել Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւ, սակայն նկատած էր «որոշակի տեղաշարժ» դանիական դիրքորոշման մէջ⁵⁵: Թուրքիան գոհ էր. արտաքին գործոց նախարար Մեզուտ Չաուշօղլու յայտնեց թէ «Դանիոյ խորհրդարանին կողմէ 1915ի վերաբերեալ բանաձեւին մէջ չէ կիրառուած Յեղասպանութիւն եզրոյթը»⁵⁶:

Հայոց Յեղասպանութիւնը չճանչցած երկիրներու, երբեմն բազմաթիւ, երբեմն հատուկեմտ քաղաքներ, ճանչցան զայն: Այսպէս, Սպանիոյ Փունեթի Խենի⁵⁷, Լա Բոտա տէ Անտալոպիա⁵⁸, Էլտա⁵⁹, Ալաքուաս⁶⁰, Կարկախէնա⁶¹, Մերիտա⁶², Փայփորթա⁶³, Ալիքանթ⁶⁴, Պենալմատենա⁶⁵, Մալակա⁶⁶

⁵⁵ «Դանիոյ խորհրդարանը ընդունեց Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւը», *Ջարթօնք*, 27 Յունուար 2017:

⁵⁶ «Չաուշօղլու համատեղ յանձնաժողով ստեղծելու կոչ ըրած է՞», *Ջարթօնք*, 31 Յունուար 2017:

⁵⁷ «Սպանիոյ երկու քաղաքներ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած են», *Ջարթօնք*, 7 Ապրիլ 2016, էջ 3:

⁵⁸ Եոյն:

⁵⁹ «Սպանական երեք քաղաքներ ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը», *Ջարթօնք*, 30 Ապրիլ 2016, էջ 3:

⁶⁰ Եոյն:

⁶¹ Եոյն:

⁶² «Սպանիոյ Մերիտա քաղաքը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Նոր օր*, Լոս Անճելըս, 16, Յունիս 2016, էջ 1:

⁶³ «Սպանիոյ Փայփորթա քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 2 Յուլիս 2016:

⁶⁴ “Spain’s Alcante officially recognizes Armenian Genocide”, *Zartok English supplement*, August 1-August 7, 2016, էջ 5:

⁶⁵ «Սպանական Պենալ Մատենա քաղաքը պաշտօնապէս կը ճանչնայ եւ կը դատապարտէ Հայոց Յեղասպանութիւնը», *Արարար*, 14 Օգոստոս 2016:

⁶⁶ «Սպանիոյ Մալակա քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 26 Հոկտեմբեր 2016:

քաղաքները 2016ին, Սապատել⁶⁷, Փեթեր⁶⁸, Վիլենա⁶⁹, Կոպերա⁷⁰, Սուեբա⁷¹, Վալենսիա⁷² քաղաքները 2017ին, Ալբորքոն⁷³ 2018ին, Սորիա⁷⁴, Սանթ Իլատի Սաքալո⁷⁵ 2019ին, Օնթինիենթե⁷⁶, Քասթեոն⁷⁷ և Թորեմոլինոս⁷⁸ 2020ին ճանչցան Հայոց Յեղասպանությունը, ճանչցող քաղաքներուն թիվը քարձրացնելով 37ի:

Անգլիոյ Տարպի քաղաքը հանդիսացաւ Հայոց Յեղասպանությունը ճանչցող Միացեալ Թագաւորութեան առաջին քաղաքը⁷⁹, հայազգի բրիտանական նախկին նախարար լորտ Արա Տարգի կոչ ուղղեց Մեծն Բրիտանիոյ՝ Հայոց Յեղասպանությունը ճանչնալու, բայց՝ ապարդիւմ⁸⁰: Մինչ Մեքսիքայի Միչուաքան նահանգի ընկրէւր ընդունեց Հայոց Յեղասպանությունը ճանչցող եւ դատապարտող յայտարարություն⁸¹, մեքսիքական կառավարությունը տեղի տալով առեւտրական կապերու գծով թրքական

⁶⁷ "Spanish city of Sapadell recognizes Armenian Genocide" *Public Radio of Armenia*, 26 Յունուար 2017:

⁶⁸ «Ապանիոյ Փեթեր քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 3 Ապրիլ 2017:

⁶⁹ «Ապանիոյ Վիլենա քաղաքը կը ճանչնայ եւ կը դատապարտէ Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 1 Մայիս 2017:

⁷⁰ «Ապանիոյ Կոպերա քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանությունը», *Ջարթօնք*, 4 Մայիս 2017:

⁷¹ «Ապանիոյ Սուեբա քաղաքը կը ճանչնայ Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 7 Յունիս 2017:

⁷² «Ապանիոյ Վալենսիա քաղաքը կը ճանչնայ Հայոց Յեղասպանությունը», *Ջարթօնք*, 13 Յունիս 2017:

⁷³ «Ապանիոյ Ալբորքոն քաղաքը պաշտօնապէս ճանչցած եւ դատապարտած է Հայոց Յեղասպանությունը», *Ջարթօնք*, 28 Ապրիլ 2018:

⁷⁴ «Ապանիոյ Սորիայի քաղաքացիտարանը պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 10 Մայիս 2019:

⁷⁵ «Քասթալոնական Սանթ Իլատի Սաքալո քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանությունը» *Ազդակ*, 24 Հոկտեմբեր 2019:

⁷⁶ «Ապանական Օնթինիենթե քաղաքի քաղ. խորհուրդը ճանչցաւ Հայոց Յեղասպանությունը», *Ջարթօնք*, 1 Փետրուար 2020:

⁷⁷ «Ապանիոյ Քասթեոն քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 18 Դեկտեմբեր 2020:

⁷⁸ «Ապանիոյ Թորեմոլինոս քաղաքը ճանչցած է Հայոց Յեղասպանությունը», *Ազդակ*, 24 Դեկտեմբեր 2020:

⁷⁹ «Անգլիոյ Տարպի քաղաքը դարձաւ Յեղասպանությունը ճանչցող Անգլիոյ առաջին քաղաքը», *Արարար*, 9 Դեկտեմբեր 2018:

⁸⁰ «Լորտ Արա Տարգի կոչ կ'ընէ Մեծն Բրիտանիոյ ճանչնալու Հայոց Յեղասպանությունը», *Ջարթօնք*, 8 Նոյեմբեր 2018:

⁸¹ «Մեքսիքայի Միչուաքան նահանգի ընկրէւրը Հայոց Յեղասպանությունը ճանչցող եւ դատապարտող յայտարարություն ընդունած է», *Ջարթօնք*, 14 Մայիս 2019:

ճնշումներուն արգիլեց Տիգրան Մանսուրեանի «Ռեքուիէմ» Հայոց Յեղասպանութեան զոհերուն նուիրուած համերգի կայացումը Մեքսիքայի մէջ⁸²:

Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած երկիրներէն Պեմբիքայի խորհրդարանը այդ գծով ժխտողականութիւնը արտօնող որոշում մը քուէարկեց 25 Ապրիլ 2019ին⁸³:

Կարգ մը երկիրներու համար Հայոց Յեղասպանութիւնը խաղաքարտ է Թուրքիոյ հետ իրենց յարաբերութիւններուն մէջ: Երբ անոնք լաւ ընթացքի մէջ չլլան կամ լարուածութիւն ըլլայ, այդ երկիրներու պետական պաշտօնատարներ կամ խորհրդարանականներ ինպաստ Հայոց Յեղասպանութեան ճանաչման կամ որակումին մասին արտայայտութիւններ կ'ունենան, իսկ երբ տունէլ պետութեան գերագոյն շահը եւ կամ Թուրքիոյ հետ բարօջ կապերը պատճառ կ'ըլլան Հայոց Յեղասպանութեան հարցին անտեսման:

5 Յուլիս 2016ին Իսրայէլի քննախնէ մէջ քննարկուեցաւ Հայոց Յեղասպանութեան հարցը որ քուէարկութեամբ յղուեցաւ կրթութեան, մշակոյթի եւ մարմնամարզութեան յանձնաժողովին⁸⁴: Վերջինս Օգոստոս 1ին յայտարարեց թէ կը ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը⁸⁵: Խորհրդարանի 25 Յունիս 2018ի նիստին հարցի քննարկութենէն քիչ առաջ, ուշ երեկոյին այդ օրակարգէն հանուեցաւ Էրտողանի՝ Թուրքիոյ ընտրութիւններուն յաղթելէն ետք⁸⁶: Անդին, վարչապետ Պենիամին Նաթանիահու (որուն որդին առիթով մը Հայոց Յեղասպանութեան ակնարկած էր Թուրքիոյ դէմ խօսած ատեն) Հայոց Յեղասպանութիւնը որակեց իբրեւ «ահատր սպանդ», ԱՄՆի նախագահներուն հետետողութեամբ⁸⁷:

Եգիպտոս–Թուրքիա յարուածութեան եւ քաղաքական հակադրութեան շրջանին, Օգոստոս 2016ին եգիպտացի անկախ երեսփոխան Մուսթաֆա Պաքրի նշեց թէ ինք եւ 336 երեսփոխաններ կոչ ուղղած են Հայոց Յեղասպանութեան քանաճեմի մը ընդունման⁸⁸, իսկ 2018ին խորհրդարանի պաշտպանութեան եւ ազգային անվտանգութեան յանձնախումբի տեղակալ զօրավար Եահիա Քիտուանի եւ արտաքին յարաբերութիւններու յանձ-

⁸² *Nouvelles d'Arménie*, Փարիզ, Փետրուար 2016:

⁸³ «Պեմբիքայի Հայ Դատի գրասենեակը Պեմբիքայի ժխտողականութիւնը արտօնող որոշումը կը նկատէ անընդունելի», *Ազրակ*, 30 Ապրիլ 2019:

⁸⁴ «Իսրայէլի խորհրդարանի պատգամատորը յոյս ունի որ Հայոց Յեղասպանութեան հարցին անչլութեամբ կատարութիւնը քայլեր պիտի ձեռնարկէ», *Հարթօնք*, 18 Օգոստոս 2016, էջ 3:

⁸⁵ Նոյն:

⁸⁶ «Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ օրինագիծը հանուած է Իսրայէլի խորհրդարանի օրակարգէն», *Հարթօնք*, 29 Յունիս 2018:

⁸⁷ «Հայոց Յեղասպանութիւնը՝ պարզապէս 'ահատր սպանդ'» *Արարար*, 25 Սեպտեմբեր 2019:

⁸⁸ *Egypt lawmakers call on parliament to recognize Armenian Genocide, Zartong English edition*, August 1-7, 2016, էջ 5:

նախամբի քարտուղար Տարեք Խոպի վերստին արձարծեցին հայոց ջարդերը իբրեւ Յեղասպանութիւն ճանչնալու հարցը⁸⁹: Սակայն որեւէ քայլ չառնուեցաւ: Առաւելագոյնը որ եղաւ, միջազգային ժողովի մը ընթացքին նախագահ Միսի իր տոճած պատգամին մէջ նշեց հայոց տեղահանութիւնները եւ ջարդերը ու եզիպտոսի մէջ հայերու ապաստան տրուիլը:

Նոր Ջեյանտայի խորհրդարանին մէջ երեսփոխան Կարեթ Հիուզ դիմումնագիր մը ներկայացուց Հայոց Յեղասպանութեան ճանաչման գծով: Վարչապետուհի Ճեսինտա Արտըրն յայտնեց թէ իր երկիրը կը հաւատայ որ «1915ին ահաւոր դէպքեր եւ սպանդներ պատահեցան», սակայն այդ Յեղասպանութիւն չորակեց եւ ըսաւ թէ հարցը պէտք է լուծուի Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ⁹⁰:

Արաբական Միացեալ Էմիրութիւններ եւ Թուրքիա լարուածութեան շրջանին, 2017ին երբ ԱՄԷի արտաքին գործոց նախարար շէյխ Ապտուլլահ Պըն Ջայէտ Էլ Նահիան իր Հայաստան այցին այցելեց Ծիծեռնակաբերդ, դժգոհեցնելով Թուրքիան⁹¹: Սէնտական Արաբիոյ Arabia հեռուստակայանը Հայոց Յեղասպանութեան լայնօրէն անդրադարձաւ 2019ին եւ 2020ին:

Իսկ Թուրքիա յամառօրէն կառչած մնաց իր ժխտողական դիրքորոշումին: Առաւելագոյնը՝ Էրտողան 24 Ապրիլ 2020ին ցաւակցութիւն յայտնեց «այն օսմանահայերուն համար որոնք մահացան առաջին աշխարհամարտի բարդ ու դժուարին պայմաններու տակ»⁹²:

Թուրք լրագրող Ուզայ Պուլպօ յայտնեց թէ Թուրքիոյ Պատմութեան Հիմնարկը «կը պատրաստուի հրատարակել 25 հատորնոց գործ մը որ պիտի փաստէ որ Թուրքիա 'կապ չունի' Յեղասպանութեան հետ: Արդէն իսկ պատրաստուած է վաւերագրական ժապաւէն մը՝ «Հայկական ապստամբութիւնը ընդդէմ Օսմանեան Պետութեան, ահաբեկչութիւն եւ քարոզչութիւն» վերնագրով⁹³:

Թուրքիոյ ազգային մեծ ժողովի անդամ Կարօ Փայլան Թուրքիոյ խորհրդարանին առաջարկ ներկայացուց Հայոց Յեղասպանութեան շուրջ հե-

⁸⁹ «Եզիպտոսի խորհրդարանի անդամներ կ'արձարծեն Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը», *Ազդակ*, 24 Փետրուար 2018:

⁹⁰ «Բարդաբազէտներ կը պահանջեն որ Նոր Ջեյանտան ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը», *Պայքար*, 12 Օգոստոս 2018:

⁹¹ «Թուրքիա դժգոհ Ապտուլլահ Պըն Ջայէտի Ծիծեռնակաբերդ կատարած այցելութենէն», *Ջարթօնք*, 23 Յուլիս 2017:

⁹² «Էրտողան. 'ես յարգանքով կը յիշեմ օսմանցի հայերը, որոնք գոհուած են դժուար պայմաններու մէջ համաշխարհային Ա. պատերազմին ժամանակ», *Ազդակ*, 27 Ապրիլ 2020:

⁹³ «Թուրքիա կապ չունի՝ Յեղասպանութեան հետ», *Արարաց*, 3 Մայիս 2019, էջ 1:

տաքննութիւն սկսելու համարձակ հաղորդագրութեամբ մը⁹⁴: Սակայն քայլ չառնուեցաւ:

17 Յունիս 2020ին Թուրքիոյ նախագահական պալատին մէջ նախագահ Էրտողանի գլխատրութեամբ հինգ ժամ տեւող Բարձրագոյն խորհրդատուական խորհուրդի նիստին քննարկուած են «1915 թուականի դէպքերուն վերաբերեալ Թուրքիոյ ուղղուած անհիմն մեղադրանքներուն դէմ պայքարին մէջ նախատեսուող քայլերը»⁹⁵: 23 Յունիս 2020ին յայտարարուեցաւ թէ Հայոց Յեղասպանութեան հերքմամբ զբաղող յատուկ կառոյց մը պիտի ստեղծուի⁹⁶:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԱՆՅՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հողատարածքներու իմաստով եւ եղան արտայայտութիւններ, որոնք թէեւ առաջնակարգ գծի չէին, սակայն կարելի է յիշել իբր Հայկական Հարցի հոլովոյթի տողատակային բնոյթի նորութիւններ:

15 Հոկտեմբեր 2017ին վարչապետ Էրտողան Բիզէ քաղաքի համալսարանին մէջ իր նորսմանեան ախորժակները ցոյց տուող ճառ մը խօսեցաւ որուն ընթացքին ան նշեց թէ Թուրքիոյ հետաքրքրութիւններու բնագաւառին մէջ կը մտնեն Իրաքը, Սուրիան, Լիբանանը, Իսրիմը, Ղարաբաղը, Ազրպէյճանը, Պոսնիան եւ այլ «եղբայրական շրջաններ»: Ան անցցուց, որ «շատ պատմաբաններ կը համարեն, որ Թուրքիոյ սահմաններուն մէջ պէտք է մտնեն Կիպրոսը, Հայէպը, Մոսուլը, Էրպիլը, Քերքուլը, Պաթումը, Սալոնիկը, Վարնան, Արեւմտեան Թրակիան եւ Եգէական Ծովու կղզիները»⁹⁷: 2020ին Էրտողան երուսաղէմը եւ «թրքական քաղաք» նկատեց:

Թրքական մամուլն ալ Էրտողանէն ետ չէր մնար: Թուրքիոյ իշխանամէտ *Ենի Սէզ* օրաթերթը 2017ին նշած էր «Թուրքիա երեք օրուան մէջ կրնայ գրաւել Երուսաղէմ»⁹⁸:

Էրտողանի ծաալապաշտական երազները արդէն իսկ 12 Դեկտեմբեր 2015ին *Թուրքիզ Չաման* թերթին մէջ քննադատուած էին Ապտուլլա Պոզըրթի կողմէ, որ զգուշացուցած էր թէ պահանջատիրական վերոյիշեալ հարցերը կրնան արթնցնել առկախուած ցամաքային պահանջներ, ինչպէս՝ սուրիական Հաթայ նահանգի, *հայկական սահմաններու*, կամ ռուսական տնէչանքներու՝ Սեւ Ծովուն մէջ, յունական հաւաստիքներ Եգէական

⁹⁴ «Փայլան Թուրքիոյ խորհրդարանին կոչ ուղղած է Հայոց Յեղասպանութեան շուրջ հետաքննութիւն սկսելու», *Ազրպէյ*, 27 Ապրիլ 2020:

⁹⁵ «Էրտողան հինգ ժամ տեւած բարձրագոյն ժողովի ընթացքին անդրադարձած է հայկական լուսինի դէմ պայքարին», *Ազրպէյ*, 18 Յունիս 2020, էջ 4:

⁹⁶ «Թուրքիոյ մէջ Հայոց Յեղասպանութեան հերքմամբ զբաղող յատուկ յանձնախումբ կը կազմուի», *Չարթօսը*, 24 Յունիս 2020, էջ 6:

⁹⁷ «Կիպրոսը, Հայէպը, Պաթումը, Էրպիլը, Սալոնիկը պէտք է մտնեն Թուրքիոյ սահմաններուն մէջ. Էրտողան», *Չարթօսը*, 24 Հոկտեմբեր 2017:

⁹⁸ «Թուրքիա երեք օրուան մէջ կրնայ գրաւել Երուսաղէմ», *Ազրպէյ*, 3 Օգոստոս 2017:

Շովուն մէջ, ու կիպրական բացարձակ իրաաստիւթիւններ քարտուլային շրջաններու վրայ» (ընդգծումը՝ մերը – Ջ.Մ.)⁹⁹:

Միս կողմէ, իր ծայրայեղական արտայատուցումներով ծանօթ, ռուսական տումայի անդամ, Ժողովրդական Կուսակցութեան անդամ Վլատիմիր Ժիրինովսքի երբ 27 Փետրուար 2016ին Քրեմլիի մէջ 4500 հրաւիրեալներու ներկայութեան, հայկական երաժշտութեան մրցանակաբաշխութեան գնահատականի մրցանակի մը արժանացաւ, ան իր շնորհակալական խօսքին մէջ նշեց որ Կեդրոնական Ասիայէն եկող քոչուոր թուրքերը հայոց վրայ յարձակած էին, որոնք իրենց հայրենիքին մէջ կ'ապրէին: Հայերը շտտով պիտի տօնախմբեն Արեւմտեան Հայաստանի ազատագրումը, հայկական դրօշը պիտի ծածանի Կարսի, Արտահանի, Արարատի, Սատուի եւ Տրապիզոնի վրայ: Թուրքերը պէտք է ձգեն երթան Կեդրոնական Ասիա եւ Անատոլիան թողուն հայերուն, քիպտերուն եւ յոյներուն¹⁰⁰:

Նշենք որ այս խօսքերը արտասանուած էին Սուրիոյ վերեւ Թուրքիոյ կողմէ՛ ռուսական ռազմօդանաւի մը վար առնուելէն ետք:

Իդէպ, թուրքերու մօտ գոյութիւն ունի «Սեպի սինտրոն»ը: Այսպէս, Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութեան երեսփոխաններէն Մեհմէտ Էրտողան նշեց որ եթէ 15 Յուլիս 2016ի յեղաշրջումը յաջողէր «ապա Թուրքիոյ տարածքին չորս պետութիւն պիտի ստեղծուէր: Անոր համաձայն, ծրագրուած էր Պոլիսը դարձնել քաղաքապետութիւն մը, արեւելեան հատուածին մէջ ստեղծել հայկական պետութիւն, հարաւ-արեւելքին՝ քրտական պետութիւն, իսկ ներքին Անատոլիայի մէջ՝ թրքական պետութիւն»¹⁰¹:

Ռուսական ՆԹՎ Միր հեռուստակայանը Ապրիլ 2020ին ցուցադրեց Սեպի Դաշնագրով նախատեսուած Հայաստանի քարտէսը եւ «Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան» ընդունած դրօշը¹⁰²:

'Հայկական Անիմա Պնդումներու Դէմ Պայքարի Միութեան' (ԱՄԻՄՏԵՆ) ղեկավար Կեօքսէլ Կիլպէլ հաղորդած է վերի տեղեկութիւնը Թուրքիոյ «Հապէր- 61» կայանին: Ան նշած է թէ Ռուսիա եւ Ֆրանսա հայերուն կ'աջակցին Թուրքիոյ հողերուն վրայ պետութիւն ստեղծելու երազին: Ռուսական հեռուստակայանին ցուցադրած քարտէսին մէջ Տրապիզոնը, Րիզէն եւ Արդուիւնը Արեւմտեան Հայաստանի մէջ ներառնուած են: Ան անցուցած է

⁹⁹ Ապտուլա Պոզքիլթ, «Յետադարձական քաղաքականութեան վնաս», *Today's Zaman* (12 Դեկտեմբեր 2015), թրգմ. Սարգիս Մինասեան, *Նոր օր*, 24 Դեկտեմբեր 2015: Մէջբերումին «հաաստիքներ» բառը մեր կարծիքով «յաակնութիւններ» ըլլալու է:

¹⁰⁰ Harout Sassounian, “4500 guests attend special Armenian Genocide program”, *Մարտ 2, 2016*, ինթըրնէթ:

¹⁰¹ «Չորս պետութիւններ», *Արարատ*, 31 Օգոստոս 2017:

¹⁰² «Ռուսական պատկերասփիւռի կայանը ցուցադրած է Արեւմտեան Հայաստանի քարտէսը թրքական կողմը արձագանգած է», *Ազդակ*, 22 Ապրիլ 2020:

որ «ոռաբերը միշտ թուրքերու արին թափած են եւ ատոր համար օգտագործած են հայերը»: Իսկ Ռուսիոյ բազմաթիւ քաղաքական գործիչներ, ներառեալ արտաքին գործոց նախարարը հայկական ծագում ունին¹⁰³:

Գալով վերեւ նշուած «Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան», պէտք է նշել թէ որոշ հայ անձերու համախմբումով 2004ին հիմնուած է «Արեւմտեան Հայաստանի Բնիկ Ժողովուրդին Ազգային Խորհուրդը»: 2006-07ին այս մարմինը անդամակցած է ՄԱԿի բնիկ ժողովուրդներու իրաւանց փորձագիտական նորակազմ յանձնաժողովին: 2014ին, 18,786 արձանագրեալ հայերու քովով ընտրուած է «Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով»ը 64 անդամներով,¹⁰⁴ որոնք ընտրած են «Արեւմտեան Հայաստանի նախագահ»ը՝ Արմենակ Աբրահամեան, իսկ վերջինս 'վարչապետ' նշանակած է Տիգրան Փաշայեզեանը: Անոնք 2016ին վաւերացուցած են Սեւրի Դաշնագիրը եւ 2018ին «Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներ» նկատուած 28,000 հայերէն 20,000ին ծայնով ընտրած են երկրորդ «խորհրդարան»ը 77 անդամներով եւ նոր 'վարչապետ' նշանակած Գառնիկ Սարգիսեանը¹⁰⁴:

Այս զոյգ իրադարձութիւններուն դիմաց, ԼՂՀի հարցով Մեղրիի տարբերակի հեղինակ ամերիկացի Փոլ Կոպլը Մայիս 2020ին յայտնեց թէ «Արեւմտեան Ազրպէյճանի Հանրապետութիւն»ը հռչակուած է Թուրքիոյ Քայսերի (Կեսարիա) քաղաքը բնակող փրոֆեսորի մը՝ Կաֆար Շահամալլի կողմէ, որ յայտարարարծ է «Արեւմտեան Ազրպէյճանի վտարանդի կառավարութիւն»ը, որուն նպատակն է պահանջել Արեւմտեան Ազրպէյճանի հողային տարածքը, այսինքն ներկայ Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէկ մասը եւ այս «այդ հողամասէն տարագրուած ազրպէյճանցիներու յետնեալներուն անունով»¹⁰⁵:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՉՆՉԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրք պետութիւնը կը շարունակէ հայութեան հետքերու անյայտացումը Արեւմտեան Հայաստանի տարածքին: Ասիկա աննշմար չ'անցնիր նաեւ բանիմաց եւ անաչտ օտար մասնագէտներու կողմէ:

Չեխական *US Թեւեւ* ազդեցիկ օրաթերթը տպեց խմբագիր Միլատա Պրոկոպովայի հարցազրոյցը արուեստի պատմաբան Պոնոյի Մասարիքի անուան Համալսարանի վաղ միջնադարեան ուսումնասիրութիւններու կեդրոնի տնօրէն Իան Ֆոլետիի հետ, «Հին Հայաստանը Թուրքիոյ մէջ կ'անհետանայ եւ սա մշակութային Յեղասպանութիւն է» խորագրին տակ: Օրա-

¹⁰³ Նոյն:

¹⁰⁴ Մեթր Գասպար Տէրտրեանի յօդուածի հաղորդած տեղեկութեւնէն քաղուած, *Զարթօնք*, 17 Փետրուար 2020:

¹⁰⁵ Փոլ Կոպլը, *Eurasia Review*, 13 Մայիս 2020, *Ազգային մէջ տրուած թարգմանարար*, 17 Մայիս 2020:

թերթը մանրամասնօրէն կ'անդրադառնայ «Թուրքիոյ մէջ սկսած հայկական մշակոյթի ոչնչացման քաղաքականութեան: Ֆոլետի կը գրէ. «Կը շարունակուի 1,5 միլիոն հայերու ոչնչացման քաղաքականութիւնը, այս անգամ մշակութային ժառանգութեան: Անի մէջ որեւէ վահանակի վրայ ակնարկութիւն չկայ հայերու մասին, իսկ Արեւմտեան Հայաստանի տարածքին հայկական եկեղեցիներու վրայ գտնուող հայերէն գրութիւնները կը վերցնեն, նաեւ կը քանդեն հայ թագաւորներու եւ այլոց գերեզմանները ու ամէն քայլափոխի կարելի է հանդիպիլ մարդկային ոսկորներու»¹⁰⁶:

Թուրքիոյ խորհրդարանի անդամ Փայլան Վանի Սուրբ Կոյսերու մենաստանի պահպանման հարցով հարցապնդում ներկայացուց ինկ կէտերով, որոնցմէ վերջինը կ'ըսէր. «հայերէ մնացած մշակութային կէտերու ոչնչացումը մինչ օրս պետական քաղաքականութիւն եղած է: Կը մտածէ՞ք արդեօք որեւէ փոփոխութիւն մտցնել այս քաղաքականութեան մէջ»:

Միա կողմէ, թուրք պետութիւնը ջանք չի խնայեր հայկական նախկին շրջանները թրջագգիներով քնակեցնելու: Այսպէս, 2017ին Նախիջեանէն Կարս-Արտահանի շրջանը փոխադրուեցան ազերիներ¹⁰⁷:

Պահանջատիրութեան հարցով միակը Սիսի կաթողիկոսարանի վերադարձի հարցն է, որ դժուար ընթացքի մէջ է: Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանը մերժեց ընդունիլ դատին քննութիւնը եւ թելադրեց դիմել թրջական դատարաններուն¹⁰⁸:

ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳՐԻ 100ԱՄԵԱԿԸ

Պակաձեւ ժաիրի (Covid -19) համաճարակին պատճառով Սեւրի Դաշնագրի 100ամեակը նախատեսուածին նման մեծ տարողութեան ձեռնարկներով չնշուեցաւ Հայաստանի կամ Սփիտքի մէջ:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան նշեց թէ «Սեւրի պայմանագիրը կարեւոր փաստաթուղթ է Հայկական Հարցի լուծման հասնելու մասին»¹⁰⁹:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան իր կարգին նշեց, թէ «Սեւրի պայմանագիրը պատմական փաստ է, մեր պարտքն է յիշել զայն եւ պահպանել անոր խորհուրդը»: Վարչապետը իր խօսքին մէջ իմիջիայլոց նշեց, թէ «Սեւրի Պայմանագիրը իր 89րդ յօդուածով կը փաստէր եւ կ'ամրագրէր հայ ժողովուրդի պատմական անվիճելի առնչութիւնը Հայկական Լեռնաշխարհի հետ, ուր հազարամեակներէ իվեր ծնած, ապրած եւ պետականութիւն ու

¹⁰⁶ «Հին Հայաստանը Թուրքիոյ մէջ կ'անհետանայ. Չեխական թերթը Թուրքիոյ մէջ հայկական ժառանգութեան մասին», *Հարթօք*, 20 Յունիս 2018, էջ 3:

¹⁰⁷ *խօսքեր*, Սեպտեմբեր 2017:

¹⁰⁸ «Սիսի կաթողիկոսարանի վերադարձի դատին գծով՝ անարդար կը գտնենք եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանի մօտեցումը». Արամ Ա., *Հարթօք*, 20 Հոկտեմբեր 2018:

¹⁰⁹ *Հարթօք*, 11 Օգոստոս 2020, էջ 7:

մշակոյթ կերտած էր հայ ժողովուրդը եւ վերջապէս, Սեւրի Պայմանագիրը կնքուեցաւ Հայոց Մեծ Եղեռնի տարիներուն յաջորդած ժամանակաշրջանին: ...Սեւրի Պայմանագիրը ճանապարհ կը հարթէր Յեղասպանութեան հետեանքներուն յաղթահարման համար: Հայ ժողովուրդի պատմական բնօրրանին մէջ, անկախ պետականութեան ստեղծման միջոցով, արդարացի լուծում կը ստանար Հայկական Հարցը, կը վերականգնէր պատմական արդարութիւնը, բարենպաստ պայմաններ կը ստեղծուէին մեր ժողովուրդի տնտեսական եւ ժողովրդագրական ներուժի վերականգնման, անոր բնականոն զարգացման եւ առաջընթացին համար: Թէեւ Սեւրի Պայմանագիրը այդպէս ալ կեանքի չկոչուեցաւ, անիկա կը շարունակէ գոյութիւն ունենալ իբրեւ պատմական փաստ»:

Թուրքիա հակազդեց իր արտաքին գործոց նախարարութեան գերատեսչութեան յայտարարութեամբ: Այնտեղ նշուած էր, որ «Հայաստանի պետական մարմինները յարձակողական ազգայնական քաղաքականութիւնը ձգեն եւ խեղճերնին գլովսնին հաւաքեն»: Անոնք նշած են, թէ «Սեւրի Պայմանագրին նպատակն էր մասնատել Թուրքիան եւ վերջ դնել անկախութեան եւ ինքնիշխանութեան, եւ սակայն թուրք ազգը «պատռած եւ պատմութեան աղքատման նետած է գայն»: Յայտարարութիւնը անուղղակի կերպով Հայաստանը մեղադրած է «թշնամանք սերմանելու մէջ» եւ այդ նպատակով Սեւրի Պայմանագրի օգնութեան դիմելուն մէջ»¹¹⁰:

Սփիոքի հայ ամանակաւ երեք կուսակցութիւնները՝ ՍԴՀնչակեան, ՀՅԴաշնակցութիւն եւ ՌԱ կուսակցութիւնները 10 Օգոստոս 2020 թուակիր յայտարարութեան մը մէջ իմիջիայլոց նշեցին թէ մինչեւ Սեւրի Պայմանագրին մէջ տեղ գտած միջազգային իրատունքի նախադրեալները կազմող կէտերուն վրայ հիմնուած Թուրքիոյ պարտաւորութիւններուն ամբողջական կատարումը, Թուրքիան պարտաւոր է:-

Ա) Դադրեցնել Հայաստանի Հանրապետութեան 27ամեայ անօրինական ցամաքային շրջափակումը:

Բ) Դադրեցնել յատկապէս վերջին շրջանին Հայաստանի դէմ ուղղուած իր ռազմատեսչ քայլերը:

Գ) Դադրեցնել իր ընդհանրապէս հակահայ քաղաքականութիւնը Թուրքիայէն ներս, ներառեալ մեր պատմական ու բռնագրաւուած հողերուն վրայ - թէ դուրս - ցեղասպանութեան հետեանքով ձեւատրուած հայկական գաղութներուն դէմ»¹¹¹:

Անկախ Սեւրի 100ամեակին հետ կապուած գրաւոր արտայայտութիւններէ, կ'ուզենք նշել որ Հայաստանի մէջ պահանջատիրութեան գծով

¹¹⁰ «Թուրքիան անհանգստացած է Սեւրի Դաշնագրի թեմայով Հայաստանէն հնչած յայտարարութիւններէ», *Հարթօտը*, 12 Օգոստոս 2020:

¹¹¹ «ՍԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ միացեալ յայտարարութիւն», *Ազդակ*, 10 Օգոստոս 2020: *Հարթօտը* չիրատարակեց այս յայտարարութիւնը:

անցնող տարիներուն եղած են այլ գրութիւններ որոնք կը հակադրուին Սփիւռքի մէջ տիրող գրեթէ համընդհանուր կեցուածքին:

Այսպէս, պատմաբան Ստեփան Պօղոսեան գրած է. «*պահանջափրոթիւնը չի կարող պեքական քաղաքականութիւն դառնալ: Ինչու՞, նախ Հայաստանի Հանրապետութիւնն այն գործնական հողի վրայ դնելու համար ո՛չ բաարար ուժ ունի եւ ոչ էլ հնարատրութիւն: Երկրորդ, Արեւմտեան Հայաստանում հայ չկայ եւ պահանջափրոթիւնից առաց, հարկ է գտնէ մասնակիորէն լուծել այդ խնդիրը, ինչի համար կը պահանջուեն բազում փարիներ»¹¹²:*

Հայաստանի նոր սերունդէն երիտասարդ մը «Պահանջատէր լինելու համար պէտք է լինենք հայրենաճանաչ ու իրաւաճանաչ» գրութեան մէջ կը գրէ. «Ներկայումս հողային պահանջներ ներկայացնելը իրական հնարատրութիւն չունի: Նախ՝ իրաւական առումով դրա հիմնատրումը բարդ խնդիր է: Բացի այդ, մեր պատմական տարածքներում արդէն բնակուած են միլիոնատր քղոներ, որոնք ունեն անկախ պետութիւն ստեղծելու մեծ նպատակ եւ այժմ Թուրքիան կանգնած է այդ խնդրի առաց: Դժուար թէ մենք կարողանանք վերահսկել 10 միլիոնանոց քղոներին, որոնց Թուրքիան անգամ չի կարողանում վերահսկել»: Ապա կը նշէ իբր հայ իր պահանջները.- 1) անմիջապէս ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը, 2) կազմել ցանկ եւ փոխհատուցել հայոց կրած նիւթական վնասները, 3) Հայաստանի վերադարձնել հայոց հայրենիքին խորհրդանշանը՝ Արարատ լեռը եւ հայոց պետականութեան խորհրդանշանը՝ Անիի աներակները, 4) վերացնել Թուրքիոյ կողմից Հայաստանի ապօրինի շրջափակումը, 5) Հայկական կառոյցները վերադարձնել (մասնատրապէս Հագէին), 6) Ստեղծել պետական յանձնաժողով, որը կը քննի բոնի կրօնափոխութեան եւ թուրքացած հայերի ներկայիս կարգավիճակը եւ նրանց իրազեկի այդ մասին, 7) վերջ տալ հակահայկական քայլերին, Յեղասպանութեան մերժման փորձերին եւ ներել դրա համար հալածուող մարդկանց ու վերականգնել նրանց ոտնահարուած իրաւունքները»¹¹³:

Հայաստանի, Ազրայէճանի եւ Ռուսիոյ 9 Նոյեմբեր 2020ի ստորագրած եռակողմանի յայտարարութենէն ետք, Սփիւռքի մէջ հնչեցին ահազանգային գրութիւններ: Անոնցմէ ամէնէն ուժգինն էր Աստրալիայէն Արեգ Եսփումեանի գրածը: «Այսօր, ամէն ոք Հայաստանի կամ Սփիւռքի մէջ իրարու դէմ մեղադրանքներ արձակելով եւ դաւաճաններու մակդիրներ շնորհելով զբաղած է: Յառաջիկայ տարի Կարսի Դաշնագրի 100ամեակին [13 Հոկտեմբեր 1921] առթիւ, Արցախի կարգավիճակի կապակցութեամբ հակա-

¹¹² Սետիւտ Եսփումեան, «"Հայոց Յեղասպանութեան պատմութիւն" հեղինակ՝ Ստեփան Պօղոսեան», *Հայրթոյք*, 15 Ապրիլ 2016:

¹¹³ Լեւոն Կարապետեան, «Պահանջատէր լինելու համար նախ պէտք է լինենք հայրենաճանաչ եւ իրաւաճանաչ», *Հայրթոյք*, 28 Ապրիլ 2020:

մարտության վերջին դեպքերը կրնան կրկնուի, այս անգամ Հայաստան-Թուրքիա սահմանագիծը խնդրոյ առարկայ դարձնելով: Եւ այն ատեն, դարձեալ Էրտողանի նախաձեռնութեամբ, ամբողջ 102 տարուան Հայաստանի պետականութեան գոյատեւումը կրնայ Արցախի Հանրապետութեան ճակատագրին յանգիլ»¹⁴:

Պէտք է նշել, որ ոռասկան ռազմախարխիս կայ Գիւմրիի մէջ եւ Հայաստան-Ռուսիա 42 տարիներու համար կնքուած դաշինք, որով Ռուսիան յանձն կ'առնէ: պաշտպանել Հայաստանի արտաքին սահմանները որեւէ յարձակումի պարագային:

THE EVOLUTION OF THE ARMENIAN QUESTION 2016-2020

(Summary)

ZAVEN MESSERLIAN

During the five years that followed the centenary of the Genocide perpetrated against the Armenians by Turkey, certain developments took place:

- a) The President of the Republic of Armenia, Serge Sarkessian, considered the Turkish-Armenian protocols null and void in March 2018, as Turkey had not ratified them.
- b) After the “velvet revolution” Prime Minister Nigol Pashinian declared in September 2019 that “Turkey remains a serious threat for the security of the Armenian nation, as they have not recognized the Armenian Genocide.” His fears were realized in the war of aggression of Azerbaijan, heavily supported and guided by Turkey, during the 44 day war on Artsakh from September 27 to November 9, 2020.
- c) In his new book, Turkish historian Taner Akcam proved beyond doubt that Ottoman Interior Minister Talaat’s genocidal telegrams, as reported by Aram Andonian, were authentic.

The article narrates these developments in the context of the ongoing history of the Armenian Genocide. Likewise, it focuses on the continuing process of the recognition of the Armenian Genocide.

The author notes that between 2016 and 2020 Germany, the Andean parliament of South America, the Czech Republic, the provisional government of Libya, Portugal, Syria, and both the US House of Representatives and Senate recognized the Armenian Genocide.

Finally the article mentions the declarations made by Armenia’s leaders and the retort of the Turkish Ministry of Foreign Affairs on the 100th anniversary of the Treaty of Sevres, signed on August 10, 1920.

¹⁴ Արեգ Եափունեան, «Նոսանկարային մտորումներ», *Հայրթոյն*, 14 Դեկտեմբեր 2020, էջ 7:

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՐԴԱՆԼՈՒԻ ՇԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲԵԱՆ (vanik.virabyan@mail.ru)

Չարդախլուն (Խաչխար, Չարդախլու, Չարդախլի, Չարտախլու, Чардакли, աղբբ. Çardaqli) հինաուրց հայկական գիտ է, որը ներկայումս գտնւում է Ադրբեջանում՝ Շամխոր քաղաքից 22 կմ հարաւարեմուտք՝ չորս կողմերից լեռներով շրջափակուած գոգաւորութիւնում: Այն ժողովրդական ստուգաբանութեամբ նշանակում է «չորս լեռների միջեւ ընկած բնակավայր»: Այս անուան ատուգաբանութեան իր տարբերակը ներկայացնելիս յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը դիմում է Յովհաննէս Գասպարեանին. «Գիտէ՞ն իր անունը սրացել է ոմանց սանելով «չարդախ», իսկ ոմանց սանելով՝ պարսից «չհարդաղ» բառից ... ոմանք ընդունում են այս գիտւմ չորս սար գարուելուն համար, որոնք են Չախրեօյի, Ղարաղաղ, Ղարամօղի եւ Բարձր Խաչ կամ Խաչեաթ»¹:

¹ Յովհ. Գասպարեան, «Չարդախլուն եւ նրա պատմութիւնը», *Նոր Դար*, 1889, N 197, էջ 3: Ներկայումս գիտականօրէն աննշդունելի պատմագիտական նոր գաղափար է հրահանում. գիտական շրջանառութեան մէջ է դրուած «Հիւսիսային Արցախ» արհեստական հասկացութիւնը, որի գլխաւոր ջատագովը յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանն է, ըստ որի Հայոց Ոստիք աշխարհի 3 գաւառներ ներառուած են իր իսկ կողմից ներկայացուած եւ իր կողմից պայմանակաւնօրէն «Հիւսիսային Արցախ» անուանուող երկրամասի մէջ, որը ժխտողական մօտեցում է արդէն վարդուց ծեաւորուած գիտական մտքի եւ պատմագիտական տեսակէտի հետ, քանզի յայտնի է, որ Ոստիքը Արցախ աշխարհից յետոյ ընդամէնը Հայոց Արեւելից Կողմանց հիւսիսային երկրորդ նահանգն է. առաւել եւս որ հեղինակն ինքը չի ժխտում, որ «Հիւսիսային Արցախ» կոչուած երկրամասը ըստ *Աշխարհագրոյցի* եւս ներառում է Մեծ Հայքի Արցախ եւ Ոստիք նահանգներից երեքական գաւառներ՝ Արցախից՝ Քուստի Փառնես, Կողթ եւ Մեծ Կողմանք, իսկ Ոստիքից՝ Տուս-Քուստակ, Գարդման եւ Շակաշէն գաւառները: Մէկ կարելուոր հանգամանք եւս. Կարապետեանի այս հատորից այն տպատրութիւնն է առաջանում, որ Շամխորի եւ այլ շրջանների գիտերի հայկական բնակչութիւնը եկուոր է, եւ այդ բնակավայրեր են տեղափոխուել այլ վայրերից, որ այդ գիտերի բնակիչները տեղաբնիկներ չեն, ինչը պատմականօրէն սխալ է եւ կարիք ունի վերանայման եւ ջուր է լցնում ադրբեջանցի կեղծարար «գիտնականների» ջուղղացի: Այդ ամէնը պարզապէս գիտական ապատեղեակութիւն է, ինչն ակնյայտօրէն երեւում է հեղինակի աշխատանքի հետազօտութիւնից, չնայած ինքը հեղինակը հակասելով իրեն գրել է, որ «որ ներկայիս գիտի քարածքը բնակեցուած է եղել պարսկական անյիշելի ժամանակներից», սակայն թէ ուրքեր են բնակեցրել այն՝ չի պարզուած եւ հասկանալի չէ գիտի անցեալի եւ ներկայի հայկականութեան կապը (Սամուէլ Կարապետեան, *Հիւսիսային Արցախ*, *RAA Գիտական ուսումնասիրութիւններ*, գիրք 2, Երեւան, ՀՀ ԳՍԱ Գիտութիւն հրատ., 2004, էջ 9, 74, 510. նաեւ՝ Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յովհաննէս Խ. Բար-

Չարդախլու հայկական գիտլի հին, բազմադարեան մշակոյթի տարեգրութիւնը իր արձանատեւութիւնը գալիս է դարերի խորքերից: Դա են վկայում նրա բազմաթիւ յուշարձանները՝ բերդերի մնացորդները, խաչքարերը, տարբեր կիկլոպեան կառոյցները, տապանաքարերը, մատուռները, Ս. Աստուածածին եկեղեցին, Վահրամ իշխանի ԺԳ.-ԺԴ. դարերի երկու բերդերը՝ Շամխորի եւ Ղալաբոյունիի²:

Գիւղը նախկինում գտնուել է Խաչասար լեռան արեւելեան լանջին, իսկ այնուհետեւ այն աստիճանաբար տարածուել է նաեւ արեւմտեան լանջի վրայ: Հայկական Չարդախլուն ընկած է Զագիր գետի ափին (այժմեան Արբերջանի Հանրապետութեան Շամխորի շրջանի) եւ գտնուում է պատմական Գարդմանաց (Ուտիք) գաւառի հնամենի Գանձակ քաղաքից ոչ-հեռու, Շամխոր-Գետաբէկ մայրուղու վրայ: Շահեկան է Մակար եպի. Բարխուդարեանցի գիտլի բնութագրական նկարագիրը. «Չարդախլու գիտլ. հիմնուած է Զակիրի արեւմտեան կողմում մի հարթավայր տեղում. որի բարձ. 5181, բնակիչք բնիկ, հողն արբունի, անջրդի, հացաւէր. Տեղական բերքերն նոյն, սննդարար օդն, կլիման եւ ջուրն, երկար կենսք 80-90 տ. եկեղեցին Սուրբ Աստուածածին, հոյակապ, քահանայ մի: Գիտլիս մօտ է Ոսկան նահապակ անուամբ ուխտապրեղին, որ Բուլանլուղ եւս է կոչուան»³:

Ահա եւ մի այլ հետաքրքիր դիտարկում. «... Ը.-Ժ. դարերի որոշ պատմական աղբիւրներ ...լցկտուր տեղեկութիւններ են տալիս որ այդ տեղանքում ապրել են հայեր եւ այն կոչուել է Չարդախ (պարսկերէն 14) եւ եղել է Գարդմանաց իշխանութեան 14րդ բնակավայրը, մի այլ պատում նշում է, որ չարդախ (չեար դաղ) նշանակում է չորս սար, որոնց փէշերին փռուած է գիւղը եւ որը յերագայում փռադարձուել է Չարդախլու անունով, իսկ վրացական բառարանում այն թարգմանուած է «Ոսկէ հովիւր»: Սարերից մէկի բարձր գագաթին դրուած էր մեծ խաչքար, որը Սահակ Սեաղայի ժամանակաշրջանից էր (այդպէս են բնորոշում հնագէտները)» եւ յիշատակում է նրա յարթական այցը Չարդախլու: Այդ ժամանակուանից էլ այն ստացել է Խաչի սար անունը, իսկ քաջ Սեւորդեանների կողմից այդ լեռներից բխող սառնորակ ու անուշահամ ջրերի շուրջն աճած անտառը դարձել է Սեւորդեանների հանգստավայրը, որը յետագայում, երբ գրաւել են թուրքերը, Սեւ որդիները թարգմանել են կարա օղլի-Ղարամօղլու⁴:

Հիւստուրց հայաբնակ յայտնի այս գիւղը դարերի ընթացքում հանդիսացել է շրջակայ հայկական տասնհինգից անելի գիւղերի յենարանը եւ

սեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հար. 3, Երեւան, ԵՊՀ հրատ., 1991, էջ 220:

² Մակար եպո. Բարխուտարեանց, Արցախ, Երեւան, «Լուսակն» հրատ., 2018, էջ 19, 208, 222, 326-27, 436. նաեւ՝ Կարապետեան, էջ 510:

³ Բարխուտարեանց, էջ 320:

⁴ Չարդախլու. հայկական գիտլի պատմութիւն, կազմ.՝ Լ. Աղամեան, Երեւան, «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 9:

անվտանգության երաշխատրը⁵, հայ մարտական ոգու արտացոլանքը եւ խորհրդանիշը, որը հարթավայրի թաթարներին խանգարում էր հասնել լեռնային արտավայրերին⁶, հող ստեղծելով բախումների համար տարբեր ժամանակներում: Մասնատրապետ ԺԷ.-ԺԸ. դարերում յայտնուելով նաեւ լեզգիների, վրացիների, թուրքերի ու թաթարների պարբերաբար կրկնուող անբիշ ասպատակութիւնների կենտրոնակէտում, ի վերջոյ այն գրեթէ իսպառ հայաթափուել էր եւ անայացել:

Ըստ 1826-28 ռուս-պարսկական պատերազմի մասնակից, փոխ-գորավար Մորից Աւգուստի Կոցերովի տուեալների, որոնք շրջանառուել են ադրբեջանցի պատմաբան Իռադա Մալիք Գիզի Մամեդովայի կողմից, որը եւա Չարդախլուն հայկական գիւղ է համարում: Մամեդովայի բերած փաստերի համաձայն գիւղը 1826ին ունեցել է 113 տուն, 738 բնակիչ, որից 387ը՝ տղամարդ, 351ը՝ կին⁷: Իսկ արդէն հայկական աղբիւրների, եւ մասնատրապետ պատմաբաններ Ստեփան Մելիք-Քախշեանի եւ Թադեոս Յակոբեանի կողմից բերուած փաստերի համաձայն 1907ին գիւղն ունէր 1863, իսկ արդէն 1975ին՝ 4000 բնակիչ: Ըստ Կարապետեանի՝ Ադրբեջանի Խորհրդային Հանրապետութեան արխիւներից վերցուած եւ միտումնաւոր նուագեցրած թուերի իբր թէ 1976ն կազմել է 1526 մարդ, 1985ին՝ դարձեալ նոյն կեղծ աղբիւրի հիման վրայ՝ 2527 մարդ⁸, որում կարծում ենք անյի համոզիչ են եւ իրական Մելիք-Քախշեանի եւ Յակոբեանի փաստարկուած տուեալները: Չարդախլուի հայ բնակչութիւնը հիմնականում զբաղում էր հացահատիկային մշակաբոյսերի մշակմամբ, այգեգործութեամբ, ինչպէս նաեւ անասնապահութեամբ⁹:

Գիւղի հերոսական տարեգրութիւնը դարերի խորքից է գալիս, արմատներ գցելով տեղի ասանդապաշտ հայերի ամէնօրեայ կեանքում: Որպէս օրինակ կարելի է նշել 1877-78 ռուս-թուրքական պատերազմի հերոս եւ

⁵ Բարխուտարեանց, էջ 19, 208, 222, 326-27, 436:

⁶ Կարապետեան, էջ 74:

⁷ И. М. Мамедова, «Статистические описания Шамшадиньской и Казахской дистанции» как источник для изучения истории населения Закавказья (первая треть XIX ст.), (Ի. Մ. Մամեդով, Ղազախի եւ Շամշադինի ուղեմասերի վիճակագրական նկարագրութիւնը որպէս Անդրկովկասի բնակչութեան պատմութեան ուսումնասիրութեան աղբիւր (ԺԹ. դարի առաջին քառորդ), «Արեւելագիտութիւն», Ուկրաինայի ԳԱԱ Ա. ԵՈ. Կրիմսկու անուան արեւելագիտութեան ինստիտուտ, 2012, հմ. 59, էջ 104-20 (www.irbis-nbu.gov.ua/cgiirbis_64). նաեւ՝ http://www.library.univ.kiev.ua/ukr/elcat/new/view_order_new1.php3?source=1&prev=0&page=0&parentId=1563806&parentName=%D1%F5%EE%4%EE%E7%ED:

բեռնման օրը՝ 25 Յուլիս 2021:

⁸ Կարապետեան, էջ 512-513:

⁹ Յակոբեան, Մելիք-Քախշեան, Բարսեղեան, էջ 220:

նագմական գործիչ փոխ-գորաար Արշակ Տերղովատովի անունը, որը սերում է Չարդախլուից, եւ որի հայրը եղել է գիտի քահանան¹⁰:

1905-06՝ այն ելիզաւետպոլի նահանգի ելիզաւետպոլի գաւառի կազմում էր երբ հրահրուեցին հայ-թաթարական կոնսերը: Ըստ ասանդութեան, Խաչատար լեռան վրայ եղել է մեծ զանգ, որով շրջակայ քնակիչներին նախագգուշացրել են թշնամիների յարձակումների մասին: 1902-03՝ ահաբեկչութիւնից եւ հայկական ունեցոածքի վերադարձից յետոյ, ինչպէս նշել է Ալեքսանդր Խատիսեանը՝ «*ռուսական վարչակարգի մութ ուժերի կողմից հայ-թաթարական ջարդեր կազմակերպուեցին, որում հայկական ինքնապաշտպանութիւնը փրկարար դեր կատարեց*»¹¹, որի խարդաւից մթնոլորտի մէջ էլ ներքաշուեց ոչ միայն Գանձակի ողջ գաւառը, այլև հայկական Չարդախլուն՝ շրջակայ բազմաթիւ շէն գիւղերով հանդերձ:

Չարդախլուի հայերը 1905-06ի հայ-թաթարական ընդհանրումների ժամանակ աչքի ընկան իրենց բացառիկ քաջութեամբ եւ մարտական աննկուն վարքագծով, չնայած գիտի ռազմավարական անյարմար դիրքին, որի կողքին Հայի Գետարէկ (Գետաբակ), Կրզէն, Սարով, Ղարադաղլու եւ Բաղաքենդ (Բաղա-Բաղենք) գիւղերն աւելի լաւ ռազմավարական յենակետային դիրքեր ունէին: Գիտի մարտակորով քնակչութեան ոգեկոչներից է եղել 1894-1908՝ գիտի ծխատէր քահանայ Գէորգ Տէրստեփանեան-Մանասեանը¹², որն իր անզիջում եւ անձնուրաց նուիրումով եւ կարեւոր դեր է խաղացել ինքնապաշտպանութեան կազմակերպման գործում:

Չարդախլուն մշտապէս եղել է թուրքական յարձակողականի գլխատր թիրախը, քանզի կոտորելով չարդախլուեցիների դիմադրութիւնը, նրանց ամէնայն հասանականութեամբ կը յաջողուէր ջարդել երկրամասի մնացեալ գիւղերի դիմադրութիւնը եւ նուաճել բնիկ հայկական այս երկրամասը: Դա ցայտուն արտայայտուեց ցարիզմի կողմից հրահրուած 1905-06ի հայ-թաթարական բախումների ժամանակ, չնայած աղբրեջանցի պատմաբան Սեւինջ Ալիեան ցարական իշխանութիւնների հետ միասին, համեարաշխուելով նրանց կեղծ ազգային քաղաքականութեան հետ «*հայկական*

¹⁰ Ռ. Յովհաննիսեան, *Աղբրեջանի հայոց թեմ. Հայ Առաքելական եկեղեցու թեմերն աշխարհում, հպր. 6*, Երևան, «Լուսակն» հրատ., 2020, էջ 60:

¹¹ К. Р. Амбарцумян, «Русская Революция и образование Республики Армения на Кавказе (1917–1918 гг.) А. И. Хатисова» (Կ. Ռ. Համբարձումեան, Ա. Ի. Խատիսովի «Ռուսական յեղափոխութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան կազմաւորումը Կովկասում (1917-1918 թթ.)», հրապարակումներ եւ թարգմանութիւններ, «Երկխօսութիւն ժամանակի հետ», 2017, հմ. 60, էջ 365-83 (www.academia.edu/38722700/ К.Р._АМБАРЦУМЯН_Хатисов_А. И._Русская_революция_и_образование_Республики_Армении), ներբնունա՝ 20 Յուլիս 2021:

¹² Կարապետեան էջ 5, 17:

ազգայնական» ՀՅ Դաշնակցությանը եւս մեղսակից է համարում այդ կոհներին, ինչը աղոթեցանական շինծու հերթական պնդումներից է¹³:

1905 Նոյեմբերի 18ին թուրքական զորուժը պաշարում է Չարդախլուն, Բաղան, Գետաբէկի շրջանն ու գերմանական «Սիմմենս» ընկերության պղնձամուրական գործարանը եւ մերձակայ Ղազախ գիւղը, վստահ լինելով, որ այդ մարտավարությանը իրենց կը յաջողուի այդ գիւղերին շրջափակել, կտրել դրսից եւ միմեանց աջակցելու որեւէ օգնության յոյսից, եւ վերջ տալ այդ բնակավայրերի դիմադրութիւնը: Այս նպատակին հասնելու համար, ըստ Համլէտ Գէորգեանի, թուրքերը հետախուզում են՝ պարզելու իրենց դիմադրող գիւղերի տեղի, մարտական ուժերի քանակն ու հնարատրութիւնների մանրամասները: Եւ քանի որ Շամխորի շրջանի այդ գիւղերից ամենաուժեղը, հետեաբար թուրքերի համար ամենավտանգատրը հենց Չարդախլուն էր, ուստի թուրքերը որոշում են իրենց հիմնական ուժերով չորս կողմից յարձակուել Չարդախլունի վրայ եւ այն խսպառ ոչնչացնելուց ու թալանելուց յետոյ միայն հարուածի ուղղութիւնը կենտրոնացնել Գետաբէկի, այնտեղ գտնուող գործարանի եւ Ղազախի վրայ¹⁴: Սակայն գիւղի պաշտպանները ոչ միայն չեն ընկճում, այլեւ ընդունում են հակառակորդի մարտահրաւերը, ընտրում ճիշտ մարտավարութիւն եւ մինչ վերջ համբերատար սպասում են, որպէսզի թուրքերը մօտենան իրենց դիրքերին եւ միայն դրանից յետոյ վճռական հակահարուած են տալիս թուրքերին՝ դիպուկ համազարկեր արձակելով նրանց վրայ, որոնք միջանի զոհեր տալով փախչում են անակնկալի գալով հայերի քայից¹⁵:

Այդուհանդերձ, թուրքերը համալրելով իրենց ուժերը, յաջորդ օրը՝ Նոյեմբերի 19ին ստուար հրոսակախմբերով վերսկսում են յարձակումը: Չնայած դրան, Չարդախլուի պաշտպանները կարողանում են ամուր ինքնապաշտպանութիւն կազմակերպել եւ յաջողութեամբ կրկին ետ մղել հակառակորդի յարձակումները¹⁶, այսպիսով կարողանալով ձախողել հայկական Չարդախլուն զապելու թուրքական ծրագրերը, որից յետոյ առժամանակ թուրքերի յարձակումները դադարեցում են, թուրքերը մի որոշ պահի կենտրոնանում են այլ խնդիրների վրայ, «բայց թէ՛ հայերը եւ թէ՛ թուրքերը սպասողական դիրք» են բռնում եւ «իրանց պատրաստ են պահում ամէն մի անսպասելի պատահարի համար»:

¹³ Севиндж Исрафил Гызы Алиева, *Азербайджан и народы северного Кавказа (XVIII – начало XXI вв.)* (Սեփնջի Իսրաֆիլ Գիզի Ալիեա, Ադրբեջանը եւ Հիսիսային Կովկասի ժողովուրդները (XVIII-XXI դ. սկիզբ), Բաքու, «Արեւելք-Արեւմուտք» հրատ. տուն, 2010, էջ 292:

¹⁴ Հ. Գէորգեան, *Ազարպարական պայքարի կովկասեան ճակատը*, Երեւան, հեղ. հրատ., 2010, էջ 277:

¹⁵ Նոյն, էջ 277:

¹⁶ Նոյն, էջ 277-78:

Առհասարակ, այդ ժամանակույս թերթերը շատ յստակ փաստում են թուրքերի ոտնձգությունների մասին Գանձակի գաւառի հայկական բոլոր գիւղերի, այդ թում եւ Չարդախլուի նկատմամբ: *Մշակը* գրում է, որ Նոյեմբերի 18ին Չարդախլու գիւղի մի վաճառական՝ Բաբաջանեանը, որ եղել էր Դալիարի կայարանում եւ լսելով այնտեղ Դալիարի բէկերի ու Գանձակի թուրքերի կողմից առաջ բերած ընդհարման եւ կոտորածի, հրահրուած կողոպտուի եւ հայերի խանութների թալանի մասին, ինչը հարկադրել է ժողովրդին փախչել դէպի գերմանական Անտենֆելդ (Լենինո) կայարանը, պատսպարուելով գերմանացիների գոմերում, ձի է հեծնում եւ գնում Ռուստամ բէկի որդի Իսկանդէր բէկի մօտ՝ աղաչելով հայերին ազատել կոտորածից, որը դրա դիմաց պահանջում է 800 ռ. փրկագին, սակայն փրկագինը արդինք չի տալիս: Այդ խաբէութիւնից եւ անասելի չարչարանքներից ու բռնարարքներից յետոյ հայերին միայն Նոյեմբերի 25ին բաց են թողնում¹⁷: Դալիարի այս դէպքերը չարդախլուեցիները մեկնաբանում են որ չի կարելի վատահել եւ ապափնում են դիմադրութեան:

Թուրքական հրոսակախմբերը երթեւեկում են եւ կողոպտում պահեստներն ու մարդկանց տները: Թերթը յայտնում է նաեւ «*Բաղա հայ գիւղի աներման եւ բնակիչների փախուստի մասին ...որ գիւղական ազգաբնակչութեան միայն մի մասն է կարողացել հասնել մինչեւ Չարդախլու, իսկ միւս մասը, բաղկացած 470 հոգուց, որոնց մէջ եղել են միայն 25 տղամարդ, բաժանուել են թուրք հրոսակների շարժումների պարժանով եւ մնացել կտրուած իրենց համագիւղացիներից*»¹⁸: Այդ մասին փաստում է նաեւ Քաջբերունի. «*Չկարողանալով չափուել Չարդախլուի հեփ՝ հրոսակախմբերը շրջուեցին եւ ուղղուեցին դէպի 19 վերստի հեռաւորութեան վրայ գտնուող գիւղախմբերից անջատ գտնուող հարուստ ու բարգաւաճ Բաղաբենդ եւ պաշարեցին այն: ...Բաղայից դէպի ամենամօրիկ հայաբնակ վայրը 14-15 վերստի վրայ գտնուող երկաթուղու Չեգամ կայարանն էր, իսկ ամենամօտ գիւղը Ելիգամկարոյի գաւառի Չարդախլուն, որ Բաղայից հեռու էր 20 վերստի*»¹⁹: Բաղա, Գետաբէկ եւ Ղազախ գիւղերի մազապուրծ հայութիւնը հաաքուեց Չարդախլու գիւղում: Հուսկ, թուրքերն իրենց լաւագոյն ուժերը կենտրոնացրին Չարդախլուի դէմ²⁰:

Բաղաբենդ եւ Ղազախ գիւղերի գրամամից եւ անազակային պլան-թալանից յետոյ, թուրքերը Նոյեմբերի 25ին նոր յարձակում են պատրաստում Չարդախլուի դէմ եւ նորից պաշարում գիւղը, որը Գանձակի գաւառի արեւմտեան մասի ամենամեծ եւ շէն գիւղն էր՝ հարուստ մարտական մեծ ա-

¹⁷ «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, Թիֆլիս, 29 Նոյեմբերի 1905:

¹⁸ «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, 11 Դեկտեմբերի 1905, N 246:

¹⁹ Քաջբերունի, *Բաղա գիւղի աներումը*, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի, 1910, էջ 15:

²⁰ Հր. Սիմոնեան, *Ազապագրական պայքարի քառուղիներում, չորս գրքով, գիրք I, Երեւան, «Հայագիտակ», 2003, 452-53:*

անդոյթներով: Չնայած թուրքերը հասկանալով, որ գործ ունեն անելի կազմակերպուած մարտական ներուժ եւ փորձ ունեցող հայկական գիւղի հետ, նրանք նորից միջբանի գրոհներ են ձեռնարկում, որոնք դարձեալ աւարտում են պարտութեամբ: Այնուհետեւ թուրքերը դադարեցնում են յարձակումները՝ բաւարարուելով հեռուից համազարկեր արձակելով գիւղի ուղղութեամբ, որից յետոյ դադարեցնում են այն, որին հայերը վստահ կազդարձում են: *Մշակը* գրում է *Նոյեմբերի 28ի* դէպքերի մասին.

Գանձակում սկսուած հրդեհը տարածում է գաւառում ու գնալով անելի լայն ծաւալ ստանում... Հայ ազգաբնակչութիւնը թողնուած է ճակատագրի կամքին... Այնտեղ միմիայն ապահով են զգում իրանց հայերը, որտեղ կայ կազմակերպուած ինքնապաշտպանութիւն, որտեղ հայը զէնք ու ռազմամթերք ունի:

Այսօր Գանձակում նամակներ ստացուեցին Չարդախլուից, որտեղ հաւաքուած են ստերուած Գետաբէկ, նրան կից գտնուող Ղազախ գիւղի ու Բաղաքենդ հայ գիւղի հայերը, կորցրած տուն, տեղ, կայք, կարողութիւն, կորցրած շատերն իրենց սիրելիներին: Չարդախլուն շրջապատուած է թուրք հրոսակախմբերով ու խուժանով, որոնք ամէն րոպէ փորձեր են անում ներս խուժելու գիւղը ու բնաջինջ անելու ազգաբնակչութիւնը: Հայերը հերոսական ջանքեր են անում ինքնապաշտպանութեան համար, հարուածում են թշնամուն, պատժում են նրան ըստ արժանւոյն, բայց նա իր թուական գերազանցութեան շնորհիվ կարողանում է պահպանել իր դիրքերը ու առաջ շարժուն նոյն իսկ:

Գետաբէկը ու նրան կից գտնուող Ղազախ հայաբնակ գիւղը (երկուստն էլ կը լինեն մօտ **100** տուն հայ) ենթարկուել է շրջակայ թուրք խուժանի յարձակմանը *Նոյեմբերի 22-23ին*: Հայերի խանութները եւ տները կողոպտուել են ու հրդեհուել (գործարանին կից խանութներ շատ կան), ազգաբնակչութեան մի մասը ենթարկուել է սրածութեան, իսկ միա մասը, թուով անելի նշանատր, փակուել, պատսպարուել է Չարդախլու գիւղում, զրկուելով իր բոլոր ունեցածից:

Գետաբէկում սպանուել է տեղական ռուս ընծիչը նոյն իսկ... Գետաբէկ, Ղազախ ու Բաղաքենդ գիւղերից փախցրել, անհետացրել են երիտասարդ կանանց ու աղջիկներին...

Կողոպտուած ու հրկիզուած Բաղաքենդից թափուել են նոյնպէս Չարդախլու գիւղը, որի դէմ ուղղուել են այնուհետեւ Գետաբէկի շրջանի գազանաբարոյ Այրումների ու [Ալահիար բեգ] Չուլղաղարովների լայնածաւալ կալուածներում վխտացող կազմակերպուած թուրք հրոսակախմբերի ուժերը²¹:

Եւ միայն երբ *Նոյեմբերի 29ին* Գանձակից Չարդախլու է հասնում Գանձակի ինքնապաշտպանական կոիւններում իր անձնուրացութեամբ եւ խիզախութեամբ այցի ընկած եւ հայ բնակչութեան շրջանում մեծ հեղինակութիւն վայելող խմբապետ, բուլանուխցի Մարտիրոս վարժապետ

²¹ Ստ. Տէրաւտիբեան, «Դէպքերը Գանձակի գաւառում», *Մշակ*, **3** Դեկտեմբերի **1905**. նաեւ՝ Ա. Սահակեան, «Գանձակի դէպքերը», *Արշալոյս*, Թիֆլիս, **4** Դեկտեմբերի **1905**:

Պետրոսեանցի գլխատրած զինեալ հայդովպխումը²², թուրքերը որոշ ժամանակ դադարեցնում են իրենց յարձակումները, մտադրուելով նոր համալրումներ ստանալ և նոր հնարատրութեան դէպքում՝ յարմար պահի նորից վերսկսել իրենց գործողութիւնները Չարդախլուի և շրջակայքի հայկական միա գիւղերի վրայ: Նոյեմբերի 25ից մինչև 30ը Չարդախլուի մարտակրողով հայերը ետ են մղում հակառակորդի 10ից անէլի յարձակում՝ մեծ կորուստներ պատճառելով: Իսկ ցարական զօրքն ու ոստիկանութիւնը հանդիսատեսի դերում էին²³:

Հայկական Չարդախլուի վրայ թուրքական գլխատր յարձակումներից մէկը տեղի է ունենում Նոյեմբերի 30ին, որը սակայն վճռաբար ետ է մղում: Այդ օրերի իրադարձութիւնների տարեգիր Ա-Դօն գրում է «...նորից թուրք խուժանը դարձաւ դէպի Չարդախլու: Նոյեմբերի 25ից սկսած մինչև 30ը պարբերաբար յետ մղուելով և նորանոր թարմացած ուժերով նոր յարձակումներ գործելով, նա չոզնեց:... Նոյեմբերի 30ին տեղի ունեցաւ վճռական յարձակումը և այս անգամ խուժանը յետ փախաւ մեծ կորուստներով: Հայերից սպանուեց այդ կոտում մի հոգի, բայց լաւ հոգի. դա չարդախլուեցի Շահէնն էր»²⁴:

Չնայած Գեորգեանը նշում է, որ վճռական այդ ճակատամարտը տեղի է ունեցել Նոյեմբերի 23ին, իսկ Ա-Դօն՝ Նոյեմբերի 30ին՝ համադրելով փաստերը, ակնյայտ է դառնում, որ խօսքը գնում է Նոյեմբերի 30ին թուրքերի կողմից Չարդախլուի վրայ ձեռնարկած գլխատր յարձակման մասին, որի մասին Գեորգեանը արժէքատր վկայութիւն է բերում, շրջանառուելով մի կարեւոր վաւերագիր. «Մերոնք խմբապետ Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարութեամբ կոտում են այնպէս, որ նրանց նախանձել կարող էին երոպական զօրքերի շարքերում կրոսած զինուորները... թուրքերը երկրորդ անգամ են յարձակում. դարձեալ ջարդուում են ու բոլորովին յետ նահանջում, թողնելով կոտի դաշտում շար դիակներ»²⁵:

Սակայն դրանով դէպքերը չեն աւարտում. Աւետիք Սահակեանը Արշալոյսի 1905 Դեկտեմբերի 4ի համարում փաստում է, որ Չարդախլու գիւղը շրջապատուած է միջանի հազար թուրքերով, նոյն օրը մի վաշտ զօրք է մեկնել գիւղ՝ հալածելու համար, իսկ Բաղա գիւղից Մետրոպ քահանայ

²² Մարտիրոս Ստեփանեան-Պետրոսեանց.- ծն. Արեւմտեան Հայաստանի Տարօն աշխարհի Բուզանդի գաւառի Եռնջալա գիւղում: 1891ին զինուորագրուել է հայոց ազատամարտին և հայդովպախի խմբերի կազմում մասնակցել մի շարք կոիւնների ընդդէմ թուրքական բռնապետութեան, իսկ 1904ին մասնակցել է Գանձակի նահանգի հայ ինքնապաշտպանական կոիւններին:

²³ Սիմոնեան, էջ 453:

²⁴ Ա-Դօ (Յովհաննէս Տէրմարտիրոսեան), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով), Երեւան, տպ. Ալվազեանց և Նազարեանց, 1907, էջ 363:

²⁵ Գեորգեան, էջ 288:

Ստեփանոսեանն էլ մեկնել է Գանձակ՝ հայ գիւղերի համար փրկութեան միջոցներ գտնելու²⁶: *Մշակի 1905* Դեկտեմբերի 10ի համարում յիշարժան փաստեր են բերում Դեկտեմբերի 4ի մօտերըը Չարդախլում տեղ գտած դէպքերի մասին. գրելով կազակների մասին, որոնք

գնում էին Չարդախլու հայ գիւղը, շրջապատում թուրքերից: Երեք օրից իվեր այդտեղ հրածգութիւն կայ, իսկ այդ օրը, ինչպէս ասում էին՝ նշանակում է «շտորմ»: Պէտք է գիւղը վերցնեն գրոհ տալով. ուղարկել են պահապաններին թնդանօթ բերելու Գանձակից:

Չարդախլուն կարողանում է քաջարար պաշտպանուել եւ մեծ ջարդեր տալ թշնամուն: Գիւղից եկողները պատմում են, որ չարդախլուեցիներին յաջողուել է յետ մղել թուրքերի բոլոր յարձակումները եւ ներկայումս պաշպանողական դիրքերից յարձակողական դիրք են բռնել ու նրանց մի մասը կտորրելով՝ մի մասին էլ գերի են վերցրել:

Հաւանական է, որ չարդախլուեցիները սկսեն յարձակում գործել այն ձմեռանոցների վրայ, ուր պահուած են Բաղաձորի հայ գերիները: Բաղաձորը ամբողջապէս ոչնչացուած է, գիւղացիների մի մասը գոհ են գնացել կոտորածին, մի մասն էլ գերի են տարուած թուրք բէգերի մօտ, մի մասն էլ պատսպարուել են Չարդախլու գիւղում²⁷:

Այդ ընթացքում թշնամին, ամէն գնով ձգտելով տիրանալ Չարդախլուն եւ հարեան հայկական գիւղերին, դիմում է տարաբնոյթ սահրանքների, զգալի վնաս հասցնելով հայ խաղաղ բնակչութեանը. *Արշալոյսը 1906* Յունուարի 4ին գրում է, որ 1905 Դեկտեմբերի 9ի վիճակով Գանձակի գաւառի Դալիար կայարանում եւ Անենֆելդ գիւղում կողոպտուել են Չարդախլուի գիւղացիներին պատկանող 5 խանութ, անելի քան 60,000 արժողութեամբ ապրանք, 30ից անելի հայ տներ: Թալանի ասար են դառնում Ս. Տէրմակարեանի եւ Ա. Թարաջեանի 3000 ու արժողութեամբ խանութի ապրանքները, որոնք Գանձակի ստացուած լուրերի համաձայն, թալանուել էին այսպէս կոչուած մոռոզեցի թուրքերի կողմից²⁸:

Մարտերը դեռ երկար շարունակուեցին. 1906 Յունուարի 18ին ձեռնարկում է թուրքերի վերջին յարձակումը Չարդախլուի վրայ. թշնամին դիրքեր է զբաղեցնում գիւղից 5 կմ հիախ-արեւելք՝ Սանգիար-Թափա կոչուող բլրի վրայ, որն իշխող բարձունք էր եւ շրջապատի նկատմամբ ապահովում էր որոշակի առաւելութիւններ: Սակայն չարդախլուեցիները ժամանակին նկատելով թուրքերի դիրքատրումները գիւղի մօտակայ սարերի վրայ, երկու կողմից համարձակ գրոհում են եւ փոքրաթիւ ուժերով դուրս մղում հակառակորդին գիւղի մատոյցներից. հրածգութիւնը շարունակում է մինչեւ երեկոյեան ժամը 5ը: Դրանից յետոյ թուրքերը հաաքում

²⁶ Ա. Սահակեան, «Գանձակի դէպքերը», *Արշալոյս*, 4 Դեկտեմբերի 1905:

²⁷ Ա. Սահակեան, «Դրութիւնը Գանձակում», *Մշակ*, 10 Դեկտեմբերի 1905:

²⁸ «Հայ-թուրք. ընդհարումներից (վերջին տեղեկութիւններ)», *Արշալոյս*, 4 Յունուար, 1906:

են իրենց սպանուածներին, լքում մարտի դաշտը, չարդախուցցիներին թողնելով 6 ձի. այսպիսով, թուրքերը տալով զգալի կորուստներ, իսկ Չարդախուլի կորուստները լինում են 1 սպանուած եւ 2 վիրատու²⁹: Եւ այսպէս, հայկական Չարդախուլի հայ ինքնապաշտպանական ուժերը հասնում են յարթանակի, սեփական տունը անառիկ պահելով:

Յառաջի 1906 Յունուարի 24ի համարից էլ տեղեկանում ենք նոյնի մասին, որ Յունուարի 18ին թուրքերը նորից յարձակում են գործում Չարդախուլու հայ գիւղի վրայ, սակայն մեծ կորուստ կրելով փախչում են, դիակների մի մասն իրենց հետ վերցնելով, թողնելով 1 դիակ եւ 5 ձի: Հայկական կողմը տալիս է մէկ սպանուած եւ մէկ թէթեւ վիրատու: Սակայն թուրքերը գիւղին տիրելու յետագայ փորձերը շարունակում են³⁰:

Յառաջի 1906 Փետրուարի 14ի համարից տեղեկանում ենք, որ դեռեւս Նոյեմբերի 24ից սկսած թուրք-թայթարները «կապաղի փորձեր են անում Չարդախուլի դէմ...Թուրքերը այն համոզմունքի են, որ իրենք կարող են անսպարիժ աներել հայ գիւղերը, իսկ հայերը պաշտպանուելու իրատուք անգամ չունեն, քանի որ թուրքը հասարարիմ հպարակ է, իսկ հայը «կոմիպաչի», յեղափոխական: Զօրքի հրամանապարը (Քաշքեներում գրնտող կառավարական զօրքերի հրամանապարը – Վ.Վ.) իր կարգադրութեամբ անելի հասարարում է թուրքերի այդ համոզմունքը. նա իսկոյն եւեթ մի ահեղ գրութիւն է ուղարկում Չարդախուլու, որով պահանջում է գիւղի հասարակութիւնից անյապաղ իրեն յանձնել թուրքերի մարնացոյց արած չարդախուցցիներին՝ հակառակ դէպքում գիւղը ենթարկուելու է ոմբակոծութեան: Չարդախուցցիները խնդրում են ի կարար չածել որոշած պարիժն այդքան շուր, առանց մանրամասն քննելու գործը, իշխանութեան ներկայացուցչի ուշադրութիւնն են հրաւիրում այն քանի վրայ, որ Նոյեմբերի 1ից սկսած մինչեւ օրս թուրքերից ոչ մինը չի պարժուել: Իշխանութեան ներկայացուցիչը չէ լսում հայերին: Չարդախուլից ներկայացուցիչներ են գալիս Գանձակ ընդհանուր-նահանգապետին գանգաբութելու, քայց ցանկալի յաջողութեան չեն հանդիպում. նրանց ժամանակ է փուած... ոմբակոծութեան սպառնալիքը դեռ մնում է»³¹:

Յառաջի 1906 Մարտի 7ի համարում կրկին փաստեր են բերում թուրքերի յարձակման եւ Չարդախուլի ոմբակոծման մասին, որտեղ 200ից անելի տուն, որոնցից անելի քան 150 տուն հացի գրկանքների մէջ գտնուելով եւ 1905 Նոյեմբերի վերջերից մինչեւ 1906 Մարտ Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովից օգնութիւն ստանալով ընդամէնը 2000 ռ., եւ ու-

²⁹ Ներսէս Վարդապետ, «Վերջին տեղեկութիւններ», *Յառաջ*, Երեւան, 24 Յունուար 1906:

³⁰ Ա. Տէրեան, *Պարմութիւն հայոց արեւելեան կողմի (Աղվանք, Գարդման, Ուպիք)*, Երեւան, Լուսակն հրատ., 2015, էջ 311-12:

³¹ Ատ. Տէրաւետիբեան, «Ռմբակոծելու մի նոր սպառնալիք», *Յառաջ*, 14 Փետրուարի 1906:

ժապատով էր, եւ այդուհանդերձ կարողացել մինչ այդ եւր մղելով թուրքական 9 յարձակում, ամէն անգամ եւր մղելով «առազակ բեգերի ու աղալարների առաջնորդութեամբ եկած այդ խուժանին»³²:

Մշակի 1906 Մարտի 9ի համարում Մետրոպ քահանայի կողմից փաստառատ տեղեկութիւններ են բերում Չարդախլուի վրայ թուրքական վերջին՝ 1906 Փետրուարի 18ի յարձակման մասին, որի ժամանակ թշնամին Չազամի կողմից բազմաթիւ ձիատրներով մօտենում է գիտին եւ հասնում գիտից 2 վերստի վրայ գտնուող «Սանդար» կոչուած տեղը, որը

մի կոնաճեւ բլուր է, սեպացած, երկու անդնդախոր ձորերի միջեւ: Այդ Սանդարը իշխում է ամբողջ շրջակայքի վրայ, իսկ նրանից դէպի գիտը բաց դաշտ է:

Ամուր դիրքեր գրասելով այդտեղ՝ բազմաթիւ թշնամին, կիսաշրջանաճեւ պատեց հիախս եւ արեւմտեան կողմից: Մինչ թշնամին իր դիրքերն էր ամրացնում, մեր ...երիտասարդները հասան եւ սկսեց...կատաղի կոխ, որ գերազանցում էր մինչ այդ եղածներին: Թշնամին ոչ միայն բազմաթիւ էր, այլեւ լաւ զինուած...

Անձնապաշտպանութիւնը տկարին էլ ուժ է տալիս: Թուրքերը մի քանի անգամ «Եա Ալի» գոռայով ուզեցին գրոհ տալ մերոնց վրայ, բայց մեր քաջերի յաջողակ կրակից՝ մի քանի զոհեր եւ տալով, յետ նահանջեցին: Դրութիւնը կրիտիքական էր, մեր դիրքերը շատ անյաջող էին թշնամուն դիմադրելու համար: Այդ ժամանակ հինգ կտրիճներ վճռեցին, ինչ էլ լինի, թշնամու թիկունքն անցնելով դիրքից դուրս ըջել: Սա այնպիսի յանդուճ ձեռնարկութիւն էր, որ մի փոքրիկ անյաջողութեան ոչ միայն կարող էին ամէնքը գոհ գնալ, այլ եւ գերի ընկնելու վտանգ կար: Տեղացող զնդակների միջից անցնելով, փորսող տալով, հասան մերձակայ ձորը եւ օճապտոյտ ճանապարհներով, քարափների ձերայերով անցան բլրի միւս կողմը: Հենց լսուց «յառաջ» ազդանշանը, երկու կողմից գրոհ տուին մեր քաջերը, ուշք չդնելով տեղացող զնդակների տարափին: Թշնամին իրան երկու՝ թե՛ն փոքրաթիւ, կրակի մէջ զգայով, փախուտաւ տուեց, ապա տալով 6 ձի եւ շատ ճարպիկութեամբ քաշ տալով կտուի դաշտից շատ դիակներ: Մենք զոհ տուինք մի քաջ երիտասարդ եւ երկու վիրատոր: Թշնամին մի քանի յուսահատական ճիգեր արեց նորից առաջ գնալու, բայց յաջողութիւն չունեցաւ եւ ուղիղ ժամը 5ին վերջնական հալածուեց մեր սահմաններից:

Արդէն մուփը վրայ էր հասն, որ մեր քաջերը երգով դարձան: Սակայն յաղթութեան ուրախութիւնը տխրութեամբ համակեց մեր սիրտը տուած զոհի համար: Այսպիսով, մեր դրացի թուրքերի՝ «Չարդախլուն այս անգամ անպատճառ կ'առնենք» պարծենկոտութիւնը նորից ի դերն ելաւ: Նրանք հեռատր տեղերից օգնական ուժեր խնդրելով կամեցան իրանց սար երթալու ճանապարհը սրով հարթել: Այս կտրոհի մասնակցում էին VI եւ V մասի բոլոր թուրքերը, բացի հեռու տեղերից՝ Բաղմանլարից, Ղարաքաղի եւ Ղազախի կողմերից, Ելախից, նոյնիսկ Բազուի շրջանից եկածները, որոնք ունէին աննաընտիր զէնքեր³³:

1906 Մարտի կէսերին միջամտում է ցարական դրագունների ջոկատը եւ իրադրութիւնը խաղաղացնելու համար Մարտի 11ին մօտենում է Չար-

³² «Վերջին տեղեկութիւններ», *Յանայ*, 7 Մարտի 1906:

³³ Գ. Բահ. Մ., «Վերջին տեղեկութիւններ», *Մշակ*, 9 Մարտի 1906:

դիպլոմի մատուցներին: Մի խումբ կազակներ 2 թնդանօթով մօտենալով գիտլին, պահանջում են գէնքերը յանձնել՝ թոտով 50-60 հատ, ինչպէս նաեւ «Մոսին»ներ եւ «Մաուզեր»ներ՝ տալով 2 ժամ: Եւ ինչպէս գրում է *Արշալոյս* թերթը, «բանի որ այդ բարիքը գիտլացու արտերում չի բանում, իսկ բարեխնամ փրորութիւնը չի բարեհաճել փալու, ուստի մինչեւ 2 ժամը չարդախլուեցիք չկարողացան եղած բաները յանձնել եւ գիտլը ենթարկուեց ոմբակոծութան: Ուրիշ պարճառ չտեսնելով, չարդախլուեցիք կարծում են, որ իրանց մեղքը կայանում է նրանում, որ պաշտպանուել են 8-9 անգամ թուրք խուժանի յարձակումներից եւ թոյլ չեն տուել, որ իրանց գիտլն էլ Բադի եւ Ղազախի նման կործանուի»³⁴: Պարզ էր նաեւ, որ չարդախլուեցիները պէտք է ձգտէին իրենց համար կենսական գէնքի եղած պաշարները թուրքական յարձակումներից պաշտպանուելու համար ուղղակի թաքցնել, դրա հիմքում ընկած էր ցարական իշխանութիւնների սադրիչ-իրահրիչ եւ երկդիմի քաղաքականութիւնը, որով երկրամասը կառավարում էր՝ խրախոսելով զժողովուն եւ բախումներ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, շատ դէպքերում տուրք տալով տեղական թուրք-թաթարական բէկերի եւ սասիրական նկրտումներին, որից պաշտպանուելու համար հայ բնակչութիւնը այլընտրանք չունէր եւ գէնքը թաքցնելը հենց դրանով էր պայմանաւորուած, քանզի նաեւ ցարական կառավարիչները ամէնեփն էլ չէին երաշխաւորում հայերի գոյքի ապահովութիւնն ու կեանքի անվտանգութիւնը: Այրուանդերձ, ինչպէս տեղեկացնում է *Մշակը*, գնդապետ Իսանեփեւը որոշ ժամանակ անց տեղեկացնում է Կովկասի փոխարքային, որ Չարդախլու գիտլում գտել են 7 թնդանօթ եւ 200 հրացան, գերութիւնից ազատելով մի թուրքի³⁵:

Իրավիճակը կտրուկ փոփոխութեան չենթարկուեց նաեւ 1906 Ապրիլի կէսերին: Թուրքերի եւ հայերի յարաբերութիւնները կրկին լարուեցին եւ սպառնալից բնոյթ ստացան Գանձակի նահանգի բազմաթիւ հայկական գիտլերում, որի ընթացքում «Չարդախլուն ումբակոծում է» վերնագրով առաջնորդողում *Արշալոյսը* նկարագրում էր այն գործողութիւնները, որը զօրքը ծաալել էր Չարդախլուի դէմ, որոնք շարունակուեցին դեռ երկար³⁶:

Եւ այսպէս, Չարդախլու գիտլի մարտակորով եւ աննկուն հայերի գլխաւորութեամբ թշնամին դուրս քշուեց Չարդախլուի մատոյցներից: Անեփն, Չարդախլուն սաստարեց հարեան, մերձակայ հայկական գիտլերին. նա առանց յայտադելու նոյնիսկ օգնութեան հասաւ հեռաւոր Բարսում գիտլի բնակիչներին: Անուրանալի է Չարդախլուից Բարսում հասած Մարտիրոս

³⁴ Ա. Սահակեան, «Մեր վիճակը», *Արշալոյս*, 15 Մարտի 1906:

³⁵ Ովստաւոր, «Պատասխան Գետաբէկի գործարանի կառավարիչ Աղոյֆ Էրնին», *Մշակ*, 17 Մարտի 1906. նաեւ՝ Ա., «Ուր է արդարութիւնը», *Արշալոյս*, 18 Մարտի 1906:

³⁶ Ա. Սահակեան, «Մեր վիճակը», *Արշալոյս*, 15 Մարտի 1906:

վարժապետի գլխավորած հայդուկների խմբի ներդրումը. նա թուրքական հրոսակախմբերին դեմ առ դեմ է դուրս գալիս հենց այն պահին, երբ վերջիններս գիտից դուրս էին տանում կովերի նախիրը և կանխում այն՝ ետ վերադարձնելով այն օրինական տեղերին: Այդ մասին շատ Ա-Դօն վկայում է 1905ի վերջին թուրքերի կողմից ձեռնարկուած յարձակման մասին. «...պաշարեցին Բարսումը, որը շնորհիւ իր ամուր դիրքերի ուժեղ դիմադրութիւն ցոյց րուեց և յետ քշեց յարձակումը: Սակայն թուրքերը չհրապուռած այդ բանից, Դեկտեմբերի 5ին յարձակուեցին Բարսումի վրայ և հանդից քշեցին նախիրը, որի ժամանակ Չարախլուից եկած զինուած մի խումբ երիտասարդներ, օգնութեան հասնելով, ոչ միայն նախիրը յետ խլեցին, այլ և հետեւելով թուրքերին մինչեւ Մալաքլու գիւղը, կրակի կապեցին նրանց»³⁷: Վերջապէս, Դեկտեմբերի 5ին չարդախլուեցիները միացեալ ուժերով թուրքերին դուրս են շարտում Բարսում գիւղից³⁸, յետոյ հետապնդում փախչող թուրքերին, ներխուժում մերձակայքում գտնուող թուրքական գիւղը և վերցնում զգալի քանակութեամբ ռազմաւար³⁹:

Հակառակորդը 1905 Նոյեմբերի 30ի և 1906 յարձակումները տանուլ է տալիս և անփառունակ պարտութիւն կրելով, նահանջում՝ իր հրոսակների դիակները թողնելով մարտադաշտում⁴⁰:

Չարդախլուեցիների մարտական տարեգրութեան մէջ ուշագրաւ է նաեւ նրանց գործուն մասնակցութիւնը հայաքնակ *իրապէս* հեռուոր այլ գաւառների, շրջանների պաշտպանութեանը և հերոսական կռիւների: Արշակ Վիրաբեանի վկայութեամբ, ռուսական առաջին յեղափոխութեան տարիներին գիւղի բնակիչ Ղազար Մանասեանի գլխավորութեամբ չարդախլուեցի 26 կամատրներ մեկնում են Արեւմտեան Հայաստան և մասնակցում Սասունի 1904ին սկսուած հերոսամարտին: Այդ հերոսական զօրաջոկատի անդամներից 6ը տուն չեն վերադառնում, իսկ խմբի դեկավարը սպանում է Շամխորի մօտ դարանակալած թշնամու գնդակից⁴¹: Սպանութիւնը անհետեանք չի անցնում և վախ է ներշնչում Շամխորի թուրքերին, որ հայերը ձեռքները ծալած չեն նստի և հարկ եղած դեպքում հակահարուած կը տան ...:

Չարդախլուեցիները մարտական մեծ մկրտութիւն ստացան առաջին աշխարհամարտում: Նրացից Արամ Մարգարեանը, Յ. Ստեփանեանը, Հ. Մարտիրոսեանը, Հ. Խաչատրեանը դարձան Գէորգիեանեան Ոսկէ Խաչի ասպետներ, իսկ ոմանք էլ իրենց կենսագրութեան էջերը գրեցին զօրա-

³⁷ Ա-Դօ, Հայ-թուրքական, էջ 341:

³⁸ Նոյն:

³⁹ Տէրեան, էջ 311-12:

⁴⁰ Յովհաննէս Ա. Բարդամեան, «Չարդախլուի ֆնեմունը», Հայկական բանակ, 1997:4, էջ 15, 77-80:

⁴¹ Նոյն, էջ 79:

վար Անդրանիկի զորաջոկատում⁴²: Հետաքրքիր է նշել նաև, որ Անդրանիկի զինուոր Արամ Մարգարեանը մինչև կամատր զինուորագրուելը, որդեգրուել է իր հորեղբոր՝ ցարական բանակի հանրայայտ դեր-զորավար, ռազմական բժիշկ Զեան Բէկ Մարգարեանի (1844-1931) կողմից, որը ճակատագրի բերումով փրկել է Ռուսաստանի կայսրուհու կեանքը եւ որի դիմաց ցարը Չարդախլու հայկական գիտին է վերադարձնում թուրքերի կողմից խլուած հազար հեկտարի չափ հող՝ Թաքաղաչից սկսած մինչև Տիլ աղբիւր եւ Ծիրանի այգի: Իսկ նրա որդեգիրը՝ Արամը այցի է ընկել որպէս դիպուկ հրաձիգ՝ գիտի ինքնապաշտպանութեան ժամանակ: Նա դարձել է ձիաքառչի գնդացրորդ եւ Անդրանիկի ջոկատի կազմում մասնակցել մի շարք կարեւոր ճակատամարտերի, մասնակցել Սարդարապատի ճակատամարտին, պարգեատրուել շքաշաններով եւ Անդրանիկից ստացել անուանական ատրճանակ⁴³:

Յիշարժան է նաև մէկ այլ հայրենասէր եւ քաջ զինուորի՝ Գեորգիեեան Խաչի ասպետ Աբգար Սարգսի Մանուչարեանի կերպարը: Նա աւարտել է Սեաստոպոլի օդագնացութեան դպրոցը եւ առաջին ինքնուրոյն թռիչքը կատարել դեռեւ 1913ին, երբ դեռ հայկական օդագնացութեան մասին խօսք անգամ չկար: Մանուչարեանը որպէս օդաչու մասնակցում է առաջին աշխարհամարտին, եռանդուն ներգրատում Կարսի մօտ մղուած մարտերին, եւ թուրքական ու գերմանական զօրքերի դէմ մղուած օդային մարտերում գործած սխրանքների համար 1915ին ստանում է Գեորգիեեան զօրախաղերի լրի ասպետի կոչում, արժանանում ցարական բանակի սպայի աստիճանի՝ դառնալով ենթասպայ: Նա լինելով հայ ազգային-ազատագրական շարժման յայտնի գործիչ Գրիգորի Մանուչարեանի թողը՝ շարունակեց ըստ արժանտյն նախնու փառատր ասանդոյթները⁴⁴:

Դիտարժան է չարդախլուցի ենթասպայ, ապագայ *մարաշախար* Յովհաննէս Բաղդամեանի կերպարը, որը դեր-Չօրավար Թովմաս Նազարբէկեանի գլխատրութեամբ գործող Հայկական Կորպուսի յատուկ կամատրական զօրաբաժնի շարքերում որպէս հեծեալ դասակի հրամանատար մասնակցել է թուրքական զօրքերի դէմ մղուած մարտերին Սարդարապատում: Այնուհետեւ Բաղդամեանը շատերի նման ծառայութեան է անցել նոր ծնուած ՀՀ զինուած ուժերում որպէս հեծեալ գնդի հեծեալաւաշտի հրամանատար՝ իր մասնակցութիւնն ունենալով 1920 Սեպտեմբերին թուրքերի կողմից սանձազերծած պատերազմին:

⁴² *Չարդախլու. հայկական գիտի պարմութիւն*, էջ 9:

⁴³ Լոյն, էջ 38, 64-65:

⁴⁴ Աբգար Մանուչարեանը զոհուել է 1916 Յունիսի 16ին՝ Էրզրումի ճակատում, իսկ մարմինը Կարսից տեղափոխուել է եւ հողին յանձնուել հայրենի ծննդավայր Չարդախլուում (Լոյն, էջ 63, 567):

1918 Մարտին Շուշիի չարաղետ դեպքերի ժամանակ թուրք-թաթարական հրոսակների թիրախ դարձան նաեւ Գանձակի գաւառի գիւղերը եւ մասնատրապէս Չարդախլուն, որտեղ ՀՀն (կապուած նաեւ Գետաբէկի պղնձահանքերի հետ) ունէր պահակազօր:

Չի կարելի չնշել նաեւ Չարդախլուի հերոսական տարեգրութեան եւ մի կարեւոր դրուագի մասին Հայաստանի առաջին Հանրապետութեան օրերին: Ըստ Չարդախլուի մասին թողած մի կարեւոր յուշագրութեան, 1918 Յունուարի 10ին յայտնի յեղափոխական Ստեփան Շահումեանը Բացուից ճանապարհուելիս է եղել դէպի Թիֆլիս: Ճանապարհին՝ Գանձակի մօտ Ջազամի անտառից մտաւաթական զինուած աազակախումբը կտրում է ճանապարհը, որի ընթացքում չարդախլուեցիների կազմած զինուած ջոկատը կարողանում է ոչնչացնել հակառակորդի դիրքերը՝ հրամանատար Մուշեղ Անախաթունեանի գլխաւորութեամբ: Այնուհետեւ այդ ամէնի քաջատեղեակ Աքանազ Մուսեանը չարդախլուեցիներ Պետի Բաբաջանեանի, Բժիշկ Մելումեանի աջակցութեամբ կազմակերպում են Շահումեանի տեղափոխութիւնը Չարդախլու, որտեղ նա մնում է 2 օր, որից յետոյ քեօխվա Ս. Դանիէլեանը, Արշակ Բախրեանը եւ Ալեքսան Վիրաբեանը նրանց տանում են Էրմաշտու՝ Սերգօ Դանիէլեանի ծանօթներից Դովլաթ խան օղլի Ղարի տուն. այս օգնութեամբ Շահումեանը հասնում է Թիֆլիս⁴⁵:

Այդ օրերին եւս Չարդախլուն գտնուել է ծաւալուող հայ ժողովրդի համար ճակատագրական իրադարձութիւնների կիզակտում: Այդ մասին է վկայում առաջին ռազմաոստիկանական հետեակալային գնդի հրամանատար գլխապետ Մնացականեանի 1919 Փետրուարի 5ի զեկուցագիրը (N 226)՝ ուղղուած հայկական զօրաբաժնի հրամանատարին, որում նշել էր Ելիզաւետպոլ-Գանձակ գաւառի Չարդախլու գիւղի գիւղացիների դժգոհութեան մասին՝ թաթարների կողմից անցկացուող ուժեղացուած բռնի զօրահաւաքի խնդրով: Նրանք նկատել էին որ դրա նպատակը Հայկական Լեռնաշխարհը հայերից մաքրելն էր՝ Գետաշէնից մինչեւ Բաղաքենը⁴⁶: Աւելին, ինչպէս նշում է Բաքում ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Յարութիւնեանը կառավարութեանն ուղղուած 1920 Սեպտեմբերի 20ի գաղտնի հեռագրում, Ադրբեջանի իշխանութիւնները իրենց հանրապետութեան անբաժան մաս համարելով շանգեզուրը, Ղարաբաղը, Շարուր-Նախիջեանը, Սուրմալուն եւ այլ հայկական տարածքներ, զօրակոչից չէին ազատում նաեւ Ադրբեջանի տարբեր վայրերում հանգրուանած թուրքահայերին, ինչպէս օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլուն ժամանակաւոր հաստատուած թուրքահայ գաղթականներին⁴⁷:

⁴⁵ Չարդախլու. հայկական գիւղի պարմութիւն, էջ 251, 517:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 90 հակ.:

⁴⁷ Նոյն:

Հանրայայտ գիտի վիճակը չի փոխում և չի թեթեանում Կարմիր Բանակի առաջխաղացմամբ եւ խորհրդային կարգերի հաստատմամբ, որը պայմանատրուած էր գիտից ոչ-հեռու գտնուող, Փառիսոսի ամրոցի աներակների մօտ տեղաբաշխուած նշանաւոր Գետաբէկի պղնձածոպական գործարանի նկատմամբ ունեցած հետաքրքրութեամբ: Դա ակնյայտօրէն երեւում է Գրիգորի Կ. Օրջոնիկիձէի (Սերգօ Օրջոնիկիձէ) ուղիղ հեռագրագծով խօսակցութեան 1920 Յունիսի 11ի գրառումից 11րդ Կարմիր Բանակի Ռազմայեղափոխական Խորհրդի անդամ Վեսնիկի հետ: Դրանում ուղղակի նշում է, որ ինչպէս Ղարաբաղում, այնպէս էլ այլ հայաբնակ վայրերում այսպէս կոչուած հակայեղափոխական ապստամբութեան ճնշման անհրաժեշտութեան մասին, որի առումով իր բացայայտ պատրաստակամութիւնն է արտայայտում Հուաէնովը՝ խոստանալով տրամադրել 200ից ւեւի հեծեալներ, որին Օրջոնիկիձէն անելացրել էր, որ ինքը ոչ մի յոյս չի կապում հեռացող Բաղիրովի հետ: Միաժամանակ, վերոնշեալ խօսակցութեան վերձանումից ակնյայտ է դառնում, որ Օրջոնիկիձէի համար գետաբէկեան խնդրի հանգուցալուծման համար առաւել մեծ հետաքրքրութիւն էր ներկայացնում Ջեզամ (Չակամ) կայարանից ոչ հեռու գտնուող Չարդախլու գիտի գինաթափման եւ Գետաբէկի պղնձածոպարանի գալթման եւ վերագործարկման հարցը, որն այդ պահին իբր թէ գտնում էր դաշնակցականների տնօրինութեան ներքոյ: Սակայն ինչպէս փաստում են արխիւային վաւերագրերը⁴⁰, իրադարձութիւնները հեշտ ընթացք չեն ստանում և գիտի շուրջը ծաւալում են դրամատիկ իրադարձութիւններ, որում չարդախլուցիները հլու-հնազանդ դիտորդի դերում չէին: Գիտի բնակիչները բոլորովին էլ չէին պատրաստուում այդքան հեշտ ու հանգիստ հպատակուել ռազմաքաղաքական իրադարձութիւնների այդ անտրամաբանական ընթացքին եւ փորձում են դիմադրել այդ ամէնին, բայց ուժերի չափազանց անհաւասար լինելու պատճառով իվերջոյ նահանջում են:

Իսկ գիտը հպատակեցնելու խորհրդա-աղբբեշանական փորձերը շարունակական են դառնում: Այսպէս, 1920 Յուլիսի 11ին Բաջրօից 11րդ Կարմիր Բանակի հրամանատարին հասցեագրուած հեռագրում Օրջոնիկիձէն շեշտելով Ղազախի շրջանում գտնուող բոլշեփկամէտ ապստամբներին օգնութիւն ցուցաբերելու անհրաժեշտութեան մասին, դրա հետ մէկտեղ ընդգծում էր, որ դաշնակցականները Գետաբէկի շրջանում ոչնչացնում են մուսուլմաններին եւ հայերին, եւ որ Շամխորի գաւառի Ջեզամ եւ Գետաբէկ կայարանների միջեւ ընկած միջակայքում գտնուող *հակայեղափոխական Չարդախլու հայկական գիտն անհրաժեշտ է անյապաղ գինաթափել*, որի համար հարկաւոր է Ղազախի շրջանից ուղարկել 200 կարմիրբանա-

⁴⁰ *Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов* (Լեռնային Ղարաբաղը 1918-23թթ. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածո), խմբ. Վ. Ա. Միքայելեան, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1992, էջ 499:

կային և նոյնքան հայ՝ ուղարկելով նրանց Ձեզամ կայարան եւ դնելով գա-
առային յեղկոմի տեղամասային կոմիսար Չիատովի տրամադրութեան
տակ⁴⁹, սակայն չարդախլուեցիները ոչ միայն չեն ընկճում, այլև շարու-
նակում են դիմադրել եւ նոյնիսկ օգնել հարեան գիւղերին:

Չարդախլուի հերոսապատման տարեգրութիւնից ուշագրաւ է եւ մի
դիտարժան փաստէջ. դեռեւս հայ-թուրքական ընդհարումների ժամանակ
(1905-07) թուրք-թաթարները Չարդախլուից արեւմուտք, 8 կմ հեռաւորու-
թեան վրայ գտնուող Աթաբէկ գիւղի մայրականներին դուրս են քշում իրենց
բնակատեղից եւ բնակում այդ գիւղում, որն էլ մինչ այդ հայկական բնա-
կավայր է եղել, սակայն դեռեւս 1890ին արդէն հայաթափուած էր⁵⁰: Սա-
կայն անսպասելի իրադարձութիւններն այլ ընթացք են ստանում. արդէն
խորհրդային կարգերի ժամանակ, չերկնչելով հնարաւոր բռնաճնշման
քայլից, 1924 Ապրիլին Չարդախլուի երիտասարդութիւնը աւագների
գլխատրութեամբ Աթաբէկ գիւղից վճռաբար դուրս է շարտում թուրքերին,
իսկ չարդախլուեցի Յարութիւն Նահապետի Վիրաբեանը (1896–1975)⁵¹
40 ընտանիք գաղթականների ապահովում է բնակարաններով եւ նրանց
համար ստեղծում ապահով պայմաններ: Նա ստեղծել էր մեծ գերդաս-
տան եւ ի վերջոյ դարձել այդ գիւղի երկարամեայ կոլտնտեսութեան նա-
խագահը՝ վայելելով մեծ հեղինակութիւն անգամ թուրքերի մօտ. միաժա-
մանակ, գիւղը հայացնելու եւ վերաբնակեցնելու նպատակով Վիրաբեանը
կազմակերպում է անելի քան 50 ընտանիքների տեղափոխութիւնը Չար-
դախլուից Աթաբէկ, ուր հայութիւնը վերստին արմատներ է գցում, ստեղ-
ծագործում եւ արարում մինչեւ իր բռնի տեղահանումը հայրենի բնակա-
վայրից⁵², որով հերոսական հայկական այս գիւղերի ազգասպանութեան
ջարդարարական քաղաքականութիւնն աւարտում է:

1987ի վերջից սկսած հայկական Չարդախլու գիւղում ծաայուած իրա-
դարձութիւնները սակայն ունենում են հեռահար ծանր հետեանքներ⁵³:

Հայաստանի Հանրապետութեան ողջ հասարակական-քաղաքական,
տնտեսական եւ ընկերային կեանքի վրայ այդ չարաղէտ եղեռնածին իրա-

⁴⁹ *Нагорный Карабах в 1918-1923* зз, էջ 531:

⁵⁰ Կարապետեան, էջ 456:

⁵¹ Նա դեռեւս 1915ին զօրակոչուել էր ցարական կովկասեան բանակ եւ իր ցանկու-
թեամբ ուղարկուել ռազմաճակատի առաջնագիծ, ծառայելով Սարիլամիշում: Չորացրուելուց յետոյ վերադարձել էր գիւղ, համախմբել գիւղի երիտասարդու-
թեանը եւ կազմակերպել գիւղի երիտասարդութեան զինեալ պայքարը թուրքերի
ոտնձգութիւնների դէմ, Աթաբէկ գիւղից դուրս քշելով թուրքերին (Արշակ Վիրաբե-
ան, *Գիրք Դարերի Խորքից*, Երեւան, 1998, էջ 128. նաեւ՝ *Չարդախլու*, էջ 175):

⁵² Վիրաբեան, էջ 128:

⁵³ Levon Chorbajian, Patrick Donabedian, Claude Mutafian, *The Caucasian Knot. The History of Nagorno-Karabagh (Politics in Contemporary Asia)*, London-New Jersey, Zed books, 1994, էջ 148:

դարձությունները կապում Ադրբեջանի իշխանությունների կողմից իրագործում հայախալած-ջարդարարական քաղաքականության հետ բնի հայաթափելու Գանձակի եւ Շամխորի, Խանլարի եւ այլ հայաբնակ շրջանները բնիկ հայ բնակչությունից, յանգեցրին Յեղասպանության եւ ծանր հետեանքներ ունեցան հայկական Ոստիջ-Գաղմանքի ճակատագրում, որոնց հեռահար հետեանքները դեռ քաականին երկար ժամանակ իրենց զգացնել կը տան: Բրիտանական յայտնի լրագրող, Կովկասի գծով մասնագէտ Թոմաս Դէ Վասլի կարծիքով, այդ ամենի սկիզբը դրուեց 1987 Հոկտեմբերին, երբ տեղի ադրբեջանական իշխանությունների եւ Ադրբեջանի հիսխոսն գտնուող հոչակատր Չարդախլու գիւղի հայ բնակիչների միջեւ տեղի ունեցաւ բախում, ի պատասխան Ադրբեջանի կողմից գիւղի կոլտնտեսության նախագահ ադրբեջանցու նշանակման կապակցութեամբ Չարդախլուի բնակիչների կողմից ցոյց տուած բողոք-դիմադրութեան եւ Մոսկոա դիմելու⁵⁴: Չարդախլուի կոլտնտեսութեան նախագահ ադրբեջանցի նշանակելու նախաձեռնողը եւ դրան հակառակում գիւղի բնակիչների ջարդի կազմակերպիչը անձամբ Շամխորի շրջանի առաջին քարտուղար Մ. Ասաղովն էր⁵⁵, ինչը առաջ բերեց ազգամիջեան յարուածութիւն եւ հրահրեց յետագայ բնութիւնների ալիքը հայկական բնակչութեան նկատմամբ, եւ արդիւնքում 1987ի վերջում ըստ էութեան Չարդախլուում բռնկուած ադրբեջանա-հայկական բախումը ազոակ դարձաւ 1988ին ապօրինաբար ծնուած եւ արդէն Նոյեմբեր ամսին իր գազաթակէտին հասած Ադրբեջանի հայաբնակ վայրերից հայութեան գանգաւածային բռնագաղթի համար: Ադրբեջանի իշխանությունների կողմից վտարման ելթարկում եւ իրենց բնիկ վայրերից հայ ազգաբնակչութեան բռնագաղթը ազգամիջեան յարաբերութիւնների ոլորտի գլխատր խնդիրը դարձաւ: Ինչպէս դիպուկ նկատել է Ալեքսէյ Չվերելը, Լեոնային Դարաբադի Ինքնավար Մարզի հիսխա-արեւմուտքում գտնուող Չարդախլու գիւղի հայերի 1987ի վերջին ադրբեջական իշխանությունների կողմից իրագոր-

⁵⁴ Thomas De Waal, *Black Garden, Armenia and Azerbaijan through Peace and War*, New York and London, New York University Press, 2003, էջ 18:

⁵⁵ Л. К. Рычкова, Межнациональные отношения в СССР в 1985-1991 гг., (исторический и учебно-методический аспект) (Լ. Կ. Ռիչկովա, Ազգամիջյան յարաբերութիւնները ԽՍՀՄում 1985-1991 թթ., (պատմական եւ ուսումնասնթողական տեսանկիւն), Եկատերինբուրգ, «Ուրալի Պետական Մանկավարժական Համալսարան, հասարակական գիտութիւնների ինստիտուտ», 2018, էջ 68 (<http://elar.uspu.ru/bitstream/uspu/9672/2/Rychkova.pdf> , ներբեռնման օրը՝ 06.06.2020). նաեւ՝ L. K. Rychkova, *Interethnic relations in the USSR 1985-1991* (historical-educational point of view), Yekaterinburg, "Ural State Pedagogical University, Institute of Social Sciences", 2018:

ծուած բնութիւնները եւ ջարդը անլի սարսափելի 1988ի իրադարձութիւնների նախերգանքը հանդիսացաւ⁵⁶:

Դա է հաստատում նաեւ Կիմ Ղահրամանեանը. «1987 թուականից սկսած՝ բացայայտ է դարձել հայերին բռնի տեղահանելու՝ Ադրբեջանի իշխանութիւնների քաղաքականութիւնը: Առաջին փորձը նրանք կատարել են Հիւսիսային Արցախի Զարդախլու գիւղի բնակիչների նկատմամբ»⁵⁷:

Ծանրագոյն այդ հիմնահարցը պատճառահետեւանքային խոր կապերի մէջ յայտնուեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի՝ Արցախի Հանրապետութեան համալիր բնոյթ կրող հիմնահարցի հետ: Թէ ինչո՞ւ Ադրբեջանական ԽՍՀի, ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան հայաբնակ վայրերից բնիկ հայ ազգաբնակչութիւնը «յանկարծակի» արտագաղթեց Հայաստանի Հանրապետութիւն՝ հարկատու է դեռ ամենայն անաչառութեամբ եւ մանրամասնութեամբ բացայայտել: Իրագործուեց ազգասպանութիւն՝ հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանումը հարազատ բնակավայրերից, որը դատապարտում է միջազգային բոլոր օրէնքներով, ՄԱԿի 1948ի հիմնարար ուխտով⁵⁸:

Այս իրողութիւններն իրենց փտած գաղափարական եւ աղաաղուած գործնական հիմնատրումը գտան նոյնիսկ ՀՀ մտաւորականութեան մի շարք ներկայացուցիչների անպատասխանատու, քաղաքական առումով միանգամայն անհեռանկարային եւ անհաշուենկատ, հակապատմագիտական իրապարսկումներում, ելոյթներում մամուլում: «Յայտնի» գրող Վարդգէս Պետրոսեանը *Խորհրդային Հայաստան թերթի 1989 Օգոստոսի 17ի* համարում գետեղեց մի չարաբաստիկ յօդուած «Վերաբնակիչ՛... Փոխստրական՛... Գաղթական՛... Հայրենադա՛րձ» վերնագրով, որը բառիս բուն իմաստով պատմական իրողութիւններն ու քաղաքական երեւոյթները նենգափոխելու շատ կոպիտ եւ պատիւ չբերող փորձ է: Առանել եւս այն խիստ հակագիտական բնոյթ եւ ուղղաւանդութիւն ունի, որը խախտում է դասական ասանդոյթները եւ նենգափոխում արդէն վաղուց հայագիտութեան կողմից քաղաքացիութիւն ստացած տեսակէտերը եւ հայեցակարգերը: Պատմագիտական հասկացութիւնների քաղաքական խեղա-

⁵⁶ А. Зверев, “Этнические конфликты на Кавказе, 1988-1994 г.” (Ա. Զվլբեր, «Լեռնական բախումները Կովկասում. 1988-1994». Վիճելի պարաձօնները Կովկասում), Մոսկուա, «Ողջ աշխարհը», 1996
(URL: <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0104.htm>.; <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0102.htm>;https://www.vub.be/sites/vub/files/nieuws/users/bcoppiet/139glava_i.pdf), ներբեռնման օրը՝ 15 Յունիս 2020. նաեւ՝ А. Зверев, *Ethnic clashes in the Caucasus. 1988-1994. Disputed territories in the Caucasus, Moscow, the whole world*, 1996:

⁵⁷ Կ. Դ. Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ, (պատմական քննական վերլուծութիւն)», դոկտորական ատարածաւ, Երեւան, 2000, էջ 8:

⁵⁸ Հայոց պարմութեան հիմնահարցեր, Երեւան, ԵՊՀ հրատ., 2000, էջ 442-43:

թիրման միջոցով հեղինակն այդ յօդուածում փորձել է հասասարութեան նշան դնել «գաղթական» եւ «հայրենադարձ» հիմնարար հասկացութիւնների միջեւ եւ դեռ հանդիսատար սնապարծութեամբ նշում, որ հարազատ բնակավայրերից հայ ազգաբնակչութեան տեղաշարժը «պիպի փնէր նաեւ՝ անկախ Լեոնային Ղարաբաղի դէպքերից: Նրանք պիտի գային-լցուին Հայաստան» եւ այդ երեսոյթը որակում է որպէս «հայրենադարձութիւն»⁵⁹: Պետրոսեանը անհեռատեսօրէն անտեսելով այն կարեւոր պատմաքաղաքական ծանրակշիռ հանգամանքը, որ, ինչպէս ինքն է ընդգծում, «նրանց պատերը-նախապատերն են ապրել այդ վայրերում, ապրել են անյիշելի ժամանակներից եւ նրանք շարք առեղի էին բնիկներ, քան քարտէզի այսօրոսայ րէրերը», որն «իրենց ժողովրդի պատմական հայրենիքն էր քարտէզի այսօրոսայ րէրերի աշխարհ գալուց շարք հարիւրամեակներ առաջ», հայ բռնագաղթեալներին միանգամայն անհիմն ու անտեղի համարում է հայրենադարձներ⁶⁰: Յօդուածի հեղինակը դրանով վտանգաւոր քաղաքական ապակողմնորոշման վիճակի մէջ գցեց ու այսօր էլ գցում է հազարատար հայ եւ ոչ-հայ մարդկանց (ինչի դրսեւորումները կամ վերապրումները առայսօր կան), բռնագաղթը անարդարացիօրէն նենգախիտելով հայրենադարձութեան «հասկացութեամբ», եւ դեռ հիմնագործ սնապարծութեամբ նշում, որ աղբբեջանցիներն էլ տեսան, որ ազգաբնակչութիւնը ետ չի վերադառնում, որ «նոյնիսկ առասպելական այն գիտը, որ երկրին երկու մարաջահսր էր փոսել, արմատահան եղաւ-փախաւ այդ «եղբայրութիւնից»⁶¹: Դա նաեւ ծանր հարուած է հայ պատմագիտութեան կողմից վաղուց ի վեր ձեւաւորած ասանդոյթներին եւ ընդունուած մեկնակէտային տեսակէտերին:

Սա ակնբախօրէն վկայում է Պետրոսեանի եւ այլ հեղինակների քաղաքական անհաշուենկատ, հեռուն չմիտուած մտածելակերպի մասին, բայց ոչ ամէնեւին քաղաքական ողջամտութեան, հեռատեսութեան եւ ազգամիջեան յարաբերութիւնների ողջ բարդոյթի ճշմարիտ ըմբռնման մասին, ինչին ցայսօր պատասխան գնահատական չի տրուել: Սա նաեւ վկայում է, որ հեղինակը ամենայն հասանականութեամբ այդ արհեստական եւ կազմակերպուած, քաղաքականապէս նախօրօք նախապատրաստուած բռնագաղթերին տուրք տուողների դասին է պատկանում, որոնք յամառութեամբ ձգտել են եւ դեռեւս շարունակում են յամառօրէն ձգտել հետքերը ծածկել, քողարկել Պատմական Հայաստանի, Հայոց Հայրենիքի «Արցախ» եւ «Ուրփք» աշխարհների (նահանգների) հարազատ բնակավայրե-

⁵⁹ Վարդգէս Պետրոսեան, «Վերաբնակի՛չ... փախստական... գաղթական... հայրենադարձ», *Խորհրդային Հայաստան*, Երեւան, 17 Օգոստոս 1989:

⁶⁰ Նոյն:

⁶¹ Նոյն:

րից⁶² բռնի տեղահանումած հայութեան մասին ողջ ճշմարտութիւնը: Դրանք նաեւ այն կեղծ հայրենասէրներն են պատեհապաշտների պատմունանով, ովքեր այսօր էլ խոչընդոտում են տարաբնոյթ արտաքին-քաղաքական եւ ռազմական բնոյթի հեռահար միջոցառումների իրագործմանը, կազմակերպելով հայրենասիրական խաղիկներ, այդ նպատակի համար օգտագործելով ամենաբարձր ամբիոնները: Նրանց կարելի է դասել բոլորից բարձր ճշացողների այն շարքին, որոնք այսօր կեղծ ու անտեղի գթասրտութիւն եւ հայրենասիրութիւն են բեմադրում՝ է՛լ անելի խճճելով եւ դժուարացնելով սեփական հայրենիքի առաջ կանգնած կարեւորագոյն եւ առաջնահերթ հիմնախնդիրների հանգուցալուծումը, ռազմավարական համալիր բնոյթի ծրագրերի իրագործումը, յիշեցնելով Ֆրանսիական մեծ յեղափոխութեան «ճահճի» մէջ նստածներին՝ բոլորից բարձր ու միանգամայն անտեղի բարձրածայնելով ազգային բարձր «արժէքների» եւ չտարած յաղթանակների մասին:

Այս ամէնի հետեանքով բռնագաղթերի իրականացման դեռ սկզբնամասում հարազատ բնակավայրերը քրեցին անելի քան 213 հազար հայեր կամ շուրջ 56 հազար ընտանիք⁶³, որոնց թիւը յետագայում զգալի չափով անելացաւ՝ ընդունելով ահռելի չափեր⁶⁴: Նրանց որոշակի ֆինանսական, նիւթական եւ այլ կարգի օգնութիւն ցոյց տրուեց, ստեղծուեցին պայմաններ, եւ կարծես թէ մոռացութեան մատնուեց, որ *Չարդախլուում եւ հարիւրատր այլ հայկական բնակավայրերում նրանց նախնիներն սպրել են բազում հարիւրամեակներ, հազարամեակներ, ինչը շարունակում է առ այսօր՝ աղաւաղելով պատմաքաղաքական գործընթացների իրական բռ-*

⁶² Բ. Ուլուբաբեան, *Արցախի պարմութիւն, սկզբից մինչեւ մեր օրերը*, Երեւան, «Ա. Վարանդեան» հրատ., 1994:

⁶³ Հրանուշ Առաքելեան, Զաւէն Խառատեան, «Հայեացք փախստականության պրոբլեմին», *Խորհրդային Հայաստան*, 19 Սեպտեմբերի 1989:

Ղարաբաղեան շարժման մեկնարկին՝ երեք տարուայ ընթացքում Ադրբեջանից բռնագաղթեց 450,000 հայ: 1988ի Սումգայիթի ջարդերին յաջորդեցին հայաշատ Կիլոկաբաղից (Գանձակ), Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից եւ հայաշատ այլ բնակավայրերից հայ բնակչութեան թալանը եւ բռնի արտաքսումը: Թողնելով իրենց հազարամեայ բնօրրանը, մատուներն ու եկեղեցիները, նախնիների գերեզմանները՝ 250,000 հայեր տեղափոխուեցին Հայաստան կամ սփռուեցին աշխարհով մեկ: Բռնագաղթածների երկրորդ ալիքն սկսուեց 1990 Յունուարի Բաքուի սոսկալի հայասպանութիւնից յետոյ, երբ հարիւրատր հայեր սպանուեցին Ադրբեջանի մայրաքաղաքում, եւ եւս 200,000ը ստիպուած եղան թողնել իրենց տներն ու ունեցումաձքը, բռնել գաղթի ճանապարհը (Արմէն Վարդանեան, «Ադրբեջանից բռնագաղթած հայերի հարցի լուծումը մտել է նոր փուլ, Հայաստանի Հանրապետութիւն, 25 Յուլիսի 2020 (<https://armenpress.am/arm/news/1023048.html>), դիտում 23 Յուլիս 2021):

⁶⁴ Առաքելեան, Խառատեան. նաեւ՝ Հրաչիկ Սիմոնեան, «Ազգամիջեան լարուածութեան ակունքներում», *Խորհրդային Հայաստան*, 20 Սեպտեմբերի 1989:

վանդակությունը եւ դրանց զարգացման հնարատրինս նպատակայարմար, ճիշտ եւ առանել հեռանկարային տարբերակների ընտրությունը, առանել եւս, որ ներկայումս ադրբեջանական պատմաքաղաքագիտութեան բազմաթիւ ներկայացուցիչներ ներկայումս փութաջանօրէն զբաղուած են Սինիք-Արցախի եւ Ուտիքի հին եւ նորագոյն պատմութեան, հայոց ազատամարտի ուտիք-արցախեան էջերի կոպիտ եւ անթաքոյց նենգափոխմամբ⁶⁵, ինչը գրկում է Հայաստանի Երրորդ Հանրապետութեանը՝ առանելագոյնս օգտուելու ընձեռուած հնարատրութիւններից՝ լիաթէքօրէն ապահովելու համար սեփական ազգային-պետական եւ պատմաքաղաքական շահերը՝ յօգուտ սեփական հայրենիքի, յետագայ սերունդների պատմաքաղաքական հեռանկարների ապահովման եւ աննախընթաց բարգաւաճման ռազմավարական ծրագրերի իրագործման:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Հայկական Չարդախլուի ցեղասպանական ողիսականը ունեցաւ որոշակի աւարտ: 1988-89ին Չարդախլու (Խաչխաար) գիւղից բռնագաղթուեցին մեծ թոով հայեր, որոնց մօտ 60 տոկոսը հանգրուանեցին ՀՀ Տաւուշի մարզկենտրոնից 60 կմ հիւսիս-արեւմուտք գտնուող Քէօրփուլու նախկին ադրբեջանական գիւղում, որը Չօրական է վերանուանուել 2006ի Յուլիսի 4ին⁶⁶, եւ որը մինչեւ 1988 բնակեցուած է եղել ադրբեջանցիներով: Այդ մասին բազմանշանակ փաստ է բերում Ֆոլիկ Միքայէլեանը. «Արցախեանս

⁶⁵ Մանրամասն տե՛ս՝ Nazim Mustafa, *Azərbaycan Xalq Cümhuriyyəti işigində (1918-1920)*, Baki, "ULU", 2018. նաե՛ւ՝ Назим Мустафа, "Процесс объединения Нахичевана и Азербайджана в Зенгезуре, в Армении (Հայաստանին Չանգեզուրի միաւորումը՝ ուղղուած Նախիջեանի եւ Ադրբեջանի բաժանմանը), դիտում՝ 11 Դեկտեմբեր 2019", *Блог №: 2019/69* (<https://avim.org.tr/Blog/Nahcivan-ile-Azərbaycan-I-Birbirinden-Ayirmak-Uzere-Tertiplenen-Zengezur-Un-Ermenistan-A-Katilma-Sureci-11-12-2019>). նաե՛ւ՝ Dr. Nazim Mustafa, "Azerbaycan Cumhuriyetinin Kütüphanesi Bölüm Başkanı," *Blog No: 69*, էջ 1-18, դիտում՝ 11 Դեկտեմբեր 2019ին). նաե՛ւ՝ Назим Мустафа, *Азербайджанская Демократическая Республика: яркая страница в истории государственности Азербайджана. Материалы международной конференции. 26-30 июня 2018 г., Гянджа, (Նազիմ Մուսախան, Ադրբեջանական Դեմոկրատիական Հանրապետութիւն. վառ էջ Ադրբեջանի պետականութեան պատմութիւնում. Միջազգային գի-րաժողովի նիւթեր, 26-30 Յունիս 2018, Գանձակ, էջ 400-3 (1905.az/ebdurrahim-bay-haqverdiyeva-qarsi-ermənistan-hokumətinin-təskil-etdiyi-quldurluq-hadisəsinin-təfsilati/: nkaa.ru/v-gyandzhe-proxodit-mezhdunarodnaya-nauchnaya-konferenciya-na-temu-adr-yarkaya-stranica-istorii-gosudarstvennosti-azerbajdzhana/), դիտում՝ 25 Մայիս 2021. նաե՛ւ՝ Dr. Nazim Mustafa, "Azerbaycan Cumhuriyetinin Kütüphanesi Bölüm Başkanı," *Blog No: 69*, ներբեռնում՝ 16 Յունիս 2020:*

⁶⁶ Չօրական, <https://hy.wikipedia.org/wiki/Չօրական>: <https://mil.am/ru/news/3453>: <https://jam-news.net/am/>, մատչում՝ 23 Յուլիս 2021:

շարժման առաջին իսկ օրից Սասուն(Միքայելեան)ը առաջինը փաստեակ մեքենաներով՝ կեանքը վրանգելով, դեռ 1988 թ. մեկնեց Շամխորի շրջանի Չարդախլու, Բաղա, Զագիր գիւղեր եւ այդ գիւղերի բոլոր բնակիչներին «ազատեց նոր եղենից», բերեց Հայաստան»⁶⁷, ինչպէս 2020ի արցախեան Սեպտեմբեր-Ոկտեմբերի պատերազմի օրերին, երբ Մեծ Հայքի Հայոց Արեւելից Կողմանց Ուտիք Աշխարհի կամ նահանգի Գանձակի, Թովուզի, Գետաբէկի, Դաշկեսանի, Խանլարի, Ղազախի եւ Շամքորի շրջանների գրեթէ ողջ հայ բնակչութիւնը առանց յապաղելու հայկական իշխանութիւնների ջանքերով արագ «տեղափոխուեց» ՀՀ:

Ազգամիջեան կոիւնտի եւ յարաբերութիւնների սրման եւ յետագայ դէպքերի չարագուշակ շրջադարձերի հետեանքով Զօրականում բնակութիւն հաստատեցին Շամխորի շրջանի Չարդախլու գիւղից եկած 310 եւ Շահումեանի շրջանից բնագաղթուած 12 ընտանիքներ, որտեղ ներկայումս կայ 300 տնտեսութիւն՝ շուրջ 1400 բնակիչներով⁶⁸: Փոխարէնը՝ Քէօրփըլուի ադրբեջանցի բնակիչները հաստատուեցին Ադրբեջանի հայաբնակ եւ հինաուրց հայկական Գարդմանքի Չարդախլու բնակավայրում, որը ազերիների կողմից վերանուանուել է Չանիլիլ (թուրքերէն «Մշուշու լեռ»):

2015 Մայիսի 3ին Տաուշի մարզի Զօրական գիւղում տեղի է ունեցել ԽՍՀՄ կրկնակի հերոս, ԽՍՀՄ մարաշախտ Յովհաննէս Բաղդամեանի եւ ԽՍՀՄ հերոս, ԽՍՀՄ գրահատանկային զօրքերի գլխատր մարաշախտ Համազասպ Բաբաջանեանի կիսանդրիների, ինչպէս նաեւ Հայոց Տեղապանութեան, 1941-45՝ հայրենական մեծ պատերազմի եւ արցախեան հերոսամարտի զոհերի յիշատակին նուիրուած երեք խաչքարերի բացման հանդիսատր արարողութիւնը⁶⁹:

Գիւղի բնակիչների մի մասը իր ժամանակին դիմել են ՀՀ առաջին նախագահ Լ. Տէրպետրոսեանին խնդրանքով՝ Զօրականը վերանուանել Նոր Չարդախլու, ինչն աարտուել է անարդիւնք, եւ պատճառաբանութիւն է բերուել, թէ Չարդախլուն հայկական անուն չէ:

Աւելացնենք, որ Չարդախլուի եւ հայկական միա գիւղերի հայութեան մի մասն էլ տուժեցին կամ զոհուեցին Սպիտակի 1988ի դէկտեմբերեան երկրաշարժի ժամանակ, իսկ մի մասն էլ ինչպէս 1915 ազգասպանութիւնից յետոյ բռնեցին գաղթականի ցուպը եւ հանգրուան գտան Ռուսաս-

⁶⁷ «Քաղրանտարկեալ Սասուն Միքայելեանի քոյր՝ Յօլիկ Միքայելեան, Արծիւները պէտք է ազատ լինեն», *Հայկական ժամանակ*, 6 Մայիս 2010:

⁶⁸ Զօրական-Տաուշի մարզ, [Shttps://papikqocharyan.wordpress.com/2016/12/http://tavush.agro.am/index.php?id=4469](https://papikqocharyan.wordpress.com/2016/12/http://tavush.agro.am/index.php?id=4469), դիտում 23 Յուլիս 2021:

⁶⁹ «Ռեազմինֆօ-Զօրական գիւղում տեղադրուել են մարշալներ Բաբաջանեանի եւ Բաղդամեանի յուշարձանները», 4 Մայիսի 2015 (<https://mil.am/ru/news/3543>: <https://razm.info/63696>, դիտում 23 Յուլիս 2021:

տանի Դաշնութեան Դոնի Ռոստով քաղաքում եւ այլ երկրամասերում ու երկրներում: Եւ այսպէս, Ադրբեջանի ցեղասպան քաղաքականութեան արդիւնքում հայկական Չարդախլուն դադարեց հայկական լինելուց, իսկ նրա հայ բնակչութիւնը դարձաւ գաղթական, ակնկալելով, որ մի օր կրկին կը վերադառնայ հայրենի բնակավայրը:

**THE RESISTANCE BATTLES FOUGHT FOR
ARMENIAN CHARDAKHLU**

(Summary)

VANIK HRANT VIRABYAN (vanik.virabyan@mail.ru)

In the Middle Ages the Armenian village of Chardakhlu was known as Khachisar. Several monuments, khachkars and remains of fortresses, tombstones, and churches are witness to the history of this village, located in Soviet Azerbaijan, east of Lake Sevan.

The village was the pillar and guarantor of security for over 15 Armenian villages surrounding it. On the other hand, the occupation of these areas by the Tatars in the 17th-18th centuries was a must for them to provide pasturing grounds for their cattle. Therefore, as the area was inhabited by indigenous Armenians, a conflict of interest led to numerous clashes between the two communities.

The paper narrates the recurring pattern of clashes between the invading Tatars and the defending Armenians. The start of the self-determination war in Mountainous Karabagh gave the Azeri state a good chance to get rid of the Armenians in Chardakhlu and its surroundings. Eventually these Armenian villages were overrun by the Azeris, and the Armenian history of these villages came to an abrupt end in the late 20th century.

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ (1936-1939)

ԱՐԾՈՒԻ ԲԱՆՉԻՆԵԱՆ (artsvi@yahoo.com)

Աշխարհի այլևայլ երկրներում բռնկուած ապստամբութիւններին եւ պատերազմներին հայ կամաւորների մասնակցութեան պատմութիւնը նորութիւն չէ: Բազմաթիւ են դէպքերը, երբ հայ մարտիկը կամաւորագրուել է իր համար երկրորդ հայրենիք դարձած երկրի ազատագրական պայքարին: Աւելին, եղել են դէպքեր, երբ յանուն գաղափարի այդ հայը որպէս կամաւոր մեկնել է երրորդ մի երկիր՝ մասնակցելու 'չարիքի' ոչնչացմանը:

Այդպիսին էր Իսպանիայի քաղաքացիական պատերազմը (1936-39). այն ժամանակ տակափին չկար իսպանահայ համայնք, սակայն այդ պատերազմին մասնակցել են նաեւ հայ ժողովրդի զաւակներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Ժամանելով անձանօք այդ երկիրը՝ նրանք ուս ուսի մարտնչել են յանուն իսպանացի ժողովրդի յաղթանակի ընդդէմ ֆաշիզմի. ուշագրաւ մի իրողութիւն, որը ցարդ մնացել է գրեթէ անձանօք:

Հայերը խառ են կազմել «միջազգային բրիգադներ» (Brigadas Internacionales, խորհրդային իրականութեան մէջ՝ ինտերնացիոնալ բրիգադներ) զօրամիատրոմների կազմին, որոնք Իսպանիայի ազգային-յեղափոխական պատերազմի ժամանակ Հանրապետական Բանակի կազմում մարտնչել են ֆաշիստների եւ իտալա-գերմանական զապօչների դէմ:

ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին հայ կամաւորների մասնակցութեան մասին, որքան պարզել ենք, առաջինը յիշատակել է Հրաչիկ Սիմոնեանը²:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին մասնակցած հայ կամաւորների մասին վկայում է Հայկական սովետական հանրագիտարանը. «4-րդ, 10-րդ եւ 14-րդ ինտերնացիոնալ բրիգադների կազմում մարտնչել են նաեւ սփիւռքահայեր, որոնք աչքի են ընկել Մադրիդի, Գուադալխաա-

¹ 1937ին իսպանացի ապստամբներին ռազմական օժանդակութիւն են բերել տարբեր ցեղի աֆրիկացիներ՝ 78,000, գերմանացիներ՝ 29,000, իտալացիներ՝ 82,000, իրլանդացիներ, լեհեր եւ այլ ազգեր՝ 12,000: 212,000 օտար զինուորներ են եղել Իսպանիայում՝ կառավարական ուժերի դէմ կոտոր («Օտար զինուորներ Սպանիոյ մէջ», Արաքս, 10 Ապրիլ 1937):

² Հրաչիկ Սիմոնեան, *Սփիւռքահայութիւնը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում*, Երեւան, «Հայաստան», 1968, էջ 415-16. նաեւ՝ Զաւէն Մըսրըրեան, «Սփիւռքահայ քաղաքական խմորումներ համաշխարհային Բ. պատերազմի նախօրեակին (1933-1939 թթ.)», *Հայկազեան հայագիտական հանդէս, հրր. է.*, Պէրլուք, 1979, էջ 91-92:

բայի (sic), Խարամայի, Էբրոյի մարտերում: Հերոսի մահով են ընկել Գրիգոր Հարոյեանը, Աշոտ Անդրեասեանը, Կայծակ Գարակեօզեանը, Գառնիկ եւ Թորոս Լոբասեանները, Յովհաննէս Բոզդայեանը³, Պողոս Պերճեցիին, Յովհաննէս Թոփալեանը, ու քաջաբար կռուել Վահէ-Ազար Ադամեանը, Ռուդոլֆ Շահինեանը, Խաչիկ Ամիրխանեանը, Յակոբ Մարտիրոսեանը եւ շար ուրիշներ: 1936ի Դեկտեմբերին «Միլիտար ոռիսա» (Կարմիր միլիցիա) թերթը գրեց հանրապետական բանակի սպայ կապիտան Վահան Չրքայեանի քաջագործությունների մասին: 1937-38ին Ֆրանսիայի հայ հասարակայնությունը հանգանակեց եւ Հանրապետական Իսպանիայի օգնութեան կոմիտէին յանձնեց 1 մլն. ֆրանկ⁴: Յաւօք, նշում աւնումները (մէկ բացառութեամբ) մեզ չեն հանդիպել այլ արբիրներում...:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմի շրջանում հայ մամուլը բազմիցս անդրադարձել է այդ խնդրին՝ երբեմն տեղ տալով հայ յօդուածագիրների գրությունների⁵: Այս պատմական իրադարձությունը որոշակի ազդեցություն է ունեցել հայերի վրայ՝ Հայաստանում թէ՛ Սփիւռքում: Այսպէս, հալէպահայ ազգային գործիչ Ռուպեր Ճեպլեճեանի վկայութեամբ. «Սպանական յեղափոխությունն ու պատերազմի անցողարձերն ալ երկրասարդութեան մօտ տեղի կու տային ցնցիչ անդրադարձումներու, հոգեկան զգօծութիւն՝ դեմոկրատիայի պաշտպանութեան անհրաժեշտութեան հանդէպ»⁶:

1937ի տուեալով՝ Իսպանիա գտնուող հայ կամաւորների թիւը եղել է մօտ 100: Ըստ Լուս Անջելլոսի *Նոր Ուղի* թերթի՝ «Այս մարդիկը արկածախնդիրներ չեն, որոնք կը վարձուին զանազան բանակներու մէջ. ոչ մէկ կերպով: Անոնք կամաւոր են բառին ազնուագոյն իմաստովը. մարդիկ՝ որոնք կամատրաբար իրենց կեանքը ի սպաս կը դնեն ժողովուրդներու ազատագրութեան համար եւ արհմարթու ֆաշիզմի դէմ մղուող պայքարներուն: Թող այս քաջերը օրինակ ծառայեն մեզ ամէնուս»⁷:

Ամերիկահայ համայնավարների *Բանուոր* թերթը 1937ի Ապրիլ 3ի թում հաղորդել է Միսաք Չելչեան անունով հայ կամաւորի զոհուելու լուրը Յունուարի սկզբին Իսպանիայում: «Ընկեր Չելչեան Ամերիկայէն Սպանիա մեկնող կամաւորական խումբին միացաւ 1936ի Դեկտեմբեր

³ Հասանաբար Պոհեպեան:

⁴ «Ինտերնացիոնալ Բրիգադներ», *Հայկական սովետական հանրագիտարան*, հրդ. 4, Երեւան, 1978, էջ 355-56: Էջ 355ում կայ նաեւ ֆրանսահայ կամաւորների լուսանկար:

⁵ Ասատուր, «Հերոս Ալքազարը», *Հայրենիք*, 2 Հոկտեմբեր 1936. նաեւ՝ Վարդգէս Ահարոնեան, «Ալքազարի եօթանասուն օրերը», *Հայրենիք*, 22-29 Հոկտեմբեր 1936. նաեւ՝ «Մատրիտ», *Հայրենիք*, 27 Դեկտեմբեր 1936:

⁶ Ռուպերտ Ճեպլեճեան, *Ինքնակենսագրութիւն. յուշեր եւ գործունէութիւն*, Հալէպ, Վիլլետ Ճեպլեճեան Գրադարան, 1999, էջ 217-18:

⁷ Մէջբերումն ըստ՝ «Սպանիոյ հայ կամաւորները»ի, *Արագ*, 25 Յուլիս 1937:

ամսուն: Ան կը պարկանէր Աբրահամ Լինքընի ջոկարին, որուն մէջ կը գտնուի նաեւ ուրիշ հայ բանտորներու խումբ մը: Ընկեր Չելէպեանը կը պարկանէր արագահարուածի խումբի մը եւ հմուր էր այդ գործին մէջ: Ան սպանուեցաւ ֆաշիստներու կողմէ արձակուած ռումբէ մը»⁸:

1937ի Ապրիլի 23ին Բանտորին Իսպանիայից նամակ է ուղարկել թերթի խմբագիր Վահրամ Գեորգեանը: Նա Ամերիկայից Իսպանիա է մեկնել որպէս կամաւոր եւ մասնակցել Գուադալախարայի եւ Կորդոբայի ճակատամարտերին: Գեորգեանը վկայել է, որ հանդիպել է ֆրանսիական եւ բելգիական զամարտակի անդամ ֆրանսախօս մի հայի: Իսկ նրա բուլղարացի ընկերը տեղեկացրել է, որ 25 հայեր կամաւոր եկել են Բուլղարիայից, յանուն ժողովրդավարութեան պաշտպանութեան՝ իսպանական ֆաշիզմի դէմ կռուելու: Թորքիայից ետ եկել են միքանի հայեր, որոնք միացել են միջազգային բրիգադին, չորս հայ էլ եղել է «Աբրահամ Լինքըն» զամարտակումը: «Մեր ժողովրդական բանակի յաղթանակներն ու յաջողութիւնները կ'ոգտորեն մեզ, նոյնպէս բոլոր անոնք, որոնք ֆաշիզմի դէմ կը կռուին Սպանիայէն դուրս: Մեր ընկերները մարտունակութեան սքանչելի սպացոյցներ փոփն Կուսաբալախարայի եւ Քորդոբայի ճակատներուն վրայ: Տնցող յաջողութիւնը, որ մեր յաղթական բանակը ունեցաւ, ապացոյց մըն էր, թէ կարգապահ եւ կեդրոնացեալ հրամանատարութեան փակ մարզուած բանակները ինչէ՛ր կարող են ընել: Ասիկա պարահական չէր, այլ պարտըր ամիսներու անընդհար աշխատանքին անոնց, որոնք գիպէին թշնամիին դէմ կռուիլ երկու ճակարի վրայ, զինտորական եւ քաղաքական»⁹:

Իսպանիայի հայ զինտորներից շատերը չեն կարողացել վերադառնալ իրենց բնակած երկրները: Շատերն անցել են Ֆրանսիա, որտեղ մնացել են համակենտրոնացման ճամբարներում: Այս մասին վկայել է իսպանական հայ վետերաններից Յակոբ Մարտիրոսեանը՝ ամերիկահայ կամաւոր Յովհաննէս Ադամանիին գրած նամակում, հրատարակուած 1939ին, ամերիկահայ *Լրաբեր* թերթում¹⁰: Անլորդ չենք համարում այն մէջբերել գրեթէ ամբողջութեամբ.

Նայի եւ ստաց ձեր որպիսութիւնը կը հարցնեմ: Եթէ զիս հարցնելու ըլլաք, որջ եւ առողջ եմ: Սիսասիկ, սիրելի ընկերս Յովհաննէս, Սպանիայէն Ֆրանսա անցած եմ: ԱՅՍ ՏԵՂ ԲԱՇԱԾՆԻՍ ՄԻ ՄԻԱՅՆ ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ: Այստեղ, Ֆրանսայի հայկական ընկերութիւններէն մեզի ո՛չ հասնող կայ, ո՛չ ալ փնտոող: Սիրելի ընկերս Յովհաննէս, քեզմէ շատ կը խնորեն, որ ստորեւ

⁸ «Հայ Կամաւորներ... Սպանիոյ Մէջ», *Արագ*, 14 Մայիս 1937:

⁹ «Ընկեր Վահրամ Գեորգեան Կը Գրէ Հերոսական Սպանիայէն», *Նոր Ուրի*, 11 Յունիս 1937, նաեւ՝ *Արագ*, 1 Յուլիս 1937, էջ 2:

¹⁰ Անը: Վահրամ Գեորգեանը գոհուել է 1937ի Յովիսին (Սիմոնեան, էջ 416):

¹¹ «Սպանական Հայ Կամաւորները Պէտք Ունին Մեր Օգնութեան», *Լրաբեր*, 18 Մայիս 1939:

գրուած անունները հայկական Լրաբեր թերթի մէջ տպել տաս: Քեզմէ կը սպասեմ, որ Ամերիկահայ հակաֆաշիստ եղբայրներու կողմէ օգնութիւն մը դրկէք մեզի: Երբ Քաթալոնիան կորսնցուցինք, լեռներու վրայով հետիոտն Ֆրանսա անցանք: Եւ Ֆրանսացիները մեզի արին ու համակերորոնացման կայանը տարին: Հիմա մեզի գերիի պէս կը նային: Շատ գէշ վիճակի մէջ ենք: Կարծեմ, թէ դուք արդէն հոն թերթերու մէջ կը կարդաք: Վերջացնելով երկտողս, ջերմագին ողջոյններս կ'ուղարկեմ հակաֆաշիստ բոլոր Ամերիկահայ եղբայրներու: Վստահ եմ, որ անոնք պիտի չզլանան իրենց լաւագոյնը ընել մեզի համար¹²:

Մարտիրոսեանը յիշել է նաեւ իսպանական պատերազմին մասնակցած հայերի անունները՝ Արամ Ակոբեան, Արիստակէս Ակոբեան, Սեդրակ Ակոբեան, Գեորգ Արամեան, Դանիէլ Գազանճեան, Դալիթ Դալիթեան, Եղաարդ Թաշճեան, Վահան Կոստանեան, Վահան Վահանեան, Գառնիկ Քելէքեան:

Թէեւ այստեղ յիշուած է 11 անուն (Մարտիրոսեանը ներառեալ), թերթում գրուած է. «*Քացի այս 14 վեթերաններէն, ուրիշ կայանին մէջ կը գտնուին չորս վեթերաններ*»¹³:

Լրաբերն ընդառաջել է այս կոչին եւ բացել նոսրատուութեան մի սիւնակ, որտեղ արձանագրուած գումարները պէտք է ուղարկուեն «Աբրահամ Լիներըն» գումարտակի գրասենեակը՝ համակենտրոնացման կայանների հայ վետերանների համար: Յուլիսին արդէն հասաքուել է 39.80 դոլար¹⁴:

1938ին Իսպանիայի ժողովրդին օժանդակելու կոչով հանդէս է եկել նաեւ Ուրուգուայի ժողովրդային Միութիւնը: Նրա անդամ Պետրոս Պարտիզպանեանը միութեան հաւաքներից մէկի ժամանակ կոչ է արել սատարել Իսպանիայի հակաֆաշիստական պայքարին. «*Բոլոր անտիֆաշիստներու տեղը պէտք է որ ըլլայ Ուրուգուայի ժող. Միութիւնը: ...Ամսական 20-50 սէնթով (՝) եւ կամ հին եւ նոր հագուարներ նուիրելով, այդ կարող էք ընել դուք Սպանական օգնութեան կոմիտէի միջոցաւ: Այո՛, ընկերներ քաղաքացիներ, օգնե՛նք Սպանական արի ժողովրդին, որ կարենան անոնք թաղել ֆաշիզմը Սպանիո մէջ: Ուրեմն ես ձեզ հետք միասին*

¹² Անդ:

¹³ Անդ:

¹⁴ «Կը պատասխանեն Սպանիայի հայ կամաւորներու դիմումին, ի նշան երախտագիտութեան», *Լրաբեր*, 13 Յուլիս 1939, էջ 2: Այստեղ նշուած է, որ տէր եւ տիկին Քաթալիպեանները թերթին գրել են. «*Ի՛նչ անպարբերութեան ու զրսցումի հանդիպած ըլլալու եւ Սպանիո (sic) մեր կամաւորները, որ «Լրաբեր»ի Մայիս 18ի թոյլ մէջ հրապարակած իրենց նամակով կ'ըսեն. արդե՞օք լսեցանք մը գործեցիկը Սպանիո (sic) համար կրուելով*»: Սակայն *Լրաբեր*ի վերոնշեալ թում նման խօսքեր չկան:

վերցնելով իմ բաժակը՝ կը խմեմ եւ կը գոչեմ՝ կեցցէ՛ անպարտելի Սպանիան եւ անոր օգնող միջազգային ազատասէր ժողովուրդները»։¹⁵

1940ին Ամերիկահայ Երիտասարդական Միութեան (ԱԵՄ, Armenian Youth Association) կենտրոնական վարչութիւնը կոչ է յղել ամերիկահայութեանը՝ օգնելու Իսպանիայի կամաւորներին եւ գաղթականներին: Նշուել է, որ այդ կամաւորների մէջ կան 20 հայ երիտասարդներ, որ աշխարհի տարբեր երկրներից մեկնել են Իսպանիա՝ կռուելու ֆաշիզմի դէմ: Նրանց մէջ եղել են նաեւ տասնեակի չափ ԱԵՄի անդամներ՝ Աշոտը, Զորջը, Հերլըրը... Նիւ Եորքում հայկական յանձնախումբ է կազմուել՝ տեղի հայութեան մէջ հայ կամաւորների օգնութեան գործը կազմակերպելու համար¹⁶: Նոյն թուականի Ապրիլին Նիւ Եորքում կայացել է Իսպանիային նուփրուած խորհրդաժողով, որտեղ որպէս ԱԵՄի պատուփրակ մասնակցել է Գրէյս Շահինեանը: Նա վկայել է, որ ԱԵՄը լաւագոյն մարտիկներն է ունեցել Իսպանիայի ճակատներում¹⁷:

Իսպանիայում մարտնչած կանադահայ Դազլըս Պատրիկ Սթիւընզը իր *A Memoir of the Spanish Civil War: An Armenian-Canadian in the Lincoln Battalion. Canadian Committee on Labour History* հատորում,¹⁸ տեղեկութիւններ է հաղորդել նաեւ Իսպանիայում մարտնչած հայ կամաւորների վերաբերեալ: Սթիւընզը (Պատրիկ Տէր-Ստեփանեան, 1910–87) ծնուել է Հայաստանում, 1926ին ընտանիքով արտագաղթել է Կանադա: Իսպանիա է ժամանել 1937 Փետրուարին՝ համալրելով մօտ 500 կանադացի կամաւորների շարքերը: Նա որպէս հրետանատու, մատակարարման ղեկավար եւ ռազմական քննիչ ծառայել է 15րդ բրիգադի «Աբրահամ Լինքոլն» գումարտակում (այն ամերիկեան էր, սակայն ընդգրկուած են եղել նաեւ կանադացիներ): Սթիւընզը մի անգամ յայտնաբերել է, որ զինամթերքի պահեստի պատասխանատուն ամերիկահայ է Նիւ Եորքից՝ Բիլ Սահակեան անուամբ: Վերջինս խնդրել է իր հետ մնալ զինապահեստում եւ կազմակերպել է նրա տեղափոխումը¹⁹: Սթիւընզը յիշել է նաեւ գնդացրորդների խմբի ղեկավար Դաիթեանին²⁰ եւ մէկ այլ հայի Մեսէչուսէց նահանգի Ուորսթըր քաղաքից, որը զղջալիս է եղել Իսպանիա գալու համար, թէեւ Սթիւընզը մշտապէս փորձել է ուրախացնել ու գօտեպնդել նրան: «Ես նրան ասացի, որ հենց հասնենք Ալարէս, ես գառ կը գնեմ ու մեր միջանի տղաների հա-

¹⁵ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնդ 314, ցուցակ 1, գործ 19, թերթ 10:

¹⁶ «Կոչ սպանական կամաւորներու եւ գաղթականներու օգնութեան համար», *Լրաբեր*, 4 Մայիս 1940:

¹⁷ Կրէյս Շահինեան, «Քոնֆերանս Սպանիո (sic) օգնելու», *Լրաբեր*, 7 Մայիս 1940:

¹⁸ Douglas Patrick Stephens, *A Memoir of the Spanish Civil War: An Armenian-Canadian in the Lincoln Battalion. Canadian Committee on Labour History*, 2000:

¹⁹ Անդ, էջ 38:

²⁰ Անդ, էջ 42:

մար հաճեցի կերակուր կը պատրաստեն»²¹: Մէկ այլ արտասովոր հանդիպում է նրան սպասել ուղքով Ալմոզեռա գնալու ճանապարհին, երբ կանգնեցրել է մի մտորոցիկավարի եւ խնդրել իրեն հասցնել մօտակայ գիւղը: Վարորդն ասել է, որ ինքը Մարսէլից է եւ իմանալով Սթիւընզի հայ լինելը՝ իջել է մտորոցիկէտից, սեղմել նրա ձեռքը եւ ասել, որ ինքը նոյնպէս հայ է՝ ֆրանսիական 14րդ գումարտակից եւ մեկնում է Գուադալախարա՝ միանալու իր զինակիցներին: «Մօտենալով Ալմոզեռային՝ մենք կանգ առանք մի սրճարանում ու մի-մի բաժակ խմեցինք՝ նշելու մեր ծանօթութիւնը: Յուսով եմ, որ նա ողջ մնաց պատերազմում ու ողջ-առողջ վերադարձաւ իր հարազատների մօտ»²²: Սթիւընզը նաեւ յիշել է, որ մի անգամ էլ բուլղարացի բժիշկ սպայ Միւնկովը մօտեցել է իրեն, սեղմել ձեռքը եւ ասել, որ գիտի, որ ինքը հայ է, որ բժշկութիւն ուսանելիս շատ լաւ հայ ընկերներ է ունեցել եւ որ եթէ Սթիւընզը որեւէ խնդիր ունենայ՝ ինքը կը փորձի ամեն կերպ օգտակար լինել իրեն²³:

Իսպանիայում մարտնչած մէկ այլ հայորդու՝ Հայկազ Խաչատուրեանի մասին վկայել է Թորոս Թորանեանը, որին հանդիպել է Քէրլոթում: Նա յիշել է նաեւ այլ հայ կամատրներին.

Ինք, ջլապիկ երիտասարդ, թուրքերու կողմէ որբացուած տղայ, կ'ուզէ սեւ այդ ֆաշիզմէն վրէժ լուծել: Երբ ներկայանայ առիթը, ոչ թէ մէկ առիթ, այլ բազմաթիւ: Անտուկէն կը հանէ փաստաթուղթերը ու կը նայի երկար, երկար...

Մաքրուիին կը կարծէ, որ Հայկազը թուղթին կը նայի, մինչ մեր Հայկազը հեռուններն է... Սպանիոյ մէջ է, Պարչեթնի մէջ է, զէնքեր կը կրէ, գաղտնի զէնքեր կը մտցնէ Սպանիա, օգնելու համար այն հերոսներուն, որոնք Ֆրանքոյի դէմ կենաց մահու կռիւ կը մղէին...

Ինչ որեր էին Հայկազ: Հայը որպիսի հեռատրութիւններ, ովկիանոսներ կտրելով եկած միացած էր քարթիզաններու բանակներուն, որոնք մէկ անուն ունէին - Հակաֆաշիստ:

Աշուտ Անդրեասեանը Ամերիկայէն եկած էր: Կային տղաք, որոնք Ալեքսանտրէթէն եկած էին, Պէրլոթէն ու Ֆրանսայէն եկած էին:

Ու Հայկազը եկած էր Յունաստանի որբանցներէն ու տասնեակ տասնեակ անգամներ հարիւրաւոր զէնք ու զինամթերք մտցուցած Սպանիա:

Հայկազը Ֆրանքոյի դէմ կռուած էր...

Սեր Հայկազը²⁴:

²¹ Անդ, էջ 57:

²² Անդ, էջ 69:

²³ Անդ, էջ 73:

²⁴ Թորոս Թորանեան, *Երկիրներ եւ մարդեր: Վէպ բազմահարիւր հերոսներով*, Հայէպ, ա. հ., 2004, էջ 384: Հայկազ Խաչատուրեանը ծնունդ էր 1916ին եւ մահացաւ 10 Ապրիլ 1990ին: Նա մինչեւ 18 տարիքը եղել է Պէրլոթի ՀԲԸՄի Քեյքեան որբանոցում:

Նշենք, որ Իսպանիայի քաղաքացիական պատերազմին մասնակցելու են մեկնել նաեւ սփիւռքահայերի այլ խմբաւորումներից: Յունաստանում նախկին դաշնակցական խմբապետ Թորգոմը (Արսէն Թորգոմ, զօրավարի ինքնակոչ տիտղոսով), որը Յունաստանում կազմել է կամաւորական խումբ եւ մեկնելով Իսպանիա՝ գործակցել է Իսպանիայի ղեկավար զօրավար Ֆրանկոյի ուժերին՝ ընդդէմ հանրապետութեան²⁵: «Տիրսիհոշակ ժէնէրալ (!) Թորգոմ, ան, որ իր 25 դաշնակ «ջան-ֆէրաններով» Հայաստանի անկախութիւնը հռչակեց... Կարիւր ունենալով իբր մայրաքաղաք²⁶, եւ վերջերս դարձեալ հայ աշխարատոր ժողովորդի ճակատագրին հետ խաղալու ոճրապարտ փորձեր կը կատարէ՝ ժէնէրալ Ֆրանկոյի օգնութեան փութալով Իսպանիա մի քանի հայ ֆաշիստ ավանդիդիսներով...»²⁷:

Պատերազմից յետոյ Իսպանիայի իրավիճակի քաղաքական գնահատականը սփիւռքահայ մամուլում ծաւալուն յօդուածով փորձել է տալ վերապատուելի Արսէն Ա. Կէօրկիզեանը²⁸:

ԽՈՐՀՐԴԱՎԱՅՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է, որ խորհրդային ռազմական մասնագէտներ նոյնպէս մասնակցել են Իսպանիայի քաղաքացիական պատերազմին: 1936-38՝ պատերազմին մասնակցել է նաեւ զիւմրեցի Թադէոս Մանդալեանը (1901-41), որը 1939ին նշանակուել է Իսպանիայում ԽՍՀՄ գործերի հաւատարմատեւր (մինչ այդ նա Հայաստանում մասնակցել է մայիսեան ապստամբութեանը, իսկ 1926-27՝ Չինաստանում կռուել է Շանհայի ապստամբների շարքերում): 1937-39՝ Իսպանիայում քարոզչական, հետախուզական, վնասագործական եւ պարտիզանական աշխուժ գործունէութիւն է ծաւալել խորհրդային հետախոյզ Հայկ Թումանեանը (1901-71): Իսպանիայում կռուած խորհրդահայերի մասին մի ակնարկ գտնում ենք թատերագիր Ազնեսա Սեւունցի Նոյեմ թատելադում, որի հերոսն ասում է. «Ահա իմ եղբայր Անդրանիկը... դեռեա մինչեւ պատերազմը նա կայացած մարդ էր... Իսպանիայում է մարտնչել»²⁹:

²⁵ Սիմոնեան:

²⁶ Նկատի ունի Հայաստանի անկախութեան հռչակումը 1918 Փետրուարի 13ին, Կարիւնում (Էրզրում): Հայ պետականութեան վերականգնման մասին գրատր հռչակագիրն ազդարարել է Էրզրումի կայսզօրի պարէտ զնդապետ Արսէն Թորգոմը (Արմէնուի Դամբարեան, «Հայաստանի անկախութեան Էրզրումի հռչակագիրը», *Պատմաքաղաքագիտական հանդէս*, 2018:3, էջ 258-63):

²⁷ Երուանդ Թոլայեան, *Կավոշ-Նամէ*, աշխ.՝ Հենրիկ եւ Արծուի Բախչինեաններ, Ստանպոլ, Արաս, 2019, էջ 506:

²⁸ Վեր. Ա. Ա. Կէօրկիզեան, «Ֆրանկոյի Սպանիան եւ աշխարհի խաղաղութիւնը», *Լրաբեր*, 18, 21, 28 Յունուար 1947:

²⁹ Агнесса Севунц, *Коегда Шытат Хронос* (Երբ կատակում է Քրոնոսը), Երեւան, Կոլամ, 2020, էջ 136:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին իրովի են արձագանգել խորհրդահայ շարքային քաղաքացիները, սակայն որպես պետական քաղաքականության պարտադրուած գործողութիւններ: Հազար եւ մէկ կարիքի մէջ գտնուող Հայաստանում 1935-36ին օգնութիւններ են հաաքել Իսպանիայի տուժած համայնավարների, նրանց կանանց եւ երեխաների համար: Այսպէս, 1935ի Յունուարին Երեանի սպանդանոցի աշխատատրներն իրենց կէս օրավարձը (508 ռուբլի 77 կոպէկ) յատկացրել են Իսպանիայի մարտնչող պրոլետարիատին: Հայաստանի կենտգործկոմի միջազգային յեղափոխական օգնութեան մարմնի բջիջը եա 195 ռուբլի 30 կոպէկ է յատկացրել Իսպանիայի պրոլետարներին³⁰: Նոյն ամսին Քանաքեռի գործարանի Գ. մասի պաշտօնէութիւնն իր օրականի կէսը՝ 3000 ռուբլի, յատկացրել է Իսպանիայի մարտնչող համայնավարներին³¹: Լենինականի շրգեկառքի մթերանոցում կայացած հանրահաաքի ժամանակ հաաքել են 2100 ռուբլի, Աշտարակի կանայք՝ 2547 ռուբլի, Ոսկեվազի գեղջկոսիները՝ 300, Երեանի հեռագրատան կին աշխատողները՝ 160 ռուբլի³²: 1936ին Բերիայի անտան կոմունիստական գիտղպրոցի ուսանողները, դասախօսները եւ ծառայողները Իսպանիայի կամատրներին տրամադրել են իրենց մէկ օրուայ թոշակն ու աշխատավարձը (աւելի բան 600 ռուբլի), հրջէնները՝ 935, Երեանի թուրքական մանկավարժական տեխնիկումը՝ 305, Սպենդիարեանի անտան երաժշտական թատրունը՝ 161 ռուբլի, պետական հանրային գրադարանը՝ 584 ռուբլի 80 կոպէկ, «Արաբկիր» արտադրամասի ծառայողները՝ մէկ օրուայ աշխատավարձը, Սեանի ձուկտրեստի աշխատողները՝ 795 ռուբլի, կոյրերի միատրումը՝ 860, պետական թատրունը՝ 1500, Հոկտեմբերեանի բամբակազտիչ գործարանի բանտրոսիները՝ 400, Երեանի ուսուցիչների ինստիտուտի կին աշխատողները՝ 350, կարի արտադրամասի բանտրոսիները՝ 900, Արարատ տրեստի բանտրոսիները՝ 700 ռուբլի են., են.: Ինչպէս յայտնել է *Խոր-*

³⁰ «Իսպանիայի պրոլետարիատի համար», *Խորհրդային Հայաստան*, 10 Յունուար 1935:

³¹ «Օգնութիւն Իսպանիայի մարտնչողներուն», *Յոաքեր*, 26 Յունուար 1935:

³² «Օգնութիւն Իսպանիայի», *Արագ*, 5 Նոյեմբեր 1936, էջ 2: Իդէպ, նման մարդասիրական ցոյցերը նորութիւն չէին Խորհրդային Միութեան եւ նրա մաս կազմող Հայաստանին համար: Այսպէս, 1925ին, մէկդի թողած սեփական կարիքատրներին՝ Հայաստանի կենտրոնական գործադիր յանձնախմբի եւ գործավարների խորհրդին առընթեր բջիջը նիւթական օժանդակութիւն է հաաքել գերմանացի բանտրոսների համար, ապա նաեւ՝ 72 ռուբլի 88 կոպէկ հանգանակութիւն ուղարկել Էստոնիայի համայնավարների դէմ ձեռնարկած հալածանքների ժամանակ տուժած բանտրոսների ընտանիքներին (*Խորհրդային Հայաստան*, 26 Փետրուար 1925): Նման նախաձեռնութիւններով ողջ խորհրդային Միութեան աշխատատրութիւնը իրր իր լուաման էր ներդնում միջազգային համայնավարական շարժման:

հրդային Հայասրան օրաթերթը, Երեանի թիւ 26 մանկապարտզօյի էլիկ Բէգլարեանը դաստիարակչուհուն է տուել իր ունեցած երեք ռուբլին՝ ասելով. «Ուղարկէք Իսպանիայի կոտորողներին»: Միա երեխաներն էլ արձագանգել են էլիկին եւ ընդհանուր հաաքել են 100 ռուբլի... Հարց է, թէ երբեւէ իրենց նպատակակէտին հասն' են արդեօք խեղճ հայ գործաւորների եւ գիւղացիների գոհողութիւնների գնով տրուած օժանդակութիւնները³³:

Այս շրջանում խորհրդահայ մամուլը յաճախակի նիւթեր է հրատարակել Իսպանիայի, նրա մշակոյթի վերաբերեալ³⁴: 1936ին Երեանի երաժշտանոցի դահլիճում տեղի է ունեցել իսպանական երաժշտութեանը նուիրուած երեկոյ՝ ի համակրանք մարտնչող իսպանացի ժողովրդի³⁵: Հայաստանի հանրապետական ժողովրդական ստեղծագործութեան եւ ինքնագործ արուեստի տունը 1937ին ռուսերէնից թարգմանել է իսպանական յեղափոխութեանը վերաբերող *Նրանք չեն անցնի* թատերախաղը շրջանային ինքնագործ թատրոնների համար³⁶:

Խորհրդահայերը որոշ առնչութիւններ են ունեցել 1930-40ականներին ԽՍՀՄ ապաստանած իսպանացի համայնավարների հետ: Նրանց մի մասը հանգրուանել է Կովկասում: Հազարաւոր իսպանացի փախստականներ յայտնուել են Խորհրդային Միութիւնում, այդ թում՝ յեղափոխական առաջնորդներ Դուրբէս Իբարրուրին եւ Խոսէ Դիասը, որը 1942ին Թբիլիսիում սպանուել է խորհրդատր պայմաններում³⁷:

³³ *Խորհրդային Հայասրան*, 12 Հոկտեմբեր 1936: Այս առթիւ դաշնակցական մի թերթ գրել է. «Հայասրան ու՛ր, Սպանիա ու՛ր: Ամէնքը իրար անցած են Խորհրդային Հայասրանի մէջ, մեծ ու սգորիկ: Չըլլա՛յ որ եր մնան, չըլլա՛յ որ իրենց հասագարմութիւնը կասկածի տակ դրոյի, չըլլա՛յ, որ բարխիսեամ եւ բարեգութ մեծ Աթայինը վշտանայ» (Ասատուր, «Օգնում ենք Իսպանիայի», *Հայրենիք*, 17 Նոյեմբեր 1936): Թունելով վերոյիշեալ հանգանակութիւնները՝ նոյն յօդուածագիրը շարունակել է. «Կը տեսնէ՞ք ետանդը, հայկական որբէ՛ ծեռնարկի, որբէ՛ նպարակի համար այսպիսի հասցնելով, ետանդով դրամահաաքութեան մասին երբեիցէ լսե՛ր էք Խորհրդային Հայասրան կոչուած երանեցի երկրին մէջ: Օգնում ենք Իսպանիայի: ...Թող հրճուի Մապորիպի փախստական կատակարութիւնը, Խորհրդային Հայասրանի տոնքիշոթները կոչուած են փրկելու գինք, եթէ Իսպանիայի ժողովուրդը ինքը չ'ուզեր ընել այդ բանը» (անդ):

³⁴ Տե՛ս, օրինակ՝ Մ. Դ., «Կատարունիայի հերոսները», *Խորհրդային արուեստ*, 1 Նոյեմբեր 1936. նաե՛ւ Լ. Նիկոլին, «Էլ Պրադօ թանգարանը», *Խորհրդային արուեստ*, 16 Նոյեմբեր 1936. նաե՛ւ՝ Ֆ. Կելին, «Իսպանական թատրոն», նոյն:

³⁵ «Իսպանական երաժշտութեանը նուիրուած երեկոյ», *Խորհրդային Արուեստ*, 1 Յունուար 1937:

³⁶ «Արուեստի լրատու», *Խորհրդային Հայասրան*, 1 Սեպտեմբեր 1937:

³⁷ A. A. Сагомонян, «Попытки Развертывания Партизанского Движения в Испании (1944-1948 гг.)» (Իսպանիայում պարտիզանական շարժման ծաալման փորձերը, 1944-1948 թթ), *Վոպրոսի Իսպորիի* (Պատմութեան հարցեր), 1998:6, էջ 138:

Իսպանացի համայնավարները եւ քաղաքացիական պատերազմի հերոսները, յատկապէս Դոլորէս Իբարրուրի-Պասինոնարիան (1895–1989), ոգեւորութեան աղբիւր են եղել խորհրդային ժողովուրդների, նաեւ հայերի համար: Արձակագրուհի Էլզա Գրինի (1928–2016) «Այդ զարմանալի խակի գոյնը» պատմուհանքի հերոս Մաուլէն Եղիշեփչը, յիշում է, որ իր կեանքում բազմաթիւ շրջաններ են եղել, որոնցից մէկն էլ եղել է Իսպանիան:

Թիֆլիսի օդաչուական ուսումնարանում իմ սովորելու ժամանակ Մադրիդը ոմբակոծում էր,- ասաց նա:- Ռադիօհաղորդավարուհին ասում էր իձվիս Մադրիդի, իձվիս Մադրիդիս կուչերի, որ վրացերէն նշանակում է՝ Մադրիդը վառում է, վառում են Մադրիդի փողոցները... Նա յայտնեց, որ Թիֆլիսի օդանավայանում տեսել է Դոլորէս Իբարրուրիին եւ ինքնագիր է խնդրել յիշատակի համար: Եւ Դոլորէսը շտապելով՝ թղթի պատտիկի վրայ հենց ինքնաթիռ բարձրանալիս գրել է մի հատիկ բառ՝ Կորդիալմենտէ, որ նշանակում է՝ Ի սրտէ:

- Բոցաշունչ Դոլորէս Իբարրուրիին: Պասինոնարիան,- բացականչեց նա: ...- Ամոր ա պրիմերա վիստա: Աէր աուաջին հայեացքից,- գոչեց Մաուլէն Եղիշեփչը³⁸:

1930ականների խորհրդային Հայաստանի գիտի կեանքը պատկերող Առնոլդ Աղաբաբովի *Ռուբեդ էիր, մարդ ասպոճոյ* շարժանկարում (1992) յիշում է, թէ ինչպէս են ամուսինները ցանկանում իրենց նորածնին անուանել Խոսէ Դիաս՝ ի պատիւ վերոնշեալ իսպանացի յեղափոխականի, իսկ գիւղացիների խօսքուզրոյցում յիշում է Իսպանիայի քաղաքացիական պատերազմը (իդէպ, նշուած իրողութիւնները բացակայում են շարժանկարի գրական հիմքում՝ Զօրայր Խալափեանի համանուն վէպում):

1936ին խորհրդահայ մամուլում Իբարրուրիին նուփրուած բանաստեղծութեամբ (գրական արժէքից զուրկ) հանդէս է եկել Գուգարունի ծածկանուամբ մի հեղինակ³⁹: 1937ին բանաստեղծ Գեղամ Սարեանը (1902–76) հրատարակել է *Իսպանիայի պատրանի հերոսները* գրքոյկը: Այնտեղ «Ավարօ» բանաստեղծութեան մէջ՝ նուփրուած ժողովրդական հերոսին, մասնատրապէս ասում է.

³⁸ Էլզա Գրին, *Երազների փիեզերք*, Երեան, Մաշտոց, 2004, էջ 190:

³⁹ Գուգարունի, «Դոլորէս Իբարրուրուն», *Կարմիր սպորոզ*, 31 Դեկտեմբեր 1936:

<p><i>Թախօ գեպի ափով կանաչ՝ Մի քաջ փղայ գինուած, Քայլում է լուռ դէպի առաջ, Հեքրախուզման ելած: Թփուրների մէջ աննկար, Ճամփով արեալի, Ավելաթօս է երիտասարդ Թողելոյից գայի:</i></p>	<p><i>– Իսպանիա, քեզ ազգայութիւն Մենք կը բերենք արեանը, Քեզ վառօրի ծովսն է պարում Հիմա ինչպէս սեւ ամպ. Ազգայութեան արեով վառ Կը ցրենք ամպ ու մէզ, Ու կը փնենք կոտմ յամառ, Չենք նահանցի երբեք:</i></p>
---	---

Արձակագրուի Լիւսի Թարգիլը (1905-55) 1939ին հրատարակել է *Դէպի Իսպանիա* վէպը, ուր կոչ է արել կամատրական ջոկատներով օգնութեան հասնել իսպանացի ապստամբներին: Իսկ հայազգի խորհրդային վաերագրող Արշա Օանեսովան (Յովհաննիսեան, 1906-90) 1936ին նկարահանել է *Ողջոյն Իսպանիայի պիոներներին* շարժանկարը:

Ամփոփելով ներկայացուած փաստական նիւթը՝ կարող ենք հաստատել Իսպանիայի 1936-39ի քաղաքացիական պատերազմում հայ ժողովրդի զաաակների մասնակցութիւնը (առնուազն՝ հարիւր հոգի): Յատկանշական է, որ եթէ ի համակրութիւն իսպանացի համայնավարների ԽՍՀՄի կողմից ի պաշտօնէ ուղարկուել են հայազգի մասնագէտներ, ապա տարբեր երկրներում ապաստանած հայեր (Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Բուլղարիա, Լիբանան, Յունաստան, Թուրքիա) այդ պատերազմին մասնակցել են միանգամայն կամատր սկզբունքով: Հայերը մարտնչել են թէ՛ հանրապետականների շարքերում, թէ՛ հանրապետականների դէմ: Օսմանեան քաղաքականութեան այլատեսացութեան եւ ցեղասպան քաղաքականութեան պատճառով հայրենազուրկ դարձած այդ հայերը պարզապէս չեն կարողացել հանդուրժել աշխարհի մէկ այլ մասում բռնկուած ֆաշիստականութիւնը եւ յաճախ իրենց կեանքի գնով նպաստել են ֆաշիզմի դէմ յաղթանակին:

Ինչ վերաբերում է խորհրդահայերին, ապա նրանց պարտադրուել է իրենց համակրանքն արտայայտել իսպանացի ժողովրդին դրամական նուիրատուութիւնների եւ Իսպանիայի վերաբերեալ տեղեկացուածութեան բարձրացման միջոցով, որի արդիւնքում իսպանական քաղաքացիական պատերազմն ու նրա հետոսները գրական նիւթ են դարձել միջանի հայ գրողների համար:

THE SPANISH CIVIL WAR AND THE ARMENIANS (1936-1939)

(Summary)

ARTSVI BAKHCHINYAN (artsvi@yahoo.com)

The participation of Armenians in the Spanish Civil War is almost unknown. At least one hundred Armenians from different countries (France, USA, Canada, Bulgaria, Turkey, Lebanon) participated in that war, on a completely voluntary basis, as members of special military units known as International brigades. These Armenians, who became stateless due to the xenophobia and genocidal policies of the Ottoman Empire, simply could not tolerate the outbreak of fascism in another part of the world and joined in the struggle against fascism, sometimes at the cost of their lives. Captain Vahan Chkayan, an officer in the Republican army, is an outstanding figure among these volunteers.

Several Soviet Armenian specialists were officially sent by the USSR to support the Spanish communists. During the war years, Soviet Armenian citizens, like all the peoples of the Soviet Union, were forced to express their sympathy for the Spanish people through donations and raising awareness of the events in Spain. They organized various cultural events and gatherings. The Spanish Civil War and its heroes became a source of inspiration for some Armenian writers.

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԽԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ
Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՅ**

ԷԴԻՏԱ Գ. ԳՂՈՅԵԱՆ (editagzoyan@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Դեռևս 1648ին, Ուեստֆալեան Համակարգով՝ հաստատուած պետութիւնների ինքնիշխանութեան գաղափարն իր առաջին լուրջ ճեղքուածքը տուեց Առաջին Համաշխարհային Պատերազմից յետոյ: Պատերազմի քաոսն ու անբաժանելիները, դրան յաջորդած խաղաղութեան ձգտումն ու վայրագութիւնների անպատժելիութեան դէմ հանրային բողոքը հիմք հանդիսացան անցեալ համակարգի դէմ պայքարի եւ մարդու կեանքի եւ արժանապատուութեան համար հիմնաչափային (նորմատիւ) հիմք կառուցելու համար: Պետութեան ինքնիշխանութեան՝ ոչ բացարձակ լինելու հանդէպ այս նոր վերաբերմունքն առաջ բերեց պետութիւնների հանդէպ քրէական պատասխանատուութիւն սահմանելու հարցը՝ պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների համար: Այս զարգացումների կիզակէտում էր նաեւ Ա. համաշխարհային պատերազմում Քառեակ Դաշինքի կազմում հանդէս եկած Օսմանեան Կայսրութիւնը:

Պատերազմի քօղի ներքոյ թուրքական իշխանութիւններն իրականացրեցին Օսմանեան Կայսրութեան հայ ազգաբնակչութեան ոչնչացումը՝ զանգուածային կոտորածների, տեղահանութիւնների եւ բռնի ձուլման միջոցով: Արդէն 1915 Մայիսի 24ին Դաշնակից Տէրութիւններից Ռուսստանը, Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսիան հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ, որով հայերի դէմ իրականացուող գործողութիւնները որակեցին որպէս յանցագործութիւններ «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ»՝ հիմք դնելով միջազգային քրէական իրաւունքում նոր յանցագործութեան ձեւատրմանը:

Փարիզի վեհաժողովի ընթացքում ստեղծուեց պատերազմի հեղինակների պատասխանատուութեան եւ պատիժների սահմանման յանձնաժողովը, որը պէտք է պարզեր Ա. համաշխարհայինը սանձագերծողներին եւ պատիժներ սահմանէր *պատերազմական եւ մարդկութեան օրէնքների դէմ* յանցագործութիւններ իրականացրած անձանց նկատմամբ: Յանձնաժողովը քննութեան առաւ նաեւ Թուրքիայի պատասխանատուութեան հարցը՝ այն դիտարկելով մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւնների ծիրում: Եւ չնայած մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ ձեակերպումը բառացիօրէն չմտաւ յետպատերազմեան հաշտութեան պայմա-

¹ Ուեստֆալեան համակարգը (1648), միջազգային իրաւունքի սկզբունք է, ըստ որի իրաքանչիւր պետութիւն սեփական տարածքի նկատմամբ ունի գերիշխանութիւն, եւ արգելք է այլ պետութիւնների կողմից իր ներքին գործերին միջամտելուն:

նագրերի մէջ, սակայն, ըստ էության, Սեբի Պայմանագրի 230րդ յօդուածը վերաբերում էր այդ նոր յանցագործությանը, որը իր իրաական ձեակերպումը ստացաւ միայն Բ. Համաշխարհային Պատերազմից յետոյ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԳՐԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ. ԴԱՆՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՌՁԱԳԱՆԳԸ

Առաջին համաշխարհային պատերազմին իր մուտքն Օսմանեան Կայսրութիւնն օգտագործեց մի շարք միջազգային պարտաորութիւններից հրաժարուելու համար, որոնց թում յատկապէս կարեւորում էին հայերի հանդէպ նախկինում ստանձնած պարտաորութիւնները: 1914 Դեկտեմբերի 16ին Առաջին Համաշխարհային Պատերազմի սկսուելուց հինգ ամիս անց Օսմանեան Կայսրութիւնը կայսերական հրովարտակով չեղարկեց հայկական բարենորոգումների՝ 1914 Փետրուարի 8ի համաձայնագիրը²:

1915 Սեպտեմբերի 5ին օսմանեան արտաքին գործերի նախարար Խալիլը Գերմանիայի դեսպանին տեղեկացրեց, որ օսմանեան կառավարութիւնը որոշել է ուժը կորցրած ճանաչել 1865ի Փարիզի Պայմանագիրը³, 1871ի Լոնդոնի Յայտարարութիւնը⁴, եւ 1878ի Բեռլինի Պայմանագիրը⁵,

² Հայկական բարենորոգումների համաձայնագիրը ստորագրուել էր 1914 Փետրուարի 8ին Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ այլ պետութիւնների համաձայնութեամբ, որը միջազգային պարտաորութիւններ էր սահմանում թուրքական կառավարութեան համար՝ յարգել եւ պաշտպանել հայ փոքրամասնութիւնների իրաւունքները (Yahakn Dadrian, "Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications," *Yale Journal of International Law*, 1989:14(2), էջ 263:

³ 1856ի Փարիզի Պայմանագիրը կնքուել էր Ռուսական եւ Օսմանեան կայսրութեան ու վերջինիս դաշնակիցներ Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ապրիլինիայի միջեւ, որով վերջ էր տրուում Ղրիմի պատերազմին: Յօդուած Թ.ն սահմանում էր, որ սուլթանը Ֆիրման էր արձակել, որով պէտք է բարելաւուէր կայսրութեան քրիստոնեայ բնակչութեան վիճակը՝ առանց կրօնի կամ ցեղի խտրութեան: Միաժամանակ, նշում էր, որ սա ոչ մի դէպքում չի կարող յիշեալ տէրութիւններին իրաւունք տալ՝ համատեղ կամ առանձինն միջամտելու սուլթանի եւ իր հպատակների յարաբերութիւններին եւ կայսրութեան ներքին կառավարմանը (ամբողջական բնագիրը՝ https://content.ecf.org.il/files/M00934_TreatyOfParis1856English.pdf):

⁴ Լոնդոնի Պայմանագիրը կնքուել էր 1871ի Մարտի 13ին Պրուսիայի, Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Իտալիայի միջեւ: Արանով թէեւ չեղեալ յայտարարուեցին 1856ի Փարիզի Պայմանագրի մի շարք յօդուածներ, Թ. յօդուածը չի չեղարկուել եւ մնացել է անփոփոխ:

⁵ Բեռլինի Պայմանագիրը կնքուել էր Աստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծն Բրիտանիայի եւ Իռլանդիայի, Իտալիայի, Ռուսաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ 1877-78 ռուս-թուրքական պատերազմի արդիւնքում: Պայմանագրի 61րդ յօդուածը վերաբերում էր հայերին, որով Բարձր Դուռը պար-

քանի որ դրանք «քաղաքական ձեռնաշղթայ» էին դարձել կայսրության համար՝ «մարդասիրական միջամտության» գաղափարի քողի տակ իր ներքին գործերին խառնուելու հնարատրություն տալով Արեւմուտքին եւ Ռուսական Կայսրությանը⁶: Յատկանշական է, որ Օսմանեան Կայսրութիւնում Գերմանիայի դեսպան Մետերնիխը 1916 Սեպտեմբերի 5ի իր գեկոյցում ընդգծում է Բելվիլի Պայմանագրի 61րդ յօդուածի վերաբերեալ թուրքական անհանգստութեան մասին⁷:

Կայսերական հրովարտակից միջանկի ամիս անց Օսմանեան Կայսրութիւնը սկսեց հայերի ոչնչացման գործընթացը:

Հայերի կոտորածների մասին առաջին տեղեկութիւնները ստանալուց յետոյ՝ 1915 Ապրիլի 15ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգէյ Սազոնովը հեռագրում է Փարիզում եւ Լոնդոնում ռուս դեսպաններին, որ տեղեկութիւններ են ստացուել ասիական Թուրքիայի միջին ասիական տարածքներում եւ թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածների մասին եւ առաջարկում էր ֆրանսիական եւ անգլիական կառավարութիւններին հանդէս գալ համատեղ յայտարարութեամբ՝ ուղղուած օսմանեան կառավարութեանը, որով «հայերի կոտորածի համար անձնական պատասխանատուութիւնը կը դրուի Թուրքիայի մինիստրների խորհրդի բոլոր անդամների, ինչպէս եւ այդ իրադարձութիւններին առնչուող քաղաքացիական ու զինուորական պաշտօնատար բոլոր անձանց վրայ»⁸:

Արդէն 1915 Մայիսի 24ին Մեծն Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան տեղահանութեան եւ կոտորածների առնչութեամբ հանդէս են գալիս համատեղ յայտարարութեամբ⁹: Երեք դաշնակից պետութիւնները յայտարարում են, որ հայերի

տատրում էր հայաբնակ մարզերում տեղական կարիքներից թխող բարեխառմներն ու բարենորոգումները իրականացնել եւ ապահովել հայերի անվտանգութիւնը չերբէզներից ու քրդերից: Բարձր Դուռը պարտատրում էր պարբերաբար տեղեկացնել այդ նպատակի համար կատարած քայլերի մասին, իսկ տէրութիւնները հետեւելու էին դրանց իրականացմանը:

⁶ Պայմանագրերից հրաժարուելու ամբողջական քննադրելը տե՛ս՝ **Friedrich von Kraeclitz-Greifenhorst**, "Die Ungültigkeitserklärung des Pariser und Berliner Vertrages durch die osmanische Regierung," in *Osterreichische Monatsschrift für den Orient*, 1917, vol. 43, էջ 56-60:

⁷ Dadrian, էջ 264:

⁸ Юрий Барсегов (ред.), *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии* (Եւրոյի Բարսեղով [յանր.], Հայոց Յնդասպանութիւն. Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ միջազգային հանրութեան պարտատրութիւնները: Փաստաթղթեր եւ մեկնաբանութիւններ), *հար. 1*, Մոսկուա, Գարդարիկի 2002, էջ 237:

⁹ Միաժամանակ պէտք է նշել, որ Էջմիածնի կաթողիկոսը Գեորգ Ե.ը դիմել էր ռուսական կառավարութեանը՝ խնդրելով օգտագործել իր միջնորդութիւնը, որպէսզի թուրքական կառավարութիւնը դադարեցնի հայ քաղաքացիական բնակչութեան

դէմ այս յանցագործութեան համար պատասխանատու է թուրքական կառավարութիւնը: Յատկանշական է, որ մէկ տարի անց՝ 2016ին, նոյն Ռուսաստանը եւ Ֆրանսիան մերժեցին անգլիացիների նմանատիպ առաջարկը՝ հանդէս գալ Գերմանիայի կողմից պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտումների դէմ¹⁰:

Հայկական կոտորածների մասին Դաշնակիցների բնագրում նշում էր. Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում քրդերի եւ թուրքերի կողմից օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողոտութեամբ, իսկ երբեմն էլ ուղղակի համագործակցութեամբ Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ: Ապրիլի կեսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չէլթունում եւ ամբողջ Կիլիկիայի: Գլխովին կոտորած են Վանի շրջակայքի հարիւրաւոր գիղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղը շրջապատուել է բրդերի կողմից: Միեւնոյն ժամանակ Կոտանդոնալոյսի թուրքական կառավարութիւնը բանտարկում եւ անտանեյի ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութեանը:

Նկատի ունենալով Թուրքիայի կողմից իրագործուած մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած այս նոր յանցագործութիւնները՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները սոյնով հրապարակաւ յայտարարում են, որ նրանք այդ բոլոր ոճրագործութիւնների անձնական պատասխանատուութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների վրայ, ինչպէս եւ տեղական այն ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից են նման կոտորածին¹¹:

Յայտարարութիւնը կարելի էր միջանի տեսանկիւնից. նախ, առաջին անգամ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնները որպէս հայե-

կոտորածը թուրքական տարածքում (*Papers Relating to the Foreign Relations of the United States, U.S. Government Printing Office, 1928, էջ 980*: Առաւել մանրամասն տե՛ս՝ Ruben Safrastyan, "Genocide of the Armenians in the Ottoman Empire: Last Week of May 1915," *Fundamental Armenology*, 2018:1(7), էջ 1-67. նաեւ՝ Զաւէն Մսրըլեան, *Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական Հարցը (1900-2009)*, Պէյրութ, Սիփան հրատ., 2010:

¹⁰ James Willis, *Prologue to Nuremberg: The Politics and Diplomacy of Punishing War Criminals of the First World War*, Contributions in legal studies (Book 20) Greenwood Pub Group, 1982, էջ 23:

¹¹ Ըստ Սաֆրաստեանի, յայտարարութիւնից յետոյ Օսմանեան Կայսրութեան ղեկավարների մօտ վախ առաջացաւ հնարաւոր անհատական պատասխանատուութիւնից, ուստի քայլեր ձեռնարկեցին «օրինականացնելու» հայերի տեղահանութիւնները եւ կիսելու պատասխանատուութիւնը՝ ընդունելով տեղահանութեան մասին օրէնքն ու կառավարութեան որոշումը: Յայտարարութեան վերաբերեալ որոշ մանրամասների եւ թուրքերի պատասխանի վերաբերեալ տե՛ս՝ Ռուբէն Սաֆրաստեան, «Անտանտի երեք երկրների 1915 թ. մայիսիեան յայտարարագիրը եւ գերմանա-թուրքական պատասխանը», *Հայոց ցեղասպանութիւն - 100, ճանաչումից՝ հարուցում, Միջազգային գիւրաժողովի զեկուցումների ժողովածու*, Երեւան, 2016, էջ 28-36:

ցակարգային դրոյթ՝ ի յայտ են գալիս միջազգային հարթակում հենց հայկական գանգրածային կոտորածների առնչութեամբ¹²: Յանցագործութիւն բառի կիրառումը մատնանշում էր քրէական պատասխանատուութեան անհրաժեշտութեան մասին: Համատեղ յայտարարութեան մէջ առաջին անգամ խօսում էր նաեւ պետութիւնների ղեկավարների անձնական պատասխանատուութեան մասին՝ չնայած գոյութիւն ունեցող անձեռնմխելիութեան սկզբունքին: Եւ թէի յայտարարութիւնը քաղաքական բնոյթ ուներ, սակայն խիստ կարեւոր էր նրանով, որ, խախտելով պետութիւնների ինքնիշխանութեան սկզբունքը եւ գարգացնելով մարդասիրական միջամտութիւնների թեզը՝ առաջին անգամ բարձրացում էր պատերազմի ծիրից դուրս սեփական քաղաքացիների հանդէպ յանցանքների մասին՝ հիմք դնելով միջազգային քրէական իրաւունքում նոր յանցագործութեան ձեւատրմանը, որը դեռ պէտք է սահմանուի¹³:

Յատկանշական է, որ յայտարարութեան նախնական՝ ռուսական տարբերակում խօսքը գնում էր «քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների մասին», սակայն, ֆրանսիական կողմը, վախենալով իր եւ անգլիական գաղութների մոտուզման ազգաբնակչութեան հնարատր դժգոհութիւնից, առաջարկում է օգտագործել «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» ձեակերպումը¹⁴:

Պատմութեան մէջ սա առաջին անգամ էր, երբ տարբերութիւն էր դրում պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների միջեւ: Յետագայում այս թեզը զարգացուեց Փարիզի խաղաղութեան վեհաժողովում, երբ խօսք էր գնում մեղատրմերին «պատերազմական յանցագործութիւնների կամ մարդկութեան դէմ ուղղուած

¹² Այս հանգամանքն ընդգծուել է նախկին Եուզօսլաբիայի եւ Ռուսոնդայի գործերով միջազգային քրէական դատարաններում: Մասնատրապէս, ժան Պոլ Ակալէտով դատաւճճում ընդգծուած է, որ 1915 Մայիսի 28ին հայկական կոտորածների հետ կապուած Ռուսաստանի, Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կառավարութիւնները հանդէս եկան յայտարարութեամբ՝ անուանելով դրանք «մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ», ինչի համար թուրքական կառավարութիւնը պէտք է պատասխանատուութեան ենթարկուի՝ կոտորածների մէջ մասնակից իր գործակալների հետ (ICTR Judgment, Trial Chamber I, *Jean-Paul Akayesu*, 2 September 1998, ICTR-96-4, էջ 565):

¹³ Մտաւել մանրամասն յայտարարութեան իրաական վերլուծութեան մասին տե՛ս՝ Sévane Garibian, "From the 1915 Allied Joint Declaration to the 1920 Treaty of Sèvres: Back to an International Criminal Law in Progress," *Armenian Review*, 2010:1-2, էջ 87-102. նաեւ՝ Rustam Atadjanov, "Humanness as a Protected Legal Interest of Crimes against Humanity: Conceptual and Normative Aspects," *International Criminal Justice Series, Volume 22*, Berlin, Springer, 2019, էջ 78-79:

¹⁴ Նարեկ Պօղոսեան, «Մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների եւ ցեղասպանութեան փոխադարձ կապն ու դրսեւորումը Հայոց ցեղասպանութեան օրինակում», *Տեղապատեազիրական հանդէս*, 2018:6(2), էջ 96:

յանցագործությունների համար» պատժելու մասին: «Մարդկության դեմ ուղղված յանցագործություններ» ձեակերպումը, սակայն, բառացիորեն չներառուեց Ա. աշխարհամարտին յաջորդած եւ ոչ մի միջազգային պայմանագրում, թէի Սեբրի Պայմանագրի 230րդ յօդուածն անուղղակիորէն վերաբերում էր այսպէս-կոչուած մարդկության դէմ յանցագործություններին:

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ. ԹՈՒՐԻԻՔԱՅԻՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

«Մարդկության դէմ ուղղուած յանցագործություններ» հասկացութիւնը բազմիցս քննարկուեց Ա. համաշխարհային պատերազմին յաջորդած ժամանակաշրջանում: Մասնաւորապէս, այն նշուած էր 1918 Դեկտեմբերի 2ին Ֆրանսիայի, Իտալիայի եւ Մեծն Բրիտանիայի՝ Հոլանդիային ուղղուած պահանջի մէջ՝ արտայանձնելու գերմանական կայսրին՝ Միջազգային Դատարանում վերջինիս դատելու նպատակով: Որպէս այդ պահանջի հիմնատրում Բ. կէտում նշուած էր նաեւ միջազգային իրաւունքի եւ *մարդկության դէմ յանցագործությունների* համար անձնական պատիժների անխուսափելիութիւնը՝ որպէս կարեւոր անվտանգային երաշխիք յետագայում յարձակողական պատերազմ սանձազերծելու կամ միջազգային իրաւունքը խախտելու փորձերի կանխարգելման տեսանկիւնից¹⁵:

1918ին ստեղծուած Պատերազմական Օրէնքների եւ Սովորոյթների Խախտումների Բրիտանական Հետաքննական Յանձնաժողովն իր առաջին միջանկեալ զեկոյցում խորհուրդ էր տալիս ստեղծել «Միջազգային Դատարան, որը կազմուած կը լինի գլխատր դաշնակից տրոյութիւնների եւ ԱՄՆ ներկայացուցիչներից՝ նախկին կայսերը եւ այլ իրաախախտներին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների, ինչպէս նաեւ *մարդկության օրէնքների* խախտման համար դատելու եւ պատժելու նպատակով»: Այս հրահանգներն էլ հանդիսացան Փարիզի խաղաղութան վեհաժողովում Մեծն Բրիտանիայի քաղաքականութեան հիմքը¹⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ միջազգային ընտանիքը հասքուեց Փարիզում խաղաղութան պայմանգիր կնքելու համար: Հրատապ էր նաեւ պատերազմի ընթացքում տեղի ունեցած յանցագործութիւնների պատժի հարցը: Վեհաժողովի հենց սկզբից Ֆրանսիայի վարչապետ Ջորջ Բլեմանսօս առաջ քաշեց երեք հրատապ հարց՝ պատերազմի հեղինակների պատասխանատուութեան, պատերազմի ընթացքում կատարուած յանցագործութիւնների համար պատիժների եւ աշխա-

¹⁵ Foreign Relations of the United States, Diplomatic Papers 2 (FRUS), 1919, Paris Peace Conference (PPC), US GPO, 1934, էջ 653-54:

¹⁶ Harry M. Rhea, "The Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties and its Contribution to International Criminal Justice After World War I," *Criminal Law Forum*, 2014:25, էջ 150:

տանքի միջազգային օրնէտրոյութեան ստեղծման անհրաժեշտութեան¹⁷: ԱՄՆ նախագահ Ռուդոլֆ Ուիլսոնն առաջարկում էր «բարոյականութեան» դէմ իրականացում ազգային եւ անհատական յանցագործութիւնների հարցը լուծել Փարիզի խաղաղութեան վեհաժողովի բարձրագոյն մարմնի՝ Գերագոյն Խորհրդի իրաաստութեան շրջանակում: Սակայն, Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի պնդմամբ հարցը դրում է վեհաժողովի լիակատար նիստի օրակարգում¹⁸: Արդիւնքում՝ 1919 Յունուարի 25ին Փարիզի խաղաղութեան վեհաժողովի Բ. լիակատար նստաշրջանի ընթացքում որոշում է ստեղծել պատերազմական յանցագործութիւնները քննող պատմութեան մէջ առաջին միջազգային մարմինը՝ Պատերազմի Հեղինակների Պատասխանատուութեան եւ Պատիժների Սահմանման Յանձնաժողով (ՊՀՊՊՍՅ) (երբեմն նաեւ՝ Տասնհինգի Յանձնաժողով), որը պէտք է պարզէր Ա. համաշխարհային պատերազմը սանձազերծողներին եւ պատիժներ սահմանէր պատերազմական յանցագործութիւններ իրականացրած անձանց նկատմամբ: ՊՀՊՊՍՅն բաղկացած էր հինգ մեծ տէրութիւնների (Մեծն Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, Ճապոնիա) երկրական եւ հինգ փոքր՝ պատերազմից առաւել տուժած երկրների մէկական ներկայացուցիչներից (Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Ռումինիա եւ Սերբիա): ՊՀՊՊՍՅն ուներ հետեւեալ յանձնարարութիւնը.-

- ա) Պատերազմի հեղինակների պատասխանատուութեան հարցը:
- բ) Գերմանական Կայսրութեան եւ նրա դաշնակիցների կողմից պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման հարցը:
- գ) Թշնամի ուժերի որոշ, նաեւ՝ բարձրաստիճան անդամների կողմից իրականացրած ոճիրների համար պատասխանատուութեան հարցը:
- դ) Յատուկ դատարանի կազմը եւ ընթացակարգի սահմանման հարցը՝ այս յանցագործութիւնները քննելու համար:
- ե) Վերոնշեալ խնդիրների հետ կապուած հարցեր, որոնք կարող են ծագել հետաքննութեան ընթացքում, եւ որոնք ՊՀՊՊՍՅն կը գտնի օգտակար եւ տեղին քննելու համար¹⁹:

ՊՀՊՊՍՅն իր աշխատանքները բաժանեց երեք ենթայանձնաժողովների միջեւ²⁰: Առաջին ենթայանձնաժողովը քննելու էր քրեական մեղադ-

¹⁷ Foreign Relations of the United States, Diplomatic Papers 1, 3 (FRUS), US GPO, 1943, էջ 169:

¹⁸ *Historical Origins of International Criminal Law: Volume 1*, Morten Bergsmo, CHEAH Wui Ling and Yi Ping (editors) Torkel Opsahl Academic EPublisher, 2014, FICHL Publication Series No. 20 (2014), էջ 176:

¹⁹ *History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War*, United Nations War Crimes Commission, H.M. Stationery Office, 1948, էջ 32:

²⁰ *La Paix de Versailles: Responsibilités des Auteurs de la Guerre et Sanctions*, Paris, Les Editions Internationales, 1930, էջ 16-29:

րանքների հարցը եւ պէտք է տեղեկութիւններ հաաքէր եւ բացայայտը այն յանցաւոր արարքները, որոնք հանգեցրել էին Ա. համաշխարհային պատերազմին, եւ որոնք տեղի էին ունեցել ռազմական գործողութիւնների ընթացքում: Երկրորդ ենթայանձնաժողովը, որի իրաւասութեան տակ էր պատերազմի պատասխանատուութեան հարցը, առաջին յանձնաժողովի ձեռք բերած տեղեկատուութեան հիման վրայ պէտք է ուսումնասիրէր հնարաւոր դատաւարութիւնների հարցը, պատրաստէր յանցագործների ցուցակներ, եւ զբաղուէր դատարանի հարցով, որտեղ այդ յանցագործները պէտք է դատուէին: Երրորդ ենթայանձնաժողովը զբաղուելու էր պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման համար պատասխանատուութեան հարցերով եւ քրէական յանցանքների հիման վրայ պէտք է պատրաստէր զեկոյց, մատնանշէր մեղատուներին եւ այն դատարանը, որտեղ պէտք է վերջիններս դատուէին²¹:

Որոշում է, որ առաջին՝ քրէական մեղադրանքների ենթայանձնաժողովն իր աշխատանքների իրականացման համար պէտք է ստանայ շահագրգիռ պետութիւնների կողմից ներկայացուած յուշագրեր՝ այն յանցագործութիւնների վերաբերեալ, որոնց զոհն են եղել պատերազմի ընթացքում: Ենթայանձնաժողովին ներկայացում է տաս յուշագիր՝ Ֆրանսիայի, Բելգիայի, Իտալիայի, Սերբիայի, Յունաստանի, Լեհաստանի եւ Ռումինիայի ներկայացուցիչների կողմից²²: Յունական պատուիրակութեան կողմից 1919 Մարտի 14ին ենթայանձնաժողովին է ներկայացում Փարիզում հայկական պատուիրակութեան կազմած յուշագիրը՝ հայկական կոտորածների հեղինակների պատասխանատուութեան վերաբերեալ²³: Յատկանշական է, որ հայկական յուշագիրը միակն էր, որ ներկայացուել էր Յանձնաժողովի անդամ չհանդիսացող երկրի կողմից: Այն հակիրճ անդրադառնում էր հայկական կոտորածներին եւ տեղահանութիւններին, ապա յիշեցնում 1915 Մայիսի 24ի Դաշնակից Տէրութիւնների յայտարարութիւնը: Յուշագրի մէջ հայկական պատուիրակութիւնն անդրադառնում էր նաեւ Գերմանիայի Կայսրութեանը՝ նշելով. «Իր կրատրական եւ մեղատու վերաբերմունքով գերմանական կառավարութիւնը, ով կարող էր լռութեան չմատնել կոտորածները եւ կանխել դրանք, ունի պատասխանատուութեան իր մասնաբաժինը: Որոշ փոփոխում կոտորածները փոփոխ էին ունենում գերմանացի զինուորների ներկայութեամբ եւ երբեմն նաեւ մասնակցութեամբ (Լիման ֆոն Սանդերս, Էրզրումում Բոսսուլէօ փաշա, միսները Կիլիկիայում, Վանում, այլուր): շար փոփոխում գերմանացի սպաները առեանգում էին հայ աղջիկներին»²⁴:

²¹ Նոյն:

²² Նոյն, էջ 32-34:

²³ Յուշագրի ամբողջական հայերէն թարգմանութիւնը տես՝ յաւելում 1ում:

²⁴ *La Paix de Versailles: Responsabilites des Auteurs de la Guerre et Sanctions*, էջ 223:

Այնուհետև յուշագիրը մանրամասն ներկայացնում էր հայկական կոտորածների իրական մեղաւորներին՝ նրանց բաժանելով չորս խմբի.-

ա) ծրագիրը մշակողներ,

բ) հրամաններն արձակողներ եւ կոտորածների կազմակերպիչներ,

գ) կոտորածները ղեկավարողներ,

դ) կոտորածները իրականացնողներ²⁵:

Ըստ հայկական կողմի՝ մեղադրուողների շրջանակը բաական լայն էր. «Կազմակերպուած լինելով կառավարութեան կողմից, ղեկավարուելով վարչական ու ռազմական ղեկավարութեան եւ համայնքների իշխանութիւնների եւ երեսփիների կողմից՝ այն իրականացրել են ոստիկանութիւնը, զինուորները եւ բնակչութիւնը: Հետեաբար, մենք իրատունք ունենք որպէս իրական մեղաւորներ համարել այն անձանց, ովքեր 1915 Ապրիլից գլխատրում էին նշուած գործառոյթները»²⁶:

Յուշագրում հայկական կողմը Դաշնակիցների ուշադրութիւնն էր հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ թէեւ իրենց դրոյմամբ Կոստանդնուպոլսում սկսուել էին դատավարութիւններ երիտթուրք առաջնորդների եւ հայկական կոտորածների այլ մեղաւորների դէմ, սակայն թուրքական կողմը ձգձգում էր դատավարութեան ընթացքը, ինչն անհանգստութեան տեղիք էր տալիս: Հայկական պատուիրակութիւնը խնդրում էր Դաշնակիցների կառավարութիւններին որքան հնարաւոր է շուտ իրենց ձեռքը վերցնել արդարադատութեան իրականացումը՝ արեւելքում քրիստոնէաներին սպառնացող նոր եւ զարհուրելի աղէտը կանխելու համար²⁷:

Յուշագրի հետ միասին Հայկական Ազգային Պատուիրակութիւնը (ՀԱՊ) քրէական մեղադրանքները քննող ենթայանձնաժողովին էր ներկայացրել հայկական կոտորածների մեղաւորների ցուցակներ, որոնք կազմուել էին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի կողմից²⁸:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ պատրիարքարանն իր տրամադրութեան տակ ունէր թուրք ոճրագործների դէմ բազմաթիւ հիմնատրուած մեղադրանքներ, կոտորածների վերաբերեալ փաստաթղթեր, հենց վերջինիս էր վստահուել կազմել եւ Դաշնակիցներին ներկայացնել հայերի դէմ իրականացուած զանցանքների մեղաւորների ցուցակ: Ըստ պատրիարքարանի՝ այդ ցուցակը կազմելու համար երկու տարբերակ է ունեցել.-

²⁵ Եղյն, էջ 223-225:

²⁶ Եղյն:

²⁷ Եղյն, էջ 225:

²⁸ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի արխիւում պահուում են Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից կազմուած Հայոց Ցեղասպանութեանը մասնակից թուրք ոճրագործների ցուցակներ: Կան նաեւ առանձին նահանգների եւ գաւառների համար կազմուած նմանատիպ ցուցակներ: Ոճրագործների ցուցակներ կան նաեւ Լուպարեան Մատենադարանի Անտոնեան ֆոնդում, Բոստոնի ՀՅԴաշնակցութեան արխիւում, Հայաստանի Ազգային Արխիւում:

ա) Ներկայացնել բոլոր մեծ եւ փոքր ոճրագործների ցուցակը, որոնց դէմ մեղադրանքներ են առաջադրուել զոհերի բարեկամների կողմից:

բ) Բոլոր ոճրագործների անունների միջից ընտրել գլխատուր մեղատուրների անունները եւ ներկայացնել դրանք ու վերջիններիս իրականացրած յանցագործությունները²⁹:

Քանի որ առաջին դեպքում, ըստ պատրիարքարանի, ստիպուած էր լինելու ներկայացնել հազարատուր ոճրագործների ցուցակներ, որոնք ընդգրկելու էին հարիւր հազարատուր անուններ, որոնք դեռ վերջնական չէին լինելու, պատրիարքարանը ցուցակը կազմել է երկրորդ կէտի համաձայն՝ ընտրելով եւ ներկայացնելով միայն խոշոր յանցագործների անունները: Յուցակը կազմուել էր՝ ելնելով Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան (ՄիԱԿ) կազմակերպչական կառուցուածքից հետեւեալ տրամաբանութեամբ: ՄիԱԿը Թուրքիայում ներկայացուած էր ակումբներով: Իւրաքանչիւր գաւառում, քաղաքում կային նման ակումբներ, որոնք կապի մէջ էին գաւառի գլխատուր ակումբի հետ: Այս կենտրոնական ակումբներն էլ իրենց հերթին կախուած էին Կոստանդնուպոլսի կենտրոնական ակումբից: Տարեկան խորհրդաժողովները, որին մասնակցում էին բոլոր նահանգների պատուիրակները, ծառայում էին ուժեղացնելու այս հզօր կազմակերպութեան բոլոր մասերի միջեւ միասնականութիւնը, որն ի վերջոյ կարողացաւ իր ցանցով ծածկել Օսմանեան Կայսրութեան ողջ տարածքը: Գաւառներում, ինչպէս մայրաքաղաքում, ՄիԱԿի ակումբների անդամների շարքերում էին բոլոր յայտնի պաշտօնեաներն ու գործարարները:

Ցուցակներում ընդգրկուած էին ՄիԱԿի ակումբների պատասխանատու քարտուղարները, նահանգների կառավարիչները, ռազմական հրամանատարները, պահակագօրի ղեկավարները, ոստիկանութեան ղեկավարները, գլխատուր պաշտօնեաները, մուֆթիները, էշրաֆները, որոնց անունները նշուած էին որպէս Լքեալ Գոյքի Յանձնաժողովների միջոցով հայկական ունեցուածքը թալանողներ եւ Թեշքիլաթը Մահսուէի մարդասպանների խմբերի կազմակերպման միջոցով կոտորածներ իրականացնողներ:

Ցուցակները կազմուած էին ըստ նահանգների, իւրաքանչիւրի համար տրուած էին յանելեալ տեղեկութիւններ: Ա. ցուցակը Պոլսի համար էր, միաները ներկայացուած էին ըստ մայրաքաղաքից իրենց հեռատրութեան: Կապի բացակայութեան պատճառով ամբողջական չէին շատ նահանգների ցուցակներ, որոնց վրայ պատրիարքարանը դեռ պետք է աշխատէր:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՌԻԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՅՑԸ

Երկու ամիս տեւած աշխատանքների եւ բռուն հետաքննութիւնների արդիւնքում Յանձնաժողովը պատրաստում է զեկոյց, որը միաձայն ընդունում

²⁹ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի արխիւ (անմշակ):

են բոլոր անդամները՝ ԱՄՆ եւ Ճապոնիայի պատուիրակույթիանների՝ որոշակի վերապահումներով³⁰: 1919 Մարտի 29ին զեկոյցը ներկայացում է Փարիզի խաղաղութան վեհաժողովին: Ձեկոյցն անդրադառնում էր հետեւեալ հարցերին՝ պատերազմի հեղինակների պատասխանատուութեան (պատերազմի նախապատրաստում, Բելգիայի եւ Լիպսեմբուրգի չէզոքութեան խախտում), պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման, անձնական պատասխանատուութեան, համապատասխան դատարանի ստեղծման եւ ընթացակարգի սահմանման, եւ առաջարկներ էր ներկայացնում խաղաղութան պայմանագրերում ներառուելիք յօդուածների շուրջ³¹:

Յանձնաժողովն իր ուսումնասիրութիւնների արդիւնքում եկել էր այն համոզման, որ յարձակողական պատերազմի նախաձեռնման հիմնական մեղադրը Գերմանիան եւ Ատրո-Հունգարիան էին, ապա՝ Թուրքիան եւ Բուլղարիան³²: Ձեկոյցը մատնանշում էր, որ Բալկանեան Պատերազմներից յետոյ յօրը-գերմանական յարաբերութիւնները տակաւ աւելի էին սերտանում, իսկ Ա. համաշխարհային պատերազմի սկսուելոց յետոյ Թուրքիան իր ռազմական եւ ծովային ուժերը յանձնել էր գերմանացի զօրավար Ֆոն Սանդերսին եւ ծովակալ Սուշոնին³³:

Երկրորդ հարցի վերաբերեալ Յանձնաժողովն, ուսումնասիրելով ձեռք բերուած բազմաթիւ ապացոյցները, փաստում էր, որ Գերմանիան եւ իր դաշնակիցները պատերազմի ընթացքում կատարել էին զինուորականների եւ քաղաքացիների իրատւնքների կոպտագոյն խախտումներ, որոնք դէմ էին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների, ինչպէս նաեւ՝ մարդկութեան օրէնքներին: Յանձնաժողովի զեկոյցը նշում էր, որ չնայած գոյութիւն ունեցած յստակ կարգատրումների եւ մարդկութեան թելադրանքի՝ Գերմանիան եւ նրա դաշնակիցները իրականացրել էին վայրագութիւն վայրագութեան հետեւից, պատերազմը վարել էին բարբարոսական եւ անօրինական մեթոդներով՝ խախտելով գործող պատերազմական օրէնքներն ու սովորոյթները եւ մարդկութեան տարրական օրէնքները, եւ թշնամի երկրների այն անձինք, ովքեր մեղաւոր են եղել պատերազմի օրէնքների եւ սովորոյթների ու մարդկութեան օրէնքների խախտման համար, պէտք է ենթարկուեն քրէական պատասխանատուութեան³⁴:

³⁰ *Violation of the laws and customs of war: reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities, conference of Paris, 1919*, Oxford, Clarendon Press, 1919, էջ 58-81:

³¹ *History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War*, էջ 33:

³² "Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties," *The American Journal of International Law*, 1920:1/2(14), էջ 98:

³³ Եոյն, էջ 104:

³⁴ Եոյն, էջ 181:

Բրիտանական յանձնաժողովի զեկոյցը, որը պատրաստուել էր Լորդ Բրայսի կողմից, ֆրանսիական յանձնաժողովի նիստերը, բելգիական կառավարութեան հրատարակութիւնները, ինչպէս նաեւ անդամ երկրների՝ այդ թումը հայկական պատուիրակութեան յուշագրերը, որոնք ներկայացուել էին Յանձնաժողովին, բազմաթիւ տուեալներ էին պարունակում յանցանքների մասին: Յանձնաժողովի գնահատմամբ անհնար էր պատկերացնել յանցանքների աւելի բազմազան եւ ցաւալի ցուցակ, քան այն, որ կազմուել էր հաաքուած նիստերի հիման վրայ: Ըստ զեկոյցի՝ «ռազմական եւ քաղաքացիական անձանց իրաւունքների ոտնահարումները բազմապատկուել էին ամենադաժան եղելութիւններով, որոնք պարզունակ բարբարոսութեան եւ ժամանակակից գիտութեան բոլոր աղբիւրների համադրմամբ ձեւատրուել էին ահաբեկչական համակարգ, ինչը խնամքով ծրագրատրուած էր եւ իրականացուել էր մինչեւ վերջ: Չէին խնայել անզամ բանտարկեալներին, վիրաւորներին, կանանց եւ երեխաներին»³⁵:

Ելնելով հաաքուած տեղեկութիւններից՝ Յանձնաժողովը կազմուել էր Ա. համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած յանցագործութիւնների ոչ-անբողջական յաւելում-ցուցակ՝ «Ամփոփ աղիտակ Կենտրոնական կայսրութիւնների եւ նրանց դաշնակիցների իշխանութիւնների եւ զօրքերի կողմից պատերազմական օրէնքների ու սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների դէմ կատարուած իրաւախախտումների վերաբերեալ», որը պարունակում էր հետեւեալ 32 յանցանքները՝ (1) սպանութիւններ եւ կոտորածներ. համակարգուած ահաբեկչութիւն; (2) պատանդներին մահապատիժներ; (3) քաղաքացիական անձանց խոշտանգում; (4) քաղաքացիների դիտատրեալ սովամահութիւն; (5) բռնաբարութիւն; (6) աղջիկների եւ կանանց առեանգում՝ հարկադիր մարմնավաճառութեան նպատակով; (7) քաղաքացիական անձանց տեղահանում; (8) քաղաքացիական անձանց ներկայում անմարդկային պայմաններում; (9) քաղաքացիական անձանց հարկադիր աշխատանք՝ կապուած թշնամու ռազմական գործողութիւնների հետ; (10) ինքնիշխանութեան յափշտակում ռազմական գրաման ընթացքում; (11) գրաւեալ տարածքի բնակիչների շրջանում հարկադիր զինուորագրում; (12) գրաւեալ տարածքի բնակիչներին սպաազգայնացնելու փորձեր (13) թալան; (14) գոյքի բռնագրաւում; (15) անօրինական գանձումներ; (16) արժոյթի արժեգրկում եւ կեղծ արժոյթի թողարկում; (17) հաաքական տուժերի նշանակում; (18) դիտատրեալ անբաժնութիւն ու ունեցումաճքի ոչնչացում; (19) անպաշտպան վայրերի դիտատրեալ ոմբակոծութիւն; (20) կրօնական, բարեգործական, կրթական, պատմական շէնքերի եւ յուշարձանների դիտատրեալ ոչնչացում; (21) առեւտրական նաւերի եւ ուղեւորատար նաւերի ոչնչացում առանց նախազգուշացման եւ առանց ուղեւորների կամ անձնակազմի անվտանգութեան ապահովման նախապայմանների;

³⁵ Լոյն, էջ 113:

(22) ձկնորսական նաւերի եւ փրկարարական նաւերի ոչնչացում; (23) հիւանդանոցների դիտատրեալ ոմբակոծութիւն; (24) հիւանդանոցային նաւերի վրայ յարձակում եւ ոչնչացում; (25) Կարմիր Էաջին վերաբերող այլ կանոնների խախտում; (26) վնասակար եւ *սաֆիքսացող* գազերի օգտագործումը; (27) պայթուցիկ կամ ընդլայնող փամփուշտների եւ այլ անմարդկային միջոցների կիրառում; (28) չխղճալու հրամաններ տալը; (29) վիրատրների եւ ռազմագերիների հանդէպ վատ վերաբերմունք; (30) ռազմագերիների զբաղումն ու շարժումն ապահովելու շարժումները; (31) հրադադարի դրօշների չարաշահում; (32) ջրի որսերի թունատրում:

Յուցակում ներկայացուած մեղադրանքներից շատերը նեղ իմաստով կարելի էր դասել պատերազմական յանցագործութիւնների շարքին: Սակայն, այդ շարքում կային Գերմանիայի, Թուրքիայի եւ Աւստրիայի տարածքում սեփական ժողովրդի դէմ իրականացրած յանցագործութիւններ, այդ թում՝ կոտորած, պարբերական ահաբեկչութիւն, պատանդների եւ քաղաքացիական անձանց սպանութիւններ, բռնաբարութիւն, կանանց եւ աղջիկների հարկադրաբար անբարոյականութեան դրդում, քաղաքացիական անձանց բռնի տեղահանութիւն եւ գողութիւններ, որոնք իրականացուել էին ոչ թէ թշնամի, այլ սեփական քաղաքացիների հետ: Այս մեղադրանքներն հիմնականում վերաբերում էին թուրքերի կողմից հայերի եւ յոյների կոտորածներին, հետապնդումներին եւ ասիական եւ եւրոպական Թուրքիայից նրանց արտաքսմանը: Յատելուածում նաեւ մեղադրանք կար ուղղուած Աւստրիայի դէմ, համաձայն որի 1915ին աւստրիական զօրքերը թաւան էին իրականացրել Գորիցիայի բնակչութեան դէմ, որն այդ ժամանակ աւստրիական քաղաք էր³⁶:

Ինչպէս տեսնում ենք, մարդկութեան օրէնքների դէմ յանցանքները տուեալ դէպքում հիմնականում վերաբերում էին Օսմանեան Կայսրութիւնում հայերի եւ յոյների կոտորածներին: Յանձնաժողովը, թուրք պաշտօնեաների եւ այլ անձանց դէմ առաջ քաշելով «մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւններին» հասկացութիւնը, ըստ էութեան, հիմնում էր 1907ի Հաագայի համագումարի (IV) այսպէս-կոչուած Մարտենսի Յօդուածի վրա: Դրանով համագումարն ստորագրած տէրութիւնները պարտատրուել էին, որ համագումարով չկարգատրուած դէպքերի համար, պատերազմող կողմերը եւ ազգաբնակչութիւնը մնում են պաշտպանութեան եւ ազգերի իրաւունքի սկզբունքների ներքոյ, որոնք ձեւատրուել են քաղաքակիրթ ազգերի կողմից կիրառման արդիւնքում՝ մարդկութեան օրէնքների եւ հասարակական գիտակցութեան թելանդրանքով³⁷: Հենց այս ենթահողում էր, որ

³⁶ Egon Schwelb, "Crimes against Humanity," *British Year Book of International Law*, 1946:23, էջ 181:

³⁷ *The Hague conventions and declarations of 1899 and 1907: accompanied by tables of signatures, ratifications and adhesions of the various powers, and texts of*

Յանձնաժողովի անդամ եւ Յունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոլաոս Պոլիտիսը առաջարկում է ընդունել պատերազմական յանցագործությունների նոր տեսակ, որը կը ծածկեր հայերի կոտորածները. «Տե/ս-նիկապէս այս գործողությունները [հայկական կոտորածները] չեն մտնում քրէական օրէնագրից որեւէ յօդուածի տակ, սակայն հանդիսանում են մարդկութեան օրէնքի դէմ ուղղուած ծանր յանցանքներ»³⁸: Չնայած ԱՄՆ ներկայացուցիչ Ռոբերտ Լանսինգի (ԱՄՆ պետքարտուղար, Յանձնաժողովի նախագահ) եւ Ջեյմս Աքոթի (միջազգային իրաւունքի յայտնի մասնագէտ) պնդումների, որ նման օրէնքը յետադարձ ուժի կիրառման արգելքի խնդիր ունի, Յանձնաժողովի անդամներից շատերը համաձայնում են յոյն պատուիրակի հետ: Արդիւնքում, Յանձնաժողովն իր զեկոյցում առանձնացրեց քաղաքացիական բնակչութեան դէմ ուղղուած հետեւեալ խախտումները, որոնք, փաստօրէն, ընկնում էին մարդկութեան օրէնքների դէմ ուղղուած յանցագործությունների տակ՝ համակարգուած ահաբեկչութիւն, սպանութիւններ եւ կոտորածներ, կանանց դէմ սեռական բռնությունները, մասնատր սեփականութեան բռնագրաւում, գողութիւններ, համայքներին, կրթական հաստատութիւններին պատկանող գոյքի բռնագրաւում, մասնատր եւ հասարակական գոյքի դիտատրեալ ոչնչացում, տեղահանություններ եւ հարկադիր աշխատանք, քաղաքացիներին մահապատժի ենթարկելը պատերազմական յանցագործությունների կեղծ մեղադրանքներով եւ քաղաքացիների եւ ռազմական անձնակազմի դէմ ուղղուած խախտումները³⁹:

Յանելուածում ներկայացուած յանցագործությունների մէջ հայերի մասին տեղեկություններ կային հետեւեալ կէտերում.

1. Սպանություններ, կոտորածներ, համակարգուած ահաբեկչութիւն: Թուրքերի կողմից համակարգուած իրականացուող հայերի կոտորածներ գերմանացիների մասնակցութեամբ, որոնք տեղի էին ունեցել թուրքական գաւառներում, յատկապէս հայկական վիլայէթներում: Աւելի քան 200,000 զոհեր: Կոտորուած, կենդանի այրուած, խեղդամահ արուած Վանի, Եփրատի լճերում, Սեւ ծովում⁴⁰:

6. Կանանց եւ երիտասարդ աղջիկների խաբէութեամբ առեւանգումներ՝ նրանց հարկադրաբար անբարոյականութեան դրդելու նպատակով: Մեծ թուով հայ կանայք, երիտասարդ աղջիկներ եւ երեխաներ փակուած են հարէմներում եւ իսլամացուած են⁴¹:

reservations, N., Scott, J. Brown (eds.), New York, Oxford University Press, 1915, էջ 101-102: Նշենք, որ նման յօդուած կար նաեւ 1899ի Հաագայի համագումարի մէջ, որն Օսմանեան Կայսրութիւնը ստորագրել եւ վաւերացրել էր, իսկ 1907ի Հաագայի համագումարն ստորագրել, սակայն չէր վաւերացրել:

³⁸ Willis, էջ 14:

³⁹ *Historical Origins of International Criminal Law: Volume 1*, էջ 176:

⁴⁰ *La Paix de Versailles: Responsibilites des Auteurs de la Guerre et Sanctions*, էջ 488:

⁴¹ Նոյն, էջ 495:

7. Քաղաքացիների տեղահանութիւն: Անլի քան մէկ միլիոն հայեր տեղահանուել էին Միջագետք եւ Սիրիա, որտեղ մեծ թուով մահանում էին վատ վերաբերմունքից, սովից եւ հիւանդութիւններից⁴²:

Հայերի մասին տեղեկութիւնները Յանձնաժողովը հաաքել էր հետեւեալ աղբիւրներից. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի յուշագիրը՝ հասցեագրուած Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպաններին, ՀԱՊԻ յուշագիրը՝ Փարիզի խաղաղութեան վեհաժողովին, Սիրիային եւ Հայաստանին Ամերիկեան Նպաստամատոյց Յանձնաժողովի զեկոյցը, Վիսքոնթ Բրայսի՝ Հայերի Հանդէպ Վերաբերմունքը Օսմանեան Կայսրութիւնում գրքից⁴³, Հալէպի գերմանական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիւպաժի զեկոյցը⁴⁴, եւ Թուրքիայում գերմանացի մի ճամփորդի 1915ի նոթերը:

Փաստօրէն, Յանձնաժողովը տարբերակում է մտցնում պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների միջեւ, սակայն մարդկութեան դէմ յանցագործութիւնները որպէս միջազգային քրէական յանցանքի տեսակ միայն Բ. համաշխարհային պատերազմից յետոյ Լոնդոնի կանոնադրութեան մէջ էին ստանալու իրենց վերջնական ձեակերպումը:

Անձնական պատասխանատուութեան հետ կապուած, Յանձնաժողովը եկել էր այն եզրակացութեան, որ թշնամի երկրներին պատկանող բոլոր անձինք, որքան էլ բարձր պաշտօն եւ դիրք ունենան, այդ թում՝ պետութեան ղեկավարները, ովքեր մեղաւոր էին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների խախտման համար, պէտք է ենթարկուէին քրէական պատասխանատուութեան⁴⁵:

Յանձնաժողովի քննարկումները վերաբերում էին նաեւ միջազգային քրէական դատարանի ստեղծման հարցերին⁴⁶: Այս ուղղութեամբ Յանձնաժողովն եզրակացրել էր, որ պէտք է ստեղծուի բարձրագոյն դատարան, եւ որ թշնամի պետութիւնները պէտք է ճանաչեն միջազգային այդ դատարանի իրաաստիւթիւնը: Արգելում էր նաեւ համաներում շնորհել այն անձանց, ովքեր մեղաւոր էին ճանաչուել պատերազմի օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների խախտումների համար: Թշնամի երկրները պարտատրուելու էին նաեւ յանձնել նշեալ յանցանքների մէջ մեղադրուող

⁴² Նոյն, էջ 496:

⁴³ *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce*, London, 1916:

⁴⁴ *The Horrors of Aleppo seen by a German Eyewitness Dr. Martin Niepage*, London, T. Fisher Unwin LTD, 1916.

⁴⁵ *On the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties*, էջ 117:

⁴⁶ *Violation of the laws and customs of war: reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities, conference of Paris, 1919*, էջ 20:

անձանց, ինչպես նաեւ բոլոր այն նիւթերն ու փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ էին դատավարութիւնների համար⁴⁷:

Փաստօրէն, յստակ էր, որ յանձնաժողովի զեկոյցը տարանջատում էր պատերազմական օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների դէմ իրականացուած յանցանքները՝ անգամ ստեղծութիւյք բարձրագոյն դատարանին օժտելով այդ երկու յանցագործութիւնները քննելու իրաստութեամբ: Մինչ Ա. համաշխարհային պատերազմը Հաագայի համագումարով կարգատրուած էին միայն պետութիւնների միջեւ պատերազմ վարելու կանոնները, իսկ Յանձնաժողովը քննութեան առաւ յանցագործութեան նոր տեսակ, որը միտուած էր պատժելու սեփական քաղաքացիների դէմ պետութեան կատարած յանցանքները՝ զգալիօրէն խախտելով պետութեան ինքնիշխանութեան սկզբունքը:

Յանձնաժողովի զեկոյցին կցուած էին ԱՄՆ եւ Ճապոնիայի անդամների առանձին կարծիքները: Ամերիկեան անդամները դէմ էին «մարդկութեան օրէնքներ» եզրի կիրառմանը՝ գտնելով, որ մեծամասնութիւնը սխալուել է այն աւելացնելով զեկոյցի մէջ⁴⁸: Ըստ ԱՄՆ ներկայացուցիչների՝ դատական համակարգը գործ ունի եւ կիրառում է միայն գործող օրէնքները, իսկ բարոյականութեան դէմ զանցանքները եւ մարդկութեան օրէնքների եւ սկզբունքների դէմ գործողութիւնները պէտք է թողնել այլ մարմինների: Միւս առարկութիւնը կապուած էր այն հանգամանքի հետ, որ գոյութիւն չունի «մարդկութիւն» հասկացութեան յստակ եւ համընդհանուր էաչափ, եւ այն ժամանակի, տեղի եւ պայմանների հետ, եւ անգամ մէկ դատատրի խղճի հետ կարող է փոխուել⁴⁹: Այսինքն, ամերիկեան կողմը պնդում էր որ չկայ յստակ հիմնաչափ, որը սահմանում է, թէ որոնք են մարդկութեան դէմ օրէնքները եւ պատիժ սահմանում դրանց խախտման համար: Ամերիկեան կողմի այս դիրքորոշումը մեծապէս ազդեց գաղափարի ապագայի վրայ:

Ճապոնի ընդդիմութիւնը կապուած էր օրէնքի յետադարձ ուժի (*ex post facto*) արգելքի եւ յաղթողների արդարադատութեան հետ, այսինքն՝ ճապոնական կողմը գտնում էր, որ օրէնքը չի կարող յետադարձ կիրառուել նախկինում տեղի ունեցած յանցագործութիւնների վրայ եւ համարում էր դա յաղթողների կողմից իրականացուող արդարադատութիւն⁵⁰:

⁴⁷ *On the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties*, էջ 123-24:

⁴⁸ Schwelb, էջ 181:

⁴⁹ *Violation of the laws and customs of war; reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities*, էջ 58-81. նաեւ՝ James Willis, էջ 75:

⁵⁰ Gerry Simpson, "Writing the Tokyo Trial," in *Beyond Victor's Justice? The Tokyo War Crimes Trial Revisited*, Yuki Tanaka, Tim McCormack and Gerry Simpson (eds.), Leiden/Boston, Martinus Nijhoff Publishers, 2011, էջ 26:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՐԱՆԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ՍԵՐԻԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Յանձնաժողովի աշխատանքի արդիւնքում Փարիզի խաղաղութեան վեհաժողովին ներկայացուցին «Պատիժներ» անուանումը կրող յօդուածներ, որոնք պէտք է մտցուէին Ա. համաշխարհային պատերազմում պարտուած երկրների հետ կնքուելից խաղաղութեան պայմանագրերում⁵¹։ Վերսայի⁵² (228-230 յօդուածները), Սէն Ժերմէն ան Լէյի⁵³ (173-176 յօդուածները), Տրիանոնի⁵⁴ (157-159 յօդուածներ), Նէոյի սիւլ Սէնի⁵⁵ (118-120 յօդուածներ) եւ Սերի (228-230 յօդուածները)։ Չնայած Յանձնաժողովի զեկոյցին՝ ամերիկեան կողմի պնդմամբ «մարդկութեան օրէնքներ» եզրն, այնուամենայնիւ, չմտաւ նշուած պայմանագրերի յօդուածներում, որտեղ խօսքը միայն պատերազմական օրէնքների եւ սովորոյթների խախտման մասին էր, որոնք սահմանուած էին Հաագայի համագումարներով։

Ինչ վերաբերում է Սերի Պայմանագրին, ապա վերջինիս 226-228րդ յօդուածները կրկնում էին վերոնշեալ պայմանագրերի նշուած յօդուածները։ Մասնատրապէս, 226րդ յօդուածով թուրքական կառավարութիւնը ճանաչում էր Դաշնակից Տէրութիւնների իրատւոյնը ռազմական դատարաններ ներկայացնելու այն անձանց, որոնք մեղադրուած էին պատերազմական օրէնքներն ու սովորոյթները խախտելու մէջ։ Նման անձինք, մեղաւոր ճանաչուելու դէպքում, դատապարտուած են օրէնքով սահմանուած պատժամիջոցների։ Այս դրոյթը կիրառուելու էր անկախ Թուրքիայի կամ նրա դաշնակիցների տարածքում տեղի ունեցող կամ ունեցած դատավարութեան։ Թուրքիայի կառավարութիւնը պարտաւորուած էր նաեւ Դաշնակից Տէրութիւններին կամ նրանցից որեւէ մէկի պահանջով վերջիններիս յանձնել պատերազմի օրէնքներն ու սովորոյթները խախտելու մէջ մեղադրուող անձանց։

227րդ յօդուածով Դաշնակից Տէրութիւններից մէկի քաղաքացիների նկատմամբ յանցաւոր արարքների համար մեղաւորները պէտք է ներկա-

⁵¹ Նոյն, էջ vii-viii:

⁵² Վերսայի Պայմանագիրը խաղաղութեան պայմանագրերից ամենազվխաւորն էր, կնքուել է Գերմանիայի եւ Դաշնակից Տէրութիւնների միջեւ 1919 Յունիսի 28ին։

⁵³ Saint-Germain-en-Layeի Պայմանագիրը ստորագրուել է 1919ի Սեպտեմբերի 10ին Դաշնակից Տէրութիւնների եւ այսպէս-կոչուած Գերմանա-աւստրիական Հանրապետութեան կողմից (ընդգրկում էր նախկին Աւստրո-Հունգարիայի Կայսրութեան զերմանախօս տարածքները։ 1919ին այս տարածքների վրայ ստեղծուեց առաջին ատրիական հանրապետութիւնը)։

⁵⁴ Trianonի խաղաղութեան պայմանագիրը կնքուել է Դաշնակից Տէրութիւնների եւ Հունգարիայի միջեւ՝ որպէս Աւստրո-Հունգարիայի իրաւայաջորդ երկրներից մէկը։

⁵⁵ Neuilly-sur-Seineի խաղաղութեան Պայմանագիրը Դաշնակից Տէրութիւնների եւ Բուլղարիայի միջեւ, կնքուել է 1919 Նոյեմբերի 27ին։

յացունին տուեալ տէրութեան ռազմական ատեաններին, իսկ մէկից անկի դաշնակից երկրների քաղաքացիների հանդէպ նման գործողութիւնների համար՝ վերջիններին կողմից կազմուած ռազմական ատեանին:

228րդ յօդուածը թուրքական կառավարութեանը պարտատրեցնում էր տրամադրել բոլոր փաստաթղթերն ու տեղեկատուութիւնը, որոնք անհրաժեշտ կը լինեն այդ յանցատուր գործողութիւնները բացայայտելու, յանցագործներին պատասխանատուութեան ենթարկելու եւ պատասխանատուութեան արդար գնահատման համար: Պայմանագրի 229րդ յօդուածը, 226-228րդ յօդուածի դրոյթները տարածում էր Օսմանեան Կայսրութիւնից անջատուած տարածքների վրայ:

Ասկայն, Սեւրի Պայմանագիրն էականօրէն տարբերում էր Փարիզի խաղաղութեան համակարգի միա պայմանագրերից: 226-228րդ յօդուածներից բացի պայմանագրում կար յաւելեալ յօդուած, որը թէւ բացայայտ չէր օգտագործում «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» կամ «մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւններ» ձեակերպումները, սակայն, ըստ էութեան վերաբերում էր դրան՝ հանդիսանալով պատերազմի հեղինակների պատասխանատուութեան եւ պատիժների սահմանման յանձնաժողովի աշխատանքների եւ մօտեցումների տրամաբանական շարունակութիւնը:

Այսպէս, Սեւրի Պայմանագրի 230րդ յօդուածը, որով թուրքական կառավարութիւնը պարտատրում էր Դաշնակից Տէրութիւններին յանձնել այն անձնաց, որոնք պատասխանատու էին նախկին Թուրքական Կայսրութեան՝ 1914 Օգոստոսի 1ի դրութեամբ մաս կազմած *տարածքում կազմակերպուած կոտորածների համար*, որոնք իրականացուել են պատերազմի ընթացքում: Դաշնակից Տէրութիւնները իրենց իրատունք են վերապահում ստեղծել դատարան, որը պէտք է դատէր այդ անձանց, իսկ թուրքական կառավարութիւնը պարտատրում է ճանաչել այդ Դատարանը: Այն դէպքում, երբ Ազգերի Լիգան բաարար ժամանակում կը ստեղծի դատարան, որը իրաստու կը լինի զբաղուել նշուած կոտորածներով, Դաշնակից Տէրութիւնները իրենց իրատունք էին վերապահում վերոնշեալ մեղադրեալներին բերել այդ դատարան, իսկ Թուրքիայի կառավարութիւնը պարտատրում է հաստատարպէս ճանաչել այդ դատարանը:

Փաստօրէն, Սեւրի Պայմանագիրը տարբերում էր Ա. համաշխարհային պատերազմի ասարտին կնքուած միա պայմանագրերից: Այն, ըստ էութեան, շարունակում էր 1915ի հոչակագրով թուրքական կառավարութեանը սեփական քաղաքացիների դէմ գործած յանցագործութիւնների համար պատասխանատուութեան ենթարկելու թեզը: Թէւ ամերիկեան կողմի պնդմամբ «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» կամ «մարդկութեան օրէնքների խախտումներ» յանցագործութիւնները չնտան ետպատերազմեան ոչ մի պայմանագրում, սակայն Սեւրի Պայմանագրի 230րդ յօդուածն, ըստ էութեան, այդ մասին էր: Յետագայում՝ արդէն Բ. համաշխարհայինից

յետոյ, «մարդկութեան դէմ յանցագործութիւնները» որպէս միջազգային յանցագործութիւն մտան 1945ի Լոնդոնի Կանոնադրութեան մէջ:

Սակայն Սեւրի Պայմանագիրը չվաներացուեց եւ հետեւաբար կեանքի չկոչուեց: Ա. համաշխարհային պատերազմի խաղաղութեան պայմանագիրը Դաշնակիցների եւ Թուրքիայի հետ ստորագրուեց միայն 1923ին Լոզանում: Լոզանի Պայմանագիրը ոչ միայն չէր պարունակում որեւէ յօդուած պատերազմական եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններ իրականացրած անձանց պատժի վերաբերեալ, այլեւ կից ուներ «Համաներման հոգակագիր» (յանելուած 2), որով ներում էր շնորհում նաեւ Հայոց Ցեղասպանութիւնը իրականացրած բոլոր մեղաւորներին⁵⁶:

Յանելուած 1.

ՀԱՅ ԱՉԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐԸ՝ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՑ
ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ (13 ՄԱՐՏ 1919)⁵⁷

Հայաստանում տեղի ունեցած կոտորածները եւ տեղահանութեան անուան տակ կազմակերպուած յարձակումները զարիտրելի էին իրենց ծաւալներով եւ սարսափներով, եւ յանցագործներին անպատժ թողնելը մեծազոյն անարդարութիւն կը լինի մարդկութեան եւ համաշխարհային խղճի դէմ: Անելին, դա հնարաւորութիւն կը տայ կոտորածը ծրագրաւորած եւ իրականացրած անձանց նոր յանցագործութիւններ իրագործել:

Մենք յիշեցնում ենք, որ 1915ի Մայիսի 28ին Ֆրանսիայի, Մեծն Բրիտանիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները Օսմանեան Կայսրութեան կառավարութեանը ներկայացրեցին հետեւեալ յայտարարութիւնը.

«Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում քրդերի եւ թուրքերի կողմից օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողութութեամբ, իսկ երբեմն էլ ուղղակի համագործակցութեամբ Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ: Այբրիկ կէսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակուն, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ձէթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Գլխուկին կոտորուած են Վանի շրջակայքի հարիւրաւոր գիւղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղը շրջապատուել է քրդերի կողմից: Միեւնոյն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարութիւնը բանտարկում եւ անտանելի ճշտումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութեանը:

Նկարի ունենալով Թուրքիայի կողմից իրագործուած մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած այս նոր յանցագործութիւնները՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի զաշնակից կառավարութիւնները սոյնով հրապարակա յայտարարում են, որ երանք այդ բոլոր ոճրագործութիւնների անձնական պատասխանատուութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների վրայ, ինչպէս եւ տեղական այն ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից են կը լինեն նման կոտորածին»:

⁵⁶ Հոչակագրի բնագիրը տե՛ս՝ http://www.mfa.gov.tr/viii_-_declaration-of-amnesty.en.mfa (մատչում 9 Փետրուար 2020):

⁵⁷ *La Paix de Versailles: Responsabilites des Auteurs de la Guerre*, էջ 222-25:

Կոտորածները ծրագրաբարուել էին 1915 սկզբին, իրականացուել Ապրիլից, կատաղի կերպով շարունակուել մինչեւ Օգոստոս, այնուհետեւ մասնակիորէն շարունակուել մինչեւ տարուայ վերջ: Համակարգը ամենուր նոյնն էր:

Իր կրտարական եւ մեղադր վերաբերմունքով գերմանական կառավարութիւնը, ով կարող էր լուրջութեան չմատնել կոտորածները եւ կանխել դրանք, ունի պատասխանատուութեան իր մասնաբաժինը: Որոշ տեղերում կոտորածները տեղի էին ունենում գերմանացի զինուորների ներկայութեամբ եւ երբեմն նաեւ մասնակցութեամբ (Լիման Ֆուն Սանդերս, Էրզրումում Բոսսուէթ փաշա, միաները Կիլիկիայում, Վանում, այլուր): շատ տեղերում գերմանացի սպաները առեւանգում էին հայ աղջիկներին:

Իրական մեղադրներին կարելի է բաժանել չորս խմբի՝

ա) Նրանք, ովքեր մշակել էին ծրագիրը

բ) Նրանք, ովքեր տուել էին հրամանները եւ կազմակերպել կոտորածները

գ) Նրանք, ովքեր ղեկավարել էին կոտորածները

դ) Նրանք, ովքեր իրականացրել էին կոտորածները

Նրանք, ովքեր մշակել էին ծրագիրը: Կոտորածների ծրագիրը մշակուել եւ ծրագրաբարուել էր Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան կողմից Կոստանդնուպոլսում եւ Էրզրումում տեղի ունեցած համաժողովների ժամանակ 1915ի սկզբին, որից յետոյ նրանք իրենց յայտնի անդամներին յատուկ հրահանգներով ուղարկեցին գաառներ (բժիշկ Բեհաէդդին Շաքիր, Հիլմի Բէլ, Հալիլ եւ այլուր):

Նրանք, ովքեր տուել էին հրամանները եւ կազմակերպել կոտորածները: Կառավարութիւնը, Սայիդ Հալիմի եւ Թալէաթի երկու դահլիճները կոտորածների հրամաններ էին տալիս երրորդ բանակային գործաւախ ղեկավար Մահմուդ Քերիմ փաշային, Միջագետքի բանակի ղեկավար Խալիլ փաշային եւ սիրիական բանակի հրամանատար Ջեմալ փաշային: Նրանք ձեւաւորում էին յատուկ յանձնաժողովներ՝ Թեշքիաթը Մահսուաա (յատուկ կազմակերպութիւն), եւ միւս կողմից նրանք իրենց հրահանգներն էին տալիս վալիներին, նրանց միջոցով մութեսերիֆներին, կայմականներին եւ մուդիրներին, ովքեր վերջիններիս ենթականերն էին: Այս ձեւով ոչնչացման ծրագիրը կազմակերպուում էր Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան գաւառային ակումբների ղեկավար յանձնաժողովների հետ համագործակցութեամբ, քաղաքացիական վարչութիւնների, պահակազօրի, ռազմական հրամանատարների եւ թուրք եւ թուրք երեւելիների միջոցով, որոնց մէջ թուրք մտաւորականները ակտիվ մասնակցութիւն ունէին (պատգամատուրներ, բժիշկներ, ռազմական գործիչներ, հրապարակախոսներ, պրոֆեսորներ, կրօնատարներ եւն.):

Նրանք, ովքեր կառավարում, ղեկավարում էին կոտորածները: Կոտորածները ղեկավարուում էին պահակազօրի հրամանատարների, յայտնի թուրքերի եւ քրդերի, չեթէբաշիների, կոտորածների խմբերի ղեկավարների, խորհրդարանի անդամների եւ վարչական պաշտօնեաների կողմից:

Նրանք, ովքեր իրականացնում էին կոտորածները: Գործնականում հնարաւոր չէ նման կարճ ժամանակահատուածում իրականացնել մօտ մէկ միլիոն հայ քնակչութեան կոտորածն ու տեղահանութիւնը, վերջիններիս ռոջ ունեցածքի կողոպուտը, գոյքի ոչնչացումը առանց մտաւորման քնակչութեան մասնակցութեան, որոնք տարուած էին սրբազան պատերազմի գաղափարով եւ կողոպուտի ցանկութեամբ եւ դարձան գործիք իրենց ղեկավարների ձեռքին: Թուրքերի մօտ յիստուն տոկոսը գիտակցաբար կամ անգիտակցաբար դարձաւ Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան անդամ, բոլորը մասնակցեցին հակահայկական գործին՝ սկսած հա-

մայրների ղեկավարներից եւ մտաւորականներից մինչեւ ամենահամեստ գիւղացին, անգամ՝ կանայք:

Ինչ վերաբերում է կողոպուտին եւ այլ անբաժնութիւններին, շատ քիչ թուով մուսուլմաններ չեն մասնակցել սրան: Կոտորածների ողջ ընթացքում, երկրի ամենաազդեցիկ շրջանները, օսմանեան բարձրագոյն օրէնսդիր մարմինը, լրատումիցօնները իրենց ծայրը չեն բարձրացրել այս ամէնի դէմ: Նոյնիսկ օսմանեան խորհրդարանում որոշ պատգամատուներ անգամ յայտարարում էին որ հայ ներկայացուցիչները պէտք է սպանուեն, ինչը միւսների կողմից ընդունուած էր լռութեամբ: Ինչ վերաբերում է թուրքական լրատումիցօններին, ապա նրանք մշտապէս կոտորածների կոչեր էին հրապարակում:

Հայոց պատրիարքը վերջերս Կոստանդնուպոլսում Դաշնակիցների ներկայացուցիչներին ուշադրութիւնը հրափրեց այս փաստերի վրայ՝ ներկայացնելով կոտորածների մասնակիցների ցուցակներ: Ի պաշտպանութիւն այս մեղադրանքների մեքը կցում ենք կոտորածների մասնակիցների անունների ցուցակը: Իրական մեղատուները առաջին երեք խմբերին պատկանողներն են:

Կոստանդնուպոլսում Դաշնակիցների առաջարկով ձեւատրուել է Ռազմական Դատարան՝ բաղկացած թուրքերից, որոնց նստավայրը միայն մայրաքաղաքն է եւ ում առաջելութիւնը կոտորածների իրականացնողների վերաբերեալ փաստերի հաւաքումն է, մինչդեռ կոտորածների մեծ մասը տեղի է ունեցել գաւառներում: Այս դատարանը, որն արդէն գործում է շուրջ երեք ամիս, իր երկիմաստ եւ դանդաղկոտ գործողութիւններով որեւէ վստահութիւն չի ներշնչում:

Կոստանդնուպոլսում Դաշնակիցների ներկայացուցիչները, հաւանաբար չցանկանալով միջամտել այդ իրաական գործընթացին, կրատրական վերաբերմունք են դրսեւորում, ինչը էլ անելի է բարդացնում հարցը. քանի որ այս բացառիկ թուրքական դատարանը որոշել է դատել մեղադրեալներին սովորական իրաական գործընթացով. անվերջ հարցաքննութիւններ, բազմաթիւ վկաների լրումներ են., ասես տեղի ունեցածը անհատական յանցագործութիւններ են. մինչդեռ տեղի ունեցած յանցագործութիւնը անհատական բնոյթ չունի եւ որպէս պականատես վկաներ ոչ թէ անհատներն են, այլ ամբողջ բնակչութիւնը, մենք նոյնիսկ կարող ենք ասել՝ ողջ աշխարհը, վկաներ կան բոլոր ազգութիւններից: Յանցագործութիւնը ունի բաղաքական ենթիմաստ, ծրագրատրուել է քաղաքական կազմակերպութեան կողմից, ով ունէր օսմանեան խորհրդարանի ծայրերի անելի քան երկու երրորդը:

Կազմակերպուած լինելով կառավարութեան կողմից, ղեկավարուելով վարչական ու ռազմական ղեկավարութեան եւ համայնքների իշխանութիւնների եւ երեսելիների կողմից՝ այն իրականացրել են պահակազօրը, զինուորները եւ բնակչութիւնը: Հետեւաբար, մենք իրատուք ունենք որպէս իրական մեղատուներ համարել այն անձանց, ովքեր 1915 Ապրիլից զլխատրում էին նշուած գործառոյթները:

Այն հանգամանքը, որ թուրքական դատարանը դիտմամբ վարում է դատական գործընթացը ճգճեմելու քաղաքականութիւն, եւ որ Կոստանդնուպոլսում դաշնակիցների ներկայացուցիչները համաձայնութիւն են տուել այս սովորական դատագործընթացի շարունակութեանը հարցաքննութիւնների եւ վկաների լրումների միջոցով, կարող է հանգեցնել միայն քաղաքական արդիւնքների:

1. Աս յանցագործներին հնարավորութիւն եւ միջոցներ է տալիս փախել արդարադատութիւնից (ինչը որոշ չափով, ցաօք, իրականութիւն է դարձել):

2. Աս յանցագործներին հնարատրութիւն եւ միջոցներ է տալիս թաքնուած հաաքագրել որոշ տարրերի, ինչպիսիք են օրինակ երեսելիները, նախկին պաշտօն-

եաները, նախկին զինուորականները, ամբոխավարները, նոր վտանգներ եւ անկարգութիւններ հրահրել, որոնց նախանշաններն արդէն իսկ ակնյայտ են:

3. Յանցագործների անպատժելիութիւնը քաջալերում է այս վտանգաւոր տարրերին, դարձնում նրանց քաղաքական յայտն առաւել հնարատր, թուլացնում է Ղաշնակիցների ազդեցութիւնն ու հեղինակութիւնը, որը նրանք ունէին սկզբնական շրջանում եւ ինչը անիրաժեշտ է պահպանել ապագայի համար:

Ենելով վերգործայից՝ մենք խնդրում ենք Ղաշնակիցների կառավարութիւններին որքան հնարատր է շուտ իրենց ձեռքը վերցնել արդարադատութեան իրականացումը՝ արեւելքում քրիստոնեաներին սպառնացող նոր եւ զարհուրելի աղէտը կանխելու համար:

Աւետիս Ահարոնեան, Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ

Պօղոս Նուպար, Հայկական ազգային պատուիրակութեան ղեկավար

Յանկում 2

ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱՄԵՆԵՐԻ ԵՒ ՏԵՐԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՀՐԱՀՐՈՂՆԵՐԻ ԵՒ ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ (1914-1918)

Այսօր Խաղաղութեան Պայմանագիրը ստորագրած տէրութիւնները հասասարապէս ցանկանում են, որ մոռացութեան մատնուեն այն իրադարձութիւնները, որոնք խաթարել էին խաղաղութիւնը Արեւելքում:

Ներքոստորագրեալները, գործելով իրենց լիակատար լիազօրութիւնների համաձայն, պայմանատրուել են հոչակել հետեւեալը.

1. Թուրքիայում, նաեւ Յունաստանում քնակուող կամ նախկինում քնակուած որեւէ անձ չի կարող որեւէ պարագայում կամ պատրուակով ենթարկուել պատասխանատութեան 1914 թուականի Օգոստոսի 1ից մինչեւ 1922ի Նոյեմբերի 20ը ձեռնարկուած որեւէ ռազմական կամ քաղաքական գործողութիւնների համար, կամ այդ օրերին ստորագրուած Խաղաղութեան Պայմանագրի ստորագրող կողմին կամ այդ տէրութիւնների քաղաքացիներին որեւէ կերպ աջակցելու համար:

2. Նմանապէս, Խաղաղութեան Պայմանագրով Թուրքիայից անջատուած տարածքների ոչ մի քնակիչ չի կարող ենթարկուել որեւէ հետապնդման՝ 1914ի Օգոստոսի 1ից մինչեւ 1922 Նոյեմբերի 20ը ընկած ժամանակահատուածում իր՝ Թուրքիային դէմ կամ կողմ քաղաքական կամ ռազմական վերաբերմունքի կամ նշուած պայմանագրով իր ազգութեան որոշման համար:

3. Ամբողջական եւ լիակատար համաներում է շնորհում համապատասխանաբար Թուրքիայի կառավարութեան եւ Յունաստանի կառավարութեան կողմից՝ նոյն ժամանակահատուածում կատարուած բոլոր յանցագործութիւնների կամ իրաւախախտումների համար, որոնք ակնյայտօրէն կապուած էին այդ ժամանակահատուածում տեղի ունեցած քաղաքական իրադարձութիւնների հետ:

4. Թուրք եւ Խաղաղութեան պայմանագիրը ստորագրող միա տէրութիւնների քաղաքացիները, ովքեր ձերբակալուել, հետապնդուել կամ դատաւարտուել են նշուած տէրութիւնների իշխանութիւնների կամ համապատասխանաբար թուրքական իշխանութիւնների կողմից քաղաքական կամ ռազմական քննչի պատճառաբանութեամբ մինչեւ 1922 Նոյեմբերի 20ը, այն տարածքում, որը Խաղաղութեան

Պայմանագրի համաձայն մտնում է Թուրքիային, օգտում են համաներումից, իսկ եթե նրանց ձերբակալու ան են, ապա պետք է յանձնուեն իրենց պետութիւնների իշխանութիւններին: Այս պայմանը վերաբերում է նաև ազգութեամբ թուրք այն անձանց, որոնք ձերբակալուեց, հետապնդուել կամ պատժուել են այն տէրութիւնների իշխանութիւնների կողմից, որոնք գրաղեցրել են նշուած տարածքի մի մասը նոյնիսկ նշուած օրուանից առաջ կատարուած սովորական օրէնքի խախտման համար, եւ նոյնիսկ նրանք, ովքեր հեռացուել էին Թուրքիայից: Բացառութիւն են կազմում նրանք, ովքեր գրաման քանակներին պատկանող անձի դէմ իրականացրել են յարձակում, որը յանգեցրել է մահուան կամ ծանր վիրատուութեան:

5. Վերնշեալ պատճառաբանութեամբ կայացուած բոլոր դատավճիռները ուժը կորցրած են ճանաչում, եւ արդէն յարուցուած ցանկացած վարոյթ կասեցուած է:

6. Թուրքիայի կառավարութիւնը, կիսելով ընդհանուր խաղաղացման/հաշտուեցման պետութիւնների ցանկութիւնը, յայտարարում է, որ չի վիճարկի Դաշնակից Տէրութիւնների հովանու ներքոյ՝ 1918ի Հոկտեմբերի 20ի եւ 1922 Նոյեմբերի 20ը ընկած ժամանակահատուածում իրականացուած միջոցառումները, որոնց նպատակը պատերազմի հետեանցով բաժանուած ընտանիքների վերամիատարումն է եւ գոյքը օրինական սեփականատէրերին յանձնելը: Այնուամենայնիւ, այս մտադրութիւնը չի բացառում այս միջոցների վերանայման հնարատրութիւն՝ շահագրգիռ կողմերի կողմից այդ խնդրի վերաբերեալ հայցադիմելու դէպքում: Անձանց եւ գոյքի վերաբերեալ դիմումները քննելու է Կարմիր Մահիկի եւ Կարմիր Խաչի պատուիրակներից կազմուած յանձնաժողովը: Վէճի դէպքում պատուիրակները կ'ընտրեն դատատրի, իսկ եթէ նրանք ի վիճակի չլինեն համաձայնութեան գալ դատատրի նշանակման հարցում, ապա դատատրը նշանակուելու է Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից:

7. Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի կառավարութիւնները, գիտակցելով խաղաղութեան հաստատման տեսանկիւնից այն միջոցառման կարեւորութիւնը, որը կազմում է 1923 թուականի Յունտարի 30ին Յունաստանի եւ Թուրքիայի կառավարութիւնների միջեւ կնքուած Համաձայնագրի 5րդ յօդուածի առարկան, որը վերաբերում է ներկալուած քաղաքացիական անձանց վերադարձին եւ ռազմագերիների փոխանակմանը, յայտարարում են, որ իրենք եւս պատրաստ են ընդունելու Թուրքիայի կառավարութեան կողմից փոխադարձութեան դէպքում, իրականացնել նմանատիպ միջոցառումներ այն թուրք ռազմագերիների եւ ներգաղթեալ քաղաքացիական անձանց նկատմամբ, որոնք դեռ իրենց մօտ են, բացառութեամբ այն անձանց, ովքեր սովորական յանցագործութիւններ եւ իրաւախախտումներ են կատարել 1922 Նոյեմբերի 20ից ի վեր:

THE CASE OF TURKEY'S INTERNATIONAL LEGAL RESPONSIBILITY AFTER WORLD WAR I

(Summary)

EDITA G. GZOYAN (editagzoyan@gmail.com)

The principle of state sovereignty, launched in Westphalia in 1648, showed its first serious cracks after WWI. The chaos and devastation of war, the pressing demand for peace and public protests against impunity for atrocities became the basis for breaking the link with the past system and building a normative basis for human life and dignity.

The new approach, which called into question the absoluteness of state sovereignty, gave rise to the criminal responsibility of states for war crimes and crimes against humanity. At the epicenter of these events was also the Ottoman Empire, which during WWI had committed war crimes and crimes against humanity.

Indeed, under the guise of the world war, the Turkish authorities initiated the annihilation of the native Armenian population of the Ottoman Empire through massacres, deportations and forced assimilation. Already on May 24, 1915, the allied states, Russia, Great Britain and France, issued a joint statement in which they qualified the actions carried out against Armenians as crimes "against humanity and civilization", laying the foundation for the formation of a new crime in international criminal law. After the end of the war, during the Paris Peace Conference, the Commission on the responsibility of the authors of the war and on enforcement of penalties was created. It was supposed to identify the initiators of WWI and determine the punishments for those who committed war crimes and crimes against humanity.

The Commission also investigated Turkey's international legal responsibility for the Armenian massacres in the context of crimes against humanity. Although the wording "crime against humanity" was not included verbatim in the text of the Peace Treaty of Sévres, in fact, Article 230 was related to this new crime, which was formalized, however, only after WWII.

Against the backdrop of these developments the paper examines the case of Turkey's international legal responsibility vis-à-vis crimes it committed against humanity.

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ (սկզբնական շրջանի ուրուագիծ)¹

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՆՍԵԱՆ (varny1@yahoo.com)

ՄՈՒՏՔ

Այսօր, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության (ՍԴՀԿ) հարիւրամեակին առիթով (1987) Հրանդ Գանգրունիի գրած տողերը լիովին ի գորու են. «Յատվ յիշելու ենք, որ ցարդ գրոսած չէ Ֆրանսայի, Լիբանանի, Արժանօթիի, Ուրուկուէի, Պրագիի, Եգիպտոսի, Յունաստրանի Ս. Դ. Հ. Կ. Մանրամասնոսած պարմութիւնը: (...) Կը պակսի Կովկասի եւ Ռոսաստրանի Շրջաններու վաներագրական պարմութիւնը, Պարսկաստրանի 1905-1950 շրջանի պարմութիւնը»²: Բացառելով Եզնիկ աագ քահանայ Վարդանեանի՝ Պրագիի համայնքի պատմութեան նովիրոսած իր հատորին մէջ հնչակեան մասնաճիւղին յատկացոսած եւ մինչեւ 1947 հասնող էջերը³, ինչպէս եւ «Հարասային Ամերիկայի հնչակեան գործունէութիւնը» խորագրոսած գլովխը Արսէն Կիտուրի կողմէ խմբագրոսած կուսակցութեան պատմութեան մէջ, որ կը հասնի մինչեւ 1960ականներուն սկիզբը⁴, ՍԴՀԿի աեիի քան հարիւրամեայ գործունէութիւնը Հարասային Ամերիկայի մէջ մնացած է չուսումնասիրոսած:

Սոյն յօդոսածը նախափորձ մըն է նկարագրելու 1910-40ականներու հնչակեան գործունէութիւնը տարածաշրջանին մէջ, օգտուելով մեզի հա-

¹ Սոյն յօդոսածին աեզլերէն նախնական տարբերակը (“The Hunchakian Party in the Armenian Communities of South America: An Outline of its Early History”) ներկայացոսած է “Social Democrat Hunchakian Party Throughout History” գիտաժողովին (Կուսպրիի Համալստրան, Քալիֆորնիա, ԱՄՆ, 27 Հոկտեմբեր 2012): Գիտաժողովի զեկուցումները դեռեա աևտիպ են:

² Հրանդ Գանգրունի, *Յանուն հայրենիքի 1887-1987*, ա. հ., Պէլրուք, 1990, էջ 128: Հեղինակին կողմէ շարադրոսած Սուրիոյ շրջանի պատմութիւնը, գոր յիշած է նոյն պարբերութեան մէջ, աևտիպ մնացած է: Վերի յոսքին մէջ պէտք է ընդգրկել, աևշուշտ, Ռոմանիան ու Պուկարիան, ինչպէս եւ Հիսիսային Ամերիկան:

³ Եզնիկ քիւյ. Վարդանեան, *Պրագիիոյ հայ գաղութը. պարմական տեղեկութիւններ եւ ժամանակագրութիւն 1860-էն մինչեւ 1947-ի վերջը*, տպ. «Սիվիան», Պուենոս Այրես, 1948, էջ 245-53:

⁴ Արսէն Կիտուր (խմբ.), *Պարմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան (1887-1963)*, տպ. «Շիրակ», Պէլրուք, 1962, էջ 220-54: Կ'ենթադրենք, որ այս շարադրոսները հիմնոսած է տեղական աղբիւրներու վրայ, թէեւ պէտք է նշել կցկտուր քնոյթը եւ փաստական աևճուտութիւնները, ինչպէս եւ 1910-20ականներու պատմութեան գրեթէ իսպառ բացակայութիւնը: Սուր տուեալներուն մէկ մասին ամփովումը տե'ւ՝ Գանգրունի, *Յանուն*, էջ 127-28 (Պրագիւ եւ Արժանօթի), էջ 158-159 (Ուրուկուայ), ուր կրկնոսած են նախորդի սիսայներն ու նորերը աեցած:

ասնելի այլազան աղբիւրներէ: Հակառակ թերի եւ անբաւարար կողմերուն, կը յուսանք, որ այս ուրուագիծը անելի խորացած հետազոտութիւններու ուղեցոյց ու խթան հանդիսանայ: Պէտք է նկատի ունենալ, որ կուսակցութեան արխիւային նիւթերը ցարդ մատչելի չեն տեղոյն վրայ եւ մամուլի հաւաքածոները գրեթէ չգոյ են կամ հանրային գործածութենէ դուրս, ինչ որ զգալապէս կը դժուարացնէ հետազոտողին աշխատանքը, իսկ երկրորդական սակաւաթիւ աղբիւրները՝ հայերէն կամ տեղական լեզուներով (սպաներէն, փորթուկալերէն), հակասական տեղեկութիւններու հանդէս մը կը պարզեն, պահանջելով զգուշատր գործածութիւն:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՈՒԿԱՆՆԵՐ

1938ին լոյս տեսած համադրական ակնարկի մը մէջ, որ նուիրուած էր հնչակեան արտասահմանեան գործունէութեան, Միւրան Ալֆրեան երեք պարբերութիւն կը տրամադրէր Հարաւային Ամերիկայի նուիրուած ենթաբաժնին, որ կը բացուէր հետեւեալ հաստատումով.

«Պատմ[ական] փաստեր թէն կը պակսին, սակայն ընդ[իսանոր] պատերազմէն առաջ հոն գրնտող մեր ընկերները (մանաւանդ Պ. Այրէսի եւ շրջաններուն մէջ) սքանչելի դրուագներ կը պատմեն հոն կախարտող Հնչ[ակեան] գործունէութեան շուրջ»⁵:

Անշուշտ, Ալֆրեան որեւէ պատմական ամփոփում չունէր իր տրամադրութեան տակ, մինչ մեզի անծանօթ կը մնան վերոյիշեալ «սքանչելի դրուագներ»ու գրատր (ենթադրաբար՝ նամակագրական) վերապատմումները: Արժանթինի համայնքը, ուր մինչեւ 1920ականներու երկրորդ կէտը կեդրոնացած էր հնչակեան գործունէութիւնը, սկիզբ առած է 1909ի Կիլիկիոյ ջարդերէն ետք, սաղմնային կազմակերպութեան մը ձեռնարկելով 1911-14ին: Ապրիլ 1912ին ստուգապէս հիմնուած էր ու նոյն տարուան Դեկտեմբերին վերակազմուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կազմակերպութիւնը Պուենոս Այրէսի մէջ⁶: Նորայայտ տեղեկութիւններէ կը պարզուի, որ Սեպտեմբեր 1912ին Յովիաննէս Կիլպսենկեան Հմայեակ Արամեանցի *Կոհակ* շաբաթաթերթի (ապա՝ եօթրեայ) գործակալ նշանակուած էր Պուենոս Այրէսի մէջ⁷: Օգոստոս 1912 թուակիր թղթակցութեան մէջ, ան

⁵ Մի-Շէլյո Միւրան Մ. Ալֆրեան], «Արտասահմանի Ս. Դ. Հնչ. Կուս. Գործունէութենէն», *Ուսանողաց փարեգիրք*, 9. հապոր, տպ. Կ. Տօնիկեան, Պէրոյթ, 1938, էջ 99:

⁶ Տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, *Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950*, տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 2005, էջ 68-9: Այս հատորին մէջ մեր ներկայացուցած նիւթերը լրացուցած կամ երբեմն սրբագրած ենք այս ուսումնասիրութեան մէջ:

⁷ «Նամակատուփ», *Կոհակ*, 29 Օգոստոս/11 Սեպտեմբեր 1912, էջ 372: Հաւանական է, որ 1912-15ին թղթակցութիւններ լոյս տեսած կուսակցութեան ամերիկահայ պաշտօնաթերթին՝ *Երկրասարդ Հայաստանի* մէջ, որ Հարաւային Ամերի-

գրած է: ի միջի այլոց. «Ս. Դ. Հնչակեան Մասնախմբի մը հիմնելու համար ու եւ ջանք չի խնայուիր եւ հասանօրէն ի մօտոյ պիտի յաջողինք, մեր յաջողութեան շար պիտի նպաստէ ծանօթ առկախ խնդիրներուն կարգադրութիւնը...»⁶: Յայտնի չէ, թէ որքա՞ն տեսած է այդ «ծանօթ առկախ խնդիրներ»-ուն լուծումը: Յարոյ ընդունուած է, ըստ Ա. աշխարհամարտէն առաջ Արժանիին հաստատուած կուսակցութեան երէց անդամներէն Ստեփան (Փանոս) Շիրազմեանի վկայութեան, որ հնչակեան մասնաճիւղը հիմնուած է խումբ մը էներէկցիներու կողմէ, գլխատրութեամբ Ճիան Թոքաթեանի, 1912ի վերջերուն⁹: Այս տարեթիւը մտած է համայնքի պատմութեան անդրադարձներուն մէջ¹⁰:

Կիւպակեան իր յաջորդ լրատուութիւնը գրած է ինը ամիս ետք՝ Մայիս 1913ին, առանց բացայայտելու հիմնադրութեան տարեթիւը՝ 1912*, թէ՛ 1913.

Նախորդ թղթակցութեամբս կարգ մը տեղեկութիւններ տուած էի տեղիս հայ գաղութին մասին եւ ի մէջ այլոց յոյս յայտնած էի թէ ի մօտոյ կարելի պիտի ըլլայ հոս Ս. Դ. Հնչակեան Մասնաճիւղ մը կազմել: Այս անգամ ալ պատեհութենէն օգտուելով կուտամ քանի մը լուրեր, յուսալով թէ Հարաային Ամերիկայի ազգայնոց կեանքով հետաքրքրուողներ զոհ պիտի մնան:

Նախ առ ըսեմ որ Հայ քաղաքական կուսակցութիւններէն գրեթէ միակը Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնն է, որ հոս ամենայայն համակրութիւն կը վայելէ, ուր օր աւուր անելի կ'ընդլայնէ իր շրջանակը: Բառական է յիշել որ միայն էներէկցի 31 Ս. Դ. Հնչակեան ընկերներ ունինք հոս, որոնց մէկ մասը երկրի մէջ անդամակցած է եւ մէկ մասն ալ հոս գալէ վերջ մտած է Հնչակեան դրօշին տակ ընդունելով որ Հայրենիքի ու Ազգութեան նւիրական գաղափարը անա-

կայի լրատուութեան բնական հասցէն եղած է մինչեւ 1930ականներու վերջերը: Դժբախտաբար, 1912-14ի հաաքածոյէն միայն հատուկներ թիւեր կան Հայաստանի Ազգային Գրադարանի հաաքածոյին մէջ, որուն թոայնացած օրինակը օգտագործած ենք: 1910-20ականները շատ պակասատր են ընդհանրապէս, իսկ 1915, 1924-28 եւ 1938-42 տարիները ուղղակի գոյութիւն չունին:

⁶ «Թղթակցութիւններ», *Կոնսակ*, 29 Օգոստոս/11 Սեպտեմբեր 1912, էջ 371:

⁹ Ս. Շիրազմեան, «Ինչպէս հիմնուեցաւ առաջին հայ թերթը Հարաային Ամերիկայի մէջ», *Շարժում*, 16 Ղեկտեմբեր 1961, էջ 2. Կատ' Մատթոսեան, *Հարաային*, էջ 69: Կուսակցութեան 130ամեակի Պոնոնո Այրէսի տօնակատարութեան նուիրուած թղթակցութիւն մը արձանագրած է, թէ Շարժում Մշակութային Միութիւնը (իմա՝ հնչակեան մասնաճիւղը) հիմնուած է Նոյեմբեր 1912ին (Un presente, "El partido Henchakián celebró el 130o. aniversario de su fundación", *Armenia*, 13 de diciembre de 2017. տե՛ս՝ www.diarioarmenia.org.ar/el-partido-henchakian-celebro-el-130-aniversario-de-su-fundacion/): Այս թոականը հաստատող աղբիւր չենք գտած ցարդ:

¹⁰ Narciso Binayan [Narciso Binayan Carmona], *La colectividad armenia en la Argentina*, Buenos Aires, Alzamor Editores, 1974, էջ 121 (իմմո. idem, *Entre el pasado y el futuro: los armenios en la Argentina*, n.p., Buenos Aires, 1996, էջ 237):

դարտ պահպանող եւ օտար խոչընդոտներուն կործք տուող կուսակցութիւն մ'է այն¹¹:

Արդարեւ, հնչակեան դրօշին տակ մտնողները գիրենք ընդունող կազմակերպական կառոյց մը ունենալու էին, ինչ որ հիմնատրուած է նաեւ թղթակիցի յաջորդ նախադասութեամբ. «*Ձուար Հնչակեան Քիլայ մը հիմնելու մտադրութիւննիս այ ապահով ենք թէ շար շուրով գոյս պիտի ելնէ. ինչ որ քնականաբար զօրատր կայ մը պիտի ըլլայ Արժէքիսի Հնչակեան կազմակերպութեան համար*»¹²: Առայժմ, միակ ժամանակակից տեղեկութիւնը յօգուտ 1913 տարեթիւին կու գայ հնչակեան հին անդամ Սկրտիչ Յակոբեանի հակիրճ մատնանշումէն՝ 1936ի քանախօսութեան մը ընթացքին, թէւ նախադասութեան վերջին մասը սրբագրելի է, ինչպէս տեսանք. «*1913ին հիմը դրուեցաւ Հնչակեան մասնաճիւղի մը այս քաղաքին մէջ, ուր մինչ այդ քաղաքական ոչ մի հոսանք գոյութիւն չունէր*»¹³:

Էտրեկցիներու սկզբնական ներդրումին կողքին, այնուհետեւ յատուկ նշանակութիւն ունեցած է հաճընցիներու կուսակցական աշխատանքը: Կիլիկիոյ մէջ հնչակեան տիրական ներկայութիւնը իր երկարածգումը ունեցած է Հարաւային Ամերիկայի մէջ, ուր հաճընցիները, մարաշցիներու եւ այնթապցիներու գումարումով, կազմած են երեք մեծ համայնքներուն համրանքին շուրջ երեք քառորդը, մօտաւոր գնահատումով¹⁴:

1915-20 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՏՔԸ

Կուսակցական ներքին կազմակերպումն ու հայ գաղթականներու ժամանումը զուգահեռ ընթացած են: Արժանթինի հայերու թիւը 2000 հոգի դարձած էր 1914ին, ըստ Սահակ Պահչէճեանի (1888-1963), որ 1913ին հասնելով Պուենոս Այրէս, կուսակցութեան տիրական դէմքերէն մէկը պի-

¹¹ Օննիկ Կիլպենկեան, «Ս. Դ. Հնչակեան կեանք», *Կոհակ*, 16/29 Յունիս 1913, էջ 290:

¹² Նոյն:

¹³ Յիմէն, «Պ. Այրէսի ընկերա-համակրական թէյաստանը», *Երիզասարդ Հայաստան*, 24 Յունիս 1936, էջ 4: Անշուշտ, հիմք չունի 1914 հիմնադրութեան թուականը թէ՛ դաշնակցական եւ թէ՛ հնչակեան ճիւղերուն համար (Աշոտ Արծրունի, *Տարեցոյց հար. ամերիկահայոց*, տպ. «Արարատ», Պուենոս Այրէս, 1943, էջ 15):

¹⁴ Այսպէս, հաճընցի էին յաջորդ էջերուն մէջ յիշուած Պուենոս Այրէսի *Խորհրդային Հայաստան* թերթին անշուշտ երեք անունները՝ Մարտիրոս Եզնկիչեան, Մարտիրոս Պալանեան եւ (ենթադրաբար) Արահամ Գրաճեան, *Արժէքիսեան մամուլի* խմբագիր Ստեփան Շխարումեան, *Նոր երկիրի* խմբագիր Մ. Օշին, *Շաթու-մի* հիմնադիր եւ երկարամեայ արտօնատր Սահակ Պահչէճեան եւ խմբագիրներ Արահամ Էօլմէզ ու Նազարէթ Կուժնունի: Էօլմէզ միաժամանակ եղած է Հաճընի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան պաշտօնաթերթ *Նոր Հաճընի* խմբագիր (1946-58): Այս պաշտօնին զինք յաջորդած են Գրաճեանը (1958-73) եւ Կուժնունին (1973-76):

տի ըլլար յաջորդ կէս դարուն¹⁵: Մարտ-Օգոստոս 1915ին, համայնքի գլխատր կազմակերպութիւնները՝ Թաղական Խորհուրդը (եկեղեցական կազմակերպութիւնը) եւ ՀՅԴը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ) եւ ՍԴՀԿը, երեք անջատ նախաձեռնութիւններով կամաւորական շարժման եւ Մեծ Եղեռնի վերապրողներուն ի նպաստ հանգանակութիւններ կատարած են¹⁶: Յաջորդ վեց ամիսներուն, գործակցութեան փորձեր եղած են. կազմակերպութիւնները զարգացուցած են «համերաշխական եւ գիջողական ոգի մը մէկզմէկու հանդէպ, եւ նոր ջանք մը համագործակցութեամբ աշխատելու մեր վիրատր հայրենիքի բազմապահանջ պէտքերուն գոհացում տալու համար»¹⁷: Սակայն, այս փորձը երկար չէ տեսած. արդարեւ, Մարտ 1916ին, ՀԲԸՄ եւ ՍԴՀԿ *պոլյորոթի* կ'ենթարկէին Թաղական Խորհուրդի եւ ՀՅԴ կոմիտէութեան նոր դրամահաւաքը¹⁸:

Համայնքը մեծապէս տկարացած էր, քանի որ երկրի տնտեսական տագնապին պատճառով, 1915-16ին անոր համրանքին կէտը Մ. Նահանգներ գաղթած էր: Այստեանդեռձ, ներքին պայքարը եւ անկազմակերպ վիճակը յարատեանձ են մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը:

1917ի Ապրիլին, ԱՄՆի մէջ հիմնուած Հայ Ազգային Միութեան (ՀԱՄ) մաս կը կազմէին առաքելական եւ անտարանական եկեղեցիները, հնչակեանները, դաշնակացականները եւ վերակազմեալ հնչակեանները եւ ՀԲԸՄը: Նոյն տարուան վերջերուն, Պունտոս Այրէսի մէջ ՍԴՀԿ եւ ՀՅԴ անկաջտօն բանակցութիւններ սկսած են ՀԲԸՄի հետ՝ համայնքը ամերիկահայ բնորդի հետեւողութեամբ կազմելու նպատակով¹⁹: Մարտ 1918ին, պաշտօնական ժողով մը տեղի ունեցած է՝ ՍԴՀԿի նախաձեռնութեամբ եւ ՀՅԴի, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան եւ ՀԲԸՄի մասնակցութեամբ²⁰: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, *Unión Nacional Armeniana*

¹⁵ Յ. Պ. Պօղոսեան, *Հաճրեի ընդհանուր պարմութիւնը եւ շրջակայ Գօգաւե-Տաղի հայ գիւղերը*, Իրատ.՝ Հաճրու Վերաշինաց Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութիւն, Լոս Անճերլոս, 1942, էջ 795:

¹⁶ Հայկ Մօսկօֆեան, «Նամակ Պօլնոս Այրէսէն», *Կոչնակ*, 28 Օգոստոս 1915, էջ 742. նաեւ՝ Բերդապահ, «Ազգասէրը», *Արմենիա*, 21 Ապրիլ 1934, էջ 2:

¹⁷ Հ. Գ. Մօսկօֆեան, «Պոլնոս Այրէսէն», *Կոչնակ*, 11 Մարտ 1916, էջ 272:

¹⁸ Եպիփան-Աիրուսի, «Լուրեր Հարաային Ամերիկայէն», *Հայրենիք*, 22 Ապրիլ 1916, էջ 2:

¹⁹ *Արմենագրութեան Կոմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան*, 7 Նոյեմբեր, 1917ի ատենագրութիւն:

²⁰ Նոյն, 24 Փետրուար 1918ի ատենագրութիւն. նաեւ՝ «Պոլնոս Այրէսի հայ գաղութը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը», *Արմենիա*, 28 Յունուար 1970, էջ 1 (խմբագրականներու այս շարքը գրուած է Աշոտ Արծրունիի կողմէ, հիմնուելով կուսակցական արխիւներու վրայ): Յաւօք, ՀԱՄի ու կուսակցութեան փոխյարաբերութեան վերաբերեալ որեւէ տեղեկութիւն չկայ *Երիտասարդ Հայաստանի* 1918ի թիւերուն մէջ, ուր միայն կը յիշուի մասնաճիւղի «Ձէթօն» թատերախումբին կողմէ Սեդրակ Շահէնի *Կարկառուն կամարներ* թատերախաղին ներկայացումը 11 Օգոս-

կոչուած ՀԱՄԻ կազմը խտորած է ամերիկահայ կաղապարէն: Անոր մէջ միայն ընդգրկուած են ՍԴՀԿը, Թաղական Խորհուրդի «նոր» հոգաբարձութիւնը (ներքին պառակտումի հետեաննքով, գոյութիւն ունէին «հին» դաշնակցական, եւ «նոր» ոչ-դաշնակցական ուղեգիծերով հոգաբարձութիւններ), Հայ Անտարանական Եկեղեցին, ՀԲԸՄը եւ «Հաճըն» Ընկերութիւնը (1928ին սկսեալ՝ Հաճնոյ Հայրենակցական Միութիւն), որուն ատենապետը՝ Համբարձում Քէչեճեան (հնչակեան), ՀԱՄԻ ատենապետ ընտրուած է²¹: Դաշնակցականներն ու վերակազմեալ հնչակեանները դուրս մնացած են:

ՀԱՄԻ մէջ սկզբնապէս մտած Թաղական Խորհուրդի «հին» հոգաբարձութիւնը եւ ՀՅԴն լքած էին անոր կազմը, առաջինը՝ կամովին, իսկ երկրորդը՝ պարտաւորուած, ըստ երեսոյթին՝ իշխանութեան հանդէպ հնչակեան նկրտումներուն պատճառով²²: Սակայն, արդէն Յուլիս 1918ին, ներքին վեճեր տազնապի առաջնորդած են ՀԱՄը, որ անշարժութեան մատնուած էր: Վերջապէս, նոյն տարուան Սեպտեմբերին, համայնքի անդամներէն Իսրայէլ Արսլան, որ յաջորդ երեք տասնամեակներուն անոր կազմակերպական պատմութեան կարկառուն ղերակատարներէն մէկը պիտի ըլլար, անհատական հանգամանքով յաջողած է բոլոր կողմերը քով-քովի բերել նորակազմ ՀԱՄԻ մէջ (սպաներէն նոր անուանումով՝ *Unión Nacional Armenia*), որ ինքզինք համարած է Ամերիկայի ՀԱՄԻ արժանօրինեան մասնաճիւղը, հետեւելելով անոր կանոնադրութեան: Ըստ այնմ, ՀԱՄԻ կազմին մէջ մտած են Հայ Առաքելական եւ Հայ Անտարանական եկեղեցիները (Հայ Կաթողիկէ Եկեղեցին կազմուած չէր տակալին), երեք կուսակցութիւնները եւ ՀԲԸՄը: ՍԴՀԿ ներկայացուցիչը Նազարէթ Խեսուզմունեանն էր (յետագային՝ Խոյմունեան)²³, որ շուտով Ուրուկոյայի մայրաքաղաք Մոնթեվիտո փոխադրուած է, ուր Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձի տօնակատարութեան բանախօսներէն մէկը եղած է²⁴:

տոսին (Խաչիկ Պաշտեան, «Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն», *Երիւրասարդ Հայաստան*, 23 Հոկտեմբեր 1918, էջ 199):

²¹ *Արժանագրութեան փոմար*, 8 Մարտ 1918ի ատենագրութիւն. Նանե՛ Ս. Թովչեան, «Ընկ. Յարութիւն Թահթանեանի կեանքն ու գործունէութիւնը», *Արմենիա*, 1 Յունիս 1934, էջ 2: Հ. Քէչեճեան՝ ռադիցական երկարամեայ վաստակով հանդերձ, 1913ին «կ[ը] ստիպուի պանդոխտի ցուպը ձեռքը առնել, ծեր հասակին մէջ, երթալ միւրճուելու համար նոր-աշխարհի, գործատրական շարքերուն մէջ» (Մ. Ոսկեան, «30ամեայ վաստակաւորի մը վախճանը (Համբարձում էֆ. Քէչեճեան)», *Կոհակ*, 13/26 Մարտ 1913, էջ 104):

²² *Արժանագրութեան փոմար*, 30 Յունիս եւ 3 Յուլիս 1918ի ատենագրութիւններ:

²³ ՀԱՄԻ նամակ Պօղոս Նուպարին, 4 Նոյեմբեր 1919 (ՀԱԱ, ֆոնտ 430, ցուցակ 1, թ. 646):

²⁴ «Հայ գաղթականութիւն», *Կոչեակ Հայաստանի*, 24 Յուլիս 1920, էջ 958: Խոյմունեան համարուած է Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը Ու-

Քաարար տեղեկություններ չունինք ՀԱՄի ներքին անցուղարձերուն մասին, որոնք Հիսիսային Ամերիկայի այսպես կոչուած «մայր» կազմակերպութեան վիճակը կոչուած էին ցոլացնելու: Արդարեւ, Մ. Նահանգներու ՀԱՄի կուսակցութիւններու դէմ ուղղուած ընթացքը սկզբունքային վէճերու պատճառ դարձած է Նախ ՍԴՀԿԻ, որ լքած է ՀԱՄը Յունուար 1919ին²⁵, եւ այնուհետեւ՝ ՀՅԴԻ հետ: Վերջինիս ջախջախիչ յաղթանակը Փարիզի Հայկական Համագումարի ներկայացուցիչներու ընտրութիւններուն, ըստ պնդումներու, արատատրուած էր ոչ-դաշնակցական կողմի ընտրական խարդախութեան փորձերով: ՀԱՄի վարչութիւնը ժողովրդային քուէարկութեամբ ընտրելու առաջարկի մերժումէն ետք, ՀՅԴն եւս լքած է գայն²⁶:

Պուննոս Այրէսի երեք կուսակցութիւններուն մասնաճիւղերը պարտատր էիր հետեւի «միեւնոյն ընթացքին ինչ որ կը թելադրէ իրենց իր կուսակցութեան ամերիկահայ օրգանը»²⁷: Այսպէս, Մայիս 1919ին, ՍԴՀԿը ՀԱՄէն դուրս եկած է Պուննոս Այրէսի մէջ: Այդ առիթով, Պոստոնի Վերակազմեալ Հնչակեան պաշտօնաթերթը Պահակի թղթակիցը գրած է.

«Հնչակեան Blue Street»²⁸ այս րեղի րդարն ալ վար չի կեցան իրենց վարպետէն, բողոքագիր մը զրկելով րեղոյն Հայ Ազգային Միութեան, 24 ժամ միջոց րալով, թէ, եթէ ան բողոքէ կեղրոնի անիրատութեան դէմ, առէկ, իսկ եթէ ոչ, իրենք պիտի հրաժարին Միութենէն: Ու հրաժարեցաւ իրենց ներկայացուցիչը, ու դեռ չէ նշանակած ուրիշ մը, հակառակ Ազգ. Միութեան բացարարական պարահասնիտ»²⁹: Հնչակեաններուն հետեւած է ՀՅԴն, որ Մարտ 1920ին նոյնպէս դուրս եկած է Միութենէն, պատճառաբանելով անոր կազմակերպական կախտածութիւնը Մ. Նահանգներէն³⁰: Թէ՛ հիսիսի եւ թէ՛ հարաւի մէջ, ՀԱՄը ստացած էր պահպանողական ուղղութիւնը՝ իբրեւ իր միակ քաղաքական յենարանը պահելով Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը:

րուկուայի մէջ, 1918ին (Կիտուր, էջ 249), ինչ որ այլ աղբիւրներէ հաստատուած գտած չէ:

²⁵ «Կոչ հայ ժողովուրդին», *Երիտասարդ Հայաստան*, 1 Փետրուար 1919, էջ 379:

²⁶ Մանուկ Համբարձումեան, «Ամերիկահայ գաղութը (վերջին տասնամեակը)», *Հայրենիք* ամսագիր, Յունիս 1923, էջ 71-74:

²⁷ «Պուննոս-Այրէսի հայ գաղութը», *Կոչնակ Հայաստանի*, 12 Օգոստոս 1919, էջ 995:

²⁸ Կ'ակնարկէ: Եիքակոյի Blue Island Avenue-ին, ուր կը գտնուէին Ամերիկայի հնչակեան Կեղրոնական Կոմիտէի նստավայրը եւ *Երիտասարդ Հայաստանի* խմբագրատունը:

²⁹ Թղթակից, «Լուրեր, Պուննոս Այրէսէն», *Պահակ*, 6 Յունիս 1919, էջ 2:

³⁰ Ի. Ա. [Իւրայիւ Արսլան], «Թէ՛ ինչպէ՛ս ծնունդ առաւ Հ.Ա. Ե. Հոգարարձութիւնը», *Հայ կեղրոն*, Ապրիլ 1942, էջ 56:

Հնչակեաններն ու դաշնակցականները, որոնք համայնքի բուն քաղաքական կազմակերպ ուժը կը ներկայացնէին, Փետրուար 1920ին կազմած են Միջ-Կուսակցական Մարմինը՝ երկու դաշնակցականի եւ մէկ հնչակեանի (Ստեփան Շիրազումեան) ղեկավարութեամբ: Մարմինը աշխատած է Հայաստանի Հանրապետութեան օգնութեան հասնիլ՝ ՀԱՄԻ հետ բացառապէս մրցակցութեան պայմաններու մէջ³¹:

Ըստ դաշնակցական կոմիտէի 25 Ապրիլի նիստին, ՍԴՀԿը առաջարկած էր միասնաբար տօնել անկախութեան երկրորդ տարեդարձը³²: Քանի մը օր ետք, դոկտ. Էթիէն Պրազիլ՝ Հայաստանի Հանրապետութեան Հարապիյն Ամերիկայի դիւանագիտական ներկայացուցիչը, Ռիօ տէ Ժանէյրոյէն կը գրէր Միջկուսակցական Մարմնին. «Ձեր 23 [Ապրիլ] թուակիր նամակը ինձ շար ուրախութիւն պատճառեց, տեսնելով ամենայն գոհունակութեամբ, որ միացած են երկու զօրաւոր կուսակցութիւններ, որոնք կը ներկայացնեն ճշմարիտ ուժը մեր ազգին: (...) Չափազանց գովելի է ձեր ձեռնարկը՝ Մայիս 28-ի հանդէսը յղանակնուղ մասին»³³:

Միջկուսակցական Մարմինն շրջաբերականները ըստ երեսոյթին փոթորիկ ստեղծած են: ՀԲԸՄԻ տոմարի 2 Մայիսի առեւտագրութիւնը կ'արձանագրէր, որ անոնց «պարունակութիւնը ճշմարիտ հայու ոգոյն բոլորովին հակառակ եւ իրենցմէ զար միւս կուսակցութիւն ու կազմակերպութիւնները դաւաճան եւ յեղափոխական մակդիրներով որակած ըլլալուն, իբր թէ միայն հանրապետութիւնը իրենց սեփականութիւնն է եւ միայն ու միայն հնչակեանն ու դաշնակցականները պիտի տօնեն ըսելով գրած են»³⁴:

Անկախութեան երկու տօնակատարութիւններ տեղի ունեցած են նոյն օրը՝ 28 Մայիս, 1920ին, երկու կուսակցութիւններուն³⁵ եւ ՀԱՄԻ ու ՀԲԸՄԻ կողմէ³⁶ անջատ կազմակերպութեամբ: Հետաքրքրական է, նշել, թէ հանգանակուած գումարները գրեթէ նոյնական էին. առաջինի պարագային՝ գրեթէ 30,000 ֆրանք³⁷, իսկ երկրորդին՝ շուրջ 29,000³⁸: Գումարները զխստորաբար դրկուած են հայկական կառավարութեան, իսկ փոքր մաս մը՝ Կիլիկիոյ հայութեան:

³¹ Ս. Թովչեան, «Ընկ. Յարութիւն Թահթաճեանի կեանքն ու գործունէութիւնը», *Արմենիա*, 26 Յունիս 1934, էջ 2:

³² «Պուլճնոս Ալոէսի հայ գաղութը եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը», *Արմենիա*, 30 Յունուար 1970, էջ 1:

³³ Ս. Կոսն [Սուկրատ Յ. Թէրզեան], «Պատմական վաւերագրեր», *Արմենիա*, 17 Յունուար 1955, էջ 2:

³⁴ *Արձանագրութեան փոճար*, 2 Մայիս 1920ի առեւտագրութիւն:

³⁵ "Fiesta patriótica de la colectividad Armenia", *La Razón*, 28 de mayo de 1920, էջ 6. նաեւ՝ "Aniversario de Armenia", *La Prensa*, 28 de mayo de 1920, էջ 13:

³⁶ "Aniversario de la República de Armenia", *La Razón*, 27 de mayo de 1920, էջ 5:

³⁷ Binayan, *La colectividad*, էջ 33 (հմմտ. Binayan, *Entre el pasado*, էջ 97):

³⁸ Ի.Ա., «Թէ ինչպէ՛ս», Յունիս 1942, էջ 56. նաեւ՝ Արժոնի, էջ 21:

29 Յունիս 1920ին, Կիլիկիոյ ի նպաստ յատուկ միջ-կուսակցական հանգանակութիւն մը սկսած է³⁹: Երկու շաբաթ ետք՝ 16 Յուլիսին, երկու կուսակցութիւնները ստեղծած են Հայկական Բանակի Օգնութեան Յանձնախումբը, Շխրտըմեանի գլխաւորութեամբ⁴⁰: Հանրաժողովի մը ընթացքին, աւելի քան 23,000 ֆրանք հաւաքուած եւ ուղարկուած է Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանին⁴¹:

Բոլոր կողմերը համայնքային պառակտումը յաղթահարելու փորձ մը կատարած են: 4 Յուլիս 1920ի նիստին, ՀԱՄը որոշած է որդեգրել «Հայ Ազգային Միութիւն Արժէնթինի» անուանումը եւ նոր կանոնագրութիւն մը վաւերացնել: Ըստ այնմ, ան խզած է կապերը Մ. Նահանգներու հետ: Տասը օր ետք (14 Յուլիս), տեղի ունեցած է անուանափոխուած Միութեան ընդհանուր ժողովը: Անոր կազմին վերստին անդամակցած են առաքելական եւ ատետարանական եկեղեցիները, երեք քաղաքական կուսակցութիւնները (ՀՅԴ, ՍԴՀԿ եւ Հայ Ազգային Ռամկավար Կուսակցութիւն) եւ ՀԲԸՄը: Ընդհանուր ժողովը վաւերացուցած է նոր կանոնագրութիւնը եւ որոշած՝ երկու չէզոք անդամ ընդգրկել վարչութեան մէջ⁴²:

Սակայն, վճերը ամբողջովին հարթուած չէին: Էթիէն Պրազիլ Միջ-Կուսակցական Մարմինին գրած է Օգոստոս Տին.

Նկատի ունենալով ձեր տարրեր հոսանքներու պատկանիլը, պատշաճ չեմ սեպչոր միջամուկս ըլլալ ձեր ներքին ապաքարներուն, որովհետեւ առանց ներքին գիտակից պայքարի ազգ մը մտել կը նկատուի, միայն պիտի թելադրէի որ, երբ խնդիրը արտաքին է, պէտք է համերաշխ գործակցիք, ազգային շահերը պաշտպանելու համար օտարներու առջեւ: Հետեալաբար, կը խնդրեմ, իւրաքանչիւր հոսանքէն երկուական անդամներ ընտրելով յանձնախումբ մը կազմէք մինչեւ ցնոր տնօրինութիւն՝ ազգային ներքին եւ արտաքին գործերը վարելու համար: Նման նամակ մը Հայկական [Ազգային] Միութեան ալ գրուած է⁴³:

³⁹ «Պունտո Այրէսի հայ գաղութը», 30 Յունուար 1970, էջ 1:

⁴⁰ Binayan, *Entre el pasado*, էջ 97:

⁴¹ Ս. Թոփչեան, «Ընկ. Յարութիւն Թահթանեանի կեանքն ու գործունէութիւնը», *Արմենիա*, 24 Յունիս 1934, էջ 2:

⁴² Արսլան, «Թէ ինչպէ՛ս», Յունիս 1942, էջ 56-57: Փետրուար 1919ին կազմուած էր Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան Պունտո Այրէսի մասնաճիւղը («Պունտո Այրէսի հայ գաղութը», 30 Յունուար 1970, էջ 1), որ Հայ Ազգային Ռամկավար Կուսակցութիւն անունով յիշուած է Մարտ 1920ին (*Արմենագրութեան փոմար*, 11 Մարտ 1920ի ատենագրութիւն): Այնուհետեւ լուծարուած կը թուի, որովհետեւ ՀՍՄի 14 Յուլիս 1920ի ժողովը որոշած էր համակալարները ընդգրկել վարչութեան մէջ երբ ներկայացուցիչ որկելու ի վիճակի ըլլային (Արսլան, «Թէ ինչպէ՛ս», Յունիս 1942, էջ 57):

⁴³ Կոան, «Պատմական վաւերագրեր», 17 Յունուար 1955, էջ 2:

երեք օր ետք, կրկնած է իր խնդրանքը, անլցնելով, որ վարչութիւնը պէտք է նաեւ հինգերորդ, չէզոք անդամ մը ունենար⁴⁴: ՀՅԴ կոմիտէն այս թելադրանքին մէկ տարբերակը որդեգրած է 12 Սեպտեմբերի իր նիստին.

(...) [Ա]ռաջարկել, որ ժողովուրդի քուէներով ընտրուին վարչութեան հինգ անդամները եւ մէկական ներկայացուցիչ այ ունենան քաղաքական երեք կուսակցութիւնները՝ Հնչակեան, Ռամկավար եւ Դաշնակցական: Նորակազմ վարչութիւնը առժամայ կը վարէ գաղութի արտաքին եւ ներքին գործերը՝ մինչեւ Հայաստանի հանրապետական կառավարութեան ներկայացուցիչ ժամանումը: Անոր գալէն ետք, կուսակցութիւնները յետս կը կոչեն իրենց ներկայացուցիչները եւ վարչութեան մնացեալ հինգ անդամները կը վարեն գաղութի ներքին գործերը⁴⁵:

Առաջարկներն ու բանակցութիւնները ապարդիւն անցած են: 17 Հոկտեմբեր 1920ին տեղի ունեցած համայնքային ժողովին կարդացուած է Հայ Ազգային Միութիւն Արժէնթինի գործունէութեան տեղեկագիրը, որմէ ետք յայտարարուած է, որ ՀՅԴն ու ՍԴՀԿը պիտի չմասնակցէին անոր⁴⁶: Յստակ չէ, թէ ինչ պատահած էր Յովսիսի եւ Հոկտեմբերի միջեւ, որ ի չիք դարձուցած է կնքուած համաձայնութիւնը: Անկուսակցական գերակայութիւնը ՀԱՄԱի մէջ թերեւս մղած ըլլայ կուսակցութիւնները առանձինն աշխատելու՝ հակառակ իրենց անդամներու փոքր թիւին⁴⁷:

Նոր բանակցութիւններու ձախողութիւնը առաջնորդած է ՀԱՄԱի փլուզման: Թէ՛ւ գայն վերակենդանացնելու անցողիկ ջանքեր եղած են 1923ին, կազմակերպութիւնը այլեւս միայն ձեւական գոյութիւն պահած է մինչեւ 1933: Միութիւնը արժանթինեան կառավարութեան կողմէ պաշտօնական ճանաչումի արժանացած միակ կազմակերպութիւնն էր, ու որպէս այդպիսին, իրաւական արժէք ունեցող փաստաթուղթեր լիազօրելու եւ ինքնութեան թուղթեր մատուցելու իրաստութիւն ունէր, ուստի առենապէտի եւ առենադպիրի պաշտօնները պահպանուած են միայն օրինական պատճառներով⁴⁸:

⁴⁴ Ա. Կոան, «Պատմական վաւերագրեր», *Արմենիա*, 19 Յունուար 1955, էջ 2:

⁴⁵ «Պունտոս Այրէսի հայ գաղութը», *Արմենիա*, 6 Փետրուար 1970, էջ 1:

⁴⁶ Ի. Ա., «Թէ ինչպէ՛ս», *Հայ կեդրոն*, Մայիս 1942, էջ 74:

⁴⁷ 1915-16ի դէպի Մ. Նահանգներ գաղթէն ետք հնչակեան շարքայիներու թիւին մասին տեղեկութիւններու չենք հանդիպած: Համեմատութեան համար, ըստ դաշնակցական շարքային Բարսեղ Էօրճեանի վկայութեան, 1918ին ՀՅԴ. Պունտոս Այրէսի մասնաճիւղին հինգ անդամ մնացած էր, որոնք կուսակցութեան ակումբը պահած են մինչեւ 1921 (Ա. Յ. Թէրզեան, «"Արմենիա"ի երկունքը», *Արմենիա*, 27 Յուլիս 1942, էջ 5), իսկ 1922ին անդամներու թիւը 40ի հասած էր (Գէորգ Տօնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ, *հայտոր Բ. (1910-1923)*, «Հայրենիք» հաստատութիւն, Պոսթըն, 1995, էջ 603):

⁴⁸ Մատթէոսեան, *Հարաւային*, էջ 91-92:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆ

Միջոցին՝ 1920-1921ին, համայնքը քառասյան վիճակ մը ապրած է, որ կ'արձագանգէր հայաշխարհի քաղաքական ու ընկերային ճակատագրական իրավիճակին: Նոյեմբեր-Դեկտեմբեր 1921ին տեղի ունեցած քանի մը ժողովներու որպէս եզրայանգում, որոշուած է հիմնել «Հայ Տուն» մը, որ այնուհետեւ վերանուանուած է Հայ Գաղութային Կեդրոն (ՀԳԿ): Այս համագաղութային կազմակերպութիւնը կոչուած էր ստանձնելու անշարժութեան մատուցած ՀԱՄԻ տեղը՝ առանց կրօնական կամ քաղաքական խտրականութեան: Կանոնագրութեան պատրաստութիւնը ստանձնած է հինգ հոգինոց յանձնախումբ մը, որուն միակ կուսակցական անդամը հնչակեան Քէչեճեանն էր⁴⁹: Հիմնադիր ժողովը տեղի ունեցած է 25 Յունուար 1922ին, իսկ ընդհանուր ժողովը, ուր ընտրուած է վարչութիւնը՝ 7 Մայիսին:

ՀԳԿի առաջին նպատակն էր «վառ պահել ազգային եւ կրօնական զգացումները» ու աշխատիլ հայ մանուկներու եւ երիտասարդներու ազգային դաստիարակութեան ի խնդիր⁵⁰: Մայիս 1922ին, Սահակ Պահչեճեան առաջարկած է դպրոցներու բացումը Պուենոս Այրես քաղաքի չորս հայաշատ թաղամասերու մէջ. Փալերմօ (ՀԲԸՄի գրասենեակը), Սան Խոսան (հնչակեան ակումբը), Լինիերս (Խաչքեր Մարտոյեանի տունը) եւ Պառաքաս⁵¹: Յուլիսին քաւարար համարուած է խնդրել, որ տեղ տրամադրուէր առաջին երեք թաղամասերուն մէջ⁵²: Դասերու սկսելու որոշումը տրուած է, թէեւ, ՀԳԿի տարեկան տեղեկագիրը (Մայիս 1923) դիտել կու

⁴⁹ Ի. Ա., «Թէ ինչպէ՛ս ծնունդ առաւ», Յունիս 1942, էջ 91:

⁵⁰ Արձանագրութեան րոմար Հայ Գաղութային Կեդրոնի, «Հայ Գաղութային Կեդրոնի ծրագիր». նաեւ՝ Ի. Ա., «Թէ ինչպէ՛ս», Յունիս 1942, էջ 92:

⁵¹ Տե՛ս Արձանագրութեան րոմար Հայ Գաղութային Կեդրոնի, 30 Մայիս 1922 եւ ՀԲԸՄի պատասխանը՝ Արձանագրութեան րոմար, 4 Յունիս 1922:

⁵² Արձանագրութեան րոմար Հայ Գաղութային Կեդրոնի, 4 Յուլիս 1922: Ըստ Արլանի, որ առաջին երեք վայրերը յիշած էր, առաջարկը կատարուած էր 1924ի սկիզբը (Ի.Ա., «Թէ ինչպէ՛ս», Հայ կեդրոն, Նոյեմբեր 1942, էջ 105: Հմմտ.՝ Binayan, *La colectividad*, էջ 40. նաեւ՝ Vartan Matiossian, "La iglesia armenia en Buenos Aires (1912-1938): bosquejo histórico-organizacional", տե՛ս idem (խմբ.), *Los armenios en América del Sur. Primeras Jornadas de Estudio*, Buenos Aires, Instituto de Investigación Armenológica, 1991, էջ 87. նաեւ՝ Վարդան Մատթէոսեան, «Հայց. եկեղեցիի պատմական զարգացումը Պուենոս Այրեսի մէջ (1912-1938)», Հասկ հայագիտական փարեցիրք, Է.-Ը. տարի, 1995-1996, էջ 99. նաեւ՝ Binayan, *Entre el pasado*, էջ 111): Թուականի ճշտումին համար, տե՛ս՝ Մատթէոսեան, Հարաւային, էջ 171: Նեյիտա Պոլլոյրոնեան, սխալ ընթերցելով Արլանի հաղորդումը, Մարտոյեանը հնչակեան շարքայինի վերածած է եւ ՀԲԸՄի եւ ՄԴՀԿի համատեղ քարտուղարութիւն մը ստեղծած (Nélide Boulgourdjian-Toufeksian, "The Armenian Church and the School Network in Buenos Aires: Channels for the Preservation of Identity", *Journal of the Society for Armenian Studies*, 1998-1999 [2000]:10, էջ 117):

տար, որ մանուկներու թիւը որեւէ թաղամասի մէջ նշանակալից չէր, ըստ մասնակի քննութիւններու⁵³: 1925-26ին, Պահչէճեան վարած է ՀԳԿի ատենապետութիւնը:

1915-23 շրջանի աղէտայի իրավիճակին պատճառով ընդհատուած գաղթականութիւնը իր երկրորդ ալիքը ունեցած է, քանի որ Հարաւային Ամերիկան աշխարհի միակ անկիւնն էր, որ առանց սահմանափակումներու բաց էր հայ գաղթականներուն առջեւ: 1922-32ին, Արժանթին, Պրագիլ եւ Ուրուկոյայ գաղթած հայերու թիւերու գնահատումը կը տարութերի 10,000ի եւ 20,000ի միջեւ: Արժանթինահայ համայնքը, ինչպէս տեսանք, արդէն կազմակերպական փոքր ցանց մը ունէր, որ ծառայած ու ամրապնդուած է նոր գաղթալիքի ներգործութեան տակ, իսկ Պրագիլի եւ Ուրուկոյայի հայկական մանր խմբատրումները փաստօրէն համայնք դարձած եւ իրենց կառոյցները ստեղծած են այդ նոյն գաղթալիքի շնորհիւ:

Հայաստանի խորհրդայնացումին պատճառով, 1920ականներուն ուժերու վերադասատրում մը ստեղծած է արտասահմանի մէջ, ի մասնատրի ընկերվարական երկու կուսակցութիւններուն՝ ՀՅԴի եւ ՍԴՀԿի մէջ: Խորհրդային Հայաստանի հանդէպ քաղաքական դիրքորոշման եւ կուսակցութեան գոյատեւման անորոշութենէն բխած յուսախաբութիւնը գլխատր պատճառներէն դարձած է ՀՅԴի անդամներու կորուստին, մինչ հնչակեաններու պարագային, նմանօրինակ հոլովոյթի մը գլխատր բաղադրիչը խորհրդահայ նոր իրականութեան հանդէպ կուսակցութեան գրեթէ նոյնացման աստիճանին հասնող մերձեցումն էր եւ անկէ ծագած ներքին բանավեճերը⁵⁴: Գաղթականներուն իր օժանդակութեան բաժինը բերելու կողքին⁵⁵, ՍԴՀԿը եւս օգտուած է նորաստեղծ իրավիճակէն՝ քաղաքական միա ուժերու կարգին, ինքզինք հաստատելու եւ Հարաւային Ամերիկայի մէջ նկատառելի ուժ դառնալու նպատակով: 1924ին, Հայ Գաղութային Կեդրոնի քարտուղար Կարապետ Քէշիշեան թղթակցութեան մը մէջ կ'արձանագրէր, որ «երկու Կուսակցութիւններ ունին հոս իրենց ակումբներն ու

⁵³ Արժանագրութեան զոմար Հայ Գաղութային Կեդրոնի, Տեղեկագիր Հայ Գաղութային Կեդրոնի, Մայիս 1922-Մայիս 1923:

⁵⁴ Այսպէս, 1922ին Պոնտոս Այրէս ժամանած հնչակեան շարքային Արրահամ Գրաճեան (1905-73) երկու տարի ետք համայնավար հատուածի հիմնադիրներէն եղած է եւ ապա խմբագրած՝ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) շարքաթերթ *Շիրակը* (1933-36): 1928ին Սան Փաղոյի հնչակեան մասնաճիւղի հիմնադիրներէն Գրիգոր Կէօճեան անցի ուշ լքած է կուսակցութիւնը եւ, հաստատուելով Պոնտոս Այրէս, դարձած է տեղոյն համայնավար հատուածի ղեկավարներէն եւ *Վերեք* (1937-39), *Հայ մամուլ* (1945-50, 55-59), *Նոր կեանք* (1960-61) ու *Սեւան* (1961-90) շարքաթերթերուն տնօրէնը կամ խմբագիրը մինչեւ մահը (1966):

⁵⁵ «Բաց նամակ Յարութիւն հաշատուրեանի յերեւան», *Երիտասարդ Հայաստան*, 1 Մայիս 1923, էջ 3:

նորոյն գործունէութիւնները, ասոնք կարգ մը օգրակարութիւն ունին, եւ սակայն, ցաւալի է ըսել որ կուսակցամոլութիւնը, ազգային լուրջ եւ ընդհանրական շահերէն վեր բռնելու սխալը հոս ալ վերջին ծայր աչքառու հանգամանք մը սրացեր է», մաղթելով որ «մեր կուսակցութիւնները (...) սթափին եւ փոխեն իրենց գործունէութեան ձեւն եւ ուղին»⁵⁶:

Ի հեճուկս նիւթերու սակաւութեան, կարելի է ընդհանուր զիծերով հետեւիլ Արժանթինի հնչակեան մասնաճիղի բնաշրջման հիւղովոյթին: 1950ականներուն, Ալֆէրեան յիշած է *Խորհրդային Հայաստան* խմորատիպ ամսաթերթը իբրեւ Պուենոս Այրէսի հնչակեան հրատարակութիւն, նախ թուագրելով 1922⁵⁷ եւ ապա 1923՝ խմբագրութեամբ Արրահան Գրաճեանի⁵⁸: Արտաշէն Տէր Խաչատուրեան տրամ է 1922-1923 թուագրումը, ատելցնելով, որ թերթէն անտազն հինգ թիւ լոյս տեսած է⁵⁹:

*Խորհրդային Հայաստան*ին յաջորդած է *Արժէքիներեան մամուլ* շաբաթաթերթը, որ ասանդականօրէն Հարաւային Ամերիկայի առաջին հայերէն թերթը համարուած է⁶⁰: Ըստ էութեան, առաջին տպագիր հայերէն թերթը

⁵⁶ Կարապետ Քէշիշեան, «Նամակ Պուենոս Այրէսէն», *Հայաստանի Կոչեակ*, 3 Յունիս 1924, էջ 719:

⁵⁷ Պրալտոլ [Սիիրան Մ. Ալֆէրեան], «Տուցակ հնչ. մամուլին 1887-1938», *Ուստողաց պարեգիրք*, 9. տարի, տպ. Կ. Տօնիկեան, Պէրուք, 1938, էջ 138. Նոյն, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան քարոզչական գործունէութիւնը (1887-1952)», *Յիսնամեակ Երիտասարդ Հայաստանի 1903-1953*, «Երիտասարդ Հայաստան», Պոստրն, 1953, էջ 163:

⁵⁸ Սիիրան Մ. Ալֆէրեան, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան պրօպականտ-քարոզչական գործունէութիւնը (1887-1952)», *Հնչակեան մարեան, չորրորդ սրակ*, Յունուար 1954, էջ 95: Յովհաննէս Պետրոսեան սկզբնապէս հետեւած է Ալֆէրեանին, Պուենոս Այրէսի *Խորհրդային Հայաստան* ամսաթերթը թուագրելով եւ Գրաճեանը խմբագիր նկատելով. բայց ապա ստեղծած է փոխադրութիւն մը Նիւ Եորք, ուր Խորհրդային Հայաստանի Տեխնիկական Օգնութեան Ընկերութիւնը հրատարակած է *Խորհրդային Հայաստան* ամսաթերթը (Յովհաննէս Պետրոսեան, *Հայ պարբերական մամուլի բիրթագրաֆիա (1900-1956)*, հատոր 2, ՀԱՍԿ պետական գրապալատ, Երեւան, 1957, էջ 381. հմմտ.՝ Ամալիա Կիրակոսեան, *Հայ պարբերական մամուլի մատենագիտութիւն (1794-1967)*, ՀԱՍԿ Ալ. Միասնիկեան գրադարան, Երեւան, 1970, էջ 303): Նիւ Եորքի *Խորհրդային Հայաստանը* սկսած է լոյս տեսնել Օգոստոս 1923ին իբրեւ Ա. տարուան Ա. թիւ, ինչ որ կը հերքէ փոխադրութեան կարելիութիւնը («Ստացանք», *Հայաստանի Կոչեակ*, 11 Օգոստոս 1923, էջ 1078):

⁵⁹ Տէր Խաչատուրեան, *Հայ մամուլի*, էջ 46: Սակայն, նոյն հեղինակը այնուհետեւ հետեւած է Պետրոսեանին ու Կիրակոսեանին (Նոյն, *Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան մամուլը*, հրատ.՝ Ա.Դ.Հ.Կ. «Տխրունի» Ուսանողական Երիտասարդական Միութիւն, Պէրուք, 1992, էջ 26):

⁶⁰ Տե՛ս՝ Binayan, *La colectividad armenia*, էջ 101. Նաե՛ւ՝ Ալբերտ Խառատեան եւ այլք, «Հայ պարբերական մամուլը», *Հայկական սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան» հատոր*, Հայկական սովետական հանրագիտարան,

եղած է. առաջին թիւը տպուած է «Բ. տարի, Ա. թիւ» վերտառութեամբ եւ «Շարունակութիւն *Խորհրդային Հայաստանի*» յիշեցումով⁶¹: «Բ. տարի» նշումէն կ'ենթադրենք, որ *Խորհրդային Հայաստան* սկսած է լոյս տեսնել 1922ին, ինչպէս սկզբնապէս թուագրած էր Սէֆերեան: Անոր հրատարակութեան մէջ դեր ունեցած են Մարտիրոս Եզեկիւիւեան, Մարտիրոս Պալանեան եւ այլ անձեր: Լուսաբանական կարճ ակնարկը խմբագրին անունը յիշած չէ⁶²:

Յունուար 1923ին, Աթէնքի *Երկունք* շաբաթաթերթը ՍԴՀԿԻ Յունաստանի մասնաճիւղերու եւ անդամներու խնդրանքը կը հաղորդէր *Երկուսարդ Հայաստանի* (Շիրակօ), *Սուրիական մամուլի* (Հալէպ), *Արձազանգ Փարիզի* (Փարիզ), *Խորհրդային Հայաստանի* (Երեւան) եւ *Խորհրդային Հայաստանի* (Պուենոս Այրէս) խմբագրութիւններուն՝ «*թիւերը դրկել մեծ քանակութեամբ խմբագրութեանս նոր հասցէով եւ կանոնաւոր կերպով*»⁶³: Յուլիս 1923ին, Եզեկիւիւեան *Խորհրդային Հայաստանի* անունով դիմած է Պուենոս Այրէսի ՀԳԿին՝ վերջինիս սրահը խնդրելով ձեռնարկի մը համար⁶⁴:

Թերթին անունը խորհրդայնամէտ ուղղութեան առժամայ գերակշռութեան մասին կը խօսի: Գաղափարական ներքին հակամարտութիւնը, ինչպէս եւ Արժանթինի քաղաքական մթնոլորտին յարմարելու անհրաժեշտութիւնը պատճառ եղած են, որ խմորատիպ *Խորհրդային Հայաստան*ը անուանափոխման ենթարկուէր եւ առաջին տպագիր թերթը լոյս տեսնէր *Արժէյթիւեան մամուլ* անունով: Խմբագիրը՝ Ստեփան Շխարտըմեան, 1961ին պիտի գրէր.

Անհրաժեշտ էր տպագիր թերթ մը ունենալ, հոգ չէ՛ թէ փոքր, համեստ: Բայց՝ ի՛նչպէս... ամէն ինչ կը պակսէր: Հայերէն գիր, կազմուածք, գրաշար ու նոյնիսկ... թիչ թէ շատ կարողութիւն ունեցող խմբագիր մը:

Երեւան, 1987, էջ 459. նաեւ՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հայ մամուլի ցուցակ*, «Համազգային», Լոս Անճելէս, 1987, էջ 19. նաեւ՝ Eva Tabakian, *Los armenios en la Argentina*, Contrapunto, Buenos Aires, 1988, էջ 163. նաեւ՝ Carlos Hassassian, "Panorama de la prensa gráfica armenia en Argentina y Uruguay" Vartan Matiossian (ed.), *Los armenios en América del Sur*, էջ 104. նաեւ՝ Nélida Boulgourdjian-Toufeksian, *Los armenios en Buenos Aires. La construcción de la identidad (1900-1950)*, Centro Armenio, Buenos Aires, 1997, էջ 154. նաեւ՝ Carlos Hassassian, "La prensa" Manrique Zago (խմբ.), *Armenia, Una cultura milenaria en la Argentina*, Manrique Zago, Buenos Aires, 1999, էջ 100:

⁶¹ *Արժէյթիւեան մամուլ*, 7 Հոկտեմբեր 1923, էջ 1:

⁶² «Ուշադրութիւն», *Արժէյթիւեան մամուլ*, 16 Դեկտեմբեր, 1923, էջ 1:

⁶³ «Նամակատով», *Երկունք*, 21 Յունուար, 1923, էջ 2:

⁶⁴ *Արձանագրութեան քրմար Հայ Գաղութային Կեդրոնի*, 11 Յուլիս, 1923: Օրեր ետք, թերթին անունը ծանուցումի ձեւով յիշուած է. «"Խորհրդային Հայաստան" անասթերթ – Պուենոս Այրէս, Արջէյթիւեան» (*Երկունք*, 22 Յուլիս, 1923, էջ 2):

Գնեցինք ՀԲԸՄի տեղական մասնաճյուղին մօտ գոյություն ունեցող մի քանի քիթ անգործածելի գիրերը: Ապա, հայերենի «նմանող» լատիներեն տառեր ալ լատներով՝ ունեցանք թերթը հրատարակելու չափ գիր...⁶⁵:

Արժէթիներան մամուլը լոյս տեսած է 7 Հոկտեմբեր 1923ին մինչեւ 6 Ապրիլ 1924, երկու մեծադիր էջերով⁶⁶: Շարունակ է հնչակեան ակումբին մէջ ու տպրած՝ Արժանթինի Համայնավար Կուսակցութեան պաշտօնաթերթ *Լա Ինթերնասիոնալի* տպարանին մէջ:

ՄԴԿԿ Կեդր. Վարչութիւնը Սեպտեմբեր 1923ին ներքին շրջաբերական մը հրապարակած էր, յայտարարելով ինքնալուծարումը եւ միացումը Երրորդ Միջազգայնականին (Կոմինտերն): Արժանթինի մէջ, կուսակցութեան ղեկը անցած է անոր ծախակողմեան թեմին, որուն մասին հաղորդած է խորհրդահայ մամուլին մէջ Պօղոս Մակինցեանի կողմէ Մարտ

⁶⁵ Շխրտըմեան, «Ինչպէս հիմնուեցան», էջ 2, ուր յիշողութեան վրէպով թերթին առաջին թիւը թուագրուած է 23 Հոկտեմբեր, 1923: ՀԲԸՄը ծախած չէր, այլ վարձած՝ Մ. Նահանգներէն գնուած 27 քիթերով տառատեսակները (*Արժանագրութեան փոմար*, 18 Մարտ եւ 14 Օգոստոս, 1923):

⁶⁶ Վարդան Մատթէոսեան, «Հարաւային Ամերիկայի հայ մամուլը, սկիզբէն մինչեւ 1950», *Հայկազեան հայագիտական հանդէս, հոգր. ԺԺ.*, 1999, էջ 200. Նոյն՝ *Հարաւային կողմն աշխարհի*, էջ 192: Հմմտ.՝ Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 272, որ հիմնուած է 1995ին մեր կողմէ հայթայթուած տունայնորուն վրայ (թերթի միակ յայտնի հաւաքածուն Վիեննայի Միսիթարեան վանքը կը գտնուի): Բազմաթիւ սխալ թուագրումներ կատարուած են երկրորդական արքիւրներու մէջ: Այսպէս.- 1921-22՝ (Սարգիս Թոփչեան, «Ընկ. Յ. Թահթաճեանի կեանքն ու գործունէութիւնը», *Արմենիա*, 1 Յուլիս 1934, էջ 2), 1922՝ (Գարեգին Լետնեան, *Հայ պարբերական մամուլը (1794-1934)*, Պետհրատ, Երեւան, 1934, էջ 118. «Յուցակ հնչակեան մամուլի», *Հնչակ*, Փետրուար 1936, էջ 8. հմմտ. Հ. Ակրոսիչ Պոտուրեան, *Հայ հանրագիտակ, հատոր Ա.*, տպ. «Պուրբէշ», Պուրբէշ, 1938, էջ 275. Տէր Խաչատուրեան, *Հայ մամուլի*, էջ 19), 1923՝ (Binayan, *La colectividad*, էջ 101. հմմտ. Kevoork Karamanukian, "The Armenian Press in Argentina", *Ararat, Autumn 1984*, էջ 32. Tabakian, *Los armenios*, էջ 163. Boulgourdjian-Toufeksian, *Los armenios en Buenos Aires*, էջ 154), 1923 (Պրպտող, «Յուցակ հնչ. մամուլին», էջ 138), 1923-1924՝ (Աէֆէրեան, «Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան քարոզական», էջ 163. Hassassian, "Panorama", էջ 101, թէմ 16 Դեկտեմբեր 1923-24ի սկիզբ թուագրումով), 1924՝ (Ս. Յ. Թէրզեան, «"Արմենիա"ի երկունքը», *Արմենիա*, 27 Յուլիս 1942, էջ 5. նաեւ՝ Պետրոսեան, էջ 391. հմմտ. Հ. Գանգրունի, «Ս. Դ. Հնչակ. Կուսակցութեան մամուլը՝ 134 թերթ 41 երկիրներու մէջ», *Արարար գրական*, 8-9-10, 1960, էջ 397. Նոյն, *Յանուն հայրենիքի*, էջ 190), 1922-24՝ (Կիրակոսեան, էջ 55. Մ. Բարլոյեան, *Հայ մամուլի համահասար ցուցակ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 145. Տէր Խաչատուրեան, *Սոցիալ*, էջ 20): *Շարժումի սպաներէն մէկ խմբագրականը*, որ նուիրուած էր թերթի ծննդոցին, *Արժէթիներան մամուլի* հրատարակութիւնը թուագրած է 1920ականներու սկիզբէն մինչեւ 1928, ի շարս այլ հիմնագրով տեղեկութիւններու ("Así nació Sharyum", *Շարժում*, 6 Յուլիս 1983, էջ 4):

1924ին քաղաքաճար յիշում նամակ մը՝ «*Խորհրդային Հայաստանի երրորդ փարեյիցի նախօրեակին կարողացանք երեք կոմունիստ ընկերներով մեր փրամադրութեան փակ առնել “Արժանթինեան Մամուլ”ը: Առաջին թիւը, որ է Դեկտ. 2-ը, իմ խմբագրութեամբ լոյս տեսաւ: Ասկէ առաջ թուակիրներուն ոչ մէկ պարասխանսարտութիւն ունեցած եմ: Շուրով կը հասնի ընկեր Մօշէն [Մ. Օշին - Վ.Մ.], որպէս խմբագիր “Ա. Մամուլի”»⁶⁷: Նամակին անանուն հեղինակը հասնաբար Զարմայր Քիլօնէրեանն էր (կեղծանուն՝ Զ. Կոմուն), զոր Շխրտըմեան տարիներ ետք յիշած է իբրեւ խմբագրական կազմի անդամ⁶⁸: 30 Դեկտեմբերին, *Արժէթինեան մամուլը* լոյս տեսած է «օրգան Ամերիկայի Բանտորական Կուսակցութեան Հայ Ֆեդերացիայի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան» վերտառութեամբ⁶⁹:*

Սակայն, այս նոր վիճակը հազիւ երեք ամիս տեսած է: Հնչակեան-բոլշեփկ միաձուլման ծրագրի վիժումին հետեանքով, 30 Մարտ 1924ին թերթը վերստին լոյս տեսած է իբրեւ «օրգան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Պոնենոս Արեւի մասնաճիւղի» եւ յայտարարուած է, որ Քիլօնէրեան այլեւ կապ չունի թերթին հետ, իսկ Շխրտըմեան ստանձնած է ժամանակաւոր խմբագրութիւնը⁷⁰: Արդարեւ, յաջորդ համարը (7 Ապրիլ) կը յայտնէր Մ. Օշինի (Միիրան Ուզունեան, 1893-1962) մօտալուտ ժամանումը՝ խմբագրութիւնը ստանձնելու համար⁷¹: Յարակարծօրէն, ասիկա *Արժէթինեան մամուլի* վերջին թիւն էր, որ փակուած է, ըստ Շխրտըմեանի, «տնտեսական դժուարութիւններ»ու պատճառով: Սակայն, նոյն յուշագրողը կը հաստատէ, որ տասը օր ետք՝ 17 Ապրիլին, Օշին թերթը վերահրատարակած է *Նոր երկիր* անունով⁷²: Բնականաբար, հարց կը ծագի, թէ որ-

⁶⁷ Պ. Մակինցեան, «Մի տարի Պոլսում», *Խորհրդային Հայաստան*, 16 Մարտ, 1924, էջ 2:

⁶⁸ Ստեփան Շխրտըմեան, «Արժանթինի անդրանիկ հայ մամուլը», *Նոր օր*, 18 Մարտ, 1969, էջ 3:

⁶⁹ *Արժէթինեան մամուլ*, 30 Դեկտեմբեր, 1923, էջ 1:

⁷⁰ *Արժէթինեան մամուլ*, 30 Մարտ, 1924, էջ 2:

⁷¹ *Արժէթինեան մամուլ*, 6 Ապրիլ, 1924, էջ 1: Օշին յիշում է իբրեւ *Արժէթինեան մամուլի* խմբագիր (Աէֆէրեան, «Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան պրօպագանտ», էջ 95), ինչ որ ըստ էութեան սխալ է:

⁷² Շխրտըմեան, «Արժանթինի», էջ 3: Դժբախտաբար, Վիեննայի Մխիթարեան վանք մեր այցելութեան (1995) *Նոր երկիրի* հոն գտնուող միակ օրինակը տրամադրելի չէր: Առաջին թիւը թուագրած ենք ըստ Հասասեանի հաղորդումին, որ ատենին 8 Մայիս 1924ի չորրորդ թիւը տեսած էր Շխրտըմեանի ձեռքը եւ թերթին հրատարակութիւնը թուագրած 1924 (Hassassian, “Panorama”, էջ 104): Լեւոնեան «1922(?)», 1924ից (նոր շրջան)» թուագրումը տուած էր (Լեւոնեան, էջ 121), իսկ երկու տարի ետք, *Հնչակի ցուցակը* նշած է «1922-1924» թուականները («Ցուցակ հնչակեան մամուլի», էջ 8): Պետրոսեան իրողութեան վերածած է Լեւոնեանի եւ *Հնչակի տեղեկութիւնները*՝ 1922-25 թուագրումով (Պետրոսեան, էջ

քանով հաաստի է տնտեսական դժարություններու պատճառաբանությունը, երբ գրեթե անմիջապես նոր պաշտօնաթերթ մը հրատարակ իջած էր:

Տասնօրեայ ժամանակամիջոցը եւ անունի փոփոխությունը կը թելադրեն, որ գաղափարական հերթական յեղաշրջումին բերումով, ձախակողմեան թելը վերադարձած էր թերթին գլուխը: Հայ մամուլի պատմաբանները կը յիշեն Քիւթնէրեանի անունը որպէս *Նոր երկիրի* խմբագիր՝ պատասխանատու խմբագիր Օշինի կողքին⁷³, կամ վերջինիս յաջորդ⁷⁴: Ներքին հակամարտութեան իրրեւ եզրայանգում, «դասակարգային գիտակցութեան հասած հնչակեան ընկերներ»ու խումբ մը կուսակցութիւնը լքելով, 1 Մայիս 1924ին՝ աշխատատրներու տնին առջիւ, Արժանթինի Կոմունիստական Կուսակցութեան Հայկական Հատուածին հիմը կը դնէր: Հրապարակային առաջին ձեռնարկին (28 Սեպտեմբեր) խօսք առած են երբեմնի *խորհրդային Հայաստանի* հրատարակութեան հետ կապուած անձերը՝ Եգեկիէեան, Պալանեան (որ բանախօսած է «Ինչու՞ դուրս եկանք Հնչակեան կուսակցութենէն» նիւթով) եւ Ա. Գրաճեան⁷⁵:

Ըստ Քիւթնէրեանի, որ 1925ի սկզբնատրութեան Ֆրանսա փոխադրուած է, Հայկական Հատուածը 50 անդամ ուներ, մեծաւ մասամբ՝ նախկին հնչակեաններ եւ 4-5 նախկին դաշնակցականներ: Ըստ իր պնդումներուն, «*Գաղութային Կեդրոնի վարչական ընտրութեան արքեւ մէկ ներկայացուցիչ կրցանք մտցնել վարչութեան մէջ, իսկ Ա. Դ. Հնչակեաններն ու Դաշնակցականները չի յաջողեցան ներկայացուցիչ ունենալ. այդ կուսակցութեանց սարըը կը խաարի րակաւ ու կարմիր սարըը կը փայլի հեպոհեպոհ անի ճաճանչագեղ, իր լոյսին մէջ առնելով աշխարատրու-*

379. ուսերէն ամփոփումը՝ «1922-1924»), որուն հետեւած են Գանգրունի, «Ա. Դ. Հնչակ.», էջ 398. նաեւ՝ Կիրակոսեան, էջ 144. նաեւ՝ Բաբոյեան, էջ 148. Խառատեան եւ այլք, էջ 459. նաեւ՝ Գանգրունի, *Յանուն*, էջ 190), ինչ որ պիտի ենթադրէր, որ *Արժէթիւնեան մամուլն* ու *Նոր երկիրը* լոյս տեսած են միաժամանակ: Սէֆէրեան սկիզբը տուած է 1923 թուագրումը (Պրպտող, «Տուցակ ինչ. Մամուլի», էջ 138), իսկ ապա՝ 1924-1925 (Սէֆէրեան, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան քարոզական», էջ 163. Նոյն, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան արօպականտ», էջ 95. հմմտ. Տէր Խաչատուրեան, *Սոցիալ Դեմոկրատ*, էջ 32):

⁷³ Լեւոնեան, էջ 121. նաեւ՝ Hassassian, "Panorama", էջ 104. նաեւ՝ Տէր Խաչատուրեան, *Սոցիալ Դեմոկրատ*, էջ 32:

⁷⁴ Սէֆէրեան, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան քարոզական», էջ 163. նաեւ՝ Պետրոսեան, էջ 379. նաեւ՝ Կիրակոսեան, էջ 144. նաեւ՝ Բաբոյեան, էջ 145:

⁷⁵ Ա. Չիլեան, «Պ. Արլէսի կոմքիջը», *Բանվոր-Պարիզ*, 1 Նոյեմբեր, 1924, էջ 3. նաեւ՝ Ա. Գ. Գրաճեան, «Նամակ Արժենթինայէն», *Պրովետար*, 25 Հոկտեմբեր, 1924, էջ 2: Պալանեան անլի ուշ յիշուած է իրրեւ Հատուածի հիմնադիրներէն մէկը (Ա. Կոհակ, «Նամակներ Արժանտինայէն», *Պրովետար*, 27 Յունիս, 1925, էջ 4):

թինը: (...) Դաշնակներն ու հնչակները րկար եւ րժգոյն մասնաճիւղեր ունին որոնք գաղղօփին մէջ համակրոփին չեն վայելեր»⁷⁶:

Օգոստոս 1924ին գրոած թղթակցոփին մը կը վկայէր հնչակեան երկպառակոփեան մասին Ալեքսանտրէթի *Ջարթօնք* շաբաթաթերթին մէջ:

Հաճընցիները՝ իրրե ժիրայրի հայրենակիցներ քիչ մը կեանք ցոյց են տոներ եւ այժմ ալ կու տան, սակայն հիմակ, անոնք ալ, երկուփի բաժնունլու վրայ են: Որովիտեու Հնչակեան կուակցոփեան Հիւս. Ամերիկայի մէջ ըրածը հոս եւս պատահեցաւ եւ հաճընցիները՝ որպէս Հնչակեան, անոր ազդեցոփեննէն զերծ չմնացին: Բանտորականներու միանալէն յետոյ բաժնուեցան, մէկ մասը մնաց հին Հնչակեան դրօշին տակ, իսկ միւս մասը կազմեց “Կոմիւնիստական” հատոած մը:

“Նոր երկիր” այս վերջիներուն օրկանն է⁷⁷:

Այս վերջին նկատողոփինը կը հաստատոփ այն իրողոփեամբ, որ 7 Սեպտեմբերին, հնչակեաններու ուրիշ խումբ մը կը խզեր իր կապերը կուսակցոփեան հետ, ինքզինք յայտարարելով Հայկական Հատոածի «Շահումեան» մասնաճիւղ, որուն քարտուղարը Օշինն էր⁷⁸:

Հոկտեմբեր 1924ին, Պոլսոյ *Առասօր* օրաթերթին թղթակից մը Պունեսու Այրեւի մամուլի շարքին յիշած է «համայնակար շաբաթաթերթ *Նոր երկիր*, տպագիր», որ «Կարմիր Ասոր, խմորատիպ» հրատարակոփեան հետ «համայնակար պայքար կը մղեն, բայց չափաոր է իրենց ուղղոփինը»⁷⁹: Դեկտեմբերին, ՀԲԸՄի Պունեսու Այրեւի մասնաճիւղի վարչոփինը որոշած է ՍԴՀԿի կողմէ վարժոած տառատեսակները ետ պահանջել, «քանի որ գորժածոփեան մէջ չեն»⁸⁰: Տառատեսակները վերադարժոած են Մարտ 1925ին⁸¹: Հաանաբար, այդ ժամանակ *Նոր երկիր* արդէն դադրած էր, թեւ պայմանները անժանօթ են:

Նոյնպէս Մարտ 1925ին, *Արժագանգ Փարիզի* շաբաթաթերթը կը հաղորդէր, ըստ Պունեսու Այրեւէն ստացոած նամակի մը, որ հնչակեան մասնաճիւղը վերակազմոած էր 25 անդամներով⁸²: Ի հեճուկս Ա. Կոհակի

⁷⁶ «Արժանթինի հայ գաղղօրը», *Բանվոր-Պարիզ*, 1 Փետրոար 1925, էջ 2-3:

⁷⁷ Թղթակից, «Տեղեկոփիններ Հար. Ամերիկայէն», *Ջարթօնք*, 20 Սեպտեմբեր 1924, էջ 8: Շտրիակալ ենք բանասէր Միիրան Մինասեանին այս յօղոածը տրամաղրելուն համար:

⁷⁸ «Մէկ ճակատ կարմիր դրօշին տակ. յայտարարոփին», *Պրոլետար*, 11 Հոկտեմբեր 1924, էջ 4:

⁷⁹ Միվս, «Հայերը Արժանթինի մէջ», *Առասօր*, 22 Նոյեմբեր 1924, էջ 2: *Նոր ասօր* կը շարունակէր լոյս տեսնել իրրե խմորատիպ երկշաբաթաթերթ Յունիս 1925ին (Ա. Կոհակ, «Արժենտինեան նամականի», *Պրոլետար*, 25 Յուլիս, 1925, էջ 4):

⁸⁰ *Արժանագրոփեան րոմար Հայկական Բարեգորժական Ընդհանոր Միոփեան*, 21 Դեկտեմբեր, 1924:

⁸¹ *Արժանագրոփեան րոմար Հայկական Բարեգորժական Ընդհանոր Միոփեան*, 8 Մարտ 1925:

⁸² «Մանր լուրեր», *Արժագանգ Փարիզի*, 8 Մարտ 1925, էջ 8:

յոխորտանքին երկու ամիս ետք, թե «հակառակ այն հանգամանքին որ ազգայնական հայ կուսակցությունները փարիներ առաջ կազմուած են այս երկրին մէջ, բայց բնաւ յառաջդիմութիւն ըրած չեն, օր ըստ օրէ քայքայման կ'ենթարկուին, աղղէն անոնցմէ Հնչակեանութիւնը գերեզման իջեցուցինք»⁸³, կուսակցութիւնը պիտի վերականգնէր ու տարածէր իր գործունէութիւնը թէ՛ Արժանքիին եւ թէ՛ դրացի երկիրներուն մէջ՝ դիմագրաւելով տազնապին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԵԼՔԸ (1930ԱՎԱՆՆԵՐ)

1938ին, Սէֆէրեան հետեւեալ պարբերութեամբ կը ներկայացնէր շրջանի ընթացիկ վիճակը՝ կուսակցութեան ակնոցով եւ սպասելի գոնաւորումով.

Վերջին տասնամեակին՝ Հարաւ. Ամերիկա հաստատուող հայ գաղութը, իր հասարակական եւ հայրենասիրական շարժումներով, կը քանայ իր պատուոյ տեղը գրաւել մեր գաղթաշխարհին մէջ: Այդ աշխատանքներուն մէջ՝ մեր Հնչակեան ընկերներուն վերապահուեցաւ [sic] քառական դժուար եւ պատուաբեր աշխատանքներ: Ի պատիւ Անոնց՝ պէտք է յայտարարել, Հնչակեան Մ[ասանայ]ճիւղերու եւ միութիւններու կողմ շղթան իր ցանցին մէջ առած է այդ գաղութը, եւ զայն կ'օգտագործէ հայ աշխատատրութեան շահուն եւ [սոցիալիզմի] Հայաստանի վերելքին: Ասոր մէկ գլխաւոր բաժին ունին [Ասիակ] Պարչեճեանը, [Սիմոն] Կակոսեանը, Ե. Կարմրակը [Երուանդ Մխիթարեան, 1903-74], Ս. Սուփասեանը, Յ. Մարկոսեանը, ինչպէս նաեւ հիմա Հնչակեան Մ[որթ] Տաճարէն հեռացած Սիլիը, [Ս.] Օշինը, Աբ[րահամ] Գրաճեանը, եայլն են.: Այս շրջաններուն մէջ Հնչակեան] ծանր պարտականութիւնը գլխաւորաբար կը տանին այս - Կիլիկեցի - Հնչակեանները, որոնք մեր երկրէն բաժնուեցան ասկէ 10-15 տարիներ առաջ⁸⁴:

Ա) Ուրուկոյա

Մոնթեվիտէոյի հնչակեան մասնաճիւղը հիմնուած է 1926ին Սեո թաղամասին մէջ, ուր սկզբնապէս կեդրոնացած էր համայնքը, իսկ 1950ականներուն փոխադրուած է, 1962 Նոյեմբերին հաստատուելով ներկայ կեդրոնատեղին⁸⁵: 1935ին, *Երիրասարդ Հայաստանի* եւ *Հնչակի* տեղւոյն

⁸³ Կոհակ, «Նամակներ Արժանտինայէն», էջ 4: Այդ ստորագրութեամբ գրքոյկ մը լոյս տեսած է ութը տարի ետք (Ա. Կոհակ, *Համայնարիւն-Ամերիկեան Գօնկրէսը ընդդէմ պապեղազմի, Մոնթեվիտէո. Հայ պարզամտորներու զեկոյցը*, տպ. «Երեւան», Պուենոս Այրէս, 1933, 18 էջ): Ա. Կոհակ, մեր նկարագրութեամբ, Ա. Գրաճեանի կեղծանունն էր:

⁸⁴ Միշէլիս, «Արտասահմանի», էջ 99: Բացի Պարչեճեանէն, միւս չորսը կը պատկանէին պրագիլահայ համայնքին: «Ալիք»ի ինքնութիւնը չկարողացանք պարզել:

⁸⁵ Տե՛ս «Entrevista al Sr. Yervant Ganemian», *Hay Endanik*, Agosto de 2001, էջ 15. Նաեւ՝ Ա. Ազեան, «Մոնթեվիտէոյի հնչակեան ակումբին բացման հանդէսը», *Երիրասարդ Հայաստան*, 29 Մարտ 1963, էջ 3: 1931ին, մասնաճիւղը կը ստա-

գործակալ Յովսէփ Կէտիկեանին ուղղած *Երիտասարդ Հայաստանի* պատասխանը կ'արձանագրէր, թէ «օրինակելի է ձեր մասնաճիւղին կուսակցավայել դիրքը»⁸⁶:

Տպագիր մամուլը երբեք հարկ եղած ներկայութիւնը եւ յարատեւութիւնը ունեցած չէ Ուրուկոյայի հայ համայնքին մէջ, որ իր գրատըր սնունդը ստացած է արժանութիւնահայ մամուլէն: Անոր առօրեայ լրատուական աղբիւրը եղած են ծայնասփիտի կայանները, որոնք պատկանած են գաղափարական հակառակ ուղղութիւններու, հրահրելով կուսակցական պայքարը երկար տասնամեակներ: 15 Յունիս 1935ին, հնչակեան շարքային Յարութիւն Ռուբէնեան (1910-93) հիմնած է «Ռատիօ Արմենիա»-ն՝ Ուրուկոյայի առաջին հայկական ռատիօժամը, կուսակցութեան համակիր Յովհաննէս Աթէշեանի հետ⁸⁷: Ռատիօժամը եղած է անհատական նախաձեռնութիւն մը, որուն միակ վարիչը յետագային Ռուբէնեանը դարձած է: 1947ին, կը սփռուէր շաբաթական չորս օր, ութը ժամ⁸⁸: Զանազան կայաններ փոխելէ ետք, 1957ին, Ռուբէնեան գնած է «Ինտելիտենտեսիա» ռատիօկայանը եւ այնուհետեւ ամէնօրեայ դարձած ռատիօժամը վարած մինչեւ մահը: Այնուհետեւ, գործը շարունակած է այրին՝ Արաքսի Ռուբէնեան, մինչեւ ռատիօժամին փակումը Յովիս 2007ին⁸⁹:

Նաւր *Երիտասարդ Հայաստանի* իւրաքանչիւր թիւէն 45 օրինակ («Նամակատուի», *Երիտասարդ Հայաստան*, 10 Յունուար 1931, էջ 4):

⁸⁶ «Նամակատուի», *Երիտասարդ Հայաստան*, 13 Ապրիլ 1935, էջ 3:

⁸⁷ Հմմտ. Ե. Նայիրեան, «Հեռաւոր ընկերոջ մը նամակը», *Երիտասարդ Հայաստան*, 19 Սեպտեմբեր 1936, էջ 1 (Ե. Նայիրեան հնչակեան գործիչ Սիրվարդի (Եղիա Գրիգորեան) մէկ ուրիշ ծածկանունն էր): Ռատիօժամի հիմնադրութիւնը վերագրուած է հնչակեան Հայ Ուսանողական Միութեան (Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 280): Սակայն, Միութիւնը հիմնուած էր 1938ին:

⁸⁸ «Տեսակցութիւն մը Ուրուկոյայի պատմագաւոր սօքք», Սկրտիչ Տըր Յակոբեանի հետ», *Լրաբեր*, 29 Մայիս 1947, էջ 1:

⁸⁹ «Ռատիօ Արմենիա»-յի գործունէութեան գայթակղութեան քար եղած է թրջական երաժշտութեան սփումը, որ համայնքի թրջախօս հատուածին կողմէ բնական նկատուած է, քայք բողոքովին անընդունելի՝ հայախօսներու համար, գաղափարական հակամարտութեան բաղադրիչներէն մէկը դառնալով: 1963ին, Պունտո Այրէսի *Ներկայ*՝ ամսաթերթը (անկախ) կը թելադրէր Ռուբէնեանին, «որ հետզհետէ աւելի պակսեցնէ իր ունկնդիրներէն ոմանք պահանջած արեւելեան, թրջական երաժշտութեան ծայնասփումները, որպէսզի նորերուն մէջ աւելի տեղ մտայ հայրենի երաժշտութեան եւ Մեծասրանչին, որ մաս մը տարեցներու շատ ընտանի չէ, իբր հետեանք մեր ժողովուրդին պարտադրուած քարքարոս ճշումներու» («Ռատիօ Արմենիայի 28ամեակը», *Ներկայ*, Յունիս 1963, էջ 35): Երկու տարի ետք, 30ամեակին առիթով տեղեկագրութեան մէջ, ռատիօժամը, «քացատրելէ ետք «Արեւելեան Բաժնի» մը ստեղծման պատճառները, կը յայտարարէր դադրեցումը թրջերէն երգերու ծայնասփումը Մարտ 16էն սկսեալ» («Ռատիօ Արմենիա»-յի 30ամեակը», *Ներկայ*, Օգոստոս-Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1965, էջ 47):

Հարաային Ամերիկայի Ա. Պատգամաւորական ժողովէն ետք, Օգոստոս 1936ին, Կարմրակ այցելած է Մոնթեվիտո, կուսակցութեան Կեդր. Վարչութեան առժամեայ ներկայացուցիչի հանգամանքով: Քսանթրեայ կեցութեան հետեանք «երեք արանց եւ երկու կանանց նոր մասնաճիւղերու կազմութիւնը, իւրաքանչիւրը 30-40 ընկեր-ընկերուհիներով, եւ արդէն գոյութիւն ունեցող փասնեակ մը մասնաճիւղերու յաւելումը անբեկանելի ապացոյցը կարող էք նկատել Հնչակեան գաղափարաբանութեան նոստումներուն», կը գրէր թղթակից մը: Ըստ նոյն գրողին, Կարմրակի երեք բանախօսութիւնները «Ռատիօ Արմենիա»էն հայկական, միջազգային եւ հնչակեան գործունէութեան շուրջ աղթած էին հանրային հետաքրքրութիւնը, պատճառ դառնալով, որ քսան կախաղաններու ոգեկոչումը տեղի ունենար 16 Օգոստոսին, 2000 հոգի ներկայութեամբ (համայնքի ընդհանուր թիւին կէսը), մինչ 500 հոգի ստիպուած էր դուրս մնալ տեղի չգոյութեան պատճառով⁹⁰:

Կուսակցութեան կից, 1938ին հիմնուած է Հայ Ուսանողական Միութիւնը, որ 30 անդամ ունէր 1943ին: Առանձին երիտասարդական բաժին մը կանանց (1939) եւ արանց (1942) ճիւղեր ունեցած է՝ 75 անդամ հաշուելով 1943ին⁹¹: Կուսակցութեան պաշտօնական բանաւոր մամուլը եղած է «Հայ Գաղութի Ձայն» ռատիօժամը, որ հիմնուած է Նոյեմբեր 1938ին եւ ղեկ կը գործէր 1943ին⁹², բայց արդէն դադրած էր մինչեւ 1947⁹³: 1937-39ին, նո-

Ըստ մեր ունեցած տեղեկութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. անձնապէս միջամտած է (Ձեռնարկ Մատթէոսեան, անձնական հաղորդում, 1985): Դիտորդի մը խօսքով, «այդ տարիներուն, առանց սահմանափակումի ծայնասփռումներ կային՝ հայկական, թրքական, արաբական եւ յունական երաժշտութեամբ: Օրուան հայերը ազատօրէն կը փորձարկէին իրենց ժողովուրդի խաչատերուած (hybrid) անցեալը Կիլիկիոյ մէջ: Սակայն, եկեղեցական իշխանութիւնները խնդրեցին, որ միայն հայկական երաժշտութիւն սփռուէր, թէև ռատիօկայանի ունկնդիրներէն շատերը լեզուն լաւ չէին հասկնար: Ունկնդիրները անպայման գոհ չէին, րայց ափիկա կանտոն դարձաւ, տրուած ըլլալով համայնքի նովորապետական կառոյցը» (E. Alvarez, *Los recién llegados*, անտիպ ձեռագիր, Մոնթեվիտո, 1998, էջ 15, մէջբերումը տե՛ս՝ Felipe Arocena and Adriana Topalian, "Young Armenian-Uruguayans: Identity and Participation in the Community", *Journal of the Society for Armenian Studies*, 2010:19(1), էջ 109): Առաջին տարիներուն ռատիօժամը նաեւ ծայնասփռած է թրքերէն քարոզներ (Carlos Hassassian, "The Armenian Community in Uruguay", *Ararat*, Autumn 1984, էջ 73), ինչ որ տարօրինակ չէր, նկատի ունենալով թրքախօսութեան զգալի տարածումը մեծաւ մասամբ կիլիկեան ծագումով, յատկապէս մարաշցի համայնքին մէջ:

⁹⁰ Նայիրեան, «Հեռուոր ընկերոց մը», էջ 1:

⁹¹ Արծրունի, էջ 290:

⁹² Նոյն, էջ 276: Կիտորի խմբագրած պատմագիրքին մէջ հետքը չկայ «Ռատիօ Արմենիա»ի գոյութեան: Յիշուած է միայն «Հայ գաղութային ձայն»ի հիմնադրու-

րաստեղծ Ուրուկուահայ Թեմի Կեդրոնական Վարչական Խորհուրդը կը գտնուէր հնչակեան հակակշռի տակ, ատենապետութեամբ Ն. Խուլմունեանի եւ մասնաճիւղի հիմնադիրներէն Նշան Չեքմէեանի⁹⁴:

1932ին կուսակցութիւնը հիմնած էր «Հայկազեան» դպրոցը⁹⁵, որ 1942ին կը գտնուէր թեմի Կեդրոնական Վարչական Խորհուրդի հովանաւորութեան տակ եւ 65 աշակերտ ունէր⁹⁶:

Բ) Պրագիլ

1911ին կը յիշուի *Երիտասարդ Հայաստանի* քանի մը բաժանորդներու գոյութիւնը, սակայն հնչակեան կազմակերպական ներկայութիւնը Պրագիլի մէջ սկսած է 1928ին՝ Սան Փապոյի մասնաճիւղի հիմնադրութեամբ 40 անդամներով, որ իր պաշտօնական առաջին ձեռնարկը ունեցած է Յուլիս 1929ին: Ինը հիմնադիրներուն մէջ մեծամասնութիւն էին կիլիկեցիները (չորս հաճընցի եւ երկու մարաշցի)⁹⁷: Ապրիլ 1930ին հիմնուած է «Վանիկ» Ուսանողական Միութիւնը, ուր հասարակած են կուսակցութեան երիտասարդ տարրերը⁹⁸: Սակայն, ինչպէս վկայած է պրագիլահայ համայնքի վաղ շրջանի պատմաբաններէն Եզնիկ քիւլ, Վարդանեանը, «Իրականութեան մէջ “Ուսանողական Միութիւն” անունը այնքան ալ պատշաճ չէր երիտասարդներու այս խումբին, որուն մէջ մէկ հատիկ ուսանող չկար»⁹⁹:

Հնչակեան երկրորդ մասնաճիւղը հիմնուած է Սան Փապօ նահանգի Լինս քաղաքին մէջ (աւելի քան 400 քիլոմէթր Սան Փապօ քաղաքէն), Յուլիս 1929ին, եւ աշխուժ գործունէութիւն ունեցած է մինչեւ 1934ի վերջերը,

թիւնը, իբրեւ թէ 1935ին, «որուն ղեկավարութիւնը կը գտնուէր Տէր Գրիգորեանի, Խուլմունեանի եւ Ռուբէնեանի ձեռքը» (Կիտուր, էջ 246):

⁹³ «Տեսակցութիւն մը Ուրուկուայի», էջ 1:

⁹⁴ Նշան Պատանեան, «Պատմութիւն գրողներ», *Արմենիա*, 3 Սեպտեմբեր 1965, էջ 2:

⁹⁵ Գանգրունի, *Յանուն*, էջ 159: Համարուած է համայնքի առաջին դպրոցը (Կիտուր, էջ 247), ինչ որ ճիշտ չէ, քանի որ 1931ին հիմնուած էր «Մամիկոնեան» վարժարանը 135 աշակերտով, իսկ 1932ին՝ «Մեսրոպեան» (77 աշակերտ) եւ «Աբգարեան» (44 աշակերտ) (Ն.Ա Մուսայար Ահարոնեան), «Մոնթելիտոյի հայ գաղութի դպրոցական գործերը», *Արմենիա*, 18 Յունիս 1932, էջ 1):

⁹⁶ Արծրունի, էջ 270:

⁹⁷ Սեան, «Պրագիլի հնչակեանները», *Երիտասարդ Հայաստան*, 21 Սեպտեմբեր 1929, էջ 4: Մարտ 1929ին, *Երիտասարդ Հայաստանի* խմբագրութիւնը արձանագրած է 104,39 տոլարի ստացումը ի նպաստ թերթի ֆոնտին, անցնելով «Մեզ տեղեակ պահեցէր Պրագիլիոյ Հայ գաղութին [մասին]: Իրապէս հպարտ ենք ձեր գործնութեան [sic] համար» («Երիտասարդ Հայաստան»-ի պատասխանները», *Երիտասարդ Հայաստան*, 23 Մարտ 1929, էջ 3):

⁹⁸ Կիտուր, էջ 222-23:

⁹⁹ Վարդանեան, էջ 247:

երբ անդամներու տեղափոխումով սկսած է կազմալուծուիլ¹⁰⁰։ Այս մասնաճիւղը ունեցած է «Քանուոր» անունով թատերախումբ մը¹⁰¹։

1930ին բացուած է Սան Փաւլոյի «Սապահ-Գիլեան» ակումբը¹⁰²։ Մասնաճիւղը աշխուժ գործունէութիւն ունեցած է մինչեւ նոյն տարուան վերջատրութեան, երբ կարգ մը տարրերու արտասահման եւ ներքին գաւառներ մեկնումը, ինչպէս եւ երեք անդամներու կողմէ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի մասնաճիւղի մը կազմութեան յայտարարութիւնը բաական տկարացուցած են զայն¹⁰³։

Ապրիլ 1931ի ընդհանուր ժողովէն ետք տեղի ունեցած է վերաշխուժացման շրջան մը թէ՛ մասնաճիւղին եւ թէ՛ Ուսանողական Միութեան նոր վարչութիւններու ընտրութեամբ։ Վերջինս պետական ճանաչում հետպնդած ու Մայիս 1932ին ռատիկանութեան կողմէ վաւերացում ստացած է¹⁰⁴։ Նոյեմբերին, Ուսանողական Միութիւնը գնած է պրագիլահայ առաջին պարբերաթերթի՝ արդէն քայքայուած Հայ Երիտասարդաց Երկսեռ Միութեան (անկուսակցական) *Եռանդ* ամսաթերթի (1928-31) խմորատիպ մեքենան, ու հիմնած՝ *Կայծ* խմորատիպ ամսաթերթը, որ դարձած է համայնքի երկրորդ պարբերականը։ Առաջին թիւը լոյս տեսած է Յունուար 1933ին, 20 էջով եւ 300 օրինակով։ Խմբագրական կազմի անդամները եղած են Յակոբ Ազատեան, Մ. Մարտիրոսեան եւ Կարմրակ¹⁰⁵։

Այս վերաշխուժացումին զուգահեռ, 1931ին հիմնուած են նոր մասնաճիւղեր՝ Արասարթուպա եւ Քամփո Կրենտի քաղաքներուն մէջ, եւ խումբեր՝ Ռիօ տէ ժանէրօ, Սանթոս եւ Կարսա քաղաքներուն մէջ։ 1933ին վերաբացուած է «Սապահ-Գիլեան» ակումբը Սան Փաւլոյի մէջ¹⁰⁶։

¹⁰⁰ Կիտուր, էջ 223։ Նոյեմբերին տպուած նամակ մը հաղորդած է մասնաճիւղին կազմութիւնը 16 անդամներով (Ե. Կարմրուկ, «Նամակներ», *Երիտասարդ Հայաստան*, 2 Նոյեմբեր 1929, էջ 1), ինչ որ ենթադրել կու տայ, որ կրնայ աւելի ուշ կազմուած ըլլալ։ (Վաղ շրջանին, Ե. Մխիթարեան ստորագրած է Ե. Կարմրուկ՝ Ե. Կարմրակ կեղծանունը որդեգրելէ առաջ)։

¹⁰¹ Կարմաստորը, «Հնչակեան քառասնամեակը Լիւնսի (Պրագիլ) մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 29 Նոյեմբեր 1930, էջ 3։ Թերեա՛ Լիւնս ապրող Մխիթարեանի կեղծանուններէն մէկ ուրիշը։

¹⁰² Գառնիկ, «Հնչակեան կեանքը Պրագիլի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 12 Յուլիս 1930, էջ 3։

¹⁰³ Կիտուր, էջ 223։

¹⁰⁴ Տե՛ս «Ս. Փաւլոյի Ս. Դ. Հնչակեան Ուսանողական Միութեան վաւերացումը», *Երիտասարդ Հայաստան*, 9 Յուլիս 1932, էջ 3։

¹⁰⁵ «Կայծ» ամսագիր», *Երիտասարդ Հայաստան*, 15 Ապրիլ, 1933 էջ 3. Վարդանեան, էջ 247-49։ Սխալ է այն հաղորդումը, թէ թերթը հիմնուած է Նոյեմբեր 1931ին եւ առաջին թիւը հրատարակուած՝ Դեկտեմբերին (Կիտուր, էջ 226)։ Սկզբնապէս ընդունել էտք (Տէր Խաչատուրեան, *Հայ մամուլի*, էջ 19), Տէր Խաչատուրեան մերժած է այս տեղեկութիւնը (նոյն, *Սոցիալ Դեմոկրատ*, էջ 27)։

¹⁰⁶ Կիտուր, էջ 226։

Կուսակցության աճը եւ տարբեր մասնաճիւղերու հիմնադրութիւնը պատճառ եղած են, որ Մարտ 1934ին գումարուի Պրագիլի շրջանի Ա. Պատգամատրական Ժողովը, որուն գլխաւոր որոշումները եղած են Կայծը տպագիր պաշտօնաթերթի վերածել եւ դպրոց մը բանալ¹⁰⁷: Յունուար 1935ին, իր երրորդ տարին սկսելով, Կայծի խմբագրականը կ'ընդգծէր, թէ «սակայն չենք կարող լուս անցնիլ իրողութիւնէ մը, որ այնքան շեշտուած ի յայտ եկաւ անցեալ փարայ ընթացքին, եւ որը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ ընթերցողներու, բաժանորդներու զգալի աճումը. նոյնպէս աշխատակիցներու եւ թղթակիցներու հսկայ ցանց մը երկարաւ [sic] մինչեւ երրոպա եւ ասոր կենդանի փաստը այն է որ անցեալ փարայ ընթացքին ոչ մի արտապայում ըրինք ուրիշ թերթերէ»¹⁰⁸: Սակայն, որեւէ ակնարկութիւն չկար տպագրութեան որոշումին մասին, որ ըստ երեւոյթին մնացած է չուղթի վրայ, եւ Բ. Պատգամատրականը զայն կրկնած է Մարտ 1935ին: Ապրիլին, Կարմրակ Սան Փապոյէն կը հաղորդէր, թէ «*տեղոյս կուսակցական աշխատանքը մեծ թափով առաջ կը փարոփ եւ օրէ օր կ'ընդարձակուի մեր գործունէութեան դաշտը*», եւ թէ «*հակառակ ՀՕԿ-ի եւ դաշնակ մեքենայութեանց*», կուսակցութիւնը կազմած էր Շինարարական Մարմին մը: Նամակագիրը կ'աւելցնէր, թէ «*շրջանիս Բ. պարգ. Ժողովը դարձեալ անցաւ կարտաբալ յաջողութեամբ եւ մեծ խանդավառութեամբ*», ու հարց կու տար, թէ «*ի՞նչ դրութեան մէջ կը գտնուի տառերու Կայծի առաքման հարցը*»¹⁰⁹: Տառերը հասած են Մայիսի սկիզբին, կը յայտնէր Պրագիլի Գործադիր Մարմինը, անելցնելով, թէ Կայծը պիտի դառնար շրջանի օրկանը, իսկ յետագային, երբ տեղի ունենար Հարաային Ամերիկայի մասնաճիւղերու պատգամատրական Ժողովը, կրնար վերածուիլ ամբողջ շրջանի պաշտօնաթերթին¹¹⁰: Խմորատիպ ամսագրին 25րդ ու վերջին թիւը լոյս տեսած է Ապրիլին, իսկ տպագիր ամսագիրը սկսած է հրատարակուիլ 23 Օգոստոսին¹¹¹, դառնալով օրինակ մը «*Պրագիլոյ Հնչակեան ընկերներու ուժով կամբին, դասակարգային գիտակցութեան եւ անկուս կորովին*»¹¹²:

¹⁰⁷ Նոյն:

¹⁰⁸ «Կենդանի ուժը. “Կայծ”ի Բ. տարեդարձի առթիւ» (խմբագրական), Կայծ, Յունուար 1935, էջ 2:

¹⁰⁹ Երուանդ Մխիթարեան, «Նամակ Պրագիլիայէն», Երիտասարդ Հայաստան, 1 Մայիս 1935, էջ 3:

¹¹⁰ «“Կայծ”ի տառերը հասած», Երիտասարդ Հայաստան, 8 Յունիս, 1935 էջ 1:

¹¹¹ Կիտուր, էջ 226:

¹¹² «“Կայծ”», Երիտասարդ Հայաստան, 18 Սեպտեմբեր 1935, էջ 4, ուր յանձնարարուած է տարածումը կուսակցական ակումբներուն, թերթի գործակալներուն եւ մասնաճիւղերու վարչութիւններուն:

Կայծի հրատարակիչը Պետրոս Նազարեանն էր, իսկ խմբագիրը՝ Կարմրակը, 1000 տպաքանակով¹¹³:

«Կիլիկիա» վարժարանը բացուած է Սան Փաւլոյի մէջ, Հոկտեմբեր 1935ին: Առժամայ տնօրէնը եղած է Կարմրակ, որուն յաջորդած է Յ. Գալայճեան: Ունեցած է թէ՛ հայկական եւ թէ՛ պրագիլական բաժին: Զայն պաշտօնապէս վարած է Ոսանողական Միութեան հովանիին տակ կազմուած Ոսանական Ընկերութիւնը: Ըստ Կիտորի, դպրոցը փակուած է Յուլիս 1936ին¹¹⁴, սակայն Յունիս 1937ին, հնչակեան 20 կախաղաններու ոգեկոչման կազմակերպիչներէն մէկն էր, ու ձեռնարկը տեղի ունեցած է դպրոցի սրահին մէջ¹¹⁵: Վարդանեան գրած է, թէ «այդ դպրոցը հազիւ երեք փարոսայ կեանք կ'ունենայ եւ կը փակուի նիւթական եւ պեղական սեղմումներու պայքանով»¹¹⁶:

Ան նաեւ յիշած է «Արարատ» Մարզական Միութիւնը՝ հազիւ երկու տարուան կեանքով, «Վանիկ» Թատերախումբը, որուն գոյութիւնը տեսած է մինչեւ 1937ի վերջերը, «Արշալոյս» Երիտասարդական Միութիւնը (երկսեռ) եւ Խորհրդային Հայաստանի Վերաշինութեան Յանձնախումբը, որ գործած է 1935-1936¹¹⁷:

Հնչակեան շարքային մը՝ Անդրանիկ Պոտաքեան, հայկական առաջին փորթովակերէն թերթը հրատարակած է 1934-35ին, *O Dominante* անունով, որ նոփրուած էր հայ եւ պրագիլեան մշակոյթներու տարածման¹¹⁸:

ՍԴՀԿի Ամերիկայի Շրջանի 31րդ Պատգ. Ժողովին որոշումով (1918), Ամերիկեան բաժնուած էր հինգ Գործադիրային Շրջաններու, իսկ Քալիֆորնիան ու Հարաւային Ամերիկեան առժամաբար կապուած կը մնային Ամերիկայի Շրջանայի Կեդրոնական Վարիչ Մարմնին հետ¹¹⁹: 1930ականներուն, Հարաւային Ամերիկայի աճող կարեւորութիւնը պատճառ կը դառնար, որ Հայ Եկեղեցին ու կուսակցութիւնները ձեռնարկէին իրենց տեղական կազմակերպութիւնները անջատել Հիւսիսային Ամերիկայի վարչական հակակշիռէն: Այսպէս է, որ Օգոստոս 1934ին, Մարսելլի մէջ գումար-

¹¹³ Վարդանեան, էջ 250: 1937ին, թերթը ծանուցուած է իբրեւ «շարաթաթերթ Ս. Դ. Հնչակեան Հ[արաւային] Ամերիկայի շրջանին» (տե՛ս՝ *Երիւրասարդ Հայաստան*, 13 Յունուար 1937, էջ 4):

¹¹⁴ Կիտոր, էջ 227-28, 230:

¹¹⁵ Վ. Վարդունի, «Պրագիլեան նամականի», *Երիւրասարդ Հայաստան*, 31 Յուլիս 1937, էջ 3:

¹¹⁶ Վարդանեան, էջ 246:

¹¹⁷ Նոյն, էջ 246-247. նաեւ՝ Կիտոր, էջ 228, ուր մարզական միութիւնը յիշուած է «Արարատ» անունով:

¹¹⁸ Միհրան Մինասեան, «Հայ պարբերական մամուլի 33 նորայայտ անուններ», *Հայկագեան հայագիտական հանդէս, հապորդ ԻԱ*, 2001, էջ 359:

¹¹⁹ «Պաշտօնական», *Երիւրասարդ Հայաստան*, 24 Ապրիլ 1918, էջ 379:

ուած ՍՂՀԿ Թ. Ընդհանուր Պատգամատրական Ժողովը որոշած է ստեղծել Հարաային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը¹²⁰:

28-29 Փետրուար 1936ին, Սան Փաւլոյի մէջ գումարուած է Պրագիլի շրջանի Գ. Պատգամատրական Ժողովը՝ չորս մասնաճիւղերու (Սան Փաւլօ, Լինս, Արասաթուպա, Քամփօ Կրենտի) մասնակցութեամբ, որուն վարչոյթային, կը գրուէր, «չկայ նպարակ մը այնքան անհրաժեշտ եւ փութով իրականացնելիք, որքան՝ Կայծը շարաթաթերթի վերածելու հարցը»¹²¹: Կիտուր հրատարակած է այս ժողովին ատենագրութիւնը, որուն կարգ մը կէտերուն քննարկումը որոշ գաղափար կու տայ տեղւոյն կուսակցական գործունէութեան, ինչպէս եւ անոր ցոլացումին ընդհանուր հարաամերիկեան իրավիճակին մասին:

Այսպէս, Կարմրակ տուած է գրատր զեկուցում Գործադիր Մարմնին կողմէ, որմէ ժողովը քաղած է, որ «կարգ մը արդարանալի թերութիւններով ու հակառակ ընկերներու ոմանց անկարգապահութեան ու այլ դժուարութիւններու, կրցած է կուսակցական միասնականութիւնը պահել ու յառաջացնել պարտաբեր աշխատանք, ինչպէս եւ շուրջ 70 աշակերտով կրթական հասարակութիւն»: Որոշուած է, որ մասնաճիւղերու վարչութիւնները աշխուրջ հետեւին կարգապահութեան պահպանման, պաշտօն տալով Գործադիրին, որ կուսակցական աշխատանքը կեդրոնացնէ եւ «թոյլ չտայ, որ մասնաճիւղերը՝ առանց իր ցուցմունքներուն, նոյնանման պարագաներուն ինքնագլուխ քայլեր առնեն»¹²²:

ՀՕԿի վերաբերմունքը փոխուած էր 1935-36ին, եւ Գ. Պատգամատրական Ժողովը, նկատի ունենալով, որ «հս. Հայաստանի բարեկամ կազմակերպութեան մօտ բոտն ցանկութիւն կայ համագործակցութեան ու համերաշխութեան», որուն կ'արձագանգէին հնչակեան շարքերը, մեծամասնութեամբ որոշած է, շինիչ քննադատութիւն վերապահելով հանդերձ, «թելադրել մեր մամուլին, գործիչ եւ բեմախօս ընկերներուն, մասնաճիւղի վարչութեան, որ դարձրեցնէ ամէն ձեւի պայքար սոյն կազմակերպութեան դէմ ու հարցի արմատական լուծումը փանիլ Հարաային Ամերիկայի շրջանային Ժողովին»: Պրագիլի մէջ գումարուած այս Պատգամատրական Ժողովը հարաամերիկեան շրջանային Ժողովին կազմակերպումը դրած է Գործադիր Մարմնին վրայ դրած է հարաամերիկեան շրջանային Ժողովին կազմակերպումը Յունիս 1936, որուն որոշում է տանիլ թէ՛ Կայծի նոր խմբագրի եւ թէ՛ Հարաային Ամերիկայի համար արտասահմանէն գործիչ բերելու հարցերը¹²³:

¹²⁰ "Así nació Sharyum", էջ 4:

¹²¹ «Պրագիլիոյ երրորդ պատգամատրական Ժողովը», *Երիզասարդ Հայաստան*, 15 Ապրիլ 1936, էջ 2:

¹²² Կիտուր, էջ 230:

¹²³ Նոյն, էջ 230-31:

Մայիս 1936ին, Ե. Նայիրեան անդրադարձած է Հարաային Ամերիկայի երիտասարդական թեմի գործունեության, շեշտելով, որ «Հարաային Ամերիկայի Հնչակեանությունը հազիս երեք տարի է որ Հնչակեանության Ընդանիքին պաշտօնական մէկ անդամը դարձած է, բայց այդ կարճ ժամանակամիջոցն իսկ բաական եղած է որ անիկա յայտնաբերէ գործունեութիւն մը կորովապիւնդ ու հայրենաշէն, որ պարծանք մըն է մեր Կուսակցութեան»: Հասանաբար կ'ակնարկէր, այն իրողութեան, որ Հարաային Ամերիկան 1934ին առանձին կուսակցական միատրի կարգավիճակ ստացած էր, անեցնելով, որ շարքերը «այս օրերս զոհողութեան մեծագոյնին նուիրուած են սիրայօժար՝ Կեդրոնի հրահանգով իրականութիւն դարձնելու Հարաային Ամերիկայի բովանդակ Հնչակեան Մասնաճիւղերու Ընդհանուր Ժողովին գումարումը, որ անպարակուսելիօրէն պիտի գայ անիկի տարածելու, ընդլայնելու Հնչակեան շրջանը, որ տարածումն է Հայաստանի հմայքին»¹²⁴:

Արդարեւ, Յուլիս 1936ին, Պունենու Այրէսի մէջ գումարուած է Հարաային Ամերիկայի շրջանի Ա. Պատգամատրական Ժողովը, ուր «կարեւոր օրակարգերը լուծուեցան միաձայն եւ շատ արդիւնատր»: Ժողովը որոշած է Կայծը Պունենու Այրէս փոխադրել եւ շաբաթաթերթի վերածել¹²⁵: Ըստ երեւոյթին, որոշումը յետաձգուած է մէկ տարիով, թէեւ Կայծի վերջին թիւերը լոյս տեսած են շաբաթական դրութեամբ, դատելով թերթի առաջին էջի մէկ լուսանկարէն¹²⁶: Արդարեւ, ըստ Վարդանեանի, 15 Մայիս 1937ին, 22 թիւ լոյս ընծայել է ետք. Կայծը «վերջնականապէս կը դադրի, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Պունենու Այրէսի մէջ գումարուած ընդհանուր ժողովի որոշումով, վերահրապարակուելու համար Պունենու Այրէսի մէջ, այս անգամ ճարժում անուելով, որպէս պաշտօնական օրկան Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Հարաային Ամերիկայի մասնաճիւղերուն»¹²⁷: Կիտուր հաստատած է, որ Հարաային Ամերիկայի Բ. Պատգամատրական Ժողովը բանաձեւ վաւերացուցած է 19 Մայիս 1937ին, առաջադրելով ճարժումի

¹²⁴ Ե. Նայիրեան, «Հարա. Ամերիկայի հնչակեան երիտասարդութիւնը», *Երիտասարդ Հայաստան*, 2 Մայիս 1936, էջ 1:

¹²⁵ Արք. Յ. Էօմէզ, «Հնչակեան կեանքը Հար. Ամերիկայի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 19 Օգոստոս 1936, էջ 4. նաեւ՝ Բանտր-Մաժակ, «Հնչակեան մեծ եռուզեղը Հար. Ամերիկայի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 22 Օգոստոս 1936, էջ 2-3: Ճարժումի 1983ի սպաներէն խմբագրականը պնդած է, որ այս ժողովը որոշած է Կայծը պահել Սան Փաւլոյի մէջ եւ տեղական պաշտօնաթերթեր հրատարակել Պունենու Այրէսի եւ Մոնթելվիտոյի մէջ, ինչ որ չենք կրցած հաստատել որեւէ այլ աղբիւրով («Así nació Sharyum.» էջ 4):

¹²⁶ Վարդանեան, էջ 251:

¹²⁷ Նոյն, էջ 250: Հասանաբար հետեւելով այս աղբիւրին, փակումը նաեւ թուագրուած է Յունիս 1937 (Yessai O. Keroujian, "Armenians in Brazil", *Ararat, Autumn* 1984, էջ 59):

հրատարակությունը¹²⁸։ Սակայն, կը թուփ, թէ Կայծի հրատարակությունը դադրած չէր։ Յունիս 1937ին Սան Փապոյի մէջ տեղի ունեցած քսան կախաղաններու ոգեկոչումը կազմակերպուած էր Պրագիլի Գործադիր Մարմնին եւ Կայծի խմբագրութեան կողմէ¹²⁹։

1930ականներուն, մինչ հնչակեանները կը փորձէին ամրապնդել իրենց դիրքերը, Պրագիլի քաղաքական պայմանները կը վատթարանային։ Ժեթուլիօ Վարկաս՝ ժամանակաւոր նախագահ 1930ի յեղափոխութենէն ետք, յաղթանակած էր 1934ի նախագահական ընտրութիւններուն։ 1935ի համայնավար ապստամբութեան ճախողութիւնը արդէն մենատիրական հակումներ ցոյց տուող Վարկասին առիթ ընծայած է խորհրդարանի միջոցով եւ շարունակական կերպով երկարամեջելու պաշարման վիճակը՝ քաղաքացիական իրաւունքները առկախելով, ընդդիմութիւնը բանտարկելով եւ կառավարութեան արտակարգ իրաստութիւններ ընծայելով։ Ահա թէ ինչու Յուլիս 1937ին Վ. Վարդունի կ'ընդգծէր, առանց մանրամասնելու, թէ «գաղութիս Հնչակեան կեանքը այս փրփի բաական թոյլ շրջան մը բռնորոց, եւ այս՝ իր կամքէն բոլորովին անկախ պայքաններով», սակայն անեցնելով, որ «Յունիսին գոմարտող շրջանային արքայակարգ պայքամ. ժողովը բոլորովին նոր ծրագրով իր ուժերը պրկելէ ետք, կրրուկ որոշումներ կայացուց Հնչակեան աշխարհանքի ուժատրման համար»¹³⁰։

Հաւանաբար նոյն հեղինակն էր, այս անգամ Կ. Ա. Վարդունի ստորագրութեամբ, որ իր յաջորդ՝ քառաբաժին թղթակցութիւնը հրատարակած է Նոյեմբեր-Դեկտեմբեր 1937ին, առաջին բաժնին մէջ ընդարձակ ակնարկ մը նետելով քաղաքական կացութեան¹³¹։ Ինչպէս կը գրէր *Երիտասարդ Հայաստանի* խմբագրութիւնը, այս թղթակցութիւնը հասած էր Վարկասի պետական հարրածէն ետք (10 Նոյեմբեր 1937), որ իմը դրած էր մենատիրական Estado Novo («Նոր պետութիւն») վարչակարգին (1937-45), «արեւմտեան երկրագնդին վրայ, մինչ այժմ չբեւտուած դիկտատորական ուժերով (...) որը շար կէտերով յար եւ նման է Եւրոպական շարք մը դիկտատորութիւններուն», ըստ նոյն թերթի լրատուութեան¹³²։

Իր թղթակցութեան վերջին բաժնին մէջ, Վարդունի կը գրէր, թէ «մեր նախորդ գրութեամբ, յայտնած էինք Կայծ-ի ժամանակաւոր դադարումը - արդիւնք մեր կամքէն բոլորովին անկախ պայքաններու - սակայն այսօր ուրախութեամբ կ'արձանագրենք անոր մօտաւոր վերահրապարակումը որպէս հանդէս-ամսագիր եւ օրկան Պրագիլիոյ Ուսանողական Միու-

¹²⁸ Կիտուր, էջ 234։

¹²⁹ Վարդունի, «Պրագիլեան նամականի», էջ 3։

¹³⁰ Նոյն։

¹³¹ Կ. Ա. Վարդունի, «Պրագիլեան նամականի», *Երիտասարդ Հայաստան*, 20 Նոյեմբեր 1937, էջ 1։

¹³² «Պրագիլիա դէպի ֆաշիզմ», *Երիտասարդ Հայաստան*, 17 Նոյեմբեր 1937, էջ 1։

թեանց»: Յուլիսի թղթակցութեան մէջ, սակայն, դադրեցման լուրը չկար: Այսուհանդերձ, Կայծի վերահրատարակութեան պահանջը դրած էին զանազան մարմիններ եւ անդամներ ու համակիրներ, ու պատկան մարմինը «տրակաին այսօր նոյն բովանդակութեամբ կը շարունակէ նամակներ ստանալ Հրահայտին Ամերիկայէ, Ֆրանսայէ, Լիբանանէ, Սիւրիայէ, Պուկարիայէ, Ուրուկուայէ եւ Արժանթինէ»: Թղթակիցը կ'աւելցնէր, թէ «Պրագիլիոյ Հնչակեան Ուսանողական Միութեան Կեդր. Վարչութիւնը», համակիրներու ցանկութեան եւ անդամակցութեան փափաքին ընդառաջելով ու վստահելով տեղական եւ արտասահմանի ընկերներու նիւթաբարոյական աջակցութեան, «խիստ մօտ ժամանակէն Կայծը պիտի վերահրատարակէ»: Միա կողմէ, կուսակցութեան հիմնադրութեան 50ամեակը նշելու համար, գումարուած էր յատուկ շրջանային ժողով, որ ընտրած էր կեդր. գործադիր յանձնախումբ եւ շուտով պիտի ընտրէր յօբելեանական կեդր. յանձնախումբ մը: Ծրագրուած էր Կայծի բացառիկ թիւ մը հրատարակել¹³³:

Անշուշտ, այս բոլորը գրուած էր Վարկասի պետական հարուածէն առաջ, քանի որ 1937ի վերջերուն կուսակցութիւնը կը ստիպուէր վերջ տալ իր պաշտօնական գոյութեան եւ, քնականաբար, Կայծի հրատարակութեան, որուն վերահրատարակութիւնը արդէն անկարելի էր՝ քաղաքական պայմաններու լոյսին տակ: Մինչեւ այն ատեն, գրած է Վարդանեան, կուսակցութիւնը «իր տրած բոլոր դասախօսութիւններով, հանդէսներով եւ ներկայացումներով, իր կուսակցական պրոպականդային հետ միաժամանակ, կը ջանայ Խորհրդային Հայաստանը սիրելի դարձնել գաղութահայութեան, փայով թերթերէն քաղուած տեղեկութիւններ, դրոսաբերով Հայաստանի մէջ տեղի ունեցած շինարարական աշխատանքները, յորդորելով գաղութահայութիւնը որ չքաականանայ միայն խօսքով սիրել իր մայր հայրենիքը, այլ անոր վերաշինման աշխատանքներուն օժանդակել իր նիւթական միջոցին ներածին չափով»¹³⁴: Մենատիրական վարչակարգը պետական գաղափարախօսութեան հիմքը դարձուցած է «պրագիլականութեան» (brasillidade) ջատագովութիւնը, ինչ որ բնորոշ էր ատենի ազգայնական, ընդհանրապէս իտալական ֆաշականութեան սկզբունքները նմանակող վարչակարգներուն: Հետեաբար՝ բոլոր օտար ակումբներու, թերթերու եւ դպրոցներու գործունէութիւնը արգիլուած է¹³⁵: 1938ին, պետական հրովարտակ մը արգիլած է բնիկ պրագիլցիներու կամ պրագիլ-

¹³³ Կ. Ա. Վարդուհի, «Պրագիլեան նամականի», Երիտասարդ Հայաստան, 4 Դեկտեմբեր 1937, էջ 3:

¹³⁴ Վարդանեան, էջ 252:

¹³⁵ Robert M. Levine, *The Vargas Regime. The Critical Years, 1934-1938*, New York and London, Columbia University Press, 1970, էջ 167-68:

եան հպատակութիւն ունեցողներու անդամակցութիւնը օտար հաստատութիւններու¹³⁶:

«Պրագիլիոյ 1937ի նոր վարչաձեւի հռչակումով նոր դժուարութիւններ եւ խտրութիւններ յառաջ եկան մեր ազգային կեանքին մէջ: Լուծուեցան կուսակցութիւնները, հասարակական կազմակերպութիւններ, ակումբներ, եւ. քրոմեցիի վարժարանները. վերջապէս մեր ազգային կեանքը ծանր հարուած կրեց». պրագիլահայ թղթակից մը գրած է 1943ին¹³⁷: Այս միջոցին, 1942-43ին, Կարմրակի տնօրէնութեամբ, խումբ մը հնչակեան շարքայիներ նախաձեռնած են «Արարատ» ռատիօժամի ձայնասփռումին՝ զուտ մշակութային բովանդակութեամբ¹³⁸:

Բ. աշխարհամարտի ընթացքին, յարակարծօրէն, պրագիլական մենատիրութիւնը աստիճանաբար Դաշնակիցներու կողմը անցած է: 1942ին, Պրագիլ պատերազմ հռչակած է Գերմանիոյ եւ Իտալիոյ դէմ: Ազատական գաղափարներու վերելքը ստիպած է Վարկասը հրաժարիլ ճնշումի քաղաքականութենէն, խոստանալով էական ազատականացում՝ պատերազմէն ետք: Աւարտը եղած է Estado Novoի փլուզումն ու Վարկասի հրաժարականը՝ Հոկտեմբեր 1945ին, որուն յաջորդած են ժողովրդավարական ընտրութիւններ:

1946ին կազմուած է Ներգաղթի Օժանդակ Յանձնախումբը, որուն հինգ հոգինոց սկզբնական կորիզին ընդգրկուած էին հնչակեաններ Պետրոս Շամլեան եւ Ստեփան Սուքիասեան: Մայիս 1947ին, անոր կազմը երկրորդ անգամ ընդլայնուած է, ընդգրկելով հինգ հնչակեաններ եւ՝ Կարմրակ, Թազար Կիրակոսեան, Սամուէլ Ճանիկեան Համբարձում Պալապանեան եւ Զաւէն Սապունճեան: Նոյն տարուան Օգոստոսին, տասներեք հոգինոց կազմին նախագահ դարձած է Սան Փալոյի մասնաճիղի հիմնադիրներէն Կիրակոսեան, փոխնախագահ՝ Կարմրակ, գանձապահ՝ Պալապանեան, իսկ հայերէն առենադպիրներէն մին՝ Սուքիասեան: Խորհրդականներու շարքին էին նոյն մասնաճիղի ուրիշ հիմնադիրներ՝ Ճանիկեան եւ Շամլեան¹³⁹:

¹³⁶ Taura Regina de Luca, "Inmigración, mutualismo e identidad: São Paulo (1890-1935)", *Estudios Migratorios Latinoamericanos*, 1995:29, էջ 201:

¹³⁷ Յ. Քիլրատ, «Պրագիլահայութիւնը ինչպէս որ է», *Հայաստանի կոչեակ*, 16 Յունուար 1943, էջ 64: Ուշագրաւ է Կարմրակի տուրը Վարկասին՝ 1942ի թղթակցութեան մը մէջ. «Մեր հանրապետութիւնը, իր կորովամիտ եւ հեռազեւ մեծ նախագահին, Ն. Վ. Տօթթ. Ժեթոյի Վարկասի ձեռնհաս ղեկավարութեամբ կը շարունակէ յառաջդիմութեան պրօցէսէն եւ օրէ օր կը սերտացնէ իր կապերը դրացի եւ քոյր հանրապետութեանց հետ» (Ե. Կարմրակ, «Միջազգային, տեղական եւ հայ կեանք», *Երիզրասարդ Հայաստան*, 14 Հոկտեմբեր 1942, էջ 1. Ընդգծումը մերն է):

¹³⁸ Կիտոր, էջ 235:

¹³⁹ Վարդանեան, էջ 549-50:

Քաղաքական ազատություններու ընդհանուր վերականգնումին դեմ յանդիման, հայկական կուսակցությունները տեսանելի չեն եղած, բայց իրենց ձայնը լսելի դարձուցած են մամուլի միջոցաւ: Հնչակեան կուսակցութիւնը, *Կայծի* երբեմնի տառատեսակները օգտագործելով, հրատարակած է *Հայաստանի ձայնը* ամսագիրը, որուն առաջին թիւը լոյս տեսած է 11 Յունուար 1947ին, վեց մեծադիր էջերով, չորս՝ հայերէն, եւ երկու՝ փորթուկալերէն, խմբագրութեամբ՝ Ե. Կարմրակի: Հրատարակած է 22 թիւ եւ դադրած՝ 1950ին¹⁴⁰, հանդիսանալով Պրագիի հնչակեան վերջին թերթը:

Գ) Քորտոպա

Արժանթինի երկրորդ հայաշատ քաղաքին՝ Քորտոպայի հնչակեան մասնաճիւղը հիմնուած է 1929ին: 1 Հոկտեմբեր 1929ի նամակով, ան կը յայտնէր Կեդրոնական Վարիչ Մարմնի վաերացման ստացումը, ի հետեւանս որուն կատարուած էր վարչութեան ընտրութիւնը: Մասնաճիւղը 30 անդամ ունէր¹⁴¹: Փետրուար 1930ին, բացուած է կուսակցական ակումբը եւ կազմուած «ժիրայր» թատերախումբը¹⁴²: Ամիսներ ետք, թղթակից մը կը գրէր, թէ մասնաճիւղը, «մէկ երկու փարոսայ կեանք մը ունենալով հանդերձ՝ լայն ժողովրդականութիւն կը վայելէ»¹⁴³: 1933ին կը հաղորդուէր, թէ «կուսակցութեանս փեղոյս մասնաճիւղը այս փարի թոյլ շրջան մ'անցուց, որը արդիւնքն է տնտեսական փազնասպին (...)»¹⁴⁴: Ըստ երեւոյթին, «ժիրայր» թատերախումբին կեանքը կարճ եղած էր, քանի որ 1934ին, մասնաճիւղին կից հիմնուած էր նոր՝ «Փարամագ» թատերախումբը¹⁴⁵: Յունուար 1936ի վերջերուն, կուսակցական հակամարտութիւնը հասած է իր գագաթնակէտին երբ ժողովրդական Ճակատը, որուն մաս կը կազմէին

¹⁴⁰ Ալէքէրեան, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան գործունէութիւնը», էջ 167. նոյն, «Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան պրօպականտ», էջ 100. նաեւ՝ Կիրակոսեան, էջ 341. նաեւ՝ Խառատեան եւ այլք, էջ 459. նաեւ՝ Տէր Խաչատուրեան, *Հայ մամուլի*, էջ 46. նոյն՝ *Սոցիալ Դեմոկրատ*, էջ 40 նաեւ՝ Գանգրուսի, *Յանուն*, էջ 459: Սիսլի է 1946-50 թուագրումը (Կիտուր, էջ 235):

¹⁴¹ «Նամակ», *Երիտասարդ Հայաստան*, 30 Նոյեմբեր, 1929, էջ 3:

¹⁴² Վարչութիւն, «Գորտոպայի հնչակեան ակումբին բացումը», *Երիտասարդ Հայաստան*, 5 Ապրիլ 1930, էջ 3:

¹⁴³ Նոր Եկ. «Հնչ. կեանքը Քորտոպայի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 4 Հոկտեմբեր 1930, էջ 3: Թղթակցութեան հեղինակը հասանաբար Ֆրանսայէն նոր եկած Աբրահամ Էօլմէզն էր:

¹⁴⁴ Թղթակից, «Քորտոպայի կեանք», *Երիտասարդ Հայաստան*, 13 Յունուար 1934, էջ 4:

¹⁴⁵ Թղթակից, «Արժէթիւնեան նամականի», *Երիտասարդ Հայաստան*, 7 Յուլիս 1934. նաեւ՝ «Հնչակեան ձեռնարկ Քորտոպայի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 29 Դեկտեմբեր 1934, էջ 4: Թատերախումբը ներկայացուցած էր *Գող Վասիլը*, որ ըստ երեւոյթին, Լեոն Ծանթի *Ինկած բերդի իշխանուիւն* էր՝ անունը փոխուած եւ առանց հեղինակի յիշատակութեան:

հնչակեանները, յաղթանակը տարած է Հայ Գաղութային Միության (ՀԳՄ) ընտրություններուն, յառաջ բերելով համայնքին պառակտումը: Դաշնակցական հատուածը հիմնած է երկրորդ եկեղեցի մը եւ դպրոց մը: ՀԳՄի դպրոցը շարունակած է վարել հնչակեան գործիչ Աբրահամ Էօվմէզ մինչեւ Պուենտո Այրես տեղափոխումը 1939ին¹⁴⁶:

Դ) Պուենտո Այրէս

1930ին, Պուենտո Այրէսի մասնաճիղի վարչութիւնը կը տեղեկացնէր նոր վերակազմութեան մը մասին՝ 72 անդամներով.

Գրեթէ դադար առած էր մասնաճիղը ծանօթ խնդիրներու հետեանքով: «Երիտասարդ Հայաստան»ը իր կոտ տեսութիւններով փարատեց բոլոր շփոթութիւնները եւ մասնաճիղը վերակազմուեցաւ գիտակից ընկերներով:

Ամիջապէս ձեռք առինք ակումբի գործը եւ կը յուանք թէ ամենէն օգտաշատ կեդրոնը պիտի ըլլայ Պուենտո-Այրէսի Հայութեան¹⁴⁷:

Մասնաճիղին կից, գոյութիւն ունէին «Սապահ-Գիլեան» թատերախումբը եւ Ուսանողական Միութիւնը¹⁴⁸: Ս. Շահէնի *Քսան կախադանները*-ի բեմադրութեան առիթով թղթակցութիւնը կը շեշտէր. «8-10 ամիսներ է վեր Հնչակեանութիւնը վերազարթօնքի մէջ է, հին ու նոր գիպակից երիտասարդներ ի մի գալով յառաջ կը տանին այն գաղափարը որ 44 տարիներ շարունակ հեղափոխած է այս կուսակցութիւնը եւ որը ներկայիս կ'իրազդրծուի մեր երկրին հս. Հայաստանի մէջ»: Թղթակցութիւնը կը յայտնէր Ուսանողական Միութեան կազմութիւնը եւ առաջին ձեռնարկին իրականացումը, ինչպէս եւ ակումբի ու գրադարանի գոյութիւնը¹⁴⁹:

Սեպտեմբեր 1934ին, թղթակից մը կը գրէր, թէ «Հիւս. Ամերիկայի մեր քոյր շրջանի կուսակցական գործունէութիւնները ընդհանրապէս եւ 50րդ պարզամատրական ժողովի վճիպ որոշումները մասնատրաբար իրենց որոշ եւ մէկին [sic] արծագանքը գրան հոս, խանդավառութիւնը մեծ է եւ ոյժերը աւելի քան երբէք կազդրուած են»¹⁵⁰: Մարտ 1936ին տեղի կ'ունենար Շիրվանզաղէի Պարոյի համար թատերախաղի բեմադրութիւնը՝ մասնաճիղի կազմակերպութեամբ եւ նշանատր դերասան Յովհաննէս Զարիֆեանի գլխատրութեամբ: Բեմադրութեան վայելած խանդավառ ըն-

¹⁴⁶ Հայկազ, «Գորտուպայի ազգային ընտրութիւնները», *Երիտասարդ Հայաստան*, 15 Ապրիլ 1936, էջ 3:

¹⁴⁷ «Հնչակեան նոր մասնաճիղեր», *Երիտասարդ Հայաստան*, 20 Սեպտեմբեր 1930, էջ 3:

¹⁴⁸ Թղթակից, «Հնչակեանները Պուենտո Այրէսի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 13 Յունիս 1931, էջ 4:

¹⁴⁹ Պ. Ա. Ճերահեան, «Ս. Դ. Հնչ. կեանքը Պ. Այրէսի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 25 Յուլիս 1931, էջ 3:

¹⁵⁰ «Հնչակեան կեանքը Պուենտո Այրէսէ [sic] մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 8 Սեպտեմբեր 1934, էջ 4:

դունելութիւնը «*փաստ մը եա է, որ ժողովուրդը մեծ համարում ունի դէպի մեր կուսակցութիւնը, պէտք է սիրաշահինք ժողովուրդի համակրանքը գործի մղուելով*»- տեղեկագրած է թղթակցութիւն մը, շեշտելով.- *Աշխատանքի մարզին մէջ նախորդ վարչութիւնները շատ թոյլ եղած են, այժմու վարչութեան կը մնայ սրբագրել անցեալի սխալները եւ յառաջ շարժի»¹⁵¹:*

Ամիս մը ետք, Սկրտիչ Յակոբեան անելի քան տասնամեակ մը տեսած ճգնաժամին հետեւեալ բնութագրումը կու տար վերը յիշուած բանախօսութեան մէջ.

Խումբ մը հոգով անհանդարտ մարդիկներ [sic], որոնք սովոր էին սկիզբէն ի վեր պարապ եւ անտեղի աղմուկ յառաջացնել, մեծ գիտ մը գտնողի յաակնութեամբ, եւ այլ «հեռանկարներով», օրին մէկը ելան ծանօթ քան-չունի Զարմայր Քիթնէրեանի գլխատրութեամբ Հնչակեանութիւնը անելիք չունի «չքննադ» պատգամն յայտարարելու: Անշուշտ այս պարագան որոշ ազդեցութիւն ներգործեց շարքայիններուն վրայ, ինչպէս ոմանց այ մեկուսանալուն պատճառ դարձաւ: Ասկայն գիտակից ընկերները ամուր փարեցան իրենց կուսակցութեան, որուն ընկիթէն եւ կատարելիք մեծ դերին շուրջ հաստք եւ յոյս ունին: Բաժանում յառաջացնող խմբակը, որ քաղաքական արժէք ներկայացնելէ զուրկ տարրն էր, երկար դեգերումներէ եւ նոյնքան ալ զանազան անուններ փոխելէ ետք, գնաց ապափնեցաւ ՀՕԿի փրկարար հովանիին, որպէս իրականացումն իր բարի հեռանկարներուն: Այս խաղերու արդիւնքները՝ շատ սուղ արժեցին մեզի: Թշնամին, որ մինչ այդ նկատելի արժէք մը չէր ներկայացներ, առիթէն օգտուելով սկսաւ արագաբայլ յառաջանալ: «Մերիները» իրենց կէտ նպատակ ընտրած էին անխնայ պայքար մղել Հնչակեանութեան դէմ, զայն միանգամայն քայքայելու համար: Սիս՝ 12 տարիներ են անցեր այդ անխնայ «պայքար»ի թուականէն ու այս ժամանակամիջոցը բաւարար եղած է, որ հայ աշխատատրութիւնը մտնէ քննելով իրերն ու իրադարձութիւնները, տեսնէ չարն ու բարին, եւ մեծապէս ուրախ ենք յայտարարելու, որ դարձեալ նոյն աշխատատրութիւնը իր վարկն ու քուէն կը վստահէր հայ քաղաքական Մարքսիստ կուսակցութեան - Հնչակեանութեան - որպէս իր դատին հարազատ պաշտպանին¹⁵²:

1937ին, կուսակցութիւնը հինգ մասնաճիւղ ունէր Պուենոս Այրէսի մէջ, որոնցմէ չորսը կը գտնուէին բուն քաղաքի տարբեր թաղամասերու մէջ («Սապահ-Գիլեան»՝ Փալերմօ, «Փարամազ»՝ կեդրոնը, «Մուրատ»՝ Վիժա Սուլաթի, եւ «Սարգիս Տիրումի»՝ Պոքա եւ Պառաքաս), իսկ հինգերորդը՝ «Ժիրայր», Վալենթին Ալսինա թաղամասը¹⁵³: Պրագիլի քաղաքական կացութեան բերումով, կուսակցութեան ծանրութեան կեդրոնը փոխադրուած էր Արժանթին, ուր *Շարժում* շաբաթաթերթի առաջին թիւը լոյս տեսած է

¹⁵¹ Յիմէն, «Պատուի համար»ը հնչակեան բեմին վրայ», *Երկուսասարդ Հայաստան*, 15 Ապրիլ 1936, էջ 3:

¹⁵² Յիմէն, «Պ. Այրէսի ընկերա-համակրական», էջ 4:

¹⁵³ "Así nació Sharyum", էջ 4:

19 Յունիս 1937ին: Հիմնադիրը եղած է Սահակ Պահչէճեան¹⁵⁴: Խմբագիրներու ցանկը, որ դեռ վերջնական ճշգրտումի կը կարօտի, կը գլխատրէ Տաճատ Գնդունի որպէս առաջին խմբագիր¹⁵⁵: Մինչեւ 1939 անոր յաջորդները եղած են Կարմրակ, որ 1937ի հարաւամերիկեան Պատգամատրական ժողովէն ետք վեց ամիս մնացած է Արժանթին, թէ՛ որպէս շրջանաւի զործիչ եւ թէ՛ որպէս խմբագիր¹⁵⁶, եւ Մկրտիչ Յակոբեան¹⁵⁷: 1939ին Քորտուպայէն փոխադրուելով, Ա. Էօյմէզ ստանձնած է խմբագրութիւնը մինչեւ անակնկալ մահը Մայիս 1958ին¹⁵⁸: Յունուար 1959ին, Փարիզէն որպէս խմբագիր ժամանած է Վահան Ջէթունցեան, որ մահացած է Նոյն տարուան Նոյեմբերին¹⁵⁹: Ջէթունցեանին յաջորդած են Նազարէթ Կուժնուի (Ճերէճեան), որ հրաժարած է Յունիս 1962ին, երեք տարուան պաշտօնավարութենէ ետք¹⁶⁰, Կիւրեղ Աջապահեան¹⁶¹ եւ Ալպէր Քէօսէան, որ պաշտօնանկ եղած է Սեպտեմբեր 1965ին¹⁶²: Այնուհետեւ, Կուժնուի վերստանձնած է խմբագրի պաշտօնը (1966-69): Զինք յաջորդած են Վարուժան Աճէմեան (1969-76)¹⁶³ եւ Սամուէլ Սարգիսեան (1976-91): Թերթը

¹⁵⁴ Արծրունի, էջ 49. նաեւ՝ «Մահ բարերար պր. Սահակ Պահչէճեանի», *Ներկայ*, Յունուար-Փետրուար 1963, էջ 45: Հաստատեան տուած է նաեւ Կարապետ Էքեանի անունը որպէս հիմնադիր (Hassassian, «Panorama», էջ 107):

¹⁵⁵ Ալֆէրեան, «Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան պրօպագանտ», էջ 95:

¹⁵⁶ Կիսուր, էջ 234:

¹⁵⁷ Անունը յիշուած է 1961ի խմբագրականի մը մէջ («25 տարի պատմելի վրայ. հայրենիքի հետ, ժողովուրդին համար» (խմբագրական), *Ճարժում*, 18 Նոյեմբեր 1961):

¹⁵⁸ *Յուշամարտեան Արրահամ Էօյմէզեան (1901-1958)*, տպ. «Արարատ», Պուենոս Այրես, 1959, էջ 20: Երկու հնչակեաններ՝ Ա. Էօյմէզ եւ Տիգրան Միւրէջեան Մայիս 1947ին Նիւ Եորք գումարուած Համաշխարհային Հայկական Քոնկրէսին արժանթինահայ պատուիրակ եղած են: Երրորդ պատուիրակը յառաջիմական *Հայ մամուլ* թերթի խմբագիր Մուշեղ Արխանեանն էր:

¹⁵⁹ «Վահան Ջէթունցեան (մահուան Բ. տարելիցին առթիւ)», *Ներկայ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1961, էջ 15:

¹⁶⁰ «Շնորհակալիք-հրաժեշտ», *Սուրհանդակ*, 16 Յունիս 1962, էջ 2: Ըստ կենսագրութեան, Կուժնուի վեց տարի *Ճարժումի* խմբագիր եղած է (*Նոր Հանրէն պագրմագիրը 1921-1973*, տպ. «Արարատ», Պուենոս Այրես, 1974, էջ 197), ուստի իր խմբագրութիւնը բաժնած ենք 1959-1962 եւ 1966-69 շրջաններուն միջեւ:

¹⁶¹ Աջապահեան իրեն խմբագիր յիշուած է Նոյեմբեր 1962ին (Ազեան, «Մոնթեվիտոյի հնչակեան ակումբին», էջ 3) եւ տնօրէն՝ Յունիս 1963ին («Անուիւրի...», *Ներկայ*, Յունիս 1963, էջ 26): Բացառուած չէ, որ նորէն առժամաբար ստանձնած ըլլայ խմբագրութիւնը Քէօսէանի պաշտօնազրկումէն ետք:

¹⁶² «Վարչական ազդ», *Ճարժում*, 4 Սեպտեմբեր 1965: մէջբերումը՝ «Ճարժում շաքաթաթերթի ելոյթին առթիւ», *Ներկայ*, Օգոստոս-Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1965, էջ 62:

¹⁶³ Վարուժան Աճէմեան, անձնական հաղորդում (Ապրիլ 1999): Աճէմեանի պաշտօնավարութիւնը նաեւ թուագրուած է 1973-76 (Hassassian, «Panorama», էջ 107):

դադրած է Յունիա 1991ին՝ 54 տարի լոյս տեսնելէ ետք: *Շարժում* իր երկարակեցութեամբ ու անընդմէջ հրատարակութեամբ երրորդ տեղը կը գրաւէ Հարաային Ամերիկայի հայ մամուլի պատմութեան մէջ՝ *Արմենիայէն* եւ *Նոր Հաճընէն* ետք¹⁶⁴:

Թերթը լոյս տեսած է չորս մեծադիր էջերով մինչեւ 1980, երբ անցած է 8-12 էջերով փոքրադիր (tabloid) ծաւալի մը: Սկիզբը միայն հայերէնով լոյս տեսած է (բացառելով սպաներէն պարտադիր էջերու հրատարակութիւնը 1943-55 թուականներուն), երկէզու դառնալով 1970ականներուն (երբեմն հրատարակուած են փորթուկալերէն յօդուածներ): 1954ին, թերթին տպաքանակը եղած է 1000¹⁶⁵, իսկ 1974ին՝ 1500¹⁶⁶: 1961ին, ծրագրուած էր գրական-մշակութային երկամեայ յանձնարարութիւնը¹⁶⁷, որ իրականացած չէ:

Մայիս 1942ին, Պահչէճեան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Հոգաբարձութեան ատենապետի պաշտօնին ընտրուած առաջին կուսակցականը եղած է: Սակայն, 1938ին թեմական ղեկավարութեան մէջ հաստատուած գոյակցութիւնը դաշնակցական եւ ոչ-դաշնակցական հատուածներուն միջեւ խախտած չէր: Նոյն տարին, Պահչէճեան իր բաժինը բերած է Քորտուպայի վեցամեայ պատակտումի լրծման:

1945ին, Հայց. Առաքելական Եկեղեցոյ Հոգաբարձութիւնը նշանակած է Պահչէճեանը իբրեւ Ազգային Եկեղեցական Ժողովի աշխարհական ներկայացուցիչ արժանթինահայութեան կողմէ: Նշանակումը վճի առարկա եղած է, որովհետեւ տեղի ունեցած է հոգաբարձութեան միակողմանի վճռով՝ առանց խորհրդակցութեան¹⁶⁸: Թէեւ որոշուած էր, որ Պրազիլի

¹⁶⁴ Պետրոսեան *Շարժումի* հրատարակութեան թուականը համարած է 1944-47 (Պետրոսեան, էջ 519): Գասապեան սրբագրած է այս թուականը, յայտնելով, թէ «այս թերթի հրատարակութիւնը ծանօթ է մեզ 1937 թ., ցարդ կը շարունակուի» (Ներսէս Գասապեան, «Հայ պարբերական մամուլի բիրիոգրաֆիա», գրախօսական, *Պարմաքանասիրական հանդէս*, 1961:3-4, էջ 314): Այնուհետեւ, իր յանձնարարութեան ցանկին մէջ, յիշած է «*Շարժում*, շաբաթաթերթ ազգային, քաղաքական, գրական, Պոնտոս Այրէս, 1937-1939... (հասցէ՝ Մեսրոպ Տատուրեան)» (նոյն, էջ 325): Կիրակոսեան փորձած է Պետրոսեանի եւ Գասապեանի ըսածներուն ձայնող համադրում մը՝ երկու *Շարժում* շաբաթաթերթ հնարելով, որպէս թէ առաջինը լոյս տեսած ըլլայ 1937-39ին՝ Տատուրեանի ենթադրեալ խմբագրութեամբ, իսկ միւրը՝ 1944էն սկսեալ (Կիրակոսեան, էջ 152-53, 413):

¹⁶⁵ "Registro Nacional de la Propiedad Intelectual", *Boletín Oficial de la República Argentina*, 29 de abril de 1955, segunda sección, էջ 4:

¹⁶⁶ Binayan, *La colectividad*, էջ 103:

¹⁶⁷ Տե՛ս խմբագրութեան անդամ Վահան Գալֆայեանի նամակը Արտասահմանի հետ Բարեկամութեան Հայկական Ընկերութեան նախագահ Բերաբէ Գրիգորեանին, 2 Մայիս, 1961 (ՀԱԱ, ֆոնտ 709, ցուցակ 3, թ. 63):

¹⁶⁸ «Հայրապետական ընտրութիւնը եւ հար. ամերիկահայոց մասնակցութեան հարցը» (խմբագրական), *Արմենիա*, 7 Ապրիլ 1945, էջ 1:

Թեմական հորհուրդը ներկայացուցիչ մը ընտրել Պրագլիլի եւ Ուրուկուայի համար, ասիկա տեղի ունեցած չէ¹⁶⁹: Հետեաբար, Պահչէճեան հարաւամերիկեան միակ ներկայացուցիչն էր 1945ի կաթողիկոսական ընտրութեան (միա ներկայացուցիչը՝ Իսրայէլ Արսլան, չէ կարողացած Հայաստան մեկնիլ: Սակայն, զանազան պատճառներով, թէ՛ Պահչէճեան եւ թէ՛ Հարաային Ամերիկայի հայրապետական պատուիրակը՝ Գարեգին արք. Խաչատուրեան, Ս. Էջմիածին հասած են ընտրութեան աարտէն ետք: 1920էն ետք, առաջին անգամն էր, որ Հարաային Ամերիկային աշխարհական մը ոտք կը դնէր հորհրդային Հայաստան:

Ուրիշ հաճընցիի մը՝ դաշնակցական Մկրտիչ Պելորեանի երկամեայ ատենապետութենէն ետք (1945-47), քաղաքական կողմերու գոյակցութիւնը փոփոխութեան ենթարկուած է Մայիս 1947ի ընտրութիւններու նախօրեակին: Ոչ-դաշնակցական կողմը պահանջած էր, որ իւրաքանչիւր քաղաքական ուժի հաասար թիւով աթոռներ յատկացուին, ինչ որ կ'ենթադրէր, թէ ՍԴԿԿի եւ յառաջդիմական հոսանքի դաշինքին (Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կազմակերպական գոյութիւն չունէր) գերակայութիւնը: ՀՅԴ մերժումին յաջորդած է 1938ի անգիր համաձայնութեան չեղարկումը: Ժողովրդային աննախընթաց մասնակցութեամբ տեղի ունեցած ընտրութեան, 2.801 հոգի քուէարկած է: Ոչ-դաշնակցական Ազգային Ճակատի ցուցակը, գլխատրութեամբ Պահչէճեանի, քուէներու 52,5 առ հարիւր համեմատութեամբ (1477) եւ 153 քուի տարբերութեամբ աղթած է Պելորեանի գլխատրած ՀՅԴի ցանկին (1324): Հակառակ բաւական նեղ տարբերութեան, *Երիտասարդ Հայաստան* տեղեկացուցած է, ըստ իր ստացած լուրին, թէ «շահեցաւ Ազգային Ճակատի ընտրացանկը *ջախջախիչ պարտութեան ենթարկելով Դաշնակցութիւնը*»¹⁷⁰: Որպէս հետեանք, բազմաթիւ դաշնակցական շարքայիններ եւ համակիրներ եկեղեցոյ հոգաբարձութեան անդամակցութենէն հրաժարած են: Ոչ-դաշնակցական դաշինքը, Պահչէճեանի ատենապետութեամբ, կազմակերպութիւնը ղեկավարած է մինչեւ 1951, երբ նոր անգիր համաձայնութիւն մը կնքուած է¹⁷¹: Այդ հա-

¹⁶⁹ Դիան արժանթինահայոց, «Լուսաբանութիւններ», *Արմենիա*, 17 Մայիս 1945: Այս հաղորդագրութեան քննադատութեան համար, տե՛ս՝ «Յապաղած փաստարկութիւն» (խմբագրական), *Արմենիա*, 17, 19 եւ 23 Մայիս 1945:

¹⁷⁰ «Ազգային ընտրութիւնները Պուէնոս Այրէսի մէջ», *Երիտասարդ Հայաստան*, 17 Յունիս 1947, էջ 1:

¹⁷¹ Այս ժամանակաշրջանին մասին, տե՛ս Մատթէոսեան, *Հարաային*, էջ 158: Ս. Պահչէճեանի քարեբարութեամբ, 1962ին շինուած է իր անունը կրող նախակրթարանին դպրոցաշէնը Պուենոս Այրէսի հարաային Վիժա Սոլտաթի թաղամասին մէջ, որով միացած են երկու դրացի թաղամասերու՝ Վիժա Սոլտաթիի «Մետրոպեան» եւ Նուէվա Փոմիճեայի «Սահակեան» դպրոցները: «Պահչէճեան» դպրոցը ցարդ կը գործէ իբրեւ քաղաքի եօթը հայկական վարժարաններէն մէկը, ըլլալով միակը, որ երկրորդական բաժին չունի:

մածայնությունը ի զօրու մնացած է մինչև 1968, երբ այդ տարուան ընտրություններուն քուժարկողներուն 55 առ հարիւրը (2973 քուէ) ապահոված էր դաշնակցական ցուցակին յաղթանակը՝ ոչ-դաշնակցական 45 առ հարիւրին (2552 քուէ)¹⁷²:

ԵՂՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հակառակ տեղեկություններու սակաութեան, ՍԴՀԿի հարաամերիկեան գործունէութիւնը կրնանք ամփոփել երեք կէտերու մէջ. ա) Կազմակերպական աշխատանք, բ) Գաղափարական-կուսակցական պայքար խորհրդային Հայաստանի եւ ազգային խորհրդանիշերու շուրջ, գ) Իշխանութեան պայքար եկեղեցիներու, դպրոցներու եւ այլ հաստատութիւններու շուրջ:

Փաստական տեղեկություններու պակասը անկարելի կը դարձնէ որեւէ փորձ՝ ՍԴՀԿի ազդեցութիւնը չափելու շրջանի անցեալին մէջ եւ վերլուծելու անոր փոխարաբերութիւնները միւս քաղաքական հոսանքներուն հետ: Մինչ մէկ կողմէ, կուսակցութիւնը դիմագրաւած է ներքին արիւնահոսութիւն ի նպաստ միւս խորհրդայնամէտ՝ յառաջդիմական հոսանքին, ինչպէս եւ վերջինիս բնական մրցակցութեան յատկապէս 1920-30ականներուն, միւս կողմէ, մերթընդմերթ մարտավարական բնոյթի դաշինք կազմած է անոր հետ ընդդէմ ՀՅԴի՝ կուսակցական հակամարտութեան եւ համայնքային քաղաքական իշխանութեան ի խնդիր:

Միջազգային երկրեւեռ հայեցիլին նայող հայկական աշխարհի մը մէջ, ՍԴՀԿի, յառաջդիմականներու եւ պահպանողականներու (որոնք ՌԱԿի շուրջ պիտի բոլորուէին՝ 1970ականներուն անոր հարաամերիկեան մասնաճիւղերուն հիմնադրութենէն ետք) դաշինքը պահպանած է համայնքային քաղաքական հաւասարակշռութիւնը՝ ինչպէս ցոյց կու տայ 1947ի եւ 1968ի ընտրություններուն օրինակը Պունետու Այրէսի մէջ: Այդ դաշինքին ներքին ուժականութիւնը մեր ուրուագծած պատմութեան բազմաթիւ խնդիրներէն մէկն է, որ կը սպասէ ապագայ ուսումնասիրութեան:

¹⁷² Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 143:

**THE SOCIAL-DEMOCRAT HUNCHAKIAN PARTY
IN SOUTH AMERICA: OUTLINING THE BEGINNINGS**

(Summary)

VARTAN MATIOSSIAN (varny1@yahoo.com)

The study of the history of political parties in different communities of the Armenian diaspora has usually been hampered by the scarcity of sources, mainly due to the inaccessibility of local archives and, in the case of South America, the almost total inexistence of newspaper collections. At this stage, the early history of the Social-Democrat Hunchakian Party in the three main Armenian communities of the region (Argentina, Brazil, and Uruguay) can only be outlined at most. The first chapter was founded in 1912 or 1913 in Buenos Aires. It was actively involved in community politics and financial assistance to various Armenian causes during the crucial period 1915-1920. The Armenian wave of immigration to South America after 1922 contributed to the creation of new chapters in Uruguay (Montevideo, 1926), Argentina (Cordoba, 1929), and Brazil (Sao Paulo, 1929, and others). The activity of the Brazilian chapters was deeply affected by repression by the authoritarian regime of Getulio Vargas and his Estado Novo (1937-1945). In the 1920s and 1930s, the Hunchakian Party had to withstand the competition of the Armenian section of the Communist Party, to the left of its ideological arc, to which it lost some of its membership. At the same time it also sought a strategic alliance with the Communist Party on the basis of a common pro-Soviet Armenian stance against the main ideological and political antagonist, the Armenian Revolutionary Federation.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ (Ապրիլ-Դեկտեմբեր 1921)

ԿԱՐԻՆԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ (karineal@mail.ru)

ՄՈՒՏՔ

Խորհրդային Հայաստանում աելի քան երեսուն տարի (1920-50ականներ) տեսած եւ հանրապետութեան բոլոր շրջաններն ու հասարակութեան խաւերն ընդգրկած բռնաճնշումների քաղաքականութեան հիմնախնդիրը դուրս է եկել գիտական շրջանակներից՝ զբաղեցնելով հասարակական միտքը: Հայ պատմագիտական միտքն եւ հասարակական կարծիքը յուզող այս հարցի քննարկումներում՝ ատելութիւնը, մեղադրանքները, վիրատորանքները եւ օտար պետութիւնների միջամտութիւնն այս ամէնին յուշում են հայ հասարակութեանը պառակտող, նրա անվտանգութեանը սպառնացող նոր վտանգների գոյութիւնը: Այս իրավիճակը պարտաւորեցնում է հայ պատմագիտութեանը ձեռնամուկ լինել խորհրդային պետականաշինութեան հիմքում դրուած քաղաքական բռնութիւնների պատմութեան ամբողջական, համապարփակ գիտական ուսումնասիրութեանը՝ զերծ պահելով հայ ժողովրդին սպաստող նոր վտանգներից եւ փորձութիւններից:

Չնայած այս բնագաւառում կատարուած զգալի աշխատանքներին, հիմնախնդրի ամբողջական ընկալումը պահանջում է տեսական աշխատանք եւ մեծ առարկայական ջանքեր, բռնաճնշումների տարբեր փուլերի, հասարակութեան առանձին խաւերի, այնպէս էլ Հայաստանի տարբեր տարածաշրջանների բնակչութեան նկատմամբ իրականացուած բռնութիւնների քաղաքականութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ:

Սոյն յօդուածում խնդիր ենք դրել ուսումնասիրել խորհրդային իշխանութեան հաստատման առաջին ամիսներին՝ յեղկոմներից խորհուրդներին անցման շրջանում (Դեկտեմբեր 1920-21), Ալեքսանդրապոլի գաւառում տեղի ունեցած բռնաճնշումների քաղաքականութեան պատճառները, դրսեւորումները եւ առանձնայատկութիւնները:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը կատարում էր իշխանութեան նշանակովի մարմինների՝ յեղկոմների միջոցով: Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ կազմաւորուած գաւառներում եւս ստեղծում են իշխանութեան նշանակովի մարմիններ՝ յեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանութեան հաստատումն էր¹:

Ալեքսանդրապոլի գաւառում, պատմական պայմանների բերումով խորհրդային իշխանութեան մարմիններ ստեղծուել էին աելի վաղ քան

¹ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 336, թ. 1:

Հայաստանի խորհրդայնացումը՝ 1920 Նոյեմբերի 17ին, թուրքերի կողմից գաառի ռազմակալման շրջանում²:

1920ի մայիսեան ապստամբութեան պարտութիւնից յետոյ, Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպութիւնը գրեթէ ամբողջովին քայքայուել էր: Կոմունիստների մի մասը հեռացել էին Ադրբեջան, միւսները՝ յայտնուել բանտում, որտեղ կազմատրուել էին շրջանային, քաղաքային եւ գաառային կոմիտէներ, կատարուել աշխատանքի բաժանում: Նոյեմբերի 5ին թուրքերի կողմից քաղաքը գրաւելու ժամանակ նրանք դուրս էին եկել բանտից՝ փորձելով վերցնել իշխանութիւնը եւ կարգովանոն հաստատել բախտի քմահաճոյքին մնացած քաղաքում³: Սակայն Սեպուհը նրանց սաստել էր, որից յետոյ մաս էին կազմել Լետն Սարգսեանի գլխատրած համախոհական մարմին⁴:

Թուրքերն իրենց առաջխաղացումն Արեւելեան Հայաստանում պայմանատրելով Խորհրդային Ռուսաստանի շահերով եւ իբրեւ խորհրդայնացման ջատագովներ՝ առաջարկել էին կոմունիստներին Ալեքսպոլում հոչակել խորհրդային իշխանութիւն: Երկշաբաթեայ քննարկումներից յետոյ Նոյեմբերի 17ին բանտում կազմատրուած Ալեքսանդրապոլի շրջանային կոմիտէն իրեն հոչակել էր յեղկոմ: Թուրքերի համաձայնութեամբ առնուած այդ քայլով՝ յեղկոմը փորձել էր թոպացնել թուրքական ռազմակալման ռեժիմը, տանելի պայմաններ ստեղծել քնակութեան համար, ապահովել նրա ֆիզիկական գոյութիւնը⁵: Բայց այդ գործակցութիւնն աւելի շուտ վարկաբեկել էր խորհրդային իշխանութեանը, եւ Ալեքսանդրապոլի յեղկոմը՝ հայ բնակչութեան նկատմամբ թուրքական գիտորականների բռնութիւնների պատասխանատուութիւնից խուսափելու համար, 1921 Յունուարի 25ին վայր էր դրել իր լիազորութիւնները⁶:

Ալեքսանդրապոլի գաառում կուսակցութեան քաղաքականութիւնը շարունակել էր իրականացնել 1920 Յունուարի սկզբից ստեղծուած Ալեքսանդրապոլի գաառային կոմունիստական կազմակերպութեան ժամանակատր կոմիտէն (Գակոմ) իր մի շարք բաժիններով՝ տեղեկատուական-կազմակերպչական, հաշուառման եւ բաշխման, ազիպացիոն-պրոպագանդիստական, գիւղացիների մէջ աշխատանքի են.: Գակոմի հիմնական խնդիրներն էր համարել կուսակցութեան հեղինակութեան բարձրացումը եւ կուսակցականների թոպի աւելացումը: Իդէպ շատերը մտել էին կուսակցութեան շարքերը իրենց գոյութիւնը մի կերպ պահպանելու հա-

² Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի բոլշեւիկեան յեղկոմի գործունէութիւնը 1920թ. Նոյեմբեր-1921թ. Յունուարին», ՀՀ ԳԱԱ, ԸՀԿԿ, Գիտական աշխատութիւններ, Գիմրի, 1998:1, էջ 117-25:

³ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189, թ. 3:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 448, թ. 1:

⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 12-15:

⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 55-57, ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 193, թ. 2-5:

մար: Գավկոմին ուղղրած կուսակցականների դիմումներից երեւում էր, որ նրա ձեռքում կենտրոնացուած էին առաջին անհրաժեշտութեան իրեր եւ մթերքներ, որոնք բաշխում էին միայն կուսակցականներին⁷: «Սրանով դիմում եմ եւ խնարհաբար խնդրում Ձեզանից,- գրում է Թադեոս Խաչիօզլեանը,- Ալեքսանդրապոլի գաստային կոմիտէին 1921 Ապրիլի 10ին ուղղած խնդրանքում,- որ ի նկարի ունենալով իմ բուպիկ գրոպօնը եւ իմ կուսակցական աշխատանքը, որ ես կատարում եմ կոմունիստական երիտասարդական միութեան Գաստային կոմիտէի մէջ՝ ընդատաջ գաք իմ այս խնդրին եւ կարգադրէք բաց թողնել ինձ համար մի զոյգ կոշիկ»⁸:

Ինչպէս թուրքական բռնակալման շրջանում ստեղծուած Ալեքսանդրապոլի յեղկոմի, այնպէս էլ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ Հայրեկոմի՝ թուրքական բռնութիւնները կանխելու անկարողութիւնը, սասանել էին բնակչութեան հաստը խորհրդային իշխանութեան եւ Կոմունիստական Կուսակցութեան (ԿԿ) նկատմամբ: Բնական է, որ նման պայմաններում խորհրդային իշխանութեան եւ ԿԿի ներքին քաղաքականութեան հիմնական խնդիրը պէտք է լինէր լայնացնել խորհրդային իշխանութեան հասարակական յենարանը եւ վերականգնել ԿԿի նկատմամբ վստահութիւնը⁹: Այդ նպատակով Ապրիլի 5ին, երբ թուրքերը դեռ Ալեքսանդրապոլում էին, տեղի է ունենում Հայաստանի ԿԿի Ալեքսանդրապոլի կազմակերպութեան քաղաքային համագումարը, որտեղ նախկին յեղկոմի գործունէութիւնը որակում է քաղաքականապէս սխալ¹⁰:

Հասարակական յենարանի ստեղծումը եւ ԿԿի հեղինակութեան բարձրացումը դառնում են խորհրդային իշխանութեան հաստատման եւ ամրապնդման հիմնական երաշխիքները, ներքին քաղաքականութեան հիմնական մեխը՝ թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական միջոցներով:

Թուրքական բռնութիւնների սարսափն ամբողջովին ճաշակած Ալեքսանդրապոլի գաստի հայ բնակչութիւնն իր վրայ է կրում խորհրդային իշխանութեան հաստատման եւ ամրապնդման շրջանի ողջ ծանրութիւնը: Ռազմական Կոմունիզմը (ՌԿ)¹¹՝ քաղաքական կեանքում լուրջ փորձութիւն եւ դառնում Ալեքսանդրապոլի գաստի բնակչութեան համար:

⁷ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 4:

⁸ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 5:

⁹ Ե. Չուբար, «Քաղաքականութեան խնդիրը», Կոմունիստ, 6 Յունուարի 1921:

¹⁰ Ա. Վիրաբեան, Կ. Ալեքսանեան, «Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի քաղաքային կազմակերպութեան կոնֆերանսի արձանագրութիւնները (1921թ. Ապրիլ)», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 2015:125, էջ 170-99:

¹¹ ՌԿ-ն, առաջին անգամ ստեղծուել է կիրառուել էր Խորհրդային Ռուսաստանում 1918-20ին: Այն տնտեսական միջոցառումների համակարգ էր, որը բացառում էր քաղաքի ու գիւղի միջեւ ապրանքափոխանակութեան կազմակերպումը եւ շուկայական հնարատրութիւնները: Համակարգում կենտրոնականը պարենմասնատրումն էր՝ հացի եւ այլ մթերքների բռնագրաւումը, որն իրականում վերածուել էր

1921ին թուրքերի հետանալուց երկու օր անց՝ Ապրիլի 23ին Խորհրդային Հայաստանի արտակարգ կոմիսար Պօղոս Մակինցեանի կողմից Ալեքսպոլում Լեւոն Սարգսեանի գլխատրոփեամբ կազմատրում է խորհրդային իշխանութեան մարմին՝ յեղկում¹²: Ալեքսպոլի յեղկումի նախագահի պաշտօնում Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութեան անդամ Սարգսեանի նշանակումը վկայում էր, որ կոմունիստներն այստեղ հասարակական լայն յենարան չունէին եւ ստիպուած էին օգտագործել ոչ-կոմունիստ կուսակցականների կարողութիւնները: Ընդ որում ինչպէս Սարգսեանը, այնպէս էլ Ալեքսպոլի յեղկումի ներքին գործերի վարիչ Հայկ Ամատունին զբաղեցնում էին միքանի պաշտօններ¹³: Սարգսեանը ղեկավարում էր նաեւ պարենատրոման, ֆինանսական եւ գիտատնտեսական բաժինները: Վարչական բաժինը ղեկավարելուց բացի Ամատունին յանձնարարուել էր գաառում կազմակերպել իշխանութիւնը եւ ցանքսը: Ամատունին իր վրայ էր վերցրել նաեւ թուրքերի կողմից տարուած սայլերը վերադարձնելու հարցը¹⁴:

Սարգսեանը, լինելով ճկուն քաղաքական գործիչ, կողմնակից չէր թուրքերից ամբողջովին թալանուած գաառում իրեն սպառած ՌԿի քաղաքականութեան իրականացմանը: Ապրիլի 23ի Ալեքսանդրապոլի գայեղկումին ուղղուած գրութեան մէջ նա ուղղակի յանձնարարում էր չիրականացնել ոչ մի տեսակի թոնութիւն¹⁵:

Խորհրդային իշխանութեան պետական-կուսակցական մարմինները լուրջ տարակարծութիւններ ունէին միմեանց հետ նաեւ՝ իրաասութեան սահմանների վերաբերեալ: Նորաստեղծ յեղկումի եւ գալկումի իրաասութիւնների սահմանը երկար ժամանակ չէր ճշտում: Չնայած, որ գիղական,

ծողովորդի, առաջին հերթին՝ գիղացիութեան կողոպտոսին: Գիղացուն մնալու էր այնքան հաց ու մթերք, որ անհրաժեշտ էր սնուելու եւ սերմացուի համար, մնացածը բռնագրաւում էր պետութեան կողմից՝ քաղաքային բնակչութեանը եւ կարմիր բանակի պահանջները բաարարելու պատճառարանութեամբ: Պետականացուելու էին նաեւ բոլոր գործարանները, արհեստանոցները, արտադրամիջոցները: Խորհրդային Հայաստանում այդ քաղաքականութիւնը իրականացուել էր 1920 Դեկտեմբերից մինչեւ 1921 Փետրուարը՝ յանգեցնելով փետրուարեան ապստամբութեանը: Նշելի է, որ բռնագրաւումների քաղաքականութեան հարցում տարակարծութիւններ կային Հայաստանի կոմունիստական իշխանութեան ներսում: Մասնատրապէս Գ. Ալիխանեանը, Ափս Նուրիջանեանը եւ ուրիշներ կողմ էին առաւել կոշտ եւ բռնի քայլերի, իսկ փոքրամասնութիւնը՝ Սարգիս Կասեան, Սքանազ Մուսեան, Ա. Բեկգաղեան՝ անլի հանդուժող եւ ղէմ էին գանգոսծային բռնագրաւումների (Վ. Ղազախէցեան, *Հայաստանը 1920-1940ական թթ.*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երևան, 2006, էջ 21. նաեւ՝ Ա. Յակոբեան, «Փետրուարեան ապստամբութիւնը հայ պատմագրութեան մէջ», *Վեճ*, 2011:1, էջ 138):

¹² ՀԱԱ, ֆ. 144, ց.3^ա, գ. 99, թ. 1:

¹³ ՀԱԱ, ֆ. 144, ց.3^ա, գ. 99, թ. 2:

¹⁴ Նոյն տեղում, թ. 1:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 19, թ. 5:

գաառակային եւ գաառական յեղափոխական կոմիտէների կազմակերպման մասին ՀԱՍՀ ժողկոմսովետի դեկրետով յստակ մատնանշում էին յեղկոմների գործառոյթները¹⁶, այնուամէնայնիս կոաակցական մարմինները յաճախ իրենց վրայ էին վերցնում նաեւ դրանք: Կոաակցական եւ խորհրդային իշխանութիւնների միջեւ հիմնական հակասութիւնը իրականացուող բռնագրաւումներին էր վերաբերում: Բանն այն էր, որ խորհրդային իշխանութեան եւ ԿԿի մէջ գտնուող մարդկանց մի ամբողջ խմբի համար բռնագրաւումները տնտեսապէս թալանուած գաառում ապրուստի միակ միջոցն էին համարում: Ստեղծուած ծանր ընկերատնտեսական պայմաններում, կարծում ենք խուսափել դրանից՝ հնարատր չէր:

Ալեքսայոյ յեղկոմը, մի կողմից ստիպուած էր իրականացնել ԿԿի թելադրած բռնագրաւումների քաղաքականութիւնը, միւս կողմից՝ փորձում էր մեղմել դրանք¹⁷: Ներքին գործերի բաժնի վարիչ Ամատունու բազմաթիւ շրջաբերականները՝ բռնագրաւումներն արգելելու մասին, վկայում են, որ դա նրանց չէր յաջողում¹⁸: Ընդ որում իշխանութեան լծակներն օգտագործում են ինչպէս յեղկոմի, այնպէս էլ գաակոմի ներկայացուցիչների կողմից բռնագրաւումներ կատարելու համար: Սրանց աւելանում է զինկոմը, որը բռնագրաւումներ էր կատարում կարմիր բանակին կերակրելու համար¹⁹:

Թուրքական բանակից թալանուած Ալեքսանդրապոլի գաառի հայ բնակչութիւնը ստիպուած էր կերակրել նաեւ կարմիր բանակին: Գիւղի բնակչութիւնից պահանջում է տրամադրել իր հացի ողջ աւելցումը քաղաքի բանտորութեան եւ զօրքի կարիքների համար՝ դրա դիմաց ստանալով անդորրագիր, որ իրատնք կը տար նրանց ապագայում համապատասխան բանակի արժէքով ապրանք պահանջել պետական մթերանոցներից²⁰: Սակայն միշտ չէ, որ այդ ստացականները տրում էին: Մեծ Արիւվալիի բնակիչ Մկրտիչ Տէրմիրզոյեանը Յեղկոմի նախագահին ուղղուած դիմումում գրում է, որ գաառամասային զինկոմն իրենից բռնագրաւել է մէկ հատ բրիզնետ (անձրեւից չթրջող կտոր), 11 արշին երկարութեամբ եւ 7 արշին լայնութեամբ, բայց ստացական չի տուել²¹: Ընդ որում, պարենամթերքը բռնագրաւում էր ոչ թէ աւելցուկ ունեցող գիւղացիներից, այլ ամբողջ գիւղից: Գաղթականներով ու որբերով հեղեղուած Ալեքսանդրապոլի գաառում տնտեսական ծայրահեղ քայքայման պայմաններում ապրող չքատր

¹⁶ *Յեղափոխական կոմիտէները Հայաստանում. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմ.*՝ Ս. Սահրազեան «Հայաստան» իրատ., Երեւան, 1974, էջ 63-71:

¹⁷ Կ. Ալեքսանեան, «խորհրդային պետականաշինութեան հիմնասխնորներն Ալեքսանդրապոլի գաառում յեղկոմներից խորհուրդներին անցման շրջանում», *ԳԱԱ, ՀՇՇԿ, Գիւրական աշխարհութիւններ, 2017:19, էջ 116:*

¹⁸ ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 96, թ. 8:

¹⁹ ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 2, թ. 75:

²⁰ ՀԱԱ, ֆ.1022, ց. 4, գ. 72, թ. 20:

²¹ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 2, թ. 44:

գիտլացիները վճարելու գրեթե ոչինչ չունէին: «...պապրի ունենք յայտնելու Ձեզ,- գրում է Ղըրըխ գիտլի հասարակութիւնը՝ Ալեքսանդրապոլի Յեղկոմիս ուղղած 1921 Յունիսի 7ի խնդիրում,- որ ...Յեղկոմի նախագահի շրջաբերական հրամանի համաձայն մեզանից պահանջւում էր 20 փութ միս, բայց մենք ընչազօրկ ենք եւ քայքայուած, միանգամայն չենք կարող այդպիսի պահանջներին բաարարուածութիւն փայ, քանի որ մենք կանաչով ենք սնում: Ուարի խնդրում ենք հնարատրին չափ մեզ խնայէք: Ներկայ ողորմելի դրութեան մէջ գրնոտող ընչազօրկ ու քայքայուած գիտլացիներին ազապէք այդ պահանջից»²²:

Ճիշտ է յետագայում Յեղկոմը որոշում է գիտլացիներին եւ քաղաքացիներին վճարել բանակի կարիքների համար «բռնագրաւուած հացահատիկի, խոտի ու տաարի արժէքը», բայց միեւնոյնն է, գիտլացիները չէին կարող բաարարել այդ պահանջները: 1921 Յունիսի 21ի Քալաթալուի բնակիչները՝ Ալեքալուի պարենատրման բաժնի վարիչին ուղղած գրութիւնում տեղեկացնում են, որ իրենք գտնում են անելանելի դրութեան մէջ եւ խնդրում են շուտափոյթ վերացնել գնումները²³:

Բռնագրաւումները կրում էին անկանոն եւ զանգուածային բնոյթ: Դրանցով զբաղւում էր թե՛ յեղկոմը, թե՛ գաւկոմը եւ թե՛ զինկոմը: Այս վիճակին վերջ տալու նպատակով Ամատունին 1921 Մայիսի 6ի շրջաբերականով արգելում է ամէն տեսակի բռնագրաւում եւ խուզարկութիւն, առաջարկում ոստիկանապետին եւ Գայեղկոմների նախագահներին՝ իրենց իսկ անձնական պատասխանատուութեամբ, անմիջապէս դադարեցնել ինքնական եւ ապօրինի գործունէութիւնը եւ խստագոյնս հսկել սոյն շրջաբերականի իրագործումը: Իսկ մինչ այդ տեղի ունեցած բոլոր խուզարկութիւնների եւ բռնագրաւումների մասին խիստ քննութիւն կատարելուց յետոյ շուտափոյթ իրազեկել իրեն²⁴: Բայց բռնագրաւումները չեն դադարում:

Բնակչութեանը բռնագրաւումներից չի ապահովում նաեւ անցումը նոր տնտեսական քաղաքականութեանը, որի հիմքում դրոած էր պարենհարկը: «Հայաստանի խորհրդային հանրապետութիւնը,- ասոած էր Ալեքսանդրապոլի Գաւկոմի նախագահ Շահգելդեանի պարենտուրքի անցման մասին հրամանում,- իր բանտրոններին, ծառայողներին, պաշարոնեաններին, կարմիրբանակայիներին, որբերին, գաղթականներին պահելու համար յայտարարել է պարենատրման փութը: Տուրք է դրուած հացահատիկների, խաղողի, բրդի, մսի, մեղրի, իտլի եւ պանրի վրայ: Հասարոած փութը կը վերականգնի մեր քայքայուած փնտրեսութիւնը, կը վերականգնի բանտրոնների եւ գիտլացիների հայրենիք դարձած Հայաստանը»²⁵: Մի կողմից հաս-

²² ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 2, թ. 82:

²³ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 2, թ. 75:

²⁴ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 19, թ. 10:

²⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 12:

կանալով, որ բռնությունների քաղաքականությունը վնասում է գիտացու տնտեսությունը, կառավարությունը անցնում է պարենահարկի, միա կողմից՝ ցուցակագրելով գիտացու ամբողջ ունեցուածքը՝ շարունակում է այդ բռնագրաւումները: Ալեքսանդրապոլի Գայեղկոմի նախագահ Ա. Շահգեղեանը բոլոր գաւառային եւ գիտական յեղկոմներին ուղղուած հրամանում տեղեկացնելով պարենտուրքի անցման մասին, յայտնում է, որ բերքը թաքցնողները կը համարուեն ժողովրդի թշնամիներ, կուպկներ, որոնց պէտք է բանտարկել եւ ունեցուածքը բռնագրաւել:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը որոշել է հաաքել պարենտուրքը, որը կը հաաքուի անպայման: Որեւէ գեղծում, որեւէ թուլութիւն, որեւէ սարտաժ այս հարցում պետութիւնը ամենախիստ միջոցներով արմատախիչ կ'անի: Մենք կանգ չենք առնի նոյնիսկ գնդակահարութեան աուա: Դէպի աշխատանք-պարենտուրքի յաջող հաաքելուց է կախուած մեր գոյութիւնը, մեր աշխատանքից է կախուած պարենտուրքի յաջող հաաքումը:

Հաաքունց տուրք՝ Խորհրդային Իշխանութիւնը կ'ամրանայ, կը Խորանայ, կը սկսի իր մեծ Խոշոր շինարական աշխատանքը: Իսկ տուրքը կը հաաքուի միայն այն ժամանակ, երբ հասկանանք տուրքի նշանակութիւնը եւ գիտացիներին էլ լա հասկացնենք այն: Լա պէտք է հասկացնենք գիտացուն, որ տուրքը տալուց յետոյ ազատ կարող է տնօրինել իրեն մնացած աւելորդը, որ բացի պարենատրման տուրքից ուրիշ տուրք նա չի վճարում, որ պետութիւնը վերցնելու է իրենից միայն պարենտուրքը²⁶:

Գիտացուն պարենտուրքի էութիւնը հասկացնելը համարում էր միայն աշխատանքի կէտը: Երկրորդ կէտը հնարաւորութիւն էր տալիս շարունակել բռնութիւնների քաղաքականութիւնը:

Աշխատանքի երկրորդ կէտը կախուած է մեր էներգիայից, մեր աշխատանքից: Օր ու գիշեր մենք պէտք է անդադար աշխատենք: Մեր աշխատանքից է կախուած պարենտուրքի հաաքման յաջողութեան երկրորդ կէտը: Ժողովրդի թշնամիներ կուպկները եւ անգիտակից գիտացիները պիտի աշխատեն թաքցնել իրենց ցանքի ու բերքի չափը, իրենց փեթակների ու անասունների թիւը, ամենամտողը կոի դրանք դէմ: Այդպիսիների տեղը բանտն է, այդպիսիների ամբողջ թաքցրածը կը գրաւուի: Սուտ տեղեկութիւն տուողները պետութեան կողմից կը յանձնուեն յեղափոխական դատի, որպէս հակայեղափոխականներ: Պետութիւնն աւելի խիստ եւ կտրուկ կը լինի այն գիւղխորհուրդների եւ գիւղկոմիսարների անդամների հետ, որոնք չեն յայտնի եւ կը թաքցնեն այդ ժողովրդի թշնամիներին, Խորհրդային Հայաստանի պարագիտների անունները: Գաւառականային եւ գիւղեղկոմները պատասխանատու են գիւղացիների տուած տեղեկութիւնների համար, նրանք ամէն աջակցութիւն պէտք է ցոյց տան պարենտուրքը հաաքող հրահանգիչներին, նրանք պատասխանատու են պարենտուրքն հաաքելու գործում²⁷:

²⁶ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 12:

²⁷ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 1-2:

Գիտակցելով որ բռնափնիների քաղաքականությունը վնասում է գիտա-
ցու տնտեսությունը, կառավարությունը անցնում է պարենհարկի, բայց ցու-
ցակագրելով գիտացու ամբողջ ունեցուածքը՝ շարունակում է այդ բռնագ-
րատմանը²⁸: Սեպտեմբերի 19-26ը պարենտուրըը հաաքող գաաաային
յանձնաժողովը յայտարարում է ստուգման շաքաթ, գիտացիներին տեղե-
կացնելով, որ նրանք այդ շաքաթայ ընթացքում հնարատուրյին ունեն
ուղղելու իրենց սխալ տունայները, այլապես նրանց փրկուրյին չկայ²⁹:

Պարենտուրի հիմնական սկզբունք էր համարում դասակարգային մո-
տեցումը, որի համաձայն հարկ դրում էր միայն հարուստների վրայ, որ-
պեսզի գիտացիներն իրենք մատնանչեն, թե ովքեր են հարուստները³⁰: Այս
սկզբունքի կենսագործումը սրում է իրավիճակը գաաաում: Բնակչութեան
շրջանում, լուրեր են տարածում խորհրդային իշխանութեան ժամանակա-
տր լինելու մասին: Ալեքսանդրապոլի գաաաային արտակարգ յանձնաժո-
ղովի նախագահին ուղղուած գեկուցագրում նշում է, որ բնակչութեան մե-
ծամասնութեան, յատկապես գաղթականութեան վերաբերմունքը խորի-
րային իշխանութեան նկատմամբ թշնամական է³¹:

Ալեքսանդրապոլի ԿԿն ստիպուած է լինում դիմելու ազգաբնակչութեանը՝ յորդորելով հանգստութեան եւ խաղաղութեան³²: Քաղաքական աշխատանքներ են կատարում կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան հեղինակուրյինը քարծրացնելու ուղղութեամբ: 1921 Նոյեմբերի 24ի շրջաբերականով Ալեքսանդրապոլի գաաաոի յեղկոմի նախագահն առաջարկում է. «...առանձին խնամքով ընդատաջ գնալ րեղական կարիքներին եւ բաաարարել աշխատատր րարրերի արդարացի խնդիրները, նպատակ ունենալով այն թերահաարութեան դեմն առնելու, որը հեւրեանք է նման անրարբերութեան եւ եր է մղում խորհրդային իշխանութեանից աշխատատրութեան յայն գանգուածներն ու նպատատր հող սրեղծում մեր թշնամիների պրովոկացիոն գործունեութեան ...»³³: Մեկ այլ շրջաբերականով Յեղկոմի նախագահը առաջարկում է գաաաակային յեղկոմներին հրաժարուել դատական գործառոյթներից, այն յանձնել դատական հիմնարկուրյինների³⁴:

Ստեղծում իրավիճակն օգտագործում է ԿԿի քաղաքական իշխանութիւնն ամրապնդելու համար: ԿԿի քաղաքականութեանից բնակչութեան դժգոհուրյինների համար մեղադրում են իշխանութեան մարմինները, որոնք իբր ճիշտ չէին իրականացնում ԿԿի քաղաքականութիւնը: Մասնա-

²⁸ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 4:

²⁹ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 7:

³⁰ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 66, թ. 31:

³¹ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 19 :

³² ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 6:

³³ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 18, թ. 15:

³⁴ ՀԱՍ, ֆ. 3, ց. 1, գ. 18, թ. 11:

տրապես, 1921 Մայիսի 30ին Ալեքսանդրապոլի յեղկոմի նախագահի պաշտօնից հեռացում է Սարգսեանը³⁵:

Յեղկոմի նախագահի պաշտօնում նշանակուած կոմունիստ Սերօ Մանուցեանը անմիջապէս ձեռնամուկ է լինում դասակարգային պայքարի սրման, 'դասակարգային թշնամիներ' յայտնաբերելու գործին: Նրա առաջին իսկ հրամանով առաջարկում է գասառային ու գիտական յեղկոմներին պաշտպանել աղքատ գիտացիների շահերը հարուստներից՝ սպառնալով հակառակ դէպքում խիստ պատժել նրանց³⁶: Սակայն երկու ամիս անց, երբ մեղադրանքներ են հնչում իր հասցէին, նա ստիպուած խոստովանում է, որ այս գասառում չէին կարող լինել հարուստներ, դասակարգային թշնամիներ: «Անբնական կոյրերի եւ քաղցածների մի հսկայ գանգուած: Գասառիս չորս շրջանից երկուսի քնակչութիւնը բարիս ամենալայն իմաստով արածելով է ապրե, տնտեսական ծայր աստիճան քայքայուած եւ աչքը յառած սպասում էին, թէ ինչ կը տայ իրենց նոր իշխանութիւնը»՝ գրում է Մանուցեանը Հայաստանի ԿԿ կենտկոմին ուղղած իր նամակում³⁷:

Բազմաթիւ անմեղ մարդիկ հալածանքների եւ բռնութիւնների են ենթարկուած³⁸: Խորհրդային իշխանութեան մարմիններում աշխատողներին ամենափոքր զանցանքի համար հեռացնում էին պաշտօնից եւ ձերբակալում: Մասնատրապէս, 1921 Յունիսի 23ին պաշտօնից հեռացում եւ ձերբակալում են ներքին գործերի վարիչ Ամատունին եւ իր ընկերները, որոնց մեղադրում են իրենց պաշտօնները չարաշահելու, պարտականութիւնները չկատարելու մէջ³⁹: Վերջինս իր հերթին բանտից գրուած նամակում մեղադրում է Ալեքսանդրապոլի կոմունիստներին⁴⁰: Ամատունին Օգոստոսին վտարում է Ալեքսանդրապոլից՝ խանակութիւններ սկսելու պատճառաբանութեամբ: Սակայն միմեանց մեղադրելու գործընթացը շարունակում է: Ոչ մէկը ապահովուած չէր այս ամէնից: Սրտում են հակասութիւնները ինչպէս տեղական յեղկոմի եւ գաւկոմի, այնպէս էլ կենտրոնական եւ տեղական իշխանութեան մարմինների միջեւ: 1921 Մայիսի 29ին Հայաստանի ԿԿը սկսում է իրականացնել կուսակցութեան վերացուցակագրում՝ նպատակ ունենալով կուսակցութիւնից հեռացնել մտատրականներին, հիմնականում նախկին մանրբուժողական կուսակցութիւնների անդամներին, որոնց գիտելիքներն ու փորձը օգտագործել էր խորհրդային իշխանութեան հաստատման առաջին շրջանում: «Կուսակցութեան անձնական կազմը վերաբննելիս, - ասում էր Յունիսի 1ին Հայաստանի ԿԿ բոլոր կազմակերպու-

³⁵ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 5:

³⁶ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 15:

³⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 114, թ. 30-32:

³⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 158, թ. 3:

³⁹ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 201-203:

⁴⁰ Ա. Յակոբեան, «Մի ամբաստանագիր Ալեքսանդրապոլի յեղկոմի խայտառակ գործերի մասին», *ՎԷՄ*, 2015:1, էջ 228-61:

թիւներին ուղղուած կոչում,- կրկնակի ուշադրութիւն պէտք է դարձնել այն անդամների վրայ, որոնք դուրս են եկել ունետր դասակարգի ծոցից: Նրանց նոփրածութիւնը մեր կուսակցութեան գաղափարներին պէտք է եւ հնարատր է փորձել ու ստուգել քաղաքացիական կոռուի ընթացքում նրանց բռնած դիրքից: Վերացուցակազրոյների, յանձնաժողովների եւ ամէն մի կուսակցական ընկերոջ կրկնակի քննութեան առարկայ պիտի դառնան եւ մեր կուսակցութեան այն անդամները, որոնք պարկանելիս են եղել նորերս մեզ միացած ազգային մանր բուրժուական կուսակցութիւններից: Աւելի զգուշատր վերաբերմունք պէտք է ցոյց տալ եւ ընդառայ գնալ բանտորներին ու չքատր գիւղացիներին՝ թէկուզ նրանք քաղաքականապէս պակաս պարտաւորութիւն ունենան: Կուսակցութիւնը կարճ ժամանակամիջոցում կը կարողանայ նրանց քաղաքականօրէն, կոմունիստօրէն մարզել, միայն թէ նրանք դասակարգայնօրէն լինեն մեր կուսակցութեան բարեկամները եւ նոփրուած բանտորա-գիւղացիական յեղափոխութեանը»⁴¹:

1921 Յունիսի 1-3ին Ալեքսանդրապոլի գաառում տեղի է ունենում ԿԿ անդամների վերացուցակազրում, որի հիմնական նպատակը մտաւորականներին ԿԿից եւ խորհրդային իշխանութեան մարմիններից հեռացնելն էր⁴²: Մաքրագործումը կատարում էր ամենախիստ հիմունքներով⁴³: Գաառային վերացուցակազրման նախագահ Աշոտ Յովհաննիսեանը Վերացուցակազրման Կենտրոնական Յանձնաժողովին ուղղուած զեկուցման մէջ նշում է, որ «Ալեքսպոլի կազմակերպութիւնը հակառակ կենտրոնում փրորող կարծիքի աւելի քան թոյլ է, գէթ կազմակերպութեան մէջ մտնող անդամների գարգացման ընդհանուր մակարդակով: Ինքնիզգենար կուսակցութիւնների մեծ մասը բացարձակ արտայայտութեամբ ոչ մի հասկացութիւն չունեն կոմունիստական աշխարհայեացքի հիմնական գաղափարների մասին: Եւ որպէսզի կուսակցութիւնը զերծ մնայ դրանց անխուսափելի վրիպումների պարտախանարութիւնից յանձնաժողովը անկէտաներ ընդունելիս հարցաքննում էր ընկերներից շարերին, յարկապէս կասկած յարուցող ինքնիզգենարներին»⁴⁴: Կոմունիստները ներկայացնելու էին իրենց կենսագրութիւնը, յատկապէս աշխատանքի վայրը պատերազմից առաջ եւ գործունէութիւնը փետրուարեան յեղափոխութեան տարիներին, քանի որ երկրում առաջացած տնտեսական դժուարութիւնները մեծ մասամբ պայմանաւորում էր փետրուարեան ապստամբութեան հանգամանքով: Կենսագրութեան ճշտութիւնը պէտք է հաստատուած լինէր երկու կուսակցական անդամների կողմից⁴⁵: ԿԿ անձնական կազմը ստուգող եւ մաքրող գա-

⁴¹ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 5:

⁴² ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 68:

⁴³ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 4, թ. 36:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 158, թ. 2:

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 2:

առաջին յանձնաժողովի ՀԿԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության բոլոր անդամներին եւ թեկնածուներին ուղղուած կոչում նշում էր, որ ԿԿն իր շարքերից մաքրելու է սոցիալիստական յեղափոխութեան եւ պրոլետարական դիկտատուրայի թշնամիներին⁴⁶: Իրականում ԿԿ շարքերը ստորացել էին, քանի որ ԿԿին անդամագրուելը հնարատրութիւն էր տալիս լուծել գոյութեան տարրական պայմանները՝ սկսած մի զոյգ կօշիկից եւ վերջացրած ամենաանհրաժեշտ իրերից: Մինչդեռ նրանք մեղադրում են ԿԿին ձախողումների մէջ, համարում ժողովրդի թշնամի:

Վերացուցակազրուումները եւ բռնագրատումները խորացնում են բնակչութեան անվստահութիւնը խորհրդային իշխանութեան նկատմամբ: Յեղկոմի նոր նախագահ Շահգեղեանը այս մթնոլորտում ձեռնամուկ է լինում ՆԷՊի (նոր տնտեսական քաղաքականութիւն) իրականացմանը, որը մշակուել եւ ընդունուել էր Ռուսաստանում 1921 Մարտին տեղի ունեցած ՌԿ/ԲԿ 10րդ համագումարի կողմից⁴⁷: Այս քաղաքականութեամբ ենթադրում էր, որոշ ազատութիւն տալ գիւղացիներին, արգելել բոլոր տեսակի բռնագրատումները, սահմանել առետրի եւ գների ազատականացում: Սակայն բռնագրատումները շարունակում են գիւղացիների ունեցուածքը ցուցակագրելու տեսքով, երբ ցուցակագրում էին անելի շատ քան նրանք ունէին՝ գրկելով վերջիններիս հարկերը տալուց յետոյ իրենց կարիքները հոգալու հնարատրութիւնից: Այս վիճակը դժուարացնում է ՆԷՊի քաղաքականութեան իրականացումը: Թէեւ Հայաստանում պարենտուրքի մասին ՀՍԽՀ ժողովմարտիի իրահանգը, որով պարենմասնատրմանը փոխարինելու էր պարենհարկը, ընդունուել էր 1921 Յունիսի 24ին⁴⁸, Ալեքսանդրապոլի գաառում պարենտուրքի անցման մասին հրամանը տրուում է միայն Սեպտեմբերին⁴⁹: Խնդիրն այն էր, որ մինչեւ պարենտուրքի անցնելը տեղական իշխանութիւնները պէտք է ցուցակագրէին գիւղացիների ունեցուածքը: Մինչդեռ երկարատեւ բռնագրատումներից զզուած գիւղացիները չէին հաատում ո՛չ խորհրդային իշխանութեանը եւ ո՛չ էլ բռնագրատումներն արգելելու հրամաններին ու թաքցնում իրենց ունեցուածքը:

Շահգեղեանը բոլոր գաառային եւ գիւղական յեղկումներին ուղղուած հրամանում, տեղեկացնելով պարենտուրքի անցման մասին, յայտնում է, որ բերքը թաքցնողները կը համարուեն ժողովրդի թշնամիներ, կուպկներ, որոնց պէտք է բանտարկել եւ ունեցուածքը բռնագրաւել, նոյնիսկ կանգ չառնել գնդակահարութեան առաջ⁵⁰:

⁴⁶ ՀՍՍ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 2:

⁴⁷ Գ. Գնդամանս, *Սոցիալ-տնտեսական փոփոխութիւնները Հայաստանում ՆԷՊի տարիներին*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեան, 1978, թ. 42:

⁴⁸ *Յեղափոխական կոմիւրէները*, էջ 183:

⁴⁹ ՀՍՍ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 12:

⁵⁰ ՀՍՍ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 1-2:

1921 Սեպտեմբերի 15ին Հայաստանի ԿԿ գաառային կոմիտեն և Ալեքսանդրյանի յեղկոմը կոչով դիմում են գիտացիներին հաաքելու տուրքը⁵¹: Գաառային յանձնաժողովը Սեպտեմբերի 19-26ը յայտարարում է պարենտուրքը հաաքող ստուգման շաքաթ, գիտացիներին տեղեկացնելով, որ նրանք այդ շաքաթուայ ընթացքում հնարատրոպիւն ունեն ուղղելու իրենց սխալները, այլապէս փրկութիւն չունեն⁵²: Պարենտուրքի հիմնական սկզբունք էր համարում դասակարգային մօտեցումը, որով հարկ էր դրում միայն հարուստների վրայ, որպէսզի գիտացիները իրենք մատնանշեն, թէ ովքեր են հարուստները⁵³: Այս սկզբունքի կենսագործումը սրում է իրավիճակը գաառում: Ալեքսանդրապոլի գաառի քնակչութեան, յատկապէս աքեմտահայ գաղթականութեան անվատահոպիւնը խորհրդային իշխանութեան նկատմամբ աւելի է խորանում, վերաբերմունքը դառնում՝ թշնամական⁵⁴: Ալեքսանդրապոլի ԿԿը ստիպուած է լինում դիմել ազգաքնակչութեանը՝ յորդորելով հանգստութեան և խաղաղութեան⁵⁵:

Հայաստանի ԿԿը ժողովրդի դժգոհոպիւնը իրականացուող քաղաքականութեան նկատմամբ պայմանատրում է տեղական իշխանութիւնների գործունէութեամբ: Մասնատրապէս, Ալեքսանդրապոլի գաառի յեղկոմի նախագահ Մանուցեանը մեղադրում է գիտացիների հետ սերտ շփումներ չհաստատելու, ՆԷՊի էութիւնը քնակչութեանը քացատրելու և այլ հարցերում: ՀԿԿ Ալեքսանդրապոլի գաառային կազմակերպութեան 1921 Սեպտեմբերի 5ից 9ը Ալեքսանդրապոլում կայացած գաառային կուսակցական կազմակերպութեան կոնֆերանսում Մանուցեանը ենթարկում է բռուն քննադատութիւնների⁵⁶: Իր հերթին, Մանուցեանը քննադատութեան սլացներն ուղղում է կուսակից ընկերներին: Օրակարգում յայտնում է երկաթեայ կարգապահութեան կարգախօսը: Բանն հասնում է այնտեղ, որ շատերը սկսում են իրենք իրենց մեղադրել:

Միաժամանակ 1921 Սեպտեմբերին տեղի է ունենում ԿԿի հերթական վերացուցակագրումը, որն այս անգամ անցկացում բաական խիստ⁵⁷: Ըստ վերացուցակագրման Յանձնաժողովի նախագահ Ա. Յովսէփեանի գտումը տեւել է երկու ամիս, քանի որ նախկինում շատ կուսակցականներ լրջութեամբ չեն վերաբերուել գործին: Իսկ այդ գտման ժամանակ 369 կոմունիստներից 159 «խորհրդային կարգերի թշնամի քարրեր, մորթապաշտներ և մեր կուսակցութեան համար խորթ էլենեարներ» նկատուելով

⁵¹ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 4:

⁵² ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 7:

⁵³ ՀԱԱ, ֆ., ց. 1, գ. 66, թ. 31:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 19:

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 6:

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 1-2:

⁵⁷ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 1, թ. 13:

հեռացուել են⁵⁸: Այս վերացուցակագրումը առանձնապատու է եղել նաեւ նրանով, որ բացի մտատրականներից, որոնց թիւն ամենաշատն էր՝ 40 տոկոս, հեռացուել են նաեւ գիտացիներ, բանուորներ եւ արհեստատրներ: Դեկտեմբերի 14ին Հայաստանի ԿԿ Ալեքսանդրապոլի կազմակերպութեան ընդհանուր ժողովում Յովսէփեանը զեկուցել է, որ վերացուցակագրման արդիւնքում «անգործ ընկերները հեռացուած են եւ կուսակցութիւնը դարձել է բանուորական»⁵⁹: Յատկանշական է, որ ի տարբերութիւն կուսակցական միա ժողովների, այստեղ զեկուցումները կրել են տեղեկատուական բնոյթ եւ չեն ունեցել հակաճառութիւններ:

Յեղկումների եւ ԿԿի կազմը «վտանգատր» տարրերից մաքրելուց յետոյ Հայաստանի կոմկուղը ձեռնամուխ է լինում ընտրական գործընթացի կազմակերպմանը⁶⁰: ԿԿի յաղթանակը ապահովելու նպատակով սահմանում է *ակփրի* եւ *պասի* ընտրողական իրատունք, որի հիման վրայ ԿԿի համար անցանկալի բազմաթիւ մարդիկ յայտարարուելով ձայնագրակ, (*պասի*) զրկում են ընտրական իրատունքից⁶¹: *Պասի* ընտրական իրատունք ունեցողներն էին՝ վարձու աշխատանք շահագործողները, առանց աշխատանքի եկամուտով ապրողները, մասնատր առեւտրականները, կուսակրօնները, հոգեւոր պաշտօնեաները, նախկին կառավարութեան անդամները, նախկին ոստիկանութեան գործակալները, քաղաքացիական կռուի ժամանակ իշխանութեան դէմ կոռած խմբապետերն ու մուղզերիստները, հոգեկան հիւանդ կամ խելագար ճանաչուածները, ինչպէս նաեւ խնամքի տակ գտնուածները, եւ վերջապէս օրէնքով կամ դատական վճռով իրաւութեանից զրկուածները:⁶² Արդիւնքում 1921 Դեկտեմբերին տեղի ունեցած ընտրութիւններում իշխանութեան մէջ մտնում են միայն կոմունիստները եւ ԿԿի հասնութեամբ ընտրուած չքատրները, որոնք մեծ մասամբ անկուսակցականներ էին եւ անգրագէտ: Այս ընտրութիւններով աարտում է խորհրդային պետականաշինութեան առաջին փուլը՝ յեղկումներից խորհուրդների անցման շրջանը: Յեղկումները, որոնք նշանակովի իշխանութեան մարմիններ էին իրենց գործն աարտած համարելով, իշխանութիւնն յանձնում են ընտրութիւններով ձեատրուած խորհուրդներին: 1922 Յունուարից սկսում է խորհուրդների իշխանութեան ամրապնդման ժամանակաշրջանը: Խորհրդային իշխանութեան պետականաշինութեան հիմքում դրուած բռնաճնշումների քաղաքականութիւնը յետագայում եա շարունակում է:

Թուրքական սարսափներն ապրած Ալեքսպոլի գաառի բնակչութիւնը եւ այստեղ ապաստանած արեւմտահայ գաղթականութիւնը մեծագոյն ողբեր-

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 77:

⁵⁹ Եոյն:

⁶⁰ Կ. Ալեքսանեան, «Խորհուրդների առաջին ընտրութիւններն Ալեքսանդրապոլի գաառում», ՀՀ ԳԱԱ, ԾՀՀԿ, *Գիտական աշխարհութիւններ*, 2017:20, էջ 184:

⁶¹ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, թ. 118:

⁶² ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, թ. 118:

գուպին են ապրում: Բազմաթիւ հայեր ստիպուած լինելով խաղալ այս խաղի կանոններով, իվերջոյ 1937ին յայտնուում են ստալինեան բռնաճնշումների ընդհանուր մասդացում՝ խորացնելով հայոց ողբերգութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ալեքսանդրապոլի գաւառի խորհրդային իշխանութեան հաստատման առաջին շրջանում կատարուած քաղաքական բռնութիւնների ուսումնասիրութեամբ յանգել ենք այն եզրակացութեան, որ խորհրդային իշխանութեան հասարակական յենարանի բացակայութիւնը եւ խորհրդային Ռուսաստանի քաղաքական վնասակար ազդեցութիւնը, դարձան յեղկոմներից խորհուրդների անցման շրջանում խորհրդային պետականաշինութեան հիմքում ընկած քաղաքական բռնութիւնների հիմնական պատճառները:

Թուրքական բռնակալման հետեանքով Ալեքսանդրապոլի գաւառում ստեղծուած ընկերատնտեսական ծանր վիճակը, իրենց կարողութիւնները խորհրդային պետականաշինութեանը իսպաս դրած եւ ԿԿ շարքերը համալրած ոչ-կոմունիստ անդամների առկայութիւնը յեղկոմներում, կենտրոնական եւ տեղական իշխանութեան մարմինների, տեղական յեղկոմների ու կուսակցական մարմինների հակասութիւններն ու իրաստութեան համար պայքարը, առանձնայատուկ պայմաններ են ստեղծել այստեղ քաղաքական բռնաճնշումների համար:

Խորհրդային պետականաշինութեան հիմքում ընկած ռազմական կոմունիզմի չարդարացուած բռնաճնշումների քաղաքականութիւնն իր տարբեր դրսետրումներով (բռնագրաւումներ, վերացուցակագրումներ, քաղաքացիական իրաւունքի զրկում) մեծ ողբերգութիւն դարձաւ թուրքական սարսափներն ապրած Ալեքսանդրապոլի գաւառի բնակչութեան, յատկապէս արեւմտահայութեան համար:

THE POLITICAL VIOLENCE OF THE SOVIET AUTHORITIES IN THE PROVINCE OF ALEXANDROPOL (APRIL-DECEMBER 1921)

(Summary)

KARINE ALEXANIAN (karineal@mail.ru)

The paper describes and examines the governance of the early sovietization period in the province of Alexandropole. Lacking enough grassroots support, the authorities established in Armenia on December 2, 1920 relied on violence and force to implement their policies.

The newly formed authorities first recruited members of allied parties, who joined in to improve the socio-economic conditions of the province, from which the Turkish occupying forces were still being evacuated. However, the contradictions and rivalry between the local and the central authorities generated the opportunity to use force. Failure to improve conditions led to violence and the purging of Communist ranks of allied figures and the shifting from policies of "military communism" to those of a "new economic plan" and the consolidation of communist rule in the province and the country at large.

ՀԱԼԷՊԱՀԱՅ ՌԻՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ (1938-1946)

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՅԱՆԻ (fishenkjianani@hotmail.com)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Նոր ծեսատրուող Ափիոքի համայնքներու 1920-30ի առաջնահերթութիւնները շատ էին.- գաղթականներու տեղատրում, որբահաաքի աշխատանք, հայ դպրութեան զարկ տալ...: Կարելի չէր սակայն պատկերացնել հայ կեանքի գոյատեւումը առանց հայ դպրոցի ու եկեղեցոյ: «*Հայ իրականութեան մէջ, սերունդը մրատրապէս եւ բարոյապէս բարձրացնելու միակ ազդակը դպրոցն է, եւ նոր սերունդը՝ անեի քան երբեք, հիմնական առողջ դաստիարակութեամբ առաջնորդելու պէտք ունի*»¹ կը գրէ ատենի կրթական մշակ Խաչիկ Քարուկեան²: Ան կրթադաստիարակչական գործի առաջնահերթ խնդիր կը համարէ ուսուցիչի պատրաստումովինը, անոր վերապահելով գաղափարական մարդը պատրաստելու, երեխային մէջ ազգային գիտակցութիւնը արթնցնելու դերը. «*Ուսուցիչը տեսակ մը բարոյագիրութեան առաքեալ պիտի ըլլայ դպրոցէն ներս եւ դուրսը...*»³: Ուստի, կրթական գործի յաջողութեան գրասականին համար անհրաժեշտ էր.-

- Ունենալ խնամքով պատրաստուած կրթական ծրագիր,

- Նպաստել կրթական գործին՝ պատրաստելով «*ցեղին մէջ գաղափարական մարդը, արթնցնելու ազգային գիտակցութիւնը եւ ազնուացնելու հայ հոգին ու միտքը*»⁴:

1925ին ետք, սակայն, Սուրիոյ⁵ մէջ տիրող քաղաքական անորոշ կացութեան եւ ընդհանուր տնտեսական տագնապին հետեանքով՝ ինչպէս

¹ Խաչիկ Քարուկեան, «Կրթական Տեսութիւններ», *Սուրիահայ տարեցոյց, Ա. տարի, Հայէպ, 1924, էջ 93-94:*

² Խաչիկ Քարուկեան (Զեյթուն, 1887–Քամիշլի, 1960), Քեսապի մէջ ուսուցչութեամբ զբաղած է: 1929ին Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Կարչութեան կողմէ կը լիազօրոյց Սուրիոյ հայաքնակ վայրերու մէջ Կարմիր Խաչի մասնաճիւղեր հիմնելով օգնութեան փութալու հայ կարիքատարներուն: 1930ին Քարուկեան լիազօրի հանգամանքով կ'ուղարկուի Գրըգ Խան, Սուետիա, Անտիոք եւ Ալեքսանտրէի շրջանները (Ա. Ֆիշենկեան, *Յուշամարտեան Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919–2009*, Հայէպ, տպ. Արեւելք, 2010, էջ 48, 57. նաեւ՝ Խաչիկ Քարուկեան, *Տխոր յուշեր անցեալէն*, խմբ.՝ Ա. Տազեւեան, Պէրլուօ, տպ. Զարթօնք, 1987:

³ Քարուկեան, «Կրթական Տեսութիւններ», էջ 94:

⁴ Նոյն:

⁵ Սուրիոյ երեք գլխաւոր քաղաքներն էին Հայէպը (իր շրջակայ գաւառակներով՝ Տէր Զօր, Ռաքքա, Ճարապլուս, Մեմլիճ, Պապ եւ Ազգ), Պէրլուօը (իր շրջակայ-

հայ գաղթականներու մեծ զանգուածը, այնպէս ալ Հալէպի եւ Սուրիոյ այլ վարերու ազգային, միութենական, յարանուանական եւ այլ կրթական հաստատութիւններուն կարեւոր մէկ մասը մատնուած էր նիւթական դժուար վիճակի, եւ անհրաժեշտ էր միջոցներ որոնել նեցուկ կանգնելու կրթական գործի բարելաման ու յարատեւման:

Հայ դպրոցը պահելու համար պէտք էր այդ դպրոցներուն ամսավարկը հասաւարակշռել⁶: Կարեւոր էր շրջանաարտ պատանիներու ուսման շարունակութեան ապահովումը՝ հարց մը որ ինքնին անհրաժեշտ էր այդ օրոնան պայմանները նկատի առնելով:

Ասոնց վրայ կու գային գումարուելու ուսուցիչներու մասնագիտացումի եւ վարձատրումի հիմնախնդիրները, որոնք համայնքի ձեւատրման օրերէն ուշադրութիւն հրաւիրած էին իրենց վրայ:

Սուրիոյ մէջ չկային նախաեղեռնեան «վարժապետանոցներ»: Համայնքի ձեւատրման օրերուն ուսուցչութիւնը հայ հասաւարակութեան կողմէ ընկալուած էր առհասարակ իբրեւ անգործներու ասպարէզ. դիւրութեամբ ուսուցչական պաշտօն կը ստանձնէին «...ե՛ւ հողագործը, ե՛ւ դերձակը, ե՛ւ երկաթագործը, ե՛ւ վաճառաւորան գրագիրը, ե՛ւ կայարանի պաշտօնեան, իսկ այս դասն իրականութեան առջեւ փոխար ուսուցիչները հեղափոխել կը քաշովէլին ասպարէզէն»⁷, կը գրէ Քարուկեան:

Սուրիոյ հայկական քնակավայրերու ուսուցիչներու կրթական-մասնագիտական կարողութիւններու բարելաման մտասերտումով կը ձեռնարկուի սուրիահայ ուսուցչական միութեան մը յառաջացումին, որ նպատակ ունենար «Սուրիոյ հայ ժողովուրդի կրթական գործին բարձրացմանը նպաստել»⁸:

Այս ուսումնասիրութիւնը նուիրուած է Հալէպահայ Ուսուցչական Միութեան պատմութեան (1938-1946): Ան կը ներկայացնէ Սուրիոյ – յատկապէս Հալէպի – հայկական վարժարաններու ուսուցիչներու մասնագիտացման խնդիրներու լուծման համար համայնքի ազգայիններու եւ մտաւորականներու նախաձեռնութեամբ 1925ին (կարճատեւ) եւ 1938ին վերակազմուած Հալէպահայ Ուսուցչական Միութեան (ՀՈՄ) ծնունդն ու 1938-46 շրջանի գործունէութիւնը: ՀՈՄի պատմութեան ուսումնասիրութիւնը այժ-

քով՝ Սայտա, Ծինիէ, Ղազիր, Զահլէ, Ռայաք, Թրիփոյի, Լաթաքիա, Համա, Հոմա) եւ Դամասկոսը: Սուրիոյ կեդրոնական փոքր քաղաքներն էին Իսլիպը, Ծիւր-Շուղուրը, Ռաս-Պասայպէքը եւ Պասայպէքը (Գ. Գապպէնճեան, «Սուրիա (քաղաքական, կրօնա-պատմական, կրթական եւ տնտեսական տեսակէտով)», *Տաթեւ փարեցոյց, Բ. տարի*, Հալէպ, 1926, էջ 291-2):

⁶ Տնտեսական այդ բացը կը զոցուէր մեծ մասամբ բարեսիրական հաստատութիւններու կողմէ:

⁷ Քարուկեան, «Կրթական Տեսութիւններ», էջ 94-95:

⁸ Ծրագիր-կանոնագիր Հայ Ուսուցչական Միութեան Միւրիոյ, 1925, ա տ., էջ 1:

մէական կը համարենք, որովհետեւ ան Սուրիոյ հայ համայնքին եւ յատկապէս 1930-40ականներու Հալէպի մէջ ազգային դպրոցի կազմակերպումի, արեւմտահայ լեզուի պահպանման ու տարածման, կրթադաստիարակչական, մշակութային եւ մանկավարժական պատմութիւնը հետազոտողներու է՝ հայ Սփիւռքի կազմաւորման պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղողներուն համար հարուստ նիւթ կը հայթայթէ:

1925ի 'Հայ (Սփիւռք) Ուսուցչական Միութեան' վերաբերեալ աղբիւրները սակաւ ըլլալով, մեր շարադրանքը հիմնած ենք ժամանակի մամուլի տեղեկատուութեանց վրայ: ՀՈՄի 1938-46 գործունէութեան վերաբերեալ ատենագրութիւններու եւ տեղեկագիրերու ծաւալուն ծրար մը կը գտնուի Հայաստանի Ազգային Արխիւի (ՀԱԱ⁹) ֆոնտերուն մէջ: Հաւանաբար մամուլի էջերուն հատուկենտ հանդիպինք ՀՈՄի տարբեր տարիներու գործունէութեան տեղեկագիրերու, սակայն այդ բոլորը չեն կրնար արտացոլել 1925-46 ուղին:

1925Ի ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ (ՀՀՈՍ)

1925 Ապրիլի վերջը, Հալէպի մէջ «... արհեստակցական հողի վրայ Ուսուցչական Միութիւն մը կազմելու գաղափարը իրականացման շարժին մէջ մտած էր»¹⁰ արդէն: Մայիսին, Հալէպի բոլոր վարժարաններու ուսուցիչները միասնաբար, կը գոյացնեն «ուժեղ միութիւն մը»¹¹: Ուսուցիչներ, մինչեւ Մայիս 1 կ'ունենան երկու մասնակի նիստեր, որոնց յաջորդաբար ներկայ կը գտնուին համապատասխանաբար շուրջ քսան եւ երեսունէ անէլի ուսուցիչներ: Երկրորդ նիստին կ'ընտրուի յանձնախումբ, որուն պարտականութիւն կը տրուի կազմել միութեան ծրագիր-կանոնագիրը: Յաջորդող նիստերուն մասնակցող եւ միութեան կազմութեան զարկ տուող կրթական գործիչներուն փափաքն էր միութիւնը զերծ պահել «արտաքին ազդեցութենէն կամ հասրոածային շեղումներէ», եւ ունենալ «սենտիքայի մը հանգամանքը»¹²:

Ուրբաթ, 1 Մայիս 1925ին Հալէպի Ազգային Մանկապարտէզի շէնքին մէջ գումարաւոր երրորդ նիստին ներկայ կ'ըլլան 60է անէլի ուսուցիչ-ուսուցչուհիներ: Կը կարդացուի յանձնախումբին պատրաստած ու խմբագրած ծրագիր-կանոնագիրը, որ նոյնութեամբ կը վաւերացուի. կ'ընտրուի

⁹ ՀԱԱ, ֆոնտ /Ֆ/ 1421, ցուցակ /ց/3:

¹⁰ Սուրիական մամուլ օրաթերթ, 1 Մայիս 1925:

¹¹ Գ. Դուրան, «Հալէպի հայ կեանքէն», *Նոր փինիկ եռօրեայ թերթ*, 13 Մայիս 1925, էջ 2:

¹² Սուրիական մամուլ, 1 Մայիս 1925:

նան անժամայ վարչություն, հետեւեալներէն.- Մ. Երեցեան, Ա. Արծրունի եւ Միհրան Աճեմեան¹³:

Նոր փինիկ կ'ողջունէ Հալէպի Հայ Ոստիցական Միութեան կազմութիւնը հաստատելով, որ « այս Միութիւնը պիտի ազդուի ոչ մէկ արտաքին հոսանքէ եւ պիտի սրանայ տեսակ մը սենտիքայի ընդթափ¹⁴»: Լրատուն հաստատած է, որ ՀՀՈՄը կ'արդարացնէ իրեն վրայ դրուած յոյսերը¹⁵:

Այնուհետեւ, ՀՀՈՄի վարչութիւնը «Ազդ հայ ոստիցութեան» կոչով կը խնդրէ հայկական վարժարաններուն մէջ պաշտօնավարելու համար Հալէպ գալ փափաքող կամ մինչ այդ հրաւեր ստացող երկսեռ հայ ոստիցիներէն, որ դիմեն ՀՀՈՄի վարչութեան, որպէսզի ստանան աշխատանքի պայմաններու վերաբերեալ ճշգրիտ եւ մանրամասն տեղեկութիւններ ու ըստ այնմ բանակցին պատկան մարմիններուն հետ¹⁶: Փաստօրէն, Միութիւնը նպատակ կը հետապնդէր պաշտպանել ոստիցիներուն շահերը, ծանօթացնել դիմորդը ոստիցաց պարտականութիւններուն եւ իրաւունքներուն...

Նոր փինիկը յաճախ անդրադարձած ու քննարկած է այն պատճառները, որոնք կը խոչընդոտէին Հալէպի համայնքէն ներս հայ ոստիցական միութեան գոյութիւնն ու գործունէութիւնը: Թողթակիցը կը նշէ, որ Հալէպի մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ միութիւններէն, մեծ մասամբ ՀՀՈՄն է որ գիտական ընթացումով լծուած է աշխատանքի եւ կը ջանայ բոլոր կարելի «միջոցներով բարձրացնել հայ ոստիցական ասպարէզը»¹⁷ ու խորիլի Հալէպի կրթական կեանքէն ներս ստեղծուած քառսին մասին: Ի հեճուկս յարուցուած դժուարութիւններուն ու ոտնձգութիւններուն, ՀՀՈՄը կը գնահատէ իրավիճակը ու միանայ գործունէութեան ընթացքին կազմակերպուած աշխատանք կը կատարէ:

1926 կրթաշրջանին ՀՀՈՄը կը զբաղի կազմակերպական աշխատանքով, կը նախաձեռնէ երկշաբաթեայ դասախօսութիւններ ձեռնհաս ուսու-



¹³ Դուրան:

¹⁴ Լոյն:

¹⁵ Լոյն:

¹⁶ «Ազդ հայ ոստիցութեան», *Նոր փինիկ*, 5 Սեպտեմբեր 1925, էջ 4:

¹⁷ Լոյն:

ցիչներու կողմէ¹⁸, որուն ներկայ կ'ըլլայ Հալէպի հայ ոսուցիչներու մեծամասնութիւնը: Դասախօսութիւններուն կ'ողտկեցէին գեղարուեստական յայտագիրեր¹⁹: Փետրուարին՝ միութեան անդամակցած էին շուրջ 72 ոսուցիչ-ոսուցչուհիներ:

Արխիւներու եւ մամուլի մէջ արձագանգի բացակայութեան պատճառով՝ դժուար է յստակ ըսել ՀՀՈՄի գոյատեւումին մասին եւ թէ յետագային ինչպիսի գործունեութիւն ծաւալած է ան: Սակայն կարելի է ենթադրել թէ շատ երկար չէ եղած անոր կեանքը, մանաւանդ որ ցաւախրտ արտայայտութիւններ կան անոր «մարումին» մասին²⁰: Յիրաւի, արդէն 1926 Փետրուարին՝ «կատարեալ ամրութեան ու գրեթէ կէս կազմալուծուած»²¹ վիճակ կը ստանայ ՀՀՈՄը:

1930ականներուն թէեւ ՀՀՈՄը դադրած էր գործելէ, բայց հայ ոսուցիչի մասնագիտացման հիմնախնդիրը չէր կորսնցուցած իր հրատապութիւնը կրթամասնագիտական առումով: Անյոճ կը մնային նաեւ հայ ոսուցիչին ընկերային-տնտեսական հիմնախնդիրներ²²: Յիրաւի տնտեսական երեսակը շատ ճնշիչ էր: Այս մասին, Պէլրոյթի Հայ Ճեմարանի տնօրէն-ոսուցիչ Լեւոն Շանթ կը հասատէ: «ողորմեյի ամսականները բնականաբար ողորմեյի ու ամէն բանի կարօք կեանք մը կը բերեն իրենց երեւէն. Կնկրեսական սպորիս դիրք մը, ընկրանեկան դժարութիւններու մէջ Կրպրկող անձ մը. որ ո'չ ժամանակ, ո'չ ալ միջոցներն ունի իր կատարելագործման մասին մրաձելու, ո'չ ալ նոյնիսկ կրթական հարցերով լրջօրէն զբաղուելու»²³:

Եփրատի 4 Յունիս 1930ի խմբագրականէն կ'իմանանք, որ թերթի խումբ մը աշխատակիցներ²⁴ այցելած են Սուրիոյ, գլխաւորաբար Հալէպի,

¹⁸ Դասախօսութիւններ կարդացած են Արտաազգ վրո. Սիւրմէեան՝ «Ոսուցիչ կոչումը», Մ. Երեցեան՝ «Անձը աշակերտի մէջ», դոկտ. Աշոտ Գասպարեան՝ «Գեղարուեստի ստեղծագործութիւնը» նիւթերով:

¹⁹ Ներկայ մը, «Հալէպի հայ ոսուցչական միութեան երեկոյթը»:

²⁰ Ա. Օրջանեան, «Կրթական այժմէական հարցեր», *Լիբանան անկախ հայաթերթ*, 22 Յունիս 1926, էջ 1-2:

²¹ Ներկայ մը, «Հալէպի հայ ոսուցչական միութեան երեկոյթը», *Նոր փիւնիկ*, 27 Փետրուար 1926, էջ 2:

²² Խմբագրական, «Անկեղծ խօսքեր կրթական գործին շուրջ. ոսուցիչներու վիճակը», *Եփրատ օրաթերթ*, 4 Յունիս 1930, էջ Ա.:

²³ Լ. Շանթ, *Երկեր, հրո. 6*, Համազգային հրատ., Պէլրոյթ, տպարան Համազգային, 1951, էջ 251:

²⁴ Խմբագրականի «հետաքրքրուած ենք», «պարզած ենք» արտայայտութիւնները մեզի ենթադրել կու տան, որ *Եփրատի* թիւ 294, 295, 296 համարներու Ա. էջի ա-

ազգային ու մասնատր վարժարանները, հետաքրքրուած հայ ուսուցիչի կարգավիճակով նաեւ ու պարզաձ են, որ հայ ուսուցիչը չ'արժանարար բաւարար վարձատրութեան եւ անհրաժեշտ հոգածութեան²⁵: Թերթը կը գրէ, որ հայրենի երկրին մէջ եթէ հայ եկեղեցին կրցած է առանձինն պահել հայ դպրոցն ու հայ ընտանիքը, ապա նոյնը չէ գաղթաշխարհին մէջ, որովհետեւ «*Դպրոցին վիճակուած է պահել թէ՛ եկեղեցին, թէ՛ ընտանիքը եւ թէ՛ լեզուն, որոնք մեր ցեղային գոյութեան պահպանման ազգակներն են*»²⁶: Թերթը կը թուէ շարք մը դժուարութիւններ ու խոչընդոտներ, որոնց կը հանդիպի հայ ուսուցիչը իր գործունէութեան ընթացքին: Ամէնէն շատ յուզող խնդիրներէն էին.-

- Հայ ուսուցիչը 8 կամ 9 ամսուան համար միայն վճարում կը ստանար,

- Իննամսեայ մտատր ու ֆիզիքական յոգնեցուցիչ աշխատանքէ ետք ան չունէր կատարեալ արձակուրդ, որ «*ուսուցչին համար՝ զրկանքներու ամենամեծն է*»²⁷:

Այլ առիթով, եւ *Եփրատի* յողումաձգիրը ախտաճանաչման ենթարկելով իրավիճակը, կ'առաջարկէ որ առաջին հերթին բարոյապէս ու տնտեսապէս բարձրացուի հայ կրթական մշակին վիճակը: Հեղինակը ծայնակցելով *Եփրատի* մէջ այլապէս ալ բարձրացուած նման հարցերուն, եւ ակնարկելով հայ ուսուցչական միութիւններուն, ազգային իշխանութեանց, առաջնորդարաններուն եւ ուսումնական խորհուրդներուն, կ'առաջարկէ.-

ա) որդեգրել 12 ամսուան վճարման դրութիւն.

բ) յառաջացնել ուսուցչական մարմին.

գ) նիւթապէս եւ բարոյապէս քաջալերել ուսուցչական միութիւնները իրենց ծրագիրները յաջողութեամբ գործադրելու եւ օգտակար ըլլալու անդամներուն.

դ) պատկան մարմիններու կողմէ բարձրացնել ուսուցիչի հեղինակութիւնը, «*փոխանակ անոր "փրեսթիթ"*»²⁸:

Պէրյութի *Արարապը* խօսելով կրթական համակարգին, պետութեան վերաբերմունքին, դպրոց-ձնողք եւ ուսուցիչի դերին մասին, կը գրէ թէ ձնողքը զաւակը կը կրթէ որ ինքնաբաւ դառնայ, մինչդեռ ան ընտրելով ուսուցչական ասպարէզ, դառնալով վարժուի, տակաւին կարիքը կ'ունենայ

նստորագիր գրութիւնները կը պատկանին թերթի աշխատակից Ն. Ֆըտըզճեանի գրիչին («*Լուսարանեյի կէտեր*», *Եփրատ*, 4 Յունիս 1930, էջ Ա:

²⁵ Խմբագրական, «*Անկեղծ խօսքեր կրթական գործին շուրջ. ուսուցիչներու վիճակը*», *Եփրատ*, 4 Յունիս 1930, էջ Ա:

²⁶ Նոյն:

²⁷ «*Անկեղծ խօսքեր կրթական գործին շուրջ. ուսուցիչներու վիճակը*», *Եփրատ*, 14 Յունիս 1930, էջ Ա:

²⁸ Կրթասէր հայ մը, «*Մեր կրթական մշակները*», *Եփրատ*, 21 Յունիս 1930, էջ 2:

հոր կամ մոր օգնութեան²⁹: Թերթը կը վկայէ թէ «Ուսուցիչներու վճարումները շարք ողբալի վիճակի մէջ են: Մենք Սուրիոյ մէջ հանդիպեցանք վարժուհիներու որ փարեկան 30 տարիական թղթոսկի կ'առնէին»³⁰: Արարալի խմբագրականը կոչ կ'որոզէ հայ ուսուցիչին եւ կը յորդորէ. «Հայ ուսուցիչը եթէ կ'ուզէ բարեւանել իր ապրելակերպը եւ ամէն փարի բան մ'աւելցնէ իր ուսման պաշարին վրայ, պէտք է համախմբուի եւ կազմակերպուի»³¹:

Իրօք, ուսուցիչը հայ հասարակութեան կողմէ չէր ընկալուած որպէս մատաղ սերունդի դաստիարակ: Սփիւքի կազմակերպմամբ՝ ակնյայտ դարձաւ սփիւքահայ ուսուցիչին դերը որպէս հասարակական գործիչ: Հասարակութիւնը հասկցաւ, որ ուսուցիչին կարողութենէն կախեալ էր սփիւքահայ միջավայրի մէջ հայեցի սերունդ դաստիարակելը ոչ միայն դպրոցէն ներս, այլեւ դպրոցէն դուրս³²: Եւ այս առումով, ՀՀՈՄի ստեղծումը նպաստեց ոչ միայն Սուրիոյ հայ կրթական գործի կազմակերպման, այլեւ ենթահող պատրաստեց 1938ին Հալէպի մէջ վերակազմուած Հայ Ուսուցչաց Միութեան:

ՀԱԼԷՊԱՀԱՅ ՌԻՍՈՒՅՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ (ՎԵՐԱ)ՇՆՈՒՆԴԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆԸ 1938-46

Տնտեսները կը հաստատեն թէ 1930ականներու կէտերուն Հալէպի մէջ եղած է ուսուցչական միութիւն մը, որ «կազմալուծուած վիճակ մը առած էր»³³:

1938ի սկզբնական ամիսներուն փորձեր կը կատարուին վերակազմելու ՀՀՈՄը: Ապրիլ 1938ին կը կայանայ այդ տարուան երկրորդ հանդիպումը, ուր կը համախմբուին 40է անցի ուսուցիչ-ուսուցչուհիներ՝ ուսումնական խորհուրդի տեսնապետ Խորէն Գաբիկեանի նախագահութեամբ: Կը քննարկուի նախապէս պատրաստուած ծրագիր-կանոնադիրը, որ միաձայնութեամբ կ'ընդունուի «քանի մը թեթեւ սրբագրութիւններէ վերջ»³⁴: Հանդիպման գլխաւոր օրակարգ կ'ըլլայ վարչութեան ընտրութիւնը, որ չ'իրականանար: Պատճառը՝ «ոչ թէ ներկաներու չկամութեան կամ անլրջութեան բացակայութիւնն էր,- կը գրէ Ազգակի թղթակիցը,- այլ՝ երկու ան-

²⁹ Խմբագրական, «Դպրոցը եւ ուսուցիչը (Գ.)», *Արարալ*, 20 Փետրուար 1938, էջ 1:

³⁰ Նոյն:

³¹ Խմբագրական, «Դպրոցը եւ ուսուցիչը, (Հայ ուսուցիչներու սէնտիկա Դ.)», *Արարալ*, 22 Փետրուար 1938, էջ 1:

³² Ն. Յարութիւնեան, *Լիբանանի եւ Սիրիայի հայկական դպրոցները*, Երեւան, «Զանգակ-97», 2002, էջ 42-43:

³³ Թղթակից, «Ուսուցչական միութեան բացման հանդէսը», *Զարթօնք*, 17 Յունիս 1938, էջ 2:

³⁴ Թղթակից, «Հալէպի շաբաթը», *Ազգակ*, 12 Ապրիլ 1938, էջ 2:

պարասխանանարու մարդոց անհարկի ելոյթ»³⁵: Թղթակիցը կը յայտնէ, որ ներկաներու մեծ մասի դէմքերուն վրայ «կը կարդացուէր վերապահութիւնը ձեռնարկի յաջողութեան հանդէպ», բայց թղթակիցի համոզմամբ այդ երբեք արգելք չէր որ «բոլորն ալ հաաքուէին, կարեօյն փորձելու բարի կամեցողութեամբ»³⁶:

Վարչութեան ընտրութեան ձախողութիւնը չի յուսահատեցներ «Միութեան նախաձեռնողները». իսկ ուսումնական խորհուրդը կազմակերպչական աշխատանքով հետամուտ կ'ըլլայ Միութեան հիմնումին՝ կը գրէ Ազդակ³⁷:

Հայ ուսուցիչին անբաղձալի գոյավիճակը բարուօքելու եւ համեմատաբար աւելի բարեկեցիկ կեանք մը ապահովելու յառաջադրանքէն թելադրուած՝ արտօնութեամբ Բերիոյ թեմի ազգային միութեան եւ՝ ջանքերովը ուսումնական խորհուրդին³⁸ Հալէպահայ Ուսուցչական Միութեան (ՀՈՍ) առաջին ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 2 Մայիս 1938ին, Հալէպի Ազգային Մանկապարտէզին մէջ, ուր ներկայ կ'ըլլայ 56 հոգի, մինչ երեք բացակայ պաշտօնակիցներ իրենց քուէները կը դրկեն ժողովին³⁹: Ատենապետ կ'ընտրուի Գաբրիէան, ատենադպիր՝ Սիմոն Սիմոնեան: Ժողովի ընթացքին Միհրան Աճէմեան կը թելադրէ որ վարչութեան անդամ ընտրուին միայն այն ուսուցիչները, որոնք բարեկաման սրտցաւ անձեր են, ու կ'աւելցնէ. «Հոս, յարգելի պաշտօնակիցներ, պէտք է մոռցուին մեր դուրսը ունեցած կուսակցական, մբատրական եւ ամէն կարգի տարակարծութիւնները: Պէտք է այնպէս շարժիլ որ ուրիշներու չարամիտք բնադատութիւններն ու գործունէութիւնը անկարող ըլլան բանդելու այս նորակառոյց շէնքը»⁴⁰: Ժողովին առաջնահերթ խնդիրները կը դառնան.- «ա) Ընդհանուր ժողովի նախագահութիւնը, բ) վարչութեան անդամներու թիւը հիշգ թէ եօթ ընեղը, գ) Երկսեռ անդամներ ունենալու պարագան»⁴¹: Կը քննարկուին ՀՈՍի եւ ուսումնական խորհուրդի յարաբերութիւնները: Փափաք կը յայտնուի որ ՀՈՍը պահէ իր լիարժէք անկախութիւնը, միայն կրթական խնդիրներով «համընթաց» գտնուի ուսումնական խորհուրդին: Կ'առաջարկուի եւ կը բանաձեռուի վարչութեան անդամ-թեկնածուներու ընտրու-

³⁵ Եղիս:

³⁶ Եղիս:

³⁷ Եղիս:

³⁸ Թղթակից, «Ուսուցչական միութեան բացման հանդէսը»:

³⁹ ՀԱՍ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3:

⁴⁰ ՀԱՍ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3 շրջ. (շրջերես):

⁴¹ ՀԱՍ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3:

թեան պարագան. կ'որոշուի ընտրել՝ ա) այն անձը որ յարմարութեան եւ գործունէութեան եռանդ ունի, բ) կազմուած ցանկի մը համաձայն⁴²:

Ընդհանուր ժողովի ներկաներու ցանկութեամբ առաջին վարչութիւնը կ'ընտրուի վարժարաններու տեսուչներու կողմէ՝ պատրաստուած (երկանուն ցանկ) 14 թեկնածուներու զաղտնի քուէարկութեամբ. հետեւեալները՝ Վարդան Երամեան, Սիմոն Սիմոնեան, Շաարշ Մակարեան, Խորէն Գաբիկեան, Միհրան Աճէմեան եւ Վարդան Պարիկեան⁴³:

ՀՈՄԻ պաշտօնական հանրահռչակումը տեղի կ'ունենայ 12 Յունիս 1938ին Հալէպի Ազգային Մանկապարտէզի սրահին մէջ⁴⁴: Բացման խօսքով հանդէս կու գայ ՀՈՄԻ ատենապետ Երամեան, որ կը հաաստէ թէ ՀՈՍը պիտի գործէ «այն հաաստքով որ իր գոյութիւնը պիտի փրանի իբրեւ անկախ մարմին մը՝ զերծ արտաքին ազդեցութիւններէ...»⁴⁵: Հանդիսութեան նախագահ՝ Բերիոյ թեմի առաջնորդ Սիւրմէեան եպս., հայ մշակոյթի պատմականը կատարելով կ'անդրադառնայ հայոց պետականութեան անկումէն ետք հայ հոգեւորականին եւ ուսուցիչին վերապահուած դերին ու Եղեռնի հետեանքով հայ կրթամշակներու մեծաթիւ փաղանցի նահատակութեան եւ քարոզանդ ու ամայացած կրթավայրերու մասին: Սրբագան հայրը կը կարեւորէ եւ կ'ողջունէ ՀՈՄԻ ծնունդը համայնքէն ներս: Երկրորդ քանախօսը մանկավարժ, դաստիարակ Գաբիկեանն էր, որուն ջանքերով կը վերակազմուէր (կը վերածնէր) ՀՈՍը⁴⁶: Գաբիկեան վիճակագրական տուեալներով կ'ապացուցէ, թէ հայ ժողովուրդը օտար վարժարաններ ուղարկելով իր գաակները՝ ցափ մէջ կը ձգէ «ցեղին կրթական վաստակատրները իր ժպտութեամբ եւ անհոգութեամբ»: Ան կ'ընդգծէ նաեւ թէ անմիաբանութեան պատճառով քանդուած են «մեր կրթական յարկերը»⁴⁷: Ներկաները առ ի քաջալերանք նորակազմ ՀՈՄԻն, կը գնեն միութեան կողմէ՝ պատրաստուած քարթերը, որոնց վրայ տեղադրուած էին Եղիշէ Դուրեան եպս.ի, Ռեթեոս Պէրպլեռեանի եւ Համբարձում Երամեանի դէմանկարները⁴⁸:

ՀՈՍը կ'առաջադրէր կազմակերպական խնդիրներ, հիմնական նպատակ ունենալով՝

ա) «Բարեկեանէլ հայ կրթական մշակներու մտատր, բարոյական եւ նիւթական վիճակը:

⁴² ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3219-4:

⁴³ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 4219.-5-5219.:

⁴⁴ Թղթակից, «Ուսուցչական միութեան բացման հանդէսը»:

⁴⁵ Նոյն:

⁴⁶ Նոյն:

⁴⁷ Նոյն:

⁴⁸ Նոյն:

բ) Ազգային կրթութիւնը ընդհանրացնել ծնողներուն գործակցութեամբ եւ խորացնել հասարակութեան հետաքրքրութիւնը Ազգային դաստիարակութեան հանդէպ:
գ) Մանկավարժական նորագոյն ըմբռնումով հոգ տանիլ նոր սերունդի մտատր, բարոյական եւ ֆիզիքական զարգացման»⁴⁹:

ՀՈՄԻ երկրորդ ընդհանուր ժողովը կը գումարով 4 Յունիս 1938ին⁵⁰, իսկ երրորդը՝ 6 Նոյեմբեր 1938ին⁵¹:

ՀՈՄԻ Դ. ընդհանուր ժողովը կը կայանայ 17 Փետրոս 1939ին: Շրջանաարտ «առժամեայ»⁵² վարչութեան ատենապետ Երամեան իննամսեայ գործունէութեան համարատուութիւնը ներկայացնելէ ետք, շնորհակալութիւն կը յայտնէ ՀՈՄԻ երկսեռ անդամներուն, վարչական պաշտօնակիցներուն, ազգային իշխանութեան եւ կրթական զանազան հաստատութեանց, որոնց օժանդակութեան շնորհիւ «գոյութեան կոչուած էր» ՀՈՄՆը⁵³: Ժողովին ներկայ անդամները⁵⁴ կ'արծարծեն առժամեայ վարչութեան եւ վարժարաններու հոգաբարձութեանց միջեւ յարաբերութեան ու համագործակցութեան, ինչպէս նաեւ առժամեայ վարչութեան պետական վաւերացումի հարցեր: Վերջինս երկար քննարկումի նիւթ կը դառնայ. կ'առաջարկուի օգտուիլ թեմի ազգային առաջնորդարանի իրատունքներէն եւ իբրեւ անկախ միութիւն վաւերացուի, քան թէ մաս կազմել «Արաքսական Ուսուցչական Միութեան»: Ուրիշներ կ'առաջարկեն վաւերացուիլ լոկ ազգային իշխանութենէն՝ «օտար ոյրնձգութեանց դուռ բանալու անհրաժեշտութիւնը կանխելու համար», եւ կը թելադրեն «մնալ Ազգային Մշակութային Միութեան մէջ, հնարատրութիւն չունենալով սենտիքա դառնալու»⁵⁵: Հակադիր տեսակէտներուն բերմամբ, Դ. ընդհանուր ժողովը վճռական որոշում չի կայացներ եւ զայն կը ձգէ նորընտիր վարչութեան հայեցողութեան: Իսկ ՀՈՄՆը սենտիքայի վերածելու մասին պարզուած թեր ու դէմ

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 14:

⁵⁰ Բ. ընդհանուր ժողովը ունէր երկու օրակարգ՝ կենսամթերքի հայթայթում եւ պարտիզազնացութիւն (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 6):

⁵¹ Գ. ընդհանուր ժողովի օրակարգերն էին.- կազմակերպել Սայեաթ Նովայի նովորուած երաժշտական երեկոյ եւ ցորեն հայթայթելու խնդիր (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 7-7 շրջ.):

⁵² ՀՈՄԻ Դ. նիստի ատենագրութեան մէջ Ա. վարչութիւնը յիշատակուած է որպէս «Առժամեայ» վարչութիւն, իսկ Ա. ընդհանուր ժողովի կողմէ վաւերացուած ծրագիր-կանոնագիրը՝ «Առժամեայ ծրագիր-կանոնագիր» (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 9-9 շրջ., 13 շրջ.):

⁵³ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 8 շրջ.:

⁵⁴ Երբ արդէն ՀՈՄԻն կ'անդամակցէր 95 (46 արական, 49 իգական) ուսուցիչ (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 9):

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 9 շրջ.-10: Առաջարկները ներկայացուցած են՝ Ա. Սարգիսեան, Մ. Սիսեռեան եւ Շ. Մակարեան:

տեսակետերը հաշուի առնելով՝ վարչությունը անելորդ կը համարէ պետական վաւերացումը եւ կը բաարարուի «Ազգային Առաջնորդարանի կողմէ եղած ճանաչումով եւ կէս վաւերացումով»⁵⁶, միաժամանակ փափաք կը յայտնէ որ ան վաւերացուի նաեւ ազգային իշխանութեան կողմէ: Այդուհանդերձ, յետագային ՀՈՄը «դարձաւ փեսակ մը արհեստակցական-սենսիփրայական ընկերակցութիւն»⁵⁷: Ժողովի ասարտին՝ քուէարկութեամբ կ'ընտրուի նոր վարչութիւն, հետեւեալներէ.- Ա. Սարգիսեան (ուսումնական խորհուրդ), Կ. Սապունճեան (Կրթասիրաց), Պարիկեան (Կիլիկեան), Աճնեան եւ Փ. Դերձակեան (Հայկազեան), Ն. Քէօմիրճեան (Կիւպենկեան), Շ. Մակարեան (Սահակեան)⁵⁸:

Ժողովականները նորընտիր վարչութեան առաջնահերթութիւն կ'առաջարկեն.- 1) վերաքննել ու մշակել նախորդ շրջանին պատրաստուած ծրագիր-կանոնագիրը եւ վերաքննուելէ ետք՝ վաւերացումը ազգային իշխանութեան կողմէ, 2) ուսումնասիրել պետական վաւերացման պարագան՝ օգտուելու կարգ մը հանրային ու պետական իրաւունքներէ, 3) յարաբերիլ կրթական մարմիններու, հոգաբարձութեանց եւ ազգային իշխանութեան հետ, եւ չանդամակցած հայ ուսուցիչ-ուսուցչուհիները ներգրաւել միութեան աշխատանքներուն⁵⁹:

Վարչութիւնը կը յառաջացնէ կանոնագիրի եռանդամ յանձնախումբ մը (Արսէն Կիտով⁶⁰, Ա. Սարգիսեան եւ Գրիգոր Պողարեան), որուն պարտականութիւն կու տայ կանոնագիրը մշակել եւ հնարատր ժամկետով տրամադրել ընդհանուր ժողովի դատին⁶¹: Վարչութեան Ե. Նիստին, 30 Մարտ 1939ին, ծրագիր-կանոնագիրի յանձնախումբը կը տեղեկացնէ որ «առձեռն առժամեայ» ծրագիր-կանոնագիրը վերաշմակուած, դասատրուած եւ անցեալ «շրջանի փորձառութեան հիմքով ստորագրուած» է⁶²: Կ'առաջարկուի ծրագիր-կանոնագիրը վաւերացնել գլուխ առ գլուխ կարդալէ ու քննարկելէ ետք: Վարչութեան Ե., Զ., Է., Ը. նիստերուն ծրագիրը մաս առ մաս կը կարդացուի, կը քննարկուի եւ համապատասխան ճշտումներէ

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 1, թ. 3:

⁵⁷ ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 227, թ. 28:

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 11-11 շրջ.:

⁵⁹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 11 շրջ.-12:

⁶⁰ Հալէպի Կիլիկեան վարժարանի տնօրէն:

⁶¹ Քննութենէ եւ վաւերացումէ ետք հարկ էր պաշտօնապէս վաւերացնել ազգային իշխանութենէն եւ ուսումնասիրել պետական հնարատր վաւերացումի մը կարեւորութիւնը (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 11 շրջ.):

⁶² Ան ունէր տաս գլուխ, 35 հատուած եւ 14 ենթահատուած ու մէկ ծանօթագրութիւն: Ծրագիր-կանոնագիրը տե՛ս՝ յօդուածի ասարտին:

ետք, կը տպագրուի ու կը վաճառուի ՀՈՄԻ անդամներուն եւ անդամակցիլ փափաքող ուսուցիչ-ուսուցչուհիներուն⁶³:

Նորընտիր վարչութիւնը առաջին երկու նիստերուն մշակած էր միամեայ (1939-40 կրթաշրջան) գործունէութեան ուղեգիծ.- ուսուցչական եւ ծնողական դասախօսութիւններ, ուսումնական խորհուրդի նուիրատուութեամբ հիմնուած ՀՈՄԻ «Ուսուցչական գրադարան»ի զարգացում⁶⁴, երեկոյթներու կազմակերպում, հաճելի ժամանցի պահերու կազմակերպում, յարմարաւէտ ճամփորդութիւններ, լուսանկարով անդամատետր, աշակերտական հրատարակութիւններ, ուսուցչական պարբերաթերթ, համագործակցական ընկերութիւն, կենսամթերքներու հայթայթում, ՀՈՄԻ պետական վաւերացում⁶⁵ եւ երիտասարդ անդամներու մարզանքի միջոցներու հայթայթում⁶⁶: Պէտք է նշել, որ այս յառաջադրանքներէն ոչ բոլորը կ'իրականանան, որովհետեւ մէկքանիի իրականացումը դժուարութիւն կը յարուցանէ վարչութեան, մինչ միա յառաջադրանքներուն իրականացումը (որ նոր ծախքեր կ'ենթադրէր) անհրաժեշտ չի նկատուիր:

1939ին սկիզբ առած էր համաշխարհային Բ. պատերազմը. անոր յառաջացուցած տնտեսական տագնապը, դրամի արժեզրկումը եւ սղաճը անտանելի դարձուցած էին անհատի կեանքը: Տարապայման այս կացութենէն զերծ չէր նաեւ Սոփիոյ հայութիւնը եւ բնականաբար նաեւ՝ ուսուցիչը: Տասնապատկուած էին շուկայական գիները, մինչ ուսուցիչներու աշխատավարձերը տարիներէ իվեր իվեր փոփոխ էին: Բայց ուսուցիչը ի գին զոհողութիւններու կը շարունակէր կատարել իրեն վստահուած գործը:

Բ. համաշխարհայինի պարտադրած նոր իրավիճակը կը պահանջէր վարչութեան ուղեգիծի ժամանակատր փոփոխութիւն: 13 Յունուար 1940ին գումարուած ՀՈՄԻ Ը. ընդհանուր ժողովը կ'որոշէ առկախել անդամավճարներու գանձումը մինչեւ յառաջիկայ անդամական ժողով⁶⁷, չձեռնարկել հրապարակային հանդէս-երեկոյթներ, պետական վաւերացում ստանալ ազգային իշխանութեան միջոցով, եւ ճիշդ ընել որ «*ուսուցիչ-*

⁶³ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 19:

⁶⁴ ՀՈՍԸ, ուսումնական խորհուրդի նուիրատուութեամբ հիմնած էր «Ուսուցչական գրադարան» մը, որ կը ճոխանար անհատական նուէրներով եւ մասնակի գնումներով: 1939ին գրադարանը ուներ 105 գիրք (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 9):

⁶⁵ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 1, թ. 1:

⁶⁶ ՀՈՄԻ վարչութիւնը երիտասարդ անդամներու համար մարզանքի (թենիսի) հնարատրութիւն կը ստեղծէ, դժբախտաբար օգտուիլ փափաքողներ չեն գտնուիր (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 1, թ. 3):

⁶⁷ Արխիւային տուեալներուն համաձայն, 1939-40՝ ՀՈՄԻ անդամներուն թիւը եղած է 84, որոնց 78ը միայն անդամավճար տուած են մինչեւ 1939ի Սեպտեմբեր ամիսը («Թ. Նիստի Աստնագրութիւն, 14 Փետրուար 1940», ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 22):

ները ունենան ուսուցչական վկայագիր՝ կարենալ պաշտօնավարելու համար»⁶⁸.

14 Փետրուար 1940ին կը գումարով ՀՈՄԻ Թ.ընդհանուր ժողովը, 40 երկսեռ անդամներու ներկայութեան: Քննելէ ու գնահատելէ ետք շրջանաարտ վարչութեան գործունեութիւնը, ժողովը կրկին գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալներէ: Երամեան եւ Ս. Սիսեռեան (Կիլպենկեան), Հ. Պէրպէրեան եւ Պարիկեան (Կիլիկեան), Յ. Պազգալեան եւ Պողարեան (Կրթասիրաց), Աճէմեան (Հայկազեան)⁶⁹:

Նորընտիր վարչութեան գլխաւոր օրակարգերէն էր ազգային եւ մասնաւոր վարժարաններու ուսուցիչ-ուսուցչուհիներու անդամագրումն ու ներգրատումը իր աշխատանքներուն: Սակայն առաքելական համայնքի ոչ բոլոր ուսուցիչները անդամագրուած էին, ուստի Հալէպի բոլոր վարժարաններու ուսուցիչները անդամագրելու առաջադրանքէն թելադրուած, վարչութիւնը յատուկ հրապարագիրեր կը դրկէ Հալէպի Արմէնեան, Ոստանասիրաց, Նոր Գիւղի Կիլիկեան, Արմէնեան, Մարաշի Կեդրոնական, Շէյխ Մաքսուտի Արմէնեան, Տատտիէի Վարդանեան, մարաշցիներու Գերմանիկ եւ Զաարեան վարժարաններուն, որոնց ուսուցչական կազմերը մինչ այդ փափաք չէին յայտնած մաս կազմելու ՀՈՄԻն: Հրաւերներ կ'ողողուին նաեւ Սահակեան եւ Հայկազեան վարժարաններու չանդամագրուած ուսուցչուհիներուն⁷⁰:

ՀՈՄԻն չանդամակցիլը կրնար ունենալ քանի մը պատճառ. ա) ՀՈՄԻ գործունեութեան վերաբերեալ իրագեկման բացակայութիւն, բ) Ազգային իշխանութեան եւ ՀՈՄԻ փոխյարաբերութեան ոչ-յստակ պատկերացում, դ) Հալէպահայ կեանքէն ներս համերաշխութեան պակաս:

Այդուհանդերձ, շնորհիւ հետետղական աշխատանքի, 1940-41 կրթաշրջանին ՀՈՄԻն կ'անդամակցին 37 նոր անդամներ⁷¹:

ՀՈՄԻ կազմակերպած մանկավարժական, առողջապահական, գրական բնոյթի դասասխօսութիւնները եւ երաժշտական երեկոյթները կ'արժանանան հասարակութեան հետաքրքրութեան եւ գնահատանքին: Յաջողութեամբ կը պատկուի հայ ուսուցիչները պետական պաշտօնեաներու ցանկ ներգրատելը, որով անոնք կ'օգտուին ե՛ւ պարենատրման տնօրէնութեան տրամադրած կենսամթերքէն (փայտ, ածուխ, ցորեն), ե՛ւ ձրի կամ

⁶⁸ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 22:

⁶⁹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 25 շրջ.:

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 2, թ. 2:

⁷¹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 2, թ. 2-2 շրջ.:

կէս վճարումով բժշկական «ապահովագրութենէն»⁷² (ընդգծումը իմն է - Ա.Ֆ.):

29 Նոյեմբեր 1941ի ԺԳ. ընդհանուր ժողովին ՀՈՍը կ'ընտրէ եօթնանդամ նոր վարչութիւն: Տարեկան գործունէութեան ուղեգիծի կազմութենէն, վարչական ընթացիկ գործերէն ետք, վարչութեան առաջնահերթ խնդիրը կը դառնայ ուսուցիչներու պարենատրումը: Կ'ընտրուի պարենատրման յանձնախումբ մը (Միհրան Աճէմեան, Վարդան Պարիկեան եւ Կարապետ Սապունճեան), որ ջանք չի խնայեր յարմար պայմաններով ցորեն բերել տալու, սակայն չի յաջողիր «bon»⁷³ ապահովել, բայց առաջնորդարանին հետ միասին դիմելով քաղաքապետութեան՝ անդամներուն համար կ'ապահովէ յարմարագին ցորեն: Ընտրիւ տարուած աշխատանքին ՀՈՍի անդամները, անխտիր, ժամանակին եւ պետական պաշտօնեաներու չափով կը ստանան շաքար ու քարիւղ:

Վարչութեան անյետաձգելի խնդիրներէն էր նաեւ ուսուցիչներու ամսաթոշակներու յանձնումի հարցը, որ միշտ ալ եղած էր գաւառական ժողովի օրակարգ: 18 Դեկտեմբեր 1941ին Հալեպի տարբեր ազգային վարժարաններու ներկայացուցիչներու ՀՈՍի վարչութեան հետ հանդիպումին կը կը շեշտուի տնտեսական դրութեան ծանրութիւնը եւ ամսաթոշակներուն բացարձակ անբաւարարութիւնը: Ներկայացուցիչները փափաք կը յայտնեն որ վարչութիւնը դիմէ պատկան մարմիններուն՝ ուսուցիչներու ամսաթոշակներու յանձնումի պահանջով: 22 Դեկտեմբերին, 130 երկսեռ ուսուցիչներու ստորագրութեամբ հանրագիր մը կը ներկայացուի վարչութեան, որով 18 Դեկտեմբերի անոնց բերանացի պահանջը գրատր ու առանել շեշտուած ձեւով կը ներկայացուի եւ անոր անմիջական հետապանդումը կը պահանջուի⁷⁴: Վարչութիւնը նոյն օրն իսկ ժողով կը գումարէ եւ պաշտօնական գրութեամբ ստորագրահաւաքը կը փոխանցէ ուսումնական խորհուրդին⁷⁵, խնդրելով, որ քաղաքական ժողովին հետ խորհրդակցաբար տնօրինեն յարմարագոյնը մինչեւ Նոր Տարի⁷⁶, մատնանշելով որ

⁷² ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 9:

⁷³ Bon.- ընտանեկան տետրակի կամ վկայագրի հիման վրայ սօրիական պետութեան կողմէ տրուած արտօնագիր-փաստաթուղթ է, որով հնարատրութիւն կը տրուէր տունալ անձին՝ ընտանիքի անդամներուն թիւին համաձայն, համապատասխան չափերով ստանալ այլիւր, շաքար, բրինձ, վառելանիւթ են.:

⁷⁴ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 1 շրջ:

⁷⁵ Յիշեցնենք, թէ ՀՈՍի 2 Մայիս 1938ի նիստին անդամները փափաք յայտնած էին որ ան պահէ իր փակատար անկախութիւնը, միայն կրթական խնդիրներով «համընթաց» գտնուի Ուսումնական խորհուրդին հետ:

⁷⁶ «Եռամեայ տեղեկագրութիւն Հալեպահայ Ուսուցչական Միութեան գործունէութեան», թերթ 3:

«...Հակառակ պարագային կրնան անպարեհություններ ծագիլ որոնց ար.-
ծագանձը պարտաբեր պիտի չըլլայ ո՛չ պատկան մարմիններուն եւ ո՛չ ալ
ուսուցիչներուն»⁷⁷:

Պատկան մարմիններու պատասխանի ուշացումը կը ստիպէ, որ ուու-
ցիչները դիմեն դասադուլի. «...Միութեան նախածեռնութեամբ կազմա-
կերպուած ընդհանուր դասադուլ մը ցնցեց Ազգ. Իշխանութիւն կոչուած
կրթական մարմինները եւ հոգաբարձութիւնները ...»⁷⁸: Քաղաքական ժո-
ղովը «զնահատելի փութկոտութեամբ» ՀՈՄԻ վարչութիւնը կը հրափրէ
խառն ժողովի: Յանուն քաղաքական ժողովի նախ բանատր, ապա պաշ-
տօնապէս ուսուցիչներուն կը յայտարարուի թէ «քայլ պահելու համար
ժամանակակից կեանքի տղութեան հետ» ձեռնարկուած են բոլոր միջոց-
ները՝ ուսուցիչներու ամսավճարներու 50 առ հարիւր յաւելումի պահանջքը
գոհացնելու, եւ հոգաբարձութեանց հրահանգուած՝ բացառիկ երկրորդ
ամսական մը եւս տալու ուսուցիչներուն յօգուտ եղած յաւելումին⁷⁹: Պաշ-
տօնական այս գիրի հիման վրայ կարգ մը վարժարաններ լրիւ կը վճարեն
«բացառիկ» ամսականներ, իսկ այլ վարժարաններ պատրաստ գումարի
չգոյութեան պատճառով չեն կրնար իրենց յաւելումները կատարել, կը դի-
մեն քաղաքական ժողովին օգնութեան: «Հիմա քաղաքիս բոլոր Ազգային/]
վարժարաններու երկսեռ ուսուցչութիւնը սրբացած է մէյմէկ բացառիկ ամ-
սական. վերամուտին վարչութիւնն առանց ժամանակ կորսնցնելու պիտի
սկսի օրինատր եւ կորովի միջոցներով հետապնդել յաւելման խնդիրը»⁸⁰:
Այս խնդիրով խորհրդակցութիւն կը սկսի ազգային իշխանութեան եւ ՀՈ-
ՄԻ վարչութեան միջեւ:

ՀՈՄԻ, 23 Յուլիս 1942՝ տասնութերորդ ընդհանուր ժողովը կրկին
կ'անդրադառնայ յառաջիկայ կրթաշրջանի թոշակներու յաւելման խնդի-
րին: Պողարեան ժողովականներուն կը պարզէ թէ ուսումնական խորհուր-
դը սկզբունքով ընդունած է թոշակներու յաւելումը եւ «զայն օգտակար
կերպով գործադրելու համար ուսուցիչները բաժնած չորս դասերու», ո-
րոնց դասակարգումէն կախեալ էր իրաքանչիւրին սակը⁸¹: Խորհուրդին
առաջարկած տեսակէտը կը քննարկուի ընդհանուր ժողովին անդամներու
կողմէ: աարտին, ներկաները կը փափաքին լսել ՀՈՄԻ վարչութեան տե-
սակէտը⁸², որմէ ետք միանայնութեամբ կ'ընդունին վարչութեան առաջար-

⁷⁷ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3 շրջ.:

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 227, թ. 28:

⁷⁹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 2:

⁸⁰ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 4 շրջ.:

⁸¹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 46-46 շրջ.:

⁸² ՀՈՄԻ վարչութիւնը հետեւեալ դասատրուրը կատարած էր. ա) Միջին 15 ս. թո-
շակ ստացողներու՝ սկսնակ եւ հինգ տարիէ վար ծառայութիւն ունեցողները կը

կամ տարբերակը եւ ընդհանուր ժողովը կը հաստատէ զայն: Որոշումը կը յղուի ազգային իշխանութիւն՝ վաւերացման: Սակայն, ընդհանուր ժողովի տարբերակը՝ ազգային իշխանութեան եւ հոգաբարձական կազմերու հասնութեան չ'արժանանար⁸³:

ՀՈՍԻ տասնիններորդ ընդհանուր ժողովը, 2 Սեպտեմբեր 1942ին, ես կ'արձարձէ ուսուցիչներու դասակարգումի դրութիւնը, որովհետեւ ուսումնական խորհուրդը ՀՈՍԻն անդամակցող վարժարաններու բոլոր ուսուցիչներուն յատկացուելիք թոշակի քանակը համակարգելու նպատակով որոշած էր նկատի ունենալ ուսուցիչին ուսումնական մակարդակը, պաշտօնավարութեան տարիները եւ ըստ այդմ ուսուցիչները բաժնած չորս դասի: Հետեւեալ ձեւով.

«Ա. դաս.- Այս դասակարգին մաս կը կազմէին բոլոր սկսնակները՝ 13 այր եւ 58 կին, առանց հաշուի առնելու ուսումնական մակարդակը: [չընդգրկուածներ՝ 17 այր եւ 7 կին=24]: (Այս դասակարգին համար որոշ սակագին նշանակուած չէ):

Բ. դաս.- Այս դասակարգին կը համարուէին այն ուսուցչուհի-ուսուցիչները, որոնք նախակրթական ուսումին կը միացնէին տարիներու գործունէութիւնը եւ առնցմէ կին 34, այր՝ 4: (Այս դասակարգին պատկանող ուսուցիչ մը նուազագոյն պիտի ստանար 30 սուրիական ոսկի, իսկ ուսուցչուհին՝ ուսուցիչի առածին կէսը):

Գ. Միջնակարգ ուսում եւ ասպարէզի մարդը, որոնցմէ կին՝ 13, այր՝ 14: (Այս դասակարգի ուսուցիչին նուազագոյն վճարը 50 սուրիական ոսկի, իսկ ուսուցչուհիի ստանալիքը անկի կը մտնենայ այր մարդու թոշակին):

Դ. դասին կը պատկանին բարձրագոյն վարժարան (համալսարան) ասարտողները, նաեւ ուսման միջնակարգ մակարդակով եւ երկար տարիներու գործունէութեամբ կրթական մշակները, որոնցմէ 2ը կին եւ 10ը այր»: (Նուազագոյն սակ որոշուած է 75 սուրիական ոսկի)»⁸⁴:

Սակայն ընդհանուր ժողովին հնչած իրարամերժ տեսակէտերը ոչ մէկ լուծման կը յանգեցնեն, ուստի ընդհանուր ժողովի ատենապետ Սիսեռեան կ'առաջարկէ թոշակի յաւելման ձեւի պահանջը (երեք սակ)⁸⁵, որմէ ետք տեղի կ'ունենայ քուէարկութիւն: Մեծամասնութեան առաջարկով կ'ընդունուի յաւելման 50% տարբերակը: Ընդհանուր ժողովի որոշումները բանաձեւուելէ ետք կը յղուին ուսումնական խորհուրդին՝ վաւերացման:

ՀՈՍԻ ԺԹ. ընդհանուր ժողովը կ'որոշէ 1941-42 կրթաշրջանին համար 50% յաւելումը իրագործել: Իսկ 1942-43 կրթաշրջանին համար նախկին

ստանան 50%, իսկ հիւնք տարիէն վեր ծառայութիւն ունեցողները՝ 80%, ր) 15:էն վեր մինչեւ 50 ս.ո. ստացողները 80%, գ) 15 ս.ո.էն անկի ստացողները՝ 60% (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 47-47 շրջ.):

⁸³ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 48 շրջ.-49 շրջ.:

⁸⁴ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 48, 49-49 շրջ.:

⁸⁵ Բովարկութեան դրուած յաւելման երեք ձեւի պահանջը՝ 50%, 60%, 70% (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 50-50 շրջ., 51-51 շրջ.):

յաւելումը իբրեւ հիմք ընդունելով կրկին 50% յաւելում մը կատարել՝ ընդունելով միանգամայն ուսումնական խորհուրդին կողմէ կատարուած ուսուցիչներու դասակարգումի դրութիւնը⁸⁶, նաեւ կ'առաջարկուի՝ ուսուցիչներու թոշակի գնահատումը կատարել թաղական եւ հոգաբարձական մարմինի եւ տնօրէնութեան կողմէ եւ զայն ուղարկել ուսումնական խորհուրդ՝ վաւերացման⁸⁷: Միաժամանակ ՀՈՄԻ վարչութիւնը ուսուցիչներուն ուշադրութեան կը յանձնէ որ նշանակուած սակերու հիման վրայ գնահատեն իրենց նիւթական իրատւոյնները եւ ստորագրեն ուսումնական խորհուրդին կողմէ պատրաստուած տպագրեալ պայմանագրութիւնը⁸⁸:

ԱՅԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՂՈՒԹԻՒՆ

1941-42 նստաշրջանին վարչութիւնը կը յառաջացնէ յարաններու եւ հանդէսներու կարգադիր ու վարիչ յանձնախումբեր: Կը կազմէ բանագնաց յանձնախումբ⁸⁹, որ անհրաժեշտ բանակցութիւնները կը սկսի վարել ազգային իշխանութեանց, հոգաբարձութեանց եւ այլ պատկան մարմիններու հետ: Այս յանձնախումբը պարտականութիւն ունէր նաեւ միջամտել վարժարաններու ուսուցչական կազմերու եւ անոնց վճարման խնդիրներուն:

Կը կազմուի նաեւ թատերական մասնախումբ, որուն առաջին բեմական ներկայացումը կ'ըլլայ Պարոնեանի *Շողոքորթը*: Կ'ընդառաջուի նաեւ խումբ մը մարգասէր երիտասարդներու խնդրանքը եւ ընթացք կ'առնէ «Վայի Պոլի» խումբին կազմութիւնը⁹⁰: Վարչութիւնը կը ծրագրէ հիմնել ուսուցչական օգնութեան կամ խնայողական սնտուկ, որուն նպատակը պիտի ըլլար օգնել ուսուցիչին՝ ձերութեան, հիանդութեան եւ այլ պարագաներու⁹¹: Այս նպատակով վարչութիւնը կը կազմէ յանձնախումբ մը եւ պարտականութիւն կու տայ ներկայացնել գրաւոր ծրագիր, որպէսզի վարչութիւնը զայն ներկայացնէ ՀՈՄԻ ընդհանուր ժողովի քննութեան եւ վաւերացնէ:

⁸⁶ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 9:

⁸⁷ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 51 շրջ., 52-52 շրջ.:

⁸⁸ 1942-43 կրթըջանի համար ուսուցիչներու նտագագոյն սակ կ'որոշուի՝ 75 ս. ո., զվխաւոր ուսուցիչներու՝ 125, ուսուցչուհիներու՝ 40, զվխաւոր ուսուցչուհիներու 75, իսկ նոր պաշտօնի կոչուած անփորձ օգնականուհիներու՝ 25 ս. ո. («Ազգ ուսուցչական միութեան», *Ազգարար շաբաթաթերթ*, 28 Օգոստոս 1943, էջ 5):

⁸⁹ Վարչութեան 5րդ նիստին նշանակուած այս յանձնախումբին անդամներն էին Երամեան, Աճէմեան եւ Պօղոսեան, զոր անկի ուշ կը փոխարինէ Օննիկ Սարգիսեան:

⁹⁰ Խաղերը կը տեսնէ 3 ամիս, եւ ժամանակաւորապէս կանգ կ'առնեն խումբի պատասխանատու՝ Ասատուր Պետեանի, քաղաքէն բացակայութեան պատճառով:

⁹¹ ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 7 շրջ.:

րացման⁹²: Հիմնումի մասին տեղեկակ կը պահովի ազգային առաջնորդարանը: Յետագային խնայողական սնտուկի դրուփինը դրական արձագանգ կ'ունենայ եւ իրաքանչիւր ուսուցիչ իր մասնակցութիւնը կը բերէ ծրագիրին⁹³: Այս շրջանին կը լուծուի ամէն ամռան սկիզբը ուսուցիչը քմահաճօրէն գործէ արձակելու եւ առանց աշխատանքի ձգելու դրութիւնը, փոխարեւը՝ անոր կ'ապահովուի ամառնային հանգիստը լիովին ըմբոջխնելու տարրական իրատնը⁹⁴:

1938-42՝ ՀՈՍԻն անդամ էին Հալէպի 11 ազգային եւ 3 այլ վարժարաններէ ուսուցիչ-ուսուցչուհիներ⁹⁵:

1942ին ՀՈՍը կը ձեռնարկէ խիստ պատասխանատու գործի: Չունենալով բաարար պիտոճէ՛ վաղրան մտատրականն ու մանկավարժ ուսուցիչը պատրաստելու յառաջադրութեամբ եւ քաջալերուած Սարգիս Սելեանի խոստումէն, սաներ կը պահէ Հալէպի տեղոյն երկրորդական վարժարաններու մէջ: ՀՈՍը Հալէպի զանազան վարժարաններէն կ'ընտրէ «առաջնակարգ վկայականի տէր, քարոյսայէս հարուստ իսկ նիւթայէս աղքատ աշակերտներ», որոնք իրենց նախընտրութեամբ կ'ուղարկուին Հալէպի նշանատր Լայիք կամ Ալեքիօ Գոլէճ երկրորդական վարժարանները՝ հայկական երկրորդական վարժարանի մը «չգոյութեան պատճառաւ»⁹⁶: Ասոնք, երկրորդական վարժարանի ընթացքը ասարտելէ ետք պարտատր էին առնուազն երեք տարի ընդգրկուիլ ուսուցչական ասպարէզ⁹⁷: Ազգային իշխանութիւնը կը քաջալերէ տոյն նախաձեռնութիւնը ինքական աւակցութեամբ եւ «կ'արտօսնէ» կազմութիւնը սաներու յանձնախումբի մը⁹⁸,

⁹² Վարչութիւնը այս մասին տեղեկակ կը պահէ ազգային առաջնորդարանը. Վերջինս կը խոստանայ եւս յատկացում կատարել (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 3, թ. 7 շրջ):

⁹³ «Հալէպի ուսումնական միութեան գործը», *Ազդարար*, 27 Մայիս 1944, էջ 3-4:

⁹⁴ ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 227 – թ. 29:

⁹⁵ Ազգ. Կիլիկիական, Սեպիլի Ազգ. Վարժարան, Հայկազեան, Զաարեան Բեթէլ՝ Մխիթարեաններ, Ամերիկեան գոլէճ, Նոր Գիւղի Կիլիկեան, Գերմանիկ են. (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 3 շրջ):

⁹⁶ «Հալէպի սաները», *Ազդարար շաբաթաթերթ*, 23 Սեպտեմբեր 1944, էջ 2:

⁹⁷ «Տեղեկատուութիւն Հալէպահայ Ուսուցչական Միութեան գործունէութեան», *Ազգակ շաբաթօրեակ*, 8 Փետրուար 1946, էջ 5: Ասնը պարտատր էր երեք տարի ուսուցչութիւն ընել եւ Միութեան վերադարձնել իրեն համար ծախսուած կրթաթոշակին կէտը, իսկ եթէ չուզէր ուսուցչութիւն ընել, ան պարտատր էր երեք տարիէն իրեն համար կատարուած ընդհանուր ծախսը վերադարձնել: Ասիկա միջոց մըն էր, որով մասամբ կ'ապահովուէր յաջորդ սաներու պիտոճէն (Տեղեկատու մարմին, «Հալէպահայ Ուսուցչական Միութեան գործունէութիւնը», *Ազգակ շաբաթօրեակ*, 10 Մայիս 1946, էջ 8):

⁹⁸ «Հ.Ո.Միութեան սաներու տեղեկատուութիւն», *Եփրատ*, 27 Սեպտեմբեր 1945, էջ 2:

որ կ'ունենայ հետեւեալ անդամները.- Հայկուի Ազիրեան, Սաթենիկ Տասնապետեան, Աղանի Պեքերեան, Գրիգոր Ազիրեան եւ Սարգիս Սելեան⁹⁹:

Շնորհի վարչութեան եւ հաստատութեան նիւթական օժանդակութեան՝ սաներ պահելու դժուարին ծրագիրը ընթացք կ'առնէ: Յանձնախումբը, 1942ին երկրորդական վարժարաններու մէջ սաներ պահելու աշխատանքին դժուարութիւնները նախատեսելով, կը պահէ միակ սանտի մը՝ հոգալով անոր դպրոցական թոշակի եւ գիրքերու ծախքը¹⁰⁰: Սակայն, 1942-43 կրթաշրջանին օտար վարժարաններու մէջ որդեգրուած սաներու թիւը կը բարձրանայ 16ի (5՝ Ամերիկեան Քոլէճ, 11՝ Լիսէ-Ֆրանսէ)¹⁰¹: Այս սան սանտիները ընտրուած էին Չաարեան, Կիլիկեան, Կրթասիրաց, Հայկազեան եւ Սահակեան վարժարաններու 1941-42 կրթաշրջանի լաւագոյն շրջանաւարտներէն: 1943-44ին ՀՈՄԸ երկրորդական վարժարաններուն մէջ ունեցած է 16 սան¹⁰²: Իսկ 1944-45ին՝ 23՝ «15 ուսանող-ուսանողուհի Լիսէ-Ֆրանսէ, 7՝ Ալեքսո Գոլէճ, 1՝ Ամերիկեան Աղջկանց վարժարան»¹⁰³:

1945-46 կրթաշրջանին համար կը նախատեսուի 30 սան¹⁰⁴:

ՀՈՄԻ վարչութիւնը 2 Ապրիլ 1943 թուակիր խնդրագիրով կը դիմէ Բերիոյ թեմի ուսումնական խորհուրդին, ազգային վարչութեան միջոցով ապահովելու համար միջնորդութիւնը Կիլիկիոյ կաթողիկոսութեան¹⁰⁵: Սուրիոյ կեդրոնական իշխանութենէն խնդրելու որ Հալէպի հայ ուսուցիչները եւ օգտուիչ պարենատրման ուսուցիչներու յատուկ դրութենէն¹⁰⁶: Վար-

⁹⁹ «Հալէպի սաները», նաեւ՝ «Հ.Ո.Միութեան սաներու տեղեկատուութիւն»:

¹⁰⁰ Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարան, Գրիգոր Պողարեանի արխիւ (ՀՀՏՀԳ ԳՊԱ), «Տեղեկատուութիւն Հալէպահայ Ուսուցչական Միութեան վարչութեան (1942 Դեկտ. 2-1943 Դեկտ. 4)», թերթ 3:

¹⁰¹ ՀՀՏՀԳ ԳՊԱ, «Տեղեկատուութիւն Հալէպահայ Ուսուցչական Միութեան վարչութեան (1942 Դեկտ. 2-1943 Դեկտ. 4)», թերթ 3:

¹⁰² «Հ.Ո.Միութեան սաներու տեղեկատուութիւն»:

¹⁰³ Նոյն:

¹⁰⁴ Նոյն:

¹⁰⁵ Հալէպի առաջնորդարանին՝ եւ նահանգապետին, եւ կրթական տնօրէնութեան ուղարկած գրտոր եւ քանատր խնդրագիրին՝ դրական որեւէ արդիւնք չէր ստացուած մինչ այդ:

¹⁰⁶ «Ժամանակէ ի վեր, այս քաղաքին մէջ “քօթերաթի” մը հասարակութեամբ է, պէտքական պաշտօնեաներուն ինչպէս նաեւ պէտքական վարժարաններուն նուազ գիներով մարակարարելու համար անհրաժեշտ սննդեղէն ու այլ իրեղէնները»: Ուստի վարչութեան նպատակն է, որ Կաթողիկոսարանի միջնորդութեամբ հարկ եղած դիմումը կատարուէր եւ յատուկ արտօնութեամբ հայ վարժարաններու պաշտօնէութիւնը եւս կարենար օգտուիլ յիշեալ «քօթերաթիւն», ինչպէս կ'օգ-

չութիւնը նոյնպէս, պաշտօնական գրութեամբ մը ուսումնական խորհուրդին ուշադրութեան կը յանձնէ: ուսուցիչներու պաշտօնակոչումի նպատակայարմարութիւնը տարեշրջանի ասարտէն առաջ, եւ կ'առաջարկէ գնահատում ուսուցիչները մնայուն պաշտօնեաներ նկատել եւ խուսափիլ վերամուտին զանգումային փոփոխութիւն կատարել: ՀՈՄը կ'առաջարկէ նաեւ վերագնահատել ուսուցիչներու դասակարգումը, եւ իրագործել 13րդ ամսականի խնդիրը¹⁰⁷:

Յստակ է, որ ՀՈՄի վերակազմութեան յաջորդող վեցամեայ շրջանին ան յառաջացուցած էր ընթերցասրահի, խնայողականի, սաներու եւ տարեկան գործունէութեան ուղեգիծի կազմութեան յանձնախումբեր. կազմակերպած հերթական մանկավարժական դասախօսութիւններ¹⁰⁸, ստեղծած հանրային եւ աշակերտական լսարաններ:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

ՀՈՄի քսաներորդ ընդհանուր ժողովին կողմէ մշակուած 1943-44ի տարեշրջանի վարչութեան գործունէութեան ուղեգիծի նորութիւնը հրատարակչական յանձնախումբի յառաջացումն էր, որ պիտի գրաւէր մանուկներու պատմութեանը հրապարակումով¹⁰⁹: 1944ի ասարտին լոյս կը տեսնէ Ա. գրքոյը որ ընդունելութեան կ'արժանանայ «աշակերտ-յաճախորդներէն»: Աւելի ուշ լոյս կը տեսնեն 3 գրքոյկ 750ական օրինակով, որոնք նոյնպէս մեծ հետաքրքրութիւն կը ստեղծեն ոչ միայն Հալէպի, այլեւ Հալէպէն դուրս պարող աշակերտներուն¹¹⁰:

Իր գործունէութեան մասին հանրութիւնը իրազեկելու համար ՀՈՄը կը յառաջացնէ տեղեկատու դիւան:

1945ին 150 անդամ հաշտող ՀՈՄը, իր շուրջ համախմբած էր ամէն հոսանքի պատկանող ու տարբեր մտայնութեանց տէր ուսուցիչներ, որոնք գիտակցութիւնը ունէին իրենց պարտականութեամբ եւ գործակցութեամբ՝ հանրային կեանքին մէջ ստանձնել պատուաբեր դեր: Իսկ իր կազմակերպած հասարակական եւ մշակութային միջոցառումներով, ՀՈՄը աստակ էր պաշտպանել իր ուսուցիչներուն շահերն ու իրաւունքները, թէեւ

տուրէին պետական վարժարաններու ուսուցիչները եւ իրենց անմիջական պարագաները (ՄՏԿԿԱ ԲԹԱ, հիքճ. 3, ց. 1, թղթճ. 44, թ. 38):

¹⁰⁷ «Տեղեկատուութիւն Հալէպահայ Ուսուցչական Միութեան գործունէութեան», էջ 5:

¹⁰⁸ Ձօրացնելու համար ուսուցչական ասպարէզ մտած երկսեռ երիտասարդներու զիտնիքներու պաշարը, անոնց փոխանցելով հիններուն փորձառութիւնն ու հմտութիւնը:

¹⁰⁹ ՀՀՏՀԳ ԳՊԱ, ՀՀՏԳ ԳՊԱ, «Տեղեկագիր Հ. Ուսուցչ. Միութեան (8 Դեկտ. 1943-8 Դեկտ. 1944), թերթ 1 շրջ.:

¹¹⁰ Նոյն, թերթ 2:

աշխատատեղի ղեկավարության անկախությանը եւ գործօն անդամներով ան կրնար առանկ յաջողութիւն արձանագրել¹¹:

ՀՈՄԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՅՈՒՆ

Կրթադաստիարակչական, մշակութային, գիտմանակալարժեքային, խնայողական եւ այլ ծրագիրերու կողքին, ՀՈՄԻ առաջադրանքներն էր մշակութային գործունէութեան ծաւալումը՝ հրատարակութեան ճանապարհով: Այս աշխատանքի իրականացման համար ՀՈՄԻ վարչութիւններ ուղեգիծ մշակելով կ'որոշեն,-

ա) վերահրատարակել հազրագիտ արժէքաւոր գրական գործեր,

բ) աշխարհաբարի վերածել հայ մատենագիրներու գործերը,

գ) կանոնաւոր պարբերականութեամբ հրատարակել ռաւամասիրական եւ գեղարունստական բովանդակութեամբ տարեգիրք մը.

դ) դիմել հնարատր միջոցներու հայրենիքի մէջ ստեղծուած գրատր մշակոյթը տարածելու համայնքային կեանքէն ներս¹²:

Ըստ *Ազգաբարի*, 1944ին ՀՈՄը, քանի մը ռաւուցիչներու հետ ընկերակցաբար, արդէն տէր էր «անբողջական սարքուածքով տպարանի մը», որ պիտի ծառայէր յիշեալ առաջադրանքներու իրագործումին¹³: Տպարանը կը կոչուէր «Սեւան»¹⁴: Սեւան տպարանը կ'ունենայ «Սեւան Հրատարակական Մարմին», որ կը հիմնադրուի ՀՈՄԻ անդամ խումբ մը ռաւուցիչներ



¹¹ Չ. Ա., «Հալիպահայ կեանք. Դաւուցական միութեան շործը», *Ազգաբար շաբաթաթերթ*, 20 Հոկտեմբեր 1945, էջ 2.

¹² Տօթր, Գ. Ա., «Հալիպի Ռաւուցչ. Միութեան առաջադրութիւնները», *Ազգաբար*, 25 Դգոստոս 1944, էջ 3:

¹³ Ե.յն, էջ 4:

¹⁴ Այլ աղբիւր մը, սակայն, կը նշէ, որ 1944ին ՀՈՄԻ անդամ Սիմոն Սիմոնեան Հալիպի մէջ արդէն հիմնած էր «Սեւան» անունով տպարան մը (Լեւոն Շառոյեան, *Լեւոնեաններու վերջին շառափոք՝ Սիմոն Սիմոնեան ինանուան 30-ամեակին առիթով*), Երեւան, Խեղ, Իրատ., 2016, էջ 22): Մինչ Վարդան Մատթէոսեան խօսելով Սիմոնեանի գործունէութեան մասին կ'ըսէ, սն «...հիմնադիր անդամներէն ու միջ տմբէն երաձ է Հալիպահայ Ռաւուցչական Միութեան, ու 1944ին ձեռք բերած էր իր սեփական տպագրական մեքենան...» (Վարդան Մատթէոսեան, «Իկիլոյ Աղբալեան, Կոստան Բարսեան եւ Սիմոն Սիմոնեան», *Քաղին գրական-գեղարունագրական անագիր*, Յոմի. 2020:2, էջ 64):

րու կողմէ. (Պողարեան, Սիմոն Սիմոնեան, Փիլիպպոս Դերձակեան եւ Լեւոն Պերդոտեան): Արտաշէս Տէր Խաչատուրեան եւ կ'ակնարկէ ՀՈՄԻ սեփական տպարանին, երբ կ'անդրադառնայ գրական պարբերաբերթ հրատարակելու ծրագրին եւ «գրական աագ գործիչներու աշխատակցութեան խոստումով»¹¹⁵:

Սակայն, ժիրայր Դանիելեան հետաքրքիր եւ հաաստի վկայութիւն մը կը ներկայացնէ Հալէպի «Սեան» Հրատարակչական Ընկերութեան եւ հիմնադիրներու մասին: «Ձեռագիր համաձայնագրի մը 7րդ եւ 15րդ յօդուածներու համաձայն,- կը գրէ հեղինակը,- Եդուարդ Տասնապետեան, Սիմոն Սիմոնեան, Լեւոն Պերդուրեան, Փիլիպպոս Դերձակեան, Գրիգոր Պողարեան, ՀՈՄԻ խնայողական սնարակի մասնակցութեամբ 1 Յուլիս 1944ին կեանքի կը կոչեն «Սեան հասարական անունով ընկերութիւն մը, որ պիտի պահէ համանուն տպարան մը եւ ունենայ հրատարակչական ձեռնարկներ»¹¹⁶:

Սեան տպարանը կ'ունենայ հին տիպի մամուլ եւ հայերէն ճոխ տառատեսակներ՝ Մեսրոպեան, Արամեան, Յոբելեան: Տպագրական գործերու պատասխանատու կը դառնայ Ճորճ Մակարեան¹¹⁷: Այստեղ կը տպագրուին մանկական գրքոյկներ, նաեւ՝ Լեւոն Բաշալեանի *Ընտիր պատմութիւնները*, Վահան Տէրեանի *Ընտիր բանաստեղծութիւններու* հասագածոն, աշակերտական երգարաններ եւ.:

ՀՈՄԻ Սեան Հրատարակչական ընկերութիւնը շարք մը հրատարակութիւններէ ետք՝ իբրեւ արդիւնք երկարատեւ եւ լուրջ աշխատանքի կ'առաջադրէ հրատարակել եռամսեայ *Սեան գրականութեան եւ արուեստի պարբերագիրքը*¹¹⁸ Սիմոնեանի խմբագրութեամբ: Այն պիտի ըլլար գրական եւ առաւելապէս ուսումնասիրական եւ գեղարուեստասիրական պարբերական հրատարակութիւն՝ Հալէպի գրականասիրական պահանջքը գոհացնելու: Ան պիտի համախմբէր նորայայտ եւ երէց գրչեղբայրներ¹¹⁹: Հրատարակչական յանձնախումբը կապեր հաստատած էր արտասահմանի եւ Իս. Հայաստանի գրողներուն հետ¹²⁰:

19 Սեպտեմբեր 1945 թուակիրով Սիմոնեան (ՀՈՍ Հրատարակչական Մարմինի քարտուղար) տպարանին մասին կը տեղեկացնէ Կիլիկիոյ Գա-

¹¹⁵ Արտաշէս Տէր Խաչատուրեան, «Սուրբահայ մամուլի պատմութիւն», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Գ. հրր., 1972, էջ 219:

¹¹⁶ ժիրայր Դանիելեան, *Գրական որոնումներ*, տպ. Կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2007, էջ 72-73:

¹¹⁷ Հայկ Պարիկեան, Յովնան Վարժապետեան, *Պատմութիւն Սուրբոյ հայ տպարաններու*, Իրտ. «ԲԸՄ Մատենագիտական յանձնախումբ», տպ. Հալէպ, Հալէպ, 1973, էջ 76:

¹¹⁸ Տօքթ. Գ. Ա., էջ 2:

¹¹⁹ ՄՏԿԿ ԲԹԱ, հրծ. 3, ց. 1, թղթծ. 106, թ. 12:

րեզին Ա. հայրապետին եւ կը խնդրէ որ իր սրբատառ կոնդակով օրինէ պարբերագիրքը:

1944-46՝ տպարանի հրատարակած եւ վերահրատարակած աշխատություններու ցանկ ¹²⁰		
Մատենաշար/հեղինակ	երկի անուն	տարի
Մատենաշար ՀՈՍԻ	<i>Աշակերտական բարեկամք</i>	1944
Մատենաշար ՀՈՍԻ	<i>Ամսաի քերթողներ</i>	1945
Լևոն Բաշայեան	<i>Պապճուածքներ</i>	1945
Վահան Տէրեան	<i>Շնորհի քերթուածներ</i>	1945
	<i>Սպասում ենք քեզ</i>	1945
Յովսէփ Քէշիշեան	<i>Արշաղյանն առաջ</i>	1945
	<i>Հայ փղուն երգարանը</i>	1945
Մինաս Թէօփօլեան	<i>Մթնոլորտ-քերթուածներ</i>	1945
	<i>Սայեաթ Նովա</i>	1946
Լուսին Տէր Պետրոսեան	<i>Հայաստան տեսքան ժայտարատ թրքերէն/</i>	1946

«Սեան» տպարանն ու հրատարապչական ընկերութիւնը կը գործեն մինչեւ 1946ի ամառը: Սիմոնեանի Լիբանան մեկնումով՝ ան կը դադրի գործելը¹²¹:

1946էն ետք ՀՈՍը կը թեակոխէ պատմական նոր փուլ: ...1946ին, ներգաղթի իրադարձութիւնները կը ցնցեն մանաւանդ միջինարեւելեան հայօճախները: Ցնցումներէն զերծ չեն մնար Հալէպի հայօճախն ու ՀՈՍը: Այդ շրջանին հալէպահայութեան մէջ տեղի ունեցած գաղափարական պայքարի եւ անախորժութիւններու բերմամբ, մեծ թիով ուսուցիչներ կը հրաժարին ՀՈՍէն: Այդուհանդերձ, ՀՈՍը յետագայ տարիներուն (մինչեւ 1957) կը շարունակէ իր առաքելութիւնը: Արդարեւ, ան 1950ին լոյս կ'ընծայէ *Բորաստան մանկապատանեկան պարբերաթերթը* երկամսեայ դրուպեամբ, որ կը գոյատեւէ մինչեւ 1958¹²²:

ԵՂՐԱՓԱՎՈՒՄ

Հալէպահայ Ուսուցչական Միութեան գործունէութեան նպատակն էր հայ ուսուցիչի անբաղձալի գոյավիճակը բարուօքել եւ համեմատաբար անելի բարեկեցիկ կեանք մը ապահովել: ՀՈՍը 1938-46ի իրարայաջօրոք

¹²⁰ Պարիկեան-Վարժապետեան, էջ 77-78:

¹²¹ Դանիկեան, էջ 74:

¹²² *Բորաստան մանկապատանեկան պարբերագիրքը* լոյս տեսաւ 1950ին: 1950ին մէկ թիւ, 1951ին՝ հինգ, 1952-54՝ տարեկան վեցական թիւ, 1955-58՝ տարեկան երեք թիւ, ընդամենը 36 թիւ:

վարչութիւններով եւ յանձնախումբերով մեծ մասամբ կրցաւ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը: Կազմակերպեց մանկավարժական դասախօսութիւններ, զօրացնելու համար ուսուցչական ասպարէզ մտած երկսեռ երիտասարդներու գիտելիքները, անոնց փոխանցեց հիներուն փորձառութիւնն ու հմտութիւնը: ՀՈՄը ունեցաւ Սեան տպարանը, որուն հասոյթին մէկ չորրորդը յատկացուեցաւ խնայողական սնտուկին: Ունեցաւ երկու հանրային լսարաններ «Հոգեբանական ռազմավարութիւն» եւ «Առողջապահական կանոններու կիրարկութիւնը» թեմաներու մասին: Կազմակերպեց վիճարանական ասուլիսներ, Վահան Թէքէեանի նուիրուած յիշատակի սգահանդէս, Ապրիլ 24ի նուիրուած ժողովրդական ձեռնարկ: Երկրորդական երեք հաստատութիւններու՝ Ամերիկեան Աղջկանց վարաժարանի, Ալեքիփօ Քոլէճի եւ Լիսէ Լայիքի մէջ ունեցաւ իր սան-սանտիփները, որոնց իրենց օժանդակութիւնը ցուցաբերեցին ազգայիներ եւ ուսումնական խորհուրդը:

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱԼԵՊԱՀԱՅ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. Գլուխ.- ՆՊԱՏԱԿ

Միութեան նպատակն է.

1. Բարեխաւ եւ կրթական մշակներու մտատր, բարոյական ու տնտեսական վիճակը:
2. Ազգային կրթութիւնը ընդհանրացնել եւ խորացնել հասարակութեան հետաքրքրութիւնը այդ գործին հանդէս:
3. Մանկավարժական նորագոյն ըմբռնումով հոգ տանիլ նոր սերունդի մտատր, բարոյական եւ ֆիզիքական զարգացման:

Բ. Գլուխ.- ՄԻՋՈՑՆԵՐ

Այս նպատակին հասնելու համար, միութիւնը կը դիմէ հետեւեալ միջոցներուն.

1- Կը կազմակերպէ

ա- Մանկավարժական դասախօսութիւններ:

բ- Տիպար դասեր եւ մանկավարժական ասուլիսներ:

գ- Ամառնային մանկավարժական դասընթացք՝ ընդհ[անուր]. Ուսուցչ[ութեան] համար:

դ- Ժամանցի անդամական հաւարոյթ եւ շրջագայութիւններ:

2- Կը հիմնէ մակավարժ[ական] հրատարակութիւններով Ուսուցչական գրադարան:

3- Կ'ունենայ մանկավարժական յատուկ օրկան:

4- Կը քաջալերէ ու կը տարածէ մանկական կրթիչ հրատարակութիւններ:

5- Կը ջանայ աժանագին ու նպատատր պայմաններով կենսամթերք հայթայթելու իր երկսեռ անդամներուն:

6- Կը ձգտի դառնալ արհեստակցական միութին մը, ազգային եւ ի հարկին պետական վաւերացումով, ձեռնարկներ ունենալու որ ուսուցիչ-ուսուցչուհիներու տարեվճարներն ըլլան համաձայն անոնց պատրաստութեան, տարիներու ծառայութեան եւ ընտանեկան պարագաներուն:

7- Կը հետաքրքրուի Միւրիոյ ընդհանուր հայ կրթական գործով եւ կապ կը պահէ տարբեր վայրերու ուսուցչական նման միութեանց հետ:

9. ԳԼՈՒՒՍ.- ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուսուցչական Միութեան կրնան անդամակցիլ.

1- Բարձրագոյն եւ միջնակարգ կրթութիւն ստացած հայ ուսուցիչ եւ ուսուցչուհիները:

2- Հայկական վեցամսյա նախակրթարանի մը ընթացքը ասարտած եւ Ուսումնական Խորհուրդի մը մօտ ուսուցչական ձեռնհասութեան քննութիւն անցնելով վկայագիր ստացողներ[ը]:

3- Իրաստու մարմ[ի]նէ մը տրուած երեք տարուան բարուք պաշտօնավարութեան փաստաթուղթ ունեցողներ[ը]:

7. ԳԼՈՒՒՍ.- ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵՆԷ ԴԱԴԱՐՈՒՄ

Անդամակցութենէն կը դադրին.

1- Անտեք[,] որ Միութիւնը վարկաբեկող եւ անկարգապահ արարքներու մէջ կը գտնուին:

2- Անոնք որ նուազագոյն չորս ամիս անդամավճար չեն վճարած:

3- Անոնք որ այլուր մեկնած կամ ասպարէզը լծած են:

Ծանօթ.- Միութենէն հեռացող եւ հեռացող անդամները կը զրկուին Միութեան ընձեռած նիւթական ու բարոյական ամէն իրատնքէ եւ չեն կրնար պահանջել իրենց կատարած վճարումները:

Ե. ԳԼՈՒՒՍ.- ԵԿԱՄՈՒԹԻ ԱՂՔԻՐՆԵՐ, ԱԿՏԻՈՒՆԵԱ ԽՈՅՆՈՒԹԵԱՄԸ, ՈՐ ԱՏԻԱՍԻԿԻ.-

Միութեան եկամտուի աղբիւրները կը կազմեն.

1- Անդամավճարները, ամսական մէկ ֆրանք նուազագոյն սակով:

2- Նուիրատուութիւններ:

3- Ներկայացում, երեկոյթ կամ վիճակահանութիւններէ զոյանալիք զումարներ եւ պատահական այլ հասոյթներ:

Զ. ԳԼՈՒՒՍ.- ԵԿԱՄՈՒԹԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՄԸ, ԽՈՅՆԱՎԷ ԱԿՏԻՈՒՆԵԱ ԱՆՓՈՒՓՈՒՄ, ՈՐ ԱՏԻԱՍԻԿԻ. Միութեան եկամտուր կը պահուի եւ կը գործածուի այսպէ՛ս՝

1. Ընդհանուր եկամտուին **50%**ը կը պահուի անձեռնմխելի, իսկ մնացած զումարը՝ **35%** կը յատկացուի գրադարանի եւ իրատարակչական ձեռնարկներու, **15%**՝ ընթացիկ ծախքերու:

2. Անձեռնմխելի զումարը, ընդի[անուր] ժողովի մէջ 3/3ով անցուած որոշման մը վրայ, կրնայ գործածութեան դրուիլ որպէս կենսամթերքի հայթայթման դրամազուլուի:

3. Վարչութեան գանձապահը, ընթացիկ գործերու համար, կրնայ իր մօտը պահել առաւելագոյն **25** Մ[ուրիական] ոսկի:

4. Անձնունմխելի է ոչ-գործնական գումարները, վարչության պատասխանատուութեամբ, ի պահ կը ձգուին տեղական դրամատան մը մէջ, Ատենապետին եւ գանձապահին անունով:

ժամանակը բաական յառաջացած ըլլալուն, մնացած չորս գլոխներուն քննութիւնն ու վաւերացումը յետաձգուեցաւ յաջորդ նիստի մը:

5. Օրակարգի հինգերորդ հարցին, Տնտեսական խնդիրներու հետ հանգամանորէն զբաղուելու համար ալ ատեն մնացած չըլլալուն վարչութիւնը առ ի տեղեկութիւն հաղորդեց թէ իւր գնելու ծրագիր մը ունին սեղանի վրայ եւ թելադրուեցաւ որ գնելու փափաջ ունեցողներ իրենց անունները փոխանցեն գանձապահութեան¹²³:

Է. Ընդհանուր ժողով

1.- Միութեան գերագոյն մարմինը անդամական ընդհանուր ժողովն է, որ կը գումարուի վեց ամիսը անգամ մը:

2.- Ընդհանուր ժողովը օրինական է, երբ ներկայ է անդամներու պարզ մեծամասնութիւնը: Եթէ առաջին անգամ մեծամասնութիւն չգոյանայ, երկրորդը օրինական է, անկախ ներկայութենէն:

3.- Ընդհանուր ժողովը կ'ունենայ իր մնայուն դիւանը, ընտրուած մէկ տարուան համար:

4.- Ընդհանուր ժողովի բացառիկ նիստեր կրնան խնդրել, երբ պահանջը զգան, վարչութիւնը կամ անդամութեան կէսէն մէկ անկին, գլխատրապէս դիմելով եւ իրենց օրակարգը փոխանցելով ընդհանուր ժողովի մնայուն դիւանին¹²⁴:

ա) Ընտրել վարչութիւնը, եօթը անդամով, մէկ տարուան համար:

բ) Ընտրել Հաշուքննիչ Մարմին մը, երեք անդամով, մէկ տարուան համար,

վեց ամիսն անգամ մը քննութեան ենթարկելու համար, վեց ամիսն անգամ մը քննութեան ենթարկելու եւ ընդհանուր ժողովին տեղեկացնելու համար Միութեան հաշիւները:

գ) Լսել եւ տք վարչութեան եւ հաշուքննիչ Մարմնի գեկուցում-տեղեկագիրները, տալ իր գնահատանքի կամ մեղադրանքի վճիռը:

դ) Կատարել ներկայացուցիչ եւ պատգամատրներու ընտրութիւնը՝ եթէ այլ թեմերու նման միութեանց հետ համագումարի պարագաներ ներկայանան:

¹²³ «Ե. Նիստի ատենագրութիւն, 30 Մարտ 1939», (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 13 շրջ., 14-14շրջ., 15-15 շրջ.):

¹²⁴ «Զ. Նիստի ատենագրութիւն, 13 Ապրիլ 1939», (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 16-16շրջ., 17):

¹²⁵ Ծրագիր-կանոնագիրի Է. գլխուն 5րդ յօդուածի քննարկումը կատարուած էր միութեան Ե. նիստին, սակայն անդամներու միջեւ թեր ու դէմ կարծիքներու պատճառով, յետաձգուած էր վերանայման: Ուստի ուսումնասիրութեան մէջ ներկայացուած բարեփոխուած տարբերակն է, որ կ'արժանանայ անդամներու հասնութեան եւ կը վաւերացուի («Ե. Նիստի Ատենագրութիւն, 20 Ապրիլ 1939», ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 18-18 շրջ.):

ե) Բարեփոխության ենթարկել ներկայ Ծրագիր-Կանոնագիրը՝ ձայներու 2/3-ին հաանութեամբ:

զ) Ընտրութիւնները կը կատարուին անձնական եւ գաղտնի քուէարկութեամբ:

կ) Ընտրութիւնները օրինատր են ձայներու մեծամասնութեամբ:

ը) Կարչութեան եւ Հաշուեքննիչ Մարմնի անդամները կրնան վերընտրելի ըլլալ [յաջորդական երկու շրջանի համար]¹²⁶:

Ը. ԳԼՈՒՒՏ.- ՎԱՐՉՈՒԹԻՒՆ¹²⁷

1.- Միութեան գործադիր մարմինն է վարչութիւնը, եօթը անդամով, որ կ'ուսնենայ իր դիանը, րադկացած Ատենապետ, Ատենադպիր եւ Գանձապահ:

2.- Կարչութեան պաշտօններն են.-

ա) Միութեան նպատակը իրականացնելու կոչուած միջոցները ի գլուխ հանել, ի հարկին ծնունդ տալով օժանդակ յանձնախումբերու:

բ) Ունենալ կանոնատր ժողովներ, կատարել գանձումները, պահել օրինական հաշուետումար եւ ժողովներու ատենագրութիւն:

գ) Միութեան դրամն ու գոյքը պահպանել եւ գործածել ներկայ կանոնագրի տրամադրութեան համաձայն:

դ) Յարաբերութիւն պահել պետական ու ազգային հաստատութիւններու եւ այլ ուսուցչական ու մշակութային միութեան ու կազմակերպութիւններու հետ:

ե) Ընդի[անուր] ժողովներուն բերել իր զեկուցում ու տեղեկագիրները:

Թ. ԳԼՈՒՒՏ.- Անուն եւ կնիք¹²⁸

Միութեան անունն է ՀԱՅ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՒԷՊԻ ԹԵՄԻ, ինչ որ կը մակագրուի նաեւ իր կնիքին վրայ, Հայերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով:

Ճ. ԳԼՈՒՒՏ.- Միութեան լուծարումը¹²⁹.

Միութիւնը լուծարուած կը համարուի երբ անդամներուն թիւը 15էն պակաս ըլլայ: Լուծարման պարագային, Միութեան դրամն ու գոյքը կը յանձնուին Ազգ. Իշխանութեան, մնալու ի պահ, որ պարտատր է ապագային զանոնք վերադարձնելու նոր կազմունիք Ուսուցչական Միութեան:

¹²⁶ «Է. նիստի [20 Ապրիլ 1939] ատենագրութեան մէջ այս արտայայտութիւնը յետագային անցում է:

¹²⁷ «Է. Նիստի Ատենագրութիւն», 20 Ապրիլ 1939» (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 18 շրջ.):

¹²⁸ Նոյն:

¹²⁹ Նոյն (ՀԱԱ, ֆ. 1421, ց. 3, գ. 16, թ. 18 շրջ.-19):

HISTORY OF THE ARMENIAN TEACHERS' UNION OF ALEPPO

(1938-1946)

(Summary)

ANI FISHENKJIAN (fishenkjianani@hotmail.com)

The paper narrates the inception, halting and resumption of the Armenian Teachers' Union of Aleppo between 1925 and 1946.

The author notes that the Union was proclaimed in 1925; however, due to disagreements it failed to take real shape and was halted soon after. Nevertheless, a decade later, some members of the union revived it and were able to address a number of social, economic and cultural concerns of the teachers.

The Union, in collaboration with the Educational Committee of the Armenian Orthodox school succeeded in publishing its by-laws, extending the payment of the teachers from a nine-month salary to an all-year-long salary, increasing the salaries of the teachers, enabling the teachers to benefit from state provided provisions during the WWII years, establishing a library, publishing a literary journal and children's books, organizing lectures and social gatherings, developing the pedagogical skills of the teachers, and sponsoring a number of promising secondary graduates so as to recruit them into the field of education. In a nutshell the Union, which brought together Armenian teachers from different Armenian schools in Aleppo, was able to improve the dire conditions of the teachers.

However, in 1946, due to the opposing views of different conventional Armenian parties concerning repatriation to Soviet Armenia, the Union halted its activities and had a weak presence in the early 1950s.

1922 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԶՄԻՒՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՅՈՅՆԵՐԻ ԲՆԱԶՆՋՈՒՄԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԲՆԱԿ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԿԻՉՈՒՄԸ

ԹԵՀՄԻՆԷ ՄԱՐՏՈՅԵԱՆ (tehminemartoyan@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յօդուածի շրջանակում կատարուած հետազոտութիւնն ու եզրայանգումները փորձ են յստակեցնելու 1922 Սեպտեմբերին Ղարսի շրջանի հայերի եւ յոյների բնաջնջման, ապա թաղամասերի հրկիզման վերաբերեալ հակասական գնահատականները, ինչպէս նաեւ՝ հերքելու թուրքական ժխտողական պատմագրութեան շահարկող վարկածներից մէկը, թէ իբր հայերն ու յոյներն են հրկիզել քաղաքը:

Զմիւռնիայում հայերի եւ յոյների բնաջնջման քաղաքականութեան, ապա՝ քաղաքի հրկիզման ուսումնասիրութեան համար առաել հարուստ սկզբնաղբիրային նշանակութիւն ունեցող անտիպ յուշագրութիւններից են ակադեմիկոս, քիւզանդագէտ Հրաչ Բարթիկեանի հօր՝ Զմիւռնիայի վերապրող Միքայէլ Յակոբի Բարթիկեանի¹, Հայ Ազգային Պատուիրակութեան դիւանատան տեղեկագիրը², Զմիւռնիայի առաջն որդ Ղետնղ եպիսկոպոս Դուրեանի տեղեկագիրը³, տպագիր յուշագրութիւններից՝ լեզուաբան Դորա Սաքայեանի պապի՝ Թիշկ Կարապետ Խաչերեանի օրագիրը⁴:

Աղբիրագիտական նշանակութեամբ ուսումնասիրութիւններից հարկ է առանձնացնել նաեւ Զմիւռնիայում հաատարմագրուած ԱՄՆ հիպատոս Ջորջ Հորթոնի աշխատասիրութիւնները⁵, Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի⁶, Լոնդոնի Համալսարանի քիմիկ քլիշի ժամանակակից յոյների եւ Բիւզանդիայի պատմութեան հետազոտող Լիսիմախոս Օէոնոմոսի եւ Մերձատր Արեւելքի փախստականների հարցերով գործադիր քարտուղար Էդուարդ Հէյլ Բիւրթաթոյի աշխատութիւնները⁷:

¹ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, քաժին 8, թղթ. 162, ֆ. հ. 263:

² ՀԱԱում (ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 744) պահուող տեղեկագիրը կազմուել է Զմիւռնիայի վերապրողների վկայութիւնների հիմամբ (20 Սեպտ. 1922-23 Սեպտեմբեր 1922):

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748:

⁴ Դորա Սաքայեան, *Զմիւռնիա 1922. Թիշկ Կարապետ Խաչերեանի օրագիրը*, Նահապետ, Երեւան, 2005:

⁵ George Horton, *The Blight of Asia. An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna*, Indianapolis, The Bobbs-Merrill Company, 1926; George Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, Athens, Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985:

⁶ Henry Morgenthau, *I Was Sent to Athens*, New York, Doubleday, Doran & Company, 1929:

⁷ Lysimachos Oeconomos, *The Tragedy of the Christian Near East*, Appendix: *The Smyrna Holocaust* by Rev. Charles Dobson, M.C., London, The Anglo-Hellenic

Առաջին աշխարհամարտի տարիներին Կ.Պոլսի եւ Զմիտնիայի հայ ազգաբնակչութիւնը գերծ մնաց ամբողջական տեղահանութիւնից եւ հետեա-
րար բնաջնջումից⁸: Զմիտնիայի հայ համայնքը մասնակի տեղահանու-
թիւնների ենթարկուեց 1915-16ին, (երիտօրրքերն իրենց առաջին քայլերն
սկսեցին Զմիտնիայի շրջակայքի հայ ազգաբնակչութիւնից)⁹:

1915-16ի տեղահանութիւնները կազմակերպել եւ իրականացրել են
Զմիտնիայի նահանգապետ Ռահմի բէլը, ոստիկանապետ Ենիշեհիրլի Հիլ-
մի Հիլլէն, Քուշաղասի եւ Բերգամայի քաղաքապետերը են.: Բնակչութի-
ւնը տեղահանուեց Աֆիոն-Կարահիսար, Կարաման, ապա Հալէպ, Դէր Զոր¹⁰:

1922 Սեպտեմբերին Զմիտնիայի քրիստոնէաբնակ թաղամասերի հայ եւ
յոյն բնակչութեան բնաջնջումը, ապա քաղաքի իրկիզումը թուրքական իշ-
խանութիւնների ցեղասպան քաղաքականութեան շարունակութիւնն էին¹¹:
Ազգային քրիստոնեայ փոքրամասնութիւններին Թուրքիայից արտաքսելու
թուրք պետական, քաղաքական եւ ռազմական գործիչ Մուստաֆա Քեմալի
(1881-1938) քաղաքականութիւնը յանգում էր համընդհանուր թրքացմանը
ոչ միայն էթնիկապէս, այլեւ «պատմականօրէն»¹²:

Զարդարար պետութեան ծրագրերը մշակուած էին, հաշուարկուած
դերարաշխտումը կատարուած էր հաշուենկատօրէն: Քեմալականներն ամէն
ինչ իրականացրին գրեթէ անթերի, անշեղ եւ ճշգրիտ: Երբ Սեպտեմբերի
9ի առաւօտեան ժամը 11ին, թուրք հեծելազօրը մտաւ Զմիտնիա, թուրք թէ
արտառոց ոչինչ տեղի չի ունենալու: Սակայն առիթն անյապաղ ընձեռուեց:
Այդ մասին Աթէնքի Նոր օրը գրում է. «Իսիսը կարգապահութեամբ քարա-

League, 1923. նաեւ նոյն՝ *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*,
London, George Allen and Unwin, 1922. նաեւ՝ Edward Hale Bierstadt, *The Great
Betrayal, A Survey of the Near East Problem*, N. Y., R. M. McBride & Company 1924:

⁸ Ալբերտ Խառատեան, «Կ.Պոլսի եւ Զմիտնիայի հայ ազգաբնակչութեան տեղահա-
նումների շուրջ (1915-1916 թթ.)», *Պատմաբանասիրական հանդէս* 2016:1, էջ 3:

⁹ Նոյն, էջ 10:

¹⁰ Ալբերտ Խառատեան, «Զմիտնիայի հայ գաղթօջախը եղեռնի տարիներին»,
Հայոց Մեծ եղեռն-90, յօրուածների ժողովածու, ԵՊՀ, Երեւան, 2005, էջ 113:

¹¹ Մանրամասն տե՛ս՝ Թեմինի, Մարտոյեան, «Զմիտնիայի հայ եւ յոյն բնակչութեան
բնաջնջման սպառնալիքի ժխտման հետեանքները (1922 թ. Սեպտեմբեր)»,
Հայագիտութեան հարցեր, 2014:1(1), էջ 61-75. նաեւ՝ Tehmine Martoyan, "The
Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy," *Genocide
in the Ottoman Empire, Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923*, ed. George N.
Shirinian, New York, Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2017, էջ 227-49.
նաեւ՝ Tehmine Martoyan, "Denying the Possibility of Annihilation during Genocide: A
Case Study of the Armenians and Greeks, 1915-1922," *New Perspectives on the
Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913-1923*, ed. George N. Shirinian,
Chicago, IL, Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019, էջ 253-68:

¹² Յակոբ Յակոբեան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը եւ ժամանակակից
միջազգային իրաւունքը*, Ասողիկ, Երեւան, 2000, էջ 114:

փէն անցան: Միայն Բասափորթին առջեւ, անծանօթ մը ռուբը նեփեց, որմէ վիրատորոցեալ թուրք զինուորական մը ու կարծես այս դէպքը ազդանշան մը եղաւ սպանութիւններու, կողոպուտներու սկսելու»¹³: Ըստ Հորթօնի.

Թուրքերի՝ Ջմիւռնիա մտնելուց անմիջապէս յետոյ կողոպուտը, յափշտակութիւնը, բռնաբարութիւնը եւ կոտորածն անելի մեծ թափ ստացան: Վրէժխնդրութիւնն ուղղուած էր գլխատրապէս հայերի դէմ. նրանց մնդաղում էին ռուբը օգտագործելու մէջ... Այնուհանդերձ, դա չէր արդարացնում երեք օր ու գիշեր տեւած՝ կանոնաւոր բանակի դասակի դաժան հաշուեյարդարը հայերի հետ... Թուրքամէտ ոչ մի քարոզչութիւն չի կարող թաքցնել այն, ինչն իրականում կատարուեց Ջմիւռնիայում, որովհետեւ վստահութեան արժանի շատ վկաներ կան, եւ ճշմարտութիւնը, անշուշտ, բացայայտուելու է¹⁴:

Քեմալը հայերի զանգուածային բնաջնջումը ժամանակին անուանել էր «խայտառակութիւն», իսկ *Minber* օրաթերթն այն նկատել էր «պատմութեան նկատմամբ կատարուած ամենամեծ եւ ամենասաններկի» գործողութիւն¹⁵: Այս բնորոշումները, ինչպէս Քեմալի հետեւեալ խոստումը, թէ՛ «կեանքն ու ունեցումըք պէտք է յարգուեն», փաստօրէն արգելք չհանդիսացան, որ Ջմիւռնիայի բնակչութիւնն անմիջապէս ենթարկուի կողոպուտի, բռնութեան եւ զանգուածային կոտորածի:

Սեպտեմբեր 10ի առաւօտեան Խաչերեանի գրատումից տեղեկանում ենք. ...Նասահանգստում հանդարտութիւն է տիրում: Ուրախանում ենք, որ թուրքական զրատումը տեղի ունեցաւ առանց արինահեղութեան: Սակայն պատշգամբից տեսնում ենք տասնհինգամեայ մի պատանու դիակ, որին միքանի հոգի մօտակալ փողոցից տեղափոխում են նասամտոցի պատի մօտ: Ծանապարհին հանդիպում ենք օտարահպատակ միքանի հայ երիտասարդների. որոնցից տեղեկանում ենք, որ թուրք զինուորը եւ խուժանը թայանել են Հայնոցը, առեւանգել կանանց ու աղջիկներին եւ պաշարել Սուրբ Ստեփանոս եկեղեցին ու Առաջնորդարանը¹⁶:

... Հայնոցն ու շրջակայ թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ ֆրանկների թաղի շուրջը գտնուող յոյն թաղերում երեւում են հատուկներտ անցորդներ: Հայնոցի վիճակը տեսնելուց յետոյ հասկացայ, որ թուրքը միշտ նոյն ջարդարար ու կողոպուտի տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում, թէ Թրակիայում, լինի Արարիայում, Սիրիայում, թէ Հայաստանում: Թուրքը նոյն արինարբու գազանն է՝ անկախ այն քանից, թէ սքօրում է իթթիհատական, թէ իթթիլաֆական, համիդական, թէ քեմալական դիմակի տակ: Թուրքը նոյն զիշատից բորենին է՝ թէ՛ Փոքր Ասիայի ներքին գաւառների խորքերում, թէ՛ Պոլսի եւ Իզմիրի նման երոպայականացուած քաղաքներում¹⁷:

¹³ «Ջմիւռնահայ կեանքը զինադադարէն յետոյ. ատար փլուզումը», *Նոր օր*, Աթէնք, թիւ 3, 1924, էջ 29:

¹⁴ Horton, *Report*, էջ 20-21:

¹⁵ Մելինէ Անումեան, *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատաւարութիւնների վտերագրերը ըստ օսումնեան մամուլի*, մատենաշար 2, Էդիթ Պրինտ, Երեւան, 2011, էջ 34:

¹⁶ Սաքայեան, էջ 67:

¹⁷ Նոյն, էջ 69:

Պատմության դասախօս ղոկտոր Էօկոնոմոսը նկարագրում է, թե ինչպես է հայկական թաղամաս ներխուժած թուրքական անկանոն բանակը դանակներով եւ սուիններով կոտորել բնակչությանը¹⁸: Յիշարժան է նաեւ Դուրեան եպիսկոպոսի հետեւեալ հաղորդումը.

Սեպտեմբեր 9, Շաբաթ առտու, թուրքերու մէջ տարածուած ըլլալով քենալական բանակին Իզմիրին շատ մօտ գտնուիլը, խաժամութ ամբոխը ոտքէն ցլուխի զինուած իջաւ շուկայ. Նոյն առտու շուկայէն անցնող կարգ մը քրիստոնեաներ գանակոծուեցան, վիրատրուեցան, եւ ոմանք ալ խոշտանգումներու հետեանօք մեռան: Սոյն օրը՝ ժամը 10էն սկսեալ, Իզմիրի այլեայլ կողմերէն քենալական յառաջագնաց ջոկատներու ներս խուժելը անլի խրախուսեց թուրք խումանը, որ թրքական դրօշներով սկսաւ պտտիլ քաղաքին մէջ: Պատմախանէի հանդիպակաց պոլսկարին վրայ հաաքուած թուրք խումանը սկսաւ հայոց թաղին ուղղութեամբ իրացան արձակել. այս իրացանածգութիւնը, որ քառորդ ժամ տեւեց, պատճառ եղաւ, որ հայոց թաղի մերագնեայք Ա. Ստեփանոս եկեղեցին ապաստանին... Ապաստանողներու մէջ 2000ի չափ մանուկներ կային¹⁹:

Յունական բանակի ներկայութիւնը պատրուակ էր. այն արագացրեց «մաքրագերծման» գործընթացի թափը. որն իրականացում էր ռազմական գործողութիւններին զուգընթաց եւ շատ անգամ՝ դրանցից անկախ²⁰: Հորթօնը այս առնչութեամբ հաղորդում է.

Թուրքերի՝ Չմիտնիա մտնելուց անմիջապէս յետոյ կողոպտող, յափշտակութիւնը, բռնաբարութիւնը եւ կոտորածն անլի մեծ թափ ստացան: Վրէժխնդրութիւն ուղղուած էր գլխատուրապէս հայերի դէմ. նրանց մեղադրում էին ռումբ օգտագործելու մէջ... Այնուհանդերձ, դա չի արդարացնում կանոնատր բանակի դասակի երեց օր ու գիշեր տեսած դաժան հաշտեյարդարը հայերի հետ... Թուրքամէտ ոչ մի քարոզչութիւն չի կարող թաքցնել այն, ինչն իրականում կատարուեց Չմիտնիայում, որովհետեւ վստահութեան արժանի շատ վկաներ կան, եւ ճշմարտութիւնն անշուշտ բացայայտուելու է²¹:

Դուրեանը նախապէս որոշել էր իբրեւ հայ հոգեւորական ներկայանալ Զիտնիայի զինուորական կառավարչի պարտականութիւնները կատարող զօրավար Նուրեդին փաշային եւ գթութիւն աղերսել իր հօտի համար.

¹⁸ Oeconomus, *The Tragedy*, էջ 4:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748:

²⁰ Եակովու Ակցօղլու, *Անիծուած առիծի բնաջնջումը. մեր Անարտիայի հեյլէականութեան մեթոդատրուած բնաջնջման գործընթացի իրար յաջորդող փուլերը*, Ճարտարագէտ, Երեւան, 2007, էջ 102:

Մինչեւ 1922 Սեպտեմբերի 18ը յունական բանակը դուրս էր եկել Փոքր Ասիայից: 1922 Հոկտեմբերի 11ին Մարմարայի ափին գտնուող Մուղանիա քաղաքում ստորագրուեց զինադադար Թուրքիայի եւ Անտանտի երկրների միջեւ, որին Հոկտեմբերի 13ին միացաւ Յունաստանը: Մուղանիայի զինադադարով, ապա Լոզանի պայմանագրով աարտուեց յոյն-թուրքական պատերազմը (1922-1923):

²¹ Horton, *Report on Turkey*, էջ 20-21:

Առաջնորդարանին վրայ, թուրք խուժանին և անկանոն զինուորներու կողմէ եղած կատաղի յարձակումներն ու հրացանաձգութիւնները խորհիլ տովն ինձի, թէ Առաջնորդարանը թողլով ուրիշ տեղ մը ապաստանիս և անկէ որեւէ միջոց գտնելով, Նուրէտին փաշային ներկայանալովս, եւ ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը եւ բարեացակամութիւնը հայցելս անլի ճիշտ պիտի ըլլար... Հրաշքով դուրս նետուեցայ... Առաջնորդարանէն մինչեւ Այիա Ֆաթիմիի երկարող Թաւերնէս կոչուած փողոցը, իւրաքանչիւր քայլափոխիս սպանուած քրիստոնեայ մը կը տեսնէի²²:

Այդ ճանապարհին նա տեսնում է թուրքական բանակին ողջունելու եկած թուրք բնակչութեանը եւ նկարագրում.

...1922 Սեպտեմբեր 9ի առաւօտեան ժամը ճիշտ 11ին, սարէն, ձորէն թով թովի եկած այլազան հագուստներով, երկու-երեք հարիւրի չափ թուրք չեթէներ, Փունթայի կողմէն հանդիսաւոր կերպով մտան Իզմիրի քարափը: Թէ՛ւ քանի մը մեթր անդին՝ ծովածոցին մէջ խարսխած քրիստոնեայ պետութիւններու տօնական օրերու յատուկ զարդարանքներով պճնուած զրահատրները, «խոր ջրուի» մէջ ըլլալ կը թուէին... Բայց արթուն էր քաղաքին թուրք բնակչութիւնը, ու վաղ առաւօտէն խռնուած քարափին վրայ որոտընդոտ ծափերով ու բացականչութիւններով կը ողջունէին եկուոր «ճերմակ ձեռնցատրները»:

Ամերիկեան *Asia* ամսագրի 1923 Փետրուարի յօդուածը նկարագրում էր տեղի ունեցած ողբերգութեան որոշ դրուագներ.

Սպանութիւնն ու կողոպուտը սկսուեցին Սեպտեմբերի 9ի երեկոյեան եւ շարունակուեցին՝ ապահովելով դաժանութեան համակարգուած ծաւալում մինչեւ տարաբախտ քաղաքի վերջնական կործանումը հրդեհից: Միայն Ձուլան, Դիանան կամ Վիկտոր Հուգօս կարող էին նկարագրել. թէ ինչ տեղի ունեցաւ... Ոչինչ չէր պակասում՝ ո՛չ կոտորածը, ո՛չ բռնարարութիւնը, ո՛չ կրակը, ո՛չ կողոպուտը... Հայկական թաղամասը, խանութները, շուկաները կողոպտուել էին: Քաղաքում երեք օր ու գիշեր շարունակում էին սպանութիւնները... Դիակները թափուած էին փողոցներում եւ նոյնիսկ գիւղեր տանող ճանապարհներին: Դիակներով բռնուած վագոնները քշում էին հեռու, վագոնները տեղափոխում էին նաեւ կողոպտուած ապրանքը... Դռները ջարդում էին, կահույքը՝ փողոց նետում, տղամարդիկ, կանայք ու երեխաները՝ սպանտա²³:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Դուրեանի հետեւեալ գրառումը՝ Սեպտեմբերի 9ից շարունակուող ողբերգութեան մասին.

...Սեպտեմբերի 12ին՝ երեքշաբթի, Հայոց թաղի թուրք տունները թալանուած եւ դատարկուած էին. այդ տուններէն մեծ մասին իւրաքանչիւրին մէջ 1-4 սպանուածներ կային. այս դժբախտներու կարգէն նախկին ատենապետ եւ մեծ օրէնագէտ իրաւաբան, ազգային պ. Նազարէթ Ներսէսեան, որ թուրք շրջանակներու մէջ ալ մեծապէս յարգուած պատկառելի անձնատրութիւն մըն էր, իւր կնոջ եւ

²² Յղումն ըստ՝ Մինաս Տէր Սարգիսեան, *Իզմիրի անկումը եւ այլ էջեր*, տպ. Արագ, Պէյրութ, 1975, էջ 108:

²³ Նոյն, էջ 110-11:

²⁴ E. Grantham, "The Betrayal of Our Faith in the Near East," *Asia*, February 1923, էջ 120:

զաակին հետ խուժողով խուժանին զոհերը կ'ըլլան... Թալանը նախ սկսած էր հայ վաճառատուններէն, որոնց մէջ էին 200.000-300.000 անգլիական ոսկիի արժէքով մանիֆաթօրա պարունակող Պաքըճեան, Սիրիսարեան, Իփիլիք-ձեան, Ազնատրեան, Նիքոթեան, Գոճմանեան, Թօփալեան եւ այլ վաճառատուններ եւ հետզհետէ ծաալեցաւ յոյն վաճառատուններու վրայ եւ ուր եւս պակաս չէին հսկայ դրամագլուխներ...²⁵:

Զմիտնիայի հայերի ու յոյների բնաջնջումը Հորթօնն անուանում է «դանթեական ողբերգութիւն» եւ, որպէս ականատես, արձանագրում համաշխարհային պատմութեան մէջ նմանօրինակ դէպքերի սակաւութիւնը.

Զմիտնիայի վիլայէթի քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ կատաղի վերաբերմունք դրսեւորուել է ինչպէս Ա. համաշխարհային պատերազմի ընթացքում, այնպէս էլ մինչեւ պատերազմի սանձազերծումը... Թուրքերի արհմտ պատմութեան ընթացքում կատարուած ոչ մի գործողութիւն աւելի դաժան չի եղել, որքան Զմիտնիայի 1922ի կործանումը. դա մարդկային տառապանքների համար ընտրուած վատթարագոյն ձեւերի կիրառումն էր անպաշտպան ու անզէն մարդկանց նկատմամբ... Դա սոսկայի ողբերգութեան «սատանայական աարտն» էր²⁶:

ԶՄԻՒՆԻԱՅ ՀՐԿԻԶՈՒՄԸ

«Ո՛վ հրկիզեց Զմիտնիան» հարցին պատասխանել են տարբեր ականատեսներ, ժամանակակիցներ, վերապրողներ ու նրանց սերունդները, ինչպէս նաեւ՝ ուսումնասիրողներ: Այս հարցի շուրջ տեսակէտները կարելի է բաժանել երկու հակադիր խմբի.-

ա. Զմիտնիան կանխամտածուած հրկիզել են թուրքերը:

բ. Զմիտնիան հրկիզել են հայերն ու յոյները:

Տեսակէտ առաջին.- Ինչպէ՞ս թարքնել յանցագործութեան հեղքերը

Զմիտնիայի հրդեհի մասին հաղորդումները բազմաթիւ են եւ տարաբնոյթ²⁷: Խիստ արժէքատու են ականատեսների եւ ժամանակակիցների վկայութիւնները: Առաջին տեսակէտը բազմաթիւ փաստերով հիմնատրում է Հորթօնը ով անձամբ ներկայ է եղել ջարդերին ու ւերածութիւններին, կրակի օգնութեամբ թուրքերի առեանագման, բռնաբարութիւնների, կողոպտման, սպանութիւնների եւ այլ յանցագործութիւնների ապացոյցների վերացմանը: Հորթօնը հասաստում է, որ թուրք բնակչութիւնը, այդ թում՝ զինուորներ, մտնում էին հայկական թաղամաս՝ կոտորում բնակիչներին, կո-

²⁵ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748, էջ 4-7:

²⁶ Horton, *The Blight of Asia*, էջ 112:

²⁷ Rifat N. Bali, *The Saga of a Friendship, Asa Kent Jennings and the American friends of Turkey*, Libra, Istanbul, 2009. նաեւ՝ C. Hatzidimitriou, *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, N.Y., Aristided Caratzas, 2005. նաեւ՝ G. Milton, *Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of Islam's City of Tolerance*, London, Samuel Simmons, 2008. նաեւ՝ H. Lowry, "Turkish History, On Whose Sources Will be Based? A Case Study on the Burning of Izmir," *the Journal of Ottoman Studies*, Istanbul, 1989:

ղոպտում նրանց ունեցուածքն ու ատերում տները, ապա կրակի մատնում՝ թիթեղեայ տուփերով նաթ կամ դիւրավառ այլ նիւթեր լցնում, թաթախում էին լաթերը նաթի մէջ ու պատումահաններից ներս գցում, փոքրիկ ռումբեր տեղադրում սալարկ քարերի տակ՝ այայթեցնելու նպատակով²⁸։

Թուրքերը հայկական թաղամասը կրակի մատնեցին 1922 Սեպտեմբերի 13ին։ Վերջին յոյն զինուորները, ովքեր անցել էին Զմիւնիայի միջով Երեկոյեան ժամը 8ին, պատմում են, որ թուրքերը, շուրջ հինգ օր՝ նախքան հրդեհի բռնկումը, քաղաքում հաստատել էին իրենց ինքնիշխան տիրապետութիւնը, եւ այդ ամբողջ տետողութեան հայկական թաղամասում սահմանել զինուորական վերահսկողութիւն մինչեւ համակարգուած եւ լիակատար իրականացուած արինահեղութեան ասարտը։ Կենդանի մնացած հայերը թաքնուած էին նկուղներում՝ սարսափելով տեղաշարժուել, քանի որ ամբողջ քաղաքը ողողուած էր զինուորներով եւ յատկապէս այն վայրերում, ուր սկսում էր կրակը։ Հինգ օր շարունակ թուրքերը սպանում էին, կողոպտում եւ բռնաբարում։ Կրակը բոցավառում էր հայկական թաղամասում)։ Թուրքական թաղամասն աղէտի չենթարկուեց եւ կրակից զերծ մնաց։ Նոդկալի բոլոր տեսարանների, քրիստոնեաներին բաժին հասած աննկարագրելի տառապանքների ընթացքում թուրքական թաղամասը ցնծում էր ուրախ պարերից, երգերից եւ թերկրալի տօնակատարութիւններից²⁹։

Զմիւնիայի քաղաքապետարանի ջրցան մեքենաները, որոնք ջրի փոխարէն լցուած էին բենզինով կամ նաթով, օգտագործում են հայկական թաղամասի արագ հրկիզման համար³⁰։

Հրդեհի մասին է վկայում է նաեւ վերապրող Բ. Ծամպագեանը.

Դպրոց ելայ ու դուրսը դիտեցի։ Հրդեհ կար ամէն կողմ։ Այն տուները, որոնք կրակ առած չէին, իտալացի զինուորներ տաք ջուր կու տային մեքենաներով։ Թուրքերն ալ թաղերը պաշարած էին ու զէնքի տակ առած ո՛վ կը համարձակէր փախչելու։ Հակառակ բոլոր տեսակ խստութիւններուն՝ մեզի միացողներուն թիւը կ'անկէար, որոնք կը վկայէին, թէ իտալացիներուն սրսկածը պնեզինալատան ջուր է, եւ այդ էր պատճառը, որ տուները իրարու ետեւէ կրակ կ'առնէին...։

... Եկեղեցոյ մօտակայ թաղերը մեր պաշտպանութեան ներքեւ էր։ Անոնք զիջերները կը մօտենային մեզի ու կը նետէին գերմանական սափիլը պոմպա, որոնք հեռուէն կը նետուէին, օդին մէջ վառելով՝ վար կ'իյնային ու մեծ վնասներ կը պատճառէին։ Մեր ունեցած ռումբերը օգուտ չունէին։ Եկեղեցոյ թակին մէջ ինկած ռումբերը ո՛չ միայն մեծ վնասներու կ'ենթարկէին, այլեւ ժողովուրդը անշարժութեան, յուսահատութեան ու սովի կը մատնէին... Բոլորին ունեցածը գրաւուեցաւ... Երրորդ գիշեր ռումբ մը ջարդ ու փշոյր ըրաւ Արսէն Զաւուշը... Թու-

²⁸ Horton, *The Blight*, էջ 114-5:

²⁹ Նոյն։

³⁰ Ռընէ Պիւօ, *Զմիւնիայի վախճանը*, ՀՅԹԻ, Երեւան, 2001, էջ 22:

մարգացի քահանան ամեն կողմ էր, կը վազեր, ամեն ճիգ կը թափեր, որ տղաքը չտկարանային: Այս գործը ղեկավարելը մեր կարողութենէն վեր էր...³¹:

Ֆրանսիացի պատմաբան եւ լրագրող Ռընէ Պիօն փաստում է, որ թուրքերը հայկական թաղամասը կողոպտելուց եւ քնակչութեան մեծամասնութեանը կոտորելուց յետոյ յանցագործութիւնների հետքերը վերացնելու նպատակով դիմել են կրակի օգնութեանը³²: Այդ է վկայում նաեւ *Daily News*-ի յատուկ թղթակից Ֆ. Մորիսը: Նա գրում է, որ երբ կրակը բռնկուել է հայկական թաղամասում, թուրք իշխանութիւնները ջանք չեն գործադրել այն կասեցնելու ... ասելին՝ բենզին են լցրել տների վրայ եւ հրկիզել ...³³:

ԲԺԻՂ Օրան Ռաբէրը, ով ճանապարհորդում էր եւ այդ ժամանակ գտնուում էր Չմիտնիայում, վկայում է, որ քաղաքը հրկիզել են թուրքերը³⁴:

Ամերիկացի ծովակալ, հրամանատար Աարոն Ս. Մերիլը, ով Ստամբուլ էր մեկնել ծովակալ Բրիստոլի հետ Չմիտնիայի հիմնախնդրի լուծման շուրջ խորհրդակցելու, օրագրային իր գրառումներից մէկում նշում է.

Չմիտնիայի հրկիզման պատասխանատուութիւնն ընկած է հենց թուրքերի վրայ. այն հաստատում է ականատեսների վկայութիւններով: Երբ կրակն արդէն տարածուում էր, շատերն են տեսել, թէ ինչպէս են թուրք զինուորները բենզին լցնում շինութիւնների շուրջը, նաեւ՝ ԱՄՆ հիպատոսարանի: Այդ մեղադրանքներին ի պատասխան՝ Անկարայի կառավարութիւնը յայտարարել է, որ առանձին կառոյցներ հրկիզելով՝ իրենք ցանկացել են կանխել կրակի յետագայ տարածումը...³⁵:

«United Press»-ը Կ. Պոլսի իր թղթակցից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Սիմփոն» կործանարարը ժամանեց այս երեկոյ՝ քերելով Չմիտնիայի հորեհի անկի շատ ականատեսների: Բոլորը համաձայն են, որ այն ծագել է հայկական թաղամասում...³⁶:

Հրդեհն անվնաս էր թողել թուրք եւ հրեական թաղամասերը. բռնկուել էին եզրոպական, յունական եւ հայկական թաղամասերը միայն: Շուրջ 4500 տուն եւ խանութ մոխրի վերածուեց հրդեհուած թաղամասերում: Հրդեհի պատասխանատուութեան մասին պաշտօնապէս յայտարարել է Չմիտնիայում Ֆրանսիայի հիպատոսը, վկայելով՝ «թուրքերն էին, որ սկսեցին կրակը եւ կոտորեցին մեծ թուով քրիստոնեաների, թուրքերը, որոնց ... անուանում

³¹ Բիզանդ Ճամպազեան, *Պատրանի կեանքի մը պատմութիւնը*, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Լիբանան, 1960, էջ 45:

³² Պիօ, էջ 12:

³³ Նոյն, էջ 12-13:

³⁴ Ch. Papoutsy, *Ships of Mercy. The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922*, Portland, UNKNO, 2008, էջ 28:

³⁵ Геноцид армян, *Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий* (Հայոց ցեղասպանութիւնը, Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ համաշխարհային հանրութեան պարտատուութիւնները), *հրք. 2, մաս. 2*, Գարդարիկի, Մոսկուա, 2005, էջ 79:

³⁶ Oeconomus, *The Martyrdom*, էջ 123-24:

ենք մեր ընկերները...»³⁷: Չմիտնիայում Բրիտանիայի հիպատոսը եա յայտարարել է, որ քաղաքի հրկիզումը կանխամտածուած դիտատրութիւն էր³⁸:

Տեսակէք երկրորդ.- Հրկիզել սեփական թաղամասե՛րը

Քեմալականներն ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ որդեգրել էին իրենց նախորդների քաղաքականութիւնը: Կառավարող շրջանակներն անհանդուրժող ու ջարդարար իրենց վարքագիծն «օրինականացրին» Լոզանում կնքուած պայմանագրով³⁹:

Լոզանի խորհրդածողովի՝ 1922 Դեկտեմբերի 12ի ռազմատարածքային յանձնաժողովի ԺԳ. նիստի⁴⁰ արձանագրութեան մէջ գրուած է հետեւեալը.

... Թուրքերը երբեք չեն արհամարհել ոչ-մահմեդական տարրերի իրաւունքները, քանի դեռ վերջինները չեն չարաշահել այն երկրի մեծահոգութիւնը, որտեղ նրանք ազատ ու անկաշկանդ ապրել են դարերով: Մինչեւ հիմա կառավարութեան եւ թուրք ժողովրդի որեւէ գործողութիւնից գանգատուելու իրաւունք չունեցող հրեական համայնքի օրինակը քաական կը լինէր ապացուցելու, որ յոյների եւ հայերի վերաբերմամբ տեղի ունեցած տհաճ իրադարձութիւնների մեղքն ամբողջութեամբ ընկնում է հենց նրանց վրայ⁴¹:

Լոզանի խորհրդածողովին, թուրքական պատուիրակութեան պետ, քաղաքական գործիչ Իսմէթ Ինէտիւն հետեւեալ միտքը հնչեցնելիս հաւանաբար չի յիշում, որ Մարսելում յոյները վերաբնակիչներ էին.

Ինչպէս Մարսելում բնակութիւն հաստատած յոյները չեն կարող քանականօրէն երազել այնտեղ յունական անկախ պետութիւն ստեղծելու կամ այդ նաասհանգիստն իրենց հայրենիքին միացնելու մասին, նոյնպէս եւ յոյներն ու հայերը չեն կարող Թուրքիային նման պահանջներ ներկայացնելու իրաւունք ունենալ⁴²:

Ինէտիւն պատասխանատուութիւնը բարդելով յոյների վրայ՝ հայերի նկատմամբ «անթաքուց գթասրտութիւն է դրսեւորում».

... Նա (յոյն պետական գործիչ Էլեֆթերիոս Վենիզելոսը - Թ.Մ.), անտարակոյս, աջաթող է անում, որ Փոքր Ասիայի յունական օկուպացիան տարարախտ հայերի համար դարձաւ տառապանքների ու աղէտների մի նոր աղբիւր: Այդ դժբախտ բնակչութեանը բոնութեամբ ներգրաւեցին յունական բանակի շարքերը... Յոյները, երբ հեռանում էին Ասիայից, հայերին տարան իրենց հետ: Ուստի պէտք է ասել, որ հայերի կրած տառապանքների անմիջական պատճառը հան-

³⁷ Oeconomus, *The Tragedy of the Christian Near East*, էջ 3:

³⁸ Լոյն:

³⁹ Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ Ջ. Ա. Կիրակոսեան, Հայաստան հրատ., Երևան, 1972, էջ 779:

⁴⁰ Լոզանի խորհրդածողովի ռազմատարածքային յանձնաժողովի տասներեքերորդ նիստին նախագահում էր Մեծն Բրիտանիայի պատուիրակութեան ղեկավար, արտաքին գործերի նախարար լորդ Քըրզլն օֆ Քեդլլթոնը:

⁴¹ Հայաստանը միջազգային դիւանագիտութեան, էջ 745:

⁴² Լոյն, էջ 746:

դիսացող կառավարութիւնը լոկ վերջին հերթին կարող է իրեն թոյլ տալ հրապարակօրէն կարեկցել նրանց...⁴³:

Չի ուշանում Լորդ Քըրզընի պատասխանը, որ 1922 Դեկտեմբերի 13ի նիստում անդրադառնում է Ինժեմիփ յայտարարութիւններին.

... Իսմէջ փաշան, խօսելով հայերի մասին, նրանց ներկայացրեց որպէս թուրքական տիրապետութեան տակ ապրող միանգամայն երջանիկ ու գոհունակ մարդկանց, որոնք թուրքական կառավարութեան կողմից հանդիպում են անենաերայրական զգացմունքների: Նրանց տառապանքների պատճառը, ըստ նրա խօսքերի, հանդիսանում են հենց իրենց սեփական խելագրկութիւնն ու նոր դրացիների մքեռայութիւնները: Եթէ երկու ժողովուրդների միջեւ միշտ գոյութիւն են ունեցել երջանիկ յարաբերութիւններ, ապա այդ ինչպէ՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիւը նուազելով հասել է 130,000ի: Արդե՞՞ք նրանք ինքնասպանութիւն են գործել, թէ՞ անհետացել են կամատուր կերպով: Ի՞նչ ճշման տակ է տեղի ունեցել այդ նուազումը...⁴⁴:

1922 Հոկտեմբերի 25ին Փարիզից Յունաստանում Հայ Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Մ. Սվազլըին յղոճած նամակում նշոճած է.

Իզմիրի աղէտը ամէնքս ալ տրտմութեամբ համակած է: Բնական չէ մեր Ֆիզիքական եւ նիփթական կորուստներուն մեզ առթած անասնի ցարը, ու տակալին պէտք է սրտաբէկ հանդիսատեսները ըլլանք. թէ ինչպէս ջանահնար կ'ըլլան աղէտքին պատասխանատուութիւնը հայոց վրայ ծանրացնել եւ վարկաբէկ ընել մեզ քաղաքակիրթ աշխարհին առջեւ: Այս անիրաւ մեղադրանքէն ազատելու համար պէտք է ձեռք բերել ճշմարտութիւնը...⁴⁵:

Փաստերն անաչառօրէն քննարկող մասնագէտների մեծ մասը շեշտում է որ մեղադրանքը հայերի ու յոյների նկատմամբ շինծու էր եւ կեղծ:

Մերձատր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոցի գործադիր քարտուղար Բիերսթադը պարզում է ճշմարտութիւնը տրամաբանութեամբ.

Ինչու՞ պէտք է յոյներն ու հայերն այրէին իրենց սեփական տները, որտեղ դեռ յոյս ունէին վերադառնալու: Իսկ թուրքերն ունէին այդ պատճառը: Նրանք ուզում էին ընդմիշտ թաքցնել թալանի, արհմահերդութեան ողջ հետքը, որը տեսնց չորս օր շարունակ: Աւելին՝ նրանց որոշել էին, որ քրիստոնէութիւնը պէտք է ոչնչացուի Փոքր Ասիայի քրիստոնեայ մայրաքաղաքից, եւ դա պէտք է լինի կրակով ու սրով...⁴⁶:

Թէէն շատերն էին արասափազդու բաներ պատմում Զմիւռնիայում իրենց տեսածի մասին, այնուամէնայնիւ նրանք իրենց պարտքն էին համարում յիշեցնել. «Քայց ի սէր Աստու, իմ անունը մի՛ յիշատակէք, քանի որ ես Թուրքիա վերադառնալու յոյս ունեմ ...»⁴⁷:

⁴³ Նոյն, էջ 747-8:

⁴⁴ Նոյն, էջ 750:

⁴⁵ ՀԱԱ, ֆոնդ 430, Յուցակ 1, գործ 308, էջ 19-22:

⁴⁶ Bierstad, էջ 35:

⁴⁷ Grantham, էջ 121:

Նոյն առումով խիստ արժեքատու է Խաչերեանի օրագրային գրառումը. ... Հայերը, եթե նոյնիսկ այդպիսի դիտատրոֆին ունենային, փոխանակ հրղե-
հը իրենց թաղից սկսելու, կարող էին հեյլենական քանակի մեկնումից առաջ, եւ
նոյնիսկ դրանից յետոյ, նախ թուրքական թաղերը կրակի տալ: ...թուրքերի գրա-
տումից շիչ յետոյ Հայնցը մեծ մասամբ դատարկուած էր... այդ գիշերն իսկ թուր-
քերը Հայոց թաղում սկսել էին թալանը, սպանութիւններ ու ամէն տեսակի վայ-
րագոյթիւններ: Իսկ մինչեւ Չորեքշաբթի՝ հրղեհի օրը, ոչ ոք չէր համարձակուած
անցնել Հայոց թաղով, ուր մնաց թէ այն զանազան տեղերից հրղեհի տրուէր⁴⁶:

Գրական-հասարակական գործիչ, խմբագիր, վերապրող Միքայէ Բար-
թիկեանի «Աննաշողայի Իզմիրը» յուշագրութեան մէջ կարդում ենք.

... Թրքերը սակայն, պէտք ունէին քառութեան նոխագի: Հարկաւոր էր յանցանքը
թողնել ուրիշի վրայ: Եւ ո՛վ կարող էր լինել այդ, քացի հայից: Ուստի, թուրք
թերթերը հրղեհի իբր դրոյիչ ու կազմակերպիչ ներկայացնում էին Թովմաս
Բոյսցեանն ու Տակոբ Տերեւնը: Ձերբակալման հրամանը տրուել էր այս երկու
ազգայինների համար: Սրա նպատակն էր նաեւ սրել թուրք ժողովրդի հակահայ
եւ ջարդարարական այխորժակը, արթնցնելու վրէժխնորական զգացումները⁴⁷:

Հրղեհը մարելու յուսահատ փորձի մասին է Ձմիտնիայի հրշէջների
խմբից մի յոյնի հարրոյած հետեւեալ տեղեկութիւնը.

Երբ պատրաստուած էինք էլմնոսեան փողոցի եւ այլ տեղերի հրղեհները մարել,
մեզ արգելում էին գլնքով: Ջրի խողովակները յաճախ ջարդուած էին թուրքերի
կողմից, այնպէս որ եթէ արգելքի էլ չհանդիպէինք, անկարելի էր լինում հանգ-
ցնել կրակը... Մի թուրք գիւտոր մտնում էր որեւէ տուն, քաց էր անում մի փոքր
տոսփի կափարիչը, տոսփի բովանդակած փոշին փչում էր տան մէջ, վառուած մի
մտ էր թողնում եւ դուրս գայիս: Հազիւ մի րոպէ յետոյ տան ամէն կողմերից,
յանկարծական սահազին ժայթքումով դուրս էին երկարում բոցի թեւեր...զարմա-
նում էինք, թէ ինչպէս ... շէնքը բռնկում էր ամէն կողմից միանգամից: ... ուրիշ
շատ տեղեր ձեռնաջրհաններով բենզին էին սրսկում եւ կրակ էին գցում⁴⁸:

Հրղեհի մարման նմանօրինակ փորձեր խաղաղ բնակչութեան կողմից
եղել են, բայց ո՛չ թոյլատրուել են, ո՛չ էլ իրականացուել. քանի որ թուրքերը
գործել են համակարգուած ձեւով եւ նախապէս ստացած հրահանգներով:

Ըստ Խաչերեանի՝ թուրքերը վաղուց էին որոշել ոչնչացնել Ձմիտնիայի
քրիստոնէայ թաղերը: Իթթիհատականները մտարդութիւն ունէին ընդհա-
նուր պատերազմի ընթացքում Պագոս լեռան վրայ գետեղուած թղանսթ-
ներով քրիստոնէայ թաղերը քարոյքանդ անելու, եթէ դաշնակից գրահա-
տրները մտնէին Իզմիրի ծովախորշ: Այդ աներիչ ծրագիրը չիրագործուեց,
հետեալաբար քեմալականներն այն իրականացրին⁴⁹:

⁴⁶ Սաքայեան, էջ 81:

⁴⁷ ՀՅԴԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, թղթ. 162, ֆ. հ. 263:

⁵⁰ Նոյն:

⁵¹ Սաքայեան, էջ 81-2:

Ուշագրաւ են Չմիտնիայի թուրք ականատեսների ժառանգների յիշողութիւնները եւ կատարուածի մասին նրանց մօտ ձեւատրուած գնահատականը: Թուրքիայի Կոնիա քաղաքի բնակիչ, ազգութեամբ թուրք, մասնագիտութեամբ ուսուցիչ երեսուներկուամեայ Սեալ Օզդեմիրը⁵² հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում իր տատիկի պատմածից: Այս ողբերգութեան վերաբերեալ զանազան պատմութիւնների մասին տեղեկանալով եւ ծանօթանալով Թուրքիայի Հանրապետութեան պաշտօնական տեսակէտին, Սեալն այնտամէնայնիս փորձում է յանգել ինքնուրոյն եզրակացութեան. «Ատամ են... հայերն ու յոյներն են այրել քաղաքը: Չգիտեմ: Ատամ են... նրանք ցանկացել են այրել (ողջակիզել - Թ.Մ.) մահմեդականներին, մինչդեռ Ալլահը պարծել է նրանց, եւ իրենք են այրուել: Անկեղծ ասած միշտ մըրածել են. **Եթէ նրանք են հրկիզել քաղաքը, ապա ինչու՞ թուրքերի թաղամասը չեն հրկիզել, իրենք իրենց թաղամասն են հրկիզել** (ընդգծումը մերն է - Թ.Մ.): Արդեօ՞ք հնարատր է: Չեմ էլ պատկերացնում, թէ ինչու՞ եղաւ ընդհանրապէս: Բայց շարք հարցեր չեմ ուղղել այս թեմայի վերաբերեալ»⁵³:

Թուրքական կրթական համակարգում ընդգրկուած զրպարտանքը թէ հայերն են այրել Չմիտնիան, ունենում է ժամանակատր արդիւնք, մանաւանդ այն թուրքերի վրայ, որոնք արտասահման անցնելով առերեսում են հակափաստերի այլ ճշմարտութեան. ուշագրաւ է, օրինակ, Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գործող «Միութիւն ընդդէմ ցեղասպանութեան» կազմակերպութեան անդամ Սելայ Էրթեմի արտայայտութիւնը.

Թուրքական պաշտօնական պատմագրութեան համաձայն յոյներն են հրկիզել: Յետագայում տեղեկացանք, որ հենց թուրքերն են հրկիզել: Փաստօրէն, մեր իմացած պատմութիւնն անհիմն էր, կիսատ-պրատ, աղաստրուած: Նոր պատմութիւն պէտք է գրուի: Այս ռազմավարութիւնն աանդոյթ կարելի է համարել: Սեփական նախաձեռնութեամբ սպանութիւններ իրականացնել, հրկիզել մի ամբողջ քաղաք, ապա՝ մեղքը բարդել ուրիշների վրայ»⁵⁴:

Պատմաբան Վարդանեանն առաջին հերթին ընդգծում է քրիստոնեայ տարրի նախորոշուած բնաջնջումը Փոքր Ասիայում.

Չմիտնիայի հողեիը 1922 թ. Սեպտեմբերի 13-15ին, դրան հետեւած բնակչութեան բռնի տեղահանութիւնը եւ զանգուածային կոտորածներն իրենց պարզագոյն իմաստով քրիստոնէական տարրի ներկայութեան վերջն էին Փոքր Ասիայում: Քաղաքը, որն ամենամեծ քրիստոնէական կենտրոնն էր Փոքր Ասիայում, եւ որը յաճախ թուրքերի կողմից անուանում էր «գետաւոր Իզմիր» իր քրիստոնէական լինելու համար, կործանուեց»⁵⁵:

⁵² Բնակչի անվտանգութիւնից ելնելով՝ փոխուած է անուն ազգանունը:

⁵³ Հարցազրոյցը՝ ըստ թուրքագետ Սոֆիա Յակոբեանի, էլեկտրոնային նամակ հեղինակին, 25 Մարտի, 2013:

⁵⁴ Էրթեմ, 23 Ապրիլի, 2013:

⁵⁵ Գ. Վարդանեան, *Յոյն բնակչութիւնն Օսմանեան Կայսրութիւնում եւ փոքրասիական աղէտը (1914-1923թթ.)*, Կոլաժ, Երեւան, 2012, էջ 129:

Պատմաբան Ռիչարդ Յովհաննիսեանը հաստատում է կործանման դատապարտում քաղաքի դառը հետեանքները հայ բնակչության համար.

Երբ թուրքական բանակը ետ մղեց յունական ուժերը դէպի Եգեական ծով եւ 1922ին այրեց Զմիտնիա քաղաքը, հայկական ներկայութիւնը Թուրքիայում, քաջատուբեանքը Ստամբուլի, փաստօրէն վերացաւ⁵⁶:

Ըստ Բիերսթադթի՝ Զմիտնիայի արինահեղութեանը զոհ գնաց շուրջ 100,000 մարդ⁵⁷: Հորթօնը փաստում է, որ զոհերի ընդհանուր թիւը հասնում էր 100-120,000ի⁵⁸, միայն հրդեհը խլեց շուրջ 25,000 մարդու կեանք⁵⁹, նիւթական կորուստը ընդհանուր առմամբ 60,000,000 դոլար էր⁶⁰:

Երբ Զմիտնիայի հրդեհի մասին լուրը տարածուեց է Կ.Պոլսում, թուրքական մամուլն այն բացայայտ անտարբերութեանք է ընդունում: Քեմալականների համար Զմիտնիայի երոպական բնակավայրերի հրկիզումը Թուրքիայի համընդհանուր թրջացման⁶¹ ծրագրի մասն էր կազմում: Կ. Պոլսից *Manchester Guardian*ին յղած մի հեռագրում պարզապէս նշում է, որ Զմիտնիայի ողբերգութեանը յաջորդել է Քեմալի յայտարարութիւնը, թէ այնտեղ այլեւ չեն գործելու ամերիկեան քոլէջները, երիտասարդ մարդկանց քրիստոնէական միութիւնները (YMCA) եւ քրիստոնէական այլ հաստատութիւններ:

Զմիտնիայի հայ եւ յոյն բնակչութեան բնաջնջման, ապա՝ քաղաքի հրկիզման ծրագիրը բաւականին սառնասրտօրէն էր մշակուած: Կատարուեց այն, ինչ մտածուած էր ի սկզբանէ: Հորթօնը վկայում է.

Մեծ հրդեհից շնուդ, որպէս դրա հետեանք՝ քրիստոնեայ ամբողջ բնակչութիւնը բռնութեանք բջնուեց նաահանգիստ, որտեղ մնաց միքանի օր: Քաղցից ու ծարաւից մեռնող մարդիկ օգնութիւն էին հայցում նաահանգստում տեղակայուած ռազմանաեքից: Թուրքերի վարքը զգուեյի էր: Միս Էմիլի Մակկալանը՝ Զմիտն-

⁵⁶ R. Hovannysyan, *The Armenian Question, 1878-1923, A Crime of Silence - The Armenian Genocide Permanent Peoples' Tribunal, London, 1985, էջ 27*:

⁵⁷ Bierstadt, էջ 36: Թուրքը հրապարակախօս, լրագրող Սայիդ Չեթինօղլուն խելամիտ է համարում Զմիտնիայի զոհերի շուրջ 100,000ից աեւի լինելու հաշուարկը: Լա այդ փաստն արժանահաատ է համարում՝ նշելով, որ հրդեհից աուաց Զմիտնիայում շուրջ 400,000 քրիստոնեայ է ապրել, իսկ Հոկտեմբերի 1ի դրութեանք առնուազն 190,000 քրիստոնեայի մասին տեղեկութիւն չի եղել (<http://hyetert.blogspot.com/2012/01/izmir-1922-hristiyan-hoyat-o-gun-izmir.html>):

⁵⁸ Horton, *The Blight of Asia*, էջ 173-4:

⁵⁹ Տ. ՏաճօսունՅիք, *Տմբրոց Խրսոճօտոք* (Ա. Սղլուննիդիս, Երիտստոմնո Զմիտնիայից), Աթէնք, Իրմոս, 1993, նաեւ՝ Ի. Խասիօտք, *Օւ ճաղքօւ տօն Էլլիցօն ուի դ յեոկոտօնօ ճո Տմբրոց* (Ի. Խասիոտիս, Յոյների վտարումը եւ ցեղասպանութիւնը Զմիտնիայում), Միկրասիա, 2006, էջ 61-64:

⁶⁰ Լոյն, էջ 66:

⁶¹ Սանըրմասն տե՛ս՝ Հ. Սիմոնեան, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանութիւնը եւ քաղաքականութիւնը*, Երեան, Հայաստան, 1986. նաեւ՝ Ա. Սաֆարեան, *Գէօրպիքը եւ «թուրքականութեան հիմունքները»*, ԵՊՀ, Երեան, 2012:

իայում կանանց գիմնագիայի տնօրէնը, այսօր առաւօտեան քաղաքից վերադառնալով, պատմեց, որ նաահանգստում եւ ծովափին դեռ նկատելի է առանց հացի ու ջրի նուազող այդ խեղճ արարածների բազմութիւնը...»⁶²:

Քեմալը Չմիւռնիայում տեղի ունեցած ողբերգութիւնը որակեց իբրեւ «չհամաձայնեցրած միջադէպ», իսկ այլ խնդիրների համեմատութեամբ՝ «երկրորդական նշանակութեան դրուագ»⁶³: Երբ թուրք լրագրողները ժամանում են Չմիւռնիա՝ տեսնում են հպարտօրէն ծածաննուող թուրքական դրօշը, Քեմալը ողջունում է նրանց եւ յայտարարում. «...**Մենք պարմութիւն ենք դարձել...**» (ընդգծումը մերն է - /Թ.Մ.)⁶⁴:

Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Մորզընթաուն յետագայում գրում է.

Չմիւռնիայի 1922ի կոտորածի, Փոքր Ասիայի յոյների մեծ գաղթի մանրամասները դեռ թարմ են հասարակութեան յիշողութեան մէջ: Ահա դրանցից մի քանիսը. Քեմալի աջից անցնելով թուրքական բանակն իրականացրեց Չմիւռնիայի յունական թաղամասի յոյն տղամարդկանց, կանանց եւ երեխաների կանոնաւոր սպանութիւնը, տների եւ եկեղեցիների կազմակերպուած կողոպուտը, առանց խտրութեան՝ կանանց եւ երիտասարդ աղջիկների անկաշկանդ բռնաբարումը, 16-50 տարեկան աշխատատու տղամարդկանց օտարումը, ապա երկրի խորքերն արտաքսումը, ուր գրեթէ բոլորը մեռնում էին հարկադիր աշխատանքի հետեանքով... Բոլոր այս բռնութիւնները Փոքր Ասիայից յոյներին ամբողջութեամբ արտաքսելով՝ թուրքերի նպատակադրուածութեան ակնյայտ դրսեւորումն են: Քեմալի հսկողութեան ներքո՝ թուրք ազգայնականների հետապնդած ծրագրով Փոքր Ասիան ամբողջութեամբ «թուրքացունց»⁶⁵...:

Կատարուածը՝ զմիւռնիաբնակ հայերի ու յոյների բնաջնջումը եւ քաղաքի քրիստոնէայ թաղամասերի հրկիզումը, Քեմալը ներկայացնում էր որպէս «արդար վրէժխնդրութիւն», եւ ոչ թէ պատահար.

Ազգի բարձրացումը նպաստող գործօնների թում է վրէժխնդրութեան զգացումը: Այն պէտք է ապրի իւրաքանչիւր ազգի հոգում: Դա հասարակ, սովորական վրէժխնդրութիւնն չէ: Մեր վրէժխնդրութեան նպատակն է անվտանգ դարձնել

⁶² Horton, *Report on Turkey*, էջ 21:

⁶³ Lord Kinross, *Ataturk, The Rebirth of a Nation*, London, K. Rustem & Brother, 1964, էջ 326:

⁶⁴ Նոյն, էջ 327:

⁶⁵ H. Morgenthau, *I was sent to Athens*, էջ 47-49:

Քեմալականների՝ Փոքր Ասիայի թուրքացման քաղաքականութեանը հետեւողականօրէն հետամուտ լինելու իրողութիւնը հասաստել է անձամբ Քեմալը: Նկատի ունենալով հրկիզուող Չմիւռնիան, նա դիմել է իր հայրենակիցներին՝ «Երկար նայեցէք այս տեսարանին: Սա մեր երկրում օտար միջամտութեան վայճանն է: Այս կրակը դրա խորհրդանշիչն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապէս ազատագրուել է դաւաճաններից եւ առեւտրականներից: Այսուհետեւ ազատագրուած ու մաքրագարդուած Թուրքիան կը պարկանի միայն եւ միայն թուրքերին» (V. Poghosyan, «Avant-propos», *La Catastrophe de Smyrne de 1922 (Recueil de Documents)*, կազմ. եւ խմբ.՝ Վարուժան Պողոսեան, ԵՊՀ, Երեւան, 2011, էջ 9:

ազգի թշնամիներին, նրա կեանքի, նրա ապագայի, նրա երջանկության թշնամիներին: Թող ամբողջ աշխարհն իմանայ, որ քանի դեռ մեր առջեւ կանգնած է նման թշնամի, նա մեր կողմից չի ներուի: Թշնամու հանդէպ զթատրութիւնը թուլութեան եւ անզօրութեան վկայութիւն է: Դա մարդասիրութեան արտաստուութիւն չէ, այլ մարդկային զգացմունքների բթացման նշան:

...Միայն Ղմիտնիայի աղէտից յետոյ մեր ժողովուրդն իրօք արթնացաւ. նրան վերադարձաւ իր զգացմունքայնութիւնը, նա հասկացաւ, որ իրեն քաջ են տալիս անդունդ, եւ որոշեց իր սեփական ձեռքը վերցնել սեփական իրատունքների պաշտպանութեան գործը: Բնական է, որ դրա համար անհրաժեշտ էր ուժեր ձեւատրել⁶⁶:

1922 Սեպտեմբերի 15ին *Daily Telegraph*ի թղթակցին տուած հարցազրոյցում Քեմալը յայտարարում է.

Ինչպէս արդէն գիտեք, կոտորածներ կամ ինչ-որ նման բաներ Ղմիտնիայում տեղի չեն ունեցել: Իսկ կողոպտուն ու սպանութիւնները, որ պատահեցին, անվտուտափելի էին: Երբ բանակը քաղաք մտաւ իրենց սեփական երկրից 450 կմ ռազմերթից յետոյ, քաղաքն այրուած ու թալանուած էր, իրենց ծնողներն ու հարազատները՝ կոտորուած. այդ ամէնը դժուար էր վերահսկել: Սակայն մենք կամենում էինք սահմանել վերահսկողութիւն: Այսօրուանից կարգուկանոնը լիովին վերականգնուել է: Մենք վրէժխնդիր չենք ուզում լինել: Մենք այստեղ չենք կարգաւորելու անցեալի հաշիւները: Մեզ համար անցեալի գործողութիւններն ասարտուած են⁶⁷:

Շահեկան է Մեծն Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի՝ Ղմիտնիայում կատարուածի մասին 1922 Հոկտեմբերի 14ի մեկնաբանութիւնը.

... Ես չեմ պատրաստում անդրադառնալ այն հարցին, թէ ով է պատասխանատու Ղմիտնիայի համար: Ես չեմ պատրաստում քննարկելու այն հարցը, թէ արդեօք յոյներն են գրգռել թուրքերին, թէ թուրքերը՝ յոյներին: Ինձ համար քաաարար է ուշադրութիւն հրահրել այն փաստի վրայ, որ սկսած 1914ից թուրքերը, ըստ պաշտօնական վկայութիւնների, մէկուկէս միլիոն հայ տղամարդ, կին, երեխայ եւ հինգ հարիւր հազար յոյն են սառնասրտօրէն սպանել...⁶⁸:

Եւ կարծես եզրափակելով Ղմիտնիայում արուածը, Քեմալն իր 1923 Յունտարի 31ի ելոյթում ասել է.

Իզմիրի յարգելի՛ ժողովուրդ, իմ սիրելի՛ հայրենակիցներ, ինձ համար շատ մեծ երջանկութիւն է ձեր կողքին այսքան մօտ գտնուելն ու ձեզ ողջունելը: Ես երախտապարտ եմ այն անկեղծ զգացումների համար, որ ցուցաբերեցիք հինգ ամիս առաջ՝ իմ նախկին այցելութեան ժամանակ, մեր յաղթական բանակի ուղեկցութեամբ... Եթէ հնարատր լինէր, ապա ես իմ երախտապարտութիւնը կ'արտայայտէի Իզմիրի իւրաքանչիւր քնակցին առանձին... Իզմիրը մեր նախնիների հողն

⁶⁶ М. Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, (Մ. Քեմալ, Լոյր Թուրքիայի ուղին 1919-1927թթ., Անգորայի բազայի պատրաստում, 1919-1920), *հիրք. 2*, Պետիրատ, Մոսկուա, 1932, էջ 300-2:

⁶⁷ *Oeconomus, The Martyrdom of Smyrna*, էջ 64:

⁶⁸ Լոյն, էջ 134-35:

է... Ունենալով պատմական այդքան խոր արմատներ եւ գրաւելով աշխարհագրական այդքան կարևոր դիրք՝ Իզմիրը տնտեսական եւ քաղաքական մեծ նշանակութիւն ունի մեզ համար: Հենց դրա համար էլ մեր թշնամիները, ցանկանալով ոչնչացնել Թուրքիան, առաջին հերթին իրենց հայնացքն ուղղեցին պատմականօրէն կարևոր քաղաքին... Իզմիրի ընագալթումը խոր վէրք հասցրեց ազգի հենց սրտին... Թանկարժէք Իզմիրը, իհարկէ, չպէտք է մնար թշնամու ձեռքերում եւ չմնաց...⁶⁹:

ԵՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Զմիտնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը, քրիստոնէաբնակ թաղամասերի հրկիզումը Թուրքիայի համընդհանուր թրջացման ծրագրի մասն էր կազմում: Կանխամտածուած գործողութիւնները, որոնք աչքի էին ընկնում պարզմակ, սակայն ծայրայեղ անմարդկային մեթոդների կիրառմամբ, հետապնդում էին նաեւ հետեւեալ նպատակները.- հրդեհի միջոցով թաքցնել կատարուած յանցագործութեան հետքերը, անրել մշակութային արժէք ներկայացնող հաստատութիւնները, կոթողները, քրիստոնէայ բնակչութեան բարձրարժէք մշակոյթը:

Զմիտնիայի հրկիզումն անհնարին դարձրեց սպանուածների թուի ճշգրտումը, սակայն յանցագործութեան հետքերը թաքցնելու կամ հնարատր ու անհնար մեթոդներով սպանուածների թիւը նուազեցնելու փորձերը ամէնեւին էլ չեն վերացնում կատարուած յանցագործութեան փաստը եւ կազմակերպիչներին չեն ազատում կատարուած յանցանքի համար պատասխանատուութիւնից: Քեմալականները Զմիտնիայի քրիստոնէաների նկատմամբ իրենց գործողութիւնների ծրագիրն իրականացրել են որոշակի յաջորդականութեամբ. սպանութիւն, կողոպտու, առեւանգում, բռնաբարութիւն, ապա՝ հայկական եւ յունական թաղամասերի հրկիզում:

Մուստաֆա Քեմալի՝ նոր պետականութեան հիմքը դրուեց անմեղ ժողովուրդների արեան հեղմամբ եւ նրանցից զաւթուած ունեցուածքի սեփականացումով: Ինչպէս Օսմանեան Պետութիւնն էր ստեղծուել եւ դարերի ըն-

⁶⁹ Նոյն, էջ 261:

Թուրքիայի Հանրապետութեան՝ քրիստոնէաների նկատմամբ որդեգրած ցեղասպան քաղաքականութեան շարունակականութեան մասին է վկայում հետեւեալը: ԺԺ. դարում հիմնականում յոյներով, ապա՝ հայերով բնակեցուած Թաթալա (Ստամբուլ) թաղամասում 1929ին խոշոր հրդեհ է բռնկուած, որի հետեւանքով կործանուած է շուրջ 230 շինութիւն: Տեղեկութիւնների համաձայն թաղամասը հրկիզուել է, իսկ հրդեհը երկար ժամանակ միտումնաւոր չեն մարել: Հրդեհի մասին համապատասխան մարմինների ժամանակին չտեղեկացնելու պատրուակով ձերբակալուել է *միքաւնի հայ եւ յոյն* (ընդգծումը մերն է - Թ.Ս.): Հրդեհի հետեւանքով քրիստոնէաները մարդկային եւ նիւթական կորուստ ունեցան, իսկ թաղամասն ստացաւ Քուրթուլուշ (թուրքերէն՝ փրկութիւն, ազատագրում) անուանումը (Ալին Օզինեան, «Թաթալա-Քուրթուլուշ. Սամաթիայի դէպքերը դեռ չեն ասարտուել, 2013/09/02» <http://akunq.net/am/?p=33647>):

թացքում ամրապնդուել «արեամբ եւ հրով», նոր Թուրքիան եւս կերտում էր նոյն կերպ:

Փաստորէն, մերժելով հայերի եւ յոյների քննաչնջման մասին որելէ դիտատրութեան, նպատակի կամ ծրագրի գոյութիւն, «Զմիտնիայի հողեհ», «Զմիտնիայի աղէտ» կամ նմանօրինակ քնորոշումները շրջանառուել են պատասխանատուութիւնից խուսափելու, արդարանալու նպատակով:

Զմիտնիայում կատարուած ոճրագործութեան նիւթական կորուստը հայերի ու յոյների ցեղասպանութիւնների հատուցման անքակտելի մասն է կազմում⁷⁰: Ակնյայտ է, որ Զմիտնիայում ոչնչացուեց քրիստոնէական մշակութային-կրթական մի ինքնատիպ ժառանգութիւն: Ստորեւ՝ յաւելուածում ներկայացնում ենք Զմիտնիայի հրկիզման դատաւարութեան փաստաթուղթը:

ԶՈՒՄ ՀՈՒՐԻԷԹ ՕՐԱԹԵՐԹՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԶՄԻՈՒՆԻԱՅԻ ՀՐԴԵՀԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ (22 ՅՈՒՆԻՍ 1924)⁷¹

Զմիտնիայի կառավարութիւնը 18 միլիոն ֆունտ ստերլինգ է պահանջել ապահովագրական ընկերութիւններից. անգլիական դատարանները որոշում են կայացրել յանձնաժողով ուղարկել Զմիտնիա՝ հրդեհի եւ դրա պատճառների մասին տեղեկութիւնների եւ անկողմնակալ վկայութիւնների հաւաքագրման նպատակով: Կառավարութեան (Թուրքիայի - Թ.Մ.) հասոյթը կազմում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Զմիտնիայի վերագրատմից եւ քաղաքի մեծ մասի աներումից յետոյ հրդեհի հետեւանքով տուժածները ապահովագրական ընկերութիւններից պահանջում: 12 միլիոն ֆունտ ստերլինգի փոխհատուցում:

Ապահովագրական ընկերութիւնները հրաժարուել են վճարել պահանջուած փոխհատուցումը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ հրդեհը թռնկուել է պատերազմի ժամանակ, իսկ Զմիտնիան հանդիսացել է պատերազմի դաշտ: Այս առնչութեամբ

⁷⁰ Յակոբ Տերենցը (Տէրյակոբեան) (1871—1947), Զմիտնիայում թուրքական իշխանութիւնների ոճրագործութեան վերաբերեալ Աթէնքում 26 էջանոց տեղեկագիր է պատրաստել, որի օրինակները ներկայացուել են Յունաստանի կառավարութեանը, Պօղոս Նուպարի Ազգային Պատուիրակութեանը, Ալեքսանդր Խատիսեանին: 1924 Նոյեմբերին Տերենցը եւ այլ վերապրողներ վերոյիշեալ տեղեկագրով ներկայացել են Լոնդոնում կայացած դատաւարութեանը («Ամերիկեան ծխախոտի ընկերութեան» Զմիտնիայի մասնաճիւղն ընդդէմ «Գարդիան» ապահովագրական ընկերութեան): Նրանք դատարանի առաջ հաստատել են, որ Զմիտնիան հրկիզել են թուրքերը (Սեդա Բուցիկանեան, Յակոբ Տէրենց, «Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մատրամանութիւնները», *Ազգ օրաթերթ (Երեսան) Յ Դեկտեմբեր, 2007*, https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2007120806&Base_PUB=0, մատչում 20 Յուլիս 2021:

⁷¹ Դատաւարութեան փաստաթուղթը հայերէն թարգմանութեամբ ներկայացում է առաջին անգամ: Յաւելուածում պահպանուած է րեւագրային տարբերակը՝ առանց հեղինակային միջամտութեան (*Զումիտրիէթ, 21 Յուլիս 1924*):

կառավարությունը պահանջել է ապահովագրական ընկերություններից կամ վճարել փոխհատուցումը կամ դադարեցնել իրենց գործունեությունը Թուրքիայում:

Մեծ գումարներ վճարելու փոխարէն ապահովագրական ընկերությունները նախընտրում են փակել իրենց գրասենյակները եւ դադարեցնել գործունեությունը, սակայն հարցը դրանով չի լուծւում: Անեյն, հրդեհի հետեանջով տուժած ապահովագրական ընկերությունները միատրում են, իրաւարաններ վարձում եւ դատական գործ յարուցում այն երկրների դատարաններում, որոնց պատկանում են այդ ընկերությունները:

Դատական գործընթացներ են սկսում Ֆրանսիական, բրիտանական եւ զուգեբրիական դատարաններում: Այն հասաարապէս յուզում էր ե՛ւ ապահովագրերին ե՛ւ կառավարութեանը: Կառավարութիւնը փոխհատուցում է պահանջում հայ եւ յոյն տարագիրներին պատկանող, աներում շէնքերի երեք քառորդի համար, ինչը, որպէս լքեալ գոյք վերադարձուել է կառավարութեանը: Քանի որ հրդեհի հետեանջով առաջացած վնասի մեծ մասը կրել է կառավարութիւնը, հետեաբար լքեալ գոյքի յանձնաժողովի որոշմամբ կառավարութեանը տրամադրուող փոխհատուցման գումարը կզկզում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Երկու տարի առաջ դատական գործընթացներ են սկսուել միաժամանակ ֆրանսիական, բրիտանական, իտալական եւ զուգեբրիական դատարաններում: Ապահովագրական ընկերությունների ղեկավարները յայտարարել են, որ հրդեհը բռնկուել է անսպասելիորէն քաղաքի գրատուից յետոյ եւ որ այն տարածուել է ապշեցուցիչ արագութեամբ: Նրանք համոզմունք են յայտնել նաեւ, որ քաղաքն այրել են յոյները, հայերը եւ թուրքերը Ջմիտնիայի գրատուից յետոյ: Միւս կողմի տեսակէտի համաձայն, որը տարածուել էր Եւրոպայում եւ Ամերիկայում, պատասխանատուութիւն կրում են թուրքերը, այնուամէնայնիւ, ճշմարտութիւնը կը բացայայտուի:

Երկու կողմերն էլ իրենց անմեղութիւնն ապացուցելու նպատակով՝ ներկայացնում էին տարբեր երկրներում հրատարակուած փաստաթղթային վկայութիւնների պաշտօնական զեկուցագրեր: Բրիտանական կառավարութեան հրատարակած պաշտօնական զեկուցագրում ամրագրուած էր, որ թուրքերն են պատասխանատու հրդեհի համար, մինչդեռ Միացեալ Նահանգների պետական Քարտուղարութեան պաշտօնական զեկուցագրերում մատնանշուած էր այն փաստը, որ թուրքերն այս գործում որեւէ դերակատարութիւն չեն ունեցել: Ֆրանսիական եւ իտալական կառավարութիւնների հրատարակած փաստաթղթերը վկայում են, որ ինչպէս թուրքերը, այնպէս էլ յոյներն ու հայերը պատասխանատուութիւն են կրում կատարուածի համար:

Առանց գործն ուսումնասիրելու՝ ֆրանսիական դատարանը որոշեց պաշտպանել ապահովագրական ընկերություններին՝ յայտարարելով, որ հրդեհը բռնկուել է պատերազմի դաշտում, եւ որ ապահովագրական ընկերությունները չեն կարող պատասխանատուութիւն կրել:

Բրիտանական դատարանը որոշում է կայացնում յանձնաժողով ուղարկել Ջմիտնիա՝ օտարագգի անկողմնակալ վկաներից տեղեկութիւններ հաւաքելու նպատակով: Յայտնի է, որ Ջմիտնիայում օտարագգիներն արդէն տեղեկացրել էին իրենց կառավարութիւններին, որ հրդեհը պատահաբար էր բռնկուել: Այն ընկերությունները, որոնք պատասխանատու էին հրդեհի համար, յոյսեր էին փայփայում, որ այս հետաքննութիւնը հնարաորութիւն կը տայ շահելու դատը, եւ որ այն վերջնականապէս կը փակի Ջմիտնիայի հրդեհի հարցը:

Բրիտանական յանձնաժողովի որոշումը մեծ կարևորություն ունի կառավարության համար: Դա մի հարց էր, որ մինչ այդ անտեսել էր կառավարության կողմից, բայց յոյս կայ, որ կառավարությունն անմիջապես գործ կը յարուցի ապահովագրական ընկերությունների դեմ՝ փորձելով վերստանալ վնասների հատուցման համար յարուցած հայցի դիմաց պահանջուող 12 միլիոն ֆունտ ստերլինգ հսկայական գումարը:

Կառավարությունն անվի շատ ապացույցներ ունի այս հարցի վերաբերեալ, քան անհատները, հետևաբար դատը շահելու հարցում առաւել նպատատուր դիրքում է գտնուում: Այն մեղքը, որ թշնամիները փորձում են վերագրել մեզ (կառավարությանը - Թ.Մ.)՝ ձմիտնիայի հրդեհի պատասխանատուութեան հարցի առնչութեամբ՝ հաստատապէս կը վերանայ:

Վճիռ

Կայացուած Զմիտնիայի դատարանի կողմից հետեւեալ հարցի առնչութեամբ.

Հայցուոր՝ <i>Մեհմէդ Զամիլ բէյ</i>	ներկայացնում է «Մուսարէ, Հայիմ Գալանթի եւ Աշէր» ընկերութիւնը, Զմիտնիա:
Պատասխանող՝ <i>Մոմիիր բէյ</i>	ներկայացնում է «Ասիգուրասիոնի Գաներալի դի Տրիեստէ» ընկերութիւնը Ընկերութեան Զմիտնիայի ճիւղի ղեկավար, Հ. Լուան Ամադօ, Թիխիկուր Հան, Փենթեմաջիկար, Զմիտնիա:

«Մուսարէ, Գալանթի եւ Աշէր» ընկերութեան լիազօրուած գլխաւոր փաստաբանը յայտարարեց, որ իր յաճախորդներն ապահովագրել են իրենց երկաթեղէն պարունակող խանութները, որոնք գտնուում էին Փենթեմաջիկար 158, Զմիտնիա հասցեում, 6 հազար ֆունտ ստերլինգ գումարի չափով «Ասիգուրասիոնի Գաներալի դի Տրիեստէ» ընկերութիւնում, եւ որ գոյքը ոչնչացուել է պատահաբար բռնկուած հրդեհի հետեանըրով, բայց նշուած ընկերութեան Զմիտնիայի ճիւղի կառավարիչ պարոն Լուան Ամադօն հրաժարուում է վճարել փոխհատուցման գումարը եւ Զամիլ բէյը 3982 ֆունտ ստերլինգ հատուցում է պահանջել, 38 ֆունտ ստերլինգի տարբերութիւնը, որը կազմում է հրդեհից չվնասուած գոյքը:

Մոմիիր բէյը, ով ներկայացնում էր պատասխանող ընկերութեանը՝ յայտարարեց, որ՝

1. դատական գործն անորոշ է, քանի որ ոչնչացուած գոյքի իրական արժէքը հաստատապէս ապացուցուած չէ,

2. հրդեհի ժամանակ գոյքի առկայութեան հետ կապուած ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտութիւն կայ,

3. դատարանին ներկայացրեց նաեւ հրապարակուած յօդուածաշարերից շուրջ 16 հատուած, որոնց համաձայն՝ հրդեհը բռնկուել է Զմիտնիայի վերագրաման հետեանըրով ծագած ընթոստութեան եւ անախորժութիւնների պատճառով: Բացի այդ, նա մատնանշեց Ստամբուլի Առեւտրային Երկրորդ դատարանի վճիռը, ըստ որի՝ ապահովագրական ընկերութիւնը պատասխանատուութիւն չի կրում ապահովագրութեան վճարման համար Պանղըրմայի դէպքում, որտեղ գոյքը ոչնչացուել էր նման հանգամանքներում հրդեհի հետեանըրով.

4. Այն անձինք, ովքեր ծրագրել և իրականացրել էին հրդեհը, դատարանի որոշմամբ դատապարտուել են,

5. Իսմէթ փաշայի յայտարարությունները Լոզանի Խորհրդաժողովում ապացուցում են, որ յոյներն են պատասխանատու Զմիտնիայի հրդեհի համար:

Ներկայացնելով վերոբերյալ ապացույցները՝ Մոնիթր բլը համոզում Նշեց, որ իր կողմից ներկայացրող ընկերությունը ոչ մի կերպ պատասխանատուություն չի կրում կատարածի հանդեպ և որեւէ պարտատրուածություն չունի:

Մեմբէր Ջամիլ բլը, ներկայացնելով հայցուր կողմը, փաստեր բերեց՝ յայտարարելով, որ հրդեհը պատահաբար է բռնկուել Զմիտնիայի պաշտպանութեան հետեանքով:

Դատարանը հայցուրի պահանջը քննելոյց յետոյ վճեց.

Պաշտպանական կողմի Ա. կէտի՝ պահպանուած ամբողջ գոյքից միայն հրդեհից չտուած 38 ֆունտ ստերլինգ արժողութեամբ գոյքի հարցի վերաբերել, դատարանը, հաշուի առնելով այն փաստը, որ կտույցն ամբողջովին անբուել էր հրդեհի հետեանքով, հնարաւոր չէ որեւէ կերպ որոշել գոյքի ճշգրիտ քանակը: Հայցուրը այնչոյս է, որ հրդեհը պատահաբար է բռնկուել, և կառավարութեան կողմից իրականացուած պաշտօնական հետաքննութեան արդիւնքում այդ փաստը լիովին հաստատուել է: Այսպիսով, այլեւ որեւէ անորոշութիւն չկայ այս դատավէճում, քանի որ հրդեհի պատճառը պարզորոշ և հաստատուալէս սահմանուած է:

Երկրորդ կէտով, որը վերաբերում է հրդեհի ժամանակ պահեստում պահուղ գոյքի փաստացի գոյութեանը, դատարանն ընդունում է, որ գոյքը իրականում գոյութիւն է ունեցել՝ նկատի ունենալով, որ պատասխանողի կողմից հակառակ վարկածը չի հաստատուել:

Երրորդ կէտով՝ հաշուի առնելով ներկայացուած լրագրային ամենատարբեր յօդուածները, որոնք վերաբերում են որոշակի դաժանութիւնների՝ իրականացուած էսքիշեհիրում, Թուրզութլում, Սալիհիլում, Ալաշեհիրում, Աֆիտում, Գուրդում և Դումձում, Մուստաֆա Քեմալ փաշայի կողմից որոշակի նախազգուշական միջոցներ ձեռնարկելու նպատակով տրուած յանձնարարականները, ինչպէս նաեւ՝ բողոքարկուող Զմիտնիայի հետ կապ չունեցող որոշ գործողութիւնների դէմ դատարանը գտաւ, որ առնչութիւն չունեն այս դէպքի հետ և ոչ մի կերպ չեն կարող մեկնաբանուել պատասխանող ընկերութեան օգտին դատական այս գործընթացում:

Ինչ վերաբերում է պաշտպանութեան չորրորդ կէտին այն փաստի առնչութեամբ, որ որոշակի անձինք, ովքեր դատապարտուել են հրդեհը ծրագրելու և իրագործելու համար, և որ այդ հրդեհի պատճառը ապատամբութիւնն էր, որեւէ ապացոյց չի ներկայացուել այս յայտարարութիւնները հիմնաւորելու համար: Չնայած այն փաստին, որ որոշ անձինք պատժուել են, դեռ չի նշանակուղ, որ ապատամբութիւն է տեղի ունեցել, որն այլ կերպ ասած ամբոխի կողմից յեղաշրջում է կառավարութեան դէմ որոշակի նպատակով և ապացուցում չէ, որ նման ապատամբութիւն կամ յեղաշրջում եղել է:

Հինգերորդ կէտով ներկայացուած փաստարկը, որը վերաբերում է Լոզանի Խորհրդաժողովում Իսմէթ փաշայի յայտարարութեանը, հիմնուած է լրագրերի յօդուածների վրայ և պաշտօնապէս չի հաստատուել: Եթէ նոյնիսկ ճանաչուղ, ապա այն ընդամէնը փաստարկ է բանակցութիւններ վարած հակառակորդ պատուիրակ Վենիզելոսի դէմ, և չի կարող օրինական հիմք հանդիսանալ դատարանների համար:

Այսպիսով, դատարանի որոշմամբ պատասխանողի կողմից հինգ կետով ներկայացրած փաստարկները ընդունելի չեն եւ, հետեւաբար, մերժում են:

Ներկայացրած պայմանագրի համաձայն 5962 ֆունտ ստերլինգ պէտք է վճարուի (ընդհանուր ապահովագրութեան 6000 ֆունտ ստերլինգից հանելով 38 ֆունտ ստերլինգ) Լին Ամադոյի կողմից՝ որպէս դատական ծախսերով ապահովագրական ընկերութեան տեղական բաժնի կառավարիչ, համաձայն օրէնսգրքի 1567րդ յօդուածի: Բողորարկումը բաարարում է համաձայն 150րդ յօդուածի:

Սեպտեմբեր 12, 1923

Զմիւռնիա, Թուրքիա

Թարգման՝ Ջեքի Բէյ

ԱՄՆի գլխաւոր հիւպատոսութիւն,

Զմիւռնիա, Թուրքիա

Ապահովագրական ընկերութիւնների ներկայացրած պահանջները. Զմիւռնիայի աղէտը

Ֆրեդերիկ Օ. Բըդ

Փոխհիւպատոս Ֆրեդերիկ Օ. Բըդ

Զմիւռնիա, Թուրքիա: Պատրաստման ամսաթիւ *Յուլիս 24, 1924*

Նամակի ուղարկման ամսաթիւ *Յուլիս 25, 1924*

Որոշման համառօտ շարադրանք՝ ներկայացրած Զմիւռնիայի Առեւտրային Դատարանի կողմից *Ջումուրիէ* թում տեղ գտած լրագրային յօդուածի թարգմանութեան հետ, որը հրատարակուել է 1924 Յուլիսի 21ին Կ.Պոլսում եւ վերաբերում է Զմիւռնիայի աղէտի հետեւանքով կրած կորուստների փոխհատուցմանը. ընդամին կցում են եւ հնարասոր է հետաքրքրական լինեն ամերիկեան ընկերութիւնների համար, որոնք նախկինում ապահովագրական գործունէութեամբ են զբաղուել այս շրջանում:

Դատարանը ձօտ 160 մման հայց ունի օրակարգում, բայց շատ հասանական է, որ նախորդը հասանաբար կը կանխի գործընթացը շարունակելու անհրաժեշտութիւնը, եւ արդիւնքում կարող է յանգեցնել բարեկամական յարաբերութիւնների եզրափակման: Այնպիսի արդիւնաւէտ քայլեր, ինչպիսիք են իշխանութիւնների կողմից մերժումը այն ընկերութիւններին, որոնք հրաժարում են ընդունել այս պահանջները Թուրքիայում գործելու համար եւ իրենց ունեցուածքի բռնագրաւումը դատական գործընթացի միջոցով, արդէն ձեռնարկուած են եւ կարող են լրջօրէն երաշխաւորել վճարումների հարկադրում՝ համաձայն այս դատավիճիւնների:

Մինչ այս՝ գրասենեակը տեղեկացուեց ներկայացուցիչ Լոյձի կողմից (Անգլիա), որ աներաձութիւնը գնահատում էր 50 միլիոն ֆունտ ստերլինգ, որից միայն 2-2,5 միլիոն ֆունտ ստերլինգն այնուամէնայնիւ ըստ երեւոյթին վճարուել է համաձայն պատերազմի դիակային պայմանագրերի կէտերի, մինչդեռ 12-12,5 միլիոն ֆունտ ստերլինգ վճարուել է հրդեհի ապահովագրութիւնից: Հաստատուել է, որ այս իրատապահանջներից ոչ մէկը չի բաարարուել:

Չնայած ոչնչացում կառոյցների թիւը ոչ-պաշտօնապէս սահմանուել է 35,000, աւելի հասանական հաշուարկի համաձայն մասնատրապէս ներկայացուցիչ Լոյձը միջինը գնահատում է աղէտի հետեւանքով ոչնչացում 18,000 կառոյց: Ըստ վերջին նախահաշուարկի, խանութները, բնակավայրերը եւ այլ հաստատութիւններ

համարում են որպես առանձին կառոյցներ՝ բացառութեամբ պաշտպանիչ պատերի, որոնք նորմալ հանգամանքներում դասակարգում են որպես խմբային շինութիւններ: Վնասը բաժանում է 4166 ֆունտ ստերլինգի առանձին շինութիւնների համար՝ ներառեալ պարունակութիւնը:

Վերջին պահանջի բաարարման խնդրով՝ շատ հաւանական է յետագայ բարդացում տեղի ունենալ «Լքեալ գոյքի ունեցուածքի» առնչութեամբ, ինչպէս նշուած է լրագրային զեկոյցում, սակայն չկայ մի դէպք, որին առնչուել է այս գրասենեակը: Բրիտանական ընկերութեան ապահովադրի վերջին հայցում ծագումով հայ Թուրքիայի մի քաղաքացի, ում ունեցուածքը «Լքեալ սեփականութեան» օրէնքի նիւթ էր, եւ այն ապահովագրուած էր որպէս բնակավայր, յետագայում օգտագործուեց որպէս գրասենեակ եւ բնակատեղի: Վնասի փոխհատուցում տեղի չէր ունեցել, չնայած այն փաստին, որ ունեցուածքը ոչնչացուել էր Ձմիտնիայի հրդեհից մի քանի ամիս յետոյ: Ընկերութիւնը հրաժարուել է վճարել փոխհատուցումը՝ պատճառաբանելով, որ անշարժ գոյքը սեփականութեան իրաւունքը հաստատող որեւէ փաստաթուղթ չի ունեցել ոչնչացման ժամանակ: Կառավարութիւնն ի վիճակի չի եղել կորզել այս գումարն ընկերութիւնից:

Քննարկման թեմայից զգուշութեամբ դուրս են մնացել շահոյթի, եկամտի եւ այլ հարցեր: Իշխանութիւնների հաւանական գործունէութիւնը եւ դիրքորոշումն այս առնչութեամբ կարող է լինել լոկ ենթադրութեան նիւթ:

Այն կարծիքն է տարածուած, որ ապահովագրական ընկերութիւնները վերջի-վերջոյ ստիպուած կը լինեն որեւէ կերպ համաձայնութեան գալ բոլոր պահանջատէրերի հետ՝ չկորցնելու համար ժամանակի եկամտաբեր գործը: Թուրքական իշխանութիւններն իրենց հերթին պատրաստակամօրէն հաշուի կ'առնեն ցանկացած առաջարկ, որ կարող են ներկայացնել հետաքրքրուած ընկերութիւնները:

THE ANNIHILATION OF THE ARMENIANS AND GREEKS IN SMYRNA AND THE ARSON IN THE CHRISTIAN QUARTERS OF SMYRNA (SEPTEMBER 1922)

(Summary)

TEHMINÉ MARTOYAN (tehminemartoyan@gmail.com)

The research focuses on the contradictory claims concerning the annihilation of the Armenians and Greeks in Smyrna and the arson in its Armenian and Greek quarters.

Based on collected data, information, eyewitness accounts and media reports, the paper rejects the Turkish claims that the arson was caused by Armenians and Greeks. It argues that these quarters were burnt in order to eliminate any evidence of killings and responsibility by the Turks. The author notes titles like "Fire of Smyrna" or the "Catastrophe of Smyrna" simply cover up the name of the perpetrators of the Smyrna atrocities.

The paper details the plan of action of the arson and massacre of the Christian population and notes that it had a specific order: killings, robbery, theft, rape, and finally arson. The author stresses that this procedure of violence was similar to many atrocities perpetrated against cities, towns and villages in the Armenian *Vilayets* and Cilicia.

ԿԻԼԻԿԻԱ. 1920 ՕԳՈՍՏՈՍԻ 4Ի ԱԿՏԸ ԵՒ ՄԻՇՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ՍՈՒՐԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ (sargsyansuren@yandex.ru)

ՄՈՒՏՔ

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում անցել է շատ դժարին փորձությունների բովով: Կենսունակության եւ անկոտրում հաստի շնորհի այսօր էլ ընթանում է իր յափտենական ճանապարհով եւ պատրաստ սպասում է այնպիսի պատմական բարենպաստ առիթների ու քաղաքական շրջադարձերի, որոնք անկարելի թուացող երազները իրականություն կը դարձնեն: Այդպիսի առիթներ թէեւ քիչ, բայց նախկինում էլ են եղել: 1920 Օգոստոսի 4ի Կիլիկիայի անկախության փորձը դրանցից մեկն էր: Մէկդարեայ հեռաւորութիւնից անգամ ակնյայտ երեւում է, որ դա զարմանալի, սիրալի, սրտառուց, ինչ-որ տեղ՝ միամիտ եւ հերոսական արարք էր, բայց նաեւ՝ անուրանալիօրէն պատմական անհրաժեշտութիւն: Հենց դա է պատճառը, որ այսօր հայ ժողովուրդը բոլոր մակարդակներով նշում է կիլիկեան երազի, Սեւրի դաշնագրի ու Ուիլսոնեան իրաւարար վճռի 100ամեակները, որը պերճախօս վկայութիւնն է այն իրողութեան, որ հայ պատմութիւնը տէր ունի եւ հայ ազգային անկորնչելի իրատունքները տակափն կենդանի են:

Կիլիկեան անկախութեան հռչակման կարեւոր իրադարձութիւնը հայոց պատմութեան վերջին հարիւրամեակի ամենաքիչ ուսումնասիրուած դըրուագներից է: Այդ պատճառով էլ հետազօտողները երբեմն տարակարծութիւններ են ոչ միանման տեսակէտեր են հնչեցրել հիմնախնդրի վերաբերեալ: Լաւ է, որ բարեբախտաբար այդ շրջանի պատմութեան մասին տարողունակ նիւթեր են պահպանուել, որոնք սպասում են իրենց հետազօտողներին: Այդպիսի նիւթեր կան Հայաստանի Ազգային Արխիւում¹, Ե. Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում², Ֆրանսիայի³ ու Մեծն Բրիտանիայի դիւանագիտական արխիւներում են.: Բաւականին վաերագրեր կան որոշ տպագիր սկզբնաղբիւրներում⁴, ինչպէս նա-

¹ ՀԱԱ ֆ. 430՝ Հայ Ազգային Պատուիրակութեան, ֆ. 200՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութեան եւ այլ ֆոնդեր:

² ԳԱԹ, Արշակ Չօպանեանի, Վահան Թեքէեանի եւ այլ ֆոնդեր:

³ Ա. Պէլլերեան, *Մեծ փրկութիւնները, Օսմանեան Կայսրութիւնը եւ հայերը ֆրանսիական արխիւներում, հոլր. 1*, ֆրանս. Թարգմ.՝ Վարուժան Պօղոսեան, Հայաստան հրատ., Երեւան, 2005:

⁴ «Դրօշակի նամակը Մ. Տամատեանին», *Ռուսերոմ նամակակի, մահուան վաթսուեամեակին առթիւ*, խմբ.՝ Հր. Տամապետեան, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, Պէլրուօ, 1979, էջ 153-54. նաեւ՝ *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովեթական արդաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923)*, խմբ.՝ Զոն Կիրակոսեան, Հայաստան հրատ., Երեւան, 1972. նաեւ՝ *Ազգային Պատուիրակութեան գործունէութիւնը 1915-*

եւ՝ զգալի մանրամասներ ժամանակակիցների յուշերում: Վերջինների մէջ շահեկանօրէն առանձնանում են յատկապէս Միհրան Տամատեանի յուշերը⁵ եւ մասնատրապէս՝ յուշագրութեան վերջին էջերում տեղ գտած նրա ներկայացրած լուսաբանութիւնները Կիլիկիայի հարցի ազգային, քաղաքական ու պատմական եշանակութեան արժեւորման վերաբերեալ: Կարեւոր են նաեւ մամուլում⁶ սփռուած հրապարակումները, հարցի հետ այս կամ այն կերպ առնչուած գործիչների նամակները եւ.: Այդ նիւթերի մանրակրկիտ ուսումնասիրութիւնն ու հրապարակումը լոյս կը սփռի կնճոռոտ հիմնախնդիրների վրայ եւ կը պատասխանի շատ հարցերի: Գնահատելի է, որ վերջին տարիներին ուսումնասիրողներն այս կամ այն առիթով երբեմն անդրադարձել են հիմնահարցին⁷:

1916 (վաղերազրեր), ներած. եւ ծանօթ.՝ Վ. Ղազարեան, հրատ. Հ.Բ.Ը.Մ. Վահրամ Ավտանեան Մշակութային Հիմնադրամի, Պէյրուֆ, 2017. նաեւ՝ *Նիւթեր Հ. Յ. Դաշեակցութեան պարմութեան համար, հպր. 13*, Համազգայինի Վահէ Անթան տպարան, Պէյրուֆ, 2020. նաեւ՝ Գ. Աազեան, *Կիլիկիան 1918-1922 թթ. փաստաթղթերի ժողովածու* (ղեկեւս անտիպ նիւթերն օգտագործման համար սիրով ինձ է տրամադրել հեղինակը):

⁵ Վ. Ղազարեան, «Իրբեւ ներածութիւն Կիլիկեան երազին նաւորդը»՝ Մ. Տամատեան, *Իմ յուշերն*, հրատ.՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պէյրուֆի Միհրան Տամատեան ակումբ, տպ. Զարթօնք, Պէյրուֆ, 1985, էջ 7:

⁶ Այդպիսիք շատ են հրապարակուել յատկապէս Եգիպտոսի *Արեւ* թերթում (օրինակ՝ *Արեւ*, թիւ 15706, 5630՝ 1937, թիւ 8145, 5630՝ 1945): Դրանք զգալի թուով կան նաեւ *Ազգ*, *Ազգակ*, *Արարապ*, *Զարթօնք*, *Հայրենիք*, *Նոր օր*, *Պայքար*, Վէմ պարբերականներում:

⁷ Գ. Միքայէլեան, *Կիլիկիայի հայկական պնդութեան պարմութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017. նաեւ՝ Ռ. Գ. Սահակեան, *Թուրքֆրանսիական յարաբերութիւնները եւ Կիլիկիան 1919-1921 թթ.*, Հայաստան հրատ., Երեւան, 1970. նաեւ՝ Պետրոս Յ. Տեփոյեան, *Միհրան Տամատեան (1863-1945)*, ա.հ., Պէյրուֆ, 1964. նաեւ՝ Շմատոն Թորոսեան, *Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987. նաեւ՝ Jean Pichon, *Le Partage du Proche-Orient*, J. Peyronnet, Paris, 1938. նաեւ՝ «Կիլիկիան եւ հայերը՝ թուրքական մուրճի եւ ֆրանսիական սայի արանքում. 1920-1921 թթ.», <https://www.aniarc.am/2020/07/04/cilicia-armeniens-1920-1921-my-book-chapter/>. նաեւ՝ Ա. Կէնճեան, *Սոցիալ Դեմոկրատ Հեչակեան Կուսակցութիւնը եւ կիլիկեան ինքնավարութեան ակտը*, տպարան Արարան, Պէյրուֆ, 1958. նաեւ՝ Հ. Մանջեան, Հ. Գրիգորեան, «Կիլիկիայի անկախութեան հռչակագրի 90ամեակը», <https://www.aravot.am /2010/08/07/350916/90>. նաեւ՝ Տ. Փաշաբէգեան, «Սուրիում է Կիլիկիայի անկախութեան հռչակագրի 100ամեակին», <http://erit.am/news/hy/89928>. նաեւ՝ Ա. Նսառտեան, «Արեւելեան մամուլ թերթը (1919-1922թթ.)», *Պատրամաբանասիրական Հանդէս*, 2014:3(80). նաեւ՝ Ա. Սարգսեան, *Արեւիտայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2019. նաեւ՝ Ա. Սարգսեան, *Միհրան Տամատեանի հրապարակախօսութիւնը*, Տիր՝ հրատ., Երեւան, 2020:

Անկախության հռչակման փաստը տարբեր կերպ է ընդունուել և մեկնաբանուել հենց ժամանակի շատ գործիչների և յետագայում զարգացուել է նրանց գաղափարական համախոհների կողմից: Սկզբնական շրջանում յատկապես տարակարծուծին կար Ազգային Պատուիրակուծեան ու դրա շուրջ համախմբուած գործիչների և Հայաստանի Հանրապետուծեան հիմնադիրների ու արտաքին քաղաքականուծեանը տնօրինող մի շարք նշանատր այրերի (Ահարոնեան, Խատիսեան և այլք) միջե: Վերջիններս կիլիկեան հարցի շուրջ սկզբնական շրջանում առաջ են քաջել տեսուծիներ, որոնք հիմնախնդրի վերաքերեալ անհասկացողուծեան առիթ են դարծել: Այսպես, նրանց կարծիքով, կիլիկիաքնակ գործիչները արհեստականօրեն են ստեղծել ու ապարդեղ նետել "Կիլիկեան" Հարցը և դրանով զուր տեղն զքաղեցրել դիանազիտուծեանը, մամուլին և Կիլիկիայի տեղական մարմիններին: Այդ արհեստածին և վտանգատր տեսակետով նրանք նաե Կիլիկիայի անկախուծեանը հռչակած դերակատարների վրայ ահուելի պատասխանատուծեան քեռ են դրել, թեթեուծեամք լուացել են իրենց ձեռքերն ու յայտարարել, թե «Կիլիկիան մի հեռատր երկրամաս է», որը քիչ էր շահագրգռում հայուծեանը, հետեապես նա պետք է համախմբուծի այնտեղ, «ուր ներկայիս հայկական եռագոյնը կը ծածանի», այսինքն՝ ՀՀում: Նրանք նաե Կիլիկիան քնորոշում էին ապագայ Հայաստանի ծայրամաս և եզրակացնում, որ կիլիկեան հարցը ապագայի խնդիր է և չի կարելի «կեղրոնը երեսի վրայ ձգել և ծայրերով զքաղիլ»⁸ ու վտանգել ՀՀ գոյուծեանը: Այնինչ, հանրայայտ փաստ է, որ նախքան Տամատեանի վարչապետուծեամք 1920 Օգոստուսի 4ին անկախուծեան հռչակումը, դաշնակցականներն ու հնչակեանները իրենց գրաամծ տարածքներում արդեն իսկ ինքնավարուծիս Էին հռչակել:⁹ Պատճառն այն էր, որ հայ քաղաքական կուսակցուծիանները շարունակում էին հաատալ, թե ֆրանսիացիների օգնուծեամք հնարատր կը լինել Կիլիկիայի անջատումը կործանող Օսմանեան Կայսրուծիսից և նրա ինքնավարուծիսնը Ֆրանսիայի հովանատրուծեան ներքոյ:

Ճայրայեղուծեան մէջ ընկնելով և քննադատելով Տամատեանի 1920 Օգոստուսի 4ի անկախուծեան հռչակումը, որոշ ոտումնապիրողներ յայտնել են նաե այն թիւր տեսակետը, որ մի խումք արեանտահայ գործիչներ՝ դժգոհ լինելով ՀՀ հռչակումից և դրան դէմ, ոչ աեւլ ոչ պակաս, առեղուծեամք լցում՝ «կը ջանան Կիլիկիոյ մէջ իրենց երեանկայած պատկերին համապատասխան երկրորդ Հայաստան մը ստեղծել՝ մահացու մրցակից մը այծմու Հայկ. Հանրապետուծեան»¹⁰: Դժուար թե սրանից չափազանցուած և անհիմն կարծիք կարող է լինել: Աեւլացնենք նաե, որ չնայած այս-

⁸ Աեւտիս Ահարոնեան, *Սարդարապատից մինչեւ Սեւր և Լոզան*, Կլեմետլյ, ա.հ., 1993, էջ 179:

⁹ <https://www.aravot.am/2010/08/07/350916/> :

¹⁰ Ահարոնեան, էջ 184:

տեսակ որոշ դրսևորումներին, երբեմն հայկական երկու պատուիրակությունների միջև եղած տարակարծությունները կուսակցականացուել են, ուսումնասիրողների կողմից չափազանցուել եւ տարատեսակ մերժողական եզրակացությունների տեղիք տուել:

ԿԻԼԿԻՌՅ ՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 4Ի ԱԿՏԸ

Մինչեւ անկախութեան հռչակումը Կիլիկիայում չափազանց բարդ քաղաքական իրավիճակ էր ստեղծուել:

Տարագրեալներ կը հասնին հոս շարան-շարան ամէն օր՝ չափազանց խեղճ վիճակի մէջ: Անոնց երեսոյթը շատ սրտակեղէք է: Ուտքերնին բուսիկ, հագուստները կտոր կտոր եղած, գլուխնին մերկ ...: Չորս տարուան տառապանքը զանոնք կմախքի վերածած է: Անոնց այջերը փոսացած, ծունկերը դողողոլուն, ու կործքը անկարող վեր պահելու համար անոնց մետելացած մարմինը¹¹:

Երկրամասում նաեւ անցանկալի իրավիճակ էր հասունացել, որի անմիջական հետեւանքն էր «գինտորներու յուսայքումն ու թուպացումը եւ ժողովուրդին դժգոհութիւնը»¹²:

Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարը Կիլիկիոյ տեղական բոլոր կառոյցներին կոչ էր անում սատարել եւ ամէն ինչուլ օգնել հայութեանը: Դիմելուլ այդ շրջանում տեղի հոգետր առաջնորդներից Գէորգ Ծ. վարդապետ Արսլանեանին կոչ էր անում «ազգակիցներու թշուառ վիճակը մեղմելու համար» անել հնարատր ամէն ինչ¹³ եւ թուրքերի հետ բախումներ թոյլ չտալու համար. «առեպրական յարաբերութիւններ մշակել թուրքերու հեփ՝ ապահովելուլ իրենց շահերը, հեռու մնալ անպտեղի ցոյցերէ. արգիլել օղիի, գինիի գործածութիւն եւ ռեւէ՛ անպարտե ընթացքի պտեղի չտալու համար այլազգիներու հետ քաղաքական խնդրոց շուրջ չվիճիլ»¹⁴:

Կացութեան ականատես կիլիկիաբնակ եւ Կիլիկիայի ապագայուլ մտահոգ գործիչները այլ ելք չտեսնելուլ՝ անիրաժեշտ էին համարում Կիլիկիան ՀՀ մաս դարձնել եւ այդ հարցուլ բազմիցս դիմում էին Նուպարին: Միաժամանակ զգուշացնելուլ, որ «պէտք չէ մոռնալ, սակայն, թէ Կիլիկիան ի՛նչ դեր ունի կարարելիք նորակազմ Հայաստանի մը համար: Եթէ մեր նպատակն է վերստեղծել պարմական Հայաստանը, պէտք չէ մոռնալ, թէ ամենահին Հայաստանը ստեղծուած է Սեբաստիոյ եւ Կիլիկիոյ հողերու վրա»¹⁵:

Բնականաբար կարետր էր նաեւ, թէ ինչպիսին էր կիլիկիաիպետրի տեսակէտը ապագայի վերաբերեալ: Պարզաբանելուլ խնդիրը, Ազգային Պատուիրակութեան լիագոր ներկայացուցիչ Տամատեանը Կ.Պոլսի հայոց

¹¹ Աւագեան, էջ 3:

¹² ՀԱԱ.ֆ. 430, ց. 1, գ. 811, թթ. 6-15, քնագիր, ձեռագիր:

¹³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 676, թ. 8, թողթն, ձեռագիր հեղինակի:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 101-103, պատճէն, ձեռագիր հեղինակի:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 807, թթ. 16-18, ինքնագիր:

պատրիարք Զաւէն արք. Տէր Եղիայեանին գրած նամակում շեշտում էր. «Հայաստանի կցում – հակառակ պարագային՝ բացարձակ ճանաչումը Կիլիկիոյ հայկական հայրենիքի հանգամանքին եւ ըստ այնմ էականապէս հայկական հիմունքներու վրայ հաստատուած տեղական ինքնավար կառավարութիւն մը հոգաւոր պետութեան հովանիին տակ, ժամանակատր հանգամանքով, մինչեւ Հայաստանի հետ ապագայ միացումը»¹⁶: Այնուհետեւ Տամատեանն անելացնում է, որ ֆրանսիական իշխանութիւնների հետ «համաձայնած ենք առանց աղմուկի, առանց թմբկահարութեան աշխարհիլ իրականացնելու մեր վերոգրեալ ընդունուած պահանջները, որպէս զի թուրքերը անէի չգրգռուին»¹⁷:

Չնայած հայերի կողմից ձեռնարկուած զգուշատր քայլերին, թուրքերը իրականացնելով իրենց հայակոյլ քաղաքականութիւնը՝ շարունակում էին յարձակումները հայերի վրայ ու կոտորում նրանց: «Կիլիկիայում տիրում է սարսափի թագաւորութիւնը: Հայերի ջարդը շարունակում է»՝ ազդարարում էր հայկական տեղեկատուութեան եւ մամուլի գրասենեակի 1920 Փետրուարի 13ին տարածած հաղորդագրութեան մէջ¹⁸: Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղուած¹⁹ նոյնաբովանդակ մէկ այլ գրութեան մէջ էլ Մարաշի հայութեան կոտորածի եւ անյապաղ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութեան մասին ահազանգում էր նաեւ Տամատեանը. «Մարաշ, իր ամբողջ շրջանով, ոչ եւս է: 35-40.000 հայութեամբ օժտուած ցանկալի եւ պանծալիլի հայկական կիլիկեան շրջանէ մը մէկ քանի հազար խելակներ միայն, այսօր կիսամեռ եւ անտաղ սաստնդական կը թափառին մարդահասակ ձիւներու մէջ, ուրիշ հազարատրներու թաղումը իրենց աչքով տեսնել վերջ, նոյն վրանգին ամէն վայրկեան ենթակայ»²⁰: Իսկ այնուհետեւ եզրակացնում, թէ ֆրանսիական անյոգութիւնն ու թողտուութիւնն էր, որ «տասնեակ հազարատրներու՝ անմեղ ու ֆրանսասէր հայերու կորուստին եւ կիլիկեան ամէնէն կարեւոր միջնաբերդին կործանումին պատճառ դարձաւ...»²¹:

Տամատեանը սակայն չէր բաարարում սոսկ կիլիկիահայութեան աղէտալի վիճակի մասին ազգային վերնախաւին տեղեկ պահելով: Նա համարձակ ու պահանջատէր կեցուածքով դիմում էր նաեւ ֆրանսիական

¹⁶ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թ. 3 եւ շրջ., պատճեն, ձեռագիր:

¹⁷ Լոյն:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 8ա-8բ, թարգմանութիւն ֆրանսերէնից, մեքենագիր:

¹⁹ Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղուած բոլոր նամակների հիմնական հասցեատէրը Ազգային Պատուիրակութեան նախագահ Լուպարն էր: Քանի որ արտասահմանեան երկրներ հասցեագրուած բոլոր նամակները թուրքական յատուկ ծառայութիւնները բացում-ընթերցում էին, ուստի ապահովութեան համար դրանք սկզբում ուղարկում էին պատրիարքին, իսկ վերջինս էլ իր հերթին՝ Լուպարին:

²⁰ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 4-7, պատճեն, մեքենագիր:

²¹ Լոյն:

զինտրական ներկայացուցիչներին, ահազանգում խիստ վտանգալոր կացութեան մասին: Նա գնդապետ Պրեմոնին հասցեագրած նամակում գրում էր. «Դրոպինը ամէնորեք նոյնը լինելով, մանասանդ Մարաշի գայթակղեցուցիչ աղէփոց յեփոյ, ես կարծես իրատունք ունեմ եւ պարփք եմ համարում ամէնայն պարզութեամբ Ձեզ ասելոյ, որ կա՛մ դուք մեզ քացայալփորէն ապահովութիւն կը խոստանաք եւ Կիլիկիոյ ամբողջ բնակչութեանը կը պաշտպանեք՝ յայտարարելով գրաման վարչութիւնը պատասխանատու՝ քրիստոնեայ բնակչութեան կեանքին եւ ունեցոածքին, կա՛մ պարտական էք մեզ ի վիճակի ընել մենք մեզ պաշտպանելոյ. մեզ տալով զէնք, որի համար մենք լրի պատասխանատու ենք եւ ամէնայն բժախնդրութեամբ երաշխատորոմ ենք: Ամէն յապաղում կարող է հազարատոր մարդկանց կորուստի պատճառ դառնաք»²²:

Վերլուծելով ստեղծուած ծանր կացութիւնը Մուշեղ արք. Սերոբեանին²³ գրած մի նամակում էլ Տամատեանը ցատով արծանագրում է այն տխուր իրողութիւնը, որ երոպական մեծ տէրութիւններն իրենց երկդիմի քաղաքականութեամբ այս անգամ էլ մեծ վտանգի էին ենթարկում կիլիկիահայութեան գոյութիւնը. «Ասոնք չեն ուզեր վերջնականապէս գէշ մարդ ըլլալ թուրքերուն եւ առհասարակ իսլամներուն հետ, տակաւին չսթափեցան թրքական քաղաքականութեան երազներէն եւ հայերու նախճիրներուն եւ մոխրակոյտերուն վրայէն տակաւին կը փորձէին թուրքերը, իսլամ տարրերը սիրահարի»²⁴: Այնուհետեւ ազգանուէր գործիչը պարզաբանում էր, որ պատմութիւնը կրկնուելոյ յատկութիւն ունի եւ խելացի, ուժեղ ու համալսմբուած ժողովուրդները՝ դասեր քաղելով այդ նոյն պատմութիւնից՝ կրկնութիւններ վերածետում են իրենց օգտին: Իսկ մէկ այլ գրութիւնով էլ մտավախութիւն յայտնում, որ «Դամոկլեան սուրը միշտ կախուած է Կիլիկիոյ հայութեան գլխին վրայ» եւ եթէ «Ֆրանսական իշխանութեանց հետ յա-

²² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 17-19, թարգմանութիւն ֆրանսերէնից, մեքենագիր:

²³ Մուշեղ Սերոբեան (1869–1951, Նիկոսիա), հասարակական եւ եկեղեցական գործիչ, պատմաբան: Ու՛ր հիմնադիրներից: Եղել է Արարկիրի եւ Ատանայի հոգեւոր առաջնորդ: 1910ից ապրել է ԱՄՆում, Բոստոնում հիմնել է թեմ եւ ընտրուել հովիւ: Ա. համաշխարհային պատերազմի ժամանակ ստեղծել է միջկուսակցական մարմին, կազմակերպել հայկական կամատրական շարժման համար միջոցներ հանգանակելու գործը: Պատերազմից յետոյ աշխատել է Կիլիկիայում եւ Կիպրոսում: Հրաժարուելով հոգեւոր կոչումից՝ զբաղուել է մանկավարժական, գիտական եւ հրատարակախօսական գործունէութեամբ: Հեղինակ է *Դիպուտներ եւ դպրուաններ* (1932), *Իրականութեան յոյսին փակ* (1926), *Հայկական Հարցը եւ անոր փուլերը* (1937), *Մեր պայքարը հայ ազգապարտութեան ուղիով* (1948), *Հայաստանի անկախութեան առթիւ* (1950) եւ այլ երկերի:

²⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 8-15, քնագիր, ձեռագիր:

րաբերութիւնները այնքան լարուին ու այնքա չկարենամ մնալ այսպեղ: Կը յուսամ, որ իրերը այնքան ծայրայեղութեան չեն երթար»²⁵:

Կիլիկիահայութեան ճակատագրով մտահոգ հայ գործիչները դիմումներ էին յղում միջազգային տարբեր կառոյցներին, կոչ անում թոյլ չտալ ցեղասպանում հայ ժողովրդի Կիլիկիայում ապաստանած բեկորներին եւ քնաշնչել²⁶: Մարաշի հայերի կոտորածի մասին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի, Պօղոս Նուպարի եւ Աւետիս Ահարոնեանի Փարիզի խաղաղութեան խորհրդաժողովի նախագահին ուղղուած դիմումն ասում էր, որ Մարաշում ապաստանած 40,000 հայերից «գոհուել են 20 հազարը, իսկ քնակցութեան մի մասն էլ բանտարկուած է»²⁷: Ատանան ու Կիլիկիայի միաքաղաքները եւ լուրջ սպառնալիքի տակ են, անազանգում էին դիմումի հեղինակները, այնուհետեւ անելացնում. «Կիլիկիայում 200,000 հայեր կան,- եւ պնդում, որ,- անմիջական գինտորական օգնութեան անհրաժեշտութիւն կայ եւ յանուն մարդկային խղճի եւ միասնականութեան, ձեռք առնել ազդու եւ բացառիկ միջոցներ ընդհանուր ջարդը կանգնեցնելու եւ վերականգնելու անվարանգ դրութիւնը»²⁸:

Ազգային Պատուիրակութեան ղեկավարին նոյնաբովանդակ գրութիւններ էր յղում նաեւ Տամատեանը: Անդրադառնալով Մարաշի կոտորածներին նա գրում էր. «1919 Հոկտ. 10ին գրուած Մարաշի Ազգ. Միութեան սթաթիսթիքի համաձայն, քաղքին հայ բնակչութեան թիւը եղած է 24,000, իսկ շրջակայքովը միասին՝ 29,600 հոգի: Իսկ Մարաշի մէջ ողջ մնացողներու թիւը կասկածելի կը մնայ ... Մուսթաֆա Քեմալի թերթը, Հաքէմիէթը Միլիէի 1500 ցոյց կու փայ Մարաշի այժմեան հայ բնակչութիւնը, ...այնպէս կը կարծուի դժբախտաբար, թէ Մարաշի եւ շրջակայքի ջարդի զոհերուն թիւը 16,000էն 24,000ի մէջ կը դիպուի»²⁹:

Կիլիկիայում բնակուող հայերի ճակատագրով մտահոգ էին նաեւ հայ քաղաքական կուսակցութիւնները: Այսպէս, Հայ Ռամկավար Կուսակցութեան Հալէպի ակումբը (նախագահ՝ Ռուբէն Պեղունի) բոլոր ռամկավար ընկերների անունից Պօղոս Նուպարին տեղեակ էր պահում իրենց գործունեութեան վերաբերեալ եւ Կիլիկիայի կացութեան մասին պարբերաբար տեղեկագրեր ուղարկում, միաժամանակ յայտնելով «սուրիաքնակ հայութեան խորին յարգանքն ու անայլայլ վստահութիւնը՝ Հայ Ազգ. Պատուիրակութեան»³⁰: Պօղոս Նուպարին նոյնատեսակ նամակ էր ուղարկում նաեւ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Հալէպի ակումբը: 1920 Փետրուարի 26 թուակիր նամակով նրանք յայտնում էին, որ «Հայ

²⁵ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 21-29, ինքնագիր:

²⁶ Ազգային Պատուիրակութեան գործունեութիւնը 1915-1916, էջ 14:

²⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 21, թարգմանութիւն ֆրանսերէնից, մեքենագիր:

²⁸ Նոյն:

²⁹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 17-20, պատճէն, մեքենագիր:

³⁰ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 790, թ. 1, բնագիր, ձեռագիր:

Ռամկավար, Հ.Յ. *Դաշնակցություն եւ Հ.Ս. Դեմոկրատ կուսակցությունները կազմած են Միջկուսակցային Մարմին մը, համերաշխաբար գործելու համար ազգային զանազան խնդիրներու առջեւ*³¹: Այնուհետեւ նամակի հեղինակները շեշտում էին, որ հայ-արաբական «յարաբերությունները ներկայիս լուս վիճակ մը կը ներկայացնեն»: Սակայն ընդհանուր առմամբ Կիլիկիայի հայերի վիճակն օրէջօր անտանելի էր դառնում: Քեմալականների կողմից անընդհատ հրահրուելով ու խրախուսուելով թուրքերը դիմում էին ամենաճարպիկ միջոցների ու մեծ վնասներ էին հասցնում հայերին: Դրուպինն աւելի սպառնալից էր դառնում, «որովհետեւ ֆրանսական զօրքերը խոսափում էին ամէն տեսակ յարձակումից», քրիստոնեաներն էլ ստիպուած հաաքում էին այն կառոյցներուն, որոնք պաշտպանում էին հայերը³²:

Կարճ ասած՝ Կիլիկիայում վիճակն օրհասական էր դառնում. «Կիլիկիոյ քաղաքներուն եւ գիւղերուն բնաջնջումի մահաբոյր վրասնը դամոկլեան սուրի պէս կախած կը մնար 1915-18ի եղեռնէն հրաշքով փրկուած 150,000է աւելի հայութեան մը գլխուն»: Այսինքն՝ հայութեան գոյութեան եւ ազգային կեանքի պատուարներից Կիլիկիան «Հայկական Հանրապետութեան սահմաններէն դուրս ապրող լիահոծ հայութեան միակ կեդրոնը կը մնար»³³: Եւ եթէ հայերի անտարբերութեան կամ «նիւթապաշար եւ օգրածաբաւ դիւանագիտութեան մը կամատր կտրագոմներուն եւ դիպումատր քաղաքականութեան հետեանքով բնաջնջումի դատապարտի Կիլիկիոյ հայութիւնն ալ, այն արեւն իրապէս յաղթանակած պիտի ըլլայ գերմանական սիւթէմով եւ թրքական միջոցներով ձեռնարկուած եւ հայ ազգին վրայ ի գործ դրուած մահափորձը»³⁴:

Այսինքն՝ ի սկզբանէ սխալ էր Անտանտի կողմից Կիլիկիան երեք գօտիների բաժանելը³⁵: Իսկ աւելի վտանգաւոր էր այն, որ մեծ հողաբաժնի հո-

³¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 790, թթ. 2-6, րնագիր, ձեռագիր:

³² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 49-56, թարգմանություն ֆրանսերէնից, մերենագիր:

³³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 817, թթ. 19-39, պատճեն, մերենագիր:

³⁴ Նոյն:

³⁵ Օսմանեան Կայսրութեան տիրոջների բաժանման մասին Սայքս-Փիլքոյի զաղտնի համաձայնագիրը կնքուել է 1916ին՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջեւ: Երբ 1916ի Փետրուարին ռուսական բանակը գրաւեց Էրզրումն ու Բիթլիսը եւ մօտեցաւ Միջագետքի մատոյցներին, դաշնակիցները շտապեցին իրենց կայացրած համաձայնութեան մասին տեղեակ պահել Ռուսաստանին: Եռակողմ քննարկումներից յետոյ, 1916ի Մարտի 9ին, դաշնակիցները ստացան Ռուսաստանի համաձայնութիւնը Օսմանեան Կայսրութեան բաժանման վերաբերեալ հաաստելով ռուսների իրատւոյնները Կ. Պոլսի ու ներդոյցների եւ Արեւմտահայաստանի մեծագոյն մասի՝ Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի, Վանի (ներառեալ Հաքեարի շրջանը) նկատմամբ (դեղին գօտի): Կիլիկիան, Փոքր Հայքն ու արաբական տարածքները ենթակալ էին Անգլիոյ (կարմիր գօտի)-ֆրանսիական (կապոյտ գօտի) բաժանման: Ամիսներ անց Օսմանեան քարտէզի վրայ ի յայտ եկան Կանաչ

վանատր Ֆրանսիան էլ աստիճանաբար թեքում էր դեպի թուրքական կողմը: Այսպես, «Այնթապի եւ Մարաշի մէջ վար առնուած թրքական դրօշակը նոյն պահուն նորէն զերտդուեցաւ ֆրանսականին ւրոջ, թուրք կառավարութեան ձեռքով»³⁶: Գրաւեալ տարածքների հիախային գօտում «Մուսթաֆա Քեմալի մարդիկը ժողովուրդը թունատրած էին»³⁷ եւ կառավարիչ նշանակուեց «Քափ. Անւրե, որ իր շեշտուած թրքամոլութեամբ քաջալերողն եղած էր Հոկր. 16ին ամանոսեան չեթէներու կապարած ջարդերուն»³⁸: Տամատեանն ու Ատանայի Հայ Ազգային Միութիւնը միջանի անգամ շեշտել էին Կիլիկիայում ֆրանսիական սխալ քաղաքականութեան հետեանքների մասին եւ «կարգ մը սրբագրութիւններ էին թելադրած երկրին անդորրութեանն ու ապահովութեանը համար»³⁹: Ֆրանսիացի ղեկավարները սակայն, չտեսնելու էին տալիս որ իրենց զօրականների ծախող քաղաքականութեան հետեանքով «ֆրանսական *prestige* եւ ամէն ինչ որ ֆրանսական է, սնանկութեան դաւապարտուած են» եւ թէ «դէպի ուր կը գահավիժէր երկիրը»⁴⁰:

Յուաբեկ ժողովրդի փրկութեան միակ յոյսը մնում էր «վստահիլ իր սեփական ուժերուն եւ զանոնք յարմարցնել ինքնապաշտպանութեան գօրեմարտին համար»⁴¹:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՄԻՋՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՄԼԻՖԵՍՏԸ

Ստեղծուած բարդ քաղաքական եւ այլընտրանք չունեցող այդ իրավիճակում 1920 Օգոստոսի 4ին Կիլիկիայի Միջքրիստոնէական Արտակարգ Խորհուրդը կամ պարզապէս Գերագոյն Խորհուրդը մանիֆեստ հրապարակեց⁴², որտեղ ասուած էր. «Կիլիկեցի 270,000 քրիստոնէաներու անու-

(հարաւ-արեւմտեան Անատոլիա) ու «Ե» (Անատոլիայի կենտրոնական մասը) գօտիները, որոնք բաժին էին ընկնելու Գերմանիային լքած ու դաշնակիցներին միացած Իտալիային: Դաշնակիցները Օսմանեան Կայսրութեան քաժամման մասին բացայայտ յայտարարեցին 1917ի Յունուարի 10ին, իսկ կազմաքանդման մասին՝ ցարիզմի տապալումից յետոյ (1917 Փետրուարի 27): Համաձայնագրի թովանդակութիւնը համաշխարհային հասարակայնութեանը յայտնի դարձաւ 1917ի Նոյեմբերի վերջին, երբ Խորհրդային կառավարութիւնը հրապարակեց դրա բնագիրը եւ չեղեալ համարեց այն:

³⁶ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 817, թթ. 19-39, պատճէն, մեքենագիր:

³⁷ Նոյն:

³⁸ Նոյն:

³⁹ Նոյն:

⁴⁰ Նոյն:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 99, թարգմանութիւն ֆրանսերէնից, մեքենագիր:

⁴² Կիլիկիայում բոլոր քրիստոնէայ համայնքների եւ հայկական կրօնակցութիւնների կողմից Տամատեանի գլխատրութեամբ ստեղծուած այս կառոյցը կազմակերպում ու փաստացի ղեկավարում էր տեղի բնակչութեանը:

նով մենք այսօրընէ սկսեալ, հանդիսատրապէս կը հռչակենք Կիլիկիան կիլիկեցիներուն համար ազադ երկիր մը, օժտուած Կրօնական քրիստոնեայ ինքնավար վարչութիւնով մը եւ դրուած Ֆրանսայի հոգաւարութեան ներքեւ բոլորովին անկախ թրքական գերիշխանութենէն: Իշխանութիւն մը որ կեղծում եւ թշուառութիւն միայն բերած է հոն ուր գացած է»⁴³: Այնուհետեւ պարզաբանում էր, որ Կիլիկիայի անջատումը օսմանեան նախկին տարածքներից նոյնքան կատարեալ եւ վերջնական էր, ինչպէս դա եղել էր Հայաստանի, Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի եւ միաների դէպքում: Կիլիկիահայերը յանուն ազատութեան պատրաստ էին ցանկացած զոհողութեան եւ պարտադիր պայման էին համարում ֆրանսիական հովանաւորութիւնը:

Իտրիուրը մտնում է Սերայ (իշխանութեան կենտրոնատեղի) եւ պարզում հայկական եռագոյնը: Միաժամանակ անկախութեան հռչակման մասին պաշտօնական զեկուցագիր է յանձնում ֆրանսիական զինուորական իշխանութեան ներկայացուցիչ Պրեմոնին: Ականատեսները գրում են, որ ամբողջ քաղաքը զարդարուած էր ֆրանսիական եւ հայկական դրօշներով, իսկ քրիստոնեաները խանդավառուած էին եւ անօրինակ ցնծութիւն էին ապրում: Այնուհետեւ հրապարկում է հայ ժողովրդին ուղղուած պաշտօնական մի յայտարարութիւն, որում ասում էր, քանի որ դաշնակից պետութիւններին ուղղուած բողոքագրերը որեւէ «նպաստատու արդիւնքի յանգած չէին», այդ պատճառով որոշուեց իսկոյն գործողութեան մէջ դնել անկախութեան հռչակագիրը, որը «կոչուած էր նոր թուական մը բանալ Կիլիկիոյ ժամանակակից Կրօնագրութեանց մէջ»: Ապա ներկայացում էին պատմական, քաղաքական, ժողովրդագրական, տնտեսական, հոգեւոր ու մշակութային այն հանգամանքներն ու պայմանները, որոնք ստեղծուած էին Կիլիկիան անկախ պետական միաւոր յայտարարելու համար:

Պատերազմից յետոյ արմատական փոփոխութիւններ էին տեղի ունեցել: Պատմութեան թատերաբեմից ընդմիջու հեռացել էին երեք խոշոր կայսրութիւններ՝ օսմանեանը, աստրոհունգարեանը եւ ռուսականը: Աշխարհաքաղաքական տեղաշարժերը երոպական դիւանագիտութեան մտածելակերպի մէջ հայերի համար աննպաստ սրբագրումներ էին արել: Նախկին դաշնակից երոպական մեծ տէրութիւնների միջեւ աշխարհն իրենց շահերին համապատասխան վերաբաժանելու խնդրի շուրջ հակասութիւնները սրուել էին: Նրանցից իւրաքանչիւրը ձգտում էր աւելի մեծ շահոյթներ ունենալ պատերազմից յետոյ: Յատկապէս Ռուսաստանում տեղի ունեցած յեղափոխութիւնները ստիպեցին, որ վերջիններս անթաքոյց դէպի հարաւ՝ տաք ջրեր ձգտող Ռուսաստանի դէմ որպէս պատուար ամէն գնով

⁴³ Աւետիս Եափուճեան, *Հայ ժողովրդի անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., մաս Ա., ա.հ., Գահիրէ, 1977:*

աստարեն ու պահպանեն Թուրքիան՝ անկախ նրանից թե ինչ վարչակարգ կը գործի այնտեղ:

Դրանց արդիւնքում անկախ Կիլիկիայի ծրագիրը յօրս էր ցնդել: Յառկապէս ֆրանսական դիւանագիտութիւնը դժմով կտրուկ շրջուել էր դէպի քեմալական Թուրքիա, որն էլ Կիլիկիայի ազատագրութեան երազի մայրամուտը եղաւ: Կիլիկիայում նախ՝ «*շապերը վերարուեցան իբրեւ խոտվարարներ, ինքնապաշտպանութեան խումբերը զինաթափուեցան*»⁴⁴, լեզունը զօրացրուեց, ապա քեմալականները շրջափակեցին սկզբում Դաշտային, այնուհետեւ Լեոնային Կիլիկիան: 1920ի սկզբին հերոսական մարտերից յետոյ ընկաւ Մարաշը, ապա՝ Հաճընը, պաշարուեցին Այնթապը, Տէօրթ Եօլը եւ միւս հայաշատ բնակավայրերը: 1921ին վերջին ֆրանսական վաշտը թողեց Ատանան: 1922 Յունուար 4ին Կիլիկիան արդէն ամբողջովին հայաթափուած էր եւ *ասպեդական* Ֆրանսիայի անտարբեր մեղսակցութեամբ հետզհետէ աւելի էր մոայլում ու անհետանում Կիլիկիայի անկախութեան երազը:

Հիասթափուած մեծ տէրութիւնների եւ յատկապէս անգլօ-ֆրանսիական հակասութիւնների սրման հետեանքով դէպի Թուրքիա հակուած ֆրանսիական իշխանութիւնների երկդիմի պահուածքից՝ Տամատեանը նույնպէս շտաով հետանում է Կիլիկիայից:

ԵՂՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կիլիկեան հարցը մէկ օրում չառաջացաւ: Զէյթունի դարատր ինքնավարութիւնը միշտ էլ ձգտում էր այն տարածելու ամբողջ Կիլիկիոյ վրայ: Առաջին աշխարհամարտի նախօրեակին «կիլիկիեհայութեան անունով ինքնավարութեան ծրագիր մը կը ներկայացուէր մեծ տէրութիւններին Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան կոմիտէին կողմէ»⁴⁵: Ժ.ժ.Դ. դարերում Կիլիկիայում հայկական պետականութիւն գոյութիւն ունէր⁴⁶ եւ Շնորհալիներով, Լամբրոնացիներով ու Պիծակներով այնտեղ կերտուեց հզօր հայկական մշակոյթի արծաթէ դարը: 1375ին հայկական թագատրութեան անկումից յետոյ հայերը Կիլիկիայում դարերով տառապում էին թուրքական բռնատիրութեան տակ: Օսմանեան Կայսրութեան փլուզումով՝ բոլոր հպա-

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 828, թ. 7-8 շրջ.: Ինքնագիր:

⁴⁵ Այդ ծրագիրը Ազգային Ինքնապաշտպանութեան Հայկական Կոմիտէի կողմից «Հայկական Հարցը եւ անոր անհրաժեշտ լուծումները» վերնագրով առանձին գրքով կով լոյս տեսաւ 1913ին:

⁴⁶ Մեծ Հայքից դուրս գտնուող Կիլիկիայի Հայկական Թագատրութիւնը միջնադարեան հայկական անկախ պետութիւն էր: 1375ին մամլուքները գրաւեցին մայրաքաղաք Սիսը, այնուհետեւ՝ 1515ին Կիլիկիան զաւթեցին թուրքերը: Կիլիկեան Հայաստանն ունէր հզօր տնտեսութիւն, զարգացած էին առեւտուրը, արհեստները, հողագործութիւնն ու անասնապահութիւնը: Կային մի շարք զարգացած ու զեղեկատես քաղաքներ, որնցից էին Այսաը, Սիսը, Տարսունն ու Ատանան:

տակ ազգերն իրենց անկախութիւնն ու ինքնիշխան պետականութիւնը կերտելու հնարատրութիւն ստացան: Նրանց թում նաեւ ընդամենը հինգ տարի առաջ ցեղասպանութեան եւ բռնագաղթի ենթարկուած հայերը, որոնց մնացորդներն, օգտուելով ֆրանսիական բանակի յաղթական արշաւանքից եւ Թուրքիայի պարտութիւնից, վերադարձել էին իրենց դարատր բնակավայրերը եւ լծուել տունտուեղի վերաշինութեան գործին: Այսինքն՝ դատը գոյութիւն ունէր պատերազմից առաջ եւ Կիլիկիան իր ռազմագիտական դիրքով, կլիմայական պայմաններով, հարուստ ընդերքով եւ երկրագործական լայն հնարատրութիւններով պայքարն արդէն սկսել էր աշխարհամարտի օրերին եւ պատերազմի ընթացքում՝ 1916ի գաղտնի կնքուած Սայքս-Փիքոյի համաձայնագրով⁴⁷ դատը վերաբացուեց, ինչպէս նաեւ Հայկական Լեզգեոնի կազմութեան պարագաներով⁴⁸: Իրադարձութիւնների յետագայ զարգացման արդիւնքում այն որդեգրուեց ամբողջ հայութեան կողմից, երբ Կիլիկիան իբրեւ Հայաստանի բաղկացուցիչ մաս՝ պահանջուեց ո՛չ միայն Ազգային Պատուիրակութեան, այլեւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան կողմից: Կիլիկիան պէտք է դառնար ապագայ Հայաստանի պատուհանը դէպի ծով, դէպի եվրոպական քաղաքակրթութիւն: Իդէալ՝ հայերը չապստամբեցին դաշնակիցների եւ նոյնիսկ Թուրքիայի դէմ, այլ քեմալիստ ապստամբներն էին, որ յարձակուեցին հայկական գիւղերի եւ քաղաքների վրայ, սրի եւ հրի մատնեցին դրանք:

2. Կիլիկեան Դատի լրագոյն ընտրանքը Ֆրանսիայի հովանաւորութեամբ անկախութեան հռչակումն էր: Այն իրականացրեց Ազգային Պատուիրակութեան լիազօր ներկայացուցիչ Միհրան Տամատեանը, ով որոշ փորձ ունէր եւ մասամբ տիրապետում էր դիւանագիտական նրբութիւններին (մինչ այդ առիթ էր ունեցել Հայկական Խնդրով քանակցել իտալական իշխանութիւնների հետ), փայլուն հռետոր էր, գիտէր միջանի լեզուներ: Կիլիկիա էր ուղարկուել վերահսկելու գաղթական հայութեան վերադարձը եւ կարգատրելու յարաբերութիւնները ֆրանսիական զինուորական իշխանութիւնների հետ: Տամատեանը եւ ընկերները, մեծամասամբ ռամկավար կեանքի փորձառութիւն ունեցող գործիչներ, անկախութեան ակտով ցանկանում էին «դաշնակից» պետութիւններին եւ առաջին հերթին Ֆրանսիային դնել կատարուած իրողութեան առջեւ...

3. Դաշնակիցները պատերազմի մասնակցութեան դիմաց հայերին ֆրանսական հովանաւորութեան ներքոյ Կիլիկիայի անկախութիւն էին խոստացել: Ի կատարումն այդ խոստման, գրեթէ արիւնաքան հայութիւնը կարողացաւ ռազմական ուժ գոյացնել եւ կազմեց Հայկական Լեզգեոնը: Պօղոս Նուպարի յորդորով հայկական կուսակցութիւնների ներկայացուցիչ-

⁴⁷ Հայաստանը միջազգային դիւանագիտութեան, էջ 143:

⁴⁸ Հայկական լեզգեոնի առաջին հրամանատարն էր Ռոմիլեօն, իսկ 1919 Մայիսին նրան փոխարինեց գեղապետ Ֆլի-Սենթ Մարին:

ներ Տամատեանը (ՀՍՌԿ), Արտաազդ Հանըմեանը (ՀՅԴ) եւ Ստեփան Սապահգիպեանը (ՍԴՀԿ) մեկնեցին Ամերիկա կամատրներ հաաքագրելու: Չինտորագրուեցին 5000 կամատրներ, որոնք թուրքերի դեմ 1918 Սեպտեմբերի 19ին փայլուն յաղթանակ տարան Արարայի ճակատամարտում⁴⁹:

4. Անկախութեան հռչակման իրողութիւնն ամբողջ ժողովրդի միասնական կամարտայայտութեան արդիւնք էր, որի մասին է վկայում թէկուզ այն, որ կառավարութիւն ու վարչապետը ընտրուեցին միաձայն:

5. Տամատեանի վարչապետութեամբ հռչակուած անկախութիւնը թէւ ընդամէնը միքանի ժամ տեւեց, սակայն պատմական խիստ կարեւոր փուլ էր, դաստիարակիչ, ուսանելի, արդարացուած, սակայն՝ ոչ-ամբողջովին իւրացուած:

6. Յատկանշական է, որ Տամատեանն անկախութեան յայտարարութեան բովանդակութիւնը հեղինակելուց բացի նաեւ մշակեց Կիլիկիայի պաշտպանութեան ռազմական ծրագիրը: Համաձայն որի՝ Կիլիկիայում Հայկական Լեզէոնի յենքի վրայ պէտք է ստեղծուէր զինտորական զօրամաս⁵⁰: Սակայն ֆրանսիական իշխանութիւններն արդէն քեմալականների հետ սիրախաղի մէջ էին մտել: Այդ պատճառով էլ ֆրանսիական զինտորական ներկայացուցիչ գնդապետ Պրեմոնի հրամանով սենեգայցի սուխատրների սպանալիքի տակ նորակազմ կառավարութիւնը վտարուեց սերայից եւ արգելուեց (յետագայում այդ նոյն Պրեմոնն իր յուշերում գրել է, որ եթէ ինքը լինէր հայերի փոխարէն՝ նոյնը արած պիտի լինէր...): Իդէալ անկախութեան հռչակումից հինգ տարի առաջ գրած մի յօդուածում արդէն Տամատեանը գրեթէ յանգել էր այդ գաղափարին⁵¹: Նա կիլիկիան ազգային օճախի վերացական գաղափարով տարուած երազատես չէր եւ նրա եզրայանգումները միանգամայն իրատեսական էին, համահունչ՝ հայոց ազգային երագին եւ տեղատրուում են հայոց պատմութեան տրամաբանական հունի մէջ:

7. Յստակ էր, որ Կիլիկիայի անկախացումով թուրքական հանրապետութիւնը կտորակուած պիտի մնար, որը մերժուեց քեմալականների կողմից: Իսկ նրանց հետ սիրախաղի մէջ մտած մեծ տէրութիւնները կատարեցին իրենց ընտրութիւնը յօգուտ թուրքերի: Կիլիկեան երագին մեծագոյն պատահացրեց յատկապէս ֆրանսիական իշխանութիւնների երկդիմի վաստածը: Նրանք մի կողմից թուրք հնարատր միջոցներով հանդարտեցնում էին հայերին, իսկ միա կողմից վերջիններին թիկունքում գաղտնի

⁴⁹ Տիգրան Պոյաճեան, *Հայկական լեզէոնը*, ա.հ., Ութթթաուն, 1965. նաեւ՝ Ալպէր Գարամանուկեան, *Հայկական լեզէոնը պատմական, իրտական ու քաղաքական հարցերու լրջին փակ եւ վաներագրեր*, տպարան Ատլաս, Պէրուք, 1974:

⁵⁰ ՀՍՍ, ֆ. 57. ց. 5, գ. 19, թ. 68. նաեւ՝ *Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918*, Mayreni Pub., Waltham, Mass., 1996, էջ 368-70:

⁵¹ Ս. Սարգսեան, *Միհրան Տամատեանի հրապարակախօսութիւնը*, էջ 43-44:

բանակցում էին Մուստաֆա Քեմալի հետ: Պատմութիւնը ցոյց տուեց, որ այն ինչ Քեմալը կատարեց զինուելով, եթէ անէին հայերը, հասանաբար Կիլիկիայի ճակատագիրը բոլորովին այլ ելք կ'ունենար: Հայերը, որքան էլ հաւատային Ֆրանսիայի քարեկամութեանը, տուած շռայլ խոստումներին ու երաշխիքներին՝ թէկուզ դաշնակցին խաբելու գնով իրենց զէնքերի վառօղջ չոր պէտք է պահէին:

8. Միաժամանակ կասկածից դուրս է, որ սեփական ուժերին ապաւինելու առումով Կիլիկիայի կորուստը դաս չեղաւ հայ ժողովրդի համար: Իսկապէս էլ, երբ սկսուեց Արցախեան վերջին պատերազմը Կիլիկիայի դառը դասը կարծես մոռցուած էր: Յուանք, որ պատմական ընթացքի գալիք շրջադարձերում մեր ունեցած նախորդ կորուստների փորձը իրակերպ դպրոց եւ գրաւական կը դառնայ ապագայ յաղթանակների համար:

THE PROCLAMATION OF INDEPENDENCE IN CILICIA ON AUGUST 4, 1920 AND THE ROLE OF MIHRAN TAMATYAN

(Summary)

SUREN T. SARGSYAN (sargsyansuren@yandex.ru)

After the end of WWI many of the survivors of the Armenian community decimated by the genocide, were gathered in French-occupied Cilicia, where they were promised a national home. However, with the Kemalists gaining power and the connivance of the French military authorities, the Turks regularly attacked and ruthlessly massacred the isolated Armenian areas of Cilicia. After taking all possible measures, and seeing no other way out, on August 4, 1920, the Armenians, in collaboration with all the other ethnic and religious minorities (except the Turks), proclaimed Cilicia an independent republic headed by the Plenipotentiary Representative of the Armenian National Delegation, Mihran Tamatyan.

However, due to geopolitical shifts, inter-ally rivalries and the precedence of selfish interests even over promises made, the coalition was isolated and its leaders were imprisoned, killing, once again, the dream of a national home in Cilicia.

ԳԱՒԱՌԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՈՒՆՆԵՐ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (mihran.min@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յետագայ էջերով կը ներկայացնենք հայ պարբերական մամուլի մատենագիտական ցուցակներուն մէջ չյիշատակուած հայերէն 35 նորայայտ թերթեր ու հանդէսներ, բոլորը՝ գաաաաային հրատարակութիւններ, լոյս տեսած 1851-1922ի միջեւ, Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ բազմաթիւ ասաններու մէջ՝ Կարին, Վան, Տիարպեքիր, Մեգիրտ, Սեբաստիա, Շապին Գարահիսար, Կեսարիա, Թամզարա, Ֆենէսէ, Այնթապ, Ուրֆա, Ատաբազար, Պարտիզակ, են.:

Այս Հանդէսի Թ. հատորին մէջ (1981) լոյս տեսած յօդուածով մը տեղեկութիւններ տուած էինք հայ պարբերական մամուլի 33 նորայայտ անուններու մասին, որոնք մինչ այդ դուրս մնացած էին մատենագիտական ցուցակներէ: Անկէ երկու տասնամեակ ետք, նոյն Հանդէսի ԻԱ. (2001) հատորին մէջ, երկրորդ յօդուածով մը տուած էինք նորայայտ թերթերու երկրորդ ցուցակ մը, ուր ներկայացուած էին եւս 33 նոր անուններ: Եւ այսօր, մեր երկրորդ յօդուածէն կրկին երկու տասնամեակ անց, երրորդ յօդուածով մը կը ներկայացնենք ցարդ անձանօթ հայ մամուլի 35 նորայայտ անուններ եւս, այսպիսով անոնց թիւը բարձրացնելով 101ի:

Կը յուանք որ կեանքը թոյլատու կ'ըլլայ ապագային նոյն ձեւաչափով գէթ անգամ մը եւս հանդէս գալու եւ ներկայացնելու անձանօթ մնացած հայերէն այլ թերթեր ու հանդէսներ:

Աւարտին կ'ուզենք ընել ցաաալի հաստատում մը. որքան ալ զարմանալի, բայց փաստ է որ շատ անտարբեր գտնուած ենք մեր հոգեւոր արժէքները հաաաքելու, մէկտեղելու եւ զանոնք յաջորդ սերունդներուն փոխանցելու մեր աշխատանքին մէջ, եւ փաստ է որ այսօր երբեմն տարիներու կեանք ունեցած եւ հազարատոյր օրինակներով հրապարակուած բազում թերթերէ ու հանդէսներէ ոչ միայն գէթ օրինակ մը չէ հասած մեզի, այլ նոյնիսկ կ'անգիտանանք անոնցմէ: շատերուն անունները կամ անոնց առնչուող բազում մանրամասնութիւններ ու մատենագիտական տուեալներ, ու անոնցմէ շատերուն մասին մեր տեղեկութիւնները կը մնան սահմանափակ ու չեն անցնիր կողմնակի աղբիւրի մը հաղորդած ժխտ փաստերն ու ակնարկները:

«ԱԶՍ ՍԵՐ»: Տիարպեքիր, խմորատիպ թերթ, լոյս տեսած է 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք, տեղւոյն Դաշնակցական երիտասարդական Կաճառին կողմէ: Ըստ այդ օրերուն Տիարպեքիր գտնուած հնչակեան գործիչ Սեդրակ Շահէնի, Ազատ սերը լոյս տեսած է «խախտելով հայկական րոհմային սրբութիւնները, սէրը ցոփութեան հասցնելու իրողու-

թեամբ», այնքան որ անոր «բարոյական անընդունելի ուժգնորէն խոռված էր Տիգրանակերպի հայրութիւնը»¹:

Այս թերթին հակազդելու համար է որ տեղոյն հնչակեանները սկսած են լոյս ընծայել իրենց *Ասուպ (1910)* խմորատիպ թերթը²:

«ԱԼԻՍ»: Սեբաստիա, ձեռագիր երգիծաթերթ: Լոյս տեսած է հաւանաբար 1869ին կամ 1870ին, հազիւ քանի մը թիւ: Կ'ենթադրուի որ շարունակութիւնն է տեղոյն *Մամուլին ծագը* եւ *Մամուլին ծագը Սեբաստիոյ արձագանգը* զոյգ երգիծաթերթերուն³:

«ԱԼԻՍ»: Սեբաստիա, Արամեան Որբանոց: Ձեռագիր պարբերաթերթ: Հրատարակութեան նախաձեռնող եւ խմբագիր՝ Շահնազար Քէօթափեան-Օտապաշեան: Որբանոցը գործած է Չինադադարէն ետք եւ փակուած՝ 1922ին, այնպէս որ, *Ալիս* ալ լոյս տեսած պիտի ըլլայ նոյն տարիներուն (1918-22): 12 մեծադիր երկսիւն էջ, տպաքանակ՝ վեց օրինակ: Կողքի գծագրութիւնն ու պատկերազարդումը կատարած է խմբագիրը: Հրատարակութեան քաջալերած է Մերկէր Ալեքսանեանը որ խոստացած է նաեւ աշխատակցի անոր:

Խմբագրականները նոյնպէս գրած է Քէօթափեան: Առաջին թիվ կողքի նկարը եղած է Արամեան Վարժարանի շէնքը, «զոր դիմացի ջաղացքէն նայելով գծած էի»: Թերթին աշխատակցած են, վերոնշեալ Ալեքսանեանէն զտու, որբանոցի բարձրագոյն դասարանի ուսանողները: Հոն տեղ գտած են լուրեր որբանոցէն, շարադրութիւններ, հանելուկներ, հարց-պատասխաններ, գիտական նիւթեր, խմբագրին բանաստեղծութիւնները, նաեւ թուրք բանաստեղծ Մեմէտ Էմինի «Փարոսը» բանաստեղծութեան Քէօթափեանի թարգմանութիւնը⁴:

[«ԱՆԱՆՈՒՆ ԹԵՐԹ»]: Թամզարա, Ազգային Արամեան Վարժարան, խմորատիպ դարոցական թերթ, լոյս տեսած օսմանեան սահմանադրութեան տարիներուն, առաջին աշխարհամարտէն առաջ: Խմբագիր հրատարակիչներ՝ Շահնազար Քէօթափեան-Օտապաշեան եւ Տիրան Գասպարեան (տեղոյն Արամեան վարժարանի տնօրէն Գրիգոր Վահունիի

¹ Սեդրակ Շահէն, *Յուշեր եւ փոշեր կեանքի ճանապարհին. Խարբերոյ, Արաբկիր, Մալաթիա, Քիւրպիստան, Տիգրանակերպ, Տարօն, Սասուն, Բայրու եւ Քոյի, Ա. հորր.*, Լոս Անճելըս, Բալիֆորնիա (տպուած Պէլրուք, տպարան Կ. Տօնիկեան), 1975, էջ 63:

² Սեդրակ Շահէն, էջ 63:

³ Երուանդ Փ. Վանկեան, «Սեբաստիոյ Անցեալէն», *Ամսեր*, ձեռագիր թերթ, Սեբաստիա, Ա., թիւ 1, 1/13 Յունուար 1914, էջ 1-2:

⁴ Շահնազար Քէօթափեան, «Յուշեր եւ կիշեր. անձեր ու անցքեր նախաեղևունէ մինչև ներկայ», *Alco Printing Company, Լոս Անճելըս, 1990*, էջ 126-131. նաեւ՝ *Ծննդավայրիցս դէպի Տէր Զոր. Քաջունի Ղարակէօզեանի յիշողութիւնները*, Ինգա Էդուարդի Աագեան, Էդուարդօ, Կիւմրի, 2004, էջ 41:

[Գրիգոր Գասպարեան] փոքր զաւակը): Լոյս տեսած է ընդամենը քանի մը թիւ ու բաղկացած էր «փոքր էջերէ»: Խմորատիպի մեքենան ապահոված էր Տիրան Գասպարեան⁵:

«ԱՌԱՔԵԱԱ»: Կեսարիա, թերթ, խմբագիր՝ Հայկ Ղազարեան: 1910ին, երբ տպագրական մեքենայ մը բերուած է Կեսարիա, Հայկ Ղազարեան պաշտօնապէս դիմած է կառավարութեան եւ «Առաքեալ» անունով թերթի մը հրատարակութեան արտօնութիւնը ստացած է: Ան իր թերթով համարձակօրէն քննադատած է «*աջ ու ձախ, սկսեալ օրոյայ կառավարիչէն մինչեւ դատարանի փաստաբանը ու ազգային շրջանակի մէջ եւս առաջնորդէն մինչեւ վարժարանի տնօրէնը*»: Ղազարեան, թերթին միջոցաւ միաժամանակ երիտասարդութեան մօտ վառ պահած է դպրոցին ու հայ եկեղեցիին հանդէպ սերը⁶:

«ԱՍՈՒՊ»: Տիարպեքիր, խմորատիպ թերթ, խմբագիր՝ Յակոբ Ղազիկեան, հրատարակութիւն Հնչակեան Գրասիրաց Միութեան: Լոյս տեսած է օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, տեղւոյն դաշնակցականներու Ազապ սէր խմորատիպ թերթին հակազդելու համար: Ունեցած է «լուրջ» բովանդակութիւն ու ծաղկած է Ազապ սէր խմորատիպ հանդէսը, որուն փորձած «*բարոյական անբոմունքներէն ուժգնօրէն խոռված էր Տիգրանակերտի հայութիւնը*»⁷:

«ԱՐԱՔՍ»: Տիարպեքիր, Ազգային Ա. Կիրակոս բարձրագոյն նախակրթարան: Խմորատիպ ամսագիր, «Պատրաստուած» տեղւոյն Ազգային Ա. Կիրակոս բարձրագոյն նախակրթարանի 2. դասարանի ուսանողութեան կողմէ, 1910:

Արաքսը բնութագրուած է որպէս «կոկիկ» թերթ, եւ օրին զայն տեսնող մը հետեւեալ տողերը նուիրած է անոր. «*Հաճոյքով կը դիտեմ որ ապագայ խոսքացող ծարձակումներ չեն պակսիր հոն եւս, ինչպէս Գայիտնի եւ Սասունիի ներդաշնակ ոգրանատրները. դիտելու եւ դատելու կշռատր զարգացում մըն ալ կը նշմարեմ զանազան հաստատմաներու մէջ, ինչ որ բարձրացումի ամենէն կարեւոր գրասականն է ո՛ր եւ է ուսանողի եւ չափահասի համար ալ: Խիստ քիչ անգամ կը հանդիպիմ խակ դատումներու եւ «թելադրուած» շեղումներու, առաջինները՝ հասունալու եւ վերջինները՝ կարգաւորելու կարօյ»⁸:*

⁵ Քէօբսիեան, էջ 22-23:

⁶ Հայկ Ղազարեան, *Կեսարիոյ նախճիրները. էջեր օրագրու, թարգմանիչ՝ Անգելինա Գասպարեան, ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երևան, 2014*, էլլէն Բիւզանդի տուած հեղինակի «Կենսագրութիւն»էն, էջ 7:

⁷ Սեդրակ Շահէն, էջ 63:

⁸ Լեւոն Սրապեան, «Տիգրիսի ափերէն», *Արեւելք*, Կ. Պոլիս, 19 Մարտի/ Ապրիլ 1910 էջ 2 եւ 22 Մայիս/4 Յունիս 1910, էջ 2:

«ԱՐԳԷՈՍ»: Ֆենեսե, Ամերիկեան Մենոնայթներու որբանոց-վարժարան: Խմորատիպ ամսաթերթ: Հրատարակութիւն Ամերիկեան Մենոնայթներու որբանոց-վարժարանի արական բաժնին: Խմբագիր՝ որբանոցի ուսուցիչներէն Մարտիրոս Սարգիսեան: Անոր աշխատակցած են որբանոցին ուսուցիչներն ու աշակերտները:

Ֆենեսեի Ամերիկեան Մենոնայթներու որբանոցը հիմնուած է Սեպտեմբեր 1910ին եւ հոն գործած է մինչեւ 1914ի ասարտը, այնպէս որ, *Արգէոս* ալ լոյս տեսած պիտի ըլլայ նոյն այդ տարիներուն⁹:

«ԱՐԵԱՆ ԳՈՒՍԱՆ»: Վան, թողուցիկ թերթ: Հրատարակութիւն Վանի Գաշնակցական տեղական մարմնին: Լոյս տեսած է մօտաւորապէս 1904ին եւ ունեցած է պատահական հրատարակութիւն¹⁰:

«ԲԱԳԱՌԻՉ»: Արինչ գիւղ, Մշոյ դաշտ, ձեռագիր, խմբագիր-հրատարակիչներ՝ Պօղոս Հաճիեան եւ Արմենակ Ալիխանեան, սկզբնատրութեան թռականը ծանօթ չէ, բայց գիտենք որ դադրած էր 1908ի օսմանեան սահմանադրութենէն առաջ: Թերթը միտում ունեցած է «*Երիտասարդութիւնը արթնցնելու դէպի ազգն եւ անոր պաշտպանութիւնը*», բայց «վատ անձինք» սկսած են տրտնջալ «*եւ կտաավարութեան պիտի մարնէին եթէ յեղափոխութիւնը խիստ միջոցներ ձեռք չառնէր*», եւ այդ վտանգէն զերծ մնալու համար, խմբագիրները որոշած են դադրեցնել զայն¹¹:

«ԲԱԴ»: Սեբաստիա, երգիծաթերթ, հաւանաբար խմորատիպ, 1869 կամ 1870: Յիշուած է որ Սիմոն Պարոնեան (Սիմպար), Վառէկ-Փիլոս (Փիլիպոս Եղիա Վառնեկեան), Մկրտիչ Մեծմօրութեան եւ Նազարէթ Իսթամպուլպեան Սեբաստիոյ մէջ միասնաբար լոյս ընծայած են երեք թերթեր, որոնցմէ մէկն է *Բարը*¹²:

«ԲՈՂԲՈՋ»: Սեբաստիա, Ազգային որբանոց (որ տեղակայուած էր Սեբաստիոյ մօտակայ Ս. Նշան վանքին (Անապատին) մէջ): Աշակերտական

⁹ Ալպոմ-յուշամարեան *Էտրէկ-Ֆենեսեի*, պատրաստեց՝ Խորէն Յ. Գըլըճեան, հրատ. Էվրէկ-Ֆենեսեի Մեսրոպեան-Ռութինեան հայրենակցական միութեան Լիբանանի մասնաճիւղի, տպարան Ալթափրես, Պէլրոյթ, 1984, էջ 32:

¹⁰ Հուր, «Տեղական մամուլը ազատութիւնից յետոյ», *Յորձանք* խմորատիպ կիսամսեայ հանդէս, Վան, Ա., թիւ 1, 1 Փետր. 1909, էջ 16:

¹¹ *Դարոց-Դաստիարակ*, խմորատիպ թերթ, Նորշէն գիւղ, Ա. տարի, թիւ 1, 1 Դեկտ. 1909, էջ 2:

¹² Գումկան Սեբաստիոյ (Կ. Գաբիկեան), «*Եղեռնապատմամ Փորոն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, տպ. «Հայրենիք», Պոստոն, 1924, էջ 197. նաեւ՝ Վառնեկեան, էջ 2, ուր ըստած է որ ան ձեռագիր թերթ է. նաեւ՝ Սոաքել Ս. Պատրիկ (կազմող), *Պատմագիրը յուշամարեան Սեբաստիոյ եւ զատի հայութեան*, Ա., հրատ. Համասերաստիայ վերաշինաց միութեան-Նիւ Եորք, տպարան Մշակ, Պէլրոյթ, 1974, էջ 393:

ձեռագիր ամսաթերթ: Լոյս տեսած է տեղւոյն ազգային որբանոցի աշակերտներուն կողմէ, 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետը¹³:

«ԳՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»: Տիարպեցի, Ս. Կիրակոս վարժարան: Դպրոցական ամսաթերթ, հիմնադիր-խմբագիր՝ Լեւոն Սրապեան: Հրատարակուած է Ս. Կիրակոս վարժարանին մէջ՝ «մարգարանը դառնալով բարձրագոյն կարգերու ուսանողութեան» եւ անխափան շարունակուած է չորս տարի¹⁴: Դադրած էր արդէն 1910ին:

«ԴՊՐՈՑ»: Սեբաստիա, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան: Աշակերտական ձեռագիր շաբաթաթերթ: Լոյս տեսած է Ամերիկեան Բարձրագոյն վարժարանի ուսանողներուն կողմէ, «1900ի ատենները»: Յունուար 1914ին դադրած էր արդէն¹⁵:

«ԶԱՐԹՕՆՔ»: Հաւանաբար Մուշ կամ Մշոյ դաշտի գիղերէն մին լոյս տեսած, խմորատիպ թերթ, 1910: Մշոյ դաշտի Նորշէն գիղի մխիթարեան հայրերու Թարգմանչաց վարժարանին կողմէ հրատարակուող *Դպրոց-Դաստիարակ* խմորատիպ շաբաթաթերթին մէջ լոյս տեսած է յօդուած մը որ պատասխանն է *Զարթօնք* խմորատիպ թերթի մէկ յօդուածին, ուր խօսուած էր կրօնական պատճառներով հայ ժողովուրդը երեք մասի բաժնելու երեսոյթին մասին եւ խիստ ու հեզնական ձեւով պատասխանուած է *Զարթօնքին*¹⁶՝ ելլելով կաթոլիկ եկեղեցոյ իրատունքները պաշտպանողի դիրքերէ: Յօդուածին մէջ ակնարկութիւն կայ նաեւ այն մասին որ յօդուածագիրը գաւառացի մըն է¹⁶:

Չենք կարծեր որ խօսքը նոյն օրերուն Կ. Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին մէջ լոյս տեսնող *Զարթօնք* խմորատիպ թերթին մասին ըլլայ, որ հրատարակուած է 1908-9ին եւ հաւանական չէ որ հասած ըլլար Մշոյ դաշտ:

«ԸՆԿԵՐԱԿԱՆ ՍԻՐՏ»: Կարին, ձեռագիր հանդէս ամսեայ, խմբագիր՝ Յովհաննէս Շաարշ, գործակցութեամբ Արշակի, Պ. Վարդի, Երուանդի, Արմենակի, Յարութիւն Ծերնիկեանի, Մ. Գաբլանեանի, Ա. Յովսէփեանի եւ Մ. Թիսթելեանի: Առաջին թիւը լոյս տեսած է 1 Ապրիլ 1895ին, իսկ վերջինը, որ 6րդ թիւն է, Սեպտ. 1895ին: Եղած է 24 էջանի տետրակ մը միջակ մեծութեամբ ու հրապարակած է բանաստեղծական տողեր, նամակներ եւ կարգ մը օրագիրներ¹⁷:

¹³ Վառնեկեան, էջ 2:

¹⁴ Լեւոն Սրապեան, «Կեանքը գաւառին մէջ. Տիգրիսի ափերէն», *Արեւեք*, Կ. Պոլիս, 3/16 Փետր. 1910, էջ 1:

¹⁵ Վառնեկեան, էջ 2:

¹⁶ *Դպրոց-Դաստիարակ*, Ա. տարի, թիւ 15, 13 Մարտ 1910, էջ 2-3:

¹⁷ Յակոբ Ծ. Վ. Քօսեան, *Բարձր Հայք, Ա. հտր.*՝ Կարին քաղաքը. տնտեսական, պատմական եւ սովորութիւններ, տպարան Մխիթարեան, Վիեննա, 1925, էջ 254.

«ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹԵՐ»: Կարին, թոռուցիկ գաղտնի թերթ, 1896, հրատարակություն Հ. Յ. Դաշնակցության Կարնոյ կեդրոնական կոմիտեի: Բաժնուած է Կարնոյ եւ գիտերու հայութեան ու անոնցմով բացատրուած է «տիրող հանգամանքներու իսկութիւնը եւ նշանակութիւնը» եւ յորդորուած է ժողովուրդը չվիատիլ «եւ հաստատ հաաստք ունենալ մեր դատի յաղթանակին» հանդէպ ու հրաւեր կարդացուած է ինքնապաշտպանութեան դիմած Արշաան գիտի երիտասարդութեան «դիմադրել մինչեւ վերջ»¹⁸:

«ԻՏԷԱԼ»: Շապին Գարահիսար, Ազգային Վարժարան: Խմորատիպ ամսաթերթ, հրատարակություն Ազգային Վարժարանի Ուսանողական միութեան: Թերթին աշխատակցած են վարժարանի բարձագոյն կարգերու ուսանողներն ու ուսուցիչները: Լոյս տեսած է հաւանաբար 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք¹⁹:

«ԼՍՊՏԵՐ»: Ատաբազար: Թոռուցիկ թերթ, որուն 13 Օգոստոս 1909ի թիւին մէջ հրատարակուած «Տէլիքմէնի խնդիրը. հի՛ն ցա» խորագրով յօդուածը արտատպուած է Նիկոմիդիոյ *Քիլթանիա* տասնօրեայ թերթին կողմէ, անոր համար որ «կրնայ տակափն այժմէութիւն ունենալ»²⁰:

«ԼՈՅՍ»: Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան: Խմորատիպ թերթ, լոյս տեսած տեղոյն Ամերիկեան Բարձրագոյն Վարժարանին մէջ, ուսանող Միքայէլ Մինասեանի խմբագրութեամբ:

Մինասեան վարժարանին աշակերտած է 1885-89ին, այնպէս որ, *Լոյս*ն ալ տպուած պիտի ըլլայ նոյն տարիներուն:

Այս տեղեկութիւնները փոխանցող Տ. Ս. Մարտիկեան, որ նոյն վարժարանին մէջ եղած է Մինասեանի դասընկերը, վկայած է որ օր մը վարժարանին խմորատիպ երկու թերթերուն՝ *Շաքաթախօսի* (խմբագիր՝ Կարապետ Թապագեան) եւ *Լոյսի* խմբագրական մարմիններուն միջեւ տեղի ունեցած է «ճակատամարտ» մը, որ բարեբախտաբար աւարտած է խաղաղութեամբ, առանց «վէրք տալ ստանալ»ու²¹:

նաեւ՝ Օննիկ Ճգնատրեան, «Բարձր Հայք», ձեռագիր աշխատութիւն, Ա., ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 9, թ. 125ա:

¹⁸ «Կոտորածներից յետոյ Արշաան գիտի կոիր», *Պրօշակ*, Վիեննա, 1 Յունիս 1896, էջ 108-109. նաեւ՝ Վարդիթեր Կոճուրզեան-Յովհաննէսեան, *Յիթող Դաշտի Կարնոյ*, տպարան Համազգային, Պէրոպ, 1972, էջ 141, 143:

¹⁹ Արամ Հայկազ, «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը», տպարան Մշակ, Պէրոպ, 1957, էջ 319:

²⁰ *Քիլթանիա* տասնօրեայ թերթ, Իզմիտ, Ա. տարի, թիւ 19, 1 Յուլիս 1910, էջ 224:

²¹ Տ. Ս. Մարտիկեան, «1889ի ընթացաարտ կարգին քսանեփնեգամեայ յոբելեանը», *Պարտիզակ*, տպուած Կ. Պոլիս, 2., թիւ 11, Հոկտ. 1914, էջ 32:

խմբագիրը անելի ետք Միացեալ Նահանգներու (Քեմպրիճ եւ Պոսթոն, 1901-8) եւ Վանի մէջ (1913-14) խմբագրած է համանուն երկու այլ թերթեր եւս, եւ այս մէկը հաւանաբար «նախափորձ»ը եղած է այդ երկուքին²²:

«**ԼՈՅՍ**»: Ուրֆա, խմորատիպ ամսաթերթ, խմբագիր՝ Մոնոֆար Ս. Յաւորեան, լոյս տեսած 1890էն ետք²³:

«**ԿՌԱՆ**»: Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան, աշակերտական թերթ, հրատարակիչ՝ Սարգիս Սարունի (Տօնկլիկեան), երբ կ'աշակերտէր Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն վարժարանին, 1910: Թերթը գրուած է «Չերագի ծայրայեղ աշխարհաբարով»²⁴:

«**ՀԱՅԱՍՏԱՆ**»: Սեբաստիա, Ս. Նշան վանք, լրագիր, խմբագիր-հրատարակիչ՝ Բարսեղ ասագ սարկասագ Սեբաստացի (որ արեղայական ձեռնադրութենէն ետք վերանուանուած է Պետրոս արեղայ), 1851, «ի վախճան Մայիս ամսոյ»²⁵: Մեր օգտագործած փաստաթուղթին համաձայն, խմբագիրը բարեկարգած է յիշեալ վանքը, հիմնած է «ընկերութիւն ուսումնականութեան» մը ու վարժարան մը ապա նաեւ այս լրագիրը:

«**ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼՆԵՐ**»: Այնթապ, խմորատիպ կամ տպագիր երգիծաթերթ: Թերթին պատասխանատուներէն մին եղած է Յարութիւն Զէնեան: Լոյս տեսած է 1909ին եւ ունեցած է կարճատեւ կեանք²⁶:

«**ՄԱՄՈՒԼԻՆ ԶԱԳԸ ՍԵՐԱՍԻՏԻՈՅ ԱՐՁԱԳԱՆԳԸ**»: Սեբաստիա, «երգիծալից յօդաածիկներ» հրատարակող ձեռագիր երգիծաթերթ, խմբագիր՝ Փիլիպոս Եղիա Վառեկեան: Լոյս տեսնել սկսած է հաւանաբար 1869ին կամ 1870ին, մօտ 20 թիւ: Նախ կոչուած է «Մամուլին Զագը» եւ լոյս տեսած է Աւետիս Շահինեանի խմբագրութեամբ, ապա փոխանցուելով Փիլիպոս Եղիա Վառեկեանին, վերանուանուած է այս անունով: Կ'ենթադրուի որ ասոնց շարունակութիւնն է *Այիս* թերթը²⁷:

²² Պարպիզակ, 2. տարի, Հոկտեմբեր 1914, թիւ 11, էջ 32:

²³ Արամ Սահակեան, (աշխատասիրեց), *Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները*, հրատարակութիւն Ուրֆայի յուշապատումի յաճնախումբին, տպարան Ատլաս, Պէրոյթ, 1955, էջ 309:

²⁴ Պարպիզակը խարտուրիկ. *յանրուածաբար՝ Մամուլակ եւ իր հեքեաթները*, Յակոբ Տէր-Յակոբեան, տպարան Տէր Յակոբեան, Փարիզ, 1960, էջ 119:

²⁵ Վարդան վրդ. Օձնեցիի 23 Յունիս 1851 թուակիր նամակը, Սեբաստիոյ Ս. Նշան վանքէն Կ. Պոլսոյ Պատրիարքին («Սատուածարեալ քահանայապետ հայր հասարակաց») ՀԱՍ, ֆ. 439, ց. 3, գ. 34, թ. 3:

²⁶ Գրիգոր Պողարեան, «Այնթապցիներու տուրքը տպագրութեան, հայ մամուլին, հայ գրականութեան եւ հայ մշակոյթին», *Այնթապականք, Ա. հոր.*, տպարան Ատլաս, Պէրոյթ, 1974, էջ 11 եւ 44:

²⁷ Վառեկեան, էջ 1-2:

«ՄԱՆՐ ԵՐԳԵՐ»: Կարին, կիսամսեայ ձեռագիր բանաստեղծական հանդես, խմբագիր-հրատարակիչներ՝ Քէչեան և Հէյրանեան: Առաջին թիւը լոյս տեսած է Մայիս 1895ին, որուն յաջորդած է երկրորդ թիւ մը միայն, տետրի ձեռով: Հրատարակած է միայն ոտանատր գրութիւններ ու երգեր եւ *«Անժանօթ պարճառներէ՛ անտարակոյս ժամանակին տիրած երկխոյզն ստիպեալ՝ կը դադրեցնեն եւ նաեւ կը պատրեն գրածնին»*²⁶:

«ՄԻ ՍԻՐՏ ԵՒ ՄԻ ՀՈԳԻ»: Կարին, ձեռագիր ամսաթերթ, հրատարակութիւն մօտ տասը երիտասարդներու, մօտատրապէս՝ 1895ին: Ունեցած է կարճատե կէտանք ու դադրած է քաղաքին մէջ տիրող վախի մթնոլորտին հետեանքով²⁹:

«ՇԱՐԱԹԱԽՕՍ»: Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան, խմորատիպ թերթ: Լոյս տեսած է տեղոյն Ամերիկեան Բարձրագոյն վարժարանին մէջ, ուսանող Կարապետ Թապագեանի խմբագրութեամբ, որ վարժարանին աշակերտած է 1885-89ին, այնպէս որ, թերթն ալ լոյս տեսած պիտի ըլլայ այդ տարիներուն:

Այս տեղեկութիւնները փոխանցող Տ. Ս. Մարտիկեան, որ նոյն վարժարանին մէջ եղած է Թապագեանի դասընկերը, վկայած է որ օր մը վարժարանին խմորատիպ երկու թերթերուն՝ *Շարաթախօսի* եւ *Լոյսի* (խմբագիր՝ Միքայէլ Մինասեան) խմբագրական մարմիններուն միջեւ տեղի ունեցած է «ճակատամարտ» մը, որ բարեբախտաբար ասարտած է խաղաղութեամբ, առանց «վերք տալ ստանալ»ու³⁰:

«ՈՒՐՖԱ»: Ուրֆա, խմորատիպ հանդես, հրատարակիչ՝ Ուրֆայի երկեսեռ երիտասարդաց Միութիւն, 1919:

Նոյն միութիւնը միաժամանակ կարավարած է տեղոյն լսարանը ու նպատակ ունեցած է հիմնելու ընթերցատուն մը³¹:

«ՊՍՍԱՆԻ»: Մեզիրէ, Ֆրանչիսկեան հայրերու ֆրանսական վարժարան, խմորատիպ թերթ, հրատարակուած Ֆրանչիսկեան հայրերու ֆրանսական վարժարանի աշակերտութեան կողմէ, որոնց «ղեկավար»ը եղած է Յարութիւն Ճապուրեան³², իսկ այլ տեղ յիշուած է որ թերթը հրատարա-

²⁶ Բօսեան, էջ 254. նաեւ՝ Ճգնատրեան:

²⁹ Բօսեան, էջ 254-55. նաեւ՝ Ճգնատրեան:

³⁰ Մարտիկեան, էջ 31-32:

³¹ ՀԲԸՄիութեան պատուիրակ Դափթ Աղամեանի 25 Նոյեմբեր 1919 թուակիր ձեռագիր տեղեկագիրը, յղուած Ուրֆայէն՝ ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչական ժողովին, Գահիրէ, էջ VII:

³² Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, *Օրեր որ պիտի չմոռցուին. յուշեր ազգային գործիչի մը կեանքէն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1974, էջ 60:

կութիւնն է «Ֆրանսական Գոլէճի Հնչակեան Ոսանողական Միութեան»³³: Հրատարակութեան աշխատանքներուն մասնակցած է վարժարանի աշակերտներէն Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, որ անոր 1912ի թիւերէն մէկուն մէջ յոյս ընծայած է իր առաջին բանաստեղծութիւնը³⁴:

Պարանիի մէջ Մեգիրիի գերմանական գոլէճ-որբանոցի սաներէն Յովհաննէս Ժամկոչեան (եղբայրը՝ բանասէր-մանկավարժ Բենիամին Ժամկոչեանի) ունի ոտանատր մը՝ «Ամու՛ր բռնէ ճշմարտութեան հաստատուն վէճը» խորագրով: Ժամկոչեան նկարած է նաեւ փոթորկոտ ծով մը եւ ընկղմելու մօտ նաակ մը, որուն մէջէն պատանի մը երկարած է ձեռքը ցցուած ապառաժի մը: Նկարին տակ գրուած է «Ամու՛ր բռնէ ճշմարտութեան հաստատուն վէճը»³⁵:

«ՍՈՒՆԱԿ»: Մարգրուան, Անաթոլիա Գոլէճ, աշակերտական խմորատիպ թերթ: Մեծանուն բանաստեղծ Միսաք Մեծարեւնց անոր մէջ հրատարակած է իր կարգ մը բանաստեղծական փորձերը, երբ կ'աշակերտէր նոյն Գոլէճին³⁶: Մեծարեւնց Գոլէճ յաճախած է 1899-1901ին:

«ՄՐԻՆԳ»: Սեբաստիա, Ս. Նշան վանքի Ազգային որբանոց (որ տեղակայուած էր Սեբաստիոյ մօտակայ Ս. Նշան վանքին (Անապատին) մէջ): Աշակերտական ձեռագիր ամսաթերթ: Լոյս տեսած է որբանոցի աշակերտներուն կողմէ, 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք³⁷:

«ՎՈՍՓՈՐ»: Կարին, քաղաքական, գրական եւ հանրային ձեռագիր ամսօրեայ հանդէս: Տէր եւ հրատարակիչ՝ Երուանդ Եազըճեան, գործակցութեամբ Ղ. Գրգոյեանի, Մելքոն Կիւրճեանի, Լ. Գազիկի եւ Գ. Գոզլխի: Բ. թիւէն ետք տէր եւ հրատարակիչ՝ Ղ. Գրգոյեան: Առաջին թիւը յոյս տեսած է 1 Յունուար 1896ին, վերջինը՝ 1 Ապրիլ 1896ին, ընդամենը 4 թիւ, միասնաբար 98 էջ, հետեաբար իւրաքանչիւր թիւ բաղկացած պիտի ըլլայ մօտ 24 էջեր: Եղած է փոքր տետր մը որ իր երկրորդ թիւէն ետք հրապարակած է «Տեղական ոգոյն յարմար նիւթեր»: Առաջին թիւը ունեցած է հետեւեալ յօդուածները. «Թուրքերը եւ հայերը», թրգմ.՝ Եր. Եազըճեան: «Մեռեալ սիրուիին», թրգմ. Եր. Եազըճեան: «Դէմքդ եւ սիրտդ», Մ. Կիւրճեան: «Զմեռ գիշեր մը», Էպառա: «Ձուարճալիք», թրգմ. Եր. Եազըճեան: «Քաղա-

³³ *Յուշարձան ոսոցչապետ Բենիամին Ժամկոչեանի*, հրատ. Պէրյոֆի Սահակեան վարժարանի նախկին սաներու, Երեան, Երեան, ՎՄՎ-Պրինտ, 2010, էջ 152:

³⁴ Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, էջ 60:

³⁵ *Յուշարձան ոսոցչապետ*, էջ 152:

³⁶ «Միսաք Մեծարեւնց թուականներով եւ թիւերով», *Բագին*, Պէրյոֆ, Նոյ-Դիկտ. 1986:11-12, էջ 6-7:

³⁷ Վառեկեան, էջ 2:

քական», «Ազդ խմբագրություն»: «Մեր մեռեալները», թրգմ. եր. Եազըճեան եւ «Ձուարճալիք», Ղ. Գրգոյեան³⁸:

«**ՏԻԳՐԻՍ**»: Տիարպեքիր, խմորատիպ ամսագիր, լոյս տեսնել սկսած է 10 Ապրիլ 1910ին: Աւելի ետք միաձուլուած է տեղւոյն *Յուքեր* կիսամսեայ խմորատիպ թերթին հետ եւ նոր թերթը վերածուած է շաբաթաթերթի, «Տիգրիս» անունով³⁹, որ պաշտօնապէս արտօնուած է կառավարութենէն⁴⁰: Նոր *Տիգրիս* շաբաթաթերթէն մեր տեսած առաջին՝ Ա. տարուայ 5րդ թիւը կը կրէ 2 Օգոստոս 1910 թուականը, այնպէս որ պիտի ենթադրել որ այս *Տիգրիս*ին ու *Յուքեր*ուն միաձուլումը տեղի ունեցած է 1910ի Յուլիսի վերջերուն:

Օրին Տիարպեքիրէն յղուած թղթակցութեան մը մէջ այս թերթին մասին ըսուած է հետեւեալը. «...Ո՛րքան իր անունով, նո՛յնքան իր բովանդակութեամբ կը սիրենք յուսալ թէ պիտի համապարասխանէ այս վերջինն ալ, միջազայրի բազմապիսի պէտքերուն»⁴¹:

«**ՓԱՐՈՍ**»: Կարին, շաբաթաթերթ, տպագրուած «բազմատիպ զանգուած»ով (Polycopie-խմորատիպ), հրատարակութիւն դաշնակցական խումբի պատկանող երիտասարդներու ու եղած է կուսակցական օրկան: Առաջին թիւը տպուած է 7 Մարտ 1909ին, երկրորդը՝ 14 Մարտ 1909ին, իրաքանչիւրը 6-8 թերթ (12-16 էջ), գինը՝ 1 դահեկան: Ունեցած է կարճատեւ կեանք, հրատարակուած է ընդամենը քանի մը թիւ: Թերթին նպատակը եղած է.

Ա. Տալ բուն ժողովուրդին ներկայ քաղաքական հարցերուն լուսաբանութիւն:

Բ. Թերթի միջոցա կռուիլ զանազան մոլութիւններու դէմ:

Գ. Երիտասարդութիւնը հրաւիրել ինքնաճանաչութեան եւ ինքնագործունէութեան:

Դ. Տեղ տալ զանազան հայագէտներու օգտակար գրութիւններու եւ զարգացուցիչ թարգմանութիւններու:

Ե. Պարզել ներկայիս գոյութիւն ունեցող կուսակցութիւններու սկզբունքները եւ այլն ընկերական եւ գրական յօրուածները:

*Փարոս*ի Բ. թիւը նուիրուած է Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին՝ կեանքին եւ յեղափոխական գործունէութեան, առաջին էջին ունենալով անոր պատկերը:

³⁸ Քօսեան, էջ 254-55. նաեւ՝ Ճգնաւորեան, թ. 125ա-բ:

³⁹ Մ. Ա. Բաբոյեան, *Հայ պարբերական մամուլը. մարտնչագիտական համահասարցուցակ (1794-1980)*, ԳԱ հրատ., Երեան, 1986, էջ 85, թիւ 626:

⁴⁰ Արապեան, «Տիգրիսի Ափերէն», *Արեւիք*, 15/28 Յուլիս 1910, էջ 1 եւ 22 Մայիս/4 Յունիս 1910:

⁴¹ Արապեան, «Տիգրիսի Ափերէն», *Արեւիք*, 22 Մայիս/4 Յունիս 1910, էջ 2:

Թերթին աշխատակիցները հանդես եկած են կեղծանուններով՝ Կայ-
ճակ, Հ. Փայլատակ, Յօղ, Խանդ-Ֆարհատ, Գիսակ են.⁴²

**NEWLY FOUND NAMES OF PROVINCIAL ARMENIAN PRESS
PERIODICALS**

(Summary)

MIHRAN MINASIAN (mihran.min@gmail.com)

The paper uncovers the names of and gives certain information about 35 new Armenian provincial periodicals published between 1851 and 1922 in the various towns of Western Armenia, Cilicia and Asia Minor, towns like Adapazar, Aintab, Bardizag, Cesarea, Diarbekir, Fenese, Garin, Mezire, Ourfa, Sepasdia, Shabin Karahisar, Tamzara, Van, etc.. These periodicals are not mentioned in Armenian bibliographical lists.

Adding these new-found names to the previous two articles on the same subject by the same author in the *Haigazian Armenological Review* Volume 9 (1981) and volume 21 (2001) brings the total number of periodicals uncovered by this author to 101. However, unlike in the first two articles the names mentioned in this paper are of provincial periodicals, which is further evidence of the budding cultural richness in Armenian provincial towns.

⁴² Բօսնան, էջ 256-57. նաև՝ Ճզնաորեան, թ. 125թ-126ա:

ՂՈՒՔԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՒՆՆԻՑ (վաղ ժամանակներից մինչև 1920)

ԳԷՈՐԳ ԱՏԵՓԱՆԵԱՆ (sesun-07@mail.ru)



Նորա, ԺՃ. դար. Եեոի աջափնեակոմ փոռ ած շն րայկական ե. ոռաական, իսկ Ճա սափնեակոմ՝ հրկական Այրոբուս թարամասկոյ



Ղոբայի 1880ականներու հայկական գորգ, 274x91,5 սմ., բնական եւ վառ գոյներով: Նկարը ՀՀՀին տրամադրուած է Արթո Թատըջեանի կողմէ (www.hyeantiques.com)

ՄՈՒՏՔ

Խորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարած հակահայկական քարոզչության, իսկ Ադրբեջանի անկախացումից յետոյ նոր թափ ստացած պատմաշինարարության պայմաններում ստորբեջանցի «պատմաբանները» անցել են հետետղական լայնածառալ տեղեկատուական յարձակման: Գիտական վերահսկողութիւնից դուրս յայտնուած ադրբեջանական պաշտօնական «պատմագրութիւնը» (Զ. Բունիարով, Գ. Գէ-

րուպետ, Ռ. Գիլշեյ, Ֆ. Մամեդովա, Ա. Սումբատգադե, Ռ. Մելիքով և ուրիշներ)¹, Բուն Աղուանքի² եւ Շիրվանի³ պատմութեանը եւ պատմական աշխարհագրութեանը նուիրուած «աշխատութիւններում» Արեւելեան Այսրկովկասում 1918 Մայիսի վերջերից վաչկատուն թիրաբալեզու մահմետական եկտորներին հիմքի վրայ ի յայտ եկած «Աղրբեջան» արհեստածին, կեղծպետական կազմատրման «պատմութիւնը» հնացնելու մտասեւեռումով կեղծարարական խելայեղութեամբ շարունակաբար փորձում է իրացնել Կուրի դաշտավայրից մինչեւ Ափշերուն թերակղզի ընկած տարածքի (ներառում է Կուրից հիսիս պատմական Բուն Աղուանքի եւ նրանից հիսիս-արեւելք տարածուող մերձկասպեան շրջանները), ինչպէս նաեւ նախկինում Բա-

¹ 3. Буниатов, *Азербайджан в VII-IX вв.* (Աղրբեջանը 7-9րդ դդ.), Բաքու, 1965. նաեւ՝ Գ. Гейбуллаев, *Топонимия Азербайджана (историко-этнографическое исследование)* [Աղրբեջանի տեղագրութիւնը (պատմական եւ ազգագրական հետազոտութիւն)], Բաքու, 1986. նաեւ՝ Բ. Геюшев, *Христианство в Кавказской Албании* (Քրիստոնէութիւնը Կովկասեան Աղուանքում), Բաքու, 1984. նաեւ՝ Փ. Мамедов, *Кавказская Албания и адбанцы* (Կովկասեան Աղուանքը եւ աղուանները), Բաքու, 2005. նաեւ՝ А. Сумбатзаде, *Азербайджанцы-этногенез и формирование народа* (Աղրբեջանցիներ-էթնոգենեզ եւ ժողովրդի ձեւաւորում), Բաքու, 1990. նաեւ՝ Բ. Меликов, *Этническая карта Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н.э.)* [Աղրբեջանի էթնիկական քարտեզը արքեմէնեան իշխանութեան շրջանում (Ք.ա. 2-7 դդ.)], Բաքու, 2003:

² Բուն Աղուանքի աշխարհագրական սահմանների եւ աղընթեր հարցերի մանրամասն ըննութիւնը տե՛ս՝ А. А. Аюбян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках* (Ալբանիա-Աղուանքը յունա-լատինական եւ հին հայկական աղբիւրներում), Երեւան, 1987. նաեւ՝ Հ. Սվազեան, *Աղուանից աշխարհի պատմութիւն (հնագոյն շրջանից VIII դարը ներառելով)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2006. նաեւ՝ Ա. Վարդանեան, *Աղուանքի պատմաաշխարհագրական քննութիւն*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2013. նաեւ՝ Ա. Յակոբեան, *Աղբալարոհմերն ու իշխանապոհները Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից Կողմանքում անպիկից մինչեւ ժ.դ. դար*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2020:

³ Ժ. դարից Կուր գետի ստորին հոսանքից մինչեւ Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբիւրներում առաւելապէս յայտնի էր Շիրվան անունով (В. Минорский, *История Ширвана и Дербента X-XI вв.* (Շիրվանի եւ Դերբենտի ժ.ժԱ.դ. պատմութիւն), Մոսկուա, 1963, էջ 85, 106-19. նաեւ՝ Յ. Փափագեան, «Անանուն տաքիկ աշխարհագիրը Հայաստանի, Աղրբեջանի եւ Արեւելեան Վրաստանի աշխարհագրութեան եւ տնտեսական յարաբերութիւնների մասին (X դ.)», *Տեղեկագիր ՀԱՍՀ ԳԱ*, 1953:5, էջ 80, 86): Միքայէլ Չամչեանն այդ մասին գրում է. «*Աղուանից աշխարհ... որ է ընդ մէջ Կուր գետի եւ Կասպից ծովու՝ մինչեւ ի Դարբանդ. եւ սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...*» (Միքայէլ Չամչեան, *Հայոց պատմութիւն (սկզբից մինչեւ 1784 թուականը)*, հրդ. Գ., ԵՀ հրատ., Երեւան, 1984 (յաւելում), էջ 131):

քուի նահանգի⁴ մաս կազմած Երասխ/Արաքսի ստորին հոսանքից հարազտնուող՝ Մեծ Հայքի Փայտակարան նահանգի⁵ արեւելեան՝ Կասպից ծովի առափնեայ շրջանների էթնո-մշակութային եւ քաղաքական պատմութիւնը: Դրանով իսկ երկրամասի տեղաբնիկների (հայեր⁶, ուրիներ, լեզգիներ,

⁴ Բաքուի նահանգի հայութեան պատմութեան մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Գ. Ստեփանեան, *Բաքուի նահանգի հայութիւնը XIX դարի երկրորդ կէսին (պարմա-ժողովրդագրական ուսումնասիրութիւն)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2010. նաեւ նոյնի՝ *Armenians of Baku Province in the Second Half of the 19th Century (Historical-Demographic Study)*, Yerevan, 2013:

⁵ Փայտակարանի տարածքը Հայաստանի առաջին րաժանումից (387) յետոյ, տարբեր ժամանակներում մտել է այլեայլ պետութիւնների կազմի մէջ: Թուրքմենչայի 1828 Փետրարի 10ի հաշտութեան պայմանագրով Այսրկովկասում Ռուսական Կայսրութեան տիրապետութեան հաստատումից յետոյ անցկացուցին վարչատարածքային րաժանումներ: Յարական կառավարութիւնը նախ Կասպիական մարզի (1840), ապա՝ Շամախու նահանգի (1846), իսկ այնուհետեւ՝ Բաքուի նահանգում (1867) Շիրվանի, Բաքուի եւ Ղուբայի գաւառներից բացի ընդգրկեց նաեւ Մեծ Հայքի 11րդ՝ Փայտակարան նահանգի (ունեցել է 12 գաւառ) արեւելեան երկրամասերը. հիսխսում Մուղանի դաշտի մեծ մասը (յետագայի՝ Ջաաստի գաւառը), հարաւ-արեւելքում՝ Կասպից ծովի առափնեայ շրջանը՝ Լեւերոանի ցածրավայրը եւ Թալիշի լեռնային շրջանը (յետագայի՝ Լեւերոանի գաւառը): 1920 Ապրիլի վերջերին Փայտակարանի արեւելեան շրջանները բռնակցուել են Խորհրդային Ադրբեջանին (Ս. Արրահամեան, *Անանիա Շիրակացու մալեւնագրութիւնը*, Երեւան, 1944, էջ 350. նաեւ՝ Բ. Յարութիւնեան, «Մեծ Հայքի Թագաւորութեան հիսխս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կացութիւնը 387-451 թթ.», *Բանբեր երեւանի Համալսարանի*, 1976, էջ 77-95. նաեւ նոյնի՝ «Փայտակարան քաղաքը եւ նրա տեղադրութիւնը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1981:12, էջ 61-76. նաեւ՝ Ա. Յակոբեան, «Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ («Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը. Գ»՝ *Ճանաչուած հայազգէյ-կովկասազգէյ Պաւել Չորանեանի (1948-2017) ծննդեան 70ամեակին նուիրուած հանրապետական գիտաժողով (Մայիս 17-18, 2018)*. գեկուցումներ եւ գեկուցումների դրոյթներ, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2018, էջ 236-246:

⁶ Պատմական հաւաստի յիշատակութիւնները վկայում են, որ Կուրի ձախափնեակի եւ Մերձկասպեան շրջանների տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակուել են ոչ միայն արուաններ, այլեւ որոշակի հայկական էթնիկ տարր, որն որոյն դերակատարութիւն է ունեցել երկրամասի մշակութային եւ քաղաքական զարգացումներում (Հ. Գալստեան, Ա. Յակոբեան, «Էթնալեզուական գործընթացները Բուն Ադուանքում»՝ Հ. Գալստեան, *Յօդուածներ, յուշագրութիւններ, հարցազոյցներ*, «Նոյեան տապան» հրատ., Երեւան, 2003, էջ 91-2): Այդ իմաստով յատկապէս ակնառու է կովկասազգէտ Եու. Գազեմէյստերի տեղեկութիւնը. «*Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչութիւնից իրենց նախաբնակչութիւնը կարող են ապացուցել միայն հայերն ու ուրիները*» (Ю. Гагемейстер, “Хозяйственный очерк Закавказского края: народонаселение”, *Сборник газеты «Кавказ»* («Այսրկովկասի տարածքի տնտեսական ուրուագիծ»՝ *Ազգաբնակչութիւն (Կովկաս)*

կրիզներ, ցախուրներ, հափուփյւններ, ասարներ, թաթեր, թալիշներ եւ այլք) հազարամեայ պատմութեան ու քաղաքակրթական արժէքների կողոպուտով ու ոչնչացումով ձգտում է ինքնահաստատուն⁷ որպէս «հնագոյն ու մշակութային ժողովուրդ»⁷:

Ադրբեջանում այլեւեան բռնատիրական վարչախմբի կողմից պետական մակարդակով տարրուղ հակահայկական քարոզչութեան պայմաններում պատմութեան կեղծարարութեան ասպարէզում ներկայումս յատկապէս մեծ տեղ են զբաղեցնում էթնօժողովրդագրութեան հարցերը: Ադրբեջանցի հեքիասասց պատմաբանները, առաջնորդուելով փաստեղիքի եւ վիճակագրական տուեալների կեղծման եւ արհեստման հայեցակարգով, անտեսելով «Ադրբեջան» կազմաւորման արհեստածին լինելը, այդ երկրանունը որպէս էթնօնիմ սեփականելու հնարքով փորձում են «հիմնատրել» իրենց «տեղաբնիկութեան» առասպելը: Դրան զուգահեռ՝ նպատակաւորուած նենգափոխում են ներկայացնում վերոյիշեալ տեղաբնիկ ժողովուրդների պատմութիւնը: Սակայն հիմնական թիրախը հայ ժողովուրդն է. առաջ քաշելով այն հիմնազուրկ թեզը, թէ իբր հայերը հնաբնակ

թերթի ժողովածու), Կրատ.՝ Օ. Ն. Կոնստանտինով, Թիֆլիս, 1847, էջ 58): Իսկ Սիմէոն Ա. Երեւանցի պատմագիր կաթողիկոսն յիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայաթեզու եւ հայակոսն ժողովորոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ» (Դիւան հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմէոն կաթողիկոսի յիշարակարանը, Կրատ.՝ Գիտ քահանայ Աղանեանց, տպ. Մ. Շարաձե, Թիֆլիս, 1894, էջ 417-8): Բուն Աղուանքը հինոց գտնուել է հայկական պետականութեան ու Հայ Եկեղեցու հոգեւոր եւ քաղաքակրթական ազդեցութեան ներքոյ: Հ. Աճառեանը, բարձր գնահատելով հայոց քաղաքակրթական նշանակութիւնը երկրամասում, գրել է. «Աղուանից երկրին մէջ կը գրեուէին հայկական ծագում ունեցող զեղեր... Ատոնք այնպէս ուժեղ էին եւ այնպէս հաստատուն կերպով փրկաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ եւ ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...» (Հ. Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, «Զանգակ-97», Երեւան, 2002, էջ 44):

⁷ Հ. Խառատեան, «Ադրբեջանական պատմաշինութեան առանձնայատկութիւնները. Աղուանքը ադրբեջանական պատմագրութեան եւ քաղաքականութեան մէջ», *Հայկական քանակ*, 2012:1-2, էջ 234-9. նաեւ՝ Դ. Վարձանյ, *Ազերբայձանցի. Իստորիա օձնօ ռեզաւերշեննօ Էթնօքոյեքտ (Իստորիկօ-Էթնօլօգիչեսկի օչերկ)* (Ադրբեջանցիներ. մի անաարտ էթնիկ նախագծի պատմութիւն (պատմա-ազգաբանական ակնարկ), «Русская панорама», Մոսկուա, 2012. նաեւ՝ Ս. Կարապետեան, *Բուն Աղուանքի հայերէն վիճագրերը*, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» Կրատ., Երեւան, 1997. նաեւ Նոյնի՝ Հայ մշակութի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցում շրջաններում, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» Կրատ., Երեւան, 1999. նաեւ Նոյնի՝ *Ադրբեջանը քաղաքակրթութեան ղուրս*, «Բիւրակն» տպ., Երեւան, 2017:

չեն եւ կամ որեւէ դերակատարութիւն չեն ունեցել երկրամասի, հասարակական-քաղաքական, ընկերա-տնտեսական կեանքի առաջընթացում⁸: Մինչդեռ, հակառակ այսպիսի ակնյայտօրէն նենգափոխուած մտակառոյցների, պատմական իրականութիւնն այն է, որ սկսած ամենավաղ ժամանակներից, յատկապէս միջնադարում, երբ Շիրվանում եւ մերձկասպեան շրջաններում կար տեղաբնակ ստուար հայ բնակչութիւն, պատմութեանը յայտնի չէր եւ չէր էլ կարող յայտնի լինել «ադրբեջանցի» յորջորջուող ժողովրդի գոյութիւնը: Ուստի Կուրից մինչեւ Ափշերոն թերակղզի ընկած տաւածքի հայութեան պատմութեան տարբեր դրուագների գիտական ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս բացայայտելու ադրբեջանական «պատմագրութեան» կողմից հայ ժողովրդի հասցէին պետական մակարդակով հետետղականօժէն տարածուող յերիւանքները, ի ցոյց դնելով ադրբեջանական «պատմագրութեան» սնանկութիւնը:

Ինչորոյ առառկայ հիմնահարցի շրջանակներում ներկայացնենք Բաքուի նահանգի գաւառներից մէկի՝ Ղուբայի վարչական կենտրոն համանուն քաղաքի հայութեան համառօտ պատմութիւնը, որը նոյնպէս մեծապէս կեղծուել է ադրբեջանցի վայ-պատմաբանների կողմից⁹:

⁸ Վերջին շրջանի ադրբեջանական՝ գիտական հիմքից բացարձակապէս զուրկ եւ սնանկ կեղծարարութիւնների գիտականօրէն հիմնատրուած հակափաստարկների մասին մանրամասն տե՛ս՝ Գ. Ստեփանեան, «Ընդդէմ Արեւելեան Այսրլովկասի պատմութեան ադրբեջանական կեղծարարների», Վէմ, 2009:1(26), էջ 133-42. նաե՛ւ՝ Ե. Арутюнян, “Фальсификация на государственном уровне” (Պետական մակարդակի կեղծարարութիւն), Վէմ, 2010:32, էջ 24-57. նաե՛ւ՝ Ա. Յակոբեան, «Րուս-իաթովականների «յայտնագործութիւնները» հայ միջնադարեան պատմութեան մէջ (Շաքիի տեղորոշման օրինակով) որպէս Ադրբեջանի հակահայկական քաղաքականութեան դրսեւորում»՝ *Ադրբեջանի պետական տեսլականութիւնը եւ էթնիկական զգոմների քաղաքականութիւնը* Լեռնային Ղարաբաղի դէմ (Նիւթերի ժողովածու), «Կանադ» ԳԿ տարեգիրք, 2010:4, Շուշի, էջ 172-187. նաե՛ւ՝ R. Galichian, *Clash of Histories in the South Caucasus. Redrawing the Maps of Armenia, Azerbaijan and Iran*, London, 2012. նաեւ նոյնի՝ *Азербайджанские историко-географические фальсификации* (Ադրբեջանական պատմա-աշխարհագրական կեղծարարութիւնները), Մոսկուա, 2013. նաե՛ւ՝ В. Сафарян, *Фальсификация древней и средневековой истории и культуры Арцаха в азербайджанской историографии* (Արցախի հին եւ միջնադարեան պատմութեան եւ մշակութիւնի կեղծարարութիւնը ադրբեջանական պատմագիտութեան մէջ), Ստեփանակերտ, 2016. նաե՛ւ՝ H. Bakhchinyan, “Azerbaijan’s Weak ‘Weapon’ (Again on History Falsification).” *The Armenian Mirror-Spectator*, 10 Հոկտեմբեր 2020:

⁹ Н. Мамедов, *История города Кубы в XIX-начале XX века* (Ղուբայ քաղաքի պատմութիւնը. 19րդ եւ 20րդ դարակիցը), Բաքու, 1989. նաե՛ւ՝ Ш. Фарзалибеков, *История Губы* (Ղուբայի պատմութիւն), Բաքու, 2001. նաե՛ւ՝ *Куба. Апрель-май 1918 г.: Мусульманские погромы в документах* (Ղուբա. 1918 Ապրիլ-Մայիս, մուսուլմանական ջարդերը փաստաթղթերում), կազմ.՝ Ա. Ռուսամովա-Ռոհիրի, Բաքու, 2010, էջ 35, 61:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ղուբայի գաառը ընկած է Ղուբա եւ Դիվիչի գետերի՝ Կասպից ծովի եւ Կովկասեան մեծ (եռնաշղթայի) հիախարտելեան նախալեռների գագաթագծի միջեւ¹⁰: Հիսիսից այն սահմանակից էր Դաղստանի մարզի Կիրինի, իսկ հիսիս-արեւմուտքից՝ Սամուրի շրջաններին, հարաւից՝ Լուխիի, Շամախիի եւ փոքր երատներով՝ Գեօքչայի ու Բաքուի գաառներին, արեւելքից՝ Կասպից ծովին: Գաառի տարածքը կազմում էր շուրջ 6,300,7 ք.կմ.¹¹: 1916ի դրութեամբ գաառը բաժանուած էր ոստիկանական 4 տեղամասերի՝ Գուսար (կենտ. Գուսար ասան), Մուշկուր (կենտ. Խաչմաս կայարան), Դիվիչի (կենտ. գ. Դիվիչի), Ղուբայի գաառային տեղամաս (կենտ. գ. Ռուստով)¹²:

Ղուբա քաղաքը գաառի վարչական կենտրոնն էր¹³: Ղուբայի Հուսէյին-Ղուկի խանը հիջրայի 1160ին (քրիստոնէական 1747) իր նստավայրը Խուդաթ վայրից տեղափոխել էր Կուդիալ (Ղուբա-չայ) գետի աջ ափ եւ բարձրաբերձ հարթակի վրայ վերահիմնել Ղուբա քաղաքը¹⁴:

Ղուբան գտնում է Մեծ Կովկասի հիսիս-արեւելեան լանջերին: Հիւսիս-արեւելեան մասում՝ գետահովիտներում փոռած են բարեբեր Գուսարեան եւ Սամուր-Դիվիչի դաշտավայրերը: Քաղաքի սահմանները հիսիսից եւ հարաւից շրջանաձեւ օղակուած են մերկ եւ անտառապատ Գիզիկայա (3726 մ), Բաբադաղ (3629 մ) եւ Շախնազար (2874 մ) լեռներով բաց է միայն արեւելեան կողմից: Արեւմուտքից երեսում է Շահդաղ (4243 մ) ձիւնածածկ լեռնագագաթը¹⁵: Առողջարար է Ղուբայի լեռնային կլիման, օդն ու ջուրը: Ժժ.դ. սկիզբներին մերձկասպեան շրջաններում շրջագայած Տէր Բաղդասար Գասպարեան Շուշեցին ուղեգրական նոթերում նկարագրելով Ղուբան, գրում է.

¹⁰ Մ. Բարխտարեանց, *Աղտանից երկիր եւ դրացից (Միջին Դաղստան)*, տպ. Մ. Շարաձէ, Թիֆլիս, 1893, էջ 126:

¹¹ *Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г.* (Ռուսական Կայսրութեան Կովկասեան Երկրամասի բնակավայրերի ցուցակներ: LXV-Բաքուի նահանգ: Բնակավայրերի ցուցակն ըստ 1859-1864 թուականների տուեալների), կազմ.՝ Ն. Ջելդից, Թիֆլիս, 1870, էջ 2:

¹² *Кавказский календарь на 1917 г.* (1917ի կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1916, էջ 166:

¹³ Ըստ «Դերբետտ Նամէ»ի՝ Ղուբան հիմնադրել է պարսից թագաւոր Պերոզի որդի Կաառ կամ Կուրաղ I (483-531) թագաւորը (Минорский, էջ 50-51, 58-59)¹ հակառակ աղբրեջանցի հեղինակ Գէրյուլանի քննութիւն չընտղ այն տեսակէտի, թէ իբր «Կուբա-Կուա» տեղանունն ունի թիրքական ծագում (Гейбуллаев, էջ 64):

¹⁴ В. Константинов, “Куба,” *Кавказский календарь на 1852 г.* (Ղուբա, 1852ի Կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1851, отд. III (բաժին), էջ 334. Նաեւ՝ “Краткий исторический очерк городов Закавказского края. Куба” (Այսրկովկասեան երկրամասի քաղաքների պատմական համառոտ ուրուագիծ. Ղուբա, 1846ի Կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1845, էջ 50:

¹⁵ Նոյն. նաեւ՝ Е. Вейденбаум, Путеводитель по Кавказу (Կովկասի ճանապարհորդական ուղեցոյց), Թիֆլիս, 1888, էջ 341. Նաեւ՝ Բարխտարեանց, էջ 127:

Որ ի մերձ տրայ է (Դերբենդի - Գ.Ա.) Ղուպայ ...այժմն Ռուսաց տերութեանն է: Եւ բազում զօրջ Ռուսաց անդ է, եւ Ղուպայ քաղաքս է ի մէջ անտառաց, որ ուսկորէն ասնն ծառոտ: Եւ ձեւ քաղաքիս ունի բոլորակ, որպէս տեսանես ի դիմաց ...եւ ի միջոյ քաղաքին գետ մի փոքրագոյն անցանէ, որ իջանէ ի սարէն եւ երթայ խառնի ի ծովն Կասպից: Եւ է հողն Ղուպաու առողջ, եւ բնակեալքն արեստատր...¹⁶:

1850 Օգոստոսի վերջերին Ղուբա այցելած Սարգիս արք. Զալալեանցը համառօտակի նկարագրել է քաղաքի տեղագրութիւնը վերաբերեալ. «*է սա մինն ի շահաստան քաղաքաց աշխարհին Աղուանից, շինեալ յեզր Ղուբաիար գետոյ, որ ելանէ ի ձիւնախաղաղ լեռանց Կովկասու...*»¹⁷:

1806ին Ղուբան գրատուել է ռուսների կողմից, իսկ 1813ի Հոկտեմբերի 12ի Գիլիստանի պայմանագրով ամրագրուել է Ղուբայի գաւառի միացումը Ռուսաստանին¹⁸: Ժամանակի ընթացքում քաղաքը բաական ընդլայնուել է, եւ ամբողջութեամբ ընդգրկել գետի աջ եւ ձախ ափերը: Գետից ձախ՝ հիսիսային ափին, գտնուում է հրէական մերձքաղաքային «Ջիուտներ»¹⁹ կամ «Հրէական Սլորոդա»²⁰ քաղաքամասը²¹: Ղուբայից Մշակին յղած թղթակցութեան մէջ Մելքոն Սալամբէկեանը գրում է. «*Հրեաները այստեղ կղզիացած են քաղաքի մի կողմում, Ղուբա գետակի հիսիսային ափում: Ապրում են խիտ. Տընակները մեծ մասամբ փայտաշէն խրճիթներ են, եւ իրար վրայ կոտրակոտած. մէկի տան կրտուրը միսի տան բնակչի համար սրահ է կազմում*»²²:

Ղուբան բազմազգ քաղաք էր: Բաղաքի հիմնական բնակիչներն էին հայերը, կովկասեան թաթարները, հրեաները²³, լեզգիները, ռուսները եւ թաթերը: Բնակուում էին նաեւ փոքրաթիւ վրացիներ, գերմանացիներ, յոյներ

¹⁶ «Տէր Բաղդասար Գասպարեան Շուշեցի. "Օտղկաքաղ աշխարհացոյց"», տպագրութեան պատ.՝ Յ. Քիւրտեան, *Բանբեր Մարենաղաքաւսի* 1969:9, էջ 292-93:

¹⁷ Մ. Զալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ*, ի տպարանի Ներսէսեան հոգեւոր դպրոցի հայոց, Տիփլիս, 1858, էջ 422:

¹⁸ А. Берже, "При-Каспийский край," (Մերձկասպեան երկրամաս), 1857ի Կովկասեան օրացոյց, Թիֆլիս, 1856, էջ 278:

¹⁹ Ա., «Նամակ Ղուբայից», *Մշակ*, 24 Փետրոարի 1888:

²⁰ 1926ից՝ Կարմիր Սլորոդա:

²¹ Константинов, էջ 334. նաեւ՝ Е. Вейденбаум, էջ 340:

²² Մ. Ա. [Մելքոն Սալամբէկեան], «Նամակ Ղուբայից», *Մշակ*, 16 Ապրիլի 1896: Նշենք, որ ներքին գործոց նախարարի հրամանով հրեայ տանտէրերին արգելուած էր մասնակցելու քաղաքային վարչութեան գործերին (*Արձագանք*, 5(17) Յունուարի 1897):

²³ Ղուբայում 1851ի տունալներով հրեաների թիւը 2810 (1513 ար., 1297 իգ.) էր (Константинов, էջ 338), 1904ին՝ 7451 (3911 ար., 3540 իգ. (1907ի Կովկասեան օրացոյց, Թիֆլիս, 1906, օտ. (քաժին) II, էջ 321), 1916 Յունուարի 1ի դրութեամբ՝ 14,713 (7757 ար., 6956 իգ.) 1917ի Կովկասեան օրացոյց, Թիֆլիս, 1916, էջ 181:

եւ օսեր²⁴: Գետի աջ մասի բարձրութեան վրայ կողք-կողքի ապրում էին հայերն ու ռուսները, իսկ ստորին մասում՝ սուննի եւ շիա մահմեդականները²⁵: Քաղաքի տարբեր թաղերը, այդ թւում եւ հրեաներինը, առանձնացած լինելով խմբում հանրութիւններով, միմեանց հետ կապում էին կենտրոնական ճանապարհով՝ Կուդիալ գետի վրայ 1894ին կառուցուած կամարակապ, 275 մ երկարութեամբ եւ 8 մ լայնութեամբ 14 թօխքանի կամրջով:

Քաղաքի հայկական թաղը միաներից ուշագրաւօրէն տարբերում էր իր բարբերով, կենցաղով ու կեցուածքով, որով շեշտում էր քաղաքի բազմամշակութային նկարագիրը: Կասպից ծովի արեւմտեան ափերը հետագօտող գերմանացի բժիշկ, Սանկտ Պետերբուրգի Կայսերական Ակադեմիայի իսկական անդամ Սամուիլ Գոտլիբ Գմելինը 1768 Յուլիսին այցելելով Ղուբա, ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում հայերի մասին. «Գետի միա կողմում, մերձակայ քաղաքին, կան միջանի հայկական տնակներ, որոնցից մէկը կարճ ժամանակով յարկացուեց ինձ»²⁶:

ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍԱԿԸ

Ղուբա քաղաքի հայկական կեանքը սկիզբ էր առել նրա հիմնադրման ժամանակներից: Հնաբնակ հայերից բացի՝ երկրամասում հայ բնակչութեան յետագայ հաստատումը շարունակուել է ԺԱ. դարի երկրորդ կէսից սելջուկ-թուրքերի եւ ԺԳ. դարում մոնղոլ-թաթարների աղէտաբեր արշաւանքների հետեւանքով Հայաստանից ուղի ունեցած արտագաղթերի հաշուին: Սելջուկ-թուրքերի նուաճումների ժամանակ Անիի հայ բնակչութեան մի ստուար զանգուած կասպեան ուղիներով հեռացել եւ հաստատուել է Մերձվոլգեան Շրջաններում՝ Աստրախան, Սարայ, Կազան, իսկ մոնղոլ-թաթարների կողմից Անիի գրաւումից յետոյ նոյն ճանապարհով անեցիների մի այլ հատուած հաստատուել է Վոլգեան Բուլղարիայում²⁷: Անիից դէպի հիւսիս գնացող գաղթականութեան՝ Կասպից ծովի արեւմտեան ափագծի երկայնութեամբ սփռուելու մասին ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում ԺԷ. դ. տաղասաց Մարտիրոս Ղրիմեցին (Կաֆացի) իր *Պատմութիւն Ղրիմայ յերկրի, արարեալ Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցոյ ուրանատր չափով* (1672) տեղեկագրութեան մէջ, որը բաականաւաչափ լոյս է սփռում այս խնդրի վրայ: Իր հաղորդումից յայտնի է դառնում, որ Անիի Բագրատունեաց Թագաւորութեան անկումից (1045) եւ մոնղոլների կողմից Անին գրա-

²⁴ Կովկասեան օրացոյց *на 1907 г.*, օրդ. II, էջ 321:

²⁵ Բարխուտարեանց, էջ 127:

²⁶ С. Гмелин, *Путешествие по России для исследования трех царств естества* (Ճանապարհորդութիւն Ռուսաստանում երեք թագաւորութիւնների բնութիւնը ու սումնասիրելու համար), *մաս 3*, Սանկտ Պետերբուրգ, 1785, էջ 49:

²⁷ Ա. Աբրահամեան, *Համասօր ուրուագիծ հայ գաղթականութեան պատմութեան հիւր. Ա.*, «Հայպետհրատ», Երեւան, 1964, էջ 123-124:

ելուց (1236) յետոյ անեցիները թողնելով իրենց քնորբանը, Ջուղա, Վան եւ այլ վայրեր գաղթելուց բացի, «անցանեն ընդ ծովամբն Կասպիական»²⁸:

Վերոնշեալ աղբիւրներին յացնելու է գալիս Ղուբայի հայութեան պատմութեան եւ դարատր ընթացքի գիտական լուսաբանման ասպարէզում մեծ ներդրում ունեցած հեղինակներից՝ Ներսէս Սարումեանը²⁹: Հեղինակը, որ քաջատեղեակ է եղել Ղուբայի գաառի հայութեան պատմական իրողութիւններին, *Մեղու Հայաստանի* լրագրում Ղուբային եւ շրջակայ հայկական գիւղերին վերաբերող իր յօդուածները հրատարակել է ղուբացի հնաբնակների յոսայի վկայութիւնների հիման վրայ: Նա գրում է. «*Ասանդութիւնը կը պարմէ թէ տըա (Ղուբայի, Քիլվարի, Խաչմասի եւ Ղարաջալիի հայերը - Գ.Ս.) Անի քաղաքէն գաղթած են այս տեղ եւ եղած են անյի քան վեց հարիւր տուն...*»³⁰: Սոյն փաստարկները թում են համոզիչ, որոնց դժուար է առարկել: Ի յաւելումն այս ամէնի, անեցիների՝ Ղուբայի գաառում եւ կից շրջաններում, ինչպէս նաեւ Հիւսիսային Կովկասում հաստատուելու մասին հաստատում է նաեւ ազգային գործիչներից Յովակ Ստեփանեանը՝ իր կողմից անելացնելով որոշ մանրամասներ. «*Արմաւիր, Ղզլար, Մոզդոկ, Վլադիկաւկազ, Գրոզնի, Պիափիզորսկ, Կիսլատոլսկ, Դերբենս, Պետրոզվսկ, Ղուբա, ապա Բարու, Շամախի, Նուխի եւ այլ տեղերում ապրում են փասնեակ հազարատր հայեր, որոնք դարերի ընթացքում արտագաղթի են ենթարկուել քաղաքական եւ փոփոսական պատճառներով Անիի շրջանից*»³¹:

ՍԵՐՏ ԿԱՊԵՐ ՄԱՅՐ ՀԱՅԷՐԵՆԻՔ/ՇՆՆԴԱՎԱՅՐԻ ՀԵՏ

Շիրվանահայերը, այդ թում նաեւ Ղուբայի հայերը սերտ կապերի մեջ են գտնուել մայր Հայրենիքի հետ: ԺԸ. դարի վերջերին Շիրվանի հայաբնակ վայրերի, այդ թում նաեւ Ղուբայի հայերի՝ համահայկական ձեռնարկումների մասնակցութեան մասին տեղեկանում ենք Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսի (կթղ. 1780-99)՝ Շամախիի հայոց թեմ ուղարկած շրջաբերականներից: Հրատարակուած նիւթերում հետաքրքրական տեղեկութիւններ կան այն մասին, որ Ղուբայի հայութիւնը եւս հարկ եղած դէպքում օգնութեան ձեռք է մեկնել նեղութեան մեջ յայտնուած եկեղեցիներին: Այսպէս, 1783ին Գորի քաղաքի Ս. Ստեփաննոս եկեղեցու այրուելու պատճառով կրած վնասները վերականգնելու նպատակով Կարնեցին նոյն թուականի Ապրիլի 1ին Շամախիի հայոց թեմ յղած ժողովարարական կոնդակով ի

²⁸ Ա. Մարտիրոսեան, *Մարտիրոս Ղրիմեցի (ուսումնասիրութիւն եւ քննադիր)*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 145:

²⁹ Իդէպ, Սարումեանը Մոսկուայում կազմակերպուած ցուցահանդէսում շերամապահութեան համար արժանացել է բրոնզէ մեդալի (Համբո, «Մոսկուայի աշխարհանդէսում պարզել ստացած հայերը», *Արժագանք*, 17 Հոկտեմբերի 1882, էջ 538):

³⁰ *Մեղու Հայաստանի*, 16 Հոկտեմբերի 1871:

³¹ Յ. Ստեփանեան, «Մօտիկ անցեալէն», *Հայրենիք*, Պոստոն, ԽԲ տարի, Մայիս 1964:5, էջ 45:

թիա ռուսահայոց թեմերի, հայցում էր նաև շիրվանահայերի օգնությունը. «...ի յօրինեալ երկիրսդ եւ ի քաղաքսդ՝ ի Դարբանդ, ի Ղախ (Կախ ասան - Գ.Ս.), ի Բաքու, ի Ղուպա եւ ի բոլոր երկիրդ Շրուանու՝ ի Նուխի, ի Շամախու եւ յայլ շրջակայս դոցին... վասն Գօրու սուրբ Սրբեփաննոս եկեղեցոյն օգնութիւն առնելոյ...»³²:

Կարնեցիին 1791 Փետրուարին Շամախիի հայոց թեմ յղած մէկ այլ կոնդակում էջմիածնին նիւթապէս օգնելու նպատակով պատուիրում էր ստեղծել գանձանակներ եւ հաւաքուած գումարներն առաքել Մայր Աթոռ. «Կոնդակ ի վերայ Շամախու, Նուխու, Ղուպայու, Շիրուանու, Բաքոայ, Դարբանդու, Ղախու եւ շրջակայից մերային ժողովորոցն վասն արդեանց գանձանակացն սրբոյ Աթոռոյս...»³³: Այսպիսով՝ կաթողիկոսի գրութիւնները ոչ միայն պերճախօս վկայութիւնն են այն սերտ կապերի մասին, որ ունէր Մայր Աթոռը Արեւելեան Այսրկովկասի հայաբնակ վայրերի հետ, այլեւ յստակ պատկերացում է կազմում տարեթնիկ այդ տարածքում հնաբնակ հայերի ժՄ. դարի վերջերին տեղաբաշխաւծութեան վերաբերեալ:

Ղուբայի տեղաբնակ հայ բնակչութեան կազմը յետագայ ժամանակներում առանելաբար համալրուել է Արցախից եւ մասամբ նաև Շամախիից եկած վաճառականներով³⁴: Ղուբայի հայ բնակչութեան թուաքանակի, մասնատրապէս՝ առետրական դասի ներկայացուցիչների վերաբերեալ, որքանով մեզ յայտնի է, հայկական աղբիւրներում առաջին ստոյգ տեղեկութիւնը տալիս է Սարգիս արք. Ջալալեանցը, որը Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսի յանձնարարութեամբ եկեղեցական հասոյթները հաւաքելու նպատակով 1850ի ամռանը շրջագայել է Շամախիի հայոց թեմում: Լինելով Ղուբայում եղած ամենահաւաստի ուղեգրողներից մէկը, նա գրում է, որ Ղուբայում նախապէս բնակութիւն է հաստատել Լազարեանց շքեղազարդ ազնուականական տոհմի ներկայացուցիչ, թիֆլիսեցի վաճառական, նահանգային քարտուղար, Սոնեփանոս Անդրէասի Լազարեանցը, որն իր հետ բերել էր նաև այլ վաճառականներ եւ որպէս յուսադրութեան նշան՝ կառուցել առաջին սեփական շինութիւնը. «...ժողովեալ է աստուծոյ զբանի մի փունս Հայոց եւ ի յուսադրութիւն նոցա զառաջինն կառոյց զմեծաշէն փունս եւ զկրպակս վասն իւր»³⁵: Նրա յորդորով քաղաքում յետագայում հաստատուել է եւս 35 տուն հայ³⁶:

³² Դիւան հայոց պարմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հրք. Ա. (1780-1785), աշխատ.՝ Վ. Գրիգորեան, 1984, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Երեւան, էջ 357:

³³ Դիւան հայոց պարմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հրք. Բ. (1786-1792), աշխատ.՝ Վ. Գրիգորեան, ՀԱՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 2003, էջ 591:

³⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 2-3:

³⁵ Ջալալեանց, Բ. մաս, էջ 423:

³⁶ Նոյն:

Ստեփանոս Լազարեանցի եւ նրա եղբոր՝ առաջին գիլղիայի³⁷ վաճառական Յովհաննէսի միջոցներով 1845ին Մոսկոյայի հայկական Ս. Աստուածածին եկեղեցու տիպօրինակով³⁸ հայկական թաղի մէջ հիմնարկում է աղիաաշէն, ոսկեզօծ խաչով համանուն եկեղեցին³⁹ (աւարտին է հասցունել 1849ին)⁴⁰: Ռուս նշանատր արեւելագէտ, Կազանի եւ Պետերբուրգի համալսարանների պրոֆեսոր Իլիա Բերիոզկինը 1845ի ամռանը գիտական ճանապարհորդութեան ընթացքում Ղուբայում գտնուելու ժամանակ հայերի մասին եւս տալիս է բնութագրական տեղեկութիւններ: Ըստ նրա, հայերն ունեն մէկ եկեղեցի⁴¹:

Բերիոզկինի տուեալներով՝ նոյն թուականին Ղուբան ունէր 2000 բնակիչ, 600 տուն⁴²: Ուշադրութեան արժանի են հեղինակի գրառումները Ղուբայում տնաշինական սկզբունքների, պահպանուած բերդապարիսպների տպատրիչ հատուածների վերաբերեալ: «*Հետոյց,-* գրում է նա,- *Ղուբան շար նման է քաղաքի, ընդ որում՝ գեղատեսիլ քաղաքի, ոլոր-մոլոր ճանապարհի երկայնքով կահատրուած ամփիթապրոն սարով... Գետի մերձակայ ափին կան փներ եւ քարքեր գոյների փակներ...: Քաղաքը ներկայացնում է որոշակի պատկեր, որը ցամաքային կողմում սահմանափակում է աղիաէ պապով, որն անփ շքեղ գեղեցկութեան համար պատրուած է կատով. պատրի անկիւններում կառուցուած են բաստիոններ: Փողոցները զարդարուած են զարմանալի արուեստով, այնպէս որ Ղուբայում թերեւս անփ*

³⁷ Վաճառականների կարգ՝ իին Ռուսաստանում:

³⁸ Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семенов (ГССРИ) (Ռուսական Կայսրութեան աշխարհագրական-վիճակագրական բառարան), հորր. Բ., Սանկտ Պետերբուրգ, 1865, էջ 812:

³⁹ Ջալալեանց, էջ 423. նաեւ՝ Մ. Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտարեղեաց եւս եւ քաղաքացւ եւ գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի*, տպ. Մովսէս Վարդանեանցի, Տփլիս, 1896, էջ 538. նաեւ՝ Թափառական Վահան Ճարակեան]. «Ղուբա քաղաքի հայերը (հայերի թին ու նրանց զաղթը, պարապմունքն ու բնոյթը, եկեղեցին ու դպրոցը)»: *Արծազանք*, 15 Մարտի 1896: Նշուած է Շամախու հայոց թեմում 1916ին գործող եկեղեցիների ցանկում (ՀԱՍ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 61): Եկեղեցու հիւսիսային դռան մօտ ամփոփուած է եղել Ստեփանոս Լազարեանցը: Մահացել է 1852 Օգոստոսի 25ին՝ 63 տարեկանում (Բարխուտարեանց, էջ 128):

⁴⁰ Константинов, էջ 338: Երկար տարիներ եկեղեցում հովուել է ծնունդով Սինիցի Կապանի շրջանի Չափնի գիլղից Գրիգոր քին. Մելիք-Դադայեանցը: Մահացել է 1873 Ղեկտեմբերի 13ին՝ 83 տարեկանում: Թաղուել է եկեղեցու հիւսիսային դռան մօտ (Բարխուտարեանց, էջ 129):

⁴¹ И. Березин, Путешествие по Дагестану и Закавказью, Казань (ч. IV. От Кубы до Баку), (Ճանապարհորդութիւն Այրլովկասում եւ Դաղւստանում, մաս Դ. Ղուբայից-Բարու), Կազան, 1849, էջ 178:

⁴² Նոյն:

դիպրին է ճանապարհ գտնել, քան թե Լոնդոնում»⁴³: Բերիզինը միաժամանակ նշում է, որ այք են շոյում արեւելեան ապրանքներով լեցուն բազմաթիւ կրպակները⁴⁴:

Ջալալեանցից յետոյ Ղուբայի հայերի թուաքանակի վերաբերեալ վիճակագրական տուեալներ են արձանագրուած *Кавказский Календарь* տարեգրքում կովկասագետ Վ. Կոնսանտինովի հեղինակութեամբ հրատարակուած «Ղուբա» արժէքատր ուսումնասիրութեան մէջ: Ըստ այդմ, 1851ի տուեալներով՝ քաղաքն ունէր 43 (32 ար., 11 իգ.) հիմնական եւ 150 (ար.) ժամանակատր հայ բնակիչ⁴⁵: Արխիային մի վաւերագրի վկայութեամբ՝ 1853ին քաղաքի հայ բնակչութիւնն ունեցել է 14 տուն⁴⁶: 1856ին հայ հոգեւորականների թիւը 9 (5 ար., 4 իգ.) էր⁴⁷: 1861ին հայապատկան տների թիւն արդէն հասել է 90ի⁴⁸: Ղուբայի հայութիւնը լետագայում համալրուել է Շամախիում 1859ին եւ 1872ին տեղի ունեցած երկրաշարժերի հետեանքով⁴⁹: Շամախու հայոց թեմի առաջնորդ Սահակ վոյ. Միքայիլեանը, 1875ի վերջերին այցելով Ղուբա, քաղաքի հայերի մասին գրում է. «Հայ ժողովրդականք Ղուբայու, յորոց բնիկք թէ արականք եւ թէ իգականք են քառասուն եւ վեց...»⁵⁰:

Ղուբան գտնուելով առեւտրական բանուկ ճանապարհների խաչադիմերում, իր աշխարհագրական ու տնտեսական բարենպաստ կացութեան շնորհիւ դեռեւս վաղ միջնադարից համարում էր Այսրկովկասի վաճառաշահ, համաբաւած կենտրոններից մէկը եւ մերձկասպեան երկրամասի քաղաքակրթական համակարգում այքի է ընկել իր բաւական կենսունակ տնտեսութեամբ, ներքին ու արտաքին առեւտրի ընձեռած հնարատուութիւնների եռուզեռով՝ որպէս հարուստ եւ արագ զարգացող գիւղաքաղաք:

Ղուբայի տարածքը թէեւ լեռնային է, բայց իր փոքրիկ առանձին հարթութիւնները օգտագործում էին երկրագործութեան համար⁵¹: Տիպիկ արե-

⁴³ Նոյն, էջ 170, 175-76:

⁴⁴ Նոյն, էջ 178:

⁴⁵ Константинов, էջ 338:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 104:

⁴⁷ "Статистическая свещения о Дербентское губернии." (Վիճակագրական տեղեկութիւններ Դերբենդի նահանգի վերաբերեալ), 1857ի Կովկասեան օրացոյց, էջ 350:

⁴⁸ Ամբատեանց, էջ 138:

⁴⁹ Բ. Ալվազեանց. «Նամակ Շամախուց», *Արձագանք*, 16 Յունուարի 1883, էջ 39):

⁵⁰ Սահակ վարդապետ, «ի Շամախույ», *Արարար*, 1876-Ա, էջ 33:

⁵¹ И. Гербер. Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г. («Կապից ծովի արեւմտեան ափի երկայնքով գտնուող երկրների եւ ժողովուրդների նկարագրութիւն»), 1728՝ *История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы*, (Դաղստանի պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ ազգագրութիւնը 18-19րդ դդ.: Արխիային նիւթեր), խմբ.՝ Մ. Կուվէն, Խ. Խաշաեւ, Մոսկուա, 1958, էջ 107:

ւելեան քաղաքակրթութեամբ այդ գաւառական քաղաքում հայերն ու պարսիկները միաժամանակ զբաղուել են ե՛ւ երկրագործութեամբ, ե՛ւ առետրով, ե՛ւ արհեստագործութեամբ⁵²: Շրջիկ մանր առետրով են զբաղուել հրեաները⁵³, իսկ լեզգիները՝ մեղրաբուծութեամբ⁵⁴: Ըստ այդմ 1856ին քաղաքն ունէր 27 առետրական եւ 61 հայ արհեստատր⁵⁵: Վերջիններս զգալի աշխատանք են կատարել քաղաքի կառուցապատման համար:

Յատկանշական է որ հայ առետրական դասն իր առանձնայատուկ տեղն ունէր քաղաքի ապրանքաշրջանառութեան բնագաւառում եւ դարձել էր Ռուսաստանի եւ արեւելեան մի շարք երկրների միջեւ առետուրն ապահովող հիմնական օղակներից մէկը, որով եւ նպաստում էր Ղուբայի ընկերատնտեսական բուռն զարգացմանը: Իրասմբ, հայ վաճառականների ձեռքին էր կենտրոնացուած յատկապէս մանածագործական արտադրութեան վաճառականութիւնը: Այդ մասին է վկայում *Արծազանք* լրագրում տեղ գտած հետեւեալ տեղեկութիւնը. «...քաղաքի ամբողջ վաճառականութիւնը կենդրոնացած է հայերի ձեռքում, շարքիչ հայեր կան, որոնք փարեկան մի երկու անգամ Մոսկոսա եւ մի անգամ Նիժնի-Նովգորոդի փոնավաճառը չգնան ապրանք բերելու...»⁵⁶:

Արժեքատր այս տեղեկութիւնը թոյլ է տալիս եզրակացնելու, որ Բաքուի նահանգի, մասնատրապէս Ղուբայի հայ առետրականներն արդէն մերձկասպեան շրջաններով եւ Կասպից ծովով անցնող առետրական ուղիներով ամանդական կապեր ու յարաբերութիւններ ունէին Ռուսաստանի առետրական խոշոր կենտրոնների հետ: Հայ վաճառականներն ապրանքափոխադրումները հիմնականում կատարում էին Ղուբայից 45 վերստ⁵⁷ հեռաւորութեան վրայ գտնուող Նիազաբադ ծովեզրեայ գիղաքաղաքի նաւահանգստից⁵⁸: Իսկ առետրական շրջանառութեան մէջ ներգրատուած հիմնական ապրանքներն էին նոյր մետաքսը, բրդէ-բամբակեայ տարատեսակ գործուածքեղէնը:

Յիրաւի, Ղուբան դարձել էր հայկական դրամագլխի կարետր յենակետերից մէկը Բաքուի նահանգում:

⁵² Статическая сведения о Дербентское, էջ 350. նաեւ՝ Սմբատեանց, էջ 537:

⁵³ Ա., «Նամակ Ղուբայից», *Մշակ*, 27 Փետրուարի 1888:

⁵⁴ *KK* *на 1914 г.*, Թիֆլիս, 1913, էջ 111:

⁵⁵ Статическая сведения о Дербентское, էջ 350:

⁵⁶ Թափառական:

⁵⁷ Ռուսական հին չափ, հաւասար է 500 սաժէնի կամ 1 կմ.ից քիչ ւելի:

⁵⁸ Вейденбаум, էջ 341. նաեւ՝ Փ. Соймонов, Описание Каспийского моря и чиненных на ономъ Россійскихъ завоеваний (Կասպից ծովի նկարագրութիւնը եւ նրա նկատմամբ ունեցած Ռուսական նուաճումները), Սանկտ Պետերբուրգ, 1763, էջ 38:

Ղուբայում զարգացած է եղել յատկապես տորոնի⁵⁹ մշակումն ու առետորը: Կապուած տորոնի եւ առետրաարդիւնաբերական այլ ապրանքների առետրի աշխուժացման հետ՝ քաղաքում մեծ թիւ էին կազմում նաեւ ժամանակատր բնակութիւն հաստատած հայ ընտանիքները, որոնց զգալի մասը յետագայում այստեղ մշտական բնակութիւն հաստատեց⁶⁰: «Թափառական» ստորագրութեամբ հեղինակը, 1896 Մարտի սկզբներին լինելով Ղուբայում, Արծազանքին յղած թղթակցութիւնում գրում էր. «...տորոնի առետրորի ծաղկելով՝ գալիս են այսպէղ բաականին թոռով թիֆլիզեցի, ղարաբաղցի եւ շամախեցի հայ դրամապէրեր, որոնցից շարերը բերելով իրանց ընտանիքները՝ մշտապէս հաստատում են քաղաքում...»⁶¹: Վերջիններիս օրինակին էին հետեւել նաեւ ազովեցի հայ դրամատէրերը⁶²: Ղուբայի հայ տորոնավաճառները կարմիր ներկի համար տորոն էին մատակարարում ռուսական եւ եւրոպական արդիւնաբերութեան⁶³: Հայերի շրջանում զարգացած էր նաեւ գորգագործութիւնն ու մետաքսագործութիւնը: Քաղաքում մետաքսի կապալառուներ էին Լազարեան եղբայրները, Ա. Տէրղուկասեանը, Յովհ. Միրզոյեանը եւ այլք⁶⁴:

1884ի տուեալներով՝ քաղաքն ունէր մօտ 100 հայ ընտանիք, որոնք «յայտնի էին քաղաքին իրենց համեստ եւ խաղաղակեաց բնատրութեամբ»⁶⁵: 1886ին 13,917 (7784 ար., 6133 իգ.) ազգաբնակչութիւնից հայերի թիւը 833 էր (531 ար., 302 իգ.)⁶⁶, որից տեղաբնիկներ՝ 585 (293 ար.,

⁵⁹ Իդէպ, երկար տարիներ Ղուբայում տորոնի առետրով է զբաղուել նաեւ Ալեքսանդր Շիրվանզադէի հայրը՝ Մինասը: Իր յուշերում Շիրվանզադէն գրում է, որ իր հայրը սկզբում դերձակ էր, սակայն շուտով ղէն նետեց ասեղը՝ միանալով շամախեցի բազմաթիւ «տորոնչիներին» խմբին, որոնք կարմիր ներկի համար տորոն էին մատակարարում Մոսկուայի, Մարսէլի ու Մանչեստրի մանածագործական ձեռնարկատէրերին (Ալ. Շիրվանզադէ, «Իմ կեանքից», Հասկեր, 1910:11, էջ 322):

⁶⁰ Ա. Քալանթար, «Պանդխտութիւնը մեզանում», Մտործ, 1890:11, էջ 1537:

⁶¹ Թափառական:

⁶² Լոյն:

⁶³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 70:

⁶⁴ Խ. Դադայեան, «Հայոց առետրատնտեսական ներկայութիւնը Թիֆլիսում (ուշ միջնադար – 1918 թ.)», 21-րդ դար, 2008:1(19), էջ 129:

⁶⁵ Լոր-Ղար, 6 Ղեկտեմբերի 1884:

⁶⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Бакинской губернии (Այսրկովկասի երկրամասի բնակչութեան վիճակագրական տուեալների հաւաքածու քաղաածու Քարոնի նահանգի 1886ի ընտանեկան ցուցակներից), Թիֆլիս, 1893 (ա. է.). նաեւ՝ Մտործ, 1896, էջ 1388:

292 իզ.)⁶⁷: 1889ին հայերը քաղաքում ունեին 160 տուն⁶⁸, 1890ին՝ 200 տուն՝ 750 բնակչով (400 ար., 350 իզ.)⁶⁹:

1896 Դեկտեմբերի 11ին քաղաքի հայ բնակչութիւնը համալրուել է Արդու Համիդի կազմակերպած կոտորածներից մազապուրծ վանեցի գաղթականներով, որոնք Վանի մերձակայ Խոշաբ գիւղից էին, 5 ընտանիք (թոտով 18 հոգի, 5 տղամարդ, 5 կին և 8 դեռահաս երեխայ)⁷⁰: 1897 Յունուարի 28ի (հին տոմարով) համառոտաստանեան առաջին մարդահամարի տուեալներով՝ քաղաքի 15,363 (8160 ար., 7203 իզ.) ազգաբնակչութիւնից հայերի թին արդէն 807 էր (446 ար., 361 իզ.)⁷¹: Քաղաքի հայ բնակչութիւնն իր թուաքանակով չորրորդն էր կովկասեան թաթարներից՝ 7134 (46%), հրեաներից՝ 3775 (24,6%) և թաթերից՝ 2437 (16%) յետոյ⁷²: 1900ի տուեալներով՝ քաղաքի 15,346 (8113 ար., 7233 իզ.) ազգաբնակչութիւնից հայ էր 818ը (390 ար., 420 իզ.)⁷³: 1904ի դրութեամբ՝ բնակչութեան թոտով հայերը երրորդն էին կովկասեան թաթարներից և հրեաներից յետոյ⁷⁴: 1914ի Յունուարի 1ի դրութեամբ՝ 12,930 (5580 ար., 7350 իզ.) ազգաբնակչութիւնից հայ էր 784ը (384 ար., 400 իզ.)⁷⁵, 1916 Յունուարի 1ի դրութեամբ՝ 26,956 (13,685 ար., 13,271 իզ.) ազգաբնակչութիւնից՝ 579ը (278 ար., 301 իզ.)⁷⁶: Հայ բնակչութեան թուի կտրուկ նուազումը հիմնականում կապուած էր Ա. աշխարհամարտի հետ, երբ հայ երիտասարդութիւնը զանգոռածաբար զո-

⁶⁷ Հայկունի [Եղիշէ Ա. քին. Գեղամեանց], «Թիֆլիսից մինչև Շամախի», *Մեղու Հայաստանի*, 8 Փետրորարի 1886:

⁶⁸ Ամբատեանց, էջ 537:

⁶⁹ Քարխոտարեանց, էջ 128. նաեւ՝ Թափառական:

⁷⁰ *Մշակ*, Թիֆլիս, № 146. 14 Դեկտեմբերի 1896. նաեւ՝ Արտազ [Տիգրան քին. Վարդանեան], «Ղուբա», *Արձագանք*, 15(27) Դեկտեմբերի 1896:

⁷¹ *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897. LXI-Бакинская губерния* (Բուսական Կայսրութեան բնակչութեան առաջին համընդհանուր մարդահամարը, 1897. LXI-Քարուի նահանգ, (այսուհետ՝ ПВПНРИ-1897), խմբ. Ն. Ա. Տրոյնիցկի, Սանկտ Պետերբուրգ, 1905, (աղիսակ XIII, էջ 53):

⁷² Նոյն, էջ 52-53: Ըստ 1897ի մարդահամարի՝ Ղուբայի գաաղի (ներառեալ քաղաքը) էթնիկ կազմն ունէր հետեւեալ պատկերը. թիւրքալեզու էթնիկ խմբեր՝ 70,366, լեզգիական խմբի լեզուներով խօսող ժողովուրդներ (թուաքանակով գերազանցել են կիլիկները)՝ 56,476, թաթ՝ 46,430, հրեա՝ 3972, ռուս՝ 3971, հայ՝ 1191, պարսիկ՝ 549, վրացի՝ 66, լին՝ 64, գերմանացի՝ 38 (ПВПНРИ-1897, таблица XIII, էջ 53):

⁷³ Сборник статических сведений по Закавказскому краю, под редакцией Е. Кондратенко, ч. I (այսուհետ՝ СССРЗК), (Այրկովկասի երկրամասի վերաբերեալ վիճակագրական տեղեկատուութեան ժողովածու մաս Ա), խմբ.՝ Ե. Կոնդրատենկո, Թիֆլիս, 1902, էջ 278. նաեւ՝ Մ. Մինասեան, «Տեղեկագիր 1900 թ. (Դ), Շամախու թեմ», *Արարար*, 1902:Բ, էջ 144:

⁷⁴ *KK* на 1907 г., 01 д. II, էջ 321:

⁷⁵ *KK* на 1915 г., Թիֆլիս, 1914, էջ 221, 219:

⁷⁶ *KK* на 1917 г., Թիֆլիս, 1916, էջ 181, 179:

րակոչուեց բանակ: Դրան զուգահեռ՝ գրեթե անփոփոխ էր մնացել թաթար բնակչութեան թիւը: Պատճառն այն էր, որ ցարական կառավարութիւնը, որպէս անբարեյոյս տարր, վերջիններիս չգորակոչեց: Ղուբայում հայերի թուի տատանումները պայմանաւորուած էին նաեւ այն հանգամանքով, որ քաղաքը, լինելով առեւտրական կենտրոններից մէկը, տարբեր ժամանակներում ազգաբնակչութեան կազմով նոսազում կամ աճում էր՝ ի հաշիւ ժամանակատար բնակութիւն հաստատած վաճառական եւ ինքնագործ հայերի:

Քաղաքում գործել են հայկական ծխական արական (հիմն.՝ 1870⁷⁷, հիմնադիրն էր շուշեցի Պօղոս Ալեքսանեանցը)⁷⁸, իգական (հիմն.՝ 1872⁷⁹ եւ հայոց եկեղեցական ծխական երկսեռ (հիմն.՝ 1888)⁸⁰ դպրոցները: Ընդհանրապէս ինչպէս Ղուբայի, այնպէս էլ գաատի հայկական գիւղերի ազգային դպրոցների կայացման մէջ իր գործուն մասնակցութիւնն էր բերում Շամախու հայոց թեմը՝ ի դէմ թեմական առաջնորդներին: Չորօրինակ, իգական դպրոցի երկյարկ շէնքը կառուցել էր թեմի առաջնորդ Մետրոպ աքք. Սմբատեանցը⁸¹: 1888ին երկսեռ դպրոցի աշակերտների թիւը 73 էր (13 աշակերտուհի, 60 տղայ)⁸², 1896ին՝ 85⁸³: Դպրոցն ունեցել է սեփական շինութիւն, որը նուիրաբերել էր դուքացի բաքուաբնակ առեւտրաարդիւնաբերող Աբել Ստեփանեանցը⁸⁴: Տարբեր տարիներին ասագ ուսուցիչներ են եղել շուշեցիներ Սմբատ Ղալաբէգեանցը⁸⁵, Խաչատուր քնյ. Փանեանցը⁸⁶, Աազ քնյ. Աւարեանցը եւ Բազարատ Եղոլութեանը⁸⁷: Դպրոցի դասնւիթթերն էին հայոց լեզու, կրօն, երգեցողութիւն, վայելչագրութիւն (հայոց եւ ռուսաց լեզուների), ռուսաց լեզու եւ թուաբանութիւն⁸⁸: Դպրոցն ունեցել է նաեւ ուսուցիչներից բաղկացած իր թատերական խումբը, որի ներկայացումներից ստացուած գումարը տրամադրուել է դպրոցի ֆոնդին⁸⁹: Դպրոցում պարբերաբար կազմակերպւում էին միջոցառումներ հայ մեծերին

⁷⁷ Ա. Խուղոյեան, *Արեւելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրութիւնը յանկելալ մատրամասներով)*, «Լոյս» հրատ., Երևան, 1987, էջ 455:

⁷⁸ *Մեղու Հայաստանի*, Թիֆլիս, № 38, 16 Հոկտեմբերի 1871:

⁷⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5747, թ. 6:

⁸⁰ Բախիշ-բեգ Մարդանեանց, «Տեղեկագիր Ղուբայի եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների հինգ ամսայ հաշիւների (1884-85, 1888-89 ուս. տար.)», *Մուրճ*, 1891:5, էջ 679:

⁸¹ Հայկունի:

⁸² «Տեղեկագիր Ղուբայի», *Մուրճ*, էջ 682:

⁸³ Թափառական:

⁸⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 8:

⁸⁵ Սահակ վարդապետ, էջ 34:

⁸⁶ «Տեղեկագիր Ղուբայի», *Մուրճ*, էջ 683:

⁸⁷ Վիճակագրական տեղեկութիւնը եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց լիւնթացս 1887-88 ուսումնական ամի, Վաղարշապատ, 1889, էջ 107:

⁸⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5747, թ. 1:

⁸⁹ «Տեղեկագիր Ղուբայի», *Մուրճ*, էջ 678:

նուիրում: Ինչպես տեղեկացնում է *Արծազանքը*՝ «...Ապրիլի 28ին, հայ ա-կանաւոր վիպասան Րաֆֆու մահուան ութերորդ փարեցի առթիւ, փռլոյս երիտասարդութիւնը, քաղաքի սուրբ Աստուածածնայ եկեղեցում հանդի-սաւոր պատարագ եւ հոգեհանգիստ կատարել փոքր, որին ներկայ էր հոծ բազմութիւն»⁹⁰: Յաճախադէպ այս իրողութիւններով փաստում է, որ լուսա-տրական գործը Ղուբայում անվիճելիօրէն ստացել էր հանրային բովանդա-կութիւն:

Ղուբայի հայութեան ներհամայնքային կազմակերպութիւններից էր 1908ին Սեպտեմբերի 21ից գործող Կովկասի Հայոց Բարեգործական Ընկե-րութեան մասնաճիւղը (վարչութեան նախագահ՝ թժ. Մ. Տէրմկրտչեան)⁹¹, որն իր հերթին նշանակալիօրէն նպաստում էր լուսատրամշակութային կեանքի առաջընթացին: Այսպիսով՝ Ղուբայի հայութիւնն իր ստեղծագործ աշխա-տանքով եւ գիտամշակութային բարձր մակարդակով ապրում էր ընկերա-տնտեսական եւ կրթամշակութային աշխուժ կեանքով:

ՀԱՅԵՐԸ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արդէն 1840ականների կեսերից հայերը Ղուբայում ազդեցիկ դիրք ունե-ին եւ կարեւոր դերակատարութիւն՝ երկրի հասարակական-քաղաքական եւ տնտեսական կեանքում, ինչպէս նաեւ ռազմական բնագաւառում, որը պատճառաբանուած էր քաղաքում հայ բնակչութեան ունեցած տնտեսա-կան ազդեցիկ դիրքով: Դրա խօսուն վկայութիւն է, որ 1849-51՝ քաղաքա-պետն էր Ղորղանեան հայ ազնուական տոհմի ներկայացուցիչ, շտաբ կա-պիտան Բորիս Չախարի Ղորղանեանը (Ղորղանով-Կորգանով)⁹²: Նրան այդ պաշտօնում 1851-52՝ որպէս պաշտօնակատար յաջորդել է Լէոնտի Գասպարի Եաղութեանը⁹³: Աւելի ուշ շրջանում՝ 1896 Դեկտեմբերին քաղա-քապետ է ընտրուել նաեւ տեղի ազդեցիկ հայերից մեծահարուստ Սերգէյ Բէկ-Աղայեանցը⁹⁴:

Տեղի ազդեցիկ հայերը եւ գործուն մասնակցութիւն են ունեցել քաղաքի կառավարմանը: 11 հոգուց բաղկացած քաղաքային հասարակական վար-չութեան կազմում տարբեր տարիներին քաղաքի մեծահարուստ հայերից ընտրուել են Աւետիս Մարտիրոսեանը, Եղիա Յովհաննիսեանը, Ասատուր

⁹⁰ *Արծազանք*, 10(22) Մայիսի 1896:

⁹¹ *Գործ*, Հոկտեմբերի 1908:

⁹² *KK no 1850* Ե., Թիֆլիս, 1849, օժ. IV, էջ 22. նաեւ՝ *KK no 1851* Ե., Թիֆլիս, 1850, օժ. V, էջ 25: Իդէպ, նա եղբայրն էր նշանաւոր զօրահրամանատար Մովսէս Ար-ղութեան-Երկայնաբազուկի (*KK no 1856* Ե., Թիֆլիս, 1855, էջ 565-81):

⁹³ *KK no 1852* Ե., Թիֆլիս, 1851, էջ 574. նաեւ՝ *KK no 1853*, էջ 527:

⁹⁴ Արտագ [Տիգրան քնն. Վարդանեան], «Ղուբա», *Արծազանք*, 15(27) Դեկտեմբերի 1896. նաեւ նոյնի՝ «Ղուբա», *Արծազանք*, 10(22) Յունուարի 1897:

եւ Յովհաննէս Բողղանեանները⁹⁵, Ղեւոնդ Տէրյովսեփեանը⁹⁶, Մկրտիչ Ամիրջանեանը, Սահակ Բեկլամեանցը⁹⁷, Կոստանդին Մելիքդադայեանը, Աազ Տէրեղիագարեանը⁹⁸, Աւետիս Մարտիրոսեանը, Յովհաննէս Յովհաննիսեանը⁹⁹, Հայրապետ Մելիքդադայեանը¹⁰⁰ եւ այլք:

Հայերը պատասխանատու պաշտօններ են զբաղեցրել նաեւ Ղուբայի գաւառի վարչութիւնում: 1845ին Խազրինի տեղամասի երդունալ ատենակալն էր վերոյիշեալ Բորիս Ղորղանեանը¹⁰¹: Վերջինս 1851-56՝ նոյն պաշտօնը վարել է Շաքրանի տեղամասում¹⁰²: 1850ականների կէսերին գաւառապետ Վասիլի Միշչենկոյի օգնականն էր Եգոր Բողղանի Թաաքալեանը¹⁰³, իսկ 1890ի կէսերին գաւառապետ Ստապանսկիի օգնականն էր Բահրամ-բէկ Գեօզայեանցը¹⁰⁴:

Այսպիսով՝ Ղուբա քաղաքի հայութեան պատմաժողովրդագրական գործընթացների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նշուած ժամանակաշրջանում տեղաբնակ հայ բնակչութիւնը, կազմելով ամբողջ բնակչութեան մի նշանակալի մասը, քաղաքում պահպանում էր ազգային քաղաքակրթական դիմապատկերը, պարոմ էր համախմբուած, ընկերատնտեսական, հասարակական եւ կրթամշակութային աշխուժ կեանքով՝ նշանակալից դեր ունենալով երկրամասի համընդհանուր զարգացման գործում: Սակայն հայ բնակչութեան առաջընթացը խաթարուեց արհեստաձին «Աղբրեջան» վարչաքաղաքական կազմատրման ստեղծումից յետոյ:

⁹⁵ *Նոր-Դար*, 23 Փետրուարի 1902:

⁹⁶ *ԿԿ ռա 1900 շ.*, էջ 178:

⁹⁷ Ա. Բեկլամեանցը ֆինանսական օգնութիւն է ցուցաբերել 1845 Օգոստոսի 17ին վերաբացուած Շուշիի թեմական դպրոցի համար կազմակերպուած հանգանակութեանը (Վ. Բալայեան, *Շուշի. Կրօն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, Երեւան, 2017, էջ 221):

⁹⁸ *ԿԿ ռա 1906 շ.*, Թիֆլիս, 1905, էջ 134:

⁹⁹ *ԿԿ ռա 1913 շ.*, Թիֆլիս, 1912, էջ 116:

¹⁰⁰ *ԿԿ ռա 1914 շ.*, էջ 122. նաեւ՝ *ԿԿ ռա 1915 շ.*, էջ 133:

¹⁰¹ *ԿԿ ռա 1846 շ.*, Тифлис, 1845, էջ 178, տե՛ս նաեւ *ԿԿ ռա 1851 շ.*, отд. V, էջ 25:

¹⁰² *ԿԿ ռա 1852 շ.*, էջ 574. նաեւ՝ *ԿԿ ռա 1857 շ.*, էջ . նաեւ՝ Ю. Асадов, *3000 армянских офицеров царской России. Историко-биографическая книга памяти (1701-1921). В 2-х томах* (Յարական Ռուսաստանի 3000 հայ սպաներ: Պատմա-կենսագրական յիշողութեան գիրք (1701-1921), 2 հատորով), *հրք. 2*, Մոսկուա, 2018, էջ 143:

¹⁰³ *ԿԿ ռա 1853 շ.*, 1852, էջ 527: Հաւանաբար նա ազգային-ազատագրական նշանատր գործից, հայրուկային շարժման առաջին կազմակերպիչներից, ՀՅԴ անդամ դերակննդի Բագրատ վրդ. Թաաքալեանի (Քարի) եղբայրն է կամ մօտ ազգականը:

¹⁰⁴ Բարխուտարեանց. էջ 130:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1918 Յունիսին, Բաքուի դեմ թուրքական արշավանքի ժամանակ, Ղուբայի գաառի հայության վրայ եւս փլուեց կոտորածի արհաւիրքը. թուրք-թաթարական զորքերը կողոպտեցին եւ կոտորեցին գաառի հայութեանը¹⁰⁵: Հայ բնակչության նկատմամբ իրականացուող ոճրագործությունները անմիջականորէն հրահրում եւ խրախուսում էին Ղուբայի գաառական կոմիսար Ալի բէկ Զիգիկսկիի կողմից¹⁰⁶: Բաքուն գրաւելուց յետոյ համաթուրքական ծրագրերը վերջնականապէս ի կատար անելու նպատակով թուրքական 15րդ հետեակային զորագունդը, զօրավար-լէտենանտ Եուսուֆ-Իզզէթ փաշայի հրամանատարութեամբ, 1918 Սեպտեմբերի վերջերին սպանող ու անբ գործելով՝ Ղուբայի վրայով ուղղուեց Հիւսիսային Կովկաս¹⁰⁷:

Ղուբայի վերջին հայերի կոտորածներից յետոյ գաառում զգալիորէն նոսազեց հայ բնակչութեան թիւը: Հայ բնակչութեան թուփ վերաբերեալ տուեալներ են արձանագրուել Ադր. ԽՍՀ-ում 1921 Օգոստոսին անցկացուած գիտատնտեսական վիճակագրութիւնում: Համադրելով հայ բնակչութեան թիւը կոտորածներից առաջ եւ յետոյ՝ ստացում է հետեւեալ պատկերը.- եթէ Ղուբա քաղաքում նախքան կոտորածները հայերի թիւը 500 էր¹⁰⁸, ապա 1921 Օգոստոսի դրութեամբ մնացել էր ընդամենը 9 հոգի¹⁰⁹:

Ադրբեջանական Հանրապետութեան գոյութեան ամբողջ ընթացքում (1918 Մայիսի 28-1920 Ապրիլի 28) գաառներում շարունակաբար իրականացուել է հայահալած քաղաքականութիւն: Փաստերը վկայում են, որ մուսաաթական իշխանութիւնը որդեգրել էր տեղաբնիկ ժողովուրդների (իսայեր, ուրիներ, լեզգիներ, թաթեր, թալիշներ են.) բուն ունացման, էթնիկ զտման, զանգուածային կոտորածների եւ հայրենագրկման ճանապարհով Արեւելեան Այրկովկասի՝ Կուրից մինչեւ Ապշերոնեան Թերակղզի ընկած տարածքում միատարր՝ շիա կովկասեան թաթարներով բնակեցուած «սեփական հայրենիք» ստեղծելու երիտթուրքերի ռազմավարութիւնը: Այլ խօսքով՝ մուսաաթականներն արհեստաձին «Ադրբեջան» կազմաւորման անունից ադրբեջանական ինքնութիւն էին կառուցում այլատեսացութեան, առաջին հերթին հայատեսացութեան յենքի վրայ: Արեւելագէտ Վլադիմիր Խուդաղովի դիպուկ բնորոշմամբ՝ «*Թուրքական ձուլումը տեղի է ունենում*

¹⁰⁵ Политбюро и дело Берия (сборник документов), (Քաղրիւրոն եւ Բերիայի գործը (փաստաթղթերի ժողովածու), ընդի. խմբ. Օ. Բ. Մոզոլսին, Մոսկուա, 2012, փաստ. № 1.158, էջ 589, փաստ. № 2.24, էջ 988:

¹⁰⁶ Ծ. Խ., «Խաչմազի դէպքերը», Արեւ, 10(23) Ապրիլի 1918:

¹⁰⁷ Ա. Յարութիւնեան. Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիւանագիտական պարմութիւնից, «Հայաստան» հրատ., Երեւան. 1983, էջ 283:

¹⁰⁸ Куба. Апрель-май 1918 г., փաստ. № 5, էջ 124:

¹⁰⁹ Закавказье. Советские республики (Статистико-экономический сборник), (Այրկովկաս. խորհրդային հանրապետութիւններ. վիճակագրական-տնտեսական ժողովածու), Թիֆլիս, 1925, էջ 152:

հենց մեր աչքի առաջ, եւ մօտ է այն օրը, երբ Այսրկովկասեան Ադրբեջանում բնակոտող մի շարք ազգութիւններից միայն յիշողութիւն կը մնայ: ...Այդ ձուլումը կարող է շահել թուրքերէն պեքական լեզուով անկախ Ադրբեջանի Հանրապետութեան սրբեղծումով: Այսպիսով, այս պահին Արեւելեան Այսրկովկասում սրբեղծում է քարքերը էթնիկական միատրններից բաղկացած նոր միասնական ազգութիւն՝ մէկ ընդհանուր թիւրքական լեզուով»¹¹⁰:

Այսպիսով՝ ինչպէս ակնբերել է ցեղասպանութեան միջազգայնօրէն ճանաչուած սահմանումից, այն ամէնը, ինչ տեղի է ունեցել Ղուբա քաղաքի հայութեան հետ 1918-1920ին, անառարկելիօրէն փաստում են, որ կատարուածը ցեղասպանութիւն էր: Յատկանշական է այն իրողութիւնը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչութիւնը ցեղասպանութեան ենթարկուեց իր բնօրրանում, այնպէս, ինչպէս երիտթուրքերն իրագործեցին արեւմտահայերի բնաջնջումը 1915-1916՝ Արեւմտեան Հայաստանում: Ուստի, թուրք-մուսաաթականների կիրառած քաղաքականութիւնը պէտք է որակել որպէս արեւմտահայերի ցեղասպանութեան շարունակութիւն եւ բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց Ցեղասպանութիւնն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչեւ Բաքու) համաթուրքականութեան ամբողջական ծրագրի իրականացման հետեանք էր:

THE ARMENIANS OF GHUBA CITY (FROM ANCIENT TIMES TO 1920)

(Summary)

GEVORG STEPANIAN (sasun-07@mail.ru)

Against the backdrop of the presence of Armenians in the city of Ghuba, the study focuses on the demographic history of the Armenian community of Ghuba in the 19th century. The study notes that the Armenians of Ghuba city had their own quarter, a distinguished presence and had generated a relatively separate sociocultural environment with their church and school. They were mostly famous for the development of the traditional Armenian dye, *Toron*, which was used in the local production of Armenian Ghuba rugs. However, the positive Armenian contribution to the city was halted by the persecution and massacres by the newly proclaimed independent state of Azerbaidjan in 1918.

¹¹⁰ В. Худадов, *Современный Азербайджан*, (ժամանակակից Ադրբեջան), Մոսկուա, *Նոր Արեւելք*, 1923:3, էջ 171:

**ԿԵՍԱՐԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱԼԵԱՆԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ**

(ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբ)

ԿԱՐԻՆԷ ԱԻԵՏԵԱՆ (avetyan.karine1@gmail.com)

ՄՈՒՏՔ

Կեսարիան այն բնակավայրերից էր, որտեղ հայերն ապրում էին դեռևս Բիզանդական Կայսրության ժամանակներից: ԺԱ. դարում Հայաստանում սկսումս մեծ արտագաղթի հետեանքով Կեսարիա-Կապադովկիայում հայերի թիւն այնքան շատացաւ, որ փոխուեց ժողովրդագրական պատկերը եւ հայերն արդէն մեծամասնութիւն էին կազմում: Թուրքական տիրապետութեան սկզբնական շրջանում պահպանուած էր այդ վիճակը, սակայն յետագայում դա խիստ անհանգստացնում էր իշխանութիւններին եւ նրանք պարբերաբար տեղահանութիւններով ու բռնագաղթերով մեծ թուով հայերի եւ յոյների հեռացրել էին իրենց մշտական բնակավայրերից եւ փոխարէնը մահմեդականներով բնակեցրել տարածքը: Այդ քաղաքականութիւնը շարունակուեց մինչեւ ԺԹ. դարի 90ականները¹, վերածուեց 1915ի Հայոց Յեղասպանութեանը եւ յեղափոխական² քեմալականների օրով՝ էթնիկ միատարրութեան քաղաքականութեանը:

Տրդատ եպիսկոպոս Պալեանը որպէս թեմի առաջնորդ (1887-1910) իր գործունէութեան ընթացքում կարեւորագոյն տեղ է յատկացրել Կեսարիայում կրթութեան գործը կազմակերպելու եւ իրականացնելու իր ծրագրերին. ոչ միայն վերանորոգել-վերաբացել է Ս. Կարապետի վարժարանը, այլեւ հիմնաւորապէս զբաղուել իր առաջնորդական վիճակում կրթութեան գործով, զուգահեռ՝ ունեցել է գիտական բազմաթիւ հետաքրքրութիւններ, ուսումնասիրել է Կեսարիայի ձեռագրական, հնատիպ գրականութեան, վանքերի, բանասիրութեան հարցերը:

Կեսարիան Օսմանեան Կայսրութեան հայաշատ բնակավայրերից էր, որտեղ հայերը հաստատուել էին դեռևս Բիզանդական Կայսրութեան ժամանակներից (Դ.-Ե. դարեր), իսկ ԺԱ. դարում հայկական իշխանութիւնների անկումից յետոյ Հայաստանից սկսումս մեծ արտագաղթի հետեանքով հայ ազգաբնակչութեան աճը Կապադովկիա-Կեսարիայում փոխեց ժողովրդագրական պատկերը այնպէս, որ հայերն այնտեղ մեծամասնութիւն էին կազմում, եւ ինչպէս վկայում են աղբիւրները² արդէն

¹ ԺԹ. դարի կէսերին Կեսարիայի բնակչութեան մեծ մասը կազմում էին թուրքերը:
² Ն. Արոնց. «Կասիա միանձնուփին եւ հայերը», *Հանդէս ամսօրեայ*, 1901, էջ 129-132. նաեւ՝ Ա. Ալլայոյանեան, *Պարմութիւն հայ Կեսարիոյ, իրեղագրական, պար-*

«հայ» եւ «կապաղովկիացի» համարժէք հասկացութիւններ էին, յամենայն դէպս յոյները գերադասում էին երկրորդը՝ «հայ» էթնօնիմից խուսափելու համար: Դրանով է բացատրւում Կեսարիայում եւ շրջակայքում հայերէն ձեռագրերի, եկեղեցիների եւ վանքերի, մշակութային ու ճարտարապետական կառոյցների առատութիւնը³: Կեսարիան որպէս առաջնորդական վիճակ կազմաւորուել է դեռեա ժ.Ք դարում⁴:

Թուրքական տիրապետութեան սկզբնական շրջանում դեռեա պահպանւում էր այդ վիճակը, չնայած որ ժ.Ք.-ժ.Ձ. դարերում արդէն իշխանութիւնները պարբերական տեղահանութիւններով եւ բռնագաղթերով մեծ թուով հայերի եւ յոյների հեռացրել էին իրենց մշտական բնակավայրերից եւ փոխարէնը մահմեդականներով քնակեցրել տարածքը: Միջնադարից սկիզբ առած այդ քաղաքականութիւնը, իր այլեայլ միջոցներով (կողոպտ, անբրում, հրկիզում, բռնի դասնափոխութիւն, ցեղասպանութիւն էթնիկ միատարրութիւն) գործեց մինչեւ 1920ականները⁵:

ճական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հտր. Ա., Գահիրէ, 1937, էջ 389-390:

³ В. А. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.) (Վ. Յարութիւնովա-Ֆիդանյան, Հայ քաղկեդոնականները Բիզանդական Կայսրութեան արեւելեան սահմաններին ժ.Ա. դար), Հայպետհրատ, Երեւան, 1980, էջ 42-43: Օտար հետազոտողներից ժ. Լաֆոնտէն-Դոզոնը Կապաղովկիայում, յատկապէս ժ.-ժ.Ա. դարերում, անշուշտ, նաեւ դրանից առաջ, հայերի մեծաքանակ ներկայութեամբ է բացատրում “Բրուտի եկեղեցու” (Չեմլեքի քիլիսէ) օրինակով մի շարք եկեղեցիների կրած խիստ հայկական ազդեցութիւնը, որ արտայայտուած է ճարտարապետական լուծումների, որմնանկարների, դրանց աղաաղում յունարէն գրութիւնների մէջ՝ զրոյսած են ոչ յոյն ձեռքով, այլ թերեա դասնափոխ-քաղկեդոնական հայի: Ուսումնասիրողը շատ ընդհանրութիւններ է գտնում եկեղեցու սրբապատկերների, որմնանկարների եւ հայկական մանրանկարչութեան միջեւ եւ նկատի ունենալով հայերի ներկայութեան պատմական իրողութիւնը, համարում է ոչ թէ սոսկ “ազդեցութիւն”, այլ անէին՝ հայերի “ներկայութիւն” Կապաղովկիայում (Ж. Лафонтен-Дозонь, “Росписи церкви, называемой Чемлекчи килисе, и проблема присутствия армян в Каппадокии” (Չեմլեքի քիլիսէ կոչուած եկեղեցու որմնանկարները եւ հայերի ներկայութեան հարցը Կապաղովկիայում, *Բիզանդիս, Հարաւային սլաւոններ եւ հին Ռուսիա, Արեւմտեան Եւրոպա, «Գիտութիւն»* հրատ., Մոսկուա, 1973, էջ 78-90:

⁴ Յիշատակւում է 1178ին՝ Հոռմկլայի եկեղեցական ժողովի առիթով:

⁵ Հայրց նոր վկաները, աշխ. Յ. Մանանդեան եւ Հր. Աճառեան, Մայր Աթոռի տպարան, Վաղարշապատ, 1903:

Ծրագրում եւ պարբերաբար կրկնուող այդ գործողութիւններով թուրքերին յաջողութեց փոխել ազգաբնակչութեան էթնիկ պատկերը յօգուտ մահմեդականների⁶:

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ

ԺԹ. դարի սկզբներից նկատուող հայկական զարթօնքը, մտատուր աշխուժութիւնը տարածուել էր բնականաբար, նաեւ հոգեւոր դասի մէջ, որի ներկայացուցիչները (Ղեւոնդ վրդ. Փիրղալեմեան, Գարեգին վրդ. Սրուանձտեանց, Արիստակէս Տեւկանց), սկսել էին գիտակցել ազգային հոգեւոր արժէքների կարեւորութիւնը. ձեռնամուխ լինելով դրանց յայտնաբերման, գրառման եւ հրատարակման աշխատանքներին: Տրդատ վարդապետ Պալեանը, որն իր ժամանակի մտատուրական հոգեւորականների յաջորդ սերնդից էր, կեսարահայերի կողմից 1887ին ընտրուել էր Կեսարիայի թեմի առաջնորդ: Ծնուել է 1850ին Կեսարիայի Թալաս գիւղում, նախնական կրթութիւնը ստացել ձննդավայրի Վարդ-Պատրիկեան դպրոցում, ապա՝ Զմիտնիայի Մեարոպեան վարժարանում: 1878ին մեկնել է Երուսաղէմ եւ որոշ ժամանակ աշխատելով վանական միջավայրում, 1881ին ձեռնադրուել սարկաագ, 1882ին՝ վարդապետ: 1887-1910՝ եղել է Կեսարիայի առաջնորդ, 1899ին ստացել է ծայրագունութեան աստիճան, ձեռնադրուել է եպիսկոպոս⁷:

Ընտրուելու առաջին իսկ օրից նրա գործունէութիւնը եղել է բազմաբնոյթ. երիտասարդ, եռանդով լի նորընտիր առաջնորդը ձեռնամուխ է լինում միաժամանակ բազմաթիւ դեռեա չարուած եւ թերաարտ գործերի: Պալեանը իր նախորդներից ժառանգել էր քայքայուած վանական տնտեսութիւն, պառակտուած ու վարկաբեկուած հոգեւոր դաս, որը հենց սկզբից էլ չէր թաքցնում իր անբարեացակամ վերաբերմունքն առաջնորդի հանդէպ, սակայն վերջինս չէր ընկրկում դժուարութիւնների առաջ եւ գործում էր առանց յուսահատուելու:

⁶ Վրացի ուղեգիր Գիորգի Ասայիշվիլին իր ճամփորդութեան ընթացքում (1819 Յունիս-1820 Յուլիս) Կեսարիայի մասին գրում է, որ հայերն այնտեղ ունեն 2000 տուն եւ երկու եկեղեցի, ընդգծելով միաժամանակ, որ «տեղացի քրիստոնէաները հազարադէպ գիտեն իրենց մայրենի լեզուն, խօսում են թաթարերէն (թուրքերէն) եւ անգամ հաղորդում են իրենց վարդապետների հետ այդ լեզուով» (Պալեալ Չոբանեան, *Վրացական ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին*, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 112-113:

⁷ Տրդատ եպիսկոպոս Պալեանի կենսագրութեան մանրամասները եւ գործերի մատենագիտութիւնը տե՛ս՝ *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Ձմիտնիայ... Ժողովածոյի երկրորդ մասը՝ Կ. Աւետեան, «Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի», Բնաստէր հրատ., Երեւան, 2002, էջ 181-246:*

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՅ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՏՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՒԻԹԻՒՆԸ

Նախաձեռնած առաջին գործը՝ 1784ից գոյութիւն ունեցող, սակայն անգործութեան եւ շատ անմխիթար վիճակի մատնուած վարժարանի վերաբացումն էր: Եւ քանի որ գաառական ժողովը չէր ընդառաջել առաջնորդին, Պալեանն իր ունեցած անձնական միջոցներով ձեռնամուխ եղաւ այդ գործին, հիմնովին վերանորոգելով վարժարանը եւ գրադարանը, բարեկարգելով վանական տնտեսութիւնը եւ Կեսարիայի մերձակայ քաղաքներին եւ գիւղերի դպրոցներից ընտրուած 16 աշակերտներով եւ միակ ուսուցիչ՝ Դանիէլ Նշանեանի ուղեկցութեամբ 1888 Մայիսին սկսուեցին Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանի դասերը: Ինչպէս յետագայում գրել են վարժարանի շրջանաւարտ սաները՝ «...Շարք պարզ եւ անշուք սկզբնատրութիւն մը ունեցող այս վարժարանը, փարիներ վերջ պիտի ըլլար Կեսարիոյ Ս. Կարապետի վանոց փարոսը»⁸: Առաջնորդի ջանքերի շնորհիւ էր, որ թրքախօս Կեսարիան աստիճանաբար դառնում էր հայախօս, հայագիր եւ ազգային ինքնագիտակցութեան զարթօնք էր ապրում: Վարժարանը նիւթական միջոցներով ապահովելու համար առաջնորդը, որ նաեւ տեսուչն էր, դիմել է Կ. Պոլսում եւ արտասահմանում գտնուող մեծահարուստ կեսարացի հայրենակիցների, որոնք պատրաստական իրենց աջակցութիւնն են յայտնել: Կարճ ժամանակ անց ոգեւորուելով ցուցաբերուած վերաբերմունքից, Պալեանը որոշում է իրականացնել իր մտադրութիւնը եւ նախապէս որպէս ժառանգաւորաց վարժարան բացուած դպրոցը 1893ին կրթութեան նախարարութիւնից ստանում է արտօնագիր, որով գիշերօթիկ վարժարանը ճանաչւում է բարձրագոյն ազգային կրթական հաստատութիւն, միաժամանակ հեռատեսօրէն պահպանելով ժառանգաւորաց անունը: Կարգավիճակի այդ փոփոխութիւնից յետոյ Պալեանը կազմել եւ հրատարակել է վարժարանի ծրագիր-կանոնադրութիւնը⁹, որը պարբերաբար վերահրատարակուել է: Ծրագիրը, որ նրա հիմնած «Հրատարակչական միութիւն Ս. Կարապետի վանոց» անունով ընկերութեան հրատարակութիւնն է¹⁰, տեղեկացնում է, որ ուսման տեսողութիւնը եղել է

⁸ Հ. Ուղղութեան, Կ. Աբրահամեան, «Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, բարձրագոյն վարժարանը եւ Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական պօռոք եւ առաջնորդներ», *Ընդարձակ փարեցոյց*, տպագր. Յ. Մատթոսեան, Պոլիս, 1928, էջ 237-38:

⁹ Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց ժառանգաւորաց վարժարանի Ս. Կարապետի վանոց ի Կեսարիա, *հասցաւորեալ 1888, Մայիս 1*, Գ. Պաղտատլեան տպարան, Կ. Պոլիս, 1894, 42 էջ, (Գ. տիպ.՝ Ս. Մամուրեան տպարան, Իզմիր, 1897, 44 էջ):

¹⁰ Ցայտնի չէ՝ Ընկերութիւնը դասագրքեր հրատարակել է, թե՛ ոչ, այդուհանդերձ, յայտնի է անուագն նրեք գրքոյկի անուն, որպէս «Հրատարակութիւն Կեսարիոյ Ս. Կարապետի վանոց ժառանգաւորաց» ընկերութեան հրատարակութիւն.- 1)

վեց տարի, դասաանդուել են լեզուներ՝ հին և նոր հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, բարոյագիտություն, տոմարակալություն (հանրահաշիւ), աշխարհագրութիւն, իրաբանութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն: Տրդատ եպիսկոպոսը դասաանդել է կրօնագիտութիւն, պատմութիւն:

Առաջնորդն այն հոգեւորականներից էր, որ իր գործունէութեան մէջ մեծազոյն նշանակութիւն էր տալիս կրթական գործին: Նա ոչ միայն Ս. Կարապետի վարժարանի հիմնադիրն էր, այլև մշակել է իրականացնում էր կրթութեան միասնական համալիր ծրագիր Կեսարիայի ողջ նահանգում. «...Կեսարիոյ եւ համայն Փոքր Ասիոյ լոյսի փարոս մը, որ 27 փարիներ անդադար պիտի լուստորէր քրդիտութեան խաարին մէջ մնացող հայաբնակ վայրերը»¹¹: Ժամանակի ընթացքում Կեսարիայից եւ շրջակայքից գիշերօթիկ վարժարանում սովորողների թիւն արդէն այնքան էր մեծացել, որ նոր շէնքի կարիք էր զգացում. ինչն էլ իրականացում է, եւ 1903ի ուսումնական տարին կեսարացիները սկսում են հոյակապ նորակառոյց վարժարանի շէնքում: Նորակառոյց վարժարանի մասին Արեւելեան մամուլը հիացմունքով գրել է. «Կեսարիոյ բարեջան Առաջնորդ Գեր. Տրդատ եպիս. Պալեան պապի ջրած է մեզ դրկելու Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին կից նորակառոյց վարժարանին լուսանկարը. սոյն կրթարանին շինութիւնը ասկից չորս-հինգ ամիս առաջ ամբողջովին աւարտած եւ անցեալ Հոկտեմբեր ամսոյ մէջ ալ ներքին կահատրումը լրանալով՝ քրդափոխութիւնը կատարուած է նոյն ամսուն, եւ դասախօսութիւնք սկսած են բոլորովին նոր ծրագրով եւ նոր կարգադրութեամբ: Ջերմապէս կը շնորհատրենք Պալեան Սրբազանը այս գեղեցիկ յաջողութեան համար, որով Կեսարիոյ նման բազմաւայ վիճակ մը կրցաւ օժտել կրթական հասարակութեամբ մը եւ այս՝ գլխատրապէս շնորհիւ իր յարարետող եւ կրթատէր ոգիին եւ մասամբ կեսարացի ազգայնոց փոյթեռանդն գործակցութեան»¹²: Այստեղ ուսանողները կրթութեան հետ միասին ստանում էին ոչ պակաս կարեւոր՝ դաստիարակութիւն, որ ձեւատրում էր ազգային ասանդութիւններին նախանձախնդիր գիտակցութեամբ օժտուած անհատներ, որոնք իրենց յետագայ գործունէութեամբ ապահովել են Ս. Կարապետի վարժարանի եւ նրա հիմնադիր Տ. Եպս. Պալեանի անունն ու բարի համ-

Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, Կ. Պոլիս, 1892, 2) Նշանագիրք հայոց, 4 ինննա, 1898, 3) Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց... 1894. վերջինը պարբերաբար վերահրատարակուել է եւ որ Հայաստանի գրադարաններում չկայ, միայն երկու՝ (1894՝ Ա) եւ (1897՝ Գ) հրատարակութիւնների նկարագրութիւնը տե՛ս՝ Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կենսքի, Վննետիկ, 1909, էջ 1565:

¹¹ Կարդան Եպս. Տէփրճեան, *Դիմասպուներնք. ազգային եկեղեցական փոպարներ, տպարան Արսալ, Պէրոյթ, 1983, էջ 161:*

¹² «Լրագրող», *Արեւելեան մամուլ*, 1904, էջ 288. նաեւ՝ Տ. Ա., «Պատկերի մը առջեւ», *Արեւեք*, 2/15 Մարտ 1904, էջ 1:

բալը: Վարժարանն աշխարհիկ ուղղափառության ունէր, որ ծրագրուած էր Պալեանի կողմից: Շրջանաւարտների մեծ մասը նախընտրում էին մանկավարժութեան ասպարէզը, մանաւանդ որ հայաբնակ գաւառներում մեծ համարում ունէին Պալեանի վարժարանի սաները ու այդ ամբողջ ընթացքում յայտնի է, որ ընդամենը մէկ շրջանաւարտ է նուիրուել հոգեւոր քնագաւառին՝ ձեռնադրուել կուսակրօն վարդապետ: Իր գոյութեան 27 տարիների ընթացքում (1888-1915) վարժարանը տուել է 201 շրջանաւարտ:

ՊԱԼԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջնորդի գիտական բազմազան եւ միաժամանակ շատ ընդգրկուն հետաքրքրութիւններն ի յայտ էին եկել շատ վաղուց: Իրեն յուզող հարցերի պատասխանները փորձում էր գտնել նամակագրութեան միջոցով, կամ հրապարակում էր իր ձեռքի տակ եղած նիւթը՝ սպասելով արձագանգների: Մտատրական-հոգեւորականը մանաւանդ իր առաջնորդութեան տարիներին կանոնաւոր նամակագրութիւն է ունեցել Պոլսոյ պատրիարքարանի, ժամանակի մտատրական գործիչների՝ Կարապետ Բասմաջեանի, Վահրամ Թորգոմեանի, Վահրամ արք. Մանկունու, հայր Ներսէս Ակիւնեանի, Արշակ Ալպոյաճեանի, թերթերի ու հանդէսների խմբագիրների հետ: Պալեանի եւ իր կրտսեր ժամանակակից ու հայրենակից Ալպոյաճեանի միջեւ եղած մինչեւ վերջերս անյայտ նամակները (1905-1913) պահպանում են Մաշտոցեան Մատենադարանում՝ Ալպոյաճեանի թողոններում¹³: Նամակագրութիւնից քիչ բան է պահպանուել՝ միայն միջանի հրատարակուածները, իսկ մնացածը ենթարկուել է թալանի եւ ոչնչացման, նրա միա աշխատանքների, ունեցած ձեռագրերի, հնատիպ գրքերի եւ մշակութային այլ արժէքների հետ՝ 1922ին Ղմիւնիայի յայտնի դէպքերի ժամանակ:

Դպրոցական-կրթական գործին զուգընթաց եւ միաժամանակ՝ Պալեանի յաջորդ քայլը մատենադարանի ու թանգարանի հիմնադրումն էր, որի համար չի խնայել իր անձնական կարողութիւնը եւ «*ուր զեպտեղած եմ ձեռագիր մատենանք թոռով գրեթէ հարիւր, եւ տպագրեալ գրեանք՝ թոռով հինգ հարիւր*»¹⁴: Նա 1891ին գրել է, որ Ս. Կարապետ վանքի նոր գրատունը ունի 100 կտոր գրչագիր, որ հետզհետէ «աւելցնելու փոյոջ կը տարուի», աւելացնելով որ պատրաստել է կանոնաւոր մի ձեռագրացուցակ՝ «*հանդերձ յիշատակարանօք եւ մանրամասն տրեղեկութեամբք. այն նպատակաւ, թէ մի օր կը հրատարակուի*»¹⁵: 1894ին արդէն մատենադարանն

¹³ Նամակների հրատարակութիւնը տես՝ Կ. Աւետեան, «Տրդատ եպիսկոպոս Պալեանի նամակները Արշակ Ալպոյաճեանին», Էջմիածին, 2006:Ս., էջ 81-91:

¹⁴ Տ. Վրդ. Պալեան, Վանք սրբոյն Կարապետի ի Կեսարիա եւ վարժարան ժառանգատուաց, "Արեւելեան մամուլ", Ղմիւնիա, 1890, էջ 376-378:

¹⁵ Տ. Վրդ. Պալեան, «Ազգային հին ձեռագիրք», *Ծաղիկ*, Կ. Պոլիս, 1891:32, էջ 3:

ունէր 180 ձեռագիր եւ 1000 կտոր տպագիր մատեան¹⁶: Պալեանը ծրագրել էր Կեսարիայի վիճակի ձեռագրերի նկարագրութիւնը՝ բաղկացած 15 պրակներից, ամփոփել առաջին հատորի մէջ, որից յետոյ պէտք է անցնէր միւս վիճակները եւ վանքերը՝ պրպտելու ձեռագրերը՝ ցուցակագրութեան եւ առանձին հատորներով հրատարակելու համար: Ձեռագրերի առաջին նկարագրութիւնները՝ «Թեմորայք Կեսարիոյ վիճակին եւ ազգային հին ձեռագիրք», Կեսարիայի Ս. Աստուածածին եկեղեցու, Ս. Սարգսի վանքի, Մաղնիսայի (Զմիւռնիայի վիճակ), Ս. Սիոն եւ Ս. Լուսատրիչ եկեղեցիների՝ նախ հրատարակել է Պոլսի եւ Զմիւռնիայի մամուլում¹⁷, այնուհետեւ՝ առանձին պրակներով, ամբողջական հատորով հրատարակելու յոյսը սրտում պահած: 1903ին արդէն Կեսարիայի վիճակի վանքերում, եկեղեցիներում ու անհատների մօտ գտնուող Պալեանի ցուցակագրած ձեռագրերի ընդհանուր թիւը հասել է 650ի. «Յուցակն առ այժմ մեր քով կը մնայ ձեռագիր, որովհետեւ տպագրութեամբ ի յոյս ընծայելու համար մեր նիւթական կարողութիւնը չի ներեր»¹⁸: Աւելի ուշ, երբ այլեւ մարել էր առանձին հատորով հրատարակելու յոյսը, Ալիսեանի յորդորներին անսալով՝ 1921ին սկսել է մաս առ մաս ուղարկել, *Հանդէս ամսօրեայի* մէջ հրատարակելու համար, սակայն իրեն վիճակուած չէր տեսնել այդ հրատարակումը՝ իրականացած միայն 1959-60ին, «Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի նոր գրադարանի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա» վերնագրով¹⁹: Պալեանից մեզ հասել է յայտնի է առայժմ 170 ձեռագրի նկարագրութիւն եւ 10 ձեռագիր, որ եզակի աղբիւր է Կեսարիայի եւ շրջակայքի գրչագրական դպրոցների, ձեռագրական մշակոյթի մասին եւ որոնք գտնուում են Երեւանի, Երուսաղէմի, Նիւ Եորքի, Վիեննայի, Կ. Պոլսի ձեռագրական հաւաքածոներում: Նրա՝ տարբեր աղբիւրներով ձեռագրերի թուի վերաբերեալ յիշատակումները իմի բերելով եւ ամբողջացնելով ստանում ենք Կեսարիայում գրուած եւ ընդօրինակուած ու չպահպանուած գրչագրերի ընդհանուր պատկերը՝ անլի քան 700 ձեռագրեր եւ դրանց անտիպ նկարագրութիւնները, որոնց կորուստը այլեւ անդարձ ու անփոխարինելի է հայկական մշակոյթի համար:

¹⁶ Տ. վրդ. Պալեան, «Հայ տպագրութեան ամենաիին երախայրիք մալ», *Հանդէս ամսօրեայ*, 1894, էջ 357:

¹⁷ *Շաղիկ*, Կ. Պոլիս, Ա. Տարի, 1891, հմր. 41 (էջ 1-2), հմր. 47 (էջ 2), հմր. 48 (էջ 6) են. նաեւ՝ *Արեւելեան մամուլ*, Զմիւռնիա, Իէ. Տարի, 1897, հմր. 4 (էջ 127-31), հմր. 5 (էջ 171-74), հմր. 7 (էջ 237-43) են:

¹⁸ Տ. Եպս. Պալեան, «Հետաքրքրական կոնդակ մը», *Քիզուտիոն*, 1903, հմր. 1933, էջ 1:

¹⁹ Հրատարակուել է նաեւ առանձին գրքով՝ *Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա*, կազմ.՝ Տրդատ եպ. Պալեան, Վիեննա, 1963:

Մեծ վաստակ ունի Պալեանը հայ գրքի, գրատպութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում, նրա այս բնոյթի յօդուածները ցրուած են մամուլում: Նա գրադուել է հայկական տպագրութեան կենտրոնների՝ Վենետիկի, Չմիտնիայի, Կ. Պոլսի, Լիվոռնոյի, Մադրասի տպագիր գրքի, տպագրութեան պատմութեամբ, կարեւոր ճշտումներ եւ լրացումներ է արել հայերէն առաջին տպագիր գրքի թուագրման հարցերի, հնատիպ հրատարակութիւնների մինչ այդ գիտութեանն անյայտ տեղեկութիւններ պարունակող յօդուածներ: Մամուլում տպագրելով «Անյիշատակ տպագրութիւններ», «Անտիպ յիշատակարաններ եւ անյիշատակ տպագրութիւններ», «Հայերէն հին տպագրութիւնք»²⁰ վերնագրերով յօդուածներ, շատ ուրախատիթ երեւոյթ է համարել Կեսարիայում եւ գիւղերում (Պալականի, Թալուտուն, Մունճուտուն, Նիրզէ, Ս. Կարապետի վանք) բազմաթիւ հայերէն հին հրատարակութիւնների առկայութիւնը. ոչ-լրիւ հաշուարկով պահպանուած 22 անուն, այս փաստով եզրակացրել է, որ Ի. դարի սկզբներին արդէն մեծ մասամբ թրքախօս դարձած Կեսարիայի հայութիւնը ժամանակին եղել է հայախօս, գրագէտ, գրասէր ու ընթերցասէր: Ինքն էլ լինելով մեծ գրքասէր՝ ունէր ձեռագրերի եւ հնատիպերի մեծ հաւաքածոյ: Պատրաստել էր հրատարակութեան հնատիպ հայ գրքի մատենագիտութիւն, գործը բաժանել է երկու հատորի՝ Ա.- 1512-1800, Բ.- 1801-1850, պապ լրացնելով հասցրել է մինչեւ 1900:

Կապետ ծածկանունով 1903-6՝ Փարիզի *Բանասէր* հանդէսում հայկական հնատիպ գրքի նրա մատենագիտութեան հրատարակութիւնը, որ արդէն մշակուած, ժամանակագրական դասակարգումով հրատարակումների շարք էր, անաւարտ է մնացել: Հնատիպերի՝ Պալեանի արած նկարագրութիւնները մինչեւ օրս էլ չեն կորցրել իրենց այժմէականութիւնը եւ մատենագիտական հրատարակութիւնների մէջ, մի շարք դէպքերում նոյնիսկ յղում են որպէս աղբիւր՝ պահպանուած միակ յիշատակութիւն-նկարագրութիւն²¹:

1865-78՝ դեռեւս Մաղնիսայում գտնուած ժամանակից սկսած, Պալեանը հաաքում էր ձեռագրեր, հնատիպ գրքեր, արխիւային նիւթեր, գորգեր, դրամներ, դրոշմանիշեր, կնիքներ: Նա հետաքրքրուել է նաեւ քանադիտութեամբ. հաաքել է հեքիաթներ, հանելուկներ, առածներ ու ասացուածքներ, աշուղական երգեր, որի արդիւնքում հրատարակել է երկուա-

²⁰ Հանդէս *անօտրեայ*, 1894, 1895, 1897, 1922, *Արեւելեան մամուլ* 1896, 1897, *Բիւրակն* 1899, *Բանասէր* 1903:

²¹ Օրինակ՝ *Հայ գիրքը 1512-1800 թուականներին մատենագիտական հատորը* վերջրել է Պալեանից *Պապարագայրեպոյի* 1568ի արգարեան հրատարակութեան յիշատակարանը, Կ. Պոլսի 1772ի *Ալքբէնարան եւ քրիստոնէականի* նկարագրութիւնը:

կան հատոր՝ հայ աշուղներին առածների ու ասացուածքների²²: Աշուղների հաաքածուն Պալեանը կազմել է ձեռագրերից, տպագիր գրականութիւնից եւ բանատր՝ անձնական շփումներից՝ աշուղների հետ, հաաքել է հայերէն, թուրքերէն, պարսկերէն երգեր: Ամբողջ գործը նախատեսել էր ամփոփել հինգ հատորների մէջ, որի վերջին՝ հինգերորդ հատորում պէտք է գետեղէր իր ինքնակենսագրութիւնը, ամէնայն մանրամասնութեամբ: Ակնի, Կեսարիայի եւ գիւղերի՝ Էւերեկի, Նիրզէի, Էֆքերէի, Մունճուսունի բարբառներով գրի է առել նաեւ զրոյցներ, հեքիաթներ, հանելուկներ, անտունիներ, օրօրոցայիններ, սիրերգեր, որոնց մի մասը հրատարակել է մամուլում: Պալեանը հաաքել է ոչ միայն հայկական բանահիւսութիւն, այլեւ հաաքել եւ հրատարակել է հայերէն-թուրքերէն ասացուածքների մի մասը, իսկ հայկական հեքիաթների մեծ մասը՝ 120 միաւոր, աշուղների մնացած հատորները, անելի քան 13,000 միաւոր թուրքերէն առածների հրատարակութեան պատրաստ ձեռագրերը ոչնչացել են:

Վանքերի մասին իր աշխատանքի աշխարհագրութիւնը բաական ընդարձակ է՝ Կեսարիա, Սեբաստիա, Եդոկիա, Ամասիա-Մարզուան, Շապին Գարահիսար, Տիրիկ, Տրապիզոն, Բարձր Հայք, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Մալաթիա, Բաղէշ, Մանազկերտ, Մուշ, Եղեւիս, Կիլիկիա, Վան եւ շրջակայք: Վանքերի շատ նկարագրութիւնների համար անձամբ է շրջել եւ նիւթեր հաաքել, ականատեսի նրա այս նկարագրութիւնները այդ վանքերի՝ իր ժամանակի կացութեան եւ իրահատկութիւնների արձանագրումն են, դրանով էլ ստոյգ վաւերագրի արժէք ունեն:

1897-1908՝ Բիւզանդիոն օրաթերթում եւ 1906ին Լոյս հանդէսում «Հայ վանօրայք», «Նոր ցուցակ հայ վանօրէից», «Յուցակ հայ վանօրէից» վերնագրերով Պալեանը մաս-մաս հրապարակել է վանքերի մասին իր ուսումնասիրութիւն-յօդուածաշարը: Նախ ըստ տօնացոյցի խմբաւորել է եւ հրապարակել, ապա սկսել է ցանկել ըստ գաւառների: Նրա գործի կարեւորագոյն արժէքն անձամբ իր հաաքած կամ թղթակիցներից ստացած եւ այժմ չպահպանուած նիւթի գործածումն է. Պալեանի նկարագրած այդ վանքերն այսօր մեծ մասամբ չկան, կամ գրեթէ բոլորը անբոսած են, ուստի եւ նրա՝ հիմնականում ականատեսների նկարագրութիւններ պարունակող յօդուածները նոյն վանքերին վերաբերող պահպանուած եզակի վկայութիւններ են եւ սկզբնաղբիւրի արժէք ունեն: Պալեանի նկարագրած ձեռագրերից եւ վանքերից պահպանուել են միայն նկարագրութիւնները: Վանքերի մինչեւ այսօր մեզ հասած նրա նկարագրութիւնների թիւը հասնում է 346ի: Այս գործի առիթով կազմել է նաեւ Անկիւրիայի, Կեսարիայի Ս. Կարապետ, Ս. Դանիէլ, Զմիտնիայի Ս. Ստեփանոս, Սեբաստիայի Ս.

²² Տ. Եպս. Պալեան, *Հայ աշուղներ. ժողովրդական հայ երգիչներ եւ փոխասացք, հիդր. Ա. եւ Բ.*, Իզմիր, 1911 եւ 1912. նաեւ՝ Տ. Եպս. Պալեան, *ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածք. պրակ. Ա. եւ Բ.*, Զմիտնիա, 1912:

Նշան, Մարզուանի Ա. Աստուածածին, Տրապիզոնի Ա. Ամենափրկիչ վանքերի առաջնորդների գաազանագրքերը: Ամենաընդարձակ եւ մանրամասն նկարագրութիւն-պատմութիւնը, բնականաբար, Կեսարիայի առաջնորդանիստ Ա. Կարապետ վանքինն է, եւ ամենաճաւարունը՝ նոյն վանքի գաազանագիրքը, որի համար օգտագործել է յիսունի մօտ ձեռագիր յիշատակարաններ, բազմաթիւ արձանագրութիւններ, տապանագրեր²³:

Իր հնագիտական, ազգագրական, ձեռագրական հարուստ հաաքածուներով Պալեանը երազում էր ծննդավայրում ստեղծել Երուսաղէմի մատենադարանի նման հարուստ հաստատութիւն, մշակութային կենտրոն:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի կատարած հաաքական աշխատանքները բանահիստութեան, հնագիտութեան, պշուղական արուեստի բնագաառններում խիստ կարեւոր են, քանի որ շնորհիւ այդ աշխատանքին այսօր մեզ է հասել Օսմանեան Կայսրութեան արեւելեան նահանգների, մասնատրապէս Կեսարիայի եւ շրջակայքի պատմամշակութային կեանքի համահաաք պատկերը ԺԹ. դարի վերջերից մինչեւ Ի. դարի 20ականները:

Առաջին անգամ Պալեանն ուսումնասիրութեան նիւթ է դարձրել պատմամշակութային յուշարձաններով այնքան հարուստ Կեսարիան, որ մինչ այդ մի անհասկանալի պատճառով շրջանցուել էր եւ չէր արժանացել որեւէ հետազօտողի ուշադրութեանը: Նա առաջիններից էր, որ հաաքել ու հրատարակել է՝ փրկելով կորստից բազմաթիւ արձանագրութիւններ, յիշատակարաններ, ձեռագրերի եւ վանքերի նկարագրութիւններ, բանահիստական հարուստ նիւթ:

Իր գրական գործունէութեան ամբողջ ընթացքում Պալեանը հրատարակել է միայն ինն անուն ոչ այնքան ճաւալուն գիրք, իրենից յետոյ իր թողած ժառանգութիւնից հրատարակուել են եա երեքը.- *Տուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ա. Կարապետի եւ Ա. Դանիէլի ի Կեսարիա* (Վիեննա, 1963), *Տուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Չմիտնիայ եւ ի շրջակայս նոցին* (Երեւան, 2002), *Հայ վանօրայք* (Ա. Էջմիածին, 2008): Տպագիր եւ անտիպ գործերից մեզ հասածը չնչին մասն է այն հսկայական ժառանգութեան, որ կուտակել էր տարիների իր գործունէութեան ընթացքում: Հարկ է արձանագրել միաժամանակ, որ Պալեանի ունեցած անտիպ ուսումնասիրութիւններն ու հաաքածոները ընդհարապէս չեն պահպանուել, ամբողջը ոչնչացուել է 1922ի Չմիտնիայի աղէտի՝ թուրքական յարձակման օրերին:

²³ Մայր Աթոռ Ա. Էջմիածնի հրատարակչութիւնը, որպէս Հայրենագիտական Շարքի Ա. հատոր, 2008ին հրատարակեց Տրդատ եպո. Պալեանի *Հայ վանօրայքը*, որտեղ մէկտեղել ենք Պալեանի՝ *Քիզանդիոնում* տպուած վանական նկարագրութիւններն ու նրա 1914ին Չմիտնիա տպուած մատենագիտօրէն հազրագիտ *Հայ վանօրայք ի Թուրքիա. Գաղափրոյ, Սերասփրոյ եւ Տրապիզոնի կուսակալութեանց մէջ եղած վանօրայք* հատորը:

PRELATE OF CAESAREA, BISHOP TERDAT PALIAN, AND HIS EDUCATIONAL AND CULTURAL ACHIEVEMENTS

(Late 19th-early 20th centuries)

(Summary)

KARINE AVETYAN (avetyan.karine1@gmail.com)

Caesarea was one of the most populous settlements in the Ottoman Empire. Armenians lived there from the 11th century, when a huge wave of migration caused a demographic shift in the Cappadocia region and the preponderance of the Armenians. In a short time Armenian culture developed and numerous churches and monasteries were built in and around Caesarea, making the region a center for Armenian manuscripts and illumination. The Ottomans occupied the area in the 15-16th centuries. During Turkish dominion, the demographic picture changed gradually as the Turks occasionally evicted and forcibly relocated large numbers of Armenians and Greeks and replaced them with Muslims, or forcefully converted the local Christian population to Islam. This Turkification policy continued until the late 19th century and reached its peak during WWI, when the Armenians were uprooted. Eventually, Kemalism in the early 1920s gave the final blow to heterogeneous Caesarea and ethnically homogenized it.

The paper highlights the role bishop Terdat Palian (1887-1910) played during his prelatry in Caesarea in establishing schools, popularizing education, promoting and supporting Armenian culture and disseminating awareness of the graceful past it had had during previous centuries.

ՔՈՒՐԴ Բ. ԱՆԲԵՐԴԵՑԻ ԵՐԿԱՐԱԿԵԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ (1300-50ականներ).

ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ (tigranhayazn@mail.ru)

ՍՈՒՏՔ

Հայ ժողովրդի պատմության ԺԴ. դարի հերոսներից է Այրարատի կողմնակալության-փոխարքայության կողմնակալ-փոխարքայ Քուրդ Բ. Վաչուտեան Երկարակեաց իշխանաց իշխանը, որ իշխել է մօտաւորապէս 1300-50ներին: Այս հեռատես, հայրենապաշտ, դիւանագէտ տիրակալը յարաբերութիւններ է ձեւատրել մոնղոլական իլխանութեան իրար յաջորդող կառավարիչներին՝ Ղազան, Խուդաբանդ (Ղարպանդ), Աբու Սայիդ (Պոաայիդ) խաների հետ, ընդունուել նրանց կողմից, ստացել կառավարման անկախութեան իրաւունք (եաղիկ)...: Օգտուելով իլխանութեան թուլացումից ստեղծել է մարտունակ զինուժ, վարժել դրանք, վերակառուցել-ամրացրել իր տիրոյթի բերդերն ու ամրոցները (Անբերդ, Կարբի), պաշտպանել ինչպէս իր, այնպէս էլ միա հայ իշխանութիւնները մոնղոլական յարձակումներից:

Սոյն ուսումնասիրութիւնը պատմա-քննական-վերլուծական մեթոդով կը ճշտի նրա կառավարման ժամանակահատուածը, իմի կը բերի նրա գործունէութեան արդիւնքները եւ դուրս կը բերի յանիրաւի մոռացած հայրենապաշտ իշխանատրի կերպարը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

1205ին ստեղծուած Այրարատի կողմնակալութիւն-փոխարքայութիւնը մինչեւ 1350ականները, սկզբում Չաքարեան անկախ պետականութեան պայմաններում, 1236ից յետոյ մոնղոլական տիրապետութեան պայմաններում, կառավարել է Վաչուտեան իշխանական տոհմը¹: Մէկուկէս դարի ընթացքում համահայկական մեծութիւններ են դարձել տոհմի իմմաադիր Վաչէ Ա., նրա որդի Քուրդ Ա., Քուրդ Բ. իշխանաց իշխանները:

Քուրդ Բ. իշխանաց իշխանը Քուրդ Ա. Վաչուտեան Երկարակեացի որդիներից ամենակրտսերի՝ Տայիրի որդին:

1255ին կառուցուած Սաղմոսավանքի Ս. Աստուածածին գրաւտան հիւսիսային պատին, թարձրուատ, դժուար տեսանելի տեղում, քայքայուած արձանագրութեան մէջ Քուրդ Ա.ը թուարկել է իր որդիներին² ենթադրա-

¹ Տիգրան Պետրոսեանց, «Վաչուտեանների ծագումը», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2017:3, էջ 12-27:

² 1979ին մենք տեսել ենք արձանագրութիւնը, հեռադիտակի օգնութեամբ փորձել ընթրիկակել, բայց չենք յաջողել: Այնուամէնայնիւ որդիների թուարկման շարքում տեսել ենք Տայիր անունը եւ 1981ին հրատարակած «Վաչուտեան իշխա-

բար տարիքային հերթականությունը. «*Ի թուին 27 /1255/։ Ես՝ Քուրդ, որդի Վաչէի, կողմնակալ Այրարայր գաառիս ... ի բարեխոսութիւն/ գաակաց մերոյ՝ Վաչէի, Հասան³, Դաթի եւ Տաիրին (ընդգծումը մերն է - Տ. Պ.) եւ յանձն առաք հանդերձ գաակաւք մերաւք հոգաբարձու լինել բնակչաց սուրբ ուխտիս եւ սահմանեցաք սուրբ Աստուածածինս ամենայն ապապարագել...»⁴։*

Տայիրի գործունեութեան մասին մատենագիտական աղբիւրներում յիշատակութիւնները քիչ են։ Բացի Քուրդ Ա.ի Սաղմոսավանքի գրատան արձանագրութիւնից եւ Քուրդ Բ.ի տոհմական ծագմանը վերաբերող բանաձեւերում նրա անտան յիշատակութիւնից, այլ տեղեկութիւններ չկան։ Աղբիւրների բացակայութեան պատճառով հնարաւոր չէ պարզել, թէ ինչու գահակալութեան նկատմամբ պահանջ չեն ներկայացրել Քուրդ Ա.ի գահակից, բայց վաղամեղիկ որդի Վաչէ Բ.ի, գահակալներ Հասան, Դաթ Բ. իշխանների ժառանգները։ Մնում է ենթադրել, որ աւագ հորեղբայրների արական գծով ժառանգները չեն կարողացել ստանալ գահը եւ այն նուաճել է Տայիրի որդի Քուրդ Բ. Վաչուտեանը։

Քուրդ Բ.ը կողմնակալ-փոխարքայի պաշտօնը ստանձնել է հաւանաբար ԺԳ. դարավերջին եւ իշխել մինչեւ ԺԴ. դարի 40ականների վերջը։ Ուշիկի վանական համալիրի նորայայտ արձանագրութիւններից մէկի համաձայն Քուրդ Բ.ն արդէն 1303ից եղել է գահակալ եւ նրա ողորմածութեամբ ոմն Սահակ նուիրատուութիւն է կատարել Ուշիկ Ս. Սարգիս եկեղեցուն. «*Կամսան անմասիին Աստուծոյ եւ ողորմութեամբն պարոն Քրդին, ես՝ Սահակ, որդի ...ին, թոռն Սիթայ ... 2ԾԲ /1303/»⁵։ Հնարաւոր է, սակայն, որ Քուրդ Բ.ն անելի վաղ, դեռեա ԺԳ. դարի վերջերից բարձրացած լինի իշխանութեան գահին։*

1316-36ին ընթրինակուած ձեռագրի յիշատակարանի⁶ գրիչը նշելով Քուրդ Բ.ի արժանիքները՝ նրա իշխանութեան ժամանակաշրջանը դրել է

նական տան տոհմաձառը» յօդուածում (*Բանբեր Երեւանի Համալսարանի, 1981:3, էջ 130-47*) ժխտել Քուրդ Ա.ի որդիներ Հասանի եւ Տայիրի նոյնացումը։

³ Ձեռքի տակ չունենալով Սաղմոսավանքի գրատան արձանագրութիւնը, հայագետ Ղեւոնդ Ալիշանը Տայիրին նոյնացրել է Հասանի հետ եւ աղբիւրներում յիշուած Տայիր անունը համարել Հասան իշխանի կրկնանունը (*Հ. Ղեւոնդ Վ.Ա. Ալիշան, Այրարայր բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 253, ծխթ. 2*)։

⁴ Արձանագրութիւնը մասնագիտական մեծ վարպետութեամբ ընթրինակել է վիճագրագէտ Ա. Մանուչարեանը (*Ա. Մանուչարեան, «Քուրդ Ա Վաչուտեանի երկու արձանագրութեան վերծանութիւն»՝ YSU.am/files/03A_Manucharyan.pdf, էջ 47*)։

⁵ Ֆ. Բաբայեան, Ա. Քալանթարեան, «Ուշիկ Ս. Սարգիս վանքի վիճական արձանագրութիւնները», *Պատմաբանասիրական հանդէս, 2001:2, էջ 178*։

⁶ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկեան, ՀԱՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1950, էջ 335. նաեւ՝ *Հայերէն ձեռագրերի յիշա-*

«առաջի այլասեռ թագատրացն՝ Ղազանին եւ Ղարապանդին եւ Պոսայիդի» օրօք⁷: Ղազան խանը⁸ իշխել է 1295-1304ին, նրան յաջորդել է եղբայրը՝ Ուլեշեղը (որը մուսուլմանություն ընդունելով ստացել է Խոտաբանդ⁹ (Ղարապանդ) անունը), իշխել է 1304-16ին: Նրան յաջորդել է փոքրահասակ որդին՝ Աբու Սայիդը¹⁰ (Պոսայիդ, իշխ. 1316-35ին): Յիշատակարանի համաձայն՝ Քուրդ Բ.ն իշխել սկսել է Ղազան խանի իշխանության ժամանակներից: Ուլեշի նուիրագիր-արձանագրությունը հաստատում է, որ նա տիրակալ էր արդեն 1303ից: Հնարատր է, որ նա գահին ստացել է դրանից առաջ՝ ԺԳ. դարի վերջերին: Մենք ենթադրում ենք, որ 1298-1303ականներին աթաբեկ եւ ամիրսպասալար Շահնշահ Գ. Ջաքարեանի գլխավորած հայկական բանակի կազմում Արարատի կողմնակալության զորաջոկատով Քուրդ Ա.ն մասնակցել է Ղազանի ձեռնարկած ասորական եւ եգիպտական արշավանքներին եւ ստացել է հայրենի տիրոջի գահը¹¹:

Պատմաբան Գեղամ Կիրակոսեանը հպանցիկ անդրադարձել է ԺԴ. դարի սկզբներին Վաչուտեան գահակալ Քուրդ Անբերդեցու (Քուրդ Բ. - Տ. Պ.) գործունեությանը¹²: Հեղինակը ծանօթ չէ Քուրդ Բ.ին վերաբերող սկզբնաղբիւրներին եւ նշել է. «*նրա մասին 14րդ դ. վերաբերող առաջին փրեղեկությունը Ուլեի գիւղի եկեղեցու 1329 թուակիր մի արձանագրություն է*»: Մինչդեռ Քուրդ Բ.ի առաջին յիշատակությունը վերել նշած 1303ի Ուլեի արձանագրությունն է: 1310ին Յովհաննանավանքում Մամախարուն իշխանուհու ստացած Աեետարանի յիշատակարանում գրիչ Սարկաազը նշել է, որ ձեռագիրն արտագրել է «...*իշխանության մերոյ գաաաաաա Քրդին, որդոյ Տայիրին, թոռն մեծին եւ բարեպաշտ Քրդին*»¹³: Յաջորդ յիշատակությունը 1311ին նոյնպէս կատարուել է Ուլեիում «...*ողորմությանմ նորին [Քրդին, ես՝ Սոպայ] որդի Ջուրջին: ... Ի թմիս 24 /1311/*»¹⁴: Կարբի գիւղի գերեզմանոցում գտնուող խոյակի վրայ 1314ին Քուրդ Բ.ն արձանագրել է, որ նորոգել է բերդը եւ բուրգերը¹⁵:

րակարաններ, ԺԴ. դար, մասն Ա. (1301-1325 թթ.), կազմ. Լ. Խաչիկեան, Ա. Մաթետեսան, Ա. Ղազարոսեան, Նայիրի Իրատ., Երեւան, 2018, էջ 323-27:

⁷ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԴ. դար, մասն Ա., էջ 323-27:

⁸ Լ. Բաբայեան, Հայաստանի սոցիալ-փրեւեսական եւ քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Հայպետհրատ, Երեւան, 1964, էջ 333-38. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմություն, հպր. III, ՀՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1976, էջ 638-40:

⁹ Բաբայեան, էջ 339-40. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմություն, հպր. III, էջ 640-41:

¹⁰ Բաբայեան, էջ 340-42. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմություն, հպր. III, էջ 641:

¹¹ Հայ ժողովրդի պատմություն, հպր. III, էջ 638:

¹² Գ. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմէն ցեղերի արշավանքների շրջանում, Գիտություն Իրատ., Երեւան, 1997, էջ 322-326:

¹³ ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, էջ 65:

¹⁴ Բաբայեան, Քալանթարեան, էջ 180:

¹⁵ Արեւ հաւաքածուից:

Կիրակոսեանը թիրիմացաբար Քուրդ Ա.ի 1250ի Յովհաննավանքի արձանագրութեան «... եւ Քուրդ, որդի Վաչէի... հաճո եղեալ այլազգի գաբացն նեպողաց...»¹⁶ նախադասութիւնը վերագրել է Քուրդ Բ.ին¹⁷:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իրավիճակը ԺԴ դարի սկզբներին Հայաստանի համար խիստ ողբերգական էր: Մոնղոլ իշխանատուները ծայրագոյն աղքատութեան էին հասցրել հայ հասարակութեանը: Հարկահանութեան քայքայիչ ճնշումը տեղահան էր արել հայ բնակչութեանը: 1295ին գրիչ Դավիթը Թեղենեաց վանքում արտագրած Աւետարանի յիշատակարանում իր այրած ժամանակաշրջանի մասին գրել է. «ի յատուրն նեպողաց ազգի, որ քոնացեալ ունէր զամենայն աշխարհս Հայոց եւ զայլս բազումս, որում չեն բասական պապմեղ զդառնութիւն եւ զաւերութիւնն աշխարհիս, որ իբրեւ զծով խոռվել մրրկածին արդով զերեքալեանն բերելով զնմանութիւն, ուր ոչ երկիր, եւ ոչ քաղաք, եւ ոչ գետաղ, եւ ոչ աանք եւ ոչ հրաշագան վանորոյսք զհաղադութիւն գրեալ...»¹⁸: Նոյն Դավիթ գրիչը մէկ այլ Աւետարանի յիշատակարանում գրել է. «Եւ ով ոք կարէ պապմեղ զաղեպս քարակուսանց, որ ոչ աշխարհ եւ ոչ քաղաք, եւ ոչ ազարակ, եւ ոչ սրբայկրսն վանորայք զհաղադութիւն գրեալ, այլ համակ ի նեղութիւնս եւ ի խիստ հարկապահանջողաց անբեալ լինէր աշխարհս, քանզի ոչ գոյր թագատուր, եւ ոչ իշխան, եւ ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խոռվութիւն եւ աղմուկ»¹⁹:

Թեղենեաց վանքում մէկ այլ գրիչ՝ Մկրտիչ Ռաբունին, 1302ին թաթարմոնղոլական տիրապետութեան մասին յայտնել է. «Ընդ սոցա (թաթարմոնղոլների - Տ.Պ.) գրաւեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան յորունց ազգաց, եւ առաւել քունս Հայոց...»²⁰:

Նոյն ժամանակաշրջանի եւ դէպքերի մասին Յովհաննավանքում գրիչ Սարկաազը 1310ին ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում գրել է. «Բայց զաղէպ եւ զողք քարակուսանացս ո՛ր պապմեսցէ, զի ի խիստ եւ յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ լինին ոսպերք եւ դպրերք աշխարհիս մեր, եւ բազում գեղք եւ վանորայք աւէր եւ անհանգիստ, եւ քահանայք քարաշխարհիկ լինին»²¹:

Երեք գրիչներն էլ ապրել են Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան Նիգ գաառում, նկարագրած ողբերգութիւնն ամբողջովին վե-

¹⁶ Կ. Ղաֆադարեան, *Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, ՀՍՍՐ ԳԱ հրատ., Երեւան, 1948, էջ 103:

¹⁷ Կիրակոսեան, էջ 324:

¹⁸ *Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ*, ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Մաթետեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երեւան, 1984, էջ 769:

¹⁹ Նոյն, էջ 891:

²⁰ ԺԴ. *դարի հայերէն ձեռագրերի յիշարակարաններ*, էջ 6:

²¹ Նոյն, էջ 66:

րաբերել է ե՛ւ համայն Հայաստանին, ե՛ւ հայրենի Այրարատի երկրամասին:

Ահա այսպիսի պայմաններում է սկսել իր իշխանությունը Քուրդ Բ.ն: Նա լայնածառալ աշխատանք է իրականացրել կողմնակալութեան-փոխարքայութեան պաշտպանական հզորություններն ամրապնդելու ուղղությամբ: Քուրդ Բ.ն վերականգնել է կողմնակալութեան առաջին կենտրոն-մայրաքաղաք Անքերդը, դղեակի հարաակողմում նոր պարիսպ է կառուցել, որով դղեակն առանձնացրել է բերդատարածքից, այն վերածել միջնաբերդի²²: Ինչպես ինքը, այնպես էլ նրա որդին եւ յաջորդը՝ Թէոդոսը, ապրել են Անքերդ բերդաքաղաքում եւ իրենց, ինչպես իրենց պապ Վաչէ Ա.ն, կոչուել են Անքերդեցի:

Բայց կողմնակալութեան-փոխարքայութեան պաշտպանութեան համար միայն Անքերդի վերականգնումը շատ քիչ էր. Քուրդ Բ.ն ամրացրել է նաեւ միա պաշտպանական ամրությունները: Կարբիի գերեզմանոցում պահպանուել է սեան խարիսխ, որի նիստերից մէկի վրայ փորագրուած է. «թ/վին/ 249 /1314/: Ղանութեան/ Խարպանտին, ես՝ Քուրդ Անքերդեցի իշխանաց իշխան եւ խուանդ խաթուն նորոգեցաք զբերդս եւ բջջեերս: Ա/ս/տրա/ծ վաեղել քա բազում»²³: Այս արձանագրությունը որպէս սկզբնաղբիւր խիստ կարեւոր է. հետաքրքրական է բերդի եւ բուրգերի նորոգման յիշատակությունը: Անիմաստ կը լինի Կարբիի արձանագրությունը վերագրել Անքերդին: Անքերդում կատարուած նորոգումների մասին արձանագրությունը կը փորագրուէր այնտեղ եւ ոչ թէ Կարբիում: Արձանագրությունում յիշատակուած - ամէնայն հասանականութեամբ - Կարբիի բերդն է իր բուրգերով, որի նորոգումը նոյնպէս Քուրդ Բ.ն կարեւոր է համարել: Եթէ յիշենք, որ իրենց իշխանութեան հաստատման հենց սկզբից մոնղոլ նուաճողներն իրենք էին աւերում հայկական իշխանությունների պաշտպանական ամրությունները՝ նրանց պաշտպանուելու բոլոր միջոցներից զրկելու նպատակով, Կարբիում Քուրդ Բ.ի կողմից բերդ ու բուրգեր նորոգելու փաստն անգնահատելի արժէք է ձեռք բերում: Այս փաստն առաջին հերթին հաստատում է, որ մոնղոլների թուլացող իշխանությունից օգտուած էին հայ իշխանատիրները՝ սեփական տիրոջների անվտանգությունն ապահովելու համար պաշտպանական ամրությունները վերականգնելով: Ստեղծուած իրավիճակից ճիշտ եզրակացություն է արել նաեւ Քուրդ Բ.ն: Նա նախ հասել է ռազմական-դիւանագիտական անկախութեան, ամրապնդել իր դիրքերը եւ իվերջոյ ձեռք բերելով քաղաքական կշիռ՝ դարձել է իր ժամանակի ամենաազգի ընկնող դէմքերից մէկը: Այս միտքը հաստատում է Յովհաննավանքում 1316-35ի միջեւ ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանը. «Եւ յայսմ ժամանակի երեւեալ քաջ եւ արի, յաղ-

²² Պետրոսեանց, *Վաչուրեանների ծագումը*, էջ 25:

²³ Արեւ հաւաքածովից:

թող եւ բարձրաբազով իշխանաց իշխան յազգէն Վաչէի, որդի Տայիրին, որդւոյ բարեպաշտ եւ աստուածասէր Քրդին, որ եւ անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն եւ քաջութեամբն մնաց գաւառս մեր եւ զվանորայքս անշարժ յայսմ մեղսաշարժ եւ դառն ցասմանէս²⁴, զի յայսմ նուազեալ եւ դառնացեալ ատուք որ վասն մեղաց մերոց երեսեալ մեծափառ եւ աստուածահաճոյ մեծ զարավար ե՛ւ երեսեյի նախամարտիկ, պարծանաց եւ զարդու զասակն Հայաստանեաց, ամէնարհնեալ՝ Քուրդն, զի ուրնածայնք երիվարացն նորա եւ ճաճին՝ նիգակացն եւ փայլակումն՝ սուտերացն, ճայթմունք՝ աղեղացն եւ կուռ զրահքն եւ ասպարափակն լինելն եւ այլ ահարկու կազմուածն զարհուրեցուցանէին զթշնամիսն, թո՛ղ զյաղթութիւն եւ զքաջութիւն եւ զբազում պարերազմաց վանումն ի ձեռն նորա եւ ազարագարաց նորա բազմութիւն գեղեցկութեամբ իբրեւ զարս երկնից եւ քաջութեամբ եւ յաղթութեամբ իբրեւ զառիւծ կամ զքաջ արծուի ի վերայ նապաստակաց յամենայն պարերազմունս: Այնու առաջի այլատես թագաւորացն՝ Ղազանին եւ Ղարպանդին եւ Պուսաիդ եւ մեծամեծ եւ ասպարապետ նոյինացն մեծարգոյ եւ փառատր երեսեալ, եւ յամենեցունց շուք եւ պապիւ եւ խիլայ ընդունեալ, պահէր խնամափն եւ ողորմութեամբն Աստուծոյ զգաւառս եւ զվաներս ի խաղաղութեան եւ այլոց զաւառակցացն բազում կարեկից եւ ազնական լինէր: Որոյ աջն անեղին եւ բազովն հզարին Աստուծոյ հովանի եւ պահապան լիցի ի րուծ: Եւ ի գիշերի աստուածատր եւ բարեսէր ամուսնան խոյանդխաթունին եւ ամենայն հեծելազարացն, քաջքրասցի նմա աչք բռնատրաց եւ մեծամեծաց եւ թշնամիք նորա, առաջի նորա յամապօ եւ նկուն լիցին եւ իբրեւ զԿոդիս եւ Դադան յանդունդս իջցեն, եւ ձեռք նորա հանապազ ի վերայ թիկանց թշնամեաց իւրոց. Ամէն»²⁵:

Հետաքրքրական նոյնականութիւն է նկատում Քուրդ Բ.ի քննութագրական գնահատականների եւ ԺԴ. դարի մէկ ուրիշ խոշոր քաղաքական, ռազմական դէմքի, Քուրդ Բ.ի հորաքրոջ՝ Մամբանի որդու՝ Խաչէնի Ծարա իշխանատան՝ Դովեան կողմնակալութեան տիրակալ Գրիգոր Խաչէնցուն նուիրուած նկարագրութեան միջեւ: Յիշատակարանագիրը գրել է. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ եւ երեսեյի րոհմային պայազարութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովեղեաց, Գրիգոր իշխան Հայոց...»²⁶:

Քուրդ Բ.ին վերաբերող յիշատակարանը խօսում է, այնտեղ դիտարկելի են հետեւեալ կարեւոր պահերը.

1. Քուրդ Բ.ն հաւասարապէս ճանաչման է արժանացել Ղազան, Ղարպանդ, Պուսաիդ խաների օրօք, որոնցից ստացել է **պատիւ ու խիլայ**:

²⁴ Ընդգծումը մերն է:

²⁵ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԴ դար, մասն Ա., էջ 323-27:

²⁶ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, էջ 84:

2. Քուրդ Բ.ն ունեցել է հզոր հեծելազոր եւ ուզում էր այլ ուժեր, որոնք թող են տուել, որ նա «պահէր խնամօքն եւ ողորմութեամբ... զգաառս եւ զվաներս ի խաղաղութեան, եւ այլոց գաատակցացն բազում կարեկից եւ օգնական լինէր»:

3. Քուրդ Բ.ի ուզում էր հզորութիւնը նրան քաղաքական համապատասխան կշիռ է ապահովել: Նա աթաբէկ եւ ամիրսպասալար Շահնշահ Գ. Ջաքարեանի²⁷, Սինիքի կողմնակալ Բուրթէլ Օրթելեան Երկարակեացի²⁸, Ծարի Դոփեան կողմնակալ Գրիգոր Խաչէնցո:²⁹ հետ ժԴ. դարի առաջին կեսի հայկական քաղաքական կեանքի կարեւոր դէմքերից մէկն էր:

ՔՈՒՐԴ Բ. ՎԱՉՈՒՍԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Քուրդ Բ. Վաչուտեանի կինն էր Իւանէ Ա. Ջաքարեանի որդու՝ Աագ Աթաբէկի թոռ Աթաբէկի որդի Ամիրբէկի դուստր Խուանդ խաթունը³⁰: 1314ի Կարբիի³¹, 1329ի Ուշիի Ա. Սարգիս եկեղեցու Հոռոմ երէցի³², Յովհաննավանքի 1350ի³³ արձանագրութիւններում նա յիշուել է Խուանդ խաթուն, 1316-35ին ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանում՝ Խոյա անունով:

Ուշիի 1329ի³⁴, Կարբիի 1338ի³⁵, Կարբիի 1343ի³⁶ եւ Յովհաննավանքի 1350ի³⁷ արձանագրութիւններից յայտնի է, որ Քուրդ Բ.ն ունեցել է մէկ որդի Թէոդոս անունով: Այս Թէոդոսն արտաքննապէս տգեղ լինելու հետեւանքով ստացել է Չրքին՝ տգեղ³⁸ մականունը:

²⁷ Հ. Խաչատրեան, Տ. Պետրոսեանց, *Հայկազունք, Շահնշահ Գ. Ջաքարեան*, Ամարաս հրատ., Երեւան, 2002, էջ 470:

²⁸ Նոյն, Բուրթէլ Օրթելեան, էջ 131. նաեւ՝ Կ. Մաթեոսեան, *Նորավանքի վիմագրերը եւ յիշարակարանները*, Մուղնի հրատ., Երեւան, 2017, էջ 20-21, 27, 51 եւն.:

²⁹ Կարապետ Եպիսկոպոս, *Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք*, Ա. Էջմիածին, 1914, էջ 45, 52, 60, 62-65 եւն. նաեւ՝ Տիգրան Հայազն (Տ. Պետրոսեանց), *Տիկնաք փառիկատուն Հայոց Աշխարհի*, Ասփա, հեղինակային հրատ., Երեւան, 2005, էջ 12:

³⁰ Կարբիի յաղթականար-եկեղեցու արձանագրութեան մեր ընդօրինակութիւնը:

³¹ Մեր հաւաքածուից:

³² Բարսայեան, Քալանթարեան, էջ 188:

³³ Ղաֆաղարեան, էջ 92:

³⁴ Բարսայեան, Քալանթարեան, էջ 188:

³⁵ Մեր հաւաքածուից:

³⁶ Մեր հաւաքածուից. նաեւ՝ Ա. Աագեան, *Վիմական արձանագրութիւնների բառարանութիւն*, Հայաստան հրատ., Երեւան, 1978, էջ 195:

³⁷ Ղաֆաղարեան, էջ 92:

³⁸ Չիրքին՝ «տգեղ». villain, laid = պարս. Cirkin (Հ. Աճառեան, «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», *Էմիւնեան ազգագրական ժողովածու, հիդր. Գ.*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 277):

Քուրդ Բ.ն նորացրել է խնամհական կապը հաչէնի Ծարա իշխանական տան հետ եւ իր Թաթուն անունով աղջկան կնութեան է տուել Հասան Գ.ի որդի Հասան Դ.ին: Դադի վանքի գմբէթատը եկեղեցու հարաւային պատի կենտրոնական կամարի մէջ, արտաքուստ փորագրուած է. «Կաման Ա/սորոճո/ի. ես՝ Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու Վահրամ, թոռն Դափանց, րվար ի Դադի վանս զմեր հայրենիքն զհուռ իր սահմանովն, հաստվն, վերին մարզով վասն սիրական հարսինն մեր Թաթունին, դստերն Քորդին Անբերդեցի՝ ամուսնո Հասանա (ընդգծումը մերն է - Տ.Պ.)»³⁹:

Քուրդ Բ. իշխանաց իշխանի Կարբիի յաղթականար-եկեղեցու 1338ի արձանագրութիւնը կարեւոր աղբիւր է: Այդտեղ Քուրդ Բ.ն իր կենդանութեան օրօք վաւերացրել է որդու՝ Թէոյոսի գահակից եւ Անբերդի տէր լինելը: Արձանագրութեան մէջ այդ միտքն այսպէս է ձեւակերպուել. «եւ հարազար որդի մեր Չրքին, րէր Անբերդոյ գասաոխս»⁴⁰:

Քուրդ Բ.ն մահացել է 1349ին կամ 50ին եւ թաղուել Յովհաննավանքում: Նրա յիշատակին որդին՝ Թէոյոսը նուէրներ է տուել Յովհաննավանքին. «րաւք ի մեր պապանց հալալ գանձագին հայրենիք՝ ի հանդէն Սերկեպո՝ ի Ա/ուր/ք Կարապետն եւ ի Սուրբ Կաթողիկէն, որ եղեալ է շիրիմ պարոն հայրն իմ՝ Այրարատին տէրն (ընդգծումը մերն է - Տ.Պ.)»⁴¹:

ՔՈՒՐԴ Բ.Ի ԻՐԱՆԱՅԱԶՈՐԴԸ

Կարբիի յաղթականար-եկեղեցու արեւելեան ճակատին, արտաքուստ փորագրուել է Քուրդ Բ.ի արձանագրութիւնը. «Թ/վ/ին/ 2ՁԷ /1338/: Ծնորհին Ա/սորոճո/ի: ես՝ Քուրդ Անբերդեցի իշխանաց իշխան, որդի Տալիփին, որդոյ Քորդին, թոռն Անբերդեցի Վաչէ իշխանի, սոն քաջի եւ պարտեազմոյի եւ ամուսին իմ հուանդ իսթուն, դուարը Ամրպէկին, թոռն Աթապակին Աագին եւ հարազար որդի մեր Չրքին րէր Անբերդոյ գասաոխս...»⁴²:

Քուրդ Բ.ի Կարբիի յաղթականար-եկեղեցու 1338ի արձանագրութեան մէջ վաւերացուել է նրա որդու եւ իրաւայաջորդի՝ Թէոյոսի Անբերդի տէր եւ գահակից լինելը:

Կարբիի 1338ի արձանագրութիւնը հնարատրութիւն է տալիս մէկ անգամ եւս անսպասելու Վաչուտեան կողմնակալութիւն-փոխարքայութիւնում ձեւատրուած մի հետաքրքիր ասանդոյթի, երբ հօր կենդանութեան օրօք որդին դառնում է գահակից: Այդպէս Վաչէ Ա.ի օրօք նրան գահակցել է որդին՝ Քուրդ Ա.ն: Քուրդ Ա.ին սկզբում, մինչեւ մահը (1261-62/63), գա-

³⁹ Դիան հայ վիմագրութեան, պրակ 5, Արցախ, կազմ՝ Ա. Գ. Բարխուդարեան, ՀԱՍԿ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 203, արձանագրութիւն 716:

⁴⁰ Մեր հաւաքածոյից:

⁴¹ Ղաֆաղարեան, էջ 92-94:

⁴² Մեր հաւաքածոյից:

հակցել է Վաչէ Բ.ն, այնուհետեւ՝ Հասանը: Եւ սահա Քուրդ Բ.ն իր կենդանութեան իշխանութեան գահակից է յայտարարել որդուն՝ Թէոյդոսին:

Թէոյդոսի իշխանութիւնը համընկել է իլխանութեան հոգեվարքի շրջանին, երբ մոնղոլական կենտրոնական իշխանութիւնը ներքին հակամարտութիւնների եւ սելջուկ-թուրքերի հարուածների տակ այնքան էր թուլացել, որ այդ զգացել են իլխանութեան անգամ այնքան հեռաւոր ծայրամասում, ինչպիսին Նիզ-Արագածոտնն էր:

Այդ առումով խիստ հետաքրքրական է Թէոյդոսի Կարբիի յաղթականար-եկեղեցու հարաային պատին 1343ին փորագրուած արձանագրութիւնը: Այն հրամանագիր է: Դրանում իշխանաց իշխան Թէոյդոս Վաչուտեանը յայտնել է. «Ես՝ Չրքինս, որդի Քրդին, քեր Անբերդոյ գաւառի, անիրաւու/նք տեսա, որ զճանապարհորդի ծիպուլս տաին, մե/նք զայս արձան գրեցաք, որ այլ ի Կարբի ճանապարհորդի ծիպուլս չտան (ընդ-զձումը մերն է - Տ.Պ.)»⁴³: Փաստօրէն կողմնակալութեան գահակալը վերացրել է «ծիպուլսի»՝ իլխանական պետութեան մէջ սուրհանդակներին, երթեւեկին եւ հարկահաւաքներին ծիով, պարէնով, անասնակերով ապահովելու պարտականութիւնը, որ ամբողջ ծանրութեամբ ընկած էր բնակչութեան ուսերին: Արձանագրութիւնից մէկ անգամ ես երեւում է, որ դէպի Վրաստան տանող ճանապարհն անցել է Նիզ-Արագածոտնով եւ իլխանական ճանրագոյն այդ հարկը մեծ վնասներ է հասցրել բնակչութեանը: Եւ, օգտուելով իլխանութեան թուլացումից, նշելով «անիրաւունք», այսփինքով՝ անգամ քանց այդ իրաւունքն ունենալը, Թէոյդոս Վաչուտեանն իր փոխարքայութեան տիրոջթում վերացրել է «ծիպուլսի» հարկը:

1350ին Յովհաննանավանքում փորագրուել է Թէոյդոսի վերջին արձանագրութիւնը: Իշխանաց իշխան Թէոյդոսը հողեր է պարգեւել Յովհաննանավանքին «ի հանդէն Սերկեւրլո... Բունկայ ծովէն, Գոթանավի գլխովն, որ ճանապարհն Կութթաի, Սերկեւրլո ծովն, Շաչանի ըրիզովն»: Հողային այս նուիրապրտութիւնը Թէոյդոսն արել է Յովհաննանավանքին, որ «եղե/աւ/ է շիրիմ պարոն հայրն իմ՝ Այրարաբին քերն»⁴⁴:

Արձանագրութեան շարադրման եղանակը յուշում է, որ գրուել է ի յիշատակ Քուրդ Բ.ի, որի մահը տեղի է ունեցել այդ կամ դրան նախորդող տարում՝ 1349/50ին: Չրքինի նուիրատուական հրամանագիրը հաստատել է կողմնակալութեան այդ պահի երկրորդ դէմք մայրը՝ Խոսանդ խաթունը, որից կարելի է եզրակացնել, որ Քուրդ Բ.ն նոր է մտացել եւ Թէոյդոսը դեռեա չի հաստատուել իօր փոխարէն: Խոսանդ խաթունի անունից փորագրուել է. «Ես՝ Խոսանդ խաթուն ամուսին Անբերդեցի Քրդին, մայր Չրքընին... կրկին հաստատեցի զվերոյ գրեալս»⁴⁵: Նման եզրակացու-

⁴³ Աւագեան, էջ 194 եւ յետոյ:

⁴⁴ Աւագեան, էջ 92:

⁴⁵ Նոյն:

թեան համար հիմք է այն, որ համաձայն միջնադարեան իրաահամակարգի՝ իշխանական սեփականատիրութեան ամբողջական իրատունքը պատկանել է գահակալ իշխանին, որի անձի մէջ գերագոյն հողային իրատունքը նոյնացուել է նրա քաղաքական-վարչական իշխանութեան հետ, եւ միայն նրա հաստատումից յետոյ է ուժի մէջ մտել ստորադաս ծառայողների, անգամ գահակից զաակի նուիրատուութիւնը:

Զաքարիա Քանաքեղոցին արտագրելով Չրքինի արձանագրութեան հուանդ խաթունի հաստատում-հատուածը, «ամուսին Ամբերդեցի Քրդին, մայր Չրքընին» բառերից յետոյ դժուարընթեռնելի տառերի փոխարէն կարդացել է Թայիկ անձնանունը եւ եզրակացրել, որ Թայիկը Թէոյոսի եղբայրն է: Այդ սխալն անցել է Յովհաննէս Շահխաթունեանցին⁴⁶, Ղետնդ Ալիշանին⁴⁷, Կարապետ Կոստանեանցին⁴⁸: Կարօ Ղաֆադարեանն արձանագրութեան այդ հատուածը թէւ որոշ չափով ուղղել է, բայց դարձեալ թողել է անորոշ «մայր Չրքընին Բ... անին պէկին»⁴⁹: Արձանագրութեան այդ հատուածը մենք ճշտել ենք Կարբիի Քուրդ Բ.ի արձանագրութեան հիման վրայ. «մայր Չրքընին, դուստր Ամրպէկին, թոռն աթապակ Ամրպէկին»:

Չրքինի եւ հուանդ խաթունի այս արձանագրութիւնը Վաչուտեան իշխանների վերջին արձանագրութիւնն է ու նրանց վերջին յիշատակութիւնը:

ՔՈՒՐԴ Բ.Ի ԵՆԱՐԱՐԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Քուրդ Բ.ն վերանորոգել է Անբերդ բերդաքաղաքը⁵⁰, այն կրկին դարձնելով կողմնակալութեան-փոխարքայութեան մայրաքաղաք, Կարբիի բերդն ու բուրգերը, կառուցել է Կարբիի յաղթականար եկեղեցին:

Թշնամիների դէմ տարած յաղթանակները Քուրդ Բ.ն յաւերժացրել է Կարբիի յաղթականար-եկեղեցու կառուցումով, որի շինարարութիւնն ամենայն հաւանականութեամբ աւարտուել է 1338ին: Նման յաղթականարի կառուցումը եզակի երեսոյթ է հայկական իրականութեան մէջ:

Յովհաննավանքի արեւմտեան կողմում՝ մօտ մէկ կիլոմետր հեռաւորութեամբ, Քասաղ գետի աջակողմեան ու ձախակողմեան ափերին տարածուած է եղել Արագածոտն (Աշտարակ) գաւառի հնագոյն բնակավայրերից

⁴⁶ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց, *Արորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014, էջ 277:

⁴⁷ Ալիշան, *Արարատ*, էջ 171:

⁴⁸ Վիմական ցարեպիղ, *Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց*, կազմ.՝ Կ. Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 171:

⁴⁹ Նոյն:

⁵⁰ Տ. Պետրոսեանց, «Անբերդի ամրոցը», *Հայկական բանակ* (<< ՊՆ պաշտպանական ազգային հետազօտական համալսարանի ռազմագիտական հանդէս), 2018:1-2, էջ 252:

մէկը՝ Կարբին: 1278ին Մկրտիչ գրիչը Կարբիում արտագրած ձեռագիր ժողովածուի յիշատակարանում նշել է. «...ի գեղաքաղաքիս Կարբի»⁵¹: Միջին դարերում Կարբին այնքան համբաւատր էր, որ յիշուել է նաեւ որպէս քաղաք:

Քիւղը հարուստ է Վաչուտեանների օրօք կառուցուած շինութիւններով:

Կարբիի ձորի միա ափին կառուցուել է բերդ, ներկայ գիւղից շուրջ կէս կիլոմետր արեւելք, պեղումներով բացուել է ԺԳ. դարի եկեղեցի՝ կից մատուռով:

Քուրդ Ա.ի որդիներ Հասանը եւ Դաւիթ Բ.ն, որոշ ժամանակ նաեւ Քուրդ Բ.ն ԺԳ. դարի 70-90ականներին Նիգ գաւառի Վարդենիս գիւղից Կարբի են փոխադրել փոխարքայութեան մայրաքաղաքը:

ԺԴ. դարի առաջին քառորդում Կարբիում շինարարական գործունէութիւն է ծաւալել Քուրդ Բ. Անբերդեցին: Դարի առաջին տասնամեակում, պաշտպանական այլ ամրութիւնների թում, նա վերականգնել-ամրացրել է Կարբիի բերդը եւ բուրգերը:

1338ին Քուրդ Բ.ն գիւղի կենտրոնական մասում կառուցել է խիստ իւրօրինակ եռալայր շինութիւն: Առաջին յարկը երկու կողմից բաց, թաղակապ կամար-սրահ է, երկրորդ յարկը՝ դրսից ուղղանկիւն, ներքուստ՝ խաչաձեւ, արեւելեան կողմում կիսաշրջան խորանով եկեղեցի է: Երկրորդ յարկի մուտքը գտնուում է արեւմտեան կողմում, պատի մէջ ագուցուած դէպի վեր տանող քարէ աստիճանները չեն պահպանուել: Եկեղեցու կտուրի կենտրոնում ութ ձեւատր սիւների վրայ նստած է երրորդ յարկի սրածայր վեղարը: Մուգ գոյնի սրբատաշ տուֆով կառուցուած այս վերասլաց շինութիւնը գրականութեան մէջ անուանում են զանգակատուն:

Սակայն սահմանափակել այս կառոյցի նշանակութիւնը զանգակատունով՝ ճիշտ չէ: Այստեղ մենք գործ ունենք առաջին հերթին **յաղթակամարի** հետ: Նախորդ տասնամեակներում թշնամու դէմ Քուրդ Բ.ի տարած յաղթանակները, որով Այրարատի նահանգում յարաբերական խաղաղութիւն է հաստատուել, այդ յաղթանակները կերտող Քուրդ Բ.ն նշանատրել է յաղթակամարով: Կառոյցը յիշեցնում է ԺԴ. դարի առաջին տասնամեակներում կառուցուած Եղուարդի Ս. Աստուածածին (1301), Նորավանքի Բուրթէլաշեն (1339), Արովեանի շրջանի Կապուտանի (1349) եռալայր եկեղեցիները: Վերջիններիս նման Կարբիի շինութիւնը վերասլաց է, միաների նման կառոյցի երկրորդ եւ երրորդ յարկերը նման են: Ինչպէս միաների՝ Կարբիում եւս երկրորդ յարկում եկեղեցի է, երրորդում՝ սիւնաշարով զմբէթ: Բայց միաներին հակառակ Կարբիի շինութեան առաջին յարկում կիրառուել է **նորոյթ**: Առաջին յարկում ստեղծուել է միջանցիկ բաց կա-

⁵¹ ԺԳ. դարի յիշարակարաններ, էջ 479:

մարածե տարածք եւ շինութիւնը վերածուել է յաղթակամարի⁵²: Այս դէպքում առկայ է Հոռոմոսի յաղթակամարի նմանութիւնը: Ուղղակի առաջին յարկի սնանէջ կառոյցի փոխարէն առկայ են քառակոսի շինութեան հարաային եւ հիսսիսային պատերը, որոնք իրենց վրայ կրում են երկրորդ եւ երրորդ յարկերի ծանրութիւնը:

ՃՇՏՈՒՄ. Ո՛Վ Է ԳՈՒՀԱՐ ՏԻԿԻՆԸ

2000ին Ուշիի Ս. Սարգիս եկեղեցու պեղումների ընթացքում գապօի հարաային պատի հատուածում յայտնաբերուել է մի արձանագրութիւն, որը փորագրուել է Քուրդ Ա.ի որդիներից մէկի կողմից: Արձանագրութիւնը եղել է չորս քարերի վրայ, որոնցից երեքն են պահպանուել: Տիրակալի անունը կրող քարը չի գտնուել, սակայն շարունակութիւնից յայտնապէս երեւում է, որ այն փորագրուած է Քուրդ Ա.ի որդու կողմից. «...որդի իշխանի Քորդի եւ թոռն մեծին Վաչէի...»⁵³: Այս արձանագրութիւնը կարետր է նրանով, որ այստեղ յիշուած է այդ իշխանի կնոջ Գոհար անունը:

Քուրդ Ա.ի վաղամեռիկ Վաչէ Բ. որդու կնոջ անունը եղել է Մամախաթուն, Հասան իշխանի կնոջ անունը՝ Արուա խաթուն: Մնում է ենթադրել, որ Գոհար տիկինը կարող էր լինել Դաւիթ Բ.ի կամ Տայիրի կինը:

Տայիրի որդի Քուրդ Բ. իշխանաց իշխանի (որ ենթադրաբար յաջորդել է Դաւիթ Բ.ին), անունից փորագրուած արձանագրութիւնների կամ գրիչների կողմից ընթօրինակուած ձեռագրերի յիշատակարանների տոհմագրական բանաձեւերում նրա մօր անունը չի յիշուել, թէեւ մանրամասնօրէն նշուել է հօր տոհմագրութիւնը: Հասանական չէ, որ Գոհար տիկինը լինէր Քուրդ Բ.ի մայրը եւ փորագրիչներն ու յիշատակարանագիրները չիշէին նրա անունը: Հակուած ենք ենթադրելու, որ Գոհար տիկինը իրականում եղել է Դաւիթ Բ. կողմնակալ-փոխարքայի կինը:

Ահա Քուրդ Ա.ի անանուն որդու այդ պակասատր արձանագրութիւնը.-
... [որ]դի իշխանի Քորդի [ե]ւ թոռն մեծին Վաչէի եւ [Վ]... սիրելի մար
Խորիշահի, դստեր Մարծպանա, յազգէ Մամի[կոնեաց]...փոխեցաց արձանս
եւ ամուսին իմ Գոհար[տիկին]...մեր զավակ յետ մեր եւ ծնողքիս
շինե[ցաք]...ծից սրբոց ... արձան առ Ա(ստուա)ծ եւ փ...⁵⁴:

Ուշիի վիմագրերը արտագրող գիտնականները ենթադրել են, որ գաւթի արեւելեան մուտքի ձախ կամարի եւ կից շինաքարերի վրայ փորագրուած արձանագրութիւնը, որտեղ առկայ է Գոհար տիկին անունը, դարձեալ Գոհար տիկնոջն է վերաբերում.

⁵² Տ. Պետրոսեանց, «Ճարտարապետական եզակի կառոյցներ Այրարատի փոխարքայութիւնում», *Խաչարուր Արովեանի անուան ՀՊՍՀ Հայագիտական հանդէս*, 2020:1(46), էջ 102-04:

⁵³ Բաբայեան, Քալանթարեան, էջ 198:

⁵⁴ Եոյն:

[Կաման անմա]հին Աստուծոյ: Ես/... ս շնորհս (ընդգծումը մերն է – Տ.Պ.) եւ ամ-/ուսին իմ Գոհար տիկին, միաբ/անեցաք Սուրբ Չորակալ-Գրիս ... կանի .../... նափորտ որ չ/... ոսկեա եւ ընպանակ/... ին եւ խրթին եւ/միաբանքս խոստացան/պատարագ ի տանի Կարդավ/առին յանուն Գոհար/տիկն[ն]: Կատարիչքն արի-/նին յԱստուծոյ⁵⁵:

Այս արձանագրութեան մէջ յիշուած Գոհար տիկինը մեր կարծիքով չի կարող նոյնացուել արձանագրութեան մէջ յիշուած Քուրդ Ա.ի անանուն որդու կին Գոհար տիկնոջ հետ: Վիմագիրն արտագրողները ենթադրել են, որ երկու արձանագրութիւնների մէջ յիշուել է նոյն անձը: Սակայն արձանագրութեան երկրորդ-երրորդ տողերում առկայ «...ս շնոհս եւ ամուսին իմ Գոհար տիկին...» նախադասութիւնը բացառում է այդ նոյնացումը: Կարծում ենք, որ «...ս շնոր/հ⁵⁶ս...» բառը տուեալ տեղում ոչ թէ սովորական բառ է, այլ անձնանուն եւ այդ անձնանունն տէրն է տուեալ Գոհար տիկնոջ ամուսինը:

Արձանագրութեան հրատարակիչները կարծիք են յայտնել, որ Քուրդ Ա.ի անանուն որդու կին Գոհարը կարող է լինել ամենակրտսեր որդու՝ Տայիրի կինը, ինչը վերելում փորձել ենք բացատրել: Վերը ներկայացրած երկու արձանագրութիւնների գրչագրերը թոյլ են տալիս դրանք թուագրել ԺԳ. դարի 80-90-ականներով եւ դրանից ելնելով կրկնել, մեծարժէք նուիրատուութիւններով եւ վանական համայնքի կեանքում ունեցած դերով Գոհար տիկինը կարող էր լինել գահատիրոջ կին, իսկ այդ պահի գահակալը Դափթ Բ. Վաչոտեանն էր: Եւ որեւէ յուշում չկայ, որ թէկուզ կարճ ժամանակով Դափթ Բ.ի կրտսեր եղբայր Տայիրը եղել է գահակալ:

Հասանական է, որ գալթի սրբատաշ, խաչաքանդակ քարերից մէկի վրայ առկայ «Գոհ[ար] / տիկին /աղանթ(ս) յիշեցեք» նախադասութիւնը վերաբերում է Քուրդ Ա.ի անանուն որդու կին Գոհար տիկնոջը:

Բաքայեանը եւ Քայանթարեանը նոյնացրել են Գոհար տիկնոջը Յովհաննավանքի գալթում փորագրուած Խափլանի արձանագրութեան մէջ յիշուած «Գոհար մքի»⁵⁷ հետ: Նման նոյնացման համար թեական հիմք է ծառայել Գոհար տիկնոջը վերաբերող երկրորդ արձանագրութեան «...ին եւ խրթին եւ ...» տառաշարքի խրթին բառը եւ Խափլանի արձանագրութեան 9րդ տողում յիշուած Խուրթին անունների հասանական նոյնացմամբ: Մինչդեռ Խափլանի ամբողջական արձանագրութիւնը ժխտում է երկու Գոհարների նոյնացումը: Ահա Խափլանի ամբողջական արձանագրութիւնը. «Ես՝ Խափլանս, միաբանեցա սրբոցս եւ էլու ինչս ի ժամապուտնս: Եւ սոքա խոստացան ի արարոջն :Ժ: ար ժամ ի րանի Սուրբ Սարգսին՝ :Ե: ինձ եւ :Բ: Գոհար մքին, եւ :Գ: Խուրթին: Մե/ն/ք եւ ազգ մեր

⁵⁵ Նոյն, էջ 196:

⁵⁶ Բ տառի վերականգնումը մերն է:

⁵⁷ Ղաֆաղարեան, էջ 104:

ծառայեցուք սրբոց: Կարարիչ գրոյս արհնին յԱստուծոյ»⁵⁸: Սոյն արձանագրութեան պատարագների ստացման բանաձեւին հետեւող «Մենք եւ ազգ մեր» բառաշարքը հաստատում է, որ սա Խափանի ընտանիքն է եւ այդտեղ յիշուած Գոհար մըքը որեւէ կապ չունի Ուշիի արձանագրութիւններում յիշուած Գոհարի հետ:

Սոյն արձանագրութեան «...ին եւ խրթին եւ ...» բառերից ելնելով հրատարակիչները եւ մէկ սխալ եզրակացութիւն են արել: Համարելով, որ Գոհար տիկինը Վաչուտեան Տայիրի կինն է՝ առաջին կէտերի փոխարէն ենթադրաբար վերականգնել են [Քուրդ]ին (իբրեւ Քուրդ Բ. Անբերդեցի - Տ.Պ.) եւ Խուրթին արական անունները: Որ Գոհար տիկինը կարող էր լինել Տայիրի կինը արդէն բացառել ենք եւ Գոհար մըքի Խուրթիի եւ Գոհար տիկինոջ Խրթիի նոյնացումը նոյնպէս բացառում ենք: Չենք կարծում, որ Գոհար տիկինոջ արձանագրութեան մէջ առկայ խրթին բառը լինի անծնանուն եւ դրան նախորդող *ին* վերջատրութիւնն էլ լինի մէկ այլ անուանացիչ, առաւել եւս, որ դրանք չեն կարող նոյնանալ Քուրդ Բ. Անբերդեցու հետ: Ոչ Քուրդ Բ.ն, ոչ նրա որդի Չրքիինը թէ՛ իրենց արձանագրութիւններում, թէ՛ նրանց վերաբերող ձեռագրերի յիշատակարաններում եւ արձանագրութիւններում եղբայր կամ հօրեղբայր չեն յիշել:

Վիմագրագէտ Սամուէլ Կարապետեանը 2003ին, ապա 2011-13ին ուսումնասիրել եւ 2013ին հրատարակել է Տեղերի վանական համալիրի վիճագիր արձանագրութիւնները: Նա շրջանառութեան մէջ է դրել գալթի հարապակին պատին, կենտրոնական լուսամտից արեւելք, ներքուստ, ձեփի շերտի վրայ սեւ ներկով գրուած կիսաեղծ արձանագրութիւն. «... *հր/ամանա/ ... անին եւ ի պ... սպասալարին, որդի Իվանէ[ի] մեծին Շահնշահի: Ես՝ Դավիթ [որդի] Քրդին [իշխանաց իշխանի] եւ թոռն Վալէի, եւ իմ որդիքս՝ Ք[...]* եւ Վաչուրն ... ի Տեղերո Աստուածածինս ... գնել հանդովն ու ջրովն ... մեզ խոստացան ի փարին ... ար պատարագ ... որչափ կենդանի ենք մեր ծնողացն ամեն, եւ յեպ ... կամ յիմոց կամ ի խարարագ/ ... խաչահանողացն անցե...»⁵⁹:

Այս արձանագրութեան սկզբնահատուածից կարող ենք վերականգնել երկրի տէրերի շարքը յետադարձ կարգով. «մեծին Շահնշահը» Ջաքարէ Բ.ի որդի Շահնշահ Ա.ն է, «Իանէ»ն՝ նրա որդին՝ Իանէ Բ.ն, իսկ առաջին անունը, որ չի կարդացում, բայց կայ անուանատիրոջ պաշտօնը՝ «սպասալարին», յուշում է որ խօսքը Իանէ Բ.ի որդի ամիրպասալար, աթաբէկ Շահնշահ Գ.ի մասին է, քանի որ Իանէ Բ.ի միւս որդիները՝ Վահրամ Դ.ն եւ Ջազա Ա.ն յիշուել են միայն աթաբէկեր եւ ոչ սպասալար: Այսինքն շարքը դառնում է այսպիսին՝ Շահնշահ Ա.-Իանէ Բ.-Շահնշահ Գ.: Իանէ

⁵⁸ Նոյն:

⁵⁹ Ա. Կարապետեան, «Տեղեր», *Վարձք (Խանդէս)*, 2013:10, էջ 28-29: Արձանագրութեան մէջ ուղղանկիւն փակագծերում եղած բառերը մեր վերականգնումն են:

Բ.ն 1261ին յաջորդել է սպանուած եղբորը՝ Չաքարէ Դ.ին եւ գահակալել մինչեւ 1263: Նրա որդի Շահնշահ Գ.ն ախտի ծնուած լինի մինչեւ 1263ը: Այսպիսի հանգամանքներում սպասալար Շահնշահ Գ.ն կարող էր գործել 1280-1310ականներին, քանի որ Անիում փորագրուած նրա կնոջ՝ Սահիպ Դիանի դուստր Խուանդզէի արձանագրութիւնից պարզում է, որ ամուսինը մահացել է 1320ին⁶⁰: Այս ժամանակահատուածի (1280-90ականներ) համընկնում են Քուրդ Ա.ի որդի Դափթ Բ. Վաչուտեանի գործունեութեան եւ գահակալութեան տարիներին, որը սկսուել է 1283ից եւ շարունակուել գուցէ մինչեւ դարի վերջը:

Տաջորդ բանաձեւը յուշում է արձանագրութեան հեղինակի անձը՝ «Դափթ, [որդի] Քորդին [իշխանաց իշխանի] եւ թոռն Վալէփի»: Խօսքը Քուրդ Ա.ի որդի Դափթ Բ.ի մասին է:

Նորայայտ արձանագրութիւնը յուշում է, որ Դափթ Բ.ն իր որդիների հետ այցելել է հօր ու մօր կառուցած Տեղերի Ս. Աստուածածին եկեղեցին եւ նուէրներ տուել եկեղեցուն:

Կարապետեանը երեսացող տառերի եւ պահպանուած տառահետքերով կարդացել է «*իմ որդիքս Ք[...]* եւ Վաչուտե» անունները:

Պահպանուած տառահետքերով կարդացում է «Վաչուտ» անունը. այդ վերականգնման հետ համաձայն ենք, դրան նախորդող «*Ք*»ով սկսող անունի «*Ք*[որդ]» լինելուն եւ համաձայն ենք: Ժամանակի սովորութային իրատւերով իշխանատրի ասագ որդին կրել է պապի, նրանից յետո ծնուածը՝ ապուպապի անունը: Այս դէպքում գործել է հենց այդ բանաձեւը:

Մենք համոզուած ենք, որ այս Դափթ Բ.ի կինը Ուշիի Ս. Սարգիս եկեղեցու վիմագրերից յայտնի Գոհար տիկինն է:

Խնդիրը բացարձակ այդ անունների Քուրդ, Վաչուտ լինելը չէ, այլ՝ որ Դափթ Բ.ն ունեցել է երկու արու զաակ: Յովհաննավանքի 1283ի Վաչուտեան Հասան իշխանի կտակ-արձանագրութեան համաձայն, նա եւ ունեցել է զաակներ. «...եւ՝ Հասան իշխան... եւ ամուսին իմ Արուս խաթուն... փարաժամ եւ կէս ատոյց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր եւ զամէն հայրենիս եւ զզաակս մեր (ընդգծումը մերն է - Տ.Պ.) Դափթ եղբար մեր հարազատի եւ Աստուածայսիրի»⁶¹: Փաստօրէն անելի վաղ մահացած Հասան իշխանը, ապա Դափթ Բ. իշխանը զաակներ են ունեցել, բայց Հասան իշխանի եւ Դափթ Բ. իշխանի զաակներից որեւէ մէկը կողմնակալութեան-փոխարքայութեան գահը չի ժառանգել:

Կարծում ենք, որ Սաղմոսավանքի գրատան 1255ի արձանագրութեան մէջ ներկայացուած Տայիր անունով որդին կարող էր 1255ին լինել 5 կամ

⁶⁰ Հ. Ղևոնդ Ալիշան, *Շիրակ. արեղագրութիւն պատկերացոյց*, Վենետիկ, 1881, էջ 62 (տե՛ս նաեւ 175 թերթի վրայ Չաքարեանների տոհմաճարը):

⁶¹ Ղաֆաղարեան, էջ 90-91:

10 տարեկան, ատյին՝ կարող էր 1270ականներին որդի ունենալ Քուրդ անունով (Քուրդ Բ. - Տ.Պ.), որն էլ նոյն դարավերջին շրջանցելով Հասան, Դափթ Բ. իշխանների որդիների իրատունքները նստել է կողմնակալութեան-փոխարքայութեան գահին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմական իրաքանչիւր ժամանակաշրջան ծնել է իր հերոսներին: Նրանք ծնուել են ե՛ւ ազգի համար երջանիկ ժամանակներում, ե՛ւ ազգի համար ծանր, օրհասական օրերին: Նրանց ծնել է անհրաժեշտութիւնը: Նրանց գերխնդիրը եղել է իրենց անձով ու գործով նպաստել ազգի համար կարեւորագոյն խնդիրների լուծմանը: Նրանց շնորհիւ է, որ ազգը յարատեւել է: Հայ ժողովրդի պատմութեան ԺԴ դարի եզակի հերոսներից է Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան կողմնակալ-փոխարքայ Քուրդ Բ. Վաչուտեան Երկարակեաց իշխանաց իշխանը: Նրա կերպարը խիստ այժմէական է եւ այսօր էլ ընդօրինակելի: Նրա նման հերոսներով է յաւերժ հայոց պատմութեան անկանգ ընթացքը:

TIME AND DEEDS OF THE PRINCE OF PRINCES, KURD II OF ANBERD (1300-50s)

(Summary)

TIGRAN PETROSYANTS (tigranhayazn@mail.ru)

The Prince of Princes, Kurd II Vachutyan of Anberd, governor of the governorship Ayarat, ruled between 1300 and 1350. He is considered an outstanding ruler of 14th century Armenian history.

Kurd II was a far-sighted diplomat and a patriot. He established good relations with successive Mongol rulers, like Ghazan and Khudabende/Harpan, and was welcomed by them. These khans, in return for his services, granted him the right of independent rulership of the district of Ayarat.

Kurd II, however, taking advantage of the weakening of the Mongols, established and trained a combat-ready army, and at the proper time recaptured and fortified fortresses (Anberd, Karbi) lost to the enemy.

Based on historical data and diverse sources, the article narrates the political career of Kurd II in the turbulent times of the first half of the 14th century and portrays him as a patriotic, visionary diplomat.

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՆ ԸՍՏ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ

ԱՂԲԻՒՐՆԵՐԻ Բ.- ՔԱՅՆՈՒՔ

ԳԱԳԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ (gagidaniel@gmail.com)

Սոյն յօդուածաշարի առաջին հրապարակումը¹ նուիրուած էր Կիլիկեան Հայաստանի մի ծովափնեայ նաահանգստային բերդի, որը լատին աղբիւրներում յիշատակուած է Կանամելլա (Canamella) կամ Կարամելլա (Caramella, Caramela) անուանումներով, իսկ արաբական աղբիւրներում յայտնի է *ալթինի* (al-Tinī) կամ *Հին ալթինաթ* (al-Ḥin al-Tināt / Tināt) անուններով: Ինչ վերաբերում է հայալեզու աղբիւրներին, ապա նրանցում յիշեալ ամրոցի մասին առհասարակ տեղեկութիւններ չեն պահպանուել: Այս հրապարակումը նման է նախորդին նրանով, որ ներկայ հետազոտութեան թեմա ընտրուած «Քայնուք» բերդի մասին նոյնպէս հայալեզու սկզբնաղբիւրներնեւ յիշատակութիւններ չկան՝ մասնատրապէս այն ժամանակաշրջանի համար, երբ բերդը Կիլիկեան Հայաստանի տարածքի մաս է կազմել: Տուեալ պարագայում տեղեկութեան միակ աղբիւրը օտարալեզու՝ մասնատրապէս արաբական պատմագրութեան յուշարձաններն են:

«Քայնուք»-ը բերդի աւելի ուշ շրջանի անուանումն է, այդ թում երբ գտնուել է Կիլիկիոյ հայոց թագաւորութեան վերահսկողութեան ներքոյ: Մինչդեռ արաբ-բիզանդական հակամարտութեան շրջանում Է.-ժԱ. դարերում, այն արաբներին յայտնի էր Հին ալՀադաս (al-Ḥadath), կամ աւելի ճիշտ՝ ալՀադաս ալՀամրա (al-Ḥadath al-ḥamra'), իսկ յոյներին՝ *Adata* (Ἀδάτα) անուանումներով:

Ինչպէս որ ալթինին, ալՀադասը նոյնպէս մօտ չորս դար շարունակ եղել է արաբ-բիզանդական սահմանային գօտու՝ *Tuḡṭā* կարեւորագոյն ամրութիւններից (' *awāṣim*) մէկը՝ մշտապէս կոռախնծոր լինելով երկու կողմերի համար²: Այն պատկանում էր ալՋազիրայի (Հիսիսային Միջա-

¹ Տե՛ս՝ Գ. Դանիլեան, «Կիլիկեան Հայաստանի բերդերն ու քաղաքներն ըստ մուսուլմանական աղբիւրների, Ա. ալթինի», *Journal of the Society for Armenian Studies (JSAS)*, 2021:27(2), էջ 151-82:

² ԱլՀադասի պատմութեան վերաբերեալ համառոտ յօդուածներ կան *Իսլամի հանրագիտարանի* առաջին եւ երկրորդ հրատարակութիւններում (*The Encyclopaedia of Islam. A Dictionary of Geography, Ethnography and Biography of Muhammadan Peoples*, E.J. Brill, Լէյտէն, 1927 (վերատպ. 1993), էջ 187 եւ S. Ory, "Al-Hadath", *The Encyclopaedia of Islam (EP)*, vol. III, (New Edition) E.J. Brill, Լէյտէն, 1991, էջ 19-20: Բերդի պատմութեան յատկապէս վաղ շրջանի աղբիւրներն իր աշխատութեան մէջ լրագոյնս մատնանշել է Գ. Լը Սթրենցը (G. Le Strange, *Palestine under the Muslims. A Description of Syria and the Holy Land from A.D. 650 to 1500*, Alexander P. Watt, Լոնտոն, 1890, էջ 443-44 եւ նոյնի՝ *The Lands of the*

գետքի) բերդաշարքին: Բերդի աշխարհագրական դիրքը ռազմավարական մեծ կարևորություն էր ապահովում նրա համար: Այն գտնուում էր Լեռնային Կիլիկիայի սահմանագլխին՝ Տալոսեան լեռների ստորոտին՝ Մալաթիայի եւ Մարաշի միջեւ, եւ հսկում էր Ալբիստան տանող լեռանցքը (*Darb al-Hadaṣ*): Այս առումով այն կարեւորագոյն լեռնակէտ էր արաբների համար Բիզանդական Կայսրութեան փոքրասիական տարածքներ ներխուժելու եւ ընդհակառակը՝ իսլամական հողերը բիզանդական արշաանքներից պաշտպանելու համար: Թուրքիայի արեւելեան շրջանների պատմաճարտարապետական ուսումնասիրութեանը նուիրուած իր հիմնարար աշխատութեան մէջ Թ. Սինկլէրը գրում է, որ Ը.-ժ. դդ. ալՀադասի հիմնական գործառոյթը Բիզանդական Կայսրութեան սահմանագծից ոչ հեռու զօրքերի կենտրոնացումն ապահովելն էր Հարունիյայից (Կիլիկեան դաշտավայրի արեւելեան եզրից) Մալաթիա տանող ճանապարհի երկայնքով: Ըստ նրա, բերդն աւելի մեծ կարեւորութիւն է ձեռք բերել ժ. դարի սկզբներին, երբ Էլբիստանի դաշտավայրը նուաճել են բիզանդացիները³:

ԱլՀադասը նաեւ քրիստոնէական բնակչութիւն է ունեցել: Միջայլէ Ասորու վկայութեամբ՝ Ը.-Թ. դդ. ալՀադասում նաեւ ասորական արեւելեան ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսական աթոռ է եղել: Իր ասորերէն ժամանակագրութեան յանելուածում նա յիշատակում է Թ.-ժ. դդ. ասորի Յակոբիկ պատրիարքների կողմից ձեռնադրուած 13 թեմակալ առաջնորդի անուն, եւս մէկին յիշում է որպէս «Հադասի եւ Ռարանի» եպիսկոպոս⁴:

Eastern Caliphate (Mesopotamia, Persia, and Central Asia from the Moslem conquest to the time of Timur), Cambridge University Press, Քենսայրիճ, 1905, էջ 121-22. նաեւ՝ F. Hild, *Das Byzantinische Strassensystem in Kappadokien (Tabula Imperii Byzantini, Band 2)*, Österreichische Akademie der Wissenschaften, Վիեննա, 1977, էջ 138-40. նաեւ՝ W.M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, Լոնտոն, 1890, էջ 301. նաեւ՝ Ղ. Ալիշան, *Սիսուան (իսամագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեռն Մեծագործ)*, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 428. նաեւ՝ Բ. Կիլկերեան, *Յուլք-Տրոյք եւ Հոռոմ-Կոյս (պարմեական եւ րեղազրական ուսումնասիրութիւն)*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1904, էջ 111-15 (սխալմամբ ալՀադասը նոյնացնում է Ալեքսարի հետ). նաեւ՝ Գ. Սարաֆեան, *Պարմուսիւն Անթիպի հայոց, հպր. Բ.*, Լոս Անճելըս, 1953, էջ 216. նաեւ՝ Հ.Թ. Նալբանդեան, *Արաբական արդիւրները Հայաստանի եւ հարեան երկրների մասին. Եակոբյ ալՀամաուի, Արուֆ-Ֆիդա, Իրն Շարդադ, Երեւան, 1965, էջ 155. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Քալաշեան, Յ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների րեղանունների բառարան, հպր. 3, Երեւան, 1991, էջ 300. նաեւ՝ T.A. Sinclair, *Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, vol. IV*, Pindar Press, Լոնտոն, 1990, էջ 77-79:*

³ Sinclair, էջ 77:

⁴ *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche, 1166-1199, t. III*, éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, E. Leroux, Փարիզ, 1905, էջ 451-82 (փնտտել ըստ *Hadet* տեղանուն) եւ 499 (ցանկ եպիսկոպոս)

Ստորեւ միջնադարեան սկզբնադրութիւններում բերդամրոցին վերաբերող տեղագրական վկայութիւնները եւ պատմութիւնը :

ԱլՀադասի մասին առաջին վկայութիւններն մուսուլմանական պատմաաշխարհագրական գրականութեան մէջ վերաբերում են Է. դարին: ԱլԲալագուրին (մահ. 892) իր բերդի մասին գրում է.

Հիսն ալՀադասը գրաւուել է Օմարի⁵ օրօք: Այն գրաւել է Հաբիբ իբն Մասալմայի [իրամանատարներէից] Իյադ Իբն Ղանմի⁶ կողմից: Դրանից յետոյ Մուսալիան⁷ վստահում էր նրան: Օմայեանները Հադասի լեռնանցքն անուանում էին ալՍալամա (իմա՝ անվտանգութիւն, ապահովութիւն)⁸ որպէս վատ նախանշանակ, քանզի բազմաթիւ մուսուլմաններ էին այնտեղ գերութեան մէջ ընկնում: Սա միակ դիպուածն էր (կամ իրադարձութիւնը) է, ինչ որոշ մարդիկ պատմում են նրա մասին⁹: Մի մասն էլ ասում է, թէ մուսուլմաններն այնտեղ մի դեռահասակ պատանու (քնագրում՝ *šulam hadat*) են հանդիպել, ով իր զինուկներնրի հետ կոտել է իրենց դէմ, եւ այդպէս «դեռահաս [պատանու] կիրճ» է կոչուել⁹:

պոսների). նաեւ՝ J. M. Fiey, *Pour un Oriens Christianus Novus: Répertoire des Dioceses Syriaques Orientaux et Occidentaux* (իո Kommission Bei Franz Steiner Verlag), Շտուտգարտ-Պէրդուօ, 1993, էջ 203-04: Միջայել Ասորու ժամանակագրութեան մէջ ալՀադասի վերաբերեալ յիշատակութիւնները պէտք է տարբերակել *ալՀադիսայի* (արաբ.՝ *Al-Hadīša* կամ *Hadīšat al-Mawšil*) յիշատակումներից, որը քաղաք էր Տիգրիսի արեւելեան ափին: Այն նեատորական Յակոբակոսներից արտոնախտ էր: Աներուել է ԺԳ. դարում մոնղոլների կողմից (E. Herzfeld, “*Hadīšat al-Mawšil*”, *EP*, էջ 29): Այս ալՀադասը չպէտք է շփոթել նաեւ Լիբանանի տարածքում՝ Տրիպոլիից ոչ հեռու եղած նոյնանոյն քնակավայրի հետ: Օրինակ, այս սխալ ճանապարհով է գնացել Լը Աթրենցը, երբ ալԴիմաշկիի՝ լիբանանեան ալՀադասին վերաբերող հարդրոգում վերագրել է *Tuğūrī* ալՀադասին եւ թարգմանաբար ներկայացրել (Al-Dīmasqī, *Nuḥbat al-dahr fī ‘ağā’ib al-barr wa-l-baḥr (Cosmographie de Chems-ed-Din Abou Abdallah Mohammed ed-Dimichqui, ed. M.A.F. Mehren, Ս. Փեթերսպուրկ, 1866)*, էջ 208. նաեւ՝ Le Strange, *Palestine*, էջ 444: Մի տեղ էլ սխալուել է Լինդա Նորթրափը, երբ Իբն ալՖուրաթի երկում յիշատակուած վերորերեալ ալՀադասը կրկին նոյնացրել է *ալՀադաս-Քայնուցի* հետ (L.S. Northrup, *From slave to sultan: The career of al-Manṣūr Qalwān and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678- 689 A. H./1279-1290 A.D.)*, Franz Steiner Verlag, Շտուտգարտ, 1998, էջ 199, ծնթ. 288):

⁵ Ուղղափառ իսլամի չորս բարեպաշտ խալիֆաներից երկրորդը (իշխ. 634-44):

⁶ Յայտնի արաբ զօրահրամանատար (մահ. 641), որի գլխաւորութեամբ իսլամական բանակները նուաճել են Հիսիսային Միջագետքի ու Հիսիսային Ասորիքի մի զգալի մասը:

⁷ Օմայեան խալիֆայութեան հիմնադիր Մուսուլիմ իբն Աբի Սուֆիանն է (իշխ. 661-80):

⁸ Պատմիչը փորձում է բացատրել բերդի *al-Hadāt* անուանման ծագումը:

⁹ Al-Balāḍurī, *Futūḥ buldān, bi-taḥqīq ‘Abd Allāh Anīs al-Tabbā’ wa-‘Umar Anīs al-Tabbā’*, Պէրդուօ, 1987, էջ 267 եւ հմմտ.՝ *Արաբ մարտնաջորդներ. Թ.-Ճ. դարեր*, ներքաճ. եւ քննազ. թարգ.՝ Ա. Տերլետոյեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2005, էջ 240-41. նաեւ՝ Qudāma ibn Ḡa‘ar, *Kitāb al-ḥarāğ wa-šina‘at al-kitāba, bi-taḥqīq*

Պատմիչը շարունակում է, որ Մրոան իբն Մոհամմադ խալիֆայի¹⁰ դէմ բռնկուած ապստամբութեան ժամանակ հոռոմները (իմա՝ բիզանդացիները), օգտուելով յարմար առիթից, գրաւել են ալ-Հադասը՝ դուրս քշելով քնակիչներին, ինչպէս որ Մալաթիայի հետ էին վարուել:

[Հիջրայի] 161 թուականին (777/778), Միքայէլը¹¹ յարձակուեց Մարաշի Ամկի կողմը, եւ ալ-Մահդին¹² նրան հանդիման ուղարկեց ալ-Հասան իբն Կահտաբա- յին¹³: Սա հոռոմների երկիրն արշաւեց եւ այնքան ճնշեց նրա բնակչութեանը, որ եկեղեցիներում նրա պատկերն էին տեղադրել: Նա մուտք էր գործել ալ-Հադասի կապանից եւ նրա քաղաքի դիրքին նայել: Իմանալով, որ Միքայէլը հեռացել է այնտեղից՝ նա լա դիտարկել է նրա քաղաքի դիրքը եւ վերադարձին ալ-Մահդիի հետ խօսել է նրա եւ Տարսուսի վերակառուցման մասին: Նա հրամայել է նախ վերաշինել ալ-Հադասը: ... Ալ-Հադասը կառուցեց Ալի իբն Սուլայման իբն Ալին, ով ալթազիլայի եւ Կիննապրինի [կառավարիչն] էր՝ կոչելով ալ-Մոհամմադիյյա: Ալ-Մահդին վախճանուեց նրա կառուցումը ասարտին հասցնելով, ուստի կոչում էր ինչպէս ալ-Մահդիյյա, այնպէս էլ ալ-Մոհամմադիյյա: Այն կառուցուեց աղիտով: Նրա մահը [իիջրայի] 169 թուականին (785/786) էր¹⁴:

Ըստ ժամանակակից մէկ այլ պատմիչի՝ ալեակուբիի (մահ. 897/898)

Ալ-Հադաս անունով սահմանային ամրութիւնը (բնագրում՝ *al-ḥ aḡ*) կառուցուել է [իիջրայի] 169ին: Նրա [կառուցումը, յիրավի] թշնամու հակադարձում եւ նրա դիմագրաւում էր նշանակում... Երբ այն կառուցուեց, ալ-Սուլուրի բնակչութիւնը շատ մեծ օգուտ քաղեց նրանից¹⁵:

Muhammad Husayn al-Zubaydi, Պաղտատ, 1981, էջ 320. նաեւ՝ Ibn al-Aṣir, *Al-Kāmil fī al-tārīḥ*, bi-taḥqīq Abī al-Fidā' 'Abd Allāh al-Qāḍī, ք. 2, Պէյրութ, 1987, էջ 344. նաեւ՝ Իբն ալ-Սափր, թարգ. քննարկից, առաջաքան եւ ծանօթ. Ա. Տէրղետնդեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 45:

¹⁰ Օմայեան Հարստութեան վերջին խալիֆան է՝ Մրոան Բ.ը (կառ. 744-50):

¹¹ Խօսքը բիզանդացի յայտնի զորավոր Միքայէլ Լաքանոդրակոնի մասին է:

¹² Աբրասեան խալիֆա, ով կառավարել է 775-85:

¹³ Անուանի արաբ զօրահրամանատար: Ալ-Մանսուր (իշխ. 744-50) խալիֆայի օրօք զբաղեցրել է Արմինիայի կառավարչի պաշտօնը (իշխ. 754-59)՝ А. Тер-Гевондян, *Армения и Арабский Халифат* (Հայաստանն ու Արաբական Խալիֆայութիւնը), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977, էջ 101, 274:

¹⁴ Պատմիչը շարունակում է, որ Ալի Իբն Սուլայմանը բերդում տեղակայում է 4000անոց կայազօր, ինչպէս նաեւ Մալաթիայից, «Շիմշաբից եւ Սունայսաբից» (այսպէս է քննարկում), Քեսունից, Տլուքից եւ Ռաբանից 2000 մարդ է տեղափոխում եւ բնակեցնում ալ-Հադասում (al-Balāḡuri, էջ 268. նաեւ՝ al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ք. 8, էջ 142. նաեւ՝ Ibn al-Ḡawzī, *Al-Muntaẓam fī tārīḥ al-mulūk wa-l-umam*, ք. 8, bi-taḥqīq Muḥammad 'Abd al-Qādir 'Aṭā wa-Muṣṭafā 'Abd al-Qādir 'Aṭā, Պէյրութ, 1992, էջ 256):

¹⁵ *Tārīḥ al-Ya' qūbi*, bi-taḥqīq 'Abd al-Amin Muḥannā, ք. 2, Պէյրութ, 2010, էջ 339:

ԱլԲալագուրին յետագայ շարադրանքում մեջբերում է ալՎակիդի (մահ. 823) պատմիչի մեզ չհասած մի երկից¹⁶.

ԱլՎակիդին պատմել է, որ ալՀադաս քաղաքի վերակառուցման ժամանակ վրայ են հասել ձմեռն ու ձինը, տեղատարափ անձրեւներ են տեղացել: Նրա շինութիւնները հիմնատուր չէին, պաշտպանուած չէին, ուստի քաղաքը ճաքճեց, փլուզուեց: Հոռուները յարձակուեցին նրա վրայ, եւ այնտեղ եղած գինուորներն ու այլոք ցրուեցին: ... Ապա [երբ Հարուն այլ]Դաշիղը խալիֆա դարձաւ, հրամայեց վերակառուցել այն¹⁷, ամրացնել, կայազօր նշանակել, նրա ռազմիկներին ասատներ յատկացնել եւ ոռճիկ նշանակել¹⁸:

Ըստ ալՏաբարիի՝ բերդի կառավարիչը, կայազօրն ու շուկայի վաճառականները (քնագրում՝ *ahl al-aswāq*) փախչում են¹⁹: Այս փաստը ակնարկ է քաղաքի ունեցած առեւտրական կարեւորութեան մասին:

Հարուն ալԴաշիղ խալիֆայի (կառ. 786-809) ժամանակներից սկսած՝ ալՀադասն արաբների համար դառնում է հզօր ռազմավարական յենակէտ Բիզանդիայի դէմ մղած կռիւներում եւ իսկական կոռուպցիոն հակամարտութիւնը սուր բնոյթ է կրում Թ. դարի 60ականներից սկսած, երբ Բիզանդիայում իշխա-

¹⁶ ԱլՎակիդիի գրչին է պատկանում Մուհամմադի եւ նրա ռազմական արշաւանքների մասին պատմող *Kitāb al-mağāzī* երկը: ԱլՎակիդիին է վերագրում նաեւ *Futūḥ al-Šām* (Սաորիի նուաճումը) վերնագրով երկը, որում ալՀադասի մասին յիշեալ հաղորդումը բացակայում է:

¹⁷ Ըստ Միքայէ Ասրուու եւ նրանից փոխառած Բար Հերբէոսի՝ Հարուն ալԴաշիղը հրամայել է քանդել Քիշումի (Քեսունի) եւ մերձակայ այլ քնակալայրերի եկեղեցիները եւ քարերը 2000 սայլով տեղափոխել է տուն ալՀադաս՝ բերդի վնասուած պարսպապատերը վերականգնելու նպատակով (*Michel le Syrien, Chronique, t. III, էջ 8* եւ հմմտ.՝ *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus), the son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, Լոնտոն, 1932* (reprinted by Gorgias Press, 2003), էջ 118): Այս դրուագը պատկանում է նաեւ ժամանակագրութեան հայերէն տարբերակներում. «*Եւ դարձեալ շինեաց Արդւմելը զԴաշիզ, եւ պարտապետաց երկու հազար սայլ, եւ քակեաց զեկեղեցիսն որ կային յարեմոյից Շնճէ գեպոյն որ է մերձ Սամուսապուս, եւ քակեցին զառաքեալչէն եկեղեցիսն Քեսնոյ հնգեպատաս խորանի, եւ քարեալ սայլին զքարն շինել զՀաղ (sic)» (ժամանակագրութիւն Տեսոն Միխայէլի Ասորոց պարփարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ, տպ. Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1871, էջ 354-55. հմմտ. նոյնի՝ ժամանակագրութիւն, տպ. Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1870, էջ 365):*

¹⁸ Al-Balāḡuri, էջ 268-69:

¹⁹ Al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 8, էջ 203-4. նաեւ՝ *The History of al-Tabarī, vol. 30* (*The 'Abbāsid Caliphate in Equilibrium*), trans., annot. by C.E. Bosworth, Նիւ Եորք, 1989, էջ 39. նաեւ՝ *Michel le Syrien, Chronique, t. III, էջ 2*. նաեւ՝ *Bar Hebraeus*, էջ 118:

նութեան են գալիս Մակեդոնական (Հայկական) հարստութեան ներկայացուցիչները (867-1056), ովքեր իրենց արտաքին քաղաքական օրակարգում ամենամեծ կարեւորութիւնը տալիս էին արեւելեան ուղղութեանը եւ մուսուլմանական պետական կազմաւորումների դէմ պայքարին: Հարստութեան հիմնադիր Վասիլ Ա.ը (կառ. 867-86), յաջողութեամբ չէզոքացնելով Պակիկեան արաբաւորական շարժումը, ռազմական գործողութիւններ սկսեց արաբների դէմ: Արդէն 873ին կայսրը բիզանդական բանակներն առաջնորդում է դէպի արեւելք՝ յոյս ունենալով գրաւել Մալաթիան: Թէեւ քաղաքը գրաւել չի յաջողում, եւ բիզանդացիները հարկադրաւորաձ նահանջում են, բայց ասպատակում են Տարանդան, Սոզոպետրոան (Չիրաքտրան), Սամոսատը: Ես մի արշաւանք Վասիլ Ա.ը ձեռնարկում է 878/79ին, ասպատակում Մալաթիայի շրջանը, ինչպէս նաեւ կիլիկեան Տարսուսը եւ Ադանան: Նոյն թուականին բիզանդական արշաւախմբերն արդէն հասնում են մինչեւ Մարաշ (Գերմանիկէ) եւ ալՀադաս: ԱլՀադասը աւերում է եւ ասարառում²⁰: Բերդաքաղաքի պաշարման ընդարձակ նկարագրութիւնը տալիս է Թէոփանես Խոստովանողի երկի շարահարողը: Ըստ նրա բերդի պաշտպանները, վախենալով բաց դաշտում մարտ տալուց, ամրացել են բերդում եւ դիմադրութիւն կազմակերպել: Բիզանդացիք աւերածութեան են ենթարկել արուարձանները՝ գրաւելով նաեւ մերձակայքում գտնուող Գերոնտ²¹ քաղաքը: Այնուհետեւ, ալՀադասի միջնաբերդը գրաւելու նպատակով կայսրը գործի է դրել պաշարողական մեքենաներ: Ըստ պատմիչի՝ մտաւրոտ ձմռան դժուարութիւններից խուսափելով՝ Վասիլ Ա.ը դադարեցրել է բերդի շրջափակումն ու հեռացել²²:

²⁰ W. Treadgold, *A History of the Byzantine State and Society*, Stanford University Press, Սթենֆորտ, 1997, էջ 457-58:

²¹ Դժուարանում ենք նոյնականացնել:

²² Ihor Ševčenko, *Chronographiae quae Theophanis continuati nomine fertur liber quo Vita Basilii Imperatoris amplectitur. Corpus fontium historiae Byzantinae*, Walter de Gruyter, Պերլին-Պոստոն, 2011, էջ 171, 173, 175, ինչպէս նաեւ Թէոփանեսի Շարունակող (*Օլբար աղբիւրները Հայաստանի եւ Հայերի մասին*, 15), թարգ. քնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Հ. Բարթիկեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1990, էջ 166-67 եւ հմմտ.՝ Կոստանդին Ծիրանածին (*Օլբար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, 6), թարգ. քնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Հ. Բարթիկեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1970, էջ 76-77: Յովհաննէս Սկիլիցէի շարադրանքը նոյնպէս յար եւ նման է Թէոփանէսի Շարունակողի պատումին եւ յառկանշական տարբերութիւններ չի պարունակում. հմմտ.՝ John Skylitzes, *A Synopsis of Byzantine History 811-1057*, tr. by John Wortley, Cambridge University Press, *Քեմպրիձ*, 2010, էջ 139-40: Գէորգ Կեդրենսը, որ գրեթէ նոյնութեամբ արտագրել է Սկիլիցէի երկը իր աշխատութեան մէջ, *Աղաբայի փոխարէն քաղաքն անուանել է Աղապաս* (*Georgius Cedrenus Ioannis Scylitzae ope, t. ab Immanuel Bekkero suppletus et emendatus*, Պոնն, 1839, էջ 214):

Մալաթիան գրաւելու Վասիլի յաջորդ փորձը տեղի է ունենում երեք տարի անց՝ 882ին: Այս անգամ էլ, Քիզանդական զորքերը պարտութիւն են կրում Մարաշի եւ ալՇադասի կայազորներից եւ նահանջում²³:

Վասիլ Ա.ի յաջորդ Լեոն 2.ն (կառ. 886-912) ժ. դարի սկզբներին յաղթական մարտեր է մղում Աբբասեան Խալիֆայութեանը ենթակայ Տարսուսի ամիրայութեան դէմ եւ արաբական սահմանային ամրութիւնների նուաճման ուղղութեամբ: 904ին նա հուժկու յարձակման է ենթարկում ալՇադասը եւ զուցէ եւ գրավէր, եթե Ասորիքից մի արաբական նասաւորմ անակնկալ չմտնենար եւ չսպառնար մայրաքաղաք Կոստանդնուպոլսին²⁴:

Բերդաքաղաքին տիրելու համար քիզանդացիների եւ արաբների միջեւ յատկապէս հուժկու մարտեր են մղուել ժ. դարի 40-50ականներին: Քիզանդացիների դէմ «սրբազան պատերազմի» դրօշակակիրն այս ժամանակ արդէն Հալէպի Համդանեան էմիր Սայֆ ալԴաուլան (կառ. 945-67) էր: 948ին (հիջրայի 336) քիզանդական բանակի գերագոյն հրամանատար հայազգի Վարդաս Փոկաս Աագի որդի՝ Կապադոկիայի բանակաթեմի (ռազմավարչական շրջանի) ստրատեգոս Լեոնի²⁵ գլխաւորութեամբ քիզանդացիները կրկին գրոհում են արաբական սահմանային ամրութիւնների գօտին: Թէեւ Սայֆ ալԴաուլան յաջողութեամբ ետ է մղում քիզանդացիներին, այնուամէնայնիւ, Լեոն Փոկասը գրաւում եւ հիմնայաւտակ աւերում է սահմանային ալՇադասի ամրութիւնները²⁶:

Սայֆ ալԴաուլան 953ին մտադրում է վերակառուցել ալՇադասը, Սամսաւոր եւ Մարաշը, ինչը, պարզ է, որ կայսր Կոստանդին Ծիրանածինը (913-59) թող տար չէր կարող: Քիզանդիայի արեւելեան բանակների գերագոյն հրամանատար Վարդաս Փոկասի՝ Հալէպի էմիրի մտադրութեան իրականացումը վիժեցնելու փորձն անփառունակ վախճան է ունենում: 954ի Հոկտեմբերի 30ին (հիջրայի 343, Ջումադա II ամսի 29) ալՇադասի

²³ Al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 9, էջ 612. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 6, էջ 314. նաեւ՝ Տէրղենոսեան, *Իբն ալՄուխր*, էջ 169:

²⁴ Al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 10, էջ 116. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 6, էջ 423. նաեւ՝ al-Qahabī, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāḥir wa-l-a' lām*, ց. 22, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Պէյրութ, 1991, էջ 6. նոյնի՝ *Duwal al-Islām*, ց. 1, bi-taḥqīq Hasan Ismā'il Marwa, Պէյրութ, 1999, էջ 262. նաեւ՝ Sh. Tougher, *The Reign of Leo VI (886-912): Politics and People*, Brill, Լէյտեն-Լսի ետրք-Քէլզն, 1997, էջ 189-90:

²⁵ Փոկասների ընտանիքի մասին տե՛ս՝ Ա.Ս. Каздан, *Армяне в составе господствующего класса Византийской Империи* (Ա.Պ. Կաժդան, Հայերը Քիզանդական Կայսրութեան աազանու կազմում ժԱ.-ժԲ. դդ.), ՀՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1975, էջ 71-74:

²⁶ Yahyā al-Anṭākī, *Tārīḥ al-Anṭākī*, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Թրիփոլի, 1990, էջ 77. նաեւ՝ Ibn Waṣīl, *Kitāb al-Tārīḥ al-ṣāḥibī*, ց. 2, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Սայտա-Պէյրութ, 2010, էջ 51:

մօտ՝ Ուսայդաբ լեռան ստորոտում, տեղի է ունենում արաբա-բիզանդական հակամարտության ամենավճռական ճակատամարտերից մեկը: Այդ օրը Վարդաս Փոկաս Ասաֆի գլխատրած զորքը բախում է Սայֆ ալ-Դաուլայի առաջնորդած մուսուլմանական զորքին եւ խայտառակ պարտություն կրում: Բիզանդացի զորապետը հազիւ է փրկում մահից, իսկ նրա որդին եւ փեսան գերեվարում են²⁷: Հալեպի էմիրի այս յաղթանակը լայն արձագանգ է գտել ոչ միայն ժամանակի պատմական գրականության մէջ, այլեւ արաբական քնարերգության մէջ: Սայֆ ալ-Դաուլայի յաղթանակը եւ բերդի վերակառուցումը գովերգող ներբողներ են նուիրել ալ-Մութանաբին (մահ. 965) եւ Աբու Ֆիրասը (մահ. 968): Մասնատրապէս ալ-Մութանաբբիի՝ Սայֆ ալ-Դաուլային ծօնուած *կասիդաները* համարում են միջնադարեան արաբական ներբողական քնարերգութեան գոհարներ²⁸: Տողերից մեկում նա գրում է, որ հոռոմների կայսր Իբն Լատինը (սկստի ունի Լետն Զ. կայսեր որդուն՝ Կոստանդին Ծիրանածինին) բազմազգ բանակ էր դուրս բերել Սայֆ ալ-Դաուլայի դէմ.

Եւ ինչպէ՛ս պիտի յոյներն ու ռոմները յոյս ունենային, որ կը քանդեն այն,
Եթէ հիմքն ու սիւները նրա պաշտպանուած էին նիզակիդ զարկով²⁹:

Աբու Ֆիրաս ալ-Համդանիի դիանում ռոմների հետ միասին յիշատակում են նաեւ բիզանդական բանակում կոռուղ հայեր եւ սլատններ³⁰: Իբն ալ-Ասիրը խօսում է բիզանդական բանակում կոռուղ *«հոռոմների, ռոմների, բուլղարների եւ այլոց»* մասին³¹, Իբն Չաֆիր ալ-Ազդին (մահ. 1216) էլ *«այլոց»* տեղում յիշատակում է հայերին:

Այս յաղթանակը հնարատրութիւն է տալիս Սայֆ ալ-Դաուլային ասարտին հասցնել ալ-Հադասի վերակառուցումը: Ըստ ալ-Ազհմի (մահ. 1161) պատմիչի՝ Սայֆ ալ-Դաուլան անձամբ իր ձեռքով առաջին քարը դնելով՝ մեկնարկ է տուել հիմնարկէքին³²: Երեք տարի անց, սակայն, իրավիճակը, կտրուկ շրջադարձ է կատարում յօգուտ Բիզանդիայի, երբ կայսրութեան արեւելեան բանակների հրամանատարութիւնը ստանձնում է Վարդասի

²⁷ Yahyā al-Anṭākī, էջ 84. նաեւ՝ Ibn al-Aṣīr, *Al-Kāmil*, ց. 7, էջ 250. նաեւ՝ Տէրղնտնդեան, *Իբն ալ-Ասիր*, էջ 189-90. նաեւ՝ Ibn al-Adīm, *Zubdat al-halab min tarīḥ ḥalab, waḡda* 'a hawāših Ḥalil al-Manṣūr, Պէյրուս, 1996, էջ 73-74:

²⁸ Կասիդայի արաբերէն բնագիրը տե՛ս՝ *Diwān al-Mutanabbī*, Պէյրուս, 1983, էջ 378-92, իսկ մանրամասն վերլուծութեան եւ ուսումնասիրութեան համար տե՛ս՝ J.D. Latham, "Towards a Better Understanding of al-Mutanabbī's Poem on the Battle of al-Hadath," *Journal of Arabic Literature*, 1979:10, էջ 1-22: Սայֆ ալ-Ինին նուիրուած ձօներգերի վերաբերեալ ուսումնասիրութիւնը տե՛ս՝ A. Hamori, *The Composition of Mutanabbī's Panegyrics to Sayf Al-Dawla*, E.J. Brill, Լէյտէն, 1992:

²⁹ *Diwān al-Mutanabbī*, էջ 386:

³⁰ *Diwān Abi Firās al-Hamdānī, bi-taḥqīq Sāmī al-Dahhān*, Պէյրուս, 1944, էջ 145:

³¹ Ibn al-Aṣīr, *Al-Kāmil*, ց. 7, էջ 250:

³² Al-'Azīmī, *Tarīḥ Ḥalab, bi-taḥqīq Ibrāhīm al-Za' rūr*, Դամասկոս, 1984, էջ 295:

որդի Նիկեֆորոսը (ապագայ կայսր Նիկեֆորոս Բ. Փոկաս՝ կառ. 963-69): Վերջինս 957ին գրառում է ալճադասը եւ կրկին քանդում բերդի ամրութիւնները³³: Սայֆ ալ՛հաուլան պատրաստում է պատասխան արշաւանք կազմակերպել, սակայն Նիկեֆորոսը կաշառում է էմիրի մերձատրոններից միջանիսին եւ փորձում դաադդաբար սպանել նրան: Ճիշտ է՝ խոռվութիւնը բացայայտում է, եւ դաաճանները պատժում են, բայց Սայֆ ալ՛հաուլայի արշաւանքը կասեցւում է: Նախաձեռնութիւնը սահմանազօտում անցնում է Բիզանդիայի ձեռքը. կարճ ժամանակ անց կայսրութեանն են անցնում նաեւ Սամոսատը (958) եւ Մարաշը (962):

Այս դէպքերից իվեր ալճադասն անցնում է բիզանդական վերահսկողութեան տակ եւ հաանաբար որոշ ժամանակ անց նաեւ ինչ-որ չափով վերականգնում: Ժ. դարով թուագրուող «[Ոսխի հետ] բախումների մասին» (յուն.՝ Περὶ Παράδορμῆς, լատ.՝ *De velitatione bellica*) անանուն աշխատութիւնը վկայում է, որ ալճադասում, Սամոսատում եւ Մարաշում անգամ փոքր բանակաթեմեր են կազմակերպուել³⁴:

Վերորբերելու դէպքերի ժամանակակից Իբն Հաուկալը (մահ. 978ից յետոյ) իր *Şūrat al-ard* (Երկրի պատկերը) աշխարհագրական երկրում, լրացնելով մեկ այլ աշխարհագրագէտ Իսթախրիի (մահ. 934) *Kitāb Masālik al-Mamālik* (Գիրք թագաւորութիւնների ճանապարհների) երկից քաղած հարորդումը ալճադասի (ինչպէս նաեւ ալՄարաշի) վերաբերելու, գրում է.

Ալճադասն ու Մարաշը երկու փոքր քաղաքներ են, որոնք մինչ այս գրաւել էին հոռոմները, բայց Սայֆ ալ՛հաուլա Ալի [ի]րն Արդալլահը ետ է վերցրել: Յետոյ նորից հոռոմները վերադարձան եւ երկրորդ անգամ դրանք խլեցին մուսուլմաններից: Նրանք ցանքսեր, ծառեր եւ մրգեր (իմա՝ պտղատու այգիներ) ունեն: Երկրան էլ սահմանային ամրութիւններ են, որտեղ մուսուլմանները կայազօր էին պահում, որտեղից սրբազան պատերազմ էին մղում, աաարառում³⁵:

982ով թուագրուող *Hudūd al-alam min al-mašriq ʾilā al-mağrib* (Աշխարհի սահմանները՝ արեւելքից արեւմուտք) անանուն պարսկալեզու աշխարհագրական երկի հեղինակը պարզապէս երկրորդում է իր նախորդներին. «Մարաշն ու Հադասը երկու բարեկեցիկ, շէն փոքր քաղաքներ են՝ առապ ցանքսերով եւ հոսուն ջրերով»³⁶:

³³ Yahyā al-Anṭākī, էջ 87-88:

³⁴ *Three Byzantine Military Treatises*, text, translation, and notes by G.T. Dennis, Dumbarton Oaks, Ուաշինկթօն, 1985, էջ 231:

³⁵ Ibn Hawqal, *Kitāb Şūrat al-ard*, Mansūrat Dār Maktabat al-Hayāt, Պլլոուս 1992, էջ 167. հմմտ.՝ Istahri, *Kitāb masālik al-mamālik*, M. J. de Goeje (ed.), E.J. Brill, Լէյտէն, 1870, էջ 62-63:

³⁶ *Hudūd al-alam*, *The Regions of the World: A Persian Geography*, 372 A.H.-982 A.D., translated and explained by V. Minorsky, Oxford University Press, Լոնտոն, 1937, էջ 149:

Յատկանշական է, որ ալճադասից ոչ հեռու՝ անի շատ Մարաշի մօտ, մի լիճ է եղել, որ բերդաքաղաքի անունով կոչուել է «ալճադասի լիճ» (այժմ՝ Գիւնիւք-գէօ): Եակոստ ալճամաուիի աշխարհագրական բառարանում այդ լճակի մասին ասում է. «Մարաշի մօտ է՝ հոռոմների երկրի կողմում: Նրա սկիզբը Իբն ալճիի կոչուող գիւղի մօտ է՝ ալճադասից 12 մղոն հեռավորութեան վրայ՝ Մալաթիայի ուղղութեամբ: Այն ձգում է դէպի ալճադաս, որն ամուր բերդ է»³⁷:

Արաբ աշխարհագիրները հաղորդում են նաեւ, որ «ալճադասի լճից» սկիզբ էր առնում ալճուրիս գետակը (այժմ՝ Ակ-սու), որը թափում էր Ջալհան գետը³⁸:

Իբն Հաուկայի երկից վերեւում մեջբերում՝ հաղորդումը անանուն գրչի կողմից արուած ընդմիջարկութիւն է պարունակում, որ վկայում է, որ բերդը ժԲ. դարի կեսին գրաւուել է Իկոնիայի սելջուկեան սուլթանութեան կողմից. «Մուսուլմանները վերադարձան եւ գրաւեցին այն: Այն [իիջրայի] 545 թուականին (1150/51) գրաւեց Մասուդ իբն Կիլիջ Արսլան Սալջուկը՝ Ռումի երկրի փէրը, եւ այն այժմ մուսուլմանների ձեռքում է»³⁹:

Սիկիլիայի արքայ Ռոջէր Բ.ի (կառ. 1130-54) արքունի աշխարհագրագետ ալ-Դոլիսին (մահ. 1165), ով իր երկն աւարտել է 1154ին, այսպէս է գրում ալճադասի մասին. «Ալճադասն ու Մարաշը մեծութեամբ իրար գրեթէ հասասար երկու քաղաքներ են՝ ամուր պարիսպներով եւ շուկաներով, որպէս շարքին են գալիս առեւտրի եւ օգրակար ապրանքների համար»⁴⁰:

Եակոստ ալճամաուիի (մահ. 1229) *Mu' gam al-buldān* (Երկրների բառարան) երկում բերդի մասին ասում է. «ալճադասն ամուր բերդ է սահմանային ամրութիւնների գօտու Մալաթիա, Մումայսար եւ Մարաշ [քաղաքների] միջեւ: Այն ալճամրա (կարմիր) է կոչում, որովհետեւ նրա հողն ամբողջութեամբ կարմիր է: Նրա միջնաբերդը լեռան վրայ է, որն ալՌիսայ-դար են կոչում: Ալճասան իբն Կահրաքան արշաւել էր սահմանային ամրութիւնների գօտի եւ ջախջախել թշնամուն: Նա ալՄահդիի մօտ եկաւ եւ հաղորդեց Տարսուսի եւ Մսիսի վերաշինման կարեւորութիւնը մուսուլման-

³⁷ Yāqūt al-Hamawī, *Mu' gam al-buldān*, ց. 1, Dār Şađir, Պլրութ, 1977, էջ 351. նաեւ՝ Նալբանդեան, էջ 33:

³⁸ Guy le Strange, "Description of Mesopotamia and Baghdād, Written about the Year 900 A.D. by Ibn Serapion, The Arabic Text Edited from a MS. in the British Museum Library, with Translation and Notes", *The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, Jan. 1895, էջ 63, 67-68. նաեւ՝ Yāqūt al-Hamawī, *Mu' gam al-buldān*, ց. 5, էջ 320. նաեւ՝ Նալբանդեան, էջ 119:

³⁹ Ibn Hawqal, էջ 167:

⁴⁰ Al-Idrisī, *Nuzhat al-muštāq fi ihtirāq al-aflāq*, *Maktabat al-İraqāfa al-diniyya*, Գահիրէ, 2002, էջ 52:

ների համար: Նա հրամայեց կառուցել դրանք, ինչպես եւ ալ՛Հադասը: Սա քրեդի ունեցաւ [հիջրայի] 162ին»⁴¹:

Բերդի մասին ժամանակագրական յաջորդ վկայութիւնը պատկանում է Քամալ ալ՛Դին իբն ալԼիմին (մահ. 1262), ով, ինչպես ինքն է պնդում, անձամբ եղել է քաղաքում: Պատմիչի հաղորդումը որոշ լրացումներ է պարունակում բերդամրցոցի վերաբերեալ Նախորդ սերնդի հեղինակներից մեզ յայտնի տեղեկութիւններին: Նա մասնատրապպա գրում է.

Յայտնի է ալ՛Հադաս ալ՛Համրա անունով իր հողի կարմրութեան համար: Ջրառատ եւ ցանքսերով հարուստ քաղաք է, որի շուրջը բազմաթիւ գետեր կան: Ամրոցը քանդուել է. մնացել է միայն քաղաքը: Մեր օրերում այնտեղ բնակում են հայեր՝ «զիմմիներ» (*ahl al-dimma*)⁴²: Այն մուսուլմանների ձեռքում է: Նրա մարզագետիներն էին իջնում քրդերն իրենց անասունների հօտերով: Հայերն այն Քայնուք են կոչում, քրդերը՝ ալ՛Հաթթ, արաբները՝ ալ՛Հադաս: Հնում այն կոչում էր ալ՛Մուհամմադիյա կամ ալ՛Մահդիյա, որովհետեւ այն վերաշինել էր ալ՛Մահդի Մուհամմադ Իբն Մանսուրը, Ալլահն օրինի նրան: Քուֆայից այնտեղ բնակուելու է տեղափոխուել Աբու Մուհամմադ Իսա Իբն Եունիս ալ՛Մաբիին: Նա այնտեղ ուզովիկ է եղել, մինչեւ մահը: Նրանից յետոյ նրա որդին է այնտեղ մնացել: Ալ՛Մուհայթաբ անունով լեռը հարաւի կողմից ձգւում է նրա վրայ: Ռում զնայու ճանապարհին ես տեսել եմ այն եւ ուղքս դրել նրա հողին»⁴³:

Այսպիսով, Իբն ալԼիմի վկայութեամբ իր կեանքի օրօք բերդամրոցը կիսաքանդ վիճակում է եղել, քաղաքը՝ հայաբնակ: Հաղորդումից պարզ չէ, թե հալէպցի պատմիչը, որ թուականին է եղել ալ՛Հադասում: *Buḡyat al-ʿalab* երկի ուսումնասիրող Դ. Մորէյը կարծում է, որ Իբն ալԼիմը շարունակել է աշխատել իր երկի վերջնական խմբագրութեան վրայ ընդհուպ մինչեւ իր մահը⁴⁴: Հետեաբար, աշխատութիւնը թուագրելի է 1260-62ով, երբ նա, Հուվադուի ասորիքեան արշաւանքից յետոյ, տեղափոխուել է

⁴¹ Yāqūt al-Hamawī, §. 2, էջ 227. հմտ.՝ al-Balāḡuri, էջ 231-32. նաեւ՝ Տերդունդեան, *Արաբ մատենագիրներ*, էջ 240-41: Իբն Աբդ ալ՛Հակկ ալ՛Մադդադիի (մահ. 1339) *Marāsiḍ al-ḥitāʾ*՝ երկը ոչինչ չի յաւելում Եակուտի հաղորդածին (Ibn ʿAbd al-Haqq al-Baḡdādī, *Marāsiḍ al-ḥitāʾ*՝ *ʿala asmaʾ al-ʿamkina wa-l-biqāʾ*, §. 1, Dar al-ḡil, Պէյրուֆ, 1992, էջ 385):

⁴² Իսլամական կրօնախրատագիտութեան տեսանկիւնից այսպէս էր կոչւում մուսուլմանական պետութեան ոչ մուսուլման՝ այն է քրիստոնէութիւն, յուդայականութիւն, գղարշաշտականութիւն եւ այլ կրօններ դասանող բնակչութիւնը: Կեանքի եւ ունեցուածքի ապահովութեան երաշխիք ունենալով՝ *զիմմիները* պարտատու էին ճանաչել իսլամի գերակայութիւնը հասարակական կեանքի բոլոր բնագաստներում եւ վճարել ջիզիա, այսինքն՝ զլխահարկ:

⁴³ Ibn al-ʿAdim, *Buḡyat al-ʿalab fi tarīḥ Ḥalab*, §. 1, bi-taḥḥiq Suhayl Zakkār, Պէյրուֆ, 1988, էջ 239:

⁴⁴ D.W. Morray, *An Ayyubid Notable and His World: Ibn al-ʿAdim and Aleppo as Portrayed in His Biological Dictionary of People Associated with the City*, E.J. Brill, Լէյտէն-Նիւ Եորք, 1994, էջ 166-74:

բնակում էր Եգիպտոսում: Արդեօ՞ք սա նշանակում է, որ բերդը Կիլիկեան Հայաստանի կազմում է յայտնուել միայն 1260ից յետո: Երեւի թէ ո՛չ՝ նախ եւ առաջ այն պատճառով, որ պատմիչի վկայութեամբ իր այցելութեան օրօք բերդի բնակչութիւնը արդէն ամբողջովին հայկական էր: Եւ յետոյ մենք հնարատրութիւն ունենք ճշտելու իբն ալվւդիմի՝ Ռումի սելջուկեան սուլթանութիւն մեկնելու թուականը: Իր միա **Zubdat al-Halab** երկում նա գրում է, որ 1237ին երկու անգամ որպէս դեսպան մեկնել է Կայսերի (Կեսարիա)՝ մի անգամ սուլթան Ալա ալ-Դին Քայկուբադ Ա.ի (1220-37) մահուան կապակցութեամբ որդուն՝ Քայխոսրով Բ.ին (1237-1246) Հալէպի էմիր ալ-Նասիր Եուսուֆի (1236-60) կողմից ցաակցութիւններ հաղորդելու⁴⁵, եւ երկրորդ անգամ՝ վերջինիս եւ Քայխոսրովի ջրոջ ամասնութիւնը կազմակերպելու համար⁴⁶: Նշանակում է՝ ալՀադասի վերաբերյալ պատմիչի վկայութիւնը թուագրելի է 1237ով: Ենթադրում ենք, որ բերդը մեզ անյայտ հանգամանքներում անորոշ ժամանակով հայկական վերահսկողութեան տակ է յայտնուել դեռեւս 1230ականներին, եւ այդ ժամանակ է, որ բնակեցուել է հայերով: Ինչպէս երեւում է, սելջուկները, այնուհանդերձ, կրկին վերականգնել են իրենց վերահսկողութիւնը բերդի վրայ, եւ այդ ընթացքում է, որ իբն ալվւդիմն եղել է ամբողջում:

Աղբիւրների հաղորդմամբ 1231ին Եգիպտոսի Այուբեան սուլթան ալՄալիք ալ-Քամիլը (1218-38) արշաանք է կազմակերպել Ռումի սուլթանութեան դէմ: Իբն Բիբիի (մահ. 1285) վկայութեամբ սուլթան Քայ Կուբադ Ա.ը նրա դէմ է ուղարկել է Քամալ ալ-Դին Քամյարին եւ Սիր Բասրի անունով մի իշխանի: Նրանց խնդիրն էր պարելել ալՀադասից Աքիստան տանող *Ակչէ (Ակչահ) դարբանդը (Aqçah darband, Սպիտակ կապան)*: Քամալ ալ-Դինը ծառերով եւ քարերով փակում է կապանի անցքերը, սպասելով սուլթանական ուժերի ժամանմանը⁴⁷: «Սիր Բասրի» անունը Կահէնին թոյլ է տուել ենթադրել, որ նա թերեւս ֆրանկ պիտի եղած լինի՝ հաւանաբար Կիլիկիայից⁴⁸: Այս պարագայում, թերեւս, հարցերի թնջուկի հանգուցալուծումը շատ մօտ է թում, բայց սկզբնաղբիւրային տուեալների սղութիւնը հնարատրութիւն չի տալիս աներկմիտ եզրակացութիւններ անել:

⁴⁵ Ibn al-'Adim, *Zubdat al-halab*, էջ 491:

⁴⁶ Նոյն, էջ 495-96:

⁴⁷ *Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides, vol. III, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjoucnaméh d'Ibn-Bibi, par M. Th. Houtsma, E.J. Brill, Լէյդն, 1902* (երկի համառոտ տարբերակն է՝ Ibn Bibi, *Muhtasar*, էջ 192, նոյնի՝ *El-Evâmirü'l-'Ala 'iyye fi'l-umüri'l-'Ala 'iyye, onsöz ve fihristi hazirliyan A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basimevi, Սնկարա, 1956, էջ 437-38* (երկի ամբողջական տարբերակ):

⁴⁸ Cl. Cahen, *La Turquie Pré-Ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d'Études Anatoliennes, Իսթամպուլ, 1988, էջ 87:

Արաբական պատմագրության մեջ պահպանուած եւ մի վկայութիւն կայ, որ հերքում է այն վարկածը, թէ ալՀադասը Կիլիկեան Հայաստանի կազմում է յայտնուել մոնղոլների 1260 ասորիքեան արշաանքից յետոյ միայն: Խօսքը մամուլեան սուլթան Բայբարսի արքունի քարտուղար եւ վարքագիր Իբն Աբդ ալՀահիրի (մահ. 1293) **Al-Rawḍ al-zahir fi sirat al-Malik al-Zāhir** (Ծաղկուն պարտէզ ալՄալիք ալՀահիրի կեանքի մասին) երկի մասին է: «Վարքագրութեան հեղինակը պատմում է, գրում է հեղինակը՝ նկատի ունենալով ինքն իրեն, - որ այս Քայնուքը նոյն **al-Ḥadaṭ al-ḥamra**՝ն է, որ կառուցել է Սայֆ ալԴաուլա իբն Համդանը: Նրա Քայնուք անուանումը «հրկիզուած» է նշանակում: Ստում իշխող պայլը՝ Կոստանդին անունով, ով Սսի այժմեան փրիոջ պապն էր, գրաւել էր այն սելջուկեան Ռումից եւ կրակի տուել: Հենց նրա կառուցման մասին է, որ ալՄուլթաւնարքին ասել է իր մի կասիդայում՝ գովերգելով Սայֆ ալԴաուլա իբն Համդանին: Այն [այսպէս] է սկսում.

Կարեւոր որոշումները կարեւոր մարդկանց կարողութիւնն են: Արդե՛ս՝ **al-Ḥadaṭ al-ḥamra**՝ [ամբողջ] գիտի, թէ ինչ գոյն ունի, Կամ միթէ՞ գիտի, թէ ինչ հեղուկ են ցօղում ամպերը. Մինչ նրա գայլը ճեկի ամպերն էին [անձրեւ] տեղացել, Իսկ երբ մօտ եկաւ, ծածկուեց [անթիւ] գանգերի [արեամբ]: Նա շինեց այն վեհ, ինչպէս նիզակն է նիզակի բախում, Իսկ շուրջը մահուան [գոռ] կոհակներն են զարնում իրար: Այնտեղ առկայ իր մի ինչ-որ [զգացում] խելագարութեան, Շուրջը հմայիներ՝ [ահարկով] պայանից ընկած դիերից: Քշում էր այն ինչպէս վտարանդին դարի, բայց թո նիզակով Վերադարձրի այն հյանուն կրօնի՝ հակառակ դարի⁴⁹:

Նրա մասին յայտնի է, որ Սայֆ ալԴաուլա իբն Համդանն է սկսել կառուցել այն: [Հիջրայի] 337 թուականին բերդի բնակիչները անվտանգութեան երաշխիքով այն յանձնել էին ալԴումեստիկին՝ հռոմ քրիստոնեաների արքային: Սակայն [հիջրայի] 343 թուականի Ջումադա ալախիրա [ամսի] 12ին՝ Չորեքշաբթի օրը, Սայֆ ալԴաուլան պաշարել է այն եւ նրա հիմքը գցել մէկ օրոպ ընթացքում՝ առաջինը հենց իր ձեռքով փորելով հիմքը: Նա այնտեղ մնաց այնքան ժամանակ, մինչեւ նրա շինարարութիւնն ապրտին չհասցրեց՝ Ռաշաբ ամսի 13ին՝ Երեքշաբթի օրը⁵⁰:

Փաստօրէն, Իբն Աբդ ալՀահիրի պնդմամբ՝ բերդը հայկական վերահսկողութեան տակ է անցել՝ Հեթում Ա. արքայի (կառ. 1226-69) հայր, պայլ Կոստանդին Գունդստարի (մահ. 1263) կողմից Ռումի սելջուկեան սուլթանութիւնից խլուելով: Պատմիչը, այնուամէնայնի, չի թուագրում իր տեղեկութիւնը եւ ոչ էլ մատնանշում է իր ձեռքի տակ եղած սկզբնաղբիւրը: Եթէ

⁴⁹ Hamori, էջ 10-11. հմմտ.՝ Latham, էջ 1-22:

⁵⁰ Ibn 'Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zahir fi sirat al-Malik al-Zāhir, bi-tahqiq 'Abd al-'Aziz al-Ḥunwayir*, Ռիատ, 1976, էջ 417:

զուգադրենք երկու պատմիչների հաղորդումները, ապա բերող Կոստանդին Պալլը պետք է տիրացած լինի 1230ականների սկզբներին մի ինչ-որ անորոշ ժամանակով եւ յետոյ կրկին զիջած լինի սելջուկներին: Բերող հասանաբար վերջնականապես Կիլիկեան Հայաստանի մաս է կազմել 1250ականների վերջերին եւ 1260ականների սկզբներին, երբ Հեթումը մոնղոլների աջակցութեամբ տիրացել է Եփրատացիքի եւ շրջակայքի այն հողերին, որոնք մի ժամանակ Փիլարտոս Վարաժնունուն եւ Գող Վասիլին էին պատկանելի⁵¹: Այդ նուաճումներով հայոց թագաւորութեան սահմանները, փաստօրէն, ընդարձակուեցին ընդհուպ մինչեւ Եփրատ գետը՝ մինչեւ կաթողիկոսանիստ Հռոմկա: Ըստ արաբ հեղինակների՝ այս շրջանում հայոց թագաւորութեանն են անցել մասնատրապէս Բեհեսնա, Ռարան, Դարդասկ, Մարզութան (Մարզաբան), Շիհ ալՀադիդ, Քեսուն բերդերը⁵²:

Ժամանակի աղիքիւրներից տեղեկանում ենք, որ Հեթումը մի շարք բերդեր է խլել նաեւ Ռոմի սուլթանութիւնից: Ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»ի (1286) յիշատակարանի՝ «...նա (Հեթումը - Գ. Դ.) աւզնութեամբն Աստուծոյ եւ ձեռնտրութեամբ Մուղալ զարուն էառ զմեծն Գերմանիկէ եւ զՊեհեսնի, թափեաց եւ զնախնեաց իրոց զաշխարհ՝ զյափշրակեալն յայլոց»⁵³ Ըստ Իբն ալՇիհնայի՝ հիջրայի 656ին (1258) Մարաշը գտնում էր

⁵¹ Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Geuthner, Փարիզ, 1940, էջ 705. նաեւ՝ S. Der-Nersessian, "The Kingdom of Cilician Armenia". *A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311*, gen. ed. K. M. Setton, The University of Wisconsin Press, 1969, էջ 653. նաեւ՝ M. Canard, "Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusqu'au traité de 1285", *Revue des Études Arméniennes*, 1967:IV, էջ 222:

⁵² Այս մասին այլուր մանրամասն խօսել ենք՝ մատնանշելով սկզբնաղբիւրների տեղեկութիւնները (Գ. Դանիէեան, Վ. Տէրղետնդեան (համահեղինակ), «Կիլիկեան Հայաստանի տարածքային ձեռքբերումները Հուլիոսի 1260 թ. ասորիքեան արշաւանքից յետոյ», *Էջմիածին*, 2017:ՀԴ(Ա), էջ 59-67:

⁵³ Մաշտոցի անունն Մատնեադարան, ձեռ. № 979 («Ճաշոց»), թերթ 475ա. նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԳ. դար, կազմեց Ա.Ա. Մաթեոսեան, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 587. հմմտ.՝ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջ. եւ ծանօթ.՝ Արշակ Տէրմիքիէեանի, Վաղարշապատ, Ա. Էջմիածնի տպարան, 1892, էջ 221. նաեւ՝ Hayton, "La Flor des Estoires de la Terre d'Orient", *Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens*, t. 2, Փարիզ, 1906, էջ 171. հմմտ.՝ Վահրամայ Բարունոյ *Որբանաոր պատմութիւն Ռուբենեաց*, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 220: Այս մասին տե՛ս նաեւ՝ R. Grousset, *The Empire of the Steppes*, tr. from French by Naomi Walford, Rutgers University Press, Նիւ Ճերսի, 1970, էջ 362. նաեւ՝ Cahen, *La Syrie*, էջ 705. նաեւ՝ Գ.Գ. Микаелян, *История Киликийского Армянского Государства* (Կիլիկիայի հայկական պետականութեան պատմութիւն), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1952, էջ 333. նաեւ՝ Cl. Mutafian, *L'Arménie du Levant*

Իմադ ալԴին անունով մի կառավարչի ձեռքում, որի ընտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց անելի: Պատմիչը շարունակում է, որ «Իմադ ալԴինը աղաջիրների (աղաջ-երի)⁵⁴ եւ հայերի յարձակումների յաճախացման պատճառով այլեւ անկարող էր պահել այն: Նա նամակ գրեց Ռումի փէր Իզզ ալԴին Քայկատասին՝ բերդը նրան յանձնելու մտադրութեամբ, բայց վերջինս հրաժարուեց: Գրեց նաեւ Ասորիքի փէր ալՄալիք ալՆասիր Սալահ ալԴինին, բայց վերջինս նոյնպէս հրաժարուեց ընդունել բերդը: Եւ երբ նրա վիճակը բարդացաւ, [հարկադրուած] թողեց այն եւ հեռացաւ, որից յետոյ նրան փրկեցին հայերը»⁵⁵:

Իսկ 1262ին Թորոս Ռուսինի ձեռքով գրուած մի ձեռագրի յիշատակարանում ասում է. «Այլեւ բարեպաշտութեամբն իրով յԱսորուած զորացեալ հէրքբ գոյս հաքարածին ծննդոն եւ անարինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլթանին Հոռոմոց, եւ առեալ զամուրս նորա՝ զանմալցեւին Մունրաս, եւ զՄանիանն, զըՍիկի եւ զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Որ եւ յայսմ ամի առ նա եւ զամուր դղեակն զհոյակապ եւ զգանատրն Պեհեսնի, որ այր Ի եւ Ե (25) էր ամսէանն հոգարեմբերի»⁵⁶: Իկոնիայից խլուած այս բազմաթիւ բերդերից մէկն էլ հասանաքար Քայնուքն է եղել, որը Կոստանդինը սկզբում իրոյ ճարակ է դարձրել, բայց յետոյ, հասկանալով նրա ռազմավարական կարեւորութիւնը՝ ամրացրել:

(Xle-XIve siècle), *Les Belles Lettres*, Փարիզ, 2012, էջ 149. նաեւ՝ A.D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Brill, Լեյտէն, 2001, էջ 46-47, ծխ. 10:

⁵⁴ Բնագրում՝ «*ag̃g̃ir̃iyya* (բառացի՝ «անտառի մարդիկ», «ձառերի մարդիկ»): Աղաջ-երիները թիւրք-օղուզական ցեղախմբեր էին, որ սովորութիւն ունէին անտառներում բնակուել (Рашид-ад-Дин. *Сборник летописей* (Ռաշիդ-ադ-Դին, ժամանակագրութիւնների ժողովածու), *հրդ. I, Գիրք I*, թարգ. պարսկերենից՝ Լ.Ա. Խետազուրովայի, խմբ. եւ ծանօթ.՝ Ա.Ա. Սեմինովա, ՍՍՀՄ ԳԱ Իրատ., Մոսկուա-Լենինկրաւ, 1952, էջ 85:

⁵⁵ Ibn al-Տիհնա, *Al-Durr al-muntahab fi տրթի mamlikat Holab*, bi-tahqiq 'Abd Allāh Muḥammad Darwīš, Dār al-kitāb al-ʿarabī, Դամասկոս, 1984, էջ 192: Իբն Բիբին նոյնպէս գրում է Մարաշի վրայ աղաջ-երիների յաճախակի յարձակումների մասին, որոնք ըստ նրա՝ «ճանապարհներ եւ կարասաններ էին կտրում, հրոսում Ռումի երկրի, Ասորիքի եւ հայերի վրայ» (Ibn Bibi, *Muḥtasar*, էջ 284. հմմտ.՝ Cahen, *La Turquie*, էջ 240-41:

⁵⁶ Հայերէն ձեռագրերի, էջ 317. հմմտ.՝ *Սմբարայ Սպարապետի փարեզիրը*, աշխատ.՝ Հ. Սերովբէ Ազըլեան, Վենետիկ, 1956, էջ 234-35 (պատմում է Մունրաս բերդի գրաման հանգամանքների մասին). նաեւ՝ *Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ.*, *հրդ. Ա.*, կազմ.՝ Վ.Ա. Յակոբեան, ՀՍՍՌ ԳԱ Իրատ., Երեւան, 1951, էջ 82. նոյնի՝ *հրդ. Բ.*, Երեւան, 1956, էջ 71. նաեւ՝ Կ. Մաթեոսեան, *Հնթում Պապմիչ Կողկոսցին եւ նրա ժամանակագրութիւնը*, «Մոլդի» Իրատ., Երեւան, 2011, էջ 53. նաեւ՝ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, *ժամանակագրութիւն*, աշխատ.՝ Կ. Մաթեոսեան, «Նայիրի», Երեւան, 2014, էջ 251:

Ամրոցը, հետեաբար, մէկ տասնամեակից քիչ աւելի եղել է հայկական պետութեան կազմում, մինչեւ որ գրաւուել է մամլուքների կողմից:

Բերդի գրաման մասին պատմող կարեւորագոյն աղբիւրը կրկին սուլթան Բայբարսի վարքագրութիւնն է: «Քայնութի առման մասին» վերնագրի տակ Իբն Աբդ ալԶահիրը մասնատրապէս գրում է. «Շարասցել էին Քայնութ բերդի բնակչութեան չարագործութիւններն ու թշնամանքը վաճառականների և հեքայտոյզների նկատմամբ: Այդ մասին գրեցին Սսի փիրոցը, բայց նամակագրութիւնը օգուտ չբերեց: Հայերը սարակուցներ էին հազնում և քարաաններ կտրում: [Ուստի սուլթանը] էմիր Հուսամ ալԴին ալԱյնթաբիին՝ Հալէպի զօրապետին, ուղարկեց Քայնութի վրայ: Վերջինս [այնպէտ] հասաւ [հիջրայի 672] Մուհարրամ ամսի 3ին (1273 Յուլիսի 20) և գրաւեց բերդի մերձակայքը: Հայերը մտան միջնաբերդը, և մուսուլմանները նրանց դէմ կռիւ փռեցին: Նրանք գրաւեցին միջնաբերդը, սպանեցին փղամարդկանց, կանանց գերի վերցրեցին: Զօրքը յարձակումներ գործեց Տարտուսի կողմերի վրայ՝ կողոպտելով և գերեվարելով⁵⁷:

Ուշադրութեան է արժանի մամլուքեան զօրքի՝ «Տարտուսի կողմերի» վրայ արշաւելու վերաբերեալ Իբն Աբդ ալԶահիրի հաղորդումը, որը ժամանակակից և յետագայ սերնդի պատմիչները նոյնութեամբ փոխառել են: Սակայն, մուսուլմանական զօրքի Տարտուս հասնելը դոյզն-ինչ անհասանական է աշխարհագրական տեսանկիւնից: Մարիտա Կանարը հետեւապէս ենթադրել է, որ արաբ պատմիչը հաւանաբար նկատի է ունեցել Եփրատի և Ալ Սուփ միախառնման տեղում գտնուող «Թորոս»ը, այլ ոչ թէ «Տարտուս»ը: Ռ. Ամիտայը համաձայնել է Կանարի կարծիքին⁵⁸:

Բայբարսը չի սահմանափակում Քայնութը. յաջորդ տարում արդէն Հալէպի զօրքը՝ էմիր Հուսամ ալԴին ալԱյնթաբիի հրամանատարութեամբ արշաւում է Մարաշ: «Նրանք մեծ քանակութեամբ սարք վերցրին,- գրում է նա,- քանդելով հանեցին Մարաշի արտարձանի դարպասները: Ռաբիա իբն ալՏահիր իբն Ղաննամը խեղդուեց այնպէտ գետնանցման ժամանակ»⁵⁹:

⁵⁷ Ibn 'Abd al-Zāhir, էջ 417: Իբն ալՖուրաթը և նրան հետեւելով ալՄակրիզին սխալմամբ Քայնութի գրատունը թուագրում են հիջրայի 671ով (Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, MS AF122, Österreichische Nationalbibliothek, Վիեննա, fol. 219a և al-Maqrizī, *Kitāb al-sulūk li-ma' rifat duwal al-mulūk*, ց. 1.2, bi-tahqiq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Գահիրէ, 1957, էջ 608: Իբն ալՖուրաթը, այնուամենայնիւ, 672ի տակ կրկին մանրամասն անդրադառնում է բերդամրցի գրամանը՝ ակնյայտօրէն սկզբնաղբիւր ունենալով Իբն Աբդ ալԶահիրի պատումը. հմմտ. Canard, էջ 237-38; R. Amitai-Preiss, *Mongols and Mamluks: The Mamluk-Ilkhanid War, 1260-1281*, Cambridge University Press, Քեմբրիճ, 1995, էջ 131-32. նաեւ՝ Stewart, էջ 50, 78:

⁵⁸ Canard, էջ 238. նաեւ՝ Amitai-Preiss, էջ 132:

⁵⁹ Ibn 'Abd al-Zāhir, էջ 431:

Քայնուքի առմանը հեղինակը եւս մի անդրադարձ է կատարում 1274/75ի անցքերի շարադրանքում, երբ բացատրում է Կիլիկիա ուղղում արշաանքի շարժառիթները: Նա գրում է. «Սսի փերը դադարել էր ուղարկել իր վրայ դրուած նուէրները, ինչպէս նաեւ խախտել էր զինադադարի այն պահանջը, ըստ որի նա չէր կարող վերակառուցել ոչ մի շինութիւն եւ ոչ էլ թերոյ ամրացնել: Նա դադարել էր նաեւ հասասորի փեղեկութիւններ հաղորդել, որի պարտաւորութիւնը սրանծնել էր համամայն իր երդման: Բանն այն է, որ հայերը սարակուջ էին հագնում եւ նրանցով վախեցնում կարասաններին՝ յայտարարելով, թէ իրենք խանի զօրերն են: Վաճառականները յարկապէս մեծ չարչարանքներ էին կրել Քայնուքի կողմից, ուստի սուլթանն ուղարկել էր Քայնուքն ւաերելու, ինչպէս որ արդէն իշխարակել է նք: Սրանից Սսի փերը [շաբ] նեղարտեց, ուստի նրան ասուեց. «Դա քո ձեռքի գործի հետեւանքն էր, ական ընդ ական (բնագրում՝ *wāhida bi-wāhīdat ḡazā*, իմա՝ «մէկը մէկի է բաժանում»): Սուլթանը [դեսպան] ուղարկեց՝ յայտնելու նրան, որ շարժում է Սսի դէմ: Սսի փերը [նաեւ] մարտնացնում էր ֆրանկներին թաթարների հետ եւ նուասարացնում մուսուլմաններին նրանց աչքերում: [Օրինակ, մի օր] այնպէս պարահեց, որ Ռումից թուրքմէն առաւորականներ էին գալիս՝ ձիերով եւ գոմէշներով, եւ Քայնուքի բնակիչները նրանց վրայ յարձակուեցին: [Թուրքմէնները] ասել էին, որ այդ ձիերը սուլթանի համար են փանում, բայց [հայերը] նրանց սպանել էին»⁶⁰:

Ամալուքեան շրջանի միա պատմագիրները, ի տարբերութիւն Իբն Արդալիի, շատ անցողակի են անդրադառնում Քայնուքի առմանը: Բայբարս ալՄանսուրին (մահ. 1325), Շաֆի Իբն Ալին (մահ. 1330), Բադր ալՂին Բաքթաշ ալՖախրին (մահ. 1344), Կիրտայ ալԻզզի ալխազինդարին (ԺԴ. դար) ամրոցի գրամանը մէկ-երկու նախադասութիւն են յատկացրել⁶¹: Նրանցից Շաֆի իբն Ալին, ով Մուհի ալՂինի զարմիկն էր եւ

⁶⁰ Նոյն, էջ 432: Իզզ ալՂին Իբն Շադդադն այս արշաանքի մասին գրում է. «[Հիշողայի վնց հարկիդ] եօթանասուներեք թուականին մեր փեր սուլթանը մրտադրուեց արշաեւ Սսի երկիր: Դրա պարճառն այն էր, որ Հեթումը մահացել էր եւ նրանից յետոյ գահին նստել էր որդին՝ Լնտը: Սա սկսեց փչացնել ամեն, ինչ եղել էր իր հօր եւ սուլթանի միջեւ, քանզի նամակագրում էր թաթարների հետ եւ կպրում Ռումից եկող քարասանները՝ իրացնելով նրանց ասրաւքները եւ փրկերին կտորրելով» ('Izz al-Din Ibn Saddād, *Al-A'laq al-haṭira fi ḡikr umara' al-Šam wa-l-Šozira*, ց. 1.2, *bi-tahqiq Yahyā Zakaryā 'Abbāra*, Դամասկոս, 1991, էջ 344):

⁶¹ Baybars al-Mansūrī, *Zubdat al-fikra fi tarīḥ al-hiğra*, *bi-tahqiq Dunald Rišardz* (D.S. Richards), Պերլին-Պէրլոս, 1998, էջ 139-40. նաեւ՝ Badr al-Din Bektaş al-Faḥīrī, *Tārīḥ al-Faḥīrī*, *bi-tahqiq 'Umar 'Abd al-Salām Tadmurī*, *Al-Maktaba al-'Asriyya*, Սայտա-Պէրլոս, 2008, էջ 106. նաեւ՝ Qirtāy al-'Izzī al-Hazīndārī, *Tārīḥ moğmū' al-nawādir mim mā ḡarā lil-awā' il wa-l-awāḥir*, *bi-tahqiq Hürst Hayn wa-Muḥammad al-Huğayrī*, Պէրլոս, 2005 (Klaus Schwarz Verlag, Պերլին, 2005), էջ 158:

նոյնպէս սուլթանական դիւանատան աշխատակից, իր *Al-Manaqib al-sirriyya* երկում, որը *Al-Rawḍ al-zāhir* երկի համառոտագրութիւնն է, գրում է. «Այս փարիի սուլթանը հալէպեան զօրքերից մի զօրախումբ ուղարկեց Քայնոփ, որ ալՀադաս ալՀամրան է եւ որը ալՄուփանաբքին յիշարակել է իր բէթերում: [Պարճառն այն էր, որ] մեծացել էր նրա (հայոց արքայի – Գ. Դ.) եւ հայերի ամբարտաանութիւնը, երբ թաթարների հագոսարներ էին հագնում եւ կողոպտում վաճառականներին: Ասպարակեցին այն, կոռուցին այնպեղ եղածների հետ, գերեվարեցին, կոտորած ու թալան կազմակերպեցին հայոց երկրում»⁶²: ԱլՆուսլայրին (մահ. 1333) եւ Իբն ալՖուրաթը անմիջական աղբիւր են ունեցել Իբն Աբդ ալՀաիիրին եւ աննշան տարբերութիւններով ներկայացնում են նրա պատումը⁶³:

Վերոնկարագրեալ իրադարձութիւնների հետ կարելի է զուգահեռել ասորի լակոբիկների մաֆրիան Բար Հերբէոսի այն հաղորդումը, ըստ որի 1273ի ամռանը Այնթաբից եւ ալԲիրայից՝ լեռների կողմից, առազակախմբեր են եկել *Կաւդիա*՝ մեծաքանակ գերիներ տանելով: Կաւդիան Սամուսաի եւ Մալաթիայի միջեւ գտնուող հին քերդ էր, որտեղ հաւանաբար մուսուլման ասպատակիչները որոշել են արշաւել Քայնոփի գրատումից յետոյ՝ էլ անել շատ աւար եւ գերիներ ձեռք բերելու նպատակով: Ըստ պատմիչի՝ մուսուլմանները խուսափել են գիշերել այնտեղ եւ հապշտապ հեռացել, քանի որ վախենում էին մոնղոլական զօրքերի կողմից բռնուելուց⁶⁴:

Ահա այսպիսի ճակատագիր ունեցան քերդն ու նրա հայկական քնակչութիւնը: Բայց արդեօք սա քերդի պատմութեան վերջին փակուած էջն էր: Յիշեալ Իբն Աբդ ալՀաիիրի վկայութեամբ՝ 1276ին քերդով անցել է եւ ալՈւհայդար լեռան վրա ճամբար է խփել անձամբ սուլթան Բայբարսը (ինչպէս եւ ինքը): Սուլթանութեան զօրքերը, Ակշա կոչուող կապանով Ալբիստանի դաշտավայր իջնելով, մտել են Ռում⁶⁵: ԱլԿալկաշանդին (մահ.

⁶² Šāfi' ibn 'Alī, *Huṣn al-manāqib al-sirriyya al-muntaz' a min al-sira al-zāhirīyya*, bi-tahqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwaytīr, Ռիատ, 1989, էջ 312:

⁶³ Al-Nuwayrī, *Nihāyat al-arab fi funūn al-adab*, ց. 30, Dār al-Kutub al-'Ilmiyya, Պէրոյթ, 2004, էջ 215. նաեւ՝ Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 7, bi-tahqīq Qusṭanṭīn Zurayq. Պէրոյթ, 1942, էջ 1. նաեւ՝ al-'Aynī, '*lqḍ al-ḡumān fi tārīḥ ahl al-zamān*, ց. 2, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Ḥay' a al-miṣriyya al-'āma li-l-kitāb, Գահիրէ, էջ 118-19:

⁶⁴ Bar Hebraeus, էջ 450:

⁶⁵ Ibn al-Muḡayzil, *Ḍayl Mufarrīḡ al-kurūb fi aḡbār Banī Ayyūb*, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-'Asriyya, Սայտա-Պէրոյթ, 2004, էջ 84. նաեւ՝ 'Izz al-Dīn Ibn Šaddād, *Tārīḥ al-Malik al-Zāhir*, bi-tahqīq Aḥmad Ḥutayṭ (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Վիւրսաղէն, 1983), էջ 171. նաեւ՝ Al-Yūnīnī, *Ḍayl Mirāt al-zamān*, ց. 3, Maṣba'at Dā'irat al-Ma'arīf al-'Uṣmāniyya, Հայտարապատ, էջ 176. նաեւ՝ Šāfi' ibn 'Alī, *Al-Faḍl al-Ma'ṭūr min sirat al-sulṭān*

1418) իր *ṣubḥ al-a' ša'* (Կոյրի լուսաբացը) երկում պահպանել է Իբն Արդ ալՋահիրի ձեռքով սուլթանից վեզիր ալՄահիբ Բահա' ալԴին իբն Հաննային գրուած մի նամակ: Նրանում ալՄալիք ալՋահիրը մանրամասներ է պատմում իր՝ Ռում կատարած արշաանքից եւ հաղորդում Կեսարիայի գրաման անտիսը: Սուլթանի նամակը պարունակում է ալՀադասի մասին նոյն այն հատուածը, որ Մուսի ալԴինը ներառել է սուլթանի վարքագրութեան մէջ, եւ որն արդէն թարգմանաբար ներկայացրել ենք վերեւում⁶⁶:

Ժամանակակից միա հեղինակներից Իզզ ալԴին իբն Շադդադը⁶⁷ (մահ. 1285) գրեթէ նոյնութեամբ կրկնում է Իբն ալԱդիմի վերը բերուած հաղորդումը, իսկ Իբն ալՇիհնան (մահ. 1485) հետեւել է վերջինիս⁶⁸: Աբու ալՖիհրան (մահ. 1331), ալՀադասի մասին խօսելիս մէջբերում է Իբն Հաուկայի երկից՝ որպէս վաղուց մոռացուած մի քնակավայրի⁶⁹: ԱլԴինաշէին (մահ. 1327) նոյնպէս իր *Nuḥbat al-dahr* աշխատութեան մէջ բերդի մասին նախորդների պատմածին ոչինչ չի յաւելում. « *ալՀադասս ալՀամրա. այն վերաշինել է ալՄահդին եւ կոչել այն ալՄահդիյյա: Հայերն այն Քայթունկ (sic) են կոչում*»⁷⁰:

Հակառակ մամլուք հեղինակների պնդումներին՝ բերդամրոցը, թէեւ կտրուեց հայոց թագաւորութիւնից եւ զրկուեց հայ քնակչութիւնից, այնուամենայնիւ, միանգամից չամայացաւ եւ ուրուական քաղաքի չվերածուեց: Այսպիսով, ճիշտ է՝ մամլուքեան իշխանութիւնները խաապեցին բերդը բռնակցելուց, բայց ամրոցին նրանց հասցրած վնասն այնքան մեծ էր, որ այն հագիւ թէ որպէս ամրութիւն օգտագործուէր որեւէ երրորդ ուժի կողմից՝ լինեն հայերը, թէ մոնղոլները: Վերջիններս 1281ին Հոմսի ճակատամարտում Աբաղայի եղբայր Մենգու-Թեմուրի ընդհանսր հրամանատարութեամբ ծանր պարտութիւն են կրում: Չնայած տարբերութիւններին՝ մամլուքեան աղբիւրների մեծամասնութիւնը վկայում են որ ինքը՝ Մենգու-

al-Malik al-Manṣūr, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, *Al-Maktaba al-‘Aṣriyya*, Սայտա-Պէլրութ, 1998, էջ 81. նաեւ՝ Ibn Tagrī Birdī, *Al-Nuḡūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. 7, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, *Dār al-kutub al-‘ilmiyya*, Պէլրութ, 1992, էջ 150: Արշաանքի անենամանրամասն նկարագրութիւնը տուել է Ամիտայը, էջ 157-78:

⁶⁶ Al-Qalqaṣāndī, *Ṣubḥ al-a' šā fi šinā' at al-inšā'*, ց. 14, Գահիրէ, 1919, էջ 143:

⁶⁷ ‘Izz al-Dīn Ibn Šaddād, *Al-A' lāq al-ḥaṭira*, էջ 173:

⁶⁸ Ibn al-Šiḥna, *Al-Durr almuntahab fī tarīḥ mamlakat Ḥalab*, bi-taḥqīq ‘Abd Allāh Muḥammad Darwīš, *Dār al-kitāb al-‘arabī*, Դամասկոս, 1984, էջ 193:

⁶⁹ Abū al-Fidā', *Taqwīm al-buldān (Géographie d'Aboulféda*, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Փարիզ, 1840), էջ 263:

⁷⁰ Al-Dimašqī, *Nuḥbat al-dahr fī ‘ağā'ib al-barr wa-l-baḥr* (Cosmographie de Chems-ed-Dīn Abou Abdallah Mohammed ed-Dimichquī, ed. M. A. F. Mehren, Սանկտ Պետերբուրգ, 1866), էջ 214:

Թեմուրը, ծանր վիրաորուել է մարտի ժամանակ եւ զոհուել⁷¹: Բայց ժամանակակից պատմիչների մի խումբ՝ մասնատրապէս պեռնիսին եւ ալբիրզալին, գրում են, որ 1281 Սեպտեմբերին, երբ սուլթանը դեռ գտնուում էր Դամասկոսում, նրա մօտ են բերում գերեվարուած Մենզու-Թեմուրին: Ըստ այս հեղինակների Հուլաղուի եղբօրը բռնել էին սուլթանի հետախոյզները Քայնուփից⁷²:

Ինչպէս երեսում է, Քայնուփը դեռ որոշ ժամանակ՝ առնուազն մինչ ԺԴ դարի 30ականները պահպանել է իր գոյութիւնը որպէս քրիստոնէաբնակ բնակատեղի: Այդ ժամանակահատուածում քաղաքով անցել է մաղրիբի յայտնի ճանապարհորդ Իբն Բատտուտան (մահ. 1368/69): Իր ճանապարհորդութիւնների յուշագրութիւնները պարունակող երկում *Tuhfat al-nuddār fī ḡarā'ib al-amṣār wa-'aḡā'ib al-asfār* (Նուէր երկրների հրաշալիքների եւ ուղեգնացութեան զարմանալիքների մասին մրահայրդներին) վերնագրով: Նա քաղաքի մասին գրում է. «Փոքր քաղաք է, որպէս անհասար յոյներ են բնակում՝ մոտոպմանների հովանու տակ (*tahta ḡimmat al-muslimin*): Այնտեղ ընդամէնը մոտոպմաններին պարկանող մի տուն կար, որոնք կառավարիչ էին նրանց վրաէ: Այն սուլթան Օրխան-բէքի երկրի մաս է: Ապաստանեցիկք մի ծեր անհասար կնոջ տանը. ձեան եւ ծնուն ժամանակ էր: Նա մեզ յա վերաբերուեց, եւ մենք նրա մօտ գիշերեցինք: Այս քաղաքում ծառեր չկային եւ ոչ էլ խաղողի այգիներ: Միակ բանը, որ այստեղ մշակում էր քրքումն էր: Այդ պատար մեզ շար քրքում բերեց՝ կարծելով, թէ մենք վաճառականներ ենք եւ կը գնենք իրենից»⁷³: Այսպէս, նախորդ դարի հեղինակների երկերում որպէս բարգաւաճ, ծառաշատ բնակավայր նկարագրուող ալՀադասը ԺԴ դարի ականատեսը բնութագրում է որպէս անշունչ ու անհրապոյր մի գիւղակ: Արաբական մատենագրութեան մէջ պահպանուած յետագայ յիշատակութիւններում Քայնուփն արդէն պարզապէս որպէս կապանի անուանում, եւ ոչ թե բնակավայրի:

Այսպէս, արաբ պատմիչները 1417 Յուլիսին տեղի ունեցած եւ Կիլիկիոյ հայութեանը վերաբերող մի ուշագրաւ դէպք են պատմում, որը թեթեակի առնչում արաբական մատենագրութեան մէջ նաեւ Քայնուփ տեղանունան հերթական յիշատակութեան հետ: Այդ թուականին մամլութեան սուլթան Շայխ ալՄուայյաթ ալՄահմուդին (իշխ. 1412-21) Փոքր Ասիայում դաժան մարտեր էր մղում թուրքմէն կարամանեան հորդաների դէմ: ԱլՄակրիզին (մահ. 1442) եւ նրան հետեւելով Իբն Թաղրի Բիրդին (մահ. 1470) գրում

⁷¹ Այս մասին մանրամասն՝ աղբիւրների յղումներով հանդերձ՝ *Amitai*, էջ 197-98:

⁷² Al-Yūnini, ց. 4, էջ 90. Նաեւ՝ al-Birzālī, *Al-Muqtaḍī li-tārīḡ al-ṣayḡ Šihāb al-Dīn Abī Šāma al-ma'rif bi-tārīḡ al-Birzālī*, ց. 1, bi-tabqāq 'Umar 'Abd al-Salam Tadmūrī, al-Maṭba'a al-'Aṣriyya, Սայտա-Պէրոպ, 2006, էջ 513:

⁷³ *Rihlat Ibn Baṭṭūṭa al-musammāi Tuhfat al-nuddār fī ḡarā'ib al-amṣār wa-'aḡā'ib al-asfār*, bi-tabqāq 'Abd al-Hādī al-Tāzi, ց. 2, Akādīmiyya al-Mamlaka al-Maḡribiyya, Բապալտ, 1997, էջ 201:

են, որ երբ սուլթանը գտնում էր Ալքիստանում, նրան է հասնում Հալեպի կառավարիչ Կաջկար Կարդամիի նամակը, որում յայտնում էր, որ երբ ինքը իջեանել է Բաղրասում, «իր մօտ են եկել Սսի հայոց խալիֆան (իմա՛ հայոց կաթողիկոսը)՝ Քրիքուն անունով (Գրիգոր⁷⁴ - Գ. Դ.)» եւ հայոց մեծամեծերը՝ ձեռքներին Սսի եւ Նաարզայի (Անաարզայի կամ Այն Ջարբայի - Գ. Դ.) բերդերի բանալիները: Նա նրանց [սուլթանի մօտ] ուղարկեց. ժամանեցին բանալիներով հանդերձ: Սուլթանը [Սսի] բերդի կառավարիչ նշանակեց Շէյխ Ահմադին՝ Հալեպի փասնապետերից մէկին, պատրույ հանդերձներ հազցրեց նրան եւ հայերին եւ վերադարձրեց յիշեալ բերդ»⁷⁵: Մուսուլման պատմիչները շարունակում են, որ սուլթանն այնուհետեւ իջեանել է «Քունիք փեղանքում» (sic, ակնյայտ գրչագրական սխալ է - Գ. Դ.)՝ արշաւանքի յետագայ ընթացքը ղեկավարելու նպատակով⁷⁶:

1436ին մամլուքեան սուլթան Բարսբայի (կառ. 1422-38) հրամանով Հալեպի եւ Համայի գորքերն արշաւել են Ջուկադիլիների ամիրայութեան դէմ: Արաբագիր հեղինակների վկայութեամբ՝ մամլուքեան բանակը փորձել է Ալքիստանի դաշտավայր անցնել «Քայնուքի կապանով», բայց չի կարողացել առատ ձեան պատճառով՝ ստիպուած լինելով այլ ճանապարհ ընտրել⁷⁷:

Այս հաղորդումը *ալՀադաս-Քայնուքի* ժամանակագրական առումով մեզ յայտնի վերջին յիշատակութիւնն է միջնադարեան արաբական պատմական գրականութեան մէջ: Ընդամին, ենթադրելի է, որ իր ժամանակի ռազմավարական առումով ամենամտուր բերդաքաղաքներից մէկը ԺԴ դարի վերջից ԺԵ դարի սկզբից լքուած է եղել: Ժամանակի փորձութեանը չեն դիմացել անգամ նրա անբակները: Այդ է պատճառը, որ մինչ օրս հնագիտական պեղումներով այդպէս էլ չի ճշտուել բերդի յստակ տեղադրութիւնը, չնայած, նման փորձեր ձեռնարկուել են: Գիտական գրականութեան մէջ երկար ժամանակ գերիշխող է եղել այն տեսակէտը, որ բերդը պէտք տեղադրել լճի հիսսիային կողմում՝ Ինեքլի (*Inekli*) քնակավայրի մերձակայքում⁷⁸: Սրան հակառակ՝ Ռ. Հարթմանը 1950ին բերդը

⁷⁴ Սսի Գրիգոր Ը. Խանձողատ կաթողիկոսն է (1411-18):

⁷⁵ Al-Maqrizī, ց. 4.1, էջ 404. Նաե՛ւ Ibn Tağrī Birdī, ց. 13, էջ 199-200. Նաե՛ւ Ibn al-Şayrafī, *Nuzhat al-nufūs wa-l-abdān fī tawārīḫ al-zamān*, ց. 3, bi-tahqīq Hasan Ḥabašī, 1973, էջ 389: Այս հաղորդումն արժէքատու տեղեկութիւն է տալիս արդէն չորս տասնամեակից անելի թագաւորութիւնից զրկուած կիլիկիահայութեան քաղաքական կացութեան մասին: Այնուհանդերձ, դրա մանրամասն քննարկումը դուրս է տոյն հետազօտութեան ծիրից, ուստի կը թողնենք մէկ այլ ուսումնասիրութեան:

⁷⁶ Տե՛ս՝ նախորդ ծանօթագրութիւնը:

⁷⁷ Al-Maqrizī, ց. 4.2, էջ 979. Նաե՛ւ Ibn Tağrī Birdī, ց. 14, էջ 261. Նաե՛ւ Ibn al-Şayrafī, *Nuzhat al-nufūs*, ց. 3, 1973, էջ 352:

⁷⁸ Le Strange, էջ 122:

տեղադրել է Հադասի լճից հարավ՝ Սերայ-Քէոյ կոչոտղ տեղանքում իր յայտնաբերած աներակների մօտ⁷⁹: Թ. Սինքլերը նոյնպես բերդամրոցը տեղադրել է Բաշփինար (Բաշփունար) գիտլի մերձակայքում՝ Սերայ-Քէոյի մօտ⁸⁰: Ծովք բերդի հետքերը որոնելիս այս կողմերով նախորդ դարի 60ականներին անձամբ ճամփորդել է Յարուփին Տէր Ղազարեանը՝ լինելով նաեւ *Սարայ* կամ *Գոյնուք* կոչոտած քրդական գիւղում, որը ըստ նրա պատմական *ալՀադաս-Քայնուքն* է⁸¹: Ինչեւէ, ալՀադաս-Քայնուքից ոչինչ չի մնացել, թերեւս միայն միջնադարեան սկզբնադրիւրների վերոբերեալ հաղորդումները՝ որպէս հզօր բերդամրոցի եւ ծաղկուն քաղաքի երբեմնի փառքի վկայութիւններ:

**CILICIAN ARMENIAN FORTRESSES AND CITIES
ACCORDING TO MUSLIM SOURCES II- KAYNÜK**

(Summary)

GAGIK DANIELYAN (gagidaniel@gmail.com)

After publishing a study on the Cilician fortress of Canamella/Caramella/Caramela (in Latin sources) and *al-Tin/Hişn al-Tinät/Tinät* in Arabic sources, the author studies the history of another Cilician Armenian fortress, *Kaynuk/Hişn al-Hadaş/al-Hadaş al-hamrā*.

Interestingly both these fortresses are not mentioned in Armenian sources, particularly at the time when both were in the territories of Cilician Armenia. The study assesses the strategic location the fortress had for some four centuries and the role it played along with other border fortresses that overlooked the Byzantine-Caliphate boundary. Basing his research on information provided by Arab and non-Armenian historians and sources, the author reconstructs the history of the fortress and the battles fought for its control as well as its eventual transformation from a lively city fortress into a ruined village, although its exact location is still not known.

⁷⁹ R. Hartmann, *Istanbulul Forschungen*, XVII, 1950, էջ 40-50: ալՀադասի տեղադրութեանը նուիրուած այս յօդուածը, չնայած մեր ջանքերին, անհասանելի է մնացել մեզ համար: Ծանօթագրութիւնը տրուած է ըստ՝ S. Ory. "Al-Hadath", in *The Encyclopaedia of Islam*, vol. III, Second Edition, E.J. Brill, Լեյտէն, 1991, էջ 20:

⁸⁰ Sinclair, էջ 79:

⁸¹ Յ. Տէր Ղազարեան, *Հայկական Կիլիկիա. Տեղագրութիւն*, տպ. Կաթող. հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1966, էջ 102-3, 107-8:

ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԱՐՄԻՆԻՅԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ¹

ԱՐՄԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ (a.shaginyan@spbu.ru)

ՍՈՒՏՔ

Հայագիտությունում և արաբագիտությունում տիրապետող է այն տեսակետը, թե հայոց գահերեց իշխան Թեոդորոս Ռշտունին, 652ին՝ Ռաման խալիֆի (644-56) փոխարքայ Մու'ավիյա իբն Աբու Սուֆիանի հետ կնքելով խաղաղության պայմանագիր, Արաբական խալիֆայության հպատակության և իրաասության տակ դրեց մինչ այդ միմիայն Բիզանդական Կայսրությունից կախեալ հայոց, ինչպես նաե՛ւ՝ վրաց և աղուանից ինքնավար կազմատրումները:

Սակայն սոյն յօդուածով մենք առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ ենք դնում անելի վաղ շրջանին վերաբերող մէկ այլ փաստաթուղթ, որը իրաական ծեւակերպում էր տալիս խալիֆայութեան յարաբերութիւններին՝ Հայքում և Հարաւային Կովկասում քնակաւոր քրիստոնեաների հետ: «Մահմեդական պատմահայր», արաբախոս իրանցի աւո-Տաբարիի (838–923) մօտ ամբողջութեամբ բանաբաղուող, Հիջրայի 22ով (642/3) թուագրուող և ակադեմիական գրականութիւնում առաջին անգամ մեր կողմից ուսումնասիրուող՝ Ռամա խալիֆի (634–44) տեղապահ Սուրակա իբն Ամրիի տուած, թուղթը հասցեագրուած էր Արմինիային՝ նկատի ունենալով քրիստոնեայ երեք իշխանութիւնների քնակիչներին: Մեր հետազօտութեան նպատակն է նաեւ պարզել թե՛ ով էր սոյն իրովարտակում «ալ-Քաբի արքայ, Շահրբարազի» տակ թաքնուածը, որի աւկայութիւնն, ըստ մեզ, պատճառ է հանդիսացել, որ բոլոր ուսումնասիրողները խուսափէին մինչ օրս այսպիսի վերլուծութեան ենթարկել տուեալ փաստաթուղթը:

Հայոց գահերեց իշխան Թեոդորոս Ռշտունին (640–մօտ. 659), ով, Սեբեոսի վկայութեամբ, Բիզանդիայի կայսեր Կոստանդ Բ.ի (641–68) կողմից էր հաստատուել «պատրկութեան պատուով»², 652ին քանակցութիւնների նպատակով մեկնեց Դամասկոս, քանզի արաբները յաճախակի էին ներխուժում հայոց իշխանութեան³ սահմաններն: Արդիւնքում՝ Թեոդորոսը

¹ Funding: The reported study was funded by RFBR, project number 20-09-00010:

² «Պատմութիւն Սեբեոսի», *Մարտնագիրք հայոց, հար. Դ. (Է. դար)*, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Սնթիլիաս-Լիբանան, 2005, էջ 532:

³ Դրա կազմաւորման շուրջ տն'ս՝ Արսէն Շահինեան, «Հայոց ինքնավար իշխանութեան տարածքն ու սահմանները Է. դարում», *Journal of the Society for Armenian Studies*, 2011:20, էջ 55-68. նաե՛ւ Արսէն Շահինեան, "Է. դարի Հայոց

աշ-Շամում (Ասորիք եւ Պաղեստին) եւ ալ-Ջազիրայում (Վերին Միջա-
քետք) Պաման խալիֆի փոխարքայ Մու'ափյա իբն Աբու Սուֆիանի հետ
խաղաղութեան պայմանագիր կնքեց, որը ուղղում էր ընդդէմ Բիզանդ-
իայի⁴:

Ակադեմական գրականութիւնում տիրապետող է այն տեսակէտը, թէ
սոյն դաշինքը՝ առաջին փաստաթուղթն էր, որը Արաբական խալիֆայու-
թիւնը կնքել էր հայոց իշխանութեան հետ: Ամբողջական փաստաթուղթը,
որը, մեր խորին համոզմամբ, Թէոդորոսը ստորագրում էր նաեւ
խղուանից ու վրաց իշխանութիւնների⁵ անունից⁶, գրի է առել Սեբեոսը⁷:

Չնայած հայ-արաբական դաշինքի աշխարհաքաղաքական նշանակու-
թեանը՝ մահմեդական հնագոյն մատենագիրների մօտ ակնարկ անգամ
չես գտնի դրա կնքման վերաբերեալ: Մինչդեռ «մահմեդական պատմա-
հայր», արաբախօս իրանցի ատ-Տաբարին *تاريخ الزمى والملوك* (Պատմութիւն
մարգարից եւ թագաորաց)ում վկայակոչելով Քուֆայից յայտնի պատմիչ
Սայֆ իբն Ղումառ ատ-Տամիմիին⁸, յիշատակում է մէկ այլ, անելի վաղ պայ-
մանագրի մասին՝ կնքուած Արմինիայի (أرمينية) բնակիչների հետ: Սրա
տակ արաբա-մահմեդական պատմագրական ու աշխարհագրական
դպրոցների հիմնադիրները (Թ.—Շ. դդ.) նկատի ունէին ո՛չ միայն Հայոց
Աշխարհն, այլեւ՝ աղուանից (أرض [ʿArrān] կամ էլ أرنان[ar-Rān])⁹ եւ վրաց
(أرضان [Gurzan]) իշխանութիւնները: Բանն այն է, որ միջանի տասնեակ
տարիներ անց՝ Ը. դարասկզբում, երբ երեքն էլ նուաճուեցին, կազմեցին

իշխանութեան ինքնիշխանացումը”, *Հայկագեան հայագիտական հանդէս, հոդ.*
ԼԳ., 2013, էջ 165-80:

⁴ Մանրամասն տե՛ս՝ Rev. Manuel Jmbashian, “The Arabo-Armenian Peace Treaty of
a.d. 652” *Haigazian Armenological Review, Vol. 6*, 1977, էջ 169-74: Ըստ մեր հաշ-
ուարկի, փաստաթղթի ստորագրումը տեղի է ունեցել 652ի Օգոստոսի վերջին
(Арсен Шагинян, *Армения и страны Южного Кавказа в условиях византийско-
иранской и арабской власти* (Հայաստանը եւ Հարապային Կովկասի երկրները
բիզանդա-իրանական եւ արաբական գերիշխանութեան պայմաններում), Բի-
զանդական գրադարան մատենաշար, Ուսումնասիրութիւններ, «Ալետէյա»,
Սանկտ Պետերբուրգ, 2011, էջ 115-16):

⁵ Դրանց կազմատրոման շուրջ տե՛ս՝ Արսէն Շահինեան, «ժառանգական իշխանու-
թիւնների կազմատրոմն Իրանի քրիստոնեայ մարզպանութիւններում Բիզանդ-
իայի հետ հակամարտութեան ասարտական փուլում (2. դարավերջ-է. դարաս-
կիզբ)», *ՎէՄ համահայկական հանդէս*, ԺԱ(ԺԵ):1(65), Յունուար-Մարտ, 2019:

⁶ Բանն այն է, որ տարածաշրջանի գահերէջ իշխանների միջեւ հաստատուել էր
նոփրապետական, վասալասիւզերէնական կախաճութիւն՝ Թէոդորոսի հովա-
նու ներքոյ (Շահինեան, “է. դարի հայոց”, էջ 169-170):

⁷ «Պատմութիւն Սեբէոսի», էջ 554:

⁸ Մահագեյ է Հառուն առ-Ռաշիդի օրօք (786-809), հերիմակել է *كتاب الفتوح الكبير والترك*
(Խոշոր նուաճումների եւ հաստուրացների մասին գիրք)ը:

⁹ Արմատի առաջին երկու տառերը հանդէս են գալիս որպէս որոշիչ յօդ:

Արաբական Խալիֆայության Արմինիյա միացեալ նահանգը¹⁰: Ատ-Տաբարիի մօտ Հիջրայի 22ով թուագրուող (642ի Նոյեմբերի 30ից մինչեւ 643ի Նոյեմբերի 18ը) իրաական փաստաթուղթը ամբողջովին բանաբաղում է «Դերբենդի նուաճումը» ընդարձակ գլխում՝ الفتح الباب:

Նշենք, որ ատ-Տաբարիի շուրջ 30 հատորից բաղկացած ծաւարուն ու ընդգրկուն երկում չես գտնի 'Arrān տեղանունը, որի սահմանները հիսիսում ձգում էին մինչեւ Կովկասեան Լեռնաշղթայ ու Դերբենդ (*արաբ.* al-Bāb - բառացի՝ «դարպաս», الباب والابواب [al-Bāb wa-l-'Abwāb] - բառացի՝ «դարպասների դարպաս»)՝ «գերագոյն, խոշորագոյն դարպասներ» իմաստով), մինչդեռ իսլամական աշխարհի իրաքանչիւր պամիչ կամ աշխարհագիր լայնօրէն կիրառում էր այն: Դրանից ելնելով ենթադրում ենք, որ *al-Bāb* տեղանունաբ «մահմեդական պատմահայրը» նկատի ունէր ողջ Առանը (Աղուանք), որտեղից որ բացում էին «դռներն» դէպի հեթանոս Խազիրքի անձայրածիր տափաստանները: Բացի այդ, «Դերբենդի նուաճումը» գլխում կայ մի դրուագ թէ «al-Bāb»-ի եւ (Դերբենդի) պատի՝ «al-Bāb wa-l-'Abwāb»-ի միջեւ ընկած էին միքանի այսպէս կոչուած արքաների տիրոյթներ¹²: Դերբենդի հզօր պաշտպանիչ ամրութիւնները կովկասեան քարձրադիր լեռներում - հիմնադրուած սասանեան շահինշահ Խոսրով Ա. Անուշիրվանի (531-79) օրօք - հասանական է, այնպիսի տպատրիչ ազդեցութիւն էին թողել Արաբիայի անապատներից դուրս եկած մահմեդական զաֆիչների վրայ, որ ատ-Տաբարիի սկզբնաղբիւրների հեղինակները ողջ Աղուանքը մինչեւ այդ կառոյցները «al-Bāb» էին կոչում¹³: Չի բացառում, որ սա «դուռն Արուանից» տեղանունան հակիրճ ձեւն է, որը, Սեբէոսի պնդմամբ, կիրառում էր 590ին Տիգրնում շահինշահի գահը իրացրած

¹⁰ Արսէն Շահինեան, «Արմինիյա արաբական նահանգի սահմաններն ու վարչատարածքային բաժանումը ըստ արաբագիր սկզբնաղբիւրների», *Հայկազեան հայագիտական հանդէս, հար. Լ.*, 2010, էջ 319-28:

¹¹ Սոյն գլխի, որը հաղորդում է «Ստրպատականի նուաճումը» (فتح آذربايجان [Fath Āذربayjān]), ենթահողից դասելով, «al-Bāb»-ի փոխարէն պէտք է որ 'Arminiya-ն լինէր: Հենց այդպէս է խորագրուած համապատասխան գլուխը մէկ այլ արաբագիր պատմիչ ալ-Բալաճուրիի (մահ. 892) «Երկրների նուաճման գիրքը»ում (كتاب قروح البلدان [Kitāb Futūḥ al-Buldān]) (*Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori* (عبد الله بن يحيى بن جابر) كتاب قروح البلدان تأليف الإمام أحمد بن يحيى بن جابر (البلاذري), ed. M. de Goeje, Lugduni Batavorum, 1866, էջ 193-212):

¹² *Annales quos Scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari* (تاريخ الزمان والملوك "أبى جعفر محمد بن جرير الطبري", cum aliis ed. M. de Goeje, Ser. I, Lugduni Batavorum, 1879-1898, էջ 2669-70:

¹³ Սիւս թէ ինչպէս է նկարագրուած ատ-Տաբարի մօտ. «երկու լեռների միջեւ կլանուցուած էր պաշտպանիչ պար. նախ այն ձգում էր նրանց հետ նոյն մակարդակի վրայ, ապա երկու լեռներից էլ վեր էր խոյանում» (տոյն, էջ 2670):

Վահրամ Չորհրդ՝ հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանին հասցեագրած թղթում¹⁴:

Ահա եւ ատ-Տարարիի մօտ բանաքաղտղ բնագրի ամբողջական տարբերակը (շարադրուած «Իսլամական Ոսկեդար»ի մատենագիրների ասանդական ոճով), որը, ի տարբերութիւն *Պատմութիւն Սերէնոսի*ում տեղ գտած պայմանագրից, արաբագէտների կամ հայագէտների կողմից երբեւէ չի ուսումնասիրուել եւ ընդհանրապէս ուշադրութեան չի արժանացել¹⁵:
بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ. هذا ما أعطى سراقا بن عمرو عامل أمير المؤمنين عمر بن الخطاب شهربراز وسكان أرمينية والأرمن من الأمان، أعطاهم أمانًا لأنفسهم وأموالهم ومكتهم ألا يضاروا ولا ينتقضوا، وعلى أهل أرمينية والأبواب؛ الطرءاء منهم والثقاء ومن حولهم فدخل معهم أن ينفروا لكل غارة، وينفذوا لكل أمر نائب أولم ينب رأه الوالي صلاحًا؛ على أن توضع الجزاء عن أجاب إلى ذلك إلا الحشر، والحشر عوض من جزائهم ومن استغنى عنه منهم وقعد فعليه مثل ما على أهل أنزيجان من الجزاء والدلالة والنزل يومًا كاملًا، فإن حشروا وضع ذلك عنهم، وإن تركوا أخذوا به. شهد عبد الرحمن بن ربيعة، وسلمان بن ربيعة، ويكير بن عبد الله. وكتب مرضي بن مقرن وشهد¹⁶.

Յանուն ամենագուբ, ամենողրոմ Ալլահի: Սա այն երաշխատրագիրն է, որը հասցեագրեց Սուրապա իբն Մամրը՝ հասատացելոց իշխան Ռումար իբն աւ-Խատտարի փոխարքան, Շահրարագին, Արմինիայի բնակիչներին ու հայերին: Երաշխատրում եմ եւ նրանց անձերի, ոնեցուածքների եւ հասարցի նկատմամբ անձեռնմխելութիւն, միայն եթէ չդիմարդեն ու չխախտեն [պայմանագիրը]: Արմինիայի եւ [աւ-Քաբ ուս-]Աբուարի բնակիչներն, ինչպէս հետոից եկեաններն, այնպէս էլ տեղացիներն ու նրանք, ովքեր որ շրջակայքերից են, րայց մուտք են գործել [քաղաք], պարտատրում են մասնակից լինել բոլոր արշաանքներին, կատարել բոլոր հրամանները՝ ընդունելի են դրանք, թէ ոչ, եթէ կտաւարիչ [Աբր առ-Ռահման իբն Ռարի՛ան] դրանք հարկատր է համարել: Գլխահարկից¹⁷ ազատում են միայն նրանք, ովքեր որ համաձայն են եւ պատրատ [գինտորական] հաւաքների: Այսպիսով, [գինտորական] հաւաքները փոխարինում են իրենց համար գլխահարկը: Սակայն նրանք, ովքեր, որ հետացուն [ծառայութիւնից], կամ էլ՝ խուսափեն, պարտատրում են կատարել նոյն պայմանները, որոնք դրուած են

¹⁴ «Պատմութիւն Սերէնոսի», էջ 480:

¹⁵ Միայն խորհրդային գիտնականներ Չիա Բունիաթովի եւ Անատոլիյ Նովոսելցեւի մօտ կարելի էր գտնել գրառումներ առ այն, որ *Դերբենդ «քաղաքի բնակիչների հետ կնքուել է պայմանագիր, որը համահունչ էր Ադրբեջանի հետ կնքուած համաձայնագրին»* (Зия Буниятов, *Азербайджан в VII–IX вв.* (Ադրբեջանը Է.–Ծ. դարերում), Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ, Քաջու, 1965, էջ 82): Կամ՝ «...*Դերբենդը [յանձնուել] հարկերից ազատուելու եւ այն հիսիսային թշնամիներից պաշտպաւնելու պարտատրութիւնների դիմաց»* (Анатолій Новосельцев, *Хазарское Государство и его Роль в Истории Восточной Европы и Кавказа* (խազարների պետութիւնը եւ նրա դերը Արեւելեան Եւրոպայի եւ Կովկասի պատմութիւնում), ԽՍՀՄ ԳԱ «Գիտութիւն», Մոսկուա, 1990, էջ 102):

¹⁶ *Annales quos scripsit Abu Djafar*, էջ 2665–66:

¹⁷ Բնագրում՝ յոգ. թ. الجزاء [al-ğizā], եգ. թ. الجزية [al-ğizya-է]:

Աղբրեցանի բնակիչների վրայ, այն է՝ գլխահարկի վճարում, [մահմեդականների] ուղեկցում եւ հիփրընկալում ողջ օրոպա ընթացքում: Եթէ նրանք մասնակցում են [զինուորական] հաաքների, ապա ազատում են այս [ամէնից], իսկ եթէ հրաժարուն են [ստանձնած պարտատրոփաններից], ապա կը ձերբակալուեն: Վկայ են 'Աբդ առ-Ռահման իբն Ռաքի'ան, Սալման իբն Ռաքի'ան եւ Բուկայր իբն 'Աբդ Ալլահը: [Թնութը] կազմեց Մարդի իբն Մուվարրիւնը, ով նոյնպէս վկայեց¹⁸:

Սոյն փաստաթղթի պայմաններից դատելով՝ ողջ Արմինիայի բնակիչները, այդ թում նաեւ ալ-Բաբ ուալ-Աբուաբի (Դերբենդի, պէտք է հասկանալ Առանի), ընդունում էին Արաբական Խալիֆայութեան հպատակութիւն: Ստանալով կեանքի, գոյքի եւ հաւատքի նկատմամբ անձեռնմխելիութեան երաշխիքներ՝ քրիստոնեաներից բաղկացած այս նոր հպատակները ստանձնում էին զինուորական ծառայութեան պարտատրոփան՝ մասնակից դառնալով իսլամի թշնամիների դէմ կատարուող արշաանքներին, կամ էլ ազատուել բանակից՝ դրա դիմաց վճարելով ամենամեայ գլխահարկը (ջիզիա) արաբ նորանշանակ կառավարիչ 'Աբդ առ-Ռահման իբն Ռաքի'այի օգտին:

Համադրելով այս երաշխատրագրի (*ամանի*) դրոյթները այն պայմանների հետ, որոնք *Պարմութին Սեբէտսի*ի պայմանագրում էին տեղ գտել՝ յստակ կարող ենք փաստել, որ գործ ունենք երկու տարբեր իրաական փաստաթղթերի հետ: Միայն մէկ ընդհանուր կէտ կար երկուսում՝ Բիզանդական Կայսրութեան հովանու ներքոյ գտնուող Արմինիայի քրիստոնեայ բնակչութիւնը ընդունում էր Արաբական Խալիֆայութեան հպատակութիւն¹⁹:

Չնայած «Պարմութին մարգարէից եւ թագաւորաց»ում տեղ գտած փաստաթղթի կարեւորութեանը՝ մեզ բոլոր յայտնի հետազօտողները անտեսել են այն, կարծում ենք մի պարզ պատճառով, որ այնտեղ աչքի են ընկնում բաղարկութիւն ու ժամանակավրէպութիւն: Ալ-Բաբ ուալ-Աբուաբի (Դերբենդի), պէտք է հասկանալ Առանի, եւ ամբողջ Արմինիայի բնակիչների անունից պայմանագիր է կնքում Շահրբարազը (Շահր-Վարազը), ով պատմագրութիւնում քաջ յայտնի է որպէս սասանեան շահինշահ Խուրով Բ. Փարիզի (590–628) օրօք խոշոր զօրավար: Նա հռչակ ձեռք բերեց բիզանդապարսկական «քսանհինգամեայ պատերազմում» (603–28), երբ 613ին նուաճեց Դամասկոսը, իսկ 614ի Մայիսին՝ Երուսաղէմը՝ զերելով Տէրունական Խաչը: Սասանեան Արմինան (*պահլ. Arminān*) եւ Առան

¹⁸ Ուշագրաւ է այն փաստը, որ ե՛ւ փոխարքայ Սուրակա իբն 'Ամրը, ե՛ւ ալ-Բաբում նորանշանակ 'Աբդ առ-Ռահման իբն Ռաքի'ա կառավարիչը, ունէին նմանատիպ մականուն՝ «Աուսատր» (أوساتر) [Dū an-Nūr] (*Annales quos scripsit*, էջ 2663):

¹⁹ 652ին կնքուած հայ-արաբական դաշինքի պայմանների վերլուծութիւնը տե՛ս՝ Շահինեան, «Է. դարի Հայոց Իշխանութեան», էջ 169-71:

(*պահլ.* Arrān) մարզպանութիւններում հետապնդելով կայսեր Հերակլին (610-41)՝ Շահր-Վարազը 626ին նոյնիսկ սպառնում էր Կոստանդնուպոլիսին: Վերջապէս, նա սպանուեց 630ին Տիգրոնում՝ արքայական գահին ապօրինի տիրելուց քառասուն օր անց²⁰:

Ակադեմական գրականութիւնում ճշգրտուած է, որ Շահր-Վարազը, լինելով ոմն Արտաշիրի (*պահլ.* Ardaxšir) որդին, ներկայացնում էր պարթեական Միհրանեան (*պահլ.* Mihrān) ազնուական տոհմը²¹, որը մինչեւ Խոսրով Անուշիրվանի 530ականների բարեփոխումները ժառանգաբար զբաղեցնում էր Իրանի սպարապետի (*պահլ.* 'išbahbad) պաշտօնը:

Այս ամէնի մասին վկայակոչելով է. դարասկզբի սասանեան հեղինակների գրում են Թ.-Ժ. դարերի մահմեդական շատ հեղինակներ, եւ ոչ միայն նրանք՝ նախախլամական Պարսկաստանի հարուստ պատմութիւնը շարադրելիս. առ-Տարարին էլ բացառութիւն չէ²²: Աւելին, նա յստակեցնում է այն, որ «Շահր-Քարազ»ը (*արաբ.* سهر بارز [Šahr Barāz])²³ դա անուն չէ, այլ՝ մակդիր): Զօրավարի իրական անունը, ով հռչակ ձեռք բերեց հռոմեների հետ պարսիկների վարած պատերազմում, Ֆառոխան (Ֆառոխան) էր²⁴: Ժամանակակից Սերէրսի մօտ՝ Խոդհամ, որ է Ըռազման կամ էլ՝ Ըռազմիդզան²⁵: Բանն այն է, որ «1234 թ. Ասորական անանուն ժամանակագրութիւն»ում Խոսրով Փարիզը, դիմելով իր զօրավարին, յայտա-

²⁰ James Howard-Johnston, "Xosrow II" (Last Updated: March 15, 2010), *Encyclopaedia Iranica, Online Ed.* <https://iranicaonline.org/articles/khosrow-ii> (Retrieved 15 November 2020):

²¹ Parvaneh Pourshariati, *Decline and Fall of the Sasanian Empire: the Sasanian-Parthian Confederacy and the Arab Conquest of Iran*, I.B.Tauris & Co Ltd., London & New York, 2008, էջ 181:

²² *Annales quos scripsit*, էջ 1002-63:

²³ Շահրվարազ (բառացի՝ «արքունեաց վարազ») < *իրան.* *šahr (բառացի՝ «պետութիւն») + *warāz («վարազ կենդանի»):

²⁴ *Annales quos scripsit*, էջ 1002:

²⁵ «Պատմութիւն Սերէրսի», էջ 507, 512: Սերէրսը սրան կոչում է նաեւ Շահր Վարազ (նոյն, էջ 519-20, 522), իսկ Աղուանցի Կաղանկատոյց գիւղից նրա ժամանակակցը՝ Շահ Վարազ/Շահվարազ («Անանուն Կաղանկատուացի, Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն», *Մատենադարան, հրատ. Դ.*, էջ 376, 379, 387 եւ 411): Բիզանդական գրական ասանդոյթում նա յայտնի էր որպէս Σάφραρος (*Nicephori Archiepiscopi Constantinopolitani Opuscula Historica*, ed. C. de Boor, *Accedit Ignatii diaconi vita Nicephori, Lipsiae, Teubner, 1880*, էջ 15-21) կամ էլ՝ Σαφραράζαν (*Theophanis Chronographia, ex recensione Ioannis Classeni, 1-2, Bonnae, Impensis E. Weberi, 1839-1841, vol. I, էջ 476-80*):

րարում է: «Այսուհետ ես քեզ չեմ կոչի Ռոմիական, այլ՝ Շահրբարազ, այսինքն (արքունեաց - Ա.Շ.) վարագ»²⁶:

Այդ իսկ պատճառով խորհրդային խազարագիտության հիմնադիր Միխայիլ Արտամոնովը, արաբագետ Արամ Տերղետնդեանը եւ իրանագետ-կովկասագետ Անատոլիյ Նովոսելցեը, վկայակոչելով ատ-Տաբարիին, վստահորէն գրում էին թէ արաբական առաջապահ գորքը՝ Արդ առ-Ռահման (իբն Ռաբի'այի) գլխատրութեամբ, Հիջրայի 22ին (642/3ին) հասնելով Դերբենդ, գործ ուներ Շահրվարազ/Շահրբարազ անունով սասանեան բերդակալի կամ էլ կուսակալի հետ²⁷: Յաօք, նրանք պատշաճ ուշադրութեան չեն արժանացրել այն փաստը, որ ատ-Տաբարին, վկայակոչելով մէկ այլ սկզբնաղբիւրի, նշում է թէ այդ օրերին ալ-Բաբի մարգբանն էր, այլ կերպ ասած՝ սասանեան վարչակազմի ղեկավարը, Բինդաանը՝ Ռուստամ (Ռուստամ) սպարապետի եղբայրը²⁸:

Նշենք, որ Դաղստանից յայտնի արաբագետ Ամրի Շիխսայիդովը, ատ-Տաբարիի երկի «Դերբենդի նուաճումը»ից քաղուածքներ թարգմանելիս, հարկ չի համարել մեկնաբանել քնագրում տեղ գտած «Շահրբարազ» անունը²⁹, իսկ ԽԱՄԱԿ ԳԱ ակադեմիկոս Բորիս Ռիբակովը, վկայակոչելով «Պատմութիւն մարգարեից եւ թագաւորաց»ի 963ին սասանեան վեզիր Մուհամմադ Բալ'ամի կողմից հեղինակած պարսկերէն համառոտ տարբերակին, որտեղ «Šahrbarāz»ը փոխարինուած է شهریار [Šahriyār]³⁰ով (բա-

²⁶ «Non iam vocaberis Rumiazan, sed Šahrbaraz, id est aper silvestris» (*Chronicon anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens*, ed. by Jean-Baptiste Chabot, Louvain, L. Durbecq, 1917, էջ 174):

²⁷ Михаил Артамонов, *История Хазар* (Խազարների պատմութիւն), Պետ. Էրմիտաժ, Լենինգրադ, 1962, էջ 177. նաեւ՝ Арам Тер-Гевондян, *Армения и Арабский Халифат* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆայութիւնը), ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 44. նաեւ՝ Новосельцев, էջ 172-75:

²⁸ *Annales quas scripsit*, էջ 2251:

²⁹ Амри Шихсаидов, *Книга Ат-Табари "История Посланных и Царей" о Народах Северного Кавказа* ("Պատմութիւն մարգարեից եւ թագաւորաց" ատ-Տաբարիի գիրքը Հիւսիսային Կովկասի ժողովուրդների մասին), Памятники истории и литературы Востока: период феодализма, ԽԱՄԱԿ ԳԱ «Գիտութիւն», Մոսկոա, 1986, էջ 73:

³⁰ *Chronique de Abou-Djafar-Mohammed-ben-Djarir-ben-Jazid Tabari*, trad. sur la version persane d'Abou-Ali Mo'hammed Bel'ami par H. Zotenberg, 4 tomes, Paris, Imprimerie impériale, 1867-74, t. I, էջ 194: Շահրիար անունն առկայ է նաեւ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի (1160-1233) «Դերբենդի նուաճումը»ի քանարադրուած պատմութեամբում (*Ibn al-Athir, al-Kamil fi-l-Tarikh* (اين الكامل في التاريخ): In 9 vols., al-Qahira, [S.I.], 1353 A.H. / 1934/5 A.D. vol. 1, էջ 14):

ուացի՝ «թագաւոր», «[այ] երկրի կառավարիչ» իմաստով), կոչել է նրան «Դերբենդի իշխան»³¹:

Հեղինակաւոր գիտնականները պատշաճ ուշադրութեան ցեն արժանացրել ատ-Տաբարիի կարեւոր այլ մանրուքներ եւս: Նախեստաւոյ «մահմեդական պատմահայրը» «Դերբենդի նուաճումը» գլխում, վկայակոչելով Սայֆ իբն Ռամաին, այլեւս չի պնդում թէ նա գործ ունի Ֆառուխան անունով հռչակաւոր զօրավարի մակդիրի հետ՝ այնպէս, ինչպէս Իրանի նախախլամական պատմութիւնը շարադրելիս էր: Երկրորդ կարեւոր մանրուքը վերաբերում է այն Շահրբարազի (Շահր-Վարազի) կենսագրութեանը, ով 643ի ամռանը³², երբ Ադրբեջանից (Ատրպատականից) ալ-Բար (Դերբենդ) հասաւ Մարդ առ-Ռահման իբն Ռաքի՛այի առաջապահ զօրքը, կառավարիչ էր այնտեղ:

Մարդ առ-Ռահման իբն Ռաքի՛ան դուրս եկաւ ալ-Բարի արքային ընդառաջ, իսկ այնտեղի արքան այդ օրերին Շահրբարազն էր՝ մի մարդ Ֆարսի քնակիչներից (أهل فارس [ahl Fars]), ով ղեկավարում էր տուեալ լեռնային երկիրը³³: Իր ծագումը նա վերագրում էր Շահրբարազի տան՝ մի թագաւորի, ով ցիրուցան արեց իսրայէլացիներին (بنی اسرائيل [bani 'Isra'el]³⁴), վտարելով դրանց Ասորիքից ու Պաղեստինից) (أس-Տամ) (أس-Տամ)³⁵

Սոյն դրուագի երկրորդ նախադասութիւնում Քուֆայից արաբ պատմիչը, հաւանական է, նկատի ունէր պարսիկ զորավար Շահր-Վարազի (ով յետագայում գահին ապօրինի տիրացաւ) վերը նկարագրուած գործողութիւնները «քսանիինգամեայ պատերազմի» ընթացքում, երբ նա զբաղուած էր Ասորիքում ու Պաղեստինում բիզանդական նահանգների նուաճմամբ: Յամէնայն դէպս՝ Սեբէոսի մօտ «խոռեամի, որ է Ըռազմիոզան», կողմից Երուսաղէմը գերելուց յետոյ, «...հրաման հասեալ ի թագաւորէն

³¹ Борис Рыбаков, “Предпосылки Образования Древнерусского Государства” (Հին ռուսական պետութեան կազմաւորման նախադրեալները), *Очерки Истории СССР: Критис Рабовладельческой Системы и Зарождение Феодализма на Территории СССР (III-IX вв.)* (Դրուագներ ԽՍՀՄ պատմութիւնից. Ստրկատիրական համակարգի ճգնաժամը եւ աւատատիրութեան ծագումը ԽՍՀՄ տարածքում (Գ.-Թ. դարեր)), ՍՍՀՄ ԳԱ, Մոսկուա, 1958, էջ 872:

³² Բանն այն է, որ Կովկասեան Լեռներում ծմբոտայ շրջանում զայտողական արշաւանք կատարելը քաջատում էր:

³³ Բնագրում الفرج [al-farj] (քառացի՝ «[Լեռն]անցք»):

³⁴ Ուղղական Ի. بنو اسرائيل [banu 'Isra'el] (քառացի՝ «Իսրայէլի որդիներ»):

³⁵ «As-Sām» կամ «Bilād as-Sām» (քառացի՝ «Երկիր [Սաղիմայից] դէպի ծախ») տեղանուն արաբները նկատի ունէին Բիզանդիայի նահանգներն Ասորիքում եւ Պաղեստինում:

³⁶ *Annoles quos scripsit*, էջ 2663: Շիխասայիդովը երկրորդ քանաքաղոտը նախադասութիւնը, «Դերբենդի նուաճումը» թարգմանելիս, բաց է թողել (Шихсаидов, էջ 72):

(Ապրվել է սոսրովայ - Ա.Շ.)...զիրեայսն հրամայէ հալածական անել ի քաղաքէն»³⁷: Համաժամանակեայ ասորի անյայտ հեղինակի «ժամանակագրութիւն»ում հայ եպիսկոպոսի խօսքերը հաստատող մի տող կայ. «Երբ Երուսաղէմը նուաճուեց... եւ... երբ լսեց [Շահրբարազ] զօրավարը հրեաների խորամանկութիւնների մասին, նա դաժանօրէն վննդեց դրանց»³⁸:

Իսկ ինչ վերաբերում է «ալ-Բարի արքայ Շահրբարազի» մասին բանաքաղոտը դրուագի առաջին նախադասութեանը, ապա՝ խօսքը, յտակ, Բիզանդիայից կախեալ աղուանից իշխանութեան հիմնադիր Վարազ-Գրիգորի³⁹ մասին է, ով, սակայն կառավարման ղեկը արդէն յանձնել էր իր որդուն՝ ապարապետ Ջեանշէրին, երբ վերջինս հերոսացաւ արաբապարսկական (636/7ի) Կադիսիյայի ճակատամարտում Սասանեանների կողմից կոռելով⁴⁰:

Մեր թեզը հիմնուած է առ այն, որ Վարազ-Գրիգորը, Աջափնեայ Աղուանքից (Արցախից կամ Ուտիքից) Է. դարի հայ պատմիչի վկայութեամբ,

³⁷ «Պատմութիւն Սեբեոսի», էջ 512:

³⁸ «Когда Иерусалим был взят... и... когда услышала военачальник (Шахрбараз - А. Ш.) о хитростях иудеев, он жестоко прогнал их» («Анонимная сирийская хроника о времени Сасанидов (Сирийские источники по истории Ирана и Византии)» (Ասորական անանուն ժամանակագրութիւնը Սասանեանների ժամանակաշրջանի մասին), թարգ. Նինա Պիգուլեակայա, *Записки Института Востоковедения АН СССР*, т. VII, 1939, էջ 71. նաեւ՝ «Non iam vocaberis Rumiazan, sed Šahrbaraz, id est aper silvestris» (*Chronicon anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens*, էջ 178):

³⁹ Վարազ-Գրիգորի իշխանութեան իրաական ձեւակերպումը բիզանդական կայսեր Հերակլի կողմից, մեր ճշգրտմամբ, կարող էր տեղի ունեցած լինել վերջինիս Գարդմանի բերդ - որտեղ գտնուում էր Աղուանից իշխանի նստավայրը - այցի օրօք շահինշահ Արուաշիր Գ.ի (628-29) Բ. տարում, այսինքն՝ 629ին, (Շահինեան, «ժառանգական իշխանութիւնների...», էջ 40-41):

Pour ces années 34 et 31 av. J.-C., Julien Oliver et Charles Parisot-Sillon, dans une étude consacrée au monnayage de Marc Antoine et Cléopâtre,⁴⁴ démontrent de manière convaincante que les monnaies de ses souverains, comportant la tiare arménienne, ont été émises à compter de fin 34 ou début 33 av. J.-C., pour payer les armées d'occupation en Syrie, Cappadoce et Arménie:

La production débute probablement dans les derniers mois de 34 ou vers le début de 33. Elle prend place soit dans un atelier de Syrie du nord, point de départ de l'itinéraire emprunté par les romaines pour rejoindre le haut-plateau arménien, soit en Arménie même, où Antoine s'approprie dès 34 le trésor des Grand Rois Axtaxiades, trouvant ainsi les ressources nécessaires au paiement de la solde de ses troupes.⁴⁵

Il est donc peu probable qu'Antoine ait toléré que d'autres monnaies en argent soient émises, au moins durant la première partie de cette période d'occupation.

Nous sommes amenés à penser que l'atelier ayant émis les monnaies de Marc Antoine et Cléopâtre est à situer soit en Syrie du Nord, soit directement dans le camp militaire et qu'il satura momentanément la région pour les dénominations en argent, destinée au paiement des troupes.⁴⁶


⁴⁴ Julien Olivier et Charles Parisot-Sillon, "Les monnayages aux types de Cléopâtre et Antoine. Premiers résultats et perspectives", *Bulletin de la Société Française de Numismatique*, 68e année, novembre 2013: 9, p. 256-68.

⁴⁵ Olivier - Parisot-Sillon, p. 263. Rappelons les faits à travers la source principale: Dion Cassius, *Histoire romaine*, IXL, 40. "A la suite de cela, s'assurant les uns de gré, les autres de force, il se rendit maître de l'Arménie tout entier; car Artaxe, vaincu dans un engagement, se retira chez les Parthes. Après avoir accompli ces choses et fiancé son fils à la fille du Mède, afin de se l'attacher davantage, Antoine retourna en Égypte, emmenant, outre un butin considérable, l'Arménien avec sa femme et ses enfants".

⁴⁶ La présence de 42 monnaies de Marc Antoine sur 373 monnaies d'argent composant le trésor de Sarnakouk, découvert en 1945 à environ 120 km d'Artaxata, confirme cette situation. Sachant par ailleurs, que les monnaies de Marc Antoine sont majoritairement des émissions militaires, à savoir les numéros 382, 395-406, 409-410, 415-418, 420, 421-423, 425, 428-430, 440-446 et 447-45 d'après le catalogue Ruben Vardanyan, *Sylloge Nummorum Romanorum Armenia*, Vol. I, Roman Republic, Erevan, Musée d'Histoire de l'Arménie, 2011. Sur ce trésor voir Mousheghian, 263-268; Mousheghian et Depeyrot; Nurpetlian étant plus critique sur la représentativité de ce trésor (Jack Nurpetlian, "Ancient Armenian Coins: the Artaxiad Dynasty (189 BC - AD 6)", *Berytus Archaeological Studies*, 2008-2009:LI-LII, p. 141).

Reste la question du monnayage en bronze. Marc Antoine n'a pas émis ce type de division de bronze dans sa série avec la tiare arménienne. Il existe donc, une possibilité d'émission de dénominations locales en bronze.⁴⁷

L'autre hypothèse, plus probable, est que durant les années de domination romaine, des monnaies de bronze émises par diverses villes au nom de ces deux souverains, en Syrie et en Cappadoce, se soient répandues en Arménie⁴⁸ amenant une évolution des émissions locales. En effet, à partir de la période de domination romaine en Arménie, des innovations importantes apparaissent sur le monnayage civique arménien, comme la couronne de laurier (cf. Fig. 12) et l'écriture des légendes en forme circulaire (Fig. 12, 14, 15 et 18). On constate ensuite que l'écriture circulaire perdure, dans la série royale, sur le monnayage d'Artaxias II et au-delà (Fig. 12 à 18).⁴⁹ Il y a là une influence avant tout romaine, mais transmise par les monnayages d'Égypte et des citées du littoral de Syrie et Phénicie.

Une comparaison des monnaies civiques avec les drachmes du second règne⁵⁰ d'Artaxias II (ACCP 170 et 171) fait ressortir d'autres similitudes comme le monogramme  qui est commun aux monnaies civiques Fig. 8 et 9.⁵¹


La présence de monnaies contenant à l'avant comme au revers un portrait,⁵² comme c'est le cas pour Marc Antoine et Cléopâtre,⁵³ est aussi remarquable (cf. Fig. 14, 15 et 18). De plus, l'indication de l'année régnale en toutes lettres au revers de deux types monétaires de second règne d'Erato (ACCP 187 et 188) est une nouveauté. L'influence du monnayage de bronze de Marc Antoine et de Cléopâtre en Arménie sur le monnayage tardif de la dynastie artaxiade avait jusque-là été négligée et expliquée, selon nous, l'évolution constatée.

⁴⁷ Hypothèse d'un atelier romain créé localement par les troupes d'occupation pour des émissions est à considérer, au moins théoriquement. Alexandre Helios aurait pu figurer sur des monnaies, plus probablement, en argent.

⁴⁸ Julien Olivier et Héroïse Aumâtre, "Antoine, Cléopâtre et le Levant. Le témoignage des monnaies", in L. Bricault, A. Burnett, V. Drost, A. Suspène (dir.), *Rome et les Provinces, Monnayage et Histoire. Mélanges Offerts à Michel Amandry*, 2017.

⁴⁹ Nurpetlian, 2010.

⁵⁰ Stylistiquement très différentes de l'unique monnaies émise lors de son éphémère premier règne (ACCP 169).

⁵¹ Le monogramme  sur Fig. 8 et Fig. 9 ne peut, selon nous, désigner la ville d'Artaxata dans la mesure où le nom de la ville figure déjà en toutes lettres sur ces monnaies.

⁵² Nous retrouvons cette double présentation sur les monnaies de Tigrane V et d'Erato (Roy Arakelian et Maxime K. Yevadian, "Erato, reine d'Arménie, Une histoire moins incertaine grâce à de nouvelles découvertes numismatiques", *Journal of Ancient Civilizations*, 2020:36(1), p. 67-137).

⁵³ *Roman Provincial Coinage*, I, 4509, 4510, 4742 et 4771.

Ces éléments convergent à une même conclusion: placer le monnayage civique entre l'invasion romaine et le second règne d'Artaxias II, voire même pour partie durant les premières années de celui-ci. Ce développement de manière massive sur une courte période (au moins six types monétaires sur une décennie) ne peut être, selon nous, que le témoignage d'une organisation civique préexistante, déjà attestée par le monnayage susmentionné contenant les lettres "ΔΗΜΟ".

Après la datation relative, que nous venons de proposer, nous allons tenter d'affiner la chronologie par l'étude de la question de la double datation, qu'il faut d'expliquer. Si nous nous situons dans la période postérieure à la vacance d'un pouvoir artaxiade légitime, suite à l'exécution d'Ardavasdes II en 34 av. J.-C., nous postulons comme référentiel pour la première date figurant sur les monnaies civiques l'ère régnale de Tigrane II commençant en 95 av. J.-C. :

95-67=28/29 av. J.-C.

95-69=26/27 av. J.-C.

Il est probable qu'Artaxias II ait toléré la circulation des monnaies civiques lors de son règne. La faible quantité de monnaies émises par lui pourrait en être la conséquence directe, puisque ses seules monnaies connues sont datées de l'an 14, la dernière année de son règne.⁵⁴ Cette ère semble débiter dès la destitution d'Ardavasdes II du fait de sa capture par Marc Antoine et pour affirmer ainsi la continuité de la monarchie,⁵⁵ quand bien même il n'a régné que quelques semaines, ou mois, en 34/33 av. J.-C., le temps d'émettre un seul petit bronze (Fig. 11). L'analyse de cette monnaie est importante car elle ne comporte aucune des évolutions mentionnées plus haut et sert de *terminus ante quem*.

Ce souverain n'est monté réellement sur le trône qu'après la défaite d'Actium (2 septembre 31 av. J.-C.) et avec le soutien militaire des Parthes, auprès desquels il avait trouvé refuge, probablement en l'an 30 av. J.C. L'an 14 de son règne est donc l'année 21/20 av. J.C. (34-14=20).⁵⁶

⁵⁴ Yeghia Nercessian, *Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia*, Armenian Numismatic Society, Special Publication 11, 2006, p. 161.

⁵⁵ Il ne faut pas exclure l'hypothèse qu'Artavasdes II craignant les manœuvres de Marc Antoine ait pris le soin de couronner son fils aîné avant de se rendre dans le camp romain. Ainsi ce dernier, à son retour en Arménie, a pu légitimement estimer que son règne avait débuté dès son couronnement. Sur cet événement, voir les récits de Flavius Josèphe (*Antiquités judaïques*, XV, IV, 3) et Dion Cassius (*Histoire romaine*, XLIX, § 39, 5-6 à 40, 1-2).

⁵⁶ L'année (20 av. J.-C.) du meurtre d'Artaxias II évoqué par Tacite est, grâce à Dion Cassius, indirectement datable grâce à la mention des consuls Marcus Apuleius et Publius Silius, cf. Dion Cassius, LIV, 7.

Reste à expliquer la deuxième date (10 et 12) figurant sur les monnaies civiques. Selon l'hypothèse énoncée ci-dessus, elles renverraient à l'année 38 av. J.-C.

28+10=38 av. J.-C.

26+12=38 av. J.-C.

Plutarque dans la *Vie d'Antoine*, 34, 10, mentionne à cette période, même si la chronologie est relative, une victoire romaine d'un des lieutenants de Marc Antoine contre les Arméniens, les Ibériens, et les Albaniens:

Et en effet, Sossius, général d'Antoine, remporta de grands succès en Syrie; et Canidius, qu'il avait laissé chez les Arméniens, battit ceux-ci, et aussi le roi des Ibères et des Albaniens, et s'avança jusqu'au mont Caucase.⁵⁷

Il semble qu'Artavasdès II ait géré, au mieux, cette campagne militaire romaine sans être considéré comme vaincu, ce qui l'amena à prendre sur les monnaies le titre de "divin" à partir de l'année 17 de son règne en 39 av. J.-C. (55-17=39).⁵⁸ Cette campagne pose question car elle n'est pas autrement documentée.

Les ambitions romaines doivent être ici analysées et intégrées à la réflexion des éléments historique au-delà du cadre de l'histoire antique de l'Arménie. L'hypothèse qu'Antoine, dès la répartition des territoires romains entre les trois principaux dirigeants du monde romain, lors du pacte de Brindes (40 av. J.-C.), ait été persuadé que l'avenir de Rome résidait dans les régions orientales et qu'il ait intégré dans sa vision l'héritage des monarchies hellénistiques, a d'importantes conséquences pour l'Arménie. En effet, on peut raisonnablement penser qu'il a préparé dès le début des années 30 av. J.-C. une politique d'affaiblissement de ces royaumes, et plus particulièrement de l'Arménie. En rupture avec la tradition romaine, il avait comme visée d'instaurer une dynastie sur de vastes territoires orientaux, qu'il projetait de conquérir ou de dominer grâce à une active politique matrimoniale. Ses visées conquérantes passaient par la fondation d'une dynastie qui devait régner largement sur l'Orient hellénistique. Ce projet est explicitement décrit au

⁵⁷ Plutarque, *Vie d'Antoine*, 34, 10 "Καὶ γὰρ Σόσιος Ἀντωνίου στρατηγὸς ἐν Συρίᾳ πολλὰ διεπράττειτο, καὶ Κανίδιος ἀπολειφθεὶς ὑπ' αὐτοῦ περὶ Ἀρμενίαν, τοὺτους τε νικῶν καὶ τοὺς Τιβήρων καὶ Ἀλβανῶν βασιλέας ἄχρι τοῦ Καυκάσου προήλθεν. Ἄφ' ὧν ἐν τοῖς βαρβάροις ὄνομα καὶ κλέος ἤρξτετο τῆς Ἀντωνίου δυνάμεως", trad. R. Flacière et E. Chamby, 1977, p. 132; à compléter par Dion Cassius, XLIX, 24, 1-5 (année 38).

⁵⁸ ACCP 161 et 162.

deuxième siècle par Plutarque.⁵⁹ Cette politique fut mise en œuvre dès le début de la décennie 30 av. J.-C. avec une répartition des différents royaumes entre Cléopâtre et ses enfants. Alexandre Hélios, seulement âgée de 5 ou 6 ans, fut nommé roi d'Arménie lors de la conquête romaine de 34 av. J.-C. et des régions au-delà de l'Euphrate jusqu'aux Indes, c'est-à-dire la Mésopotamie et la Parthie, bien que ces deux derniers royaumes n'étaient pas encore été conquis. Qu'importe!

Cassius relate en ces termes son projet:

Quant aux enfants qu'il avait eu de Cléopâtre, il promit de donner à Ptolémée la Syrie et toutes les régions en deçà de l'Euphrate, jusqu'à Hellespont, à Cléopâtre la Libye Cyrénaïque et à leur frère Alexandre l'Arménie et les autres régions au-delà de l'Euphrate jusqu'en Inde. Car il leur offrait ces pays comme s'ils étaient déjà en sa possession.⁶⁰

Le mariage entre Alexandre et Iotapa, fille du roi de Mésopotamie-Atropatène Artavasde I^{er}, était destiné à faciliter la mise en place de sa politique. Le royaume de Mésopotamie n'ayant pu être conquis militairement lors de la campagne de 36 av. J.-C., cette alliance matrimoniale préservait l'avenir.

Dans ce contexte, il est tout à fait possible qu'Antoine ait commencé la mise en place de sa tactique d'affaiblissement du royaume d'Arménie, "le plus puissant de tous" selon Plutarque,⁶¹ dès l'an 38 av. J.-C. avec la victoire mentionnée par le même Plutarque.

Tout porte à croire que la conséquence de la campagne militaire romaine de 39/38 av. J.-C. fut un affaiblissement politique du roi Artavasdes II dont l'ampleur est difficile à apprécier.

Ce dernier semble y avoir répondu de deux manières. D'une part, et selon la tradition monarchique en affirmant le soutien des dieux à son règne, ce que manifeste d'épithète de "divin". Parallèlement à ce prestige personnel, il semble avoir dû conférer, ou rendre, des droits civiques à la cité d'Artaxata et notamment le titre de métropole. En effet, sur les monnaies civiques, Fig. 5-6 et 8-9, apparaît pour la première fois le titre de "ΜΗΤΡΟΠΟΛΙΣ – métropole". De fait, nous sommes amenés à penser que cette élévation amena les habitants de la ville à utiliser l'ère urbaine de la métropole de leur ville en

⁵⁹ Plutarque, *Vie d'Antoine*, XXXVI, 5-7.

⁶⁰ Cassius, XLIX, 41, 2: "Ἐκείνοις μὲν δὴ ταῦτ' ἐνεψε, τοῖς δὲ δὴ αὐτοῦ παισὶ τοῖς ἐκ τῆς Κλεοπάτρας οἱ γεγονόσι, Πτολεμαίῳ μὲν τὴν τε Συρίαν καὶ τὰ ἐντὸς τοῦ Εὐφράτου μέχρι τοῦ Ἑλλησπόντου πάντα, Κλεοπάτρα δὲ τὴν Λιβύην τὴν περὶ Κυρήνην, τῷ τε ἀδελφῷ αὐτῶν Ἀλεξάνδρῳ τὴν τε Ἀρμενίαν καὶ τὰ ἄλλα τὰ πέραν τοῦ Εὐφράτου μέχρις Ἰνδοῦν δόσσειν ὑπέσχετο· καὶ γὰρ ἐκεῖνα ὡς ἔχον ἤδη ἐχαρίζετο. Καὶ ταῦτα οὐκ ἐν τῇ Ἀλεξάνδρει μόνον εἶπεν, ἀλλὰ καὶ ἐς τὴν Ῥώμην, ἵνα καὶ παρ' ἐκείνων τὸ κύρος λάβῃ, ἐπέστειλεν.", trad. R. Flacière et E. Chamby, 1977, p. 149, à compléter par Plutarque, *Vie d'Antoine*, LIV, 6-9.

⁶¹ Plutarque, *Vie d'Antoine*, XXXVII, 3.

la faisant débiter en 38 av. J.-C. Si pour des raisons politiques évidentes ils ne purent émettre de monnaies sous le règne d'Artavasdès II, un processus était lancé. Durant les premiers mois de l'occupation romaine l'impossibilité était identique, voire plus forte encore, puis avec le temps et la limitation des armées d'occupation du fait de la préparation de l'affrontement avec Octave, la pression se relâcha.

C'est durant cette période, vers 31-30 av. J.-C., que l'on doit probablement placer la monnaie inédite, Fig. 10, avec la personnification de la cité à l'avvers et le début de son nom. Le revers avec la tiare arménienne en plein champ correspond pleinement à une période sans souverain à la tête du royaume.⁶² Cette monnaie comporte à l'avvers un buste de Tyché coiffé d'une couronne tourelée de cinq tours, ce qui rappelle étonnamment la tiare à cinq points du revers. Il est probable que le graveur, ou son donneur d'ordre, n'ait pas complètement compris le type qu'il souhaitait voire reproduit.

Puis après une période de reprise en main du pays par Artaxias II, grâce à une armée étrangère rappelons-le, la communauté civique d'Artaxata, avait alors une incontestable légitimité pour émettre les séries connues et maintenant bien documentées en s'inspirant du monnayage de bronze de Marc Antoine et de Cléopâtre, Fig. 5 à 9.

Cette reconstitution politique et chronologique permet d'expliquer toutes les caractéristiques nouvelles qui fleurissent dès lors dans le monnayage arménien.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԸ

(Ամփոփում)

ՌՈՅ ԱՌԱՔԵԼԵԱՆ (royarakelian@hotmail.com)

ՄԱՔՍԻՄ ԵՒԱՏԵԱՆ (yevadian@gmail.com)

Արտաշեսյան Հարստության շրջանին, Մեծ Հայքի մեջ քաղաքային դրամներ տարփոխ երկար ատեն անհաանական նկատում էր գիտնականներու կողմէ:

Այսօր, սակայն, պատկերը փոխում է շնորհիւ նոր յայտնաբերումներու: Յօդուածը՝ պատմական յենքի վրայ, կու տայ Մեծ Հայքի մեջ կոխում դրամներու համապատկերը, կ'աւելցնէ նորայայտ դրամ մը եւ նորովի կը մեկնաբանէ փաստը:

Հեղինակները կը վիճարկեն, թէ Արտաշատ քաղաքը քաղաքային նոր իրաւունքներ ստացաւ Ք.ա. 33ին, որոնց կարգին նաեւ մետրոպոլիս՝ ոստան կոչումը: Հուսկ, Ք.ա. 31-30ին՝ Հայաստանի վրայ հռոմէական տիրապետութեան երկրորդ շրջանին, առաջին դրամատարութիւն մը կատարուեցաւ Արտաշատի մեջ: Այնտեհտեւ - անի քան դար մը - կոխուեցան նաեւ այլ դրամներ մինչեւ՝ Ք.ա. 28-29 եւ 26-27:

⁶² La Fig. 11 est très proche par sa forme, son flan et son graphisme de la Fig. 10 qui lui est probablement postérieure de peu.

PLANCHES





ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ. ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԵԱՅԷԼԵԱՆ (karine.rafaelyan@mail.ru)

ՄՈՒՏՔ

Անկախության շրջանը հայ գրականության համար բացեց նոր թեմաների, նոր ասեվիքի, նոր որոնումների դաշտ, որի դրսևտրումները բազմաբովանդակ եղան տարբեր գրողների ստեղծագործություններում: Իհարկէ, իսկական արժեքների գահատականը որոշում է ժամանակը, սակայն գրականությունն իր ծննդեան պահից էլ ստանում է որոշակի գնահատական թէ՛ մասնագետների, թէ՛ ընթերցողի կողմից:

ՀՀ անկախության տարիները համընկան համաշխարհային այն միտումներին, որոնք վերանայում էին ծաալուն, երկարաշունչ խօսքի նշանակությունն ու նախապատությունը տալիս հակիրճ, առցանց տիրոյթի հաղորդագրությունների յատուկ գեղարուեստական ձեերին: Այս միտումը ազդեց նաեւ անկախության շրջանի գրողներին եւ գրականության: Եղան ոմանք, որոնք ստեղծագործեցին այդ ոճով: Այդ ոճի ամենավառ ներկայացուցիչն է Յովհաննէս Թեքզօգեանը (ծն. 1974): Թերեա, Յովիկ Աֆեանը (ծն. 1983), Արամ Ալավերդեանը (ծն. 1960) եւ նման սկզբունքներով են ստեղծագործում: Եղան եւ հայ գրողներ, որոնք չլքեցին ստեղծագործելու աանդական անդաստանը եւ, ի հեճուկս ժամանակակից գրական նորածեությունների, հայ գրականության գանձարանը հարստացրին ստոարածաալ վիպական երկերով: Բոլորի անունները հնարաւոր չէ թաարկէ, իհարկէ, այնտամենայնիւ նշենք միքանիսին՝ Լեւոն Խեչոյեան (1955-2014), Գուրգէն Խանջեան (1950), Ալիս Յովհաննիսեան (1946), Սուսաննա Յարութինեան (1963), Նորայր Ադալեան (1936), Ալեքսանդր Թոփչեան (1939), Հովիկ Վարդումեան (1940), Արամ Պաչեան (1983), Հրաչեայ Սարիբեկեան (1979) եւ էլի ուրիշներ: Յիրաւի, անկախության տարիներին ստեղծուեց եւ շարունակում է ստեղծուել մաայուն գրականութիւն՝ տաղանդաւոր գրողների գրչով: Այդ գրողների մէջ իր ստեղծագործական բեղմնաւոր հունձըով առանձնանում է Վահագն Գրիգորեանը, որի վիպագրությունն անկախության տարիներին անշեղորէն կառուցում է հայի ու Հայաստանի բախտորոշ խնդիրների առանցքում¹:

¹ Վահագն Գրիգորեանը ծնուել է 1942 Մարտի 27ին, Երեանում: Աարտել է ԵՊՀ քանասիրական ֆակուլտէտը: Որպէս հայոց լեզուի եւ գրականության ուսուցիչ աշխատել է Կոտայքի մարզի Մեղրաձոր գիւղի միջնակարգ դպրոցում, 1966-68՝ «Հայաստան» հրատ.ում, 1968-74 եւ 1978-82՝ է Պիոներ (այժմ՝ Արցիր) ամսագրի պատասխանատու քարտուղար, Հայաստանի Գրողների Միության վարչութեան քարտուղար (1986-94): Ապրում է Լիտուայում:

Գրիգորեանը իր հայեացքից բաց չի թողնում ոչ միայն իր ազգի եւ հայրենիքի խոթաշատ ներկան, այլեւ պրպտում-զննում է հեռաւոր անցեալն ու կանխագուշակում ապագան: Նրա գրականութիւնը զերծ չէ պատմականօրէն մեզ պարտադրուած ողբերգութիւններից սնտղ յոռետեսութիւնից, ներկայի աններելի սխալների առաջ բերած ցասումից, բայց եւ սա գրականութիւն է, որը եթէ ոչ իրապատում, ապա երեակայական շերտերում յուսադրումի անխախտ հաատն է հնչեցնում: Մեր ուսումնասիրութիւնը ծաալուել է Գրիգորեանի՝ անկախութեան տարիներին գրած չորս վէպի շուրջ, որոնց կ'անդրադառնանք առանձին-առանձին:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ

Առաջնորդի կեանքն ու մահը երգիծական վէպ է: Գրուել է 2001ին, լոյս տեսել 2006ին: Այն կառուցուած է զաւելշտի յենքով, սակայն սա չի նշանակում, որ չպէտք է իրատեսական տագնապով վերաբերուել այս վէպի հետ: Վէպում Գրիգորեանը չափազանց ուղղագիծ է կառուցում իր պատումաշարը՝ ի տարբերութիւն *Ժամանակի գեպը*, *Պօղոս-Պեպրոս* վէպերի: Ողջ պատումը առաջ են մղում երկու կերպար՝ Վասիլի Իանիչը եւ նրա վարորդը՝ Պետիան: Վերջինիս յուշերի շղթան էլ հենց կառուցում է վէպը՝ համեմուած նրա դատողութիւններով եւ եզրայանգումներով: Վէպը հիաում է երկխօսութիւնների եւ յիշողութեան երկարուծիգ թելի հիմքով: Իանիչ, Պետիա անուններն ընտրուած են ոչ-պատահաբար. այս անուններով զոյգը յայտնի է խորհրդային քաղաքական կեանքի մէջ՝ մին իրբեւ յեղափոխական գորակար, միաը՝ վերջինիս համախըրը: Եւ հակառակ խորհրդային գաղափարախօսութեան նրանց վերագրած հերոսականութեան, այդուամէնայնիս, ժողովրդական գրոյցներում սրանք առաւել յայտնի են իրբեւ զաւելշտայի պատմութիւնների պարզամիտ հերոսներ:

Վէպի կենտրոնական առանցքը, ընթացքը՝ կուսակցութեան առաջնորդ Իանիչն է՝ իր քաղաքական հայեացքների անբունագրօս ու տարօրինակ շողարծակումներով, որոնք թէեւ միանգամայն անյարիր են առողջ բանականութեանը, սակայն "հիմնատրում են" պատմողի՝ Պետիայի համարժեքօրէն անհեթեթ մեկնաբանութիւններով:

Վէպի հերոսներն ասեւ մրցակցում են միմեանց հետ՝ ջանալով մէկմէկու գերազանցել իրենց արտառոց որակներով: Սրանք կամ նախկին խորհրդային պաշտօնեաներն են, կուսակցականներն ու կուսակցապետերը՝ իրենց ժամանակավրէպ գոյութեամբ, կամ վերջիններիս տգէտ նոփրեալները, ինչպէս Պետիան, որ ընդամէնը կուսակցապետի վարորդ է՝ պատահականութեան ու կոյր հաատարմութեան բերումով:

Այս մարդկանց ուղղորդողը պարզ հաշուարկն է՝ անձնական շահը, մաքիաւելական բացատրութեմբ՝ «... *ինչպէս յաւերժական բարեկամներ*

չկան, այնպես էլ յաներժական թշնամիներ: Կան յաներժական շահեր՝ ահա միակ մնալուն բանն այս աշխարհում»²: Այս նշանաբանով է ապրում Ի-ասնիչը: Իսկ շահը միշտ գործողությունների նոր բանաձևեր արտածելու հրամայականն է հնչեցնում: Ահա մէկը դրանցից, որը Պետիան վերապատմում է «առաջնորդի» մտքի գոհարների ծիրում՝ մէջբերելով Իասնիչի ծրագրային դատողությունները. «Սառը ցնցուղի քաղաքականություն» ծածկանունով քանդելու ծրագիրը փոյ առ փոյ պիտի իրականացուէր: Առաջին փուլը կոչւում էր «տեական ցնցումներ», երկրորդը՝ «քառս», երրորդը՝ «կործանում», չորրորդն է, պարզ է, «փինիկ» պիտի կոչուէր»³:

Հասկանալի է, որ վիպական պատումը չի հասնում մինչեւ «փինիկ»ի ժամանակաշրջանը, սակայն դրան նախորդող մնացած բոլոր շրջափուլերը ընթերցողը «վայելում է» լիովի:

Յանուն ժողովրդի նոյն այդ ժողովրդին պատուհասելու մոլագարութիւնը դժուար է ձեւակերպել աւելի դիպուկ նկարագրութեամբ, քան անում է Գրիգորեանը: Ոչ մի խտրութիւն՝ յանուն նպատակի ընտրուած միջոցների մէջ. սա վէպի բոլոր հերոսների անշեղ ուղենիշն է: Այդ թեմայով գտանցողների մէջ ամենից շլացնողը Իասնիչի մտքի փայլատակումներն են. օրինակ՝ «...մեր խօսքն էլ, նպաստակն էլ ծայրաստիճան ազնիւ են: Մենք, ի տարբերութիւն միա կուսակցութիւնների, ժողովրդին խաբում ու օգտագործում ենք յանուն ժողովրդի: Հասկանում ես, որպէսզի ժողովրդի համար լաւ լինի, մենք պէտք է գանք իշխանութեան գլուխ, իսկ որպէսզի մենք գանք իշխանութեան գլուխ, ժողովրդը իր ծայնը մե՛զ պիտի տա, իսկ որպէսզի մե՛զ տա, մենք պէտք է խաբենք ու օգտագործենք ժողովրդին»⁴:

Ահաւասիկ յանուն իշխանութեան, յանուն նախագահական այրոռի ամէն քայլի պատրաստ հերոսի կենսափիլիսոփայութիւնը: Եւ այս կենսափիլիսոփայութեան մարմնացման ճանապարհին հարկատր է պատրաստուել երկար ու հանգամանալից, մշակելով ճշգրիտ մարտավարութիւն: Եւ գործի են դրում Պետիայի աճապարարութիւնները: Վարորդը երկակի խաղեր է սկսում իր տիրոջ համար անցանկալի անձանց հետ, որի արդիւնքում այդ անցանկալիները վերածում են թշնամիների, ոչնչացնում միմեանց, եւ ապարեզը դատարկում է՝ լիովին յանձնուելով Իասնիչին:

Յետոյ գալիս է նոր քայլը. համաժողովրդական հաւաքի ծրագիր է յղանում տարանդատր կուսակցապետը՝ անհեթեթ կարգախօսով՝ «Աշխատողի եւ գործազուրկի համերաշխութեան օր»: Փողոց դուրս եկողները անտուն-քաղցած թափառաշրջիկներ-հոգեբուժարանից դուրս պրծած

² Վ. Գրիգորեան, *Առաջնորդի կեանքն ու մահը*, Լալիլի հրատ., Երեւան, 2006, էջ 52 (վէպի յետագայ քաղուածքները՝ այստեղից):

³ Նոյն, էջ 67:

⁴ Նոյն, էջ 25:

մտազարներ են. սա է Իսահիլի ընտրագանգուածը, ինչպէս նաեւ միջանի գրողով վարձուած "համակիրները", որոնք ամէնուր եւ ամէն ժամ նոյն դերի մէջ են՝ առանել թոյլ կամ հնչեղ ինքնադրսետրումներով:

Բայց ամէն բան այս անմեղ ձեռնարկումների սահմաններում չի պարփակուած: Կան ապագայի առանել փայլուն ծրագրեր, որոնց իրականացման ճանապարհին սարսափելի չեն ոչ մի խոպ ու խոչընդոտ: Եթէ պէտք է՝ կարելի է եւ օտարին յանձնել հայրենիքը... քծնել արեւմուտքից կամ Ռուսաստանից ժամանած բարերարներին (ըստ որում՝ տրամաբանօրէն լիովին հակադիր համոզումների ու վարքի դրսետրումներով)... ինել Հայ Եկեղեցու միասնականութեան ջատագով... քանածեել այդ եկեղեցու պառակտումը... աստուածացնել ռուս ազգն ու նրա պետական-քաղաքական գործիչներին... քամահրանքով այպանել նրանց անձն ու գործը, գերապատուութիւնը տալով հայագգի Հայկ Բժշկեանին... կործանել երկիրը, քանդել հոյակերտ շինութիւնները...: Բայց ո՛չ, յանկարծ մեծ մտածողը ետ է կանգնում այս վերջին գաղափարից: Ինչու՞: Երկաթ տրամաբանութիւնը կատուցում է դրա հիմնատրումը. շէքերը չի կարելի քանդել, որովհետեւ երկար ժամանակ է պահանջուել դրանք կատուցելու համար, իսկ մա՞րդը, ինչ մի մեծ արժէք է նա, չէ՞ որ մարդ արարելու համար միջանի ըրպէն էլ բասական է: Եւ ուրեմն, շէք-շինութիւնների մեծարժէքութեան հանճարեղ դատողութիւններին ի հակակշիռ՝ ծնում է մէկ այլ հանճարեղ միտք. եթէ պէտք է՝ կարելի է ոմբահարել ժողովրդին, իհարկէ՞ ի բարօրութիւն նոյն այդ ժողովրդի: Այս վէպի հերոսները միայն իրենց կենցաղով են տեղորոշուած Ի.Ա. դարի մատուցներում, իսկ մնացեալ հարցերում գրեթէ նախամարդու բնազդների, ստրկատիրական հասարակարգին յատուկ բարքերի պարզ վերարտադրողներ են, քաղաքական պայքարի մարտավարութեան մէջ՝ առանել եա: «Ես հասար չեմ ընծայում այս թաւշեայ յորջորջուած յեղափոխութիւններին, որոնք, կը ներես, մի քիչ նման են ձեռնաշարժութեան, իսկ թէ մի բան էլ ձեռն են՝ այսպիսի հաշմանդանների, ինչպիսին մեր թշուառ երկիրն է: Իզուր են մեզ աջից ու ձախից հաւապացնում, թէ արինասեղ յեղափոխութիւնների դարն անցել է: Եթէ անգամ անցել է, մենք եր կը բերենք այն»⁵ բարբաջում է հայաստանեան քաղաքական դաշտում գործող հայ նախագահացուն:

Թաւշեայ յեղափոխութիւններին ձեռնող նետելու հիմնատրումը եա ունի այս մարդը, նրա մտասեւեռումները կասկածի տեղ չեն թողնում.

... սրանց բռնած ճանապարհը ժողովրդին վերջնականապէս կը բարոյագրկի, կը դարձնի ձրիակներ՝ տեղում հանգիստ նստած մի օր այս պիտի ստանայ, մի օր այն եւ, Աստուած մի արասցէ, մի օր իսկապէս լաւ ապրի: Ու՛մ է պէտք, ասա ինձ, ամէն ինչ ունեցող, լաւ ապրող ժողովուրդը: Կամ մենք պէտք կը գանք

⁵ Նոյն, էջ 102:

հաստաբամակ ժողովրդին, ինչքան էլ իր նուփրական իղձերի միակ արտա-
յայտիչը լինենք⁶:

Թե որն է այս արկածախնդրի եւ նրա նմանների պատկերացմամբ ժո-
ղովրդի նուփրական իղձը՝ հեղինակն այդպէս էլ չի պարզաբանում: Փո-
խարէնը վիպական պատումը կառուցում է գլխաւոր հերոսի նուփրական
իղձը երեան հանելու եւ դրա իրագործմանն ուղղուած սեւեռուն ընթացքը
լուսաբանելու վրայ: Իսկ ընթացքն այդ, ինչպէս եւ կուսակցութեան ժամա-
նակագրութիւնը աճպարարութիւնների անվերջանալի շղթայ է, որում կա-
րետրագոյն գործօնը փողն է: Փողը Իվանիչի համար իր ազգափրկիչ վեհ
առաքելութեան՝ նախագահական ընտրարշաւում յաղթելու մտասեւեռումի
շարժիչ ուժն է. «Թող բացեն (գրպանները - Կ.Ռ.), մեզ համար ճանա-
պարհ հարթեն դէպի նախագահական աթոռ, իսկ նախագահները, գի-
ւտեմ, սովորական մահկանացուներից փարբերում են նրանով, որ երբեք
չեն իրականացնում իրենց խոստումները, անուսազն ընտրարշաւի ժամա-
նակ փռած: ...փողի փեսակէփից, մեր ընտրարշաւը, կարելի է ասեմ,
սկսել ենք: Յաղթական ընտրարշաւը, Պեպիա, որովհետեւ ... շիպակ
խօսենք՝ յաղթելու համար փողից բացի մեզ ի՞նչ է պակասում: Ոչինչ»⁷:

Գրիգորեանը, թերեւս, կարեկցում է մեզ՝ վէպի ընթերցողներին, եւ իր
հերոսին չի հասցնում մինչեւ նախագահական գահը: Բազում ծամածռու-
թիւններից ու գործարքներից յետոյ այս ազգափրկիչը որոշում է յագուրդ
տալ իր առնական բնազդներին՝ ոչ առանց Պետիայի գործուն մասնակ-
ցութեան: Եւ...վիպասանը պարզապէս անառակութեան մահճում սպա-
նում է այս խեղկատակին՝ թոյլ չտալով նրան անգամ որպէս արու կայա-
նալ իր զուգակցի աչքում: Առաջնորդի մահուան այս կերպը պատահա-
կան չի ընտրուած: Նրա տղամարդկային անկարողութեան փաստը եւ
մահուան խայտառակ հանգամանքները այլբանսօրէն հանգուցալուծում
են քաղաքական առաջնորդի վախճանը: Սա ակնյայտ յուշում է, թէ այս-
պիսի առաջնորդ ունենալու պարագայում որեւէ ժողովուրդ չի կարող այլ
հեռանկարի յոյս ունենալ, քան Իւանիչի նման իր խայտառակութիւնն ու
անկարողութիւնը վանբացնող մահը: Բայց եւ դժուար է ասեմ, թէ հեղինա-
կը լատստեմ է, քանզի ինչպէս քաջնազարների, շուարքեան վիշապների
դէպքում, այս վէպում էլ «սուրբ փեղը դապարկ չի մնում», եւ Իւանիչի
ցանած փուչ սերմերը... ձլարձակում են: Նրա ասանդած դասերն ու գործը
շարունակւում են աւելի խայտառակ կերպով. Պետիան հիմնադրում է իր
Ղեկ Կուսակցութիւնը եւ դառնում թարմ ու պահանջուած դէմք հասա-
րակութեան կեանքում:

⁶ Նոյն, էջ 124:

⁷ Նոյն, էջ 347-48:

Եթե վեպի հերոսներին, քաղաքական հոսանքներին եւ միատրների տրուած ոչ-պատմական, բայց թափանցիկ անունները կարող են ինչ-ինչ հիմքեր տալ՝ մտածելու, թէ սա ամէնեւին էլ հայկական իրականութեան եւ հայաստանեան մղձաւանջի գեղարուեստական արտապատկերը չէ, ապա Երեւանի կարեւորագոյն շինութիւններին Հանրապետութեան Հրապարակ, Գիտութիւնների Ակադեմիայի շէնք եւն.), «Հ այս ու այն մարգերին անշտող յիշատակումների փաստագրական ճշգրտութիւնը ցրում է ամէն կասկած: Եւ ոչ-պատահականօրէն Սաֆարով ազգանունը կրող «հայրենանուէր» ռուսահայը նոյնպէս գրողի իրատեսութեան ցցուն արտայայտիչն է, քանզի մենք այս կերպարի տիրոջում կարող ենք գետեղել մեզ այնքա՛ն ծանօթ որոշակի անձանց: ՀՀում գրեթէ իրաքանչիւր քաղաքական գործիչ նախընտրական իր քարոզարշափ ընթացքում գործում է ճիշտ այն միջոցներով եւ վարքագծով, ինչ նկարագրուած է այս վեպում: Որեւէ հայաստանցու համար այս արտառոց թուացող պատմութեան դրուագները անձանօթ չեն եւ, վիպական որոշակի գունազարդումներով հանդերձ, հասկանալի են ու վարդուց օրինաչափ:

Սաֆարով ռուսահայի անունը միակը չէ, որ հենց ինքնին տեսակ է բնորոշում: Սա վերաբերում է գրեթէ բոլոր հերոսներին: Յատուկ անունները յաճախ չեն սահմանափակում անձնանուն շրջանակներում, այլ դառնում են փոխաբերութիւն, պիտակ, իրենցով իսկ բազում շերտեր բացում ներկայացնող կերպարի բնութագրում: Փարախետան, Երիտըարտ, Գիտնական, Քաղկոն, Քեառտեցի, Վետերան, Օրիորդ, Տիկնանց տիկին, Լաչառանց գումարտակ, Աֆղանստանցի, Խմբագիր, Հարուածային խումբ, Սեաղէմ փոշոտ, Սթափ քաղաքացի, Համերաշխութեան զինուոր, Տէր եւ Տիկին Բարերարներ, Որբեայրի, Սազանդար, Բողոքարար... կարելի է եւ շարունակել այս կերպարների թուարկումը, բայց արժի՛: Չէ՞ որ սրանք բոլորը մի խմորից են հունցուած, եւ նրանց բոլորի վրայ հնարատր է տարածել հանճարեղ առաջնորդի բարոյախօսութիւնը. «Մտածող մարդիկ քչացել են»: «Ես մտածում եմ, ուրեմն, ես ապրում եմ» սրբազան խօսքը մեզ է հասել հիմնովին այլանդակուած: «Ես ապրում եմ, ուրեմն, էլ ինչու մտածեմ»՝ ահա մեր տխուր ժամանակների նշանաբանը, ահա մեր՝ վերջին մտածողներիս, հատուկէնտ վերջին մոհիկաններիս գլխին, չնայած մեր հպարտ արհամարհանքին ու գոռ խիզախութեանը, մշտապէս դաադրաբար կախուած կեռ սուրը»⁸: Ինչպէս նկատում ենք, այս մարդիկ պարզապէս կանխադատապարտուած են անպատժելիութեան, քանզի անմեղսունակութեան պարագայում բացառուած է որեւէ դատ ու դատաստան: Սակայն մնում է պատասխանել հարցերի հարցին. իսկ ի՛նչ անի սրանց հոգածութեանը յանձնուած ժողովուրդը. չէ՞ որ Գրիգորեանի ցալը

⁸ Առյն, էջ 275-76:

հենց այս ժողովրդի ճակատագիրն է, որ այդպես էլ չի որոշակիանում: Եւ սա գրողի գրեթէ բոլոր ստեղծագործություններին յատուկ հանգուցալուծում է. աարտ՝ չվերջակէտտող պատմութեամբ:

ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏԸ

Ժամանակի գեղը վէպը գրուել է 2005-08ին, լոյս է տեսել 2008ին: Այն պարզապէս գեղարուեստական երկ չէ, այլ փաստերի ու փաստաթղթերի յենքով ստեղծուած պատմական վաւերագիր, որով կարելի է դատաւարութիւն բացել Հայոց Յեղասպանութեան ոճրագործ հեղինակներին ու նրանց նախահայրերի դէմ:

Ինչպէս *Պօղոս-Պեպրոս* վէպում, այնպէս էլ այստեղ Վահագն Գրիգորեանը վիպական պատումին, իր գրական հերոսներին վիճակուած անօրինակ Գողգոթային զուգահեռ՝ մէջբերումներ է անում պատմական փաստաթղթերից՝ մամուլից, գիտական ուսումնասիրութիւններից, պաշտօնական նամակագրութիւնից, որոնք հաւաստիութեան առումով անխոցելի են դարձնում նրա պատկերած իրականութիւնը:

Վէպում կայ հոգեբանօրէն մշակուած, անվրէպ նշանադրութեան ոգի, որով էլ հենց հեղինակը, ընթերցողին առինքնելով, իր ուղեկիցն է դարձնում, իր քացայայտումների ականատեսն ու վկան, յաճախ՝ հաստատողն ու խրախուսողը, համայնտիր... Սրան նպաստող հանգամանքներից մէկը, իհարկէ, վաւերաթղթերի, ինչպէս նաեւ պատմական եղելութիւնների անխաթար վերարտադրումն է... Չկայ նկարագրութիւններից մի բան, որ իսկապէս տեղի ունեցած չլինի...⁹:

Վէպում դէպքերը, որտեղ էլ որ կատարուեն, հանգուցալուծում են Գրիգորեանի երկերի գործողութիւնների մշտամնայ կիզակէտ Տրդ փողոցում:

Տրդ փողոցը Գրիգորեանի ստեղծած գեղարուեստական կերպարներից մէկն է, որը կենդանի, շնչող, իրատեսակ բնատրութիւն է վարքագիծ ունեցող եակ է: Այս կերպարը շատ դէպքերում յիշեցնում է Էպոսի այն մշտամնայ հերոսներին (ձէնով Օհան, Քեռի Թորոս, Յօան Վէգի), որոնք երբեք չեն դաւաճանում իրենց նկարագրին, երբեք չեն դադարում Սասնայ տան համար ճակատագրական պահերին ներկայ ու մասնակից լինելուց, երբեք չեն դառնում ժամանակավրէպ, չեն ծերանում, չեն մահանում, չեն դադարում լինել դիցազնավէպի բոլոր ճիւղերում նկարագրող գործողութիւնների մասնակիցը: Այսկերպ է Գրիգորեանն է ստեղծում Տրդ փողոցը՝ իբրեւ իր երկերի գործող անձ՝ սկսած 1989ին լոյս տեսած *5-րդ փողոց* ժողովածուից մինչեւ 2012ին լոյս տեսած *Չարմանակի իրադարձութիւններ 5րդ փողոցում* ժողովածուով. երկուսում էլ ընդգրկուած են պատմուածքներ էւ վիպակներ, որոնց գործողութիւնների տարածքը նոյն Տրդ փողոցն

⁹ Ա. Յովհաննիսեան, «Ժամանակի տղմուտ գետն ըստ Վահագն Գրիգորեանի», *Ալիք օրաթերթ*, 14 Մայիս 2009:

է: Այնտեղ վճռում է ոչ միայն Գրիգորեանի երկերի հերոսների, այլև ողջ հայ ազգի ճկատագիրը, այնտեղ մարդրկ ոչ թէ պարզապէս ապրում են, այլ ձեւատրում իրենց ու հայ ժողովրդի բարոյ տարեգրութիւնը: 5րդ փողոցը, որն առաւել բազմաշերտ ու լայնածաւալ դրսետրումներ է ստանում *ժամանակի գեպը* եւ *Պօղոս-Պեպրոս* վէպերում:

Պայմանական այս տարածութեան մասին իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ գրականագէտ Ժենիա Քալանթարեանը զուգահեռներ է անցկացնում Գրիգորեանի 5րդ փողոցի եւ Ֆոլքնէրի, Մարկէսի, Հրանտ Մաթետոսեանի գրական գործերից յայտնի տեղանքների միջեւ. «*Սկսած 1970ականների կեսերից՝ Գրիգորեանի սպեղծագործութիւնների գրեթէ բոլոր գործողութիւնները կապարտում են 5րդ փողոցում: Կարծես իբրեւ հասապփացում այն բանի, որ պայմանական այդ տարածքը իր գեղարուեստական անձեռնմխելի "սեփականութիւնն է"*»¹⁰:

Ու թէև հեղինակը մօտաւորապէս նշագրում է այդ փողոցի տեղանքը Երեան քաղաքի քարտէզի վրայ, այդուհանդերձ, 5րդ փողոցը պայմանական տարածք է, որի բնութագիրը չի առանձնանում երեանեան միա փողոցներից՝ խորջային իմաստով: Ամէնուր էր նոյն քստն ու տառապանքի խրախճանքը, սակայն հենց այս փողոցում է սկսում գարշահոտել ժամանակի գետը: «*Ժամանակի գետը հոսում է մեր 5րդ փողոցով: Չարմանալին, սակայն, մենք ենք, որ երկար ժամանակ դա չգիտէինք: Աչքներս բացունց, երբ մեր փողոցը հերթական անգամ հանդերձափոխում էր: Ոմանց, իհարկէ, թուաց՝ ոչ թէ գեպն է հոսում մեր փողոցով, այլ փողոցն ինքը ծայրէծայր մի մեծ ճահիճ է, եւ, պարկերացրէք, իրատււք ունէին՝ գեպից այն հոգը չպիտի գար, որ երբեմն մեր փողոցից էր գալիս*»¹¹:

Վիպական պատումը ծայր է առնում 5րդ փողոցի բնակիչ, գրեթէ 120ամեայ Հայկարամի մահուան ու հոգեհացի նկարագրութեամբ: Ժամանակի գետի գարշահոտութեան ակունքը նրան բոլորից լաւ էր յայտնի: Նա երկար էր ապրել աշխարհում՝ տեսնելով, մաշկով զգալով 1915ի արհաւիրքը, ընտանիքի, մերձատրոների սահմուկեցուցիչ մահերը, գաղթը: Ապրել էր՝ աչքն ու ականջը մխիթարական լուրի, բայց մահացել թուրքի սանձարձակութեան ցցուն լուրն առնելով թերթում արուած հրապարակումից: Իսկ հրապարակումն անդրադառնում էր 3րդ հազարամեակի սկզբին թուրք պատմաբանների կազմակերպած 15րդ համագումարին: 1915ի ոճիրից տասնամեակներ անց արնախումների ժառանգները Եւրամիութիւնում կազմակերպել էին գիտաժողով, որը պիտի ներկայացնէր օսմանեան երկ-

¹⁰ Ժ. Ա. Քալանթարեան, «Վ. Գրիգորեանի '5-րդ փողոցի' ծննդաբանութիւնը», *ՎէՍ*, 2019:3:

¹¹ Վ. Գրիգորեան, *Ժամանակի գեպը*, Չանգակ, Երեան, 2008, էջ 9 (վէպի յետագայ բաղուածքները՝ այստեղից):

րի հարուստ փորձը՝ ուղղուած Թուրքիայում բազմամշակութային ինքնութեանն ու զարգացմանը, ոչ-մահմեդականների իրաւունքների ու ազատութիւնների ապահովմանը: Համագումարի առթիւ հանդէս էին եկել ցեղասպան երկրի վարչապետն ու նախագահը՝ ի լուր աշխարհի արուած բարձրագոյ յայտարարութիւններով: Գրիգորեանը մէջբերում է թերթում տպագրուած այդ յայտարարութիւններից միքանիսը: Մասնատրապէս՝ երկրի վարչապետն ասում է. «Պատմութիւնը թուրքից անելի պարզերես ազգ չգիտի... Անհնար է, որ մեր պապերը յանցագործ եղած լինեն մեր պատմութիւնը երբեք մեր զլովն ամօթով խոնարհելու առիթ չի տուել...: Քաղաքական նկատարումներով թուրքերի պատմութիւնը արտաւորելու փորձեր են արում»¹²: Կարծես թէ պակաս տեղ չկայ այս խօսքերից տպատրուելու ու թուրք ազգի առջեւ զլովնդ խոնարհելու համար, եթէ արտայայտուելու լինենք Գրիգորեանի մաղձոտ հեգնանքի յանգոյն: Բայց եւ այնպէս, երկրի նախագահն էլ իր աղունն է լցնում վարչապետի ու վալ-պատմաբանների պտտոտող ջրաղացին. «Տեղասպանութեան ճանաչման խնդրին ուղղուած որեւէ քանք անկարող է սրտերել իրականութիւնը»¹³: Ահա եւ վերջ, այսքանը միայն: Եւ տասնամեակներ շարունակ ճշմարտութեան յաղթանակի սպասումով ապրած Հայկարամը, մահկանացուն կնքում է այս կտի յայտարարութիւններով համեմուած լուրը թերթում կարդալիս:

Այս կէտից էլ ծայր է առնում Գրիգորեանի վիպական պատումը, բայց արձանագրենք, որ վէպն ունի միքանի սկիզբ ու միքանի ասարտ իր ներսում, ինչպէս եւ միքանի պատմող եւ գեղարուեստական միքանի ոճ: Հայկարամի մահուան թեմայից հեղինակն անցնում է մէկ այլ սզգբի՝ Վանից՝ Գալուստ Տեղագալուստեանի տանից, Խարբերդ՝ Գալուստ Տեղագալուստեանի տուն հարս գնացած գեղեցկուհի մանկամարդ Մարիամի ու նրա ներսում նոր-նոր թայտացող սաղմի՝ Գլակի ողիսականին:

Դէպքերի ելակէտը 1915ի արհաւիրքն է, որ վէպի հերոսներին դասակարգում է՝ ըստ իրենց գործառոյթների ու ճակատագրական դիպումների: Եթէ թուրք մարդակերպների դէպքում որեւէ խալի ներկայացուցիչ, որեւէ ժամանակի, որեւէ իրադրութեան մէջ իր կայուն հաստատմքն է ի յայտ բերում՝ ունեզրկել, տեղահանել, բնաջնջել հայերին եւ, իբրեւ պարզեւ, այս ազգանուէր ծառայութիւնների դիմաց ապահովել իր բարեկեցիկ կեանքն ու լուսատր ապագան, ապա հայի ճակատագիրը, այս հաւատամքին տրուած, ընդունում է տարբեր ձեւեր, ենթարկում գանազան խեղումների, բայց եւ անտրամաբանօրէն ձեռքից բաց չի թողնում գոյատեւումի անհնարին հնարատրութիւնները՝ զարմացնելով, զայրացնելով, գուցէ նաեւ հիացնելով աշխարհին: Անասնագոմում ապրող անկիրթ թուրք ընտա-

¹² Նոյն, էջ 23-25:

¹³ Նոյն, էջ 25:

նիքի՝ Բայբայների զաակները, հայ պատուարժան ընտանիքի՝ Տերգալատեանների սեփականությունն անամօթաբար իւրացրածնելու շնորհիւ, կարողանում են լաւ կրթութիւն ստանալ ու հասնել հասարակական բարձր դիրքի, իսկ Մարիամին ու Գլակին անապատներով քարշ տուած ու խոշտանգած դահիճ Ռեջէփ Փերինչէքի թողը նաեւ հասնում է միջազգային ատեաններ, ինչպէս տեղեկանում ենք Տեթիիէ հանըմի խօսքից. «*Ռեջէփ Փերինչէքի ... թոռն այսօր երուպայում է՝ դիհանագիւրական աշխատանքի մեր դեսպանութիւններից մէկում, բնականաբար լեզուներ գիւրի, պապից էլ ժտանագել է կապոյր աչքերի հանդէպ թոլութիւնը*»¹⁴: Եւ սա եզակի օրինակ չէ թէ՛ վէպում, թէ՛ իրական կեանքում: Մինչդեռ Տերգալատեանների ընտանիքի անդամները կամ՝ դաժանաբար ցեղասպանում են, կամ՝ դեգերում աշխարհով մէկ՝ չգտնելով մի ապահով հանգրոան եւ դառնալով հայի ընդհանրական ճակատագիրը մարմնատորոջ անձինք, որոնք խարխափում են անորոշութեան, սպասումի, վաղուայ հանդէպ ունեցած տագնապների ճիրաններում՝ այդուհանդերձ չկորցնելով լատատեսութիւնը. «*Կը յաջողոյի՝ մեզ Արեւելքից Արեւմուտք, Հիւսիսից Հարաւ միատորոզել՝ Վերադարձ Հայրենիք՝ գաղափարի շուքջը: Նոյնքան միածոյ, որքան միբանի հողով կարող ենք գլուխ գլխի խմբուել Տրդ փողոցի փոքրիկ սրճարանում: ... Անկեղծ ասած չգիւրենք: ... Գիշերուայ մթամած երկինքը դանդաղ իջնող փապանաքար է թում մեզ, պարուհանի ճեղքից ստուացող քամին՝ դամբանական: Բայց սիրտդ աղետում է գոնէ մի աչքով կրորուել երեկուայ օրից ու ապրել մինչեւ լուսաբաց...»¹⁵:*

Հեղինակը փարատում է բոլոր կասկածները, թէ մեր ազգի հետ պատահածը տարերային իրավիճակների, պատերազմական պարտադրանքների հետեանք էր: Նա մանրամասն ներկայացնում է Օսմանեան Թուրքիայում հռչակուած բոլոր այն օրէնքները (իդէպ, այս երկրի պարագայում ոչ թէ օրէնք, այլ՝ Օրէնք. անպայման մեծատառով, ինչպէս հեզնում է վիպասանը), որոնց ապափնելով՝ իրագործում էին հայերի ծրագրուած հայրենագրկումն ու սպանողը: Եւ ինչ հնչեղ էին այդ օրէնքների անունները՝ Տարագրութեան Օրէնք, Լքեալ Գոյքի Օրէնք, Համայնքապատկան Կառնածքների Օրէնք, Ունետրութեան Տուրքի Օրէնք, Թրքութեան Կուսակալութեան Օրէնք: Այս ամէնին դիմանա՛լ կը լինէր: Իսկ եթէ ոմանք էլ – ինչպէս ասենք Մարիամն ու Գլակը – դիմացել էին գաղթի բոլոր հնարատր սարսափներին ու ողջ մնացել, սա արդէն ուրիշ խնդիր էր առաջադրում հայութեան բնաջնջմանը հետամուտ թուրք ղեկավարութանը: Պէտք էր արհեստականօրէն երկարացնել դէպի Հալէպ ձգուող տանջալից ճանապարհը՝ այն ապահով յոյսով, որ բացառիկ պնդաճակատներն էլ կը մեռ-

¹⁴ Նոյն, էջ 498:

¹⁵ Նոյն, էջ 499-500:

նեն այս ոլորապտոյտի հետեանցով: Իսկ որպէսզի կեանքը ձանձրակի չլինի "գբօսանքի" ելածների համար, մոզոնում էին միօրինակ երթին բազմազանութիւն հաղորդելու տարատեսակ միջոցներ: Օրինակ՝ սովալլուկ մարդկանց մահուանն անհամբեր սպասող հերթական թորը պաշտօնեան չոր հացի կտոր էր մեկնում սովատանջներին, ու երբ նրանք երկարում էին ձեռքերը, նա ծիծաղում էր ու գրպանը դնում հացը: Սա լուսանկարում վաւերացրած դրոագ է: Իսկ որքան են չվաւերացրածները: Եւ երբ, այնուամենայնիւ, ստուար կարաանի միջանի բզկտուած պատառիկ, ի հեճուկս Օսմանեան թուրքերի հաշուարկած օրինաչափութիւնների, դուրս էր պրծնում մահուան ճիրաններից, դիմակայում սովի ու սառնամանիքի փորձութիւններին՝ կուչ եկած Հալէպի որեւէ փողոցի որեւէ պատի տակ, սա էլ առանձին հոգս էր դառնում հայերի իսպառ բնաջնջմանը հետամուտ գազանների համար. վկաներ հարկատր չէին, բոլորը պիտի ոչնչանային: Իսկ աշխարհը անտարբեր ու լուռ էր այս աղաղակող փաստի հանդէպ, բացառութեամբ առանձին անհատների: Եւ անգամ այդ աշխարհի աչքը փակելու համար կայացած ձեական դատաւարութիւնն ու դատաւճիռները շատ արագ փոխում են իրենց հունն ու սրբագործում ցեղասպանների՝ յանուն հայրենիքի մատուցած ծառայութիւնները:

Այս արհաւիրքը բեկում է հայութեան ճակատագիրը: Եւ հեղինակը փորձում է այդ բեկումից ցանուցիր եղած տարատեսակ բեկորները իմի բերել ու կազմել հայի ճակատագրի խճանկարը:

Ասացինք, որ *ժամանակի Գեղըրում* կայ միքանի սկիզբ:

Ահա մէկ այլ «սկիզբ» ընթերցողին կանգնեցնում է յետեղեռնեան իրականութեան առաջ: Տեղասպանութեանը, գաղթի սարսափներին յաջորդող կեանքը նոյնպէս լի է արհաւիրքներով: Բայց որքան գրողի նկարագրած ժամանակները մօտենում են մեզ, այնքան ւաղի յստակ ու սահմոկեցուցիչ է դառնում 1915ի թողած հետքը իրաքանչիւր հայի կեանքում:

Ինչ եղաւ հայերի հետ 1915ից յետոյ: Մարիամն ու Գլակ Տերգալուտեանը, յաղթահարելով դեգերումների լայն շրջայ, հասան Ֆրանսիա, յետոյ Գլակը հայրենիք՝ Արեւմտեան Հայաստան վերադառնալու փափաքով տեղափոխուեց Խորհրդային Հայաստան (այստեղից հայրենիքը մօտ է): Հասկանալի է, որ նրան բշեցին Սիբիր, յետոյ՝ կրկին Խորհրդային Հայաստան ու կրկին Ֆրանսիա՝ արդէն աքսորում ստեղծած ընտանիքի - կնոջ՝ Քնարի եւ որդու՝ Գնէլի հետ միասին: Մեծ գերդաստանից աշխարհի երեսին գոյատեւում է միակ արու ժառանգը՝ Գնէլ Տերգալուտեանը, որ դատաւարտուած է քննել-վերծանել, գրքի վերածել իր նախնեաց եւ ողջ հայ ազգի դաժան պատմութիւնը, իսկ սեփական ճակատագրի անդրադարձներում տազնապէլ միակ դստեր՝ Անիի ազգային ինքնութեանը գրեթէ անհաղորդ լինելու փաստից:

Մարիամը մանկահասակ տեգրոջն ու տալին՝ Յովաէփին ու Արուսեակին, 1915ին յանձնել էր իր պատուարժան սկեւրայրի՝ Գալուստ Տէրգալատեանի "հաստարիմ" բարեկամ թուրքին՝ Արդուլահ էֆենդիին (յետագայում վերանունանում Արդուլահ Բայքալ): Աւելին, նրան ի պահ էր տուել խոշոր գումար, որի մի մասը պիտի օգտագործուէր երեխաներին խնամելու նպատակով, միւսը վերադարձուէր Մարիամին, երբ նա ապահով կը լինէր ու կը կարողանար իր մօտ տանել երեխաներին: Ահա այսպիսի միամտութիւն, որ կարելի է հասկանալ գաղթի բօթը բերող մունետիկի կանչով կեանքի շէնից ուղըը ներս դրած կնոջ պարագայում: Արուսեակը բռնութեամբ վերածնունդ է "բարերար" թուրքի հարսի, եւ օրինականացում է նրա հայրական տան ու հարստութեան սեփականումը իրենից տարիքով անտրամաբանօրէն մեծ ամուսնու՝ Թայիթ Բայքալի կողմից: Հոգ չէ, որ աղջնակը տասներեք տարեկանում մահանում է ծննդաբերելիս: Իսկ Յովաէփին յանձնում են որբանոց, որտեղ, ի տարբերութիւն այլ որբերի, ոչ թէ նրան խեղդում են խարբերոյից 30 կիլոմետր հեռու գտնուող լճում, այլ որպէս որդեգիր՝ յանձնում մի ձեր թուրքի: Այս որբուկը վերանունանում է, դառնում Եուսուֆ Աղլըօղլու, թլպատում եւ մնացած կեանքն ապրում է ինքն իր ետից օտարուած ու պարտադրուած եսին անհաղորդ: Նա այլեւս հայ չէ, այլ թուրքի գաւակ, բայց նրան ո՛չ հայերը, ո՛չ թուրքերը ընկալում են իբրեւ իւրային:

Վանում հերոսաբար կոտած հայերը՝ Մարիամի հայրական գերդաստանի անդամները, կա՛մ մեռնում են թուրքի ձեռքով, կա՛մ տեղափոխում Խորհրդային Հայաստան ու զոհ գնում բոլշեփկեան սպանդին, կա՛մ վերածնունդ միայն Տէրգալատեանի (Մարիամի քրոջ որդին է), որի գոյութիւնը խորհրդային վախի պարտադրած շնային հաստարմութեան վաւերագիր է՝ հարազատ զարմիկին՝ Գլակ Տէրգալուատեանին անվտանգութեան մարմինների ձեռքը յանձնելու չարձանագրուած, բայց շատ հաւաստի թուացող մատնութեան փաստով:

Միսաքի որդին՝ Գալուստը, հարկադրուած է պապերի կիսատ թողած կոիւր շարունակել թուրքի դէմ՝ արցախեան պատերազմում, իսկ նրա որդին՝ թրքագիտութեան բաժնի ուսանող Տարօնը, պիտի քչփորի նախնիների անցեալն ու ակնդէտ հետեւի թուրքի նորօրեայ յարթութիւն, որի նպատակը սեփական ոճիրը հերքելն ու աշխարհի առաջ պարզերես դուրս գալն է: Այս յարթութիւն խոչընդոտելու Տարօնի մարտադաշտը www.dialogue.eu.us համացանցային հարթակն է, որտեղից նա վարում է իր հետետղական, անզիջում կոիւր օր օրի ամելի լկտիացող թշնամու դէմ:

Հայի սերնդափոխութեան ընթացքը միայն ժամանակագրական փաստ չէ, Գրիգորեանը քայլ առ քայլ պատկերում է նաեւ սերունդների բովանդակային փոփոխութիւնը: Տեղապանուող, ինքնութիւնից բռնի օտարուող, աշխարհի այս ու այն ծագերում դեգերող տեսակից հայը քայլ

առ քայլ վերածում է իր ցափն կառչած, բայց վրիժառու, պահանջատեր տեսակի: Այս իմաստով յատկանշական են ոչ միայն Գնէլ Տերգալուստեանի եւ Տարօն Տերգալուստեանի կերպարները: Անգամ Յովսէփ Տերգալուստեանն է իր բաժին կոխը տալիս թուրքի հետ, թէեւ այս դէպքում նա հողմերի դէմ է սուր ճօճում իրականում:

Գրողը, իհարկէ, իր ասելիքի հիմքում դնում է ազգային հարցը, բայց նրա հայեացքն առաւել ընդգրկուն է: Նա խորհրդային իրականութեան համապարփակ նկարագիրն է տալիս՝ վէպի վերջին հատուածում ներկայացնելով Գրասիրա Կազլատակիէնէի ընտանիքի պատմութիւնը: Ընտանիք, որի աքսորական կենսագրութիւնը խաչուել է հայ բախտակիցների՝ Գլակ Տերգալուստեանի եւ Քնարի հետ: Սիրիւրեան աքսորն ու ստալինեան հալածանքները միայն հայերին չէ, որ պատուհասել են խորհրդային անձայրածիր երկրում: Լիտուացի այս ընտանիքի պատմութիւնն ընդհանրացնում, մեծացնում է ողբերգութեան բովանդակութիւնը:

Առհասարակ, Գրիգորեանը իր ոչ-ամբողջ ասելիքն է քառերի վերածում: Սա յատկապէս ակնյայտ է Ֆեթիիէ հանրմի պարագայում: Գրիգորեանն ասում ու չի ասում, թէ այս տիկինն իր մեծ հորաքրոջ՝ Արուսեակի թոռն է (նշենք, որ Գլակը, Գնէլը, Վահագն Գրիգորեանը այս վէպում ժամանակ առ ժամանակ հանդէս են գալիս իբրեւ մէկ հասաքական կերպար. սա հեղինակի իւրօրինակ գեղարուեստական հնարանքն է՝ ցոյց տալու համար, թէ իր նկարագրած դէպքերն ու անձինք միեւնոյն ճակատագրի կրողներն են): Եւ զարմանալի չէ, որ հենց Ֆեթիիէն է, այնուամենայնիւ, փորձում հասկանալ Գնէլին ու ճիգ անում ինք էլ մի կերպ նրա կողմից հասկացուել: Պատճառաբանում է իրենց ժխտողական պահուածքը՝ վկայակոչելով Դինքի սպանութիւնը: Թում է՝ չի ընկրկում Գնէլի ճակատային հարցադրումից. «Մի խօսքով ...խարբերդի (կամ ինչպէս է հիմա կոչում) մեր քունը չէք ուզում վերադարձնէր»¹⁶: Բայց իրականում ցանուած է կասկածի, ինքնակեղեքումի սերունդ, եւ Ֆեթիիէն փորձում է համաձայնութեան, փոխըմբռնումի եզրեր գտնել, առաւել եւս, որ պատահականօրէն (թէեւ գրքում ոչինչ պատահական չէ) զարգացող դէպքերի արանքում համակարգչի պատտառին յայտնուած Արուսեակի եւ Թայիթ Բայքալի լուսանկարը, Գնէլի ակնարկը. «Սա դու՞ք էք»¹⁷, հիմնովին խարխլում են Ֆեթիիէի՝ իր կենսագրութեան մասին մինչ այդ ունեցած պատկերացումները:

Սա նաեւ ընդհանրական ուղերձ է. քանի՞ հայ, քանի՞ Ֆեթիիէ հանրմի կարող է այսօրինակ դիպուածներով դարձի բերել կամ խորհելու առիթ տալ: Խօսումն վկայութիւնն ունենք տարիներ առաջ ՀՀ եկած ցեղասպան Ջենայի թոռանը. ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ նրան

¹⁶ Նոյն, էջ 427:

¹⁷ Նոյն, էջ 434:

հենց այսպիսի հարցով էին շամփրել հայ երիտասարդները՝ յիշեցնելով, որ նա ապրում է հայից խլուած առանձնատանը:

... Տպարոհչ պատկեր է, երբ կողոպտուած, բնաջնջուած Տերգալուստեան գերդաստանի շառափղ Գնէլը երկխօսում է թալանչու՝ Թայիբ Բայբալի ժառանգորդուհու՝ Ֆեթիիէ հանրմի հետ: Վերջինս Գնէլին իր ապահովութեան բարձունքներից կոչ է անում լայնախոի լինել, մոռանալ անցեալն ու կառչել միակ միջոցից՝ բարեկամանալ թուրքի հետ. «Մի՛ մոռացէք. «Արդարութիւնը հեշտ է վիճարկել, ուժն ակներեւ է ու անվիճելի»: Թուրքիան միայն ուժի լեզուն է հասկանում, իսկ հայերն այդ ուժը չունեն: Անելին՝ իրենք այսօր զբաղուած են ուժի ցուցադրութեամբ, աջ ու ձախ սպասնում են՝ Ամերիկային, Եւրոպային: Իսկ ձեզ սպանալ էլ պէտք չէ, ուղղակի կը յօշոտենք: Այսօր չէ, վաղը: Միայն մենք չէ, Ադրբեջանը կայ: Անելի արմատական հայաբեաց: Դուք արքանի մէջ էք: Ամերիկան, Եւրոպան, Ռուսաստանը՝ մեզ այսպէս թէ այնպէս զսպողները, յատեժական չեն, յարմար պահ մի օր անպայման կը գայ: Չգիտեմ, նոր ցեղասպանութիւն կը լինի, թէ չէ, բայց այսօրոայ փոքրիկ Հայաստանն էլ չի մնայ: Ձեզ կը փրկի միայն բարեկամութիւնը մեզ հետ, մըսյօ»¹⁸:

Այս "բարեկամական" յորդորին ի պատասխան՝ հնչում է Գնէլի դիտարկումը. «Չեմ յիշում ում խօսքերն են, բայց շարք են հնչել: «Անելի լաւ է կանգնած մեռնել, քան ծնկաչոք ապրել»: Անցել են այդ ժամանակները: Մերօրեայ աշխարհում մեռնում են ծնկաչոք ապրողները...»¹⁹:

Եւ գրողի վարպետ գրիչը համոզօրէն արձանագրում է իր հերոսների դիրքափոխութիւնը: Յովսէփ, Գնէլ, Տարօս եռեակից հաշի պահանջելու նկրտումներով Գնէլի հետ հանդիպում նշանակած թուրք տիկինը վերածուած է հաշուետուի, խճճում իր պատկերացրած եւ այդ պատկերացումներից դուրս իրաամբ գոյութիւն ունեցող իրականութեան բաւիղներում:

1915ը Վահագն Գրիգորեանի վէպում թուրքի հայասպան հաատամքի մէկ արարն է ընդամենը: Նա ոչ միայն դրան նախորդած հայկական ջարդերին է անդրադառնում, այլեւ կուրացնող լոյսի տակ երեակում դրան յաջորդած պատուհասները:

Յետեղեռնեան շրջանի բոլոր դրուագները վկայում են, որ թուրքը մտած է թուրք, որքան էլ փորձի աշխարհի աչքին քաղաքակիրթ ու ազնիւ երեալ: Դրա վառ օրինակներից է Պոլիսի հայաթափութիւնը ներկայացնող հատուածը: Ունետրութեան տուրքի զոհերը (հիմնականում հայեր), աքսորում են Աշքալէ, եւ թուրքի ձեռագիրը նոյնն է. հլու-հնազանդներին ֆիզիկապէս գոյատեւելու հնարատրութիւնից, այնուամենայնիւ, չեն գրկում, իսկ իրենց քիմքին անհաճոյ հայերը սպանում են «Աշքալէում

¹⁸ Նոյն, էջ 429:

¹⁹ Նոյն, էջ 430:

«անյայտ չարագործների» ձեռքով»²⁰: Ճիշտ եւ ճիշտ ցեղասպան նախահայրերի ձեռագիր: Այսպէս, Աշքալէից ողջ է վերագառնում յարմարուող ու զգուշատր Անտիք Քեչեանը: Իսկ Արամ Արարատը, որն ընդամէնը չի վախենում բարձրաձայն յայտարարել իր հայ լինելու, իր ինքնութեանը հաւատարիմ լինելու մասին, որ զայրացած բացականչում է. «քանի՜ մահ է ձեզ պէտք, որ թուրքը ճանչնաք...»²¹, բնականաբար, դառնում է նոյն այդ «անյայտ չարագործների» զոհը: Եւ որպէսզի պատրանք չստեղծուի, թէ Չիր դարն ինչ-որ բան փոխել է այս համապատկերում, Գրիգորեանը վիպական պատումաշար է ներմուծում 2006ին Հրանտ Դինքի սպանութեան փաստը՝ Դինքին չներուցնելով թրութիւնը վարկաբեկելու յանցանքը մեկնաբանութեամբ: Այո՛, Դինքը խախտել էր «Օրէնքը (301 յօդուած համեստ աւնունով)»²²: Իսկ այս սպանութիւններն ունէին նաեւ աճանցեալ շահեկանութիւն թուրքական պետութեան համար: Հայերը այս սպանութիւններից կարողանում են անել համապատասխան հետեւութիւններ՝ երբեմն նոյնիսկ վերածնունդով թուրքամէտութեան ակամայ քարոզիչների: Սա թուրքի սարսափով պայմանաւորուած վարք է, որի կրողների շարքում անգերազանցելի է Պոլսոյ պատրիարքը: Սրա նմաններիս կարելի է գտնել հայոց ատիկ վաղ անցեալի էջերում եւս: Սա, ցաւօք, հայ պատմութեանն անձանօթ տեսակ չէ, եւ իբրեւ ապացոյց՝ հեղինակը յիշեցնում է Պետրոս Գետադարձի մասին՝ վկայակոչելով 1045ին Նրա հայրենադաւ, անձնապաշտ վարքը: Այո՛, այնպէս չէ, թէ գրողը համատարած ատելութեան քարոզ է կարդում միայն թուրքերի հանդէպ: Նա նոյնքան անհաշտ է հայի անկատարութիւնների հետ: Ոչ-պակաս, եթէ չասենք առաւել մեծ վրդովմունք կայ անկախ ՀՀում իրենց տէր հռչակած ուժերի՝ ՀԱՀ (Հայոց Ապագային Շարժում)ականների բնութագրումներում:

Եւ այս ամէնի հանրագումարը ձեակերպում է այսպէս. «Վարդ չէր լինի կեանքն անցնել շուրթերդ անէծքով չպղծած, բայց, վկայ է Աստուած, այդ հնարատրութիւնը մեզնից խլուած է»²³:

Վէպի ասարտին հեղինակը պատմագրի, իրատեսի, երգիծաբանի գեղարուեստական ոճից անցում է կատարում դէպի երեակայականը: Իսկ Նրա պարագայում երեակայութիւնը դաժան մղձաւանջ է ձնում: Ոչ միայն այս վէպում, այլեւ առհասարակ Գրիգորեանի գիրը հակուած է իրապատում շերտից թոխջ գործել դէպի երեակայականը: Եւ ոչ միշտ է այդ երեակայականը լուսատր երանգներ ունենում: Ի՞նչ է կանխագուշակում գրողն այս դէպքում: Նրա հերոսը՝ Գնէլ Տերգալուստեանը (կամ հենց ին-

²⁰ Նոյն, էջ 468:

²¹ Նոյն, էջ 181:

²² Նոյն, էջ 389:

²³ Նոյն, էջ 393:

քը՝ Վահագն Գրիգորեանը) երազում յայտնուել է Երոպական Միութեան մայրաքաղաք Բրիստլում, 2113ին: Նպատակն է իմանալ, «... թէ ինչպէս է բարգաւաճել այն միութիւնը, որ առաւօրից երեկոյ խրատում էր մեզ, եւ որին մենք նախանձում էինք սեւ նախանձով»²⁴: Քաղաքն անճանաչելի է, մարդիկ, մեքենաներն ու վարորդները՝ արտասովոր ձեւի եւ ընթացքի մէջ: Իսկ Գնէլը պիտի հասնի ժամադրավայր, նրան սպասում է հանդիպում ծագումով ֆլամանդացի, բայց «բարեբախտաբար» արդէն երկրորդ սերնդի թրքացած պաշտօնեայի՝ ազգային փոքրամասնութիւնների գրասենեակի աշխատակցի հետ, որի գերխնդիրը Եւրամեջլիսի ընդունած օրէնքները փոքրամասնութիւնների շրջանում արմատացնելն ու բոլորին «թրքութեան գիրկը վերադարձնելն է»²⁵: Պաշտօնեան ձեղնայարկում գտել է Գնէլի գիրքը իր ժողովրդի ու տոհմի եղեռնագարկ ճակատագրի մասին եւ լայիջօրէն քրքջում է այդ գառանցանքի վրայ: Ազգափոխուած (կամ իր իսկական արմատները յայտնաբերած) թուրք պաշտօնեան, իբրեւ յաղթաթոյս, Գնէլի առաջ շարում է աշխարհի վերափոխուած պատմութիւնն ու պատկերը: Ըստ այդ պատմութեան՝ «Ազգերն առաջացել են թրքութեան յենքի վրայ»²⁶: Սա Մեծ պատմաբանի (վայ-պատմաբանի՝ ըստ Գրիգորեանի)՝ գիտականօրէն ապացուցուած եզրայանագումն է: «Մի խօսքով՝ *Homo sapiens*ը թուրքն է...»²⁷, - ամփոփում է Քեմալ վերանորոնումն ու ֆլամանդացի Ռընէն: Բոլոր լեզուները յայտարարուել են անկարելոր, քանի որ աշխարհի թիւ մէկ լեզուն ԵՄի պետական լեզու հռչակուած թուրքերէնն է: Աշխարհի կարգախօսն է. «Թուրք եմ՝ ազնիւ եմ, խելացի, աշխատասէր»²⁸: Թուրքական օրէնսգրքի 301 յօդուածը տօնում է իր անվերապահ յաղթանակը ԵՄում, եւ Գնէլը՝ իր գրքով, կարող է ուղիղ կառափնարան քշուել (թերեւս, փրկութիւնն այն է, որ նա հողեղէն չէ, այլ ոգի՝ ոգեկանչութեամբ յայտնուած Բրիստլում):

Մեծ պատմաբանի անուան թանգարանում ներկայացուած են թուրքական մշակոյթի 9000ամեայ նմուշներ, բայց սա դեռ վերջը չէ. 45րդ համագումարում թուրք պատմաբանները խոստացել են, որ վաղեմութեան այդ ցուցիչը մինչեւ յաջորդ համագումար դառնալու է 10,000:

Եւ որեմն, միայն երկու հոգի են մնացել՝ Գնէլն ու նրա եղբորորդին՝ Տարօնը, որոնք յամառօրէն հետամուտ են իրենց յօրինած ճշմարտութեանը: Բայց թուրքը այս երկու անխոհեմների հետ կռիւ տալու մտադրութիւն էլ չունի. անելին քան հեզնանքը՝ նրանք չեն վաստակել: Քեմալ-Ռընէլին

²⁴ Լոյն, էջ 480:

²⁵ Լոյն, էջ 488:

²⁶ Լոյն, էջ 489:

²⁷ Լոյն, էջ 490:

²⁸ Լոյն, էջ 488:

վոքը-ինչ մտահոգում է կէտդարեայ սառը պատերազմը իրենց ու «ԱՄՆ-Անգլիա-Իսրայէլ "Երեքի դաշինք" կոչուածի միջեւ»²⁹: Սրանք չեն ընդունում եւրոպական բարեփոխում աշխարհը, որի մայրաքաղաք Բրիսէլում, արձան է կանգնեցում մեծ (վայ)-պատմաբանին, որտեղ բոլորը կողմնորոշուել են իրենց իսկական ծագման որոնումներում եւ հասկացել, որ ԵՄի մայրաքաղաքը պէտք է տեղափոխել Ստամբուլ: Բայց եւ ինչ մի մեծ խնդիր է այդ դաշինքը. ի վերջոյ, բոլորին էլ ձնկի է բերելու իր արմատներին՝ թրքութեան գիրկը վերադարձած Երուսալէմ:

Եւ այս ամէնից գրեթէ կարկամած Գնէլին հրաժեշտ տոտող թուրքը բարեհոգաբար քրքջում է ու քրքիջից խեղդուելով եզրափակում իր դարակազմիկ խրատը. «Իսկ այսպիսի գիրք,- թփօփացնում է պայտասակին,- այլեւս մի՛ գրէք...- Արդէն հեռուից՝ ես նայելով.- մինչեւ փարեվերջ դեռ ժամանակ կայ, փոխէք, փրամագծօրէն փոխէք... քանի դեռ... - քրքիջ,- որջ էք... վերադասատրէք փեսակէտերը, նոր գիրք գրէք... Ես էլ,- անելի հեռուից, ուսի վրայից, քրքիջով,- մի օր աղբը թափեցիս՝ կը գտնեմ ձեղնայարկի փոշիների մէջ, եթէ, իհարկէ, մկնէրն այս անգամ, համից խեքը թոցրած, լրի կրծած չլինեն...»³⁰:

Այսուհանդերձ, այս (ինչպէս եւ վերը յիշատակուած՝ Գնէլ-Ֆեթիիէ հանրմ) երկխօսութիւնը վկայում է, որ հայի ու թուրքի երկխօսութիւնն այլեւս ցեղասպանողի ու ցեղասպանողի երկխօսութիւն չէ: Որ թէւս այս երկու կողմերը ուժի տեսանկիւնից անհասար դիրքերում են գտնուում, միեւնոյն է սա ճակատամարտ է, ոչ թէ մատաղացու գառան կանխադատապարտուած զոհաբերութիւն, ինչպէս եղել է 1915ին ու դրանից առաջ:

Իրականութեան ներշնչած յոռետեսական մղձաանջը ճաք է տալիս նոյն այդ իրականութեան անկասելի ընթացքի թափից: Ժամանակի գեւոր սերունդների մէջ ինչ-որ տեղաշարժ է հրահրում: Կեանքի մայրամուտին վերածնունած Յովսէփ Տէրգալատեանը իր կիսատ մնացած կոխն է տալիս իսլացած Թայիբ Բայքալի հետ (ո՛վ կը սպասէր, չէ՛ որ նա վաղուց քայլող հանգուցեալ էր): Բայքալի խլութիւնը սոսկ ֆիզիկական արատի վկայակոչում չէ գրողի կողմից, այլ խորհրդանիշ. թուրքի յատկապէս այդ սերունդը խուլ է հայի ցափ, նզովքի, ցասման, պահանջատիրութեան հանդէպ: Բայց յաջորդ «ճակատամարտը»՝ Գնէլ Տէրգալատեան-Ֆեթիիէ, խառնում է բոլոր հաշիւները. յոյս կայ, այնուամէնայնիւ:

Եւ ամենամեծ մխիթարութիւնը. վէպի վերջում թուրքի, ռուսի, այլեւայլ պարտադրանքների բերումով մտախեղուած հայի տեսակների համախմբում է կատարուում: Միսաքը խոստովանում է, որ «այո» է անել խորհրդային Միութեանից անկախանալու հանրաքուէին՝ ինքն էլ գարմացած իր այդ

²⁹ Եղիւ, էջ 489:

³⁰ Եղիւ, էջ 494:

աստիճան յեղաբեկումի փաստից: Գնէլը անչար է մանուկ օրերին իր հետ ոչ միշտ հաշտ զարմիկի՝ Գալուստի հետ, որն իր կերպարը սրբագործել է արցախեան հերոսամարտում: Նրա որդին՝ Տարօնը, հօրեղբօր հոգեւոր դաշնակիցն է թուրքի դատաստանին հետամուտ լինելու գործում: Իսկ Գնէլի դուստրը՝ Անին, որ կարծես ֆրանսիական իրականութեան մէջ չպիտի կողմնորոշուէր իր ինքնութեան խարխափուն որոնումներում, ՀՀ առաջին իսկ այցի արդիւնքում շառագունելով բնութագրում է հայաստանցի տղաներին. «Հոս անանկ կը նային, որ ծունկերդ կը թուլնան»³¹:

Գրողի տեսլականն այսքանով չի սահմանափակում: Նա հակուած է հաշտեցումի, սիրոյ, միութեան անելի լայն սահմաններ գծել մարդկութեան կեանքում: Այս իմաստով բնութագրական է Գնէլի եւ Աստայի սիրոյ թեման, որը ես մէկ փաստարկ է, թէ տառապալից կեանք ապրած մարդկանց ժառանգները յարթահարում են նախնիների հոգեբանական բեռն ու տրտման կեանքի բնականոն ընթացքին: Եւ ոչ-պատահական է, որ Գնէլի ծնողներին սիրիեան աքսորում սատարած Աստայի տատիկը կեանքի վերջում էլ խնամում է հայկական գամփոռ Ռուդոլֆին, որը, չնայած բազմաթիւ վայրիվերումներին, իվերջոյ տուն է վերադառնում՝ Հայաստան:

Եւ ես մի կարեւոր հանգամանք, որ ընթերցողին մխիթարուելու հիմք է տալիս: Իր յոռետեսական երագ-մղձաւանջին Վահագն Գրիգորեանը հակադրում է իրեղէն-լաատեսական ողերձը, որը մեզ դուրս է բերում պատճառաբանութեամբ ու հասկանալի յոսանքութեան ճիրաններից, բայց եւ ապսպրում չկորցնել յամառ հետետղականութիւնը, որը միակ ճանապարհն է այդ լաատեսութեան յարթանակի. «... մի բան մենք հասարար գիտենք՝ չկան չիրականացող ցանկութիւններ, եթէ հասար են դառնում: Մենք երկար, շար երկար ենք ապրել աղամամութի մէջ, դադարել հասարաբ, որ լոյս երբեւէ կը բացուի, առանել ես, որ մութը ցրելու փորձերը սոսկ անելի են խտրացրել խաարը, բայց եթէ նպարակդ լոյսն է եւ ոչ թէ խաարին յարմարուելը, իվերջոյ կը տեսնես լուսաբացը»³²:

Կրկին դիմենք Յովհաննիսեանի վերլուծութեանը, որում մասնատրապէս կարդում ենք.

Գիրքը գրուել է բաց նետրդերով եւ արնածոր սրտով... Սա երեսում է իւրաքանչիւր տողից... Մակայն յիշենք ճակատամարտ կամ մեծ աղէտ պատկերող հին նկարիչների ցնցող տեսարանները կամ «Հանգստացող Արեւին», ինչքան մեծ պէտք է լինի արուեստագէտը, որ նոյնիսկ որսի վրայ յարձակուած, այն յօշոտող ուժակին նայելիս մեր մէջ արթնանայ միայն մարդուն վեհացնող, մեզ գազակցի վեր դասող ներքնատեսութիւնը... Ահա հենց դա էլ արուեստն է... Երբ ոչ թէ արցունք է բամում ողբերգութեան, անգամ եղենագործութեան ահագնութիւնից, այլ գործի է դնում մեր մէջ նիրհող կամ յատուկ քնեցրած

³¹ Նոյն, էջ 496:

³² Նոյն, էջ 499:

հարցադրումների մեքենան: Վահագն Գրիգորեանի՝ Մեծ Եղեռնի եւ դրան յաջորդած համազգային նորագոյացութիւնների մասին հարցադրումները բազմաթիւ են, բայց ամէնեւին էլ պատասխանների չեն սպասում, այլ սա մի տարօրինակ մեխանիզմ է, որ ինքն ունակ է պատասխանելու իր առաջադրած հարցերին, եւ մեկնակէտը հենց ճնուած օրից մեր մէջ բոյն դրած, ներսից կրծող անտրամաբանութիւնների շղթայի «օրինականութեան» դատաստանը տեսնելն է... Վահագն Գրիգորեանն իր սարկազմով ոչնչացնում է այն, ինչին մենք երբեմն դեռ փորձում ենք մեղմացուցիչ հանգամանքներ գտնել...³³:

Վահագն Գրիգորեանն պատումը շարադրում է՝ ոչ միայն անպարարի հմտութեամբ խաղալով բառերի հետ, այլեւ՝ վիպական ընթացքի մէջ խաչածետող բազմաթիւ հանգուցաթելերի ու թեմաների: Եւ այս ամէնից շահում է վէպի գեղարուեստական որակը. անգամ ամենամոայլ իրողութիւնը ներկայացնելիս գրողը չի զլանում ոճական շոյլ նրբեամբներ ներմուծել իր շարադրանք եւ ստիպել ընթերցողին կարդացածի բուն բովանդակութիւնից մի պահ վերացարկուել ու տրուել գրողական վարպետութեան հմայքին: Օրինակ՝ գաղթի սարսափելի երթից փրկուած եւ Մարսէլ հասած Մարիամին ու Գլակին դիմատրում է Միջերկրականից փչող "քաղաքավարի" քամին, Գլակի որդուն՝ Գնէլ Տէրգալուատեանին, դասընկերները Ֆրանսիայում ծաղրում են "խաթար" լեզուի պատճառով, Գնէլ Գալուան (Գնէլի գրական կեղծանունն է) հրատարակիչների պատուերով ստիպուած է տարին մէկ գիրք գրել «զգուած» գրչով, Մերձբալթիկա մեկնած Գալուատ Տէրգալուտեանի եւ Կարինէի պահուածքը բնորոշում է իբրեւ «վայրենի տնավարութիւն», Աստայի հանդէպ Գնէլի զգացմունքները որոշակիանում են մէկ արտայայտութեամբ՝ «Աստայի տաք ձայնը»: 1992ին Ֆրանսիայից Հայաստան եկած Գնէլի զգացումները բնութագրում են այս կերպ. «Յաճախ չինական գիր էին հայեացքները, ինչպիսին էլ լինէին՝ սեւեռոն, անտարբեր, ակնդէպ, խուսափող»³⁴: Պատկերատրութեամբ առանձնանում է եղբորորդու՝ Գնէլի յայտնուելուց յետոյ Յովսէփ Տէրգալուատեանի՝ կեանք վերադառնալու եւ Թայիթ Բայքալից պատասխան պահանջելու վճիռը կայացնելու նկարագրութիւնը. «Եռասուֆ Արղըղու կոչուող փրպանաքարը, կարծում ենք, այսպիսի սկսեց ընկնել Յովսէփ Տէրգալուտեանի վրայից: Յամէնայնդէպս այնքան շարժուեց, որ նրա փակ պառկածը կարող էր մտածել այն շոտ փալու մասին»³⁵:

Աւերելոյթ մանրոպ թուացող մի խօսքի, մի պատկերի միջոցով Գրիգորեանը կարողանում է բնութագրել իր հերոսների մարդ տեսակը: Այսպէս, դէպի Հալէպ ձգուող մահուան կարաանից մազապարծ Մարիամի

³³ Յովհաննիսեան:

³⁴ Լոյն, էջ 265:

³⁵ Լոյն, էջ 439:

կամ ճակատագրի դաժան զիգզաներից դուրս պրծած ու Խորհրդային Հայաստան հասած Գլակի համար երանության չափանիշ էր ընդամենը մարմինը կեղտից մաքրելը (մի դեպքում՝ ցեխաջրում, միա դեպքում՝ գիտի խանութից գնուած կլոր տաշտում): Մարիամի շուրթերից անելի կոպիտ արտայայտություն դուրս չի գալիս թուրք ցեղապաններին բնութագրելիս, քան հակիրճ, զուպա, խուսափողական այս արտայայտությունը. «*հա՛, գէշ մարդ էր, գէշ բաներ ըրաւ*»³⁶: Նոյն հակիրճութեամբ գրողն ընթերցողին է մատուցում Գալուստ Տէրզալստեանի կնոջ՝ Կարինէի քաղցնեհութեան, Աստայի բարեկրթութեան, անշահախնդրութեան, Աստայի զարմիկի՝ Ստուլիսի անպատկառութեան, ընչաքաղցութեան, Միսաքի մորթապաշտութեան հասնող զգուշատրութեան, Գլակի չնահանջող, խենթ յամառութեան եւ այլ հերոսների տիպական բնութագրությունները: Մէկ-երկու դիպուկ բառով, պատկերատու արտայայտութեամբ հեղինակը կարողանում է բացել մի ամբողջ կերպար, ներկայացնել մի ընդգրկուն իրականութիւն:

Գրիգորեանն իր վիպական ընթացքին ասես գործնականօրէն մասնակից է դարձնում ընթերցողին, մի իրատեսակ յետադարձ կապ հաստատում իր, իր պատմութեան հերոսների եւ ընթերցողի միջեւ:

Այսպէս, պատմելով գաղթի ճանապարհին Մարիամի պահուածքի մասին՝ Գրիգորեանն ասում է, թէ բոլորը խելագար էին համարում նրան: Եւ զարմանալի ենթաշերտով հասկանում ես, որ այդ բոլորի մէջ չկաս ո՛չ դու՛ ընթերցողը, ո՛չ հեղինակը: Հեղինակն ասես կիսում է իր գաղտնիքն ընթերցողի հետ, միայն ընթերցողին է վստահում այն: Տարօրինակ կապուածութիւն է առջանում վէպի հերոսների եւ ընթերցողի միջեւ. երբ ընդհատում ես ընթերցումը, մի տեսակ մեղքի զգացում ես ունենում, թէ միայնակ ես թողել հարազատ մէկին (ասենք՝ Մարիամին՝ գաղթի ոլորաններում, Գլակին՝ սիբիրեան սառնամանիքների մէջ, Յովսէփին՝ իր օտարոտի անտան պարտադրանքներում եւ այսպէս շարունակ): Կարծես քեզ պատասխանատու ես զգում գրական հերոսների առաջ, շտապում ես կրկին բացել գիրքն ու շարունակել համակեցութիւնը նրանց հետ:

Ես մի անբացատրելի ուստայն է հիատում Գրիգորեանն իր վէպում, որին չտրուել անհնար է: Վիպական ողջ պատումաշարի կտրուածքով ձգում է անորալի մի շղթայ, որը մեզ ենթագիտակցօրէն ազուցում է այն հերոսների ու դրուագների հետ, որոնք վէպի սկզբում հպանցիկ նետում են ապարիզ, ապա երկար ժամանակ անհետանում, բայց իվերջոյ դառնում շեշտակի ներկայութիւն: Նկատի ունենք, օրինակ, Մարիամին գաղթի ճանապարհին վերահսկող թուրք ոստիկանին՝ Ռեջէփ չաուշին (1934ից՝ Ռեջէփ Փերիւնչէք), Եուսուֆ Աղրըօլլուին, Արամ Արարատին, մանկահասակ Արուսեակին, Թայիթ Բայքալին: Որքան էլ այս կերպարները, նրանց ան-

³⁶ Նոյն, էջ 120:

չուող հանգամանքները առաջին հայեացքից թեթեւ ուրուագծերով են մատուցում, միեւնոյն է, Գրիգորեանը անբացատրելի մի հնարով կարողանում է յետադարձ կապի կանխազգացումով համակել ընթերցողին, յուշել, որ այս կերպարների հետ հաղորդակցութիւնը դեռ ասարտուած չէ: Եւ իսկապէս, պարագաների որոշակի դասատրութեամբ դրանք յետոյ դառնում են վիպական գործողութիւնների եւ հեղինակային գաղափարաբանութեան կարեւորագոյն առանցք:

Յիրափ, *Ժամանակի Գեպը* Գրիգորեանի՝ յարափոփոխ ժամանակին սեւեռուած ակնդէտ հայեացք է, որ թէեւ ծայր է առնում զանազան դիտակետերից ու բեկում զանազան թիրախների բախտելուց, եւ չի կորցնում իր մշտակայուն առանցքը եւ յամառօրէն ձգտում դէպի լոյսը՝ շարունակելով շերտ առ շերտ բացել իր նախանշած ոչ-փխրուն, կարծր ակոսը:

ԱՁՍՏ ԱՍԵՐ

Ազգայն Հայրը վէպը գրուել է 2008-9ին, տպագրուել է 2009ին: Այստեղ, ինչպէս եւ *Առաջնորդի կեանքն ու մահը* վէպում, վիպական պատումաշարը կառուցում է մէկ հերոսի՝ Հայկազուն Ազատեանի ճակատագրի շուրջ: Իհարկէ, լինելով մէկ հերոսի կեանքի պատմութիւն, այն ընդհանրացումի լայն շրջանակ է ի յայտ բերում, որում երեակտում է հայրենիքը լքած եւ եւրոպայում կամ այլուր իրենց բախտի թռչունը որոնող անհաշի հայերի ճանապարհային քարտէզը:

Համալսարանի աշխարհագրութեան ֆակուլտետի ուսանող Հայկազունին վիճակուած է հայկական բանակ զօրակոչուելու եւ ամէն բոլոր վերակտուել սպառնացող հայ-ադրբեջանական պատերազմի զոհը դառնալու հեռանկարը: Միակ որդուն այս արհաւիրքից փրկելու ծրագիրը յղանում է մայր Ազատեանը: Ի հեճուկս ամուսնու եւ հնազանդօրէն իր մեքենայութիւններին յանձնուած որդու՝ Թամար Ազատեանը գործի է դնում բազում հնարքներ, հրաշքով որդուն դուրս հանում Հայաստանի սահմաններից ու մեծ յոյսերով ճանապարհում Եւրոպա՝ Եւրօլանդ, ինչպէս բնութագրում է որոշակի տեղ ու անուն չենթադրող երկիրը՝ վէպի հեղինակը:

Այստեղ նա յանձնուած է հեռատր ազգականի՝ քեռի Յարութիկի հոգածութեանը, որի միակ մարտավարութիւնն իր գլխին փաթաթուած ազգականից հնարատրինս արագ եւ առանց բարդութիւնների ազատուելն է:

Հայկազուն Ազատեանը (անուն-ազգանունն արդէն իսկ յուշում են, որ խօսքը ոչ թէ մէկ հայ երիտասարդի ու նրա ճակատագրի մասին է, այլ մի ամբողջ ազգի ու նրա երիտասարդ սերնդի) անցնում է եւրօլանդեան բոլոր «հմայքների» միջով՝ քաղց, անապաստանութիւն, քմահաճ ու բոհ տանտիրոմիտ պարտադրանքներ, շուկայում «էստի համեցէք» կանչող նորօրեայ Գիքորի կարգավիճակ, հայրենակիցների ծեծուցարդ, հիանդանոցում պէտքանօթների սպասարկում, կայարանում ու ոստիկանական բա-

ժամանակը մի քանի օր անց է անցել, և հիմա արդեն արկածախնդրություն է: Եւ բոլոր այս վիճակներում կայ նաեւ մի այլ բարդութիւն՝ զօրակոչից խուսափած ու կեանքի ոչ-պակաս անողոք պատերազմի ներքաշուած հայ երիտասարդի համար. նա Երեւանում մնացած իր մօրն ու սիրած աղջկան՝ Անոյին, չափոյի յուսահատեցնի. ինչ էլ պատահի, նրանք պիտի մտածեն, որ իզուր չէ Հայկազունը հասել Եւրօլանդ՝ նիւթական եւ բարոյական մեծ գոհողութիւնների գնով: Նրանց համար հեռախօսագծից այս կողմ եղած իրականութիւնն այլ գոյներով է հարկատր ներկայացնել. ամէն ինչ կարգին է, ինքն իսկական դրախտում է, ոչինչ իզուր չի պրուած, ինքը միանգամայն ապահով է եւ երջանիկ եւրօլանդեան օրանում:

Եւ երբ միայն մէկ անգամ նա թուլութիւն է ունենում խոստովանելու մօրը, թէ ինքն անտուն ու քաղցած նստած է երկաթուղային կայարանի սպասասրահում եւ խնդրում է իրեն փող ուղարկել՝ Հայաստան վերադառնալու համար, երբ արդէն համակերպուած մտածում է Հայաստանում զօրակոչից խուսափելու պատճառով դատապարտուելու, բանտ նստելու, այնուամենայնիւ՝ բանակում ծառայելու հեռանկարի մասին, նրա գլխավերեւում իսկապէս ճախրում է բախտի թռչունը: Քեդի Յարութիկի թեթեւ ձեռքով նա մուտք է գործում վերջինիս քենու՝ սրճարանատէր Ուլմայի աշխարհ, որտեղ այլեւ տեղ չունեն քաղցը, անապաստանութիւնը, Հայաստան վերադառնալու սպառնալիքը եւ մնացած բոլոր անյարմարութիւնները, որ մինչ այդ սեղմում էին Հայկազունի կոկորդը: Ձեռներեց, նրբաճաշակ հայի շնորհիւ անշոք, փնթի ծակուտ յիշեցնող «Հին Բակ» սրճարանը վերածում է քաղաքի լաւագոյն, նախանձ շարժող ժամանցի վայրերից մէկի: Կեանքը բազում հաճելի անակնկալներ է մատուցում Հայկազունին եւ նրա տնօրինութեանը յանձնուած սրճարանին: Անակնկալների անկասելի ընթացքը ապահովագրում է կարեւոր «գործարքով»՝ Հայկազունն ամուսնանում է Ուլմայի միակ դստեր՝ Էլժբէթի հետ եւ դառնում ընտանեկան բիզնէսի միանձնեայ տիրակալը: Օր օրի աճող հեղինակութիւնը նաեւ նախանձի սերմեր է ցանում ձեռներեց հայի շուրջ. թէ՛ հայրենակիցները, թէ՛ եւրօլանդցիները քիչ փորձեր չեն անում պղտորելու շնորհայի հայի կեանքը, սակայն նա արդէն սանձել է իր բախտի նժույգը, եւ ոչինչ այլեւ չի կարող նրան վար բերել թամբից: Տեղացի աղբեցիկ դէմքեր են շրջապատում նրան, նա անձեռնմխելի է այլեւս, իր սիրուով՝ յայտնի հեռուատուեսային աստղ Իզուրայի անձնուրաց ջանքով անգամ դառնում է Եւրօլանդի քաղաքացի եւ հրաժարում Հայաստանի քաղաքացիութիւնից (այլ կերպ ինչպե՛ս վերջնականօրէն ազատուել Հայաստան վերադարձուելու, դատուելու եւ հայոց բանակում ծառայելու դժբախտութիւնից): Ասել է թէ՛ Հայկազունն աներեր քայլում է դէպի վերելք տանող ճանապարհով: «Սարն ի՞վեր գնալու համար, վերջիվերջոյ, հեշտ բան չի, լուրջ խթան է պէտք: Օրինակ, եթէ քեզ թում է, որ կեանքիդ բնական ընթացքը

խաթարած սխալ եւ գործել: Քունքիդ գնդակ արծակելը, պատկերատր ասած, իհարկէ, կայ ու կայ, բայց սխալից շահ կորզելը նոյնպէս ելք է, եւ, թերեւ, անելի շահաւէր: Այս փառատր միտքը... մեզ յուշում է Հայկազուն Ազատեանը՝ իր ամէնօրեայ անձնուրաց՝ սարն իվեր աշխարանքով»³⁷:

Կեանքի այս արտաքին փայլին զուգահեռ վիպասանը քայլ առ քայլ հասունացնում է ինքնօտարումի այն դաժան յետագիծը, որը վիճակում է իր հերոսին: «Հենց ոգեւորութեան առաջին այիրը անցնում է, հենց յաջողութիւնը սկսում է խաղաղ հոսել բացուած ջրանցքով, ճակատագրական սխալի աղօտացած, բայց չքնջնուած մոռիքը նորից յարակում է»³⁸, - գրում է Վահագն Գրիգորեանը:

Իսկ ճակատագրական սխալները աղաղակող են Հայկազունի կեանքում: Հայաստանը լքելու նրա քայլը խիստ դատապարտումի է արժանացել հայր Ազատեանի կողմից: Վերջինս ոչ միայն հրաժեշտ չի տալիս որդուն մեկնումից առաջ, այլեւ երբեք նրա հետ չի շփում մինչեւ մահը: Սիրած աղջիկը, ի հեճուկս իրեն լքած Հայկազունի, անյաջող ամուսնութիւն է ունենում, մայրանում, բաժանում ու դառնում Գետլի (ոչ-պակա՝ անյաջող ընտրութիւն) սիրուհին: Մայրը կաթուածահար վիճակում մտնում է միայնակ, մահանում՝ սրտացաւ, կարեկից հոգու կարօտ: Իսկ որ նա սրտացաւութեան, ջերմութեան անդառնալի կորստի փաստին է բախուել, պարզ է դառնում մահուանից շատ անելի առաջ: Նրա հանդիպումը որդու հետ, վերջինիս՝ Երօլանդում հաստատուելուց եւ բարեկեցութեան նախանձելի շէնք թեակոխելուց յետոյ, տխուր պատկեր է ներկայացնում: Մայր եւ որդի օտարացել են այնքան, որ երկուստեք գիտակցում են միմեանցից հեռու լինելու յստակ առաւելութիւնը. «...օրար ու անսովոր վայրերը, օրար ու անհասկանալի մարդիկ, այսպէս թէ այնպէս հանդուրժելի են, ինչպէս ամէն մի օրար բանը. քոնը չի ու վերջ, հերն էլ անիծած: Անտանելի է հարազատի օրարութիւնը, որովհետեւ քոնն է, բայց քոնը չի»³⁹: Ահա խորիդաճումների այս շղթան է մէջտեղ բերում Գրիգորեանը Հայկազունի եւ մայր Ազատեանի՝ չորս տարուայ բաժանումից յետոյ կայացած հանդիպման առնչութեամբ:

Եւ արդեօք միայն հարազատներն ու ընկերներն են օտարացումի այս անքնակական տիրոյթում, արդեօ՞ք սա վերջն է, արդեօ՞ք ծնողների մահից յետոյ այլեւ ոչինչ չնշանակող երեանեան հարազատ տան աղքուվածաւորով փակում է Հայկազունի հայաստանեան կեանքի շղթան: Դե՞ ոչ: Հայլը՝ Հայկազունը, դեռ մի «բարձր» թոխչք էլ պիտի գործի՝ ապացուցելու հա-

³⁷ Վ. Գրիգորեան, *Ոսրանի վերջին ճամփորդութիւնը*, Նայիրի հրատ., Երեւան, 2009, էջ 245 (վէպի յետագայ քաղաւանքները՝ այստեղից):

³⁸ Նոյն, էջ 249:

³⁹ Նոյն, էջ 244:

մար, որ ինքը երգուեալ եւրօլանդցի է, Եւ իրեն ոչինչ ետ չի պահի «սարն իվեր» իր խոյանքում: Նա այլեւս հանրային դէմք է, յաջողակ *բիզնէսմէն*, նրանով միայն ընտանիքն ու ծանօթները չէ, որ հետաքրքրում են: Եւ ահա յայտնում են հայ համայնքի նախագահ, Եւրօլանդում ՀՀ դեսպան, լրագրողներ, էլի մի շարք դէմքեր ու դէպքեր: Հայկազունը ներքաշում է մի յորձանքի մէջ, որն այլեւս անկտաովարելի է: Եւ մի օր էլ նա իրենից հարցազոյրց վերցնող լրագրողի թեթեւ ծեռքով հրապարակայնօրէն ցեխ է շարտում իր հայրենիքի, նրա կառավարութեան, հայ-աղբրեջանական թնջուկի եւ այսօրինակ այլ հարցերի ուղղութեամբ, անձնական ապահովութեան նպատակով խորտակում դէպի հայրենիք տանող բոլոր կամուրջները՝ վարկաբեկուելով ինքն իր ու հայրենակիցների աչքում եւ պայծառ լոյսերի մէջ շողջողալով Եւրօլանդցիների առաջ:

Թէեւ Վահագն Գրիգորեանի հերոսը Եւրօլանդում է, եւ վիպական գործողութիւնների տեղանքը չորոշակիացող եւրոպական քաղաք, այրուհանդերձ ընթերցողը լիարժէքօրէն մասնակից է դառնում Հայաստանում կատարուող իրադարձութիւններին: Մեզ ծանօթ 2008ի մարտիմէկեան ներքաղաքական անցքերը վաներագրողի անկողմնակալութեամբ եւ դաժանութեամբ ներկայացնում է Գրիգորեանը Երեւանի հետ հեռախօսային խօսակցութիւնների եւ հեռուստաթերից ու համացանցից սփռուող տեղեկատուութեան միջոցով: Սա կարեւոր շերտ է բացում *Ազատ հայր* վէպի բովանդակութեան մէջ: Մենք հասկանում ենք գրողի նպատակը. շեշտել, յուշել, թմբկահարել աղաղակող փաստը՝ որտեղ էլ լինես, ինչ ճակատագրով էլ ապրես, հազար թէլով կապուած ես քո հողի ու նրա իրականութեան հետ, երբեք չես կարող խոսափել այն ամենից, ինչ կատարում է քո հայրենիքում: Եւ որպէսզի է՛լ անելի համոզուենք այս ճշմարտութեան մէջ, իր վէպի վերջին մէկ-երկու էջում Գրիգորեանը, իվերջոյ, արտածում է «ազատ հայի»՝ դեռ վերնագրից մեզ հետապնդող բանաձեւը:

Հայկազունը նստած է համակարգչի առաջ ու հետետում համացանցային լրահոսին. «... յաջորդ կայքը մտնելով, հանդիպում է ազատ հայերի կոչին՝ ուղղուած ազատ հայերին... Ուրեմն, «Քաղաքացիական անհնազանդութեան կոչ»՝ «Ուղղուած բոլոր ազատ Հայերին»: «Հայերը», այո, մեծապատ է: Կարգախօսներ էլ կան, օրինակ, «Կեցցէ Հայի խաղաղ ու ազատ ոգին»: Նորից «Հայը» մեծապատ: Մնապարծութիւն չի, մեծապատով «հայը» կարեւորում է, դառնում «Հայ»⁴⁰:

Ազատ հայերը կոչ են անում աշխարհի բոլոր ազատ հայերին դադարել վճարել հարկերը, չյատկացնել որեւէ նոփրատուութիւն այն կազմակերպութիւններին, որոնք այդ գումարներն ուղղում են ՀՀ կառավարութեանը: Փոխարէնն առաջարկում է բոլոր միջոցներն ուղղել Հայաստանի գի-

⁴⁰ Նոյն, էջ 366:

ղերում եւ քաղաքներում ապրող հայերին: Համաձայնե՞ք Հայկազունի հետ՝ բաական անորոշ հասցէ, նոյնքան անորոշ հասցէատէրեր: Եւ իրապարակում է մերժումսնեւրի «սեւ ցուցակը». «*Դրան եւ օժանդակութիւն չպէտք է փրոսի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին, Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայկական Ազգային Կոմիտէին, Հայ Օգնութեան Միութեանը, ծեղ ծանօթ քաղաքական կուսակցութիւններին եւ միա բոլոր կազմակերպութիւններին, որոնք ուղղակիօրէն սափարում են Հայաստանի Հանրապետութեան բռնադիրական եւ յանցագործ իշխանութիւններին»⁴¹:*

Եւ ի՞նչ է սա նշանակում վերջին հաշուով: «*Կեցցէ՛ք, մտածում է Հայկազունը, քանդում ենք Սփիտքը, հեփն էլ Հայաստանը, յետո՛ւ: Աջքի լոյս չեն Հայաստանի իշխանութիւնները, Սփիտքի կազմակերպութիւններն էլ երեփ իրենց թերութիւններն ունեն, բայց փեղը ի՞նչ էք շինում՝ Հայաստանի ու Սփիտքի, չէ՛ որ այսփեղ էլ, այնփեղ էլ որեւէ կառոյց չմնաց: Բացի, հասկանալի է, ազատ հայերից»⁴²:*

Իսկ տեղը, ըստ «Ազատ հայերի», դատարկ չէ: Նրանց կոչն ունի կառուցողական առաջարկութիւն, որն ընդամէնը Հայկազունի հեգնանքն է շարժում եւ մղում ինքնազննումի. «*Մենք կոչ ենք անում բոլոր հայերին միատրուել քաղաքացիական հասարակութեան սփեղծման գործում, որի բարձրագոյն գիտակցութիւնը վճիռ կը կայացնի եւ կը սրեղծի իր սեփական ապրելակերպը, արդար հասարակութիւն եւ արդար երկիր»:* Հայկազունը գիտի, որ ինքը լաւ հայ չի, բայց, որ իրենից անարժանն էլ կայ, չգիտէր: Ինչու՞ դաժան, ուժի օրէնքով շարժուող աշխարհում, որտեղ ամէն ինչ ուժն ու փողն են որոշում (Եւրօլանդում է համոզուել), հենց հայը պիտի լինի սրբացած մեռնողը (աստ հանգչի հայ ազգը, որը առաջինը աշխարհում միատրուեց քաղաքացիական հասարակութեան ստեղծման գործում, որի բարձրագոյն գիտակցութիւնը վճիռ կայացրեց եւ ստեղծեց իր սեփական ապրելակերպը, ազատ հասարակութիւն եւ ազատ երկիր): Միամի՛տ էք, թէ՛ խորանանկ: «*Բարձրագոյն գիտակցութիւն, «սեփական ապրելակերպ» «արդար հասարակութիւն»... «Արեւի քաղաքը» եղաւ: Հաշիշ, բայց ինչու՞ հենց խեղճ հայերի համար: Դուք, անելի լաւ է, ինձ ուրիշ բան ասէք. ես՝ Հայաստանին այսքան վատութիւն արածս, արդէն կարո՞ղ եմ ազատ հայ համարուել»⁴³:*

Ինքն իրեն տրուած Հայկազունի հարցին պատասխանում է հեղինակը. «*Մեզ թում է՛ չէ, այլապէս այս սրտառու կոչին այսքան անշնորհք չէր արձագանգի: Քմահած է ազատութիւնը՝ զոհողութիւն է պահանջում բայց*

⁴¹ Լոյն, էջ 368:

⁴² Լոյն, էջ 368:

⁴³ Լոյն, էջ 369-70:

մասնակի ազատություն մարդը կարող է ձեռք բերել, տուեալ դէպքում՝ Հայկազուն Ազատեանը: Համարեա ձեռք է բերել, մնում է, որ Հայաստան, հայութիւն խնդիրները սրտին մօտ չառնի: Քեռ են Հայաստանն ու հայութիւնը՝ մարդու գլխին հազար ու մի հոգս կապող: Ազատութեցիր, ազատ ճախրում ես ...Վար է միայն այն, որ Հայկազուն Ազատեանի զատակները, թոնն ու ծոցը, երբ մոտացած կը լինի նրանց ծագումը, այլեա ոչ մի տեսակէտից ազատ հայ չեն լինի՝ տուկ անազատ եւրօլանդցի ... Իրօք, արժի՞ այսքան դրամարիկ, այսքան հեռու նայել: Վերջին հաշտով Հայկազուն Ազատեանը մի կեանք ունի, այտուեւր, բոլոր փորձութիւնները անցնելուց յետոյ՝ ազատ հայի կեանք»⁴⁴:

Ահա այսպիսի տխուր վերջաբան՝ ոչ-ուրախ հանգամանքների պարտադրանքով իր ապահովութիւնը կերտած հայի համար: Եւ որ անլի տխուր է՝ հենց այսպիսի «կայացած» տարագիր հայերն են այն հրապուրիչ խայծը, որով գայթակղում եւ տարագրութեան ցուպին են ձեռք մեկնում հայրենաբնակ հայրորդիները:

Ինչպէս նկատում ենք, *Ազատ հայը* վէպի դիպրոմաձաշարում կարեւոր դեր է վերապահուած համակարգչին, համացանցին: Վահագն Գրիգորեանն առհասարակ գործողութիւնների ընթացքի, գաղափարախօսութեան արտայայտման կարեւոր տիրոյթ է դարձնում առցանց հարթակը: Սա վկայում է, որ մեր կեանքը, մեր նիւթերէն իրականութիւնն այլեւ անբաժան է օր օրի իր գերիշխանութիւնը մեզ պարտադրող համացանցից: Բայց ասել, թէ Գրիգորեանը բացարձակացնում է այս երեւոյթը՝ չենք կարող, որովհետեւ նրա գրականութիւնը սնում է անցեալից չկտրուող հայեացքով: Այս են վկայում նրա գրեթէ բոլոր գործերում հանդիպող հնամեայ լուսանկարները, մէջբերումները պատմական վաւերագրերից, տարատեսակ գրագրութիւններից:

Հայկազուն Ազատեանը եզակի իրողութիւն չէ հայի մերօրեայ ողիսականում: Իւրաքանչիւրս այսօր ունի իր բաժին 'ազատ հայը' ծանօթ կամ, որ առաւել սարսափելի է, արիւնակից, եւ նրանց կեանքի ճանապարհային քարտէզը որեւէ կերպ չի զանազանում Հայկազուն Ազատեանին վիճակուած տխուր քարտէզից: Գոնէ հիմնականում այդ քարտէզի գծերն ու գիզգզները համընկնում են, ու անձնական յուսահատութեան չափաբաժինը իւրաքանչիւրիս կեանքում դրանից անլի է խտանում: Ասել է թէ՛ Գրիգորեանի բազմաբեւեռ հայեացքը իմի է բերում աշխարհի տարբեր ծագերում սփռուած հայերի տարաբախտութեան բոլոր հանգուցաթելերը եւ շեշտադրելով կորուստների ահագնութիւնը՝ սթափուելու ու անդառնալի ընթացքից ետ կանգնելու պատգամ հնչեցնում:

⁴⁴ Նոյն, էջ 370:

ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ

Վահագն Գրիգորեանի *Պօղոս-Պետրոս* վէպը հայ պատմութեան վերջին 200ամեակի քննական վերլուծութիւնն է, որում միախառնուածներհիստուած են գեղարուեստական պատումնաշարը եւ պատմական-քաղաքական անցքերի փաստագրուած յաջորդականութիւնը:

Յաճախ ընթերցողի համար դժուար է լինում կողմնորոշուել, թէ վէպում ծաայտող պատումի ո՞ր գիծն է գերակայօրէն իրեն առաջ մղողը՝ պատմական դէմքերին եւ պատմաքաղաքական անցքերին, թէ՛ վիպական հերոսներին ու նրանց հանգրուան Տրդ փողոցին առնչուողը: Ինչպէս արդէն նշել ենք *Ժամանակի գեպը* վէպի վերլուծականում, Տրդ փողոցը փոխաբերական նշանակութիւն ունի Գրիգորեանի ստեղծագործութեան մէջ, եւ *Պօղոս-Պետրոս* վէպը բացառութիւն չէ: Աշխարհի որ ծագերում, որ ժամանակաշրջանում էլ կատարուեն գրողի շարադրած պատմութիւնները, միեւնոյն է գալիս-յանգում են Տրդ փողոցի մատոյցներին եւ այստեղ ստանում միս ու արին: Այս փողոցի մասին ես մէկ նկատառում մէջբերեմք Քալանթարեանի յօդուածից.

Տրդ փողոցը դառնում է ընդհանրական կեանքի մանրակերտը, որտեղ խաչաձեւում են անցեալն ու ներկան, չարն ու բարին, մարդկային ճակատագրերը: Փոքրիկ փողոցը լայնանում, անսահման մեծանում է, որի քնակիչների զգալի մասը թողել է ծննդավայրը եւ փրկութիւն գտել այստեղ, այս փողոցում՝ իր հետ բերելով անցեալի յուշերը: Նրանց սերունդները տարածուում են աշխարհով մէկ, բայց ժամանակ առ ժամանակ վերադառնում են իրենց արմատները եւ ինքնութիւնը փնտռելու հարազատ փողոցում: Այս ճանապարհով փողոցը աստիճանաբար վերածում է ոչ միայն քաղաքի, այլեւ հայրենիքի, իսկ մարդիկ՝ ազգութեան խորհրդանիշի...Ստացում է, որ թէ՛ ուղղակի, թէ՛ փոխաբերական իմաստներով Տրդ փողոցը հայութեան իրայատուկ կենտրոնն է, ուր խաչաձեւում են քնակիչների անցեալն ու ապագան⁴⁵:

Այս վէպում հաասարագոր կարեւորութեամբ կողք կողքի են շարքային մահկանացուների մի ողջ բազմութիւն-բազմազանութիւն եւ հայոց պատմիչներ Եղիշէն, Կորինը, Կողբացին, Ոսեայեցին, կաթողիկոս Ներսէս Աշտարակեցին, ռուս ցար Նիկոլայը, զօրավար Պաակեիչը, նախախորհրդային, խորհրդային, յետխորհրդային հայ, վրացի, աղբթեանցի քաղաքական գործիչներ՝ իրենց դերերով: Պատմութեան փաստագրած 200 տարուայ արձանագրութիւններին ուղղուած «Յետադարձ հայեացքի» համապատկերում երեան է ելնում Մեսրոպեաննների եւ Տիրատուրեանների՝ սովորական հայկական գերդաստանների, չարչրկուած ողիսականը, որ հիմնականում սկիզբ է առնում Արգարայիր վարդապետից ու շարունակ-

⁴⁵ Քալանթարեան:

ում Մետրոպ վարդապետ Մետրոպեան, Մովսես, Պողոս, Պետրոս, Պարգե, Նուբր, Լուսինե, Արեգ Տիրատուրեաններ ժառանգորդութեամբ:

Վիպագիրը իր հերոսներին անցկացնում է պատմական թոհուրոհի ամենաթեթ յորաններով, եւ նրա հայեացքը՝ սառնարտօրէն անաչառ, տեսնում ու ցոյց է տալիս մերկապարանոց իրականութիւնը՝ սթափուելու կոչ հնչեցնելով իր հայրենակիցների ականջին: «Մեր ազգը ... վաղուց ի վեր երկու հիմնական զբաղմունք ունի. նախ՝ թեւերը թշուառ քանդում է իր փունը, յետոյ՝ աներակները ողբում, քանզի մենք մոռացել ենք, թէ փունը ինչպէս են շէն պահում»⁴⁶ գրում է հեղինակն իր վէպի առաջին՝ «Կանգառ առաջին. վարք Արգարդպիր վարդապետի» բաժնում: Կանգառները վէպում հինգն են. վերը նշուածին յաջորդում են «Կանգառ երկրորդ. յանուն բոլոր ճշտածների ու հալածածների», «Կանգառ երրորդ. խորհրդատր ընթերթ», «Կանգառ չորրորդ. լոյսը բացուի, բարին հեզը», «Կանգառ հինգերորդ. Տէ՛ր, Դու մեզ փրկիր բարեկամից» բաժինները: Վէպն ունի նաեւ առաջաբան՝ «Նախաբան. ցաւօր, ոչ յաւարեսական» վերնագրով, եւ...՝ «Վերջաբան. ինչպէս մեզ փրկենք մեզնից» վերնագրով:

Մեր արիմտու պատմութեան ընթացքը՝ մեզ ասանդուած դասագրքային եւ ոչ-դասագրքային իրողութիւններով, լի է հակասական, անընկալելի փաստերով: Եւ Վահագն Գրիգորեանը ճիգ է անում տարրողել պատմական կոչուող ճշմարտութեան ու պատուիրուած ճշմարտութեան սուրսայր եզրագծերը՝ չխնայելով ո՛չ այդ եզրագծերին յայտնուած իր հերոսներին, ո՛չ իր տարրողումներին հետամուտ ընթերցողին: Մեր արտաքին թշնամիները՝ թուրքը, ադրբեջանցին, վրացին, ռուսը, այլը, այնքան սարսափելի չեն ներկայանում յաճախ, որքան ներքին թշնամին՝ հայութեանն ու Հայաստանը սկուտելի վրայ արտաքին թշնամիներին մատուցող ստրկամիտ, անձնապաշտ, իրենց ինքնութիւնից օտարուած իբրեւ թէ հայերը:

Ողջ պատումաշարը երեան է հանում սարսուեցնող դիպոսածներ եւ դրանց մասնակից գրական հերոսներ, որոնք դատապարտուած են դառնալու աշխարհաբաղաբալական ցնցումների աննշան թուացող մահկանացու-զոհերը՝ անկախ այն բանից՝ նրանք կարետր դեր եւ առաքելութիւն ստանձնած, իրենց կեանքի գիծը ըստ ժամանակի բարձր նպատակների համահունչ կառուցած մարդի՛կ են, ինչպէս հանրապետական բանակի սպայ Կարապետը, որ սպանում է իր գինուոր հայի գնդակից, կամ Մերգօ Մնխչեանը, որ բոլշեփկեան գաղափարախօսութեան առաջամարտիկն է, բայց ստիպուած է գիտակցել 30ականների ուռճացող գեների ահատրութիւնն ու կռակիցներից, պաշտօնակիցներից գաղտնի Սերգբորժժողկամատի աշխատասենեակում խմել հերթական անմեղ գոհի ողորմաթաքը,

⁴⁶ Վ. Գրիգորեան, *Պողոս-Պետրոս*, Անտարէս հրատ., Երեան, 2019, էջ 9-10 (վէպի յետագայ բաղումները՝ այստեղից):

թե՛ պատմաքաղաքական անցուղարձերին անմասն, սիրոյ եւ երջանկութեան սպասմանն ապափնած դեռատի Թամարը՝ դուրս նետուած սեփական տան պատուհանից՝ թուրջ զազաններից փրկուելու համար, կամ իրեն ընդամենը մէկ օր կին զգալու շոյալութիւնը թոյլ տուած, ցեղասպանների ձեռքից հրաշքով փրկուած Սիրունը, որ պիտի այդ մէկօրեայ կանացի սեթեւեթանքի համար վճարէր շատ թանկ գին՝ բռնաբարուէր իր փրկարար-ասպետի կողմից եւ երեխայ ծնելուց յետոյ մեռնէր հայ չեկիստների խոշտանգումներից, չհասցնելով վայելել մայրութեան բերկրանքը:

Հիանդ ժամանակներում բոլորն էին դատապարտուած, բոլորն էին գոհ: Եւ եթէ բախտի միջանկեալ շողարձակումներ, այնուամէնայնիս, նկատում են վէպի հերոսների կեանքում (ինչպէս օրինակ՝ ծերացած Արշալոյսի կեանքի վերջին տարիները նկարագրող հատուածում), ապա վիպասանը մեզ իսկոյն մատուցում է գեղարուեստական շարադրանքին զուգընթաց զարգացող քաղաքական դիպուածաշարը, որը չի թողնում լաատես լինելու որեւէ հիմք:

Ինչ ենք կարդում՝ իբրեւ մեր ազգին պատուհասած արհաւիրքների «քննական» վերլուծութիւն, որի մեկնարկը տրուած է Աբգարդալի վարդապետի գրառումներում եւ շարունակում է նրա եղբորորդի Մեսրոպ վարդապետ Մեսրոպեանի՝ մէկ դար անց շարադրած «Քննական պատմութիւն հայոց»ում, որին վիճակուած է նոյն ճակատագիրը, ինչ դրա հեղինակին եւ ողջ հայ ժողովրդին: Քննական հայեացքն ուղղելով նախորդ դարասկզբի իրադարձութիւններին՝ Վարդապետը գրում է. «... դժոխար է, եթէ ոչ անհնարին գտնել ուրիշ երկու ասես իրար քթից ընկած երկուորեակ պեպրութիւն, ինչպիսիք են Ռուսաստանն ու Թուրքիան»⁴⁷:

Տասնամեակներ անց, սեփական փորձառութեամբ, այս միտքը պէտք է ձեռակերպի Վարդապետի շառափող, դրամատուրգ Պօղոս Տիրատուրեանը՝ ռուս «եղբայր» գործընկերների հետ ունեցած անմիջական շփումների վերջնարդիւնքում. «Քոլորին ռուսները նուաճել են արիւնով ու սրով, մեզ՝ մեր օգնութեամբ, բայց դրանից մենք շահե՛լ ենք: Ամէնեփին: Ռուսը մեզ խփում է թիկունքից: Մեր համակրանքը շահում՝ մեզ դաւելով: Մեզ համար զանազան որոգայթներ լարում, ապա իբրեւ թէ օգնութեան ձեռք մեկնում: Հայաստանը ռուսներին պէտք է՝ թուրքերի հետ բաղաբազան ատեպորդ անելու համար: Դա լաագոյնս ապացուցեցին բուշեփկները, հիմա էլ ապացուցում են ռուս կայսերամուլներն ու հայ ազգադամները»⁴⁸:

Վերջիններիս՝ ազգադամների վրայ բաական հանգամանօրէն է կանգ առնում հեղինակի հայեացքը եւ, թերեւս, նրա գաղափարաբանութեան շեշտը այդ տեսակի զագրեցիւթեան բացայայտումն ու նզովումն է:

⁴⁷ Եղյն, էջ 517:

⁴⁸ Եղյն, էջ 501:

Ներսէս Աշտարակեցոց ծայր առած, միկոյեաններով ու «միկոյեանական լիմիտներով»⁴⁹, մուղղախներով, անկախհայաստանեան «գերակաշահականներով» շարունակուող, մոսկուաբնակ Կիոսկասեաններով ամբողջացող ազգութացների մի ողջ պատկերասրահ է ներկայացնում Գրիգորեանը: Իդէպ, այս տեսակի մեզ շատ ծանօթ ու արդիական օրինակ է Գէորգի Կիոսկասեան կոչուած հերոսը. հենց այսօր դրա նմաններին մենք ճանաչում ենք յականէ-յանտանէ: Եւ այս տեսակը իրեն համարում է Իսրայէլ Օրու սրբազան գործի հետետորդն ու նուիրեալը՝ այդպիսով արդարացնելով սեփական ինքնութեանը դասճանելու, ազգն ու հայրենիքն ուրանալու իր «սխրանքը»: Ազգադասների այս շղթան շնչահեղձ է անում ընթերցողին: Յետո՛յ ինչ, որ վիպական գործողութիւնների բոլոր դրոագներում էլ հեղինակն ինչ-որ հնար գտնում է՝ մխիթարելու կամ յուսադրելու:

Կարդում ես ազգիդ հեռու եւ ոչ այնքան հեռու անցեալի տարեգրութիւնն ու սարսափած բախում այն անհերքելի փաստին, որ հենց հիմա էլ՝ երէկ, այսօր, անվիճելիօրէն ու ցաօք՝ նաեւ վաղը նոյն իրականութիւնն է: Ո՛րն է այս դաժան տեղապտոյտից ազատագրուելու հնարը, երբ վէպի դիպուածաշարը եզրափակում է ոչ-յուսադրող հեռանկարով, երբ երկու հայրդի՝ Պարգեւ ու Նուէր Տիրատուրեանները, դատապարտուած են դաժան ճակատագրի (հեղինակը խնայում է մեզ ու չի որոշակիացնում նրանց ճակատագրի վերջին արարը), ազատատեւչ ու ազնիւ Տիրատուրեան ցեղի մէկ այլ շատափոլ՝ Արեգը, բանտում է՝ իր պետութեան եւ ժողովրդի ազնիւ նպատակների շեփորահարը լինելու «մեղքի» համար: Անօգնական երկու ծերունի՝ իրենց կանանց հետ, դատապարտուած են անփմանալին-առեղծուածայինը որոնելու եւ իրար դիմելու մեր բանահիստութիւնից յայտնի-փակուղային հարցով.

- Պօղոս, գտա՛ր:
- Չէ՛:
- Պետրո՛ս, գտա՛ր:
- Չէ՞՞՞:

Վէպի խաչածետուղ բազմատարր հանգոյցները լուծելու իրակերպ հնար է բանեցրել հեղինակը՝ պատմաքաղաքական իրողութիւնները վեր հանող «Քննական պատմութիւն հայոց»ին ուղղուող «Յետադարձ հայեացքը» տեղայնացնելով նաեւ իր հերոսների նեղ անձնական ճակատագրերի տիրոյթում: Այսինքն՝ «Յետադարձ հայեացքը» տեղ-տեղ դադարել է Գրիգորեանի հերոսների «մենաշնորհը» լինելուց, հեղինակն ասես «ընդօ-

⁴⁹ Ռուսերէն բառ, թարգմանաբար՝ սահման: «Միկոյեանական լիմիտներ» արտայայտութիւնը վերաբերում է ստալինեան բռնաճշումների շրջանին, երբ Աքքանազ Միկոյեանը պահանջում էր մեծացնել Հայաստանից ակնկալուող զոհերի թիւը՝ յանուն խորհրդային երկրի բարօրութեան:

⁵⁰ Նոյն, էջ 530:

րինակել է» իր հերոսների վարքը՝ ընթերցողին մատուցելով ես մէկ՝ հեղինակային «Յետադարձ հայեացք»։ Այդ հայեացքի հետքով վիպասանը լոյս է սփռում այն անցքերի եւ դրանց մասնակից կերպարների ճակատագրերի վրայ, որոնց մասին կամ ընթերցողը, կամ միա գրական հերոսները չունեն որոշակի տեղեկութիւն։ Այսպէս, յետին թուով, ասես պատահական դիպրոմաձեւերի հանդիպադրմամբ պարզ է դառնում, որ իր գիտութի գնդակից զոհուել է Մետրոպ վարդապետի եղբորորդի Կարապետը, որ Մովսէս Տիրատուրեանի Պօղոս եւ Պետրոս որդիներից մէկը որդեգիր է, որ Սիրունի տանը եղած հիւրերն են Մովսէսի, Սեբգոյի, Սիրանի մահուան հանգամանքների ականայ մեղատրները են. են.:

Վահագն Գրիգորեանը լեզուաոճական բազմաշերտ բաղադրիչներով է կառուցում իր գիրը։ Նրա բառամթերքը ներառում է վերամբարձից մինչեւ կենցաղային-առօրեական, բանահիւսականից մինչեւ գերարդիական, պաշտօնականից մինչեւ հայիոյախօսութիւն ձգտող եզրոյթներ։ Նոյնքան բազմաշերտ է պատումի տրամադրութիւնը, մատուցման դիտակէտը։ Պօղոս-Պետրոսը ինչպէս եւ Գրիգորեանի գրականութիւնն առհասարակ շատ աստիճաններով մէջ է ողբերգականի, դրամատիկականի, կատակերգականի տիրոյթներում։

1921ի ռուս-թուրքական բանակցութիւնների շրջանը ներկայացնող հատուածում՝ մուսկովեան *ժիզն Նացիոնալնոսարէ*⁵¹ պարբերականում արուած իրապարակման քաղաածքների պատկերին, փայլում է Գրիգորեանի հումորը, որն այնքան յիշեցնում է ողբերգութիւնից զանշտ յօրինող Գուրգէն Մահարու գրիչը. «Ուրեմն, Հայաստանը՝ որպէս «սովեթական-սոցիալիստական պետութիւն, պէտք է գնայ իր փարածքների եւ նոյնիսկ իր ազգակիցների որոշ խմբերի զոհաբերութեան»։ Յանուն ինչի՞։ «Յանուն համաշխարհային յեղափոխութեան»։ Քանի որ յատկապէս բուք ծնուած հայերը կարող է ասեն՝ լա՛ւ, տարածքները հասկացանք, զիջենք, բայց նոր կուտորածները շատ չեղա՛ւ, դարձեալ վերին աստիճանի համոզիչ բացատրութիւն. «Եթէ մենք հաւատում ենք համաշխարհային յեղափոխութեան յաջողութեանը (իհարկէ հաւատում ենք, ամօթ չի՞ չհաւատանք), ապա պէտք է հասկանանք, որ բոլոր այդ զոհաբերութիւնները ժամանակատր բան են, որ համաշխարհային յեղափոխութեան յաղթանակով չեղեալ են դառնում»։ Ի՞նչ է ասել՝ «չեղեալ»։ Այսինքն՝ նոյնն է, թէ չեն եղել։ Հայկական կոպորածները չե՛ն եղել։ Այո։ Ինչպէ՛ս։ Ծափ պարզ, «համաշխարհային յեղափոխութիւնը յաղթանակից յետոյ կը ըննի եւ կը գրնի հորդի իրաքանչիւր կոպորի իսկական փրորջը՝ յանձին նրա վրայ աշխատող աշխատատրի»։ Կը գրնի՞, ո՛նց, չէ՞ որ հայերը արդէն կոպորուել են։ Է՛, դժուար էք հասկանում, հայերը, այո՛, կոպորուել են, բայց թուրքերը հո

⁵¹ Ռուսերէն բառակապակցութիւն, թարգմանաբար՝ ազգութիւնների կեանքը։

կան, ինչ փարբերության՝ հայ աշխատատեղը կը փնի հողի փրկը, թե թուրք: Իրօք, իրօք, ոչ մի փարբերություն, մենք՝ հայերս, կարող ենք ընդհանրապես չլինեն, վերանալ աշխարհիս երեսից, եթե սա կը նպաստի համաշխարհային լեզվափոխությանը: Կեցցէ՛ք, վերջապէս հասկացաք, բայց ձեզ լրի զոհաբերելը դեռ շուր է. մի բան էլ չմնայ՝ ապագային»⁵²:

Իսկ Պօղոս եւ Պետրոս Տիրատուրեանների՝ Պապիկ Մորոզովի⁵³ վեհ օրինակին հետեւելու, առաջ ջոկատավարի ղեկավարութեամբ կենդանաբանական այգի այցելելու, Պօղոս-Պետրոս սրբերի՝ Սիրանի տանը հիւրընկալուելու հատուածները պարզապէս գեղարուեստական գոհարներ են, որ իրաւամբ կարող են դիտուել իբրեւ վիպական պատումից առանձնացող, բայց ոչ՝ դրան չներդաշնակող աարտուն ստեղծագործութիւններ:

Վիպասանը գրեթէ ոչ մի պատում, ոչ մի դիպուած չի հիւսում առանց ենթատողերի, առանց պատճառահետեանքային կապի շարակցութեան: Վէպում առանցքային տեղ ունի Պօղոս-Պետրոս եկեղեցին քանդելու հատուածը: Սա ինքնին, իբրեւ իրողութիւն, այնքան ընդգրկում նիւթ է պարունակում, այնքան հաւաստի տեղեկագիր է խորհրդային բարբերի վերաբերեալ, որ, թում է, այլեւ կարիք չկայ խտացնելու գոյները, շեշտադրելու կատարուած բարբարոսութեան ցցուն փաստը: Բայց բանահիւսական, աւանդապատումային ոճով շարադրուած այս պատմութիւնը գրողն աւարտում է բիրտ իրապաշտական լուծումով. քանդուած եկեղեցու աներակների միակ հաւատատեղը՝ Գրիգորեանի վէպի ամենամանր (եթէ չասենք՝ ամնեղսունակ) հերոսը՝ Սիրունն է դառնում աստուածութեան գոհը. անմեղութիւնը թաղում է բիբլիական ոճի փլատակներում:

Եւ ինչ է մնում անել հեղինակին՝ ի սեր ընթերցողի կամ գուցէ ի սեր ինքն իրեն՝ շնչահեղծութեան յաղթականօրէն աճող չափաբաժնից վերջնականապէս չխեղդուելու համար. նա պատմութեան դառնահամ դեղահաբերին հակադրում է հեքիաթի անուշաբոյր նեկտարը: Երկինքից երեք խնձոր վայր բերելու յանգոյն՝ Վահագն Գրիգորեանը երազ է տեսնում իրապատում վերաջաբանով. փրկուած է Տիրատուրեանների առեւանգուած «թայիսմանը, տոհմական մասունքը»՝ Վարդապետի «Քննական պատմութեան հայոց»ը, որ տուն է վերադառնում թուացեալ կորուսած, արմատից հատուած ընծիւղի՝ Լուսինէ Տիրատուրեանի ձեռամբ: Եւ որպէսզի կապուած չմնայ ընթերցողի ու հենց իր՝ Վահագն Գրիգորեանի մէջ, թէ սա իրողութիւն է՝ մեր բազմադարեայ պատմութեան բոլոր քառուղիներում հաստատագրուած, հեղինակը պատկերագրում է աշխարհակործան ջրհեղեղին յաջորդած վերածնութեան խորհուրդը՝ կտուցին կանաչ շիւ բերող ա-

⁵² Երկ, էջ 204-5:

⁵³ Բուս «հերոս» պիւններ, որի օրինակով դաստիարակում էին խորհրդային պատանիները:

դանու տեսքով: «Քիչ հեռում՝ մարգարտարի մէջ, կանգնած է աղանին՝ կրուցին դալար շիւ: Վիզը թեքած՝ փոքր-ինչ կասկածանքով նայում է վաղաժամ անցորդին, ապա համոզուելով, որ վրանգ չկայ, շիւր առած թեւածում: Լուսինէն, իհարկէ, տեղեակ է, թէ ինչն ինչոց է ... իսկ մենք, որ նախանձեղի համբերութեամբ անցել ենք այս ճամփորդութեան ոչ-քիչ էջերով, յիշողութիւնից էլ չենք դժգոհում, սա ընկալենք որպէս նախերգանքը մեր երազի արթմնի շարունակութեան»⁵⁴ ասարտում է վէպը հեղինակը:

Այս լաւատեսութիւնը, հայի ապագայի հանդէպ հաւատը Վահագն Գրիգորեանի գոնէ գրական հաստատմքն է: Անգամ սեփական մահոտան փաստը նա մեկնում է ոչ թէ իբրեւ ողբերգական ասարտ, այլ նոր կեանքի սկիզբ: Այս դիտարկումն առկայ է նրա ստեղծագործական յղացումների բազմաթիւ օրինակներում: Դեռ 2001ին գրուած «Անմահը» պատմուածքում կարդում ենք. «... ես երրորդ հազարամեակի առաջին տարում լեռնաջրով արեանս մէջ պատկած մտածում եմ՝ յաջորդ անգամ ե՞րբ, որպէ՞ն, որպէս ի՞նչ ու յանուն ինչի՞՝ եմ լոյս աշխարհ գալու: Տրամադրութիւնս այնքան վաւր է, որ էլ չսասած, բայց յիշում եմ նախորդ մահերս եւ, պատկերացրէք, համարեա մխիթարում եմ»⁵⁵:

Այս մխիթարութեանն ապափնելու երերումի մէջ էլ փորձենք մտածել, որ մեզ վիճակուած է բազմադարեայ տեղապտոյտ՝ ելքի հեռանկարով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրութեամբ անդրադարձանք անկախութեան շրջանի ոչ-քիչ վիպագիրներից միայն մէկին՝ բնաւ չթերագնահատելով միա ժամանակակիցներին: Հայ արդի գրականութիւնն իր բազմաշերտ դրսետրումներով մէկ հրապարակման մէջ ամփոփելն անհնար է, բնականաբար, ինչպէս որ անհնար է հենց մէկ գրողի, մասնատրապէս՝ Վահագն Գրիգորեանի գրականութեան սպառիչ վերլուծութիւնը թէկուզ եւ այսպիսի ծաայլուն ուսումնասիրութեան շրջանակներում:

Այս ուսումնասիրութիւնը գրելու շարժառիթը, ոչ միայն արդի հայ գրականութեան նշանակալի դէմքերից մէկի գրականութիւնը տեսականօրէն արժետրելու մղումն էր, այլեւ թաքուն յոյսը, թէ այս գրականութեամբ կը հետաքրքրուեն մարդիկ, որոնք կը կարողանան նպաստել, որպէսզի թարգմանուեն եւ աշխարհի տարբեր լեզուներով հասանելի լինեն Գրիգորեանի երկերը, յատկապէս՝ *Ժամանակի գեպը*: Այն տազնապը, որ *Ժամանակի գեպը*ում (մղձաանջ-տեսիլքում) հնչեցնում է Գրիգորեանը, պար-

⁵⁴ Նոյն, էջ 531:

⁵⁵ Վ. Գրիգորեան, *Կշեռքը*, ՀԳՄ, Երեւան, 2018, էջ 9-10:

փակուած չէ սոսկ հայկական տիրոյթում: Սա չափազանց իրատեսական կանխագուշակութիւն է, որից պիտի հետետութիւններ անի աշխարհը:

Վահագն Գրիգորեանի գրականութիւնը հայ ժողովրդի վերջին հարիւրամեակների եւ ներկայի պատմութեան բազմաթիւ շերտերն է բացում, վերլուծում ու նաեւ կանխագուշակում մեր ընթացքի հնարատր ելքերը: Նա ընդամէնը գեղարուեստական պատումաշար չէ, այլ իր գիրը հիմնատրում է փաստագրութեամբ, պատմական յայտնի իրողութիւնների մէջքերումներով: Եթէ *Առաջնորդի կեանքն ու մահը* եւ *Ազաւր հայը* վէպերում նա այսօրեայ իրականութեան արտացոլողն է, ապա *Ժամանակի զեպը* եւ *Պօղոս-Պեպրոս* վէպերում, նկարագրելով ներկան, այդ ներկայի արմատները թխեցնում է մեր պատմական անցեալից եւ ժամանակների ու հայի ճակատագրի ընթացքի մասին պատմում է առաւել ընդգրկուն կերպով: Նրա պատկերած Տրդ փողոցը գրական այն տարածքն է, որում ծաալում են թուր վիպական գործողութիւնները: Եւ եթէ անգամ դրանց մի մասը կատարուել են ոչ-յատկապէս Տրդ փողոցում միեւնոյն է, բազմաթիւ թէլերով կապուած են այդ փողոցի հետ, որովհետեւ դա հենց հայի ու Հայաստանի խորիրանիշն է Գրիգորեանի ստեղծագործութեան մէջ:

**THE ARMENIAN NOVEL BETWEEN 1991 AND 2020:
THE CASE OF THE NOVELIST VAHAGN GRIGORYAN**

(Summary)

KARINE RAFAELYAN (karine.rafaelyan@mail.ru)

The article focuses on the literary work of Vahagn Grigoryan, one of the most prominent contemporaneous Armenian novelists.

The papers highlights the latest four novels of the author, namely *The Life and Death of the Leader*, *The River of Time*, *The Free Armenian*, and *Poghos-Petros*. In both of the novels *The Life and Death of the Leader* and *The Free Armenian* the stories are woven around the image of the same hero, who appears in different situations during the period of independence. The other two novels highlight handpicked episodes of Armenian history, which become the background upon which the novelist raises a number of critical current issues which have to do with the Armenian Genocide, the survival of the Armenian nation and the prospects of Europe's religious identity and the shifts in its value system.

ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ¹

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ (armenag@gmail.com)

ՄՈՒՏՔ

Լայն առումով **խնդիր** կը կոչենք այն գոյականը կամ առարկայանիշ բառը, որ որեւէ հոլով առնելով կը լրացնէ մասնատրաբար բայ մը (Եղեգնեայ **գրչով** որք տունս **երգեցի**...), ինչպէս նաեւ գոյական մը (Լյստեղ ինկաւ... **խոցը կործքին**), ածական մը (Պահ մ'իր **գոյթին խուլ**² կը մղէ ի բաց...), դերանուն մը (**Ձեզմէ ո՞վ** այս նամակը պիտի տեղ հասցնէ...), մակբայ մը (**Հրթիռէն արագ** սուրաց), կապ մը (Ամեն խայտանք ջախջախեցի **սրտիս մէջ**...), վերաբերական մը (**Երանի՜ աղքատներուն**...), ձայնարկութիւն մը (Աա՛ղ **փառացս** անցատրի):

Սոյն յօդուածով պիտի քննենք միայն բայական եւ կապական խնդրառութեան կարգ մը պարագաներ, որոնց իմացումը արեւմտահայերուս մէջ սովորաբար թերի կը կատարուի դպրոցական – ու ոչ միայն դպրոցական – տարիներուն եւ այդպէս ալ կը մնայ այնուհետեւ²:

ԲԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

Բային խնդրառութիւնը կախեալ է անոր սեռէն: Եթէ բայը մենիմաստ է, ան կ'ունենայ կայուն սեռ մը եւ կայուն խնդրառութիւն: Իսկ բազմիմաստ բայը կրնայ ունենալ տարբեր սեռեր.– եւ խնդրառութիւն.– իմաստներուն թելադրանքով. օրինակ՝ **զարնել**՝ բայը «հարուածել» իմաստով չէզոք է (Թորոս զարկաւ Մարկոսին), իսկ «որսալ» կամ «սպանել» իմաստով՝ ներգործական է (Որսորդը կաքաւ մը զարկաւ):

Ընդհանրապէս բայը կ'ունենայ մէկ կայուն սեռ՝ **ներգործական** կամ **չէզոք**, եւ ասոնց վրայ կը ձեւատրուին միւս երկու սեռերը՝ **պատճառականը** (կամ անցողականը) եւ **կրատականը**: Օրինակ՝ **երգել**՝ ներգործական, **երգուիլ**՝ կրատական, **նստիլ**՝ չէզոք, **նստեցնել**՝ պատճառական: Ամեն ներգործական բայ կը բնորոշուի հայցական հոլով ուղիղ խնդիր³ առնելու

¹ Բացառաբար, պահպանած ենք հեղինակին ուղղագրական մօտեցումները:

² Ձարմանքով կը նկատենք, որ արեւմտահայ բառարաններու մէջ յաճախ նշանակուած են բայասեռեր, որոնք չեն համապատասխաներ մեր բարբառի արդի իրականութեան, միւս կողմէ՝ կը գտնենք նաեւ բառարաններ, որոնք ոչ մէկ սեռ նշանակած են:

³ Ամեն ուղիղ խնդիր կրնայ ներկայանալ բացառական հոլովով եւ, եթէ տուեալ առարկան մասնատելի է. օրինակ՝ **հացը ուտել** եւ **հացէն ուտել**, **ջուրը խմել** եւ **ջուրէն խմել**, **պտուղը գնել** եւ **պտուղէն գնել** եւ այլն: Բացառական հոլով դրոճած խնդիրը կը կոչուի **մասնական ուղիղ խնդիր**, եւ իրօք ալ ան ցոյց կու տայ բուն ուղիղ խնդիրը հանդիսացող առարկային մէկ «մասը». **հացէն** ուտել կը նշանակէ անոր **մէկ մասը** ուտել, **ջուրէն** խմել՝ անոր **մէկ մասը** խմել, այսպէս ալ միւսները:

յատկութեամբ. օրինակ՝ նամակ գրել, հաց կիսել, պտուղ բաղել եւ այլն, ուր նամակ, հաց, պտուղ բառերը հայցական հոլով ուղիղ խնդիրներ են: Ուղիղ խնդիրը կը պատասխանէ **ի՛նչ** հարցումին, որ կ'անցնենք բային վրայ. օրինակ՝ **ի՛նչ** գրել (**նամակ**), **ի՛նչ** կիսել (**հաց**): Երբ ուղիղ խնդիրը անձի անուն է, ապա կ'ոտղենք **զո՛վ** հարցումը. օրինակ՝ **զո՛վ** տեսնել (**բարեկամը**), **զո՛վ** հրափրել (**Վարդանը**): Ներգործական բայը, ուղիղ խնդրի կողքին, կրնայ ազատօրէն աննել նաեւ որեւէ անուղակի խնդիր կամ պարագայ:

Չէզոք սեռի բայերը ընդհանրապէս ուղիղ խնդիր չեն աններ,– կրնան ազատօրէն աննել անուղակի խնդիրներ.– այսուհանդերձ լեզուն կը գտնէ զանազան միջոցներ՝ խոսափելու համար նման կայուն կամ կաշկանդիչ օրէնքներէ եւ կը յաջողի երբեմն: Իրօք ալ շատ մը չէզոք բայեր ազատօրէն կրնան իրենց արմատը կամ թէկուզ անորոշ դերբայը կամ արմատին մերձիմաստ բառ մը իբրեւ ուղիղ խնդիր աննել. օրինակ՝ «Ան իր վերջին անկումը ինկաւ»: «Մտնել մը մտաւ, որ ամեն մարդ նշմարեց»: «**Լաց** մը լացաւ» (նաե՛ւ «լալ մը լացաւ»), բայց նաե՛ւ «վիշտը, ցաւը լալ». այսպէս ալ ծանօթ առածը՝ «Տէրը տարածը կու լայ», գայլը՝ մնացածը: Նմանապէս՝ արին քրտնիկ, երկար ճամփայ քալել, ճամփան երթալ, ծովեր անցնիլ⁴: Անցնենք՝ ծառ մագլցիկ, ձի հեծնել եւ այլն: Այսպիսի ուղիղ խնդիրները կը կոչուին «ներքին խնդիր»:

Գեղարուեստական գրականութեան մէջ կը հանդիպինք խնդրառական անհատական բոլորովին զարտուղի օրինակներու եւս, որոնք քնաւ ալ ներքին չեն, ինչպէս ստորեւ հետալ չէզոք բայի ուղիղ խնդիրը. «Աքասիաներ, գինով լոյսէ ու տապէ, // Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան...» (ՄՄ «Աքասիաներու...»): «Լոռութիւնով մը ամբա՛ վարդերը քեզ կը բուրեն... // Լոռութիւնով մը ամբա՛⁵ ես միայն քեզ կ'աղօթեմ» (ՄԶ «Միայն քեզ»): Կամ հետեւեալին մէջ հոսիլ չէզոք բայի ներգործական կիրառութիւնը. «Ամանորի այս գիշերը...ակնթարթ՝ մը ոսկի կը հոսին աղբիւրները» (Յ. Պալեան, *Մարդը ժամանակին հետ*, էջ 22): Նոյն հոսիլ բայը Դ. Վարուժան ներգործաբար կիրարկած է՝ փոխելով նաեւ լծորդութիւնը. «Թեզաններն ի վար կը հոսեն թոքերն արին մ'անձնուրաց» («Պատգամատրներս»):

Այս ծիրէն ներս երբեմն չափազանցութիւններ ալ կը գործուին, օրինակ՝ «Գիտակցութեան նշոյլներ կ'ունենայի ու կը խորհէի քեզ» (Զե, «Վերջին բաժակը»), նաեւ՝ «Իրենց մեկնելէն շատ ետքը տակափն կը խորհէի գիրենք» (անդ), ուր խորհիլ բային հայցական հոլով ուղիղ խնդիրը արտասովոր է: Արտասովոր է նաեւ հետեւեալին «քեզ կը տառապիմ»ը՝ Հրանդ

⁴ Հայր Արսէն Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, էջ 15:

⁵ Նկատել «ամբա»ին ուղղագրութիւնը:

Նազարեանցի մէկ քերթուածին մէջ («Ծովուն առջեւ»)։ «Ծով, անկարեկի՛ր ծով, կը սիրեմ քեզի, // **Քե՛զ կը տառապիմ** անձանձորոյք սիրով»։

Ուղիղ խնդիր առնելու յատկութենէն զուրկ նկատուած է մանաւանդ կրատրական սեռի բայը, սակայն այստեղ ալ լեզուն խախտած է այդ թումբը, եւ գոնէ արեւմտեան աշխարհաբարի մէջ, հասանաբար օտար լեզուներու ազդեցութեամբ, ունիւք հատ ու կենտ օրինակներ՝ կրատրական կամ թերեւս անդրադարձ բայի ուղիղ խնդիրի. այսպէս՝ «Ամբողջ **հարստութիւնս տարուեցայ**»⁶։ «Այս **իւղը** ամեն օր պէտք է **քսուիս**»։ «Լման **հացը բաժնուեցէ՛ք** ձեր միջեւ»։ «Աշխատանքն ու **շահը կիսուեցանք**»⁷։ «Տօներուն առթիւ նոր **զգեստ մը կարուեցայ**»։ «Կ'ատեմ կիներն, որոնք դիմացն հայկին // **Դիմաներկեր կը շաղունեն**» (ԴՎ, «Տալիթա»)։

Այսպիսիներու այլ կառոյցով փոխարինումը կ'աղաատէ մեր միտքը կամ լեզուն. օրինակ նոյն բանը չեն՝ «այս **իւղը** ամէն օր պէտք է **քսես**» (որո՛ւ, ինչի՛) կամ «այս **իւղը** ամէն օր պէտք է **քսեն**» (ովքե՛ր, որո՛ւ, ինչի՛)։ Միայն **քսուիս** կրատրականը կրնայ ցոյց տալ, որ դուն քեզի պիտի քսես զայն։ Անշուշտ կարելի էր ըսել՝ «այս **իւղը** ամէն օր պիտի քսես դուն քեզի», որ քերականօրէն ճիշտ է, բայց սա հայերէն չէ կամ առհասարակ լեզու չէ, այնքան ճապաղ է։ Եւ ճիշտ այս ճապաղութենէն խուսափելու համար ալ լեզուն կարգ մը պարագաներու օրինականացուցած է կրատրականին ուղիղ խնդիր առնելու յատկութիւնը, որ բնորոշ չէ այդ սեռին⁸։

⁶ **Տարուիլ** բային փոխարէն՝ նոյն իմաստով ու խնդրատութեամբ կը կիրարկուի նաեւ **պարտուիլ** բայը։

⁷ Չորրորդ օրինակը կը նշանակէ՝ աշխատանքը երկու հասարար մասերու բաժնեցինք, եւ իւրաքանչիւրս ստանձնեցինք անոնցմէ մէկը, այնպէս ալ՝ շահը։

⁸ Կը կիրարկուի նաեւ «**պատշաճութեան կրատրական**» ըստածը, որ յատուկ է մասնատրարար չէզոք բայերուն. օրինակ՝ «Այս աթոռին վրայ **չի նստուիր**»։ «Այս ժամուն **կը պառկուի՛**»։ «Անանկ մարդու խօսքին **չի վստահուիր**»։ «Այդ ոտքի ամաններով վեր **կ'ելլուի՛**»։ «Ատանկ մէկուն **կը հաստատացուի՛**»։ «Այս աննշան բաննէն **չի վախցուիր**»։ Հնացած է եւ խրախուսելի չէ **ըլլալ** բայի կրատրականի հետեւնալ կիրարկութիւնները. «[Արամ Սիմպիլեան] սրամտութիւն ունի եւ հաճոյքով **մտիկ կ'ըլլուի**» (ԵՕ, «Վարչութեան ծափահարները»)։ Օտեան ասով փորձած է կրատրականի վերածել «մտիկ ընել» ներգործական բայը։ Նոյնը՝ Օշականի գրիչէն. «Տէրտէրը կը բողոքէր իրենց **ըլլած** անիրաւ գրկանքին դէմ ...Բայց երբ ուշադրութիւն **ըլլուէր** իրեն...» (*Նստարիները*)։ Ինչպէս նկատելի է, այսպիսիները պատշաճութիւն մը, յարմարութիւն մը, հանրօրէն ընդունուած իրողութիւն մը կամ առանդոյթ մը կ'արտայայտեն։ Պատշաճութեան կրատրականը կը կիրարկուի ընդհանրապէս սահմանական ներկայի մէջ, շատ անելի նուազ անկատարի։ Միւս եղանակներու ու ժամանակներու մէջ անոր կիրարկութիւնը հազուադիւր է։ Նկատենք նաեւ, որ պատշաճութեան կրատրականը, մասնատրար չէզոքէ յետացածը, աննշակայ կը կիրարկուի, ինչպէս՝ **չի նստուիր, կը պառկուի՛, չի վստահուիր, կ'ելլուի՛, կը հաստատացուի՛, չի վախցուիր** եւ այլն։

Այս նորայայտ երեսյոններու կողքին մեր արդի արեւմտահայերէնը կը բովանդակէ բայեր, որոնք պատմականօրէն չէզոք եղած են, օրինակ՝ **բարեւել, կարօտնալ, հաճիլ, համարձակիլ, հանդուրծել, մտիկ ընել, յանդգնիլ, սկսիլ**⁹, **սպասել** եւ որոնք ներկայիս կ'ապրին իսկական սեռափոխութիւն մը, կամ թէ կարելի է առնուազն ըսել՝ դարձած են կրկնասեռ. այսպէս՝ **կարօտնալ մէկուն** եւ **մէկը, հանդուրծել մէկուն** եւ **մէկը, բարեւել մէկուն** եւ **մէկը, սպասել մէկուն** եւ **մէկը** եւ այլն: Գ. Զոհրասպ «Երջանիկ մահը» պատմուածքին մէջ ունի. «Տոքթորը ինքը **մտիկ կ'ընէր ամենուս**» (տրական՝ անտղակի խնդիր), իսկ քանի մը տող անդին՝ «Տեսջը կեցող տղոց պէս **մտիկ ըրինք զինքը**» (հայցական՝ ուղի խնդիր): Նաեւ՝ «Գէորգ Յովհաննէսեան եւ կողակիցը **մտիկ կ'ընէին զիս**» (Ռ. Հատտէճեան, *Մարդիկ, որոնք*, էջ 42): Խնդրառական այս գանազանութեան մէջ իմաստային նրբերանգներ փնտռելը անելորդ է. նման տարբերութիւն չկայ, եւ բերուած խնդիրները զոյգ առ զոյգ համարժէք են եւ նոյնիմաստ: Թերեւս բացառաբար **հանդուրծել** բայի խնդիրներուն միջեւ կարելի ըլլայ աննշան տարբերութիւն մը գտնել. հայցական հոլով խնդիրը քիչ մը անելի սաստկութիւն կը բովանդակէ,– որովհետեւ այս հոլովը անելի ընդգրկում կը դարձնէ իրմով արտայայտուող խնդիրը,– կը դրսեւորէ անելի զօրատր անհանդուրժողութիւն մը:

Կրկնաստեղծութիւնը կամ այլաստեղծութիւնը յաճախ կը դրսեւորուի նոյն բայի տարբերակներուն միջեւ. օրինակ՝ **կարօտնալ** ածանցատր բային կից ունինք նոյնարմատ **կարօտիլ** բայը, որ կը նշանակէ կարիքը ունենալ բանի մը, օրինակ՝ «կարօտիլ **խնամքի, աշխատանքի, առողջ սննդառութեան, ճիգի**» եւ այլն՝ միշտ ու միայն տրական հոլովով: **Կարօտնալ** կը նշանակէ զգացական բաց մը զգալ մէկուն կամ բանի մը հանդէպ. օրինակ՝ «կարօտնալ **մայրը**» (նաեւ՝ մօրը) կամ **ծննդավայրը** (նաեւ՝ ծննդավայրին): Նման պարագայ մը կը ներկայացնէ **զիջիլ** ներգործական բայը, որ կը նշանակէ սեփական կամքովը բան մը ուրիշին տալ եւ հայցական հոլով խնդիր կը պահանջէ՝ «զիջիլ **տեղը, դիրքը, պթողը, իրատունքը**», մինչ **զիջանիլ** ածանցատր ձեւը, որ կը նշանակէ հարկադրաբար հասանիլ

Հետզհետէ իբրեւ լիարժէք կրատրական կը գործածուին գանազան չէզոք բայեր. օրինակ՝ **70** զինձառայող **կը կասկածուին** ահաբեկչական կազմակերպութեան հետ կապեր ունենալու մէջ» (*Զարթօնք*, 11-10-17, էջ 1): «Յանցագործութեան մէջ **կասկածուող** Սաֆարեանը ձերբակալուած է» (*Արմէնայրես*, 17-8-18): «Մէկ խօսքով մենք միշտ **դաւաճանուած ենք** ու կոտորուած» (*Ազգակ*, 23-1-19, էջ 4): «Մեր պապերը հաւատացին այս բողոքին, **այցուեցան** ու մենք մեր կարգին կ'այցուիք իրենց նման» (*«Ազգակ»*, 22-3-19, էջ 5):

⁹ Այս բային համար Այտընեան կու տայ հետեւեալ օրինակները՝ **Գրերու սկսաւ ... Սկսաւ գրել**, այլ խօսքով՝ նախադաս դիրքով՝ խնդիրը տրական է, յետադաս դիրքով՝ ան հայցական է: Նաեւ՝ **Կամքերնին կատարելու հաճեցաւ...Հաճեցաւ կամքերնին կատարել** (Այտընեան, էջ 222):

նոսաստացուցիչ համարուած բանի մը, չի կրնար հայցական հոլով ուղիղ խնդիր առնել, այլ կը պահանջէ տրական հոլով խնդիր՝ «զիջանիլ մէկուն, կացութեան մը, առաջարկի մը, նպաստի մը» եւ այլն:

Համարձակել, յանդգնիլ եւ յօժարիլ պատմականօրէն չէզոք սեռի բայեր են եւ տրական հոլով խնդիր կը պահանջեն կամ կը պահանջէին. օրինակ՝ «կը համարձակիմ առարկելու» եւ «կը յօժարիմ զիջելու», որոնք սակայն այլեւ ծանր կը հնչեն, եւ մենք հակուումնինք կիրարկելու **համարձակիլ առարկել եւ յօժարիլ զիջիլ** խնդրային բաղադրեալ ձեւերը:

Զբաղիլ բայը նախաեղենեան հեղինակներէն շատերու գրիչին տակ տրական հոլով խնդիր առած է¹⁰. օրինակ՝ «Գահի մը վրայ, որուն լայն թիկնատեղն է քանդակուած // Բագոսը՝ եզ մ'որթերով **պսակելու զբաղած**» (ԴՎ, «Հարճը»): «Ամէն մարդ իր **գործին զբաղելու** երեսոյ՞ ոմէր» (ԵՕ, 12 *փարի...*): «Հաստափոր մսագործ մըն էր՝ պանան մը **ուտելու զբաղած**» (ՇՇ, *Նահանջը...*): «Անոնք շրթունքնին **ներկելու** էին **զբաղած**» (անդ): «Պանդոկապետոսին դեղձանիկին ջուրը **փոխելու** էր **զբաղած**» (անդ): Անշուշտ նոյն օրերուն կանոնական գործիական հոլով կիրարկողներ ալ կային. օրինակ՝ «Ապագային անելի շահաբեր **գործով մը զբաղելու** դիտումով» (Երովսան, «Զուկի փոխարէն»):

Երբեմն գեղարուեստական մտահոգութեամբ կամ անծանօթ պատճառներով հոլովական փոփոխութիւն կը կրէ շատ կայուն խնդրատութիւն մը. օրինակ՝ «Սիրտս նման է էն փլած **տներ**» («Անտունի») կամ «Հաստանը այսօր թոնիրի **հաց** կը նմանի» (ԱՄ, *Նոր Հայաստան...*, էջ 13), նաեւ մանկական ծանօթ երգը՝ «Կարմիր **խնձոր** կը նմանի...», կամ Նահապետ քուլակի հետեւեալ տողը. «Երեսդ է **լուսին** նման», – ուր **տներ, հաց, խնձոր** եւ **լուսին** հայցականները պէտք է դրուէին տրական հոլով:

Ունինք նաեւ բայեր, որոնք նմանապէս կրկնակի սեռ ոմին, ընդհանրապէս իրենց հիմնական իմաստին կից նոր իմաստի մը յառաջացումին բերումով, որ պատճառ կը դառնայ տարբեր հոլով խնդիրի մը պահանջին, իսկ երբեմն ալ տարբեր խնդիր կը պահանջէ՝ առանց սեռը փոխելու:

Այժմ այբբենական շարքով ներկայացնենք բայեր, որոնք կրկնակի խնդրատութիւն կը պահանջեն:

* **Ամչնալ**

Կ'առնէ բացառական եւ տրական հոլով անտողակի խնդիրներ, նայած խնդիրի բնոյթին: Երբ խնդիրը գոյական անուն է, ապա բացառական հոլով կը դրուի ան. օրինակ՝ «կ'ամչնամ **տնօրէնէն**», «կ'ամչնար **ըսածէն**» եւ

¹⁰ Յիշեալ տրական հոլով խնդիրը ընդմիշտ անհետացած է ներկայիս, եւ բայս միայն գործիական հոլով խնդիր կ'առնէ՝ **զբաղիլ պսակելով, գործով, խաղով, ընթերցումով, քարոզչութեամբ**:

այլն: Իսկ երբ անորոշ դերբայ է, տրական հոլով կը դրուի խնդիրը¹¹. Օրինակ՝ «կ'ամչնամ **երգելու**», «կ'ամչնար երեսիս **նայելու**» եւ այլն: Որքան ալ արեւմտահայերէնին խորթ թուի, արեւելահայերէնը կրնայ այս բային տրական հոլով խնդիրը հայցական եւս կիրարկել. օրինակ՝ «Ամաչում եմ կրկին նրան դիմել...» (Ստ. Մալխասեան):

*** Այցելել (նաեւ դառնալ եւ վերադառնալ)**

Այս բայը չէզոք է¹² եւ ունի երկու տարբեր շատ ծանօթ խնդրատու-թիւններ:

Անձի անուններու հետ ան կ'առնէ տրական հոլով անտղղակի խնդիր եւ կը պատասխանէ որո՞ւ հարցումին. օրինակ՝ այցելել **հիւանդի, բարեկամի, ընկերոջ, ուսուցիչի** եւ այլն: Այս խնդրատութիւնը ենթակայ է յաճախակի խանգարումներու. օրինակ՝ «**Ձիս** առաջին այցելողը եղաւ վիրահատող բժիշկը» (*Կամար*, թիւ 22, էջ 32). «Սիւլեյման **զինք** կ'այցելէ բանտին մէջ» (Եր. Քասունի, *Քնն. տես.*, էջ 482). «Յովհաննէս առաջին անգամ **զինք** այցելեց» (անդ, 508): Ասոնք անգլերէն կամ ֆրանսերէն մտածուած խնդրատութիւններ են:

Իսկ *տեղի անուններու հետ* կ'առնէ հայցական հոլով լրացում մը, որ խնդրային չէ, այլ պարագայական եւ կը պատասխանէ ո՞ր հարցումին. օրինակ՝ «այցելել **դպրոց, եկեղեցի, հիւանդանոց, Հայաստան**» եւ այլն: Ընդգծուած վերջին չորս լրացումները տեղի պարագաներ են: Պէտք է նկատել, որ տեղի պարագաները չեն կրնար յօդով կիրարկուիլ. չ'ըստփր «այցելել դպրոցը» կամ «եկեղեցին». այս արգելքը կը վերնայ, եթէ **դպրոցը** եւ **եկեղեցին** ունենան իրենց լրացումը. օրինակ՝ այցելել **նոյն** դպրոցը, այցելել **այս** եկեղեցին: Բայանունը իր կարգին կը պահէ նոյն խնդրատու-թիւնները՝ այց **հիւանդին** եւ այց **դպրոց**:

Այցելութիւն տալ յարադրական բային խնդրատութիւնը անձի պարագային բոլորովին կը նոյնանայ **այցելել** համադիր ձեւի խնդրատութեան հետ. օրինակ՝ այցելութիւն տալ **հիւանդին**: Տեղի պարագայի խնդրատու-թիւնը երկփեղկուած է. օրինակ՝ «այցելութիւն տուինք **Ճեմարան** եւ **Ճեմարանին**, **հիւանդանոց** եւ **հիւանդանոցին**»: Տրական հոլովը խրախուսելի չէ, սակայն **տալ** բային ներկայութիւնը պատճառ կը դառնայ նման խնդրատութեան:

Այցելելի խնդրատութիւնը ունին նաեւ **դառնալ** եւ **վերադառնալ** բայե-րը. իբրեւ անձ մտածուած լրացումը կը դրուի տրական հոլով՝ «դառնալ-

¹¹ Անորոշ դերբային տրականը, խորքին մէջ, հետաւոր բացատրական մըն է (տեսնել այս առնչութեամբ զգուշանալ բային խնդրատութիւնը):

¹² Յ. Օշական ազատօրէն կ'օգտագործէ **այցուիլ** եւ **յաճախուիլ** կրատրականները. իրեն կը հետեւին ուրիշներ եւ: Եւ առ այս ան ունեցած է բազմաթիւ հետեւորդներ:

վերադառնալ սիրելիներուն, ընտանիքին, կողակիցին» եւ այլն, «դառնալ-վերադառնալ տուն, գործատեղի, հայրենիք» եւ այլն:

*** Ապրիլ**

Քնութեամբ կամ բուն իմաստով չէզոք է, եւ իբր այդպիսին ի վիճակի է իր արմատը կամ հոմանիշ մը իբրեւ ներքին խնդիր աննելու, ինչպէս՝ «Ան ապրեցաւ երջանիկ կենանք մը»: Սակայն կ'ըստի նաեւ՝ «ապրիլ ուրախ ժամեր, վիշտ, խնդութիւն, յուսախաբութիւն» եւ այլն, որոնք այլեւս ներքին խնդիր ըլլալէ հեռու են եւ կը մտենան իսկական ուղիղ խնդիրի: Նման պարագաներով խօսողը **ապրիլ** բայը կ'ըմբռնէ իբրեւ **զգալ**, եւ այս վերջինին յարմարող խնդիներն ալ կու տայ անոր, որ մեքենաբար կը մտածուի նաեւ իբրեւ ներգործական բայ՝ **զգային** պէս, օր. «Չգրեց գիրքերու մասին, բայց **ապրեցաւ զանոնք**» (Մ. Իշխան, *Իմ ուսուցիչներս*, էջ 80):

*** Աջակցիլ, ընկերակցիլ, ծայնակցիլ**

Այս երեք բայերը կ'առնեն տրական հոլով անտղակի խնդիր՝ առանց **հետ** յետադրութեան. օրինակ՝ «Անդրանիկ մանչը կ'աջակցի **հորը**»: «Զբօսավարը պիտի ընկերակցի **հիւրերուն**»: «Հանդիսականները ծայնակցեցան **երգիչին**»:

Իսկ **խորհրդակցիլ, խօսակցիլ, կենակցիլ, հաղորդակցիլ, նամակցիլ** կը պահանջեն տրական հոլով խնդիր՝ **հետ** յետադրութեամբ հանդերձ. օրինակ՝ **խորհրդակցիլ տնօրէնին հետ**, **խօսակցիլ ընկերներուն հետ**, **կենակցիլ սիրուիին հետ**, **հաղորդակցիլ նորակոչիչներուն հետ**, **նամակցիլ ծնողքին հետ**: «Հետ» կապը անհրաժեշտ է, քանի կ'ակնարկուի գործողութիւններու, որոնք չեն կրնար միակողմանի տեղի ունենալ:

*** Առնչուիլ**

Գրեթէ մնայուն սխալագրութեան առարկայ է՝ իրեն անտեղի կցուող **հետ** յետադրութեան պատճառով. արդարեւ՝ շատ-շատեր կ'ըսեն «Կ'առնչուի անոր հետ, այս սովորութեան հետ»,– ուր **հետը** անելորդ է. այլ խօսքով՝ այս բայը կը պահանջէ մաքուր տրական հոլով խնդիր. «Ակնարկութիւնս կ'առնչուի վերջին **նկատողութեանդ**». «Անոր մտահոգութիւնը կ'առնչուի բու համալսարանական **ուսմանդ**»: Գերբայական ձեւերը կը պահեն նոյն խնդրատրութիւնը. «Այս **դասին** առնչուող հարցեր ունի՞ք»:

Միա կողմէ՝ ունինք **առնչութիւն ունենալ** յարադրական կազմութիւնը, որ իրօք կը պահանջէ **հետ** յետադրութիւնը. «Քու հարցումդ առնչութիւն չունէր օրոտան **դասախօսութեան հետ**». «Մենք որեւէ առնչութիւն չունինք այդ **մարդոց հետ**»: «Անոր առնչութիւնը նման **շրջանակի հետ** կրնայ սուղ արժեղ իրեն»:

Ունինք վերջապէս **առնչել** եւ **առնչակից դարձնել** ներգործական բայերը, որոնք հայցական հոլով ուղիղ խնդիրին կողքին կ'առնեն նմանապէս տրական հոլով անտղակի խնդիր՝ առանց **հետի**. «Այս հարցը մի՛ **առն-**

չէք մեր ունեցած վէճիկ». «Չեմ ուզեր, որ զինք **առնչակից դարձնէք** մեր **սակարկութիւններուն»:**

Հետեւեալին մէջ՝ «Ինք շփումի մէջ է այս **հարցին հետ առնչուած** բոլոր կողմերուն **հետ»** (Մամուլ), առաջին **հետը** անլորդ է:

* Արգիլել

Կ'անէ հայցական հոլով ուղիղ խնդիր մը, որ ընդհանրապէս անունն է արարքի մը, եւ տրական հոլով անտղակի խնդիր մը, որ անունն է այդ արարքի հեղինակին. օրինակ՝ «Ապահովութեան ուժերը արգիլեցին **ցուցարարներուն** հրապարակ **մտնել».** «Բժիշկը արգիլեց **հիւանդին** օդի **խմել»:**

Ուրեմն ճիշտ չէ կիրարկուած հետեւեալը. «Ցուցարարները փորձեցին արգիլել **բանալը** այդ դրօշները վար **առնել».**– որ մաքուր ֆրանսաբանութիւն կամ անգլիաբանութիւն է, անշուշտ թերի ըմբռնուած՝ երկուքն ալ: Հայեցի մտածողութեամբ՝ պէտք է ունենայինք. «Ցուցարարները արգիլեցին (որո՞ւ) **բանակին** (ի՞նչ) այդ դրօշները վար **առնել»:** Այնպէս ալ սխալ է՝ «Իմ ամբողջ գուրգուրանքը, յարգանքը՝ այդ յուշագրական հաւաքումներուն գնահատումին շուրջը, **զիս** չեն կրնար արգիլել **արտայայտելու** իմ խորունկ ցաւը...» (Օշական, *Սփիտըը եւ իրաւ բանաստեղծութիւնը*),– ուր պէտք է ունենայինք՝ «**ինծի** չեն կրնար արգիլել **արտայայտել...**»: Սխալ է նաեւ՝ «Վախկոտութիւնը **զինքը** արգիլեց շուկայ **երթալէ»** (Օշական, *Խոնարհները*, էջ 207): Նոյն սխալ կիրարկութիւնը. «Բայց այս չ'արգիլեր **մեզ յայտարարելէ** ինչ որ մեր խիղճին վրայ ճշմարիտ կը հաւատանք» (Գ2, Կնոջ իրաւունքները–Մայտա)– որ պէտք է տար՝ «չ'արգիլեր **մեզի յայտարարել**»: Նաեւ՝ «Եւ եթէ չի տար, ո՞վ կ'արգիլէ **զինք** տալէ» (Մ. Թէօլէօբեան, *Դար մը գրականութիւն*, էջ 130), – որ պէտք է ըլլայ «կ'արգիլէ իրեն տալ»: «Բժիշկները արգիլեցին **զիս** դպրոց **երթալէ»** (Ենովք Արմէն, «Կիւնը», 6). Այսինքն՝ «...արգիլեցին **ինծի** դպրոց **երթալ**»: Նաեւ՝ «Ան չէր կրցած **ինքզինք** արգիլել անդիմադրելի ցաւ մը **զգալէ»** (Հատուծեան, *Պրոյդ մը հայոց լեզուի բառարանին մէջ*, Բ., էջ 63).– ուր սխալ կիրարկուած են **ինքզինք** եւ **զգալէ** խնդիրները. պէտք է ունենայինք. «Ան չէր կրցած արգիլել **ինքնիրեն** անդիմադրելի ցաւ մը **զգալ**»: Նոյն տրամաբանութեամբ՝ «**Աշակերտներուն** արգիլուած է ոսկեղէն **կրել**»: «**Հաւատացեալներուն** կ'արգիլուի խոզի միս **ուտել**»: «**Այցելուներուն** կ'արգիլուի միջանցքներուն մէջ **ծխել**»: «**Քրիստոնեային** արգիլուած էր կարմիր **կօշիկը**» եւ այլն:

* Արտօնել (նաեւ՝ թոյլատրել)

Ներգործական է եւ իր այս սեռով կիրարկութիւնը գրեթէ ոչ մէկ հարց կը յարուցէ: Սովորաբար կ'անոնէ երկու լրացում՝ հայցական հոլով ուղիղ խնդիր եւ տրական հոլով անտղակի խնդիր. օրինակ՝ «Այդ **պերճանքը** չեմ արտօներ **քեզի**»: «Հայրը **աղջկանը** չարտօնեց **ամուսնանալ** մարին հետ»:

Խնդրայարոյցը այս բային կրտսրական կիրարկութիւնն է. այս պարագային եւ ըստ հայերէնի քերականութեան սեպուի կանոններուն՝ ներգործական բայի ուղիղ խնդիրը պէտք է դառնայ ենթակայ, մինչ անուղղակի խնդիրը կը շարունակէ մնալ նոյնը. ուրեմն՝ «Այդ **պերճանքը** արտօնուած չէ **քեզի**» եւ «Սիրածին հետ **ամուսնանալ** արտօնուած չէր **աղջկան**»: Այս բոլորը հաշտ են մեր լեզուական բարբերուն հետ, եւ առհասարակ այսպէս այ կը կիրակոփ բայս:

Սակայն շատ յաճախ կը հանդիպինք ձեքծեքուն եւ ոչ-հայեցի, այլեւ սխալ կիրարկութեան մը, որ է անուղղակի խնդիրի ուղղական հոլովին իբրեւ ենթակայ կիրակութիւնը. այսպէս՝ «**Աղջիկը** չարտօնուեցաւ **ամուսնանալու** մաբին հետ»: «**Ես** արտօնուած չեմ **ճամբորդելու**»: «**Դուն** արտօնուած ես **մասնակցելու** մրցաշարքին»: «**Մեր աշակերտները** արտօնուեցան **ներկայանալու**»: «**Մենք** արտօնուած չենք ձեզ **ընդունելու** այս հասարակութիւն»: «**Ձեր ոչխարները** արտօնուած չեն **արածելու** այս արօտին վրայ»: Ասոնք բոլորը մերժելի կառոյցներ են: Բոլոր օրինակներու ուղղական հոլով ենթակաները պէտք է վերածուին տրական հոլով անուղղակի խնդիրի. օրինակ՝ «**Մեր աշակերտներուն** արտօնուեցաւ **ներկայանալ**», «**Ձեր ոչխարներուն** արտօնուած չէ **արածիլ...**» եւ այլն, իսկ տրական հոլով անորոշ դերբայները պէտք է դրոփն ուղղական հոլով:

Բոլորովին տարբեր խնդրատութիւն ունի «արտօնութիւն ունենալ» յարադրաւոր ձեւը. վերը մերժուած խնդրատութիւնը կիրարկելի է ահա ասոր հետ. օրինակ՝ «**Աղջիկը արտօնութիւն ունեցաւ ամուսնանալու** մաբին հետ»: «**Ես արօնութիւն չունիմ ճամբորդելու**»: «**Դուն արտօնութիւն ունիս մասնակցելու մրցաշարքին**» եւ այլն:

Տարբեր խնդրատութիւն ունի «արտօնելի ըլլալ» բաղադիր ձեւը, որ բերուած օրինակներուն հետ պիտի տայ. «**Աղջկան արտօնելի է ամուսնանալ մաբին հետ**» եւ այլն:

Ուրեմն նախորդին ենթական (աղջիկը) վերածուեցաւ տրական հոլով անուղղակի խնդիրի՝ աղջիկին, իսկ տրական հոլով անուղղակի խնդիրը (ամուսնանալու) վերածուեցաւ ուղղական հոլով ենթակայի՝ ամուսնանալ: «Թոյլատրել» հոմանիշը իր խնդրատութեամբ բոլորովին կը նոյնանայ **արտօնելին** հետ, իսկ «թոյլտութիւն ունենալը»՝ **արտօնութիւն ունենալին** հետ:

Արտօնել, թոյլատրել եւ թոյլ տալ նոյնանիշ ներգործականներ են, մինչ առաջին երկուքը անվերապահօրէն հայցական հոլով ուղիղ խնդիր կ'առնեն կամ պէտք է առնեն՝ «արտօնեցին, թոյլատրեցին **մեկնիլ**», երրորդը տատանումներ ցոյց կու տայ, այսինքն՝ հայցական հոլով ուղիղ խնդիրի կողքին կ'առնէ՝ նաեւ տրական հոլով անուղղակի խնդիր, ինչպէս՝ «թոյլ տուին **մեկնելու**». այսպէս է, որովհետեւ ասոր մէջ **տալ** բային ներկայութիւնը այդպէս կը թելադրէ, բայց մանաւանդ զայն կը թելադրէ ֆրանսերէնը՝ **permettre de...**

* **Գոհանալ**

Գոհ կը նշանակէ հաճ, հաշտ, հաւան, յօժար: Այս նշանակութեամբ՝ այս ածականը ու իրմով կազմուած բաղադրեալ ստորոգիչները կը պահանջեն բացառական հոլով խնդիր. օրինակ՝ «Ան գոհ էր իր **ունեցածէն**»: «**Ստացածէն** գոհ մնալով՝ շնորհակալութիւն յայտնեց ու հեռացաւ»: «Այս **պաշտօնեայէն** բոլորս ալ գոհ ենք»: Այսինքն՝ բացառուած է գործիական հոլովի կիրառումը:

Գոհանալ բայը աշխարհաբարի մէջ կրած է որոշ իմաստային ներդաշնում եւ այլեւս գոհ դառնալ չի նշանակեր, ինչպէս կը նշանակէր գրաբարի մէջ¹³, այլ կը նշանակէ բասարարօիլ, լիանալ եւ այս նշանակութեամբ կ'առնէ գործիական հոլով խնդիր. «Ղազարոս կը գոհանար մեծատունի սեղանին **փշրանքներով**»: «Մենք գոհացած ենք տրուած **բացատրութեամբ**»: «Գայլը մէկ **ոչխարով** չէր գոհացած, փարատած էր երեք ուրիշներ»: Այս օրինակներուն մէջ ալ բացառականի կիրարկութիւնը ընդունելի չէ:

* **Դժգոհ-դժգոհիլ**

Կ'առնէ երկու տարբեր խնդիրներ՝ վերաբերութեան՝ բացառական հոլով, եւ յանգման՝ տրական հոլով:

Դժգոհ ածականն ու **դժգոհիլ** բայը հաւասարապէս կ'առնեն վերաբերութեան խնդիր. օրինակ՝ «Ան **դժգոհ** է իր **մեծատրէն**»: «Ան կը **դժգոհի** իր **մեծատրէն**»¹⁴: Ընթացիկ սխալ մըն է «մասին» կապով կատարուած խնդրառութիւնը, ինչպէս՝ «Ան **դժգոհ** է իր **մեծատրին մասին**» ու մանաւանդ «Ան կը **դժգոհի** **մեծատրին մասին**», – անելի տարածուած է այս վերջին սխալը: Վերաբերութեան խնդիրին յաճախ կը զուգադրուի յանգման խնդիր մըն ալ. օրինակ՝ «Ուսուցիչը ստացած **արդիւնքներէն** **դժգոհեցաւ տնօրէնին**»:

Տեսնել նաեւ **գոհ-գոհանալ**:

* **Զարնել**

Բուն իմաստով կը նշանակէ «հարուած տալ», եւ իր այս իմաստով չէզոք է ու կ'առնէ տրական հոլով խնդիր՝ «զարնել **մէկուն, բանի մը, զլսուն**»: Եր չէզոք կիրարկութեամբ կը նշանակէ նաեւ պատահմամբ կամ առանց մասնատր ճիգի տեսնել, նկատել եւ կը պահանջէ դա՛րձեալ տրական հոլով անուղղակի խնդիր. օրինակ՝ «Անցորդին փողկապը **աչքիս** զարկաւ»: «Յուցափեղկի պուպրիկը **աչքին** զարկաւ»: Այս ի-

¹³ Գրաբարը համատարած կը կիրարկէր պատմական բացառականը. «Մեծապէս գոհ էր **զառնէս զայսմանէն**»: «Գոհանամք **զքէն**, Տէր Աստուած մեր» կամ «Գոհանամք **զմանէն**»: Գործիական հոլով խնդիրը կը թօփ ընդմիջու բացառուած չլլայ. « Ոչ միայն նորս գովիցին, այլև Աստուած գոհ **նովլաւ** լինիցի» (*Նոր հայկազնան բատարան*):

¹⁴ Այս բացառականը կը համապատասխանէ գրաբարի պատմական հոլովին՝ **զմեծատրէն**:

մաստին կամ իմաստներուն կողքին ժամանակի ընթացքին զարնել բայը սկսած է ըմբռնուիլ նաեւ իբրեւ «թիրախ դարձնել, որսալ, սպանել», եւ որովհետեւ այս վերջինները ներգործական են, ապա «զարնել»-ը եւս իր այս նոր իմաստով մտածուած է իբրեւ ներգործական, որով դիպուատ կրնայ հայցական հոլով ուղիղ խնդիր անել. օրինակ՝ «Գողը զարկաւ զինք հալածող **ուսիկանը** եւ սպանեց զայն»: «Որսորդը **այծեամ** մը զարկաւ»: Կ'ըստի նաեւ՝ «**դուռը** զարնել», ինչպէս նաեւ «**զանգը** զարնել», ուր բայս մտածուած է իբրեւ «թակել» եւ «հնչեցնել»: Ան կը նշանակէ նաեւ առարկայով մը հարուած տալ այլ առարկայի մը, եւ այս պարագային դա՛րձեալ ներգործական է եւ կ'անէ հայցական հոլով ուղիղ խնդիր մը, բայց ասոր կողքին տրական հոլով անտղղակի խնդիր մըն ալ. օրինակ՝ «**ոտքը քարին** զարնել», «**ծեռըը զլխուն** զարնել», «**ծնծղանները իրարու** զարնել» եւ այլն:

«Խփել» բայը, – որ սակաւ գործածութիւն ունի արեւմտահայերէնի մէջ, – իր լայն գիծերով հոմանիշ է **զարնելին** եւ ունի նոյն խնդրատութիւնը՝ «զարնել-խփել **մէկուն, ծունկին**», «զարնել-խփել **տատրակ մը**», «զարնել-խփել **քարին**», «ծեռըը զարնել-խփել **դռան**», «գլուխը **պատռ-պատ** զարնել-խփել» եւ այլն: Չ'ըստի սակայն դուռը կամ զանգը խփել:

«Հարուածել» հոմանիշ է նախորդ երկուքին՝ երկփեղէ նշանակութեամբ. ա) **վնասել, պատուհասել, քանդել, կտորրել** իմաստով կ'աննէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ «կայծակը **կը հարուածէ կաղնին**», «կարկուտը **կը հարուածէ բուսականութիւնը**», այլեւ՝ «հարուածել թշնամիին յառաջապահ **թելը**», «հարուածել **միջնաբերդը**» եւ այլն: բ) Փոխաբերական իմաստով՝ կը նշանակէ բարոյական **վնաս պատճառել, չարախօսել, վատաբանել, բամբասել, նուաստացնել** եւ այլն. այս իմաստով նմանապէս հայցական հոլով խնդիր կ'աննէ. օրինակ՝ «հարուածել **հակառակորդը, ընդդիմախօսը, գրչակները**» եւ այլն: գ) հարուած տալ նշանակութեամբ կ'աննէ տրական կամ բացառական հոլով անտղղակի խնդիր. օրինակ՝ «հարուածել **զլխուն, մէջքին**» կամ «հարուածել **թիկունքէն, ճակատէն**» եւ այլն:

* **Զգուշանալ, վախնալ, սարսափիլ**

Վաղ գրաբարեան օրերէն ունեցած է երկու զատորոշ նշանակութիւններ. ա) խուսափիլ, խոյս տալ, վախնալ. բ) ուշադիր ըլլալ, հսկել, գոյգոյրալ: Աշխարհաբարը կը պահէ այս զոյգ իմաստները:

խուսափիլ, խոյս տալ, վախնալ իմաստով կ'աննէ բացառական հոլով խնդիր թէ՛ անձի, թէ՛ իրի պարագային. օրինակ՝ «**Զգուշացի՛ր անկէ** եւ **զգուշացի՛ր անոր հետեւելէ**»: «**Զգուշացի՛ր փողոցի քսակահատներէն ու գիշերային գողերէն, ճամբու փոսերէն, անտառի ծուղակներէն**»: Սակայն անորոշ դերբայի պարագային այս խնդրատութիւնը ցոյց կու տայ երկփեղկումի նշաններ. օրինակ՝ **Զապել Եսայեան** ունի տրական հոլովի խնդրատութիւն մը. «Կը **զգուշանայի քեզի նայելու**» («Վերջին բաժակը»): «Անոնք

կը զգուշանային մարդոց մէջ **ելլելու**: Այս երկփեղկումը, այսինքն՝ անորոշ դերբայի տրականածու կիրարկութիւնը, ունի իր բացատրութիւնը. այս տրականը, խորքին մէջ, կը համապատասխանէ գրաբարի բացառականին, որ է **«ի նայելոյ»**¹⁵. այս կառոյցն է, որ ժամանակի ընթացքին կորսնցուցած է ի նախդիրը, իսկ **նայելոյ** իր կարգին դարձած է **նայելու**: Այտընեան այսպիսիները կը կոչէ «աննախդիր բացառական»¹⁶: Անդին՝ արեւմտահայերէնին համար խորթ է հայցական խնդրատութիւնը. օրինակ՝ **«Պոմպէլու կը զգուշանար պարթեաց հետ զարնուիլ»** (*Բազմավէպ, 1912*, յունտար, էջ 17ա): Իսկ արեւելահայերէնին համար գրեթէ սովորական է հայցականը. «Նա զգուշացաւ **գովել** եզնիկին...» (Դերենիկ Դեմիրջեան):

Խոսափիլ նշանակութեամբ՝ կ'առնէ բացառական հոլով խնդիր. **«Զգո՛ւ շողի անառակ ընկերներէ»**. **«Զգո՛ւ շողք կեղծ բարերարներէ»**: **«Զգու չի դրացիիս շունէն»**:

Ուշադիր ըլլա, հսկէ, հոգալ նշանակութեամբ կ'առնէ տրական հոլով խնդիր. օրինակ՝ **«Զգու շողի ծախսերուդ»**. **«Զգու չի շրջապատիս բամբասանքներուն»**. **«Զգու չգտնուեցար սպառնացող վտանգին»**: Այս տրականը հաւանաբար վաղեմի կապական լրացումի մը յապատումով յտաջացած է. այսինքն՝ **ծախսերուդ հանդէպ, բամբասանքներուն հանդէպ, վտանգին հանդէպ** դարձած են սոսկական տրականներ:

Այս երկփեղկեալ խնդրատութիւնը անելի շեշտուած է **վախնալ** բայի պարագային. անուանական խնդիրը միշտ բացառական է՝ **«կը վախնայ ինձմէ, քեզմէ, իրմէ»**, **«վախնալ թշնամիէն, փորձանքէ, չարախօսութենէ»**, սակայն անորոշ դերբայի հետ տրական հոլովը բացառուած չէ. այսպէս՝ **«վախնալ գրելու-գրելէ, ըսելու-ըսելէ, յայտնելու-յայտնելէ, խոստովանելու-խոստովանելէ»** եւ այլն. **«Կը վախնամ այդ բոլորը քեզի ըսելու»**: «Ես ալ ասոր համար է, որ **կարգունելու կը վախնամ»** (ՅՊ, *Մեծապատիւ մորացկաններ*): Անշուշտ այս պարագային եւս անսովոր է հայցական խնդրատութիւնը. օրինակ՝ **«Կը վախնամ շատ զէջ ծառայութիւն մը մատուցած ըլլալ ձեզի»** (ԵՕ, «Փանջունի Թարսուսի մէջ»):

Գալով **սարսափիլ** բային, այս մէկը, որքան ալ հոմանիշ ըլլայ **վախնալին**, միայն բացառական հոլով խնդիր կ'առնէ. օրինակ՝ **«սարսափիլ թշնամիէն»**, **«սարսափիլ առերեսուելէ»**:

Տեսնել նաեւ **ամչնալին** խնդրատութիւնը:

* Ընդօրինակել

Ներգործական բայ է եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ **«ընդօրինակել հատուած մը, նամակ մը»**, հետեւելու իմաստով՝ **«ընդօրինակել շարժումները, հագուկապը»**: Երբ հետեւողութիւնը մէկուն

¹⁵ «Ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յաղանդոյ». «Զգուշանալ ի կոոց զոհելոյ» (*Նոր հայկագեան*):

¹⁶ Այտընեան, էջ 222:

հանդէպ շատ զօրատր է կամ ընդհանրական, կարելի է ըսել նաեւ «**ընդօրինակել ընկերը, ուսուցիչը**» եւ այլն: Իսկ ընդօրինակութեան առարկային ծագումնաբանութիւնը կամ աղբիւրը ցոյց տուող խնդիրը կը դրոյժ բացառական հոլով. օրինակ՝ «Այս նիստուկացը ան ընդօրինակեց **դպրոցէն**»: «Նոտագիրը ընդօրինակեցի **ճաշացուցակէն**»: «Նման ոճ մը կարելի էր ընդօրինակել միայն **իրմէ**»: Բաղդատել՝ «Փոքրը հակամէտ է ընդօրինակելու մեծ **եղբայրը**» եւ «Փոքրը հակամէտ է ուսելու ձեռք ընդօրինակելու մեծ **եղբօրմէն**»:

* **Ընտելանալ**

Չէզոք բայ է եւ միայն տրական հոլով խնդիր կ'առնէ, ինչ բնոյթ ալ ունենայ ան. օրինակ՝ «ընտելանալ **աշակերտներուն, դպրոցին, պայմաններուն**» եւ այլն. «Նորապսակները շուտով ընտելացան իրենց նոր **հարազատներուն**»: Պէտք է մասնատրաբար խոսափիլ **հետ** կապի գործածութենէն, ինչպէս՝ «ընտելացայ նոր **խոհարարին հետ**»: Հոն ուր ընտելացումը փոխադարձ է, բայս կ'առնէ փոխադարձ դերանուն տրական հոլով խնդիր. օրինակ՝ «ընտելանալ **իրարու**»: Սխալ խնդրառութիւն կիրարկած է Րաֆֆի հետեւեալին մէջ. «Կարծես թէ նա ընտելացած լինէր իւր անմխիթար վիճակի **դաժանութեան հետ**»:

* **Թափանցել**

Ունի այլազան խնդրառութիւններ.

ա) Հասնելու եւ մտնելու իմաստով՝ ան կ'առնէ հայցական հոլով լրացում. օրինակ՝ «Ան անզգալաբար թափանցեց մեր **շարքերը**»: «Այս խորթ բարբերը թափանցեցին նաեւ մեր **երկիրը**» եւ այլն:

բ) Մէկ կողմէն միւր անցնելու իմաստով՝ կ'առնէ բացառական հոլով լրացում, երբեմն՝ կապական. օրինակ՝ «Արեւին լոյսը չէր կրնար թափանցել սաղարթներուն **մէջէն**». «Հուլը կը թափանցէր պատուհանին **ճեղքերէն**» եւ այլն:

գ) Մտնելու, անցնելու, հասնելու իմաստով՝ ան կ'առնէ տրական հոլով խնդրային լրացումներ. օրինակ՝ «Յուրտը **ոսկորներուս** թափանցեց»: «Ի զուր կը փորձէր թափանցել տիեզերքի **զաղտնիքներուն**»: «Ջուրը ամէն **թաղիքի** չի կրնար թափանցել»:

Այս բայը չէզոք սեռի է. այս իրողութիւնը կը հաստատէ Ակադեմիայի քառահատոր բառարանը եւս. այսուհանդերձ ահա կրատրական սեռի կիրարկութիւններ. «Կը հանեմ ականջի սպունգներս, քաղաքի խժալուր աղմուկով **կը թափանցուիմ**» (Յակոբ Պալեան, *Մարդը ժամանակին հետք*, էջ 679): «Քաղաքները **թափանցուած են** արդիականութիւն համարող հսկայ շէնքերով» (անդ, էջ 78): «Յետոյ մոռցայ ամէն ինչ եւ **թափանցուցայ** Դուրեանի յիշատակով» (Չապել Եսայեան):

* **Թոյլատրել**

Ունի **արտօնել-արտօնուիլ** բայերու խնդրառութիւնը:

* **Լսել**

Քնությանը ներգործական բայ է եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր, օրինակ՝ «լսել երգ, աղմուկ, պատմութիւն» եւ այլն, որոնք բոլորն ալ ծայն կ'ենթադրեն: Իբրեւ ուղիղ խնդիր կրնայ առնել անձի անուն եւս. օրինակ՝ «Քեզ չեմ լսեր», որ կը նշանակէ՝ «քու ծայնդ», նաեւ՝ «Բոլորս ալ պետք ունէիք **գիրար լսելոս**» (ՎՎ, էջ 383): Բայց **մտիկ ընելու, անսալու, հասանելու, հնազանդելու** իմաստով ի վիճակի է առնելու նաեւ տրական հոլով անուղղակի խնդիր, ինչպէս՝ «զտել **մէկուն, ծնողքին, ընկերոջ**»:

* Խնայել

Հիմնական նշանակութիւնն է՝ որեւէ նիւթ կամ նիւթական միջոց ժուժկալութեամբ գործածել՝ զգուշանալով յոմպէտս սպառելէ, վատնելէ, մսխելէ: Կամ թէ բնաւ ալ չգործածել եւ մէկ կողմ դնել զայն: Իր այս իմաստներով՝ բայս ներգործական սեռի է եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ «**ջուրը, դրամը, փամփուշտը** խնայել», «հարիւր **ոսկի** խնայել» եւ այլն. այս կիրարկութիւններուն հոմանիշ է «խնայողութեամբ գործածել» բառակապակցութիւնը:

Ան կրնայ նշանակել նաեւ առկախել որեւէ մտադրութիւն, ի գործ չդնել զայն, հրաժարիլ անկէ, եւ այս պարագային կ'առնէ կրկնակի խնդիր՝ ուղիղ՝ հայցական, եւ անուղղակի՝ տրական հոլով. օրինակ՝ «Դաւիթ առաջին երկու **հարուածները** խնայեց **Մարամիքին**», – այսինքն՝ այդ հարուածները չտուաւ անոր: «Այդ **ամօթը** խնայէ՛ մեր **անունին**»: Աստիք, ինչպէս Աբեղեան կը բնորոշէ, շահի տրական են, այսինքն՝ ցոյց կու տան ի նպաստ մէկուն կամ բանի մը կատարուած գործողութեան պահանջով կիրարկուած տրականներ:

Կրնայ նշանակել նաեւ գթալ, ողորմիլ, ներել, ուր խնդրոյ առարկայ է կեանք մը, գոյութիւն մը, կատոյց մը. այս պարագային ան չէզոք սեռի է եւ կ'առնէ տրական հոլով խնդիր. օրինակ՝ «Դահիճը խնայեց **մահապարտին**». «Գայլը չի խնայեր **գառնուկին**». «Խնայեցէ՛ք **մեր պատիւին**» եւ այլն:

Յատկապէս բանատր խօսքի մէջ **խնայել** կը նշանակէ նաեւ «արժանի, պատշաճ, համաչափ չնկատել, չտեսնել», զլանալ բան մը եւ այս պարագային կ'առնէ հայցական ու բացառական հոլով խնդիրներ. օրինակ՝ «Այդ **պատիւը** կը խնայե՛ս **ինձմէ**»: «Այդ **մխիթարութիւնը** պիտի խնայե՛նք **իրմէ**»: «Չոր հա՛ցն ալ խնայեցին **մեզմէ**»: «Ջուրն ալ խնայեցին **գաղթականներէն**»: Այս կիրարկութեանց մէջ **խնայել** ունի զեղչել, զերծել, զրկել, զլանալ, խելի իմաստները:

Ունինք հետեւեալ կրատրական կիրարկութիւնը. «Ձինախաղերը այդքան ալ դժուար չէին, **մեզմէ** կը խնայուէին ծանր գործողութիւնները»¹⁷, – ուր ճիշտ յղացուած չէ բացառական հոլով խնդիրը. անելի ճիշտ պիտի

¹⁷ Ռուբեր Հատտեճեան, *Մարդիկ, որոնք անցան կեանքիս մէջէն, հպր. Բ.*, Մուրատ օՖսէթ, Իսթանպուլ, 2018, էջ 118:

ըլլար ըսել՝ «Մեզի կը խնայէին ծանր գործողութիւնները» կամ «Մեզի կը խնայուէին ծանր գործողութիւնները»:

*** Խնդրել-հայցել-աղաչել-աղերսել-պաղատիլ**

Այս հինգ բառերը, որոնք շարուած են բարձրացող աստիճանաւորով կարգով, ըստ էութեան ներգործական բայեր են, սակայն տեղին համեմատ կը կիրարկուին չէզոքաբար ես՝ առանց ծանօթ կամ շօշափելի ուղիղ խնդիրի. օրինակ՝ «Իր կալուածական հարցերը լուծելու համար հոս-հոն շատ **խնդրեց** ու **աղաչեց**, սակայն արդիւնքի մը չհասաւ»: Բերուած բայերէն որեւէ մէկը կրնայ նոյնութեամբ փոխարինել այս երկուքը: Իրենց այս չէզոք կիրարկութեան պարագային այս բայերը կ'առնեն տրական հոլով յանգման անտղակի խնդիր եւս. օրինակ՝ «Ան շատ խնդրեց ու աղաչեց **քաղաքապետին**»:

Իրրեւ ներգործական բայ՝ բոլորն ալ հեշտութեամբ հայցական հոլով ուղիղ խնդիր կրնան առնել. օրինակ՝ «**արտօնութիւն խնդրել**», «**ներում հայցել**», «**նպաստ աղաչել**», «**բժշկութիւն աղերսել**», «**զուրօ պաղատիլ**»: Ասոնք կրնան միաժամանակ առնել անտղակի խնդիր մը, որ այս պարագային բացառական հոլով անշատման խնդիր է. օրինակ՝ «**արտօնութիւն խնդրել մեծաւորէն**», «**թողութիւն աղաչել Աստուծմէ**», «**զուրօ պաղատիլ անցորդներէն**» եւ այլն: Ընդունելի չեն սապիսիները՝ «արտօնութիւն խնդրել մեծաւորին», «զուրօ հայցել անցորդներուն» եւ այլն:

Ասկէ կը հետեւի, որ մինչ բայիս չէզոք սեռը կը պահանջէ տրական հոլով անտղակի խնդիր, ներգործական սեռը կը պահանջէ բացառական հոլով անտղակի խնդիր:

Կարելի է ներգործական սեռով շարադրել նոյնիմաստ կառոյցներ, օրինակ՝ **մեծաւորին արտօնութիւնը խնդրել** կամ **Աստուծոյ թողութիւնը աղաչել** եւ այլն, ուր **մեծաւորին** եւ **Աստուծոյ** սեռական հոլով յաստկացուցիչներ են, ուստի այսպիսիները մեր ըսածին հերքումը չեն:

Ասոնց բոլորին հետեւող ստորադաս նախադասութիւնը կ'ընկալուի իբրեւ ուղիղ խնդիր. օրինակ՝ «Շատ խնդրեցինք, որ վճիռը յետս կոչէ»: «Վշտագին կը պաղատէր, որ դարմանէին հիւանդ ոտքը»:

*** Խփել. տե՛ս՝** զարնել:

*** Խօսիլ**

Չէզոք սեռի բայ է, թէւ կրնայ մէկ-երկու ներքին խնդիր առնել, ինչպէս՝ «**բան մը խօսիլ**», «**խօսք մը խօսիլ**», «**ի՛նչ խօսիլ**» եւ այլն, որոնք շատ թոյլ խնդրահոսութիւններ են: Այս բային բնորոշ լրացումը վերաբերութեան անտղակի խնդիրն է, երբ ան կը նշանակէ տեղեկութիւններ տալ. այս պարագային խնդիրը կը կազմուի՝ ա) բացառական հոլով գոյականով եւ բ) **մասին** յետադրութեամբ, որ կը դրուի սեռական հոլով խնդիրի վրայ. օրինակ՝ «**խօսիլ անցեալէն** եւ **անցեալի մասին**», «**խօսիլ առօրեայէն** եւ **առօրեային մասին**» եւ այլն: Ան կրնայ նաեւ տրական հոլով անտղակի խնդիր առնել, երբ խօսքը միակողմանի է, եւ խօսակիցը միայն մտիկ ը-

նողն է, եւ ան կը նշանակէ խրատել, թելադրութիւններ ընել. օրինակ՝ «Լսօսիր **բարեկամիդ**, թող հրաժարի այս քայլէն»: «Տնօրէնը խօսեցաւ **աշակերտներուն**»:

Նոյն խնդրառութիւնը ունին ասացական կամ պատմողական հետեւեալ բայերը եւ՝ **պատմել, բարբառիկ, գրուցել, ճառել, լուր տալ, լուր առնել, տեղեկութիւն տալ** եւ այլն: Օրինակ՝ կը ճառէր **գիտցածէն ու չգիտցածէն** եւ **գիտցածին ու չգիտցածին մասին**, ան տեղեկութիւններ տուաւ իր ընտանեկան **պարագաներէն** եւ **պարագաներուն մասին**:

Երբ **խօսիլ** բայը ունի գրուցելու, խօսակցելու նշանակութիւն, այսինքն՝ խօսելու գործողութիւնը փոխադարձ է, ապա ան կ'առնէ սեռական հոլով խնդիր **հետ** յետադրութեամբ. օրինակ՝ «**խօսիլ ընկերոջ հետ**» եւ այլն:

* **Ծանօթանալ**

Չէզոք բայ է եւ կ'առնէ տրական հոլով անտղակի խնդիր՝ անձի թէ իրի պարագային. օրինակ՝ «**ծանօթանալ ճարտարապետին, շրջապատին**» եւ այլն: Այս պարագային լռելեայն իմանալի է ծանօթութեանց միակողմանի բնոյթը. «**Ծանօթացայ տնօրէնին**», – կը նշանակէ տնօրէնին մասին տեղեկութիւններ քաղեցի, ճանչցայ գայն. անուազն որեւէ ակնարկութիւն չկայ, թէ տնօրէնը իր կարգին տեղեկութիւններ քաղեց իմ մասիս եւ ինձմէ: Այս միակողմանիութիւնը անելի ակներեւ է իրերու պարագային, օրինակ՝ **ծանօթացայ ճամբաներուն, շուկային, գիներուն** եւ այլն:

Հոն ուր կ'ուզենք շեշտել ծանօթացումի փոխադարձութիւնը, սովորաբար կը գործածենք փոխադարձ դերանուն մը՝ «**ծանօթացանք իրարու**» կամ «**մէկզմէկու**», եւ այս պարագային պայման է բայը յոգնակի կիրարկել: Այս նոյն իմաստը յաճախ կը ստանանք տրական հոլով խնդիրին վրայ անցնելով **հետ** յետադրութիւնը՝ առանց յոգնականացնելու բայը՝ «**ծանօթացայ տնօրէնին հետ**», որ կը նշանակէ ես տնօրէնը ճանչցայ, ան ալ գիտ ճանչցաւ. այս փոխադարձութիւնը կը պարտինք **հետ** յետադրութեան: Հասանաբար, փոխադարձ դերանունի կիրարկութիւնը անելի արտայայտիչ է, այսուհանդերձ այս վերջին ձեւը բացառած չէ: Պէտք է խուսափիլ փոխադարձ դերանունին վրայ **հետ** յետադրութիւնը անցնելէ՝ «**Ծանօթացանք իրարու հետ**»:

* **Ծափահարել**

Ծագումով չէզոք սեռի է, սակայն հետզհետէ ներգործական դառնալու հակում ունի. այսօր գրեթէ հասասարապէս կ'ըստի՝ «**ծափահարել մէկուն** եւ **մէկը, երգիչին** եւ **երգիչը**»: Եւ ճիշտ այս ներգործականութիւնն ալ տուած է **ծափահարուիլ** կրատրականը, որ փոխաբերաբար կը նշանակէ գնահատուիլ. «**Անոր ելոյթը շատ ծափահարուեցաւ**»:

* **Կախել եւ կախուիլ**

Այս բայերը հասասարապէս տրական եւ քացառական հոլով խնդիր կրնան առնել՝ իմաստային գրեթէ անզանազանելի տարբերութեամբ. օրինակ՝ «սուրը **մէջքին** կամ **մէջքէն** կախել», «նկարը **պատին** կամ **պատէն**»:

կախել», «Յուդա **ծառին** կամ **ծառէն** կախուեցաւ» եւ այլն: Ունինք **կախում ունենալ** յարադրական բայը, որ կարգ մը գործածութեանց մէջ հոմանիշ է երկրորդին եւ միայն բացառական հոլով խնդիր կ'առնէ. օրինակ՝ «Լուծումը կախում ունի (կախումս է) դէպքերու **ընթացքէն**»:

* **Կապել**

Միացնել, երկու առարկաներ իրարու զօդել գործողութեան մէջ կապը կրնայ ըլլալ միակողմանի եւ փոխադարձ:

ա) Միակողմանի. «Էջը կապել **ծառին**», «ոտքը կապել **գերանին**», «սուրը կապել **մէջքին**» եւ այլն այս պարագային բայս հայցական հոլով ուղղ խնդիրին կողքին կ'առնէ տրական հոլով անտղղակի խնդիր եւ՝ **ծառին, քարին, մէջքին, եկամուտին**:

Բերուած օրինակներուն մէջ խնդիրները մտածուած են իբրեւ իր, ուստի փոխադարձութեան հարց չի կրնար ծագիլ: Սակայն կրնայ պատահիլ, որ խնդիրը անձ ըլլայ, եւ փոխադարձութիւնը նմանապէս բացակայի. Օրինակ՝ «Բարեբաստիկ հանդիպում մը զինք կապեց այդ **աղջկան**»: «Ուսուցչուհին ընկերական վերաբերումը փոքրիկները կապեց **իրեն**»: Բերուած օրինակները թոյլ չեն տար դատելու, թէ ինչ զգացումներ ունեցած են աղջիկը եւ ուսուցչուհին:

բ) Փոխադարձ. «Ան բախտը կապեց **օտարականի մը հետ**»: «Տղաս սիրտը կապած է **ընկերներուն հետ**»: Այս օրինակներուն մէջ կապը ենթադրաբար փոխադարձ է, որ կը թելադրուի շնորհիւ **հետ** յետադրութեան, որ այս պարագային փոխադարձութիւն ցոյց կու տայ:

Սակայն այս **հետը** միշտ փոխադարձութիւն ցոյց չի տար. օրինակ՝ «Հողագործը եզները իրարու հետ կապեց», - այսինքն՝ նոյն լուծի երկու օղակներուն: «Հայրը եղեգները իրարու հետ կապեց», այսինքն՝ եղեգներու խումը մը կազմեց. այս օրինակներուն մէջ **հետը** միայն միասնութիւն ցոյց կու տայ: Ուրիշ բան է **իրարու** կապելը. օրինակ՝ «Այս կարճ պարանները իրարու կապենք, կ'ունենանք երկար պարան մը»:

Կապուիլ կրատրական բայը կը ներկայացնէ խնդրառական նոյն պարագաները. ա) էջը կապուեցաւ **ծառին** եւ բ) մանչը կապուեցաւ **աղջկան** (միակողմանի), **աղջկան հետ** (փոխադարձ):

* **Կշտանալ**

Չէզոք բայ է, կրնայ առնել երկու տարբեր խնդիրներ:

ա) Գործիական հոլով խնդիրը ցոյց կու տայ կշտութիւն յառաջացնող առարկան՝ ուսեցիքը. օրինակ՝ «**Հաց ու պանիրով** կշտացաւ» եւ այլն:

բ) Բացառական հոլով խնդիրը ցոյց կու տայ այն առարկան, որուն յաճախական կամ չափազանցուած սպառումը պատճառ դարձած է, որ ենթական չուզէ այլեւ ուտել զայն, գանի բանէ մը. օրինակ՝ «Ամէն օր փիլա **ուտելէն** ա՛լ կշտացած են», «Այս պանիրէն ա՛լ ծանծրացայ»: Այս իմաստի արտայայտութեան կը մասնակցի «**ա՛լ**» մակբայը, որ անելի կը շեշտէ զայն:

Բացառական հոլովը լայնօրէն կիրարկուած է փոխաբերական առումով, ուր ան ցոյց կու տայ զանազան գործողութեանց կամ կացութեանց առթած տաղտուկը, տհաճութիւնը, ընդհուպ՝ զգուանքը. այսպէս՝ «կշտանալ նոյն **խօսքերէն, սուտերէն, կեղծաւորութենէն**», ընդհուպ մինչեւ... **ապրելէն**:

Յագենալ հոմանիշը ունի նոյն խնդրատոյթիները. ասոր փոխաբերական կիրարկութիւնը, սակայն, շատ անելի խօսուն ու ազդեցիկ է. օրինակ՝ **յագենալ մէկուն շոյանքներէն, սուտ խոստումներէն, կեղծ յարգանքէն**, որոնք ձանձրոյթի, տաղտուկի, ընդհուպ զգուանքի խոստովանութիւններ են:

* **Կոռիլ**

Չէզոք բայ է եւ ունի երկու տարբեր խնդրատոյթին՝ **դէմ** եւ **հետ** կապերով:

ա) **դէմ** յետադրութեամբ ցոյց կու տայ այն բանական կամ անբան առարկան, որ կը կրէ ենթակային գոռիը. օրինակ՝ կոռիլ Մարամեյիքի **դէմ**, կոռիլ ոսոխին **դէմ**, կոռիլ պիքներուն **դէմ** եւ այլն. սխալ է այս պարագային կիրարկել **հետ** յետադրութիւնը:

բ) **հետ** յետադրութեամբ ցոյց կու տայ միասնութիւն ընդդդէմ հասարակաց թիրախի մը. օրինակ՝ կոռիլ ընկերներուն **հետ** (թշամիին դէմ), կոռիլ գինակիցներուն **հետ** (նախայարձակին դէմ) եւ այլն: Այս կիրարկութեանց մէջ **հետ** կը նշանակէ ընկերակցութեամբ, տուեալ անձը կամ անձերը ունենալ իբրեւ **գինակից** ընդդէմ հասարակաց ոսոխին:

Ճիշտ նոյն խնդրատոյթինը ունին **ճակատիլ, պայքարիլ** եւ **պատերազմիլ** չէզոք բայերը եւ, որոնք հոմանիշ են **կոռիլին**:

Ցոյց կու տայ փոխադարձութիւն երկու ենթականերու միջեւ. օրինակ՝ «Այս տղաքը **իրարու հետ** կը կոռիին ամբողջ օրը»՝ փոխանակ **դէմի**. հասանաբար այս ըսելով՝ խօսողը նկատի ունի գզըլըտուպը, որ իրապէս ալ **հետ** յետադրութիւնը կը պահանջէ. վերջին հաշտով այդ տղոց միջեւ տեղի ունեցածը շատ անելի գզըլըտուպի կը նմանի, չըսելու համար՝ իրայատուկ խաղի, որ շոտով կրնայ հաշտութեամբ վերջանալ կամ մոռացութեան մատնութի, քան թէ ծրագրուած կոռի, ոստի ծանր պիտի հնչեր ըսել՝ «իրարու դէմ կը կոռիին»:

Ծանօթ.- Ունինք «ոգիին հետ կոռիլ» դարձուածքը, որ կը նշանակէ մեծ խռովքի, յուսալքումի մատնութի:

* **Համակերպիլ**

Կ'առնէ տրական հոլով խնդիր, որ կրնայ ըլլալ անձ կամ ոչ-անձ. օրինակ՝ «համակերպիլ **գործատիրոջ, շրջապատին, պայմաններուն**»: Կը նշանակէ յարմարի, նմանի, պատշաճի: Բոլորն ալ միակողմանի արարքներ են այն իմաստով, որ համակերպող կողմն է միշտ գիշորը, տեղի տոտողը ի հաշի իր տեսակէտներուն, ճաշակին, նախասիրութիւններուն եւ այլնի:

* Համաձայնիլ

Այս բային խնդիրը կրնայ ըլլալ անձ կամ իր:

ա) Անձի պարագային ընդհանրապէս կ'առնէ տրական հոլով խնդիր **հետ** կապով հանդերձ. օրինակ՝ «համաձայնեցայ **տնօրէնին հետ**»: Սակայն այս ալ կ'ենթադրէ, թէ ինչ-որ երկխօսութիւն մը տեղի ունեցած է իմ եւ տնօրէնին միջեւ. բաներ մը ես զիջեցայ կամ ընդունեցի, կարգ մը բաներ ալ ան զիջեցաւ կամ ընդունեց: Սակայն եւ այնպէս կրնայ պատահիլ, որ համաձայնութիւնը շեշտուածօրէն միակողմանի ըլլայ երկու անձերու միջեւ. ես տնօրէնին ըսածը ընդունիմ կամ ան իմ առաջարկս ընդունի. այս պարագային փոխադարձութիւն չկայ, եւ պէտք է ըսել «համաձայնեցայ **տնօրէնին**» կամ «ան համաձայնեցաւ **ինձի**»:

բ) Իրի պարագային անշուշտ ամէն փոխադարձութիւն բացառուած է, եւ **հետ** կապը չի գործածուիր. օրինակ՝ «համաձայնեցայ իր **առաջարկին, թելադրանքներուն**» եւ այլնի: Սա նոյն խնդրատութիւնն է **համակերպիլին** հետ:

Համաձայն գտնուիլ յարադրական ձեւը հոմանիշ ըլլալ կը թուի **համաձայնիլին** եւ իրօք ալ է. սակայն ունի խնդրատական հետեւեալ պզտիկ զանազանութիւնը. այս յարադրական ձեւին խնդիրը կրնայ միայն անձ ըլլալ եւ կ'առնէ միայն տրական հոլով խնդիր. օրինակ՝ «համաձայն գտնուեցայ **իրեն**», «համաձայն գտնուեցայ **աշխատակիցիս**» եւ այլն:

Երբ կողմերուն միջեւ փոխադարձութիւն չկայ, ապա ա. կէտի **համաձայնիլ** բայը հոմանիշ է **հաւանիլին** (տեսնել ստորեւ այս բայը), որ կ'ունենայ նոյն խնդրատութիւնը, կարելի է մինչեւ անգամ ըսել, որ անելի վայելուչ է, քան **համաձայնիլը**, քանի որ միակողմանի կատարուած արարք մը արտայայտող բային համար, որուն կը պակսի միասնութեան գաղափարը, **համար** նախածանցը պատշաճ չէ:

* Հանդիպիլ

Արեւտահայերէնի մէջ ունի քանի մը կիրարկութիւններ.

ա) Պատահաբար դէմ-յանդիման գալ մէկուն կամ քանի մը կամ գտնուիլ կացութեան մը մէջ, եւ այս պարագային միայն տրական հոլով կ'առնէ. օրինակ՝ «հանդիպիլ **ընկերոջ, փորձանքի**» եւ այլնի:

բ) Կամուկին այցելել անձի մը, օրինակ՝ «հանդիպիլ **ուսուցիչին, բժիշկին**» եւ այլն, ու այս պարագային խնդիրը կը դրուի նմանապէս տրական հոլով, ինչպէս նախորդին էր, միայն թէ սա նրբութեամբ, որ հանդիպելու արարքը այս պարագային միակողմանի բնոյթ կ'ունենայ, միակողմանի նախաձեռնութիւն կը դիտուի. մինչդեռ այս նոյն խնդիրները կարելի է գործածել **հետ** յետադրութեան ընկերակցութեամբ՝ «**հանդիպիլ գրագիրին հետ**», որ այս պարագային կը նշանակէ կանխորոշուած հանդիպում մը, որ երկուստեք սպասելի էր, որուն նախաձեռնութիւնը երկուստեք առնուած էր, որուն մէջ հանդիպող կողմերը հասասար ծայն ունին: Ուրեմն՝ «Դեսպանը արտաքին նախարարին հանդիպեցաւ» եւ «Դեսպանը արտա-

քին նախարարին հետ հանդիպեցա» տարբեր միտքեր կը յայտնեն: Վերջինը կը մօտենայ **խորհրդակցիլ** կամ **մտքեր փոխանակել** բայերուն:

գ) Իսկ երբ հանդիպումին կամ այցին թիրախը տեղ մըն է կամ կը մտածուի իբրեւ տեղ, ապա ան կը դրուի հայցական հոլով. օրինակ՝ «հանդիպիլ **գրասենեակ, խանութ»** եւ այլն:

* **Հանդուրծել**

Չէզոք եւ ներգործական բայ է միաժամանակ. **դիմանալ, տոկալ, համբերել** իմաստներով ան չէզոք է եւ կ'անոնէ տրական հոլով անտողրակի խնդիր. օրինակ՝ «հանդուրծել **վարկաբեկումի** մը կամ **վարուելակերպի մը»** եւ այլն. իսկ **կրել, ընդունիլ, թոյլատրել** իմաստներով ներգործական է եւ կ'անոնէ նոյն լրացումները հայցական հոլովով՝ իբրեւ ուղիղ խնդիր, եւ այս պարագային խօսքը կը ստանայ յատկեալ ուժգնութիւն մը, որովհետեւ ուղիղ խնդիրը ինքնին անելի ընդգրկուն լրացում է. բարդատել՝ «հանդուրծել **մէկուն»** եւ «հանդուրծել **մէկը»**, «հանդուրծել **կացութեան մը»** եւ «հանդուրծել **կացութիւն մը»**:

* **Հաշտուիլ**

Չէզոք բայ է եւ ցոյց կու տայ փոխադարձ գործողութիւն. իր այս իմաստով՝ ան կրնայ կիրարկուիլ յոգնակի թիսով առանց որեւէ խնդրի. օրինակ՝ «Անոնք կը կռուին ու կը **հաշտուին»**: «Երէկուան թշնամիները այսօր **հաշտուած են»**: «Ֆրանսա ու Գերմանիա ի վերջոյ **հաշտուեցան»**:

Շատ սովորական է անծի անուններու հետ կապական լրացումի կիրարկութիւնը եւս. օրինակ՝ «հաշտուիլ **ընկերոջ հետ»**¹⁸: Իսկ ոչ-անծի պարագային, ուր այլեւս փոխադարձութեան իմաստը կը ջքանայ, ան կ'անոնէ գործիական հոլով խնդիր. օրինակ՝ «**հաշտուիլ կացութեամբ»**, «**հաշտուիլ կորուստով»** եւ այլն: Չմոռնանք, որ գործիական հոլովն ու **հետ** կապը յաճախ շարահիսակական հոմանշութիւն կը ստեղծեն. օրինակ՝ «մեկնիլ **ընկերներուն հետ»** եւ «մեկնիլ **ընկերներով»**: Տրուած ըլլալով, որ իրերու պարագային փոխադարձութիւն գոյութիւն չունի, ապա **հաշտուիլը** կը նախընտրէ գործիական հոլով խնդիրը: Այսուհանդերձ **հետ** կապով խնդրանութիւնը լայնօրէն տարածուած է մեր երկու բարբառներուն մէջ ալ. օրինակ՝ «Չեմ հաշտուած այն **միտքին հետ**, թէ չկաս դուն» (ՎՎ, էջ 442): «Սիրածներիս **կորուստի հետ** չհաշտուեցի ես երբեք» (Ա. Իսահակեան), – ուրեմն ընդունելի է այս վերջինն ալ, քանի վերջին հաշտով կիրարկութիւնը կ'որոշէ կանոնը: Գործիականի փոխարէն տրականի կիրարկութիւնը

¹⁸ Հայերէնը բաականաչափ իրացուցած անձը ինքնաբերաբար կ'անդրադառնայ հետեւեալ նրբութեան. եթէ խզումը կամ քէնը բացայայտօրէն միակողմանի է, հակում ունինք բայը եզակի կիրարկելու. օրինակ՝ «Թորոսը հաշտուեցա Մարկոսին հետ»: Իսկ եթէ այդ խզումը կամ քէնը փոխադարձ կ'ընկալուի, ապա կ'ըսենք՝ «Թորոսն ու Մարկոսը հաշտուեցան»: Թիփ այս զանազանութիւնը կ'իջիւտ փոխադարձութիւն ենթադրող այլ բայերու առթիւ եւս:

բաական ընդհանրացած է. օրինակ՝ «հաշտուիլ բախտին, կացութեան» եւ այլն:

Հաշտ ապրիլ եւ **հաշտ ըլլալ** բաղադիր ձեւերը ունին մօտատրապէս նոյն խնդրառութիւնը. օրինակ՝ «Երէկուան թշնամիները այսօր հաշտ կ'ապրին/հաշտ են»: «Արան Մինասին հետ» հաշտ կ'ապրի/հաշտ է: Սակայն ոչ-անձի անուններու պարագային գործիական հոլով խնդիրի փոխարէն կը պահանջեն **հետ** կապը. օրինակ՝ «հաշտ ապրիլ կամ ըլլալ **անցեալին հետ, շրջապատին հետ**» եւ այլն: Տրական հոլով խնդիրի կիրարկութիւնը այս պարագային բացառուած է:

* Հասնիլ

Ունի զոյգ խնդրառութիւն՝ հայցական եւ տրական:

Լրացումը հայցական կը դրուի, երբ տեղ ցոյց տուող բառ է, ունի պարագայական նշանակութիւն եւ կը պատասխանէ **ո՞ր** հարցումին. օրինակ՝ «հասնիլ **տուն, քաղաք**» եւ այլն: Նկատել, որ այս լրացումը յօջ չ'առնէր, երբ առանձին գործածուած է. իսկ երբ ան ալ իր կարգին ունի ի՞ր լրացումը, ապա յօջ կ'առնէ. օրինակ՝ «հասայ **այս տունը, ձեր քաղաքը**» եւ այլն:

Լրացումը տրական հոլով կը դրուի, երբ առարկայ ցոյց տուող բառ է, ուստի ունի խնդրային նշանակութիւն եւ կը պատասխանէ **որո՞ւ, որո՞նց կամ ինչի՞, ինչերո՞ւ** հարցումին. օրինակ՝ «հասայ **ընկերօջ, զինակիցներուս**», կամ «հասայ **նպատակիս, թիրախներուս**»: Այս պարագային յօդառութիւնը ազատ է. օրինակ՝ «հասայ **ծառի, ծառի մը, ծառին**»:

Բացառուած չէ, որ նոյն լրացումը կիրարկուի թէ՛ հայցական, թէ՛ տրական հոլովով. օրինակ՝ «հասայ **գագաթը** եւ **գագաթին**», «ամերիկացիները հասան **լուսին** եւ **լուսնին**» եւ այլն: Պատճառը այն է, որ առաջին պարագային **գագաթն** ու **լուսինը** մտածուած եւ պատկերացուած են իբրեւ տեղ, ուստի հայցական հոլով տեղի պարագայական լրացում են, իսկ երկրորդ պարագային **գագաթին** ու **լուսնին** մտածուած եւ պատկերացուած են իբրեւ առարկայ, ուստի տրական հոլով անուղղակի խնդիր են: Այս այլազանութիւնը կրնայ պատահիլ գրողէ-գրող կամ խօսողէ-խօսող, սակայն կրնայ պատահիլ նոյն անձին եւս, որ նոյն հասկացութիւնը մերթ մտածէ իբրեւ տեղ, մերթ՝ իբրեւ առարկայ:

* Հարուածել. տեսնել **զարնել**:

* Հանիլ եւ հաւանիլ

Այս երկուքը գրաբարեան **հաւանել** չէզոք բայի աշխարհաբարեան տարբերակներն են՝ առաջինը ըլլալով երկրորդին հնչիւնափոխուած, կծկուած հոմանիշը:

Հանիլը աշխարհաբարի մէջ շատ կանոխէն իր սկզբնածեւէն տարբերած է թէ՛ սեռով, թէ՛ իմաստով. **հանիլ** ներկայիս ներգործական սեռի բայ է եւ կը նշանակէ նախասիրութիւնը տալ բանի մը, կեդրոնացնել բանի մը վրայ, նախասիրութեան առարկան դարձնել բան մը եւ այլն **«հանիլ աղ-**

ջիկը, ինքնաշարժը» եւ այլն: **Հաւանիլը** շատ անելի հարազատ մնացած է իր դասական իմաստին ու սեռին. չէզոք է ան, ինչպէս գրաբարի մէջ էր, կ'առնէ տրական հոլով անտոլոգիկ խնդիր եւ կը նշանակէ հաւանութիւն տալ, ականջ դնել, հաւատք ընծայել, համոզուիլ, համամիտ ըլլալ քանի մը կամ մէկուն, զայն իր ճաշակին ու ցանկութեան համապատասխան նկատել, ախորժիկ, ընդունիլ, համաձայնիլ՝ ճիշտ գրաբարի ասանդոյթով. Օրինակ՝ **«հաւանիլ առաջարկի, պաշտօնի»** եւ այլն. ինչպէս նկատելի է, այս վերջինները ընդհանրապէս վերացական հասկացութիւններ են, մինչ **հաւանիլի** ծիրէն ներս կրնան ազատօրէն մտնել նիւթական կամ թանձրացական հասկացութիւններ հաւասարապէս:

Հաւանիլի հնագոյն գործածութիւններէն մէկը կը գտնենք Խորենացիի գրիչին տակ, բերնովը պաններու Սաթենիկ իշխանօրհին, որ մեր Արտաշէս աշխարհակալին կ'ըսէր. «Քեզ ասեմ, ա՛յր քաջ Արտաշէս, ե՛կ **հաւանեաց բանից** [տրակ. հոլով – Ա.Ե.] աչագեղոյ դստերս Ալանաց...»:

* Հոգալ

Բազմիմաստ բայ է: Ունի հետեւեալ կիրարկութիւնները.

ա) Իբրեւ չէզոք բայ՝ կը նշանակէ հոգեկան անձկութեան մատնուիլ, տազնապիլ, ճնշուիլ եւ որեւէ խնդիր չ'առնել. «Ամուսինին բանտարկութենէն ետք ան շատ կը հոգայ ու կը տառապի»: «Այսքան մի՛ հոգար, այս սեւ օրերն ան կ'անցնին»: Այս իմաստով՝ բայս յաճախ կը փոխարինուի **հոգ ընել** յարադրատր տարբերակով. «Այսքան հոգ մի՛ ըներ, այս սեւ օրերն ան կ'անցնին»: «Հոգ ընելու պէտք չկայ, ուշ կամ կանուխ պիտի ստանաս իրատունքը»:

բ) Իբրեւ ներգործական սեռի բայ՝ կը նշանակէ կարիքները լրացնել կամ նիւթական անհրաժեշտ միջոցներ տրամադրել, յատկացնել, մատակարարել. այս պարագային կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ «զաւակին **սնունդը** հոգալ», «**ճանապարհածախսը** հոգալ» եւ այլն:

գ) Դա՛րձեալ իբրեւ ներգործական բայ՝ կը նշանակէ՝ խնամել, ուշադրութիւն դարձնել, հսկել, տնօրինել. օրինակ՝ «**զաւակները** հոգալ», «**տուն ու տեղը** հոգալ» եւ այլն: Սակայն այստեղ նկատելի է խնդրային երկփեղկում մը. բացառուած չէ ասոնց տրական հոլովով խնդրատութիւնը. «**Չաւակներուն** կը հոգար», այլեւ կապական խնդրատութիւն մը՝ **մասին** յետադրութեամբ. «**Չաւակներուն մասին** կը հոգար»: Իր այս իմաստով ան յաճախ կը փոխարինուի **հոգ տանիլ** տարբերակով, որ միայն տրական հոլով խնդիր կը պահանջէ. օրինակ՝ «Հոգ տանիլ **զաւակներուն**» եւ այլն:

* Ճնշել

Երբ լրացումը անշունչ առարկայ է, եւ կ'ակնարկուի ֆիզիքական ճնշումի, ապա ան կը վարուի իբրեւ չէզոք բայ եւ լրացում կ'առնէ **վրայ** յետադրութեան հետ. օրինակ՝ «Յառաջագեղձը կը ճնշէ **միզանցքին վրայ** ու կը խցէ զայն» (դասագիրք), «Նուաստացումի զգացումը կը ճնշէ **կուրծքի**

վրայ՝ շնչառութիւնս դժոարացնելու աստիճան» (ՎՎ, էջ 444), «Տրամադրութիւնս այնչափ մեծ է եւ այնպէս կը ճնշէ վրաս» (Ինտրա, նամակ 13 յունտար 1895), իսկ երբ լրացումը շնչատր էակ է կամ կ'ընկալուի իբր այդպիսին, եւ կ'ակնարկուի բարոյական կամ վերացական ճնշումի, **ճնշելը** կը վարուի իբրեւ ներգործական բայ եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ «Մաքուր ու անբիծ խիղճս չէր **ճնշեր զիս**՝ իր ծանրածանր լուծով» (Տիգրան Կամսարական, «Անդրադարձում»): «Թիթեռնիկները ա՛լ անելի **ճնշեցին զմեզ**, անելի շատցան եւ ստուար քող մը ձեւացուցին հիմա» (ԳՁ, «Թիթեռնիկներ»): «Նախագահը խոստացաւ ճնշել **ըմբոստութիւնը**» (Մամուլ): «Միացեալ Նահանգները պիտի շարունակեն **ճնշել Իրանը**» (*Ազգակ*, 23-3-19): Ծառուկեան ունի հետեւեալ ոչ-միօրինակ կիրարկութիւնները. «Անոր ընկերացող պաշտօնեան...կը **ճնշէր վրաս**» (*Ամերիկեան կողմն աշխարհի*, էջ 60,– փոխանակ՝ «կը ճնշէր զիս»): «Քունը կը ճնշէր **կոպերոս**» (*Նոր երագներ...*, էջ 8,– փոխանակ՝ «կը ճնշէր կոպերոս վրայ»): «Ինչո՞ւ յոգնիք եւ յոգնեցնենք ընթերցողը՝ **ճնշելով մեր ուղեղը**» (*Նոր Հայաստան...*, էջ 148):

Ճնշում բանեցնելը հոմանիշ է **ճնշելին**, սակայն ընդհանրապէս կամ նախընտրաբար կը կիրարկուի փոխաբերական իմաստով: Ունի խնդրառական տարբերութիւն մըն ալ. խնդիրը կապական է միշտ. օրինակ՝ «Բաւակը ճնշում կը բանեցնէր **հակառակորդին վրայ**»: «Փողկապը ճնշում կը բանեցնէր **լծերակին** (jugulaire – Ան) **վրայ**»:

*** Մեղքնալ (գթալ, արգահատիլ, խղճալ, կարեկցիլ)**

Սովորաբար տրական հոլով խնդիր կ'առնէ՝ **մեղքնալ մէկուն**, թէեւ բաւական ընդհանրացած է **վրայ** կապով խնդրառութիւնն ալ՝ **մեղքնալ մէկուն վրայ**. չեն պակսիր սակայն հայցական հոլով ուղիղ խնդիրի կիրարկութիւններ եւս. օրինակ՝ «Արդէն կը **մեղքնայի զինքը**» (ԳՁ, «Բեհան»): «Ե՛ս արդեօք **քեզ, թե՛** դուն **զիս կը մեղքնանք** անելի» (Վ. Թեքէեան, «Մէկ հատիկս»): «Սկսած էի ո՛չ միայն **մեղքնալ զինքը**, այլ նաեւ տեսակ մը խղճահարութիւն իսկ զգալ» (Ինտրա, *Նամականի*): Ուրեմն կրկնասեռութեան նշաններ տոտղ բայ մըն է. հայցականը, հասանաբար յառաջացած է ֆրանսերէնի եւ անգլերէնի (*plaindre* եւ *to pity*) երկուքն ալ հայցական հոլով խնդիր կը պահանջեն) ազդեցութեան տակ: Թէեւ պէտք է այս ալ ըստել, որ արդի արեւմտահայերէնի մէջ հայցական խնդրառութիւնը այլեւս հնաբանութիւն դարձած է:

*** Միանալ**

Չէզոք է եւ կը պահանջէ տրական հոլով խնդիր՝ «միանալ **երամին, ընտանիքին**» եւ այլն: Փոխադարձութիւնը խնդրառական փոփոխութիւն չի պատճառեր. օրինակ՝ «**Թորոսն ու Մարկոսը** միացան իրարու». ըստ այսմ ալ պէտք է խոսափիլ տրական խնդիրին կցել **հետ** յետադրութիւնը՝ «միանալ **երամին հետ, ընտանիքին հետ**» կամ «Թորոսը եւ Մարկոսը միացան **իրարու հետ**». ասոնք բոլորն ալ սխալ խնդրառութիւններ են:

Տարբեր է **միութին կազմել** յարադրութիւնը, որ ազատօրէն կ'ըսէ. «Միութին մը կազմեց **անոր հետ**», «Անոնք միութին կազմեցին **իրարու հետ**» եւ այլն (տեսնել նաեւ **հանդիպիլ** բայը):

*** Մտահոգուիլ**

Թե՛ **մտահոգ** ածականը, թե՛ **մտահոգուիլ** բայը կ'առնեն գործիական հոլով խնդիր. օրինակ՝ «իր **առօրեայով** մտահոգ» կամ «**առօրեայով** մտահոգուիլ»: «Ան շատ կը մտահոգուի (մտահոգ է) գաւակին **կրթութեամբ**»: Ընթացիկ սխալները կը վերաբերին բացառական հոլովին. Այսինքն՝ «մտահոգ **առօրեայէն**» եւ «մտահոգուիլ **առօրեայէն**»:

Նոյն խնդրատութիւնը ունին **հպարտ** ածականը եւ **հպարտանալ** բայը. օրինակ՝ «Ան հպարտ էր իր **զաւակով**» եւ «Ան կը հպարտանար իր **զաւակով**»:

*** Յաղթել**

Հնագոյն վկայութեանց հիմամբ կ'առնէ տրական հոլով խնդիր. օրինակ՝ «**յաղթել թշնամիին, ցափն**» եւ այլնի: Խնդրին ընդգրկումը այնքան զօրատոր է, որ հին ու նոր քերականները չեն վարանիր այս բայը բացառաբար նկատելու ներգործական եւ անոր տրական հոլով լրացումն ալ կրչելու «ուղիղ խնդիր», մանաւանդ որ ան ունի շատ ընդհանրացած կրատրական մըն ալ՝ **յաղթուիլ**, որ յատուկ է ներգործական բայի, – ինչ որ, սակայն, անյարիր է ուղիղ խնդրի հոլովական հասկացողութեան, քանի ուղիղ խնդիրը քերականօրէն հայցական հոլով կը դրուի: Անդին ունեցած ենք մատենագիրներ, որոնք բայիս խնդիրը իրօք ալ հայցական հոլով կիրարկած են. օրինակները կը քաղենք *Նոր հայկագետներ*. «Յաղթ **զատանայ** յօրինակ փարատվնի», «Յաղթեցից **զամենայն մարտ** պատերազմաց իմոց», «Ոչ կարեմ **յաղթել զքուն** եւ **զծուլութիւնն** իմ» եւ այլն: Աշխարհաբարն ալ կը հայթայթէ նման օրինակներ, որ զանց կ'ընենք:

Գալով **յաղթահարել** բային՝ այս մէկին ներգործականութիւնը բացայայտ է, եւ ան միայն հայցական հոլով խնդիր կ'առնէ. օրինակ՝ «**յաղթահարել յոռի բարքերը, դժուարութիւնները, բնութեան տարերքը**» եւ այլն: Ինչպէս կը տեսնենք, բերուած խնդիրները ընդհանրապէս վերացական բնոյթ ունին:

*** Յառել եւ սեւեռել**

Այս երկուքը հոմանիշներ են իրարու միջեւ, բայց նաեւ **նայիլին**՝ այս վերջինի՝ «հայեացքը ուղղել, դիտել» իմաստներուն միայն:

Յառել կը նշանակէ կեդրոնացած ու շահագրգիռ դիտել բան մը. իր այս իմաստով ան ներգործական է եւ իբրեւ հայցական հոլով ուղիղ խնդիր կ'առնէ **այք** եւ **նայուածք** գոյականները. ասոնց կողքին՝ տրական հոլով անտուղակի խնդիր մը. օրինակ՝ «Ան **նայուածքը** (կամ **այքը**) յառեց հեռացող **նաւուն**»: Նայիլ բայի հետետողութեամբ կամ նմանութեամբ՝ տրականի փոխարէն կրնայ հայցական հոլով խնդիր եւս առնել, երբ լրացումը

մտածոած է իբրեւ տեղ. օրինակ՝ «Ան աչքերը **երկինք** յառեց»։ այսպէս ալ՝ **զետին, հեռուն** եւ այլն։

Սեւեռելին մէջ կայ անցի լարուած ու շեշտակի դիտելու ու կեդրոնաւալու ճիգ մը։ Ներգործական բայ է եւ իբրեւ հայցական հոլով ուղիղ խնդիր կ'առնէ **աչք, նայուածք, ուշադրութիւն...** բառերը։ Ան միաժամանակ կ'առնէ տրական հոլով անուղղակի խնդիր մըն ա, որ կը ներկայացնէ սեւեռումի առարկան. օրինակ՝ «Այսուհետեւ մեր **ուշադրութիւնը** (ուղիղ խնդիր) պարտինք սեւեռել դպրոցաշինական անյետաձգելի **գործին** (անուղղակի խնդիր)»։ Ոմանք կ'աւելցնեն վրայ յետադրութիւնն ալ՝ **գործին վրայ**։ Իր այս խնդրառութեամբ՝ **սեւեռելը** կը նմանի **յառելին**։ Սակայն, ի տարբերութիւն **յառելին**, ան կրնայ նաեւ զանց առնել **աչք, նայուածք, ուշադրութիւն** խնդիրները եւ իբրեւ ուղիղ խնդիր ստանալ սեւեռումի բուն առարկան, որ այսպէս կը դրուէր տրական հոլով. օրինակ՝ «Այսուհետեւ մենք պարտինք սեւեռել դպրոցաշինական անյետաձգելի **գործը**»։ Նաեւ՝ «Պարոն Փերեզ... կը սեւեռէ հեռուի արեանման **ժամացոյցը**¹⁹» (ԳՊ, *Կրկնագիր մարդը*, էջ 25)։

* Նայիլ

Հայեացքը մէկուն կամ բանի մը ուղղելու բնախօսական արարքը, բայց նաեւ խուզարկել ու սերտել իմաստներով՝ չէզոք բայ է եւ կ'առնէ տրական հոլով խնդիր. օրինակ՝ «նայիլ **մարդուն, հաշիւին**» եւ այլն։ Խնամել, հոգ տանիլ իմաստով՝ դարձեալ տրական հոլով խնդիր կ'առնէ. օրինակ՝ «**փոքրիկին** նայիլ», «**պարտզին** նայիլ» եւ այլն²⁰։ Սակայն նոյն հայեացքը ուղղել, դիտել իմաստով կը գտնենք հայցական հոլովով խնդրառութեան բազում օրինակներ եւս, երբ լրացումը իբրեւ տեղ կը մտածուի. այսպէս՝ «**երկինք** կամ **զետին** նայիլ» (այս երկուքը միշտ անյօդ կը կիրարկուին), «**առջեւ-ետեւ** նայիլ», «**երեսը** նայիլ» եւ այլն։

Օտեան այս բայը մտածած ու գործածած է **քննել** իմաստով, հետեալաբար տուած է հայցական հոլով խնդիր. «Բժիշկը քննեց տղան, **լեզուն** նայեցաւ, **կոկորդը** նայեցաւ, **աչքերուն** նայեցաւ եւ վճռաբար ըսաւ...» (*Փանջոնի*, նախաբան),– յատկանշական է, որ **նայիլ** բային մէջ մը հայցական հոլով ուղիղ խնդիր տուած է՝ **լեզուն**, մէջ մը՝ տրական հոլով՝ **աչքերուն**։ Ուրեմն համարժէք խնդիրներուն երկուքը **հայցական** հոլով դրուած են, մէկը՝ **տրական** հոլով։

¹⁹ Այլուր նոյն խնդիրը կը գտնենք տրական հոլով գործածուած. «Երբ կ'ընդգծենք տող մը, փաստօրէն կը մոռնանք գրուածքը եւ կը սեւեռենք **իմաստին**» (ԳՊ, *Տարւ*, էջ 171)։

²⁰ Շահնուր այս իմաստով ունի հայցական հոլով կիրարկութիւն մը՝ «Իր աղջկն ու փեսան է որ **զինքը** կը նային» («Մանուկ մը տարեցներուն մէջ»), որ, սակայն, սովորական չէ։

Ունինք **վերանայի** վերացական-իմացաբանական բայը, որ այլևս հայեացքը մեկուն կամ բանի մը ուղղելու բնախօսական արարքը չի նշանակեր, այլ կը նշանակէ կրկին աչքէ անցընել, վերաքննել, բարեփոխել՝ միտք մը, գնահատական մը, վճիռ մը, նոր տեսանկյունով մօտենալ բանի մը: Իր այս ձեւով եւ այս բոլոր իմաստներով բայս միշտ ներգործական է եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր. «վերանայիլ **յօղոած մը, որոշում մը**», «Պէտք է վերանայիլ այս **յօղոածին գաղափարները**»:

Ան միաժամանակ հոմանիշ է **վերատեսնել** բային:

* **Ներել**

Կարգ մը դասագիրքեր չեն վարանիր գրելու, թէ «երբ **ներել** բային խնդիրը ունի անձի առում, ան կը դրուի տրական հոլով, իսկ երբ ունի իրի առում²¹, կը դրուի հայցական հոլով». օրինակ՝ «կը ներեն **Թորոսին**» բայց «կը ներեն **մեղքերդ**», – ինչ որ կը նշանակէ, ըստ յիշեալ տրամաբանութեան, թէ «քեզի» եւ «մեղքերդ» հասասարապէս ուղիղ խնդիր են:

Ասի ճիշտ բանաձեւում մը չէ: Արեւմտահայերէնը անձի եւ իրի առումի գանազանութիւն չունի: Երկրորդ՝ «քեզի» եւ «մեղքերդ» տարբեր բնոյթի խնդիրներ են. առաջինը **յանգման** խնդիր է (շահի տրական), իսկ երկրորդը՝ **ուղիղ** խնդիր է: Կրատրականի կիրարկութիւնը անելի ցայտուն կը դարձնէ այս կացութիւնը, ուր առկայ է շահի տրականը. այսպէս՝ «Քու **մեղքերդ քեզի** ներում են» (Մատթ. ԲԹ/2): Կը բաւէ ներգործականի վերաձեւ բայը, եւ իսկոյն երեսն կ'ելլեն ուղիղ եւ անուղղակի խնդիրները. «Քու **մեղքերդ կը ներեն քեզի**»:

Ներումի առարկան միշտ արարքի մը կամ գործողութեան մը անունն է, որ կանոնատրապէս կը դրուի հայցական հոլով. օրինակ՝ **մեղք, գանցառութիւն, մոռացում, յանցանք, ուշացում, անկրթութիւն** եւ այլն: Ներումը միշտ տեղի կ'ունենայ ի նպաստ անձի մը, որուն անունը կանոնատրապէս կը դրուի տրական հոլով. այսպէս՝ «կը ներեն **Տրդատին յանցանքները**»:

Ներելը հոմանիշ է գրաբարեան **թողուլին**, որ ունէր առաջինին զուգահեռ խնդրառութիւն մը. օրինակ՝ «Թող մեզ զպարտիս մեր» (Ներէ մեզի մեր պարտքերը), – ուր **մեզ** տրական հոլով յանգման խնդիր է, իսկ **զպարտիս**² հայցական հոլով ուղիղ խնդիր է:

* **Շորհակալ**

1. **Շնորհակալ** (եմ, ըլլամ)

²¹ Անձի եւ իրի առումներու պարագային խնդրոյ առարկայ են նոյն պաշտօնը կատարող երկու տարբեր հոլով գոյականներ. օրինակ՝ «**ծառ տեսայ**» եւ «**ընկերոջս տեսայ**». այստեղ նոյն **տեսնել** բայը ունի երկու ուղիղ խնդիրներ, որոնց առաջինը իբրեւ իր կ'ընկալուի եւ կ'առնէ հայցական հոլով, իսկ երկրորդը կ'ընկալուի իբրեւ անձ եւ կ'առնէ տրական հոլով: Մինչդեռ **ներել** բային վերագրուող լրացումները տարբեր են քերում օրինակներուն մէջ:

Այս բանը ածական մըն է, որ իբր այդպիսին՝ շատ լայն գործածություն ունեցած է գրաբարի մէջ. կը նշանակէ՝ շնորի ստացած, ընդունած, շնորհի արժանացած: *Նոր հայկազեանի* բառերով՝ «գոհացող, շնորհահատուց, երախտագէտ», այս առումով ան կու տայ օրինակներ եւ՝ **ծառայ շնորհակալ, կին շնորհակալ, միտք շնորհակալ...**

Նկատելի է, որ աշխարհաբարը նման կիրարկություն չունի: Մեր արդի լեզուն որեւէ առեւն **շնորհակալ** չի կոչեր անձ մը, որ շնորի ստացած է, շնորհի մը արժանացած է:

Մեզի համար գոյութիւն ունի **շնորհակալ ըլլալ** բաղադրեալ բայը՝ «շնորհակալ եմ» կամ «շնորհակալ կ'ըլլամ» ձեւերու տակ, որ իր կարգին լայն գործածություն ունէր գրաբարի մէջ.

–Յոյժ շնորհակալ լինէր **նմա եւ երիցանցն**²²:

–Այնպիսեացն ես ոչինչ եմ շնորհակալ:

–Գովասանական **բանիցդ** շնորհակալ եմ:

–Ի վերայ **մեծամեծաց** Աստուծոյ շնորհակալ լինել:

Հարցը, որ այստեղ քննութեան կ'ուզենք առնել, այս բային խնդրին հոլովն է. այդ խնդիրները թաաագրուած են, եւ նկատելի է, որ բոլորն ալ տրական հոլով դրուած են: *Նոր հայկազեանի* բերած բոլոր օրինակներուն մէջ թէ՛ **շնորհակալ** ածականը, թէ՛ **շնորհակալ ըլլալ** բաղադրեալ բայը միայն տրական հոլով խնդիր առած են: Ուրեմն գրաբարը խնդրառական որեւէ շփոթ կամ երկություն չէր պարզեր:

Բայց ահա կ'ացտութիւնը նոյնը չէ աշխարհաբարի մէջ, ուր «շնորհակալ ըլլալ» բայը հասարակապէս տրական եւ բացառական հոլով առնելու հակամէտ է.

–Շնորհակալ եմ **քեզի** եւ **քեզմէ**:

–Շնորհակալ եղայ **իրեն** եւ **իրմէ**:

–Ան շնորհակալ պիտի ըլլայ **մեզի** եւ **մեզմէ**:

Թաաագրուած խնդիրները հասարակապէս տրական են եւ բացառական: Բացառութիւն չէ այս երկակի խնդրառութիւնը, սակայն ընդհանրացած ալ չէ:

Այս երեւոյթը աւելի կը հաստատուի հայրենի Լեզուի կոմիտէի հրապարակած 24րդ յորդորակով, ուր արեւելահայերէնի պարագային ես կը տիրէ խնդրառական նոյն երկությունը. առ այս տրուած է հետեւեալ օրինակը. «Շնորհակալ ենք **ձեզ**²³/**ձեզնից**, որ հետետում էք մեր խորհրդներին»:

2. Շնորհակալութիւն (յայտնել)

²² Ծանօթ.– Յատկանշական է, որ Մատրասի *Ազգարարը* իր 17-1796ի խմբագրականին մէջ ունի՝ «Հարկադրէր մեզ շնորհակալ **ի նմանէ** լինել»,– հոն ուր նմա տրականը կ'ակնկալուէր բացառականի փոխարէն:

²³ Արեւելահայերէնի մէջ տրական են՝ **ինձ, քեզ, մեզ, ձեզ**՝ ճիշտ գրաբարի պէս: Ասոնց կը համապատասխանեն արեւմտահայերէն **ինձի, քեզի, մեզի, ձեզի**:

Սա իր կարգին կու գայ գրաբարէն, ուր ան կը կիրարկուէր մի'այն իբրև գոյական:

Մինչդեռ աշխարհաբարը կը թոյլատրէ, որ փոխանակ ըսելու «**շնորհակալ եմ**» ըսնէք մի'այն՝ «**շնորհակալութի'ն**», մանաւանդ եթէ որոշ մտերմութիւն մը կայ խօսակիցներուն միջեւ եւ կը տիրէ ոչ-պաշտօնական, ժողովրդախօսակցական ոճ մը, ուր այլեւս դիմատուր բայ չկայ, այլ ունինք անդէմ գոյական մը միայն, որ կը կազմէ բառ-նախադասութիւն մը:

Այս վերջինը՝ իբրև բառ-նախադասութիւն, չէ կիրարկած գրաբարը:

Աշխարհաբարի յիշեալ երկու կիրարկութիւնները՝ անդէմ եւ դիմատուր, հետետողականօրէն կը պահանջեն մի'այն տրական հոլով.

–Շնորհակալութի'ն **քեզի**...շնորհակալութիւն կը յայտնեն **քեզի**:

–Շնորհակալութի'ն **ձեզի**...շնորհակալութիւն կը յայտնեն **ձեզի**:

–Շնորհակալութի'ն **ի՛րենց**...շնորհակալութի'ն յայտնենք **ի՛րենց**:

Օտեան ունի արատատուր կիրարկութիւն մը՝ «Շնորհակալ եմ ձեր ցոյց տուած **համակրութենէն**» (*Թաղականին կնիկը*),– ուր տրական հոլով խնդիր կ'ակնկալուէր:

Սա ի'ր կարգին հաստատուած է արեւելահայերէնի մէջ, եւ նոյն յորդորակը կու տայ հետեւեալ օրինակները. «Շնորհակալութիւն ենք յայտնում **ձեզ** /շնորհակալութի'ն **ձեզ**»:

Ծանօթ.– Թեղադրելի է, որ Լեզուի կոմիտէն «Արմայրեօսին սորվեցնէ այսբանը, վասնզի անոր 18-6-21ի թողարկումին մէջ կը կարդանք. «Նախագահը շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն **քաղաքացիներից**...»,– փոխանակ՝ **քաղաքացիներին**:

Ուրեմն իրենց պատմական հոլովոյթի որջ ընթացքին այս բառերն ու բայերը մեր երկու աշխարհաբարներուն մէջ կրած են կառուցային եւ խնդրառական նոյն բարեշրջութիւնը: Ենթադրելի է, որ այս բարեշրջութիւնը տեղի ունեցած ըլլայ մեր երկու բարբառներու ձեւատրումէն առաջ, թէեւ բացառուած չեն հետագայ ներթափանցումները ես:

Յատկանշական է, միւս կողմէ, որ Ռուբէն Ղազարեանի *Միջին հայերէնի բառարանին* մէջ չենք գտներ սերտուած բառերէն ոչ մէկը. կը գտնենք միայն «**շնորհընկալութիւն**», որ, ճիշտ է, որոշ չափով կը թելադրէ զանոնք, սակայն ո'ր անհետացած են միաները եւ ինչպէ՛ս ատելի ուշ վերայայտնուեցան անոնք աշխարհաբարի մէջ:

Ուրեմն՝

–Շնորհակալ եմ **քեզի/քեզմէ**:

–Շնորհակալութիւն **քեզի/ շնորհակ.** կը յայտնեն **քեզի**:

* **Ունկնդրե՛ք մտիկ ընել**

Արեւմտեան աշխարհաբարի այն բայերէն է, որոնք կայուն ու բիւրեղացած խնդրառութիւն չունին: Արդի արեւմտահայը հասասարապէս կ'ունկնդրէ **երաժշտութիւնը** եւ **երաժիշտը**, ինչպէս կ'ունկնդրէ **երաժշտութեան** եւ **երաժիշտին**: Խնդրառական այս երկծեութիւնը հասանաբար հետե-

անք է այն իրողութեան, թէ խօսողը որքան՞ով ի մտի ունի բայիս ստուգաբանութիւնը, որ կու տայ «ունկ-դներ»։ Եթէ ան կը գիտակցի այս ստուգաբանութեան, ապա բնական հակում ունի տրական հոլով խնդիր տալու անոր՝ **ունկնդրել երգին**, քանի որ աշխարհաբարի մէջ յառաջացած **ականջ տալ, ականջ դնել** յարադիր հոմանիշները միահամուտ տրական հոլով խնդիր կ'առնեն, ապա թէ ոչ՝ կիրարկութեան հաւանականութիւն կը ստանայ նաեւ հայցական խնդրառութիւնը՝ **ունկնդրել երգը**։ Ասոնց կողքին բացառուած չէ նաեւ խնդրառական այն տկարութիւնը, որով կը յատկանշուի **ունկնդրելը**, որ չի յաջողիր իր խնդիրին պարտադրել կայուն հոլով մը։

Գալով **մտիկ ընել** հոմանիշին, ապա այս մէկը գրեթէ զանազանութիւն չի դներ եւ հաասարապէս կ'ըսէ «մտիկ ընել **երգը** կամ **երգիչը**»։ այսինքն նոյնն է ինչպէս ունկնդրելը օրինակ՝ «Տոբթօրը ինքը **մտիկ կ'ընէր ամէնուս**» (ԳԶ, «Երջանիկ մահր»)։ «Խելօք կեցած տղոց պէս **մտիկ ըրինք զինքը**» (անդ)։ «Բայց ո՞վ **մտիկ կ'ընէր ինծի**» (անդ)։

Պարզ է, որ այս բայն ալ իր կարգին կը յատկանշուի խնդրառական թղովութեամբ՝ նախորդին պէս, որուն հոմանիշն է։

* Պատահիլ

Կը նշանակէ անակնկալօրէն տեղի ունենալ։

Կրնայ զանազան հոլովներով լրացումներ առնել տեղին ու պարագային համեմատ. օրինակ՝ «Ի՞նչ պատահեցաւ **քեզի**» կամ «Ի՞նչ պիտի պատահի **ապագային**» (տրական հոլով), «Ի՞նչ պատահեցաւ **երէկ**» (հայցական հոլով)։

Ատենէ մը ի վեր արեւմտահայերէն սկսած է թափանցել այս բային կիրարկութիւնը **հետ** յետադրութեամբ հանդերձ. այսպէս՝ «Ի՞նչ կը պատահի **քիւրտ ժողովուրդին հետ...**» (Քասունի), «Ի՞նչ կը պատահի **պաղեստինցի ժողովուրդին հետ**» (նոյն)։ Այս էապէս խորթ ոճին աղբիւրը արեւելահայերէնն է, ուր ան տարածուած է ցաազին յաճախականութեամբ մը, բայց նաեւ...անգլերէնը (**happen with**). բացառուած չէ արաբերէնի ազդեցութիւնը եւ։

Նմանապէս տրական հոլով խնդիր կ'առնէ բայս, երբ ան կը նշանակէ **հանդիպիլ**. օրինակ՝ «**Սանդուխներուն** վրայ երբ պատահէինք, կը հարցնէին տղոս եւ ամուսնոյս մասին։ Քիչ-քիչ ա՛լ չպատահեցանք **իրարու**, հանդիպած ժամանակ ալ միայն բարեւեցինք ու անցանք» (ՊԲ, էջ 60)։

* Պատմել

Ներգործական բայ է եւ կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր, օրինակ՝ «պատմել **պատմութիւն մը, եղելութիւնը**» եւ այլն։ Ան շատ հակամէտ է առնելու նաեւ վերաբերութեան անուղակի խնդիր մը, որ կրնայ

դրուիլ բացառական հոլով՝ պատմել **հայրենիքն, լեռնն ու ձորէն**»²⁴ Եւ այլն, նաեւ սեռական հոլով՝ **մասին** կապով հանդերձ. օրինակ՝ «պատմել **գործունէութեան մը մասին, զաւակին մասին**» Եւ այլն:

* **Պարտադրել**

Տեսնել ստորեւ **ստիպել** բառայօդուածին տակ:

* **Սպասել**

Չէզոք է եւ տրական հոլով խնդիր կ'առնէ, երբ կը նշանակէ որոշ ժամանակ որեւէ տեղ գտնուիլ՝ մնալ՝ կանգ առնել՝ ակնկալելով մէկուն գալուն, բանի մը տեղի ունենալուն կամ սկսելուն. օրինակ՝ «Հանդիսականները կը սպասէին վարագոյրի **բացուելուն**»: «Այս կալուածները կը սպասեն հմուտ **վերակացուի** մը»: «Կոչնականները կը սպասէին տանտիրոջ **ազանշանին**»:

Ներգործական է, երբ կը նշանակէ ակնկալել. օրինակ՝ «Իրմէ **բառ** մը, **քայլ** մը, **շարժում** մը կը սպասենք՝ մեր գիրկը ընդունելու համար զինք»: «Հանրութիւնը անհամբեր կը սպասէր ոճիրի ծայքերուն **բացայայտումը**»: «Այսպիսի **մերժում** մը (վերաբերում մը) չէինք սպասեր»: Ասոնք շատ զանազանելի կիրարկութիւններ չեն, եւ բայիս խնդրառութիւնը այնքան ալ բիրտդացած չէ հանրօրէն, որքան ալ վաղուց երկփեղկուած ըլլայ ան:

* **Ստիպել, յորդորել, հարկադրել, բռնադատել, պարտադրել**

Ստիպելը սովորաբար կ'առնէ երկու խնդիր. այսպէս՝ կը ստիպենք **մէկը** (հայցական հոլով)՝ **բանի** մը (տրական հոլով):

ա) Առաջինը ստիպողութեան ենթարկուող, ստիպողութիւնը իր վրայ կրող առարկան է՝ անձը կամ անասունը, որ կը դրուի **հայցական** հոլով եւ կը կատարէ ուղիղ խնդիրի պաշտօնը. «Ստիպեցին **զիս**», «Ստիպեցին **թշնամին**»²⁵:

բ) Երկրորդը սովորաբար անորոշ դերբայ մըն է, որ կը դրուի **տրական** հոլով եւ ցոյց կու տայ տուեալ անձին կամ անասունին պարտադրուած գործողութիւնը կամ վիճակը. «Ստիպեցին **զիս ուրանալու** ինքնութիւնս»: «Ստիպեցին **թշնամին նահանջելու**»²⁶ յետին զիժերը:

²⁴ Այս բացառականը, խորքին մէջ, գրաբարի պատմական հոլովն է՝ **զհայրենիքէ, զպատերազմէ** Եւ այլն, որ նախդիր կորսնցնելով սովորական բացառական կը ձեւացնէ:

²⁵ Այս խնդիրին հոլովը կը հաստատուի գրաբարեան հետեւեալ օրինակներով եւս՝ *Նոր հայկազեանէն* քաղուած. «Եթէ մի օր ստիպեմ **զդոսս**, մեռանին ամենայն խաշինքը». «Բանն արքային ստիպեաց **զիս**: Ստիպեաց **զնա** եւ ոչ կամեցաւ երթալ»: Բաց աստի՛ նոյն հոլովներով խնդրառութիւն ցոյց կու տան ֆրանսերէնն ու անգլերէնը. “Il a obligé l'élève (հայցական) à s'agenouiller” (տրական): “He obliged the boy (հայցական) to swallow (տրական) the tablet”:

²⁶ Արեւելահայերէնը, այս պարագային, խտոր կը համեմատուի արեւմտահայերէնին, որովհետեւ ան կը յաջողի այս խնդիրը արտայայտելու ուղղական հոլովով, միայ կողմէ՛ ան շնչատր էակներու պարագային ուղիղ խնդիրը կ'արտայայտէ

Արեւմտահայ մամուլէն մէջբերուած ներքոյիշեալ օրինակին մէջ այս հո-
լովները գլխիվայր շրջուած են. «Անգարային (տրական) ստիպեցին բա-
րեւիոխումներ կատարել (հայցական)»,- ուր պէտք է ունենայինք՝ «Անգա-
րան ստիպեցին բարեւիոխումներ կատարելու», կամ «Ստիպեցին Անգա-
րան բարեւիոխումներ կատարելու»:

Ստիպելին խնդրառութիւնը ունի յորդորելը. «Ան յորդորեց նորեկը ա-
ւելի համբերատար ըլլալու», - ուր եթէ պարտադիր է հայցականը, ապա
բաական խախտու է ըլլալու տրականը, որ մաշումի ենթակայ հոլով մըն
է, մաշում, որ գրաբարէն կու գայ եւ որուն համար ան չի կրնար պար-
տադրել ինքզինքը:

Ունինք երկու հոմանիշներ՝ **հարկադրել** եւ **բռնադատել**, որոնց
խնդրառութիւնը բոլորովին կը նոյնանայ ստիպելին հետ. այսինքն՝
«Հարկադրեցին (բռնադատեցին) զիս ուրանալու ինքնութիւնս»:

Անդին ունինք տակաւին պարտադրել բայը, որ նմանապէս հոմանիշ է
վերիններուն, բայց եւ այնպէս ունի բոլորովին հակառակ խնդրառութիւն.
օրինակ՝ «Ստիպեցին զիս ուրանալու ինքնութիւնս» (հայց.-տրական),
բայց «պարտադրեցին ինծի ուրանալ ինքնութիւնս» (տրակ.-հայցական):
Պարտադրել բայի հայցական հոլով ուղիղ խնդիրը անորոշ դերբայի փո-
խարէն կրնայ շատ յաճախ ըլլալ հասարակ գոյական մը. օրինակ՝ «Շատ
խիտ սենդականոն մը պարտադրեցին ինծի»:

Ունինք, վերջապէս, երկու յարաբերաբար հնացած բայեր՝ **հարկատրել**
եւ **պարտատրել**, որոնք մօտաւոր հոմանիշներ են բերուած չորս բայերուն,
սակայն չունին անոնց գործածութեան յաճախականութիւնը, այլ գրեթէ
դուրս մնացած են այլեւ արդի հայուն բառապաշարէն: Ասոնք իրենց
խնդրառութեամբ կը նոյնանան ստիպել, հարկադրել եւ բռնադատել բա-
յերուն հետ. օրինակ՝ «Մոզերը հարկատրեցին հայերը կրակը պաշտե-
լու»: «Գիտես թէ ի՞նչ ծանր զոհողութիւններու պարտատրեց զիս այս սէ-
րը» (ԳՁ): «Դափթ առ քաղցին ելոյծ զօրէնս, եւ ոչ ոք պարտատրեաց
զնա» (Աստուածաշունչ):

Շարահիասական հոմանշութիւն ունին ասոնց հետ նաեւ **իրահանգել**,
թելադրել, **մաղթել** եւ այլն, եւ նոյնութիւն կրնան ներկայացնել քիչ մը այն
բոլոր բայերը, որոնք անհրաժեշտաբար երկու տարբեր խնդիր կ'առնեն:

* Վախնալ. տե՛ս՝ գզուշանալ:

* Վայելել

Ունի երկու՝ բաական տարբեր նշանակութիւններ.-

ա) Ունենալ, ըմբռնել, հաճոյքով ճաշակել, գոհունակութեամբ օգտա-
գործել, արժանանալ՝ պատիփ, սիրոյ, յարգանքի. իր այս իմաստներով

տրական հոլովով. այսինքն՝ կ'ըսէ՝ «Ստիպեցին թշնամուն նահանջել...»: Արեւ-
մտահայերէնը այս պարագային եւ գոնէ առայժմ չի թոյլատրեր նման խնդրառու-
թիւն. ուրեմն պարտադիր կը մնան՝ վերոնշեալ թէ՛ հայցականը, թէ՛ տրականը:

ան ներգործական է եւ կ'աննէ հայցական հոլով ուղիղ խնդիր. օրինակ՝ «վայելել **համերգ** մը, **համադամ** մը, **կեանքը**» եւ այլն:

բ) Յարմարի, պատշաճի, վայելչութիւն պարգեւել իր այս իմաստով ան չէզոք է եւ կ'աննէ տրական հոլով անտողակի խնդիր. օրինակ՝ «Գլխարկը վայելած է **քեզի**», «Նման վերաբերում չի վայելեր **անոր**», «Հագուստը շատ վայելած է **հարսին**» եւ այլն:

Կար ժամանակ մը, ուր փորձուեցաւ այս իմաստներէն առաջինին յաւկացնել **վայելել** ձեւը²⁷, հաւանաբար հետեւողութեամբ Գայայեանի, սակայն փաստօրէն նման զանազանութիւն մը չէ նուիրականացուցած մեր լեզուն, իսկ **վայելել** ձեւը ներկայիս փաստօրէն կ'ընկալուի իբրեւ ռամկաբանութիւն կամ ժողովրդախօսակցական տարբերակ մը, որ չի յաջողիր անցնիլ գրական լեզու: Գալով պատճառական սեռին՝ **վայելցնել**, քիչ մը զարտուղի է ան. կ'ակնկալուէր որ ունենայինք **վայելել-վայելցնել**, բայց ահա տիրական է **վայելցնել** ամփոփ ձեւը, ինչ որ սովորական չէ. բարեհնչութեան սիրոյն՝ սղած է առաջին ե ձայնատրը. օրինակ՝ «Քեզի չեմ **վայելցներ** նման վարմունք մը»: «Ինք **վայելեց** կեանքը, հարազատներուն ալ **վայելցուց** զայն»:

* **Վարուիլ**

Տե՛ս ստորեւ՝ «**վերաբերիլ**»ի ասարտին:

* **Վերաբերիլ**

Արդի հայերէնի մէջ ունի երկու բաական զատորոշ իմաստներ, որոնք իրենց կարգին կ'ենթադրեն երկու տարբեր խնդրատութիւններ:

ա) Որեւէ կապ կամ առնչութիւն ունենալ, պատկանիլ, ուղղուիլ. իր այս իմաստով ան կը պահանջէ տրական հոլով խնդիր մը, որ սովորաբար անծի անուն է, յաճախ՝ վերացական հասկացութիւն մը, հազուադէպ՝ իրի անուն. օրինակ՝ «Այս գործիքները կը վերաբերին **ատաղձագործին**»: «**Ինծի**՝ կը վերաբերի այդ նկատողութիւնդ»: «Նման սեղմումներ կը վերաբերին միայն **բանակայիններուն**»: «Տարիէն աւելի էր որ կը տեսնուէի հետը՝ առանց ո՛ր **ընտանիքին** վերաբերիլը գիտնալու»:

բ) Այս կամ այն կերպ վարուիլ որեւէ անձի, առարկայի, երեւոյթի հետ. իր այս իմաստով ան կ'աննէ **հանդէպ** կամ **հետ** յետադրութիւնը՝ տրական հոլով խնդիրով մը. օրինակ՝ «Պարտինք յարգանքով վերաբերիլ մեր **ստո-**

²⁷ Այսպէս մտածած է Աճառեան, որ արեւմտահայ իրականութենէն կտրուած էր 1900ականներէն սկսեալ (*Հայոց լեզուի պատմութիւն*, Բ., էջ 563): **Վայելել**՝ կեանքի հաճոյքներն ու բարիքները ըմբռնելու իմաստով, կը գտնենք Մալխասեանի քառարանին մէջ եւ: Սակայն Ակադեմիայի քառահատորը դուրս ձգած է զայն արեւելահայերէնէն, նոյնը ըրած է Էդուարդ Աղայեան, եւ շատ ճիշտ վարուած են անոնք, վասնզի արդի գրական զոյգ աշխարհաբարները հասաստաբապէս կը մերժեն այս ձեւը:

բաղասներուն հանդէպ»: «Բանուորներուն հետ շատ զգուշ կը վերաբերի»²⁸:

Շատ նուրբ տարբերութիւն մը կայ երկու յետադրութեանց կիրարկութեան միջեւ. ա) **հանդէպի** պարագային վերաբերումը միակողմանի արարքի տպաւորութիւն կը ձգէ. ան որեւէ ձեւով չի յուշեր ստորադասներու վերաբերումին բնոյթը. բ) **հետի** պարագային զգայի է վերաբերմունքային ինչ-որ փոխադարձութիւն մը, ջերմութիւն մը, որ կը թելադրուի **հետի** իմաստէն:

Վերաբերում ունենալ. նոյնանիշ է երկրորդ իմաստին հետ, ունի նոյն խնդրատութիւնը՝ վերաբերում ունենալ **մէկուն հանդէպ:** Արեւելահայերէնի ազդեցութեամբ՝ բացառուած չէ **դէպի** կապով լրացումը **հանդէպի** փոխարէն. օրինակ՝ «Ուսուցիչները ...ցուրտ **վերաբերում ունին դէպի մեզ**» (ԵՕ, *Փանջունի ի Վասպուրական*, Է. նամակ):

Վերաբերում ցոյց տալ. հոմանիշ է նախորդին, սակայն կը փոխուի խնդրատութիւնը. սա կ'առնէ տրական հոլով խնդիր՝ տալ բայի թելադրանքով. օրինակ՝ «Ան կիրթ վերաբերում ցոյց տուաւ իր **պաշտօնակիցներուն**». «Շատ բիրտ վերաբերում ցոյց կու տայ **ստորադասներուն**»:

Վարուիլ. հոմանիշ է **վերաբերիլի** երկրորդ իմաստին. լրացումը կապական է՝ **հանդէպ** եւ **հետ** յետադրութիւններով, եւ կրնայ ըլլալ որեւէ առարկայանիշ բառ. օրինակ՝ «Լաւ վարուիր **անոր (աշակերտներուն)**» հետ-հանդէպ» եւ այլն: Նրբերանգային նոյն տարբերութիւնը երեսան կ'ելլէ **հետ** եւ **հանդէպ** կապերուն միջեւ: **Հետի** պարագային անելի սերտութիւն մը, մտերմութիւն մը, ջերմութիւն մը կայ ենթակային ու խնդիրին միջեւ, մինչ **հանդէպի** պարագային այդ յատկութիւնները կը բացակային:

Կրնայ կիրարկուիլ առանց խնդիրի եւս, ընդհանուր նշանակութեամբ մը. օրինակ՝ «Չենք գիտեր, թէ ան ինչպէ՛ս կը վարուի տան մէջ կամ պաշտօնատեղին»:

* Վկայել

Ներգործական բայ է, ուստի կ'առնէ հայցական հոլով ուղիղ խնդիր, սակայն ասի պատճառ մը չէ, որ առնէ այլ հոլով խնդիր եւս, ինչպէս կը պատահի ասացական բայերու պարագային. օրինակ՝ «Բոլոր ընկերները վկայեցին **անոր ջանասիրութիւնը**» եւ «Բոլոր ընկերները վկայեցին **անոր ջանասիրութեան մասին**»:

Ինչպէս կը տեսնենք հոմանիշ կամ համարժէք լրացումներ են ուղիղ խնդիրն ու անտղակի խնդիրը: Թէեւ ուղիղ խնդիրը միշտ ալ անելի ուժգին կ'ընդգրկուի բային կողմէ եւ անելի ազդու լրացում է²⁹:

²⁸ Արեւելահայերէնը բ. իմաստը կ'արտայայտէ **վերաբերուել** բայածեով, որ կրատրական չէ, այլ չէզոք, երբեմն առանց որեւէ յետադրութեան, բայց նաեւ **հետ**, **հանդէպ** եւ **դէպի** յետադրութիւններով հանդերձ. օրինակ՝ «Նա **մեզ հետ** շատ զգուշ **վերաբերուեց**»:

Պատմել ասացական բայը կրնայ առնել երեք զուգահեռ հոմանիշ լրացումներ՝ **պատմել անցեալը, պատմել անցեալին, պատմել անցեալի մասին:**

*** Վնասել**

Կը նշանակէ կորսնցնել, եւ իր այս իմաստով ան ներգործական սեռի է, ուրեմն հայցական հոլով ուղիղ խնդիր կ'առնէ: օրինակ՝ «հարիւր **ոսկի** կորսնցնել» եւ այլն: Երբ այս կապակցութիւններէն զեղչենք առարկայանիշ բառը, մնացեալը այլեւս ուղիղ խնդիր չէ, այլ չափի պարագայ. օրինակ՝ «Ես **հարիւր** կորսնցուցի, դուն **յիսուն**»:

Վնասել կը նշանակէ նաեւ որեւէ վնաս պատճառել, խեղել, անբերել, եղծել, եւ այս պարագային չէզոք սեռի է եւ կ'առնէ տրական հոլով անուղղակի խնդիր. օրինակ՝ «կարկուտը վնասեց **ծաղիկներուն**», «անքնութիւնը կը վնասէ **առողջութեան**» եւ այլն: Այս վերջին կիրարկութեամբ՝ **վնասել** համարժէք է **վնաս տալ** ու **վնաս պատճառել** յարադրական բայերուն. այսպէս՝ կարկուտը **վնաս տուա** կամ **պատճառեց** ծաղիկներուն:

*** Տատանիլ, տատամսիլ, վարանիլ**

Ասոնք որոշ չափով հոմանիշներ եւս են: Ոմին նոյն տրական հոլով խնդրառութիւնը. օրինակ՝ «կը տատանէր **առնելու**», «Հոփսիսմէ կը վարանէր դուրս **ելլելու**» (ԱԱ, էջ 72):

*** Տեղեկանալ**

Չէզոք սեռի բայ է, ուրեմն չի կրնար ուղիղ խնդիր առնել, սակայն կ'առնէ երկու անուղղակի խնդիր՝ բացառական եւ տրական: Բացառական հոլով կը դրուի այն խնդիրը, որ ցոյց կու տայ ստացուած կամ ստացուելիք տեղեկութեան աղբիւրը, ուրկէ ծնունդ կ'առնէ կամ պիտի առնէ տեղեկութիւնը՝ «տեղեկանալ **թերթէն**», իսկ տրական հոլով կը դրուի այն խնդիրը, որ ցոյց կու տայ տեղեկութեան ընդգրկած առարկան, այն, որուն մասին տեղեկութիւն կը տրուի կամ պիտի տրուի՝ «տեղեկանալ **կացութեան**»:

Ոմնի **ծանօթանալ** բայի խնդրառութիւնը, որ անելի հեշտ կը կառավարուի արդի արեւմտահայուն կողմէ: Օրինակ՝ «Մենք **թերթէն** տեղեկացանք (ծանօթացանք) **իրավիճակին**»: «Քեզմէ կ'ուզեմ տեղեկանալ **իրողութեան**»: «Հեռատեսիլէն տեղեկացաւ **մանրամասնութիւններուն**»: «Ականատեսէ մը տեղեկացայ եղելութեան **իսկութեան**»: Մելքոն Կիւրճեան կը հայթայթէ հետեւեալ ճիշտ օրինակը. «Արփիա՛ր, իր **պատմութեանը** տեղեկացի՛ր նոյնիսկ իր **բերնէն**» (ԼԳԲ, էջ 39):

Բարդ նախադասութեան պարագային, երբ **տեղեկանալ** բայը կը գտնուի գլխատր նախադասութեան մէջ, ապա երկրորդական նախադասութիւնը կ'ընկալուի իբրեւ անուղղակի խնդիր եւ ոչ թէ ուղիղ խնդիր, ինչ-

²⁹ Լրացական նոյնպիսի զուգահեռութիւն կրնան ունենալ այլ ասացական ու մտածական բայեր եւս, ինչպէս՝ **լսել, երագել, ենթադրել, յայտնել, հարցնել, մտածել**. օրինակ՝ «Կը մտածէ ճամբորդել» եւ «Կը մտածէ ճամբորդելու մասին»:

պէս կը թոփ ոմանց. օրինակ՝ «Ուշ երեկոյեան տեղեկացանք, թէ օդակա-
յանը փակ է»³⁰:

Տեղեկանալին հոմանիշ են **տեղեակ դառնալ, տեղեակ ըլլալ, տեղեակ պահուիլ** վերլուծական կառոյցները, որոնք, չէզոք սեռի ըլլալով, ունին նոյն խնդրատօնները. օրինակ՝ «Անձամբ **քեզմէ** կ'ուզեմ տեղեակ դառնալ/ըլլալ/պահուիլ **կացութեան**»:

Ըստ այսմ՝ սխալ է հետեւեալը. «Սուրիա ամէն օր տեղեակ կը դառնար բանակցութեանց **արդիւնքէն**». պէտք է ըլլայ **արդիւնքին**: Բացառական հոլովը այս պարագային վերապահուած է տեղեկութիւնը տոտղ աղբիւրին. այսպէս՝ «Սուրիա ամէն օր իր **պատուիրակէն** տեղեակ կը դառնար բանակցութեանց **արդիւնքին**»³¹: Սխալ է հետեւեալ կիրարկութիւնը եւս. «Ինք ալ ուզած էր զիս տեղեակ պահել այդ **հրատարակութենէն**» (Հատ-տէճեան),- որ պէտք է ըլլայ **հրատարակութեան**:

Ունինք **տեղեակ մնալ** չէզոք սեռի յարադրութիւնը, որ զգալիօրէն հոմանիշ է նախորդին, սակայն ունի խնդրառական որոշ տարբերութիւն. օրինակ՝ «Մայրը զաւկին **մահուան** տեղեակ մնաց **ընկերներուն միջոցաւ**»: «Պայտօմի **տարրդութեան** տեղեակ մնաց **շնորհիւ անցորդի մը**»:

Ուրեմն ի զօրու կը մնայ տրական հոլով խնդիրը, իսկ բացառական հոլով անտողակի խնդիրը կը վերածուի կապական լրացումի, որ միջոցի անտողակի խնդիր կը ձեւացնէ³²:

³⁰ Հարցում՝ տեղեկացանք ի՞նչ բանի (եւ ոչ թէ՛ ի՞նչ),- «թէ օդակայանը փակ է»,- որեւէմ՝ յանգման անտողակի խնդիր:

³¹ Այս անձականին տրական հոլով խնդրատօնիւնը ունի պատմական խոր վաղեմութիւն. ան շատ լայն տարածում ունի աշխարհաբարբի մէջ եւս. ստորեւ բնագրային օրինակներ՝ ա) **Նոր հայկազեան**՝ «Ես ճանապարհին տեղեակ եմ: «Կենաց իմոց տեղեակ են ամենայն հրեայք»: «Տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութեան»: բ) **Մալխասեանց**՝ «Ես տեղեակ եմ նրա մտադրութեան»: «Տեղեակցաւ երկաթուղու բարդ գործին»: գ) **Ակաղենիայի քառահատոր**՝ «Շատ կը ցանկանայի տեղեկանալ ձեր աշխատութեան պարունակութեանը»: դ) **Յովհ. Թումանեան**՝ «Ու յափտեան էլ մնացին քնած՝ // Դափն անտեղեակ, ցափն անտարբեր...»: ե) **Գ. Ղոխրապ.** «Ա՛յ տեղեակ է ամէն անցած-դարձածին» (Մամայիդ բարեւ ըրէ՛ք): զ) **Օսեան**՝ «Այս ալ ոչ նոսազ զայթակրութիւն կը պատճառէ խնդրին տեղեակ կուսակցականներուն մէջ: է) **Շահնուր**՝ «[Սլովենիցին] տակափն անտեղեակ իր վիճակի ծանրութեան՝ բարձրէն կը նայի շրջապատին վրայ» (*Յատագ*, 24-26 փետրուար 1974): ը) **Ս. Վահագե**՝ «Իրեն համար ես միշտ անտաշ էի՝ կենցաղագիտական տարրական օրէնքներուն անտեղեակ»: Այսուհանդերձ կը հանդիպին խախտումներ ի նպաստ բացառականին. զանց կ'ընենք օրինակները: Առ այս՝ Վալերի Միրզոյեան չի վարանիր սխալ կոչելու տրական հոլով խնդրատօնիւնը (*Ճարտասանութիւն*, բ. տպ., էջ 233): Իսկ Ռաֆայէլ Իշխանեան ճիշտ կը սեպէ երկուքն ալ (*Արդի հայերէնի շարահիստութիւն*, էջ 273):

³² Ի՞նչ միջոցով տեղեակ մնաց,- **ընկերներուն միջոցաւ** եւ **ընկերներուն շնորհիւ**:

Տեղեկացնել պատճառականը կը փոխէ տուեալները իր բնութեան բերումով. բաղդատել՝ «Ես թերթէն տեղեկացայ եղելութեան», բայց «Թերթը ինձի տեղեկացուց եղելութիւնը»³³:

Տարբեր խնդրառոյթին ունին **տեղեակ դարձնել** եւ **տեղեակ պահել** յարարաւոր բայերը, որոնք սեռով ներգործական են. ըստ այսմ՝ հայցական հոլով կը դրուի տեղեկութիւնը ստացող առարկային (իմա՝ անձին) անունը, մինչ տեղեկութեան բովանդակութիւնը կամ առարկան, որուն մասին կը տրուի տեղեկութիւնը, կը շարունակէ մնալ տրական հոլով: Օրինակ՝ «Ոստիկանը տեղեակ պահեց **զինք** ոճիրի **ծայքերուն**». ո՛չ՝ **ծայքերէն**. Կամ՝ «Ընթերցող մը տեղեակ պահեց **զիրենք** գիրքի **բովանդակութեան**». ո՛չ՝ **բովանդակութենէն**: Այս օրինակներու ուղղական հոլով ենթականներու՝ **ոստիկանի** եւ **ընթերցողի** փոխարէն կամ անոնց կից կրնայ նմանապէս կիրարկուիլ բացառական հոլով լրացում մը՝ իբրեւ տեղեկութեան բխման աղբիւր, ինչպէս տեսանք վերը. օրինակ՝ «**Քարտուղարութենէն** տեղեակ պահեցին **զինք** զակի **թոշակին**»: «Ընթերցող մը իր **գրասենեակէն** տեղեակ պահեց **զիրենք** գիրքի **բովանդակութեան**»:

Բոլորովին հոմանիշ են եւ ունին նոյն խնդրառոյթիւնը **տեղեակ պահել** եւ **տեղեակ դարձնել**. այսպէս՝ «Ոստիկանը տեղեակ դարձուց **զինք** ոճիրի **ծայքերուն**»: «Գրեցի այս բոլորը...տեղեակ պահելու համար **ձեզ** **իրադարձութիւններուն**» (ՎՎ, 374):³⁴

Վերոնշեալներուն հետ իմաստային շփման եզրեր ունի **իմանալ** (իմացնել) ներգործական բայը, որ սակայն իր սեռին բերումով ունի տարբեր խնդրառոյթին: Վերոնշեալներուն տրական հոլով յանգման խնդիրը, որ անունն է տեղեկութեան առարկային, այստեղ կը դառնայ հայցական հոլով ուղիղ խնդիր, մինչ տեղեկութեան աղբիւրը կը շարունակէ պահել իր բացառական հոլովը. բաղդատել՝ «Ես **թերթէն** տեղեկացայ **եղելութեան**» եւ «Ես **թերթէն** իմացայ **եղելութիւնը**»:

Իմացնել պատճառականին խնդրառոյթիւնը կը նոյնանայ **տեղեկացնել** պատճառականի խնդրառոյթեան հետ. բաղդատել. «Ոստիկանը հանրութեան տեղեկացուց ոճիրին **ծայքերը**» եւ Ոստիկանը հանրութեան իմացուց ոճիրին **ծայքերը**:

Ընթացիկ թերացումները կը վերաբերին տրական հոլովի փոխարէն բացառականի գործածութեան. «Մենք այս գիրքին **բովանդակութենէն** տեղեակ ենք», - ո՛չ. տեղեակ ենք **բովանդակութեան**: «Իրողութենէն տեղեակ ենք», - որ պէտք է ըլլայ **իրողութեան**: Նաեւ՝ «Մաշիկ Աֆեան հա-

³³ Նկատել՝ **ես>ինձի, թերթէն>թերթը, եղելութեան>եղելութիւնը**:

³⁴ **Իրազեկը**, հոմանիշ ըլլալով **տեղեակին**, կրնայ ազատօրէն փոխարինել այս վերջինը վերլուծական բոլոր կիրարկութեանց մէջ՝ **իրազեկ դառնալ, իրազեկ պահուիլ, իրազեկ պահել, իրազեկ մնալ**:

աստած է, թե ինք տեղեակ չէ նման կառոյցի մը **գոյութենէն**» (*Նոր Յառաջ*, թիւ 497), – պէտք է ըլլայ՝ **գոյութեան**:

Ունինք **տեղեկացնել** բայը, որ ունի կրկնակ խնդրատոյսին. մէկը տեղեակ պահողը կամ տեղեկութիւնը ստացող առարկան է, որ բանական է-ակ մըն է ընդհանրապէս, եւ կը դրոյի տրական հոլով, իսկ միւսը՝ տրոսած տեղեկութիւնը, որ ուղիղ խնդիր է եւ կը դրոյի հայցական հոլով. օրինակ՝ **«Իրենց տեղեկացուցինք այս բոլոր հաշիւները»**: «Այդ լուրը **տնօրէնին** եւս **տեղեկացուր**»:

Ոչինչ կ'արգիլէ, որ այս բայը, ուղիղ խնդիրի փոխարէն, ունենայ վերաբերութեան խնդիր մը, որ կը ձեատրոյի բացառական հոլովով եւ «մասին» յետադրութեամբ. օրինակ՝ «Այս **որոշումին մասին** թող տեղեկացնեն իրենց **շարքերուն**»:

Շատ սովորական է ստորադասական նախադասութեան կիրարկութիւնը եւ՝ իրրեւ ուղիղ խնդիր. օրինակ՝ **«Իրենց տեղեկացուցի, թէ պաշտօնս պիտի ձգեմ»**: («Թող տեղեկացնեն **հանրութեան, թէ ի՛նչ կը պահանջեն**»:

Ամենաշատ տարածուած սխալը, այս պարագային, գլխաւոր նախադասութեան մէջ, տրական հոլով անտղակի խնդիրին՝ տրականի փոխարէն հայցական հոլովով կիրարկութիւնն է. օրինակ՝ շատ սովորական է կարդալ արեւմտահայ մամուլի մէջ այսպիսի նախադասութիւններ. **«Զիրենք** տեղեկացուց³⁵, թէ պաշտօնս պիտի ձգեմ»: Աւելի յաճախական են սապիսիները. **«Զիրենք** տեղեկացուցինք այն մասին, թէ կրակոցները հանդիպակաց դիրքէն էին»: Թերեւս բարդ նախադասութեան ծիրէն ներս քիչ մը դժուար է անդրադառնալ գործուած լեզուական համբակութեան, մանաւանդ անվարժ ականջներուն: Եթէ այս երեւոյթը փոխադրենք պարզ նախադասութեան ծիր, սխալը իսկոյն կը նշմարուի. օրինակ՝ ճիշտ է **«Իրենց** տեղեկացուցինք այս բոլոր **հաշիւները**», բայց սխալ է՝ **«Զիրենք** տեղեկացուցինք այս բոլոր **հաշիւները**»:

Ուրիշ բան է **տեղեկութիւն ունենալ** յարադրութիւնը. «Մենք տեղեկութիւն չունինք այդ **դէպքերէն**», որ է «այդ **դէպքերու մասին**» կամ «այդ **դէպքերուն վերաբերող**», ուր ընդգծուած լրացումները վերաբերութեան անտղակի խնդիր են:

Իսկ երբ լրացումը անձի անուն է, այդ պարագային ան կ'ունենայ երկու տարբեր իմաստներ. օրինակ՝ «Մենք տեղեկութիւն չունինք **Մարկոսէն**»՝ կը նշանակէ. ա) Մարկոսէն (անջատման խնդ.) տեղեկութիւն չենք ստա-

³⁵ Այսպիսի խնդրատոյսին մը թելադրողը ֆրանսերէն **informer** եւ անգլերէն **to inform** բայերն են, որոնց խնդրատոյսինը տարբեր է մերինէն եւ որոնց սակայն մեքենաբար կը հետեւի յատկապէս թարգմանողը, բայց նաեւ գրողն ու խօսողը:

ցած կամ Մարկոսը մեզի տեղեկութիւն չէ դրկած: ք) Մարկոսին մասին (վերաբերութեան խնդ.) տեղեկութիւն չենք ստացած³⁶:



Բայական խնդրառութիւնը շատ յաճախ ենթակայ է խաչածեումի՝ մտքին մէջ անոնց, որոնք բազմալեզուեան են. այդ խաչածեումը կրնայ յառաջանալ մէկ կողմէ՝ հայերէնի տարբերակներուն միջեւ, միա կողմէ՝ հայերէնի ու օտար լեզուներու միջեւ:

Հայերէնի բայերու խնդրառութիւնը ընդհանրապէս կայուն է մեր լեզուի բոլոր ծանօթ դրսեւորումներուն՝ գրաբարի, միջին հայերէնի, արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի ընթացքին. այստեանդեռ կան կարգ մը տեղաշարժեր եւս, որոնք յաճախ շփոթեցուցիչ են. օրինակ՝ գրաբարեան **աշակերտել** եւ **աղաչել** բայերը ներգործական էին, - հաւանաբար՝ երկսեռ, - **«աշակերտեցէ՛ք զնոսա»**³⁷, **«աղաչեմ գրեզ»** եւ այլն, մինչ աշխարհաբարի մէջ ասոնց երկուքն ալ չէզոք բայեր են՝ **«աշակերտել մէկուն»**, **«աղաչել մէկուն»**, եւ չեն կրնար հայցական հոլով ուղիղ խնդիր աննել: Տարբերութիւն կայ արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի միջեւ եւս. օրինակ՝ արեւելահայը կը ձեռնարկէ³⁸ **բան** մը եւ կը գիտակցի **իրողութիւն** մը, արեւմտահայը կը ձեռնարկէ **բանի** մը եւ կը գիտակցի **իրողութեան** մը. օրինակ՝ **«Անոնք կը գիտակցին իրենց նախնիներուն դերակատարութիւնը»** (*Ազգակ*, 4-4-15): Տարբերութիւն կայ հայերէնի եւ օտար լեզուներուն միջեւ. օրինակ՝ ֆրանսացին կը հայցէ **մէկը** (*supplier* *quelqu'un*), մինչ հայը կը հայցէ **մէկէն** (նոյնպէս ալ գրաբարը՝ **«Հայցեմք ի քէն, Տէ՛ր բարեգութ»**), անգլիացին ու ֆրանսացին կը հետեւին **մէկը** (*to follow someone, suivre quelqu'un*), մինչ հայերէնը՝ արեւելահայերէն թէ արեւմտահայերէն, կը հետեւի **մէկուն**: Այս պայմաններու մէջ յաճախ հակում ունինք շփոթելու ծանօթ լեզուի բային խնդրառութիւնը մէկ ուրիշի հետ, օրինակ՝ հայերէնինը ֆրանսերէնին հետ կամ հակառակը: Նման փոխազդեցութիւններու կամ խաչածեումներու առաջըը կ'առնուի մասնատրաբար ընտիր հետիւնակնե-

³⁶ Գրաբարը շատ բացայայտ էր. առաջինը կը թարգմանէր «ի Մարկոսէ» (բացառական հոլով), իսկ երկրորդը՝ «զՄարկոսէ» (պատմական հոլով):

³⁷ Գրաբարի մէջ **աշակերտել** կը նշանակէ սովորեցնել, կրթել, ինչպէս կ'ընէ վարդապետը կամ ուսուցիչը, եւ այն իմաստով բերուած է օրինակը: Աշխարհաբարի մէջ ան կը նշանակէ սովորի, ինչպէս կ'ընէ աշակերտը՝ յարաբերաբար ուսուցիչին կամ վարպետին*: Գրաբարը կրնար ըսել նաեւ. **«Կամեցաւ ուսուցանել զսոգէտոսն»** (Ք. Մակ., է, 2):

*Ենթադրելի է, որ այս բայը մտածուած է նաեւ իբրեւ «աշակերտ դարձնել», որով կ'արդարանայ հայցական խնդրառութիւնը:

³⁸ Մեր շփումները այնքան դիւրացան ու անցան արեւելահայերէնի հետ, որ սիւս բանի մը տարի է մեր աչքերուն առջեւ իսկ **ձեռնարկել** չէզոք բայը տրական հոլովի չափ ալ հայցական հոլով ուղիղ խնդիր աննել սկսած է, եւ ոչինչ կ'արգիլէ այս ընթացքով, որ ան բոլորովին սեռափոխ դառնայ: Եւ ոչ միայն ինք միայն:

րու ընթերցումով եւ խոր ուշադրութեամբ. այլապէս երեւոյթին ակնարկող տեսական գրականութեան ընթերցումը հազիւ թէ օգտակար կարենայ ըլլայ այս պարագային. ան կրնայ առաւելագոյնը՝ հարցը լուսարձակի տակ դնել միայն եւ զգուշացնել:



Խնդրառական ծիրէն ներս պատշաճ է ակնարկել երկու կարետր միտումներու, որոնք այլեւս շօշափելի իրողութիւններ են եւ հետզհետէ անելի զարգանալու թուր նշանները ցոյց կու տան:

Ասոնցմէ առաջինը բաղադրեալ բայերու անորոշ դերբայի **ուղղակա-նաձեւ** կիրարկումն է **տրականի**, իսկ երբեմն ալ **բացառականի** փոխարէն. օրինակ՝ փոխանակ ըսելու «կը պատրաստուիմ **երթալու**»՝ հակամէտ ենք ըսելու՝ «կը պատրաստուիմ **երթալ**» (ըստ Այտընեանի՝ գրաբարի հետետողութեամբ, էջ 222): Նոյն ձեւով ալ սխալ կիրառութիւններ են՝ «Ստիպուեցանք **հրաժարիլ** նման ճամբորդութենէ», «Հրափրեցին **հաշտուիլ** այս կացութեամբ», «Այս քայլերը կը միտին **խախտել** հաւասարակշռութիւնը», «Մեր ընկերները ստիպուած են **պահանջել**»: «Համբարձում աղա ժամացոյցը մէջտեղ կը հանը, երբ հարկ տեսնուը գայն **լարել** եւ **ուղղել**» (ՅՊ, «Համբարձում աղա»): Բոլորն ալ պէտք է դրուիին տրական հոլով: Բայց ահա աշխարհաբարը լայնօրէն թոյլատու է հոլովական այս «մեղանչում»-ներուն հանդէպ, պայմանաւ անշուշտ որ չգործուին սապիսի մերժելի կիրարկութիւններ. օրինակ՝ «Չորս հոգի բաական չէին **կրել** այնչափ... ծանրաբեռնեալ ննջեցեալն» (ՅՊ, *Ազգային ջոջեր*, «Խորէն Գալթայեան»), – ուր **կրել** ուղղականը գոնէ առայժմ անընդունելի է, եւ պէտք է ունենայինք **կրելու** տրականը: Այնպէս ալ՝ «Քնաւ պէտք չունիմ **գիտնալ**, թէ Մարտիրոս աղան որուն տղան է» (Նոյն, *Մեծապարի...*):

Մինչդեռ այս նոյն բայերուն խնդիրը հարկադրաբար եւ աներկբայօրէն տրական հոլով կը դրուի մեր գոյգ բարբառներուն մէջ, եթէ ան գոյական մը կամ որեւէ առարկայանիչ բառ է. այսպէս՝ «պատրաստուիլ **ճամբորդութեան**», «հրափրել **հաշտութեան**» եւ այլն:

Արեւտահայերէնի մէջ առ այժմ թիրախը մի՛այն վերոնշեալ տրական հոլովն է, մինչ արեւելահայերէնի մէջ այլ հոլովներու՝ յատկապէս բացառականի, երբեմն ալ գործիականի չքացումն ալ սովորական է, ինչպէս՝ «Ես երջանիկ եմ **լսել**...կարետր մտքեր» (Նիկոլա Նիկողոսեան, *Արոս Ոսկանեան*)՝ փոխանակ **լսելով**: «Հրաժարուե՞ր իր զօրքի վրայ կրակողներին **պատասխանել**» (*Ազգ*, 3-6-16)՝ փոխանակ **պատասխանելուց**: «Արկատիո երկրորդը դադարել էր **պատկանել** իր ընտանիքին»՝ փոխանակ **պատկանելուց**³⁹:

³⁹ Գարբիէլ Կարսիա Մարկէս, *Հարիպր փարոսայ մենութիւն*, թրգմ.՝ Ռուբէն Յովսէփեան, «Սովետական գրող», Երեւան, էջ 260)

Այսուհանդերձ արեւմտահայ մամուլն այլ մէջ ընդ մէջ կը պարզէ յոյն ծգտումը. օրինակ՝ «Օպամա Էրտողանը կը նկատէ միապետական ղեկավար մը, որ կը **հրաժարի օգտագործել** իր հսկայական բանակը...» (*Ազդակ*, 12-3-2016, էջ 10), – առ այժմ ենթադրելի է սակայն, թէ այսպիսիները արեւելահայերէնէ փոխադրումի առթիւ անուշադրաբար սպրդած զարտուղութիւններ են, սակայն ոչինչ կ'արգիլէ, որ անոնք հետզհետէ գետին շահին ու ընդհանրանան:

Աեւցնենք, որ մեր զոյգ բարբառներուն մէջ հասասրապէս գոյական կամ առարկայանիշ խնդիրներու հետ բացառական հոլովը անշեղօրէն կը պարտադրէ ինքզինք. այսպէս՝ «խոսափիլ **առերեսումէ**(ից)», «զգուշանալ **վարակներէ**(ից)», «հրաժարիլ **հատուցումէ**(ից)» եւ այլն:

Անդին, յատկապէս արեւմտահայերէնի մէջ, կայ հակադարձ երեսոյթ մըն ալ. կարգ մը ներգործական բայեր տրական հոլով (դերբայական) խնդիր կ'առնեն՝ ենթադրաբար ֆրաներէնի ազդեցութեամբ. օրինակ՝ հակամէտ ենք ըսելու. «Ան մոռցաւ պարտքը **տալու**». (**oublier de...**), մինչդեռ պէտք է ըսել **տալ՝** հայցական հոլով: Նաեւ՝ «Ասանկ ջերմեռանդ անձ մը քահանայ **ծեռնադրելու** փափաքող եպիսկոպոսին հասցէն մեր գրասենեակը թող դրկէ» (ՅՊ, *Երկեր*, 6, էջ 43): Պարզ է, որ պէտք է ունենալինք **ծեռնադրել**: Այլեւ՝ «Մարդիկ...սկսած են ինքզինքնուն ներել քննադատութիւններ **անելու**, մեզի հետ **վիճելու**, մեզի դէմ **ելլելու**» (ԵՕ, *Փանջունի ի Վասպուրական*, Թ. Նամակ): «Ո՛հ իրենք պիտի կրնան առաջ անցնիլ եւ ո՛չ այլ մեզի թոյլատրեցին առաջ **անցնելու**» (Քափմ, *Օրոսան մրտածոմներ*, էջ 400): Եղիշէի *Վասն Վարդանայ...*ի նախաբանին մէջ Երուանդ ՏէրՄինասեան կը գրէ. «Մեր նպատակը չէ այստեղ **տալու** Եղիշէի կենսագրութիւնը»⁴⁰:



Յաջորդը, որ ահա մօտատրապէս երկու տասնամեակէ ի վեր կը ցուցաբերէ արդի արեւմտահայերէնը, մասնատրաբար **անձի** անուններու, բայց նաեւ **իրի** անուններու՝ տրական հոլովով իբրեւ ուղիղ խնդիր հանդէս գալու երեսոյթն է, որ հետզհետէ ընդհանրանալու շատ զօրատր միտում ունի. ստորեւ օրինակներ անձի անուն տրական հոլով ուղիղ խնդիրներուն⁴¹. «Տարեկից **օրիորդներուն** պարի հրափրեցին» (օրիորդները հրափրեցին), «աւտոնք **մեզի** կը մխիթարեն» (մեզ կը մխիթարեն), «փորձեց զգուշացնել հայ **ղեկավարներուն**» (զգուշացնել **ղեկավարները**) եւ այլն: Նաեւ՝ «Ազդեցիկ մարդու մը երիտասարդ որդին **քրոջը** եւ **կնոջը** կ'անար-

⁴⁰ «Սուաջբան», Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., [քննական քնագրի բաղդատութիւն՝ Երուանդ Տէր Մինասեան], Երեւան, 1957, էջ V:

⁴¹ Երեսոյթը այնքան ալ նորութիւն չէ կարծես. անցի քան դար մը առաջ Արփիարեան կը գրէր. «Ո՛րքան հեռուները կը տանին **ինձի** այս զգացումները» (էջ 87):

գէ. **մէկուն** հրապարակով կ'ապտակէ, **միաին** ալ անխնայ կը ծծօժէ (Սոնա Ջեթթեան, *Հայ կնոջ կեանքի ուղիներով*, էջ 186) (փոխանակ՝ կ'անարգէ **քոյր** եւ **կինը**. կ'ապտակէ **մէկը**, կը ծծօժէ **միաը**):

Հոյովի փոփոխութեան միակ թիրախը անձի անունները չեն, այլ նաեւ ոչ-անձի անուններն են. օրինակ՝ «Իրաք պիտի հարուածէ բոլոր օտար **օղանաւերուն»** (հարուածէ **օղանաւերը**), «Պաղտատ զգուշացուց **Իրանին** եւ **Թուրքիոյ»** (զգուշացուց **Իրանն** ու **Թուրքիան**):

Այլ խօսքով՝ մենք կ'ընթանանք արեւելահայերէնի ճամբով՝ որոշ տեղ մը գերազանցելով ալ զայն⁴², որ շատ վաղուց որդեգրած է այս ուղին: Սա աշխարհաբարի վրէժն է պատմական հայցականի կորուստի հաշտոյն: Անձի անուն տրական հոյովի կիրարկութիւնը ուղիղ խնդիրի պաշտօնով արդէն շատ լայնօրէն տարածուած է ռամիկին մէջ. արեւմտահայ քերականագիտութիւնը կեղծ խնդրատութիւն մը փորձեց պարտադրել մեր բարբառին, թէ՛ «ուղիղ խնդիրը հայցական հոյով կը պահանջէ»: Ահա այդ սխալն է, որ կամաց-կամաց, սակայն հաստատ քայլերով կը սրբագրուի, եւ մեր բարբառը կը ջանայ ենթական եւ ուղիղ խնդիրը զանազանել ըստ ձեւի՝ առաջինը դնելով ուղիղ ձեւով, ըսենք՝ **ուղղական հոյով**, իսկ երկրորդը՝ տրականաձեւ, պարզապէս **տրական հոյով**: Այսինքն՝ փոխանակ ըսելու՝ **«Կարոն կը սիրէ Մարոն»**, ուր սիրողն ու սիրուողը ունին նոյն հոյովը, ան կը նախընտրէ ըսել՝ **«Կարոն կը սիրէ Մարոյին»**, ուր սիրողն ու սիրուողը ունին յտակօրէն տարբերակուած հոյովներ: Այս կիրարկութիւնները սխալ անուանելը պարզապէս լեզուական անիրապաշտութիւն է. տեղի ունեցածը ուրիշ բան է:

Փորձենք նաեւ վերձանել հետեւեալը. **«Համագումարը պիտի պատուէ նաեւ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսը»**, - ճիշտ ո՞վ պիտի պատուէ զո՞վ...:

Ուշադրութիւն. խնդրառական բազմաձեւութիւն չեն ներկայացներ սա-պիսիները՝ **ծխալ** եւ **ծխել**, **երերալ** եւ **երերել**, **թօլիլ** եւ **թօլել**, **շարժիլ** եւ **շարժել** եւ այլն: Ասոնց առաջինները պարզապէս չէզոք են եւ չեն կրնար ուղիղ խնդիր առնել, իսկ վերջինները ներգործական են եւ կրնան ուղիղ խնդիր առնել:

ԿԱՊԱԿԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

Բայէն ետք խնդրառական ամենամեծ այլազանութիւնը կը գտնենք կա-պի⁴³, այսինքն՝ նախադրութիւններու եւ յետադրութիւններու կիրարկութեան մէջ: Ամեն կապ հանդէս կու գայ գոյականի մը կամ առարկայանիշ բառի

⁴² Արեւելահայը միայն իբրեւ անձ մտածուած առարկաներու ուղիղ խնդիրը տրական հոյով կը դնէ, սակայն սփիւռքի մէջ արեւմտահայ գրողներ սկսած են տրական դնել նա՛ն ոչ-անձի առում ունեցող առարկաները եւս:

⁴³ Այստեղ նկատի ունինք թէ՛ բուն կապերը, թէ՛ կապական բառերը:

մը հետ⁴⁴, որ կ'ունենայ հողով մը. այս վերջինը կը կոչուի **կապի խնդիր** կամ **կապուող բառ**: Կապը եւ խնդիրը միասնաբար կը կազմեն **կապական լրացում** մը, որ կրնայ ըլլալ խնդրային կամ պարագայական: Արդի հայերէնի մօտաւորապէս 150 կապերու մեծամասնութիւնը ունի միաձեւ ու կայուն խնդրատութիւն, անոնց մէկ փոքր մասը միայն ունի խնդրատական այլազանութիւն. այս այլազանութիւնը ընդհանրապէս ինքնանպատակ չէ, այլ իրաքանչիւր հողովի մէջ լեզուն դրած է տարբեր իմաստ մը կամ իմաստային տարբեր նրբութիւն մը: Կարգ մը կապեր իրենց խնդիրին հետ հասարակապէս շեշտառու են եւ ըստ շեշտի դիրքին՝ կը փոխեն նախադասութեան իմաստը. այսպէս, հանրօրէն զանազանելի են հետեւեալները. «Ի՛մ դէ՛մ կեցիր» (ո՛չ ուրիշին): «Ի՛մ դէ՛մ կեցիր» (ո՛չ ուրիշ տեղ):

Ստորեւ տեսնենք այդ՝ խնդրատական այլազանութիւն ցուցաբերող կապերը:

* Առանց

Այս նախադրութիւնը միայն տրական հողով խնդիր կ'առնէ. օրինակ՝ **առանց ինձի, առանց քեզի, առանց մեզի, առանց ձեզի** եւ այլն: Ունի այն առանձնայատկութիւնը, որ անորոշ, այսինքն՝ առանց որոշիչ կամ ստացական յօդի կիրակուելու պարագային՝ խնդիր գոյականը շատ զօրատր հակում ունի եզակի հանդէս գալու. օրինակ՝ **«առանց նախապայմանի համաձայնեցաւ», «առանց զէջի ներկայացաւ»** եւ այլն: Իսկ երբ խնդիրը որոշեալ է, ապա ան կրնայ նաեւ յոգնակի դրուիլ. օրինակ՝ **«առանց այդ նախապայմաններուն համաձայնեցանք», «առանց զէջերուդ ներկայացիր հրամանատարին»** եւ այլն: Ցուցական եւ յարաբերական դերանունները բնութեամբ որոշեալ ըլլալով կրնան ազատօրէն խնդիր դառնալ յոգնակի թիւով, ինչպէս անձնական դերանուններու պարագան է. օրինակ՝ **«առանց ասոնց ու անոնց», «առանց մեզի ու ձեզի»** եւ այլն:

* Առաջ, ետ(ք)

Կրնան ցոյց տալ թէ՛ ժամանակ, թէ՛ տեղ, որոնք յաճախ շփոթելի են: Խնդիրը կրնայ ըլլալ թէ՛ բացառական հողով, թէ՛ հայցական հողով:

ա) Բացառական հողով՝ **«մեզմէ՛ (առաջ կամ ետք) հասան սրահ», «Քրիստոսէ՛ (առաջ կամ ետք) պատահած է այդ դէպքը», «անտառէն (առաջ կամ ետք) կը գտնուի այդ տունը»** եւ այլն:

բ) Հայցական հողով. այս հողովով դրոտող խնդիրները ընդհանրապէս քանակ ցոյց տուող բառեր են. օրինակ՝ **«օր մը (օրեր) առաջ լուր տուր», «երկու ամիս ետք կը վերադառնամ», «երկու քայլ ետ, մէկ քայլ առաջ կը**

⁴⁴ Բացառաւոր չէ, որ կապը առանձին յօդով մը կատարել լրացումի պաշտօնը, եթէ խօսքային միջավայրը կը թոյլատրէ լռելեայն ճանչնալ կապի խնդիրը. օրինակ՝ խօսելով Գաբրիէլ Սունդուկեանցի մասին՝ Շիրվանզադէ կը գրէ. «Մօտ վաթսուն տարեկան ծերունի էր, երբ **հետը** ծանօթացայ» (*Երկեր* 8, էջ 209):

զարգանայ տնտեսութիւնը», «հարիւր մեթր առաջ կամ ետք տարբերութիւն կ'ընէ»:

Հաւանաբար արեւելահայերէնի ազդեցութեամբ՝ **առաջ** յետադրութիւնը, արեւմտահայերէնի մէջ եւ երբեմն տեղի պարագայ կը կազմէ սեռական հոլովով՝ **առջեւի** իմաստով. օրինակ՝ «Երեխաներու երամներ կը խոնուէին զինետան **առաջ**» (ՁԵ, *Միլիտարի պարտէզները*): «Արտասուախան, հոգեբուի աղօթք ունիմ **քու առջիդ**» (ՎԹ): «Փոքրիկ տնակներուն դռները բաց են **իր առաջ**» (ՊԲ, էջ 129): Նաեւ մամուլէն՝ «Վերջին շաբաթները բողոքի ցոյցեր տեղի ունեցան Երեւանի մէջ Ռուսաստանի դեսպանատան **առաջ**, երեսոյթ մը, որ անհնար էր պատկերացնել քանի մը տարի **առաջ**»: Առաջին **առաջը** տեղ ցոյց կու տայ, երկրորդը՝ ժամանակ. պէտք է ենթադրել, թէ այդ առաջինը անուշադիր փոխադրում մըն է արեւելահայերէնէ-արեւմտահայերէն: Այսպիսիներուն փոխարէն անլի սովորական ու թելադրելի է **առջեւ** յետադրութեան կիրարկութիւնը:

* **Ասդին, անդին, հեռու**

Ասոնք իրենց խնդրառապեամբ համարժէք են **առաջին**:

ա) Բացառական հոլով. «**պատերազմէն** ասդին ամէն բան տարբեր է», «Հին քարի **դարէն** անդին մութ է պատմութիւնը», «**անտառէն** անդին ոչինչ կայ», «**Ինձմէ** հեռու մնացէ՛ք» եւ այլն:

բ) Հայցական հոլով. «**քայլ** մը ասդին, երկու **մեթր** անդին նոյնն է», «Չորս **մղոն** հեռու կը գտնուի կեդրոնը», «հոսկէ երկու **ժամ** հեռու է տղրախանութը»:

* **Բացի**

Այս յետադրութիւնը արեւմտահայերէնի մէջ միշտ ալ բացառական հոլով խնդիր առած է. ինչպէս՝ **բացի ինձմէ**, **բացի սուրճէն** եւ այլն: Ան նոյն խնդրառապիւնը ունեցած է արեւելահայերէնի մէջ եւս: Բայց ահա քանի մը տասնամեակէ ի վեր նոյն արեւելահայերէնի մէջ երկփեղկուած է բացառական հոլով խնդրառապիւնը, եւ շատ զօրատր հակում մը կայ հայցական հոլով խնդիր տալու **բացիին**, յատկապէս երբ խնդիրը գոյական է. կարելի է նոյնիսկ ըսել, որ այս նոր խնդրառապիւնը սկսած է նսեմացնել ասանդակակնը: Այս հոսանքը զանազան ճամբաներով, յատկապէս թարգմանութեան, սկսած է թափանցել արեւմտահայերէն եւս, ուր ան առայժմ շատ խորք կը հնչէ:

* **Դէմ, մօտ**

Տեղ ցոյց տուող բառերու պարագային կ'առնեն սեռական հոլով խնդիր. օրինակ՝ «**իմ** դէմ կամ մօտս տնկուեցաւ», «**քու** դէմը կամ մօտդ կը նստէր», «**անոր** դէմ կամ դէմը կանգնեցաւ», «**իր** մօտ կամ մօտը նստաւ», «**կրակին** դէմ (դէմը/մօտ/մօտը) մի՛ կենար» եւ այլն: Ուրեմն եզակի առաջին եւ երկրորդ դէմքի անձնական դերանուններուն հետ այս գոյգ կապերը պարտադրաբար դիմորոշ յօդ կ'առնեն. մնացեալ դէմքերու, ինչ-

պէս նաեւ գոյականներու հետ անոնք կը կիրարկուին **ը/ն** յօդով կամ առանց յօդի:

Տրական հոլով խնդիրներու հետ **դէմ** եւ **մօտ** կը կիրարկուին առանց յօդի եւ ցոյց կու տան հոգեկան հակառակութիւն, ընդդիմութիւն, թշնամութիւն կամ հակառակը՝ սրտակցութիւն, մտերմութիւն. օրինակ՝ «**ինծի դէմ կը գործէ**», «**մեզի դէմ կը խօսի**», «**մեզի մօտ կը ձեանայ**», «**սրտի մօտ խօսքեր են ըսածները**»:

Բաղդատել՝ «**իմ դէմս կեցաւ**» եւ «**ինծի դէմ կեցաւ**»: «**Մեր մօտը կանգնեցաւ**» եւ «**Մեզի մօտ կանգնեցաւ**»:

Գոյականներու հետ երբեմն նկատելի է իմաստային անխուսափելի շփոթ մը. օրինակ՝ «Հեղեղին դէմ կանգնեցաւ». սա կը նշանակէ՝ ա) հեղեղին դիմաց կեցաւ (եւ դիտեց գայն) եւ բ) հեղեղին դիմադրեց, միջոցներու ձեռնարկեց:

* **Դէպի**

Նախադրութիւն է, եւ ցոյց կու տայ առարկային կամ գործողութեան ուղեւորման նպատակակէտը՝ առանց նշելու անոր վերջնական յանգումը. օրինակ՝ «**Իս եւ կ'երթամ դէպի աղբիւրը լոյսի**», – պարզ է, այստեղ աղբիւրին յանգած չէ ան, այլ միայն ուղղուած է դէպի աղբիւրը: Ասով ալ կը տարբերի **մինչեւ** նախադրութենէն, որ պիտի տեսնենք ստորեւ:

Երբ խնդիրը մտածուած է իբրեւ տեղ, ապա ան բացառաբար հայցական հոլով կը դրուի եւ նախընտրաբար անորոշ առումով. օրինակ՝ «**դէպի երկինք ուղղուեցան հայեացքները**», «**դէպի անտառ ուղղուեցան**» եւ այլն: Վերացական գոյականներու հետ նմանապէս կը կիրարկուի հայցական հոլով. օրինակ՝ «**դէպի յաւերժութիւն գացին նահատակները**», «**դէպի սնանկութիւն կ'ուղղուի կառավարութիւնը**» եւ այլն: Այնպէս ալ ժամանակի անուններու հետ. օրինակ՝ «**դէպի Նոր տարի**», «**դէպի ապագայ**» եւ այլն: Նմանապէս իբրեւ առարկայ մտածուած անուններու հետ. օրինակ՝ «**դէպի թիրախը ուղղեցին զենքերը**», «**դէպի ամբիոն ուղղուեցան բոլորիս աչքերը**» եւ այլն:

Երբ խնդիրը անծի անուն է՝ յատուկ կամ հասարակ, ան կը տատանի (ընդհանրապէս) հայցականի ու (նուազ տարողութեամբ) տրականի⁴⁵ միջեւ, եւ նախընտրաբար որոշեալ առումով. օրինակ՝ յառաջանալ **դէպի Արան** (նաեւ **Արային**), «նայիլ **դէպի դասախօսը** (նաեւ **դասախօսին**)». Այս պարագային նկատելի է հետեւեալ տարբերութիւնը. հայցական խնդի-

⁴⁵ Տրական խնդիրը կը պատահի սովորաբար այնպիսի բայերու հետ, որ իրենք այդ հոլովը կը պահանջեն եւ կապը ձեւական ներկայութիւն մը կը դառնայ. Օրինակ՝ «**Ան ակնարկը ուղղեց դէպի վերջին կարգը բազմած ունկնդիրներուն**», – որ կարելի է հեշտութեամբ գեղջել **դէպի** կապը, որուն խնդիրը իր հոլովը շատ անգի կը պարտի **ուղղել** բային: Այլ հարց թէ այդ նոյն խնդիրը կարելի է կիրարկել նաեւ հայցական հոլով:

րով շատ անելի կը շեշտուի տեղի եւ ուղղութեան իմաստը,- ուրեմն՝ **դէպի Արան**, այսինքն՝ Արային ուղղութեամբ. իսկ տրական խնդիրը՝ **դէպի Արային**, որ կը բնորոշէ նոյն ինքը առարկան, որ այստեղ Արան է:

Իսկ երբ խնդիրը հոլովառու դերանունն է, ապա ան բացառաբար կը դրուի տրական հոլով. օրինակ՝ **դէպի ինծի, ձեզի, իրենց, անոր** եւ այլն: «**Դէպի անոնց** կ'ամբառնայ մեր յոյսն ու սէրն իբրեւ խոսակ» (ՎԹ «Մահերգ նահատակաց»):

Այս, **այդ, այն** դերանունները անփոփոխ կը մնան՝ **դէպի այս-այդ-այն**, որովհետեւ ասոնք աշխարհաբարի մէջ չեն կրնար հոլովուիլ:

* **Ետեւ, առջեւ**

Խնդիրը կրնայ ըլլալ սեռական կամ հայցական:

ա) Սեռական. «**Իմ ետեւէս եկէք**», **բլուրին «դռան ետեւ(ը)** պահուլտեցան»: «**Ինքնաշարժին առջեւը** մի նստեցներ պզտիկը», «**խմբապետին առջեւէն** կը քալէր ուղեկից գիւղացին»:

բ) Հայցական. այս խնդիրը ընդհանրապէս քանակ ցոյց կու տայ. օրինակ՝ «**քայլ մը ետեւ** մնացին միսները», «երկու **մէթր** առջեւ անդունդն է» եւ այլն:

* **Ըստ**

Կ'առնէ տրական հոլով խնդիր, այսպէս՝ «**ըստ անոնց**՝ եղանակը պիտի տաքնայ», «**ըստ կարգ մը ըսի-ըսաներու**՝ տոլարը դեռ պիտի բարձրանայ» եւ այլն: Առաջին դէմքին հետ սովորաբար կ'ըսուի **ըստ իս**, սակայն մերժելի չէ **ըստ ինծի**ն եւ: Ինչ բառ ալ ըլլայ խնդիրը, ան նախադասութեան մէջ կ'օժտուի բոլորով մը. օրինակ՝ «Ըստ ուսուցիչներուն վկայութեան՝ ան փայլուն յաջողութիւն պիտի ունենայ»:

* **Իբրեւ, որպէս**

Այս երկու կապերը հոմանիշ⁴⁶ են եւ իրենց խնդիրով կը կատարեն մասնական բացայայտիչի պաշտօնը. ասոնց խնդիրը այս պարագային պարտի համաձայնի բացայայտեալին հոլովով, այսինքն՝ առնել այն նոյն հոլովը, որով հանդէս եկած է բացայայտեալը. օրինակ՝

Ուղղական՝ **Դուն**՝ իբրեւ **աշակերտ**, պարտատր եւ ենթարկուելու:

Հայցական՝ **Ձիս**՝ իբրեւ **հաշմանդամ**, առաջին յարկը գետեղեցին:

Սեռական՝ **Իր**՝ իբրեւ **մեծաորի**, իրաւունքները յարգուած են:

Տրական՝ **Քեզի**՝ իբրեւ **անդրանիկի**, կը ձգենք այս աւանդը:

Բացառական՝ **Մեզմէ**՝ իբրեւ **յետնորդներէ**, պահանջեցին հաշիվ:

Գործիական՝ **Ձեզմով**՝ իբրեւ մեր լաազոյն **տարրերով**, հպարտ ենք:

Բոլոր օրինակներուն մէջ **իբրեւ** նախադրութիւնը փոխարինելի է **որպէս** սով:

⁴⁶ Այդ հոմանշտութիւնը շատ յստակ կ'երեւի հետեւեալ օրինակէն. «**Իբրեւ** փեսայի եղ ինձ պսակ եւ **որպէս** զհարսն զարդարեաց» (Սաղմոս):

Բացայայտեալ-բացայայտիչ հողովական համաձայնութիւնը ի զօրու էր գրաբարի մէջ, եւ ի զօրու է արդի արեւելահայերէնի մէջ եւս. ան հայերէնի լեզուական հարստութիւններէն մէկն է, քանի մեծապէս կը նպաստէ խօսքի յստակութեան. օրինակ՝ **Կը քալէր հանդիպակաց մայթէն, եւ իբրեւ ուսուցիչ⁴⁷ մօտեցայ անոր: Կը քալէր հանդիպակաց մայթէն, եւ իբրեւ ուսուցչի՝ մօտեցայ անոր:** Առաջին օրինակին մէջ ուսուցիչը ե՛ս եմ, քանի **ուսուցիչ** բացայայտիչը դրոճած է ուղղական հողով, որ ենթակային հողովն է: Իսկ երկրորդ օրինակին մէջ ուսուցիչը ան է, քանի որ **ուսուցչի** դրոճած է տրական հողով, որ **անորին** հողովն է: Նաեւ՝ «Տիրան է՛քէնտի... ձեռքը երկնցուց **անոր՝** իբր մտերիմ **բարեկամի մը**» (ԱԱ, էջ 103):

Արեւմտահայը ընդհանրապէս կ'անգիտանայ բացայայտեալ-բացայայտիչ հողովական համաձայնութիւնը, որովհետեւ մեր դպրոցական բարբեբուն մէջ մտած չէ կանոնը. օրինակ՝ «Օտարագգիններն ալ **ինծի** կը դիմէին, իբր **ազգակից**» (ԳԶ, «Արմենիսա»),– ուր **ազգակից** բացայայտիչը չէ համաձայնած **ինծի** բացայայտեալի հողովով: Նաեւ՝ «Մենք պիցիլին կը մօտենանք իբրեւ բանասիրական **նիւթ**, իբրեւ պարզ պատմական **տուեալ**, այսինքն՝ մեռեալ **տառ**» (ՇՇ, «Մանուկ մը տարեցներու մէջ»): Այլեւ՝ «Ամպիոն մը տրոպի **իրեն՝ որպէս** հայագիտութեան **դասախօս**» (Հատտեճեան, *Պրոյր մը հայոց լեզուի բառարանին մէջ*, Բ., էջ 283),– **դասախօս** բացայայտիչը դրոճած է ուղղական-հայցական, փոխանակ տրականի, ուրեմն՝ **դասախօսի:** Լաւագոյն պարագային, ըմբռնած չըլլալով կանոնը, ան **իբրեւ** եւ **որպէս** կապի խնդիրները հետեւողականօրէն կը դնէ սեռ.-տրական հողով՝ անկախ բացայայտեալի հողովէն. օրինակ՝ «**Ինքզինք** օրինակ կու տար՝ **իբրեւ** գործը գիտցող եւ խնայասէր **մարդու**» (*Սիլիկ-տարի պարտէզները*). պէտք է ըլլայ **մարդ՝** հայցական հողով: «Նկարագրել **ՀՅԴ-ն՝ իբրեւ** անհատի ազատութիւններու **պաշտպանի ու պահապանի**» (*Ազդակ*, 18-8-2011, էջ 4ա),– ուր **ՀՅԴ** բացայայտեալը հայցական է, իսկ **պաշտպանի** եւ **պահապանի** բացայայտիչները՝ սեռ.-տրակ.: Պէտք է ըլլայ, ուրեմն, **պաշտպան ու պահապան:** «Արդէն **քեզ՝ իբրեւ մարդու** եւ **իբրեւ հայու**, կ'օժտեն ցնծութեամբ» (Նորա Բարսեղեան, *Ազդակ*, 28.5.2012): Պէտք է ըլլայ **մարդ** եւ **հայ՝** հայցական: «Երբ ազնի **գրականութիւնը** կ'ընդունին **որպէս** սպառողական **ապրանքի...**» (Յ. Պալեան, *Ազդակ*, 26.6.12),– պէտք է ըլլայ՝ **ապրանք** հայցական հողով: «Ակիլիին... ճանապարհին կը ձերբակալուի **իբրեւ յեղափոխականի**» (Քասունի, *Երգերու եւ երգարաններու մասին*, էջ 171),– **յեղափոխականի** պէտք է դրով ուղղական հողով՝ **յեղափոխական:**

Այսուհանդերձ արեւելահայն ալ բոլորովին զերծ չէ այդ վարակէն. «Յեղասպանութեան ճանաչումը **մեր** բարոյական պարտականութիւնն է՝ **որ-**

⁴⁷ Ես դերանուն ենթակայ բացայայտեալը զեղջուած ըլլալով՝ զեղջուած է նաեւ բացայայտիչը բացայայտեալէն տրոհող բութը:

պէս ժողովուրդ եւ որպէս հրեայ» (*Հայաստանի Հանրապետութիւն, 15-5-14*): Ուր պէտք է ունենայինք որպէս ժողովուրդի եւ որպէս հրեայի:

* **Ի դէմս**

Տեսնել յանձին:

* **Ի վեր, ի վար**

Ասոնք նմանապէս բացառական եւ հայցական հոլով խնդիր կ'առնեն՝ արտայայտելով ժամանակի ու տարածութեան իմաստներ:

ա) Բացառական՝ «այն **օրէն** ի վեր», «**գլուխէն** ի վար» եւ այլն⁴⁸:

բ) Հայցական՝ «**հոսանքն** ի վար կամ ի վեր», «**երեսն** ի վար» եւ այլն:

Բաղդատել՝ «Գլո՛վսն ի վեր», որ կը նշանակէ դէպի կամ մինչեւ գլուխը, եւ «Գլուխէն ի վեր», որ կը նշանակէ գլուխէն անդին, ատելի վեր: Առաջինին մէջ կը շեշտուի **գլուխն** խնդիրը, իսկ երկրորդի պարագային՝ **վեր** յետադրութիւնը:

Առաջարկ եղած է **իվեր** համադիր ձեւը կիրարկել բացառականի հետ, ուր ան **սկսեալ** կը նշանակէ. օրինակ՝ «ժամը ութն **իվեր**»՝ ժամը ութն սկսեալ: Իսկ պահել **ի վեր** յարադրական ձեւը հայցականի հետ. օրինակ՝ «լեռն **ի վեր**», որուն կը համապատասխանէ **ի վար** հակահիշը՝ լեռն **ի վար**: Արեւելահայերէնը ունի միայն **ի վեր** եւ **ի վար** յարադիր ձեւերը:

* **Համար**

Յետադրութիւն է, որ կ'առնէ տրական հոլով անտղակի խնդիր՝ «**ինծի** համար», «**աղքատներուն** համար» եւ այլն, որոնք նպատակի պարագաներ են. օրինակ՝ «**Հայրենիքին** համար թափեցինք այդ արիւնը»: Յատկանշական է, որ ասոր գրաբարեան համարժեքը՝ **վասն**, սեռական հոլով խնդիր կ'առնէր՝ **վասն իմ**, **վասն որոյ** եւ այլն:

Աշխարհաբարի մէջ զարգացած է պատճառի պարագայի պաշտօնով կիրարկութիւն մը եւս. օրինակ՝ «Այս արարքիս **համար** պատժուեցայ» (ի՛նչ պատճառով). «[Զարօն] ձերբակալուած ըլլալուն **համա՛ր** չեկաւ» ՊԲ, էջ 224»: Այս օրինակներուս մէջ **համարը** դիւրաւ փոխարինելի է **պատճառով** կապով. օրինակ՝ «Այս արարքիս **պատճառով** պատժուեցայ»: Մինչ այդ նոյն **համարը** փոխարինելի չէ **նպատակով** հոմանիշով. չ'ըսուիր. «Այս արարքիս **նպատակով** ձերբակալուեցայ», – ինչ որ անիմաստ կատոյց մըն է: **Համարը** արեւմտահայերէնի մէջ իր այս վերիմաստատումը կը պարտի կապի խնդիրի կրած դիմորոշ յօդին՝ ըլլալուն, արարքիս: Առանց այդ յօդին՝ ան չի կրնար պատճառի իմաստ արտայայտել⁴⁹:

⁴⁸ Ոմանք կը շարունակեն **ի վարը** գրել, ինչպէս արեւելահայերէնն ալ. բայց այս ձեւը այլեւ ժամանակավրէպ է արեւմտահայերէնի մէջ: Բաց աստի արեւելահայերէնը ունի **բերանքսիվար** կամ **բերանքսիվարը** համադիր ձեւերը, որ արեւմտահայերէնը չ'օգտագործեր. մենք կ'ըսենք՝ **բերանն ի վար**:

⁴⁹ Արդի արեւելահայերէնը սիսա ճիշտ այդ արգելքը շրջանցած է, եւ **համար**-ին խնդիրը շատ հեզաստիօրէն կը կիրարկէ առանց դիմորոշ յօդի. օրինակ՝ «Ամբաստանեալը մահուան դատապարտուեց ընկերոջ **սպաննելու համար**», – ինչ որ

Համարը աշխարհաբարի մէջ իբրեւ հոմանիշ ունի **յանուն** նախադրութիւնը, որ նմանապէս տրական հոլով խնդիր կ'առնէ: Պէտք է գգուշանալ շատ ընդհանրացած սխալէ մը, որ է այս երկուքին համատեղ կիրարկութիւնը նախադասութեան մէջ նոյն խնդիրին հետ, ինչպէս՝ «**Յանուն** հայրենիքին **համար** թափեցինք այդ արիւնը»: Պէտք է պահուի երկուքն մէկը միայն՝ **յանուն** կամ **համար**:

*** Հանդերձ**

Կրնայ առնել նախադաս թէ յետադաս խնդիրներ գործիական հոլով՝ առանց իմաստային որեւէ տարբերութեան. օրինակ՝ «Պիտի այցելենք **հանդերձ ընտանեօք**» կամ «Պիտի այցելենք **ընտանեօք հանդերձ**»:

*** Հետ**

Անձնական դերանուններու հետ սեռական եւ տրական հոլով խնդիր կ'առնէ հաւասարապէս՝ «**ինծի** հետ» կամ «**իմ** հետս», «**իբրեւ** հետ կամ **իր** հետը» եւ այլն: Խնդրառական այս զանազանութիւնը իմաստային որեւէ տարբերութիւն չ'ենթադրեր. **ինծի հետ** եւ **իմ հետս** հոմանիշներ են: Անձնական դերանուններէ տարբեր հանդէս եկող խնդիրները պէտք է նկատուին սեռական հոլով. օրինակ՝ **ընկերոջ** հետ(ը), **շան** հետ(ը), **գարնան** հետ(ը), **ասոր** հետ(ը) եւ այլն:

Ըստ իմաստի՝ այս կապը ընդհանրապէս ցոյց կու տայ բայական միասնութեան պարագայ. օրինակ՝ «**խաղալ ընկերոջ հետ**», – «ընկերոջ հետ»ը միասնութեան պարագայ է **խաղալ** բային: Սակայն խորքին մէջ տեղի ունեցածը փոխադարձ գործողութիւն մըն է՝ եթէ ես կը խաղամ ընկերոջս հետ, ան ալ իր կարգին կը խաղայ իմ հետս: Երբ այս փոխադարձութիւնը կը նսեմանայ կամ կը չքանայ, ապա նոյն բայը իր նոյն նշանակութեամբ կրնայ խնդիր առնել առանց **հետ** կապին. օրինակ՝ «Ան էլը կապեց ծառին» եւ «Ան հակառակորդին **հետ** դաշինք կապեց»: Ինչո՞ւ այս տարբերութիւնը. ինչո՞ւ առաջինին մէջ բացակայ է **հետ** յետադրութիւնը, եւ ներկայ է երկրորդին մէջ: Այսպէս է, քանի որ **ծառը** որեւէ դերակատարութիւն, որեւէ մասնակցութիւն չունի **կապելու** գործողութեան մէջ: Մինչ երկրորդին մէջ **հետը** ներկայ է, քանի փոխադարձութիւն մը կայ **անոր** եւ **հակառակորդին** միջեւ. դաշինք մը կապելու, այսինքն՝ կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմերու համամտութիւնը եւ գործակցութիւնը:

Այսուհանդերձ հայերէնը կրնայ իմաստային այլ նրբութիւններ եւս արտայայտել՝ ջնջելով այս վերջինը. «Քոյրս այդ **մարդուն հետ** կապուեցա» եւ «Քոյրս այդ **մարդուն** կապուեցա»: Ասոնք նոյն իմաստը չունին, այլ նրբօրէն կը տարբերին իրարմէ. առաջինին մէջ կապը պարկեշտօրէն փո-

արեւմտահայոյն համար անըմբռնելի է: Բայց եւ այնպէս այս զարմանալի ոճը հիմա զարտագողի սկսած է թափանցել արեւմտահայերէնի մէջ եւս, որուն դարպասները այլեւ շատ տկար պաշտպանուած են մեր արդի մտաւորականներու, յատկապէս խմբագիրներու կողմէ:

խաղարձ է, մինչ երկրորդին մէջ այդ կապին շատ անելի կառչած է **քոյրս**, մինչ ոչինչ կ'երաշխատրէ, որ **մա'րդն** ալ իր կարգին կապուած է քրոջս: Եւ մարդկային շատ սովորական երեւոյթ է այս, ուր յարաբերող կողմերէն միայն մէկին ճիգով է որ կը գոյատեւէ, կը քաշկոտուի այդ յարաբերութիւնը:

Մեծ է թիւը այն բայերուն, որոնք իրենց խնդրատութիւնը կը կատարեն **հետ** կապով կամ առանց անոր՝ նայած փոխադարձութեան գոյութեան եւ բացակայութեան. օրինակ՝ «հանդիպիլ **մէկուն** եւ **մէկուն հետ**», «ծանօթանալ **մէկուն** եւ **մէկուն հետ**»⁵⁰ եւ այլն օրինակ՝ «Ես երկար աշխատակցեցայ այդ **թերթին**» եւ «Ես երկար աշխատակցեցայ այդ **թերթի խմբագիրին հետ**»:

Երբեմն կը յտաջանան յանելեալ այլընտրանքներ. օրինակ բաղդատել՝ «Ես եւ Մարկոսը համամիտ ենք» - «Ես համամիտ եմ Մարկոսին հետ» - «Ես համամիտ եմ Մարկոսի առաջարկին»:

Խնդրատական այլազանութիւնը չունին այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը ինքնին փոխադարձութիւն կ'ենթադրէ կամ չի կրնար տեղի ունենալ առանց փոխադարձութեան. օրինակ՝ չեմ կրնար ըսել՝ «կենակցիլ **մէկուն**», այլ միայն՝ **մէկուն հետ**, «համբուրովիլ **մէկուն**», այլ **մէկուն հետ**, «թղթակցիլ **մէկուն**», այլ միայն՝ **մէկուն հետ** եւ այլն:

Տեսնել **հանդիպիլ** բայի խնդրատութիւնը եւ:

* **Հետետողութեամբ**

Կրնայ առնել նախադաս թէ յետադաս խնդիրներ:

Նախադաս կիրարկութեամբ ան կը դրուի սեռական հոլով, օրինակ՝ «**իմ** հետետողութեամբս» կամ «**ուղեցոյցին** հետետողութեամբ», իսկ յետադաս կիրարկութեամբ ան կը դրուի տրական հոլով. օրինակ՝ «հետետողութեամբ **քեզի**» կամ «հետետողութեամբ **ուղեցոյցին**»:

Համեմատութեամբ կապը ունի ճիշտ նախորդին խնդրատութիւնը՝ «**իմ** համեմատութեամբս» եւ «համեմատութեամբ **ինծի**», ինչպէս նաեւ՝ «**ընկերոջդ** համեմատութեամբ» եւ «**համեմատութեամբ** ընկերոջդ»:

* **Մասին, պատճառով**

Սովորաբար սեռական հոլով խնդիր կ'առնեն. օրինակ՝ «**իմ** մասիս կամ պատճառով», «**ուսուցիչներու** եւ **դասերու** մասին կամ պատճառով»: **Այս, այդ, այն** ցուցական դերանունները խնդիր կը դառնան ուղղական հոլովով. օրինակ՝ «**այս / այդ / այն** մասին կամ պատճառով», քանի որ այս երեք դերանունները չեն հոլովոփր աշխարհաբարի մէջ: Սակայն

⁵⁰ Պէտք չէ մտածել, որ եթէ ես անծանօթ էի ու ծանօթացայ մէկուն, ապա ան ալ անծանօթ էր ու ծանօթացաւ ինծի: Պատկերացնենք հանրածանօթ ու համբաւատր դէմք մը, որուն հետ պատահաբար նոյն տեղը գտնուելու բախտը կը ներկայանայ պահիկ մը՝ հագիւ գայն քիչ մը մօտէն տեսնելու ու անոր պատկերին, շարժումներուն, ծայնին, ականատես ու ականջալսող ըլլալու, մինչ ան հասանաբար ոչ իսկ նկատած ըլլալ մեզ. ահա այս ալ միակողմանի ծանօթացումն է: Շատ յաւաննօտ պիտի ըլլար նման պարագայի մը ըսել՝ «ծանօթացայ այսինչին հետ»:

կ'ըսենք՝ **աատր / ատոր / անոր** մասին», ուր խնդիրները սեռական են, որովհետեւ ասոնք հոլովուած ձեւերն են **աս, ատ, ան** դերանուններուն, որոնք հոլովառու են:

Երկու կապերն ալ յետադրութիւն են:

Բացառուած չէ, որ **մասինը** կիրարկուի նաեւ իբրեւ նախադրութիւն, յատկապէս յարաբերական դերանունէ մը առաջ. այս պարագային ան կը ստանայ **ի** նախդիրը իբրեւ յենարան. օրինակ՝ «Եւ ան պատմեց **ի մասին** այն բոլոր **անցողարձերուն**, որոնց ականատես եղաւ իր կեցութեան առթիւ»:

Նպատակով, առթիւ (կամ առիթով), **միջոցին** յետադրութիւնները ունին այս նոյն խնդրատարածութիւնը, օրինակ՝ «**աշխատելու** նպատակով», «**սօսներու** առթիւ», «**այցելութեան** միջոցին» եւ այլն:

* **Մէջ** եւ **միջեւ**

Երկուքն ալ սեռական հոլով խնդիր կը պահանջեն. մինչ **մէջին** խնդիրը կրնայ ըլլալ եզակի կամ յոգնակի, օրինակ՝ «**իմ մէջ**», «**մեր մէջ**», «**տուփին մէջ**», «**սենեակներուն մէջ**», **միջեւը** միշտ ու միայն յոգնակի կամ բազմակի խնդիր կը պահանջէ. օրինակ՝ «**մեր միջեւ**», «**զայլին ու զառնուկին միջեւ**», «**երկիրներուն միջեւ**» եւ այլն:

* **Մինչեւ**

Նախադրութիւն եւ ստորադասական շաղկապ է միաժամանակ:

Իբրեւ կապ՝ կ'առնէ ժամանակային, տարածական ու առարկայական իմաստ ունեցող հայցական հոլով խնդիրներ՝ «մինչեւ **իրիկուն**», «մինչեւ **տուն**», «մինչեւ **կիրակի**»:

Շատ տարածուած է անորոշ դերբայի հայցականին հետ կիրարկութիւնը. «Մինչեւ ճաշը **պատրաստելը**՝ գոհացէք այս աղանդերով»: «Մինչեւ ջուրին **հասնիլը**՝ գորտին հոգին կ'ելլէ արդէն»:

Խնդիրը կրնայ ըլլալ ժամանակի մակբայ եւս. օրինակ՝ «մինչեւ **հիմա**», «մինչեւ **վաղը**», «մինչեւ **երէկ**» եւ այլն:

Անձնական դերանուններու պարագային կը պահանջէ տրական հոլով խնդիր՝ «Այդ աղմուկը մինչեւ **մեզի** կը հասնէր»: Մինչ տեղ ու ժամանակ ցոյց տուող դերանունները կը կիրարկուին հայցական հոլով. օրինակ՝ «մինչեւ **ե՛րբ**», «մինչեւ **այստեղ**» եւ այլն:

Անձի յատուկ անուններու խնդիրի գործառոյթով կիրարկութիւնը սովորական չէ, բացի եթէ անոնք գործածուած են փոխանունաբար. օրինակ՝ «**Լուսատրիչէն մինչեւ Մեսրոպ** երկարող ժամանակամիջոցը», «Փոքրիկներ, **մինչեւ օր. Մարին** յառաջացէ՛ք» եւ այլն:

Թուական որոշիչ ունեցող խնդիրներու հետ **մինչեւը** ցոյց կու տայ մօտաւոր քանակ. օրինակ՝ «Մինչեւ **երեք-չորս քայլ** մօտեցաւ»:

Մինչեւը ցոյց կու տայ նաեւ որեւէ գործողութեան, երեսոյթի, իրողութեան այն սահմանը, որ ինչ-ինչ պատճառներով թոյլատրելի չէ, չափազանցուած է, ամօթալի ու նախատելի է. օրինակ՝ «**Մինչեւ այդ աստիճան**

հասնելու պետք չունինք», «Այս մոլութիւնն էր ձեզ մինչև այդտեղերը հասցնողը» եւ այլն:

Շաղկապական կիրարկութիւնը սովորական է. «Մինչև աստղերն սիրտդ այրեն, շարունակե՛ դուն այդ ճամբան» (ԴՎ, «Գուշակը»): Շատ անելի կը կիրարկուի սակայն «որ» թարմատարին հետ. «Եւ ծունկերէս վար սրունքներդ օրօրես, մինչև որ սէրս հասուննայ» (ԴՎ, «Տալիթաս»):

* Յանձին

Ունի յոգնակի ձեւ մըն ալ՝ **յանձինս**: Ասոնք գրաբարեան նախադրութիւններ են, տրական հոլով խնդիր կը պահանջեն: Աշխարհաբարի մէջ մնայուն շփոթի առարկայ են արեւմտահայուն (այլեւ արեւելահայուն) քով, որ հակամետ է մէկը գործածելու միասին փոխարէն: Առաջինը եզակի խնդիր կը պահանջէ. օրինակ՝ «յանձին այս համեստ մարդուն...» եւ այլն: Իսկ **յանձինս** կը պահանջէ յոգնակի խնդիր. օրինակ՝ «յանձինս այս վաստակաւոր ուսուցիչներուն...» եւ այլն:

Իրենց կառոյցին մէջ այս երկու թիւերը արդէն ներկայ են. **անձ-յանձին՝** եզակի, **անձինք-յանձինս՝** յոգնակի: Իսկ իմաստով՝ կը նշանակէ անձին կամ անձերուն մէջ, շնորհիւ անձին կամ անձերուն: Օրինակ՝ «Յանձին այս ուսուցիչին դուք պիտի գտնէք մեծ դաստիարակ մը»: «Յանձինս այս գրագէտներուն մեր մշակոյթը գրաւեց նոր բարձունք մը»: Ուրեմն պարզ է, որ այս երկու կապերու խնդիրները կրնան միայն անձի անուն կամ անձնանիշ դերանուն ըլլալ:

Ասոնք իբրեւ միասնական հոմանիշ ունին **ի դէմս** նախադրութիւնը, որ որոշ չափով գրքունակ է: Ծագումով անեզական բառ է, այս պատճառով ալ հասասարապէս եզակի թէ յոգնակի տրական հոլով խնդիր կրնայ առնել. օրինակ՝ «ի դէմս այս ուսուցիչին» եւ «ի դէմս այս ուսուցիչներուն»:

* Յանուն

Տեսնել **համար**:

* Յետ

Ունի կապական եւ բառակազմական յատկութիւններ:

ա) Իբրեւ նախադրութիւն՝ կը նշանակէ **ետք**. առ այս կ'առնէ սեռական հոլով խնդիր, ինչպէս գրաբարի մէջ էր. օրինակ՝ «յետ մահու», «յետ անբուժելի հիւանդութեան» եւ այլն:

բ) Իբրեւ բառակազմական բաղադրիչ՝

- նախադաս դիրքով, առանց միութեան գծիկի եւ **ետք** իմաստով, զանազան գոյականներու հետ՝ հասարակ թէ յատուկ, - որոնք իրենց ետին կը պահանջեն **-եան** վերջածանցը, - կը կազմէ անյօդակապ բարդ ածականներ. օրինակ՝ **յետպատերազմեան, յետեղեռնեան** եւ այլն:

- նախադաս դիրքով, առանց միութեան գծիկի, **ետք** կամ **ետեւ** իմաստով կը կազմէ անյօդակապ թէ յօդակապաւոր ալլազան բնոյթի բաղադրութիւններ. օրինակ՝ **յետմիջօրէ, յետգրութեան, յետոյք, յետադաս, յետադարձ, յետածգել** եւ այլն:

զ) գանազան բայարմատներով կը կազմէ ածականներ, որոնց մէջ **յետ** ունի դէպի ետեւ նշանակութիւնը. օրինակ՝

-յետադաս > ետեւը դասուած, շարուած

-յետադէմ > դէպի ետեւ դիմող

-յետընթաց > դէպի ետեւ ընթացող

-յետամնաց > ետեւը մնացած

Կը կազմէ քանի մը նոյնիմաստ բայեր ես, ինչպէս՝ **յետադիմել, յետադասել, յետաձգել** եւ այլն:

* **Նման**

Իբրեւ յետադրութիւն՝ կ'առնէ տրական հոլով խնդիր. օրինակ՝ «**ինծի նման**, «**կրակի նման**». կը կիրարկուի իբրեւ նախադրութիւն ես, ինչպէս՝ «նման **կրակի**»: Զարտուղութիւն է հայցական հոլովը. օրինակ՝ «Սիրտս **նման է էն փլած տները**» (Անտոնի)...:

Իբրեւ փոխանունութիւն կու տայ՝ **ինծինմանները, քեզինմանները, իրեննմանները, անորնմանները** եւ այլն: Հաանաբար արեւելահայերէնի թելադրանքով՝ սովորական դարձած եւ ընդունելի են նաեւ՝ **իմնմանները, քունմանները, իրնմանները-անորնմանները...** եւ այլն:

* **Շնորհիւ**

Այս կապը՝ իբրեւ նախադրութիւն, կ'առնէ սեռական հոլով՝ **իմ** շնորհիւ, **քու** շնորհիւ, **իր-անոր** շնորհիւ(ը), իսկ իբրեւ յետադրութիւն՝ կ'առնէ տրական հոլով. օրինակ՝ շնորհիւ **ինծի**, շնորհիւ **քեզի**, շնորհիւ **իրեն-անոր**: Այս նոյն խնդրառութիւնը տեղի կ'ունենայ գոյականներու եւ այլ հոլովառու բառերու հետ. օրինակ՝ «**աշխատանքին** շնորհիւ» եւ «շնորհիւ **աշխատանքին**», «**ասոր** շնորհիւ» ու «շնորհիւ **ասոր**» եւ այլն:

Խնդիրին հոլովական փոփոխութիւնը իմաստային որեւէ փոփոխութիւն չի յառաջացներ:

* **Փոխանակ, փոխարէն, փոխան**

Ասոնք հոմանիշ են. **փոխանակը**՝ նախադրութիւն է⁵¹ եւ կ'առնէ տրական հոլով խնդիր, **փոխարէնը** յետադրութիւն է եւ կ'առնէ սեռական հոլով խնդիր. **փոխանը** հասասարպէս նախադաս թէ յետադաս խնդիր կ'առնէ՝ երկուքն ալ տրական հոլով:

Ասոնց կիրարկութիւնները ունին հետեւեալ առանձնայատկութիւնները.-

ա) **Փոխանակ** եւ **փոխարէն** համարժէք են, երբ խնդիրը անորոշ դերբայ մըն է. օրինակ՝ «**Փոխանակ անգործ նստելու՝** տան ծորակը նորո-

⁵¹ Մ. Աբեղեանի բով կը գտնենք իբրեւ յետադրութեան կիրարկութիւններ, որոնք սովորական չեն. «Այլազգի կառավարիչը թոյլ չի տայիս յունարէն **լեզուի փոխանակ** հայերէն սովորեցնել» (*Հայ հին գրականութեան պատմութիւն, Ա. հոլ.*, Սեան հրատարակչատուն, Պէտրոպ, 1968, էջ 80): Նաեւ՝ «Քրիստոնէութիւնն եկած էր **նրա փոխանակ** մի նոր հոգեւոր կեանք ստեղծելու» (անդ, էջ 117): Արդի հայը պիտի ըսէր՝ **լեզուի փոխարէն, նրա փոխարէն**:

զեց» եւ «Անգործ նստելու փոխարէն տան ծորակը նորոգեց»: (Ուշադրութի՛ն դարձնել բուֆի կիրարկութեան):

բ) **Փոխան** եւ **փոխարէն** համարժէք են, երբ խնդիրը գոյական մըն է. օրինակ՝ «**Եարի** փոխան զէնք եմ գրկեր» եւ «**Եարի** փոխարէն զէնք եմ գրկեր»:

գ) **Փոխարէնը** կրնայ դիմորշ յօղով ալ գործածուիլ. օրինակ՝ «**Քու փոխարէնդ** եղբայրդ թող գայ», «Ինձոր չգտայ. **փոխարէնը** նարինջ գնեցի»:

Այս երկուքին հոմանիշ է **տեղ բառը**՝ յօղով կամ առանց յօղի. «Ծիտերն ի՛նչ փոյթ թէ հատիկներդ կ'աւարեն, // **Տեղը** Աստուած պիտի մարգրիտ սերմանէ!» (ԴՎ, «Յան»):

դ) **Փոխանով** օրինակները կարելի է նաեւ շրջել՝ **եարի փոխան-փոխան եարի, փոխան գրչի-գրչի փոխան**: **Փոխանը** յարաբերաբար անելի գրքունակ է, քան միա երկուքը, որոնք անելի ժողովրդական են:

ԵՃՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այն սահմաններուն մէջ, ուր սերտուած է ներկայիս աշխարհաբարի բայական համակարգը՝ ընդհանրապէս, եւ բայական խնդրառութիւնը՝ մասնատրաբար, ապա նկատելի է որակական այն մեծ նուաճումը, որուն տիրացած է մեր արդի լեզուն:

Այս նուաճումը բացայայտ կը դառնայ նախ եւ առաջ բայերու սեռային անշփոթելի գանազանութեամբ, ուր անվիճելի խումբեր կը կազմեն չորս տարբեր սեռերը՝ չէզոքը, ներգործականը, կրատրականն ու անցողականը՝ պատճառականը, ինչ որ գրաբարի մէջ մեծաթիւ բայեր հաասարապէս չէզոք ու ներգործական էին, միա կողմէ կրատրական սեռը չունէր իր յատուկ ձեւաւորումը:

Սա իր կարգին մեծապէս օգնած է խնդրառութեան աննախընթաց կայունացման: Աշխարհաբարի խոնարհական յարացոյցին մէջ տարբեր սեռերու ոչ մէկ համընկնում մնացած է. ինքնուրոյն են բոլոր սեռերու բոլոր դէմքերն ու թիւերը կազմող բայածեւերը գրեթէ անխտիր: Այստեղ յառաջացած բայական հատ ու կենտ նոյնածեւութիւնները չեն ազդեր իմաստային ընկալումին վրայ. օրինակ՝ **չեմ վազեր** (սահմ. ներկայ) եւ **չեմ վազեր** (վաղակատար): Այս վերջինը գրեթէ դուրս մնացած է լեզուէն: Այլեւ **վազէք** (ըղծական) եւ մի՛ **վազէք** (հրամայական):

Այստեղ, ճիշտ է, մեծաթիւ բայեր օժտուած են բազմասեռութեամբ, որ սակայն կը բխի բայիմաստի թելադրութեամբ, ընդ որում իրաքանչիւր իմաստ բային կը պարտադրէ իր պատշաճ սեռը, որ իր կարգին կը պահանջէ խնդրառական համապատասխան ձեւաւորում:

Եւ վերջապէս չափազանց սահմանափակ է թիւը սեռափոխութիւն ցուցաբերող բայերու, ինչպէս՝ **սպասել, բարեւել, կարօտեալ, մտիկ ընել** եւ մէկ-երկու ուրիշներ, որոնք ոչ մէկ ձեւով կ'աղարտեն ընդհանուր պատկերը:

Գալով կապական խնդրառության, որքան ալ տեսնուած կապերուն մէկ մասը կու գայ գրաբարէն, իսկ կարեւորագոյնը՝ ձեատրուած է աշխարհաբարի մէջ, նկատելի է, որ առաջինները խնդրառութեամբ առիւտարակ կը համընկնին աշխարհաբարին հետ, օրինակ՝ **յետ մահու, յետ պատերազմի, (զ)հետ կնոջ** եւ այլն. – ապա նկատելի է այն օրինակելի կայունութիւնը, որ կը տիրէ այստեղ. բացառութիւն կը կազմեն մէկ-երկուքը միայն, որոնց խնդրառութիւնը հարկատու է շարադասութեան, ինչպէս՝ **իմ շնորհիւ-շնորհիւ ինծի, երբեմն ալ իմաստին՝ քու մօտդ-քեզի մօտ, իմ դէմս-ինծի դէմ**:

Յապատումներ.- ԱԱ՛ Արփիար Արփիարեան, ԱԲ՛ Ակսել Բակունց, ԱԾ՛ Անդրանիկ Ծառուկեան, ԳԶ՛ Գրիգոր Զօրաս, ԳՊ՛ Գրիգոր Պլլոտեան, ԴՎ՛ Դանիէլ Վարուժան, ԵՕ՛ Երուանդ Օտեան, ԶԵ՛ Զապել Եսայեան, ՄՄ՛ Միսաջ Մեծարեց, ՅՊ՛ Յակոբ Պարոնեան, ՅՕ՛ Յակոբ Օջակեան, ՆԳԲ՛ Նահատակ գրագէտներու բարեկամներ, ԾԸ՛ Ծախան Ծախնոր, ՊԲ՛ Պերճուիի Բարսեղեան (*հումնուած օրեր*), ՌՀ՛ Ռուպեր Հատուեան, ՎԹ՛ Վահան Թորովեց, ՎՎ՛ Վահէ-Վահեան (*Նամակակի*):

RECTION IN THE ARMENIAN LANGUAGE

(Summary)

ARMENAG YEGHYAIAN (armenag@gmail.com)

Unlike some Indo-European languages like Italian, French, Spanish and English, the Armenian language shifted from Grabar to contemporary Armenian without eliminating Grabar's declination system, which is still maintained almost intact. This is why Armenian syntax pays due attention to rection, that is, the linking of verbs to declinable/inflective words. The diverse and correct word-versus-verb linkage mode is not always easy and creates confusion irrespective of the speaker's age and knowledge of language rules and regulation. Ultimately it makes learning Armenian not a relatively easy task.

Having said that, rection provides free word order usage in the formation of the sentence, which non-inflectional languages lack. Indeed, in the Armenian language the case rather than the location of the word decides its function. This freedom, however, puts a lot of responsibility on the Armenian speaker to choose the best rection from among the numerous word order options available. In other words, in this regard, Armenian gives its users ample creative opportunities, which are full of surprises.

This paper, the first of its kind, studies a certain aspect of both verbal rection and prepositional rection as they are of particular importance. It is expected that this unprecedented study will open up broader studies and satisfy wider needs.

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (մասն Գ. – ֆրանսերէն)¹

ԱՐՄԷՆ ՄԻՔԵԼԻԱՆ (armen_michaelian@yahoo.com)

ՆԱԽԱՐԱՆ

Այս յօդուածով շարունակում ենք օտար յատուկ անունների տառադարձութեան կանոնները լրսաբանող յօդուածաշարքը, որը սկսել ենք մերձատրարելեան լեզուներից եւ որի երկրորդ մասը նուիրել ենք հին յունարէնին ու լատիներէնին²: Յօդուածաշարքի սոյն՝ երրորդ մասը, նուիրում ենք ֆրանսերէնից հայերէնին անցած անունների տառադարձութեանը:

Հայերէնը ֆրանսերէնի հետ շփման մէջ է մտել դեռեւս կիլիկեան շրջանից սկսած: Սակայն, ի տարբերութիւն երկար պատմութիւն ունեցող այլ լեզուների, դժբախտաբար չենք կարող ասել, որ հազար տարուայ ընթացքում հաստատուել է ֆրանսերէն-հայերէն հայկաբան տառադարձութեան որոշակի մի աւանդոյթ: Մի կողմից՝ կիլիկեան հայերէնի եւ յետագայում՝ արեւմտահայ գրական լեզուի արտասանութիւնների ազդեցութիւնը, միա կողմից՝ նոր ժամանակներում ռուսերէնի ազդեցութիւնը արեւելահայերէնի վրայ, ծնունդ են տուել տարածեւ գրութիւնների, որոնք հայերէնը առ այսօր չի կարողանում միատրել: Այսօր հազիւ թէ գտնենք ֆրանսերէն մի անուն, որ իր հաստատուն ու միակերպ տառադարձումն ունենայ մեր լեզուն: Նոյնիսկ այդ երկրի (Ֆրանսիա/Ֆրանսա) եւ նրա մայրաքաղաքի (Փարիզ/Բարիզ/Պարիզ/Պարիժ/Փարէզ...) անունները տարգրութիւնների տեղիք են տուել, թող թէ Պասկալ/Փասգալ, Հիզո/Հիւփօ, Վերսալ/Վերսայլ եւ այլ հարիւրատր կրկնակներ:

Յօդուածները չձանրաբեռնելու եւ միեւնոյն բանը միքանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները այսուհետեւ լինելու են հակիրճ: Այնուամենայնիւ, մեր ծեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրափրում ենք աչքի անցկացնել նախորդ յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

¹ Ելելով օրդուածին տրամաբանութենէն եւ ուղղագրական առաջարկներէն, յօդուածին ուղղագրութիւնը բացառաբար կը պահենք հեղինակային վիճակով:

² Արմէն Միքայելեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. – մերձատրարելեան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս, հոյր. Խ.*, Պէյրուպ, 2020, էջ 341-64: Նոյն հեղինակի, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. – հին յունարէն եւ լատիներէն)», *Բազմավէպ*, ՃՀՀ. տարի, Վենետիկ, 2020, 304-336:

«ՖՐԱՆՍ» ԱՐՄԱՏԸ ԵՒ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄԱԾ ԲԱՌԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբից եւթ ջանկանում ենք ճշտել «Ֆրանս» արմատից կազմած հայերէն բառերի ձեւերը: Եթէ «Ֆրանս» ցեղանունան ձեւը ընդհանուր է մեր երկրոյն ճիւղերի համար³, նրանից կազմած ածանցեալները թեթեալի տարբերութիւն ունեն արեամտահայերէնում եւ արեւելահայերէնում. արեւմտահայերէն՝ Ֆրանսա, ֆրանսացի, ֆրանսական, ֆրանսերէն, եւ արեւելահայերէն՝ Ֆրանսիա, ֆրանսիացի, ֆրանսիական, ֆրանսերէն:

Որպէս միացեալ հայերէն ձեւեր՝ մենք ընտրում ենք Ֆրանսիա, ֆրանսացի, ֆրանսական ձեւերը, ինչպէս եւ ասանդուած ունենք Ստեփանոս Մալխասեանցի բառարանում⁴:

Կարող է թուայ, թէ «Ֆրանսա» ձեւը աւելի հարազատ է ֆրանսերէն FRANCE ձեփն (եւ մենք անձամբ մինչեւ հիմա անգիտակցաբար առաւելութիւն ենք տուել հենց դրան): Սակայն գիտական եւ անաչառ մտեցումը յուշում է, որ «ա» վերջատրութեամբ երկրանունները (Հոլ(լ)անտա, Իրլանտա...) հարազատ չեն դասական հայերէնին, եւ հնարատր է, որ միջերկրածովեան որոշ լեզուների ազդեցութեամբ ի յայտ եկած լինեն (França, Fransa): Ի հակառակէն՝ «-իա»ն երկրանուն կերտող, յունարէնից փոխ առած վերջատրութիւն է: Միեւնոյն ժամանակ՝ «ի» տառը հայերէն «-ացի» կամ «-ական» ածանցների մաս չէ: Ուստի՝ Իտալիա, իտալացի, իտալական, Գերմանիա, գերմանացի, գերմանական, Հունգարիա, հունգարացի, հունգարական, Աստրալիա, աստրալացի, աստրալական, Ճապոն(իա), ճապոնացի, ճապոնական, Կոլումբիա, կոլումբացի, կոլումբական: Ունենք, ինչ խօսք, եւ «իա» ձեւերով օրինակներ, Անգլիա, անգլիացի, անգլիական (սակայն անգլերէն), Աստրիա, աստրիացի, աստրիական, Դանիա, դանիացի, դանիական: Եթէ համարենք, որ «-իա» վերջատրութիւնը կանտոնական է, պէտք է զուգահեռաբար ընդունենք, որ «ացի» եւ «ական» վերջաածանցները ցանկալի է գրել առանց յաւելեալ «ի» ձայնատրի, ինչպէս եւ գրում ենք «ֆրանսախօս, ֆրանսաքնակ, ֆրանսապատակ, ֆրանսագէտ, ֆրանսասիր»:

Արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը մերձեցնելու եւ միացեալ հայերէն ձեւերը ճշտելու մտահոգութեամբ, առաջարկում ենք նկատի առնել նշած հանգամանքը ոչ միայն ֆրանսերէնի, այլեւ աշխարհագրական ուրիշ նոր անուններ որդեգրելու դէպքերում:

³ Դասական հայերէնը եւ արեւմտահայերէնը երկիրը «Գաղղիա» էին կոչում մինչեւ վերջին դարը:

⁴ Ստեփանոս Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍԻ պետական հրատ., Երեւան 1944–45:

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Լատիներենից սերած ֆրանսերենի պարագայում հարց է, թե որ դարաշրջանից Գաղղիայի (Գալլիայի) լեզուն պետք է համարել ֆրանսերենը: Հռոմէացի նուաճողների լեզուն լատիներենն էր, այնուհետև այն վերածնեց ռամիկ (ժողովրդական) կոչումով լատիներենի, անելի ուշ մասնատուց ռոմանական բարբառների երկու տասնեակից անելի մի լեզուահոյի: Ի սկզբանե՝ ֆրանսերեն կոչումը միայն Լուստետիայի (Փարիզի) ու շրջակայքի խոսակցական լեզուն էր: Այն պաշտօնական ու դատական գրագրության միակ լեզուն հաստատուց 1539 թռականին, սակայն դրանից յետոյ էլ լատիներենը դեռևս երկար ժամանակ ֆրանսերենին զուգահեռ գործում էր տարբեր հաստատություններում: Գրական ֆրանսերենը (Փարիզի եւ արքունիքի լեզուն) բարբառների վերջնականապես յաղթեց ու ամէնուր տիրապետող դարձաւ միայն ժԹ. դարի վերջից ու Ի. դարի սկզբից: Ասել է թէ՛ ամէն յատուկ անուն չէ որ «ֆրանսերեն» է եղել մէկը գասկոներէն էր, միւսը՝ նորմանդերէն, երրորդը՝ բուրգունդերէն...

Խառնաշփոթից խուսափելու համար թարգմանիչը պետք է ուշադիր լինի. հնարատր է, որ պատմական այս կամ այն անունը լատիներենից պետք լինի տառադարձել (օրինակ, արքաների անունները՝ Լուդովիկոս, եւ ոչ թէ Լուի), կամ նոյնիսկ ռոմանական այս կամ այն լեզուից:

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ֆրանսերենը մեծ ազդեցութիւն է թողել եւրոպայի եւ ընդհանրապէս աշխարհի բազմաթիւ լեզուների վրայ, եւ ֆրանսերենի աշխարհագրական շրջանակը բաական ընդարձակ է: Դա ոչ միայն ֆրանսալեզու ֆրանսիան, Բելգիան, Շվիցերիան⁵ ու Կանադան են, այլեւ Ամերիկայի, Ափրիկէի ու Ասիայի բազմաթիւ երկրներ, որոնց պաշտօնական լեզուն ֆրանսերենն է (կամ եղել է), եւ որոնց աշխարհագրական անունները յաճախ ֆրանսացիներն են մեզ ասանդել: Ինչպէս յօդուածաշարքիս առաջին մասում ենք նշել, հայ լեզուաբանութիւնը հնարատրութիւն չունի ուսումնասիրելու աշխարհի հազարատր մանր մունր լեզուներ, եւ մենք ստիպուած ենք որոշելու, թէ այդպիսի լեզուների դէպքում տառադարձութեան ինչ միջնորդ լեզու ենք ընտրում: Ֆրանսերենը կարեւորագոյն միջնորդ լեզուներից մէկն է:

Ամերիկայի Միացեալ Նահանգների յայտնի քաղաք Chicago անունը հնդկացիական լեզուներից ֆրանսացիներն են գրի առել, եւ անուան առաջին հնչիւնը [շ] է, ուստի պէտք է տառադարձենք Շիկագո (ինչպէս եւ արտասանում են իրենք՝ ամերիկացիները անգլերէն): Խորհրդային շրջա-

⁵ Շվիցերիա ձեռք միացեալ հայերէն է՝ արեւմտահայերէն Ջովիցերիա եւ Հայաստանի խորհրդրային շրջանից ժտանաձած Շվեյցարիա անյաջող ձեւերի ստուգաբանօրէն ճշմարիտ տարրերից սրբագրած: Այս տեղանուն մասին անելի մանրամասն խօսելու ենք գերմաներէնին նուիրում յօդուածում:

նում Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը ռուսերէնից ընդօրինակեց սիսալ արտասանութիւն ու տառադարձութիւն՝ Չիկագո: Ֆրանսացիներն են, որ առաջինը հետազօտել են Հիսիսային Ամերիկայի մի զգալի մասը (Մեծ Լճերից մինչեւ Միսիսիպիի գետաբերանը ընկած հսկայական տարածքները), եւ այսօր էլ ԱՄՆի այդ շրջաններում հանդիպում ենք ֆրանսերէնով տառադարձած բազմաթիւ անունների. Միշիգան, Միսսուրի, Պիեր (Պիէր), Դէ Մուան, Սեն (Սէն) Լուի, Լուիզիան(ա), Բատոն Ռուժ, Լոր Որլէան (Օրլէան)...

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ՀՆՉՈՅԹՆԵՐՆ ՌԻ ՀՆՉԻՒՆՆԵՐԸ

Ֆրանսերէնի պարագայում, ուր բառերի գրութիւնը բաական վատ է յարմարեցրած բանաւոր հնչողութեանը, տառադարձելիս աւելի տրամաբանական է իբրեւ ելակէտ ընդունել հնչողութիւնը, այն բնականաբար հնարատրինս ճշտելով անուան գրութեամբ ու ստուգաբանութեամբ:

Ստորեւ քերում ենք *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան* (API⁶) այբուբէնի նշանագրերը, որոնք կիրարկում են ֆրանսերէնի հնչոյթները արտայայտելու համար: Հնչոյթի կամ հնչիւնի⁷ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ⁸: Ստորեւ՝ օրինակների մէջ, ընդգծել ենք տուեալ հնչոյթը արտայայտող տառերը:

Ձայնաւորներ. [a] *patte*, [ɑ] *pâte*, [ɑ̃] *gant*, [e] *blé*, [ɛ] *lait*, [ɛ̃] *pain*, [i] *vie*, [o] *mot*, [ɔ] *corps*, [ɔ̃] *long*, [y] *mur*, [u] *tout*, [ø] *deux*, [œ] *peur*, [ə] *le*, [ǝ] *un*:

Կիսաձայններ. [j] *yaourt*, [w] *oui*, [ɥ] *huit*:

Բաղաձայններ. [b] *bal*, [p] *porte*, [d] *dent*, [t] *tout*, [g] *gant*, [k] *clé*, [z] *zèbre*, [s] *sang*, [ʒ] *jour*, [ʃ] *chien*, [v] *vie*, [f] *fou*, [l] *long*, [ʀ] *rue*, [m] *mer*, [n] *nous*, [ʁ] *vigne*, [ŋ] *camping* (անգլերէնից փոխ առած բառերում), [h] *hourra* (եզակի բառերում է հանդիպում):

⁶ Association Phonétique Internationale (յապաւած՝ API), *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն*, որի հնչական «այբուբէնով» է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները:

⁷ «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբաններին (Հ. Ջ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Նարազիլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ ԳԱ իրաւ., Երեւան, 1975):

⁸ Իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ. «ա», «բ», «գ» են.:

ԿԻԼԻԿԵԱՆ «ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ» ԵՒ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱԽԱՆԴՈՅԹԸ

Մերոպեան ուղղագրության վրայ՝ Կիլիկեան Հայ Թագատրության դարաշրջանում աելացաւ մի նոր ուղղագրութիւն⁹: Հայերէն հնչյունների մի մասի հնչողութիւնը այդ դարերում Կիլիկիայի ու նրա յարակից տարածքներում այլ էր, քան միջնաշխարհի ոսկեդարեան հնչողութիւնը, եւ կիլիկեան մատենագիրները զանազան յաւելումներ կատարեցին արդէն գոյութիւն ունեցող մերոպեան ուղղագրութեան վրայ: Մի կողմից՝ դա բաղաձայնների յայտնի տեղաշարժն էր, միւս կողմից՝ զանազան ձայնատր հնչյունների փոփոխութիւնները¹⁰:

Բաղաձայնների տեղաշարժը քաջ յայտնի է լեզուաբանների շրջանում: Ոսկեդարեան եռաստիճան համակարգը տեղի տուեց երկու այլ համակարգերի, մէկը՝ եռաստիճան, միւսը՝ երկաստիճան¹¹: Այդ երկուսից, մի քանի դար յետոյ, գլխատրապէս Կոստանդնուպոլիսի հայերէն բարբառի ազդեցութեան տակ, արեւմտահայ գրական լեզուն պահեց երկաստիճան «խլագորկ» համակարգը:

Հայերէն բնիկ բառերը մեծ մասամբ պահեցին իրենց մերոպեան ուղղագրութիւնը, սակայն կիլիկեան այս նոր գրելաձեւը դարձաւ օտար (արեւմտաերոպական, արաբական եւ տաճկական) անունները տառադարձելու միջոց: Առաջ եկաւ կարծես թէ երկու համակարգ միեւնոյն գրաւաճքի մէջ: Ստորեւ ներկայացնում ենք կիլիկեան գրակարգի գլխատր գծերը:

Պայթական եւ պայթաշփական բաղաձայնները այսօր առաւելապէս երկաստիճան են եւ հայերէնի արեւմտագոյն բարբառների¹² պատմական արտասանութեան հետեանը:

API	[b]	[p]	[d]	[t]	[g]	[k]	[dʒ]	[tʃ]
հայերէն	պ	փ/բ	տ	թ/դ	կ	ք/գ	ճ	ճ/ջ

Օրինակներ (իին ֆրանսերէնից)¹³: **Isabelle** Զապէլ, **passage** բասաճ, **bail** պայլ, **double** տուպլ, **temple** դամփի, **Guillotin** Կիօդին, **quite** քիթ, **comte** գունդ (գունթ), **Josselin** Ճօպլին, **Charles** Ջառլ, **prince** բրինձ: Այսօր՝ **Hugo** Հիւկօ, **Besançon** Դըզանսօն, Տիժոն **Dijon**, **Saint-Cloud** Սէն Քլու, **Corneille** Գօնէլլ են.:

⁹ Կիլիկեան հայերէնի մասնատրապէս ուղղագրութեան վերաբերեալ տե՛ս՝ **Josef Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Verlag von Karl J. Trübner, Strassburg 1901**:

¹⁰ Փոփոխութիւնները անչոյսեցին նախ եւ առաջ տառադարձութեանը:

¹¹ Յակրոբ Չոլաբեանը դրանք անուանում է *կիլիկեան եւ խլագորկ համակարգեր* (Յ. Չոլաբեան, *Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)*, Երեւան, հեղ. հրատ., 2016, էջ 88-89):

¹² Կիլիկիա, Փորը Հայք, Ծոփք, Աղձնիք, նաեւ, եւ մանասնդ՝ Կոստանդնուպոլիս:

¹³ **Karst**, էջ 15 եւ յաջորդները:

Օտար [r] հնչյունը յաճախ ամէնուր գրում է «ր», նոյնիսկ բառակարգին. Բոպէր, Բիթա, Բօճէր: Օտար [v] հնչյունը ամէնուր գրում է «վ». Ճիվան, Տէրվիշեան, Կեօվշէնեան:

Ֆրանսերէն «gn» ձայնը (տե՛ս ստորեւ) գրում է «յն». **champagne** շամբայն, **Jacques Bénigne Bossuet** Պէնիյն Դօսիւ: «Թաց» «ե» կոչուածը ասանդաբար՝ «յը». **Marseille** Մարսէյ, **Versailles** Վերսայլ, **Corneille** Գօնէյլ, այսօր սակայն՝ **Argenteuil** Արժանթօյ:

Ելնելով շատ բառերի մէջ «ե» ձայնաւոր տառի կիլիկեան [ե] կամ [յե] արտասանութիւնից, օտար անունների համար սովորական դարձաւ API [e] հնչյունը ամէնուր «է» գրելը. **Fénélon** Ֆէնէլօն, նմանապէս՝ Պէրպէրեան, Պէշիկթաշեան, Պէյրուպ: Նոյնը եւ «ո»ի պարագայում. շատ բառերում այն հնչում էր [տ] (API [wo]), որը եւ հիմք հանդիսացաւ օտար [o]երը ամէնուր գրել նորամուտ կլոր «օ» տառով. **Victor Hugo** Վիգթօր Հիլօ, նաեւ՝ Ճաբօն, Չօպանեան, Անտօն, Շիքակօ, Կարօ, Մարօ, Ճօ Պայտըն:

Բառամիջի «ը»ն ամէնուր գրում է. Պըզանսօն, Այտընեան, Գաթըրճեան, Հանըն, Քարթըր, Պօթըն, Պայտըն:

Ֆրանսերէնի (եւ թուրքերէնի) «u/ն» (API [y]) հնչիւնի համար յարմարեցրին հայերէնի «իւ» երկբարբառը (որը հայերէն շատ բառերի մէջ այդպէս էլ հնչում է արեւմտահայերէն). **La Bruyère** Լա Պրիւյէր, **Bruxelles** Պրիւքսէլ, նմանապէս՝ Իլիֆիճեան, Իւզարտաշեան, Սիւրմէլեան, իսկ «eu» (թուրքերէն «ծ») հնչիւնի համար յօրինուեց «էօ» երկբարբառը (հայերէնին բոլորովին խորթ). **Eugène** Էօժէն, **Montesquieu** Մօնթէքիօ, **Argenteuil** Արժանթօյ, նաեւ՝ Չէօրէքճեան, Գարակէօզեան:

Հայերէն «ե» տառը ձայնաւորից առաջ կիսաձայն [յ] հնչիւնի սպասարութիւնը ստացաւ՝ «եա, եէ, եի, եօ, եո, եիւ, եէօ, եր». Եաղոպեան, Եազըճեան, Եօղուրթ, Նիւ Եօրթ, Եուրի (ռուսերէն «ЕОрій»)ի արդի տառադարձումը), **seigneur** սէնէնթօր, երլտըզ:

Օտար [w] հնչյունը արտայայտուեց «ու» տառով, նոյնիսկ բառակարգին. Ուաշինկթըն, Ուիլիըմ, Ուիքիփետիա, **Saint-Ouen** Սէնթ Ուէն:

Մենք դէմ ենք այդպիսի տառադարձութեանը: Այն տուրք է տալիս օտար լեզուներին եւ արհամարհում է հայերէնի օրէնքները: Եթէ արդարացնենք օտար, մասնատրապէս՝ ֆրանսերէնի հնչիւնները հայերէնում հարազատօրէն արտայայտելու ցանկութիւնը եւ ընդունենք, օրինակ՝ «իւ» եւ «էօ» հնչիւնները, ապա դռները բացում ենք նաեւ ռուսահայ եւ բոլոր այլալեզու տառադարձութիւնների առջեւ: Օտար լեզուին տուրք տալու այդպիսի մի օրինակ է ռուսերէն հնչիւնները փափկացնելու համար մի ժամանակ խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերէնում ընդունուած ապաթարցը («փշիկը») (տե՛ս բազմաթիւ օրինակներ Մայիսասենցի բառարանում. «կուլ՝տուրա», «ռեվոլ՝վէր», «պալ՝տօ» են.): Այդպէս,

ամեն օտար լեզուի համար տառեր ու երկբարբառներ յօրինելով, հայերէնը կը վերածենք բաբելոնեան մի աշտարակիկի եւ ոտնակոխ կ'անենք մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու մեր բոլոր ջանքերը:

Այսօր Սփիւռքում հայագիտութիւնը փորձում է ձեռքազատուել մասնատրապէս «է» եւ «օ» ձայնատրոնների կիլիկեան տառադարձումից (դրանք ամէնուր գրելու միտումից), որը պէտք է անշուշտ ողջունել եւ խրախուսել:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՐԶԵՅՐԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սովետական պարզեցրած ուղղագրութիւնը (1922 եւ 1940 թթ. խմբագրութեամբ) մի այլ դժբախտութիւն էր, որ վրայ հասաւ մեր լեզուին: Ուղղագրական փոփոխութիւնները դիպան յատկապէս հայերէնի ձայնատրոններին ու երկբարբառներին:

«է» տառը ամէնուր փոխարինեցին «ե»ով, «օ» տառը ամէնուր փոխարինեցին «ո»ով (1940ի փոփոխութիւնը դրանց օրինական ուժ տուեց միայն արմատական բառերի սկզբում): Հայերէնի «յ» տառը կիրարկեցին թէ՛ բուն [յ] հնչյունի համար, թէ՛ երկբարբառների փափկացուցիչ դերի համար (տե՛ս ստորեւ): Լիովին քանդեցին մետրոպեան երկբարբառների տրամաբանութիւնը: Կիլիկեան «իս» եւ «էօ» երկբարբառները գրեցին «յօ» եւ «յո», առանց հաշուի առնելու դրանց իրական հնչումը. Սիւրմէեան Սյուրմէյան, Ղարազէօզեան Ղարազյոզյան:

Յետանկախութեան հայերէնի վրայ շարունակում է մեծ ազդեցութիւն ունենալ ռուսերէնը, որը, հայաստանաբնակ հայերի մի զգալի մասի միակ օտար լեզուն լինելով, օտարալեզու տառադարձութիւնների գերակշիռ մասի աղբիւրն է: Բաական է ծանօթանալ Վիքիպեդիայի որեւէ յօդուածի, համոզուելու համար, որ աղբիւրները, հետեալաբար եւ տառադարձութիւնը, առաւելապէս ռուսերէն են¹⁴:

Համեմատութեան համար բերում ենք կիլիկեան եւ սովետական ուղղագրութիւններով տառադարձած միջնաին անուն. *Montequieu*-Մօնթէւքիէօ-Մոնտեքյո, *Depardieu*-Տըփարտիէօ-Դեպարդիէ, *Corneille*-Գօննէյ-Կոռնէյ, *La Bruyère*-Լա Դրիյէր-Լա Բրյուր, *seigneur*-սէնէթօր-սէնյոր, *Peugeot*-Քէօօօ-Պէօօ:

Եթէ ինչ-ինչ հնչիւնների պարագայում (օտար անունների մէջ որոշ դիրքերում «ձ»ի փոխարէն «ե», «օ»ի փոխարէն «ո») սովետական ուղղագրութիւնը անգիտակից վերադարձ էր մետրոպեան տրամաբանութեանը (որը անշուշտ ողջունելի է), 1922 եւ 1940ի ուղղագրափոխութիւնը ընդհանուր

¹⁴ Հայաստանցի դպրոցականը առ այսօր առանձին-առանձին ուսանում է եւ «ռուսաց լեզու եւ գրականութիւն» (պարտադիր), եւ՛ մի որեւէ «օտար լեզու» առարկաներ (ըստ դպրոցի հնարատրութեան): Փաստօրէն՝ կրթութեան նախարարութիւնը այնպէս է ներկայացնում կարծես թէ ռուսաց լեզուն *օտար* լեզու չէ:

աումամբ անգրագէտ, հապճեպ եւ անհետետղական մի նախաձեռնութիւն էր:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՉԻՒՆԱԿԱՆ ՍԿՂՐՈՒՆՔՆԵՐԸ

Հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք պատշաճ է, եւ անհրաժեշտ է, յարգել իրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ՝ ինչպիսին էլ լինի գրականութեան սեռը (գիտական, հանրամատչելի կամ այլ): Եւս մէկ անգամ պնդենք, որ տառադարձութիւնը ոչ այլ ինչ է քան «յարմարագրութիւն», այն է՝ որեւէ օտար լեզուի յատուկ կամ հասարակ անունը հայերէն տառերով ճիշտ, յարմար եւ միակերպ գրելու արուեստը: Եւ հայը բոլորովին պէտք չէ որեւէ կերպ նեղուի, թէ հայերէնը չի կարողանում ճշգրտութեամբ վերարտադրել այս կամ այն օտար լեզուի բոլոր հնչիւնները: Աշխարհի բոլոր լեզուները նոյն պայմաններում են գտնուում եւ բարարտում են իրենց տառամթերքով:

Յիշեցման համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ նախորդ երկու յօդուածներում արձարձած սկզբունքները: Յօդուածները չճանաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրափրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեան անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին (խօսքը ե՛ւ այն յօդուածի, ե՛ւ յօդուածաշարքիս բոլոր մնացած յօդուածների մասին է):

ա) Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-ջ», «ծ-ձ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայերէն դասական տառադարձութեան ողնասիւններից մէկն է: Եթէ ուզում ենք մտարուպեան շաւղով առաջ ընթանալ, պէտք է մէկընդմիջտ հրաժարուենք կիլիկեան («խլազուրկ», երկաստիճան) համակարգը կիրարկելուց: Եւ դա ո՛չ թէ նրա համար, որ կիլիկեան համակարգը «սխալ» է հնչիւնաբանօրէն (չկայ «սխալ» հնչիւնաբանութիւն, ամէն լեզուի կամ լեզուաճիւղի հնչիւնաբանութիւն «ճիշտ» է իր համակարգի համար), այլ պարզապէս՝ որովհետեւ հայերէնի մտարուպեան այբուբէնը հայոց միջնաշխարհի եռաստիճան կարգի վրայ է հիմնուած, ինչպէս նաեւ՝ որովհետեւ հայերէնի բարբառների մեծ մասը ճանաչում է եռաստիճան դրոթիւնը:

բ) «ե» եւ «է» տառերի գրութեան օրէնքները յարգում են մտարուպեան ուղղագրութիւնը, այն է. տառադարձութիւններում «ե»ը գրում ենք բառակգրին եւ բառամիջում բաղաձայններից առաջ, իսկ «է»ն՝ բառավերջին կամ ձայնատրից առաջ: «ե»ը եւ «է»ն իրար լրացնող տառեր են: «ե»ը մեր այբուբէնի API [e] հնչիւնն է, ինչպէս եւ արդի հայերէնում «է» տառը: Բառակգրի «ե»երը պարտադիր չէ [յե] արտասանել:

զ) Օտար API [o] հնչյունը տառադարձությունների մեջ ամենուր արտայայտում ենք մետրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպես եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մտոց գործած կլոր «o» տառը տառադարձութեան համար չէ: Այն ճիշտ չէ գործածել ո՛չ բառասկզբին, ո՛չ բառամիջում, ո՛չ էլ բառավերջին:

դ) Բառամիջում եւ բառավերջին խոսափում ենք «ը» գրելուց: Մետրոպեան ուղղագրութիւնը հիմնուած է ա՛յդ սկզբունքի վրայ եւ մենք էլ պարտաւոր ենք այն յարգել:

ե) Օտար API [v] եւ [w] հնչյունները հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ» (երբեք՝ «ու»): Ըստ հնարատրութեան օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում բաղաձայնից յետոյ եւ ձայնատրից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

զ) Հայերէնում բաղաձայնին չի կարող հետեւել «յ» տառը (բարդութիւնները չհաշուած): Ուստի՝ օտար «ia, ie, ii, io, iu» համակցութիւնները արտայայտում ենք բառամիջում «իա, իե, ի¹⁵, իո, իու» կապակցութիւններով (եւ ոչ թէ՛ մեր երկբարբառներով): Բառասկզբին, սակայն, կարող ենք եւ իսկապէս գրում ենք «յա, յե, յի, յո, յու»:

է) Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [ի] չէ: Անտիպական անուններում այն [ի] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [յ] արտասանենք: «Յ» տառը փաստօրէն գրում ենք միայն երկու պարագայում. բառասկզբին՝ ձայնատրութից առաջ¹⁶, եւ բառամիջում (կամ բառավերջին)՝ միայն «ա» եւ «ո» տառերից յետոյ: Մետրոպեան գրութեանը խորթ է «յ» տառը դնել «ե, է, ի, օ, ու, ը» տառերից յետոյ:

ը) Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, տ, եայ, եաւ (եօ), տյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարեւոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չջօրինել նոր կապակցութիւններ, որոնք խորթ են ե՛ւ հայերէնի հնչիւնաբանութեանը, ե՛ւ մետրոպեան ուղղագրութեանը:

Հայերէնի «իւ» եւ «եա» երկբարբառների համար նշենք, որ, հակառակ հայ լեզուաբանների գրեթէ համընդհանուր կարծիքին¹⁷, դրանք (մի կողմ թողած, քնականաբար, «իւ»ի [իւ] արտասանութիւնը, նմանապէս արեւմտահայերէնին յատուկ API [y] հնչումը, ֆրանսերէն՝ «ւ») *երկակի* արտասանութիւն ունեն գրական արեւելահայերէնում (եւ ոչ թէ՛ միայն [յու] եւ [յա]): Դրանց առաջին, եւ ամենայնաճախ դերը, նախորդ բաղաձայնը

¹⁵ Կրկնակ «իի»ն պարզում է:

¹⁶ Միքսնի օրինակ էլ ունենք «ը» տառից առաջ. յղի, յղեւ, յղկեւ, յղվանալ են.:

¹⁷ Այստեղ միայն համառօտ ենք անդրադառնում հարցին: Նիւթը ընդարձակ է:

փափկացնելն է: Իրենք՝ երկրաբաբանները, արտասանում են համապատասխանաբար «ոս» եւ «ա», միեւնոյն ժամանակ փափկացնելով նախորդող բաղաձայնը: Օրինակ. ձին, սին, նիւթ, սենեակ, վարկեան, Պետրոսեան, Մեսրոպեան բառերում բնաւ չունենք [ո] եւ [յա] արտասանութիւններ, այլ պարզապէս՝ թաւ ընդգծուած բաղաձայնները փափուկ են հնչում, եւ սրանց յաջորդում է [ո] կամ [ա] պարզ ձայնատր¹⁶: Երկրորդ՝ նուազ յաճախ արտասանութիւնը, լեզուաբաններին ծանօթ [յո] եւ [յա] հնչումն է: Դա տեղի է ունենում [ղ, խ, ղ] բաղաձայններից յետոյ, որոնք հայերէնում միայն կոշտ են (երբեք փափուկ չեն կարող արտասանուել): Դրանցից յետոյ իրօք լսում ենք [ղյու, ոյա], [խյու, խյա], [ոյու, ոյա]: Օրինակ. առիծ, աղիւս, խիւս, բարախիւն, Մուշեղեան, Ջախջախեան, Աճառեան: Բառակզբին ունենք միայն «իւր, իւր (մեսրոպեան ուղղագրութեամբ՝ եւր)» արմատները, որտեղ նոյնպէս լսում ենք [յու]: «Եա» երկբարբառով սկսող հայերէն արմատ չունենք. եղած փոխառութիւնները (եար, եափնջի, եայլաղ, եախա...) կիլիկեան ուղղագրութեան արտացոլումն են:

Ինչպէս վերը նշեցինք, սկզբունքօրէն «եա» երկբարբառը տառադարձութիւնների մէջ չենք օգտագործում, դրա փոխարէն գրում ենք «իա»: Ինչ վերաբերում է «իւ» երկբարբառին, դա կիրարկում ենք միայն եթէ ուզում ենք փափկացնել նախորդ բաղաձայնը: Ինչպէս նմանապէս վերը տեսանք, լատինատառ «iu»-ի համարժէքը հայերէն «իոս» է: Օրինակ. Ֆրանսերէն *bureau*-ն կարող ենք տառադարձել «բիւրո», բայց անգլերէն *beautiful*-ը պէտք է գրենք «բիութիֆուլ», *New York*-ը Նիւ Յորք:

թ) Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար API [r] կամ [ʀ] (տե՛ս ստորեւ) հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառակզբի, ուր գրում ենք «ռ»: Ինչպէս հիմնատրել ենք յօդուածաշարքիս Բ. մասում, «ռ»-ի գրութիւնը «ն»-ից (նաեւ՝ «ր»-ից) առաջ պարտադիր չէ:

Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր նախորդ երկու յօդուածների համանուն բաժիններում (*Հայերէն փոստադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները*):

ՖՐԱՆՍԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐՈՒԹԻՈՆՆԵՐ

Ֆրանսերէնն ու հայերէնը երկուսն էլ ունեն երեսունվեցական հնչոյթ¹⁹, սակայն մեծապէս տարբերում են ձայնատրների ու բաղաձայնների թուով: Ֆրանսերէնն ունի 16 ձայնատր, 3 կիսաձայն, 17 բաղաձայն: Հայերէնն ունի 6 ձայնատր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ասել է թէ՛ տառադար-

¹⁶ Երկբարբառների փափկացուցիչ դերի մասին առաջին անգամ արտայայտուել ենք մի այլ յօդուածում (Արմէն Միքայլեան, «Ուղղագրամարտ (հայերէն ուղղագրութեան ներկայ եւ ապագայ խնդիրները)», *Բազմալէզ, ՃՀԴ*. տարի, թիւ 3-4, Վենետիկ 2016, էջ 234-235:

¹⁹ Չհաշուած ֆրանսերէնի երկու «օտար» հնչոյթները ([r] եւ [h]):

ծութան ժամանակ (թե՛ ֆրանսերենից հայերեն, թե՛ հակառակը) ստիպուած ենք գոհանալու եղած տառամթերքով: Հայկաբան մեր սկզբունքներին բոլորովին խորթ է նոր տառերի ու տառակապակցութիւնների յորինումը:

Ստորեւ անդրադառնում ենք ֆրանսերեն տառադարձութան գլխաւոր նբրութիւններին: Տառադարձումները հայկաբան հայերենի պատմականօրէն կանոնարկուած վերոնշեալ դասական սկզբունքների համաձայն են²⁰:

ա) Ստորին աղիասկը ներկայացնում է ֆրանսերենի երկերանգ պարզ ձայնաւոր հնչոյթներն ու դրանց ընգային զուգահեռները: Հայի ականջին խորթ է այդ երկու երանգների տարբերակումը, եւ այստեղ կարիք չունենք դրանց հնչիւնական առանձնայատկութիւնները պարզաբանելու:

հայերէն պարզ ձայնաւոր	ֆրանսերէն պարզ ձայնաւոր		ֆրանսերէն ընգային ձայնաւոր	հայերէն «ընգային» տառադարձում
	Ա. երանգ	Բ. երանգ		
ա	[a]	[ɑ]	[ā]	ան/մ *
ե/է	[e]	[ɛ]	[ē]	են/մ *
ո	[o]	[ɔ]	[ō]	ոն/մ *
օ	[ø]	[œ]	[œ̄]	ուն/մ *

* «ն, ր, պ» հնչիւններից առաց հայերէն «ն»ի փոխարէն պէտք է գրել «մ» (ինչպէս եւ ֆրանսերէնում է)

Ֆրանսերէն ոչ ընգային (պարզ) ձայնաւորները հայերէն տառադարձում ենք պարզ ձայնաւորներով: Ֆրանսերենի ամէն զոյգին համապատասխանում է հայերէն մէկ ձայնաւոր: Քանզի զոյգ ձայնաւորների ընտրութիւնը բառի մէջ ֆրանսերէնում մեծ մասամբ դիրքային է (այսինքն՝ դրանք մեծ մասամբ հնչոյթի դեր չեն կատարում), հայերէնը շատ քան չի կորցնում երկուսն էլ նոյն ձայնաւորով արտայայտելուց: Օրինակներ. **Amiens** Ամիեն, **Angoulême** Անգուլեմ, **Bordeaux** Բորդօ, **La Rochelle** Լա Ռոշել, **Dijon** Դիժօն, **Guéret** Գերէ, **Périgueux** Պերիգօ, **Évreux** Եւրօ, **Meuse** Մոզ, **Gilles Deleuze** Ժիլ Դլոզ:

Հայերէնը չունի ընգային ձայնաւորներ: Ընգային հնչում տալու համար՝ ձայնաւորին յաջորդում ենք [ւ] հնչիւնը. **Vendée** Վանդէ, **François Mitterrand** Ֆրանսուա Միտերան, **Saintes** Սենտ, **Georges Brassens** Բրասենս, **Jean Dujardin** Ժան Դիւժարդեն, **Jean-Paul Belmondo** Բելմոնդօ, **Joe Dassin** Ժո Դասեն: «Ն» տառի փոխարէն «մ» գրելը (այսինքն՝ համաձայն ֆրանսերենի ուղղագրութեան) հնարաւոր եւ ցանկալի է միայն այն դէպքերում, երբ յաջորդ տառը ֆրանսերէնում շրթնային է եւ իսկապէս հնչում է. **Chambéry** Շամբերի, **camembert** կամամբեր:

²⁰ Գրածը չձանրաբեռնելու համար որոշեցիմք անունների ու ինաստների թարգմանութիւնները ֆրանսերէն օրինակներում չգրել:

Վերջին՝ [œ] ռեզայինի համար ընտրեցինք ոչ թե «ոն» տառադարձումը (դրա պարզ ձայնատրին համազոյգ), այլ «ոն»: Նախ՝ որովհետև դրա հնչումը ավելի նման է հայերեն [ոն] հնչողությանը, երկրորդ՝ որ դրա գրութեան «UN» տառակապակցությունը գալիս է լատիներեն «UN»ից [ուն]: Օրինակ. **un ոն** (անորոշ յօդ), **tribun տրիբուն**, **munster մունստեր** (գերմանալեզու ծագման անուն), **Albert Lebrun Ալբերտ** Լբրուն:

բ) Ձայնատր միս հնչոյթները միերանգ են, սակայն, ի տարբերություն նախորդների, ունեն զուգահեռ կիսաձայն հնչյուններ:

հայերեն ձայնատր	Ֆրանսերեն ձայնատր	Ֆրանսերեն կիսաձայն	կիսաձայնր հայերեն	
			բառասկզբին	բառամիջում
ի	[i]	[j]	յ	ի
ու	[u]	[w]	վ	ու
իւ, ու	[y]	[y]	վ	ու

Պարզ ձայնատրների օրինակներ. **Libération** Լիբերասիոն, **brie** բրի, **Marcel Proust** Պրուստ, **Moulins** Մուլեն, **Laure Manaudou** Մանոդու, **Alexandre Dumas** Դիմա, **Jules Verne** ժիլ Վերն, **Marie Curie** Մարի Կյուրի, **François Truffaut** Տրիֆո, **Michel Galabru** Գալաբրու, **Alfred Dreyfus** Դրեֆուս, **Louis de Funès** Ֆիւնես:

«ի» երկբարբառը հայերենում պետք է գրել միայն այն բաղաձայններից յետոյ, որոնք ընդունակ են փափուկ հնչելու: Ինչպես վերը նշեցինք, առաջարկում ենք «ի» չգրել «դ, խ, ո» բաղաձայններից յետոյ, որոնք իրենց բնութեամբ չեն կարող փափուկ լինել, եւ հայի ականջին առաջ են բերում տիպիկ զուգորդություններ: Օրինակ. **Rutebeuf**, Ռուտբոֆ, եւ ոչ թե Ռիտբոֆ (հայերեն անարտասանելի), նմանապես՝ **rue** ռու (փողոց), **Jean de La Bruyère** Բրուեր:

Կիսաձայնների օրինակներ. **Lyon** Լիոն, **Patricia Kaas** Պատրիսիա, **Poitiers** Պուատիե, **Rouen** Ռուան, **Louis** Լուի, **Puy-de-Dôme** Պուի-դը-Ռոմ, **Paul Eluard** Ելուար, **Ouagadougou** Վագադուգու (լու օրինակ է [w] հնչյունը «վ» տառադարձելու համար, ուստի սխալ է Ուագադուգու ձեւը), **wallon** վալոն (տյոյ տրամաբանությունը), **Huisseau-sur-Cosson** Վիսո («H» տառը ստուգաբանական չէ եւ չարժէ տառադարձել), **Huisne** Վին կամ Հուին:

Ֆրանսերենի այս երեք ձայնատրները, գանազան դիրքերում, կարող են փոխարկուել համապատասխան կիսաձայնների եւ ընդհակառակը: Ուստի լիովին արդարանում է ձայնատրների եւ կիսաձայնների հայերեն միանման գրությունը:

գ) Առաջին երկու կետերում նշուած ձայնատր հնչյունները ճշտելու համար՝ բերում ենք ֆրանսերենի երկբարբառների ու եռաբարբառների հնարատր գրությունները, իբրեւ յաւելեալ օգնություն բանատր ձայնըր ճիշտ տառադարձելու համար:

Ֆրանսերեն երկբարբառներ	հայերեն տառադարձումը	Ֆրանսերեն եռաբարբառներ	հայերեն տառադարձումը
ai / ay [ɛ]	ե/է	eau [o]	ո
ei / ey [ɛ]	ե/է	œu [ø, œ]	ո
oi / oy [wa, wo]	ուա, վա		
au [o, ɔ]	ո		
eu / ue* [ø, œ]	ո		
ou [u]	ու		
* «œ»ից եւ «ø»ից առաջ			

Օրինակներ. **Maine** Մեն, **François Rabelais** Ֆրանսուա Ռաբլէ, **Voltaire** Վոլտեր, **Joachim du Bellay** ժովակիմ (Յովակիմ) դու Բելէ, **Le Puy-en-Velay** Լը Պուի-ան-Վլէ, **Seine** Սեն, **Alfred Dreyfus** Դրեֆուս, **Talleyrand** Տալերան (Հայաստանում այսօր՝ Թալերան), **Aveyron** Աւերոն, **Poitou** Պուատու, **Loire** Լուար, **Blois** Բլուա, **François** Ֆրանսուա, **Troyes** Տրուա, **Ségolène Royal** Ռուայալ, **Héroult** Հերո, **Auvergne** Ուվերն, **Montauban** Մոնտոբան, **Gustave Flaubert** Ֆլոբեր, **Creuse** Կրոզ, **Gérard Depardieu** Դեպարդիո, **Montesquieu** Մոնտեսքիո, **Richelieu** Ռիշ[ը]լիո, **Peugeot** Պոժո, **Marcel Proust** Պրոստ, **Toulon** Տուլոն (Թուլոն), **Bordeaux** Բորդո, **Beauvais** Բուվլէ, **Georges Clemenceau** Կլեմանսո, **Babœuf** Բաբոֆ:

Ունգային «ain (aim), ein (eim), oin» եռաբարբառները արտայայտելու համար գործում է նոյն սկզբունքը՝ անելացնում ենք «ն» (կամ «մ») տառը: Օրինակ. **Saintes** Սենտ, **Ain** են, **Valéry Giscard d'Estaing** ժիսկար դ'Եստեն, **Jean de Joinville** ժան դը ժուենվիլի, **Reims** Ռեմս («ռ») տառը ստուգաբանական է, ՀՀում ընդունուած «Ռեյմս» ձեփ «ր» տառը անելորդ է):

Ֆրանսերէնում այսօր [o, ɔ] հնչող «au» երկբարբառը, չնայած հայերէնում տեղի ունեցած պատմական նոյն փոփոխութեանը, տառադարձում ենք «ո» եւ ոչ կլոր «օ», ինչպէս կարելի էր ակնկալել: Յիրաի, ֆրանսերէնի պատմական հնչմանափոխութիւնը ֆրանսերէնի ներքին օրէնք է, հայերէնինը՝ հայերէնի ներքին օրէնք (թէեւ նոյնակերպ), եւ ճիշտ չենք համարում հայերէնի ուղղագրութեան մէջ արտացոլել օտար լեզուում տեղի ունեցած պատմական մի երեւոյթ: Մենք հին հայերէնի «աւ» երկբարբառը, երբ այն այսօր [ո] է հնչում, կարո՞ղ ենք գրել կլոր «օ»: Սակայն իրատուք չունենք նոյնը անելու օտար մի լեզուի ուղղագրութեան հետ: Նախ՝ մենք չզգիտենք, թէ արդեօք ֆրանսերէնի բոլոր «au»երը ստուգաբանօրէն ճիշտ են (օրինակ **Auvergne** գալիս է գաղղիական **Arverne** ցեղանունից), երկրորդ, եթէ ամէն «au» հայերէն կլոր «օ» գրէինք, ապա հայերէն տառադարձութեան մէջ «ո»երի եւ «օ»երի մի անասելի շփոթ կը լինէր: Այդ նկատառումներից ելնելով՝ որոշեցինք, որ ամէնուր «ո» գրելը միակ ճիշտ լուծումն է:

Lausanne Լոզան, **Beaune** Բոն, **Aube** Ուր, **Aude** Ուդ, **Aurillac** Ուրիլակ, **Auch** Ուշ, **Chaumont** Շոմոն, **Pau** Պո:

Ուշադրութիւն. երկկետով (ֆրանսերէն՝ *tréma*) առանձնացրած ձայնատրոնները երկբարբառ չեն. **Citroën** Սիտրոյէն, **Jean Antoine de Baïf** Բայիֆ, **Loïck Peyron** Լոյիկ Պերոն:

դ) Ֆրանսերէնի համը [ə] կոչուող ձայնատրի տառադարձումը նուրբ հարց է: Այն հանդիպում է բառամիջին ու բառավերջին (երբեք բառասկզբին): Բառավերջին այն մեծ մասամբ լիովին համը է, եւ հայերէն էլ այն բնաւ չենք նշում. **Loire / Loir** Լուար (երկու տարբեր գետերի անուններ են), **Le Monde** Լը Մոնդ, **Voltaire** Վոլտեր: Որոշ տիպարի վերջատրոպեան բառերում, յստակ արտասանութեան ժամանակ, այն կարող է հնչել: Սակայն այս դէպքում էլ այն հայերէն չենք արտայայտում. **Chartres** Շարտր (ֆրանսերէնը հնչում է [շարտրը], հայերէնը՝ [շարտը]), **Jean-Paul Sartre** Սարտր, **Notre-Dame** Նոտր-Դամ, **Villemomble** Վիլմոմբլ, **Sambre** Սամբր:

Կիլիկեան տառադարձութիւնը [ը] հնչիւնը արտայայտում է նաեւ բառամիջում, սակայն մենք առաջարկում ենք հրաժարուել այդպիսի տառադարձութիւնից: Բառամիջում «ը» գրելը խորթ է հայերէնին, եւ բառի տեսքը կը շահի, եթէ այդ «ը»երը բնաւ չգրենք. **Besançon** Բզանսոն, **Montpellier** Մոնպլիէ²¹, **Nevers** Նուեր (Նվեր): **Genève**-ը գրում ենք նաեւ ժընեւ, սակայն անելի հայեցի է ժնեւ (առանց «ը»ի):

Միակ դէպքը, երբ «ը» տառի գոյութիւնը անհրաժեշտ է, միավանկ բառերն են. **le «լը»**, **de «ըը»**, **ne «նը»**, **ce «սը»**, **je «ժը»**, **me «մը»**, **se «սը»**, **te «տը»**: Օրինակ. **Le Mans** Լը Ման, **Le Monde** Լը Մոնդ, **Charles de Gaulle** Շարլ դը Գոլ, **Louis de Funès** Լուի դը Ֆիյնես, **va-come-je-te-pousse** վա-կոմ-ժը-տը-պուս:

ե) Ֆրանսերէնի խոլ պայթականները [p, t, k] տառադարձում ենք հայերէն պարզ խոլներով՝ [պ, տ, կ], քանզի նրանք այդպէս էլ հնչում են ֆրանսերէնում (մի երկու բացառութեամբ, տե՛ս ստորեւ, կէտ ժե. եւ ժգ.)²²: Հետեւեալ բաղաձայնների տառադարձումն ընդհանրապէս դժարութիւններ չի յարուցում. [b-p, d-t, g-k, z-s, ʒ-f, v-f, m, n, l], որոնք համապատասխանաբար լինում են. «բ-պ, դ-տ, գ-կ, զ-ս, ժ-շ, վ-ֆ, մ, ն, լ»: Օրինակներ. **Bourges** Բուրժ, **Perpignan** Պերպինիան, **Drôme** Դրոմ, **Tours** Տուր, **Garonne** Գարոն, **Carcassonne** Կարկասոն, **Émile Zola** Ջոլա, **Somme** Սոմ, **Gironde** Ժիրոնդ, **Charente** Շարանտ, **Vannes** Վան, **Finistère** Ֆինիստեր, **Mâcon** Մակոն, **Nancy** Նանսի, **Limoges** Լիմոժ:

²¹ Այստեղ «աթից առաջ «մ» չենք գրում ֆրանսերէնի «եթ» (թէիս համը) պատճառով:

²² Ընդհանրապէս, ուղմանական լեզուների խոլ պայթականները պարզ են, իսկ գերմանական լեզուներինը՝ շնչեղ:

զ) Ֆրանսերէնի [ʁ] բաղաձայնն այսօր, երրօրական Ֆրանսիայի գրեթէ ողջ տարածքում, հնչում է արդի հայերէն [ր] բաղաձայնի նման (մի քիչ անելի փափուկ): Սակայն այդ հնչոյթը ֆրանսախօս երկրներում ունի անուագն երեք արտասանութիւն. նման հայերէն [ռ]ին, [ղ]ին, իսկ երրորդը կոկորդային է՝ լեզուակի միջոցով: Ստուգաբանօրէն այդ հնչոյթը համապատասխանում է լատիներէնի [r] հնչիւնին (հայերէն [ռ]ի եւ [ր]ի միջինը), եւ ունանական միա լեզուների մեծամասնութիւնը նոյնպէս հարազատ է մնացել պատմական [r] հնչիւնին: Երրօրական եւ մերձատրարելեան բոլոր լեզուները ֆրանսական [ʁ]ն համարում են իրենց «ր/ռ»ի համարժէքը (հայերէնը նոյնպէս): Դա է պատճառը, որ հայերէնը շարունակում է այն տառադարձել «ր/ռ» («ր»ի եւ «ռ»ի տարբերութիւնը՝ ըստ հայերէնի ուղղագրութեան): Օրինակներ. **La Rochelle** Լա Ռոշել, **Jean Racine** Ռասին, **Robespierre** Ռոբեսպիեր, **Denis Diderot** Դիդրո, **Emmanuel Macron** Մակրոն, **Béarn** Բէարն, **Marne** Մարն, **Jules Verne** Վերն:

Սխալ եւ անճոռնի են ֆրանսերէնի [ʁ]ն հայերէն [ր] տառադարձելու եզակի փորձերը, ինչպէս՝ **Boulangerie** Բուվանժ(ե)րի: Դա միայն կարելի է անել խօսքին ինչ-որ երանգ կամ երգիծանք տալու համար, բայց ոչ սովորական տառադարձութեան մէջ:

է) Ֆրանսերէնն ունի հայերէն «ն»ին համապատասխան երկու հնչիւն: Սովորական [ն]ի կողքին ունի նաեւ փափուկ մի [ն] («ռ» **mouillé** – API [ր], բառացի՝ թաց «ն», գրութեան մէջ՝ «**gn**»): Հայերէնը չունի նման հնչոյթ, սակայն հնչիւնը մեր «խ» եւ «ճա» երկբարբառներից առաջ հնչող փափուկ «ն»ից շատ հեռու չէ. «նիւթ, նեարդ» բառերի մէջ «ն»ն մօտենում է API [ր]ին: Տառադարձութեան մէջ, այնտեղ որտեղ «**gn**»ին յաջորդում է հայերէն մի ձայնաւոր («ա, ե/է, ի, ո, ու»), այդ տարբերութիւնը արտայայտում ենք «խա, իե/է, ի, իո, իո» կապակցութիւններով: Օրինակներ. **Perpignan** Պերպինիան, **armagnac** արմանիակ, **Agnès** Անիէս **François Dagognet** Դագոնիէ, **Bobigny** Բոբինի, **Lattre de Tassigny** Տասինի, **Avignon** Ավինիոն, **Agneaux** Անիո, **Vignoux-sur-Barangeon** Բարանժոնի Վինիո, **Bagneux** Բանիո, **seigneur** սենիոր:

Երբ «**gn**» տառակապակցութիւնը գտնում է բառավերջին, կամ թէ նրան յաջորդում է մի բաղաձայն, առաջարկում ենք ոչ մի կերպ չարտայայտել «ն»ի փափկութիւնը: Օրինակ. **Compiègne** Կոմպիէն, **Digne-les-Bains** Դին-լէ-Բեն, **bleu d’Auvergne** բլո դ’Ուվերն, **Boulogne** Բուլոն, **Châtagneraie** Շատնէրի: Երբեմն հանդիպում ենք «յն» տառադարձութեան (շամպայն՝ զինու տեսակ), սակայն մենք կողմնակից չենք դրան, որովհետեւ նախ՝ այդպիսի գրութիւնը անելի է հեռանում բնօրինակի արտասանութիւնից, երկրորդը՝ հակառակ է ստուգաբանութեանը: Այդպիսի հնարքի միակ նպատակն է ինչ-որ կերպ արտացոլել ֆրանսերէնի այդ առանձ-

նայատկութիւնը, մի բան, որին, ինչպէս ընթերցողը հասկացել է արդէն, մենք դէմ ենք սկզբունքօրէն²³:

Միայն երկրանուններում, ուր ֆրանսերէնի «gn» ստուգաբանօրէն գալիս է լատիներէն «**nia**»ից, հայերէն գերադասելի է գրել «նիա»։ **Champagne** Շամպանիա (երկրանուն, ի տարբերութիւն արդէն ընդունուած «շամպայն» զինու տեսակի), **Bretagne** Բրետանիա, **Gascogne** Գասկոնիա, ինչպէս եւ ընդունուած է գրել Սպանիա (**Espagne**), Կատալոնիա (**Catalogne**) (թէ՛ւ վերջիններս բուն ֆրանսական անուններ չեն, դրանց վերջաւորութիւնները սերում են լատինական «**nia**» ձեւից)։

ը) Ֆրանսերէնի պատմական փափուկ [j] հնչոյթը («l» mouillé – API [ʎ], բառացի՝ թաց «լ») այսօր հնչում է կիսաձայն [j] (հայերէն [յ])։ Գրութեան մէջ հանդիպում է **ail(le), eil(le), il(le), oil(le), ouil(le), euil(le), ueil(le)** տառակապակցութիւններով։ Թում է թէ այն պէտք էր տրամաբանօրէն գրել «յ»։ Սակայն, մի կողմից՝ հայերէնը ամէնուր չի ընդունում «յ» տառը (միայն «ա, ո» տառերից յետոյ), մի կողմից՝ ասանդոյթը այդ փափուկ [j]երը հայերէն «լ» է գրել։ Ինչպէ՛ս **Marseille** Մարսել (կայ նաեւ Մարսէլլ), **Versailles** Վերսալ (կայ նաեւ Վերսայլ), **Bastille** Բաստիլ, **Braille** Բրայլ, **Corneille** Կորնէլլ (սովետական ուղղագրութեամբ), **bataillon** բատալիոն։ Նոյնիսկ Էմիլ Լիտրէի հոչակատր բառարանը շարունակում էր հետեւել պատմական արտասանութեանը²⁴։ Ֆրանսերէն մի քանի բառերի մէջ այն դեռեւս սովորական բաղաձայն [j] է հնչում. **mille** միլ, **ville** վիլ, **Maroilles** Մարուալ։ Հարցը նորբ է, սակայն կարծում ենք, որ լաւ կը լինէր շարունակել եղած ասանդոյթը եւ փափուկ [j]ն տառադարձել «լ»։ **Corneille** Կորնէլ, **Camille** Կամիլ, **Roussillon** Ռուսիլլ(ի)ոն, **François Villon** Վիլոն, **Aurillac** Որիլակ, **Argenteuil** Արժանտուլ, **Daniel Auteuil** Դանիէլ Ոտուլ։ Իսկապէս, ֆիլ (fille), ֆամիլ (famille), Գիլոմ (Guillaume), Միրել (Mireille) գրելը տհաճ է հայոց ուղղագրութեան տեսանկիւնից։

թ) «Յունարէն ի» կոչուող տառը («y», «i grec») ֆրանսերէնում կամ համարժէք է լատիներէն «i»ին, կամ որոշ դէպքերում արժէ «ii» (երկու «i»), որոնցից մէկը [ի]ի ձայն ունի, միւսը՝ [յ]ի։ [ի] հնչելու դէպքում տառադարձում ենք «ի» (բայց ոչ «իս» ինչպէս յունարէն զանազան բառերում)։

²³ Թերահաւատներին յիշեցնենք, որ նոյնիսկ կոշտ ու փափուկ բաղաձայններով հարուստ ռուսերէնից տառադարձած անունների մէջ զանց ենք առնում հնչիւնների փափկութիւնը։ **Ильмень** լճի անունը, օրինակ, գրում ենք «Իլմեն», առանց հաշուի նստելու բաղաձայնների փափկութեան հետ։

²⁴ «*Terme de grammaire. Lettre mouillée, se dit de la lettre I, simple ou double, qui se prononce comme dans ailleurs, bail, etc. L'ı ou les ll mouillées ne sont pas le même son que l'y devant une voyelle, avec lequel on les confond par abus dans la prononciation, à Paris particulièrement*» (É. Littré, *Dictionnaire de la langue française*, éd. Hachette, Paris 1873-77, «mouillé» յօդուածի մէջ)։

pyramide պիրամիդ, dynamite դինամիտ, Annecy Անսի, Cyrano de Bergerac Սիրանո դը Բերժրակ, Nancy Նանսի, Yvelines Իվլին: [3] ձայնը պարունակելու դեպքում հետետում ենք հայերենի ուղղագրութեանը, այսինքն՝ «յ»ն արտայայտում ենք միայն անհրաժեշտութեան եւ հնարատրութեան դեպքում, եւ ոչ այլուր. Henri Troyat Տրուայա, Yonne Յոն, Mayenne Մայեն, Jean de La Bruyère Լա Բրուեր:

ժ) Աանդոյթ է դարձել բառավերջի եւ բառամիջի համը բաղաձայնները հայերեն չարտայայտել. budget բիջե, portrait պորտրե, Albert Camus Ալբեր Կամ(ի)ու, Alfred de Musset Միսե, Brigitte Bardot Բարդո, Pierre Ronsard Ռոնսար, Louis Լուի: Սակայն, բացառապէս հազոադէպ, պարզութեան կամ ստուգաբանութեան համար, հնարատր է դրանք գրել, մանաւանդ այն բառերում, որոնք ունեն հայերեն զուգահեռ համարժեքներ. օրինակ՝ plomb բառը կարող ենք տառադարձել «պլոմբ», թէեւ զուտ ֆրանսերէն հնչողութեամբ պէտք է գրէինք «պլոն»:

ժա) Ֆրանսերէնի որոշեալ յօղը եւ «de» նախդիրը յատուկ ուշադրութեան են արժանի, քանզի բազմաթիւ անունների բաղադրութեան մէջ են մտնում: Դրանք կարող են ներկայանալ հետեւեալ ձեւերով՝ իբրեւ առանձին բառ կամ յատուկ անունը կից գրութեամբ.

	Ֆրանսերէն	առանձին գրութեան դեպքում	անուանը կից գրութեան դեպքում
արական յօղ բաղաձայնից առաջ	le	լը	Լ-
իգական յօղ բաղաձայնից առաջ	la	լա	Լա-
որոշեալ յօղ ծայնատրից առաջ	l'	լ'	Լ-
որոշեալ յօղ յօղնակի	les	լէ, լեզ	Լե(զ)-
նախդիրը բաղաձայնից առաջ	de	դը	Դ-
նախդիրը ծայնատրից առաջ	d'	դ'	Դ-
նախդիրը արական յօղով	du	դու	Դիւ-, Դու-
նախդիրը իգական յօղով	de la	դլա, դը լա	Դլա-
նախդիրը յօղով ծայնատրից առաջ	de l'	դը լ'	Դլ-
նախդիրը յօղնակի յօղով	des	դէ, դեզ	Դե(զ)-

Սոյնիսկ ֆրանսերէնում սրանց գրութիւնը բաական խառն է: Դրանք կարող են գրուել ե՛ւ անունից անջատ (գլխագիր կամ փոքրագիր), ե՛ւ անունին միածոյ: Երբեմն անուան մաս են համարում, երբեմն՝ ոչ: Երբեմն դրանք հաշուի են առնում այբբենական ցուցակներ կազմելիս, երբեմն՝ ոչ:

Հայերէնը սկզբունքօրէն կարող է երկու մօտեցում ունենալ. կա՛մ գրել ինչպէս ֆրանսերէնն է գրում, կա՛մ մոռանալ ֆրանսերէնի ուղղագրութիւնը եւ հայերէն գրել ամէն ինչ միաձոյլ՝ մէկ բառով: Թւում է թէ միաձոյլ գրելը գայթակղիչ տարբերակ է, եւ մենք անձամբ այդպէս էլ կը գրէինք, եթէ համոզուած լինէինք, որ հայ հասարակութիւնը կը կարողանար հետեւել այդ առաջարկին (սկսապէս, ինչո՞ւ պէտք է *d'Artagnan* գրենք դ'Արտանիան, եթէ հանգիստ կարող ենք գրել Դարտանիան, կամ ինչո՞ւ գրենք *Lu* Ֆոնտեն, եթէ արդէն գրած ունենք *Lu*ֆոնտեն):

Ամէն դէպքում, ինչպէս վերը արդէն խօսել ենք, միաձոյլ գրութեան դէպքում պէտք է խուսափել բառամիջում «ը» գրելուց: Միաձոյլ գրութեան օրինակներ. *Delavallade* Դլավալադ, *Delahousse* Դլահուս, *Duhamel* Դիւհամել, *Desmoulins* Դեմուլեն, *Dujardin* Դիւժարդեն, *Delarue* Դլառու, *Deschamps* Դեշան, *Dupont* Դիպոն, *Dupré* Դիպրէ, *Delacroix* Դլակրուա, *Delahaye* Դլահէ, *Leclerc* Լկլեր, *Labadie* Լաբադի, *Lesage* Լսաժ: Անշատ գրութեան օրինակներ. *La Vallière* Լա Վալիեր, *L'Enfant* Լ'Անֆան, *L'Haÿ-les-Roses* Լ'Հայիլէ-Ռոզ, *La Boétie* Լա Բոյետի (հին եւ ռքսիտաներէն արտասանութեամբ՝ Լա Բուատի), *La Fontaine* Լա Ֆոնտեն, *La Rochefoucauld* Լա Ռոշֆուկո, *Le Vau* Լը Վո:

Երբեմն ֆրանսերէնը ինքն է երկբայում՝ *Lebas* կամ *Le Bas* (Լբա/Լը Բա):

Հարցը նորք է եւ մասնագիտական քննարկման արժանի:

ժբ) Ֆրանսերէնի հնչիւնակցութիւնը (*liaison*) պէտք է արտայայտել, օրինակ՝ *les amis* «լէզ ամի», *Les Échos* Լեզ Եկո, *La Ferrière-aux-Étangs* Լա Ֆերիեր-ոզ-Ետան:

ժգ) Ֆրանսերէնի ուղղագրութիւնը (իդէպ՝ հայերէնինը նոյնպէս) բաական անորոշ է միջանի բառից բաղկացած յատուկ անունները միութեան գծիկով (*trait d'union*) գրելու չգրելու հարցում²⁵. *Côte-d'Ivoire* թէ՛ *Côte d'Ivoire*: Ոմանք իրենց ազգանունը գրում են *Antoine de Saint Exupéry* (հեղինակն ինքն այդպէս է գրել իր անունը), բայց գրքերի վրայ տպում են *Saint-Exupéry* (գծիկով)²⁶: Մենք անձամբ չենք սիրում միութեան գծիկը. դա աներորդ դժոարութիւններ է առաջ բերում եւ առանձնապէս ոչ մի յանելալ տեղեկութիւն չի տալիս բառին կամ անուանը: Գուցէ, այս հարցում, հայերէնը շարունակի մալ լեղեղուկ (ինչպէս եւ իդէպ ֆրանսերէնը²⁷ եւ գծիկ

²⁵ Maurice Grevisse et André Goosse, *Le Bon usage*, 14^e éd., De Boeck – Duculot, Bruxelles 2008, pp. 111 եւ յաջորդ:

²⁶ Նոյն, էջ 112-113:

²⁷ Ֆրանսերէն լեզուի բարձրագոյն խորհուրդը (*le Conseil supérieur de la langue française*) եւ Ֆրանսական Ակադեմիան (*l'Académie française*) 1990 թ. ուղղագրական զանազան փոփոխութիւններ առաջարկեցին բազմաթիւ բառերի համար, սակայն նրանց առաջարկները «պարտադիր» չեն, եւ միութեան գծիկի գրութիւնը մասնատրապէս մնում է նոյնքան շփոթ, որքան եւ առաջ էր (*Grevisse, Le*

կիրարկող գործնականօրէն բոլոր լեզուները) – առ այսօր էլ գրում ենք Տէր Վարդանեան կամ Տէր-Վարդանեան:

ժդ) Ֆրանսերէնում լայնօրէն գործածելի են լատիներէն տեսքով առանձին բառեր ու արտայայտութիւններ²⁸, որոնց համար ֆրանսերէնն ունի իւրայատուկ արտասանութիւն: Թէեւ այդ արտասանութիւնը գլխատրապէս հետեւում է ֆրանսերէնի օրէնքներին, այն երբեմն ունի իր առանձնայատկութիւնները: Մենք հետեւեալ մօտեցումն ենք առաջարկում: Եթէ ֆրանսերէն խօսքի մէջ ֆրանսացին այդ բառը չի ընկալում որպէս օտար դարձուածք (հարցը, ինչ խօսք, նուրբ է), այն տառադարձում ենք ինչպէս ֆրանսերէն որեւէ բառ: Օրինակ՝ *agenda* աժենդա, *quiproquo* քիպրոքո, *lapsus* լապսիս, *et cetera* ետ սետերա, *vice versa* վիս(է) վերսա, *summum* սո(մ)մոմ եւ նման բազմաթիւ բառերի մէջ անտեղի կը լինէր ներմուծել բուն լատիներէն արտասանութիւնը:

Սակայն լատիներէնի շունչը պահած արտայայտութիւնները, եւ նմանապէս նրանք, որ հայերէնում իրենց ձեւերն ունեն արդէն, ցանկալի է տառադարձել ուղղակի լատիներէնից: Օրինակ. *veni vidi vici* վենի վիդի վիկի (եւ ոչ թէ «...վիսի»)՝ ինչպէս ֆրանսացիներն են արտասանում), *cogito ergo sum* կոգիտո երգո սոմ (եւ ոչ թէ «կոժիտո...»), *habemus papam* հաբեմոա պապամ (եւ ոչ թէ «աբեմիա...»), *sui generis* սուի գեներիս (եւ ոչ թէ «...ժեներիս»), նմանապէս՝ *magister* մագիստեր, *consensus* կոնսենսո(լ)ս, *incognito* ինկոգնիտո, *interim* ինտերիմ, *vae victis* վա՛յ վիկտիս, *panem et circenses* պանեն ետ կիրկենսես:

Մասնատրապէս պէտք է ուշադիր լինել լատիներէն «Ա» տառի արտասանութեանը, որը լատիներէն հնչում է [ու] *API* [ա], իսկ ֆրանսերէն՝ [իւ] *API* [յ]: Օրինակ՝ «*dura lex, sed lex*» արտայայտութիւնը ֆրանսացին արտասանում է [դիւրա...], սակայն լատիներէն պէտք է ասել [դուրա...]²⁹:

ժե) Ինչպէս նշել ենք, ֆրանսերէնի [k] հնչիւնը համապատասխանում է հայերէն «կ» տառին: Սակայն հազուադիստ դէպքերում գործ ունենք «ք» հնչիւնի հետ: Դա յատկապէս լսելի է «*qui, que, quoi*» բառերի «q»ի արտաբերման պարագայում: Հաշուի առնելով այդ հանգամանքը, նսան այն, որ այդ բառերը լատիներէնի անմիջական շարունակութիւնն են, մենք գերադասում ենք դրանք տառադարձել «քի, քը, քոա»:

français correct (Guide pratique), 5^e édition révisée et actualisée par Michèle Lenoble-Pinson, éd. De Boeck – Duculot, Paris Bruxelles, 1998, էջ 84-87:

²⁸ Խօսքը լատիներէնի տեսքը պահած բառերի մասին է, քանզի լատիներէնից սերած ֆրանսացած բառերը ֆրանսերէն լեզուի մեծամասնութիւնն են կազմում:

²⁹ Սակի մանրամասն տե՛ս մեր յօդոածաջարքի Բ. մասը (իին յունարէն եւ լատիներէն լեզուներ):

Նոյնը առաջարկում ենք անել «**qu**» կապակցության [k] հնչյունի համար. **roquefort** ուրֆոր (եւ ոչ՝ ոռկֆոր), **Montesquieu** Մոնտեսքիո, **Quimper** Քեմպեր, **Aquitaine** Աքուիտանիա, **Québec** Քեբեկ³⁰, **Raymond Queneau** Ռեյնոն Քեն, **Michel Quint** Քեն:

ժզ) Ֆրանսերենում գործածելի հին յունարեն բառերի հնչյունները նույնպես ցանկալի է մտեցնել հին յունարենի տառադարձությանը (եթէ այդ անունները հային ծանօթ են հենց յունարենից). **chrysanthème** քրիսանթեմ (եւ ոչ «կրիզանտեմ»), **cyclope** կիկլոպ, **gymnastique** գիմնաստիկ, **hexagone** հեքսագոն, **labyrinthe** լաբիրինթ, **marathon** մարաթոն, **sphinx** սփինքս, **théâtre** թէատր, **thalassothérapie** թալասոթերապի: Այդպիսի դեպքերում տառադարձումը հետևելան է. «**ph / փ**», «**th / թ**», «**ch / ք**», «**ps / փս**», «**x / քս**»³¹:

ժէ) «**X**» երկհնչյունը ասանդաբար ընդունում է գրել «**քս**», լինի այն մաքուր ֆրանսական, թէ լատինական կամ յունական. **Aix-en-Provence** էքսան-Պրովանս, **Dax** Դաքս, **Max Gallo** Մաքս Գալո, **Astérix** Աստերիքս: Սակայն «**x**» տառի հայերեն [ս] (API [s]) արտասանության դեպքում այն այդպես էլ տառադարձում ենք. **Auxerre** Ուսեր, **Bruxelles** Բրուսել (գերադասում ենք այս ձեւը, քան թէ Բրիսել)³²:

ժը) Այլ օտար լեզուներից ֆրանսերեն մտած բառերի հնչյունները նախընտրելի է գրել փոխառու լեզուի օրինակով: Խօսքը նախ եւ առաջ անգլերեն ոչ API [ŋ] հնչյուն ունեցող բառերի մասին է, որպիսիք վերջին ժամանակներս մեծապես տարածուել են ֆրանսերենում: Այդ հնչյունը ասանդաբար տառադարձում ենք «նգ». **camping** կամպինգ, **bowling** բո(լ)ինգ, **casting** քաստինգ, **marketing** մարկետինգ, **parking** պարկինգ, **pressing** պրեսինգ, **happening** հափնինգ³³: Օտար ծագման (գերմաներեն, սպաներեն) **ch** API [x] հնչյունը նախընտրելի է հայերեն գրել «խ». **Jacques Offenbach** Ոֆ(ե)նբախ:

ժթ) Խորհուրդ ենք տալիս լատիներեն «**h**» տառով սկսող ֆրանսերեն բոլոր բառերը (ինչպիսի երանգ էլ տառը ունենայ ֆրանսերենում՝ «շնչեղ **h**» «**h aspiré**», թէ «համր **h**» «**h muet**»), հայերենում անխտիր գրել «**հ**»ով: Նախ՝ դա վերականգնում է ստուգաբանությունը (լատիներեն, յունարեն

³⁰ «Քեբեկ»ը ճիշտ չէ «Քուեբեկ» գրելը, քանզի ֆրանսերենը ճիշտ է վերարտադրում հնդկացիական այգունկին լեզուի հնչյունը: Անգլերենից է գալիս սխալ արտասանությունը, որը ոտսերենի միջնորդութեամբ անցել է խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերենին («Քվեբեկ»):

³¹ Անլի մանրամասն տե՛ս մեր յօդուածաշարքի Բ. մասը:

³² Ֆրանսացիներն իրենք երբեմն սխալ են արտասանում այդպիսի անունները՝ **[okseɛ]**, **[bɔxkɛsɛ]**, սակայն դա մեր՝ հայերիս հոգը չէ:

³³ Անգլերենի մասին կը խօսենք յաջորդ յօդուածում:

կամ այլ օտար լեզուով), երկրորդ՝ անլի ճկուն է դարձնում հայերենի ուղղագրությունը: **François Hollande** Հոլանդ, **Honoré de Balzac** Հոնորե, **Henri Bergson** Հանրի, **Georges-Eugène Haussmann** Հոսման, ինչպես և ասանդաքար ունենք **Victor Hugo** Հուգո:

ի) Ֆրանսերենի, ինչպես և որեւէ այլ օտար լեզուի կրկնակ բաղաձայնները հայերեն գերադասելի է արտայայտել մէկ բաղաձայնով, մասնաանդ որ ֆրանսերէնում էլ դրանք մէկ ծայնով են հնչում. **Lille** Լիլ, **Allier** Ալիե, **Coulommiers** Կուլոմիյե, **Essonne** Եսոն, **Pierre** Պիեր³⁴, **Corrèze** Կորեզ, **Nanterre** Նանտեր, **François Mitterrand** Միտերան:

իա) Ֆրանսերենի արտասանական շեշտը առանձին վերցրած բառերի մէջ մշտապէս վերջին վանկի վրայ է: Ֆրանսացիները վերջին վանկի վրայ են շեշտում նաեւ օտար լեզուներից փոխ առած անխտիր բոլոր բառերը: Միայն [ə] հնչիւնն է որ շեշտ չի կարող կրել: Այս մօտեցումը ճշտիւ համապատասխանում է հայերենի ձայնաբանութեանը (սակաաթիւ բացառութիւններով): Բոլոր դէպքերում, հայերէնում անխտիր բոլոր փոխառութիւններն ու օտար անունները անհրաժեշտ է արտասանել վերջաշեշտ: Սա օրէնք է ոչ միայն ֆրանսերենի, այլև բոլոր լեզուների համար: Օրինակ՝ **Patricia Kaas** պէտք է շեշտել Պատրիսիա՝, և ոչ թէ՛ Պատրիսիա:

իբ) Գետերի փերիին տեղակայուած քաղաքների համար հայերէնը արդէն կիրարկում է սեռական յօդով կապակցութիւնը. **Neully-sur-Seine** Սենի Նոյի, **Châlons-sur-Marne** Մարնի Շալոն, **La Roche-sur-Yon** Յոնի Լա Ռոշ: Այս տրամաբանութեանը հետեւելով, հնարատր ենք համարում աշխարհագրական անունների որոշ մասնիկների թարգմանութիւն, ինչպէս՝ **Aix-en-Provence** Եքս ի Պրովանս (փոխանակ Եքս-ան-Պրովանս): Հայերենի «ի» նախդիրը արտայայտում է ֆրանսերենի «en» նախդրի իմաստը՝ «մէջ», այսինքն՝ Պրովանսի (միջի) Եքս (քանզի կան և այլ Եքսեր): Նմանապէս. **Bourg-en-Bresse** Բուրգ ի Բրես³⁵, **Le Puy-en-Velay** Լը Պուի ի Վլե: Սա քնականաբար լոկ առաջարկութիւն է. հարցը բաց է:

իգ) Իվերջոյ, պէտք է ուշադիր լինել՝ ֆրանսերէն անունների վերջին չաւելացնել ռուսերէնից խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերէնին ժտանգութիւն մնացած իզական անունների «ա» վերջածանցը: Նախ՝ ֆրանսերէնը ինքն էլ է հրաժարուել լատիներէնից եկած իզական բոլոր «a» վերջատրոպիաններից, երկրորդ՝ ռուսերէնը այդ վերջատրոպիանը անելացնում է կամայականօրէն՝ անունները իր լեզ-

³⁴ Իմաստ չունի լատինական կրկնակ «rr»-ն հայերէն «ռ» գրել, ինչպէս երբեմն գրում է խորհրդային շրջանի Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը (Պիեռ)՝ անշուշտ ռուսերէնի ազդեցութեամբ: Պիեռ ձեւը Պետրոսի տարառեսակն է:

³⁵ Չենք կարծում, որ այս անուան տառադարձութեան մէջ պէտք է հետևենք հին ֆրանսերէնից մնացած [burk] արտասանութեանը:

ուի օրէնքներին յարմարեցնելու նպատակով, եւ երրորդ՝ հայերէնի համար անելի սովորական է անունը «ա»ով չաարտելը. Սեն, Լուար, Գարոն, Սոն, Վինն, Շարանտ, Մարն անելի «հայերէն» են հնչում, քան ռուսերէնից ընդօրինակած Սենա, Լուարա, Գարոնա... ձեւերը:

Որպէս եզրափակում, մենք սկզբունքային հետեւեալ մօտեցումները կ'առաջարկէինք ֆրանսերէնի տառադարձութեան համար:

ա) Նախ պէտք է ընդունենք, որ ֆրանսերէնի (ի թիւս այլ բազմաթիւ լեզուների) պարագայում չունենք հայկաբան տառադարձութեան հաստատունած անանգական մի համակարգ, քանզի տառադարձումների հենց սկզբից եւեթ ունեցել ենք արեւմտահայ եւ արեւելահայ ճեղքումաձրը, եւ երկու ճիւղերի վրայ էլ ազդել են օտար համակարգեր:

բ) Պատմական դէմքերի համար (արքաներ, իշխաններ...) գերադասելի են (եթէ կան) պատմական տառադարձումները, որոնք կարող են լինել լատիներէն կամ յունարէն:

գ) Ֆրանսերէնից ենք տառադարձում միայն բուն ֆրանսերէն անունները (հին եւ միջին ֆրանսերէնի դարաշրջանում), եւ անելի ու անելի յաճախ՝ ԺԵ.–ԺԶ. դարերից սկսած:

դ) Ֆրանսերէնից ենք տառադարձում աշխարհի բազմաթիւ երկրամասերում գտնուող եւ առաջին անգամ ֆրանսացիների յայտնաբերած ու գրանցած աշխարհագրական եւ այլ յատուկ անունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նախորդ յօդուածների ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ ֆրանսերէնին (եւ այստեղ դրանք չենք կրկնում): Ֆրանսերէնը այսօր միջազգային երկու խոշոր լեզուներից մէկն է (միւր անգլերէնն է), եւ դրա ճիշտ տառադարձումը խիստ կարեւոր է ժամանակակից կեանքում: Ֆրանսերէնից գրագէտ եւ միացեալ տառադարձութիւն մշակելու գործում հայերէնը պէտք է հրաժարուի ինչպէս կիլիկեան, այնպէս էլ սովետական տառադարձութիւններից:

Ֆրանսերէնը հայաստանցի հայի համար վերջին դարում չի եղել այնպիսի «հարազատ» օտար լեզու, ինչպիսին ռուսերէնն էր, եւ այդ պատճառով ֆրանսերէն անունները դեռեւս ինչ-որ տեղ խորթ են հայաստանցի հայի ականջին (դրանք նա անելի շատ ռուսերէն եւ ռուսակերպ արտասանութեամբ է ճանաչում, օրինակ՝ Ժերար Դեպարդիէ): Այսօր անելի ու անելի են ամրապնդում հայ-ֆրանսական կապերը, եւ անհրաժեշտ է, որ շտապ համակարգուի ֆրանսերէնի տառադարձութիւնը, նախքան այն անելի կ'ազատուի մի կողմից՝ ռուսահնչուն ասանդոյթով, միւս կողմից՝ Ֆրանսիան ու ֆրանսականը նոր յայտնագործող հայաստանցի անփորձ «ֆրանսագէտների» ձեռքով:

Յօղաածա աարտենք Ալեքսանդր Սարովսանի երգիծանկարներից մեկում բերուած խորհմաստ երկխօսութեամբ, որը լաւ արտայայտում է հայերիս այսօրոայ լեզուավիճակն ու լեզուական հոգեբանութիւնը: Էջին երկու երգիծանկար է: Առաջին նկարի մէջ, Տիկ. Ֆինճանճեանը՝ իր ծանօթուհուն. «Տիկ. Ֆինճանճեան – Խենթանա՛մ պիտի: Տեսնաս մէտսէ Լէօմէթըը իմ անունս Ֆէնճանճան ըսաւ: Աիս, ի՞նչ անուշ կ'արտասանեն սա Ֆրանսացիները մեր կոշտ լեզուն»: Երկրորդ նկարի մէջ, մի պարոն՝ Տիկ. Ֆինճանճեանին. «– Տիկին, միտիւ Լըմէթըը ըսաւ որ... [եւ Տիկ. Ֆինճանճեանի պատասխանը] – Լըմէթը չէ, Լէօմէթը, Լէօմէթը: Ե՛րբ պիտի սորվիք ճիշդ հնչումով արտասանել Ֆրանսական անունները: Կոշտ ենք, լմնցաւ...»³⁶:

³⁶ Ալեքսանդր Սարովսան, *Մենք՝ մեր ակնոցով (մեր բարբերէն 200 ծաղրանկարներով)*, Գահիրէ, Սահակ-Մեսրոպ տպ., 1962, էջ 93:

**THE PRINCIPLES OF TRANSLITERATING FOREIGN PROPER NAMES INTO
ARMENIAN
PART III – FRENCH LANGUAGE**

(Summary)

ARMEN MICHAELIAN (armen_michaelian@yahoo.com)

This article is one of a series that deals with the transliteration of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters). The first part of the series was devoted to the Middle Eastern languages (Arabic, Persian, Turkish and Azerbaijani); see Armen Michaelian, «The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages» [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-364. The second part of the series deals with two classical languages, ancient Greek and Latin; see Armen Michaelian, «The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin)» [in Armenian], *Bazmavep*, year CLXXVIII, Venice 2020, 304-336.

The present, third part of the series is devoted to the transliteration of names of French origin. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out the “Cilician” transliteration on one side and the “Soviet” one on the other. Unlike that of ancient Greek and Latin, the transliteration of French proper names is not stabilized in Armenian due, on the one hand, to the influence of the Western pronunciation of Armenian dialects, and, on the other hand, to the influence of the Russian language on Eastern Armenian.

After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic French sounds and phonemes and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them. It is especially underlined that French transliteration is of capital importance, given that French provides not only proper names coming from France, Belgium, Switzerland or Quebec but also those coming from all over the world where the French were the first to transcribe many vernacular languages to which Armenian language cannot immediately have access.

The series of articles will continue with other important languages such as English, German, Italian, Spanish, Russian, Hindi, Chinese, Japanese, etc.

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔՈՒՄ

ՀԱՅԿԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ (haykaramhakobyan@mail.ru)

ՄՈՒՏՔ

Իրաքանչիւր ոք, որ գէթ մէկ անգամ ներկայ է եղել Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի քարոզին, զգացել է նրա խօսքի զօրութիւնը եւ խորը ներգործութիւնը լսարանի վրայ: Հետաքրքրական է, թէ ո՛րն էր Վազգէն Ա.ի քարոզխօսութեան հզօր ազդեցութեան գաղտնիքը: Հարցի պատասխանը գտնելու համար կարիք է զգացում ուսումնասիրել հայրապետի խօսքը ընդհանուր հոետորութեան համապատկերում եւ տեսնել, թէ ինչպիսի՛ միջոցների կիրառմամբ էր բնատրութեամբ եւ առօրեայ խօսակցութեամբ հանդարտաբարոյ հայրապետի հանրային խօսքը դառնում այդպէս հզօր:

Վազգէն Ա.ի խօսքի ուսումնասիրութիւնը կարելի է, որովհետեւ նա խորհրդային շրջանից Հայաստանի Գ. Հանրապետութեան պատմական անցումային փուլում գործած ու հոետորական տաղանդով եւ ունակութիւններով օժտուած հայ ազգի նշանատր այն զաւակներից էր, ում խօսքը ոչ միայն գեղագիտական արժէք էր պարունակում այլեւ ունէր ազդուութիւն: Յօդուածում նեկայացրել ենք եկեղեցական տօնակատարութիւնների, խոկումների, Ամանորի, Արցախի թեմի վերաբացման եւ համազգային նշանակութեան խնդիրների, յատկապէս արցախեան շարժման առնչուող Վազգէն Ա.ի ելոյթներում նկատելի հոետորական միջոցների արհեստավարժ կիրառութիւնը: Քննում է Վազգէն Ա.ի կեանքի եւ գործունէութեան ներդաշնակութիւնը իր քարոզխօսութեան հետ: Հոետորական եւ հոգեբանական տեսանկիւններից զատ, ելոյթները դիտարկում են նաեւ հայաստանեան պատմական նշանակութեան իրադարձութիւնների զարգացման լոյսի ներքոյ: Վեհափառի ելոյթները խօսուն օրինակ են, թէ ինչպէս են հոետորական միջոցներն ի սպաս դրում հաստի, հայրենիքի եւ ազգային ինքնագիտակցութեան զօրացման համար: Հայրենանուէր այդ գործունէութեան համար ուրոյն դեր էին կատարում նաեւ նրա հոետորական ունակութիւնները:

ԷԹՈՍԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Վազգէն Ա.ի ելոյթներում կարելի էր էթոսի դերը: Էթօսը յունարէն *ήθος* բառն է, որ նշանակում է բնատրութիւն, բարք եւ ներկայացնում է ելոյթ ունեցողի վստահեցիկութիւնը¹: Այն հոետորական խօսքի համապատասխանութիւնն է ունկնդիրների բարոյական սպասելիքներին², որը ներկայաց-

¹ P. Turpin, *The Moral Rhetoric of Political Economy. Justice and Modern Economic Thought*, London, Routledge, 2011, էջ 14:

² К. Т. Борисовна, *Педагогическая риторика* (Մանկավարժական հոետորութիւն), Կոնստէի, Մոսկուա, 2003, էջ 13:

նում է հոետորի ընդհանուր դրակները, օրինակ՝ հանգստությունը, անկեղծությունը եւ ամբողջական բնականությունը³: Ըստ Արիստոտելի՝ էթոսը կապուած է մարդու բարոյական տիպի կամ բնատրութեան այն մասի հետ, որը ձեւաւորում է սովորոյթների եւ ասանդոյթների միջոցով⁴:

Յայտնի հոգեբան Էրիք Ֆրոմի խօսքով՝ «Գաղափարները իրենք իրենցով մարդկանց վրայ խոր ազդեցութիւն չեն թողնում, երբ դրանք մարդուց տւում են որպէս չոր մրբեր: ... գաղափարները մարդկանց հոգեբանութեան վրայ խորապէս ազդում են այն ժամանակ, երբ գաղափար արտայայտողը ապրում է դրանցով»⁵: Այդպէս էր գործում Վազգէն Ա. վեհափառը: Նրա գաղափարները կարծես ծուլուած լինէին իր անձի հետ: Նրա խօսքի, գործի եւ անձի միութեան վկան յատկապէս Խորհրդային Միութեան անկման շրջանում նրա ձեռնարկած քայլերն էին: Այդ շրջանում, երբ անկում էր ապրում Հայաստանի տնտեսութիւնը մեծ հայրապետն իրեն չէր խնայում օգնութեան միջոցներ հայթայթելով եւ մտահոգուելով իր հայրենակիցների խնդիրներով: Վեհափառը ամէն կերպ մխիթարում էր ժողովրդին, յուսադրում եւ տալիս խորհուրդներ՝ այդ իրադրութիւնից դուրս գալու համար:

1991 Դեկտեմբերի 31ի գիշերը ժողովրդին գտեսպնդելու համար վեհափառը իր կեանքից ներկայացնում է մի փոքր պատմութիւն. «Մենք 1916ի ձմռանը հասանք Օդեսա: Խստաշունչ ձմեռ էր: «Միբիբեան ձմեռ է», - ասում էր մայրս: Եւ, յիշում եմ, մի փոքրիկ սենեակ ճարեցինք Օդեսայի ծայրամասերում: Մենք մէկ սենեակի մէջ էինք. ո՛նչ էլեկտրական լոյս կար, ո՛նչ ջեռուցում: Աւանդաբար Կաղանդի գիշերը, գոնէ մեր կողմերում, ըստ իմ ձնողների սեղանի վրայ ամենաքիչը եօթ տեսակ կերակուր պէտք է լինի: Մայրս ջանք էր թափում, որ եօթ տեսակ լինի, վերջապէս եօթ տեսակ եղա՛ւ հաշուած ջորսն ու հացը եւ այն փորրիկ թխուածքի նման բանը, որը ռուս դրացին տրուել էր՝ գիտենալով, որ մենք չքատր մարդիկ ենք...»⁶: Վեհափառը դրանից յետոյ իր կեանքի այդ դրուագի եւ ժամանակի ծանր պայմանների միջեւ զուգահեռ է անցկացնում՝ ցոյց տալով դրանց նմանութիւնը: Պատմութեան վերջում վեհափառը ասում է, որ իրենք այն ժամանակ ո՛չ ուրախացել, ո՛չ էլ տխրել են, այլ փառք են տուել Աստծուն ապահովութեան, խաղաղութեան եւ հանապազօրեայ հացի համար: Ահա այս պատմութեամբ վե-

³ С. Кови, Д. Колосимо, *Карьерное преимущество. Практические рекомендации* (Մասնագիտական ասանելութիւն. գործնական խորհուրդներ), Ալախնա հրատ., Մոսկուա, 2012, էջ 70:

⁴ Аристотель, *Поэтика* (Արիստոտել, Պոետիկա), Ազրուկա հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 99:

⁵ Р. С. Хеклер, *Додзе лидерства. Фундамент успеха в карьере и в жизни* (Սուաշնորդութեան ճանապարհ, մասնագիտութիւնում եւ կեանքում յաջողութեան հիմք), Վէս հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2010, էջ 31:

⁶ Վազգէն Ա. *Կաթողիկոս ամէնայն հայոց. նովորում է մահուան 10դր տարեկիցին*, Ա. Էջմիածին, 2005, էջ 23:

հափառը ցոյց էր տալիս, որ ինքը նրանցից մէկն է, ով քաջ ծանօթ է առկայ խնդիրներին, իր սեփական անձի վրայ զգացել է այդ որջ ծանրութիւնը, բայց ցեայնապէս չի ընկրկել, այլ մխիթարուել է նրանով ինչ որ ունեցել է, եւ ձեռք է բերել ուրիշներին քաջալերելու կարողութիւն:

Ելոյթում էթոսի կիրառութեան պայմանները վերաբերում են տեղին եւ ժամանակին, որոնցով էլ որոշում է խօսքի բովանդակութեան մի մասը: Թեմայի եւ առանձին բառերի ընտրութիւնը կազմում են խօսքի ծրագրի մէկ այլ մասը: Միջավայրին չհամապատասխանող խօսքը նոյնիսկ ուժեղ փաստարկման դէպքում կարող է չընդունուել լսարանից: Խօսքի թեմա ընտրելու համար պէտք է անպայման հաշուի առնել ժամանակը, պայմանները, տեղը եւ լսարանը, այսինքն, թէ ում առջեւ ենք պատրաստում ելոյթ ունենալ:

Վազգէն Ա.ի քարոզները համապատասխանում էին էթոսի վերոնշեալ պայմաններին: Այդպիսի մի օրինակի ենք հանդիպում արցախեան շարժման ժամանակ մայր տաճարում հնչած վեհափառի քարոզում. «Մանաւանդ այս օրերին, երբ մեր որջ ժողովուրդը հերոսական մարտ է մղում ընդդէմ մահուան, ընդդէմ անիրատօյեան եւ ընդդէմ մեղապարտ ուժերի: Մեր հոգիները, մեր գիտակցութիւնը վկայում են, թէ Արցախի մեր եղբայրների եւ քոյրերի մարտը յանուն ազգայրութեան եւ արդարութեան, մահուամբ մահը յաղթելու եւ նոր կեանք նուաճելու սխրանք է աստուածաբարութիւն»⁷: Այս խօսքում տեսնում ենք, թէ վեհափառն իր քարոզն ինչպէս է հմտօրէն համապատասխանեցնում երկրում տիրող իրավիճակին (ժամանակային պայման): Քարոզի թեման (թեմայի պայման) մայր տաճարում (տեղի պայման) հաւաքուած հայորդիների (լսարանի պայման) սիրտը յուզող խնդիրն էր, իսկ հայորդիների մղած պայքարը, վեհափառի դիպուկ բնորոշումով անուանում է աստուածատուր սխրանք (առանձին բառերի ընտրութեան պայման):

ՊԱԹՈՍԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Վազգէն Ա.ի խօսքում մեծապէս զգացում է նաեւ պաթոսի դերը, եթէ էթոսի միջոցով ամրապնդում էր իր վստահելիութիւնը, ապա պաթոսի միջոցով նա ուղղակիօրէն դիմում էր լսարանի զգացումներին: Պաթոսը ծազում է հունարեն *πάθος* բառից, այն ազդելով ունկնդիրների զգացական եւ երեսակայական կողմի վրայ, յանգեցնում է նրանց այն տեսակէտին, որին հակուած է ելոյթ ունեցողը⁸: Յարաբերութեան այդ միջոցը յաճախ է օգտագործում հոնտորութեան մէջ եւ համարում է համոզման երեք ձեւերից մէկը էթոսի եւ յոգոսի կողքին: Շատ հոնտորների պարագայում պաթոսը սեփական զգացմունքային վիճակը չէ, այլ պարզապէս օգտագործող խօսքի միջոց, որը ստեղծելով զգացմունքային պատկեր ազդում է լսարանի

⁷Քարոզի նիւթը քաղել ենք Շողակաթ հեռուստաընկերութեան պատրաստած «Վազգէն Ա. ամէնայն հայոց կաթողիկոս» վերնագրով տեսանիւթից:

⁸ M. Penny, *Political Pathos*, Bloomington, 2010, էջ 12:

վրայ: Վեհափառի խօսքում եւս կայ զգացմունքայնութիւն, թախիժ, տառապանք, ելոյթներում առկայ յոյզերը իր կեանքի մի մասն էին կազմում եւ ոչ թէ յօրինուած էին ցուցադրութեան համար: Վազգէն Ա.ի օրինակը իրօք համապատասխանում էր իր ժամանակի լաւագոյնն հռետորներից մէկի՝ Օգոստինոս Երանելու հետեւեալ խօսքին. «*Առաջին հերթին քո մէջ պէտք է վառուի այն կրակը, որը ցանկանում ես վառել ուրիշների մէջ*»⁹: Վեհափառի պարագայում պաթօսը իր վերաբերմունքի ու գնահատականի ներկայացումն էր խօսքի առարկայի վերաբերեալ:

Գոյութիւն ունի պաթօսի երեք տեսակ՝ գերզգացմունքային, երազողական եւ իրատեսական: Գերզգացմունքային պաթօսը ստեղծում է խօսքի առարկայի հետ բախումով եւ դրա գնահատմամբ: Երազողական պաթօսի դէպքում խօսքի առարկան շեղում է իրականութիւնից եւ համեմատում կատարեալի հետ: Իրատեսական պաթօսը հանդէս է գալիս որպէս հանգամանքների հարկադրական ուժ: Իրատեսական պաթօսը դառնում է կատարելագործման եւ արուեստի հզօր գործիք, երբ հոգեւոր աշխարհին ու մարդկային բարոյականութիւնը եւս ընդունում են որպէս իրականութիւն: Իրատեսական պաթօսի օրինակ է 1988 Յուլիսի 5ի Երեւանի օդանավակայանի դրամատիկ դէպքերից¹⁰ յետոյ Վազգէն Ա.ի հեռուստատեսային ելոյթը, երբ նա անսովոր յուզուած դիմել էր ժողովրդին ասելով. «*անհեռադետորէն ընդվզել Ռուսաստանի դէմ, դուրս գալ ափերից եւ ընկնել վնասակար ծայրաթերթիւնների մէջ, «նշանակում է Հայաստանը սկուտրեղի վրայ յանձնել թշնամունք»*»¹¹: 1988ից սկսուած արցախեան շարժումը այնպիսի ծաւալ էր ընդունել, որ խոհեմութեան ու զսպուածութեան չափանիշ համարող վեհափառը, հրճուանքի փոխարէն համակուել էր տագնապով: Պատասխանատուութիւն զգալով իր ժողովրդի անվտանգութեան հանդէպ, նա շարժումը ողջունելու փոխարէն զգուշութեան ու խոհեմութեան կոչ էր անում, որով հետեւ թերեւս ոչ ոք, բացի Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդից, այլ-

⁹ В. Ментцель, *Риторика. Искусство говорить свободно и убедительно* (Հռետորութիւն. ազատ եւ համոզիչ խօսելու արուեստ), Օմսկա-Լ. իրատ., Մոսկուա, 2015, էջ 18:

¹⁰ Եշուած իրադարձութիւնների պատճառը Կոմունիստական Կուսակցութեան ԺԹ. համագումարում Լեոնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի պահանջների մերժումն էր: Դրա հետեւանքով նոր թափ էր ստացել համազգային շարժումը, ինչը ճշշելու նպատակով Երեւան էին ուղարկուել Խորհրդային զօրքեր: Յուցարարների եւ զօրքի միջեւ բախումը տեղի է ունեցել Զուարթնոց օդանավակայանի մօտ, զրհուել է 1 եւ վիրատուրուել 36 մարդ (M. R. Beissinger, *Nationalist Mobilization and the Collapse of the Soviet State*, Cambridge University Press, 2009, էջ 187. նաեւ՝ A. Cohen, *Russian Imperialism. Development and Crisis*, London, Praeger, 1996, էջ 135. նաեւ՝ «Երթ դէպի Զուարթնոց», *Հայկական ժամանակ օրաթերթ*, <https://web.archive.org/web/20160306080851/http://armtimes.com/hy/read/49203>):

¹¹ Ա. Մաղոյեան, *Ապրել գալիքի տեսիլքով*, Ա. Էջմիածին, 2008, էջ 239-40:

քան լաւ չէր գիտակցում, թէ ինչ ուժ է կանգնած ազատութիւն եւ իրատնը պահանջող ժողովրդի դէմ եւ հարկ էր համարում իրականութեան այդ խորը զգացումը պաթոսի միջոցով փոխանցել ժողովրդին:

ԴԱԴԱՐԻ ԿԻՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Բաականին տպատրիչ եւ իւրօրինակ էին Վազգէն Ա.ի ելոյթներում կիրառուած դադարները¹²: Դադարը ունի յստակ նշանակութիւն եւ փորձառու հոեւտորի ձեռքում հրաշալի հնարք է, որը յատուկ ուժ է հաղորդում խօսքին¹³, ձերբազատում է այն միապաղաղութիւնից եւ դարձնում անելի լսելի¹⁴: Այն օգնում է լսարանին անելի լաւ ըմբռնել մեր ասելիքը, քանի որ մենք խօսում ենք եօթ կամ ութ անգամ անելի արագ, քան մեր ունկնդիրները մշակում են տեղեկութիւնը¹⁵: Ելոյթի ժամանակ յաջող դադարի կիրառութեան համար բաական չէ միայն լռելը «պէտք է այն կառուցել ձայնային ելեւէջի պատկերով, շարժումով, ժեստով եւ հայեացքով, որոնք բոլորը միասին ձեւատրում են պահանջուած դադարը»¹⁶: Բաականին կարեւոր է նաեւ դադարի կիրառութիւնը մինչեւ խօսքի սկսելը, հրափրելով լսարանի ուշադրութիւնը եւ զարգացնելով նրանց մօտ սպասումը:

Վազգէն կաթողիկոսը ելոյթի ժամանակ ժողովրդի առաջ կանգնում էր հանգիստ, հաւասարակշռուած եւ վստահ ու իր ներքին խաղաղութեամբ կանակում էր բոլոր ներկաներին: Դադարի ժամանակ վեհափառի միայն հերպարը բաական էր լսարանին դէպի ինքը կենտրոնացնելու համար: Վազգէն Ա.-ը, ինչպէս Սիլվա Կապուտիկեանն է գրում իր յուշերում, «առանձնանում էր իր յանգիստ լռութեամբ, իր կոչմանն ու դիրքին համապատասխանող առաքինի արտաքինութիւն»¹⁷: Հրանդ Մաթեոսեանի նկա-

¹² Դադարը ծագում է լատիներէն՝ **pausa** բառից, որը նշանակում է «դադարեցում, կանգառ»: Այն հնչումի ժամանակաւոր ընդհատում, ընդմիջարկ է, որի ընթացքում ձայնային օրգանները ընկալումով չեն արտաբերում եւ դա խզում է խօսքի հեղեղը (Յ. Ի. Ахманова, *Словарь лингвистических терминов*, (Լեզուաբանական եզրերի բառարան), Ռիպուլիպսիկ հրատ., Մոսկուա, 1966, էջ 311:

¹³ U. Lenker, *Argument and Rhetoric. Adverbial Connectors in the History of English*, New York, De Gruyter Mouton Pub., 2010, էջ 32:

¹⁴ О. В. Бондаренко, *История русской дипломатической риторики* (Ռուս դիւանագիտական հոեւտորութեան պատմութիւն), ՎոլԳՈ հրատ., Վոլգոգրադ, 2004, էջ 145. նաեւ՝ Н. Зверева, *Я говорю меня слушают. Уроки практической риторики* (Ես խօսում եմ ինձ լսում են. գործնական հոեւտորութեան դասեր), Ալպինա հրատ., Մոսկուա, 2012, էջ 32:

¹⁵ К. Бредемайер, *Правила риторики. Как не теряться во время выступления и быть убедительным* (Հոեւտորութեան կանոններ, ինչպէս չլրուել ելոյթի ժամանակ եւ լինել համոզիչ), Ալպինա հրատ., Մոսկուա, 2007, էջ 18:

¹⁶ В. Шилунов, *Харизматичный оратор* (Խարիզմատիկ հոեւտոր), Հոեւտորութեան եւ բանատր խօսքի վարպետութեան համալսարան հրատ., Մոսկուա, էջ 129:

¹⁷ Մաղոյեան, էջ 222:

րագրութեամբ՝ կաթողիկոսի ներկայութիւնը սաստող էր¹⁸: Նրա բարձր հայեացքը, փառատր մօրոպը, վսեմ ճակատը եւ իմաստուն աչքերը չափազանց ազդեցիկ էին: Վեհափառը, մինչ խօսքը սկսելը, հայեացքն ուղղում էր բոլոր ներկաներին, խորը շունչ էր քաշում եւ արտայայտիչ, պարզ ու բարձր ձայնով հնչեցնում էր առաջին նախադասութիւնը:

Դադարը խօսքի ժամանակ այնպիսի տպաւորութիւն է թողնում, ինչպէս չսպասուած ձայնը լռութեան մէջ: Իմանուել Կանտը այն ներկայացնում էր որպէս «*րոպէական զայում էական ուժի, որը փոխհարուցում է դրական պահով*»¹⁹: Վազգէն Ա.ը յաճախ էր այդ ձեւով իր կարեւոր գաղափարները հասցնում մարդկանց մտքերին ու սրտերին: Այդպիսի մի օրինակ է 1992 Մարտի 22ին մայր աթոռում «Անիրա տնտեսի» առակի մասին խոկման ժամանակ ասուած քարոզը, որի ժամանակ վեհափառն ասում է. «*Աշխարհի որդիները՝ սովորական մարդիկ, ընչաքաղց են, եսամոլ եւ դրամասէր: Սակայն, Յիսուս պարզամտ է մեզ չհեղեղել այդ անիրա տնտեսի օրինակին՝ դառնալու համար լուսոյ որդիներ, ազնիւ մարդիկ...*»: Այս խօսքից յետոյ վեհափառը դադար է տալիս ասուածի կարեւորութիւնը ցոյց տալու համար: Մինչ քարոզի այդ պահը վեհափառը ներկայացնում է անտարանական հատուածը, իսկ այդ երկու նախադասութեամբ ներկայացնում է ամբողջ առակի հիմնական իմաստը: Տրում է խորհրդատր դադար, որպէսզի մարդիկ, հասնելով առակի իմաստային գագաթնակէտին, մի պահ կանգ առնեն եւ իրենց հարց տան, արդեօք իրենք այս աշխարհի՞ որդի են, թէ՞ լուսոյ որդի, եսամոլ դրամասէ՞ր են, թէ՞ ազնիւ մարդիկ: Արտասանուած նախադասութիւնից յետոյ վեհափառը խօսքի դադարով ներկաներին յուշում է, որ այն ասուածի նշանակութեան մասին խորհելու համար է:

Ընդհանրապէս ելոյթներում հանդիպում են քնախօսական, չնախատեսուած, տրամաբանական եւ հոգեբանական դադարներ: Բնախօսական դադարները պայմանատրուած են անձի խօսելու կարողութեան եւ առանձնաշատկութիւնների հետ: Չնախատեսուած դադարներ առաջանում են յաւկապէս յանպատրաստից խօսքի ժամանակ, երբ առաջանում է մտքերի ընտրութեան եւ նախադասութեան ձեակերպման խնդիր: Տրամաբանական դադարները անհրաժեշտ են արտայայտութիւնների ճիշտ շեշտադրման եւ իմաստի համար: Այն խտուածը մասնատում է տրամաբանական մասերի²⁰ եւ թէպէտ մեծ մասամբ համընկնում է քերականական դադարի հետ, սակայն մտքի հետ կապուած կարող է քերականական դադարից տարբեր-

¹⁸ Նոյն, էջ 206:

¹⁹ J. Vitanza, *Negation Subjectivity and the History of Rhetoric*, New York State University Press, 1917, էջ 235:

²⁰ Н. Н. Сури́н, *Риторика* (Հոնտորութիւն), ՄՊԱՀ հրատ., Մոսկուա, 2007, էջ 104:

ունել իր տեսողութեամբ²¹: Վազգէն Ա.ի քարոզներում ճշտութեամբ օգտագործում էին տրամաբանական դադարները: Օրինակ՝ 1989ին մայր տաճարում խօսուած քարոզներից մէկում ճիշտ տրամաբանական դադարներով ասում է, որ Արցախի թեմի վերաբացումը կարելու է. «Մանասանդ այս օրերին, (մէկ վայրկեան դադար) երբ ժողովուրդը հերոսական մարտ է մղում (մէկ վայրկեան դադար) ընդդէմ մահուան, (երկու վայրկեան դադար) ընդդէմ անիրատւութեան (երկու վայրկեան դադար) եւ ընդդէմ մեղապարտ ուժերի (երեք վայրկեան դադար)»²²: Նման դէպքերում ակնյայտ է դառնում նաեւ դադարի գեղագիտական արժէքը²³:

Հոգեբանական դադարը հանդիսանում է խօսքի առարկայի հետ կապուած ելոյթ ունեցողի հոգեկան ապրումների պատճառով խօսքի կարճատեւ ընդհատումը: Հռետորի համար կարելու է տարբեր զգացումներ եւ ապրումներ փոխանցելու եւ լսարանի ուշադրութիւնը խթանելու կարողութիւնը²⁴, որոնցով արտայայտում է հռետորի հոգեկան լարուածութիւնը եւ ունկնդիրները զգում են նաեւ անձին մտահոգող, բայց չարտասանուած մտքերը²⁵: Վազգէն վեհափառի խօսքում ակնառու են հոգեբանական դադարները: Դրանք բազմահոգս կաթողիկոսի խորը ապրումների արտացոլումն են: Օրինակ՝ այդպիսի մի դադարի հանդիպում ենք 1988ի արցախեան շարժման առիթով ողջ ժողովրդին հասցէատրուած հեռուատատեսային ուղերձում. «Ես վերջին անգամը լինելով, դիմում եմ ձեզ՝ բոլորի՛ր, իմ աղերսով, իմ պարգաւմով. եթէ ինձ չսւէք, (երկու վայրկեան դադար) եթէ ինձ չսւէք, ես՝ ձեր հայրապետը, կ'անիծե՛մ իմ ճակատագիրը եւ այլեւս, յաւէտ կը լռեմ (դադար, որ տեսում է չորս վայրկեան)»²⁶: Չորս վայրկեան դադարը շատ երկար

²¹ Ա. Արեւշատեան, *Հռետորական արունսփի հիմունքները*, Հայպետուամանկ հրատ., Երեւան, 1961, էջ 76:

²² Շողակաթ հեռուատարկերութեան «Վազգէն Ա. Ամէլայն հայոց կաթողիկոս» վերնագրով տեսանիւթ:

²³ H. F. Plett, *Literary Rhetoric. Concepts-Structures-Analyses*, München, Brill Pub., 2000, էջ 135:

²⁴ E. B. Гвоздева, *Русский язык и культура речи* (Ռուսաց լեզուն եւ խօսքի մշակոյթը), ՄՊԱՀ հրատ., 2008, էջ 73. նաեւ՝ М. В. Копытнова, *Язык и деловое общение. Нормы, риторика, этикет* (Լեզուն եւ գործնական հաղորդակցութիւնը. նորմեր, հոնտրութիւն, վարուելակարգ), Էկոնոմիկա հրատ., Մոսկուա, 2000, էջ 270:

²⁵ Վ. Միրզոյեան, *Ճարտասանութիւն*, ՎՄՎ-Պրինտ, Երեւան, 2012, էջ 324:

²⁶ Այս հատուածի վերաբերեալ իր յուշերում Կապուտիկեանը պատմում է (Մաղոյեան, էջ 240), սակայն բանաստեղծութիւն վերարտադրում է Վազգէն Ա.ի խօսքը իր վրայ թողած ազդեցութեան համաձայն: Հատուածի մասին նաեւ իր յորուածում գրում է լեզուաբան Ս. Գալստեանը (Ս. Գալստեան, «Վազգէն Ա. հայրապետի կերպարակերտման լեզուատնական դրսեւորումները յուշային դիմանկարներում», *Էջմիածին ամսագիր*, 2013:Ե, էջ 58), սակայն այդտեղ եւս խօսքը ներկայացուած է փոփոխութիւններով: Տարակարծութիւնից խուսափելու եւ վեհափառի խօսքի ո-

է թում այդ խօսքում ու աննկարագրելիորէն բարձրացնում է լարուածութիւնը: Այդ դադարը ներկայացնում է Վազգէն կաթողիկոսի խոր ապրումները, մտահոգութիւնը եւ ամբողջ հոգեվիճակը: Այդ ելոյթի ընթացքում դադարի ամէն մի վայրկեանն աւելի էր ներազդում մարդկանց վրայ, քան խօսքերը, որովհետեւ դադարի ժամանակ կարծես նրա ապրումները համակում էին ժողովրդին ու դառնում այնքան զգալի, որ ոնկնդիրները սպասում էին, թէ երբ պիտի աւարտուէր այդ դադարը, որպէսզի իրենք դուրս գային չափազանց ծանր ապրումներից: Հենց այդպէս ազդեցիկ լինելու պատճառով էլ վեհափառի չորս վայրկեան տեսողութեամբ դադարը թում էր բաականին երկար եւ անզամ տարիներ անց էլ վառ կերպով մնացել է բազում ոնկնդիրների յիշողութեան մէջ: Պատճառը ազգասէր հայրապետի մտահոգութիւններն էին սեփական ժողովրդի համար:

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Լսարանի համապատասխանութեամբ հետաքրքրական կերպով օգտագործում էին նաեւ հռետորական հարցերը: Օրինակ՝ 1979 Մայիսի 24ին Համբարձման տօնի աղիթով Փարիզի հայոց մայր եկեղեցում խօսուած քարոզում վեհափառը նշում է, որ խօսքը յատկապէս եկեղեցում հաւաքուած շատ մանուկների համար է, ուստի բաականին պարզ ձեւակերպումով հարցնում է. «*Դուք ալ ըրիստոնեաներ էք, չէ՞*»²⁷: Ընդհանրապէս խօսքի այս հնարքը սահմանում է որպէս հարց, որը չի փնտռում տեղեկութիւն: Ցաջող խօսքի տարրեր մասերի շարքում հռետորական հարցը պէտք է կրի ուժեղ ազդեցութիւն եւ լինի խօսողի ակնյայտ պատասխանը²⁸: Ցաջող հռետորական հարցերը նախ ձագում են լսարանի մօտ, որոնք ելոյթ ունեցողը կուսիցով կիրառում է եւ հրափրում ոնկնդիրների ուշադրութիւնը ու հաստատում իր մտքերը²⁹: Ոճական այս ձեւը բաժանում է չորս մասի.- հարցական-հռետորական, հարցական-մղիչ, հարցական-ժխտող եւ հարցական հաստատող: Հարցական-հռետորական հարցերի միջոցով փոխանցում է խօսքի առարկայի նկատմամբ հռետորի վերաբերմունքը: Փոխանցում են այնպիսի զգացումներ ինչպիսիք են՝ ուրախութիւնը, տխրութիւնը, կասկածանքը են.: Այդպիսի հարցի կիրառութեան հանդիպում ենք օրինակ՝ 1957 Փե-

զին հնարատրինս ճիշտ ներկայացնելու համար, *Շողակաթ* հեռուստաընկերութեան արխիւում գտել ենք տեսաժապաւէր ու նոյնութեամբ ներկայացրել խօսքը:

²⁷ Վազգէն Ա. *Կաթողիկոս ամենայն հայոց*, էջ 90:

²⁸ H. Rohde, *Rhetorical Question*, San Diego, California University Press, 2006, էջ 149:

²⁹ В. Виноградова, *Вопросы культуры речи* (Խօսքարուեստի հարցեր), Աստ հրատ., Մոսկուա, 2009, էջ 329. նաեւ՝ X. Леммерман, *Учебник риторики. Тренировка речи с упражнениями* (Հնետրութեան դասագիրք. Խօսքի ուսուցում վարժութիւններով), NLP-Book, Մոսկուա, 1999, էջ 60. նաեւ՝ Д. Вайсман, *Блестящая презентация. Как завоевать аудиторию* (Փայլուն ներկայացում. Ինչպէ՛ս գրաւել լսարանը), ԼիտՈւես հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2011, էջ 38:

տրուարի 8ին Ս. Էջմիածնի մայր տաճարում Մեծ պահքի առաջին հսկման առիթով Վազգէն Ա.ի քարոզում. «Միթէ՞ չեւ եւս ունիս հաւարտ»³⁰:

Հարցական-մոլիչ հարցերը անհրաժեշտ են հռետորության հիմնական նպատակներից մէկի՝ գործի կոչելու համար: Այսպիսի հարց վեհափառը հնչեցնում է 1983 Փետրուարի 10ին վեհարանի հանդիսութիւնների սրահում Վարդանանց տօնի առթիւ ասուած խօսքում: Նախ խօսում է Վարդանանց հերոսամարտից մեզ փոխանցուած պատգամի մասին ապա, ասում. «Վարդան Մամիկոնեանը իջաւ պատերազմի դաշտ եւ զոհուեց: Ի՞նչ բանի համար զոհուեց»³¹: Այս կերպով կոչ է արտում սրբութեամբ պահել այն, ինչի համար զոհուեցին Վարդանը հազարհարիւրերեսունվեց քաջորդիները: Այսինքն, ամուր պահել մեր հաատը, հայրենիքը եւ ազգային ինքնագիտակցութիւնը:

Հարցական-ժխտող հարցերը ծառայում են յուզական կերպով ցոյց տալու գործողության, դէպքի կամ վիճակի անհնարինութիւնը: Այրուհանդերձ այդ հարցերի կառուցուածքում չկան ժխտական բառեր: Վազգէն Ա.ի կողմից այդպիսի հարցի կիրառութիւն տեսնում ենք 1977 Ապրիլի 10ին մայր տաճարում Յարութեան տօնի առթիւ խօսուած քարոզում: Այստեղ վեհափառը հարցը տալիս է օգտուելով *Ղուկասի Աւետարանի ԻԴ.6* հատուածից. «Զի՞ խնդրէք զվեճդանիս ընդ մեռեալս»³²:

Հարցական-հաստատող հարցերը ընդունում են որպէս հաստատում՝ անխուսափելիութեան նրբերանգով: Դրանք հաստատում են մինչ այդ պահը ասուած խօսքը: Հարցի այս ձեւի կիրառութեան հանդիպում ենք 1970 Յունուարի վեցին Ս. Ծննդեան տօնի առիթով Վազգէն Ա.ի քարոզում: Խօսելով մեր իրականութեան մասին ասում է. «Մեր օրերու մարդը տակաւին հեռու է հաւարարիմ մնալէ իր ճշմարիտ կոչումին, իր ճշմարիտ առաքելութեան: Հեռու է կայարտեալպէս Աստուծոյ որդին ըլլալէ, եւ իր նմանները բոլոր, իբրեւ իր հարազատ եղբայրներ դասանելէ: Այլապէս ինչպէ՞ս հնարաւոր պիտի ըլլար Վիեպնամի սպանդը»³³: Այստեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս է վեհափառի հարցը ապացուցում ասուածը:

ՁԱՅՆԻ ԱՐՇԵՍԱՎԱՐԺ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Ելոյթների ժամանակ առաջնային դեր է գրաւում ձայնի ճիշտ կիրառութիւնը, որը առաջին հերթին լսարանի համար դիրքնկալելի է դարձնում խօսքը³⁴: Ձայնի բարձրութեան լաւ կառավարմամբ փոխանցում են հզօր

³⁰ Ա. Հատիտեան, *Վազգէն Ա. հայրապետ հայոց*, Մայր Սթոն Սուրբ Էջմիածին, 1958, էջ 210:

³¹ Վազգէն Ա. *կաթողիկոս ամենայն հայոց*, էջ 60:

³² Լոյն, էջ 76:

³³ Լոյն, էջ 56:

³⁴ G. A. Olson, T. W. Taylor, *Publishing in Rhetoric and Composition*, New York State University Press, 2007, էջ 93. Լանս՝ Ք. Երդերբեր, Կ. Երդերբեր, *Психология*

զգացումներ³⁵, իսկ դրա հնչեղության փոփոխությունը, տեմպը, ուժգնությունը եւ ելեւելումը արդիւնաւէտ միջոցներ են լսարանի ուշադրութեան կենտրոնացման համար³⁶: Ձայնը Վազգէն Ա.ի կողմից օգտագործում էր արհեստավարժօրէն: Նրա ձայնն առանձնանում էր կայունութեամբ եւ երկար ժամանակ լարումին դիմանալու կարողութեամբ: Անգամ երկար քարոզներում մենք ոչ մի հատուածում ձայնի թուլացում չենք նկատում: Եւ դա այն դէպքում, երբ Վեհափառը քարոզների ժամանակ խօսում էր բարձր հնչերանգով: Հայրապետի ձայնը պարզ էր, յստակ, հեշտութեամբ ընկալելի ունկնդիրներին, ունէր միջին տեմպ եւ շատ ազդեցիկ էր: Քարոզի ընթացքում ձայնն ուղղում էր եկեղեցու տարբեր կողմերում եղող մարդկանց, եւ ստեղծում էր այն տպաւորությունը, որ վեհափառը առանձին-առանձին խօսում էր իրաքանչիւրի հետ: Նրա ձայնը լի էր եռանդով, եւ դա արտացոլում էր ժրջան հայրապետի ներքին եռանդը: Վազգէն Ա.ի ձայնում զգացում էր իր մտքերին հետեւելու հրաւիր:

Վազգէն Ա.ը ձայնի բարձրացման միջոցով իր քարոզներում ազդեցիկ շեշտադրումներ էր կատարում: Նման շեշտադրումներ կարող ենք տեսնել 1990 Մարտի 31ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցու հիմնօրինւէջի առիթով խօսուած քարոզում: Վեհափառը քարոզի սկզբում, որպէս բնական ընտրում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականից օրոյայ խորհրդին համապատասխանող մի հատուած եւ յետոյ բացատրում այն ժողովրդի համար. «Եկէ՛ք կառուցենք, լաւոյ սուր խորանը՝ այսինքն եկեղեցին, որովհետեւ նրանից ծագէ մեզ լոյս Հայաստան աշխարհի վրա»: Այս կոչը ուղղուեց մեր ժողովրդին առաջին անգամ, մեզանից 1700 տարի առաջ 301 թ., երբ այն ժամանակուայ Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում հիմքն էր դրում առաջին հայկական եկեղեցո»³⁷: Քարոզի այս հատուածում վեհափառը ձայնի բարձրացմամբ շեշտում էր հրաւիրի կոչ անող «Եկէ՛ք» եւ այդ օրոյայ խորհրդի մէջ գտնուող մարդկանց պատմութեան խորքերը տանող «առաջին» բառերը:

общения (Հաղորդակցման հոգեբանություն), Օլմա հրատ., Մոսկուա, 2003, էջ 62. նաեւ՝ Է. Ա. Бакушева, *Секреты ораторского мастерства. Мудрые советы 22 самых известных и ораторов 20 века* (Հնետորական վարպետութեան գաղտնիքները. Իմաստուն խորհուրդներ 20րդ դարի 22 ամենայայտնի եւ յաջողակ հետաորների կողմից), ՆՊԱՀ հրատ., Միւսկ, 2003, էջ 175:

³⁵ G. A. Kennedy, *Aristotle on Rhetoric. A Theory of Civic Discourse*, Oxford University Press, 2007, էջ 195:

³⁶ Օ. Ա. Баева, *Ораторское искусство и деловое общение* (Հնետորական արուեստ եւ գործնական հաղորդակցություն), Մոսկուա, 2000, էջ 106:

³⁷ Քարոզի նիւթը ուսումնասիրել ենք *Ճողակաթի* արխիւներում պահպանուած տեսանիւթի միջոցով: Այն մեզ հնարարութիւն է ընձեռնել հետեւելու քարոզի ընթացքում Վազգէն Ա. կաթողիկոսի ձայնի ընթացքին եւ օգնել քարոզը բառացի վերարտադրելու գրաւոր:

ՀԱՅԵԱՏՔԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

«Աչքերի միջոցով փոխանցում են մարդկային հաղորդակցության ամենաճշգրիտ և բաց ազդակները»³⁸: Այդ պատճառով հայեացքը կարևոր դերակատարում ունի հոետորական արուեստում, որով լսարանի և հոետորի միջև ստեղծում է կապ, ինչի միջոցով էլ փոխանցում է վերջինիս ներշնչանաձուպին ու ոգետորութիւնը³⁹: Հոգեբանների և փորձագէտների կարծիքով որքան յաճախ է հոետորը նայում լսարանին, այնքան անելի բարձրակարգ, փորձառու, ազնիւ և ընկերասէր են համարում նրան, իսկ իրենց զգում են անելի գնահատուած⁴⁰: Շատ ազդեցիկ էր Վազգէն Ա. հայրապետի հայեացքը, այն լի էր յոյսով, որով ոգեշնչում էր ողջ հայութիւնը: Նրա դէմքի վրայ արտացոլում էր ներքին խաղաղութիւնը: Եղիշէ արք. Կիզիրեանը Վազգէն Ա.ի մասին իր յուշերում գրում է. «Իր դէմքէն բարոյթիւն կը ճառագէր»⁴¹: Նրա հայեացքը նոյնիսկ առանց բառերի ի վիճակի էր խօսել մարդկանց սրտերի հետ: Այդպիսի մի օրինակ է մայր տաճարում 1992 Մարտի 22ին խոսկումի ժամանակ, «Անիրաւ տնտեսի» առակի մասին խօսուած քարոզը, որի ժամանակ կարծես առակի ամէն մի հատուած եկեղեցում տեղաբաշխուած խմբերից մէկին էր բացատրում: Այդ ձեւով բոլոր ներկաները մնում էին վեհափառի հայեացքի ներքոյ, իսկ ժողովուրդը երկիւղաձուպեամբ հետետում էր նրան: Այս քարոզի ընթացքում ներկաների իւրաքանչիւր խմբին Վազգէն Ա.ը իր հայեացքն ուղղում էր 2-6 վայրկեան տետողութեամբ: Այդ ձեւով նրա հայեացքը երկար չէր կենտրոնանում միեւնոյն մարդկանց վրայ, և մարդիկ իրենց անհանգիստ ու անյարմար չէին զգում:

Ելոյթին հետետողների հետ կապի ժամանակահատուածի տետողութիւնը կախուած է ելոյթ ունեցողի ֆիզիկական առանձնայատկութիւններից, եթէ ելոյթ ունեցողին բնութիւնը շնորհել է մեծ և արտայայտիչ աչքեր, ապա ունկնդրի հետ կապ հաստատելու համար կարճ ժամանակն էլ է բաւական: Այդ պատճառով էլ Վազգէն Ա.-ն ժողովրդի հետ կապ հաստատելու համար շատ կարճ ժամանակ էր անիրաժեշտ, բաւական էր անգամ 2 վայրկեան տետողութեամբ հայեացքը: Կիզիրեան արք.ն է Վազգէն Ա.ի մասին իր յուշե-

³⁸ П. Алан, *Язык и телодвижение. Как читать мысли окружающих по жестам* (Լեզու և մարմնի շարժումներ. ինչպէս կարդալ շրջապատող մարդկանց ծեստերի միջոցով), Բոմբրոնա հրատ., Մոսկուա, 2003, էջ 94:

³⁹ Шипунов, էջ 67:

⁴⁰ Е. П. Ильин, *Психология общения и межличностных отношений* (Հաղորդակցութեան և միջանձնային յարաբերութիւնների հոգեբանութիւն), 2013, Սանկտ Պետերբուրգ, էջ 278. նաեւ И. А. Стернин, *Понятие риторики из истории риторики* (Հոետորութեան մասին գաղափար. հոետորութեան պատմութիւնից), Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 40:

⁴¹ Վազգէն Ա. *Կաթողիկոս ամէնայն հայոց*, էջ 120:

րում գրում. «Լուսատր պայծառ աչքերուն մէջ՝ Ա. Լուսատրչի կանթեղին անշէջ լոյսը կը վառէր»⁴²:

ԵՂՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հռետորական արուեստի տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելով Վազգէն Ա. երանաշնորհ հայրապետի խօսքը, յանգեցինք այն եզրակացութեան, որ ելոյթների ընթացքում հնչած նրա ամէն մի խօսքը, հայեացքը, շարժումը ունէր յատուկ նպատակ: Վազգէն Ա.ը բարձր մակարդակով տիրապետում էր հռետորական արուեստին եւ արդիւնաւէտ կիրառում էր այն իր քարոզներում: Քարոզներում ընդգծում էին նրա հեղինակութիւնը եւ համայն հայ ժողովրդի հոգեւոր հօր կերպարը: Էթոսի եւ պաթոսի տեսակէտից քննութեամբ տեսնում ենք, որ քարոզներում արտայայտուող մտքերն ու ապրումները զուտ գաղափարներ ու ցուցադրուող յոյզեր չէին: Դրանք միախառնուած էին հայրապետի էութեանը, կազմում էին իր կեանքի մի մասը եւ համարում յոյս՝ խաւարի, տագնապի եւ նեղութեան մէջ գտնուող ժողովրդի համար: Վեհափառի ելոյթների դադարների ժամանակ ժողովուրդը վերապրում էր ներկայացուած պատումներն ու գաղափարները, իսկ տրուած հռետորական հարցերով կլանում էր ունկնդիրների ուշադրութիւնը, առաջ էին բերում նպատակային մտորումներ եւ հաստատում հնչած խօսքերը: Վազգէն Ա.ի ձայնը դիփոլնկալելի էր, յստակ եւ հզօր, իսկ հայեացքը խորն էր, խաղաղութեամբ ու յոյսով լեցուն: Դրանց միջոցով ներկաներից իլրաքանչիւրը զգում էր, որ վեհափառը անձնապէս դիմում է իրեն: Վերոնշեալ գործօնները դարձնում էին Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի խօսքը այդքան հզօր եւ ազդեցիկ:

THE USE OF RHETORICAL METHODS IN THE SPEECH OF CATHOLICOS VAZGEN I

(Summary)

HAYKARAM HAKOBYAN (haykaramhakobyan@mail.ru)

Based on the study of a number of speeches and sermons given by the late Catholicos Vazgen I, the article discusses the use of rhetoric and examines the secret of the powerful influence of his speech. Furthermore, in order to have a better understanding of the rhetorical skills of Catholicos Vazgen I, unrecorded verbal information as well as memoires provided by people who had come in contact with the Catholicos have also been used. These are underpinned by relevant concepts of psychological, rhetorical theory and literature.

The study notes that the late Catholicos successfully used different rhetorical techniques like historical context, ethos, and pathos as well as influential pauses to focus the audience and give it time to ruminate. He skillfully used his voice, his gaze, and different types of rhetorical questions.

⁴² Նոյն, էջ 121:

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ ՎԱՂԱՇԽԱՐՀԱԲԱՐԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ (16-18ՐԴ ԴԴ.) ԲԱՌԱՐԱՆԻ՝

ՄՈՀԱՄՄԱԴ ՄԱԼԵՔՄՈՀԱՄՄԱԴԻ
MalekMohammadi@em.uni-frankfurt.de

ՆԱԽԱԲԱՆ

Հայ նոր եւ նորագոյն բառարանագրութեան մէջ մեծ ասանդ է ունեցել ՀՀ երեւանի Պետական Համալսարանի հայոց լեզուի պատմութեան ամբիոնի դասախօսական կազմը, իդէնս հնուտ բառարանագիրներ, ուսուցչապետեր Յովհաննէս Բարսեղեանի, Ռուբէն Ղազարեանի եւ Հենրիկ Աւետիսեանի, ում պատիւ եմ ունեցել ունկնդրելու որպէս ուսանող: Ղազարեանի եւ Աւետիսեանի արժէքատր *Միջին հայերէնի բառարանը*² բազմուրրտ միջին հայերէնի բառապաշարին նուիրուած հրատարակուած առաջին բառարանն³ է: Այն շարունակում է հայ բանասիրութեան զլովսգործոցներ՝ *Նոր հայկազեան*, *Արմապական* ու *Մալխասեանցի* բառարանագրութեան ասանդները: Նոյնիսկ թոռցիկ հայեացք գցելով պրոֆ. Ղազարեանի գրչին պատկանող հարուատ եւ մասնագիտական բառարանների ցանկին, յատկապէս գրաբարի եւ միջին հայերէնի ոլորտում, կարելի է հաստատօրէն պատկերացնել բազմադարեան մետրոպեան գիր ու գրականութեան դպրոցի կարկառուն գիտնականի ջանքերը հայ բանասիրութեան ասպարէզում⁴:

¹ Ուսուցչապետիս՝ երջանկայիշատակ պրոֆ. Ռ. Ղազարեանի մշտնջենական յիշատակին:

² Ղազարեանի եւ Աւետիսեանի *Միջին հայերէնի բառարանի* մասին տե՛ս՝ Եւրի Վարդանեան, «Ռ. Ղազարեանի, Հ. Աւետիսեանի *Միջին հայերէնի բառարան*, Կ. Ա. (I-4), Երեւան, 1987», *Պալմաբանասիրական հանդէս*, 1988:3, էջ 207-13. նաե՛ւ՝ Ն. Մկրտչեան, «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. *Միջին հայերէնի բառարան*. Կ. I, Երեւան, 1987, Կ. II, 1992», *Պալմաբանասիրական հանդէս*, 1993:1-2, էջ 195-198:

³ Միջին հայերէնի բառարանագրութեան պատմութեան մասին մանրամասն տե՛ս՝ Մոհամմադ Մալեքմոհամմադի, «Ուսումնասիրութիւններ միջին հայերէնի բառարանագրական աշխատանքների վերաբերեալ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2016:2, էջ 139-51:

⁴ Ռուբէն Սերոբի Ղազարեանի յարատեւ, հետեւողական աշխատանքի արդիւնքներն են.- *Գրաբարի դարձուածաբանական բառարան* (2012), *Գրաբարի հոմանիշների բառարան* (2006), *Թուրքերէն-հայերէն բառարան* (2003), *Քոասնունների բառարան: Հայերէն-լարիներէն-ռուսերէն-անգլերէն-ֆրանսերէն-գերմաներէն* (2002), *Գրաբարի բառարան* (2000), *Կենդանիների անունների հայերէն-ռուսերէն-լարիներէն կարգաբանական բառարան* (1992), Գէորգի Նալբանդեանի

Ժամանակագրական առումով միջին հայերէնի բառապաշարին նուիրուած առաջին բառարանը կարելի է համարել Նորայր Բիզանդացու (1845–1915) *Բառգիրք սրորին հայերէնի ի մաքենագրութեանց ժԱ-ժԷ դարոց* երկը, որն ասարտել է 1885ին, հրատարակուել՝ 2000ին, ժնեում: Թէև «Կոթողային եզակի երեսոյթ է բացաբարական-սրուգաբանական բնոյթի Նոր հայկազեան բառարանը»⁵, որտեղ գրեթէ սպառիչ կերպով ներկայացուած է հին գրական հայերէնի (գրաբարի) բառապաշարը եւ բազմակողմանիորէն ենթարկուած բառարանագրական մշակման: Այս բառարանում առաջին անգամ բուն միջինհայերէնեան մի ամբողջ շարք բառեր որոշակիորէն սահմանազարում են գրաբարի բառերից՝ Ռմկ. (Ռամկորէն) նշումով⁶: Եռզէֆ Կարստի (1871–1962) “Wörterbuch des mittelarmenischen” բառարանը առ այսօր անտիպ է մնում⁷: Յատկանշական է, որ 1972ին ՀՀ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտը բազմակողմանի ուսումնասրութիւն է հրատարակում միջին հայերէնի վերաբերեալ⁸, որը ցարդ չունեցաւ իր շարունակութիւնը:

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ... ԲԱՌԱՐԱՆԻ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇՈՒՐՋ

2014ին պրոֆ. Նորայր Պօղոսեանի հեղինակութեամբ *Նորայայտ բառեր վաղաշխարհաբարեան աղբիւրներում, 16-18րդ դդ.* բառարանի հրատարակութիւնը շատ ողջունելի քայլ է պարգաբանելու վաղաշխարհաբարեան, երբեմն բարդ եւ դժուարին բառապաշարի ուսումնասիրութեան ասպարէզում, յատկապէս տարբեր լեզուներից կատարած փոխառութիւնների ստուգաբանութեան հարցով:

Ակնյայտ է, որ միջին հայերէնի մանաւանդ փոխառեալ բառապաշարի վերաբերեալ ցանկացած ուսումնասիրութիւն պահանջում է յարակից լեզուների որոշակի իմացութիւն եւ փոքրիշատէ տիրապետում՝ միջին հայերէնի հետ շփուող լեզուներին: Միջին հայերէնի բառարանագիրներ ինչ-

համահեղինակութեամբ՝ *Պահպանէն-հայերէն բառարան (1994)*, Հ. Մ. Աւետիսեանի համահեղինակութեամբ՝ *Միջին հայերէնի բառարան, 2-րդ բարեփոխուած հրատարակութիւն (2009)*:

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 1836-37:

⁶ Ռ. Ղազարեան, *Լեզուաբանական ուսումնասիրութիւններ*, ԵՊՀ հրատ., Երեան, 2010, էջ 211:

⁷ Աւելի մանրամասն տե՛ս՝ Գ. Վ. Արզարեան, «Եռզէֆ Կարստի անտիպ “Միջին հայերէնի բառարանը”», *Բանբեր Երեանի Համալսարանի*, 1995:2(86), էջ 183-6. նաեւ՝ Ա. Ռ. Գազինեան, *Եռզէֆ Կարստի լեզուաբանական հայեացքները*, ԵՊՀ հրատ., Երեան, 2008:

⁸ *Ակնարկներ միջին հայերէնի պատմութեան*, Ա., Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեան, 1972:

պէս գերմանացի լեզուաբան եւ միջին հայերէնի մասնագէտ Կարստի, լեզուաբաններ եւ բառարանագիրներ Բիւզանդացու եւ Ղազարեանի աշխատանքների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ լիովին տիրապետել են միջին հայերէնի հետ շփոտող գրեթէ բոլոր լեզուներին:

Պօղոսեանի բառարանի վերնագիրն իսկ յուշում է, որ այնտեղ ուշադրութեան արժանի մաս են կազմել փոխառութիւնների կիրառումը վաղ աշխարհաբարի ժամանակաշրջանում: Համոզուած ենք, սակայն, որ փոխառութիւնները քանակական առումով անեղի մեծ թիւ են կազմում քան բառարանում ներկայացուած փոխառութիւնները: Իդէպ բառարանում ներկայացուած տարբեր յղումներում նկատելի են մի շարք փոխառութիւններ, որոնք չեն ընդգրկուել բառարանի բառայօդուածների շարքում: Օրինակ՝

Այար ayar, n., Etym.= arab., pers. **آيار** ayār 'fineness, standard, criterion, assay, carat' նրբութիւն, ստանդարտ, չափանիշ: Գ կամ Դ դիրաթ թամամ այար այս վառան է⁹:

Դաւի davi, n., 'action, case, cause, suit' Etym.= arab., pers. **دعوى** da'vī հայց, դատական գործ: Թէ դաւի ունէնան, մուադին մենք ենք, պարոնտէրին հետ բան չունին¹⁰:

Ղիրաթ qirat, n., Etym.= pers. **غیرت** ġīrat 'mettle, zeal, ambition, jealousy, enthusiasm': Գ կամ Դ դիրաթ թամամ այար այս վառան է¹¹:

Ֆիքր fik'r, q., Etym.= pers. **فکر** fekr, 'thought, reflection, idea, mind, care' միտք, գաղափար, միտք, հոգատարութիւն: Պիտի որ մեր հայոց համար մին ֆիքր եւ սարանճամ տեսնուք¹²:

Սոյն բառարանում բնիկ բառապաշարի, հեղինակային յղումների ինչպէս նաեւ թուրքերէն փոխառեալ բառապաշարի ստուգաբանութեան հարցով հեղինակը ցուցաբերել է վերին աստիճանի ուշադրութիւն եւ գիտական մօտեցում: Այդուհանդերձ, բառարանի մի շարք փոխառութիւնների ծագումը վիճելի է կամ ընդհանրապէս չի նշուել փոխատու լեզուն: Միջին հայերէնի գերակշռող մաս կազմող արաբերէն, պարսկերէն եւ թուրքերէն փոխառութիւնների ծագման վերաբերեալ շփոթութեան հիմնական պատճառը թերեւս պայմանատրուած է փոխառութիւնների անցման հետ կապ-

⁹ Սուաբել Դարիժեցի, *Գիրք պարմութեանց*, աշխատ.՝ Լ. Ա. Խանլարեան, Հայկական ԽՍՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1990, էջ 452. տե՛ս՝ *Վառան vařan* (Պօղոսեան, էջ 190):

¹⁰ *Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քթթունը)*, աշխատ.՝ Պարոյր Մուրադեան, Ս. Էջմիածին, մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2007, էջ 162. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 141:

¹¹ Դարիժեցի, էջ 452. տե՛ս՝ *Վառան vařan* (Պօղոսեան, էջ 190):

¹² Գ. Ա., Эзов, *Сношения Петра Великого с армянским народом (документы)* (Մեծն Պետրոսի յարաբերութիւնները իւր ժողովրդի հետ [փաստաթղթեր], Սանկտ Պետերբուրգ, 1898, էջ 417. տե՛ս՝ Սարանճամ *sarančam* (Պօղոսեան, էջ 180):

ուած հետեւեալ հանգամանքով. ինչպէս յայտնի է փոխառութիւնները կատարում են բանատոր ուղիով՝ ժողովրդական փոխառութիւններ, կամ գրատոր ուղիով՝ գրական փոխառութիւններ: Ըստ Ղազարեանի՝ «միջնադարում փոխառուած բառերի մեծագոյն մասը ժողովրդական փոխառութիւններ են: Այդ կարգի փոխառութիւնները միջին գրական հայերէնի բառապաշարի մէջ մուտք են գործել ժամանակի ժողովրդասօսակցական լեզուից եւ փարբեր բարբառներից»¹³: Ղազարեանը հաստատում է թէ «յաճախ ժողովրդական փոխառութիւնները դժուար է սահմանազարել գրականից՝ որոշելով, թէ դրանցից որոնք են ժողովրդական եւ որոնք գրական, այլ կերպ ասած՝ փոխառութիւնների անցումը ինչպէ՛ս է կատարուել՝ խօսակցական՝ ճանապարհով, թէ՞ գրատոր»¹⁴:

Միջին գրական հայերէնի բառապաշարի մէջ զգալի քանակ են իրանական փոխառութիւնները, որոնց աղբիւրը նոր պարսկերէնն է: Նոր պարսկերէնի ժամանակաշրջանը սկսում է Ժ. դարից, հետեւաբար բուն միջին հայերէնում կատարուած պարսկական փոխառութիւնները կատարուել են նոր պարսկերէնից: Միջին հայերէնի արաբական փոխառութիւնների վերաբերեալ պէտք է նշել, որ այդ փոխառութիւնների մի զգալի մասը կատարուել է պարսկերէնի միջոցով, ինչը հաստատում է հնչիւնական օրինակափոփոխութիւններով: Ուշագրաւ է Աճառեանի վերլուծութիւնը այս կապակցութեամբ. «Յարկապէս ԺԱ. դարում, երբ հայոց Բագրատունի թագաւորութիւնն արդէն վաղուց հաստատուած էր, արաբները Հայաստանից հեռացած եւ նոյնիսկ անկման շրջանն էին մտնում: Այս պարագայում ազդեցութիւնը պիտի վերագրենք ոչ թէ ուղղակի արաբերէնին, այլ մեր հարեան պարսիկներին»: Ըստ այդմ՝ պարսկերէն եւ արաբերէն բառերը կարելի է իրարից չտարանջատել, մանաւանդ որ դրանց հիմնական մասը հասասարապէս գործածուած է եղել ե՛ւ պարսկերէնում, ե՛ւ արաբերէնում, ե՛ւ թուրքերէնում: Ինչ վերաբերում է հայերէնի իրանական, արաբական եւ թուրքական փոխառեալ բառապաշարի այն բառամիատրւերին, որոնք հանդիպում են վերոյիշեալ երեք լեզուներում, ինչպէս նշում է Աճառեանը «Եթէ մի բառ հայերէնից դուրս գտնուում է նաեւ մի երրորդ լեզուի մէջ, եւ ստուգաբանում է հենց այդ լեզուով, ուրեմն պարկանում է այդ լեզուին»¹⁵: Պէտք է նկատել, որ երբեմն «փոխառութիւնը հայերէնն ընդունել է միջնորդատրուած եւ անելի ճիշտ՝ կրկնակի-եռակի փոխառութեամբ: Երբեմն

¹³ Ղազարեան, *Լեզուաբանական*, էջ 164:

¹⁴ Նոյն, էջ 164:

¹⁵ Հր. Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, I մաս*, ԵՊՀ հրատ., Երևան, 1940, էջ 225-6:

այդպիսի փոխառությունների ճիշտ ուղին գտնելուն հնչյունական անցումները չեն կարող օգնել»¹⁶:

Յատկանշական է, որ թե՛ գրական, թե՛ ժողովրդական փոխառությունների հարցերում մեծ դեր է կատարում գերիշխանության հանգամանքը: Մինչև արաբների կողմից Հայաստանը նուաճելը հայ ժողովուրդն արաբերենին անչլում էր երկրից հարաւ ընկած սահմանային շրջաններում, ուր բնակություն էին հաստատել բազմաթիւ արաբ ցեղեր: Իսկ երբ Հայաստանը նուաճուեց արաբների դէմ 774-775ի հայկական ապստամբութիւններից յետոյ, արաբները սկսեցին զանգուածային գաղթել Հայաստան. Շայբանիների ցեղը տիրեց Դատուանին, Սուլայմ ցեղը գրաւեց Բաղէշից մինչև Կարին ընկած շրջանները, Կայսիկները հաստատուեցին Վանայ լճի շրջակայ գաւառներում: 786-809՝ արաբ ցեղեր բերուեցին եւ բնակեցուեցին Հայաստանում¹⁷: 865ին Հայաստան արշաւեց Բուղան՝ իր հետ բերելով արաբ նոր գաղթականութիւն: Հայաստանում հաստատուեցին մի շարք ամիրայութիւններ: Արդէն Թ. դարից հայկական նախարարութիւնները պայքարում էին Հայաստանում արաբական ամիրայութիւնների դէմ: Ուստի զարմանալի չէ, որ Թ. դարից հայ մատենագիրների երկերում արաբերէն բառեր կա՛մ չկան, կա՛մ հանդիպում են հատուկետո: Արաբական փոխառութիւնները երեսն են գալիս ԺԲ. դարից, երբ Հայաստանում արաբական ազդեցութիւն չկար: Որովհետեւ այդ ժամանակուայ միակ գրական լեզուն՝ գրաբարը, դեռ պահպանել էր իր հին օրինաչափութիւնները եւ մատենագիրները սրբութեամբ պահելով լեզուի հին օրէնքները, պահպանում էին նաեւ հնուց ասանդուած բառապաշարը եւ խուսափում նոր փոխառութիւններից:

Այսպիսով.- 1) Ը. դարի կէսերից հայ ժողովուրդն իր բուն երկրում ապրել է արաբ ցեղերի հարեանութեամբ, ըստ որում երկու դար (Ը.-Թ.) կրել է արաբական բռնատիրութեան ծանր լուծը: Այդ պայմաններում արաբերէնից շատ բառեր են անցել ժամանակի խօսակցական հայերէնին, որոնք միջին գրական լեզուի ձեւատրման շրջանում դեռեւս կենսունակ են եղել: 2) Գրական միջին հայերէնի ժողովրդական բնույթի արաբական փոխառութիւնների աղբիւրը եղել է խօսակցական միջին հայերէնը¹⁸:

¹⁶ Ն. Ա. Սկրտչեան, «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. *Միջին հայերէնի բառարան. հ. I, երեսն, 1987, հ. II, 1992*», *Պարմարքանասիրական հանդէս, 1993:1-2*, էջ 185:

¹⁷ Արամ Տէրղուեռեան, *Արաբական ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում*, ՀՍՍՐ ԳԱ Իրատ., Երեւան, 1965, էջ 62:

¹⁸ Աւելի մանրամասն տե՛ս՝ *Ակեարկներ միջին հայերէնի պատմութեան, Ա.*:

Հայերիի Հիբըմանը եւ Աճառեանը ընդհանրապէս ժխտում են հայերէնում արաբական ծագման բառերի առկայութիւնը մինչեւ Է. դարը¹⁹: Սակայն ըստ ակադ. Գ. Բ. Ջահուկեանի՝ «5-րդ դ. մատենագրութեան մէջ կան մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մէջ ամէնից անելի մօտ են արաբականներին: Այսպիսի դէպքերում Հ. Հիբըմանը եւ Հ. Աճառեանը կամ ընդհանրապէս ժխտում են հայերէն բառերի սեմական ծագումը, կամ ենթադրում փոխառութիւն ասորական բարբառներից»²⁰: Ակադեմիկոսը իր այդ համոզմունքը ապացուցում է արաբական ցեղերի առկայութեամբ՝ Իրանի եւ Բիւզանդիայի սահմանամերձ վայրերում Է. դարից անելի վաղ, Հայաստանի հարաւային շրջաններին մերձատր վայրերում «իւրատեսակ ասորա-արաբական կոյնէի» առկայութեամբ²¹:

Մենք համակարծիք ենք Աճառեանին՝ թէ միջին հայերէնի արաբական փոխառութիւնները բուն Հայաստանում անմիջականօրէն արաբերէնից չեն, այլ թերեւս ներթափանցել են հարեան պարսկերէնի միջնորդութեամբ²²:

Ինչ վերաբերում է Պօղոսեանի բառարանի մեր խնդրոյ առարկայ փոխառութիւնների հարցին, ապա բառարանը ընդգրկում է մեր հաշուարկով 268 արաբերէն, պարսկերէն եւ թուրքերէն ծագումով փոխառութիւններ: Թուրքերէն փոխառութիւնների ստուգաբանական պարզաբանումների ուղղում, ինչպէս նշուեց, հեղինակը ցուցաբերել է վերին աստիճանի ուշադրութիւն եւ ճշգրիտ տեղեղութիւններ է ներկայացրել, սակայն արաբերէն եւ պարսկերէն փոխառութիւնների հարցում նկատելի են ստուգաբանական բնոյթի մի շարք վիրպումներ:

Այստեղ ներկայացում են լրացուցիչ փաստեր արժէքատր այս բառարանի ստուգաբանական հատուածի կատարելագործման նպաստող:

Ինչպէս նշուեց բառարանում մի շարք փոխառութիւնների ծագումը վիճելի է կամ ընդհանրապէս չի նշուել փոխատու լեզուն: Այստեղ ներկայացում են նման փոխառութիւնների ճիշտ ստուգաբանութիւնը լրացուցիչ տեղեկութիւններով: Բառարանում ներկայացրած խնդրայարոյց ստուգաբանական տեղեկութիւնները նշուել են պարոյկով: Ստուգաբանութիւններ կատարելիս բառերը ներկայացուել են պարսկերէնի եւ արաբերէնի հա-

¹⁹ H. Hübschmann, *Die Semitischen Lehnwörter in Armenischen*, ZDMG 1892, էջ 126-268. նաեւ՝ H. Hübschmann, *Persische studien*, հրդր. 1, Strassburg, 1895, էջ 259-80. նաեւ՝ Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, II մաս, Հայկեստիւրատ, Երեւան, 1951, էջ 169-217:

²⁰ Գէորգ Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն «Նախագրային ժամանակաշրջան», № 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 485:

²¹ Նոյն, էջ 485.

²² Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, II մաս, էջ 183, 186:

մարժեքներով եւ այբուբեններով, նաեւ բերուել են բառերի անգլերէն թարգմանութիւնները:

1. **Ախար-Բախար** *axar-baxar* **n.** «վերջ» բառի կրկն., Աարտ, աարտ-մաարտ?, վերջմերջ: Մինչեւ կողմն էվատի հողի ափն, որ էն կուռն ախարբախարն Գօգու գեղըցի եղիկին այ²³: **Etym.= pers.** آخر *āxer* + خیر *‘ending well, ending one’s life well, having a good futurity’*:

2. **Ախարեթ** *axaret’*, գ. (թուրք.), եկամուտ?: Զամենայն մնացեալսն ըստ չափու բաշխեաց եկեղեցոյն, զի յեկեալ ախարեթներէն վճարեցեն²⁴: **Etym.= arab. pers.** آخر *axarat* ‘afterlife, eternity, futurity’, յետմահու, ապագայ կեանքը, յաերժութիւն:

3. **Աման փալ** *aman tal* «հանգստութիւն, անվտանգութիւն, ապաստան»: Վասն սաստիկ ցրտութեան Գ ամիս գիշեր ցորեկ մէկ աբմն աման չէր ետ մինչեւ ի մարտի ժե, ապա արեւ եւ արեգակ տեսաք²⁵: **Etym.= arab., pers. turk.** امن *aman* ‘security, safety, respite, refuge’*:

4. **Ասպապեղէն** *aspapefen*, (թուրք.? *esbab*) գ. «հագուստ, զգեստ»: Բարեպաշտն Միրաք ելեալ գա Արզրոմ եւ առնու ապըրշմեղէնս եւ ասպապեղէն եւ ցորեանս, զի տարցէ ի տուն²⁶: **Etym.= arab. pers.** اسباب *turk. esbab* ‘instrument, tool, sapparatus, utensil, [fig.] means, cause’:

5. **Զախիրայ** *zaxira* (թուրք.? *Zahire*) Պարէն, պաշար, հացամթերք: Ե նաւ, ե թօփագ, զախիրայ եւ այլ բազում բարոյփին առին գնացին Ագախ²⁷: Թէ զախիրայէ պակասութեանն եւ թէ քաղաքիս ամենայն իրաց տղութեանն, ցորեանն առես՝ հատ մի չկայ²⁸: **Etym.= arab. pers.** ذخيره *turk. zahire*, ‘store, reserve, supply, stock, reservoir, accumulation’:

6. **Զուտիաթ** *zufiat*, արաբ. պարսկ. *zaher?* «երեւելի, բացորոշ»? , գ. ա. իւրային, տոհմակից: Շիխի զուտիաթն, որ թագաւորութիւն ա արեւ, Շահիսմէլին ԻԴ տարի այ, Շահ Թամազն ԾԴ տարի այ²⁹: Մեր զուտիաթ մարդ էլ մատնարկի միջոմն բան չունինք՝ ո՛չ մեք, ո՛չ մեր որդիք³⁰: Զուտիաթ *zufiat*

²³ Յիշարակարան Սանահնոյ վանից, էջ 148. տե՛ս՝ Պողոսեան, էջ 21:

²⁴ Դիւան հայոց պարմութեան, գիրք ժ. մանր մարենագիրք, ժե.-ԺԺ. դարեր, հրատ.՝ Գիտ Աղանեանց, Նուարդ Աղանեանցի տպարան, Թիֆլիս, 1912, էջ 87. տե՛ս՝ Պողոսեան էջ 21:

²⁵ Մանր ժամանակագրութիւններ (XIII-XVIII դ.), հրդր. I, կազմ.՝ Վ. Ա. Յակոբեան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1951, էջ 210. տե՛ս՝ Պողոսեան, էջ 24:

²⁶ Մանր ժամանակագրութիւններ, հրդր. I, էջ 247. նաեւ՝ Ղազարեան, Աւետիսեան, էջ 79. տե՛ս՝ Պողոսեան, էջ 33:

²⁷ Մանր ժամանակագրութիւններ, հրդր. I, էջ 223. տե՛ս՝ Պողոսեան, էջ 70:

²⁸ «Դիւան Սուրբ Յակոբայ (Ա-ԺԹ)», Սիոն, Յուլիս-Օգոստոս 1941, էջ 84. տե՛ս՝ Պողոսեան, էջ 70:

²⁹ Յիշարակարան Սանահնոյ, էջ 65. տե՛ս՝ Պողոսեան, էջ 72:

³⁰ Յիշարակարան Սանահնոյ, էջ 140. տե՛ս՝ Պողոսեան, էջ 72:

'generation, offspring' Etym.= arab. pers. ذرية *ǧoria*. Իրային, սերունդ, տոհմակից:

7. **Էմնություն** *emnut'yun*. (արաբ. *emin* «մաքսապետ»?), գ. Մաքսապետություն: Ո՛չ մաքս ունեյ, ո՛չ էմնություն, ո՛չ կոմրոկ եւ ո՛չ այլն, որպէս ի Լեհ կամ ի Տաճկաստան³¹: Etym.= arab. آمن *amn* 'safe, secure, [rare.] security, [adj. infml.] secure, pesceful', 'ապահովութիւն, վստահութիւն':

8. **Ըրէխէմ** *əreḫem*, Ռաղամ ո., Հրովարտակ, պաշտօնական գրութիւն: Զամենայն հարկատր զգիրսն, եթէ ըրէխէմ եւ եթէ այլ հոլքմեր... պարոն քէլէնթըր խոճայ Աւետիսի գիտութեամբն եւ կամակցութեամբն առաքեացէ առ մեզ³²: Etym.= arab, pers. رقم, ارقم, مرقوم 'Written, number':

9. **Թախսիրություն** *t'axsirut'yun*, (պարսկ. *toxs*)?, ո.: Ով էս բանիս թախսիրություն անէ կամ այլ եւ այլ անէ, Աստուածածին իրանն եւ իր որդանցն խոով կենայ³³: Etym.=arab. Pers. تقصير *taqṣir*, 'blame, fault, guilt, guiltiness, offense, wrong' «մեղք, յանցանք»:

10. **Թափշի** *t'ap'si*, (պարսկ. *teṗši?*) գ., Մեծ ափսէ, մատուցարան: Աստուած արինէ Քոսակ Յովանէս եւ իւր որդի մահդասի Խաչատուրն, Բ արծաթէ թափշի ետ Սբ. Յակոբայ³⁴: Etym.=mong. turk. تەپشې *teṗši* 'plate, dish, vessel':

11. **Խասափար** *xasatar* (պարսկ. *xās-dār* «առանձնաշնորհեալ»?) ա. Երեւելի, մեծատուն: Ես՝ Ականաթէրէցի պարոն Յեկանս խասափարի վկայ եմ: Խասատար Նազարն վկայ [եմ]³⁵: **Խասափար** *xasatar* 'litigant, plaintiff, libellant, demandant, complainant': Etym.=arab. pers. خاستار *xāstar* * «Պահանջող կողմ, պահանջող»:

12. **Խիփալ** *xital*, չբ. Գոռալ: *Բառգիրք հայոց*³⁶ ունի խիտալ «կասկածել»: Խիտալ - գոռալ, ոգոզալ, միամարտել³⁷: Etym.= arab. قاتل *qet'al* 'Kill, fight' միամարտել:

³¹ Միսէլոն Դպրի Լեհացոյ Ողղեգրութիւն, Իրատ.՝ Ներսէս Ակիւնեան, Վիեննա, 1936, էջ 170. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 72:

³² Դիան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ա, էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխ.՝ Խաժակ Տէրգրիգորեան, Անթիլիաս, 2003, էջ 63. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 75:

³³ Յիշատակարան Սանահնոյ, էջ 170. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 77:

³⁴ Յակոբ Փափազեան, «Ակոռու Ս. Յակոբ վանքի քրթովը», *Բանբեր Մարտենադարանի*, 1977:12, Երեւան, Մատենադարան Իրատ., էջ 201. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 79:

³⁵ Փափազեան, էջ 201. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 79: Յիշատակարան Սանահնոյ, էջ 157-58. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 94:

³⁶ Հ. Մ. Ամալեան, *Բառգիրք հայոց*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Իրատ., 1975:

³⁷ «Այս բառը գեղովք, որ կարի պիտոյ է վարժասիրաց. Հանդէս բանաստեղծաց», Ժէ: դարի յիշատակարաններ, էջ 122բ-136ա. նան՝ ՄՄ 2281 էջ 135ա. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 96:

13. **Ղափաղայ qataqa**, գ. Մունետիկ? (ծան. հրատ.): Հրամայէ պնդապահս առնել ի ճանապարհին, այսինքն՝ դատաղայ³⁸: Etym.= turk. kadağan (syn. Yasakli, memnu 'obsolete'), pers. عَقْن ց̄ adaqan 'Barred, Forbidden, Illegitimate, Illicit':

14. **Ղուշխանա** qušxana, գ. Թոշնարան, հաւանոց: Ելանք անտի, գնացինք ի դուշխանան. տեսանք անհուն թոշունք՝ ազգ եւ ազգ կերպ թոշունք³⁹: Etym.= turk. قوشخانه qušxāna, Composed of turk. quš + pers. xāna 'place for keeping falcons':

15. **Ճիպայ** čipa, գ., ճիշտ չէ մեկնաբանուել որպէս (պարսկ. jib «գրպան» Փոսորակ, խորը ընկած տարածք?): Մեր յօժար սրտի ծախեցինք ի վերայ Բարսեղ պարոնտերին Ջրանցի ջամփի տակի ճիպէքն... Ջումանց ճիպէքի վերի կոտն⁴⁰: Ճիշտ է մեկնաբանել *Միջին հայերէնի բառարանը*: Etym.= arab. جبه Jobba ճիպպէ, ճիպպէթ «վերարկու, ամրան». Comp. Arab., pers. qabā قبّ «գապա կապա, պատմոճան, պարեգօտ, հանդերձ» krd. kava, kova «կապա», kebe «հասարակ չովխա», turk. kebe «կապերտ», 'cassock, long garment':

16. **Մուադին** muadin ճիշտ չէ մեկնաբանուել որպէս (արաբ. պարսկ. mo'adel), մակբայ, աճական. Համարժէք, հաւասար, նման: Թէ դափ ունէնան, մուադին մենք ենք, պարոնտերին հետ բան չունի⁴¹: Etym.= arab. pers. مدعی moda 'i 'complainant, plaintiff' Բողոքող, հայցուոր». Comp. դափ davi Etym.= arab., pers. دعوى da 'vi 'action, case, cause, suit' հայց, դատական գործ:

17. **Պաղիք** paqink' (արաբ. baqi)?, ա. գ. Խոռվարար, անհնազանդ, անիրաւ: Իրենց միջէն ափրեցաւ թապուրն եւ դոքա ալ հասան, չարդեցին ժՌ հոգի կամ ալ պակաս, ալ պաղիքն դարձան գնացին: Ռ ոսկի գին կըտրեց, թող զալ պաղիքըն, որ ընկան եւ մնացին գերի⁴²: Etym.= turk. پاغی yaği 'insurgent, lawless, mutineer, outlaw, rebel, rebellious', խոռվարար, անհնազանդ, անիրաւ:

³⁸ *Չաքարեայ Մարկապատի Պարմագրութիւն, Գիրք Ա, Բ, Գ, Վաղարշապատ, 1870, էջ 37.* տե՛ս՝ Պօղոսեան, էջ 129:

³⁹ Յ. Անասեան, «Մահտեսի Շահմուրատի յիշատակարանը», *XVII դարի ազգաբարձրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, Հայկական ՍՍԲ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 317. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 130:

⁴⁰ *Յիշարակարան Սանահնոյ*, էջ 227. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 131:

⁴¹ *Յիշարակարան Սանահնոյ*, էջ 162. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 141:

⁴² *Մանր ժամանակագրութիւններ, հրք. I, էջ 215-16.* տե՛ս՝ Պօղոսեան, էջ 168:

18. *Պապ-ի պարիթ* pat-i parit' (պարսկ. bād-i bārid)?, գ. (բժշկ.) Ցուրս քամի?: Եւ ցաւ մի այլ կա, որ իրենն պատ-ի պարիթ կասեն⁴³: Etym.=pers. بادباد bādbor, composed of pers. bād 'Wind', pars. Bor, bordan 'remove'. (բժշկ.) 'carminative':

19. *Ռահվար* fahvar, գ., ճանապարհորդ?⁴⁴: Etym.=pers. راهور 'horse, fast, traveler', հեծնելու ձի⁴⁵, արագընթաց, ուղղէզնաց:

20. *Սահարի sahari* (արաբ. sihr «հմախեր»?), ա. Կախարդուած, հմայուած?: Սահակն ասէ՛ ի սահարին սաֆրայէն եւ պալղամէն լինի⁴⁶: Etym.= pers. سردى sardi 'cold': Ըստ հին բժշկութեան մարդու օրգանիզմում եղած չորս հեղուկներից երկուսը սառն են, իսկ միւս երկուսը տաք: Արեան, աչի, լեղու եւ սեւ լեղիի: Մարդիկ ըստ խառնուածքի (*temperamentum*) տիպերի բաժանուած են չորս խմբերի:

21. *Օլօֆայ olofa*, գ. Զինուորական ոռճիկ? Ունի Կարստ (անտիպ բառ.): Բազմութիւն զօրացն աւելի են, քան զաւազ ծովու, եւ օլօֆայ (ոլուֆայ) չունին, այլ միայն գեղ եւ քաղաքի տեղի օլօֆային: Զօրքն անհուն են իբրեւ զաւազ ծովու առանց ոլուֆայի եւ փոխանակ ոլուֆայի երկիր ունին եւ գեղ⁴⁷: Etym.=arab., pers. علفه olufa. 'fodder, provender' անասնակեր, կեր, կերակուր:

22. *Ֆախիր Ֆուխարայ*, faxir fuxara, Ֆաղիր, Վախիր, Ֆուխարայ faxir fuxara (թուրք.? fakir «աղքատ» եւ fukara «չքատր»), գ. Չքատր, խեղճ, աղքատ-մաղքատ: Միջին հայերէնի բառարանը ունի ֆախիր «դերվիշ, մահմեդական աղքատ կրօնատուր» (հմաստափոխ.): Դիժար սղութիւն եղեւ, չարեկն Բ խոռոչ ելաւ, հաց ո՛վ կու տեսանէ, ֆախիր ֆուխարայ շոար մնացել էին⁴⁸: Etym.=Arab., pers. فقير فقرا faqir-foqarā, Composed of sin. faqir 'depressed, deprived, indigent, needy, pauper, penniless, poor' + pl. foqarā. 1. Աղքատ. 2. դերվիշ, մահմեդական կրօնատուր:

Բառարանում մի շարք փոխառութիւնների ծագումը չի նշում: Այստեղ մէջքերում ենք այսպիսի փոխառութիւնները նշելով փոխատու լեզուն, փոխառութեան ծագումը եւ լրացուցիչ տեղեկութիւններ:

⁴³ Բունիաթ Սեբաստացի, *Գիրք բժշկութեան (ժէ դար)*, աշխատ. Դ. Մ. Կարապետեան, Երեւան, Մատենադարան հրատ., 1987, էջ 95. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 170:

⁴⁴ Պօղոսեան, էջ 177:

⁴⁵ Ատ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Հատոր 4, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944-45, էջ 156:

⁴⁶ Սեբաստացի, էջ 64. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 178:

⁴⁷ Պօղոսեան, էջ 220:

⁴⁸ *Մանր ժամանակագրութիւններ, հպր. I*, էջ 223. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 221:

23. **Աղալաթ** ardalat', գ. Արդարութիւն: Իր երկիրն է խիստ աղալաթ, որ ոչ գող կայ եւ ոչ բող⁴⁹: Etym.= arab. pers. عدالة, عدالت 'Justice':
24. **Աթրաֆ** at'raf, մկ. Չորս կողմը, բոլորտիք: Թապալ ասելն տիվան-խանայ է, ՄԵ միլիոն է, թող զմիջինն եւ զաթրաֆն⁵⁰: Etym.=arab., pers. اطراف "surroundings, about, environs, peri-, perimeter, peripher":
25. **Աճեմիստանցի** ačemistanc'i, գ., Իրանցի, պարսիկ: Աճեմիստանցի է այս ենկիպէկ մահտեսիս⁵¹: Etym.=arab. عم + pers.-stan + arm. - c'1, 'Iranian, Persian':
26. **Ամալիս** amalis, գ. Գինի: Ամալիս, որ է խաղողի գինի⁵²: Etym.= arab. ملسا malsa, f. الاملس al-amlas 'Wine':
27. **Անմուհր** anmuhr, adj. Ան-կնիք, Մուհր: Եւ ոմանք անմուհրք զուով քանիպ եւ խորիրդոլ⁵³: Etym.= pers. مهر mohr «կնիք» 'seal; stamp: 1) a device or instrument for stamping 2) the impression or mark made by stamping, impression:
28. **Անպար** anpar, Ամբար, շտեմարան: ԱԲ⁵⁴ եւ ՀԲԲ⁵⁵ անպար «պարելու անվարժ» (իամանուն): Այլ ի վայր անպարն գարույ, որ է մինն նստեալ արքունեան⁵⁶: Etym.=pers. انبار anbar 'warehouse, depot, reservoir, [grains] granary':
29. **Անփաթերակ** anp'at'erak, Անփաթերնակ. ա. Անվտանգ: Երգեա՛վտահ, անփաթերակ/եւ զգծողս յիշեա՛լ յերակ⁵⁷: Composed of arm. Ան + pers. پتیاره پتیاره, پتیاره, پتیاره, پتیاره, patyāra⁵⁸ «փորձանք, չարիք», M. Pers. patyārak 'Ahriman, the Devil, fiend, trick, Wicked woman')*:

⁴⁹ Թուփունցի, էջ 310. տե՛ս՝ Պողոսեան, էջ 20:

⁵⁰ «Մահտեսի Շահմուրատի», էջ 317. տե՛ս՝ Պողոսեան, էջ 21:

⁵¹ *Դիանս հայ միմազրութեան, պրակ VII*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1996, էջ 116. տե՛ս՝ Պողոսեան, էջ 24:

⁵² ՄՄ 6275, 185բ. տե՛ս՝ Պողոսեան, էջ 24:

⁵³ *Դիանս Նոր Ջողայի*, էջ 81. տե՛ս՝ Պողոսեան, էջ 29:

⁵⁴ *Առձեռն բառարան հայկազգեան լեզուի*, կազմ. Գ. Ճէլալեան, Անթիլիաս, 1988:

⁵⁵ Մալխասեանց:

⁵⁶ Երեմիա Չէլէպի Քէօմլիւրճեան, *Սրամպօրյ պատմութիւն*, հրատ.՝ Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 26, 28. տե՛ս՝ Պողոսեան, էջ 29:

⁵⁷ *Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)*, հայր. I, աշխատ.՝ Յասմիկ Սահակեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 35. տե՛ս՝ Պողոսեան, էջ 30:

⁵⁸ چو دانی که از مرگ خود چاره نیست / ز پیروی بتر نیز پتیاره نیست (فردوسی). شاهنامه فردوسی: متن کامل، بر اساس چاپ مسکو، سعید حمیدیان، نشر قطره، 1384، تهران، ص 830.

30. *Աշճուփին* aščutyon գ. Խոհարարութիւն: Գ տարի Աբ. Ծնունդն աշճուփին է արեր, ֆըլայներու տէրտն եւ նեղութիւն է կրեր⁵⁹: **Etym.**=turk. aşçi, composed of pers. آش 'pottage or soup'+ turk. - çi. 'Chef «խոհարար»:
31. *Ասրապ asrap*, n. Կապար: Ասրապ. որ է ապար, որ է կապար, որ է արճիճն⁶⁰: **Etym.**=arab. اسرپ osrob 'lead':
32. *Արճէճ* arčēč, n. Արճիճ, ճճի, ճճոյ: Ի Հապաշի երկիրն ոչ գոյ բնաւ արճաթ, պղինձ, կլայկ, արճճ, բայց ոսկի շատ⁶¹: **Etym.**= M. Iran. *arčēč, Pers. ارز ارز arziz, սպիտակ arziz «անապ» 'Lead, caper, plomb, կապար' եւ սեւ arziz «կապար»:
33. *Բաղորաղջայ* bařubařja, Այգի ու մարգագետին, քոստան: Շինեցի զխութ, զբաղորաղջեւ եւ զջրաղացներս եկեղեցոյս վախմ տով⁶²: **Etym.**= pers. باغچه va bağč'e 'garden, little garden':
34. *Դահեակ daheak*, գ., Դայակ: Յիշատակ է... դահեակ սնուցիչ երկու քուն ինոյ Ստին, Յաշաքին⁶³: **Etym.**=pers. دايه 'nanny, nurse' < M. Pers. dayāk⁶⁴) «մանկաբարձ կին»:
35. *Դաւէրէր* davēter գ. Վէճի տէր, հայց յարուցող: Ով որ դաւի անէ՛ այն հողին դաւաւտըն եւ ըլիմ, հետ պարոնտրին ո՛չ ով բան չունենայ⁶⁵: **Etym.**=arab. دعى davi 'claim, action, case, cause, suit, allegation, pretension':
36. *Չարբերան* zařberan, ա. Հոյակապ, սքանչելի: Չարբերան-հոյակապ, զեղուն, հոյճ, բազմաբեր, ծոհ, լիապատառ, համակալ⁶⁶: **Etym.**= pers. زر 'gold' + arm. բերան beran 'eloquent, ոսկի բերան ոնեցող, պերճախօս, ճատարախօս'⁶⁷:
37. *Չարնփա* zařnapha, գ. Կա եւ ազգ մի կենդանի, որ զանափա ասեն, որ վիզն խիստ երկայն է⁶⁸: **Etym.**= arab. pers. زرافه zarafe, 'giraffe' Ընճուղտ:
38. *Չինաթ* zinat', ա. Շքեղութիւն, հանդիսատրութիւն: Յորժամ թազաւորն ի դոբս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ յեղաթ, ԻԴ շաթիր եւ ԻԴ խա-

⁵⁹ Մկրտիչ Եպա. Աղանունի, *Միաբանք եւ այցելութեան երոսաղէմի*, Երուսաղէմ, 1929, էջ 293. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 30:

⁶⁰ ՄՄ 6275, 187ա. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 34:

⁶¹ Թութունջի, էջ 310. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 37:

⁶² *Դիսան հայ վիմագրութեան, պրակ V, Արցախ*, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 215. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 43:

⁶³ *Դիսան հայ վիմագրութեան, պրակ V*, էջ 173. տե՛ս՝ Պօղոսեան էջ 59:

⁶⁴ Աճառեան, *Հայերէն արմարական բառարան*, Հրր. Ա., էջ 618:

⁶⁵ *Յիշատակարան Սանահնոյ*, էջ 158. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 60:

⁶⁶ ՄՄ 2281, 135ա. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 71:

⁶⁷ Նազիկ Յովհաննիսեան, «Նորակազմ բառեր հունանիշների ձեռագիր բառարաններու», *Պապմարտանասիրական հանդէս*, 2002:1, էջ 179:

⁶⁸ Թութունջի, էջ 309. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 71:

չալամ, Լ դատվածանայ: Որքան զենեթ որ ունի, ինքն նոյնպէս այլ ունի կինն: Եւ յորժամ թագատր դուրս ելանէ, այս է գենաթն⁶⁹: **Etym.= arab. pers.** زين, زينہ, 'decoration, embellishment, ornament, Luxury, solemnity':

39. **Էսնէֆէ** esnefe (արաբ. թուրք. esnaf, գ. Արիեստատր, վարպետ: Ե խալեան կուզէ... պիտի ըրդատ, պիտի երկաթ բանող, ամէն էսնէֆէ մը-նացեալ⁷⁰: **Etym.=arab., pers.** اصناف, Aşnaf, turk. eşnaf. Եգ. صنف şenf 'guild, trades folk, trades people, association of craftsmen':

40. **Էրուշա ապուր** eruša apur, հրք. Արիշտայով ապուր: Դեղն այն է, որ շիրիկ ձիթով ըսպանախ եւ էրուշտա ապուր ուտէ⁷¹: **Etym.= pers.** اش رشته aš rešte > rešte 'Fiber, strand':

41. **Էրէխէմ** erexem, ՐԱՂԱՍ գ., Հրովարտակ, պաշտօնական գրութիւն, տե՛ս՝ Զամենայն հարկատր զգիրսն, եթէ ըրէխէմ եւ եթէ այլ հուքմեր... պարոն քէլէնթր խոճայ Աետիսի գիտութեամբն եւ կամակցութեամբն առաքեցէ առ մեզ⁷²: **Etym.= arab, pers.** رقم, ارقم, مرقوم 'Written, number':

42. **Ըրքնիսան** erk'nisan գ. Նստատեղի նեարդի բորբոքում, Ichias: Ըրքնիսան ի յոսկրացատն կու բաժանի⁷³: **Etym.=arab.** عرق النسا 'araq-al-nisā, գ. (med.) 'sciatic nerve, sciatica':

43. **Թաբի** t'abi, ո. Հպատակ, ենթակայ: Այս թագատրս եւ թաբի է Հապաշոյ թագատրին ⁷⁴: **Etym.= arab., pers.** تابع taba 'subject, citizen, follower, dependant, function':

44. **Թագրար** t'agrar, (մակբայ), Դարձեալ, վերստին: Ի գալն 20 ատր ճանապարհի գետ ի վեր, եւ եկաք թագրար անցաք զգետն: Այնոր ներքեւն թաքրար տեսաք այլվի Ե հավուզ մեծ⁷⁵: **Etym.=arab., pers.** تکرار takrār 'repeat, repetition, duplication, frequency':

45. **Թամասուկ** t'amasuk, Թամասոք, գ., Մուրհակ, պարտատրագիր: Պարոն Աետին չորս հարիւր թամանի թամասուկն տայք խանին մկազում⁷⁶: **Etym.=arab. Pers.** تمسك tamasok, turk. temessük, 'obligation, bond, promissory note':

46. **Թանճարա** t'ančara ո., Կաթսա, մեծ աման Աստուած արհնէ Ամիրճանէց պառան. մին թանճարա [երեստ Ար. Յակրայ]⁷⁷: **Etym.=turk. tencere** < pers. تنگيره/تنگره: 'boiler, saucepan, cooker, caldron, copper':

⁶⁹ Թուլթունցի, էջ 303, 308. տե՛ս՝ Պողոսեան, էջ 72

⁷⁰ Մանր ժամանակագրութիւններ, հրք. I, էջ 227. տե՛ս՝ Պողոսեան, էջ 73:

⁷¹ Սեբաստացի, էջ 94. տե՛ս՝ Պողոսեան, էջ 73:

⁷² Դիան Նոր Ջուղայի, էջ 63. տե՛ս՝ Պողոսեան, էջ 75:

⁷³ Սեբաստացի, էջ 106. տե՛ս՝ Պողոսեան, էջ 75:

⁷⁴ Թուլթունցի, էջ 305. տե՛ս՝ Պողոսեան, էջ 76:

⁷⁵ Թուլթունցի, էջ 310, 316. տե՛ս՝ Պողոսեան, էջ 76:

⁷⁶ Դիան Նոր Ջուղայի, էջ 92. տե՛ս՝ Պողոսեան, էջ 77:

⁷⁷ Փափագեան, էջ 201. տե՛ս՝ Պողոսեան, էջ 77:

47. **Լէշկեր** lešker, n., Լէշ՝ դիակ ուտող (մականոն): Այս Բաքըր փաշայա զխօջայ Ալխասն կախեսաց ի փայտէ, որոյ մականոն Լէշկեր ասէին⁷⁸: Հմմտ. Լաշ laš, ‘carriion, Լեշ, մեռելոտի; 1. Սատկած կենդանի, կենդանու դիակ, գէշ: 2. (անարգական) Մարդու դիակ, մեռելոտի’. Etym.=turk. لاش laš, pers. لاشه laš⁷⁹, laši, laššâ(id)⁸⁰:

48. **Լուլոյի** lulu ա. (բժշկ.) Մարգարտանման: Պասասիրն. Գ ցեղ կու լինի. Ա մանր սիկիւներ, եւ որ տաճիկն լուլոյի կասէ: Այն սունկն, որ լուլոյի կասեն, սավտայի մօտ է⁸¹: Etym.= arab. لولو lulu «մարգարիտ», ‘a kind of plant (mushrooms), pearl, nacre, bdellium’:

49. **Խազապետր** xazatetr, գ. Խազագրոած տետր՝ գիրք: Այս խազատետրս Տէր Սարգիս եպիսկոպոսի է⁸²: Etym.= arab., pers. خط xat ‘line, script, streak, writing, track, handwriting’ + arm. tetr. ‘notebook, book’:

50. **Խազմասէր** xazmasēr, ա. Կոռասէր, խոովարար: Խազմասէրքն եւ խոովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան... գումարտակ լինէին⁸³: Etym.= arab. خصم xaxm ‘enemy’ += arm. sēr. ‘rebellious, rebel, mutinous, seditious’:

51. **Խալբալուել** xalbalvel, Կրդովել, խոովուել. «մաղել, վրդովել, վտանգել», Անօրէնքն կու խալբալուին, միջակտոր կու լինին⁸⁴: Etym.=pers. qarbal غریبال «մաղ» ‘coarse sieve, corn sieve, ‘get upset’, խարբալել ‘to riddle or sift’:

52. **Խբդի** xbdî, գ., Խբչականակ Ղայտի: Կային հոռոմք, խբդիք, ֆոանկք, բայց հայր՝ ոչ⁸⁵: Etym.= arab., pers. قبطى ‘Coptic, Egyptian, gipsy’:

53. **Խէթրիշէրիֆ** xet’išerîf, գ. Հէտի Շէրիֆ Հրամանագիր: Մինչեւ Ըստամալոյու փաթըրկութիւնն խէթիշէրիֆ մունըպունճայ չի լինի⁸⁶: Etym.= pers. خط شريف xat’e šarîf ‘decree, ordinance, rescript’:

54. **Խէրն փեսնել** xêrn tesnel, bonté՝ Օգոստ քաղել՝ ստանայ, շահ ունենայ: Գալուստ վարդապետն էառ, զոր բարեաւ եւ ուրախութեամբ վայելեցել եւ խէրն տեսնու⁸⁷: Etym.= arab., pers. خیر xayr ‘goodness’:

⁷⁸ Աղանեսնց, էջ 107. տե՛ս՝ Պողոսեան, էջ 88:

که ملک روی زمین پیشان نیرزد لاش . سعدی .

⁷⁹ بدین زمین که تر بینی ملوک طیماتند

<http://www.nosokhan.com/library/Topic/OCHK>

⁸⁰ Karst, *Wörterbuch des Mittelarmerischen* (Handschrift):

⁸¹ Սեբաստացի, էջ 122-23. տե՛ս՝ Պողոսեան, էջ 88:

⁸² Աղանունի, էջ 470. տե՛ս՝ Պողոսեան, էջ 92:

⁸³ Դարիժեցի, էջ 273. տե՛ս՝ Պողոսեան, էջ 92:

⁸⁴ Эзос, էջ 155. տե՛ս՝ Պողոսեան, էջ 92:

⁸⁵ Սիւնոն Լեհացի, էջ 213. տե՛ս՝ Պողոսեան, էջ 95:

⁸⁶ «Դիւան Սուրբ Յակոբայ», *Սիոն*, 1930 նոյեմբեր - 1941 Յուլիս-Օգոստոս, էջ 315. տե՛ս՝ Պողոսեան, էջ 96:

55. *խորոզխոս* *xoroxhos*, գ. Աբլորական: Կէս գիշերուն ծայն հանեցին/խորոզխոսուն թրատեցին⁸⁶: *Etym.= pers.* *خروس* *xorūs* 'Rooster' «քաղաղ» + *arm. xos*. Հմմտ. *خروسخون* *xorūsxūn* 'Early morning':
56. *Հախէն գալ* *haxēn gal*, պատժել, հարցերը լուծել: Զգողն քո ցոյց տո՛ր մեզ, որ մենք հախէն գամք⁸⁷: *Etym.= arab.* *حق* *haqq*, *pers.* *حق* *haqq* 'Իրաունք', 'right, title, fee, duty, moral obligation, truth, God, just, true, legitimate', 'to punish, solve problems':
57. *Հախիսայ* *haxisa*, գ., 'part, section, piece' Հասանելիք բաժին: Դազարի Հովիկի հողն... եւ այլ հախիսայ որ ունի ի վերայ մեր, ներսն հսապէցինք⁸⁸: *Etym.= arab.* *حق* *haqq*, *pers.* *حق* *haqq* 'Իրաունք', 'right, fee, duty' + *turk. isa*:
58. *Համշահրին*, *n.* *hamsāhri*, Համաքաղաքացի: Համշահրին - ի մի քաղաքէ՞⁸⁹: *Etym.=pers.* *همشهری* *hamsāhri* 'fellow-citizen':
59. *Հէօճճէթ* *heoǰǰet*, Հոճաթ. *Հիւճէթ* *hyuoǰet*, գ. Դանշաթուղթ: Գոյ մի հէօճճէթ, յորոյ վերայ զնոյն նսմերայն եղաք: Հէօճճէթ վասն Բ եւ Գ նսմերայի մաղազայիցն: Հիւճէթ ցոյց տոաք, նայ տիրութին արա՞⁹⁰: *Etym.= arab.* *حجة*, *حجت* *hojā*:
60. *Հսաբն փալ* *hsabn tal*, Հաշիւը տալ, հաշուետուութիւն ներկայացնել: Սայ վերայկացու դրեց... Ոհան-բաբէն, որ սարքարութիւն անէ, հսաբն տայ Շմաունի⁹¹: *Etym.=arab., pers.* *حساب* *hesāb* 'account, arithmetic, calculation':
61. *Հսապէլ* *hsapel* Հաշուել: Այլ հախիսայ որ ունի ի վերայ մեր, ներսն հսապէցինք⁹²: *Etym.=arab., pers.* *حساب* *hesāb* «հաշիվ» 'account, arithmetic, calculation, counting, tally, score':

⁸⁷ Կայտաճարեր եւ փոքրասկան այլ գործարքների վերաբերեալ արխիւային վաւերագրեր, *պրակ I*, կազմ.՝ Յար. Արրահամեան, Մատենադարան հրատ., Երեւան, 1941, էջ 94. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 96:

⁸⁸ Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, *հրք. II*, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 320. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 99:

⁸⁹ Յակոբ Կարնեցի, *Տեղագիր Վերին Հայոց (իշխարակարան ժէ դարոյ)*, *Վաղարշապատ*, 1903, էջ 56. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 113:

⁹⁰ Յիշարակարան *Սանահնոյ*, էջ 148. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 113:

⁹¹ Պօղոսեան, էջ 115:

⁹² «Ժէ դ., Երոսաղեմի հայոց պատրիարքութեան դիւանական փաստաթղթեր» (տառնց էջահամարների). նաեւ՝ «Ձուար Իլիէրճի Օղլու քահանայի ճանապարհագրութիւն եւ ովստ յերուսաղէմ», *Բազմավէպ*, 1867, էջ 131. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 122:

⁹³ *Չաքարիա Ազովեցու Օրագրութիւնը*, ԱՐՄՖԱՆԻ հրատ., Երեւան, 1938, էջ 82. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 126:

⁹⁴ Յիշարակարան *Սանահնոյ*, էջ 148. տն՝ս՝ Պօղոսեան, էջ 126:

62. **Ղանգրակ qantak**, *n.*, «խրամ, փոս, պարիսպների առաջ փորոսած փորը»: Մուսրովն դանտակի փորել էին, ամրոցնի շինել եւ առ լերամբ բանակ բանակ նստել: Դիզել էին բլրոնի իբրեւ դանտակ: **Etym.= arab.** خندق xandaq 'ditch, trench, moat', *M. pers.* گندک **kandak**, *pers.* کده **kanda** «փորոսած»⁹⁵:
63. **Ղապիմ fatim**, Հին, նախկին: ԶԴարքն դատիմի կայր եւ Պարսից խլած եւ զԵպիսկոպոսի զեղն, որ հաստատ կայր նախնեաց մերոց⁹⁶: **Etym.=arab.**, *pers.* قديم qadim 'ancient, old':
64. **Ճաահիրեղէն čavahireqēn**, *գ.* Գոհարեղէն, թանկագին քարեր: Տեսաք զեղեցիկ շինածք՝ ոսկեղէն ճաահիրեղէն⁹⁷: **Etym.=arab.** javaher *pers.* جوهر **gohar** 'gem, jewel, jewels, gems, rock' «զոհար». *Sing. arab.* جوهر **Johar** 'essence, substance, nature, spirit, being':
65. **Ճելալութիւն čelalut'yun**, *n.*: Շատ անօրէնութիւն եւ չարիք եւ ճելալութիւն արել էր, պէկլէրպէկիք սպաննել էր⁹⁸: **Etym.=turk.** Jelali 'majesty' «խոռվարար, ապստամբ» < *arab.* جلال 'glory, masculine, dignity, magnificence, pomp, stateliness':
66. **Ճէտվէ četvel**, *n.* Աղիասկ: Հարցեալ եւ ժողովեալ անհամար մեկնութիւն եւ Ճէտվէ աղիասկը⁹⁹: **Etym.=arab.** *pers.* جدال **Jadval**, 'chart, edging, puzzle, scheme, table', *turk.* Jedvel:
67. **Մարզպիկ marzpiik**, *n.*, փոքր մարզպան: Զկնի Վարդայ Վահրամ մարզպիկն մարտիրոսացաւ¹⁰⁰: **Etym.=pers.** مرزبان **marzbān** 'border guard, frontier official frontier controller' «սահմանակալ, կուսակալ», *M. pers.* marzipan composed of marz «մարզ, գավառ» +-pān:
68. **Մլազում mlazum**, *n.* molāzem. սպասատր, թիկնապահ, ընկերակից: Պարոն Աւետին չորս հարիւր թումանի թամասովն տայք խանին մլազումն¹⁰¹: **Etym.=arab.**, *pers.* ملازم **molazem** 'Attendant, Collateral, Companion, Concomitant, Escort, Retainer, Satellite':

⁹⁵ Լեհացի, էջ 372. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 129. նաեւ՝ Karst, *Wörterbuch des Mittelarmenischen*:

⁹⁶ Յիշատակարան Սանահնոյ, էջ 113. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 129:

⁹⁷ Մահլեթի Շահմուրադի, էջ 315. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 131:

⁹⁸ Մանր ժամանակագրութիւններ, *հպր. I*, էջ 226. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 131:

⁹⁹ «Աւետիք Տիգրանակերտցի, Տէֆթեր գիրք:- Աւետիք Պաղտասարեան ընթերցող Տիգրանակերտցի» (յօդուածի հեղինակն ամէնայն հաւանականութեամբ Ղևտնդ Ալիշանն է), *Քազմապէս*, 1897, էջ 318. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 131:

¹⁰⁰ Սգեփանտոսի Ռօջրայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, *հրատ.* Հ. Ոսկեան, Վիեննա, 1964, էջ 70. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 135:

¹⁰¹ Դիասն Նոր Ջուղայի, էջ 92. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 139:

69. *Մորվարիտ* murvarit, n. Մորվարիտ, որ է մարգարիտ¹⁰²: Etym.= pers. مروارید morvārid 'pearl, Morvari' < Lt. Margarita:
70. *Յեթիմ yet'im*, n... Որք: Ջանում, եղբա՛րք, ձեր յեթիմէ, էտ հասակադ ձեզ ադի մեր, վեր Աստուած ունի, վայր՛ ձեզ¹⁰³: Etym.= arab., pers. یتیم yatim 'orphan':
71. *Նաղշանկար* naqšankar, Նախշազարդ: Քարինք հիատալք նաղշանկարք/Կէ գիշերուն ճայն հանեցին/Խօրոզխօսուն թրատեցին¹⁰⁴: Etym.= pers. نقش و نگار naqšongar: 'Ornament, flamboyant, design, pattern':
72. *Նարդովան* nartvan, n., Սանդուղք, stair': Այն տեղէն գնացաք ի պախչան. առաջին նարովանն կայր ե հավուզ ջրով¹⁰⁵: Etym.= pers. نردبان nardebān 'ladder, staircase':
73. *Շան հալ* šan hal, 'torment', Տանջանք: Հենց որ Իզմիրէն դուրս եկի, սելափ ըռաստ եկինք. շան հալ քաշեցի¹⁰⁶: Etym.= arm. šun + arab., pers. حال hāl 'circumstances, condition, expression':
74. *Շհար* šhar, n., Շահար, քաղաք: Այս միջոյնս Գանջու շհարն եւ մեր եմք մնացեալ, իրար հետ լաւ եմք¹⁰⁷: Etym.= pers. شهر šahr 'city':
75. *Շուխան* šuntan, n., Սուլթան-շունթան: Ի ՌՂԹ թովին սպանին ըզշունթան Իբրահիմն եւ եղին զսուլթան Մահմատն¹⁰⁸: Etym.= arab. سلطان solṭān 'sultan, king, sovereign':
76. *Ռազամ* raqam, Ռազամ: Հանդերձ թագաւորական ուղղաման.. եւ ի մէջ բազում հաստատուն մահաւրնեքով, նզովիք եւ մուշակայիք գալոց են եւ թողոքելոց են ի դրունս արքայի¹⁰⁹: Etym.= arab., pers. رقم raqam, pl. أرقام arqam. 'figure, digit, character, writing, signature, kind, brand, grade':
77. *Ռամանի* ramani, ըրաման, n. Նոան գոյն: Ըոզիանին մէկ մթղալ ի Հնդստան ԲՃ ֆլօրի գին ունի, ուամանին (գրչ. ըրամանին) այլի այն գինն է¹¹⁰: Etym.= pers. رومانی romāni 'Pomegranate color, red':
78. *Սահաթ* sahat, ժամ: Աշխարհ եկաւ կիրակի կէս գիշերն յետ, որ կիրակի կու լուսանայ, Թ սահաթ եւ կիսուն¹¹¹: Etym.= pers. ساعت saa't 'hour':

¹⁰² «Բժկարան», էջ 184բ-239ա, ժէ դարի վիշաքակարաններ. նաեւ՝ ՄՄ 6275, 214ա. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 142:

¹⁰³ Դիան Նոր Ջողայի, էջ 50. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 145:

¹⁰⁴ Ուշ միջնադարի, հար. II, էջ 314. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 149:

¹⁰⁵ Մահրեսի Շահմուրափի, էջ 316. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 150:

¹⁰⁶ Ազուլեցի էջ 45. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 155:

¹⁰⁷ Զօօօ, էջ 420. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 157:

¹⁰⁸ Մանր ժամանակագրութիւններ, հար. II, էջ 395. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 158:

¹⁰⁹ Դիան Նոր Ջողայի, էջ 110. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 177:

¹¹⁰ Դարիժեցի, էջ 452. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 177:

79. *Սահաթարուն* sahat'atun, n., ժամացոյց կրող աշտարակ: Յաջակողմն կայր սահաթաունն մի, բարձր քան գաշտարակ¹¹²: **Etym.=pers.** ساعت saa't 'clock tower' + arm. tun. ժամատուն:
80. *Քարդավար* k'ak'ulavor, ա., Խոպուպար: Կայր քարդավար հա մի, որ ՁՃ դոտուշի էր, որ այն հան օրն դոտուշ մի խարջ ունէր¹¹³: **Etym.=pers.** کاک kakol 'crest':
81. *Քէղոդայ* k'et'quday, գ. Քանզի ընթեանոր երկրի քահանայիցն, տանտերանցն, երեսփոխանացն, քէղոդոցն եւ առհասարակ ժողովդեանն ասես¹¹⁴: **Etym.=pers.** کخدا kaxdā 'chief, village chief, ruler, commander', Տանտէր, գիւղապետ:
82. *Քէպպպիկ* k'ēpapik, գ., Քյարաբ: Տարուկ քէպպպիկ կէ'ր եւ քէֆ հասուր. աչքը շէշ ու փէշ լինի, շլըր մլըր¹¹⁵: **Etym.=arab., pers.** کباب kabāb 'kebab, kebab, barbecue':
83. *Քոլունկ* k'ulunk, գ., Մուրճ - քոլունկ¹¹⁶: **Etym.=pers.** کولنگ kolang 'pickax, pickaxe':
84. *Քօմակ անել* k'omak anel, Օգնել, աջակցել: Իմ սիրելի որդի Յոհան վարդապետին թեւ եւ թիկունք լինիս, զինչ տեղ խօսելէ քան լինի' նորա քօմակ անես: Մեզանից քօմակ էք անում¹¹⁷: **Etym.= arab., pers., turk.** کمک komak 'help, assistance, aid, helping, support':

Հանդիպում են մի շարք փոխառութիւններ, որոնց ծագումը համարուել է թուրքերէն, սակայն նման բառերը օգտագործում են արաբերէրն, պարսկերէն եւ թուրքերէնում:

85. *Էսիր* esir, n., եսիր, Գերի, ծառայ: ԽՌ էլ էսիր են տարել ղզպաշիցն: Այս էսիրներն որ տեղս գայ, հրամանք առես թագաւորական առն գմրուկ չառնեն էսիրայ գլովս ՁՃ¹¹⁸: **Etym.= arab. pers.** اسير, turk. esir 'captive, prisoner, slave, caittiff':
86. *Թատարիք* t'atarik', Թատարուք n., Պատրաստութիւն: Մեզ խապար երբեր, թէ օսմանլուն կոռի թատարիք ունի¹¹⁹: Թատարուք տեսաք, որ գնանք Նիազով էլչուն դէմ, որ մեզ այդ կողմն ճամփէ, Իսրայէլի նէզիր

¹¹¹ *Մանր ժամանակագրութիւններ, հպր. II*, էջ 294. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 178:

¹¹² Աիմէն Լեհացի, էջ 60. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 178:

¹¹³ *Մահրեսի Շահմուրափի*, էջ 317. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 216:

¹¹⁴ *Դիսան Նոր Ջողայի*, էջ 62. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 217:

¹¹⁵ «Աւետիք Տիգրանակերտցի», էջ 319. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 217:

¹¹⁶ «Ժողովաձոյ, Բաղիթք», *Ճէ դարի յիշարակարաններ*, էջ 145բ. նան՝ ՄՄ, 1127. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 218:

¹¹⁷ *Դիսան Նոր Ջողայի*, էջ 62 եւ 308, էջ 357. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 219:

¹¹⁸ 308, էջ 258, 370. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 73:

¹¹⁹ 308, էջ 257. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 77:

պուղարն¹²⁰: **Etym.=arab. pers.** تدارك *tadārok*, **turk.** tedarük, 'preparation, procurement, provision':

87. Թարեղ t'areq, Թարիղ, ո., Թռական, ամսաթի, նաեւ՝ կարգ, սովորութիւն: Այլ եւ այս թարիղէս մին փոքր յառաջ օսմանլուէն ՁՌ մարդ մեզ վերայ դոշուն եկին¹²¹: **Etym.=arab. pers.** تاريخ *tāriḫ*. **Turk.** tariğ, 'date, history, era':

88. Թէրիր անել t'ēhirir anel Յուցակագրել, մարդահամար անել: ՌՂԲ Ջաֆարն թէրիր երա Արզրումայ փաշայխ եւ օգօստոս ամսոյն մահ անկաւ¹²²: **Etym.= arab., pers.** تحریر *tahrīr*, **turk.** tehrir 'writing, inscription, record, writ':

89. Իմդադեայ imdadya, գ., Իմտատ imtat, Իմտատիայ imtattia Օգնութիւն: Ո՛չ միայն հասարակօրէն գնովիրակութիւնն խնդրեմք յայս տարի ի ձէնջ, այլ յատկապէս զիմտատիայ¹²³: **Etym.=arab. pers.** امداد *emdād*, **turk.** lmdat:

90. Խարճագնացութիւն xarčagnac'ut'yun գ. Ծախսատարութիւն: Ես՝ Գէորդ անարժան եւ յոգնամեղ վարդապետս... բազմաշխատ տընութեամբ յորդաջան աշխատութեամբ եւ յոլով խարճագնացութեամբ ետու շինել¹²⁴: **Etym.= arab. pers.** خرچ *xarj*, **turk.** harç «ծախս» 'expense':

91. Հասըլ հարճ hasl harč. գ., 'Income tax', Եկամտահարկ: Եւ ետ այնորիկ կաֆացուս խարճան եկաւ, հասըլ հարճ կասեւ, անունն անիճած ու զինքն մարդոյ զլուխ...¹²⁵: **Etym.= arab.** حاصل *ḥaṣil* 'produce, result, product', «արդիւնք, բերք», **arab.** خرچ *xarj*, **turk.** harç 'expense, costs, cost' «ծախս»:

92. Հափս hap's, գ., 'imprisonment, retention, prison' Բանտ, բանտարկութիւն: ԼԳ հոգի մանզուլ փաշային ծառաներուն հափսէն ելան ցորեկով, բարով մտան նաւըն, ելան գընացին, քաղքին մարդիք ապուշ մնացին¹²⁶: **Etym.= arab. pers.** حبس *ḥabs* **turk.** haps, hapis:

93. Վարիս varies, ո., Ժառանգ: Ես՝ Աղա Խաչիկս... իմ յօժարութեամբն եւ այլ վարիսներովն այս հինգ գիրս ընծայ եւ վախմ արարաք¹²⁷: **Etym.= arab., pers.** وارث *vareṯ*, **turk.** varis, mirasçı 'heir, inheritor, legatee':

¹²⁰ Զօօօ, էջ 318. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 77:

¹²¹ Զօօօ, էջ 422. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 78:

¹²² *Մանր ժամանակագրութիւններ, հպր. I*, էջ 242. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 79:

¹²³ Գէորդ Տէրվարդանեան, «Ազուլիսի Ա. Թովմա Առաքելի վանքում գտնուած նոփրական կոնդակներ», *Էջմիածին*, 2012:ԺԱ, էջ 93. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 84:

¹²⁴ *Մանր ժամանակագրութիւններ, հպր. I*, էջ 311. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 94:

¹²⁵ *Մանր ժամանակագրութիւններ, հպր. I*, էջ 221. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 117:

¹²⁶ *Մանր ժամանակագրութիւններ, հպր. I*, էջ 216. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 120:

¹²⁷ Յ. Քիլոտեան, *Ջուղայնցի խօջայ Նազար եւ իր գերդաստանը*, ա.տ, ա.թ., ա.վ., էջ 10. տե՛ս՝ Պօղոսեան, էջ 191:

**ETYMOLOGICAL COMMENTS ON A NUMBER OF WORDS IN THE *NORAHAYT
BAĀER VALAŠXARHABAYAN ALBIURNERUM (16-18TH CENTURIES) DICTIONARY***

(Summary)

MOHAMMAD MALEKMOHAMMADI (MalekMohammadi@em.uni-frankfurt.de)

Norayr Poghosyan's dictionary, *Norahayt baer...* is a valuable work that follows the tradition of lexicographers who made huge contributions in the field of Armenian lexicography. This dictionary presents the native and borrowed words used by Armenians and found in 16-18th century Armenian manuscripts.

The article focuses on some 268 post-*grabar* Armenian (known as *midjin hayeren*, Middle Armenian) words borrowed from Arabic, Persian and Turkish, which are presented in the said dictionary. The article notes that the given origin of some of these borrowings are not correct or are not mentioned in the dictionary and suggests their precise sources.

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ
«ԿՈՎԿԱՍԵԱՆ» ՎԱՐԿԱԾԻ ՇՈՒՐՁ
(պատմալեզուաբանական քննություն)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ (vz.petrosyan@ysu.am)

ՄՈՒՏՔ

Դեռևս պատմահամեմատական հայերենագիտության ձեւաւորման սկզբնական փուլում՝ ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբին, նրա երկու նշանատր ներկայացուցիչներ՝ Հայնրիխ Հիւբշմանը եւ Անտուան Մէլէն, հայերէնի հալաշփական հնչոյթներին՝ ջ [j], ճ [ʒ], չ [ç], ձ [ʒ], ծ [c], ց [c'], վերագրել են կովկասեան, մասնաւորապէս՝ քարթուլեական ծագում: Ըստ Հայնրիխ Հիւբշմանի՝ «... հայերէնը ... իր վրայ կրում է կովկասեան ազդեցութեան աչքի զարնող հետքեր, յարկապէս իր հնչինային համակարգում, որը վրացերէնի հետ գրեթէ լրիւ համընկնում է»¹ (ընդգծ. իմն է - Վ.Պ.): Իր *Les Dialectes Indo-Européens* աշխատութեան մէջ այդ միտքն անլի որոշակի կրկնել է Մէլէն՝ հիմք ընդունելով առաւելապէս այն իրողութիւնը, որ հայերէնին եւ վրացերէնին բնորոշ են հպակականներ (= պայթականներ) եւ հպաշփականներ (= կիսապայթականներ) նոյնական համակարգեր՝ *խոսկերի, շնչեղ խոսկերի եւ ձայնեղների եռակի շարքով*²: Հայերէնի հպական բաղաձայնների առաջացման հարցում կովկասեան լեզուների - այդ թում՝ վրացերէնի - ազդեցութեան գործօնը, իհարկէ, բացառում է, որովհետեւ ակնյայտ են ընդհանուր հնդեւրոպական լեզուի եւ հ.-ե. հին լեզուների հետ հայերէնի հպականների համակարգային եւ ծագումնաբանական առնչութիւնները³: Կարծում ենք՝ տուեալ դէպքում Մէլէն նկատի ունի միայն հալաշփականները (*Esquissen* նա հին հայերէնի հալաշփականները քննում է հպականների հետ՝ իբրեւ դրանց տարատեսակ), որովհետեւ բուն հպականների ծագման առնչութեամբ նրա դատողութիւնները միանշանակ են. հին հայերէնի հպական բաղաձայնները, որպէս համակարգային իրողութիւն, սերում են հպականների հնդեւրոպական համակարգից⁴: Մէլ այլ աշխատանքում, վկայակոչելով հայերէնի եւ վրացերէնի հնչոյթային համակարգերի մեծ ընդհան-

¹ Հայնրիխ Հիւբշման, *Հայերէնի քերականութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2003, էջ 396 եւ յջրդ.:

² A. Meillet, *Les Dialectes Indo-Européens*, Փարիզ, Librairie de la Société de Linguistique de Paris, 1950, էջ 138 (էջ 95ի ծնթգր.):

³ Վարդան Զ. Պետրոսեան, «Հպական բաղաձայնների հնդեւրոպական համակարգը», *ՎԷՄ*, 2019:2(66), էջ 107-36. նաեւ՝ Վարդան Պետրոսեան, «Հին հայերէնի ձայնեղ հպականների տարածամասնակեայ բնութագրերը», *Բանբեր Երևանի Համալսարանի. հայագիտութիւն*, 2019:1(28), էջ 39-48:

⁴ A. Meillet, *Esquisse d'une Grammaire Comparée de l'arménien Classique*, Մխիթ. տպարան, Վիեննա, 1936, էջ 25-38:

րութիւնը, նա գրեթէ հայերէնին վերագրում է խառնածին բնոյթ՝ առանց այդ բառը գործածելու⁵: Հայերէնը խառնածին, անելի ճիշտ՝ երկշերտ լեզու է համարել նաեւ Գրիգոր Ղափանցեանը⁶: Վերջինիս դէպքում դա կարելի է օրինակաւ համարել, եթէ նկատի ունենանք հայերէնի ծագման եւ բնոյթի վերաբերեալ նրա ինքնատիպ պատկերացումներն առհասարակ:

«ԿՈՎԿԱՍԵԱՆ» ՎԱՐԿԱԾՆ ԸՍՏ ՂԱՓԱՆՑԵԱՆԻ

Հայերէնի հպաշփականների առաջացման հարցում Ղափանցեանի պատկերացումներում առկայ է որոշ անհետետողականութիւն. մի կողմից՝ նա հայերէնի սուլաշական (sibilant), այսինքն՝ ոչ միայն հպաշփական՝ ձ, ծ, ց, ջ, ճ, չ, այլեւ՝ շփական՝ գ, ս, ժ, շ, հնչիւններով հարուստ բաղաձայնական համակարգի կազմատրումը բացատրում է քարթուէլական լեզուների եւ բարբառների «անդրադարձով»⁷, այսինքն՝ ազդեցութեամբ, միա կողմից, սակայն, այդ հնչոյթները եւս դիտարկում է «հայ լեզուի հնդեւրոպական նստուածքի (բաղկացութեան)» տեսանկիւնից⁸, այն դէպքում, երբ հայերէնին նա վերագրում է ասիանիկ ծագում⁹: Հայերէնում եւ կովկասեան ու սեմական հին լեզուներում, նրա կարծիքով, հպաշփական հնչիւնների՝ «որակական-ֆիզիոլոգիական եւ քանակական (տեսական) կողմերով» վաղ անցեալից եկող մերձատր կամ նոյնական բնոյթը, ընդհանուր լեզուական այլ բաղադրիչների առկայութեան պարագայում, *այդ լեզուների միջեւ ծագումնաբանական-պարմական առնչութիւնների վկայութիւն է (ընդգծ. իմն է - Վ.Պ.): Այդ հնչիւնները բացակայում են հնդեւրոպական հին լեզուներում՝ «չխօսելով արդէն նրանց հոշակատր «նախալեզուի» մասին»¹⁰: Ըստ Ղափանցեանի. 1) հայերէնի եւ քարթուէլական լեզուների առնչութիւնները հասնում են մինչեւ Հայաստան-Ազգիի գոյութեան ժամանակները (Ք.ա. Բ. հա-*

⁵ Անտոան Մէլէ, «Հայերէն Լեզուն»՝ Հայագիտական ուսումնասիրութիւններ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1978, էջ 17-18:

⁶ Գ. Ա. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն. իին շրջան, Հայկ. ՍՍՐ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 72:

⁷ Նոյն:

⁸ Նոյն, էջ 231-33:

⁹ Նոյն, էջ 40:

¹⁰ Գ. Ա. Капанцян, “К Происхождению Армянского Языка”. Историко-Лингвистические Работы (Հայոց լեզուի ծագման շուրջ, Պատմալեզուաբանական աշխատութիւններ), հոդր. 2, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 222: Ե՛իշտ է, որ ընդհանուրհնդեւրոպական լեզուում հպաշփականներ չեն վերականգնում, բայց ճիշտ չէ, որ այդպիսիք չեն ունեցել նաեւ հին հնդեւրոպական լեզուները. սուլաշական հպաշփականներ ունեցել են սաբրոմ խմբի բոլոր հին լեզուները, դրանցով հարուստ էր, մասնատրապէս, հին հնդկերէնը: Աւելին, հպաշփականներ ունէր նաեւ կենտրոն լեզու հին յունարէնը:

զարամեակի կէտերը), 2) Հայասան հայկական հնագոյն պետական կազմատրումն էր, եւ հայասցիները հայ ժողովրդի նախնիներն էին, 3) հայասցիների լեզուն «ասիանիկ», այն է՝ փոքրասիական բնիկ լեզուներից էր, ինչպէս եւ քարթուկականները, շումերերէնը, աքադերէնը եւ այլ լեզուներ (խալիփների/խալիբների, կարդուփների, տաոխների, փասիանների, սարամատացիների, մաբերի/մարդերի են.)¹¹, որոնք յիշատակում են ինչ աշխարհի պատմագրութեան մէջ (Հերոդոտոս, Եւդոքսոս, Քսենոփոն, Ստրաբոն եւ ուրիշներ), բայց որոնցից շատերի մասին մարդկութեանը յայտնի չէ ոչինչ կամ շատ քիչ բան է յայտնի՝ դրանցով գրաւոր յուշարձանների բացակայութեան պատճառով, 4) հայերէնը «Հայասա-Ազգի ցեղադաշնակցութեան» կազմում կարող էր սերտ շփումների մէջ լինել, մասնաւորապէս, իիւսիսից իրեն սահմանակից «ասիանիկ» վրացերէնի հետ¹²: Ըստ այդմ, անուանի գիտնականը հայերէնում սուլաշնական հնչիւնների առաջացումը համարում է փոքրասիական, մասնաւորապէս՝ կովկասեան երեսոյթ, որպէս քարթուկական լեզուների հետ հայերէնի եթէ ոչ՝ ծագումնաբանական ընդհանրութեան վկայութիւններից մէկը, ապա՝ առնուազն հայ ժողովրդի կազմատրման փուլում այդ լեզուների՝ հայերէնի վրայ ունեցած ազդեցութեան արտայայտութիւններից մէկը: Ասուածի մասին է վկայում «կովկասեան հնչիւնական դրոպիանից» իրանեան (հնդեւրոպական - Վ. Պ.) օտերէնի ազդուած լինելու մասին նրա միտքը¹³: Ընդ որում, ըստ Ղափանցեանի, հայ ժողովրդի կազմատրման փուլում նրա մէջ ծուլուել են նաեւ ուրարտացիները¹⁴ (հմմտ. «... իսկ յալարողները (= ուրարտացիները) մըսն հայ ժողովրդի կազմութեան մէջ, բռնելով Արարապը, այսինքն՝ ուրարտական ժամանակի նախկին ցեղամիութեան էթիունիի (էթիուփիի) տեղը»¹⁵), հնարաւոր է՝ նաեւ

¹¹ Յայտնի է, որ վերջին երեքը իրանական ժողովուրդներն էին, հետեաբար նրանց լեզուն հնդեւրոպական էր:

¹² Ղափանցեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 69-77:

¹³ Նոյն, էջ 72:

¹⁴ Ինչպէս Ղափանցեանը, այնպէս էլ ուրիշներ «ուրարտացի» նշանակութեամբ գործածում են եւ «ալարող», եւ «խարդ» անուանումները (Նիկողայոս Ադունց, *Հայաստանի պատմութիւն*, «Հայաստան», Երեւան, 1972. նաեւ՝ Յ. Մանանդեան, *Քննական պետութիւն հայ ժողովրդի պատմութեան, հպր. Ա.*, Երեւան, 1944, էջ 7-34): «Ալարող» անուանման ուշագրաւ ստուգաբանութիւն է առաջարկել ակադ. Գազիկ Սարգսեանը, ըստ որի՝ «ալարող» ձեւը կարող էր առաջանալ Մաճու > **Urartu**ի արամէական **ՐՐԻ**ի տարրնթերցման արդիւնքում՝ *Արարապ* > *Արարոպ*, այստեղից **ր/լ** հերթազայութեամբ՝ յունարէն ἀραρόδιο, որից էլ՝ «ալարող» ձեւի առաջացումը (Գ. Խ. Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը եւ հայերը» Բ. Ն. Առաքելեան, Գ. Բ. Ջահուկեան, Գ. Խ. Սարգսեան, *Ուրարտու-Հայաստան*, Հայկ. ՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1988, էջ 75):

¹⁵ Ղափանցեան, *Հայոց լեզուի ...*, էջ 71:

խեթական որոշ ցեղախմբեր՝ «... նկարի ունենալով նաեւ խեթերի հայացման հնարատրոփանները (12-7 դարերի ընթացքում)»¹⁶, որովհետեւ այդ ժողովուրդները կորցրել էին իրենց երբեմնի հզոր պետականությունները, իսկ հայ ժողովուրդը գերազանցապես կազմաւորում էր այն նոյն տարածքում, որը այդ գործընթացին նախորդող փուլում Ք.ա. Ժ.Ը-Ը դդ., զբաղեցնում էին խեթերը եւ ուրարտացիները: Հայ ժողովրդի կազմաւորման գործընթացում, Ղափանցեանի կարծիքով, իրենց գործուն մասնակցութիւնն են ունեցել նաեւ «ծովային ժողովուրդների» կազմում Բալկաններից փոքրասիական տարածաշրջան ներթափանցած *արմէններ* կոչուող հնդեւրոպական ցեղերը¹⁷: Ըստ նրա՝ հայերին «արմէններ» կոչել են մեղացիներն ու պարսիկները, որը յետոյ «յոյներից իւրացուելով տարածուեց ամէնուրեք»¹⁸:

Ղափանցեանի վերոնշեալ դատողութիւնների հիմքում հայերէնի՝ որպէս խառնածին կամ «երկշերտ» լեզուի մասին պատկերացումն է (իմմտ. «... հայոց նոր լեզուն, որի փայլուն վկայութիւնը մեր հին դասական լեզուն է («գրաբարը»), կազմուել է հայասցիների, խեթերէնի ու խոտա-ուրարտական լեզուների, ինչպէս եւ հնդեւրոպական մի (կամ միջանի) լեզուի խառնուրդով»¹⁹): Ընդ որում, թեպէտեւ «հայերէնը ուժեղ կերպով յագեցած է հնդեւրոպական լեզուական բաղադրիչներով, որոնք առերեսոյթ այդ լեզուին փայխ են ծագումնաբանօրէն խառնածին բնոյթ»²⁰, բայց եւ այնպէս՝ հայերէնի լեզուական նկարագրի համար բնորոշչը փոքրասիական բաղադրիչն էր (իմմտ. «... հայոց լեզուն իր փիպաբանական-կառուցումաձրային եւ սրադիւղ-գաղափարաբանական բազմաթիւ դրսեւորումներով կամ յայրկրութիւններով, անկասկած, անելի մերձենում է հին փոքրասիական (ասիանիկ), քան հնդեւրոպական լեզուներին»²¹): Այդ դրոյթը կրկնուել է նաեւ մէկ

¹⁶ Նոյն, էջ 30: Հմմտ. նաեւ. «Բայց հայասցի-հայերը իրենց արմաւական լեզուով, հայացնելով եփրարի շրջակայ բոլոր այդ ցեղերին, այդ թում՝ նաեւ խեթերին, իսկ անելի ուշ՝ Ուրարտուի ժողովուրդներին ու ցեղերին, բնականաբար, փոխառել են նաեւ բազմաթիւ բաներ, իսկ հնարատր է՝ նաեւ ձերեր, որ, ըստ իս, պէրք չէ որակապէս նոյնը համարել իրանականից, սիրիականից եւ ուրիշներից իւրազայ փոխառութիւնների հեց» (Գ. Ա. Կապանցյան, «Хайаса – Колыбель Армян», *Историко-Лингвистические Работы* (Հայասանի հայերի բնօրրան, Պատմալեզուաբանական աշխատութիւններ), *հրր. 1*, Հայկ. ՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1956, էջ 126):

¹⁷ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 32:

¹⁸ Նոյն, էջ 39: Ըստ Աղոնցի, սակայն, «Ἀρμένιος յունական ձեւը անելի հին է, քան պարսիկների *Armina*», որտեղ *-en*ը փոխուել է *-in*» (Աղոնց, էջ 322):

¹⁹ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 40:

²⁰ Գ. Ա. Կապանցյան, «К Происхождению Армянского Языка» (Հայոց լեզուի ծագման շուրջ), *հրր. Բ.*, էջ 212:

²¹ Կապանցյան, *К Происхождению*, էջ 216:

տարի յետոյ լոյս տեսած Հայասան հայերի բնօրրան աշխատութեան մէջ²²: Ուշագրաւ է նաեւ այն, որ ինչպէս հայերէնի հնդեւրոպական ծագման կողմնակիցները (Հրաչեայ Աճառեան, Յակոբ Մանանդեան, Գեորգ Զահուկեան), Ղափանցեանը եւ Ուրարտոյի (= Բիաինիի²³) բնակչութեան լեզուն չի համարել ոչ միայն նախահայերէնի դրսեւորումներից մէկը, այլեւ առհասարակ հնդեւրոպական լեզու չի համարել²⁴:

²² Հմմտ. «Քոնս հին հայերէն գրատր լեզուն իր հիմքում, ըստ իս, Հայասա-Ազգիի իշխող ցեղային լեզուների (կամ լեզուի) յերազայ մշակումը եւ զարգացումն է, որը է. դարում ենթարկուել է խոտա-ուրարտական փոփոխ լեզուների ուժեղ ազդեցութեանը (= խառնուելուն) Արմինա-Շուպրիա-Արզանենի փարածքներում» (Капануцян. Хайса, էջ 78):

²³ Իրենց երկիրն այդպէս են անուանել բիայնացիները (ուրարտացիները) (Գ. А. Меликшвили, Урартские Клиннообразные Надписи (Ուրարտական բեւեռագիր արձանագրութիւնները), ԽՍՀՄ ԳԱ հրատ., Մոսկուա, 1960, էջ 8. նաեւ՝ Գ. Բ. Զահուկեան, «Ուրարտերէնը եւ հայերէնը»՝ Առաքելեան, Զահուկեան, Սարգսեան, էջ 131): Ըստ Ղափանցեանի՝ «**Biaina** կամ **Biaini**» նշանակել է «**bia**-ցեղի երկիր» (Գրիգոր Ղափանցեան, Ուրարտոյի պատմութիւնը, ԵՊՀ հրատ., Երեւան, 1940, էջ 19):

²⁴ Ղափանցեան, Հայոց լեզուի, էջ 102-46: Ի տարբերութիւն Ղափանցեանի եւ առհասարակ «ուրարտերէն» կոչուած լեզուն հայերէն չհամարողների, անկի ուշ՝ Ի. դարի երկրորդ կէտերից սկսած, առանձին հայազէտներ փորձեցին ապացուցել հակառակ տեսակէտը, ըստ որի՝ ուրարտերէնը հայերէնի հնագոյն վիճակներից մէկն է, իսկ «Ուրարտուն»՝ Վանի կամ Արարատեան (Թագաւորութեան) ատուաբարբելական (արադական) անուանումը (Վահան Սարգսեան, Ուրարտական քաղաքակրթութիւնը եւ քանկերի նախահայրենիքի հարցը, «Սարգիս Խաչենց», Երեւան, 1988. նաեւ՝ Լեւոն Շահինեան, «Ուրարտու»՝ ստեղծածը, «Էդլլա», Երեւան, 1994): Ռաֆայէլ Իշխանեանի դիրքորոշումն այս առումով միանշանակ չէ. նրա կարծիքով՝ պետութիւնը՝ Ուրարտուն, անկի ստոյգ՝ Վանի կամ Արարատեան (Թագաւորութիւնը, հայկական էր, բնակիչները հայեր էին, քայք «ուրարտական» կոչուած արձանագրութիւնների լեզուն, այնուամէնայնի, հայերէն չէր, այլ խոտիերէնին մերձատր ցեղակից մի լեզու, որին նա տալիս է «նորխոտիերէն» պայմանական անուանումը (Ռ. Ա. Իշխանեան, Հայ ժողովրդի ծագման ու հնագոյն պատմութեան հարցեր, «Հայաստան», Երեւան, 1988, էջ 50-79. նոյնի՝ *Բնիկ հայերէն քառեր եւ հնագոյն փոխառութիւններ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1989, էջ 42-58. նոյնի՝ *Պարկերագարդ պատմութիւն հայոց, գ. I*, «Արեւիկ», Երեւան, 1989, էջ 40-48): «Ուրարտերէնագիտութեան» բնագաւառում մեծ վաստակ ունեցող Զահուկեանը, որ տասնամեակներ շարունակ զգուշատրութիւն է դրսեւորել «ուրարտական» արձանագրութիւնների լեզուի բնորոշման հարցում (Գ. Ե. Дзякян, Урартский и Индоевропейские Языки (Ուրարտերէնը եւ հնդեւրոպական լեզուները), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1963. նաեւ՝ Գ. Բ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 417-45. նոյնի՝ *Ուրարտերէնը եւ հայերէնը*, էջ 159-67), կեանքի վերջին շրջանում, ըստ էութեան, չքացառեց, որ այն կարող է ընթերցուել նաեւ հայերէնով, այսինքն՝ լինել հայերէնի հնագոյն դրսեւորումներից մէկը (Գեորգ Զահուկեան):

Իրականում էլ, ինչպես հին հայերէնին, այնպես էլ հին վրացերէնին բնորոշ էին սուպական և շլական հպաշփականների միեւնոյն երեք հնչոյթային կարգերը՝ ձայնեղ (հմմտ. ձ/ձ, ց/չ), խոլ (հմմտ. ծ/ժ, ճ/ճ) և շնչեղ խոլ (հմմտ. ց/ճ, յ/Ք)²⁵: Արդեօ՞ք նշուած զուգահեռը բաարար հիմք է հայերէնի հպաշփականների կազմատրոմը կովկասեան լեզուների ազդեցութեամբ բացատրելու համար: Եթէ հնդեւրոպական լեզուաընտանիքում հպաշփական հնչոյթներ ունենար միայն հին հայերէնը, նշուած հանգամանքը կարող էր, թերեւ, այդպիսի ենթադրութեան համար հիմքեր տալ: Բայց քանի որ, հայերէնից բացի, հպաշփականներ ունէին նաեւ.- ա) *սատրմ* (*satəm*) խմբի հին հնդեւրոպական միւս լեզուները՝ հնդարիականները (հմմտ. *c* [Ճ'] (= *h₁*), *ch* [Ճ'հ] (= *ǵ*), *j* [յ] (= *h₂*), *g* և *gh* [gh] (= *ǵʰ*)) հին հնդկերէնում, - ճ [Ճ'] (= *h₁*), *g* և *j* [յ] (= *h₂*), *g*)) հին (աքեմէնեան) պարսկերէնում, ամեստայում և պահլավերէնում²⁶), ընդհանուր սլաոնները և հին սլաոնները (հմմտ., - *ǵ* [Ճ'] (=

եան, «Ուրարտական արձանագրութիւնների ներածական բանաձեւերի հնարարը հայկական բնոյթի մասին», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2000:1, էջ 124-29):

²⁵ Ակակի Շանիձէ, *Հին վրացերէնի քերականութիւն*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱՀ, 1983, էջ 17-18:

²⁶ Т. Барроу, *Санскрит* (Սանսկրիտ), «Պրոգրես», Մոսկուա, 1976, էջ 66-111. նաե՛լ Т. Я. Елизаренкова, *Грамматика Ведийского Языка* (Վեդայերէնի քերականութիւն), «Նաուկա», Մոսկուա, 1982, էջ 64-71, նոյնի՛ «Санскрит», *Языки мира: Индоевропейские языки древнего и среднего периодов* (Սանսկրիտ, Աշխարհի լեզուները. Հին և միջին շրջանների հնդարիական լեզուները), «Ակադեմիա», Մոսկուա, 2004, էջ 31-36. նաե՛լ А. А. Зализняк, «Грамматический Очерк Санскрита» (Սանսկրիտի քերականական ակնարկ), В. А. Кочергина, *Санскритско-Русский Словарь* (Սանսկրիտերէն-ռուսերէն բառարան), «Ռուսկի եագիկ», Մոսկուա, 1978, էջ 788-98). նաե՛լ В. С. Расторгуева, «Древнеиранские языки», *Языки Азии и Африки* (Հին իրանական լեզուներ, Ասիայի և Ափրիկէի լեզուներ), *հզր. II*, «Նաուկա», Մոսկուա, 1978, էջ 16-22: Հին հնդկերէնի քերականութիւններում Ճ' (=յ) նշանակում է *տվ*, իսկ յ (=ջ)՝ *յով*: Իրանական և սլաոնական լեզուների քերականութիւններում լՃ' /յճի համար գործածում է Ճ գրանշանը, ըստ ամենայնի՛ այն պատճառով, որ այդ լեզուները տարբերակում են հպաշփականների մէկ կամ երկու շարք: Մենք հետեւում ենք միջազգային տառադարձական այբուբենին, ըստ որի՛ ճն հ. ծի համարժեքն է, ճն՛ հ. ճի, իսկ յն՛ հ. ծի (է. Բ. Աղայեան, *Լեզուաբանութեան հիմունքներ*, ԵՀ հրատ., Երեւան, 1987, էջ 302-3): Աճառեանը, հայերէնի *ջ*, *ճ*, չ հպաշփականների առնչութեամբ նկատելով, որ դրանց «վրայ նոր քարտուները անվարել են շնչեղ թրթռոն *ջ*՛, որով հայերէնը հասել է ճիշտ սանսկրիտի հարստութեան» (Հ. Աճառեան, *Լիակապար քերականութիւն հայոց լեզուի, հզր. Զ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 199-200), ըստ էութեան, պարզ խոլ ճ (ճի) հնչոյթային (հնչիւնական) արժեք է վերագրում հին հնդկերէնի ճիւ, այնինչ, ըստ սանսկրիտաբանների՛ այդ հնչոյթը եղել է ոչ շնչեղ չ [Ճ'] (Зализняк, էջ 788. նաե՛լ Елизаренкова, «Санскрит», էջ 31): Ինչ վերաբերում է «նոր քարտաների»

իյ. չ), Յ [j' a'ʒ'] (= իյ. ձ), և [c'] (= իյ. ց)²⁷, լիտուերենը (հմմտ. c [c'] (= իյ. ց) եւ ճ [ɟ'] (= իյ. չ))²⁸, ք) կենտրում (centum) խմբից՝ հին յունարենը (հմմտ. ζ [dz], ξ [ks], ψ [ps])²⁹, գ) համեմատաբար ուշ այդպիսի հնչյուն առաջացել է կենտրում խմբի լատիներենում՝ c ([c'])(<[k]), դ) ունեն ինչպես *սալրըմ*, այնպես էլ կենտրում խմբի ժամանակակից բազմաթիւ լեզուներ (ռուսերեն, գերմաներեն, իտալերեն, անգլերեն, իսպաներեն, բուլղարերեն, սերբերեն, լեհերեն, լատիշերեն, օսերեն, պարսկերեն, բելուջերեն)³⁰, ապա նշանակում է՝ հին հայե-

ջ' [ջ']ին, այսինքն՝ շնչել ծայնել հպաշփականին, մենք արդէն ցոյց ենք տուել, որ ինչպէս նոր բարբառներում, այնպէս էլ հին հայերէնում այն կարող էր լինել <Ջ> հնչոյթի դիրքային տարբերակ, այն է՝ ունենալ միայն հնչյունական, բայց ոչ՝ հնչոյթային արժէք (Վարդան Պետրոսեան, «Հին հայերէնի հպաշփականների հնչաբանական բնութագրերը», *Հայագիտութեան հարցեր*, 2020:2(20), էջ 203-4):
²⁷ А. Мейе *Общеславянский Язык* (Ընդհանուր սլաւոներէն), ԱԳՀ («Արտասահմանեան գրականութեան հրատարակչութիւն»), Մոսկուա, 1951, էջ 15-23. նաեւ՝ А. М. Селищев, *Старославянский Язык* (Հին սլաւոներէն), մաս I, ՌԽԴԱՀ լրատարութեան նախարարութեան պետական ուսումնա-մանկավարժական հրատարակչութիւն, Մոսկուա, 1951, էջ 199-207. նաեւ՝ А. Вайан, *Руководство По Старославянскому Языку* (Հին սլաւոներէնի ձեռնարկ), «Արտասահմանեան գրականութեան հրատարակչութիւն», Մոսկուա, 1952, էջ 71-2. նաեւ՝ А. И. Горшков, *Старославянский Язык* (Հին սլաւոներէն), «Բարձրագոյն դպրոց», Մոսկուա, 1974, էջ 95:

²⁸ М. Н. Петерсон, *Очерк Литовского Языка* (Լիտուերեն լեզուի ակնարկ), ԽՍՀՄ ԳԱ հրատ., Մոսկուա, 1955, էջ 13-14: Թէ այդ հպաշփականները լիտուերէնում երբ են առաջացել՝ դժուար է ասել, որովհետեւ լիտուական գիրը շատ ուշ է ստեղծուել՝ ժ.Ձ դարում (առաջին գիրքը այդ լեզուով տպագրուել է 1547ին), հետեւաբար այն չի կարող օգնել կողմնորոշուելու հպաշփականների առաջացման ժամանակի հարցում: Նկատի ունենալով, որ հնդեւրոպարանութեան մէջ յաճախ խօսում է բայթօ-սլաւոնական երբեմնի լեզուամիութեան մասին, պիտի կարծել, որ լիտուերէնում եւ առհասարակ բայթեան լեզուներում հպաշփականների առաջացման ժամանակը չէր կարող էականօրէն տարբերուել սլաւոնական հին լեզուներում դրանց առաջացման ժամանակից: Ալբաներէնում, որը նոյնպէս դասում է *սալրըմ* լեզուների շարքին եւ լիտուերէնի նման ուշ է գրի առնուել (ԺԵ դարում), ըստ նշանաւոր այբանագէտ Ն. Եոկլի՝ հ.ե. քմայնացածների սուլաշականացումը (*սիբիլիզանդացումը*) ուշ է տեղի ունեցել եւ առհասարակ այդ առումով այբաներէնը միջին դիրք է գրաւում կենտրում եւ *սալրըմ* լեզուների միջեւ (А. В. Десницкая, *Сравнительное Языкознание и История Языков* (Համեմատական լեզուաբանութիւնը եւ լեզուների պատմութիւնը), «Լատուկա», Լենինգրադ, 1984, էջ 223-24:

²⁹ В. П. Нерознак, "Греческий язык", *Лингвистический Энциклопедический Словарь* (Յունարէն, լեզուաբանական հանրագիտական բառարան), «Խորհրդային հանրագիտարան», Մոսկուա, 1990, էջ 119:

³⁰ Աճառեան, *Լիւսկալարար*, էջ 198-200, 213:

րենի հպաշփականների առաջացումը միայն կովկասեան ենթաշերտի ազդեցութեամբ բացատրելը առնուազն միակողմանի է, եթէ ոչ՝ սխալ³¹:

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԴԵՒՐՈՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Վերոյիշեալ հեղինակներից բացի, հայերէնի եւ կովկասեան լեզուների, մասնատրապէս՝ վրացերէնի, հնչոյթային համակարգերի առնչութիւնների հարցին անդրադարձել են նաեւ Հովգեր Պեղերսընը եւ Ջահուկեանը:

Պեղերսընը չի բացառել, որ հայերէնում եւ կովկասեան լեզուներում հպաշփական հնչոյթների առկայութիւնը կարող է փոխադարձ շփումների արդիւնք լինել, բայց ոչ երբեք՝ հայերէնի վրայ կովկասեան լեզուների ազդեցութեան հետեանք: Աւելին, մեծ նշանակութիւն չտալով հայերէնի եւ կովկասեան լեզուների «ծայնական դրութեան» նմանութեանը, նա չի բացառում, որ այդ նմանութիւնը կարող էր տեղի ունեցած լինել «կալկասեան ճայնական դրութեան վրայ՝ հայերէնին ազդեցութեամբ»³²: Ըստ Պեղերսընի, չնայած որ հայերէնի հնչիւնական զարգացումը «համեմատութեամբ միւս հնդիկ-գերմանական լեզուներուն շատ արագ կատարուած է», բայցեայնպէս, հայերէնն ընթացել է զարգացման նոյն ուղղութեամբ, ինչ եւ միւս հնդեւրոպական լեզուները³³: Հետեաբար, նրա կարծիքով, հայերէնի հպաշփականները հնդեւրոպական երեսոյթ են:

Ըստ Ջահուկեանի, հայերէնում «հպաշփականների եւ շփականների կազմատրումը» նախորդել է կովկասեան լեզուների հետ հայերէնի շփումների, որովհետեւ կովկասեաններից «*հայերէնի կարգաբաժան փոխառութիւններում չի նկատուած շչական եւ սոպական հպաշփականների փոխարի-*

³¹ Հ.-Ե. լեզուները երկու՝ *satam* (*սարմ*) եւ *centum* (*կենրում*) խմբերի առաջին անգամ բաժանել է Բրադլէն 1888ին (В. Порциг, *Членение Индоевропейской Языковой Общности* (Հնդեւրոպական լեզուական ընդհանրութեան տրոհումը), «Պրոգրես», Մոսկուա, 1964, էջ 49): Դեռեւս նախորդ դարի կէսերից սկսած հ.-Ե. լեզուները *սարմ* եւ *կենրում* խմբերի բաժանելուն լեզուաբաններից շատերը վերաբերուել են վերապահումով: Ընդամին՝ եղել են նաեւ այլ առաջարկներ (Գ. Բ. Джаукян, *Очерки По Истории Дialectального Периода Армянского Языка* (Ավարկներ հայոց լեզուի նախադրային շրջանի պատմութեան), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 44-47), այդ թում՝ **kmtom* եւ **k'mtom* (Джаукян, *Очерки*, էջ 44): Ասկայն, չնայած *սարմ* եւ *կենրում* բաժանման առնչութեամբ արուայտուած վերապահումներին, արդի հնդեւրոպաբանութեան ոչ-բոլոր ներկայացուցիչներն են այն հիմնազորկ համարել (Ի. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *Индоевропейский Язык И Индоевропейцы* (Հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիները), *Испр. 1*, Թբիլիսի, 1984, էջ 115): Սենց նոյնպէս, նկատի ունենալով, որ այդ խնդիրը դեռեւս մնում է համեմատական լեզուաբանութեան չլուծուած հարցերից մէկը, վերապահութեամբ հետեւում ենք այդ բաժանմանը:

³² Հովգեր Պեղերսըն, «Հայերէնի դիրքը», *Հանդէս ամսօրեայ*, 1929:1, էջ 120:

³³ Նոյն, էջ 120-21:

նում այլ հնչյուններով»³⁴: Աւելին, «... հպաշփականացումը եւ շփականացումը առաջին քմայնացման արդիւնքում եղել են երկարաբեր գործընթացներ, որոնք սկսուել են ընդհանրութեան [ընդհանրօրինակօրէնքայական - Վ.Պ.] փուլում եւ շարունակուել են հ.-ե. լեզուների առանձին գոյութեան փուլում (հմմտ. քմայնացած հետնալեզուայինների կանոնատր անցումը հայերէնում սովական հպաշփականների եւ շփականների)»³⁵: Հետեւաբար, «հիմք կայ ենթադրելու», որ հպաշփական «հնչյունները կան նաեւ հայերէնից կատարուած կովկասեան հնագոյն փոխառութիւններում»³⁶: Հմմտ. հյ. *արծոփ* (< հ.ե. **rgipjo*) > վրաց. *arc'ivi* «արծիս», հյ. *ծաղիկ*, *-ag* (< հ.ե. **g'el-*?) > վրաց. *c'alika* «վառվառուկ (ռոյս)», հյ. *ծաղկոփ* > վրաց. *c'alq'ot'i* «բանջարանոց» (*ծ>c'*), հյ. *աղսնձ* (< հ.-ե. **lendh-*?) > վրաց. *alanjwa* «վառել, խանձել» (*ծ>j*), հյ. *արծաթ* (< հ.-ե. **arg'oto-*) > վրաց. *wercxli*, մեզր. *warcxli* «արծաթ» (*ծ>c/č*), հյ. *ործ* (< հ.-ե. **org'h-* «արու ոչխար») > վրաց. *werji*³⁷, մեզր. *erji* «արու ոչխար» (*ծ>j/ʃ*), հյ. *ցախ* (< հ.-ե. *(*s*)*kākh-*) > մեզր. *cxwek*, *cxwič-* «չոր ցախ» (*g>c*)³⁸: Զահուկեանի կարծեքով բաւարար հիմքեր չկան նաեւ «կովկասեան կենդանի լեզուների մէջ խոտա-որարարական լեզուաընդհանրեան մերձատր ցեղակից լեզուներ որոնելու» համար, որի փորձերը նախորդ դարի կէտերին արել են Եան Բրաունը, Գէորգի Կլիմովը, ապա Իգոր Դիակոնովը³⁹:

Ինչ վերաբերում է Հայաստանի լեզուի հետ հայերէնի աննչութիւններին, ապա, ըստ անուանի լեզուաբանի, հայասերէնը «*հայերէնից փարբեր հնդեւրոպական լեզու [է եւ] ցեղակից է խոթա-տրասական լեզուներին*»⁴⁰:

ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԱԿԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՆԿԻՆՆԵՐԻՑ

Բանն այն է, որ Ղափանցեանը վերապահութեամբ էր ընդունում նաեւ խեթերէնի հնդեւրոպական ծագումը (հմմտ. «... *ինչպէս խեթերէն լեզուն, որ անեղի է հնդեւրոպական իր քերականութեան մէջ, բայց բառապաշարը շարքիչ է հնդեւրոպական*»⁴¹: Կամ՝ «*Եւ խեթերէնը, որ չգիտեմ ինչու անվերապահօրէն կոչուում է հնդեւրոպական կամ մի առանձին ներկայացուցիչ այդ*

³⁴ Джаукян, *Очерки*, էջ 329-30:

³⁵ Նոյն, էջ 44:

³⁶ Նոյն, էջ 329-30:

³⁷ Հ.-ե. ծագման «ործ» (< **org'hi-* «ծու, (ամ)ործի») բառը (Գէորգ Զահուկեան, *Հայերէն ստուգարանական բառարան*, «Ատոդիկ», Երեւան, 2010, էջ 607) առհասարակ արդի նշանակութեամբ գործածում է հայերէնի խօսակցական ոճում եւ բարբառներում:

³⁸ Օրինակներն ըստ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 580:

³⁹ Զահուկեան, «*Ուրարտերէնը*», էջ 133-34:

⁴⁰ Զահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 323:

⁴¹ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 31:

լեզուաընտանիքի կողքին, ունի բազմաթիւ ոչ հնդեւրոպական փարբեր, թեւեւ քիչ, բան հայերէնը»⁴²):

Եթէ Պեդերսընի եւ Զահուկեանի տեսակէտերը մնում են հայերէնագիտական մասնատոր հարցի դիտարկման շրջանակներում, ապա խնդրի դափանցեանական քննութիւնը դուրս է գալիս այդ սահմաններից՝ ներառելով հայերէնի, հետեւաբար նաեւ հայ ժողովրդի կազմատրման եւ (նախա)հայրենիքի տեղադրութեան հիմնահարցերի անհամեմատ լայն շրջանակ: Լինելով հայ ժողովրդի «քնօրրանը» (նախահայրենիքը - Վ.Պ.) Հայկական Բարձրաւանդակում տեսնելու համոզուած կողմնակից, այլ ոչ թէ հայերին համարելու Եւրոպայից գաղթեալներ, ինչպէս որ ընդունուած էր իր ժամանակի թէ՛ պատմագիտութեան եւ թէ՛ հնդեւրոպական լեզուաբանութեան մէջ, Ղափանցեանը, ըստ ամէնայնի, իր տեսակէտի օգտին փաստարկներ էր փնտրում ոչ միայն ի դէմս տարածաշրջանի հին լեզուների, այլեւ՝ հին աշխարհի պատմութեան դեռեւս թերի լուսաբանուած էջերում: Հնարատր է՝ «ուրարտական» կոչուած սեպագրերի եւ մեհենագրերի լեզուն հայերէնով մեկնելու դժուարութիւնները, ինչպէս նաեւ դրանց «ոչ հնդեւրոպական» բնոյթի վերաբերեալ գիտութեան մէջ արդէն ձեւատրուած պատկերացումն են նրան մղում հայերի նախնիներին փնտռելու տարածաշրջանի աւելի հին բնակիչների մէջ՝ ի դէմս Հայաստան կամ «Հայաստան-Ազգի» ցեղապետութեան ժողովրդի՝ հայասցիների: Սակայն ինչպէս հայերէնի հնդեւրոպական ծագման առնչութեամբ ունեցած վերապահումները, Ղափանցեանի այս տեսակէտը նոյնպէս հայագիտութեան մէջ հետետրոյններ չունեցաւ. ե՛ւ հայ պատմագիտութիւնը, ե՛ւ պատմահամեմատական հայերէնագիտութիւնը հիմնականում շարունակեցին զարգանալ արդէն իսկ նախանշուած ուղղութեամբ:

Կարծում ենք՝ հին հայերէնի հպաշփականների տարածամանակեայ, մասնատորապէս ծագումնաբանական քննութիւնը պիտի իրականացուի՝ հաշուի առնելով հետեւեալ իրողութիւնները.-

1) Հնդեւրոպական հին լեզուներից հպաշփական հնչոյթներ ունէին միայն *սապրըմ* (արեւելեան) խմբին պատկանողները: Ընդ որում, նշուած բոլոր լեզուներում հպաշփականները եղել են դեռեւս նախագրային փուլում, այսինքն՝ մեր օրերից առնուազն 1500-2500 տարի առաջ, հնարատր է՝ շատ աւելի վաղ: Հետեւաբար, եթէ հպաշփականները բնորոշ լինէին միայն արեւելեան տարածքի հ.-ե. լեզուներին (բարբառների), դրանց առկայութիւնը որոշակի արժանահատութեամբ կարելի կը լինէր բացատրել այդպիսիք ունեցող տեղական ոչ-հնդեւրոպական լեզուների հետ պատմական շփումներով կամ ազդեցութեամբ, ինչպէս որ դա արել են Հիւբշմանը, Մէլէն եւ Ղափանցեանը: Սակայն հարցը բարդանում է նրանով, որ հպաշփականները ունէր *սապրըմ* խմբին պատկանող, բայց արեւմտեան բարբառային

⁴² Նոյն, էջ 217:

տարածքում՝ Երոպայում, ներկայացրած հին ալբաներէնը, եւ, ընդհակառակը, այդպիսիք չունէին արեւելեան բարբառախմբի տարածքում ներկայացրած, բայց *կենտրոն* խմբին վերագրուող խեթալուսիական եւ թոխարական լեզուները:

2) Հայոց լեզուի հնդեւրոպական բնույթը անհերքելի կերպով ապացուցուած է դեռեւս պատմահամեմատական հնդեւրոպաբանութեան առաջին փուլում ժԹ. դարի առաջին կէտերին եւ որոշակիացուած է 1880ականներին Հիպշմանի յայտնի աշխատութեամբ (*Հայերէնի դիրքը հնդեւրոպական լեզուների շարքում, 1875*), սակայն լեզուական ցեղակցութիւնը ոչ բոլոր դէպքերում է նաեւ ցեղակից լեզուները կրող ժողովուրդների (ազգութիւնների, ցեղերի) ծագումնաբանական ընդհանրութեան վկայութիւն: Օրինակ, յայտնի է, որ Ֆրանսիայի բնիկները՝ գալլերը, ծագումնաբանօրէն կելտեր էին, բայց ֆրանսերէնը կելտական լեզու չէ, այլ իտալեան (ռոմանական) ճիւղի լեզու (ճիշտ է՝ դարձեալ հնդեւրոպական): Ֆրանսիայի բնիկների՝ գալլերի լեզուն իր ծագումնաբանական տիպը փոխել է լատիներէնի ազդեցութեամբ՝ Հռոմէական Կայսրութեան երկարատեւ տիրապետութեան դարաշրջանում (Ք.ա. Բ. դար–Ք.ե. Ե. դար): Ասուածը, իհարկէ, չի նշանակում, թէ մենք ժխտում ենք հայ ժողովրդի հնդեւրոպական ծագումը, այլ միայն նշանակում է, որ հայ ժողովուրդը կազմատրման երկարատեւ գործընթացում, ըստ ամէնայնի, իր մէջ ներառել է ինչպէս հնդեւրոպական, այնպէս էլ ոչ-հնդեւրոպական ցեղերի ու ժողովուրդների, որոնց լեզուները կարող էին իրենց դրոշմը թողնել ձեռադրուող հայերէնի վրայ: Հայկական Լեւոնաշխարհում այդպիսի ժողովուրդների գոյութեան մասին յիշատակումներ ունեն ինչպէս ուրարտական, խեթական եւ ասորական սեպագիր արձանագրութիւնները, այնպէս էլ հին աշխարհի պատմիչները՝ Հերոդոտոսը, Քսենոփոնը, Եւդոքսոսը, Ստրաբոնը⁴³: Այդ «ժողովուրդների» մեծ մասը, եղել են հայկական ցեղախմբեր, որոնք համապատասխան տարածքներում բնակուել են նախքան Նաիրի ցեղապետութիւնների գոյութեան դարաշրջանը (Ք.ա. Բ. հազարամեակի կէտեր), եւ որոնց անունները պահպանուել են իրենց բնակութեան գաւառների վրայ (*կարդոփներ՝ Կորդոք, փաոփներ՝ Տայք, փասիաններ՝ Բասէն են.*)⁴⁴: Բայց յիշատակումներ կան նաեւ տարբեր հանգամանքներում այնտեղ յայտնուած ոչ-հայկական ցեղախմբեր:

⁴³ Հմմտ. Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986. նաեւ՝ Քսենոփոն, *Անաբասիս*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970. նաեւ՝ Գ. Սարգսեան, «Պատմահայր Հերոդոտոսը», *Հերոդոտոս*, էջ 568-78. նաեւ՝ Գ. Տիրացեան, «Անաբասիս» եւ Հայաստանը, *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 221-39. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմութիւն, *հրք. I*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 175-464:

⁴⁴ Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը», էջ 62:

րի մասին, ինչպես սկիզբների (կամ սակերի, այստեղից՝ Սակասէն/Շակաշէն)⁴⁵, սայսպէրների/հեսպերիտների (այստեղից՝ Սպէր), կիմէրների, խալիքների (Բաղոխք), մարդերի/մարերի, միտանացիների են, որոնցից որոշների, օրինակ՝ կիմէրների և սայսպէրների ծագման և լեզուի մասին չեն պահպանուել բնարար տեղեկություններ, որոնք կարող էին պատկերացում տալ նրանց էթնիկական և լեզուական պատկանելույթեան մասին: Օրինակ, որպէս կիմէրների նախահայրենիք՝ նշում է հիպիսսեծովեան տարածաշրջանը, որտեղից ենթադրաբար նրանք տեղաշարժուել են երկու ուղղութիւններով՝ դէպի արեւմուտք և դէպի հարաւ, ընդհուպ՝ մինչև Ուրմիա լճի հարաային մասերը⁴⁶: Կիմէրներին է վերագրում Փոփոցայի կործանումը (Ք.ա. 676-74)⁴⁷, հաւանաբար՝ ուրարտացիների մասնակցութեամբ, որոնց հետ նրանք դաշինք էին կնքել մինչ այդ⁴⁸:

3) Նախորդ երկու դրոյթները հիմք են տալիս ասելու, որ փոխադարձ կապ կայ հայերէնի հպաշխական հնչոյթների առաջացման և Հայկական Լեռնաշխարհում հայերի բնիկ կամ եկուոր լինելու հարցադրումների միջեւ: Իսկ այդ հանգամանքը պայմանատրուած է նաեւ հ.-ե. նախահայրենիքի տեղորոշումով: Մինչև նախորդ դարի վերջերը հայագիտութիւնը, այդ թում՝ պատմահամեմատական հայերէնագիտութիւնը, ասանդաբար հետեւել է հ.-ե. նախահայրենիքի տեղադրման երուպական վարկածին, ըստ այդմ՝ ընդունելով դրանից բխող՝ իրենց պատմական հայրենիքում հայերի եկուոր լինելու դրոյթը⁴⁹: Հ.-ե. նախահայրենիքը Եւրոպայում տեղադրող կանխադրոյթի համաձայն *սաւրը*՝ խմբի լեզուների կրող հնդեւրոպական ժողովուրդները իրենց պատմական հայրենիքներում յայտնուել են Ք.ա. Բ.-

⁴⁵ Ադոնց, էջ 304:

⁴⁶ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 493-94: *Հայաստանի պատմական արքայի* հեղինակները Ք.ա. Ը. դ. վերջին (721) որպէս կիմէրների բնակութեան տարածք են նշում Ուրարտուի հիպիսարեւելեան շրջանը (Կլոդ Արմէն Մուքաֆեան, Էրիկ Վան Լովլէ, *Հայաստանի պատմական արքայ (Մերձատր Արեւելքը և Հարաային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչև XXI Դար)*, «Տիգրան Մեծ», Երեւան, 2017, էջ 15), այսինքն՝ Արեւելեան Հայաստանի տարածքը:

⁴⁷ Ք.ա. Ը. դարի կէսերին Փոփոցայի Փոքր Ասիայի մեծ երկրներից էր, զբաղեցնում էր Հայկական Լեռնաշխարհի՝ ներկայի Թուրքիայի Հանրապետութեան կենտրոնական տարածքները (Մուքաֆեան, Լովլէ, էջ 15): Այդ ժամանակաշրջանը զուգահեյպէլ է նաեւ Ուրարտուի վերելքին (Ն. Վ. Յարութիւնեան, «Քիայնիլի-Ուրարտուն ծաղկման դարաշրջանում», *Պարմարանասիրական հանդէս*, 1967:2(37), էջ 39-56):

⁴⁸ Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 493-94:

⁴⁹ Meillet, *Esquisse*, էջ 12. նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, մաս I, ԵՄ հրատ., Երեւան, 1940, էջ 8. նաեւ՝ Ադոնց, էջ 312, 366. նաեւ՝ Մանանդեան, էջ 7-23. նաեւ՝ Բ. Ն. Առաքելեան, «Ուրարտուն և հայ ժողովրդի կազմաորումը», Առաքելեան, Ջահուկեան, Սարգսեան, էջ 5-46. նաեւ՝ Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը», էջ 47-126:

Ա. հազարամեակներում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով: Մի մասը փոքրասիական տարածաշրջան է ներթափանցել Բալկանեան Թերակղզով, իսկ միա մասը՝ ներկայիս Ռուսաստանի Դաշնության տարածքով, մասնատրապէս՝ Սեւ Ծովի հիսիսային ափերով: Ասանդական պատմահամեմատական հայերէնագիտութեան մէջ շրջանառուած վարկածի համաձայն հայերի նախնիները եղել են Բալկաններից Փոքր Ասիա ներթափանցած ժողովուրդների կազմում (փոփոագիներ, թրակացիներ, միգիացիներ, ենթադրում է՝ նաեւ յունական որոշ ցեղախմբեր)⁵⁰: Վերջինները պատմագիտութեան մէջ յայտնի են «ծովային ժողովուրդներ» անուանումով⁵¹: Այդ գաղթը թուագրում է մօտաւորապէս Ք.ա. ԺԳ. դարի վերջով եւ

⁵⁰ Ըստ էութեան, այդ վարկածին են հետեւել Ադոնցը, Մանանթեանը, Աճառեանը:

⁵¹ Ք.ա. ԺԳ. դ. մերձարեւելեան եւ եգիպտական վաերագրերը վկայում են «ծովային ժողովուրդների» միմեանց յաջորդած տեղաշարժերի երկու ալիքի մասին: Մի տեսակէտի համաձայն «ծովային ժողովուրդների» առաջին տեղաշարժի բարձրակէտ է համարում ԺԳ. դարի վերջ-ԺԲ.ի սկիզբը (Շ. Ա. Ромашко, *К реконструкции языковой ситуации в восточном средиземноморье II тысячелетия до н. э.. Языковая принадлежность "народов моря", Сравнительно-историческое изучение языков разных семей (Лексическая реконструкция. Реконструкция исчезнувших языков)* (Մ.թ.ա. Բ. հազարամեակի արեւելեան միջերկրածովեանում լեզուական իրավիճակի վերականգնման շուրջ: «Ծովային ժողովուրդների» լեզուական պատկանելութիւնը, տարրեր ընտանիքների լեզուների պատմահամեմատական ուսումնասիրութիւն (Քառասպաշարային վերականգնում: Անհետացած լեզուների վերականգնում)), «Տաուվա», Մոսկուա, 1991, էջ 64-76): Երկրորդ տեղաշարժի մասին եւս նշում է գրեթէ նոյն ժամանակը: Կարծում ենք՝ պատճառը այդ երկու տեղաշարժերի նոյնացումն է, այսինքն՝ դրանք իրրեւ միեւնոյնն ընկալելը, որը անասարակ դրանց մասին տեղեկութիւնների աղբատութեան հետեանք է: Եգիպտական վաերագրերում յիշատակում է *շերդէն/շարդանա, էկէշ/ակաաշու, շէկէշ/շէկէտուշա, դէնէմ/դանունա, յունկ(կ)ա, րերէշ/րորուշա, վէշէշ, րէկէր/գեկէր, պէտէս/վ պոպաս/փ ժողովուրդների մասին, որոնց ինչպէս էթնիկական պատկանելութեան, այնպէս էլ լեզուների վերաբերեալ հասաստի տեղեկութիւններ չկան: Նշումներնից, օր., պիւնիս/պոպաս/փ ժողովուրդը որոշակի արժանաւաստութեամբ նոյնացում է Հին Կրակարանի ֆիլիստինեանների հետ (որոնք քնակուելով Պաղեստինում, տարրալուծում են տեղաբնակ սեմական ժողովուրդ/ժողովուրդների մէջ), շերդէններն ու շունպուշաները նոյնացում են սարդերի (Սարդիսիա) եւ սիլուսների (Սիցիլիա) հետ: Ոմանք փորձել են էկէշը նոյնացնել յունական *աքէացիներ* (յուն. Άχαι(Φ)οί, հմտ. խեթ. *Abbijawa*) ցեղանուն, իսկ *յունկ(կ)ան*՝ փիլիացիների (խեթ. *Luka*) հետ, բայց այդ նոյնացումների համար քաւարար հիմքեր չկան: Փոփոագիների, թրակացիների, միգիացիների, դարդանեանների, ըստ ամէնայնի՝ նաեւ յունական որոշ ցեղախմբերի գաղթը վերաբերում է «ծովային ժողովուրդների» տեղաշարժի երկրորդ ալիքին (Քոմաշո), որը, ըստ վերոյիշեալի, պիտի տեղի ունեցած լինի անկի ուշ, քայց Վ. Պ. Ներոզեանկի կարծիքով, նկատի ունենալով Հոմերոսի *Իլիականում* տեղ գտած տեղեկութիւնը Տրո-*

ԺԲ.ի սկզբով: Հիմք ընդունելով մի կողմից՝ փոհիզների (Բականներում բնակութեան շրջանում՝ մինչեւ փոքրասիական տարածաշրջան անցնելը, նրանց անուանել են *բրիզներ*, իսկ իրենց նոր՝ փոքրասիական հայրենիքում՝ *մուշկեր*) եւ հայերի ընդհանրութիւնների մասին հին աշխարհի պատմիչների աշխատութիւններում տեղ գտած որոշ վկայութիւններ⁵², իսկ մի կողմից՝ փոհիզերէնի եւ հայերէնի, խեթերէնի եւ հայերէնի միջեւ նկատուող լեզուական (հնչյունական, բառակազմական, ձեւաբանական) ընդհանրութիւնները, ումանք ոչ միայն «ծովային ժողովուրդների» կազմում յաւելել են նաեւ հայերին (ըստ յոյների եւ պարսիկների՝ *արմէններին*), այլեւ, անելի հեռուն գնալով, հայերի նախնիներ համարել են փոհիզացիներին, ուրիշներն էլ՝ խեթերին: Հայերէնի եւ փոհիզերէնի միջեւ մերձաւոր ցեղակցական կապի մասին խօսել են ԺԹ. դարավերջ-Ի.ի առաջին կէսի համեմատական հնդեւրոպաբանութեան մի շարք ներկայացուցիչներ (Պոլ դը Լագարդ, Ֆրիդրիխ Միլլեր, Ռիխարդ Գոշե, Հիլքման, Պետեր Ֆոն Բրադկե, Հերման Հիրտ, Եովիուս Պոկոննի, Ջովիանո Բոնֆանտե, Վ. Բենեցիանու, Դիակոնով)⁵³: Ընդհանուր առմամբ զգուշաւոր Հիլքմանը սկզբնական շրջանում

վաղայի պատերազմին փոհիզացիների եւ թրակացիների մասնակցութեան մասին, «ինչպէս նաեւ հնաբալկանեան տեղանուանաբանութիւնը Տրովադայում, կարելի է ապացուցած համարել, որ փոհիզացիների եւ հնաբալկանեան որոշ այլ ցեղերի ... վերաբնակեցումը տեղի է ունեցել նախքան մ.թ. ժԳ. դարի սկիզբը» (Յ. Ս. Երոզնակ, *Палеобалканские Языки* (Հնաբալկանեան լեզուներ), «Նաուկա», Մոսկուա, 1978, էջ 66:

⁵² Այս առումով ուշագրաւ է յատկապէս պարսից Բսերքսէս արքայի յունական արշաանքի մասին (Ք.ա. 480) Հերոդոտոսի վկայութիւնը՝ *փոհիզացի* եւ *արմէն* (= *հայ*) ռազմիկների միեւնոյն տեղից լինելու եւ միատեսակ զինուածութեան մասին. «Արմէնները եւ, ինչեւզ փոհիզական վերաբնակիչներ, զինուած էին փոհիզերէնի նման» (Հերոդոտոս, էջ 409):

⁵³ В. Порциг. *Членение*, էջ 52-65. նաեւ՝ Գ. Բ. Ջահուկեան, *Հայերէնը եւ հնդեւրոպական հին լեզուները*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 104-105. նաեւ՝ Դ. Ե. Ժաւայան. *Сравнительная Грамматика Армянского Языка* (Հայոց լեզուի համեմատական լեզուականութիւն), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 201: Ջահուկեանի կազմած վիճակագրական աղիասակի համաձայն փոհիզերէնը հայերէնի հետ մեծ ընդհանրութիւններ է երեւան հանում «հնչյունաբանական մերձաւորութեան առաինատութիւն» եւ առաջինն է յատկապէս ըստ «կարեւորագոյն հնչյունաբանական զուգաբանութիւնների»: Քերականական յատկանիշների մերձաւորութեամբ այն միջին դիրք է զբաղում, իսկ լեզուական ընդհանուր կառուցաւածքի «կարեւորագոյն գծերով» այն երրորդ տեղում է (Ժաւայան. *Сравнительная*, էջ 204-5): Այսինքն՝ բոլոր կարգի զուգաբանութիւններով փոհիզերէնը հայերէնին մօտ եղող հ.-ե. Լեզուներից մէկն է, բայց ամէնից մերձաւորը չէ: Իդէպ, հայերէնի եւ փոհիզերէնի հնչյունաբանական մերձաւոր ընդհանրութիւնների մասին նշել է նաեւ Գէորգիելը (Յ. Ի. Գեորգիւս, "Передвижение Смычных Согласных в Армянском Языке и Вопросы Этногенеза Армян" (Հայական արաւմայնների

տուրք է տալիս հայերեն-փոհիզերեն մերձատր կապի դրոյթին (հմմտ. «... կարելի է հնարատր համարեք, որ փոհիզերէնը «հայերէնի հետ անելի մօտ ազգակից էր»⁵⁴), սակայն անելի ուշ հրաժարում է այդ տեսակէտից⁵⁵: Օ. Հասար հնարատր է համարում հայերէնի մերձատր ցեղակցական կապը նախափոհիզերէնի հետ, բայց մերժում է դրա հնարատրութիւնը «հայերէնի եւ փոհիզական արձանագրութիւնների լեզուի միջեւ»⁵⁶, իսկ Վլադիմիր Գեորգիեւը ուղղակիօրէն առաջադրում է այդ լեզուների ծագումնաբանական նոյնականութեան դրոյթը: Վերջինս եթէ հիմքեր չէր տեսնում վիճարկելու «հների (իմա՝ Հերոդոտոսի եւ Ստրաբոնի - Վ.Պ.) վկայութիւնները» հայերի՝ «փոհիզացիների գաղութ» (Φρυγῶν ἀποικιοί) լինելու մասին եւ հայերէնն ու փոհիզերէնը համարում էր «հայ-փոհիզական լեզուախմբի երկու բարբառներ, որոնցով Գ. հազարամեակում խօսել է Բալկանեան Թերակղզու կենտրոնական մասում բնակուած (նախա)հայ-փոհիզական բնակչութիւնը»⁵⁷, ապա շատ չանցած՝ հայերէնի բարբառների բանավէճի առիթով գրոած յօդուածում նրա դիրքորոշումը դառնում է անելի արմատական՝ «Փոհիզերէնը այն լեզուն է, որը հիմք է եղել հայոց լեզուի համար»⁵⁸:

Հիմնուելով առաւելապէս իին աշխարհի պատմիչների եւ պատմագիտական քննութիւնների վրայ՝ հայերի եւ թրակափոհիզական ցեղերի մերձատր կապի մասին դրոյթը հակուած էր ընդունելու նաեւ Մանանդեանը⁵⁹:

Հայերի եւ փոհիզների, հետեաբար նաեւ հայերէնի եւ փոհիզերէնի միջեւ ցեղակցային մերձատր կապի հնարատրութիւնը ժխտել են Մէլէն, Աճառեանը եւ Նիկողայոս Աղունցը⁶⁰: Մէլէի կարծիքով հայերէնի եւ փոհիզերէնի մերձատր կապի մասին խօսում է «առանց քաւարար հիմնաւորման», այն դէպքում, երբ փոհիզերէնը գրեթէ ծանօթ չէ⁶¹: Ըստ Աճառեանի՝ «հայերը

տեղաշարժը հայերէնում եւ հայերի ծագումնաբանութեան հարցերը), *Вопросы Языкознания*, 1960:5, էջ 38:

⁵⁴ Հայերիի Հիւրշման, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, ԵՀ հրատ., Երեւան, 2004, էջ 55:

⁵⁵ Հայերիի Հիւրշման, *Հայերէնի քերականութիւն*, ԵՀ հրատ., Երեւան, 2003, էջ 405. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 130:

⁵⁶ Զահուկեան, *Հայերէնը եւ*, էջ 105:

⁵⁷ В. И. Георгиев, *Исследования по Сравнительно-Историческому Языкознанию* (Պատմահամեմատական լեզուաբանական ուսումնասիրութիւններ), «Արտասահմանեան գրականութեան հրատ., Մոսկուա, 1958, էջ 142-43:

⁵⁸ Георгиев, *Передвижение*, էջ 38:

⁵⁹ Մանանդեան, էջ 23:

⁶⁰ Meillet, *Esquisse*, էջ 11. նոյնի՝ *Les Nouvelles Langues Indo-Européennes Trouvées en Asie Centrale*, Փարիզ, RM, 1912, էջ 7. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 133. նաեւ՝ Աղունց, էջ 310:

⁶¹ Meillet, *Les Nouvelles*, էջ 7:

թրակոփոհիզիականից անկախ մի ցեղ են»: Նախքան Փոքր Ասիա անցնելը, հայերը բնակուել են Թրակիայում՝ թրակափոհիզիական միջավայրում, որի ընթացքում հայկական ցեղախմբերի յետսապահ մասերը գուցե իրացրել են փոհիզների լեզուն, «բայց բուն առաջընթաց մասը, որ վերջապես եկել հասարարուել է Հայաստանում, որեւէ կապ չունի նրանց հետ»⁶²:

4) Հնդեւրոպական «խեթերի» մտաքը փոքրասիական տարածք տեղի է ունեցել անելի վաղ, քան «ծովային ժողովուրդների» նոյնիսկ առաջին տեղաշարժը (Ք.ա. Բ. հազարամեակի առաջին կես), ենթադրում է՝ ԺԸ.-ԺԶ. դդ.: Որոշ ժամանակ անց եկոտր «խեթերը» կործանում են բնիկ՝ ոչ-հնդեւրոպացի *խաթերի/հաթերի* պետութիւնը՝ Խաթին (աքադ. *Hatti* կամ *խեթ. Hattusas/Hattušaš*) և նրա տեղում հիմնում իրենց թագատրութիւնը՝ պահպանելով, սակայն, նախորդ պետութեան անունումը՝ *խաթի*: Վերջինս գոյատեւել է մօտ 200 տարի՝ ԺԴ.-ԺԲ. դդ.: Խաթիի բնիկների լեզուն հ.-ե. խեթերէնից տարբերելու նպատակով լեզուաբանները պայմանականորէն առաջինը անուանել են *խաթերէն* (Բեդրժիխ Հոռզնի) կամ *նախախեթերէն* (Էմիլ Տոռեր), իսկ երկրորդին տուել են նաեւ *նեսերէնի*՝ Խաթիի Նեսի «հին մշակութային կենտրոնի» անունով, *կամիսերէն*, ինչպէս նաեւ այլ անուանումներ⁶³: Հ.-ե. «խեթերին» վերաբերող այս թոռացիկ ակնարկի պատճառն այն է, որ, ինչպէս արդէն նշեցինք, առանձին գիտնականներ, ինչպէս Պիտէր Ենէլը («Hittiter und Armenier») Խեթերը եւ հայերը) եւ Պեդրսընը, հակուած էին հայերի նախնիներ համարելու խեթերին՝ կապ տեսնելով նրանց անունն ի, *hate*, *hatti*, *hati* տարբերակների և *haz* անուանման միջեւ՝ էյ անցումով⁶⁴: Հմմտ. նաեւ. «Այդ Հայ անունն գնեզ կ'առաջնորդէ ոչ թէ Հարաց (խաթերի՝ խեթերի - Վ. Պ.) ծաղկման, այլ անոնց անկման ժամանակը»⁶⁵:

⁶² Աճառեան, *մաս I*, էջ 131:

⁶³ И. М. Дьяконов, *Языки Древней Передней Азии* (Հին Առաջաւոր Ասիայի լեզուները), «Նաուկա», Մոսկուա, 1967, էջ 167. նաեւ՝ Մանանդեան, էջ 18. նաեւ՝ В. В. Иванов, *Хеттский Язык* (խեթերէն), Արեւելեան գրականութեան հրատ., Մոսկուա, 1963, էջ 8-18. նաեւ՝ А. А. Корольев, «Хетто-Лувийские Языки», *Языки Азии и Африки* (խաթալուսիական լեզուներ, Ասիայի եւ Աֆրիկայի լեզուներ), *հոր. I*, «Նաուկա», Մոսկուա, 1976, էջ 13-93. նաեւ՝ Զահուկեան, *Հայերէնը եւ*, էջ 124. նաեւ՝ Աճառեան, *մաս I*, էջ 135-49: Ոմանք «նախախեթերէն» անուանումը համարում են «անյաջող», որովհետեւ Խաթիի հին եւ նոր բնակիչների լեզուների, այսինքն՝ *խաթերէնի* եւ *խեթերէնի* (այն է՝ *նեսերէնի*) միջեւ ծագումնաբանական կապ չկայ (Дьяконов, էջ 167. նաեւ՝ Զահուկեան, նոյն):

⁶⁴ Զահուկեան, նոյն, էջ 125: Այս հնչիւնական անցումը դրսեւորում է *հ.-ե. նախախեթո-հայերէն* ոչ մեծ թուով անոյութիւններում. հմմտ. **matér*- > *մայր*, **patér* > *հայր*, **atér* > *այրեմ*, **bhereti* > նիսգր. հյ. {[**berēi*]}/*բերեյ(ի)} > գրբ. հյ. *բերէ* [berē] «(նա) բերում է» են.:

⁶⁵ Պեդրսըն, «Հայերէնի դիրքը», էջ 119:

խթթթրին հայերի նախնիներ համարելու դրոյթը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ, ըստ ամէնայնի, խթթրէնը տակաւին բաարար չափով ուումնասիրում չէր: Չնայած որ դեռեա 1915-17ին չէի լեզուաբան Հոռզին ապացուցել էր խթթրէնի (նեսերէնի) հնդեւրոպական բնոյթը, բայցեայնպէս այդ լեզուի առաջին համեմատական քերականութիւնները, որոնք հնարարութիւն կը տային տեսնել հ.-ե. ցեղակիցների հետ նրա մերձատրոպեան աստիճանը, գրում են 1930ականներից յետոյ⁶⁶: Թէպէտե դեռեա նախորդ դարի վերջերին կատարում հնչոյթային եւ քերականական զուգաբանութիւնների վիճակագրական քննութեամբ ապացուցուել է, որ հայերէնի եւ խթթրէնի ընդհանրութիւններն աւելին չեն, քան այդ ընդհանրութիւնները հայերէնի եւ հնդիրանական լեզուների, հայերէնի եւ յունարէնի, հայերէնի եւ փոիզերէնի միջեւ⁶⁷, բայցեայնպէս, առանձին գիտնականներ (օր.՝ Ֆելիքս ֆոն Լուշանը) նոր ժամանակներում էլ խօսում են հայերի եւ խթթրի նոյնական մարդաբանական տիպի մասին⁶⁸:

5) Ըստ պատմագիտութեան համեմատաբար նոր տուեալների՝ Հայկական Լեռնաշխարհում հայերը պետականօրէն կազմակերպում են երկայտութիւն էին արդէն Ք.ա. Գ. հազարամեակի սկզբներին⁶⁹, որի վկայութիւնն է հայկական հնագոյն պետութեան՝ Արատտայի գոյութիւնը 2800-2600ին⁷⁰: Արատտան եղել է Ք.ա. Գ.-Բ. հազարամեակներում փոքրասիական տա-

⁶⁶ Հմմտ.՝ Է. Հ. Ստիրտեանտ, *խթթրէն լեզուի համեմատական քերականութիւն*, (1933). նաեւ՝ Հ. Պեղերսզն, *խթթրէնը եւ միւս հնդեւրոպական լեզուները* (1938). նոյնի՝ *Լիկիերէնը եւ խթթրէնը* (1945). նաեւ՝ Եո. Ֆրիդրիխ, *խթթրէն լեզուի համառօտ քերականութիւն* (1940). նաեւ՝ Ֆ. Չոմէր, *խթթրէնը եւ խթթրէն լեզուն* (1947). նաեւ՝ Է. Հ. Ստիրտեանտ, Ա. Հան, *խթթրէն լեզուի համառօտ քերականութիւն* (1951). նաեւ՝ Կ. Կրոնասէր, *խթթրէն լեզուի համեմատական հնչիւնաբանութիւն եւ ձեւաբանութիւն* (1956) (Г еоргиев, *Исследования*, էջ 11-12):

⁶⁷ Джаукян, *Сравнительная грамматика*, էջ 204-5: Հմմտ. նաեւ՝ «Կամիսերէնը (հ.-ե. խթթրէնը - Վ.Պ.) նման է հայերէնին այն չափով, որ չափով նման է որեւէ հնդեւրոպական լեզու» (Աճառեան, *մաս I*, էջ 148):

⁶⁸ Ետրի Գարրիլէան, «Հայերի եւ հայերէնի ծագման խնդիրներն ըստ լեզուաբանական եւ գենետիկական տուեալների», *Բանբեր Երեւանի Համալսարանի. հայագիտութիւն*, 2017:1, էջ 12:

⁶⁹ Արոնցը, որը, յիրաւի, Հայաստանի հնագոյն շրջանի քաղաքական պատմութեան խոչորագոյն ուսումնասիրողներից է, այդ պատմութիւնն սկսում է Ք.ա. ԺԴ դարով՝ ընդունելով, որ իր ժամանակներում պատմագիտութեան «լոյսը» դեռեա չէր թափանցել դրան նախորդող շրջանի պատմութեան մէջ (Արոնց, էջ 24): Բայց, որ աւելի կարեւոր է, այսօր մարգարէական են հնչում նրա խօսքերն այն մասին, որ «Հողն իր ընդերքում դեռեա շատ անակնկալներ է թաքցնում», որոնք բացայայտումը նոր լոյս կը սփռի այդ պատմութեան վրայ (էջ 9):

⁷⁰ Արուսի Մովսիսեան, *Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արարութա, ՀՀՅԴ, Երեւան, 1992. նոյնի՝ Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում*, ԵՀ Իրատ., Երեւան, 2005, էջ 16-29:

րաճքում ձեւատրուած խոշոր երկրներից մէկը, իսկ այդպիսի պետութիւն կազմաւորելու համար այն ստեղծող ժողովուրդը պիտի անցնէր ինքնակազմակերպման բաւականին երկար ճանապարհ⁷¹: Հետեաբար, հայ էթնիկական տարրը Հայկական Բարձրաանդակում ներկայութիւն է եղել անելի վաղ, անուազն՝ Դ. հազարամեակի վերջերից: Իսկ հնդեւրոպական նախահայրենիքի տեղադրութեան առաջատրասիական վարկածն ընդունելու դէպքում այդ ժամանակը կարող է անելի առաջ տարուել, հնարատր է՝ Ք.ա. ե. հազարամեակի վերջ-Դ.ի սկիզբ, այսինքն՝ մեզանից շուրջ 6-7000 տարի առաջ⁷²: Մօտատրասիական ժամանակագրութիւն են առաջարկել նաեւ Գէորգիեւր եւ Ջահուկեանը⁷³: Հ.-ե. լեզուների՝ հինք-լեզուից առանձնանալու եւ զարգացման ինքնուրոյն ճանապարհ բռնելու ժամանակագրութեան մասին այդպիսի արդիւնքի էր հասել նաեւ լեզուաբան Մորիս Ավդիէշն իր մշակած լեզուավիճակագրական մեթոդի կիրառումով⁷⁴:

⁷¹ Ճիշտ է, հին աշխարհում եղել են նաեւ պետականութեան ըմբռնումից զուրկ ժողովուրդներ, անելի ճիշտ՝ ստոարաթի ցեղախմբեր, ինչպիսիք էին, օրինակ, հիքստաները, հոնները եւ սկիթները, որոնք հեղեղի նման խուժել են այս կամ այն տարածք եւ կործանել պետականօրէն կազմակերպուած երկրներ, բայց այդ ցեղերը, որպէս կանոն, երկար գոյութիւն չեն ունեցել, անհետ լքել են պատմութեան թաւտերանը՝ ձուլուելով այլ ժողովուրդների մէջ: Յաճախ նրանք իրենց հետ տարել են նաեւ անելի լա կազմակերպուած եւ բարձր մշակոյթ ունեցող ժողովուրդների, ինչպիսիք էին, օր., հ.-ե. խեթերը (կամիսները), փոյիզները եւ պոնտոսցիները:

⁷² Գամկրելիձէն եւ Վիագսեյաւ Իասնովն ընդհանուրհնդեւրոպական լեզուի տրոհման նախօրեակին՝ Ք.ա. Դ. հազարամեակում, «հնդեւրոպական նախալեզուի նախակզբնական տարածման մարզը», այն է՝ հ.-ե. նախահայրենիքը, տեղակայում են Բալկաններից մինչեւ Թուրքմէնստան ընկած տարածքում՝ ներառելու հարաւային Կովկասն ու Իրանական հարթավայրը (Гамкрелидзе, Иванов. *Индоевропейский язык, выпр. II*, Թբիլիսի, 1984, էջ 865-70):

⁷³ В. Георгиев. “Проблема возникновения индоевропейских языков” (Հնդեւրոպական լեզուների առաջացման հիմնահարցը), *Вопросы языкознания*, 1956:1, էջ 677. նաեւ՝ Джаян, *Очерки*, էջ 325-26: Հմմտ. նաեւ՝ Եուրի Գարրիէլեան, *Лезги, лезгиներ եւ ժողովուրդներ*, ԵՀ հրատ., Երեւան, 2019, էջ 9:

⁷⁴ Морис Сводеш, “Лексикостатистическое датирование доисторических этнических контактов (На материале племен эскимосов и североамериканских индейцев)” (Նախապատմական էթնիկական շփումների բառավիճակագրական թուագրում ըստ էսկիմոսների եւ հիսիասմերիկեան ցեղերի նիւթի), *Новое в лингвистике* (Նորը լեզուաբանութեան մէջ), *պրակ. I*, «Պրոգրէս», 1960, էջ 23-52. նոյնի՝ “К вопросу о повышении точности в лексикостатистическом датировании” (Բառավիճակագրական թուագրման մէջ ճշգրտութիւնը բարձրացնելու հարցի շուրջ), *Новое*, էջ 53-87: Հմմտ. նաեւ՝ Гарри Хойер, “Лексикостатистика (Критический обзор)” (Բառավիճակագրութիւն (Քննադատական տեսութիւն), *Новое*, էջ 88-107:

6) Առայժմ մի կողմ թողնելով «ուրարտերէն» կոչուած լեզուի ծագումնաբանական պատկանելութեան հարցը⁷⁵, նկատենք, որ նախորդ դարի ակադեմիական պատմագիտութեան համաձայն Բ.ա. 2. դարի սկզբին, մօտաւորապէս 590ի սահմանագծին⁷⁶, «Ուրարտուի» (= Բիայնիիի)⁷⁷ թագաւորութեան կործանումից յետոյ նրա բնակիչները՝ «ուրարտացիները» (կամ «ալարողները»)⁷⁸, աստիճանաբար ծուլուեցին կազմաւորուող հայ ժողովրդի մէջ եւ Երուանդունիների թագաւորական հարստութեան ձեւատրման շրջանում՝ Բ.ա 2.-Գ. դդ., պատմագրութիւնը դադարում է այլեւս նրանց մասին յիշել⁷⁹: Եթէ նկատի առնենք, որ «Ուրարտու»ին նախորդող շուրջ երկհազարամեայ ժամանակաշրջանում հայ ժողովրդի եւ հայկական պետական կազմաւորումների մասին մեր տեղեկութիւնները գերազանցապէս օտար աղբիւրներից են (շումերական, ասորաբաբելական են), իսկ տեղական ծագման պատկերագրութիւնն էլ չէր կարող լեզուական իրայատկութիւնների մասին թէկուզ հեռատր պատկերացում տալ՝ ապա «ուրարտերէնը», ըստ էութեան, Մեծ Հայքի տարածքում խօսուած եւ մեզ յայտնի ամէնից հին լեզուն է (կամ լեզուալիճակը): Այդ տեսանկիւնից մասնակի բացառութիւն է *հայասերէնը*¹ Հայասա-Ազգիում գործածուած լեզուն, սակայն՝ 1) վերջինիս բնոյթի մասին (հայերէն է, թե՛ ոչ), ինչպէս արդէն նշել ենք, նոյնպէս միասնական կարծիք չկայ, 2) նրա մասին պատկերացումը ձեւատրում է միայն անձնանունների, դիցանունների եւ տեղանունների քննու-

⁷⁵ Իշխանեանը, հասանաբար նկատի ունենալով, որ համեմատաբանները խոտիերէնի հետ միասին «ուրարտերէնը» համարում են փորրասիական ծագման առանձին լեզուաընտանիք՝ *խոտաուրարական* (Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 102-46. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 417-422), «ուրարտերէնին» տալիս է «մերձխոտիերէն կամ նորխոտիերէն» պայմանական անուանումը (Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 57, նոյնի՝ *Բնիկ հայերէն բառեր եւ հնագոյն*, 42-61, նոյնի՝ *Պարկերազարդ պարմութիւն*, էջ 43): Սակայն հազիւ թէ կարելի է այդ քնորոշումները յաջողուած համարել, յատկապէս՝ երկրորդը, որով, ըստ էութեան, «ուրարտերէնը» դիտում է խոտիերէնի յետագայ փոփոխից մէկը, որ նոյնն է, թէ՛ խոտիերէն, որի համար հիմքեր չկան:

⁷⁶ Ադոնց, էջ 284. նաեւ՝ Ն. Վ. Յարութիւնեան, «Ուրարտուն մ.թ.ա. VIII դարի վերջին եւ VII դարում» *Հայ ժողովրդի պարմութիւն*, *հփր. I*, Հայկ. ՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1971, էջ 336-37. նաեւ՝ Առաքելեան, էջ 32:

⁷⁷ Հմմտ.՝ *Bi-a-i-ni- [*V(i)ʕʰne-?]* իյ. *Van* (Дьяконов, էջ 126):

⁷⁸ Աճառեանը, ըստ ամենայնի՝ Քսենոփոնի հետետղութեամբ, բիայնացիների անուանում է *խալդեր*, *խալդեաններ*, որի համար հիմք է ընդունուել նրանց խալդ աստծոյ անունը (Աճառեան, *մաս I*, էջ 150):

⁷⁹ Ադոնց, էջ 305. նաեւ՝ Ա. Տ. Երեմեան, «Հայ ժողովրդի կազմաւորման ասարտը եւ հայկական առաջին պետական կազմաւորումները»՝ *Հայ ժողովրդի պարմութիւն*, *հփր. I*, էջ 435-43. նաեւ՝ Մութաֆեան, Լովէ, էջ 18:

թեան միջոցով, այսինքն՝ չեն պահպանուել բառապաշարի հասարակ բառեր եւ դրանցով կազմուած նախադասութիւններ կամ արտայայտութիւններ, որոնք կարող էին պատկերացում տալ այդ լեզուի քերականական կառուցուածքի մասին⁸⁰: Ուսումնասիրողները «ուրարտերէն»ում տարբերակում են **չ** եւ **z** հպաշփականները, որոնցից հիւրաքանչիւրին վերագրում է երկակի հնչիւնական արժէք, համապատասխանաբար՝ [c/=չ. ծ] եւ [c'/=չ. ջ] (հմմտ. *Տսրա* ~ /Cop³-(k³)/ *Օոնի*-(ք), *սե* «իծ» - *ծոյ*), [j/չ=չ. ծ] եւ [j'/=չ. ջ] (հմմտ. ուրարտ. *Alzi-ni* – իյ. /*Ալչու*-(k³)/*Աղձնի*-(ք), ուրարտ. *Zabaha* – իյ. /*Ջաախ*-(ք)⁸¹: Չի նաեւ [j] հնչարտաբերութիւնը հնարատը է համարել Դիակոնովը, սակայն, ըստ Ջահուկեանի, «բուն ուրարտական բառերում ճ, չի անկայութիւնը հասասփօրէն չի պարզուած»⁸²: Հնարատը է՝ դրանք մէկական հնչոյթներ են՝ երկուական հնչիւնական տարբերակներով (ենթահնչոյթներով), որոնցից հիւրաքանչիւրը ժամանակի ընթացքում կարող էր տարանջատուել՝ վերածուելով առանձին հնչոյթի, բայց դա կարող էր նաեւ տեղի չունենալ: Չնայած որ Գեորգի Մելիքիշվիլին, ինչպէս եւ Ղափանցեանը, փոխադարձ կապ են տեսել կովկասեան լեզուների, մասնաւորապէս՝ վրացերէնի հետ «ուրարտերէնի» հնարատը մերձաւորութեան, այլ կերպ՝ ծագումնաբանական կապի եւ նրանում հպաշփական հնչոյթների անկայութեան միջեւ⁸³, Աղոնցի կարծիքով, սակայն, «այդ տեսակէտը մեկնաբանելու ուղղութեամբ թափուած ջանքերը ծանրակշիռ չեն եւ զուրկ են լեզուաբանական հետաքրքրութիւնից»⁸⁴: Մեր կարծիքով եւս այդպիսի բացատրութիւնը արժէք կ'ունենար, եթէ, ինչպէս նշել ենք, հպաշփականներ չունենային նաեւ հնդեւրոպական, մասնաւորապէս՝ սասրըմ խմբի հին լեզուները, որոնցից յատկապէս հին հնդկերէնը հարուստ էր այդ հնչոյթներով:

7) Բ.ա. Բ. հազարամեակի Բ. կեսի եւ յատկապէս Ա. հազարամեակի Փոքր Ասիայի քաղաքական պատմութիւնը հարուստ է պետութիւնների ձեւաւորման, դրանցից որոշների (Ասորիք, Ուրարտու (Բիայնա կամ «Բիաի-նիլի»), Մարաստան, Աքեմէնեան Տէրութիւն, Մակեդոնական Կայսրութիւն,

⁸⁰ Ղափանցեան, *Հայոց լեզուի*, էջ 62-67. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 322-41:

⁸¹ Дьяконов, էջ 127՝ ներառելով ծոթ. 28ը եւ 29ը. նաեւ՝ Джаякян, *Урартский*, էջ 13. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430-31: Մելիքիշվիլին եւ Ջահուկեանը ուրարտ. շին վերագրում են **z** [= իյ. ջ]ին համարժէք, այսինքն՝ շփական հնչարտաբերութիւն (Меликишвили, *Урартские*, էջ 46, նոյնի՝ *Урартский язык* (Ուրարտերէն), «Նաուկա», Մոսկուա, 1964, էջ 22. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430-31): Տին վերագրում է [s] (=հ. ս) հնչիւնական արժէք (հմմտ. ուրարտ. *Tušpa* – իյ. *Tašp* / = *Snušp* (Меликишвили, *Урартский язык*, էջ 22. նաեւ՝ Дьяконов, էջ 126-27), բայց Ջահուկեանը նշում է ֆի՝ նաեւ իյ. շին համարժէք արտաբերութիւն. հմմտ. Анаše-Ալաշկերու (Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 430):

⁸² Дьяконов, նոյն. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 431:

⁸³ Меликишвили, *Урартский язык*, էջ 22:

⁸⁴ Աղոնց, էջ 280:

Սելեկեան Թագաւորութիւն, Հայոց (Տիգրան Մեծի) Տէրութիւն են.) ծաւալապաշտական նկրտումների, ապա նաեւ կործանման դրսեւորումներով: Շուրջ մէկ հազարամեակ տեւած այդ ամբողջ ընթացքում, բնականաբար, տեղի են ունեցել ժողովուրդների, հետեւաբար՝ նաեւ լեզուների սերտ փոխշփումներ: Նշուած գործընթացների կիզակէտում եղել է նաեւ Հայկական Լեռնաշխարհը, որտեղ, ինչպէս եւ նրա անմիջական հարեանութեամբ երբեմնի բնակուած ժողովուրդներից շատերը (խեթեր, փոխգացիներ, պոնտոսցիներ, կապադովկիացիներ, կիմերներ, խալիբներ, սայսպէրներ, մարեր, լիդիացիներ են), նախ՝ կորցնում են ինքնիշխանութիւնը, ապա իրենք էլ աստիճանաբար լքում են պատմութեան թատերաբեմը՝ ձուլուելով այլ ժողովուրդների, այդ թում՝ հայերի մէջ: Նրանց մի մասը, դեռեւս Ք.ա. Թ.- Է. դդ. յայտնուելով դէպի Մեծ Հայքի ընդգրկման սահմանները ձգտող «Բիւսիւնի» (Ուրարտու) պետութեան կազմում, ըստ ամէնայնի, ձուլուեցին բիւսյնացիների (ուրարտացիների) հետ, որքանով որ Բիւսյնայի (իմա՝ Վանի կամ Արարատեան Թագաւորութեան) բնակիչները, ըստ էութեան, եղան այն միջուկը, որի շուրջ ծաալուեց հայ ժողովրդի կազմաւորումը: Այն, որ «ուրարտացիները» ինչպէս մշակութաբանական, մարդաբանական տիպի (**արմենոիդ**), այնպէս էլ պատմագիտական տեսանկիւմից հայեր են, վաղուց կասկածներ չի յարուցում⁸⁵: Միայն այն փաստը, որ Դարեհ Ա.ի՝ Բեհիսթունի ժայռին փորագրուած եռալեզու (էլամերէն, հին պարսկերէն եւ ասորաբարբելերէն⁸⁶) արձանագրութեան մէջ Աքեմէնեան Տէրութեան յիշա-

⁸⁵ Շահինեան, էջ 37: Հմմտ. նաեւ՝ Ս. Մ. Епископосян, *Генетика ростовых процессов в армянской популяции* (Աճման գործընթացների ծագումնաբանութիւնը հայկական տեսակի մէջ), ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2000. նաեւ՝ Ն. Քոչար, «Արմենոիդ դասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական Լեռնաշխարհում եւ յարակից տարածքներում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2012:1, էջ 287-300. նաեւ՝ Գարրիլէան, «Հայերի ու հայերէնի ծագման խնդիրներն», էջ 3-13: Իշխանեանը միմեանցից տարանջատում է «ուրարտացիների» էթնիկական պատկանելութեան եւ «ուրարտական» արձանագրութիւնների լեզուի հարցերը, ըստ այդմ՝ «ուրարտացիներին» համարելով հայեր, իսկ արձանագրութիւնների լեզուն ոչ հայկական, ինչպէս արդէն նշել ենք՝ «նոր խտրելիէն» (իմտ. օր.՝ Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 53-54): Վարկածի առաջին մասը ունի հասանականութիւն, եթէ նկատի առնենք, որ հին աշխարհում օտար գրից եւ լեզուից օգտուելն ընդունուած էր: Ինչ վերաբերում է երկրորդ մասին, որ այն հայերէն չէր, վիճելի է: Այդ հարցի լուծումը յատկապէս Ջահովեանի «Ուրարտական արձանագրութիւնների» հրապարկումից յետոյ պիտի թողնել ապագային:

⁸⁶ Եղել է արաղերէնի երկու բարբառներից մէկը, ուստի յաճախ անուանում են հենց *արաղերէն*:

տակուած 23 «մարգերից» Հայաստանի, հին պարսկերէնով *Armina/Arminia*⁸⁷ (մեր երկիրը դեռ հին ժամանակներից *Արմինա/Արմինիա*, ժողովրդին՝ *արմէններ* են անուանել պարսիկները, յոյները եւ առհասարակ օտարները, բացառութեամբ վրացիների, որոնք Հայաստանը անուանում են *Սոմխետի*, իսկ հայերէնին՝ *սոմխի*) աստուաբարելերէն համարժէքը *Urartu/Uraštun* է,- կարծում ենք՝ կասկածից վեր պիտի համարել նաեւ Ուրարտուի՝ հայկական պետութիւն լինելը: Բեհիսթունի արձանագրութեան մէջ յիշատակուող Արմինան գտնուում էր Հայկական Լեռնաշխարհում՝ «Վանայ եւ Սեանայ լճերի շրջանում»⁸⁸: Մինչեւ օրս էլ, սակայն, խնդրայարոյց է մնում «ուրարտերէնի» ծագումնաբանական առնչութիւնների հարցը: Այդ ուղղութեամբ կատարուած ուսումնասիրութիւնները հեղինակներին բերել են տարբեր, երբեմն՝ տրամագծօրէն հակադիր եզրայանգումների: Քանի որ այդ խնդրի հանգամանալից արծարծումն այստեղ մեր անմիջական նպատակներից դուրս է, կը յիշատակենք միայն երկու դրոյթ, որոնք, մեր կարծիքով, ուղեցուցային նշանակութիւն են ունեցել «ուրարտագիտութեան» անուագն վերջին յիսնամեայ շրջափուլում: Դրանք են.- 1) հիմքեր կան խօսելու «ուրարտերէնի» եւ խուտիերէնի մերձաւոր ցեղակցութեան, ըստ այդմ՝ *խուտի-ուրարտական լեզուաընդհանրի* տարբերակման մասին⁸⁹, 2) խուտի-ուրարտական լեզուներն ունեցել են «ասիանիկ» ծագում եւ նոստրատիկ առնչութիւններ են ի յայտ բերում նախահնդեւրոպական լեզուի հետ⁹⁰: Ընդ որում, հ.-ե. լեզուների, այդ թում՝ հայերէնի հետ աւելի մեծաթիւ եւ կատար են յատկապէս «ուրարտերէնի» առնչութիւնները, այլ ոչ թե՛ խուտիերէնի⁹¹: «Ուրարտերէն»-հայերէն առնչութիւնների կապակցութեամբ պիտի նկատի ունենալ հետեւեալը.- ա) մեզ յայտնի է «ուրարտերէնի» բառապաշարի մի

⁸⁷ Գ. Ա. Տիրացեան, «Հայաստանը Արեւմտեան Պարսկաստանի տիրապետութեան ներքոյ»՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, հրք. 1, էջ 452. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 427. նոյնի՝ «Ուրարտերէնը եւ հայերէնը»՝ Առաքելեան, Ջահուկեան, Սարգսեան, էջ 162-67 (մեր կարծիքով, *Urartu/Uraštun*ի՝ Ջահուկեանի այստեղ ներկայացուող առուգաբանութիւնը արժանի է յատուկ ուշադրութեան). նաեւ՝ Գ. Խ. Սարգսեան, «Ուրարտական Տէրութիւնը եւ հայերը»՝ նոյն տեղում, էջ 71. նաեւ՝ Իշխանեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 68-71, նոյնի՝ *Պակերեազարդ պատմութիւն*, էջ 41. նաեւ՝ Մութաֆեան, Լովլ, էջ 20:

⁸⁸ И. М. Оранский, *Введение в иранскую филологию* (Իրանական բանասիրութեան ներածութիւն), «Նաուկա», Մոսկուա, 1988, էջ 124-28:

⁸⁹ Меликишвили, *Урартские клинообразные надписи*, էջ 89-92. նաեւ՝ Ղափանցեան, *Ուրարտի*, էջ 33-34. նոյնի՝ *Հայոց լեզուի պատմութիւն*, էջ 103. նաեւ՝ Дьяконов, էջ 113-65. նաեւ՝ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 417-18:

⁹⁰ Ջահուկեան, *Հայոց լեզուի*, էջ 421-22:

⁹¹ Джаукян, *Урартский*, էջ 146-47. նոյնի՝ *Հայոց լեզուի*, էջ 421-22:

փոքր մասը միայն (շուրջ 350 բառ եւ արմատ⁹²), որը չի կարող ամբողջական պատկերացում տալ ոչ միայն այդ լեզուի քերականական կառուցուածքի, այլեւ հնչոյթային կազմի վերաբերեալ, բ) *հ.-ե. նախալեզու-ուրարտերէն* հնչոյթային առնչութիւններում առկայ են *հ.-ե. նախալեզու-հայերէն* հնչոյթային համապատասխանութիւններին բնորոշ դրսետրոմներ, մասնաւորապէս՝ դիտարկուած է հպական բաղաձայնների տեղաշարժ (ըստ ասանդական մեկնարանութեան)⁹³, գ) կան զգալի թուով քերականական ընդհանրութիւններ, որոնք չեն կարող բացատրուել փոխառութեան երեսոյթով (հ.-ե. ձայնդարձին, բնատր հիմքով՝ *ե/օ*, հոլովմանը բնորոշ դրսետրոմներ, *էրգարիփ* -*Տե* վերջաւորութիւն [հմմտ. ուրարտ. *arše* «երեխայ, պատանի», ուրարտ. *ardiše* «ուժ, իշխանութիւն», ուրարտ. *bauše* «բառ, հրաման» են], որը համապատասխանում է *հ.-ե. անուանականի -s*⁹⁴ վերջին են.)⁹⁵, դ) դիտարկուել են ինչպէս հայերէնի, այնպէս էլ առհասարակ *հ.-ե. լեզուների* հետ բառապաշարային զգալի թուով ընդհանրութիւններ (հմմտ. ուրարտ. *armuzi* «ընտանիք (?)» (< *հ.-ե. *or-m- / *er-mo-*). հմմտ. *հյ. արմ* «արմատ», *արմատ* «արմատ, ցեղ, սերունդ», *գ-արմ* «ցեղ, սերունդ», - ուրարտ. *bauše* «բառ, հրաման. իր, առարկայ» (<*հ.-ե. *bħš-u-*). *հն. հնդկ. bħnati* «ասում է», *հյ. բան* «բառ, խոսք. իր առարկայ», *հուն. ֆոյմ (դոր. ֆոյմ)* «ասել», *հն. վրն գրմ. ban* «հրաման», լիտ. *bau`ma* «լսողութիւն, խօսակցութիւն, լուրեր, լեռիփրանք», - ուրարտ. *gumše* «ճակատամարտ, կռիւ, ընդիարում» (*gumšini* «զինուորական, մարտական») (< *հ.-ե. *gʷhono-s-*). հմմտ. *հուն. ֆոնոս* «սպանութիւն», *ֆոնոլ* «սպանութիւն, կոտորած», *հն սաքս. gumr* «ճակատամարտ, մարտ, կռիւ», *հյ. գան* (< *հ.-ե. *gʷhən-*) «ծեծ, գանահարութիւն» են.⁹⁶: Մեր հաշումներով Ջահուկեանի *Ուրարտերէնը ...* գրքում «ուրարտերէն *հ.-ե. լեզուներ*» համապատասխանութիւնները կազմում են շուրջ 214 բառ եւ արմատ, որոնց մօտ 20%ը (44 բառ) ունեն հայերէն համապատասխաններ: «Ուրարտերէն»-հայերէն համապատասխանութիւնների թիւը կ'աճի, եթէ նշումներին աւելցնենք նաեւ՝ 1) *baba* «լեռ» - *բարայ* «բլուր», 2) *burgana* «բերդ, ամրոց» - *բուրգն*, 3) *ħarħar-š-* «քանդել, անել» - *խարխար-եմ* «քանդել, խարխել», 4) *šani* «աման» (աքադ. *šannum* «կաթսայ» < շումեր.)-

⁹² Իշխանեան, *Բնիկ հայերէն բառեր*, էջ 42:

⁹³ Джаукян, *Урартский*, էջ 141-42:

⁹⁴ Կայ տեսակէտ, որ նախահնդեւրոպական փոլում *հ.-ե.* զոյականը եզակի եւ յոգնակի թուերում ունեցել է միեւնոյն **-es* վերջաւորութիւնը, որը անելի ուշ «անշեշտ դիրքում ընկել է» (А. Н. Савченко, *Сравнительная грамматика индоевропейских языков* (Հնդեւրոպական լեզուների համեմատական քերականութիւն), «Բարձրագոյն դպրոց», Մոսկուա, 1974, էջ 16): Հետեւաբար, բացառուած չէ, որ ուրարտ. լեզուի *ի-Տե* ծագումնաբանական կապ ունենայ *հ.-ե. անուանականի *-seh* հետ:

⁹⁵ Джаукян, *Урартский*, էջ 47-86, 142-43:

⁹⁶ Նոյն, էջ 94-124:

ասն,-ի «կաթսայ», 5) *te-ae* «մեծ» («շատ» ?) – *hj*. **տե, տի-* (*տի-եզերք, տի-կին, տի-այր* > *տեր* բառերում), 6) *ul̥ta(ni)* «ուղտ» – (*ul̥t >*) *ուղտ, -ու, 7) garini* «բերդ, ամրոց» (որտեղից էլ՝ *Giarniani* – *Գառնի* բառերը)⁹⁷: Միա կողմից՝ դեռեա ստուգաբանումած չէ հայերէնի շուրջ 2500 բառ եւ արմատ⁹⁸, եւ չի բացառում, որ դրանց մէջ կարող են զգալի թիւ կազմել հենց ուրարտական ենթաշերտի բառերը (Աճառեանի կանխատեսումով՝ մօտ 1000 բառ⁹⁹): Կարծում ենք՝ վերոշարադրեալը հիմք է տալիս ասելու, որ հայոց լեզուի կազմաւորման հարցում «ուրարտերէնի» նշանակութիւնը ուղիղ համեմատական է հայ ժողովրդի կազմաւորման գործում «ուրարտացիների» ունեցած դերին: Այսինքն՝ հայերէնի կազմաւորման մէջ «ուրարտական» բաղադրիչի դերն անելի մեծ է եղել, քան մեզ յայտնի է ըստ պահպանուած լեզուական նիւթի: Այն, որ պահպանուած լեզուական նիւթը ոչ-միանշանակ մեկնաբանութիւնների տեղիք է տալիս, կարծում ենք, թուն նիւթի աղքատութիւնից բացի, պայմանաւորուած է նաեւ հետեւեալ հանգամանքներով. ա) «ուրարտերէնը» միատարր չի եղել. նրա կազմում տարբերակուել է առնուազն երկու խօսուածք՝ *վանեան* եւ *մուսասիրեան*¹⁰⁰, բ) Նայիրի ցեղամիութիւնների մեծ մասը, եթէ ոչ՝ բոլորը, եղել են հայկական: Սրանք մի քանի հարիւրամեակ՝ մինչեւ Ուրարտուի կազմում ընդգրկուելը Ք.ա. Ը. դ., գոյութիւն են ունեցել տարանջատ կերպով: Այս հանգամանքը՝ նրանց շրջապատող օտարակեր (հնդեւրոպական եւ ոչ-հնդեւրոպական) ցեղերի եւ ժողովուրդների հետ մշտական շփումների պայմաններում, օր. ասուրերէնի հետ (Ասորեստանի թագաւորները յաճախ են արշաւանքներ ձեռնարկել դէպի Նայիրի երկրները, ապա նաեւ՝ դէպի Ուրարտու)¹⁰¹, կարող էր լրացուցիչ կերպով խթանել կենտրոնախոյս լեզուական միտումները, այն է՝ բարբառային տարբերութիւնների խորացումը: Պիտի կարծել, որ հայոց լեզուն մեզ յայտնի հինհայերէնեան (գրաբարեան) տեսքը սկսում է ստանալ Երուանդեանների եւ յատկապէս Արտաշիսեանների Հարստութեան շրջանում, որը, սակայն, չի նշանակում, թէ այդ փուլում ձեւաւորուող հայերէնը եղել է համայն հայութեան միասնական խօսակցական լեզուն: Առանել ես այդպիսին չի եղել նախարտաշիսեան շրջանի հայերէնը:

Ըստ ամէնայնի, Բիայնայի քնակիչների լեզուն նոյնպէս եղել է Նայիրի ցեղամիութիւններից մէկի խօսակցական հայերէնը, որը, ամէնայն հաւանականութեամբ, այդ պետութեան գոյութեան շրջանում Ք.ա. Թ.-2. դդ., բարձրացել է պետական լեզուի կարգավիճակի:

⁹⁷ Ջահուկեան, «Ուրարտերէնը», էջ 141-42. նոյնի՝ Հայոց լեզուի ..., էջ 430-32:

⁹⁸ Ջահուկեան, *Չրոյցներ հայոց լեզուի մասին*, «Ձանգակ», Երեւան, 1992, էջ 64:

⁹⁹ Աճառեան, *Լիակապար*, էջ 753:

¹⁰⁰ Меликишвили. *Урартский Язык*, էջ 7. նաեւ՝ Дьяконов, էջ 117:

¹⁰¹ Աղոնց, էջ 67-286. նաեւ՝ Ղափանցեան, *Ուրարտուի*, էջ 123-228. նաեւ՝ Меликишвили. *Урартские*, էջ 7-24. նաեւ՝ Հայ ժողովրդի պատմութիւն, Հտր. 1, էջ 279-338:

8) Բնականաբար, այստեղ ներկայացուած հայեցակարգը, որի հիմքում հ.-ե. նախահայրենքի առաջատրասիական վարկածն է, տեղ չի բողոնում հայերի նախնիներին՝ ի դէմս *արմէների*, «ծովային ժողովուրդների» կազմում Բալկաններից բերելու եւ դրանով պայմանաւորուած՝ յօգուտ այդ վարկածի հին աշխարհի պատմիչների մօտ հիմնատրուամեր փնտոելու փորձերի համար: Մանաանդ, որ՝ ա) հայկական առաջին պետութեան՝ Արատտայի մասին յիշատակումները գրեթէ մէկուկէս հազարամեակով կանխում են «ծովային ժողովուրդների» ներգաղթը փոքրասիական տարածք, բ) «ծովային ժողովուրդների» կազմում *արմէների* մասին ուղղակի յիշատակում չկայ. այդպիսի առաջին յիշատակումը կամ դրանցից մէկը վերաբերում է Ք.ա. 480ին Յունաստան արշատղ պարսից Քսերքսէս արքայի զօրաբանակում *արմէների* ներկայութեանը¹⁰²: Այսինքն՝ փոքրասիական տարածք «ծովային ժողովուրդների» ներթափանցման ժամանակից 7-8 դար լետոյ, երբ Մեծ Հայքում հաստատուել էր Երուանդեանների գերիշխանութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վերոշարադրեալը հիմք է տալիս անելու հետեւեալ եզրայանգումները.-

Ա) Հպաշփականների առկայութիւնը հնդեւրոպական հին, յատկապէս՝ *սափրըմ* (արեւելեան) խմբի լեզուներում վկայում է, որ դրանց ծագումը հնդեւրոպական երեսոյթ է, հետեաբար հայերէնում հպաշփական հնչոյթների առկայութեան հարցը պիտի քննել հնդեւրոպական, մասնատրասպէս՝ *սափրըմ* խմբի լեզուներում դրանց առկայութեան համատեքստում:

Բ) Կովկասեան լեզուներից հայերէնի կատարած փոխառութիւններում հպաշփականների արտացոլումը նոյնական հնչոյթներով վկայում է այն մասին, որ հպաշփականների համակարգը հայերէնում ձեատրուած էր նախքան փոխառութիւնները: Եթէ նկատի ունենանք, որ Ե. դարում թէ՛ հայերէնում եւ թէ՛ վրացերէնում այդ համակարգերն արդէն իրողութիւն էին, իսկ այդպիսի ամբողջական համակարգը չէր կարող ձեատրուել նոյնիսկ միջանի հարիւրամեակի ընթացքում, ուրեմն կովկասեան լեզուներից հայերէնի կատարած փոխառութիւնները քրիստոնէական առաջին դարերին վերագրելու դէպքում անգամ հայերէնի հպաշփականների համակարգը ձեատրուած պիտի լինէր դրանից շատ անելի առաջ:

Գ) Չպէտք է բացառել, որ ծագումնաբանօրէն տարբեր երկու՝ հնդեւրոպական եւ իբերակովկասեան լեզուներում հպաշփական հնչոյթների առաջացման նախադրեալները եղել են դեռեա այդ լեզուաընտանիքների նախալեզուներում՝ որպէս ժառանգութիւն նոստրատիկ դրութիւնից (Ք.ա. Է.-Ձ. հազարամեակներ): Արեւմտեան խմբի հ.-ե. հին լեզուներում հպաշփականների վատ ներկայացուածութիւնը կարող է լինել այդ լեզուները կրող

¹⁰² Հերոդոտոս, էջ 409. նաև՝ Գ. Ա. Տիրացեան, «Հայաստանը Արեւմէնեան», էջ 452:

ժողովուրդների (ցեղախմբերի) կողմից առաջատրափական նախահայրենիքը համեմատաբար ուշ, քան արեւմտեան միա լեզուները կրող ժողովուրդները (ցեղախմբերը), քելու արդիւնք, բայց անի վաղ, քան այդ հնչոյթները գրատր շրջանից յայտնի ծեատրմանը կը հասնէին արեւելեան խմբի լեզուներում: Յոյների եւ հնաբալկանեան միա ժողովուրդների (փոհագացիներ, թրակացիներ են.) դէպի Եւրոպա գաղթը, ըստ ամէնայնի, տեղի է ունեցել ոչ ուշ քան Ք.ա. Գ. հազարամեակի վերջ-Բ.ի առաջին կէսն ընկած ժամանակաշրջանում: Կարելի է ենթադրել, որ այբանական բարբառը (վաղնջագոյն այբաներէնը) կրողների գաղթը նախահայրենիքից տեղի է ունեցել հնաբալկանեան ժողովուրդների հետ միաժամանակ, երբ հպաշփականների առաջացման գործընթացն արդէն սկսուած էր: Նրանք իրենց ներկայիս եւրոպական հայրենիք են տեղաշարժուել փոքրասիական տարածքով՝ Սեւ Ծովի հարաային շրջաններով:

Հնարատր է, արեւելեան խմբի հ.-ե. լեզուներում հպաշփականների առաջացման համար նպաստատր ենթահող են եղել հնասիական լեզուների հետ շփումները:

Դ) Նկատի ունենալով այն աղքատիկ եւ միակողմանի բառամթերքը, որ բովանդակում է «ուրարտական» արձանագրութիւնների լեզուն, հազիւ թէ հիմքեր կան պնդելու, որ այդ լեզուի հնչոյթային կազմը մեզ յայտնի է ամբողջութեամբ: «Ուրարտական» արձանագրութիւնները կարող են միայն վկայել, որ Ք.ա. Ա. հազարամեակի կէտերին «ուրարտերէն» կոչուած լեզուն կային հպաշփականների որոշ ներկայացուցիչներ, որոնք ուներ նաեւ հայերէնը: Լինելով իւրայատուկ բնոյթի հնչոյթներ՝ ծագումնաբանական բնոյթի այլ առնչութիւնների ենթահողում հպաշփականները եւ կարող են դիտարկուել որպէս հայոց լեզուի հետ «ուրարտերէնի» մերձատր առնչութիւնների արտայայտութիւններ այն առումով, որ լեզուական ընդհանրութիւնների այն ամբողջութիւնը, որը երեան է հանում «ուրարտական» արձանագրութիւնների լեզուն հայերէնի հետ, չի դրսեւտրում տարածաշրջանի ինչպէս հնդեւրոպական, այնպէս էլ ոչ հնդեւրոպական որեւէ լեզուի հետ, այդ թում՝ վրացերէնի:

ON THE "CAUCASIAN" VERSION OF THE ORIGIN OF OLD ARMENIAN
AFFRICATES

(historical-linguistic examination)

(Summary)

VARDAN Z. PETROSYAN (vz.petrosyan@ysu.am)

Owing to the fact that there is some correspondence between the system of Old Armenian and Old Georgian affricates, i.e. voiced, voiceless and aspirated voiceless phonemic categories in two rows - voiced (δ/θ -[j], γ/γ -[j]), voiceless (δ/θ -[c], δ/θ -[č]) and aspirated voiceless (g/θ -[c'], γ/γ -[č']), distinguished linguists Heinrich Hübschmann, Antoine Meillet, and Grigor Ghapantsyan believed that Armenian affricates could have emerged under the influence of the Caucasian languages and particularly that of Old Georgian. Both H. Pederson and Gevorg Jahukyan, however, refuted this hypothesis and considered the Armenian affricates a phenomenon of Indo-European origin.

The author argues that there are no solid grounds to explain the origin of the Armenian affricates by the impact of the Caucasian substratum since, apart from Old Armenian, affricates were present in other old satem languages of not only South-Western Asia (Old Indian, Old Iranian languages) but also of the European region (Old Slavic, Lithuanian, Albanian). Old Indian, in particular, abounds in affricates. Obviously, the affricates in all these languages could not have developed under the influence of the Caucasian languages, especially with no clear evidence about any communication between Old Indian and Caucasian languages in, for instance, the pre-historical period.

Accordingly, the author stresses that, if the Indo-European nature of the Armenian language is acknowledged (and this is an irrefutable fact), the origin of the Armenian affricates ought to be viewed in the context of the origin of the similar phonemes of the Indo-European languages mentioned. It should be acknowledged that the preconditions for the emergence of the affricates existed already in the period of the Indo-European-Kartvelian- ... nostratic state and, hence, in Indo-European language, in general. One of the reasons was the presence of the favorable linguistic environment necessary for the emergence of these phonemes in the region. As far as Armenian is concerned, such conditions could be, for example, the existence of affricates in the Urartian language (comp. [c/=h]. ð), [c'/=h]. ɟ, [j/ç= h]. ð), [j/=h]. ɟ]). Apparently, the language of the Urartian records does not provide a full and comprehensive picture of the phonemic system of the language. However, the existence of several affricates in that language can be viewed as evidence of a closer connection of the Urartian language with Armenian rather than any other Indo-European or non-Indo-European language.

ՊԱՐԱՅԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱԼՄԱՍՏ ԵՒ ԱՆՈՒՇ ՕՊԵՐԱՆԵՐՈՒՄ

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ (nazeniks@gmail.com)

ՄՈՒՏՔ

Սոյն յօդուածում վերլուծում են Ալեքսանդր Սպենդիարեանի *Ալմաստ* եւ Արմէն Տիգրանեանի *Անուշ* օպերաների պարային տեսարանները.-

- որպէս ամբողջական երկի կառուցուածքային կարեւոր բաղադրամաս.
- որպէս երկերի գաղափարի ամբողջական բացայայտման գործօն.
- պարերի դիտարկումը Ի. դարի սկզբի երուպական մշակութային միտումների ենթահողում:

ԱԼՄԱՍՏ ԵՒ ՍԱԼՈՄԷ. ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

«Յիշում եմ, թէ ինչպիսի ոգետրոպեանք էր սրբեղծագործում հայրս Ալմաստի պարը,- գրում է Ալեքսանդր Սպենդիարեանի դուստրը՝ Մարինա Սպենդիարովան,- նա օր ու գիշեր նայած էր դաշնամուտի մօտ եւ երգում էր՝ նմանակելով հորոյներին եւ ֆելչրաներին: Ինձ իր մօտ էր կանչում, պատմում էր Ալմաստի ներքին բախման մասին եւ ասում էր՝ "պարում գազաթնակէտն է, գազաթնակէտն է այս բախման"»¹:

Ալմաստի պարն աւարտուած էր 1922 Յունուարին, իսկ օպերայի երրորդ գործողութիւնը՝ 1922 Փետրուարի 5ից 18ի ժամանակահատուածում²: Սպենդիարեանը 29 Յունուար 1922ին *Ալմաստ* օպերայի քննագրի հեղինակ Սոֆիա Պարնոկին³ գրում է. «Երրորդ գործողութիւնը մինչեւ "Թաթուլի երազները" ամբողջութեամբ աւարտուած եւ գրառուած են: Ալմաստի պարում երեքհարիւր փակփոց անջի է, փետւմ է ութ-փասը ռուպէ, բաժանուած է երեք մասի, համապատասխանաբար Ձեր կողմից ուրուագծուած»:

Պարնոկի եւ Սպենդիարեանի համատեղ աշխատանքը *Ալմաստի* վրայ մանրամասնօրէն ներկայացուած է Կարինէ Խոտաբաշեանի յօդուածում⁴: Նրանց նամակագրութիւնը տպագրուել է *Սպենդիարեանի նամակների ժո-*

¹ Марина Спендиарова, *Летопись Жизни и Творчества А.А.Спендиарова* (Ա.Ա. Սպենդիարովի կենսի եւ ստեղծագործութեան տարեգրութիւնը), Հայկ. ՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1975, էջ 366:

² Անդ:

³ Սոֆիա Պարնոկ (1885-1933), ռուս քանաստեղծ եւ թարգմանիչ, *Ալմաստ* օպերայի քննագրի հեղինակ:

⁴ К. Худабашян, "Автор либретто оперы «Алмаст» А. Спендиарова – Софья Парнок" (Ա. Սպենդիարովի 'Ալմաստ' օպերայի քննագրի հեղինակ՝ Սոֆիա Պարնոկ) *Ալեքսանդր Սպենդիարեան, յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ*, Հայկական ՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1973, էջ 187-210:

ղովածոտա⁵ եւ Ալ. Սպենդիարեան. կեանքի եւ սրբեղծագործութեան փառեգրութիւնում: Դժբախտաբար, ո՛չ նշուած գրքերում եւ յօդուածներում, ո՛չ էլ Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում կամ Սպենդիարեանի տուն-թանգարանում յայտնաբերել ենք Պարոնկի այն նամակը, որտեղ նա շարագրել է *Ալմաստի* պարի ծրագիրը: Սոյն յօդուածում մենք կը քացայայտենք «Ալմաստի պարը» մի շարք տեսանկիւններով:

Հազուագիտ են օպերաները, որտեղ հերոսուհին ունի ոչ թէ ծայայային, այլ պարային ընդգրկում-մենախօսութիւն: Առաել եւս այնպիսի մենախօսութիւն, որը գործողութեան գագաթնակէտն ու շրջադարձային փուլն է նշմարում եւ միաժամանակ, որոշիչ դեր է կատարում հերոսուհու ճակատագրում: Այդպիսիների թուին են Ռիխարդ Շտրաուսի *Սայրմէ* եւ Սպենդիարեանի *Ալմաստ* օպերաները: Մենք պատակահանօրէն չենք ընդգծում զուգահեռների անցկացումը Շտրաուսի եւ Սպենդիարեանի օպերաների միջեւ:

Ժամանակին Գէորգի Գէօրգիեանը նշել է, որ *Ալմաստ*ում քացայայտում են Սպենդիարեանին ժամանակակից օպերային արուեստին բնորոշ միտումները, որոնք բնորոշ են ինչպէս Ի. դարի արեւմտաեւրոպական (մասնաւորապէս պետք է ընդգծել կապերը Շտրաուսի *Սայրմէ*) ինչպէս նաեւ ռուսական օպերային⁶:

Գէօրգիեանն իր յօդուածում հարեանցի է յիշատակում Շտրաուսին⁷: Նա շեշտ է դնում Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի վերջին օպերաների եւ (Ռիմսկի-Կորսակովի աշակերտ) Սպենդիարեանի օպերայի համեմատական վերլուծութեան եւ զուգահեռների վրայ⁸: Սակայն, մեր կարծիքով, Շտրաուսի *Սայրմէ* եւ Սպենդիարեանի *Ալմաստ* օպերաները շատ անելի զուգահեռներ ունեն, ինչը պայմանաւորուած է ժԹ. դարավերջ-Ի. դարասկզբի մի շարք միտումներով:

Եւ դրանցից առաջինը հերոսուհիների ծագումնաբանական հարազատութիւնից է գալիս: Նրանց տիպաբանական նախակերպարն է Հերովդիայի դուստրը:

*Նոր Կրակարան*ում Հերովդիայի դստեր (որը, շնորհիւ Յովսէփոս Փլախոսի, ստացաւ Սալոմէ անունը) անձի հետ կապուած կարճ դրուագը, ստեղծման ժամանակից մինչեւ մեր օրերը գրաւել ու գրաւում է թե՛ աստուածաբանների, թե՛ ազգագրագետների եւ արուեստագետների, եւ թե՛

⁵ Ал. Спендиаров, *Письма* (նամակներ), *հրք. II*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1962:

⁶ Георгий Геодакян, *Пути Формирования Армянской Музыкальной Классики* (Հայ դասական երաժշտութեան ձեւատրման ուղիները), ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտի հրատ., Երեւան, 2006, էջ 177:

⁷ Անդ:

⁸ Նոյն, էջ 176-77:

գրականության ու արուեստի բնագաատում ստեղծագործող անհատների ուշադրութիւնը:

ԺԹ.դ. կէտերին Գիատա Ֆլորէրի *Հերովդիա* վէպը եւ այնուհետեւ դարավերջին Օսկար Ուայլդի *Սալոմէ* դրաման ազդարարեցին «սիմվոլիզմ» անուանումը ստացած ուղղութեան ծնունդը: Իսկ Ֆլորան Շմիդտի *Սալոմէի ողբերգութիւնը* եւ Շորաուաի *Սալոմէ* օպերաները համապատասխանաբար երաժշտական տպաւորապաշտութեան եւ արտայայտչապաշտութեան ամենացայտուն դրսեւորումներից են: Ընդ որում, 18 հարիւրամեակ անց Հերովդիայի դուստրը եւ նրա հետ կապուած անետարանական դրուագը ընկալում ու մատուցում են հիմնովին վերանայուած եւ վերինաստատրուած:

Այս կերպարանափոխութիւնը անելի ցայտուն ցուցադրելու նպատակով հարկ են համարում մէջբերել *Նոր Կտակարանում* շարադրուած պատմութիւնը:

Այն ժամանակ Հերովդէս չորրորդապետը լսեց Յիսուսի համբարը եւ իր ծառաներին ասաց. «Նա՛ է Յովհաննէս Մկրտիչը. մեռելներից յարութիւն է առել, եւ դրա համար նրա միջոցով զօրատր գործեր են լինում»: Արդարեւ Հերովդէսը ձերբակալել էր Յովհաննէսին, նրան կապել եւ բանտի մէջ էր դրել իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի պատճառով. որովհետեւ Յովհաննէսը նրան ասում էր. «Օրինատր չէ, որ դու նրան իբրեւ կին ունենաս»: Եւ կամենում էր նրան սպանել, բայց վախճնում էր ժողովրդից, քանի որ նրան որպէս մարգարէ էին ընդունում: Եւ երբ Հերովդէսի ծննդեան տարեդարձը հասաւ, Հերովդիայի դուստրը հրափրեալների առաջ պարեց. եւ հաճելի թուաց Հերովդէսին. ուստի եւ՝ նա երդումով խոստացաւ նրան տալ, ինչ էլ որ ուզի: Եւ նա, առաջուց խրատուած լինելով իր մօրից, ասաց. «Տու՛ր ինձ այստեղ, սկուտեղի վրայ, Յովհաննէս Մկրտչի գլովսը»: Եւ թագաւորը տխրեց, բայց երդման եւ սեղանակիցների պատճառով հրամայեց նրան տալ այդ: Եւ մարդ ուղարկեց, գլխատել տուեց Յովհաննէսին բանտի մէջ: Եւ նրա գլովսը բերուեց սկուտեղով ու տրուեց աղջկան: Եւ սա տարաւ այն իր մօրը (Մատթ. Գլ. 14: 3-12)

Մարկոսի մօտ մի փոքր անելի ծաւայուն է, սակայն, ըստ էութեան, բովանդակութիւնը նոյնն է:

Եթէ այս դրուագը վերլուծենք մեր օրերում լայն տարածում գտած «պատուիրոսած սպանութիւն» մասնակիցների դերաբաշխման տեսանկիւնով, ապա կը յայտնաբերենք մեզ քաջ յայտնի եռեակը՝ «պատուիրատոս», «միջնորդ» եւ սպանութիւնն իրագործող:

Նոր Կտակարանում «պատուիրատուն» Հերովդիան է, սպանութիւնն իրագործողը՝ Հերովդէսը, իսկ Հերովդիայի դուստրը, անելի ճիշտ, Հերովդիայի դստեր պարը՝ ընդամէնը միջնորդ:

Ֆլորէրի վիպակում դերաբաշխումը նոյնն է, մինչդեռ Ուայլդի երկում տեսնում ենք նոր դերաբաշխում: Իրքանանին սիրահարուած եւ նրա կողմից պախարակուող Սալոմէն դառնում է «պատուիրատոս» եւ ընդհանրապէս՝ դրամայի գլխատր գործող անձը, Հերովդէսը՝ իրագործողը: Սակայն

ամենահետաքրքիրն այն է, որ «միջնորդը» Ուայլդի տարբերակում մնում է անփոփոխ. դա Սալոմեի պարն է: Ուայլդի երկի տարբերակը (եւ ոչ թէ անտարանի դրոագը) դարձաւ Ի. դարում Սալոմեի կերպարին եւ պատմութեանը անդրադարձող յօրինողների, բեմադրիչների, պարաստեղծների, դերասանների, պարուհիների օրինակելի աղբիւր:

Չնայած բառացիօրէն բոլոր գործող անձերի կոտ ընդգրկուածութեանը, *Սալոմէ*, ըստ էութեան «մոնոդրամա» է, որտեղ ամէն ինչ բացայայտում է հերոսուհու ճակատագրի յարաբերութեամբ, ինչի պատճառով նրա երաժշտական բնութագիրը կազմում է օպերայի գլխատր գործողութեան զարգացման գիծը⁹:

Սալոմեի կրքերի պոռթկումները կազմում են օպերայի երեք նետրոյաին հանգոյց, դէպի որոնք ընթանում է դրամատիկ զարգացումը: Նրանցից ամէն մէկը ելեւէջային երանգի կենտրոնակէտ է¹⁰:

Չնայած *Ալմաստ* օպերան չի կարելի բնութագրել որպէս մոնոդրամա, սակայն այստեղ էլ ամէն ինչ նոյնպէս զարգանում է հերոսուհուն ճակատագրի յարաբերակցութեամբ:

Կարելի է համեմատել Շտրաուսի եւ Սպենդիարեանի օպերաների երեք «նետրոյաին» հանգոյց-«պայթիւն»ները»:

Սալոմէ

Առաջին «պայթիւն».- երկխօսութիւն Յովիաննէտ Մկրտչի հետ (Գ. պատկեր), որտեղ Սալոմէ ինքնամոռաց գրոհում է մարգարէի վրայ, ձգտում է նրան հրամցնել իր սէրը...

Երկրորդ «պայթիւն».- Սալոմեի պարը

Երրորդ «պայթիւն».- Սալոմեի վերջին մենախօսութիւնը Յովիաննէտ Մկրտչի կտրած գլխի հետ: Այն ամբողջութեամբ «կեանքին հրաժեշտ տալու» տպաւորութիւն է... արդէն մարած կեանքի վերջին կայծերը, երազները, որոնք ընդհատում են Հերովդէսի ջրային ճիշով. «Սպանէ՛ք այդ կնոջը»¹¹:

Ալմաստ

Առաջին «պայթիւն».- Աշոտի արիան եւ Ալմաստի արիոգոյն: Այստեղ Աշոտի գովքը հրապարտում է Ալմաստին եւ դրոյում մատնութեան՝ յանուն թագի: Դրան հետեւող Ալմաստի արիոգոյում ծագում է եւ սկսում է հասունանալ դաւադրութեան մտայնացումը:

Երկրորդ «պայթիւն».- Ալմաստի պարը

Երրորդ «պայթիւն».- Նաղիբ Շահի եւ Ալմաստի երկխօսութիւնը: Այստեղ Ալմաստը զոյցում է արդէն իր դաւադրութեան համար եւ բացէիբաց նետում է Շահի երեսին անհաճոյ խօսքեր՝ փառաբանելով Թաթուլին: Ջայրացած Շահը զոյցում է. «Պատժե՛ք, մատնիչ է սա: Գոյիր սրա համար պատիժ յարմար, օ՛, իմ դահիճ»:

⁹ Гиви Орджоникидзе, «Р. Штраус», «Музыка XX века». *Очерки* (Բ. Շտրաուս, 20րդ դարի երաժշտութիւն, ակնարկներ), մաս առաջին. գիրք երկրորդ, Մուզիկա հրատ., Մոսկուա, 1977, էջ 199-237:

¹⁰ Նոյն, էջ 214:

¹¹ Նոյն, էջ 214-215:

Այսպիսով տեսնում ենք, որ թե՛ Ուայլդի դրաման, թե՛ այդ երկի հիմքով ստեղծուած Շորաուսի օպերան եւ թե՛ Ապենդիարեանի օպերան ասարտում են, ըստ էութեան, նոյն բաներով. «Սպանէ՛ք այս կնոջը»: Մեր՝ վերը բերուած համեմատութիւնը մէկ անգամ եւ ասացուցում է, որ Շորաուսի օպերայի եւ *Ամաստի* միջեւ կան անմիջական զուգահեռներ:

Անդրադառնանք բուն մենապարիւն: Շորաուսի օպերայում այն մօտ 10-12 րոպէ է («Եօթ քօղերի պարը»), որը պարունակում է սրընթաց մուտք, դանդաղ մաս, որը զարգանալով քիչ-քիչ դառնում է անելի զգայուն, բռուն եւ արագանում է:

Ամաստի պարը տեսում է մօտ 9-10 րոպէ: Այն բաղկացած է բռուն մուտքից, դանդաղ պարից (որն իր հերթին ունի բաժիններ), արագ մասից եւ վերջաբանից, որտեղ Ամաստը պատկերացնում է իրեն թագադրուած:

Ըստ կառուցուածքի՝ այն նմանում է արեւելեան բազմամաս ծեփին, որն անուանում են *դաստգահ*¹² եւ պարունակում է հետեւեալ մասերը՝ *Պիշ դարամէդ* (նախնական մուտք), *նանգ* (պարային գործիքային մաս), *չահարմիզրաք* (գործիքային մաս), *թեսնիֆ* (երգային մաս): «Ամաստի պարում» այս մասը նուազախմբային է, սակայն երաժշտական թեման առնուած է 2րդ գործողութեան Աշուղի արիայի այն մասից, որտեղ նա խոստանում է Ամաստին թագը:

Պատճառն այն է, որ պարը (եւ ոչ միայն այդ պարը) գրելիս Ապենդիարեանը յենուել է Նիկողայոս Տիգրանեանի դաշնամուրային մշակումների՝ «Պարսկական *դաստգահ*ների» վրայ, իսկ միջին մասում նոյն Տիգրանեանի «Քեանդրբաք», «Վարդ կօշիկս» եւ «Շաւալի» պարերի դաշնամուրային մշակումների վերափոխուած նուազախմբային տարբերակն է, որը իր ուրոյն զարգացումն է ստանում:

Ընդգծենք, որ *Ամաստի* Բ. գործողութեան մի դրուագի քանաստեղծական շարադրանքը առնչում է *Անուշ* պոէմի այն մասին, որտեղ Անուշը ողբում է իր ճակատագիրը.

Ամաստ.- Ինչքան խորն են ցաւ ու դարդ,

Աղջիկների խումբ.- Ջան Գիլում, ջան, ջան...

Ամաստ.- Էլ չկայ արվան վարդ...

Աղջիկների խումբ.- Ջան Գիլում, ջան, ջան...

Դժբախտ ճակատագրի թեման կամրջի պէս միատրում է *Ամաստ* եւ *Անուշ* օպերաները:

ՊԱՐԱՅԻՆ ԴՐՈՒԱԳՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆՈՒՇ ՕՊԵՐԱՅՈՒՄ

ԺԹ. դարի երկրորդ կէտերից արեւելահայ բեմում տարածուած էր ազգային ծէսերի բեմական մշակումը: Այդպիսի մշակման մէջ տեղական պա-

¹² Լիլիթ Երնջակեան, *Հայ-իրանական երաժշտական կապերի պատմութիւնից*, Հաստատանի ԳԱ հրատ., Երեւան, 1991, էջ 104:

րերը՝ ուսմական կամ քաղաքային, ընդգրկում էին գործողութան մեջ՝ որպես ձեւի կազմաձույն:

Ամենատարածունակներից էր հարսանեկան ձեւի որեւէ դրուագի բեմական մշակումը: Գարրիել Սունդուկեանի *Գիշերուայ սարը խէր է եւ Բաղնիսի բոխչա* թատերախաղերում օգտագործուել է «խնամախօսութեան» դրուագը: Իսկ թատերագիր Գրիգորի Պապեանի *Դափ դարաքա կամ Մի հարսանիք* թատերգութիւնը ընդհանուր առմամբ կարելի է որակել որպէս հարսանեկան մի շարք դրուագների ազգագրական նկարագրութիւն՝ շարադրում թատերական ձեւով: Այս թատերախաղի պարերը կատարում են հարսանեկան ձեւով նախատեսում դրուագներում: Մի ամբողջ գործողութիւն է տրամադրում հարսանեկան խնջոյքի պատկերմանը Ալեքսանդր Շիրվանզադէի *Նամուս*, Գրիգոր Երիցեանի *Սայեաթ-Նովա*, Յովհաննէս Ոսկանեանի *Աշուղ Ղարիբ* եւ այլ բազում թատերգութիւններում: Նշանդրէքի դրուագներ կան Յարութիւն Եսայեանի *Սոնայի նշանդրէքը կամ մոցիքոյի Կրէժը* զանեշտում եւ Գարեգին Երիցեանի *Ուշ լինի, նուշ լինի* օպերէտում:

Տարածում էր նաեւ հարսանեկան ձեւերի ներկայացումը համերգային բեմում (այսինքն՝ թատերախաղից դուրս): Նման մշակման ձեւը կարելի է պայմանականօրէն անուանել «համերգային»:

Հարսանեկան ձեւի բեմականացումից զատ, շատ յաճախ է բեմում ներկայացում «վիճակահանման ձեւը» մի դէպքում՝ Համբարձման տօնի, այլ դէպքում՝ Վարդավառի տօնի ծիրին մէջ: Ըստ երեսոյթին, բախտորոշման «ձան գիլում» ձեւն առաջին անգամ բեմում է յայտնուել Միքայէլ Պատկանեանի *Մոցիքոյը* թատերախաղում (1859ին): «Վիճակահանման ձեւ» նկատուել է գրատու Ալեքանդր Քիշիշեանի *Վարդավառ* թատերգութեան մէջ: Վարդավառ տօնին է յատկացում ողջ առաջին գործողութիւնը *Մելիքի աղջիկը* (ըստ Լէոյի [Առաքել Բաբախանեան]) համանուն վէպի) եւ թատերագիր Տիգրան Նազարեանի *Արոզա* թատերգութիւններում: Համերգային մշակումներից յիշատակենք Քրիստափոր Կարա-Մուրզայի *Ջան գիլում* երաժշտական պատկերը¹³:

Յայտնի է, թէ որքան մեծ է «Համբարձման տօն»ի եւ Համբարձման ձեւի դրուագների նշանակութիւնը Յովհաննէս Թումանեանի *Անուշ* պոէմում: Նոյնքան մեծ տեղ են գրատու որանք ըստ այդ երկի ստեղծումը Արմէն Տիգրանեանի *Անուշ* օպերայում: Իսկ դրա բնօրինակի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ յօրինողը, հարազատ մնալով գրական աղբիւրին, ձգտում է ընդգծել ծիսական դրուագների կարեւոր դերը գործողութեան զարգացման ընթացքում: Այս կապակցութեամբ նոր լուսաբանում է ստանում պարային տեսարանների գործառոյթը: Դա յստակ բացայայտում է օպերայի

¹³ Այդ մասին տե՛ս՝ Նազնիկ Սարգսեան, «Քր. Կարա-Մուրզայի «ջան գիլում» ֆէլիան», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1999:2(98), էջ 139-49:

1912ի բնագրի¹⁴ եւ մեզ յայտնի խմբագրուած Անուշի՝ (1935ին առաջին բեմադրուպիւնը Սպենդիարեանի անոան օպերայի եւ բալէտի թատրոնում) համեմատութիւնը:¹⁵

1912ի բնօրինակը	1935ի խմբագրութիւնը
Բ. գործողութիւն	
<p><i>Համբարձման փօն</i></p> <p>1. Նախարան պատկեր՝ «Համբարձում եկա» խմբերգ</p> <p>2. Պարերգ (խմբային)</p> <p>3. Աղջիկների վիճակահանումը</p> <p>4. Վերջերգ</p>	<p><i>Համբարձման փօն</i></p> <p>1. Նախարան պատկեր՝ «Համբարձում եկա» խմբերգ</p> <p>2. Մենապար</p> <p>3. Սարոյի եւ Մոսիի զուգերգը</p> <p>4. Հովուական պար եւ կոխ</p> <p>5. Խմբային պար</p> <p>6. Աղջիկների ընդհանուր պարը</p> <p>7. Աղջիկների վիճակահանումը</p> <p>8. Մոսիի եւ Անուշի զուգերգը (վերջերգ)</p>
Գ. գործողութիւն	
<p>1. Առաջին պատկեր «Հարսանիք»</p> <p>2. Վերադարձ հարսանիքից: Պարերգային տեսարան:</p> <p>2. Փերիների պարը</p> <p>3. Սարոյի եւ Մոսիի կոխը եւ դրա հետեանքները</p>	<p>Առաջին պատկեր «Հարսանիք»</p> <p>1. Նախերգ տեսարան (մնջախաղ եւ պարեր)</p> <p>2. Ծերութեան պար</p> <p>3. Հարսի պար</p> <p>4. Սարոյի մեներգը</p> <p>6. Ընդհանուր պարա) խմբերգ բ) պար</p> <p>7. Հովիւների պարը</p> <p>8. Տղամարդկանց պարը եւ Սարոյի ու Մոսիի կոխի տեսարանը</p> <p>9. Քառերգ եւ խմբերգ</p> <p>10. Վերջերգ</p>

1. երկու տարբերակներում էլ պարերն առկայ են միայն երկրորդ եւ երրորդ գործողութիւններում եւ երկրորդ գործողութեան մէջ կապուած են Համբարձման տօնի, երրորդում՝ հարսանիքի հետ:

2. 1935ի տարբերակում երկրորդ գործողութեան մէջ ընդգրկուած են հինգ պար (ներառեալ՝ մուտքի «Համբարձում եկա» համարը, որը պարերգ է): 1912ի բնօրինակում առկայ է՝ միայն երկու պար: Դրանցից առաջինը համապատասխանում է «Համբարձումն եկա» պարերգի երկրորդ տարբե-

¹⁴ Արմէն Տիգրանեանի «Անուշ» օպերայի պարտիտուրի բնագիրը (1912) պահպանում է ԳԱԹում, Ա. Տիգրանեանի ֆոնդ, № 1:

¹⁵ Արմէն Տիգրանեան, *Անուշ օպերա, Կապիթ*, Սովետական Գրող, Երեւան, 1981:

րակին: Երկրորդը՝ ըստ երաժշտության, համապատասխանում է երկրորդ տարբերակի «Մենապարին» (N 2), սակայն 1912ի բնօրինակում նշում է որպես խմբապար:

1935ի երրորդ գործողության առաջին տեսարանն ընդգրկում է եօթ պար, որոնք պատկերի մեծ մասն են զբաղեցնում: 1912ի բնօրինակում այս տեղ միայն երկու պար է:

Բացակայում են NN 1-5, ինչպես նաև N 6ի առաջին մասը: 1912ի բնօրինակի սկզբնական համարը համապատասխանում է 1935ի տարբերակի N 6ի երկրորդ բաժնին: Ընդ որում, եթե յետագայ տարբերակում այդ պարը կատարում է միայն նուագախումբը, ապա բնօրինակում այն պարերգ է նուագախմբի նուագակցությամբ: «Փերինների պարը», որին նախորդում է «Սարոյի եւ Մոսիի կոխը» 1912ի տարբերակում, 1935ի տարբերակում բացակայում է:

Անոցի 1912 եւ 1935 տարբերակները համեմատելիս հարց է ծագում. ինչու՞ ժամանակին Տիգրանեանը չօգտուեց այդպիսի բարենպաստ ժանրային իրադրություններից, ինչպիսին էին Համբարձման տօներ եւ հարսանիքը, եւ սահմանափակուեց ընդամենը երկուքական պարային դրոագներով Բ. եւ Գ. գործողությունների մէջ:

Պատասխանի համար անդրադառնանք սկզբնաղբիւրին՝ Թումանեանի պոեմին: Ինչպես յայտնի է, կայ *Անուշ* պոեմի երկու խմբագրություն: Մէկը ստեղծուել է 1890ի սկզբին, երկրորդը՝ 1902ին: Լեւոն Հախվերդեանի՝ երկու տարբերակների համեմատական վերլուծութիւնը¹⁶ ցոյց տուեց, որ մասնատրապէս երկրորդ խմբագրութեան մէջ Թումանեանը իրաժարում է «ազգագրական» մանրամասներից:

Կարելի է ասել, որ Տիգրանեանի *Անուշը* կրեց հակառակ կերպարափոխութիւնը: 1935ի տարբերակում ներմուծուած նոր պարերը՝ քանակաբար ընդլայնելով Համբարձման տօնի եւ հարսանիքի տեսարանները, որակաբար, գործողութեան զարգացման առումով ոչինչ չեն ավելացնում: Այդ պարերի ներմուծումը օպերայի մէջ 30ականներին, երբ աճում է հետաքրքրութիւնը «ազգագրական» հաստատութեան հանդէպ, միանգամայն հասկանալի է: Սակայն սկզբնական տարբերակը շատ ատելի մօտ է Թումանեանի պոեմի վերջին խմբագրութեանը: Ինչպէս նշում է Հախվերդեանը՝ 1890ի տարբերակում «ճանաչողական-իմացական բնոյթը միանգամայն պարզ է՝ **ինչպէ՛ս են ապրում...** վերստեղծուած «Անուշում» ո՛չ այս հարցը, ո՛չ պատասխանը կայ, ո՛չ էլ դրա ենթադրուած խնդիրը: Սա ստորադասում է... մէկ ուրիշ, ատելի բարձր խնդրի¹⁷: Ի. դարի սկզբին տիպական «մարդու ան-

¹⁶ Լեւոն Հախվերդեան, *Թումանեանի աշխարհը*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1966, էջ 221-99:

¹⁷ Նոյն, էջ 230:

վերջ տանջանքի» թեման, որը «մենամարտում է իրեն ճնշող ուժի հեղ»¹⁸, հանդիսանում է *Անուշ*ում հիմնականը: Պոէմի, իսկ հետետղականօրէն՝ օպերայի կերպարները կազմում են հետետեալ շրջան. լենակէտային կերպարն է «Անուշի ճակատագիրը», որից ածանցում են փերիները՝ որպէս Անուշի ճակատագրի նախագուշակներ, այնուհետեւ՝ «Համբաժման տօնի վիճակահանութիւնը», «հարսանիքը», «Սարոյի եւ Մոսիի կոխը»:

Ստորեւ մենք կ'աշխատենք ցոյց տալ, որ 1912ի տարբերակի բոլոր պարերը անմիջականօրէն կապուած են այդ կերպարների հետ:

ա) Համբարձման տօնի վիճակահանութիւն.- Այս գործողութեան հիմնական՝ պարբերաբար կրկնուող պարային թեման է «Համբարձում եայլա»: Այն առաջին անգամ յայտնում է գործողութեան նախերգային՝ պարերգային պատկերում եւ աստիճանաբար վերափոխում է՝ ուրախ պարերգից Բ. գործողութիւնում մինչեւ ողբերգի՝ գործողութեան վերջում:

բ) Սարոյի եւ Մոսիի կոխը.- Ինչպէս արդէն նշել ենք, Գ. գործողութեան նախաբան-պարերգը կրկներգն է հանդիսանում թեմայի, որը յաջորդ (զվիստոր) դրուագում դրսետրտում է որպէս «Սարոյի եւ Մոսիի կոխի» *լէպ-թեմա* եւ ուղեկցում է այդ տեսարանը:

գ) Փերիներ.- «Կոխի» *լէպ-թեմայի* առաջին՝ հարսանեկան պարի ենթախորքում, եւ երկրորդ՝ «Սարոյի եւ Մոսիի կոխի դրուագ»ի կատարման միջեւ Ա. տարբերակում գետեղուած էր «Փերիների պար»ը, որոնց յայտնուելը ազդարարում էր Անուշի դժբախտ ճակատագրի իրականացման սկիզբը:

Վերեւի օրինակները բերում են այն եզրակացութեան, որ պարային թեմաները *Անուշ* օպերայում հանդէս են գալիս երկու հակադիր նշանակութիւններով՝ «ուրախութիւն» եւ «դժբախտութիւն»: Այստեղ մենք գործ ունենք «ժանրային միջնորդատրման» հետ (ըստ Աննոյը Ալշվանցի եզրաբանութեան)¹⁹, ընդ որում՝ նրա այն ձեւի հետ, որի դէպքում պարի մեղեդին ունի ոչ թէ մէկ, այլ երկու նշանակութիւն՝ «անմիջական» եւ «միջնորդատրուած»: *Անուշ* օպերայում առկայ է ոչ միայն ժանրային, այլեւ ժանրային իրադրութեան միջնորդատրում: Անուշի խելագարութեան տեսարանի այն դրուագը, որը ծագում է «Տեսէք, տեսէք, դափ ու զուռնով, Ինչ հարսնիք է դուրս գալի» տողերից մինչեւ «Ո՛վ է տեսել էսպէս հարսանիք, Ոչ հարս ունեն, ոչ փեսա» տողերը, զուգորդում են երրորդ գործողութեան հարսանիքի ուրախ տեսարանի հետ:

¹⁸ Михаил Тараканов, *Музыкальный Театр Альбана Берга* (Ալբան Բերգի երաժշտական թատրոնը), «Սովետական կոմպոզիտոր» հրատ., Մոսկուա, 1979, էջ 16:

¹⁹ Арнольд Альшванг. *П. И. Чайковский* (Պ.Ի. Չայկովսկի), Պետական երաժշտական հրատ., Մոսկուա, 1959, էջ 391:

Այսպիսով, ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Շտրաուսի *Սալոմէ* եւ Սպենդիարեանի *Ալմաստ* օպերաները, նամանաւանդ դրանց հերոսուհիները շատ զուգահեռներ ունեն, ինչը պայմանաւորուած է ժԹ. դարավերջ-Ի. դարասկզբի միտումներով: Տիգրանեանի *Անուշ* օպերայի քնօրինակի (1912) պարային տեսարանների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ յօրինողը, հարազատ մնալով գրական աղբիւրին, ձգտում է ընդգծել ծիսական դրուագների կարեւոր զարգացողական դերը՝ առաջնային թեմա դարձնելով Անուշի կանխորոշուած ճակատագիրը: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Սպենդիարեանի *Ալմաստ* եւ Տիգրանեանի *Անուշ* օպերաների պարային տեսարանները միանգամայն համապատասխանում են Ի. դարի սկզբի եւրոպական մշակութային միտումներին եւ կազմում են տուեալ ստեղծագործութիւնների կարեւոր կառուցուածքային ու զարգացողական բաղադրամասերը:

THE ROLE AND SIGNIFICANCE OF DANCE SCENES IN *ANUSH AND ALMAST* OPERAS

(Summary)

NAZENIK SARGSYAN (nazeniks@gmail.com)

The paper draws parallels between the operas of *Salomé* by Richard Strauss and *Almast* by Alexander Spendiaryan, and analyses the dance scenes in both these operas as well as Armen Tigranyan's *Anush* opera. Basically it focuses, however, on the heroines in *Salomé* and *Almast*, and argues that their theatrical performance was conditioned by the art trends of the late 19th and early 20th centuries. The analysis of the dance scenes of Armen Tigranyan's *Anush* opera (1912), on the other hand, shows that Tigranyan remained loyal to the literary source and strived to emphasize the important dramaturgical role of ritual episodes, prioritising Anush's predetermined fate.

The study shows that the dance scenes in *Almast* and *Anush* are in full agreement with the European cultural trends of the 20th century and constitute an important structural and dramaturgical component of these operas.



ՖՐՈՒՆՃԵԱՆ ԵՂՐԱՅՐՆԵՐ ԵՒ ՍՐՃԱՂԱՅՆԵՐՈՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ (1940ԱԿԱՆՆԵՐ)

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
(adakessian@haigazian.edu.lb)

ՄՈՒՏՔ

Լիբանահայ յետդեռնեան արհեստագործութիւնը հարիւր տարեկան է: Հասնաբար անոր առաջին քայլերը գորգի ու հիստաձեղէնի ասպարէզները եղած են, սկիզբ առած որբանոցներուն մէջ թէ լիբանանցի արաբ գործատէրերու մօտ հայ արհեստատրներու պաշտօնակոչումով: Սակայն, ենթադրաբար 1930ականներէն ու մանաւանդ 1940ականներէն՝ ծառայած ու զարգացած են այլ արհեստներ եւ, ինչպէս պղնձագործութիւնը, կապագործութիւնը, կաշեգործութիւնը՝ Ըստ պատմողներու, Պէյրութի ու Պուրճ Համուտի (Անդր-Նահար անունով ծանօթ՝ այդ օրերուն) մէջ եղած են հայ արհեստատրական թաղեր կամ կիսաթաղեր: Այսպէս, օրինակ, Պէյրութի Մար Մխայէլ շրջանի գլխատր փողոցը, որ Պուրճ Համուտն ու Հաճընը կը կապէ Պէյրութի կեդրոնական շուկաներուն, եւ որ 1975ին վերանուանուեցաւ Արմենիա, ուշագրաւ եղած է իր գորգագործական, հիստաձեղէնի ու մանուսագործութեան արհեստանոցներով եւ խանութներով: Անդին, Պուրճ Համուտի մէջ, Մարաշ ուղղուող փողոցներէն մին եղած է պղնձագործներու 'շուկան'՝ մինչ կօշկագործութիւնը տարածուած եղած է ամբողջ Պուրճ Համուտի մէջ:

Կը թուի, սակայն, որ այս արհեստները այնքան ալ տիրական, մանաւանդ երկարակեաց չեն եղած՝ Հալէպի հայկական արհեստագործութեան բաղդատմամբ²: Այդուհանդերձ, ասոնք եւս արժանի են ուսումնասիրու-

¹ Բանատր վկայութիւններ՝ ասպարէզին առնչուող հայ եւ արաբ արհեստատրներու հետ մեր հարցազրոյցներէն:

² Նկատի պէտք է առնել, որ Հալէպի մէջ հայ պղնձագործութիւնը, օրինակ, գոյատեւեց գրեթէ մինչև 2000ականներ:

թեան³; սակայն առկայ նիւթերը այնքան քիչ են որ հազիւ պարագայական կարելիութիւն կ'ընձեռեն դրուագային եւ կղզիացուած, մասնակի պատումներ յառաջացնելու այս կամ այն արհեստին կամ արհեստագործ վարպետին կամ արհեստանոցին մասին⁴:

Ստորեւ պիտի ջանանք ներկայացնել պէյրոպահայ պղնձագործութեան իրայատուկ դրսեւորումներէն հանդիսացող սրճադպաներու արտադրանքը, աւելի ճիշտ՝ այդ արհեստին ներկայացուցիչներէն Ֆրունճեան եղբայրներու, մասնաւոր՝ Գէորգ Ֆրունճեանի ու իր արտադրութեան պատումը:



ԱՌՌՈՂ ԵՒ ԱՐՃԱՂԱՏՆԵՐ

Սուրճը հայ իրականութեան մէջ գեթ վերջին երկհարիւրամեակի յառկանշական ներկայութիւն է: Անոր կիրառութիւնը սակայն հայոց մէջ աւելի հին է. հայր Միքայէլ Չամչեան Պատրարէն գրած **8** Վերտուար **1771** թուակիր անմակնի մէջ կը յօսի սուրճին մասին, սակայն զայն կը նկատէ դեղ. «Տաւ գլխոյ երբեմն նեղէ զիս, որպէս եւ յայսմ, ժամու եւ սակայն զարմանալի իմն դեղ գտի, զոր ոչ կամօր ի կիր ստեղծ, այսիքն ի խաիվէ, զի ընդ ըմպելս իմ ցան զաղաղի»⁵: Այս տողերը կը հաստատեն, որ դեռեւս ժԸ. դարավերջին հայկական միջավայրի մէջ ան կը կոչուէր «խաիվ» եւ դեռ չէր տարածուած իբրեւ ընդհանրական ըմպելի, ոչ ալ յառաջացած էր ժԹ. դարու միակ նորաստեղծ հայկական արմատ բառը՝ սուրճը⁶: Իդէպ, ըստ Հրաչեայ Աճառեան կը վկայէ թէ **1890** սականներուն Պոլսոյ երգնկացի հայ պանդուխտները կը զբաղէին սուրճի վաճառքով⁷:

Սուրճին՝ Քեսապի մէջ տարածածածութեան մասին, բանասէր Յակոբ Չոլաքեան հետեւեալը կը գրէ մեզի ուղղած իր 4 Յուլիս 2021 թուակիր նա-

³ Շահեկան Արսի ըլլար ուսումնասիրել Գեունեանի պատրաստած քարիւղով քանոյ սճախները, պղնձագործ Օհաննէս Սեֆերեանի արհեստագործութիւնը, Թճճեանի գորգագործական արհեստանոցը (Խալիլ Պետեւիի մոտոշին) են::

⁴ Անդրանիկ Յագեւաւան, «*Vartabedian Freses. Jdeldet El Metra*», *Զարթօնք օրաթերթ, ապրիլեան բացատիկ - 2019*, էջ **100-7**:

⁵ Նիւթը մեր ուշադրութեան յանձնեց բանասէր Մերուճան Կարապետեանը (Քաղորդակցութիւն՝ **30** Օգոստոս **2021**), որոն շնորհակալութիւն կը յայտնէր:

⁶ Ըստ ուսուցիչի՝ հնազուգեաւ. Օննիկ Սարգիսեանի **1970** ականներու դասարանային վկայութեան:

⁷ Քաղումը՝ Ռուբերթ Ըմաթոյեանի *Արեւմտեան Հայաստանի Բիթլիսի նահանգի հայ քնակցութեան թիւը Սեօ եղեանի նախօրեակին* հաւորդէն (մանուկ տակ):

մակին մէջ. «...սուրճը Քեսապի մէջ հինէն փարածում ունի, թերեւ 19րդ դարու կէտերէն: Հում սուրճը քուրցերով կը ներածուէր Քեսապի շուկան: Քեսապի թիթեղագործները կը շինէին սուրճը խարկելու յարուկ սարք: Արճաղացները երկու փեսակ կ'ըլլային՝ մեկտաղեայ երկարատուն գլանածեւ սարք „խատնլի՛ իրենց վրայ արարապտա (Հալէպ եւ Պէրոթ շինուած) եւ յարինաւրառ (Պոլիս շինուած) արճանագրութիւն ունէին. քորըն ալ հայ աւտուներ էին: Քեսապի շրջակայ արաւոփթ եւ թուրքմէն գիւղերը թէյի մշակոյթ ունէին. սուրճը անէյի ուշ ընդհանրացած է անոնց մէջ»¹⁰:

Վաւերական փաստեր կը հաստատեն արճաղացներու գոյութիւնը Պոլսոյ մէջ: Մամուլի վկայութիւններ կը հաստատեն նաեւ ոմն Արթին Մովսէսեանի արհեստագիտութիւնը արճաղացներու արտադրութեան մէջ¹¹:

ԱՐՃԱՂԱՅՆԵՐ ՈՒ ԿՆԻՔՆԵՐ

Անր հանդիպած ձևերի արճաղացներուն մեծամասնութիւնը կնիքում է զանազան ու տարբեր ձեւի կնիքներով¹²: Այստեղ կու տանք թէ՛ վաւասիաբար եւ թէ՛ հասանաբար ֆրունճեաններուն վերաբերող կնիքներուն մեր ունեցած ցանկը¹³, որիչ առիթի թողլով անէյի ամբողջական ցանկն ու մանրամասն նկարագրութիւնը կնիքներուն: Բսենք միայն թէ կնիքներուն վրայ կը հանդիպինք բազմաթիւ հայ արհեստատրներու յատինատառ, արաբատառ, հայատառ եւ լուսատառ անուններու, ինչպէս՝ Ամբակում, Արթին, Խաչիկ, Հաճի Արթին, Հաճի Մանուկ, Հաճի Օհան, Մէլգօն, Յակոբ, ԶԳԳ¹⁴, Պարոյր, Ն. Պեգեան, Պետրոս, Սիմոն: Հանդիպեցանք նաեւ թրքերէն միակ անունի մը՝ Քառրի: Զհանդիպեցանք, սակայն, որեւէ արաբանուն կնիքի:

Ֆրունճեաններուն մասին մեր պոպտումները իվերջոյ մեզ հաղորդակցութեան մէջ դրին Գեորգ Ֆրունճեանի որդի, քալիֆորնիաբնակ ժիւայր



¹⁰ Ընդհանրապէս կը յայտնենք բանասեր Յակոբ Չոլաբեանին եւ:

¹¹ Մեր նպատակէն դուրս է սուրճի հայկական կենցաղավարութեան պատմութիւնը ուսումնասիրելը: Հեռու ենք նաեւ օտւանեան միջակայքին մէջ ւուրճի կենցաղավարման խնդրամատուցութիւններն ու սեղեսիագրութիւնը պարտելէ:

¹² Հանդիպած ենք նաեւ - նուազ թիւով - զկնքումս արճաղացներու:

¹³ Չայի արարաբաւած ենք Իմնուկով մասնատեղ հասցեգրով. խառն Սիմոնեանի ճոխ Խաւարճոյնի վրայ, օգտուած ենք հաւաքածոնկըլ եւ:

¹⁴ Ստորիդային Հայաստանի մէջ պատրաստուած ոչ-պղնձեայ արճաղաց:

Ֆրոնճեանին հետ¹⁵, որ պատրաստական գունուեցու մեզի հաղորդել ինչ որ գիտեր ու նաեւ դիմել այլ գիտականերու, որով եւ յառաջացաւ այս նիւթին մէկ կարեւոր մասը¹⁶, որուն եկան աւելնալու հաւաքորդ Սասուն Սիմոնեանի սրճաղացներու հարուստ հաւաքածոյին տուեալները: Արդ, հաւաքուած նիւթը կարելիութիւն կու տար շարադրանք յառաջացնելու եւ գէշ մասամբ վերակառուցելու սրճաղացներու ֆրոնճեանական արահետին պատումը:

Ցաականութիւնը չունիւնց նիւթը սպառած համարելու, բայց կը կարեւորենց անոր հրատարակումը, որպէսզի արհեստագործական ասպարեզին ցարդ ապրող փոքրաթիւ ականատես վկաները կամ անոնց ժառանգորդները, որոնք կրնան որեւէ տուեալ ունենալ այս առնչութեամբ տեղեկացնեն ուր որ պէտք է, որով է առաւել լրասաբանով միջինարեւելեան արհեստագործութեան այս երեսակը¹⁷:

Ի ձեռի ունեցած մեր հաւաքածոյին տուեալները բաարար չեն յստակ պատկերացում մը յառաջացնելու թէ երբ, ո՛ր, ո՛վ, ի՞նչ պայմաններու մէջ սկսած է այս ճարտարարուեստը Լիբանանի մէջ, մանաւանդ որ հագուագիտ են թուականակիր սրճաղացները: Վստահաբար արհեստը ներածուած է (հասանաբար Պոլիսէն), կամ բերուած գաղթական հայերու կողմէ: Կը թոյլ սակայն, որ Լիբանանի մէջ սրճաղացներու տարածումը թափ առած է 1940ականներու աւարտէն, եւ նահանջել սկսած 1970ականներու աւարտին, երբ արհեստագիտական միջոցներու զարգացումով եւ նպարավաճառներու մօտ ելեկտրական սրճաղացներու տարածումով՝ տուներու մէջ սուրճ խարկել-աղալու դրութիւնը տակաւ դադրեցաւ: Իսկ 1980ականներէն սկսեալ, սուրճի կենցաղավարման զանգուածայնացումով, շուրջ տասնեակ մը ընկերութիւններ աղացուած սուրճ մատակարարեցին շուկա-



¹⁵ Վ. Գրայր պատմութեան՝ Ինչ եւս աշխատած էր իր հօր աշխատանոցին մէջ:

¹⁶ Այս ուսումնասիրութեան համար պլանուտան, կարևոր եւ օգտաշատ տուեալներ փոխանցելին եւ օգտակարութիւն ունեցան.- Արսիմ, Թորիկեան, Վարա՝ Թովարեան, դոկտ. Սրմէն Իրնէշլեան, դոկտ. Յոլարեան, Սերուժան Կարապետեան, Արթիւր Արզգիսեան (սնճական հանդիպում Էջրեֆիէ, Կիրա. յի 28 Մարտ 2021ին), Սիմոնեան, Արրահամ Փափազեան (Յն. Հայֆա, 1946, անձնական հանդիպում, 26 Մարտ, 2021ին, Պէրոյթ), տոքթ. Յակոբ Փառուպեան, Հիրայր Ֆրոնճեան (16 Մայիս 2021 եւ 16 Յունիս. 2021 եւ անձնակազմական հաղորդակցութիւն): Օգտուած ենք նաև Լ. Զրմէիի Ա. Յակոբ ձեւերչոյ թարմանական տոմարի. տուեալներէն: Այս բոլորին կը յայտնուց մեր Ձեռքիակարութիւնը:

¹⁷ Յիւսիփ, երբ կը քաջակային յայտին ի տուեալներն ու փաստերը բանասեր պատմութիւնը կը վերածով կարեւոր սկզբնաղբիւրի:

յին՝ նպարավաճառներուն դերը փոխելով աղացող-վաճառողէն պատրաստի սուրճ ծախողի¹⁶: Աւելցնենք, որ Լիբանանի պատերազմի տարիներուն լիբանահայ կարգ մը տուներու մէջ խարկել-աղալը կարճատեւ եւ պարագայական վերադարձ մը ունեցաւ, երբ ելեկտրականութեան տագնապի հետեանքով սրճաղաց գործարանները բաաարար չէին աշխատեր¹⁷:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

Նկարագրութիւն

Սրճաղացը իրարու ազուցում երկու գլանաձեւ տուփիկներէ կը բաղկանայ: Վերի գլանին մէջ կը լեցուի խարկուած սուրճը: Այս տուփիկին ստորին հատուածին ամրացում է երկաթեայ ‘աղօրիք’ը, որ աղալով սուրճը կը թափէ իրեն ազուցուցած վարի դատարկ տուփիկին: Երկաթեայ աղացքը ունի իրմէ դէպի վեր ցցուած առանցք մը, որ դուրս կը ցցուի առաջին տուփիկին մէջ լեցուած խարկուած սուրճին կափարիչին կեդրոնէն¹⁸: Դուրս ցցուած առանցքին կ’անցուի բռնակ մը, զոր պտուտկելով կ’աղացուի սուրճը: Առանցքին ամրացման համար առաջին գլանին վերի ծայրամասէն միքանի սանթիմետր վար հաստատուած է կեդրոնական ծակով երկաթեայ կամրջակ մը, որուն մէջէն կ’անցնի առանցքը: Կամրջակին երկու ծայրերը ամրացուած են գլանին պատին: Հետեաբար, սրճաղացը կը բաղկանայ չորս մասերով: 1) Պղնձեայ մասերն են.- 1) բռնակը¹⁹, որ պտուտկելով երկաթեայ սարքէն դուրս ցցուած առանցքը կը դարձնէ, 2) կափարիչը, 3) իր ստորին բաժինին մէջ երկաթեայ սարքը պարփակող գլանը, 4) աղացում սուրճը պարփակող վարի տուփիկ-գլանը: Իսկ մետաղեայ սարքը կը բաղկանայ երեք մասէ.- աղացող գործիքը, առանցքը եւ կամրջակը:

Նախշազարդեր

Գլանները չունին նախշումներ, բացի՝ երկու գլաններուն ազուցման, կամ իրարու միացման բաժիններէն: Ասոնք ունին բուն պատեանին ազուցման ծայրամասը պարուրող յաւելեալ գօտի մը, որուն վրայ – որպէս կանոն

¹⁶ Պէտք է նշել սակայն, թէ կային սուրճի մասնագիտացում խանութներ: Ըստ Իրնէշլեանի՝ «Մարաշի մէջ յիսնականներուն գործած է Զիա անունով հայու մը սուրճի արտադրամասը, որ սուրճ խարկած-աղացած եւ բաժնած է խանութներու Զիան իր արիեստը յանձնած է «Քաֆէ Կարօ»ին, որ յիսնականներու կէտերէն ունեցած է աղացած սուրճի արտադրամաս եւ բաժնած է մինչեւ գիտական շրջաններ: Զիայի խանութը յետոյ գնած է Յովհաննէս Ծանսրզեան, որ նոյնպէս զբաղած է սուրճի արտադրութեամբ, մինչեւ փոխադրութիւնը Արմենիա պողոտայի վրայ գտնուող իր երբօր վաճառատունը: Զիային երկու տղաքը քաղաքը լուսանկարիչներ էին» (վկայութիւն՝ 10 Սեպտեմբեր 2021ի մեր հանդիպման):

¹⁷ Ներկայիս անվերադարձ մեկնած է խարկել-աղալու գործընթացը տուներէն ներս:

¹⁸ Առանցքին միւս ծայրը – աղօրիքէն դէպի վար ցցում պոչիկը, միքանի սմ. երկաթեայ սարք – կը խրի վարի գլանաձեւ տուփիկին պարագլութեան մէջ:

¹⁹ Երբեմն այս եւս երկաթէ շինուած է, բացի գլխիկէն:

- կատարուած են միօրինակ, շրջայաճե նախշազարդումներ: Այս նախշումները ձեռային չեն, այլ՝ կաղապարումի արդիւնք:

Մեր դիտարկած բոլոր սրճադացներուն կնիքները զարնոած են առաջին տուփիկ-զլանիին գրեթէ կեդրոնական հատոածին վրայ: Մեր դիտարկումները կը հաստատեն որ բոլոր նախշերը եւ կնիքները կատարուած են զլաններուն պատրաստման ընթացքին եւ ոչ թէ գործի աարտին:

Գլաններուն եւ կափարիչին վրայ կան շուրջբոլոր հորիզոնական գիծեր, որոնք հասանաբար կը ծառայեն զլանի ձեւատրման աշխատանքներու չափագրման: Սրճադացին պղնձեայ հատուածներէն միայն բռնակն ու զլանի կը թափճու են, մինչ զլանները պղնձեայ թերթեր են, որոնք կը մկրատուին ըստ անհրաժեշտ չափերու եւ կ'ոլորուին՝ զլանի ձեւ ստանալու համար: Գլխարկին վրայ երեւոցող կլոր գիծերը հարթ տարածութեան միապաղաղութիւնը ընդհատելու նպատակ ալ կը հետապնդեն:

Հափագրութիւն

Առանցքը պտուտկող բռնակը շուրջ **13** սմ. է. ան կը ծալուփ երկուքի եւ կը զետեղուի առաջին զլանին մէջ: Բռնակը կը կշռէ **77-95** կրամ²⁰:

Գլխարկին մետաղը **4-5** սմ. Հաստութիւն, **3-3.5** սմ. հասակ: Տարբեր գլխարկներ կը կշռեն **50-85** կրամ²¹:

Վերի զլանը ունի **8.5-10** սմ. հասակ: Իսկ ներքեփ զլանին մէջ մտնող բաժինը ունի **1.5** սմ. հասակ, **414-730** կրամ կշիռը: Տոսիկիին մետաղին հաստութիւնն է **0.5-1** սմ.²²:

Վարի զլանը ունի **8.5-14.4** սմ. հասակ: Վերեփ զլանէն հատուած մը պարփակող մասը ունի **1.5** սմ. հասակ: Ան կը կշռէ **44-169** կրամ: Գլանին մետաղին հաստութիւնն է **0.5-1** սմ.²³:



Ղարգեւ Գրունճեանի արտադրած քանոցը եւ Գեորգ ու Գառնիկ Գրունճեաններու սպասարարած քանոցին պիտակը

²⁰ Հանդիպեցանք հետեւեալ կշիռներով բռնակներու.- **77.1, 78, 79, 95.2** կրամ:
²¹ Հանդիպեցանք հետեւեալ կշիռներով գլխարկներու.- **50.6, 73, 78.9, 82.5, 84.88** կրամ:
²² Հանդիպեցանք հետեւեալ հասակներով զլաններու.- **8.5, 9, 9.7, 10** սմ., որոնք ունին հետեւեալ կշիռները.- **414, 538, 557, 619, 730** կրամ եւ հետեւեալ հաստութիւնները.- **0.5, 0.6, 1** սմ.::
²³ Հանդիպեցանք հետեւեալ հասակներով զլաններու.- **8.5, 9.5, 11.9, 12.5, 13, 14.4** սմ., որոնք ունին հետեւեալ կշիռները.- **64.2, 81.6, 100, 111, 169** կրամ եւ հետեւեալ հաստութիւնը.- **0.5, 0.6, 0.7, 1** սմ.::

Գլանիկները իրարու ազուցող բաժինը պարուրող յանելեալ գօտիները երկու հատ են, նոյնաչափ, իւրաքանչիւրը՝ 1.2-2 սմ. հասակով: Ասոնք իրենց պարուրած գլանիկին հետ ունին 1-1.6 մլմ. հաստութիւն²⁴:

Գլանիկները ունին 4.5-5 սմ. տրամագիծ²⁵:

Ամփոփելով, կրնանք ըսել թէ սրճադաջը ունի շուրջ 26.5 սմ. հասակ, 5 սմ. տրամագիծ եւ 980 կրամ կշիռը:

ՖՐՈՒՆԸՆԵԱՆԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐ²⁶

Ստորեւ կը ներկայացնենք Ֆրունճեաններուն պատկանող (կամ վերագրուող) կնիքները.-

Ա) Հաճի Գէորգ

1.- Դէպի աջ բացուած աստղով²⁷ կիսալուսին, մզկիթ/6²⁸ بولاد اصلي 6/HADJI KEVORK/GARANT²⁹

2.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/³⁰بولاد اصلي/HADJI KEVORK/4 GARANTI 4

3.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/اصلي/بولاد/4 HADJI KEVORK 4/GARANTI

4.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/HADJI KEVORK/ 4 بولاد اصلي/ GARANTI

5.- HADJI/KEVORK/GARANTI/666

Բ) Հաճի Պարգեւ

1.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին, աստղ, մզկիթի զճանկար/BARKFOUR³¹ برك فور/GARANTI بولاد اصلي/աստղ 5 աստղ

2.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/بورک-فور/BARK FOUR/Trade Mark/GARANTI بولاد اصلي/ աստղ 6 աստղ

3.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/بورک-فور/BARK-FOUR/TRADE MARK بولاد اصلي/GARANTI/աստղ 6 աստղ

²⁴ Հանդիպեցանք հետեւեալ հասակներով գօտիներու.- 1,2, 1.5, 2 սմ., որոնք ունին հետեւեալ հաստութիւնը.- 1, 1.1, 1.2, 1.6 մլմ...:

²⁵ Շատ հազուադէպ են աւելի փոքր եւ մեծ տրամագիծով սրճադաջները:

²⁶ Երբեմն կը հանդիպինք արաբերէն եւ **Garanti** արտայայտութեանց սխալագրութիւններու: Նշուած թիւերը կնիքներուն մաս կը կազմեն եւ կ'անոնցին արտադրանքին որակին: Իսկ շեղակի գիծերով նշած ենք յաջորդ տողի սկիզբը:

²⁷ Բոլոր աստղերը հինգթեանի են:

²⁸ Այս եւ միւս բոլոր թիւերը մաս կը կազմեն կնիքներուն եւ կ'անոնցին արտադրանքին որակին: Իսկ շեղակի գիծերով նշած ենք կնիքի յաջորդ տողի սկիզբը:

²⁹ Բոլոր աստղերը հինգթեանի են:

³⁰ Այս բառը կը նշանակէ երաշխատրուած, կարծէք ատենի “warranty”-ն ըլլար:

³¹ «Պուլատ ապի» կը նշանակէ որակատր պողպատ, նկատի ունենալով որ աղօրիւրը շինուած էր երկաթէ եւ կրնար շուտ մաշիլ՝ եթէ չաղղապատուէր:

³² Պարգեւ Ֆրունճեան անուն-ազգանունի կրճատուած ձեւը:

- 4.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/HADJI -برك فور/BARKEY BARK-FOUR/GARANTI/աստղ 4 աստղ
- 5.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին/حاج بركيف/HADJI/BARKEY/Trade-Mark/ GARANTI/4 հինգթեանի մարգարտաձաղիկ
- 6.- աստղ/HADJI/BARKEY/աստղ
- 7.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին, մզկիթ /HADJI/ بولاصلي/BARKEY GARANTI/աստղ 4 աստղ
- 8.- Դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին, մզկիթ/HADJI بولاصلي/աստղ BARKEY աստղ GARANTI/4
- 9.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին/حاج بركيف/HADJI/BARKEY/TRADE MARK/GARNAT/կեդրոնական կլորին շուրջ հինգթեանի մարգարտաձաղիկ
- 10.- Դէպի աջ բացուած աստղով կիսալուսին/3 حاج بركيف/HADJI/VAHAN/ بولاصلي/GARANTI

4) Ֆորունճեաններ

- 1.- 4 դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին 4/ FOURROUNDJIAN FRERES/5555 GARANTI
- 2.- 5 դէպի երկինք բացուած աստղով կիսալուսին 5/JEAN FOURROUNDJIAN/5
- 3.- 4 դէպի երկինք բացուած կիսաբոլորակի մէջ աստղ 4/OAHAN³²/FOUR

ՏԻԳՐԱՆ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ ՖՐՈՒՆՃԵԱՆ ԸՆՏԱՆԻԺ ԵՒ ԶԱՆԱԿՆԵՐ

ա) Ընդհանրի ձեւատրում Հալէպ, ապա անցում Պէրոյօ եւ արքադրոյթեան սկսնատրում

Տիգրան եւ Սաթենիկ Ֆրունճեան ընտանիքը գոյատուած է Հալէպ, ուր ծնած են ընտանիքին հինգ զաւակները՝ Օննիկ (1921–72)³³, Պարգեւ (ծն. 1923), Գէորգ (1925–2003), Զապէլ (ծն. 1926) եւ Գառնիկ (ծն. 1928):

Գէորգ Ֆրունճեան ծնած է Հալէպ, 15 Օգոստոս 1925ին: Ան իր նախակրթութիւնը – ոչ-աւելի քան մինչեւ 5րդ դասարան - ստացած է Հալէպի մէջ, 1930ականներու կէսերուն աշխատանքի լծուած հօր հետ, Օննիկ ու Պարգեւ եղբայրներուն կողքին, մինչ կրտսերագոյն զաակ Գառնիկը շարունակած է ուսումը³⁴: Հաւանաբար այդ ժամանակ ալ ընտանիքը տեղափոխուած եւ հաստատուած է Արեւմտեան Պէրոյօ, Զոքթաբ էլ Պլաթի շրջանը:

³² Արդեօ՛ք «Օննիկ-Օհան»ի տարրերակն է, սխալագրում:

³³ Հաւանաբար անոր պաշտօնական անունը Յովհաննէս էր, որովհետեւ Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցիին մահացեալներու տոմարին մէջ հանդիպեցանք հանգուցեալ Յովհաննէս Ֆրունճեանի թաղման տուեալներու ան լիբանահայ է, ծնած Հալէպ 1921ին եւ մահացած Զահլէ, 10 Հոկտեմբեր 1972ին, շաքարախտէ ու թաղուած Պորճ Համոտ, 1 Նոյեմբեր 1972ին: Յովհաննէսի հօր անուն նշուած է Տիգրան (ծնեալ Տիգրանակերտ), իսկ մօր անուն՝ Հեղինէ (ծնեալ Սեւերէկ):..

³⁴ Գառնիկ ուսանած է Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան Նշան Փայանճեան Ճեմարանը մինչեւ 9րդ դասարան:

Կը թօփ թէ Տիգրան Ֆրունճեան իր գործատեղին կը հաստատէ Պուրճի մօտակայքը, ժըմմէլգի, ուր դանակ կը շինէր ու կը սրէր եւ փերեզակութեամբ կը ծախէր զանոնք Պէյրութի կեդրոնական շուկաները: Դանակ շինելը կ'ենթադրէ ծուլարան, ինչպէս նաեւ լա' իմացութիւն՝ երկաթի կարծրացման-պողպատացման գործընթացին³⁵:

Փերեզակութեան այդ շրջանին Գէորգ կը հանդիպի/կը գործակցի Վահան անուն անձի մը, որ գիտէր սրճադացներու արհեստը: Երեք զաւակները Վահանէն կը սորվին արհեստը, ու կը ձեռնարկեն արհեստին: Յայտնի չեն Վահանին ծագումը, ծննդավայրը, արհեստը ո՛ր սորված ըլլալը³⁶:

Հաւանաբար Վահան կրնայ իմացած ըլլալ արհեստը Պոլիսէն կամ Հալէպէն, զուցէ եւ սորված նոյնինքն Արթին Մովսէսեանէն, ապա անցած Պէյրութ:.. Կը թօփ, կարճ ժամանակ ետք, ձեռնհաս եւ աշխատասէր Գէորգ Ֆրունճեան կը դառնայ մոլիչ ուժը Օննիկ-Պարգե-Գէորգ գործընկերութեան, մինչ հօր ջանքերը՝ օգտակար դառնալու գործին, կը մերժովին³⁷:

Բ) Ներգաղթ եւ արտադրութեան հեզասահ ընթացքի խանգարում

1946ին, Գէորգ եւ Գառնիկ Ֆրունճեաններ, ուրիշ ընկերոջ մը հետ, կ'որոշեն Խորհրդային Հայաստան ներգաղթել: Անոնք՝ երեքով, առանց մեկնումի արձանագրութեան նաւ կը սողոսկին ու կը մեկնին Հայաստան, տունը երկտող մը ձգելով թէ իրենք կը ներգաղթեն ... Ըստ երեւոյթին, իրասփոփուելով Հայաստան ժամանումէն ետք իրենց առջեւ պարզուած իրականութենէն, կ'որոշեն ձգել երկիրը: Անոնք կը հասնին թրքական սահման, Արաքս գետի վրայով կը մտնեն Թուրքիա, կը ձերբակալուին թրքական սահմանապահներէ, կ'ենթարկուին թրքական կարճատեւ բանտարկութեան, բայց երբ կը պարզովին փախուստի³⁸ պարագաները իրենց մանրամասնութիւններով, ազատ կ'արձակովին եւ կ'անցնին Հալէպ: Հալէպէն Գէորգ կը հաղորդակցի իր մօր հետ ու կ'անցնի Պէյրութ:

³⁵ Այսմէկը նպաստած ըլլալու է զաւակներու մետաղի մասին իմացութեան:

³⁶ Ըստ Ժ. Ֆրունճեանի տեղեկատուութեան, Վահան սրճադացներ կ'արտադրէր Պէյրութի մէջ եւ զանոնք կը կնքէր իր անունով: Մենք, սակայն, չհանդիպեցանք այդ անունով կնքուած սրճադացներու:

³⁷ Ըստ Ժ. Ֆրունճեանի վկայութեան, զաւակները կը մղեն հայրը որ հանգստեան կոչուի, եւ զերձ մնայ յանելալ յոգնութենէ: Ասիկա, սակայն ընկճախտի կ'առաջնորդէ Տիգրանը, որ կը մահանայ 1956ին, Ջոքաք Պլաթի իր տան մէջ:

³⁸ Ծանօթ ենք փախուստի պատումի մը, երբ առաջին նաւով Պէյրութէն մեկնած երեք անձեր՝ Թորոս Ծերեճեան, ճեմարանցի մը եւ կաղ երիտասարդ մը, որոնք ներշնչուած Բ. համաշխարհային պատերազմի հերոս օդաչու Նելսոն Ստեփանեանի տիպարէն՝ երազած են օդաչու դառնալ: Մերժուելով, սակայն, անոնք Արաքսի վրայով Թուրքիա անցնելով վերադարձած են Պէյրութ, երբ դեռ երկրորդ կարաանը չէր մեկնած: Թորոս Ծերեճեան կը պատկանէր հնչակեան ընտանիքի: Ան իր ընտանիքին (Ճնողք, 3 յորը եւ երկու եղբայր) հետ ներգաղթած էր Խ. Հայաստան (հեռախօսագրոյց Մաքրոտի խաչատուրեանի հետ, 30 Յունիս 2021): Յստակ չէ թե՛ այս խմբակը կը նոյնանայ Ֆրունճեաններուն հետ:

Պէտք է ենթադրել որ այս ողիսականը՝ ներգաղթէն մինչեւ Պէրյոյզ վերադարձ, տեսած ըլլայ շուրջ երեք ամիս³⁹, հետեաբար պէտք է ակնկալել որ Գէորգ Ֆրունճեան Պէրյոյզի մէջ լիարժէք գործի վերսկսած ըլլայ 1947ին:

գ) Վերադարձ Պէրյոյզ, կայունացում եւ բաժանում

Վերականգնուած գործընկերութիւնը՝ երեք եղբայրներուն միջեւ, սակայն, երկար չի տեսեր եւ հասանաբար 1950ականներու սկիզբին, եղբայրներուն միջեւ անհամաձայնութիւններու պատճառով, նախ Օննիկը, յետոյ Պարգեւը կը հեռանան գործընկերութենէն: Մեզի կը թուի, թէ գործընկերութեան արհեստանոցը որ կը գտնուէր Ժըմնէլզիի մէջ, Փասթէօր փողոցին վրայ, նախապէս եղած ըլլար իրենց հօր Տիգրանի արհեստանոցը: Մեր տրամադրութեան տակ գտնուող նարինջի համեստ քամոցը (տե՛ս՝ նկարը) կը կրէ «Պարգ ֆուր» արաբատառ արձանագրութիւնը, ինչ որ հետեւցնել կու տայ թէ հասանաբար եղբայրներու գործընկերութիւնը հիմնուած չէր միայն սրճադահլներու վրայ, այլեւ՝ նարինջի քամոցներու եւ:

Սրճադահլներու երկու անջատ խումբեր կը կրեն «Ohannes Four» եւ «Bark/Barkev Four» կնիքներ, ինչ որ հետեւցնել կու տայ թէ եղբայրները առանձին շարունակած են իրենց արհեստը եւ հիմնած իրենց անձնական արտադրամասերը: Սակայն, Ժիրայր Ֆրունճեանի վկայութիւնը, թէ՛ «Օննիկը երբեք իր անձնական գործը չունեցաւ. միշտ աշխատեցաւ ուրիշներուն համար եւ հետ», ենթադրել կու տայ թէ անոր անձնական գործը չէ արդիւնատրուած եւ եղած կարճատե: Հուակ ան կը հաստատուի Ջահլէ, ուր եւ կը մահանայ (ծնթ. 33):

Պարգեւ Ֆրունճեան, սակայն, կը հաստատէ իր անձնական արհեստանոցը (շուրջ 95 քառ. մետր տարածութեամբ), Գէորգին արտադրամասէն քիչ մը անդին, դարձեալ Ժըմնէլզիի մէջ⁴⁰:

դ) Գէորգ Ֆրունճեան ընտանիք

Օննիկին ու Պարգեւին գործընկերութենէ հեռացումէն ետք, 1950ականներու սկիզբը, Գէորգ գործընկերութիւն կ'առաջարկէ իր միա եղբոր՝ Գառնիկին: Կը թուի թէ այս գործընկերութիւնը թէ՛ մասնակի էր⁴¹ եւ թէ՛ կարճատե, առաւելագոյնը՝ մինչեւ 1950ականներու աարտ: Գէորգ Ֆրունճեան կ'ամուսնանայ 1956ին Ս. Նշան եկեղեցի, Սուգան Հայվաճեանին հետ եւ

³⁹ Ներգաղթի առաջին նաւը Պէրյոյզէն կը մեկնի 23 Յունիսին, Պաթում կը հասնի Յունիս 27ին: Ներգաղթողները երեւան կը հասնին 2 Յուլիսին: Միա կարաւանները կը մեկնին՝ 10 եւ 12 Յուլիսին, 10 Օգոստոսին, 12, 16 եւ 27 Սեպտեմբերին եւ 1946ի վերջին կարաւանը՝ 5 Հոկտեմբերին (Ժողովուրդի ծայց, 5, 25, 28 Յունիս, 3, 10, 11, 14, 17, 21 Յուլիս, 8, 13, Օգոստոս եւ 4, 10, 11, 13, 15, 17, 20, 24, 29 Սեպտեմբեր, 3, 6 Հոկտեմբեր 1946): Հաասնական է որ Գէորգ Ֆրունճեան առաջին երեք կարաւաններէն մէկով մեկնած ըլլայ՝ հակառակ տրուած վկայութեան:

⁴⁰ Նիւթեր չունինք Պարգեւ Ֆրունճեանի արհեստանոցին գործունէութեան մասին:

⁴¹ Զիանդիպեցանք Գառնիկ-Գէորգ Ֆրունճեան կնքուած սրճադահլներու, սակայն ունինք նարինջի քամոցի պիտակ մը՝ «Kevork & K. Froundjian» (տե՛ս՝ նկար):

կ'ունենայ չորս զասակ՝ Անի (ծն. 1957), Ժիրայր (ծն. 1958), Վահե (ծն. 1960) եւ Սոնիա (ծն. 1962): Նոյն շրջանին, կ'ամուսնանայ նաեւ Գառնիկ: Կը թոփ թէ 1960ականներու սկիզբը Գէորգի գործը առանց կ'աճի: Եկամտոր կը հերքէ՛ր որ ան տեղափոխուի Էշրեֆիէ եւ գնէ նորակառոյց շէնքի մը մէկ յարկաբաժինը 1965-66ին, հաստատուի հոն իր ընտանիքով եւ մայրով: Մինչ, Գառնիկ կը ձեռնարկէ Մասիս ճաշարանի հիմնումին, որ 1970ականներուն նշանաւոր դարձած էր Պէրոյթի մէջ⁴²:



KEVOORK PROUNLIAN

2387-54 ST., PO. 27 - BK # 17
TEL: (914) 338-4425
1309X - 12993

0219470
8097 74 - 45470

րութ, որ ան յաճախ առանձինն կու գայ եւ արհեստանոցին մէջ մթերելով Հալէպի օճառ եւն. կը զբաղի փոքր առետուրով՝ զանոնք արտաձելով Լոս Անձելըս⁴³: Այլ խօսքով, ձիշտ է որ արհեստանոցը կը դադրի արտադրել, սակայն ան կը շարունակուի օգտագործուիլ իբրեւ պահեստ, մինչեւ Գէորգին մահը՝ 14 Սեպտեմբեր 2003, երբ Այնճարէն վերադարձին արկածի կ'ենթարկուի, վարորդը կը վիրատրուի, իսկ ինք կը մահանայ:

զ) Գէորգ Ֆրունճեանի արհեստանոցը

Գէորգ Ֆրունճեանի արհեստանոցը կը գտնուէր Մար Մխայիղէն դէպի Պէրոյթի կեդրոնական շրջանը եւ առետրական գօտին՝ Պուրճ, տանող

⁴² Հասանարար ան գոյթնէր. յերթական. մէջ չէր Գէորգ հետ, այլ. գործով:

⁴³ Վ. Ֆրունճեան կը վկայէ, «Մայրս ծնունտ արեւ ամիսներս կ'անցնէր. մեծի հետ, իւր մնացեալ 9 ամիսներս՝ Պէրոյթ: Իսկ կըր մայրս քաղցնելով՝ դիմադաջաւ, ան ծրագրեց ձորս մահէն ետք վերադառնալ եւ ապրիլ Լիբանանս»:

զխատր ճամփուն վրայ, ժըմմէլզիի կաթողիկէ Սէն Ֆամիլ դպրոցաշէնքին կից, Փասթէօր փողոց, թիւ 87: Խանութը ուղղանկյուն էր, խորունկ (շուրջ 275 քառ. մ.), ունէր երկու մաս՝ գրասենեկային բաժին եւ արհեստանոց: Գրասենեակի բաժինն փողոցին նայող ճակատը ունէր ապակեայ ցուցափեղկ (ուր կը ցուցադրուէին արտադրանքներու նմուշներ), կողքին՝ անցք մը դէպի գրասենեակ, որմէ ներս զետեղուած էր գրասեղանը: Գրասենեակ-մուտքի բաժինը տախտակով անջատուած էր ներսէն՝ գործատեղի-արհեստանոցէն: Գէորգ 1973ին, կը բանայ երկրորդ՝ ցուցասրահ-խանութ մը, Սայֆիի մէջ, քաղաքի կեդրոնին աւելի մօտ, միա աշխատավայրէն երկու հարիւր մեթր դէպի Պուրճի հրապարակ:

է) Արտադրութիւնները եւ շուկան

Ֆրունճեանները սկիզբէն եւեթ արտադրած են սրճադաց ու սանդ:

Գէորգ Ֆրունճեանի սրճադացները սկիզբը կրած են «**Hadji Kevork**» կնիքը, լուսին-աստղ զծանկարը եւ «**ISTANBUL**» գրութիւնը: Յետագային, սակայն, իրեն կը թելադրուի չգործածել ասոնք եւ ան կը հրաժարի անոնցմէ⁴⁴:

Ըստ Ժիրայրի, Գէորգ Ֆրունճեան գործարանը արտադրած է երեք տարբեր տեսակի սրճադաց. «Ներքեփի հատուածը կրնար “115” կամ աւելի լատրակ “116” ըլլալ: Իսկ լաագոյն որակը, որուն համար ցմահ կ’երաշխատուէր, “666” տեսակն էր: Հետեաքար, տարբեր տեսակները կ’անոնցուէին ներքին սարքին, եւ աղացքին մանրութեան»:

Աւելի ետք, ասոնց կու գան աւելնալու այլ արտադրութիւններ: Գէորգ 1950ին կը սկսի արտադրել նարինջ քամելու գործիք: Իր հիմնական գործը սրճադացն ու քամոցը կը դառնան: Ըստ Ժիրայրի՝ «Քամոցը տարբեր տեսակներ ունէր: Տարրական տեսակը կանաչ ներկուած կ’ըլլար, միջակորակը՝ կարմիր, լաագոյն երկու տեսակները՝ արծաթագոյն եւ ոսկեգոյն կ’ըլլային»⁴⁵: Ասոնցմէ միայն սրճադացներն ու քամոցները կ’ընքուած կամ մակնիշուած էին, մինչ սանդերը, որոնք տարբեր չափերով էին, չէին կնքուեր⁴⁶:

1960ականներուն, Գէորգ կը սկսի արտադրել փականագործութեան անիրաժեշտ կարգ մը սարքեր եւ, ինչպէս՝ լուացամանէն վար հոսող ջուրին մաղը եւն.: Այս արտադրութիւններուն բոլոր իրերը կը պատրաստուէին իր արհեստանոցին մէջ: Իր արտադրած գործիքներէն սրճադացին համար կը գործածէր պղինձ եւ երկաթ, նարինջի քամոցին համար՝ ֆոնտըր եւ ալիւմինիում, իսկ փականագործական իրերուն համար՝ սթէյնլէս:

Գէորգ ինք կը կատարէր իր արտադրութեան ցրումը ամբողջ Լիբանանի մէջ: Ան ամէնամսեայ երթեր կ’ընէր դէպի Թրիփոլի, իսկ ամէն վեց շա-

⁴⁴ Ժ. Ֆրունճեանի վկայութիւն: Չհանդիպեցանք “ISTANBUL”-ը կրող կնիքներու:

⁴⁵ Գէորգին քամոցները լատրակ էին, դիմացկուն եւ կը մրցէին արտասահմանեան (մանաւանդ իտալական) արտադրութեանց հետ, որոնք աւելի ներկայանալի էին (Ա. Փափագեանի վկայութիւն):

⁴⁶ Սրճադացները կնքելու այլ պատճառ էր առկայ մրցակցութիւնը:

բաթը անգամ մը՝ Սայտա: Պէյրուֆի մէջ, քամոցի իր մեծագոյն յաճախորդները Պասթայի շրջանի օշարակի եւ պողոտայի վաճառորդներն էին⁴⁷: Իր արտադրութիւնները ցուցադրուած էին նաեւ Մաարատի համապատասխան խանութներու մէջ: Արտադրութիւնները կ'արտածուէին արաբական երկիրներ, Քուէթ եւ Սէուդական Արաբիա: Միշտ կանխիկ կ'աշխատէր:

Սրճադասները ամբողջութեամբ կ'արտադրուէին Գէորգի արհեստանոցէն: Ան սրճադասներուն պղինձէ պատեաններուն համար պատրաստի թերթեր կը գնէր եւ կ'իջրէր զանոնք՝ սրճադասին պատեանը պատրաստելու համար: Ըստ Ժիրայրին՝ «ձեռնարկը մրճահարումով կը կատարուէր»: Սրճադասին կոթը պղինձ էր, որ նոյնպէս ձուպարանը կը ձուլուէր: Արտադրամասը երկու բաժին ունէր՝ պղինձեայ բաժինի պատրաստութեան եւ երկաթեայ սարքի ձուլման համար:

ը) Գէորգ Ֆրունճեան անհապը

Գէորգ Ֆրունճեանի մասին յուշերը կը հաաստեն, որ ան «լա հայ առաքելական մըն էր, մասնատր ուսում չունէր, գրել կարդալ գիտէր ոչ-սահուն, հայախօս էր, բայց թրքերէն եւ արաբերէն գիտէր, շատ լա արհեստատր էր, ձուպարոճ էր նաեւ, աշխատասէր, ճարակիկ, գործի ետեւէն էր եւ լա վաճառական⁴⁸, օգնող մարդ էր, Կիրակի չէր բանար արհեստանոցը, շատ եկեղեցի չէր երթար: Ժուժկալ էր, ուտելը կը սիրէր, բայց խմիչքը՝ ոչ: Շատ հայրենասէր, կենսասէր, ընկերային անձ էր, ուղղախօս էր, ինքնավատահ, միութեանական յատուկ հակումներ չունէր: Ոչ-հայերու հետ իր յարաբերութիւնները թոյլ էին: Կարճով էր, քիչ մը գէր, խնդումներս: Պատիւը շատ կը սիրէր, ամառները կնոջ հետ մինչեւ երոպաները կը ճամփորդէր: Խուփ մարդ չէր, ընդհակառակը կը պատմէր: Յաճախ հպարտութեամբ կը պատմէր իր փախուստը Հայաստանէն: Իր տունը կոկիկ էր, բարեկեցիկ, կինը կ'ըսէր որ շատ առատածեռն անձ մըն էր տան համար: Տեսողութեան խնդիր ունէր, հետեաբար 1970ականներուն արդէն ինքնաշարժ չէր վարէր»: Իր նախկին դրացիներէն մին կը յիշէ. «Շրջան մը երբ գողութիւնները շատցան, տանս մուտքի դռան կղպանքին *փլաք* մը դրաւ որ չկարենան բանալ. պահարանին տախտակէ ոտքերը կը փտէին՝ մետաղեայ գառաթակերպ մաշիկներ շինեց որպէսզի շուտ չմաշին... Լիբանանի պատերազմին հոս գտնուած շրջանին անուպարանին մէջ օգտակար եղաւ»:

Ժիրայր կը վկայէ. «Հայրս լա կազմակերպուած մարդ մըն էր, յաջողեր էր իր ձեռնարկած բոլոր գործերուն մէջ, ժրաջան ու տընաջան աշխատող էր եւ ազնիւ: Չբաջալերեց որ ուսումս շարունակեմ. ըստ իրեն՝ մարդուն համար պարզ գրել-կարդալ մը գիտնալը բաւարար էր շուկային մէջ գործելու:

⁴⁷ Ըստ Ա. Փափագեանի «Մենք 35 ոսկիի կը ծախէինք քմոցը: Իսկ սրճադասը անոր շուրջ բան մը պիտի ըլլայ»:

⁴⁸ Կը վկայուի որ ան «ամէն երեք ամիսը Հայաստան կ'երթար կու գար, վաճառականութիւն կ'ընէր»:

Փոքր տարիքես օրերը կը հաշուեր թէ երբ պիտի աւարտէի երկրորդականս ու միանայի իր գործին: Իրմէ սորված եմ աշխատասիրութիւն եւ պատասխանատուութիւն: Փոքր տարիքես ինծի ըսած էր որ իրմէ քան չակնկալեմ, "ինչ որ կ'ուզես ընել, դուն պէտք է շահիս եւ անձամբ ընես"»:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս ուսումնասիրութենէն պարզ կը դառնայ թէ.-

- 1) Սուրճը հայոց մէջ մուտք գործած է առնուազն 1770ականներէն:
- 2) Սրճաղացներու արտադրութիւնը հայոց մէջ գոյատւած է առնուազն ԺԹ. դարավերջէն:
- 3) Արիւեստը Պէյրութ քերուած է հայ գաղթականներուն միջոցաւ:
- 4) Ֆրունճեան եղբայրները կարեւոր նպաստ բերած են Պէյրութի մէջ սրճաղացներու ճարտարարուեստի զարգացման:
- 5) Սրճաղացներու ժամանակագրական կարգին առումով որոշակի է որ Hacı Artinէն ետք կու գայ Վահանը, ապա Froundjian Freresը, իսկ Hacı Barkev, Hacı Kevork եւ Hacı Ohannes կնքուած սրճաղացները արտադրուած են գրեթէ միաժամանակ:
- 6) Պէյրութեան սրճաղացներու ֆրունճեանական արտադրանքները գոյատւած են առաւելագոյնը շուրջ չորս տասնամեակ, 1940ականներէն 1970ականներու աւարտ եւ արդիւնքն են մէկ սերունդի:
- 7) Պարզեւ եւ Գեղորգ/Գ[առնիկ] Ֆրունճեանները անջատաբար արտադրած են նաեւ նարինջի քամոցներ:
- 8) Լիբանանցի արաբ արհեստատրներ հաւանաբար չեն առնչուած այս արտադրատեսակին:
- 9) Լիբանանի մէջ հայկական սրճաղացներու պատումը թերի է եւ անաւարտ:

THE FROUNDJIAN BROTHERS AND THE INDUSTRY OF COFFEE GRINDERS IN LEBANON (1940S)

(Summary)

Antranik Dakessian (adakessian@haigazian.edu.lb)

Based on the data collected from a large collection of coffee grinders, oral history and communication with the son of Kevork Froundjian, one of the founders of the industry in Beirut in the 1940s, the paper reconstructs the history of the development of the manual coffee grinding machine industry in Beirut and its market. The paper details the specifications of the machine and its various sizes, provides names of those who worked in the field and the dates of the rise and fall of the industry, as well as describing the workshop of Kevork Froundjian, its production line and items and the significant role the Froundjian brothers played in the development of the industry in Lebanon.

The paper concludes that the industry was introduced to Lebanon by Armenian refugees and that native Lebanese industrialists were not involved in this sphere.

ՍԻՒՆԻՔԱՐՑԱԽԵԱՆ-ՀԻՒՍԻՍԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՕՏԻՆԵՐԻ ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

(գեղազարդման ընդհանուր բնութագիր, տարբերակներ, զուգահեռներ)

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐԵԱՆ (sardarapatasatryan@gmail.com)

ՆԱԽԱԲԱՆ

2013-14ի ընթացքում Հայոց Ազգագրության Թանգարանի (ՀԱԹ) թանկարժեք մետաղի (ԹՄ) ֆոնդում ուսումնասիրել էինք ժԹ. դարավերջ-Ի. դարասկզբի սինիքարցախեան տարագի մաս կազմող արծաթեայ ատեյի քան 100 գոտի՝ նպատակ ունենալով տալ դրանց գեղազարդման բնորոշ առանձնայատկությունները, ընդհանուր բնութագիրը եւ այն գործառոյթները, որոնք կրում են այդ գոտիները՝ թե՛ որպէս ազգային տարագի մաս եւ թե՛ որպէս մետաղամշակութեան նմուշներ՝ փորձելով այսկերպ առարկայօրէն ցոյց տալ նաեւ տուեալ ժամանակաշրջանում գոյութիւն ունեցող արծաթագործութեան մակարդակն ու որակը՝ որպէս յարաբարական-կիրառական արուեստի ճիւղ¹:

Յետագայ ուսումնասիրությունները թոյլ տուեցին առանձնացնել տուեալ ժամանակաշրջանի սինիքարցախեան գոտիների եւս մէկ խումբ, որն անուանել ենք **սինիքարցախեան-հիւսիսկովկասեան**² տիպ, քանի որ վերջիններս այս կամ այն չափով կիրառուել են թե՛ Սինիք-Արցախում եւ թե՛ Հիւսիսային Կովկասի մի շարք ժողովուրդների՝ լակերի, լեզգիների, կուրաչիների, տաբասարների կենցաղում³:

¹ Արտակ Ասատրեան, «Սինիք-Արցախի գոտիների գեղազարդման ընդհանուր բնութագիր (ոճատրում, խորհրդիմաստ, տարբերակներ, զուգահեռներ, յարգաբանություններ)», *Հայկական հայագիտական հանդէս, հրդ. ԼԹ.*, 2019, էջ 225-52:

² Կրկնություններից եւ յարաբարություններից խուսափելու համար, ըստ անհրաժեշտութեան, հասասարագոր կը կիրառենք սինիքարցախեան կամ հիւսիսկովկասեան բնորոշումները՝ երկու դէպքում էլ նկատի ունենալով ուսումնասիրուող գոտիների խումբը եւ նմանատիպ գոտիներն ընդհանրապէս:

³ С. С. Агаширинова, *Материальная Культура Лезгин XIX-Начало XX в.* (Լեզգիների նիւթական մշակույթը ժԹ-Ի դարի սկիզբ), Մոսկուա, 1978, էջ 239, 240. նաեւ՝ С. Ш. Гаджиева, *Одежда Народов Дагестана* (Ղաղստանի ժողովուրդների հագուստը), Մոսկուա, 1981, էջ 118. նաեւ՝ А. А. Булатова, С. Ш. Гаджиева, Г. А. Сергеева, *Одежда Народов Дагестана* (Ղաղստանի ժողովուրդների հագուստը), Փոլշին, 2001, էջ 14, նկ.՝ էջ 164, աղիւս. xx, նկ. 3, էջ 189, աղիւս. xxxix, նկ. 3, էջ 191, աղիւս. xl, նկ. 6, էջ 194, աղիւս. xliii, նկ. 1, 2, 3, էջ 195, աղիւս. xliiv, նկ. 3. նաեւ՝ Российский Этнографический Музей 1902-2002 (Ռուսաստանի ազգագրութեան թանգարան 1902-2002), Սանկտ-Պետերբուրգ, 2001, էջ 154, «Պար տօնի ժամանակ»:

ՌՈՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ուսումնասիրությունը կատարելիս ելել ենք հետեւեալ հիմնարար սկզբունքներից.-

Ա. Պահպանել ենք գոտիների - որպէս ասանդական տարազի մաս դասակարգման - ազգագրութեան մէջ ընդունուած սկզբունքը՝ կանացի եւ տղամարդու⁴,

Բ. Ելնելով ուսումնասիրութեան նպատակից՝ կատարել ենք դասակարգում՝ սինիքարցախեան-հիսիսկովկասեան գոտիների գեղագարդման եղանակները կամ դրանց զուգորդումները (**փորագրում-սեւադապատում**, կամ **դրոշմում-մակագօղում** են.) դիտարկելով որպէս դասակարգման հիմնարար սկզբունքներ, որպէս առաջնահերթութիւն ընդունելով տուեալ եղանակ/եղանակների միջոցով ստացուած գեղարուեստական լուծումները,

Գ. Տիպաբանել ենք սինիքարցախեան-հիսիսկովկասեան գոտիները՝ ելնելով դրանց ճարմանդամների գեղագարդման գեղարուեստական լուծումների ու ռեապատկերային բազմաբովանդակութիւնից, քանի որ այս գոտիների ճարմանդաների յաւելումներն ունեն համեմատաբար միանման-միասնական գեղարուեստական լուծումներ:

Դ. Հիմք ընդունելով Բ. եւ Գ. կէտերը՝ փորձել ենք ցոյց տալ սինիքարցախեան-հիսիսկովկասեան գոտիների գեղարուեստական լուծումների զուգահեռներն ու տարբերակները հայ ժողովրդական արուեստի այլ ճիւղերի հետ:

ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

Ազգագրագէտ Ստեփան Լիսիցեանը նկարագրելով Զանգեզուրի կանանց տարազը՝ նշում է. «...վերջերս, մանաւանդ քահիչները, կապում էին - կաշուց - թոխկա՝ արծաթէ կամ ոսկէ զարդերով պատրաստ, տեղական կամ Դաղսպանի կոլբասիների գործ»⁵: Նկարագրելով Ղարաբաղի տան կահկարասին ու դասատրութիւնը՝ Լիսիցեանը գրում է. «Պատերին կախուած են Անդրկովկասի ու Ռուսասպանի քաղաքներում ցրուած հեռու եւ մօտ ազգականների լուսանկարների մի ամբողջ հասարածու...»⁶: Այս թէկուզ եւ սակաւ, սակայն արժէքատու տեղեկութիւններն ինքնին բացատրում են այն, թէ ինչու են հիսիսկովկասեան այս գոտիներն այսքան տարածուած եղել Սինիք-Արցախում:

Հեղինակը, խօսելով լեզգիների մետաղամշակութեան արտադրանքի մասին, նշում է. «Պատրաստման եղանակներով լեզգիների արտադրան-

⁴ Մանրամասն տե՛ս՝ Ասատրեան, «Սինիք-Արցախի», էջ 225, նաեւ՝ էջ 224, ծնթ. 1:

⁵ Ստեփան Դ. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 117:

⁶ Ս. Դ. Լիսիցեան, «Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)», Հայ ազգագրութիւն եւ բանահիւստիւն 12, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 34:

ըլ աչքի էր ընկնում արտակարգ բազմազանությամբ: Կիրառում էր փո-
րագրությունը, սեռադասակարգումը, փայտի ու մեծադիր վրայ ներդրողագու-
մը: Այնուամենայնի՜ մանրարուք եւ էմալէ առարկաների արտադրությունը,
ինչպէս կոբալտների ու լակերի մօտ, փարածում չգտաւ: Մանրարուք եւ է-
մալապար գարդերը նրանք ձեռք էին բերում (գնում էին) կոբալտներից,
լակերից, աղորեջանցիներից, վրացիներից ու հայերից, որոնք ապրում
էին Դերբենիում, Նովիխում, Բարսում, Շամախիում եւ այլ քաղաքներում»⁷:

Նշենք նաեւ, որ հայոց մէջ «գօտի» բառի հոմանիշ «կամար»⁸ բառը,
գործածական է նաեւ այլ ազգերի ու ժողովուրդների մօտ, օրինակ՝ դար-
գիներէն՝ камал, լակերէն՝ myxлы, камар, լեզգիերէն՝ камари, կումիկերէն՝
белъдав, кемел, камал, տաբասարերէն՝ камар»⁹:

Գիտական նկարագրութեան մէջ այս գօտիները նշում են մի դէպքում
որպէս սինիքարցախեան¹⁰, միա դէպքում որպէս հիախսկովկասեան¹¹ եւ
երրորդ դէպքում՝ որպէս հիախսկովկասեան կամ սինիքարցախեան¹²:

⁷ Агаширинова, էջ 92:

⁸ Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հյր. Ա., Ա-Կ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1979, էջ
589. նաեւ՝ Մարաքիա արք. Օրմանեան, Ծիսական բառարան, ԿՀՄՍԿ, Անթիլ-
իաս-Լիբանան, 1979, էջ 108. նաեւ՝ Ա. Մ. Սուքիասեան, Հայոց լեզուի հոմանիշ-
ների բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 151, Նոյնի՜ Հայոց լեզուի
հոմանիշների բազմարական բառարան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 212:

⁹ Гаджиева, էջ 118, մտք. 109:

¹⁰ Տե՛ս՝ ՀԱԹԻ նմանատիպ գօտիների գիտական անձնագրերը՝ NN 608 - Արցախ,
614 - Արցախ, 665/2 - Սինիք-Արցախ, 665/4 - Արցախ-Սինիք, 665/7 - Սինիք-
Արցախ, 667/6 - Սինիք-Արցախ, 670/5 - Արցախ-Սինիք, 670/7 - Սինիք-Ար-
ցախ, 671/1 - Սինիք-Արցախ, 671/8 - Սինիք-Արցախ, 671/9 - Սինիք-Արցախ,
685/2 - Սինիք-Արցախ, 685/3 - Արցախ, 739/26 - Արցախ (Շուշի), 743/9 - Սի-
նիք, 743/12 - Սինիք, 744/4 - Սինիք, 833/1 - Սինիք, 833/2 - Սինիք-Արցախ,
833/3 - Սինիք-Արցախ, 1027/3 - Սինիք-Արցախ, 1154/2 - Արցախ, 1997/3 - Սի-
նիք, 2131/20 - Արցախ, 2135/3 - Արցախ, 2509/6 - Սինիք-Արցախ, 2727/1 - Ար-
ցախ, 2727/2 - Սինիք-Արցախ, 2788/5 - Արցախ, 2789/1 - Արցախ, 6080/3 - Ար-
ցախ, 6080/4 - Արցախ, 6158/2 - Արցախ, 6346/1 - Արցախ, 6519/2 - Արցախ,
6930/5 - Արցախ:

¹¹ Տե՛ս՝ ՀԱԹԻ նմանատիպ գօտիների գիտական անձնագրերը՝ NN 230/1 - Հիւս.
Կովկաս, 230/2 - Հիւս. Կովկաս, 2463/8 - Հիւս. Կովկաս, 2463/9 - Հիւս. Կովկաս:

¹² Տե՛ս՝ ՀԱԹԻ նմանատիպ գօտիների գիտական անձնագրերը՝ NN 180/3 - Ար-
ցախ կամ Հիւս. Կովկաս, 180/4 - Հիւս. Կովկաս կամ Արցախ, 487/1 - Արցախ
կամ Հիւս. Կովկաս, 665/1 - Հիւս. Կովկաս կամ Արցախ, 733/1 - գիտական անձ-
նագրում՝ Արցախ կամ Հիւս. Կովկաս, 1027/1ա - Արցախ, Հիւս. Կովկաս, 1027/1բ
- Արցախ, Հիւս. Կովկաս, 1027/1գ - Արցախ, Հիւս. Կովկաս, 1027/1դ - Արցախ,
Հիւս. Կովկաս, 1027/2 - Արցախ, Հիւս. Կովկաս, 1589/5 - Հիւս. Կովկաս կամ
Արցախ, 2131/8 - Արցախ կամ Հիւս. Կովկաս, 2131/9 - Սինիք-Արցախ կամ Հիւս.
Կովկաս, 2131/10 - Հիւս. Կովկաս կամ Արցախ, 2131/11 - Արցախ կամ Հիւս.
Կովկաս, 2131/12 - Հիւս. Կովկաս կամ Արցախ, 2131/13 - Հիւս. Կովկաս կամ

Բոլորովին յասակնկոլօթին չունենալով հիսիսկովկասեան գօտիները միանշանակօրէն վերագրել հայ մշակոյթին կամ հայ արծաթագործ վարպետերին, ամուսմէնայնի, այս աշխատանքում կր փորձենք ցոյց տալ, որ վերոնշեալ գօտիների առնուազն որոշ տարբերակներ ու խմբեր պատրաստուել են Սինիք-Արցախում, տեղի արծաթագործ վարպետների կողմից:

ՀԻՍԻՍԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՆԱՑԻ ԳՕՏԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Արդէն նշել ենք¹³, որ տիպիկ սինիքարցախեան կանացի գօտիներն իրրեա հիմնարար կատուցուածք ունեն երկմաս թոջնագլոյխ (կամ ոճատրուած թոջնագլոյխ) ճարմանդ, ճարմանդամասերին յաջորդող մէկական ուղղանկիւն-երկարատուն թոջնագլոյխ (կամ ոճատրուած թոջնագլոյխ, երբեմն՝ ծաղկանախշով ասրտոտդ) զարդատախտակ, մէկընդմէջ դասատրուած ծաղկածե-իննաթերթ եւ խաչահիմք թոջնագլոյխ զարդակոճակներ՝ հաւաքուած կաշուէ գօտու (հիմքի) վրայ (նկ. 1):



Արցախ, **2131/14** - Արցախ կամ Հիւս. Կովկաս, **2131/15** - Հիւս. Կովկաս կամ Արցախ, **2131/18** - Արցախ կամ Հիւս. Կովկաս, **2131/19** - Արցախ կամ Հիւս. Կովկաս, **2131/** - Արցախ կամ Հիւս. Կովկաս, **2131/22** Հիւս. Կովկաս եւ Արցախ, **2135/4** Հիւս. Կովկաս կամ Արցախ, **2313/1** Հիւս. Կովկաս եւ Արցախ, **3044/3** - Արցախ կամ Հիւս. Կովկաս, **3044/4** - Հիւս. Կովկաս կամ Արցախ, **3044/6** - Հիւս. Կովկաս կամ Արցախ, **6519/1** - Արցախ, Հիւս. Կովկաս: Տե՛ս նաև՝ *Շաղկիտի հատաքանը, Երևան քաղաքի սպազմոթոսան բանազարան, (Երևան, 2008) կատալոգում՝* Լջ **16**. գօտի **N 2948-1**, Շուշի **19**րդ դ. վերջ, Լջ **17**. նաեւ՝ գօտի **N 2948-2** (ծագման Այսմ կենցաղաարման/ վայրը նշուած չէ), **19**րդ դ., Էջ **18**. գօտի **N 2948-4** (ծագման Այսմ կենցաղաարման/ վայրը նշուած չէ), **19**րդ դ., Էջ **28**. գօտի **N 2498-1**, Հայաստան, **19**րդ դ., Էջ **30**. գօտիներ **NN 3013-4**ա,ր Գանձակ, **19**րդ դ. վերջ, **3013-5**ա,ր, Շուշի, **19**րդ դ. վերջ, Էջ **31**. գօտի **N 3013-2**ա,ր, Գանձակ, **19**րդ դ. վերջ, Էջ **32**. գօտիներ **NN 3013-3**ա,ր, Հիւս. Կովկաս, **19**րդ դ. վերջ, **3269-2**ա,ր, Հիւս. Կովկաս, **19**րդ դ., Լջ **33**, գօտիներ **NN 3013-1**ա, բ, Շամախի, **19**րդ դ. վերջ, **3015-1**, (ծագման Այսմ կենցաղաարման/ վայրը նշուած չէ), **19**րդ դ.:

¹³ Սաստրեան, «Սինիք-Արցախի», էջ **230-36**:

Հիսխկովկասեան գօտիներն ունեն սովորաբար բաականին մեծ, զանգուածեղ, ուղղանկյուն-ուռուցիկ ճարմանդամասեր, որոնցից մէկն ունի կենտրոնում գմբէթակիր շրջանաձեւ/վահանաձեւ¹⁴ (երբեմն նաեւ ութանգոն) յաւելում, զարդարում են գերազանցապէս երեք շարքով դասատրում ռուսական կամ պարսկական մետաղադրամներով (Նկ. 2):



Որոշ դէպքերում այս ճարմանդների ստորին եզրին զօղում են օղակներ, որոնցից սովորաբար կախում էին մետաղադրամներ կամ մետաղադրամներից պատրաստուած զարդակախիւկներ (Նկ. 3)¹⁵: Կան են

¹⁴ Բացառութիւն է միայն **N 2313/1** գտնու ճարմանդը, որի յաւելումը ճոււղիք է:
¹⁵ Ուսումնասիրուող գօտիներից նմանատիպ ճարմանդներ ունեն ուրբը **NN 2131/15** - պահպանուել են երկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, **2131/17** - սպառախուել են երկնաս ճարմանդը եւ մետաղադրամ-զարակախիւկներ, **2131/23** - պահպանուել են կրկնաս ճարմանդը եւ մետաղադրամ-զարդակախիւկներ, **2313/3** - սմբուլական, **3044/5** - պահպանուել են միայն կրկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, **4220** - սմբուլական, **6930/3** - երկնաս ճարմանդ, **7333** - երկնաս ճարմանդ:
¹⁶ Գօտիներ **NN 667/6** - պահպանուել են երկնաս ճարմանդը եւ սիւլիկ սիմիլ-քարցախեան կամացի գօտիներին բնորոշ զարդակոձեւակներ՝ խաչաձիւղթոջնագլուխ եւ ծաղկաձեւ-լինաթերթ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ չորական օղակ-կախիչ, **671/7** - պահպանուել են երկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ չորական օղակ-կախիչ, **739/26** - գօտի՝ սմբուլական, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ կրկնական օղակ-կախիչ, **743/12** - սահպանուել են երկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ երեքական օղակ-կախիչ, **1027/1** - ճարմանդամաս՝ շրջանաձեւ/վահանաձեւ աւելումով, ստորին եզրին՝ չորս օղակ-կախիչ, **1997/3** - գօտի-սմբուլական, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ չորսական օղակ-կախիչ, **2131/6** - պահպանուել են ուղղանկյուն ճարմանդամասը եւ մետաղադրամներ, ճարմանդամասի ստորին եզրին՝ քրեք օղակ-կախիչ, **2131/9** - պահպանուել են կրկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ կրկնական օղակ-կախիչ, **2131/14** - պահպանուել են կրկնաս ճարմանդը եւ մետաղադրամներ, շրջանաձեւ/վահանաձեւ յաւելումով ճարմանդամասի ստորին եզրին կայ երեք օղակ-կախիչ, որոնցից երկուսին կա մշկական

նաեւ այնպիսիները, որոնց մետաղադրամների ստորին շարքի մետաղադրամներից միջանիսին նոյնպէս գոյուած են օղակներ, որոնց միջով գտուու ամբողջ երկարութեանը ձգտում է նուրբ շղթան, որից դարձեալ կախուած են մետաղադրամներ (նկ. 4)⁷⁷:



Նկար 3 և 4

Ի տարբերութիւն տիպիկ սիմիլջարցախեան կանացի գօտիների, որոնց բոլոր մասերը (ճարմանդամասեր, զարդատախտակներ զարդակոճակներ) պատրաստուած էին արծաթագործ վարպետերը, հիփախկովկասեան կանացի գօտիների պարագայում առաջնային է այն, որ արծաթագործական արտադրանք են հանդիսանում միայն այս գօտիների ճարմանդները, ուստի անդրադառնալք դրանց համակողմանի ուսումնասիրմանն ու լուսաբանմանը առաւել մանրամասն եւ հանգամանալից:

մետաղադրամ-զարդակախիկ, յիս ճարմանդամաւի ստորն եզրին կայ չորս օղակկախիչ, որնցից իւրաքանչիւրից կախուած է մէկ մետաղադրամ-զարդակախիկ, **2131/17** - պահպանուել են երկմաս, ութսածե յաւելուածով ճարմանդը եւ մետաղադրամ-զարդակախիկներ, ութսածե յաւելուածով ճարմանդի ստորին եզրին չայ երկու օղակկախիչ (երրորդը բացակայում է), որոնցից մէկին կայ մէկ մետաղադրամ-զարդակախիկ, ուղբանկուն ճարմանդամաւի կայ երկու օղակկախիչ (երրորդը բացակայում է), որոնցից կախուած է մկկական մետաղադրամ-զարդակախիկ, **2131/21** - պահպանուել են երկմաս ճարմանդը եւ մետաղադրամներ, ճարմանդամասերի ստորին եզրիցին՝ երկու օղակկախիչ, շրջանաձև (կիսանաձևն յաւելուածով ճարմանդամաւի ստորին եզրին կիսաբոճական օղակկախիչին կայ շղթայի հատուած), **2135/4** - երկմաս ճարմանդ, ճարմանդամասերից իւրաքանչիւրի ստորին եզրին՝ երեք մետաղադրամ կախիկ, **3044/4** - պահպանուել են երկմաս ճարմանդը եւ մետաղադրամներ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ յորակական օղակկախիչ, **6080/3** - երկմաս ճարմանդ, ստորին եզրերին՝ օղակկախիչներ, **6080/4** - երկմաս ճարմանդ, ճարմանդամասերի ստորին եզրերին՝ համապատասխանաբար երկու (շրջանաձև/կիսանաձևն մասին) եւ երեք օղակկախիչ, **6090/3** - երկմաս ճարմանդ, ութսածե յաւելուածով ճարմանդամաւի ստորին եզրին կայ երեք օղակկախիչ, որոնցից մէկին կայ շղթայի հատուած, **7333** - երկմաս ճարմանդ, ճարմանդամասերի ստորին եզրերին կայ երկուական, իսկ ութսածե յաւելուածի ստորին բաժնուածում մէկ օղակկախիչ:

⁷⁷ Ըօրիններ **NN 230/1, 230/2, 2313/1, 2113/3** - զարդակախիկները բացակայում են, առկա են միայն օղակկախիչները, **4020, 6346/1**:

ՃԱՐՄԱՆ ԴՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՒ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ (ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ)

Ոսկերչական կամ արծաթագործական արտադրանքը գնահատել կարողանալու համար անհրաժեշտ է նախեառաջ հասկանալ, թե մետաղամշակութեան եղանակների ու գործընթացների ինչպիսի յաջորդականությունն է կամ զուգակցման արդիւնքում է ստեղծուել տուեալ ոսկերչական կամ արծաթագործական արտադրանքը, ինչպէս են դրանք պատրաստող վարպետները հասել ձեւի ու գեղագիտական լուծումների այն ներդաշնակութեանը, որի շնորհիւ տուեալ արտադրանքն իր գեղարուեստական արժանիքները չի կորցրել յետագայ ժամանակներում: Հասկանալի է՝ եղանակները, որոնք կիրառուել են տարբեր մետաղներից գեղարուեստական արտադրանք ստանալիս, երկար դարերի ընթացքում մնացել են հիմնականում նոյնը, սակայն զարգացել ու կատարելագործուել են հասարակութեան զարգացմանը համընթաց, արդէն եղած եղանակներին գումարուել են նորերը¹⁸:

Հիախկովկասեան գօտիների ճարմանդների պատրաստման գործընթացը հետեւեալն է.- նախապէս գլանման (գլոցման) կամ կոման (աւելի հազոադէպ՝ ձոպման) եղանակներով պատրաստում էին ճարմանդամասերը¹⁹, այնուհետեւ գեղազարդում բուսական կամ երկրաչափական նախշերով, հիմնականում թռչնանախշերով, երբեմն նաեւ ընդելուզում:

Ըստ **գեղազարդման եղանակների** հիախկովկասեան գօտիների ճարմանդները դասակարգում են հետեւեալ հիմնական խմբերի.-

1. փորագրման-սեաղապատման եղանակներով գեղազարդուածներ,
2. ցանցազարդման եւ հատիկազարդման եղանակներով գեղազարդուածներ,
3. դրօշման-մակազօղման եղանակներով գեղազարդուածներ:

Սեաղանախշ ճարմանդների պատրաստման գործընթացը

Ճարմանդամասերի սեաղանախշումին համար վերը նշուած եղանակներով պատրաստուած ճարմանդամասերի վրայ փորագրում էր ստանալիք զարդանախշը, այնուհետեւ սեաղապատում²⁰:

Փորագրման եղանակը - իր տարբերակներով հանդերձ (կէտագծում, խազագծում եւ իվերջոյ՝ փորագրազարդում) - ի սկզբանէ գործածում էր

¹⁸ Առանել մանրամասն եւ հանգամանալից տե՛ս՝ Մ. Մ. Постникова-Лосева, Н. Г. Платонова, Б. Н. Ульянова, *Золотое и серебряное дело XV-XX вв. /Территория СССР/* (Ոսկերչական գործն ու արծաթագործութիւնը ժ.Ե.-Ի.դդ., ԽՍՀՄ տարածքում), «Նաովկա» իրատ., Մոսկուա, 1983, էջ 8-19:

¹⁹ Առանել մանրամասն եւ հանգամանալից՝ Դ. Ի. Макарова, *Черноевое дело древней Руси* (Սեաղագործութիւնը հին Ռուսիայում), «Նաովկա», Մոսկուա, 1986, էջ 7:

²⁰ Նոյն:

արդէն կռման կամ դրոշմադրոագման եղանակով պատրաստուած առարկաների համար որպէս լրացուցիչ (կամ հիմնական) զարդանախշման միջոց, լետազայում դարձաւ արդէն սեւադապատման եղանակի համար նախապատրաստական գործընթաց: Եթէ փորագրագարդման համար օգտագործում էր նախապէս խազը (խազագծման եղանակ), լետոյ՝ բարակ ու նուրբ գիծը, ապա սեւադապատման գործընթացի ղեկըրում նախապէս փորագրում էին անհրաժեշտ զարդապատկերները (զարդաօրինուածքները կամ զարդահամալիրները), ապա միայն սեւադապատում: Սեւադապատմանը նախորդող փորագրութիւնը սովորաբար լինում է համեմատաբար խորը եւ խորդուբորդ, որպէսզի սեւադն առաւելագոյնս ամուրջստի՝ (կտաշի) զարդապատկերի ֆոնին²⁰: Սա յատկապէս ջայտուն է երեւում այն ղեկըրում, երբ ժամանակի ընթացքում սեւազը տեղ-տեղ թափուում է²¹, ինչը կարող էր արդիւնքը լինել տեսական կամ անփոյթ կենցաղավարումից, սեւադի որակից²² կամ նոյնիսկ պատրաստողի վարպետութիւնից (սկ. 5):

Սեւադապատում է մի ղեկըրում զարդապատկերը կամ զարդաօրինուածքը, միա ղեկըրում հիմնադաշտը. երբեմն էլ հանդիպում է այս երկու տարբերակների զուգորդումը²⁴, սակայն տիպիկ սինիքարցայիտան ինչպէս նաեւ՝ հիւսիսկովկասեան գօտիներին առաւելապէս բնորոշ են



²⁰ Постникова-Лосова, Платонова, էջ 9. նաեւ՝ Լ. Ա. Աբրահամեան, *Մշինուորները Հայաստանում IV-XVIII դարերում*, Հայկ. ՍՍՌ ԳԱ Իրատ., Երևան, 1956, էջ 152. նաեւ՝ Բ. Յ. Առաբելեան, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հրչ. 1*, Հայկական ՍՍՌ ԳԱ Իրատ., Երևան, 1958, էջ 184:

²¹ Տե՛ս՝ ՀՂԾի գօտիներ NN 230/2, 665/1, ճարմանդներ NN 670/5, 671/7, 671/9, 3044/3, 671/8:

²² Կան սևադի պատրաստման եւ սևադապատման «ագնաթի տարբերակներ ու եղանակներ, այդ բազմազանութիւնը զոյրբին ունէր ոչ միայն առանձին կրկուներում: Սևադի պատրաստման եւ սևադապատման արհեստագիտութեան բազմազանութեան մասին առաւել մանրամասն տե՛ս՝ Սարահամեան, *Արհեստները*, էջ 121. նաեւ՝ Առաբելեան, էջ 183-5. նաեւ՝ Постникова-Лосова, Платонова, էջ 15. նաեւ՝ Система научного описания музейного предмета, классификация, методы за, терминология. Справочник, ЧРПФБРАН МАССА. (Թանգարանային առարկայի գիշական նկարագրութիւնը, դասակարգումը, մեթոդաբանութիւնը, կարծեսգրանութիւնը, ուղեցուց, ԱՆՎԱԴԻ ՁՈՆԳՈՎԱԾԷ) «Լրբ» խըւ» Իրատ., Ասնկա-Պետրոբուրց, 2003, էջ 167:

²⁴ Գօտիներ NN 2049/7 (ճարմանդի հիմնադաշտը արծաթափայլ է, բուսանախշերը՝ սեւադապատ, զարդառախտակների հիմնադաշտերը սեւադապատ են,

ճարմանդի (ճարմանդամասերի) կամ զարդատախտակների արձաթափայլ մակերեսը եւ սեաղման միջոցով պատկերուած բուսանախշերը²⁵:

Ցանցա/հիւսա/զարդ-հափիկանախշ ճարմանդների գեղազարդման գործընթացը

Աինչ ճարմանդների ցանցա/հիւսա/զարդումը արձաթափուած վարպետը կորզանման եղանակով²⁶ արձաթից պատրաստում էր տարբեր հաստութեան լարեր, այնուհետեւ լրացուցիչ մշակելով դրանք **զուգաթէլի (ոլորահիւսման)**²⁷ կամ **գլանման/գլոցման**²⁸ եղանակներով որոնցով այնուհետեւ

զարդայօրինուածքները՝ արձաթափայլ), 2049/11 (ճարմանդի հիմնադաշտը արձաթափայլ է, բուսանախշերը՝ սեաղապատ, զարդատախտակների հիմնադաշտերը սեաղապատ են, զարդայօրինուածքները՝ արձաթափայլ), 2049/14 (ճարմանդի հիմնադաշտը արձաթափայլ է, բուսանախշերը՝ սեաղապատ, զարդատախտակների հիմնադաշտերը սեաղապատ են, զարդայօրինուածքները՝ արձաթափայլ), 2049/15 (ճարմանդի հիմնադաշտը արձաթափայլ է, բուսանախշերը՝ սեաղապատ, զարդատախտակների հիմնադաշտերը սեաղապատ են, զարդայօրինուածքները՝ արձաթափայլ), 2421/4 ճարմանդի հիմնադաշտը արձաթափայլ է, բուսանախշերը՝ սեաղապատ, զարդատախտակների հիմնադաշտերը սեաղապատ են, զարդայօրինուածքները՝ արձաթափայլ):

²⁵ Հիմնականում փորագրման-սեաղապատման եղանակով են գեղազարդուած NN 49/2, 487/1, 608, 665/1, 665/2, 665/7, 670/5, 670/7, 671/7, 671/8, 744/4, 1154/3, 1154/4, 2135/3 եւ 6519/2 գօտիների ճարմանդները:

²⁶ Կորզանը պողպատէ ուղղանկիւն սալիկ է, որի վրայ կան տարբեր տրամաչափի աստիճանաբար փոքրացող անցքեր: Որոշակի ջերմաստիճանի տաքացուած մետաղէ, (այս դէպքում՝ արձաթէ) նախապատրաստուած-ձողիկը արցանի միջոցով հերթով անցկացնելով աստիճանաբար փոքրացող անցքերի միջոցով երկարում է եւ վերջում վերածում նոյր մետաղալարի: Այս գործընթացը կոչում է կորզանում (Առաքելեան, էջ 178-9 - այստեղ գործընթացը ներկայացուած է «հիւսելու եղանակը» (էջ 178) ննթաւկերնագրով - . նաեւ՝ Система ручного, էջ 173):

²⁷ Նախապէս կորզանման եղանակով ստացուած մէկ զոյգ լարերը ոլորում էին իրար հետ եւ ստանում մէկ ոլորահիւս լար, որից այնուհետեւ պատրաստում էին ցանցազարդը կամ իրի առանձին մասերը: Ոլորահիւս լարը տեսողական առումով աւելի գեղեցիկ է եւ պատկերին աւելի կենդանութիւն է տալիս (տե՛ս՝ ՀԱԹԻ NN 685/3 ճարմանդամասի շրջանաձեւ յաւելումը. ուշագրաւ է, որ այս յաւելումի կենտրոնական գմբէթին յարող զարդագօտին ստացուել է կորզանում մէկ լարի կտորներից, որոնք հասարարչափ կտրուած եւ կիսաշրջանաձեւ դասաորուած են գմբէթի շուրջը, իսկ արտաքին եզրագօտին կազմուած է զուգաթէլի չորս զարդերիցից, 833/2ա ճարմանդամասի շրջանաձեւ յաւելումի արտաքին եռագօտի զարդերիզը, 2509/6 ճարմանդը, մասնատրապէս՝ շրջանաձեւ յաւելումը, 6084 ճարմանդը. ուշագրաւ է, որ այս ճարմանդը պատրաստուած է պղնձից, 6519/1 ճարմանդի շրջանաձեւ յաւելումը են.:

²⁸ Նախապէս կորզանման եղանակով ստացուած որոշակի հաստութեան լարերը գլանում-գլոցում կամ գրտնակում են մետաղէ (պողպատէ) հաստոցի - երկու մետաղեայ իրար կիպ հպում պտտաթե գրտնակ - միջով անցնելիս տափա-

տեւ պատրաստում ցանցազարդ, ապա զարդարում էր **հատիկանախշով**²⁸ եւ արդէն պատրաստի վիճակում փակցում (մակագօղում կամ չորս անկիւններում մէկական պղնձէ գամիկի միջոցով ամրացում) էր պատրաստի ճարմանդամասերին:

Սա ցանցազարդ ճարմանդների կայուն տարբերակն է, երբ գեղազարդման հիմնարար սկզբունքը պահպանուած է, ճարմանդամասերի հիմնադաշտը գեղազարդուած է ցանցափառազարդի ու հատիկանախշի եղանակների զուգակցմամբ, իսկ եզրերը զարդարուած են դրոշմման եղանակով ստացուած զարդագօտիներով (գօտիներ **NN 230/1, 2788/5, 4220**, ճարմանդներ **NN 2131/20, 7333**):

NN 230/1, 2788/5 եւ **2131/20** ճարմանդների յաւելուածները շրջանածեւ/վահանածեւ են, կենտրոնական գմբէթները շուքանակուած են դրոշմազարդ գօտիներով:

NN 4220 եւ **7333** ճարմանդների յաւելուածները ութանգեւ են, ընդ որում, այստեղ նոյնպէս պահպանուած է գեղազարդման որոշակի սկզբունք. կենտրոնական հատուածները ընդելուգուած են, իսկ վերին եւ ստորին գմբէթները՝ ցանցազարդ-հատիկանախշ (նկ. 6):



Դրոշմման-մակագօղման եղանակով գեղազարդուած ճարմանդներ

Մակագօղման եղանակով գեղազարդումից առաջ արծաթազօրծ վարպետը **դրոշմման**³⁰, եղանակով պատրաստում էր սուսնալիք

կում են: Այնուհետեւ այսպիսի մետաղազարուք պատրաստում են ցանցազարդը Աս կայանակը յաճախ. «Կրտսէրներում Լ ոսկերչօրբանն մ.թ. միջնադարային Լմայրով նախկեր տնկիխ կտասոյ մանրամասն եւ հանգամանազոց տեւն՝ Покровская-Шкода, Уфагорова, Տ. 16»:

²⁸ Ըստիապէս կորզանման եղանակով ստացուած որոշակի հաստութեան լարերը կտրուտում են մանր հաասարաչափի հատուածների ե. ենթաւրում ջերմաշակման: Բարձր ջերմաստիճանի ազդեցութեան ներքոյ մանր կտրուած շատուածները վերանշում են մանր գնդիկների յւ սառչելուց յետոյ օգտագործում (մանրամասն տեւն՝ 4. Ա. Արբանախան, «Ոսկերչութեան տեխնոլոգիան հին Հայաստանում», Տեղեկագիր Հայրենեան ՄԻՒ Գիտութիւնների (Արտեմիայի) հասարակական գիտաօրինմելը, 1952:12, էջ 81-5, նաև՝ Առաքելեան, էջ 178-9):

³⁰ Դրոշմման եղանակի մասին տեւն՝ Արբանախան, *Այնուպրնելըր*, էջ 148, 149. Ըստ՝ Առաքելեան, էջ 177, 178:

զարդահամալիրի համար անհրաժեշտ մասերը, որոնք այնուհետև փակցում՝ մակագործում էին ճարմանդամասերին՝ ստանալիք զարդաթորինոածքին համապատասխան:

Ամբողջապես դրոշմման-մակագործման եղանակով են գեղազարդում **NN 180/4, 3044/5** ճարմանդները եւ **665/4** գոտու ճարմանդը, ուստի անդրադառնանք դրանց գեղազարդմանն առաւել մանրակրկիտ եւ հանգամանակից: **N 180/4** ճարմանդի ճարմանդամասերի երեք եզրերը գօտետրուած են եռաշարք զարդագօտիով, որոնցից կենտրոնականը դրոշմման եղանակով պատրաստուած քառաթերթ ծաղկապատկերներ է, որոնք առանձին-առանձին պատրաստուել եւ ապա մակագօրուել են ճարմանդամասերից իրաքանջիւրի երեք եզրերին: Այս զարդագօտին երկու կողմից եզերում են **կեղծ հատիկանախշի**³¹ եղանակով ստացուած նեղ զարդագօտիները: Ճարմանդների հիմնադաշտերը գեղազարդուած են երեքական զոյգ թռչնազոյգերով, որոնք նոյնպէս ճարմանդամասերին ամրացուած են մակագօրման եղանակով:



Ոճային-զարդարութաւարանական առումով թռչնազոյգերը պատկերուած են այնպէս, որ թէ կողուցներով եւ թէ մէջքերով միացուած են իրար՝ այսպիսով ստեղծելով ծնող զոյգը պատկերող

թռչնանազոյգերի կրկնակի յարաբարդումներ³² (նկ. 7):

³¹ Հատիկանախշի մասին տե՛ս՝ ճանաթ. **30**: Կեղծ հատիկանախշը կազմելի է ստանալ սիրանի եղանակով: Հետագօտոււոյ ճարմանդների դէպքում սին ստացուած է հետաշալ կերպ. մետաղէ (պողպատ) կաշւապարի վրայ նախապէս փորագրուած է կիսազնդերի շարքից կազմուած ոչ-խորը ակօս, որի վրայ դրում է սւաքացուած արծաթէ ձողը, վրայից դրում է մետաղը մէկ շերտը եւ ճնշման կամ մո.քճի հարումների միջոցով նստեցում: Այս գործողութեան արդիւնքում արծաթէ ձողը ընդդ նում է կաղապարի երեսին պատկերուած զարդի ձեղք՝ այսինքն՝ մետուղ. ձու, վրան կիսազեղկի շարք, որը նստում է հատկանախշի, այլ իսկ պատճառով կցում է կեղծ հատիկանախշ:

³² Մանրամասն տե՛ս՝ Ա. Մուշականեան, *Հայկական զարդարութեան պատմությունը*, Հայկական ՍՍՐ ԳԱ Իրատ., Երեւան, **1955**, էջ **200-50**:

Նոյն սկզբունքով է գօտետրուած ճարմանդի շրջանաձեւ յաւելումաձի կենտրոնի մասամբ սեւադանախշ գմբէթը՝ եռաշար զարդագօտի՝ կենտրոնականը դրուագագարդ, երկու եզրայինները՝ կեղծ հատիկանախշ:

N 665/4 գօտու ճարմանդն ամբողջովին գեղազարդուած է նախապէս դրոշմման եղանակով ստացուած մասերով մակագօղման եղանակով: Ճարմանդամասերի երեք կողմերը գօտետրուած են քառաթերթ ծաղկաշղթայով, որն ստացուել է դրոշմման եղանակով պատրաստուած քառաթերթ մասերը հաւասարաչափ իրար կողք-կողքի մակագօղելու եղանակով: Եւ մէկական նմանատիպ զարդագօտի է անցնում ճարմանդամասերի կենտրոնով՝ այսպիսով ճարմանդամասերի դաշտը բաժանելով երկու երկայնակի տապակի: Այս զարդագօտիներն իրենց հերթին տապակներից զատուած են կեղծ հատիկանախշով բաժանարար գծերով: Իսկ ստացուած երկուական երկայնակի դաշտերը՝ լցուած՝ են դարձեալ դրոշմման եղանակով ստացուած երկշարք Յաղկանախշերով՝ (նման նարդու զատի **5**ին): Ընդհանուր առմամբ իրաքանչիւր ճարմանդամասին՝ փակցուած՝ մակագօղուած է անէլի քան յիսուն մաս, սրան անելացրած նաեւ այն, որ շրջանաձեւ յաւելումաձի կենտրոնի գմբէթը շրջանակուած է եւ մէկ զարդագօտիով, որը կազմուած է **19** քառաթերթ ծաղկապատկեր-մասից: Այսպիսով՝ միայն մ.կ ճարմանդ գեղազարդելու համար արծաթագործ վարպետը պիտի պատրաստէր անէլի քան հարիւր մասեր, որոնք այնուհետեւ բաւականին մեծ ճշգրտութեամբ առանձին-առանձին՝ փակցրել՝ մակագօղել է ճարմանդամասերին (մ.կ. **8**): ԺԹ. դարավերջի համար, երբ դեռ գոյութիւն չունէին այսօրուայ ելեկտրական եւ համակարգչային ճշգրիտ ծրագրատրուած հաստոցները, այսպիսի աշխատանք կատարելը պահանջում էր տարիների փորձ, բարձր վարպետութիւն եւ ինքնին տրուեստ էր:



Դրոշմման եղանակով են գեղազարդուած նաեւ **NN 614, 833/1** գօտիների ճարմանդները, **N 833/2** ճարմանդամասը եւ **N 3044/6** ճարմանդը: Այստեղ պահպանուած է հետեւեալ սկզբունքը. ճարմանդամասերը երեք կողմից եզերուած են վերը նշուած եռաշարք զարդագօտիով, իսկ հիմնադաշտերը նոյն զարդագօտիով բաժանուած են երեքական տապակների, որոնք անզարդ են: Մասնակիօրէն բացառութիւն են կազմում **NN 614**

ճարմանդի մասերը, որոնք բաժանուած են ոչ թէ երեքական, այլ՝ երկուական տապակների որոնք խազագծման եղանակով զիզզզզանախշուած են: Հնարատր է, որ սա արուել է յետազայում այս տապակները սեադանախշ թիթեղներով լրացուցիչ զարդանախշելու համար (մանրամասն տես ստորեւ՝ **միջանկեալ/անցումային** խումբ բաժնում):

Մասնակիորէն բացատրօթին են կազմում դրոշմման-մակազօրման եղանակով գեղազարդուած ճարմանդների շրջանածե յաելլուածերի կենտրոնում գտնուող գմբէթները, որոնք մասամբ սեադանախշ են:

Գմբէթների գեղազարդումը նոյնպէս բաժանում է երկու տարբերակի: Առաել կայուն եւ կառուցուածքային-սկզբունքային մօտեցումն այն է, երբ գմբէթը բաժանուած է վեց կամ ութ հասասար հատուածների, որոնք մէկընդմէջ զարդարուած են եռանկեանը ներգծուած մանրիկ շեղանկինիների կանոնատր-կրկնուող շարքերով եւ պարզ փորագրուօթեամբ արուած կամ կենացծառային զարդամոտիներով³³:

Անացած դէպքերում գմբէթները մէկական զոյգ ուղղահայեաց սեադապատ գծերով բաժանում են հասասար հատուածների, ապա սեադապատում բուանախշերով, կամ բաժանում հորիզոնական երեք շերտի եւ կրկին գեղազարդում սեադապատ բուանախշերով³⁴:

ՀԻՍԻՍԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՕՏԻՆԵՐԻ ԾԱՐՄԱՆԴՆԵՐԻ ՄԻՋԱՆԿԵԱԼ/ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Ճարմանդների գեղազարդման վերջին խումբն անուանել ենք **միջանկեալ** (կամ **անցումային**), որովիտեւ դրանց գեղազարդումն ըստ եղանակների մի տեսակ միջանկեալ տեղ է գրաում նախորդ երեք խմբերի համամատուօթեամբ, այն է՝ գեղազարդումը կատարում է սեադապատման, դրոշմադրուածման եւ ցանցա/հիւսա/զարդման եղանակների զուգակցմամբ: Ասուածն առաել առարկայօրէն ցոյց տալու համար բերենք մէկ երկու օրինակ:

N 1154/2 ճարմանդը գեղազարդուած է հետեւեալ կերպ՝ շրջանածե յաելլուածը ցանցազարդ-հատիկանախշ է, ճարմանդամասերը՝ սեադանախշ: Ե՛ւ ճարմանդամասերը ե՛ւ շրջանածե յաելլուածը գօտետրուած են միեւնոյն եռաշար զարդագօտիով, որոնցից երկու եզրայինները կեղծ ոլորահիւս են, կենտրոնականը՝ կեղծ հատիկանախշ:

Արդէն նշել էինք, որ ցանցազարդ ճարմանդամասերի հիմնադաշտերին ամրացում էր չորս անկիւններում մէկական գամիկի միջոցով: Այստեղ ուշագրաւ է այն, որ չնայած ճարմանդամասերը սեադանախշ են, սեադանախշումն արուած է ոչ թէ անմիջապէս ճարմանդամասերին, այլ ա-

³³ Գօտիներ NN 180/4, 230/2, 608, 614, 665/1, 665/4, 670/5, 671/6, 671/8, 671/14, 733/1, 743/9:

³⁴ Գօտիներ NN 49/2, 230/1, 487/2, 665/2, 665/7, 670/7, 685/2, 685/3:

նանձին թիթեղների վրայ, որոնք մակագործած եւ լրացուցիչ երկուական գամիկների միջոցով ամրակայուած են ճարմանդամասերի հիմնադաշտերին:

Առաւել բազմազան են NN 2463/8 եւ 2463/9 գօտիների ճարմանդների գեղարուեստական լուծումները: Եթէ N 1154/2 ճարմանդի շրջանածեւ յաւելուածը ամբողջովին ցանցազարդ է, ապա վերջին երկու գօտիների դէպքում ցանցազարդ-հատիկանախշ են միայն շրջանածեւ յաւելուածի գմբէթները, որոնք գօտետրուած են դրոշման-մակագործման եղանակով կազմուած զարդագօտիներով: Վերջինների յաջորդում են կեղծ հատիկանախշ եւ կեղծ ոլորահիա շրջագօտիները, որով եւ ամբողջական է դառնում շրջանածեւ յաւելուածների գեղազարդումը:

Ճարմանդամասերը գեղազարդուած են N 1154/2 ճարմանդի սկզբունքով, հիմնադաշտերը սեւադանախշ, եզրագօտիները՝ դրոշմազարդ:

Ուֆածեւ յաւելուածով ճարմանդներով գօտիներ

Կայ նաեւ դրոշման-մակագործման եղանակով գեղազարդուած ճարմանդների եւս մէկ տարբերակ: Այստեղ ընդհանրականն այն է, որ ճարմանդամասերի յաւելուածները ոչ թէ շրջանածեւ/վահանածեւ են, այլ՝ այսպէս-կոչուած ուֆածեւ, որովհետեւ իրենց ձեւատրամաք մասնակիորէն նմանում են 8 թուանշանին եւ յաճախ ընդելուզուած են, ճարմանդամասերն ոչ թէ ուղղանկիւն են այլ քառակուսի (կամ քառակուսուն մօտ, կողմերի չնչին տարբերութեամք)³⁵ եւ առանց բացառութեան եզերուած են նոյն՝ եռաշար, դրոշմադրուագազարդ զարդագօտիներով (նկ. 1, 2):

NN 2131/23 եւ 6930/3 ճարմանդամասերի հիմնադաշտերը զարդանախշուած են կեղծ հատիկանախշ զարդագօտիներով ստացուած, մէկական շեղանկիններով:

NN 3044/5 գօտում ճարմանդամասերի հիմնադաշտերին պատկերուած են դրոշմադրուագմանեղանակով ստացուած մէկական վեցաթեւ աստղաձաղիկ, իսկ չորս անկիւններում՝ մէկական տերեւ/կամ կաթիլա/նախշ: Ուֆածեւ յաւելուածն ընդելուզուած է եւ լրացուցիչ զարդանախշուած մանր-ոլորահիա շրջանակներով:

ՃԱՐՄԱՆԴՆԵՐԻ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ ՈՃԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Տիպիկ սինիքարցախեան եւ հիսիսկովկասեան գօտիների սեւադանախշ ճարմանդների գեղազարդման ռճապարկերային ընդհանրութիւնները

Ճարմանդների գեղազարդման այս տարբերակը (փորագրում, ապա՝ սեւադապատում) խիստ բնորոշ է տիպիկ սինիքարցախեան կանացի գօ-

³⁵ Գօտիներ NN 2131/15, 2131/17, 2131/23, 2313/3, 3044/4, 6930/3, 7333:

տիների բոլոր տարբերակներին ինչպես նաև՝ սոյն ուսումնասիրության առարկայ հանդիսացող հիսիսկովկասեան գօտիների մի մեծ խմբի³⁶։ Անադապատ բուսանախշերն իրենց կատարման ոճով եւ առանձնայատկութեամբ ճշգրիտ կերպով կրկնում են միմեանց։ երկու դէպքում էլ բուսագալարները խիտ են, ծածկում են ճարմանդամասերի (տիպիկ սինիքարցախեսան գօտիների դէպքում նաև զարդատախտակների) գրեթէ ամբողջ մակերեսը, զարդապատկերներն արուած են հոճ-թաւ գծերով։

Եւ վերջապէս՝ պատահում են հիսիսկովկասեան գօտիների սեւադանախշ ճարմանդների այնպիսի օրինակներ, որոնց ճարմանդամասերի կենտրոններում կամ անկիւններում հանդիպում են տիպիկ սինիքացախեսան կանացի գօտիներին բնորոշ վեցաթերթ-ձաղկածեւ յաւելագարդերը³⁷։

Հիսիսկովկասեան գօտիների ցանցա/հիւսա/զարդ-հափիկանախշ ճարմանդների գեղազարդման ռճապարկերային ընդհանրութիւնները

Ցանցա/հիւսա/զարդման եղանակը բնորոշ է Վան-Վասպուրականի արծաթագործութեանը։ Մասնատրապէս՝ կանացի գօտիների ճարմանդները, չնայած կառուցուածքային տաբերութեանը, գեղազարդուած են ճիշտ նոյն եղանակներով եւ յաջորդականութեամբ. նախապէս պատրաստուած հատիկանախշ ցանցազարդը անկիւններում մէկական զամիկի միջոցով ամրացում էր ճարմանդին³⁸։ Ինչպէս հիսիսկովկասեան գօտիների դէպքում, այս դէպքում նոյնպէս ցանցազարդուած են միայն գօտիների ճարմանդները։

Գալով հատիկանախշման եղանակին, Հայաստանում այն կիրառուել է դեռեւս ուրարտական շրջանից։ Ասոածի մասին են վկայում Կարմիր-Բլուրի պեղումներից յայտնաբերուած կիսալուսնաձեւ ականջօղերը, որոնց մակերեսները հատիկանախշ են³⁹։

Ճարմանդների գեղազարդման կառուցուածքային-սկզբունքային առանձնապարկութիւնները եւ դրանց ընդհանրութիւնները հայ ժողովրդական արուեստի այլ ճիւղերի հետ

Գեղազարդման բազմազանութեամբ հանդերձ՝ հիսիսկովկասեան գօտիներն ունեն կառուցուածքային հետեւեալ հիմնարար սկզբունքներն ու ընդհանրութիւնները.- ուղղանկիւն ճարմանդամասերն ունեն հիմնակալում երեք եզրագօտի (որոնցից մէջտեղինը սովորաբար անելի լայն է քան երկու եզրայինները) եւ հիմնադաշտ, որը սովորաբար զարդարուած է բու-

³⁶ Տե՛ս՝ ծանօթ. 26։

³⁷ Գօտիներ NN 608, 665/7, 744/4, 1154/2, 1154/4, 2135/3, 6080/3, 6158/2, 6519/2։

³⁸ Յ. Թորքաթ, Հայ արծաթագործ վարպետներ, Լոս Անջելէս, 2005, էջ 157, 169։

³⁹ Ե. Բ. Плотровский, *Кермир-Блюр I, Результаты Работ 1939-1949 Годов* (Կարմիր-Բլուր I, 1939-1949 թթ. աշխատանքների արդիւնքները), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1950, էջ 83, նկ. 3։

սանախշերով կամ երկրաչափական պատկերներով, որոնք արում են սե-
ադապատման կամ մակագոգման եղանակներով: Ատաճն առաել ա-
ռարկայօրէն ցոյց տալու համար բերենք միջանի օրինակ:

N 739/26 գօտու ճարմանդամասերի եզրերը զարդարուած են եռաշար
զարդագօտիով, որոնցից կենտրոնական լայնն ստացուել է կորզանուած,
ապա՝ գլոցուած լարը զալարածել ծալելով, այնպէս, որ արդիւնքում ստաց-
ունն իրար հակադիր (զագաթներով վերեւ-ներքեւ) կաթիլանման (կամ
տերեւածել) բջիջ-բնիկներ իսկ եզրային երկու զարդերիզները ստացուել
են կաղապարի միջոցով կեղծ հատիկանախշման եղանակով: Ծարման-
դամասերի հիմնադաշտը գեղազարդուած է սեադանախշման եղանակով
արուած բուսանախշով, որը տուեալ դէպքում զալարուն ծաղկաշոթայ է:

Շրջանածել (վահանածել) յաւելուածի կենտրոնում սեադանախշ
զմբէթն է, որը շրջանակում է դրոշմադրուագման եղանակով պատրաս-
տուած քառաթերթ-ծաղկանախշ վերադիր զարդագօտին: Զարդահամա-
լիրն ամբողջացնում է նոյն զարդագօտին, որը շրջանակում է ճարմանդա-
մասերը:

Ոճա-պատկերային եւ կառուցուածքային-բովանդակային նոյն սկզբուն-
քով են գեղազարդուած նաեւ **NN 667/6, 671/9, 671/14, 685/2, 685/3, 2727/1**
գօտիների ճարմանդամասերը:

N 230/1 գօտու ճարմանդամասերը երեք կողմից եզերուած են մակա-
զօրման եղանակով պատրաստուած եռաշար եզրագօտիով (մմանատիպ
զարդագօտիներ ունեն նաեւ **NN 180/4, 614, 665/4, 733/1** գօտիների ճար-
մանդամասերը), իսկ հիմնադաշտերը գեղազարդուած են մանրարոյքի ե-
ղանակով, որը խիստ բնորոշ է Վասպուրականի արծաթագործութեանը.
ընդ որում՝ իւրաքանչիւր ճարմանդամասին արուած է հայկական գորգերի
վրայ յաճախ հանդիպող **S** նշանը իւրաքանչիւր ճարմանդամասի վրայ
մէկզոյգ՝ իրար հակադիր:

Շրջանածել (վահանածել) յաւելուածի կենտրոնում բուսանախշ կոնա-
ծել զմբէթն է, շուրջը՝ իրար յաջորդող երեք զարդերիզ, որոնցից անմիջա-
No matter what language names are written in, they have a significant role in any linguistic landscape (Gorter, 2013). Although the language used in the signs is not Armenian, they are considered essential for the simple fact that they include Armenian names such as "Sevan" or "Arin" (Armenian names for girls). The same applies to another shop sign in Dora, "Manila". Although the name of the cargo company is written in English, it symbolizes the Philippines.

The findings and data analysis of the research conducted answer the research questions raised. In reference to research questions one and two, the identity, culture and native language of Armenians living in Bourj Hammoud and Anjar have a significant impact on the linguistic landscape of the area and village respectively. This is shown in figures 1, 2, 3, 4, 5, 6, 7 and 8, where every sign includes something that is Armenian, whether the alphabet, a name, a sign, a symbol or a slogan. In fact, several motivating factors, such as preserving identity, culture, language and traditions, contribute to the dominating Armenian identity in Bourj Hammoud and Anjar., In the case of Armenian signs adopted by non-Armenians, they could be motivated to use

⁵⁰ As cited in Taylor-Leech, p. 16.

⁵¹ Ibid., p. 16.

them for the purpose of attracting more customers, whether of Armenian descent or not, and showing good intentions towards their fellow citizens with Armenian roots.

In reference to research questions three and four, as per figure 9, the identity, culture and native language of expatriates working in Lebanon show a significant impact on the linguistic landscape of Dora. In fact, for some expatriates Dora is a home away from home, where they can meet people from their own ethnic and cultural background. It is also where most of the ethnic shops and restaurants are found, where they can get a traditional haircut, buy traditional ingredients related to their cuisine, and buy other cultural items.

CONCLUSION

The data collected from the locations, Bourj Hammoud, Anjar, and Dora, and the interviews carried out, indicate that people's identity and their native language do have an impact on the linguistic landscape of an area. This can be stated on the basis of the limited selection of pictures used for this study, which could represent all shop signs. Gorter (2013) believes that "the language in which signs are written can influence the perception of the status of the different languages and affect linguistic behaviour".⁵² It was highlighted by Rodriguez that the ethnolinguistic vitality of minority groups is reflected through the linguistic vitality of the linguistic landscape found in the areas where they reside. Hence, the presence of the Armenian language and other symbolic elements on the linguistic landscape in Bourj Hammoud and Anjar reflect the dominance and vitality of the Armenian identity and language in those two areas. Similarly, the presence of Amarinya, Sinhala, Bengali, Filipino, and Hindi and other symbolic elements on the linguistic landscape in Dora reflect the presence and vitality of expat identity there.

Interview Questions

1) How important is it to put Armenian at the top of the signboard? 2) Is there any official rule/document that specifies the language of the signboard? 3) What is the number of the population of: Armenians, Ethiopians/Sri Lankans/Indians/Pilipinos/Bangladeshis, etc., Non-Armenians/Non-Expatriates? 4) Does the language of the public signs contribute to preserving the identity of minorities? 5) Do the identity and native language of people living in an area influence the linguistic landscape of that area? And vice versa? 6) Has the linguistic landscape of Bourj Hammoud/Anjar changed over time? Why? 7) Has the intensity of the linguistic landscape of Bourj Hammoud/Anjar changed over time? Why? 8) Has the context of the linguistic landscape of Bourj Hammoud/Anjar changed over time? Why?

⁵² Gorter, 2013, p. 202.



Figure 1. Banks in Bourj Hammoud



Figure 2. Shops Owned by Non-Armenians in Bourj Hammoud



Figure 3. Top-down Pictures in Bourj Hammoud



Figure 4. Signs in Bourj Hammoud That Include Armenian Symbols Instead of Letters



Figure 5. Signs in Bourj Hammoud That Include Armenian Names Instead of Letters



Figure 6. Top-down Pictures in Anjar



Figure 7. Road Signs in Anjar



Figure 8. Monuments and Other Signs That Contribute to the Presence of the Armenian Identity in Anjar



Figure 9. Shops Signs Written in Amarinaya, Sinhala, Bengali, Filipino, and Hindi in Dora

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ, ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ ԵՒ ԼԵՂՈՒԱԿԱՆ ԲՆԱՆԿԱՐԸ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԵՔ ՎԱՅՐԵՐՈՒՄԷՐ

(Ամփոփում)

ԱՆԻ ՃՈՒԲՈՒԼԵԱՆ (annyjoukoulian@gmail.com)

Մեկնելով ինքնութեան եւ մայրենի լեզուի գործօններէն, յօրաւճը կը քննարկէ այն ազդեցութիւնը, որ շրջանի մը բնակչութիւնը կրնայ ունենալ տեղի լեզուական բնապատկերին վրայ:

Ուսումնասիրութիւնը լրաարձակի տակ կ'առնէ Պուրճ Համուտի, Տորայի եւ Ալեքսարի շրջանի պետական թէ սեփական (հայապատկան, ոչ-հայապատկան) հանրային-բացօղեայ ցուցանակները, կը քննարկէ օգտագործած լեզուն (հայերէն, արաբերէն, անգլերէն, այլ) եւ խորհրդանշանները, արտայայտչաձեւերը, ցուցանակներու գրութեան ուղղութիւնը, ձեւը:

Հետազոտութիւնը կ'էզրակացնէ թէ, ցուցանակը մատչելի դարձնելու համար անոր տէրը կամ պատասխանատուն նկատի կ'առնէ շրջանի բնակչութեան եւ շրջանը այցելողներու ինքնութիւնը, օգտագործած լեզուն, արտայայտչաձեւերը եւ խորհրդանշանները:

**ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐ
ԱՇԽՈՒԺԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ՝
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՌԱԿԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐԵԱՆ (tatoulm@gmail.com)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

2020ը ՀՀ նորագոյն պատմութեան թերեւս ծանրագոյն տարիներից մէկն էր: Համաշխարհային աղէտը՝ համավարակը համընկաւ տարածաշրջանային գինուած հակամարտութեան՝ արցախեան 44օրեայ նոր պատերազմի, իսկ այս երկուսը միասին՝ ներքաղաքական ճգնաժամի եւ տնտեսական խոշոր վնասների եւ անկման հետ:

Մեր նպատակն է անդրադառնալ 2019ի տնտեսական համապատկերին եւ բաղդատականին՝ նախորդ տարուայ հետ, ներկայացնել տնտեսական ցուցանիշներով փաստարկուած հիմնական միտումները եւ զարգացումները: Միաժամանակ, ուսումնասիրութեան առարկայ են համավարակի վտանգները եւ դրանց տնտեսական-ընկերային հետեանքները, որոնց յաղթահարումն ակնյայտօրէն հնարատր չէ միայն ներքին ուժերով. այն հնարատր է լայն համագործակցութեան, առաջին հերթին, ԵԱՏՄ երկրների հետ աշխուժ քաղաքական եւ տնտեսական գործընկերութեամբ: Կարելի էր նաեւ համագործակցային առաւելութիւնների բացայայտման եւ դրանց իրացման միջոցով ձեւատրել ընդհանուր շահեր, որոնք թոյլ կը տան աստիճանաբար վերականգնել Արցախի Հանրապետութեան (ԱՀ) պատերազմի վնասներն ու կորուստները, կասեցնել տնտեսական նահանջը, արդիւնաւէտ պայքար ծաալել համավարակի հետեանքների դէմ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Համաճարակի տնտեսական հետեանքները յաղթահարելու ուղիներն ոլորագծելու համար անհրաժեշտ է ճշտել եւ գնահատել տնտեսութեան այն հատուածների կորուստները, որոնք, առաջին հերթին, համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) աճի շարժիչ ուժն են, կամ, ինչպէս ընդունուած է ՀՀում վերջին տարիներին, տնտեսական աշխուժութեան ցուցանիշն է: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից յետոյ այս ցուցանիշը ՀՀում հասել է մրցանիշային ցածր մակարդակի՝ 7,8% 2020ին: Միեւնոյն ժամանակ, տնտեսական աշխուժութեան աճը Դեկտեմբերին - 2018ի նոյն ժամանակահատուածի համեմատ - եղել է 10,7%: Լաաաոյն ցուցանիշերն արձանագրում են սպասարկման ոլորտում. փոխադրամիջոցի ոլորտում, այսինքն, 2018ի համեմատ բեռնափոխադրումների աճը հասել է 25%ի:

ինչ վերաբերում է արդիւնաբերական արտադրութեան աճի թափին, ապա այն կրկնապատկուել է կազմել է 9%, մասնատրապէս՝ Թեղուտի հանքավայրում հանքարդիւնաբերութեան աշխատանքների վերսկսման պատճառով: Կարետը է նշել, որ արտադրական արդիւնաբերութիւնն աճել է 7,6%ով: Այս ցուցանիշը կազմել է 10%: Շինարարութեան աճը կազմել է 4,5%, ինչը նոյնպէս տնտեսութեան աշխուժութեան միտում է: Տնտեսութեան միակ ոլորտը, որտեղ 4% անկում է ունեցել բիզնէսի աշխուժութիւնը՝ գիտատնտեսական արտադրութիւնն է¹:

«Թաւշեայ» յեղափոխութիւնից առաջ ՀՀ տնտեսութեան կարետը իրագործումը ազգային արժոյթի կայունութիւնն էր եւ յառաջացած վստահութիւնը դրամատոնային համակարգի եւ, ամէլի լայնօրէն, երկրի ֆինանսական համակարգի հանդէպ: Օրինակ՝ 2019ին վարկերն ու աանդները 2018ի նոյն ժամանակահատուածի համեմատ աճել են համապատասխանաբար 17%ով եւ 21%ով, ինչի արդիւնքում բարելաուել է վարկ-աանդ յարաբերակցութիւնը՝ կազմելով 1,92%: Բացի այդ, դրամի թոյապանակի անելի արագ աճի ենթահողում վարկերի դոլարացումը նուազել է՝ 2019ի վերջին կազմելով 51%, 2018ի 56%ի համեմատ²: ՀՀ 2019ի պետական ամավարկում տնտեսական աճը դրուել է 4.9%ի չափով, իսկ գնաճը՝ 2,7%: 2019ին ՀՀ տնտեսութեան աճը կանխատեսումից շատ անելին է: Ինչ վերաբերում է գնաճին, ապա այն կազմել է 0,7%. Միայն Դեկտեմբեր ամսուր համեմատութեամբ երկիրը գրանցել է 1,3% գնաճ, իսկ 2019ի Յունուար-Դեկտեմբերին՝ 2018ի նոյն ժամանակահատուածի համեմատ՝ 1,4%: Ինչ վերաբերում է առետրի բացին, ապա 2019 Դեկտեմբերին, 2018ի նոյն ժամանակահատուածի համեմատ գրանցուել է ներմուծման 52% աճ եւ արտահանման 13% աճ: Ներմուծման անելի արագ աճի (10.8%) արտահանման համեմատութեամբ (9,4%), բացասական մնացորդն աճել է անելի քան 300 միլիոն դոլարով: Բացի այդ, արտահանման կառուցուածքը բասականաչափ այլազանուած չէ. աղիւծի բաժինը կազմել է հանքաքարը՝ 28%, քար եւ մետաղ՝ 26% եւ սնունդ՝ 24%: Արտահանմանն ուղղուած այլ կարետր ճիւղերի շարքում պէտք է նշել զբօսաշրջութիւնը: Օտարերկրեայ զբօսաշրջիկների թուի աճը 2019ին եղել է 14,7% (1.9 միլիոն մարդ): Արտահանմանեան բանկային մասնատր փոխանցումները նոյնպէս շարունակուել են աճել՝ չգրանցուած վերաարտահանման պատճառով:


Հարկ է նշել, որ նոյնիսկ առանց հաշուի առնելու համավարակի բացասական ազդեցութիւնը, մի շարք առաջատար ֆիրմաների եւ ամբողջ համաշխարհային տնտեսութեան աճի թափերը 2019ին արդէն սկսել էին զգալիօրէն նուազել: Գրանթ Թորնթոն Ընկերութեան ուսումնասիրութիւն-

¹ <https://armstat.am/file/doc/99517638.pdf> :

² https://arka.am/ru/news/analytics/rost_ekonomicheskoy_aktivnosti_v_armenii_v_2019_godu_sostavil_7_8_stav_samym_vysokim_so_vremeni_miro/ :

ները վկայում են, որ **2010**ից իվեր ամբողջ աշխարհի տնտեսությունը ցնցումների մեջ է եւ կամաց-կամաց սկսել էր ընկնել անկման մի փուլից միսր: Չինաստանը բացառություն չէ, չնայած այս երկրի ՀՆԱի տարեկան միջին աճը, ինչպես երեւում է ստորեւ ներկայացրած գծանկարից, մի փոքր գերազանցում է նշուած ցուցանիշը համաշխարհային առումով:

Global GDP Drops into Recession Territory
Annual Percent Change



Տնտեսական համաճարակ, Կոստանդ, COVID-19 (2020)⁵

Այս համապատասխանում, ակնյայտ է դառնում, որ ՀՀ զբոսաշրջային արդյունաբերության աճի թափը, որտեղ վերջին տարիներին երկնիշ թուերով արտայայտուած առաջանցիկ զարգացում էր նկատուած, նկատե- լիօրէն գիջել է դիրքերը: Դժուար չէր կանխատեսել սպասարկման ոլոր- տուած աճի թափի կտրուկ վատթարացում, մասնատրապէս փոխադրամի- ցոցի ոլորտուած, փակ սահմանների եւ բեռների փոխադրման սահմանա- փակումների պատճառով: Արդյունաբերական արտադրանքի անկում կա- րող է լինել՝ յատկապէս արտադրութեան մէջ: Կը տուածն նաեւ շինարա- րութիւնն ու գիտաւտնտեսական ոլորտի արտադրութիւնը: Այս համապատ- կերում միակ բացառութիւնը կարող է լինել ազգային արժոյթի փոխարժէ- քը, որը նոյնիսկ Մարտ-Ապրիլ ամիսների ոչ-երկարածգրուած արժեզրկու- մից յետոյ բարեկաման որոշակի միտում է արձանագրել եւ արդիւնքում ա- նաջացել է վստահութիւն դրամատուային համակարգի եւ, առեյի լայնօրէն՝ երկրի ֆինանսական համակարգի նկատումմը: Չնայած այս հանգաման- քին, երկրի առեարի եւ վճարային հաշուեկշիռներն անխոսափելիօրէն կը վատթարանան, իսկ արտաքին մասնաւոր փոխանցումների ներհոսքը կը նուագի համավարակի եւ տնտեսական դժվարութիւնների պատճառով:

2009ից իվեր առաջին անգամ **2020**ին ՀՀ տնտեսութիւնն անկում ապ- րեց **8** տոկոսի շուրջ⁶, որի երկու հիմնական պատճառներն են համակա-

⁵ Diane Swank, "An Economic Pandemic: COVID-19 Recession 2020," March 04, 2020, <https://www.grantthornton.com/library/articles/advisory/2020/Economic-Analysis/Economic-Outlook/economic-outlook-march-2020.aspx> :

⁶ ՀՀն տնտեսական անկումներ ապրել է **5** տարի՝ անկախութեան հռչակման եւ յաջորդած **2** տարիներին, ըստ Վիեննայի Վարկային Կոմիտէի (ՎԿ)՝ **1991**ին **11,7%**, **1992**ին՝ **41,8%** եւ **1993**ին՝ **8,8%** անկում Այնուհետեւ, միջազգային ֆինանսատե- տեսական ճանաճաճի Իտեւներով՝ **2009**ին՝ **14,1%** անկում եւ անցած **2020**ին՝

րակն ու արցախեան պատերազմը, թէեւ 2020ին պետական ամավարկով ՀՀն պէտք է ունենար 4,8% տնտեսական աճ: Ընդ որում, համավարակը համաշխարհային արհաւիրքի հետեանք էր, իսկ 44օրեայ պատերազմը կարելի է գնահատել տարածաշրջանային միաժամանակ միջանի բացասական միտումների արդիւնք, նաեւ՝ կառավարման համակարգի անպարկեշտ եւ ոչ-արհեստավարժ քայլերի հետեանք, դրա բացասական ազդեցութիւնը զգացուցեց նաեւ 2021ին: Այս ամէնին կարելի է յաւելել նաեւ անարդիւնաւէտ կառավարութեան հանդէպ դժգոհութիւնն ու բացասական սպասումները, ինչը լուրջ վնաս է հասցնում մասնաւոր բիզնէսին:

Ամենամեծ անկումը գրանցուել է Ապրիլին՝ -16.4%, երկրում սահմանաւոր արտակարգ դրութեան եւ դրանից բխող տնտեսական գործունէութեան որոշ տեսակների նկատմամբ կիրառուած ժամանակաւոր սահմանափակումների պատճառով: Ապրիլին ձխախոտային արտադրատեսակների արտադրութեան նկատմամբ սահմանափակումները վերացուեցին, Մայիսին վերացուեցին նաեւ հագուստի արտադրութեան նկատմամբ սահմանափակումները, որոնք նպաստեցին Մայիսին անկման նուազմանը (-12.9%): Յուլիսին տնտեսութիւնում ապրանքների ու ծառայութիւնների թողարկման ծաւալի անկումը խորացաւ (-10.2%), ինչը կարող էր պայմանաւորուած լինել միջանի հանգամանքով, այդ թում՝ մշակող արդիւնաբերութեան անկմամբ: Յուլիսին մշակող արդիւնաբերութիւնում գրանցուել էր 3.6% անկում, մասնաւորապէս դանդաղել էր հագուստի արտադրութեան ծաւալի յաւելաճը: Վերջինիս համար պատճառ կարող էին հանդիսանալ ներքին եւ արտաքին պահանջարկի կրճատումը եւ/կամ յուլիսեան ռազմական բախումների պատճառով «Տաւոշ Տեքստիլ» ՍՊԸի գործունէութեան խափանումը: Սեպտեմբերին քունկուած է 44 օր տեւած պատերազմի, ինչպէս նաեւ համավարակով վարակուածների թուաքանակի աճի ֆոնին տնտեսութեան անկումը խորացաւ Հոկտեմբերին եւ Նոյեմբերին (-9.3% եւ -10.7% համապատասխանաբար)⁵:

Արդիւնաբերութեան, շինարարութեան, առեւտրի շրջանառութեան, ծառայութեան ոլորտներում թողարկման ծաւալները կրճատուել են. ծառայութիւնների ոլորտում 2020ին գրանցուել է 14.7% անկում: 2020ին տնտեսութեան բոլոր ճիւղերը, բացի գիտատնտեսութիւնից, անկում են ապրել 2019ի համեմատ: Ամենամեծ անկումը գրանցուել է ծառայութիւնների ոլորտում (-14.7%)՝ չհաշուած առեւտրի ոլորտը: Առեւտրի ոլորտում անկումը կազմել է 14%, շինարարութիւնը եւ էական անկում է գրանցել՝ -9.5%, իսկ արդիւնաբերութիւնում թողարկման ծաւալի անկումը կազմել է մօտ 1%: Ամենամեծ անկումն արդիւնաբերութեան, շինարարութեան եւ առեւտրի շրջանառութեան ոլորտներում գրանցուել է Ապրիլին՝ -7.7%, -51%, -33.1% համապատասխանաբար: Ծառայութիւնների ոլորտն 2020ին

⁵ Աւելի մանրամասն՝ <https://banks.am/am/news/interviews/20746> :

ամենաշատ տուժած ոլորտն էր՝ մի կողմից համավարակի եւ միա կողմից պատերազմի ազդեցութեան ներքոյ: Ամենամեծ անկումը ծառայութիւնների ոլորտում գրանցուել է Հոկտեմբերին՝ -23.4%:

Արտաքին տնտեսական հատուածում 2020ին ՀՀի արտահանումը նուազել է 3.9%ով, իսկ ներմուծումը՝ 17.7%ով: Արտահանման անկումը մի կողմից պայմանաւորուած է COVID-19ի հետեանքով արտաքին շուկաներում որոշ ապրանքների պահանջարկի կրճատմամբ (օրինակ՝ կոնիակի), միա կողմից տեղական արտադրութեան խափանմամբ (առաջարկի կրճատմամբ, օրինակ՝ ծխախոտային արտադրատեսակների արտադրութեան):

Արտահանման անկման հաւանական գործօններից է նաեւ ինքնաշարժների վերաարտահանման ծաւալների կրճատումը. 2020ին այդ արտահանումը նուազել էր 50.9%ով:

4րդ եռամսեակում պատերազմը, ամէնայն հաւանականութեամբ, եւ ազդեցութիւն է ունեցել արտահանման անկման թափերի վրայ: Մասնատրապէս, խօսքը գնում է ոսկու արտահանման մասին, ինչը պայմանաւորուած է Ադրբեջանի յարձակումների պատճառով Սոթքի հանքավայրի գործունէութեան ժամանակաւոր խափանմամբ:

Հակառակ արտահանման ծաւալների կրճատմանը, որոշ ճիւղերում գրանցուել է արտահանման աճ, ինչն, ըստ էութեան, մեղմել է արտահանման անկումը. օրինակ հանքահումքային արտադրանքի արտահանումը աճել է 11.5%ով, որը ենթադրաբար պայմանաւորուած էր 2020ին Թեղուտի հանքավայրի վերագործարկմամբ: Ինչ վերաբերում է ներմուծման անկմանը, ապա ամենամեծ գործօնն այստեղ ինքնաշարժների ներմուծման կրճատումն էր: 2020ին ՀՀն ներմուծել է 74.4%ով պակաս ինքնաշարժ, քան 2019ին: Այստեղ՝ ներկրման կրճատումը պայմանաւորուած էր նախեստաց 2020 Յունուարի 1ից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ՀՀ ներկրուող ինքնաշարժների մաքսատուրքերի դրոյքաչափերի աւելացմամբ՝ համապատասխան ԵԱՏՄ ընթացակարգերի:

Դրամի արժեզրկումը դոլարի նկատմամբ տեղի է ունենում, նախ եւ առաջ դոլարի ներհոսքի կրճատման հետեանքով: 2020 Նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով արտասահման փոխանցուած միջոցները (167.7 մլն դոլար) առաջին անգամ գերազանցեցին արտասահմանից ստացուած միջոցներին (152.7 մլն դոլար): Դրամի արժեզրկմանը նպաստած այլ հաւանական գործօններից են նաեւ համավարակի տարածումը եւ պատերազմի բռնկումը: ՀՀի պարտքային բեռը 2020ին աւելացել է 628.0 մլն դոլարով՝ տարեվերջին հասնելով մօտ 8 միլիարդ ԱՄՆ դոլարի: Ըստ ֆինանսների նախարարութեան՝ 2020ին ՀՀ պետական պարտքը կազմել է նախորդ տարուայ ՀՆԱի 70%ը, իսկ պետական պարտքն առանց ԿԲ պարտքի, այսինքն միայն կառավարութեան պարտքը, կազմել է ՀՆԱի 66%ը՝ ՀՆԱ նկատմամբ աւելանալով 4.5 տոկոսային կէտով: Հարկ է նշել, որ ըստ ՀՀ օրէնսդրութեան՝ ՀՀ պետական պարտքը տուեալ տարուայ Դեկտեմբերի

31ի դրությամբ չպետք է գերազանցի նախորդ տարուայ ՀՆԱի 60%ը: Համավարակի եւ պատերազմի պայմաններում հասարակության տրամադրությունները անկումային են, հետեւաբար՝ սպասումները եւ՝ բացասական են, բայց փոխարժեքի տատանումների առումով կարեւոր գործոններն են՝ գերտնտեսական իրավիճակը, հարկաամավարկային քաղաքականության հիմնական ընդթափանցումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԻՐԱՊԵՍ ԱՂԵՏԱԼԻ Է ԱՐՑԱՄՈՒՑ

Նախ, խախտուել են արցախցիների, հայաստանցիների հանրային ու անձնական սեփականության իրատնքի միջազգային մի շարք պարտատրություններ⁶, որոնց արդիւնքում վերջիններիս սեփականության իրատնքով պատկանող բազմաթիւ ու բազմատեսակ գոյք ենթարկուել է ոչնչացման կամ էլ մնացել Ադրբեջանի իրաւասութեան տակ անցած տարածքներում: Բացի այդ, պատերազմին նախորդած եւ դրանից յետոյ ընկած ժամանակաշրջանում Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից մշտապէս կոպտօրէն խախտուել են ՄԱԿ կանոնադրութեամբ սահմանուած բոլոր նպատակները եւ յատկապէս հետեւեալ սկզբունքները.-

- ինքնիշխան հասասարկութեան,
- կանոնադրութեամբ ստանձնած պարտատրութիւնների բարեխղճօրէն կատարման,
- միջազգային վճերը խաղաղ միջոցներով կարգատրման, այնպէս, որ վտանգի չենթարկուեն միջազգային խաղաղութիւնը, անվտանգութիւնն ու արդարութիւնը,
- պետութեան տարածքային ամբողջականութեան կամ քաղաքական անկախութեան նկատմամբ ուժի գործադրման եւ սպառնալիքի չկիրաւման,
- ՄԱԿին չանդամակցող ու չճանաչուած պետութիւնների՝ տյն կանոնադրութեան սկզբունքների համապատասխան գործելու ապահովմանը, որքանով դա կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղութեան ու անվտանգութեան պահպանման համար:

Պատերազմին նախորդած եւ դրանից յետոյ ընկած ժամանակաշրջանում Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից մշտապէս խախտուել եւ շարունակուում են խախտուել ՄԱԿ կանոնադրութեան⁷ 11րդ գլխով նախատեսուած չինքնակառավարող տարածքների վերաբերեալ սահմանուած բոլոր դրոյթները, ինչը էապէս խոչընդոտել է դեռեա ՄԱԿի եւ այլ պետու-

⁶ «Սեփականութեան պաշտպանութեան մասին մարդու իրատնքների վերաբերեալ եւրոպական կոնվենցիա», No 1 Արձանագրութեան 1ին յօդուածի ուղեցոյց, թարմացուել է 2020 թուականի Օգոստոսի 31ին, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_1_Protocol_1_ENG.pdf?fbclid=IwAR1FDna3nVLukoNOYTIIfD58onWFw6CR1oXkeDKTr0q91PyyzAdXoj_k7e2M :

⁷ https://www.un.org/res/unx20Treaties/Charter_arm_unicode.pdf : Կանոնադրութիւնը ՀՀ ուժի մէջ է մտել 1992 Մարտ 2ից (Ընդհանուր ժողովի 46/227 բանաձեւ):

թիւների կողմից չճանաչուած (թէեւ ԱՀի անկախութիւնը ճանաչել են մի շարք երկրներ, երկրամասեր, նահանգներ), սակայն ՄԱԿ անդամ շատ այլ պետութիւնների համեմատութեամբ ՄԱԿի կանոնադրութեանը՝ իր ժողովրդավարութեան աստիճանով, պետական կառավարման կառուցակարգերով համապատասխանող եւ գերազանցող, ԱՀ խաղաղ գոյութեանը, ընկերատնտեսական զարգացմանը եւ միջազգային հանրութեանն ու տնտեսութեանը համարկմանը⁶:

Ադրբեջանն ու Թուրքիան խախտելով ՄԱԿ կանոնադրութեամբ սահմանուած բոլոր նպատակներն ու սկզբունքները, կոպտօրէն խախտել են նաեւ դրա 9րդ գլխի՝ «Միջազգային տնտեսական ու սոցիալական համագործակցութիւն», 55րդ յօդուածով ամրագրուած դրոյթները՝ ուղղուած պետութիւնների ու մարդկանց տնտեսական, սոցիալական, առողջապահական եւ մշակութային իրատնքներին, որոնցով երաշխատրուած են ՄԱԿ անդամ պետութիւններում, ՄԱԿ կողմից չճանաչուած պետութիւններում եւ ինքնակառավարող տարածքներում այնպիսի քաղաքականութեան իրացմանը, ինչը պէտք է նպաստի դրանցում.

1. կենսամակարդակի բարձրացմանը, բնակչութեան լրիւ զբաղուածութեանը,

2. տնտեսական ու ընկերային առաջընթացի ու զարգացման պայմաններին,

3. միջազգային տնտեսական, ընկերային, առողջապահական եւ համաձայն հարցերի լուծմանը,

⁶ Յօդուած 73. «Միատրուած Ազերի Կազմակերպութեան անդամները, որոնք պատասխանատուութիւն են կրում կամ ստանձնում այնպիսի տարածքների կառավարման համար, որոնց ժողովուրդները դեռեւս չեն հասել լիակատար ինքնակառավարման, ընդունում են այն սկզբունքը, որ տուեալ տարածքների բնակչութեան շահերն առաջնահերթ են եւ, իբրեւ նոփրական պարտականութիւն, պատասխանատուութիւն են ստանձնում սոյն կանոնադրութեամբ հաստատուած միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան համակարգի շրջանակներում առանկագոյնս նպաստել այդ տարածքների բնակչութեան բարօրութեանը եւ այդ նպատակով՝

ա. այդ ժողովուրդների մշակոյթի հանդէպ պատշաճ յարգանք դրսեւորելով՝ ապահովել նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական առաջընթացը, առաջընթացը կրթութեան ոլորտում, նրանց նկատմամբ արդարացի վերաբերմունքն ու նրանց պաշտպանութիւնը չարաշահումներից...,

գ. ամրապնդել միջազգային խաղաղութեանն ու անվտանգութեանը...»,

Յօդուած 74. «Միատրուած Ազգերի Կազմակերպութեան անդամները համաձայնում են նաեւ, որ սոյն յօդուածին վերաբերող տարածքների նկատմամբ իրենց քաղաքականութիւնը, ոչ պակաս, քան իրենց բուն տարածքների դէպքում, պէտք է հիմնուած լինի բարիդրացիութեան սկզբունքի վրայ՝ հաշուի առնելով մնացած աշխարհի շահերն ու բարօրութիւնը սոցիալական, տնտեսական եւ առեւտրական գործերում»:

4. մշակույթի ու կրթության բնագավառներում միջազգային համագործակցութեանը,

5. բոլորի հանդէպ եւ բոլորի համար մարդու իրաւունքների ու հիմնական ազատութիւնների համընդհանուր յարգանքին եւ պահպանմանը՝ անկախ ցեղից, սեռից, լեզուից կամ դասանանքից:

Պատերազմին նախորդած եւ դրանից յետոյ ընկած ժամանակաշրջանում Ադրբեջանի կողմից մշտապէս կոպտօրէն խախտուել են նաեւ ՄԱԿ «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրաւունքների մասին» միջազգային դաշնագրի⁹ (ընդունուած 1966 Դեկտեմբերի 16ին) յօդուածների դրոյթները, որոնց արդիւնքում ԱՀն չի կարողացել իրացնել իր միջազգային իրաւունքները յատկապէս տնտեսապէս զարգանալու, ընկերային ու մշակութային իրաւունքներն իրականացնելու ուղղութեամբ:

Ադրբեջանի կողմից ԱՀի եւ ՀՀ դէմ իրականացուած նախայարձակման եւ ներկայումս ընթացող քաղաքականութեան արդիւնքում վերջիններիս կրած տնտեսական վնասները բնութագրուում են հետեւեալներով¹⁰:

Նախ կորուստները պէտք է բաժանել միջանի հետեւեալ խմբերի.-

➤ մարդկային կեանքերի կորուստ, ինչը կասեցրեց խաղաղութեան պայմաններում նրանց ստեղծարար աշխատանքով զբաղուելու հնարատրութիւնը, հետեաքար նաեւ դրանից բխող տնտեսական արդիւնքը,

➤ ենթակառուցուածքների եւ ունեցուածքի, այդ թում՝ գինտեխնիկայի կորուստ. այստեղ, միայն գինտեխնիկայի գծով մօտ 2 մլրդ դոլարի կորուստ ունի հայկական կողմը¹¹,

➤ ԱՀի տարածքների կորուստ՝ ներառեալ ուժանիւթի եւ պարենային հասարակշռութեան ապահովման ուղղութիւններով,

➤ ՀՀ եւ ԱՀի՝ փաստացի, միասնական տնտեսական եւ արտաքին առեւտրային հաշուեկշռի տեսանկիւնից կորուստներ¹²:

Կարելի է անելացնել նաեւ այլ խմբեր, որոնց միջոցով նոյնպէս կարելի է հաշուարկել այն ամբողջ տնտեսական կորուստը, որ ունեցել են ՀՀն ու

⁹ «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրաւունքների մասին» ՄԱԿ միջազգային դաշնագրի, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347>, Դաշնագիրը ՀՀի համար իզօրու է դարձել 1993 Դեկտեմբերի 13ից:

¹⁰ Տուեալները նախնական են եւ յետագայում կարող են փոփոխուել աճման միտումով, քանի որ տոյն հետազօտութեան ասարման օրուայ դրութեամբ դեռեա ընթանում են կրած վնասների չափագրման եւ ակնկալիք վնասների գնահատման աշխատանքներ:

¹¹ Ըստ «Կովկասի ինստիտուտ»ի աագ գիտաշխատող, վիճակագիր Հրանտ Սիքայլեանի գնահատականների, <https://ampop.am/the-post-war-economic-situation-in-armenia/>:

¹² ԱՀ անկախութիւնից իվեր ներքին շրջանառութեան համար ֆինանսական եւ նիւթական, բնական, այլ միջոցները ՀՀի հետ համատեղ հաշուեկշիւներով են վարում:

ԱՀն պատերազմի հետեանքով: Ընդ որում, այդ կորուստները 2 հայկական պետությունների ազգային հարստության կորուստ է, եւ ոչ միայն այս տարուայ կորուածքով, այլ առնուազն՝ յառաջիկայ տասնամեակների:

Լուրջ վնաս է կրել արդիւնաբերական արտադրութիւնը: ՀՀում աւերուել են բազմաթիւ արտադրական շէնքեր, շինութիւններ, շարքից դուրս են եկել արդիւնաբերական սարքատրումներ:

Ադրբեջանի տիրապետութեան տակ են անցել ՀՀին պատկանող հանքեր եւ արդիւնաբերական հզօրութիւններ: Մասնաւորապէս Ադրբեջանի տիրապետութեան տակ է անցել Սոթքի հանքավայրի երբեւիցէ չշահագործուած մասը, ինչն ըստ տարածքային չափագրման կազմում է Սոթքի հանքավայրի կէտը¹³: Հարկ է նշել, որ ՀՀ իրաւատութեան տակ գտնուող հանքավայրի մասը լիարժէք կերպով շահագործուել է վերջին 50 տարիներին: Վերոյիշեալից հետեւում է, որ նոր սահմանագօտու պատճառով հնարատր է հանքավայրն այլեւ չշահագործուի, որը կարող է հսկայական տնտեսական վնաս հասցնել ՀՀին, քանի որ Սոթքի ոսկու հանքավայրը շահագործող «Գէոպրոմայնինգ Գոլդ» ընկերութիւնը ՀՀի խոշոր հարկատուներից է¹⁴: Սոթքի հանքի շահագործման հնարատր կասեցումը յանգեցնելու է նաեւ բազմաթիւ ընկերատնտեսական խնդիրների: Բացի նրանից, որ հանքը շահագործող ընկերութիւնը ՀՀ ամենախոշոր հարկատուներից է, հարցականի տակ է յայտնուում նաեւ Արարատի ոսկու կործման գործարանի յետագայ շահագործումը: Միաժամանակ անդամայրծման վճարագի տակ է յայտնուում նաեւ «Հարավովկասեան երկաթուղին», որի բեռնաշրջանառութեան ամբողջ ծաւալի աւելի քան 50%ն ապահովում է Սոթքից Արարատ՝ հանքաքարի փոխադրման շնորհիւ¹⁵:

«Հանքավայրի չշահագործումը կամ ոչ ամբողջական շահագործումը կ'ունենայ տնտեսական վատ հետեանքներ, կորուստները մեծ կը լինեն, չնայած նրան, որ այս տարիներին էլ ոսկու հսկայական ծաւալներ են ար-

¹³ Սոթքի հանքի կէտը պատկանում է հայերին, կէտը՝ ադրբեջանցիներին: Այս մասին երկէլ յայտարարեց ՀՀ ՊՆ Գլխատր շտաբի պետի տեղակալ Տիրան Խաչատրեանը: Այս յայտարարութիւնը եղաւ այն աղմուկից յետոյ, երբ պարզուեց, որ ադրբեջանցի զինծառայողները մտել են Սոթքի տարածաշրջան, մասնաւորապէս Սոթքի հանքավայր, եւ սահմանագծում է իրականացում («Սոթքի հանքավայրը կիսում է օլիգարխիայի եռակողմ պայմանաւորութեան արդիւնքում», <https://www.1in.am/2864063.html>):

¹⁴ Տիշեցնենք, որ «Գէոպրոմայնինգ Գոլդ» ՄՊԸն շահագործում է ՀՀ ամենամեծ ոսկու հանքավայրը: Ընկերութիւնը ռուս սեփականատրերի ձեռքում է: Խոշոր բաժնետէրը մեծահարուստ Ռոման Տրոցենկօն է, ով այս տարուայ Տոլխից դարձել է «Գէոպրոմայնինգ գոլդ»ի շրջը 96% բաժնեմասի սեփականատրը:

«Սոթքի հանքավայրը կիսում է օլիգարխիայի եռակողմ պայմանաւորութեան արդիւնքում», <https://www.1in.am/2864063.html> :

¹⁵ Նոյն:

դիւնահանուել, թալան է իրականացուել, եւ ոչ-լիարժէք հարկային վճարումներ են կատարուել: Դա նաեւ մեծ հարուած կը հասցնի մեր ոսկու պաշարներին, մեր տնտեսութեան հարկային եկամտներին...»¹⁶: Այս ենթահողում մտահոգութիւն է առաջացնում նաեւ Սիւնիքում նոյն ընկերութեան կողմից շահագործուող միւս հանքավայրերի ճակատագիրը: Չի բացառոււմ, որ նման մտահոգութիւն առաջանայ նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդէնային կոմբինատի, Կապանի բազմամետաղային հանքավայրի եւն. հետ:

Պատերազմի ասարտից յետոյ եւս Ադրբեջանը շարունակում է խախտել 2020 Նոյեմբերի եռակողմ յայտարարութիւնը եւ շարունակական վնասներ հասցնել ՀՀ սահմանամերձ համայնքների (Գեղարքունիք, Սիւնիք, Տատւշ) տնտեսութիւններին ու բնականոն տնտեսական գործունէութեանը: Այսպէս, Ադրբեջանական զինուած ուժերը ռազմական յարձակումներով խախտել են Գեղարքունիքի մարզում ՀՀ քաղաքացիների տնտեսական գործունէութեան միջազգայնօրէն երաշխատրուած իրաւունքը¹⁷:

Այս առնչութեամբ, ՀՀ ՄԻՊի (Մարդու Իրաւունքների Պաշտպանութիւն) յայտարարութիւնում մասնատրապէս ասոււմ է. «... ՀՀ մարդու իրաւունքների պաշտպանը սրացել է գործարարութեամբ զբաղուող ընկերութեան փնտրելից բողոք այն մասին, որ ադրբեջանական զինուած ուժերի ծառայողները 2020 Նոյեմբերի 25ին ապօրինաբար, պատերազմի սպառնալիքով ներխուժել են ՀՀ կառավարութեան որոշմամբ իրենց յարկացուած այն փարածքը, որպէջ արդէն 20 փարի իրենք իրականացնում են ձեռնարկափրական գործունէութիւն՝ դրանով պատճառելով շուրջ 5,000,000 ԱՄՆ դոլարի վնաս: Արդիւնքում գործարար ընկերութիւնը զրկուել է իրենց յարկացուած՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Սոթք գիւղի 200 հա հողափարածքն օգտագործելու, 75 հա փարածքի վրայ կառուցուած հողմային էլեկտրակայանից՝ 2 հողմակից ... Այսինքն՝ ընկերութիւնը զրկուել է նաեւ առանձնապէս խոշոր չափի բաց թողնուած օգուրներից, ինչպէս նաեւ փնտրեական գործունէութիւնը զարգացնելու հնարատրութիւնից...»¹⁸:

Համանման կերպով ադրբեջանական զինուոժը դիտատրեւալ արարքներով, զէնքի կիրատրութեան սպառնալիքով ՀՀ քաղաքացի գործարարնե-

¹⁶ Նոյն:

¹⁷ «Ադրբեջանի ՁՈՆ ռազմական արարքներով խախտել են Գեղարքունիքում ՀՀ քաղաքացիների միջազգայնօրէն երաշխատրուած իրաւունքը. ՄԻՊ», https://yerevan.today/all/iravakan/75708/adrbedjani-zou-n-razmakan-ararqerov-xaxtel-en-gegharqouniqoum-hh-qaghaqacineri-midjazgaynoren-erashxavorvats-iravounqy-mip?fbclid=IwAR3_E3z02aH1m9GbSmim5z1zgu3T7kU8mlmaY2Eu9HdmpEjcc6Q8viGrBjl :

¹⁸ Նոյն:

րին՝ աղբբեջանի հետ սահմանամերձ մարզերում, զրկել են եւ շարունակում են զրկել միջազգայնօրէն երաշխատրուած եւ ՀՀ սահմանադրութեամբ ամրագրուած տնտեսական գործունէութեամբ զբաղուելու իրաւունքից այն տարածքում, որը նրանց յատկացուել է ՀՀ կառավարութեան որոշմամբ՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրէնքի հիման վրայ, ինչպէս եւ հաստատուել կառավարութեանից անկախ ՀՀ մարմինների որոշումներով:

Նշումաձից բացի, այս ամէնի արդիւնքում իրական սպառնալիքներ են առաջացել նաեւ բնակիչների կեանքի, առողջութեան, սեփականութեան եւ կենսական կարեւորութեան միւս իրաւունքների համար: Հարցն այն է, որ այդ տարածքները օգտագործուել են նաեւ արօտավայրերի եւ խոտհարքի համար, իսկ ներկայում արդէն դա դարձել է անհնար Աղբբեջանի զինուած ուժերի նշանառութեան տակ լինելու պատճառով, ինչը բնակիչների համար լուրջ խնդիրներ է առաջացրել գիւղատնտեսութեան ու մասնատրապէս՝ անասնապահութեան հարցերով:

Գործարարներն օրինական գործունէութիւնն իրականացնելու համար իրենց յատկացուած տարածքին առհասարակ մօտենալ չեն կարող:

Ակնյայտ է, որ աղբբեջանական զինուած ուժերի այս գործողութիւնների արդիւնքում, որոնք տեղի են ունեցել ուժի գործադրման բացայայտ սպառնալիքով, խախտուել են ՀՀ քաղաքացիների տնտեսական գործունէութեան միջազգայնօրէն երաշխատրուած եւ ՀՀ սահմանադրութեամբ ամրագրուած իրաւունքը, ինչպէս նաեւ արօտավայրերից ու խոտհարքներից օգտուելու եւ այլ իրաւունքներ:

Լուրջ վնաս է կրել գիւղատնտեսութիւնը: ՀՀում օգտագործման համար ոչ-պիտանի են դարձել հազարաւոր հեկտարների հասնող հողատարածքներ, այդ թում՝ բերրի վարելահողեր, արօտավայրեր, անտառային տարածքներ, իսկ դրանց հսկայական զանգուածն անցել է Աղբբեջանի իրաւատութեան տակ՝ միլիոնաւոր դոլարների հասնող բերքով, այդ թում՝ հացահատիկային մշակումներ, միրգ, հատապտուղներ են.:

Պատերազմի ընթացքում կոտորուել են/Աղբբեջանի իրաւատութեան տակ անցած տարածքներում են մնացել մեծաքանակ խոշոր եղջերաւոր անասուններ, մանր եղջերաւոր անասուններ, խոզեր, թռչուններ են.:

ԱՀի տնտեսութեան մէջ մեծ է գիւղատնտեսութեան դերը: Այսպէս գիւղատնտեսական արտադրանքը 2019ին կազմել է համախառն ներքին արդիւնքի 20,6 տոկոսը: 2020ին սպասում էր առատ բերք: Սակայն 2020 Նոյեմբերի 9ին ՌԴի, ՀՀի եւ Աղբբեջանի միջեւ եռակողմ յայտարարութիւնը ստորագրելուց յետոյ ԱՀի բնակչութեան մի մասը լքեց իրենց տները՝ հասունացող բերքը թողնելով Աղբբեջանին անցնող Քարվաճառի, Քաշաթաղի, Ակնայի (Աղդամի) այգիներում¹⁹:

¹⁹ «Նոսն 5 ծաղից 4ն անցել է աղբբեջանցիներին. Արցախի կորուստները գիւղատնտեսութեան ոլորտում»,

Այսպես, պատերազմի հետեանքով ԱՀի ամեն 5 նուան ծառից 4ը անցել է աղբբեջանցիների վերահսկողութեան տակ: Հայկական վերահսկողութեան տակ է մնացել նուան 2300 հա այգիներից միայն 500 հեկտարը: Այդ այգիներում են մնացել նորատունկ 160 հեկտար այգիներ: Այգետէրերը չեն էլ հասցրել բերքահաւաք անել, քանի որ պահը համընկել է պատերազմական գործողութիւնների հետ: Կորստի չափը գնահատելու համար հարկ է նշել, որ պատերազմին նախորդած տարին՝ 2019ին այդ այգիներից նուան համախառն բերքը կազմել էր 4890 տոննա՝ նախորդ տարուայ 2470 տոննայից գրեթէ կրկնակի աւելի: 2020ին նոյնպէս սպաստում էր այդպիսի առատ բերք, սակայն դա գրեթէ ամբողջութեամբ մնաց Աղբբեջանի տիրապետութեան տակ:

Նոյն ճակատագրին արժանացան արցախեան հանրայայտ թթի այգիները: Այս հատապտղի դերը շատ մեծ է ԱՀի տնտեսութեան մէջ: Ըստ ԱՀի տնտեսութեան եւ գիւղատնտեսութեան նախարարի, նախքան պատերազմը Արցախի 950 հա թթի այգիներից հայկական վերահսկողութեան տակ է մնացել տակ 650 հեկտարը:

Լուրջ վնաս է հասցունել նաեւ հացահատիկային մշակումների ցանքատարածութիւններին ու բերքին: ԱՀի գիւղատնտեսութեան նախարարի նախնական տուեալներով՝ կորսուել են շուրջ 95,000 հա հացահատիկի ցանքատարածութիւն եւ այգիներ: Այսպէս՝ պատերազմի ժամանակ կորսուած ու դրանից յետոյ եռակողմ յայտարարութեամբ Աղբբեջանին անցած տարածքներից Հաղրութի եւ Քաշաթաղի շրջաններում միասին կար հացահատիկի 34,000 հա ցանքատարածութիւն: Այս կորստին կը գումարուեն նաեւ Ասկերանի ու Մարտունու շրջանների որոշ հատուածների կորուստները. այս երկու շրջաններում հիմնականում ցորեն էր ցանում: Ուշագրաւ է, որ հացահատիկային մշակաբոյսերի մասով ԱՀն ամբողջութեամբ ինքնաբաւ էր, աւելին՝ ԱՀում ստացուած բերքը 25%ով բաարարում էր նաեւ ՀՀ ցորենի պահանջարկը: Նախնական հաշուարկներով, ներկայ դրութեամբ ԱՀում առկայ է մօտ 35,000 հա վարելահող, ինչը լուրջ մարտահրաւերի առջեւ կը կանգնեցնի ԱՀ եւ ՀՀ պարենային անվտանգութեան խնդիրը՝ հացահատիկային մշակումների մասով:

Պատերազմն իր խորը ազդեցութիւնն է թողել երկրում գործարար մթնոլորտի, տնտեսայարաբերութիւնների վրայ: Գործարար համայնքը չի կարողանում ելք գտնել բազմաթիւ խոչընդոտներից, որոնք հետեանք են երկրի փոխադրամիջոցային խորը շրջափակման, ուժանիւթի հզօրութիւն-

(<https://ampop.am/damage-and-losses-to-agricultural-sectors-by-artsakh-2nd-war/?fbclid=IwAR37p0zpoEkuJhab8qEY72WBPSynABfv12kVf8H8Kfj38iOiQ7TeixngSNO>):

ների կրճատման ու այդ գործում ՌԴից միակողմանի կախառածության, իշխանութիւնների կողմից նախաձեռնութիւնների բացակայութեան²⁰:

Այս կապակցութեամբ հարկ է ուշադրութիւն դարձնել Ադրբեջանի նախագահի պաշտօնական ուղերձները ՀՀի ու հայերի մասին, որոնց թում ընդգծում է. «... մենք պէտք է տեսնենք աւելի ուժեղ պայքար Հայաստանի դէմ ու աւելացնենք պայքարի կշիռը: Մենք այն մեկուսացրել ենք միջազգային եւ փարածաշրջանային բոլոր ծրագրերից...»²¹:

Այս պայմաններում շատ գործարաններ, արտադրութիւններ դադարեցնում են իրենց գործունէութիւնը²² դրանով նկատելիորէն պակասեցնելով ամավարկային մուտքերը, ինչը յղի է ՀՀ ամավարկով նախատեսուած ծրագրերի հաւանական թերի ֆինանսատրման հեռանկարով:

Ըստ ՀՀ պետական եկամտների կոմիտէի (ՊԵԿ) տեղեկատուութեան 2020ի վերջին երեք ամսում, այսինքն պատերազմի ընթացքում, ՀՀում, ընդհանուր առմամբ, գործունէութիւնը ժամանակատր դադարեցրել է 7216 տնտեսվարող, 1041 քիզնէ էլ հաշուառումից հանուել է կամ լուծարուել: Տնտեսական ոլորտի պատասխանատուների ներկայացմամբ, քիզնէսները հիմնականում փակուել են համավարակի հասցրած վնասի հետեանէլ: ՊԵԿի տեղեկատուութիւնից երեւում է, որ ամենաշատը տուժել է մշակող արդիւնաբերութեան ոլորտը, որտեղ իրենց գործունէութիւնը ժամանակատր դադարեցրել է 905 տնտեսվարող, հաշուառումից դուրս են եկել կամ լուծարուել 87ը: Մեծ թումով տնտեսվարողներ կորուստներ են ունեցել մեծածախ եւ մանրածախ առեւտրի, ինքնաշարժների եւ մոտոցիկլէվների նորոգման ոլորտում: 2889 տնտեսվարող ժամանակատր դադարեցրել է այդ ոլորտում ծառայութիւն մատուցել: Եւ դէռ յայտնի էլ չէ՞ քիզնէսները կը գործարկէ՞ն, թէ՞ ոչ: 592ն էլ ընդհանրապէս լուծարուել են:

²⁰ «Այսօր հասարակութեան մէջ առկայ է բարոյափոգեանական, թշնամանքի եւ ատելութեան մթնոլորտով միջավայր: Իսկ ինչ վերաբերում է ճզնաժամերին, դա ե՛ր դիմանազիտական է, ե՛ր հումանիտար է, ե՛ր սոցիալ-տնտեսական է: Այս իրողութիւնները պէտք է սթափեցնող լինեն, սակայն հասարակութեան մէջ այսօր զերակշռում է անորոշութիւնների գիտակցումը, եւ սա չի կարող արդիւնաւետ լինել՝ իր հարցազրոյցի մէջ ընդգծում է ԵՊՀ տնտեսագիտութեան եւ կառավարման ֆակուլտէտի դէկան, Հանրային հարհրդի անդամ Հայկ Սարգսեանը», «Իշխանութեան մօտ չկայ գիտակցում, որ իրավիճակը կրիտիկական է», <https://www.1in.am/2892227.html> :

²¹ «Հերթական ապացոյցները Ադրբեջանում հայերի նկատմամբ էթնիկ հիմքով թշնամանքի խորքային արմատների վերաբերեալ» ՄԻՊ, 15 Փետրուար, 2021 (<https://www.1in.am/2902594.html>) :

²² «Երեք ամսում հազարատր քիզնէսներ փակուել են, բայց կորունավորուան ու պատերազմը պետական համակարգի կողքով են անցել», https://www.aravot.am/2021/02/16/1171606/?fbclid=IwAR2Hcy4VPEc2Cc_n7t_QtbEO44QuDNpeGib02AOxkP5nenq5UjYkC6aE4_Q :

Մինչ համավարակն ու պատերազմը երկրում «բում» արած շինարարության ոլորտն էլ ճգնաժամից անմասն չի մնացել. 208 տնտեսվարող գործունեությունը ժամանակատր դադարեցրել է, 7 կազմակերպություն՝ ինքնալուծարել:

Համավարակի ու պատերազմի հետեանըվ բիզնեսների փակման գործընթացի հետ մէկտեղ նրանցից շատերը մատնում են հարկադրուած պարապորդի: ՀՀ ամենախոշոր հարկատուներից մէկը՝ «Մասիս Տաբակօն», մատնուել է պարապորդի: Գործարանի աշխատակիցներին ուղարկել են տուն. պատճառը այս ընկերութեան արտադրանքի պահանջարկի նուագումն է: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը չի շրջանցում որեւէ ընկերութեան եւ կազմակերպութեան, եւ նոյնիսկ այնպիսի ապրանք, ինչպիսին ծխախոտն է, կարող է չարտադրուել պահանջարկի բացակայութեան պատճառով²³:

Լուրջ վնասներ են կրել նաեւ տնտեսութեան մնացած բոլոր ոլորտները, որոնց գնահատական տալը այս պահին պարզապէս անհնար է: Սակայն այդ վնասներն արտայայտում են հետեւեալ գերտնտեսական մակարդակի գնահատականների մէջ:

Այսպէս, ըստ փորձագիտական գնահատականների²⁴ 2019ի համեմատութեամբ 2020ին ՀՀում չարտադրուած ՀՆԱն գնահատում է (առանց սպառողական գների աղիսակի ազդեցութեան հաշուանման) աւելի քան 780 մլրդ դրամի չափով, այդ թումմ՝ չարտադրուած գիտլատնտեսական համախառն արտադրանքը՝ աւելի քան 34 մլրդ դրամ, չիրականացուած շինարարական աշխատանքների ծաւալը՝ աւելի քան 34 մլրդ դրամ, չիրականացուած առեւտրաշրջանառութիւնը՝ աւելի քան 391 մլրդ դրամ, չմատուցուած ծառայութիւնների ծաւալը (առանց առեւտրի)՝ շուրջ 285 մլրդ դրամ: Այդ նոյն ժամանակաշրջանում արտաքին առեւտրաշրջանառութիւնը կրճատուել է 1.1 մլրդ ԱՄՆ դոլարի (434.3 մլրդ դրամ) չափով, այդ թումմ արտահանումը կրճատուել է 104.1 մլն ԱՄՆ դոլարի (21.5 մլրդ դրամ) չափով, իսկ ներմուծումը՝ 978 մլն ԱՄՆ դոլարի (413 մլրդ դրամ) չափով:

Ընդ որում, ՀՆԱ ծաւալների կրճատման մեծ բեռը՝ 35.4 տոկոսը, բաժին է ընկել 2020ի 4րդ եռամսեակին, ինչը համընկնում է պատերազմի ու յետպատերազմեան ժամանակաշրջանին: Յատկանշական է, որ 2020ի ընթացքում չարտադրուած արդիւնաբերական արտադրանքի շուրջ 2/3ը չի արտադրուել 2020ի 4րդ եռամսեակի ընթացքում, համապատասխանաբար՝ չարտադրուած գիտլատնտեսական համախառն արտադրանքի

²³ «Տնտեսական կոլապս. «Մասիս Տաբակօն» մատնուել է պարապորդի», «Ժամանակ», <https://www.1in.am/2892455.html> :

²⁴ Այս եւ միա փորձագիտական գնահատականները կատարուել են ՀՀ ՄԻՊ Արման Թաթայեանի, ՄԱԿի փորձագէտների, լրագրողների, տարբեր հետազոտողների, յատկապէս՝ Մ. Արիստակէսեանի կողմից՝ պետական կառավարման մարմինների պաշտօնական կայքերում հասանելի տուեալների հիմամբ:

շուրջ 44 տոկոսը, չիրականացրած շինարարական աշխատանքների՝ շուրջ 27 տոկոսը, չիրականացրած առևտրաշրջանառության՝ շուրջ 40 տոկոսը, չմատուցրած ծառայությունների ծառայի (առանց առևտրի)՝ շուրջ 27 տոկոսը: Նոյնապես արտաքին առևտրաշրջանառության տարեկան ծառայի կրճատման շուրջ 45 տոկոսը տեղի է ունեցել 2020ի 4րդ եռամսեակի ընթացքում: Ընդ որում, արտաքին առևտրաշրջանառության կրճատումը տեղի է ունեցել հիմնականում ի հաշի ներմուծման ծառայների կրճատման՝ 47.8 տոկոս:

2019ի համեմատությամբ 2020ին պետական ամավարկի մուտքերն անելացել են սոսկ 1.3 մլրդ դրամի չափով: Ընդ որում, հարկային վարչարարությամբ պետական եկամուտների հաաքագրումը նուազել է 40.1 մլրդ դրամի չափով, իսկ ահա պաշտօնական դրամաշնորհների ծառայն անելացել է 41.3 մլրդ դրամի չափով: Ակնյայտ է, որ ամավարկային եկամուտների տարեկան անելացումը եղել է ի հաշի պաշտօնական դրամաշնորհներին: Ընդ որում, այդ պաշտօնական դրամաշնորհների անելի քան 91 տոկոսը ստացուել է 2020ի 4րդ եռամսեակի ընթացքում, այսինքն պատերազմի ընթացքում: 2020ի միայն 4րդ եռամսեակի ընթացքում հարկային ու մաքսային վարչարարությամբ հաաքագրուած հարկերի ու տուրքերի ծաալը 16.8 մլրդ դրամով պակաս է եղել 2019ի նոյն ժամանակաշրջանի համեմատությամբ:

Վերոյիշեալին հակառակ ամավարկային ծախսերը 2019ի համեմատությամբ 2020ին անելացել են 271.2 մլրդ դրամի չափով, ինչը լուրջ լարուածութիւն է առաջացրել ՀՀ ամավարկի կատարման գործում՝ անելացնելով դրա պակասուողը անելի քան 270 մլրդ դրամի չափով²⁵ (պակասուողի մեծութեան վրայ ազդել են նաեւ համավարկի հետեանքների վերացմանն ուղղուած չնախատեսուած ծախսերը): Ընդ որում, ամավարկային ծախսերի անելացման մէջ անելի քան 85.4 տոկոսը կազմում են ընթացիկ ծախսերը: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարութիւնը ձեռնամուխ եղաւ 750 մլն ԱՄՆ դոլարի եւրօբնդերի թողարկմանը, ինչը բնականաբար բարձրացրեց երկրի պարտքային բեռը՝ դրա մակարդակը հասցնելով ՀՆԱ 72,3 տոկոսի վտանգատուր սահմանագծին: Այդ պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը 1,0 տոկոսով բարձրացրեց վերաֆինանսատրման բանկային տոկոսադրոյքը՝ հասցնելով 5,25 տոկոսի, ինչը էապէս «թանկացրեց» գործարարների համար ներդրումների ծաալներն մեծացնելու եւ տնտեսութիւնը զարգացնելու նպատակով խիստ անհրաժեշտ փողը:

Յատկանշական է, որ միայն 2020ի 4րդ եռամսեակում (այսինքն պատերազմի ընթացքում) նախորդ տարուայ նոյն ժամանակաշրջանի համեմատությամբ ամավարկային ծախսերն անելացել են 94.3 մլրդ

²⁵ Նախնական տուեալներ ըստ ՀՀ ՎԿի տեղեկանքի (www.armstat.am):

դրամի չափով, ինչը կազմել է տարուայ ընթացքում լրացուցիչ կատարուած անավարկային ծախսերի շուրջ 35.0 տոկոսը:

ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԴՂԷՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ. ՏԵՍԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Այն, որ բացասական միտում է նկատում ոչ միայն ՀՀ-ում, այլ նաեւ այլ երկրներում եւ մարզերում՝ մեզ չի մխիթարում: Այս աղիսականները ցոյց են տալիս հնարաւոր փոփոխութիւնները եւ զարգացման ցուցանիշերի ուժականութիւնը ոչ միայն 2020ին, այլեւ 2021ին:

Ակնյայտ է, որ, մեր կարծիքով, պատճառուած վնասը չի կարող փոխհատուցուել տեղական եւ հին, ասանդական պայքարի մեթոդներով, որոնք որոշակիօրէն մեկուսացուած են եւ լիարժէք հաշուի չեն առնում տարածաշրջանային միտումները եւ համաշխարհային տնտեսութեան ուժական փոփոխութիւնները: Պէտք է ճանաչել քաղաքատնտեսութեան դասական դպրոցի տեսական հիմնադրոյթների արդիականութեան զգալի կորուստը, մասնատրապէս, թուայնացման դարաշրջանում եւ նոր՝ չորրորդ՝ արհեստագիտական յեղափոխութեան ժամանակաշրջանում:

Մեր ուսումնասիրութեան արդիւնքները կարելի էր կարելի էր բացարձակ, համեմատական եւ մրցակցային առաւելութիւնների հիմնական թոյլ կողմերը եւ բացթողումները՝ առաջարկելով համագործակցային առաւելութիւնների նոր տեսութեան միջոցով նոր մօտեցումներ՝ գիտական փաստարկներով, հիմնատրումներով, վիճակագրութեամբ, տնտեսական ցուցանիշերով եւ գործօնների վերլուծութեամբ: Համագործակցային առաւելութիւնները եւ դրանց արդիւնաւէտ օգտագործումը պարզելու անհրաժեշտութիւնը պայմանատրուած է նաեւ նրանով, որ համաշխարհային տնտեսութիւնը փորձում է գտնել աճող հակամարտութիւնների լուծման եւ խաղաղութեան ու անվտանգութեան հաստատման շուրջ համաձայնութեան զալու ուղիներ:

Աղյուսակ 1. Համաշխարհային տնտեսության վերջին կանխատեսումները²⁶			
	Կանխատեսումներ		
	2019	2020	2021
Համաշխարհային տնտեսություն	2,9	-3,0	5,8
Զարգացած տնտեսություններ	1,7	-6,1	4,5
Մ. Նահանգներ	2,3	-5,9	4,7
Եվրոարածք	1,2	-7,5	4,7
Գերմանիա	0,6	-7,0	5,2
Ֆրանսա	1,3	-7,2	4,5
Իտալիա	0,3	-9,1	4,8
Սպանիա	2,0	-8,0	4,3
Ճափոն	0,7	-5,2	3,0
Միացնալ թագավորություն	1,4	-6,5	4,0
Քանադա	1,6	-6,2	4,2
<i>Զարգացած այլ տնտեսություններ</i>	<i>1,7</i>	<i>-4,6</i>	<i>4,5</i>
Զարգացող շուկաներ և աճող տնտեսություններ	3,7	-1,0	6,6
<i>Զարգացող և աճող Ասիա</i>	<i>5,5</i>	<i>1,0</i>	<i>8,5</i>
Չինաստան	6,1	1,2	9,2
Հնդկաստան	4,2	1,9	7,4
ASEAN-5	4,8	-6	7,8
Զարգացող և աճող Եվրոպա	2,1	-5,2	4,2
Ռուսաստան	1,3	-5,5	3,5
Լատին Ամերիկա և Զարիպեաններ	0,1	-5,2	3,4
Պրագիլ	1,1	-5,3	2,9
Սերսիբո	-0,1	-6,6	3,0
Միջին Արևելք և Կերրոնական Ասիա	1,2	-2,8	4,0
Սևտալական Արաբիա	0,3	-2,3	2,9
Հարավ-Սահարական Ափրիկե	3,1	-1,6	4,1
Նիկերիա	2,2	-3,4	2,4
Հարավային Ափրիկե	0,2	-5,8	4,0
Ցած եկամուտով զարգացող երկիրներ	5,1	0,4	5,6

Հասկանալի է, որ ինչպես բացարձակ, այնպես էլ յարաբերական առաելությունների դեպքում պետությունները ձգտում են առանելագոյն շահոյթ ստանալ դրանցից, եթե ոչ դիտաւորեալ՝ ի վնաս այլ երկրների, ապա, գոնէ հնարաւորութեան դեպքում՝ յոգոտ միայն սեփական երկրի տնտեսութեան: Եթէ իրական մրցակցութիւնը հետապնդում է բացառապէս տնտեսական շահեր և ենթադրում է մասնաւոր դրամազլխից ստացոած շահոյթի մեծացում, ապա համագործակցութիւնն ու համագործակցային առաելութիւնների կիրառումը անպայմանօրէն ներառում են ընկերային բաղադրիչը, այլ կերպ ասած՝ մասնակից երկրների և նրանց ժողովուրդների կենսական շահերն ու բարեկեցութիւնը, մանաաւտ, երբ

²⁶ Данные Международного валютного фонда (ИУՀի տուեալները), www.imf.org :

այդ ուղղութեամբ ելքեր են որոնում, յատկապէս, համաճարակա-
տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Մեր կարծիքով՝ բացարձակ, յարաբերական մրցակցային առաւելու-
թիւնների իրացումը ենթադրում է տնտեսական ուժի օգտագործում՝ ձեա-
տրուած, ձեռք բերուած գերիշխող դիրքից, մինչդեռ համագործակցային
առաւելութիւնների օգտագործումը պահանջում է մրցակցային առաւելու-
թիւնների համադրութիւն եւ ուժերի հաասարակշռութիւն²⁷: Սա, իր հեր-
թին, ենթադրում է զսպել գործազրկութիւնը, աղքատութիւնը, սղաճը, ա-
կօրինի գաղթը եւ թիմային ընդհանուր մասնակցութեամբ հասնել այլ ըն-
կերային խնդիրների լուծմանը: Մենք հաատում ենք, որ բացարձակ, յա-
րաբերական մրցակցային առաւելութիւնների իրացումը ենթադրում է
ձեռք բերուած դիրքից տնտեսական ուժի օգտագործում, մինչդեռ համա-
տեղ առաւելութիւնների իրացումը պահանջում է մրցակցային առաւելու-
թիւնների համադրութիւն եւ շահերի հաասարակշռում: Եթէ օրէցօր
սրտող մրցակցութիւնը ոչ միայն չի բացառում թոյր տեսակի հնարքների,
շահերի բախման, տնտեսական կորուստների եւ տնտեսական պատժա-
միջոցների օգտագործումը՝ ապա համագործակցութիւնը հիմնուած է
վստահութեան, գործընկերութեան եւ նոյնիսկ փոխօգնութեան վրայ: Իս-
կապէս, առանց վստահութեան գործօնի գերակշռութեան, այսօր անհնար
է պատկերացնել համավարակի եւ այլ համաճարակների դէմ արդիւնաւէտ
պայքարի, ինչպէս նաեւ բազմաթիւ բնական եւ արհեստածին աղէտների
դէմ արդիւնաւէտ պայքար վարել:

Յատկապէս աճում է համագործակցութեան առաւելութիւնների տեսու-
թեան կիրառական արժէքը տարածաշրջանային համարկման տեսանկի-
նից: Մասնատրապէս, տարածաշրջանային հարթակում սա բարելաւում է
հարեան երկրների միջեւ առետրային համագործակցութիւնը: Մրցակ-
ցային առաւելութիւնները վերածում են համատեղ առաւելութիւնների, ո-
րոնք լրացնում են միմեանց ուժեղ կողմերը՝ հասնելով *սիներգետիկ*
արդիւնքների, ազգային տնտեսութեան թոյր հնարատր ոլորտներում:
Համաշխարհային առումով, համագործակցութեան առաւելութիւնների
գիտակցումը կարող է մեծապէս նպաստել խաղաղութեան, կայունու-
թեան եւ ներառական զարգացմանը:

ԵԱՏՄԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տարածաշրջանայնացման ներուժը եւ դրա հնարատր առաւելութիւն-
ները ներկայացնելու համար խորհուրդ է տրտում, մասնատրապէս, ծանօ-
թանալ ԵԱՏՄԻն ՀՀ անդամակցութեան հետ կապուած առկայ միտումնե-
րին, իրական զարգացումներին, որոնք ներկայացուած են հետեւեալ

²⁷ "Current novel coronavirus (COVID-19) outbreak," World Health Organization Report, <https://www.who.int/health-topics/coronavirus> :

տնտեսական ցուցանիշներով եւ փաստերով, որոնք բնութագրում են համագործակցային առաելությունների իրականացումը:

Արտասահմանեան բանկային մասնատր փոխանցումները նոյնպէս շարունակում են աճել, ինչը կապում է չգրանցուած վերաարտահանման հետ: Ինչ վերաբերում է ՀՀից ԵՄ արտահանմանը, ապա այն աճում է արագացում թափերով: ՀՀից ԵԱՏՄ այլ երկրներ արտահանումն աճել է 11%ով, իսկ երկրի ընդհանուր ցուցանիշն աճել է 4,6%ով: ԵՄ երկրներ արտահանումները նոյնպէս տարբերում են իրենց կազմով: Այն պարունակում է շատ աւելի քիչ հումք եւ շատ աւելի պատրաստի արտադրանք. Կոնիակ եւ գինի, մրգեր եւ բանջարեղէն պահածոներ, հագուստ եւ զարդեր՝ աւելի փոքր քանակութեամբ: Շուտով ապրանքների տեղափոխումը ԵԱՏՄ այլ հանրապետութիւններ կը դառնայ էլ աւելի դիփին: Երեսնամ կայացած ԵԱՏՄ վերջին գազաթաժողովում որոշուեց կրճատել ապրանքների տեղաշարժի ընթացքում ստուգումները: Դա կը բարձրացնի նրանց շարժման արագութիւնը եւ կը նոսազեցնի փոխարդման հետ կապուած ծախսերը: Յիշեցնենք, որ 2018ին ՀՀից ՌԴ արտահանումը կազմել է մօտ 654 միլիոն դոլար, Բելառուս՝ շուրջ 12 միլիոն, Ղազախստան՝ մօտ 10 միլիոն, Ղըրղըզստան՝ մօտ 1 միլիոն դոլար: 2015ի համեմատ (ԵԱՏՄին ՀՀի անդամակցութեան առաջին տարին) դէպի ՌԴ արտահանումն աճել է աւելի քան 400 միլիոն դոլարով, Բելառուս՝ մօտ 9 միլիոնով, Ղազախստան՝ մօտ 6 միլիոնով եւ Ղըրղըզստան՝ աւելի քան 600,000ով²⁸:

Այս ամէնը, մեր կարծիքով, արդիւնք է ոչ միայն դրական ներքին տնտեսական միտումների, այլեւ արտաքին գործօնների, որոնց թում պէտք է յատկապէս նշել ՀՀի անդամակցութիւնը եւ նախագահութիւնը ԵԱՏՄում (2018-19): Վերջինս նշանատրուեց միանգամից միքանի իրադարձութիւններով, որոնց թում կարեւոր է դիտարկել հետեւեալ հիմնականները: Նախ, սա ՀՀի նախաձեռնութիւնն է՝ խթանելու ԵԱՏՄ թոային օրակարգը²⁹, որը լիովին համահունչ է նախագահող երկրի տնտեսական գերակայութիւնների եւ հնարատրինս լիարժէքօրէն իրականացնելու այն: ԵԱՏՄ արտաքին տնտեսական կապերի այլազանացումը ենթադրում էր առեւտրատնտեսական կապերի զարգացում, մասնատրապէս Իրանի, Չինաստանի եւ Եգիպտոսի հետ: 2019ի վերջին ՀՀին յաջողուեց զգալիօրէն առաջ տանել ԵԱՏՄում «թոային օրակարգը», որը նախատեսուած է դառնալ դիանակալական խոչընդոտների եւ կեղծ ապրանքների դէմ պայքարի հիմնական գործիքակազմը: ՀՀն որոշակի դրական փորձ ունի այս ոլորտում. թոային *բանկինգը* աշխուժօրէն զարգանում է, որոշ խոշոր վար-

²⁸ <https://ru.armeniasputnik.am/economy/20191014/20759386/Ministr-ekonomiki-Armenii-rasskazal-o-roste-eksporta-iz-Armenii-v-EAES.html> :

²⁹ Цифровая повестка ЕАЭС.

<http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/workgroup/materials/Pages/docs.aspx> :

կային հաստատություններ ներդրեցին ինքնաշխատ միատրների վարկատրման համակարգ ֆիզիկական անձանց եւ փոքր բիզնէսի վարկատրման համար: Մշակում է *սմարթֆոնների միջոցով* գնումների եւ դրամատնային հաշուի հեռակայ բացման ոչ-ասանդական համակարգ: Բջջային դրամատնային ծրագրերի հնարատրություններն ընդլայնում են՝ էապէս նուազեցնելով քաղաքացիների եւ ձեռնարկությունների գործառնական ծախսերը: ՀՀ նախագահութեան ընթացքում ուժի մէջ է մտել նաեւ Իրանի հետ ազատ առեւտրի գոտու մասին ԵԱՏՄ շրջանակներում սկսուած ժամանակատր համաձայնագիրը³⁰: Բացի այդ, 2019ի Հոկտեմբերի 25ին ԵԱՏՄի ու Սերբիայի Հանրապետութեան միջեւ ստորագրուեց ազատ առեւտրի համաձայնագիր: Այն ներդաշնակեցնում է Բելառուսի, Ղազախստանի եւ ՌԴի առեւտրի պայմանները Սերբիայի հետ եւ ստեղծում յատուկ կարգ հայ եւ ղրղզական ապրանքների համար, որոնց համար նախապատուութիւնները բացակայում էին սերբական շուկայ մուտք գործելիս³¹:

Նշանակալից իրադարձութիւն էր նաեւ ՌԴի հետ առեւտրի ցուցանիշը, որը 2019ի վերջին գերազանցեց \$2 միլիարդը: ՌԴն շարունակում է մնալ ՀՀ առեւտրային առաջատար գործընկերը: Այս ցուցանիշի ձեռքբերումը հիմնականում պայմանատրուած է ԵԱՏՄին անդամակցութեամբ եւ ՌԴում առանց տուրքի առեւտրի հնարատրութեամբ, իսկ դրա միջոցով՝ միութեան այլ երկրների հետ: Այս ցուցանիշը գերազանցելու բոլոր հնարատրութիւնները կան՝ է՛լ անէի մեծացնելով արտահանումը ԵԱՏՄ երկրներ, յատկապէս եթէ երկրի կապի մեկուսացման խնդիրը յուսալիորէն լուծուի:

Մասնատրապէս, Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի համարկման եւ գերտնտեսութեան նախարար, ՌԴի ԳԱ ակադեմիկոս Սերգէյ Գլազըլը համեմատել է ՀՀի եւ Ուկրաինայի վերջին 5 տարուայ տնտեսական ցուցանիշերը: Այս ժամանակահատուածում ՀՀում արդիւնաբերական արտադրութիւնն աճել է 57%ով, իսկ Ուկրաինայում՝ 22%ով: Ներ-

³⁰ Временное соглашение о зоне свободной торговли с Ираном, Իրանի հետ ազատ առեւտրի գոտու ժամանակակիր համաձայնագիր <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/Pages/%D0%92%D1%80%D0%B5%D0%BC%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B5-%D1%81%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D1%81-%D0%98%D1%80%D0%B0%D0%BD%D0%BE%D0%BC.aspx> :

³¹ Соглашение о ЗСТ между ЕАЭС и Республикой Сербия, ԵԱՏՄ և Սերբիայի միջև ազատ առեւտրային գոտու համաձայնագիր <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/Pages/%D0%A1%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D1%81-%D0%A1%D0%B5%D1%80%D0%B1%D0%B8%D0%B5%D0%B9.aspx> :

դրումները ՀՀում աճել են 57%ով, Ուկրաինայում՝ մեկ-քառորդով: Արտահանումը ՀՀում աճել է 67%ով, Ուկրաինայում նուազել են մեկ-երրորդով³²:

Երկու երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱի մակարդակի վերաբերեալ Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) այլ ցուցանիշներն ու տուեալները վկայում են վերը նշուածի օգտին: 2020ին այս ցուցանիշը կազմել է 4670 դոլար, իսկ Ուկրաինայում՝ 3880 դոլար: Պէտք է յիշել, որ երկու երկրների աղբիւրների եւ ժողովրդագրական հնարաւորութիւններն անհամեմատելի են, եւ ի տարբերութիւն Ուկրաինայի, ՀՀի չորս հարեաններից երկուսի հետ սահմանները շրջափակուած են: Գոյութիւն ունեն նաեւ ԱՄՆ Կենտրոնական Հետախուզական Վարչութեան (ԿՀՎ) տուեալներ 2017ի համար երկու երկրների գնողունակութեան համեմատումը մեկ շնչի հաշվով ՀՆԱի վերաբերեալ (Ուկրաինա՝ 8800 դոլար, ՀՀ՝ 9500 դոլար)³³:

Կան եւ այլ ձեռքբերումներ, որոնք՝ ԵԱՏՄում ՀՀի նախագահութեան տեսակէտից էական նշանակութիւն ունեն: Կան եւ չլուծուած խնդիրներ, որոնք շարքում առանցքային է փոխադրամիջոցների խնդիրը, մասնաւորապէս՝ Վերին Լարսով միջանցքի գործունէութեան խնդիրները: Այնուամէնայնիւ, առկայ խնդիրները ոչ մի կերպ չեն գերակշռի փաստերը, որոնք նպաստում են ՀՀի համարկմանը եւ ԵԱՏՄին անդամակցութեանը: Նման տարածաշրջանային համարկման ձեւաչափի այլընտրանք այսօր չկայ:

Ըստ երասիական յանձնաժողովի պաշտօնական տուեալների, ՀՀն գրանցել է ամենամեծ տնտեսական օգուտը ԵԱՏՄ անդամ երկրներից³⁴,-

- Փոխադրութեան ոլորտում բեռնափոխադրումների ծաւալը 2019ի համեմատ աճել է 27%ով: Արդիւնաբերական արտադրանքի աճը կրկնապատկուել է մինչեւ 9%: Արտադրութեան աճը կազմել է 10%: Շինարարութեան աճը հասել է 4,5%ի: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից յետոյ ՀՀ տնտեսական աճը հասել է համաշխարհային մրցանիշի՝ 7,6%³⁵:

³² Глазьев сравнил итоги интеграционных процессов в Армении, Кыргызстане и на Украине Читать далее (Գլազեւը համեմատել է ՀՀում, Դրըզգստանում եւ Ուկրաինայում համարկման գործընթացների արդիւնքները) <https://ru.armeniasputnik.am/economy/20191129/21256364/Glazev-sravnil-integratsionnye-uspekhi-Armenii-Kyrgyzstana-i-Ukrainy.html><https://ru.armeniasputnik.am/economy/20191129/21256364/Glazev-sravnil-integratsionnye-uspekhi-Armenii-Kyrgyzstana-i-Ukrainy.html> :

³³ <https://www.rim Eurasia.org/news-2020-01-11-armenija-i-eaes.-5-glavnyh-sobytij-2019-goda-46902> :

³⁴ Татьяна Валова, “Странам-членам ЕАЭС есть чему поучиться у Армении и армянских бизнесменов” (ԵԱՏՄ անդամ երկրները պէտք է օրինակ վերցնեն ՀՀից եւ հայ գործարարներից), <https://www.aravot.ru.am/2019/01/29/297040/> :

³⁵ «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. Յունուար-Դեկտեմբերին», www.armstat.am :

- 2019ին արտահանումներն աճել են աելի արագ թափերով՝ 718 միլիոն դոլարով և աճելով 10.2%ով: ՌԴ-ն ՀՀ գլխաւոր արտահանման շուկան է եւ թիւ մէկ առեւտրատնտեսական գործընկեր երկիրը: Իսկ ներմուծումը ՌԴ-ից աճել է 16.9%ով եւ կազմել 1.631 միլիարդ դոլար:

- Ընդհանուր առմամբ, ՀՀ-ի արտահանումը 2019ին աճել է 9,3%ով, իսկ ներմուծումը՝ 10,9%ով: Միեւնոյն ժամանակ, ԵԱՏՄ երկրներ արտահանումը կազմել է 760 միլիոն 894,5 հազար դոլար, ինչը 10,5%ով աւել է նախորդ տարուայ 688,473 միլիոն դոլարի դիմաց: ԱՊՀ այլ երկրներ արտահանումը կազմել է 39,538 միլիոն դոլար՝ 29,4%ով աւել քան 2018ը³⁶:

- 2019ին ՀՀ ներմուծման ծաւալը կազմել է 5,513,798 միլիարդ դոլար՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածից աճելով 10,8%ով³⁷:

- Զբօսաշրջիկների թիւը զգալիորէն աճել է՝ քայլ առ քայլ մօտենայլով 2 միլիոնի խորհրդանշական սահմանին. 2019ին ՀՀ այցելել է 1,894,377 զբօսաշրջիկ՝ 14,7% աւելի՝ քան նախորդ տարի: Ռուս զբօսաշրջիկները կազմում են օտարերկրեայ զբօսաշրջիկների ամենամեծ խումբը:

- ՌԴ-ն շարունակում է մնալ ՀՀ պատրաստի արտադրանքի հիմնական շուկան: Բոլոր փոխանցումների 63-65%ը ՀՀ է գալիս ՌԴ-ից: Ուժանիւթի ճնշող մեծամասնութիւնը գալիս է ՌԴ-ից (գազի 90%, միջուկային վառելիքի 100%): Ռուսական ընկերութիւնները կազմում են ՀՀ տնտեսութեան մէջ ուղղակի ներդրումների 51%ը³⁸:

- Համագործակցութեան առաւելութիւնները գիտակցելու տեսանկիւնից շատ կարեւոր է, որ ՀՀ-ն եւ ՌԴ-ն միասին աշխատեն ԵԱՏՄ շրջանակներում՝ որոշակի սահմանափակումները ամբողջութեամբ վերացնելու համար: Առեւտրի սահմանափակումների քանակը ՀՀ-ում 47 է, ՌԴ-ում՝ 55:

- Վերջապէս, ԵԱՏՄի օգնութեամբ ՀՀ-ն կրկին ծրագրում է դառնալ արդիւնաբերական երկիր³⁹:

Յիրաւի, համագործակցութեան առաւելութիւնների բացայայտումը եւ իրացումը կարող են նպաստել համաճարակի տարածման կանխման ճանապարհների արդիւնաւէտ որոնմանը: Համագործակցութեան եւ տարածաշրջանային համարկման *սիներգիական* ազդեցութիւնը կ'օգնի նաեւ միատրել ջանքերը տնտեսական անվտանգութեան բազմաթիւ ընդհանուր պպառնալիքների դէմ եւ երկրներին բերել թուայնացման դարաշրջանում

³⁶ Նոյն:

³⁷ «Հայաստանից արտահանման ծաւալն աճել է 9.4%ով»,

<https://www.1lurer.am/hy/2020/02/07/>:

³⁸ Թ. Մանատրեան, «Առկայ խնդիրները չեն կարող գերակշռել Հայաստանի օգուտները ԵԱՏՄ-ից», 14.02.2020 <https://soyuzinfo.am/hy/2020/02/7547/> :

³⁹ С помощью ЕАЭС Армения вновь рассчитывает стать индустриальной страной (Подробнее (ԵԱՏՄ շնորհիւ ՀՀ-ն յոյս ունի դառնալ արդիւնաբերական երկիր)՝ <https://easaily.com/ru/news/2019/12/22/s-pomoshchyu-eaes-armeniya-vnov-rasschityvaet-stat-industrialnoy-stranoy> :

Եւ նոր արհեստագիտական յեղափոխութեան մէջ տնտեսական զարգացման որակապէս նոր մակարդակի:

PROSPECTS FOR OVERCOMING THE ECONOMIC CONSEQUENCES OF BOTH THE PANDEMIC AND THE 44-DAY-LONG ARTSAKH WAR IN THE REPUBLIC OF ARMENIA THROUGH COOPERATION

(Summary)

TATUL MANASERYAN (tatoulm@gmail.com)

This paper offers a new approach for addressing the socio-economic consequences of the pandemic and the following 44-day-long Artsakh war in the Republic of Armenia.

First, the author briefly outlines the economic impact of the pandemic on the Republic of Armenia and then dwells on the destruction, loss and damage the 44-day-long war cost the republics of both Artsakh and Armenia.

The author assesses the benefits of rivalry versus cooperation and concludes that the Republic of Armenia can benefit from better cooperation with the Eurasian Economic Union as it offers huge advantages to the tiny republic.

The author proves his conviction by providing evidence from the yields the republic had from this cooperation in 2019. Furthermore, the paper argues that such cooperation is the natural path for Armenian economic growth due to the fact that the country's major economic partner is the Russian Federation in terms of foreign investment, foreign tourism, and exports and imports.

ԳԴԱԼԸ ԵՒ ԳԴԱԼՆՈՑԸ ՀԱՅՈՑ ՏՕՆԱԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄԵՐԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ (meryavetisyan1984@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յօդուածը տեղեկութիւններ է պարունակում փայտամշակութեան ասնոյթների, փայտէ սպասքի համալիրի մաս կազմող գոյալների և գոյալնոցների, դրանց վրայ առկայ զարդամոտիւների խորհրդի մասին: Փորձ է արուել ներկայացնել գոյալի ու գոյալնոցի մշակութային նշանակութիւնը, կենցաղավարման առանձնայատկութիւնները, ժողովրդական հաստալիքների հետ կապուած նիւթեր: Օգտագործուել են ազգագրական տարբեր շրջաններին բնորոշ ձէւերի ու ասնոյթների մասին պատմող տեղեկութիւններ, որոնցում պատկերատար ներկայացուած են գոյալի ու գոյալնոցի ծիսական գործառոյթը: Զուգահեռ անդրադարձ է կատարուել նաեւ ժամանակակից սովորոյթներին, որոնք այսօր էլ կիրառուում են կենցաղում: Գոյալն ու գոյալնոցը դիտարկուել են որպէս թանգարանային նմուշ եւ յուշանուէր, ինչը շատ կարեւորում է զբօսաշրջութեան առումով, որպէս հայկական մշակոյթը ներկայացնելու միջոց:

Յօդուածը նպատակ ունի ծանօթացնել հայկական մշակոյթի խոհանոցային սպասքին՝ ձէսի շրջանակներում եւ ազգագրական նիւթը հանրահոջակել: Այն ժամանակագրութեան առումով ընդգրկում է ԺԹ. դարից մինչեւ մեր օրերը: Ուսումնասիրութիւնը կատարուել է Հայոց Ազգագրութեան Թանգարանի (ՀԱԹ), Յ. Շարամէքեանի անուան, Փայտարուեստի թանգարանների գոյալի, գոյալնոցների հաւաքածոների եւ ազգագրական նիւթերի հիմամբ:

ՓԱՅՏԱՄԵՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐ

Փայտամշակութիւնը իր կարեւոր դերն է ունեցել կենցաղի եւ հասարակութեան զարգացման գործում: Չնայած Հայաստանի՝ անտառներով ոչ այնքան հարուստ լինելուն, փայտամշակման արհեստը բաւականին տարածուած է եղել թէ՛ գիւղական միջավայրում, որտեղ փայտամշակութիւնը աւելի շատ կենցաղը սպասարկող միջոց էր, թէ՛ քաղաքային միջավայրերում, որտեղ նկատելի էր փայտի մշակման բարձր արհեստագիտութիւն: Փայտամշակութեամբ զբաղուող վարպետները աշխատում էին յատուկ դազգահների վրայ, որոնց վրայ հնարատար էր ամրացնել փայտը, այնուհետեւ սղոցների, ուրագների, կոկիչների միջոցով պատրաստել կենցաղ-

ղային իրեր, աշխատանքային գործիքներ, կահույք են¹: Փայտամշակութեան արհեստը ունեցել է ծիսապաշտամունքային որոշակի հաստալիքներ: Ըստ ժողովրդական հաստալիքների փայտամշակ արհեստատրուների հովանատրը եղել է Հայր Յովսէփը², որի պատուին կատարուել են զանազան ծիսական արարողութիւններ: Փայտամշակութեամբ զբաղող աշակերտին վարպետ օձելու արարողութեան ժամանակ օրինել են ասելով՝ «Հայր Յովսէփի օրհնութեամբ մեծանաս»: Եղել են նաեւ հնայական որոշ արգելքներ: Օրինակ Չարչարանաց Շաքաթը հիսնի աշխատանքի համար արգելուած է եղել՝ կապուած Քրիստոսի խաչափայտի հետ³: Փայտամշակ վարպետի դազգահի վրայ նստելը նոյնպէս արգելուել է. հաստացել են, որ խէրն ու բարիքը կը պակասի, իսկ Լօռիում մահացող հիսնի հոգեվարքը թեթեացնելու համար կրծքին ուրազ են դրել:

Փայտամշակութեան մէջ օգտագործել են գիհենու, բոխենու, թխկենու, հաճարենու, բարդու, տանձենու, խնձորենու, ընկուզենու փայտը, սակայն առաւել կիրառելի էին հումքը այն ծառերի, որոնք ժողովուրդը սրբազան էր համարում: Ըստ ազգագրական նիւթերի, սրբազան ծառ էր համարում փոշին⁴, որը ժողովուրդը կոչել է «սուրբ ծառ», «խաչ ծառ», «ղաղղղանի ծառ», այն պատճառով, որ այս ծառատեսակի փայտից պատրաստում էին չարխափաններ: Դժուարամատչելի տեղերում միայնակ աճած ծառերը նոյնպէս սուրբ էին համարում: Սրբացուել են նաեւ այն ծառերը որոնց վրայ արագիլները բոյն են հիւսել: Համաժողովրդական պաշտամունքի են արժանացել յատկապէս կայծակնահար ծառերը, որոնց մէջ ժողովուրդը առանձնակի զօրութիւն էր նկատում:

ՓԱՅՏԷ ԳԴԱԼՆԵՐ ԵՒ ԳԴԱԼՆՈՑՆԵՐ

Փայտէ գդալներն ու գդալնոցները փայտամշակութեամբ զբաղող արհեստատրուների արտադրանքի մաս են կազմում: Գդալը, բանող մասը տերեւանման, տարբեր խորութիւններ ունեցող փորոածքներով, տարբեր երկարութիւն ունեցող բռնակներով, կենցաղում գործածուող, խոհանոցային

¹ Բաբկէն Առաքելեան, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 200-01:

² Ա. Սարգսեան, «Փայտամշակութեան արհեստն եւ արհեստատրական գործիքներին վերաբերող հայոց հաստալիքները», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտութիւնների կենտրոն, *Գիտական աշխատութիւններ VII*, «Գիտութիւն» հրատ., Գիւմրի, 2004, էջ 70-5:

³ Ե. Լալայեան, «Ջաւախք», *Ազգագրական հանդէս, գիրք Բ.*, 1897, էջ 272:

⁴ Ա. Սարգսեան, «Ծառերի պաշտամունքի դրսևորումները հայոց հաստալիքային համակարգում», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտութիւնների կենտրոն, *Գիտական աշխատութիւններ III*, «Գիտութիւն» հրատ., Գիւմրի 2000, էջ 74:

սպասքի համալիրի մաս կազմող իր է: Գդալները հիմնականում պատրաստում են պտղատու ծառերի, յատկապես տանձենու բնափայտից: Սա բացատրում է միքանի հանգամանքով, նախ պտղատու ծառերի բնափայտը խիտ հիատաձք ունի, ինչի շնորհիվ գդալները առաւել դիմացկուն են դառնում խոնավութեան եւ բարձր ջերմաստիճանի նկատմամբ: Ըստ տեղեկութեան, տանձենու փայտը պարունակում է արծաթի մասնիկներ, որոնց մանրէագերծող յատկութիւնների շնորհիվ գդալի օգտագործումը անվտանգ է համարում: Փայտամշակութեան մէջ նախընտրելի է օգտագործել աշնանը կամ ձմռան սկզբին հատած փայտանիփօջ, քանի որ տարուայ այդ եղանակներին օդի խոնավութիւնը հասնում է նուազագոյնի հետեւաբար փայտը անելի չոր է լինում եւ անելի քիչ ճաքեր է ունենում, քան արեւի ուղիղ ճառագայթների տակ չորացած փայտը:

Կենցաղում օգտագործուող գդալները որպէս կանոն պարզունակ են, առանց զարդանախշերի, բոնակի վերջը կոր՝ յարմարեցում կախելու համար: Գեղագիտական տեսք հաղորդելու համար երբեմն փորագրման գործիքներով զարդանախշում են գդալների բոնակները: Շատ հազուադէպ են գործածուող մասը զարդանախշ գդալներ, դրանք կամ թանգարանային նմուշներ են, կամ էլ յուշանուէրային տարբերակներ: Գդալները զարդանախշում են երկրաչափական եւ բուսական յօրինուածքներով:

Ազգագրական նիփօջ փաստում է, որ մինչեւ Ի. դարի վերջերը գդալները պահում էին գդալնոցների մէջ, որոնք ըստ պատրաստման նիփօջի եւ ձեւի բաժանուում են միքանի խմբի.- 1) փայտէ արկղեր յիշեցնող, շրջանաձեւ, ուղղանկիւնաձեւ գդալնոցներ, 2) ցանցագործ կամ կարպետագործ եւ հիւսուած զամբիւղների տեսք ունեցող գդալնոցներ, որոնք հայկական ասանդական բնակելի համալիրի կահաւորման կարեւոր մաս էին կազմում: Դրանք կախում էին թոնրատան գլխատր սիւներից, որպէսզի տեսանելի լինէին թէ՛ տան անդամներին, թէ՛ հիւրերին:

«...Պատից կախուած գդալնոցի մէջ եւ հաշում եմ քսաներկու գդալ, այսինքն այնքան որքան Յովսէփ ամու գերդաստրանի անդամներն են»⁵: Շիրակ վելայից առանձնացուած այս նախադասութիւնը պատկերաւոր նկարագրում է գդալնոցի տան անդամների մարդահամարի իրայատուկ միջոց լինելը եւ պարունակում էր ճիշտ նոյն թոսով գդալներ, որքան անդամ ունէր ընտանիքը: Դերսիմի նահանգում ասանդոյթով՝ երբ ընտանիքում երեխայ էր ծնում, մեծ մայրը հանդիսատրութեամբ մէկ գդալ էր ան-

⁵ Ա. Գրիգորեան, *Շիրակ, հիրք. 10*, Սովետական գրականութիւն, Երեւան, 1958, էջ 12:

լացնում գդալնոցում եւ բարձրաձայն օրհնում երեխայ ծնող մօրը, ասելով՝ «Քսանը քսանմէկ եղաւ, դուրպան ըլի էւեցնողիս»⁶:

Իսկ երբ ընտանիքում տան անդամի կորուստ էին ունենում, գդալնոցից մէկ գդալ պակասեցնում էին: Այս պարագայում գդալը կրում էր գերդաստանի լիարժէք անդամ լինելու խորհուրդը: Իրաքանչիւր չափահաս անդամ յատուկ նշանի շնորհիւ ճանաչում էր իր գդալը, իսկ հիւրերի համար առանձին գդալնոց կար, որի գդալների թիւը հաշուառման ենթակայ չէր: Հիւր գնալիս իրաքանչիւրն իր հետ կարող էր վերցնել իր գդալը⁷: Ըստ Լալայեանի, Ջաախքի պատմաագագրական շրջաններում եկեղեցիներին նուիրաբերում էին գդալներ, որոնք բաժանում էին հոգեհացի մասնակից անդամներին, իսկ որոշ դէպքերում էլ հոգեհացի գնացողները իրենց հետ վերցնում էին իրենց գդալները, քանի որ մարդիկ խոսափում էին գդալ օգտագործել այն տանը, որտեղ մահ էր եղել, հաատալով, որ օգտագործելու դէպքում դժբախտութիւնը կը փոխանցուի իրենց ընտանիքներին⁸:

ԳՂԱԼԻ ԵՒ ԳՂԱԼՆՈՅԻ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ

Գղալն ու գղալնոցները զարդանախշում էին եւ զարդանախշերը գղալնոցի գեղագիտական տեսքը ապահովելուց զատ ունէին նաեւ չարխափան նշանակութիւն եւ ուղղակիօրէն կապուած էին մեր նախնիների աշխարհընկալման եւ հաատալիքների հետ: Գղալնոցների վրայ հանդիպող հիմնական զարդանախշերը շրջաններն են⁹, եռանկյնիները, հատիկաւոր նախշերը, ունածեւ զարդը, որոնց իմաստաբանական վերլուծութիւնը թոյլ է տալիս վերծանել նաեւ գղալնոցի խորհրդանշականութիւնը: Ըստ հայոց մէջ ընդունուած կարծիքի, չար ուժերը չէին կարող շրջանից ներս թափանցել եւ այդ էր պատճառը, որ ծննդկանի եւ երեխայի շուրջը պարանով, կամ գութանի շղթայով օղակում էին, նրանց չարից պաշտպանելու համար: Շրջանի պահպանիչ նշանակութիւնը արտայայտուել է նաեւ հետեւեալ սովորոյթում.-

⁶ Գ. Հալաքեան, «Դերսիմի հայերի ազգագրութիւն», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւստութիւն, հրր. 5*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1973, էջ 120-121:

⁷ Յարութիւն Մարութեան, "Интерьер Армянского народного жилища XIX-XXвв.," (Հայ ժողովրդական բնակարանի ներսույթը ժԹ. երկրորդ կէս-ի. դարակիցը), *Հայ ազգագրութիւն եւ բանահիւստութիւն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1989, էջ 135:

⁸ Լալայեան, «Ջաախք», էջ 314:

⁹ ՀԱԹԻ «Ազգագրութիւն եւ կենցաղ» պահոցում պահպանուած է շրջանածեւ զարդանախշերով, Ի. դարի սկզբով թուագրուող գղալնոց, որի վրայ առկայ շրջանները հաատաբար սաղմի եւ ծննդութեան գաղափարի հետ են կապուած, քանի որ գղալնոցը ներկայացնում էր նաեւ տան մօր կերպարը, ում պարտականութիւնն էր ապահովել գերդաստանի նոր անդամի ծնունդը:

Տրնդեզի կրակից առաջացած մոխրով տան երդիկներին շրջաններ էին գծում, չար ուժերից պաշտպանուելու նպատակով¹⁰: Երբեմն էլ չքայլող երեխային կամ անպտուղ կնոջը անց էին կացնում սրբազան համարող շրջանների միջով, որպեսզի չար ոգիները հեռանան նրանցից: Իսկ ամուսնացած կանայք օղակածե զարդեր էին կրում, որպես արգասատրութեան խորհրդանիշ¹¹:

Շրջանը նաեւ ժամանակի խորհուրդն ունի, ինչի մասին վկայում են հայերէնի «տարին կլոր» կամ «տարին բոլոր» արտայայտութիւնները: Շրջանը, որպէս ժամանակի խորհրդանիշ շատ լաւ արտայայտուել է Ամանորի կլոր տարեհացերում, որոնք ունէին ողջ տարուայ բարեխաջող ընթացքը ապահովող նշանակութիւն: Շրջանը շատ յաճախ նոյնացուել է նաեւ սաղմի, նոր կեանքի սկզբի խորհրդանիշ ծովի հետ, եւ բոլորովին պատահական չէ, որ նորահարսերի համար չարխափաններ պտրաստող դարբինները, որպէս կատարած աշխատանքի փոխհատուցում վարձատրում էին ձուերով¹²:

Հատիկատր նախշերը ամենատարածածներից են գդալնոցների եւ գդալների զարդանախշերում: Այն կապում էր հացահատիկային մշակաբոյսերով հարուստ Հայկական Լեռնաշխարհին բնորոշ ցորենի պաշտամունքի հետ: Ցորենի հատիկը եւ առհասարակ հատիկը կապում էր արգասատրութեան եւ որդեծնութեան գաղափարին: Հատիկի մէջ ամփոփուած էր նաեւ առատութեան, բազմանալու, շատանալու իմաստը եւ այդ էր պատճառը, որ նորահարսի կօշիկների մէջ ցորենի հատիկներ էին լցնում, իսկ մագերի հետ հատիկի ձեւ ունեցող ընդեղէնի շարեր էին հիաւում, որպէս արգասատրութեան խորհրդանիշ: ՀԱԹԻ մշտական ցուցադրութիւնում ցուցադրուող, ԺԺ. դարի վերջով թուագրուող գդալնոցի եզրերը երիզուած են փորագրման արհեստագիտութեամբ արուած սուրանկին եռանկլինիւններով: Սուր անկլինը ներքեւ ուղղուած եռանկլինու նախշը թէ՛ տարագի համալիրում, թէ՛ սպասքի համալիրում եւ առհասարակ հայկական զարդարութեանում խորհրդանշում է կնոջը: Օրինակ Սիւնիք-Արցախում ամուսնութիւնից յետոյ կնոջ գլխի յարդարանքը առանձնապէս կարեւորում էր եւ անպայման համադրում եռանկլինածե քունքակախիկներով, գլխաշորերով¹³:

¹⁰ Ա. Մկրտչեան, *Տօներ*, «ԳԱՍՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2010, էջ 48:

¹¹ Ա. Ստեփանեան, Հայ ժողովրդական տարագի զարդանախշերը, *Հայ ազգագրութիւն եւ քանսիստութիւն*, հրդր. 22, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատ., Երեւան, 1955, էջ 48-49:

¹² Ա. Թադեւոսեան, «Պարբիւր հայոց ծիսակարգում», *Հայ ազգագրութիւն եւ քանսիստութիւն*, հրդր. 23, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 139-40:

¹³ Ա. Պողոսեան, «Սիւնիքի տարագր», *Ամանորներ եւ արդիակաւտութիւն. (Սիւնիքի կրթութեան եւ մշակոյթի օջախ, Գորիսի Պեղական Համալսարանի հիմնադրման 50ամեակի նուիրուած գիւրաժողովի նիւթեր)*, Երեւան, 2019, էջ 216-24:

Վանում կանայք ամուսնանալիս զլուրը յարդարում էին եռանկինաձեւ գլխաշորով, քունքամասերը՝ եռանկինաձեւ կախիկներով: Յատկապէս գլխի յարդարանքին բնորոշ են եղել եռանկինի կտաւ գլխաշորերը, կանաչ կամ կարմիր մետաքսեայ եռանկինաձեւ ականջակալները: Իսկ եռանկինու առկայութիւնը գրալնոցի վրայ պայմանաւորուած է նրանով, որ գրալնոցը նոյնացուել է կնոջ կերպարի հետ:

ՀԱՅԻ «Ազգագրութիւն եւ կենցաղ» պահոցի գրալնոցների հաաքածուի մէջ առկայ է Ի. դարի սկզբով թուագրուող գրալնոց, որի գլխամասը նուան տեսք ունի: Նուան խորհրդանշականութիւնը լատգոյնս արտայայտուած է հարսանեկան ծիսաշարում, որպէս արգասատրութեան խորհրդանիշ: Պատահական չէ, որ փոքրիկ խաչով զարդարուած նուռը ամրացնում էին փեսացուի գլխարկին՝ ի նշան արգասաբերութեան: Նուան իր կառուցուածքով առնչակցում է նաեւ տոհմի, գերդաստանի գաղափարի հետ, որն իր ներսում պահում է գերդաստանի անդամներին խորհրդանշող հատիկները¹⁴: Ամփոփելով՝ վերոյիշեալ զարդանախշերի խորհրդանշական նշանակութիւնը, գալիս ենք այն եզրայանգման, որ գրալնոցը նոյնացում է կնոջ կերպարի, ծնելիութեան, կեանքի շարունակելիութեան, տոհմի յարատեւման գաղափարի հետ:

ԳՐԱԼԻ ԵՒ ԳՐԱԼՆՈՑԻ ԾԻՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գրալն ու գրալնոցը կենցաղային իր լինելուց զատ, ներգրաւուած են նաեւ ծիսաշարերում:

Հարսանեկան ձէպի շրջանակներում ժողովուրդը գրալը կիրառել է որպէս հարստութեան, տան բարօրութեան խորհրդանիշ: Բորչալուի գաառում մի սովորոյթ կար, երբ մակարները (փեսայի երիտասարդ ընկերները) հարսնացուի տանից փորձում էին միջանի հաց ու գրալ գողանալ եւ փեսայի տուն տանել, որպէսզի հարսի հայրական տան հարստութիւնը փոխանցուէր փեսային. իսկ հարսի հարազատները իրենց կողմից հսկում էին, որպէսզի նման բան տեղի չունենար: Իսկ եթէ մակարները հարսի տանից շերեփ գողանային, ապա հաատում էին, որ հարսը տնտեսող կը լինի: Նոր Բայազէտի գաառում եզմորթեքից յետոյ մարդ էին ուղարկում հրաւերք անելու եւ ով համաձայնում էր հարսանիքին մասնակցելու, մի փայտէ գրալ էր նուէր ստանում¹⁵: Այստեղ մենք հանդիպում ենք մի երեսոյթի, երբ հարսանեկան ձէսում գրալը գործածուում էր որպէս իրատեսակ հրաւիրատուն, ինչպէս նաեւ հրաւերքը ընդունած հիւրերի քանակը իմա-

¹⁴ Ստեփանեան, էջ 163:

¹⁵ Ե. Լալայան, «Նոր-Բայազէտի գաառ», *Ազգագրական հանդէս, հրր. 19, 1910*, էջ 16:

նալու միջոց: Աստուծոմ ընդունուած էր, որ նորահարսը տան շէմից ներս մտնելուց առաջ պարտաւոր էր մի նուտ կոտրել՝ դռանը հարուածելով, իսկ փեսան՝ աներոջ տանից գողացուած գդալը: Շատ կարեւոր էր, որ նորապակները մէկ անգամից կարողանային կոտրել նուտն ու գդալը՝ փորձելով ցոյց տալ իրենց ուժը եւ պայքարը չար ուժերի դէմ: Մոռաւ Լեռոմ հարսանքատրներին դիմատրող հարսի մայրը փեսային նուիրում էր պղնձէ մի պնակ մէջը՝ երկու գդալ¹⁶ եւ փեսան պարեցնում էր այս խորհրդանշական նուիրը: Այսկերպ հարսի մայրը մաղթում էր, որ ամուսնացող զոյգը մինչեւ կեանքի վերջը միեւնոյն պնակից օգտուի, ինչը ենթադրում է զոյգի յաւերժ միասին լինելու գաղափարը:

Ժամանակակից փայտագործ վարպետները հիմք ընդունելով հարսանեկան ծէսում գդալի խորհուրդը, արդիականացնում են այն եւ պատրաստում «ամուսնութիւն» կոչուող գդալներ, որոնք ներկայացնում են բունակի ծայրերից շղթայակապ երկու գդալ: Այսպիսի գդալների նմուշներ ցուցադրում են Շարանբէեանի անուան թանգարանում եւ Փայտարուեստի Թանգարանում:

Հարսնադի երգերի մէջ նոյնպէս հանդիպում ենք դրուագի, որտեղ հարսնացուն երգի միջոցով խնդրում է մօրը որ մայրը ջարդի իր գդալը եւ նետի այգին.

Դրգալըս կոյրեցէք, մարիկ,
Բախճան նետեցէք¹⁷.

Գդալ ջարդել-այգին նետելը բաժանումի խորհուրդն ունի, ջարդուած գդալը կարծես թէ նոյնացում է ամուսնացող աղջկայ հետ, ով այլեւս հայրական տան անդամ չի համարում: Ջաւախքի բանահիւսութեան մէջ կոտրուող գդալի խորհրդին հանդիպում ենք պանդխտութեան երգերում.

Գդալըս կոտրաւ, մայրիկ ջան
Պարտէզը քցիր,
Իմ բաժին ճաշը, մայրիկ ջան,
Աղբատներուն բաժանիր¹⁸:

Պանդխտութեան երգի այս տողերում կոտրուող գդալը տնից որդու հեռանալն է խորհրդանշում, այսինքն գդալ կոտրելու երետոյթը պահպանել է բաժանումի խորհուրդը:

¹⁶ Գ. Շաղոյեան, *Եօթ օր, եօթ գիշեր, հայոց հարսանիքի համալսնապարկեր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2011, էջ 308:

¹⁷ Ն. Վարդանեան, *Հարսնադի երգերի բնոյթն ու հիմնական մոտիւաշարը*, *Էջմիածին*, 2013:Գ, էջ 44:

¹⁸ Վ. Բոդոյան, *Ջաւախքի հայոց ազգագրութիւնը եւ բանարուեստը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2014, էջ 571:

Գղայներից երբեմն պատրաստում էին նաեւ տիկնիկներ. գղայը ներկում էին եւ տալիս դժքի պատկեր, իսկ բռնակի վրայ կտոր էին ամրացնում որպէս հագուստ: Այս տեսակ գղայէ տիկնիկները օգտագործում էին երեկոյեան զուարճանք-ներկայացումների ժամանակ¹⁹:

Ժամանակակից փայտագործ վարպետները հիմք ընդունելով գղայի բանահիստութեան եւ ձէսի մեջ ունեցած խորհրդաբանութիւնը, արդիականացնում են այն եւ պատրաստում գղայների եւ գղայնոցների տարբեր տեսակներ՝ տալով դրանց ժամանակակից լուծումներ, որոնք արտաքին ձեւի եւ չափսերի առումով տարբերում են ասանդականներից: Ասուածի լաւ օրինակ է «Ամուսնութիւն» կոչուող գղայները, որոնք բռնակի ծայրերից շղթայակապ երկու գղալ են: Այսպիսի գղայների նմուշներ ցուցադրում են Յ.Շարամբէանի անուան ժողովրդական Արուեստների Թանգարանում եւ Փայտարուեստի Թանգարանում: Շղթայակապ գղայներում ամփոփում է զոյգի միասնութեան գաղափարը եւ համատեղ կեանքի մեկնարկը: Այսպիսի գղայները ամուսնանալ պատրաստուող զոյգերի համար դառնում են համատեղ կեանքը խորհրդանշող նուէրներ եւ կենցաղում չեն կիրառում: Ժամանակակից հարսանիքներում գղայը իր ծիսական խորհուրդը պահպանել է նաեւ փայտէ գղալ - տարուսիկների տեսքով, որնց վրայ գրում են սիրոյ արտայայտութիւններ կամ պարզապէս բարեմաղթանքներ:

Այօր էլ պահպանում են գղայների հետ կապում որոշ ասանդոյթներ, օրինակ հարսանիքների ժամանակ փեսաների մայրերը նորահարսերի բերանին մեղրով լի գղալը հակառակ ուղղութեամբ են դնում, որպէսզի հարսի լեզուն «կարծ» լինի, իսկ ատամհատիկի ձէսին յաճախ արծաթէ գղայներ են նոփրում փոքրերին:

Ի տարբերութիւն գղայների, շերեփը գղայնոցում մէկ հատ պէտք է լինէր, քանի որ շերեփը տնտեսութեան մէջ կնոջ իշխանութեան խորհրդանշն էր եւ պատկանում էր տան մեծմօրը: Հարսանեկան կատակ երգերում սկետրոջը ասում էին, որ հարսը եկել է շերեփը իր ձեռքից խլելու, ակնարկելով տան մեծի իշխանութեան կորուստը: Իսկ ժողովրդի մէջ ընդունուած կարծիք կայ, որ մէկ շերեփը երկու կնոջ ձեռքին տարակարծութիւնների պատճառ կարող է հանդիսանալ: Աղծնիքի հովտային շրջաններում հարսնածը (Խարսնառ) դիմաւորող փեսայի մայրը՝ աջ ձեռքին շերեփ ձախին հաց, մօտենում է զարդարում հարսնածիուն, շերեփով թեթեւ խքփում ձիու ճակատին, մի կտոր հաց տալիս կենդանուն, ապա շերեփն ու հացը յանձնում հարսին, որպէս տանտիկնութեան փոխանցման խորհր-

¹⁹ *Народы Кавказа; том 2* (Կովկասի ժողովուրդները, հտր. 2), ԽՍՀՄ ԳԱ, Մոսկուա, 1962, էջ 562-63:

դանիշ²⁰: Եթե այստեղ շերեփը տան մեծմօր իշխանութիւնն էր ընդգծում նորահարսի հանդէպ, ապա նախահարսանեկան ծէսում շերեփը կնոջ հանդէպ տղամարդու իշխանութեան խորհրդանիշն էր: Օրինակ անցեալում, երբ միջնորդին ուղարկում էին աղջկայ ծնողների մօտ, տղայի ծնողները սանր ու շերեփ էին կապում տան սեանը²¹: Սանրը նրա համար էր, որ միջնորդն իր առաքելութիւնը յաջողութեամբ կատարէր եւ հարսանիքի մեկնարկը հարթ ու անխոչընդոտ ընթացք ունենար: Իսկ շերեփը այս պարագայում ընդգծում էր ապագայ փեսայի իշխանութիւնը: Շերեփի՝ որպէս տղամարու իշխանութեան խորհրդանիշի, հանդիպում ենք նաեւ Բորչալուի գաւառի մի սովորոյթի մէջ, որտեղ ըստ Լալայեանի՝ երբ տղամարդու բացակայութեան կիևը ստիպում էր հաւ մորթել, շերեփ էր դնում ուռքերի արանքում, նոր կատարում մորթը: Այս կերպ կիևը ցանկանում էր մոլորեցնել սրբերին եւ տղամարդ ձեանալ, քանի որ ժողովրդի կարծիքով կնոջ մորթածը անսուրբ էր եւ այդ գործով զբաղում էին միայն տղամարդիկ²²:

Ժողովրդական տօնի մէջ շերեփը իր խորհրդանշականութեամբ գործածում է Բարիկենդանի տօնին: Ուտիս տատի կերպարը ամբողջացնում է իւղոտ ու առատ կերակուրների խորհրդանիշ շերեփը: Լօտեցիների պատկերացմամբ Բարիկենդանի վերջին օրը Մեծ Պահքը հսկող պապը՝ Ակլատիզը, շերեփով հարուստում էր Ուտիս տատին եւ դուրս հանում տանից, որպէսզի պահքի շրջանում նա իր մտելէն կերակուրներով չգայթակղի մարդկանց, եւ Ուտիս տատին երիտասարդները հանդիսատրութեամբ գլորում էին սարի գագաթից²³: Իսկ պահքի աւարտից յետոյ, Ակլատիզը Ուտիս տատի շերեփի հարուստների ներքոյ դուրս էր հանում տանից:

Հայաստանի տարբեր շրջաններում մի ծիսակարգ կար. երբ տան ընտանի կենդանին անհետանում էր գէլկապի ծիսակարգ էին կատարում, որպէսզի գայի բերանը «կապով» եւ կորած կենդանուն չվնասի: Կորած կենդանու տէրը աղօթքներ էր հնչեցնում եւ հմայական արարողութիւններ

²⁰ Ռ. Նահապետեան, *Աղմկեցա՛հայերի ամուսնահարսանեկան սովորոյթներն ու ծէսերը XIXդ. երկրորդ կէս-XX դ. սկիզբ, Պարմազագագրական ուսումնասիրութիւն*, ԵՊՀ տպարան., Երեւան, 2004, էջ 26:


²¹ Դ. Վարդումեան, Է. Կարապետեան, *Հայաստանի կոլորնորեստականների ընդհանրը եւ ընդհանեկան կենցաղը XIXդ. երկրորդ կէս-XX դ. սկիզբ, պարմազագագրական ուսումնասիրութիւն*, ԵՊՀ տպարան, Երեւան, 1963, էջ 110:

²² Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս, հոգր. 9, 1908*, էջ 248:

²³ Հ. Խառատեան, *Տօլը եւ փօծահանդէպի մշակոյթը Հայաստանում*, «ԱՍՐՎԱՐԴ ՀՐԱՏ» ՍՊԸ հրատ., Երեւան, 2010, էջ 93-4:

կատարում՝ շերեփը կապելով սեանը, թէլը եօթ անգամ հանգոյց անելով եւ այսկերպ խորհրդանշական ծեսով կապքի մէջ առնելով գայլի բերանը: Իսկ երբ կենդանին անվնաս տուն էր վերադառնում, հանգոյցները բացում էին, շերեփը սեան վրայից իջեցնում՝ այդկերպ «արձակելով» նաեւ գայլի բերանը²⁴:

Այսօր գոյալնոցները կենցաղում կիրառութիւնից դուրս են մնացել եւ որպէս կենցաղային իր անձնօթ են շատերին: Փոխարէնը յուշանուէրների վաճառքի ստղովարներում յաճախ կարելի է հանդիպել գոյալնոցներ, որոնք յատկապէս զբօսաշրջիկներին ներկայացնում են որպէս հայկական մշակոյթի տարր: Բազմազան են նաեւ Հայաստանի տարբեր տեսարժան վայրերի պատկերներով կամ հայկական խորհրդանիշերով նկարազարդ յուշանուէր գոյալները: Զբօսաշրջիկներից բացի յուշանուէր գոյալնոցներով հետաքրքրուած են նաեւ հայերը, ովքեր քիչ թէ շատ տեղեկութիւններ ունեն գոյալնոցի իմաստային նշանակութեան մասին, եւ քիչ չեն դէպքերը, երբ գոյալնոցը ամուսնացող զոյգի համար հանդիսանում է նորաստեղծ ընտանիքի գաղափարը խորհրդանշող նուէր:



Նկար 1.- Փայտե գոյալ, Ի. դարասկիզբ, Հայոց Ազգագրութեան Թանգարան (ՀՄԹ). 4.- Ամուսնութիւն, Փայտարուեստի Թանգարան (ՓԹ)

²⁴ H. Marutyan, "Wood," *Armenian Folk Arts, Culture, and Identity*, Indiana University Press, China, 2001, էջ 107-09:



Նկար 2, Փայտէ շերեփ, Ի. դարասկիզբ. 5.- Փայտէ գդալնոց, ժԹ. դարավերջ.
7.- Յորենի ցողուններից հիատած գդալնոց, 1930ականներ (ՀԱԹ)



Նկար 6.- Կարպետագործ գդալնոց, 1970-80ականներ. 3.- Փայտէ գդալ, Ի.
դարասկիզբ, ՓԹ



Նկար 8.- Գդալնոցներ, Ի.
դարասկիզբ, ՀԱԹ

SPOONS AND SPOON-BOXES IN THE ARMENIAN FESTIVE-RITUAL SYSTEM

(Summary)

MARY AVETISSIAN (meryavetisyan1984@gmail.com)

The study provides extensive information on the traditions of woodworked spoons and spoon-boxes, which were a part of wooden tableware. It reveals the symbolism of their decorative motifs, their mode of use and their place in Armenian cultural ethnography and tradition.

The article offers a broad view of the usage of and folk beliefs related to wooden spoons in different parts of the Armenian Highland.

The article notes, however, that currently only a part of these old rituals, traditions, and popular beliefs have survived. At the same time, these wooden spoons have become quite fashionable and are used as decorative ethnographic art, displayed or given as gifts to newly married couples, symbolizing unity, fertility, family, etc.

The article concludes that the shift in the function and usage of these wooden spoons has facilitated new exposure and a new life for them as well as bringing them out of the museums. As souvenirs, these reshaped Armenian wooden spoons have become a specimen of reinvented and renewed Armenian ethnographic decorative art.

**ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ
ԱՍՈՅԹԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ (armensargg@gmail.com)

ՄՈՒՏՔ

Վաղնջական ժամանակներում մարդ արարածը, չկարողանալով բացալայտել իրեն շրջապատող աշխարհը, բնութեան երեւոյթների, մարդկային փոխյարաբերութիւնների գաղտնիքները, դրանց «միս ու արիւն» է տուել, մեկնաբանել տարատեսակ աստուածութիւնների, առասպելական կենդանիների, թռչունների եւ տարաբնոյթ առեղծոածային ուժերի՝ աներեւոյթ չար ու բարի ոգիների գոյութեամբ, յօրինել հաաստալիքային կաղապարներ եւ խեղճացել իր իսկ ստեղծած յօրինուածքների առաջ: Դրանք, հազարամեակների միջով անցնելով ու անընդհատ վերափոխուելով, սերնդէսերունդ բանտոր փոխանցմամբ կամ էլ տարատեսակ քարապատկերների ու պատկերագրութիւնների միջոցով շարունակել են գոյատեւել եւ ծառայել մարդկութեանը:

Ճիշտ է, հնագոյն ժամանակներից մեզ հասած այդ առասպելաբանական պատկերացումների արտացոլումները ժողովրդական բանարուեստի մի շարք տեսակներում՝ առասպելներում, հեքիաթներում, ասանդազոյցներում են., ակնառու է, սակայն սրանք եւս նոր ժամանակներում՝ գիտութեան եւ արհեստագիտութեան, կրթամշակութային, ընկերատնտեսական առաջընթացով պայմանատրուած, կամայ թէ ակամայ մոռացութեան տրուելով՝ ասպարէզից շատ արագ դուրս են գալիս:

Այնուամենայնիւ մեր նախնիների դիցաբանական ըմբռնումների մի շարք դրսեւորումներ՝ պատառիկների տեսքով, «պատսպարուել» են գրական հայերէնում եւ բարբառներում, հաատալիքներում, ժողովրդական բառ ու բանում, մասնատրապէս ասոյթաբանութեան մէջ:

Ասածը հիմնատրելու եւ որոշակի հետեւութիւնների յանգելու նպատակով նմանատիպ «պատսպարուած» արտացոլումները վեր ենք հանել եւ համադրել առկայ փաստարկների հետ՝ օգտագործելով ինչպէս տարատեսակ բառարաններ (դիցաբանական բառերի, դիցաբանական անունների, բարբառային բառերի, դարձուածքների, բացատրական են.), այնպէս էլ առասպելաբանութեանն առնչուող գիտական ուսումնասիրութիւններ, տեղավայրերին նուիրուած գրքեր, դաշտային աշխատանքների ժամանակ մեր գրառած նիւթերը են.:

Քննարկելիք թեման ներկայացնելու համար առասպելական տարատեսակ դրսեւորումները ընդգրկել ենք չորս պայմանական խմբերում՝

1. Հայ եւ հարեան ժողովուրդների դիցարանների աստուածութիւններ,
2. Առասպելական տեղավայրեր եւ շինութիւններ,

3. Առասպելական թռչուններ եւ կենդանիներ,

4. Առասպելական չար եւ բարի ոգիներ:

Սրանցից իւրաքանչիւրին վերաբերող նիւթերն այնքան շատ են, որ որ ծաւալի պատճառով անհնար է իւրաքանչիւրին անդրադառնալով: Հետեւապէս շարադրանքում ներկայացուած միջանի փաստարկ-օրինակներով փորձել ենք հիմնատրել ինչպէս հայ, այնպէս էլ հարեան ժողովուրդների դիցաբանական պատկերացումների ազդեցութիւնը հայ ժողովրդի մտածողութեան վրայ եւ այսօր պահպանուած դրանց պատառիկների առկայութիւնը հայերէնում եւ ժողովրդական բառ ու բանում:

ՀԱՅ ԵՒ ՀԱՐԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԴԻՑԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1-ա. Ծովինարը (Նար) հայոց դիցարանում ջրի, ծովի, անձրեաքերութեան աստուածուհին է:

Հայկական առասպելներում **Ծովիան (Շովեան) – Ծովինարը** ջրային տարերքի հետ կապուած ոգին է: Դիցաբանական այդ կերպարն իր գեղարուեստական արտացոլումն է գտել հայոց *Սասնայ ծռեր* դիցազներգութեան մէջ, ուր նա ներկայանում է ծովից յոյհացած երկոտրեակների՝ Սանասարի եւ Բաղդասարի մօր գործառոյթով:

Թէ՛ հայ ժողովրդական հաւատալիքներում եւ թէ՛ մեր հերոսավէպում **Ծովիան (Շովեան) – Ծովինարը** կապուած է ծովի հետ եւ ընկալուել է իբրեւ ամպրոպակայծակնային տարերքի մարմնացում:

Եթէ հայոց դիցարանում վիշապի դէմ կռուող երկնքի ծովից ծնուած ամպրոպային աստուած Վահագնն է, ինչի ապացոյցը նրա Վիշապաբաղ մականունն է, ապա ժողովրդական հաւատալիքներում Ծովինար-Նարը ամպրոպային ոգին՝ փայլակ-կայծակի իգական անձնատրումն է: Նա մի հրեղէն էակ է, որը ամպրոպի ժամանակ կարող է աղէտաբեր կարկուտ թափել կամ կենարար անձրեւ պարգեւել:

«Կայ նաեւ մի ամպրոպային կամ կայծակի աստուածուհի, ինչպիսին ունեցել են եւ յունները,- գրում է Մանուկ Աբեղեանն ու հիմնատրում.- դա է հրաջք Շովեանը կամ Ծովինարը, ամպրոպի եւ կայծակի կամ փայլակի անձնատրումը: Նա մի պաշտօնի առասպելական էակ է, մի առջիկ հրաջեայ ու հրեղէն, որ վերին երկնքում է ապրում եւ վերահաս ամպրոպից առաջ ամպերի մէջ, հրեղէն ձիու վրայ նստած, խաղալով ցոյց է փայլիս վայրկենապէս իր երեսը, որից եւ փայլաբազակում է... Ամպրոպային մոլո՞ գիշերները յանկարծ նա իր զուլիքը հանում է ամպերի երեսից եւ նայում դէպի ցած: Այդ ժամանակ «Շովեանը խաղում է», այսինքն՝ փայլաբազակում է»¹:

¹ Մ. Աբեղեան, *Երկեր, Ա. հոր.*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 78:

հղէպ, *Շովինար-Նարը*, իբրեւ ջրի, անձրեաբերութեան դիցունի, հայոց դիցարանում առանձնացուած է Շովիան-Շովեանից: Վերջինս տարբերում է իր գործառոյթով. *Շովեանը* կայծակի աստուածութիւնն է:

Հայերէնի մի շարք բարբառներում ու խօսվածքներում (Լօռի, Շուլավեր, Ղազախ, Խարբերդ եւ այլոք) այդ երկու գործառոյթները միացուել են: Թէ՛ Շովիանը (Շովեան), թէ՛ Շովինարը *փայլակը, կայծակն է*²:

Լօռու մարզի Շամսոտ գիւղի խօսվածքում Շովիան (Շովեան)-Շովինարը ներկայանում է ոչ թէ կայծակի *հարուածի* գործառոյթով, ինչպէս գրական հայերէնում է ասում՝ *կայծակը խփեց* (չի ասում *Շովեան-Շովինարը խփեց*), այլ ժողովրդական դարձուածքով նկարագրում է երկնքում կայծակի շողալու, կայծակից առաջացած լոյսի ձեւատր շեղջի, այսպէս ասած, գեղարուեստական պատկերը՝ *խաղալը՝ Շովիանը կամ Շովինարը խաղաց*³:

«Շովինարը խաղաց» դարձուածքի կիրառութեանը հանդիպում ենք նաեւ բանաստեղծ Տիգրան Նասարդեանցի հրատարակած հեքիաթներից մէկում, որին անդրադարձել է նաեւ Արեղեանը՝ Վահագն ամպրոպային աստծուն անդրադառնալիս. «...Ամպն ու չանգը գետիկն առել են. *Շովինարն էնեց խաղում ա*, որ կ'ասես թէ ուզում ա աշխարքը կրակ տայ»⁴:

Ստեփան Մալխասեանցի բառարանի՝ Շովիան – Շովինարը առանց որոտմունքի փայլակն է՝ երեկոները կամ գիշերները օդում կայծակի նման լուատր երեւոյթը⁵:

Երկնքի ծովից ծնած ծովածին Շովինարը վաղնջական ժամանակներում այնքան հոգեհարազատ է եղել հայ ժողովրդին, որ նրան ոչ միայն անձնատրել է իր ժողովրդական բանարուեստում, մասնատրապէս ազգային դիցագնաւէպում, այլեւ դարձրել է հայոց սիրելի իգական անձնանուններից մէկը:

1-բ. Հնագոյն ժողովուրդները, կողք կողքի ապրելով, միմեանցից փոխ են առել թէ՛ բառեր ու բառակապակցութիւններ, թէ՛ մարդուն եւ աշխարհին կառավարող ուժերի վերաբերեալ տարատեսակ առասպելական պատկերացումներ:

Այսպէս, յունական դիցաբանութեան մէջ *Մորփէոսը* քնի աստուածութիւնն է, նաեւ երագի աստուածը, Հիպնոս աստծոյ որդին: Անտիկ արուեստում նա պատկերուել է թեւատր ծերունու տեսքով: Մորփէոսը «*յունաց դի-*

² Հայոց լեզուի բարբառային բառարան, Բ. հրք., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2002, էջ 420:

³ Արմէն Շ. Սարգսեան, դաշտային գրառումներ. նաեւ՝ Հայոց լեզուի բարբառային, Բ. հրք., էջ 420:

⁴ Արեղեան, Ա. հրք., էջ 81:

⁵ Ս. Մալխասեանց, Հայերէն բացաբարական բառարան, չորս հատորով, հրք. 2, ԵՊՀ հրատ., Երեւան, 2010, էջ 351:

ցարանութեան մէջ՝ քնի եւ երազների աստուածը, որից՝ փոխ՝ քուն, Մորփէոսի գիրկն ընկաւ, քնեց»⁶:

Մորփէոս բառից է առաջացել նաեւ մի շարք ժողովուրդների բժշկութեան մէջ կիրառուող քնաբեր դեղամիջոցի անուանումը՝ *մորֆին*⁷:

Քնի այդ աստուածութիւնից «յիշատակ» մնացած «Մորփէոսի գրկում», «Մորփէոսի գիրկն ընկնել», «Մորփէոսին անձնատուր լինել» այլաբանական արտայայտութիւնը գրական հայերէնում նշանակում է *քնի մէջ, քաղցր քուն, քուն մտնել*⁸:

Քնի աստուածութիւն *Մորփէոսը*՝ հնչիւնափոխուած ձեւերով, հայերէնի բարբառներում ընդգծում է անձնանուան կատարած միայն *բայական* գործառոյթը⁹:

Այսպէս, հայերէնի բարբառներում եւ խօսուածքներում (Արարատեան, Արցախ, Պոլիս, Վան, Սեբաստիա, Շամախի) *Մորփէոսը*՝ *մրափ-մուրափ* ձեւերով, նշանակում է թեթեւ քուն, նիրհ: Արցախի որոշ շրջաններում, Շամախիում, ինչպէս նաեւ Վանում *մրափ-մուրափը* խոր քունն է¹⁰:

Լօռիում (գ. Շամուտ)¹¹ եւ Սեբաստիայում¹² *մրափը* թմբիրն է, նստած տեղը քունը տանելը, նիրհելը:

Մրափելը մի շարք բարբառներում եւ խօսուածքներում (Արարատեան-Լօռի, Արցախ, Պոլիս, Վան, Սեբաստիա, Շամախի) քնելն է¹³:

Փաստենք նաեւ, որ Եղոկիայում կէս քուն-կէս արթուն վիճակում *մէկ քնել, մէկ արթնանալը* արտայայտում է «*մրափտել*» բայով¹⁴:

Արցախի բարբառում *մրափելը*՝ քնել իմաստով, ասում է *կենդանիների* մասին, իսկ այն անարգական է եւ համարում է վիրատրական, երբ մարդուն են *մրափել* ասում¹⁵:

Իդէպ, եթէ Լօռիում բայական կառոյցի մէջ վիրատրական, անարգական խօսքը ոչ թէ *մրափով* է արտայայտուած, այլ՝ *մռփելով*՝ «Գնա՛

⁶ Մայլասեանց, *հփր.* 3, ԵՊՀ հրատ., Երեւան, 2010, էջ 361:

⁷ *Դիցարանական բառարան* (Մ. Ն. Բուովինիկ, Մ.Ա. Կոզան, Մ.Բ. Ռաբինովիչ, Բ.Պ. Սելեցկի), թարգմ. ԱՄ Կրկեաշարեան, Երեւան, «Լոյս», 1985, էջ 162:

⁸ Պետրոս Ա. Բեդիրեան, *Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 966:

⁹ Հակոտակ Մորփէոսի գաղափարը հերքելու Աճառեանի տեսակէտին՝ թէ՛ «Մորփէոս» անունն ու նրա հնչիւնափոխուած ձեւերը բարբառներում, թէ՛ նրա կատարած գործառոյթը եւ բարբառներից բերուած օրինակները, թէ՛ հայ եւ օտարազգի մի շարք լեզուաբանների մեկնաբանութիւնները անհերքելի ապացոյցներ են:

¹⁰ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, Դ. հփր., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 87:

¹¹ Սարգսեան, դաշտային գրառումներ:

¹² *Հայոց լեզուի բարբառային բառարան*, Դ. հփր., էջ 87:

¹³ Լոյն:

¹⁴ Լոյն:

¹⁵ Լոյն:

մոփի» (Լոռի, ԱՍՇ¹⁶), ապա Ուրմիայում եւ Մուշում *մոփեղը* ոչ թէ վիրատուական, այլ սովորական մրափելու, քնելու իմաստն է արտայայտում¹⁷:

1-գ. Ատլաս-Ատլանտ (Ատլանտոս)ը յունական դիցաբանութեան մէջ տիտան հերոս է՝ Պրոմէթէասի եղբայրը, որը իր հզօր ուսերի վրայ պահում է երկնակամարը: «Այդ պատիժը նրա համար սահմանել էր Ջեաը, քանի որ նա տիտանների հետ կռուի էր ելել աստուածների դէմ»¹⁸:

Դիցաբանական այդ անձնանունը կորցրել է իր հիմնական գործառոյթը եւ մեր օրերում ոչ միայն յոյների, այլեւ հայոց եւ աշխարհի միւս ժողովուրդների շրջանում մի դէպքում ընկալւում է որպէս *քարտէզագիրք*, աշխարհագրական *քարտէզների ժողովածու*, *գծագրերի՝ նկարների ժողովածու՝* ըստ գիտութեան ճիշդերի¹⁹, միա դէպքում նաեւ՝ «**Ատլանտեան** ովկիանոսի, մէկ էլ այդ ովկիանոսում իբր գոյութիւն ունեցած եւ սուզուած **Ապլանտրիդա** երկրի յորջորջումները»²⁰:

1-դ. Հին յունական դիցաբանութեան **Հերմէս** աստուածը Ջեասի որդին է՝ աստուածների սոփիանդակն ու լրատարը, ճարտասանութեան, նաեւ մարմնամարզութիւնների, առեւտրի, ճանապարհորդութիւնների հովանատուրը, քնարի, այբուբէնի, թուերի ու երաժշտութեան գիտարարը²¹: Նա է եղել արարիչը միջանի գաղտնախօսութիւնների ու խորհրդատու գիտութիւնների, մասնատրապէս ալքիմիայի: Հերմէսը նաեւ վարպետօրէն կարողացել է խցանել-զմոտել սրուակների բերանը²²:

1-ե. Ըստ Գալստեանի կազմած բառարանի՝ **Տարտարոսը** յունական դիցաբանութիւնում Եթերի եւ Երկրի որդին է: Ըստ առասպելաբանութեան՝ **Տարտարոսի** անունն հետ է կապւում այն ահաւոր անդունդը, որը լցուած է յաւերժական խաւարով: **Տարտարոս** տեղավայրը համարուել է նաեւ Քրոնո-

¹⁶ ԱՍՇ, գրառումը՝ Արմէն Շ. Սարգսեանի:

¹⁷ Հայոց լեզուի քարտայային բառարան, Դ. հոր., էջ 83:

¹⁸ Գ. Գալստեան, *Դիցաբանական անունների եւ դարձուածքների համաօր բացատրական բառարան*, «Լոյս» հրատ., Երեւան, 1966, էջ 21:

¹⁹ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հոր. առաջին*, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 205:

²⁰ Պ. Բեղիրեան, *Բաների խորհրդատու աշխարհից*, «Արեւիկ» հրատ., Երեւան, 1989, էջ 77:

²¹ Բեղիրեան, էջ 42-43:

²² Դիցաբանական կերպարի հենց այս վերջին գործառոյթն էլ եւրոպական ժողովուրդներից շատերի լեզուներում արտայայտում է **հերմէսիկ** ածականով, այսինքն՝ *Հերմէսի պէս փակել, ամրացնել* (Բեղիրեան, նոյն):

Հայ ժողովուրդի առասպելական մտածողութեան մէջ Հերմէսը ընդունուած չի եղել: Նոր ժամանակներում վերոյիշեալ լեզուներում կիրառուող **հերմէսիկ փակ**, **հերմէսիկ խցիկ**, **հերմէսիկ վիճակ** բառակապակցութիւնները մուտք են գործել նաեւ հայերէնի բառապաշարի մէջ:

սի եւ տիտանների ստորերկրեայ բանտը, որի դարպասները փակուած էին պղնձածոյլ փականներով²³:

Ըստ հին յոյն բանաստեղծ Հեսիոդոսի՝ *փարփարոսը* երկրի ամենախոր ընդերքն է եւ գտնուած է երկրից այնքան հեռատրութեան վրայ, ինչ երկիրը՝ երկնքից: Այն պատած է երեք շերտ խաաարով եւ երկաթէ (կամ պղնձէ) երեք պարսպով: Տարտարոսի երկաթէ (կամ պղնձէ) դարպասները դրել է ծովի աստուած Պոսէյդոնը: Տարտարոսի շուրջը յավերժօրէն մոլեգնում են փոթորիկները: Այնտեղ բանտարկուած են Քրոնոսը եւ պարտուած տիտանները՝ Հեկատոնքէրոսների պահակութեան ներքոյ²⁴:

Ըստ *ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարանի՝ «Տարփարոսը* դժոխքն է՝ *Սանդարամեփը*: Տեղանունն առաջացել է յունական աստուած **Տարտարոսի** անունից, որի ստեղծած հսկաները փակուած էին ստորերկրեայ թագաւորութիւնում՝ *դժոխքի նախադասնը*»²⁵, իսկ ըստ *Մալխասեանցի՝ Տարփարոսը* յունական դիցաբանութիւնում **դժոխք է դժոխքի մէջ՝ մի անդունդ**²⁶:

Հայ ժողովրդի հաստալիքային պատկերացումներում *Տարփարոսը* ամբագրուել է իբրեւ **փանջարան, դժոխք, չարչարանքի տեղ**:

Մերօրեայ ժողովրդախօսակցական լեզւում եւ բարբառներում *փարփարոսի* անձնանունական եւ սարսփազդու տեղավայրային գոյականաձև կարծառոյթը վերափոխուել է բայով արտայայտած նրա ներգործած ազդեցութեամբ՝ հանդէս գալով հետեւեալ կառոյցներում՝

ա. յարադրատոր բայով՝ փարփարոսի գալ, որը նշանակում է ինչ-որ մէկից, ինչ-որ բանից, ինչ-որ երեւոյթից *ցնցուել, սարսափել՝*

Հենց էր խաբարն (իմա՝ լուրը) *իմացայ, փարփարոսի էկայ* (իմա՝ սարսափեցի, ցնցուեցի) (Լօռի, ԱՄՇ)²⁷:

Կամ էլ՝ *Որ միամիտ դէմս դուս չեկա՛ւ, փարփարոսի էկայ. քիչ էր մնըմ ուշկըս գնար* (Լօռի, ԱՄՇ):

բ. անէծքափայ կառոյցով՝

Տարփարո՛սի գաս:

Կամ էլ՝ *Հենց փարփարոսի գաս, ես գիդենամ* (Լօռի, ԱՄՇ):

²³ Գալստեան, էջ 133:

²⁴ *Դիցաբանական բառարան*, էջ 231:

²⁵ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հոյր. չորրորդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեան, 1980, էջ 467:

²⁶ *Մալխասեանց, հոյր. 4*, Երեան, ԵՊՀ, հրատ., 2010, էջ 389:

²⁷ Իդէպ, *փարփարոսը եւ փարփարոսային կառոյցները* Հայոց լեզուի բարբառային բառարանում չեն ընդգրկուել:

ԱՌՄԱԴԵԼԱԿԱՆ ՏԵՂԱՎԱՅՐԵՐ ԵՒ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

2-ա. Առակ-սեւ'ատակ, անատակ-սեւան'տակ, գարհետակ բառերն առնչում են ստորերկրեայ՝ անդրշիրիմեան թագաորութեանը՝ **սեւ, մուք** աշխարհին:

Հայոց մի շարք բարբառներում դրանք հանդես են գալիս հետեւեալ ձեւերով՝ սեանատակ(ը)՝ (Արցախ-Գանձակ), սըատատակ՝ (Արցախ-Գորիս), սեանատագ(ը)՝ (Կարին), սեանտակ(ը)՝ (Վան, Ուրմիա), եւ նշանակում են՝ **սեւ անդունդը, գրողի ծոցը, ջհանդամը**²⁸:

Արակը Արցախի բարբառում գետնի ամուր հողաշերտն է, որի վրայ շէնքի պատերն են դնում: Փոխաբերական առումով նշանակում է *դժոխք՝ Արակը քընաց*:

Այն կիրառում է յատկապէս **անէծքներում՝ Ա՛րակը քընաս**²⁹:

Արակ(ու)ել բայը Արցախի եւ Սասունի բարբառներում նշանակում է կորչել, անյայտանալ, դժոխքը գնալ³⁰:

Արակուել բայը գայրալից խօսքում կոպտելու նպատակ ունի եւ նշանակում է **հաղը քաշել՝** հեռանալ, գետնի տակն անցնել, անհետանալ՝

Կարա՛ս ըսպեղից արակուես:

Կամ էլ՝ *Հլա մի հապ ըսպեղից արակուի (Լոռի, ԱՄՇ):*

Անարակ բառը Արարատեան, Սիւրիհիսարի, Ջալախը-Կարինի բարբառներում նշանակում է *անյարակ, անդնդախոր, անհուն*, իսկ **անարակը գնալ** յարադրաւոր կառոյցում՝ *անյայտանալ, կորչել*: Արցախի բարբառում եւս **անարակուել** բայը նշանակում է *կորչել, անյայտանալ*³¹:

Իսկ **սեարակ կորչիլ** յարադրաւոր կառոյցը նշանակում է *անհետանալ, սեւ անդունդը մտնել*³²:

Հաւանաբար դրանք բոլորն էլ կապ ունեն «յատակ» բառի հետ՝ **սեւ+ան + (յ)արակ – հեարակ**:

Ժողովրդական ասոյթաբանութեան մէջ դրանք հանդես են գալիս հիմնականում **անէծքային** կառոյցներում՝

ա. Վա՛յ, արակուես դու, հա՛, արակուես: ք. Սեանարա՛կը գնաս: գ. Անեպա՛կուես դու դ. Գարհե՛րակը³³ գնաս: **ե. Ա՛յ անարա՛կն ըլես, կամ էլ՝ Արակն ըլես, հա՛:** Վերջինս ե՛ւ անէծք է, ե՛ւ փաղաքշական խօսք (Լոռի, ԱՄՇ):

²⁸ Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ե., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2008, էջ 310:

²⁹ Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ա., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2001, էջ 116:

³⁰ Եոյն:

³¹ Եոյն, էջ 55:

³² Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ե., էջ 310:

³³ Գարհե՛րակ – քարոքանդ, քարոքանդ եղած վայր: Գարհերակ բառը բառարաններում քաջակայում է:

Երկխոսական ասոյթաբանութեան մէջ դրանք հանդէս են գալիս անէծքով արտայայտուած գայրալից պատասխանական խօսքում, երբեմն էլ՝ այլ բաներին համադրուած.

– *Չե՛մ գալի:*

– *Սեանաբա՛կը գաս... (լորբ. Գրո՛ղին գաս, սեանա րա՛կը գաս), որը նշանակում է՝ հէջ էլ թէ գաս... (Լօտի, ԱՄՇ)*

2-բ. Հին յունական եւ հռոմէական դիցաբանութեան մէջ **պանթէոնը** բոլոր աստուածների կացարանն է:

Բեդիրեանի գրքում այսպէս է ներկայացուած *պանթէոնը*. «Պանթէոն հին յունարէն բառ է, որ կազմուած է «պան» նախածանցից եւ «թէոն (**թէիոն**)» բառից, տառացիօրէն նշանակում է «բոլոր աստուածներին»: Այսպէս կոչում էին բոլոր աստուածներին նուիրուած տաճարները»³⁴:

Ժամանակակից հայերէնում, ինչպէս նաեւ մի շարք այլ լեզուներում **պանթէոն** գոյականը, պահպանելով իր տեղավայրային գործառոյթը, շարունակել է կիրառուել ոչ թէ որպէս «տաճար՝ բոլոր աստուածներին նուիրուած»³⁵ իմաստով, այլ իբրեւ տարբեր բնագաւառների նշանաւոր գործիչների թաղման վայր՝ «**աստուածային մեծութիւնների**» հաւաքական **գեղեզմանատուն**:

2-գ. Առասպելական շինութիւններ. Բաբելոնեան աշտարակ

Ըստ հին հրէական առասպելի՝ համաշխարհային ջրհեղեղից յետոյ մարդիկ փորձել են Սենաար երկրում (Միջագետք) կառուցել քաղաք եւ աշտարակ, որի բարձրութիւնը հասնելու էր երկնքին: Հին *Կրակարանը* հաստատում է, որ Եհովան գայրանում է մարդկանց այդ յանդգնութեան վրայ, խառնում է լեզուները, եւ մարդիկ, իրար չհասկանալով, ցրում են աշխարհով մէկ. «Եւ Եհովան այնտեղից նորանց ցրուեց բոլոր երկրի երեսի վերայ, եւ քաղաքը շինելուց դադարեցին»³⁶:

Հին *Կրակարանի* միջոցով փոխանցուած *Բաբելոնեան աշտարակաշինութեան* ասանդագրոյցն իր հետքն է թողել նաեւ հայոց ժողովրդական խօսքի վրայ: Այն *դարձուածային պատկերի* տեսքով կիրառուում է պատուհասած թէ՛ անձնական, թէ՛ գանգուածային դժբախտութիւնների դվպքում՝

Ասուր բաբելական կրակ թափեց ժողովրդի գլխին (կամ՝ խեղճի գլխին): (ԱՄՇ)

«Ասուր բաբելական կրակ»ը գործածուում է նաեւ հայոց **անէծքային** կառոյցներում՝

³⁴ Բեդիրեան, էջ 76:

³⁵ Մալխասեանց, *հոլոր.* 4, էջ 47:

³⁶ *Աստուածաշունչ. մատեան հին եւ նոր կրակարանների*, Յակոբ Պոյաճեան տպարան, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 11:

Մուշի բարբառում՝ *Ասուր ք'արեւելազան կըրագ թափի վրէպի*³⁷:

«*Ասուր բաբելական կրակը* թափի գլխուտ» եւ «*Ասուր բաբելական կրակ* թափեց վրէս» դարձուածային պատկերով արտայայտութիւնները *Բայազէտի՝ Գեղարքունիք-Սարուխան, եւ Ալաշկերտի՝ Գեղարքունիք-Թազագիտի* բարբառներում կիրառուան է թէ՛ անէծքային կատոյցում, թէ՛ անհատական դժբախտութիւնը նկարագրելիս³⁸:

ԱՌԱՄՊԵԼԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐ

3-ա. Հայ ժողովրդի դիցաբանական պատկերացումների մէջ մեծ տեղ է յատկացունել **վիշապին**: Դա են վկայում վիշապներին վերաբերող թէ՛ հազարամեակների ընթացքում բանատուր ասանդոած բանահիւսակական ստեղծագործութիւնները՝ առասպելներ, հեքիաթներ, ասանդապատումներ, աստղաբանական տարաբնոյթ դրսետրումներ, թէ՛ ձկնակերպ վիշապակոթողներն ու քարերին արուած պատկերագրութիւնները:

«Հայերէն «**վիշապ**» բառը նշանակում է մեծ օձ,- գրում է վաստակաշատ հայագէտ Աբեղեանը եւ շարունակում,- այդ բառը փոխառութիւն է իրաներէնից, որի մէջ դա մակդիր է «**աժի**» - իժ, օձ անուան. «**աժի վիշապա**»-օձ վիշապ, վիշապ օձ, որ մի դեմոն է»³⁹:

«Ժողովրդի մէջ հին ժամանակներից իվեր *վիշապ ասելիս ընկալուն է նաեւ փոթորիկ կամ ամպրոպային ամպ*⁴⁰, երբեմն էլ՝ *վիշապահողմ, թաթառ կամ սաբանի քամի*⁴¹:

Հենց պտուտահողմի աներեակայելի ուժի եւ կատարած անբաժնութիւններն էլ պատճառ են դարձել, որ մեր նախնիները դրանք վերագրեն անտեսանելի ինչ-որ կենդանու՝ առասպելական *վիշապին*:

Իդէպ, Լոռիում (Շամուտ, Դսեղ) *սաբանի քամուն՝* պտուտահողմին, «**սըրտանարլուիճ**» են անուանում: **Բըլուկաճ** կամ **բըլբուկաճ** են անուանում նաեւ փայտի ոսնդած *դորածնե փաշեղը*⁴²:

Անցեալում գիւղացիները շապիկ-փոխանի վրայի անիծ-ոջիւններից որպէսզի ազատուէին, ներքնաշորերի ծայրից բռնած՝ կրակի վրայ արագ պտտում էին, կտրուկ կանգնեցնում եւ բացելով՝ բաց թողնում, որ միջատները թափուէին կրակի մէջ: Այդ գործողութիւնը Շամուտում անուանել են

³⁷ Ս. Բաղդասարեան-Թափալցեան, *Մշոյ բարբառը*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 212:

³⁸ Սարգսեան, դաշտային գրառումներ:

³⁹ Մ. Աբեղեան, *Երկեր, Է. հատոր*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 110:

⁴⁰ Աբեղեան, *Է. հատոր*, էջ 117:

⁴¹ *Ժամանակակից հայոց լեզուի բացարկական բառարան, հատոր չորրորդ*. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 415:

⁴² Ս. Բոչարեան, *Դսեղ, Աստղիկ* հրատ., Երեւան, 2009, էջ 441. նաեւ՝ Ա.Շ. Սարգսեան, «Շամուտ. պատմաագագագրական-բանահիւսակական նիւթերի ժողովածու» (անտիպ):

բլուլիճ անել⁴³:

Թէ՛ սրտանաբլուլիճ, թէ՛ բլուլիճ անել, եւ թէ՛ բըլլուլճ կամ բըլլուլճ բառերի հիմքում ընկած է *վիշապի՝ պտուտակածնե հողմ առաջացնելու* երեսոյթը:

Լօռիում (գ. Շամուտ) եւ Տաւուշում (գ. Կոթի) առասպելական կենդանի վիշապին ուշաք են ասում: Շամուտի սարուրների սարատեղի տակ հսկայ քարեր կան, որ կոչւում են ուշաքի գոտեր կամ գոտեր: Երաշտ տարիներին մեծահասակները երեխաներին յանձնարարում էին կծերով ջուր տանել եւ լցնել դրանց վրայ, որ «չորելինը (իմա՛ երաշտը) բերքը չփչացնի»⁴⁴:

Շամուտում եւ Կոթիում անյազ ծարաւից չափից աւելի ջուր խմողին նմանեցնում, համեմատում են ուշաք-վիշապի հետ՝ ասելով, «*Ուշաքի պէս ես խմում: Կամ էլ՝ «Ոնց որ ուշաք ըլես»:* Երբեմն էլ դիտողութիւն անելիս ասում է. «*Ի՞նչ ես վրայ փայլով խմըմ, խու դու ո՛ւշաք չես»* (ԱՄՇ)

3-բ. Դեերը հայ ժողովրդական առասպելներում անսահման ուժի տէր հսկաներ են, որոնց համար իբրեւ մակդիր գործածում է «**աժդահա**» բառը:

Տիգրան Մեծի վէպին անդրադառնալիս Աբեղեանը տալիս է նաեւ Տիգրանի հակառակորդ մարդ-վիշապ **Աժդահակի** անունն ստուգաբանութիւնը. «*Աժդահակ*» անունը առասպելական Աժի Դահակա-Վիշապ Դահակն է, որի դէմ կռում է պարսիկների մէջ Հրուդէնը - Թրայէփառոնան: Սրան համապարասխանում է հնդկների մէջ Տրիփա աստուածը, որ Ինդրայի յարկութիւններն ունի եւ նոյնպէս կռում է Վիշապի դէմ»⁴⁵:

Առասպելական դէպիւն առնչուող բազմաթիւ բառ-բառակապակցութիւններ են «թաքնուած» հայերէնի բարբառներում:

Այսպէս, Արարատեան, Արցախի, Կարնոյ եւ Մշոյ բարբառներում **դիադադար անելը** նշանակում է անհանգստացնել, քնած մարդուն արթնացնել, իսկ **դիադադար ըլելը**՝ քնահարամ լինել, քունը փախչել⁴⁶:

Սաստիկ վախենալու երեսոյթը ժողովուրդը ներկայացրել է **դիւերոց ըլել** յարադիր բայով, իսկ առանց մերանի մածոն դառնալը *Գանձակում* արտայայտուել է **դիամներ** բառով՝ իբրեւ դէպի մերած⁴⁷:

Սեբաստիայում եւ Մուշում **դիսպրունը**՝ իբրեւ դէտերի բնակարան՝ տուն, փոխաբերաբար նշանակում է *չար՝ վար մարդկանց փուն*, ինչի հետ կապուած նոյնիսկ առած է ստեղծուել՝ «*Քիչ կար դէպի դիւնոց, մէզ լէ՛ իչաւ էրթը-գուց*»⁴⁸:

Լօռու եւ Տաւուշի մարզերի մի շարք գիւղերում (Շամուտ, Լորոտ, Անիծոր, Օձուն, Շնող, Կոթի, Աչաջուր, Իջեան եւ այլուր) բնակչութեան խօս-

⁴³ Լոյն:

⁴⁴ Սարգսեան, «Շամուտ»:

⁴⁵ Մ. Աբեղեան, *Երկեր*, Գ. հատոր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեան, 1968, էջ 60:

⁴⁶ Հայոց լեզուի բարբառային բառարան, հատոր Ա., էջ 335:

⁴⁷ Լոյն:

⁴⁸ Լոյն, էջ 336:

ուածքում այժմ էլ շրջանառում է *դրագոն*⁴⁹ բառը, որը ածականական կիրառութեամբ է հանդես գալիս եւ նշանակում է *հսկայ, աժդահա*:

Երբեմն էլ *դրագոնը* տեղի ժողովրդական խօսքում հեզնախառն իմաստով է գործածում՝ ընդգծելով տուեալ անձնատրութեան չափազանց գէր, մարմնի *անքնական* չափերով կառուցուածքը. «*Դէնս մի կնիկ դու էկաւ, կնիկ խո չէ՞ր, կնիկ խո չէ՞ր, մի իսկական դրագոն էր* (իմա՛) հսկայ, աժդահա, անչափ խոշորամարմին)»⁵⁰:

Վաղնջական ժամանակներից հայերը, յոյների հետ լինելով հարեաններ, երբեմն էլ ապրելով կողք կողքի (Լօռու տարածաշրջանում առ այսօր յոյներ են ապրում, կան նաեւ զուտ յունաբնակ գիւղեր), փոխադարձ շփումների ընթացքում, բազմաթիւ բառեր, արտայայտութիւններ են փոխառել: Ամենայն հաւանականութեամբ, *դրակոն* բառը եւ՛ *դրագոն* արտաբերմամբ, հայերէնը փոխ է առել յոյներից:

Դրակօ-դրակոնը յունական դիցաբանութեան մէջ վիշապն է, թեատրօձը: Այն անձնատրում է փոթորիկը, որը փորձում է կլանել արեգակին: Ըստ առասպելի՝ Դրակոնի բերանից, կրակ էր ժայթքում⁵¹: Հայերն այս փոխառած բառն իրենց խօսքում կիրառելիս նկատի են ունեցել առասպելական վիշապի միայն արտաքին կառուցուածքի՝ *ա՛հ առաջացնող* անսովոր չափերը:

Յգ. Ծկակը. ըստ հայոց ժողովրդական հաստատիքի (Ախալքալաք, գիւղ Սուլդա), *մի անիծուած թռչուն է*, որը տարին մի անգամ կարող է ջուր խմել, «*թէ՛ որիչ անգամ խմէ՛ խմածը թարախ կը դառնայ*»⁵²:

Հայերէնում այս առասպելական թռչունը գոյականական կիրառութիւնից վերածուել է բայական գործածութեան: Այսօր *ծկակել* բայը մի շարք բարբառներում եւ խօսուածքներում կիրառում է «*սաստիկ ծարաւ զգալ*», «*ծարաւից փանջուել*» իմաստով՝ «*Ծարաւ ծկակեցանք, գինի ածիր*»⁵³:

Փոխաբերական իմաստով *ծկակ դառնալ* յարադրաւոր բայը նշանակում է սաստիկ պապակած, ծարափ՝ «*Պապակել, ծկակ եմ դառել*»⁵⁴:

Եթէ **Բաղէշում** ծանր հարուածից շունչը կտրուելը, շնչարգել լինելը «*ոտ*» բազմապատկական ածանցով՝ *ծկակնորել*, բայով է արտայայտուած⁵⁵, ապա **Նոր Նախիջեանում** սաստիկ փափագով մի բանի հետամուտ եղողին՝ կրկնատր բարդութեամբ՝ *ծկակ-ծկակ*⁵⁶ են ասում:

⁴⁹ Հայոց լեզուի բարբառային բառարանում *դրագոնը* բացակայում է:

⁵⁰ ԱՄՇ

⁵¹ Գալստեան, էջ 39. նաեւ՝ Մալխասեանց, *հյդր.* 4, էջ 343:

⁵² Մալխասեանց, *հյդր.* 2, էջ 343:

⁵³ Նոյն, էջ 344:

⁵⁴ Նոյն, էջ 343:

⁵⁵ Հայոց լեզուի բարբառային բառարան, *հյդր. Բ.*, էջ 413:

⁵⁶ Նոյն, էջ 413:

Ծկակով կազմում մէկ այլ յարադիր բայը՝ *ծկակ լինելը*, նշանակում է պապակելուց կոկորդը ցամաքել, կերածը կուլ չգնալ⁵⁷: *Ծկակի փայ* յարադիր բայական կառոյցում այն նշանակում է ուտելու մեծ փափագ արտայայտել՝ *«խորովածի համար ծկակի էր փայիս»*:

Ծկակը կիրառում է նաեւ *անէծքներում*, երբ մայրերը զայրոյթից ասում են անյազաբար ջուր խմող երեխային՝ *«Ծկակի՛ս»*⁵⁸:

Լօտիում (գ. Շամոսո) *ծկակել*, *ծկակն ըլելը* միջանի նշանակութիւն ունի՝

1. խեղդուել, շունչը կտրուել, շնչահեղձ լինել՝ *«Հենց փենըմ ա ծըկակն ա ըլըմ, բիթը յեդ ա քաշըմ»*:

2. ծարափց կոկորդը ցամաքել:

3. կերածը կուլ չգնալ, ուտելիս խեղդուել:

Այսպէս, քոյի՝ վայրի խակ տանձ ուտելիս ասում են՝ *«Բուզըս ծկակըմ ա»*:

4. զայրանալուց խեղդուել:

5. Եթէ Սպիտակում *խիստ ծարաւելն* արտայայտում է *ծկակել* բայով (ծկակել են), ապա Քարինջում ասում է՝ *«Ծարաւ ծկակնել ենմ»*: Ընդ որում, Շնողում *ծկակն էլաը* առնչում է ջուր կամ ընդհանրապէս հեղուկ խմելուն: Զուրը խմելիս եթէ լա չի գնում՝ բկին, շնչափողում է կանգնում, ասում են՝ *«Ծկակն էլա»*⁵⁹:

Ինչպէս ցոյց են տալիս հայերէնի տարատեսակ բարբառներից բերուած փաստերը՝ առասպելական *ծկակ* թոչունը, հազարամեակների միջով «անցնելով», մեր օրերում իր թոչնային գործառոյթը «վերափոխել է» մարդկանց վրայ թողած ազդեցութեամբ (*սաստիկ ծարաւելու, ինչ-որ բանից խեղդուելու, բկին կանգնելու, շունչը կտրուելու*)՝ դրանով իսկ աղբսելով հայ ժողովրդի առասպելական մտածողութեան ժամանակները մեր օրերի հետ:

ԱՌԱՊԵԼԱԿԱՆ ՈՐԻՆԵՐ

Ի տարբերութիւն առասպելական աստուածութիւնների, թոչունների ու կենդանիների, բնակատեղիների և շինութիւնների՝ հայերէնի բարբառներում եւ ժողովրդական ասոյթաբանութեան մէջ դրանց կիրառութիւնների բանականին մեծ քանակ են կազմում *առասպելական չար եւ բարի ոգիներին* առնչուող հաատալիքային պատմութիւնների յենքի վրայ ստեղծուած բառերն ու բառակապակցութիւնները, հետեաբար նաեւ՝ ասոյթաբանական տարատեսակ դրսետրումները:

4-1. Հայ ժողովրդական հաատալիքներում եւ հայոց բառ ու բանում *առասպելական չար ոգիներից* նշանակալից տեղ են զբաղեցնում *սատանա-*

⁵⁷ Եոյն:

⁵⁸ Եոյն:

⁵⁹ Մեր գրանցումներից:

ները, որոնց առնչուող բանարուեստի նմուշների մէջ մեծ քանակ են կազմում սատանայի եւ մարդու մրցակէճերին վերաբերող առակները⁶⁰։ Դրանցում մեծամասամբ յաղթում է մարդը, յատկապէս՝ կին արարածը⁶¹։

Նոր ժամանակներում սատանաները «պատասխարուել են» թե՛ հայերէնի տարակերպ դրսետրումներում, թե՛ ժողովրդական ասոյթաբանութիւնում։ Այսպէս, եթէ Լօտիում (Դսեղ), *սաստիկ վահսենալու* երետոյթը արտայայտում է *սըփաներոց ըլել* կամ *դիւերոց ըլել* յարադրատր բայով⁶², ապա Գանձակում (Արցախ) *սըփներոց ըլելը սափանայի բաժին* դառնալն է⁶³։

Սատանաներին առնչուող բազմաթիւ *առած-ասացուածքներ* է ստեղծել մեր ժողովուրդը, որոնցում եա առկայ է վաղնջական ժամանակների հաւատալիքային դրսետրումը՝

* *Մարդն աւելի Սափանա է, քան թէ ինքը՝ Սափանան* (Մշոյ Բուկանըխ)⁶⁴։

* *Կնիկը սափանից եօթ օր շուր աս ծնունէ*⁶⁵։

* *Սափանէն կիրակմարին չարութիւն կանէ* (Շիրակ, Աշտարակ)։

* *Սափանէն ասիզ օրեր* (տօն օրեր) *կը պըրըրտի* (Ալաշկերտ)։

* *Սափանէն ոչ մեռել ա, ոչ էլ մեռնելիք ա* (Աշտարակ, Թիֆլիս)։

* *Սափանի ճամփին կայ, երկնքի ճամփին չկայ* (Վարդարշապ., Թիֆլիս)։

* *Սափանէն հարսնիք չ'երթար, ըմմա փապուճները* (հողաթափերը) *կը որդէ* (Եւրոկիա)։

* *Սափանի մայլէն (թաղ) քեանդրբազու* (լարախաղաց) *խաղալ* (Ախալցխա)⁶⁶։

Լօտու տարածաշրջանում որեւէ գործի յաջող ընթացքի մասին խօսելիս անմիջապէս մէջ է բերում «*Սըփանի անջակը խուլ*» (իմա՝ յանկարծ սատանան չլի)՝ սնտոհապաշտական արտայայտութիւնը։

Եթէ ձեռնարկած գործը անյաջող, թարս է ընթանում, Լօտիում եւ Տաւուշում այն վերագրում է սատանային՝ ասելով «*Նա՛լլաթ (անէժթ) քեզ, չա՛ր սափանա*» զայրալից խօսք-արտայայտութիւնը⁶⁷։

⁶⁰ «Մարդու եւ սատանայի վէճը» եւ «Ապերախտ որդին եւ սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, կազմ. եւ մշակ.՝ Արտաշէս Նազինեան, «Նախիր» հրատ., Երեւան, 2008, էջ 158, 162. Նաեւ՝ «Մոնթն ու սատանան», «Սատանան ու մարդը», «Մարդն ու սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, կազմ. եւ մշակ.՝ Արմէն Սարգսեան, «Էդիթ» Պրինտ» հրատ., Երեւան, 2011, էջ 60, 67-69, 115։

⁶¹ «Պատան ու սատանան», «Հողագործն ու սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, էջ 81-82, 150-151։

⁶² Ս. Քոչարեան, *Դսեղ*, «Ատոլիկ» հրատ., Երեւան, 2009, էջ 419։

⁶³ *Հայոց լեզուի բարբառային բառարան, հարոր Ե.*, էջ 322։

⁶⁴ Սահակ Մովսիսեան (Քննսէ), «Հարք (Մշոյ Բուկանըխ)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւստութիւն, հրք. 3*, ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 161։

⁶⁵ *Հայ ժողովրդական առակներ*, էջ 151։

⁶⁶ Ա. Ղանալանեան, *Առածանի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, էջ 110։

⁶⁷ Մեր գրառումներից։

Շատ ճարպիկների համար էլ ժողովուրդն ասում է. «Սափանին շապիկ կը հագցնի, կափոփին՝ վարտիք»⁶⁸, իսկ չափազանց խորամանկների վերաբերեալ՝ «Սըփանըքերիցը թեզ ա ծնունել (իմա՝ սատանան անգամ նրան չի հասնի)»⁶⁹:

Լոռու մարզի Շամոտ գիւղում մինչեւ Ի. դարի կեսերը օգտագործուել է նաեւ «Սըփանէն քեզ չըջարի» անէծք-արտայայտութիւնը, որը նաեւ կիրառուել է իբրեւ փաղաքշական խօսք⁷⁰:

Հայոց ժողովրդական խօսքում երկու արական կամ իգական **սափանաները** երբեմն էլ *անտանապէս* են հանդէս գալիս՝ **Սլիկ** եւ **Բլիկ** կամ էլ՝ **Ալօ** եւ **Սլօ**:

Ըստ Արշակ Ալփոյաճեանի՝ սատանան երկու աղջիկ ունի՝ **Բըլիկը** եւ **Սլիկը**. «Բլիկը սափանին երկու աղջիկներէն մին, որ միա բրոջը՝ Սլիկին հետ դժոխքին դուռը կը պահպանէ, կ'ըսեն»⁷¹:

Ժողովուրդը այդ երկու կերպարներին առնչուող ասացածք էլ է ստեղծել՝ «Ո՛րեւ խնդրոյ մը մէջ՝ երբ երկու անձեր գտնուին կամ երկու պարագաներ ներկայանան, մին քան զմիան յոռի, որոնցմէ ո՛չ մէկը կարելի չըլլայ նախընտրել, կ'ըսուի. «Նալլէթ (լանէթ) սըլիկին ալ, բըլիկին ալ», որ ժողովրդային ասացածք մը դարձած է»⁷²:

Ըստ *Նախիջեանցիների* հաատալիքի՝ սատանայի երկու գաւակները *տղաներ* են՝ **Ալօն ու Սլօն**: Արեղեանի գրառած *սափանապարեան* առած-ասացուածքներից մէկում՝ «Սատանէն էրկու տղայ ունի՝ մինն Ալօն, մինը Սլօն. նալլաթ Ալոյին էլ, Սլոյին էլ»⁷³:

Այստեղ եւս պահպանվել է Ալփոյաճեանի՝ վերը յիշատակած դժոխքի պահապանների առասպելաբանութեան արձագանգը:

4-2. Ըստ Աճառեանի **շվոտը** Փետրուար ամիսն է, «...որ է ատրաբարեյական տոմարի 11րդ ամիսը»: ...Ըստ նախապաշարմանց՝ **սափանաների ազգատութեան ամիսն է**. «Բայց զշտտ ամիսն անհնազանդեալ (դեպքն կախարդաց) գործեն զկամս իւրեանց՝ տանելով զոմանս ի մարդկանէ...»⁷⁴:

Պարսիկների մօտ՝ «ճիադ. է ազգ մի դիւաց, որք լինին յանշէն տեղիս եւ ի դաշտավայրս. որք մտեալ ի զանազան կերպարանս. եւ զմարդն ի ճա-

⁶⁸ Նոյն:

⁶⁹ Քոչարեան, էջ 419:

⁷⁰ Սարգսեան, «Շամոտ»:

⁷¹ Արշակ Ա. Ալփոյաճեան, *Պատմութիւն Եւրոկիոյ հայոց*, տպ. «Նոր Աստղ», Գահիրէ, էջ 1397-8:

⁷² Նոյն:

⁷³ Ղանապանեան, էջ 110:

⁷⁴ Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հպր. Գ.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 537-8:

նապարհէ խտորեցուցեալ՝ սպանանեն: Ըստ այսմ, արդի բարբառներում **շուտօր** նշանակում է մի տեսակ դե կամ ոգի, որ Փետրուարին է գործում:⁷⁵:

Բացի անտեսանական վերը բերուած մեկնաբանութիւնից, Մալխասեանցի բառարանում **շվոփը** տրուած է նաեւ ասացուածքային կառոյցով՝ **Շվոփը՝ դուրս, մարդը՝ ներս**: Այնուհետեւ ներկայացուած է հայոց մէջ տարածուած գտած *հասարալիքային դրսետրումը*. «Մի տեսակ չար ոգի, որ Փետրուարի վերջերին է յայտնում, որ ձմեռը ապրում է մարդկանց բնակարաններում, իսկ գարնանը գնում է հանդերը. մարդկանց ինչ-ինչ վնասներ է պատճառում, բայց սատանի պէս չար չէ: Շվոփին հալածելու համար դէպի Մարտի 1ը լուսացող գիշերը ամանով լիքը ջուր են դնում դռան շէմքի վրայ, ապա հին շորեր, մորթիք, փալասներ են. վերցնելով խփում են տան ու գոմի պատերին եւ ասում. Շվոփը դուրս, Մարտը՝ ներս (սկզբնապէս՝ Փետրուարը գնաց, Մարտն եկաւ, ձմեռն անցաւ, գարունն եկաւ, իսկ փոխաբերաբար՝ չարը գնայ, բարին գայ)»⁷⁶:

Բացի չար ոգի իմաստից, ժողովրդի մէջ շվոփը փոխաբերաբար կիրառուած է նաեւ կատաղած, ցնդած, դիտուած իմաստով:

Ժողովուրդը Փետրուար ամիսը անուանել է նաեւ **շվոփամիս**: Հայոց լեզուի բարբառային բառարանում ներկայացուած են տարբեր բարբառներում **շվոփի** գործառոյթը եւ արտասանական տարբերութիւնները (Արարատեան, Ուրմիա-Խոյ, Պոլիս, Սեբաստիա, Կարին-Շիրակ, Խարբերդ, Դերսիմ-Քոյի, Հաճըն, Մուշ՝ **շվոտ/շուէտ**, Վան՝ **շիտտ**, Մալաթիա՝ **Շիոդ, շուվեդ**, Խարբերդ-Բուլանիս՝ **շուէտ**, Նոր Բայազետ՝ **շիտդ**), դրանց իմաստային առանձնայատկութիւնները եւ հաատալիքային դրսետրումները. **Մուշում՝** Փետրուարի վերջին գիշերը, **Ալաշկերտում՝** Փետրուար ամիսը, **Կեսարիայում, Սվեդիայում, Խարբերդում՝** Տեառնընդառաջի գիշերը յայտնուող ոգի, **Մուշում՝** Ալք, չար ոգի, **Սասունում՝** դե, չարք, որ ծառի բարձրութիւն ունի, փոխաբերաբար նաեւ՝ բարձրահասակ, շատ բոյով, **Մալաթիայում՝** աներեւոյթ էակ, որն իբրեւ թէ մարդկանց խաբելով հեռու տեղեր է տանում, **Սվեդիայում՝** Շվոփի գիշեր՝ Տեառնընդառաջի գիշերը, երբ շուտները իբր մտնում են կատուների փորը⁷⁷:

«Շուտօրը *դանից դուրս անելու գործողութիւնը* Կարին-Ջալալքում, Մուշում, Ալաշկերտում կոչում է **շուտփահան**, Սասունում՝ **շուտդահան կամ շուդհան**, որը տեղի է ունենում Փետրուարի վերջին գիշերը, մորթու կտորով կամ տանտիկնոջ **վարբիքով** գոմի մտփններին ու պատերին խփելով՝ ամեն հարուածի հետ «Շուտս ի դուրս, Մարտ ի ներս» գոռալով շուտը դուրս են հանում»⁷⁸:

⁷⁵ Աճառեան, *հփր. Գ.*, էջ 537-8:

⁷⁶ Մալխասեանց, *հփր. 3*, էջ 540:

⁷⁷ Հայոց լեզուի բարբառային բառարան, *հփր. Դ.*, էջ 283:

⁷⁸ Հայոց լեզուի բարբառային, *հփր. Դ.*, էջ 283:

4-3. Հայոց դիցարանում **գրողը** մարդու ճակատագիրը որոշող եւ մարդուն անդրաշխարհի ուղեկցող հրեշտակն է:

Հայ ժողովրդական բառ ու բանում *գրողը* հանդես է գալիս՝

ա. անէծքային կառոյցում՝

Գրողը քեզ փանի: Գրողի ծոցը գնաս: Գրողի փայ դառնաս:

բ. *Գրողը* կիրառում է նաեւ *փաղաքշական* իմաստով կամ էլ *յանդիմանանքով*.

Այ գրողը քեզ փանի, ինչի՞ չէիր էկեք

Այ գրողի փարած, էս ինչի ուշացար:

գ. առած-ասացուածքներում՝

Գրողն ինքն իրան անիծել չի փայ:

դ. մակդրային դարձուածքով.

էր գրողի փարած Վարդուշի ասածը ճիշտ դու էկա:

ե. դարձուածային կառոյցով ենթակայ, երբ կանխաւ յայտնի է, թէ ում մասին է խօսքը՝

- *էր գրողի փարածը ասած կ'ըլի:*

զ. չկայացած, չկայանալիք ինչ որ գործողութեան կամ կորցրած ինչ-որ բանի հանդէպ ցափ գայրալից արտայայտութիւն՝ հիմնականում՝ երկխօսական-հարցուպատասխանական ասոյթաբանութիւնում՝

- *Չի ուզում գա: // - Գրողին:*

Կամ - *Չկայ: // - Գրողին թէ չկա: (այսինքն՝ հէչ էլ թէ):*

• կամ էլ որեւէ գործողութիւն, երեսոյթ սրտովը չլինելը՝

- *Չեկա, գնաց (անձրեւ չի գայ):*

- *Գրողին գնա: (Գրողին թէ անձրեւ չի գաէ)*

• Կիրառում է նաեւ թէ՛ իբրեւ անէծք, թէ՛ իբրեւ փաղաքշական խօսք՝

• *Գրողի ծոցը զընաս, (նաեւ՝ մտերմիկ արտայայտութիւն, իբրեւ դիմելածն) Այ գրողը փանի քեզ (Այ գրողի տարած):*

Չար ոգի *գրողը*, *անաւփակը* կամ *սեանաւփակը* օգտագործում է ժողովրդական խօսքի անէծքային կառոյցներում, յատկապէս երկխօսական հարցուպատասխանական ասոյթաբանութեան մէջ: Շատ դէպքերում դրանք կիրառում են միասին, իբրեւ մէկը միւսին յաջորդող իրավիճակներ, երբ խօսակիցը հրաժարում է կատարել որեւէ յանձնարարութիւն:

Օրինակ՝

ա. ծնողի եւ երեխայի միջեւ՝

Երեխան. // - Չեմ գալիս:

Ծնողը. // - Գրո՛ղին գաս, սեանաւփակը գաս: ԱՍՇ, Լօռի

բ. - Մա՛մ: // - Գրող (գրող ու ցաւ...)

4-4. Տուրը Արցախում եւ Բոլնիս խաչէնում (վերջիններս ժՇ. դարի վերջին Արցախից Լոռու տարածաշրջան վերաբնակեցրածներն են⁷⁹) չար ոգին է⁸⁰:

Ըստ ժողովրդական սնահաատության՝ չար ոգի **Տուրը** «հարուածում է գաազանով ու մեռնում: Երբ մէկը մեռնելիս մէջքի վրայ կարմիր բծեր են դուրս գալիս՝ ասում են, թէ տուրից է մեռել, տուրը գաազանով խփել է մէջքին, եւ կարմիր բծերը նրա հարուածի հետքերն են»⁸¹:

Ըստ լօտեցիների հաատալիքի՝ մութն ընկնելուց յետոյ չի կարելի կռանալ ու ջուր խմել աղբիւրից, որպէսզի թիկունքից յանկարծ *տուրը չխփի*: Ժողովուրդը հաատում է, որ տուրից խփուածի մէջքին ափի հարուածի հետքը դրոշմուած է լինում⁸²:

Ժողովրդախօսակցական լեզուն պահպանուած *տուրը քալ* արտայայտութիւնը նշանակում է *չար ոգին խփել*, իսկ *տուրը քուած սև՝ հիանդութիւն*:

Տուրի վերաբերեալ կայ նաեւ ժողովրդական ասացուածք՝ «*Տուր կպչիլը ասպծու հիանդութիւնն աս*»:

Տուրին առնչուող միքանի հաատալիքային արտայայտութիւններ եւս պահպանուել են ժողովրդական խօսքում՝

- *Տուրը քուց ու քարաւ*: Այսինքն՝ չար ոգին հարուածեց:
- *Տուր է դիպել*: Այսինքն՝ չար ոգին է խփել:
- Տուրը տուած ա: Յանկարծակի մահուան եզրակացութիւն՝ չար ոգու մանակցութեամբ:

Ինչ խօսք, թէ՛ վերը նշուած ժողովրդական ասացուածքը, թէ՛ արտայայտութիւնները Արցախում եւ Լօռիում կիրառուել են մինչեւ Ի. դարի 70ականները: Նոր ժամանակներում ժողովրդական բժշկութեան՝ հեքիմութեան հետ դրանք գործածութիւնից գրեթէ դուրս են եկել:

4-5. Ըստ Մալխասեանի՝ **այսը**, չար ոգին, չար շունչը, չար քամին է: Փոխաբերաբար նշանակում է նաեւ պիղծ, դեմ⁸³:

Այսով կազմուած բոլոր բարդ բառերը (*այսակիր, այսահար, այսաբեկ, այսահարուել* են.) առնչում են ժողովրդական սնտիպապաշտութեանը: Այսպէս՝

- *Այսակիրը* կրում է իր մէջ չար ոգի, որի մէջ բնակուած է դեղ: Զանազան ջղային հիանդութիւններով հիանդներին հին ժամանակ համարում էին այսակիր:

⁷⁹ Ե. Լալայան, «Բորչալուի գաատ», *Ազգագրական հանդէս*, 9-րդ գիրք, Թիֆլիս, 1902, էջ 200:

⁸⁰ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, հրք. 2, «Գիտութիւն» հրատ., Երևան, 2010, էջ 255:

⁸¹ Մալխասեանց, հրք. 4, էջ 439:

⁸² Մեր գրառումներից (Լօռի՝ Վանածոր, Շամուտ):

⁸³ Մալխասեանց, հրք. 1, էջ 81:

- Այսահար, այսաբեկ - դեփց զարկուած՝ բռնուած, դիսահար:
- Այսահարուել - այսից զարկուել, դիսահարուել, նաեւ՝ մոլեգնութիւնը բռնել, կատաղել: *էլ ի՛նչ ես այսահարուել:*

Այսահարութիւնը հնում անբժշկելի էին համարում⁸⁴:

Լօռիում սնտոխապաշտական *այսահարուելը* փոխել է իր բուն իմաստը եւ ժողովրդական խօսքում նշանակում է *սաստիկ վախենալ, սրբաներոց ըլել, իսկ այսահարացրեցը՝ վախեցրեց, յանկարծակիի բերեց՝*

Քշերվա կիսին որ միամիտ դէ՛մըս դուս չեկա՛ւ, այսահարացրեց. քիչ էր մնըմ լեղիս ճաքէր՝⁸⁵:

Իդէպ, այս-այսահարուելը Հայոց լեզուի բարբառային բառարանում բացակայում է:

4-6. Եաղին Արցախում, Լօռիում, Արարատեան եւ Թիֆլիսի բարբառներում առասպելական մարդագողն է, նաեւ՝ թշնամի, գող, հարամի⁸⁶:

գ. Լօռի-Շամուտում *յեղին փոթորիկը, աղէտն է՝⁸⁷:*

Ժողովրդական խոսքում **եաղին** հանդէս է գալիս՝

1. Մակդրային կառոյցում այն նշանակում է *շար վար, անմարդկային անձնատրոսփին՝ «Ի՛նչ եաղի մարդ ա (նաեւ՝ եաղու մարդ)»:*

Սա համահունչ է «Գրողը քեզ փանի»ին եւ Լօռիում կիրառում են թէ՛ որպէս անէծք, թէ՛ որպէս կիսափաղաքշական, կիսամտերմիկ արտայայտութիւններ:

2. դարձուածային կառոյցում հանդէս է գալիս թէ՛ իբրեւ մակդիր՝ *«էտ եաղին փարած Վարդիշաղը...»*, թէ՛ իբրեւ ենթակայ, երբ կանխաւ յայտնի է, թէ՛ ում մասին է խօսքը՝ *«էս զոլումի մէջ էտ եաղին փարածի մատը խառը կըլի»:*

3. Եթէ Լօռիում **եաղին** անէծքի մէջ հանդէս է գալիս որպէս մարդագող՝ *«Յեղին քեզ փանի»*, ապա Բայազետ-Քեառաում՝ որպէս փոթորիկ, աղէտ՝ *«Եաղին քեզ փանի»:*

Ի տարբերութիւն առասպելական այլեայլ դրսետրումների՝ հայոց եւ հարեան ժողովուրդների դիցաբանական հետքեր պարունակող հնագոյն անձնանուններն այսօր էլ շարունակում են կենցաղավարել հայերի թէ՛ *արական* (Սանասար, Բաղդասար, Դալիթ, Տորք, Միեր, Միիրան, Զօհրապ եւ այլք), թէ՛ *իգական* (Ծովինար, Անահիտ, Աստղիկ, Նանէ, Նարե, Սաթենիկ եւ այլք) անուանաշարքում:

Առասպելական հերոսների ու տեղավայրերի որոշ անուանումներ (Արալի լեռ, Շամիրամի լեռ, Արզնի, Շամիրամի ջրանցք, Լեւկ, Միերի դուռ են.) այսօր էլ շարունակում են կենցաղավարել ժողովրդի մէջ. եթէ դրանց առն-

⁸⁴ Եղյն, էջ 81:

⁸⁵ Մեր գրառումներից (Լօռի՝ Վանաձոր, Շամուտ):

⁸⁶ Հայոց լեզուի բարբառային բառարան, հփո. Դ., էջ 104:

⁸⁷ Մեր գրառումներից (Լօռի՝ Վանաձոր, Շամուտ):

չուղ ասանդագրոյցները, իբրեւ տուեալ տեղանոան ստուգաբանութեան աղբիւր, ներկայացում են հետաքրքրողներին:

Փաստենք նաեւ, որ մեր օրերում հայոց մէջ շրջանառուող դիցաբանական փոխառեալ անձնանուններից եւ տեղավայրերի անուանումներից շատերն ու նրանց առնչուող առասպելական գրոյցները լոյս են սփռում նաեւ հարեան երկրների վաղնջական ժամանակների պատմութեան, մարդկանց մտածողութեան վրայ եւ նպաստում մոռացութեան տրուած մի շարք էջերի բացայայտմանը:

ԱՄՓՈՓԵԼՈՎ

Հազարամեակների ընթացքում աշխարհի, բնութեան երեսոյնների եւ մարդկային փոխյարաբերութիւնների վերաբերեալ ձեւատրուած ու գոյատեւած առասպելաբանական պատկերացումները մեր ապուպայերը մեկնաբանել են տարատեսակ աստուածութիւնների, առասպելական կենդանիների եւ տարաբնոյթ առեղծուածային ուժերի՝ աներեսոյթ չար ու բարի ոգիների գոյութեամբ, յօրինել դրանց հետ կապուած հաստատվիքային կաղապարներ եւ առասպելական պատմութիւններ:

Սակայն ընկերատնտեսական գիտա-մշակութային առաջընթացի պայմաններում կամայ թէ ակամայ դրանք աստիճանաբար մոռացութեան են տրում: Դրանց մի մասը՝ պատառիկների տեսքով, «թաքնուել» է հայերէնի բարբառներում, հաստատվիքներում եւ ժողովրդական բառ ու բանում:

Հայ եւ հարեան ժողովուրդների դիցարանների աստուածութիւնների, առասպելական բնակավայրերի եւ շինութիւնների, կենդանիների, թռչունների, չար եւ բարի ոգիների հետքեր պարունակող բազմաթիւ բառ-բառակապակցութիւններ այսօր էլ շարունակում են ինքնատիպ ու պատկերատր մեկնաբանութիւններով ներկայացնել հայերէնի բառապաշարը, շրջանառուել թէ՛ գրական, թէ՛ ժողովրդախօսակցական լեզուում ու ժողովրդական ասոյթաբանութիւնում:

Որքան էլ բարբառները եղել եւ մնում են հայերէնի հարստացման միջոցներից մէկը, այնուամենայնիւ դիցաբանական արտացոլումներով բարբառային բառ-բառակապակցութիւններից շատ քչերն են տեղ գտել ժամանակակից գրական հայերէնի բառապաշարում:

Որոշ բառ-բառակապակցութիւններ էլ եթէ կիրառում են արդի հայերէնում, ապա իրենց մէջ պահպանել են առասպելական հերոսի արտաքին յատկանիշի բնութագրումը (*ազնատր*, *աժդահա*), գործողութեան գործառոյթի ամենայատկանշական կողմը (*գրող*), երբեմն էլ՝ ներքին՝ բացասական (*չարք*), *սափանա*) կամ էլ դրական (*հրեշտակ*) բնութագիրը:

Հնագոյն ժողովուրդների դիցարանների աստուածութիւնների, բնկատեղիների ու շինութիւնների, առասպելական կենդանիների, թռչունների, չար ոգիների առկայութիւնը հայերէնի բարբառներում, գրական հայերէնում, բառ ու բանում, մասնատրապէս ժողովրդական ասոյթաբանութեան

մէջ եւ հաաստալիքներում մէկ անգամ եւս հաաստում են վաղնջական ժամանակներում հայ եւ հարեան ժողովուրդների դիցաբանական մտածողութեան, նրանց փոխադարձ շփումների ու ազդեցութիւնների, ընկերամշակութային փոխառնչութիւնների:

LEGENDARY EXPRESSIONS IN POPULAR BELIEFS, SAYINGS, AND DEPICTIONS

(Summary)

ARMEN SARGSYAN (armensargg@gmail.com)

Certain relationships and happenings between humankind and its milieu (such as geography and nature) have been interpreted by men as expressions of Gods, legendary animals, formidable mysteries and powers of evil and good. During millennia these primitive understandings have developed into beliefs and legends.

However, due to humankind's scientific and cultural progress these beliefs have disappeared from daily usage, though their remnants have survived in languages and colloquial expressions.

The paper unearths these remnants which have been preserved in the Armenian language and dialects, as well as in popular sayings and beliefs.

The author groups these traces into different categories of mythology, legendary locations and constructions, animals and birds, good and evil spirits.

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՌՈՒՍ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՀՈՂՈՒՄ (1990-2020)

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԵԱՆ (garshakyan@mail.ru)
ՄԻԻԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (martirosyansuzie@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յօրոածոմ քննարկում են վերջին 30 տարիներին Ռուսաստան-Թուրքիա աշխարհաքաղաքական մրցակցութեան հիմնական երեսակները, եւ յատկապէս էթնիկ հակամարտութիւնները Հարաւային Կովկասում: Ռուսաստանն ու Թուրքիան էթնօքաղաքական հակամարտութիւններն դիտարկում են որպէս տարածաշրջանում ազդեցութեան հաստատման կարեւոր միջոց եւ դրանք օգտագործում են տարածաշրջանում իրադարձութիւնների ցանկալի ընթացք ապահովելու համար: Այս ենթահողում առանցքային են արցախեան առաջին (1992-1994), վրաց-արխազական (1992-1993), ռուս-վրացական հնգօրեայ (2008) եւ արցախեան 44օրեայ պատերազմները (2020), որոնցում Մոսկուան ու Անկարան ունեն հակոտնեայ շահեր:

Վերոնշեալ հակամարտութիւնների վերլուծութիւնը ռուս-թուրքական աշխարհաքաղաքական մրցակցութեան տեսանկիւնից առանցքային նշանակութիւն ունի, քանի որ դրանց բորբոքումը յանգեցրել է տարածքում ազդեցութեան գօտիների վերադասատրումների մեկնարկին: Աւելին, այդ հակամարտութիւնների կարգատրման հերթական վերջնարդիւնքից է մեծապէս կախուած լինելու Հարաւ. Կովկասի ուժային նոր համապատկերը:

Յօրոածոմ ներկայացում են նաեւ ռուս-թուրքական երկկողմ յարաբերութիւնների զարգացման օրինաչափութիւնները, որոնք աչքի են ընկնում մրցակցութեան եւ համագործակցութեան համադրութեամբ:

ՌՈՒՍ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒԻԴՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Խորիրդային Միութեան փլուզումը յանգեցրեց «Սառը պատերազմի» ժամանակաշրջանի կաննոնների եւ աշխարհաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխութեան: Նոր աշխարհաքաղաքական իրողութիւնները ռազմավարական հնարատրութիւններ ընձեռեցին ուժային նոր հաւասարակշռութեան ձեւատրման: Այս տեսանկիւնից առանցքային է Հարաւային Կովկասի նշանակութիւնը, որը հանդիսանալով հաղորդակցային կարեւոր

հանգոյց, դարձաւ աշխարհաքաղաքական պայքարի ծաւալման ամենա-աշխուժ տարածաշրջաններից մէկը:

Աանդաքար ռուսական շահերի գոտի համարուող այս տարածքում ԽՍՀՄ փլուզումից յետոյ տեղի ունեցած իրադարձութիւնները տարածաշրջան մտաքի հնարատրութիւն էին ընձեռել Ռուսաստանի Դաշնութիւնից (ՌԴ) բացի, նաեւ այլ տարածաշրջանային եւ համաշխարհային դերակատարների՝ ի դէմս Թուրքիայի, Իրանի: Սկզբնական շրջանում ստեղծուած իրավիճակը Անկարային հիմք էր տալիս կարծելու, թէ ՌԴի հարաային սահմաններում ձեատրուել է ուժային որոշակի դատարկութիւն: Այդ է պատճառը, որ յետստղպատերազմեան ժամանակում Անկարան, ձգտելով օգտագործել առաջացած պարապը, առաւել աշխուժ քաղաքականութիւն սկսեց վարել Հարաային Կովկաս ներթափանցելու եւ այնտեղ դիրքատրուելու ուղղութեամբ¹: Տարածաշրջանը իր ռազմավարական դիրքի շնորհիւ Թուրքիայի համար աշխարհաքաղական եւ տնտեսական հսկայական կարեւորութիւն է առնում՝ դիտարկուելով որպէս իրատեսակ կամուրջ դէպի Կենտրոնական Ասիայի թիրքական հանրապետութիւններ:

1990ականներին յետխորհրդային տարածքում քաղաքական դատարկութիւնը լեցնելու համար ԱՄՆի կողմից առաջ քաշուեց «թիրքական մոդէլ»ի գաղափարը, որը միտուած էր Թուրքիայի միջոցով իրանական եւ ռուսական ազդեցութեան թուլացմանը նորաստեղծ ԱՊՀ տարածքում²: Սկզբնական փուլում Անկարան պանթիրքիստական հեռահար նպատակները քօղարկում էր նախկին ԽՍՀՄի մահմեդական հանրապետութիւններում «թիրքական մոդէլի» տարածման անհրաժեշտութեամբ:

Ինչ վերաբերում է ՌԴին, ապա հարակովկասեան տարածաշրջանը Մոսկուայի կողմից մշտապէս դիտարկուել է որպէս ռուսական կենսական շահերի գոտի³ եւ առանձայատուկ տեղ է զբաղեցրել պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում: Այդ էր հաստատում նորանկախ ՌԴ արտաքին քաղաքականութեան հայեցակարգը, որում ընդգծում էր Հարաային Կովկասի ռազմավարական կարեւորութիւնը եւ նշում, որ ՌԴն պէտք է աշխուժ դերակատարութիւն ունենայ տարածքի անվտանգային եւ տնտեսական յարաբերութիւններում⁴:

¹ E. Габер, "Политика Турции на Кавказе и в центральной Азии в постсоветский период" (Թուրքիայի քաղաքականութիւնը Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում յետխորհրդային ժամանակաշրջանում), *Центральная Азия и Кавказ*, 2011:14(3), էջ 159-70:

² H. Kramer, "Will Central Asia Become Turkey's Sphere of Influence?," *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, էջ 1-7:

³ R. Craig Nation, "Russia and the Caucasus," *Connections*, 2015:14 (2), էջ 1-12:

⁴ R. Allison, "Military Forces in the Soviet Successor States," *The Adelphi Paper*, Vol. 33, №280, 1993, էջ 1-40:

Յետսառըպատերազմեան առաջին տասնամեակում ռուս-թուրքական երկկողմ յարաբերութիւններն ունէին մրցակցային բնոյթ, ինչը հիմնականում պայմանաւորուած էր Հարաւային Կովկասում նրանց ունեցած մի շարք քաղաքական հակասութիւններով: Հակասութիւնները առնչուած էին արցախա-ադրբեջանական եւ վրաց-աբխազական հակամարտութիւններին, ՌԴի կողմից Կրաստանում եւ Հայաստանում ռազմակայանների հիմնումին: Եկկողմ մրցակցային յարաբերութիւններում լարուածութեան գործօններից էր նաեւ կասպեան ուժանիւթի աղբիւրների երթուղիների վերաբերեալ ունեցած հակոտնեայ դիրքորոշումները: Մոսկուան ու Անկարան ունէին տարբեր պատկերացումներ կասպեան ուժանիւթի աղբիւրները համաշխարհային շուկաներ արտահանելու մասին: Աւելին, Թուրքիան աշխուժ քայլեր էր ձեռնարկում ոչ միայն Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, այլեւ Հիւսիսային Կովկասում, մասնատրապէս Չեչնիայում, եւ ՌԴի թիւրքալեզու ժողովուրդներով բնակեցուած այլ տարածքներում իր ազդեցութիւնը հաստատելու համար: Փորձելով հակազդել եւ զսպել Թուրքիայի աճող ներգրատուածութեանը տարածաշրջանում Կրեմլը, իր հերթին, խաղարկում էր «քրդական քարտը»⁵:

Այնուամենայնիւ, յետագայում Անկարան, գիտակցելով, որ չունենալով բաարար քաղաքական եւ տնտեսական ներուժ եւ չհիմանալով այլ արտաքին դերակատարների հետ մրցակցութեանը, վերածնեց իր տարածաշրջանային քաղաքականութիւնը եւ ստիպուած էր նահանջել իր յաակնոտ ծրագրերից Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Այս ամենը յանգեցրեց ՌԴի հետ մրցակցութեան մեղմացմանը եւ նախադրեալներ ստեղծեց թուրք-ռուսական յարաբերութիւնների յետագայ զարգացման: 1990ականների կեսերից նոր թափ առաւ երկկողմ-բազմակողմ առետրատնտեսական գործակցութիւնը: «Ճամպրովկային առետուր»ը, որին փոխարինեց գրանցուած առետուրը, թուրքական շինարարական ընկերութիւնների աշխուժ ներգրատուածութիւնը ՌԴում, ռուսական զբօսաշրջիկների մեծ հոսքը Թուրքիա եւ ուժանիւթի գործակցութիւնը («Երկնագոյն հոսք» գազատար) դարձան 1990ականների ռուս-թուրքական առետրատնտեսական համագործակցութեան հիմնական ոլորտները⁶:

Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ ռուս-թուրքական յարաբերութիւնների առանձնայատկութիւնը այն էր, որ դրանք ընթանում էին մի կողմից՝ տնտեսական բազմակողմ գործակցութեան, միւս կողմից՝ աշխարհաքաղաքական սուր մրցակցութեան պայմաններում: Հարկ է նշել,

⁵ R. Olson, "Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions," *Journal of Muslim Minority Affairs*, October 1998:18(2), էջ 209-28:

⁶ S. Özel, G. Uçar, "The Economics of Turkey-Russia Relations," *Foreign Policy & Security*, July 2019:10, էջ 1-25:

որ յետադրյալատերազմեան տարիներին ռուս-թուրքական աշխարհաքաղաքական մրցապայքարում առաել առանցքային տեղ էին զբաղեցնում արցախեան եւ արխազական պատերազմները:

ՌԴ-ԹՈՒՐԻՔԻԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽԵԱՆ ԵՒ ԱՐԽԱԶԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՀՈՂՈՒՄ

Աշխարհաքաղաքական մրցակցութեան ժամանակ իրադարձութիւնների ցանկալի ընթացք ապահովելու համար յաճախ են օգտագործում էթնօքտաղաքական հակամարտութիւնները: Այս ենթահողում Հարաային Կովկասում ՌԴ-Թուրքիա մրցապայքարում առանցքային նշանակութիւն ունի արցախեան հակամարտութիւնը, որը դարձաւ այս մրցակցութեան ծաայման առաջին թատերաբեմը: Արցախեան առաջին պատերազմում Մոսկոան եւ Անկարան ունէին հակոտնեայ շահեր, աւելին, հակամարտութիւնը դիտարկում էին որպէս Հարաային Կովկասում ազդեցութեան հաստատման կարետր լծակ:

Թուրքիան, Ադրբեջանի հետ ունենալով էթնիկ, լեզուական եւ քաղաքական սերտ առնչութիւններ, Հարաային Կովկասում քաղաքանութեան մշակման եւ իրականացման համար առանցքային էր համարում Ադրբեջանի հետ յարաբերութիւնները: Ճիշտ է՝ սկզբում Թուրքիան փորձում էր անմիջական մասնակցութիւն չունենալ արցախեան պատերազմում, սակայն քաղաքական, դիւանագիտական, ռազմարիեստագիտական եւ նիւթական հսկայական օգնութիւն ցուցաբերելով իր դաշնակից Ադրբեջանին՝ Անկարան ի վերջոյ դարձաւ արցախեան հակամարտութեան անուղղակի մասնակիցը:

1992ի Մայիսին Թուրքիայի եւ ՀՀի յարաբերութիւնները ծայրաստիճան լարուեցին այն պատճառով, որ արցախեան հակամարտութիւնից ՀՀի ուշադրութիւնը շեղելու նպատակով Նախիջեանի ադրբեջանցիները բախումներ հրահրեցին ՀՀի հետ սահմանին, եւ Թուրքիան յայտարարեց, որ Կարսի 1921ի պայմանագիրն իրենց իրատունք է տալիս միջամտել հակամարտութեանը⁷: Թուրքիան նոյնիսկ յայտարարեց, որ անհրաժեշտութեան դէպքում պատրաստ է արցախեան հակամարտութեան գօտի տեղափոխել այնքան զինուոր, որքան կը խնդրի Ադրբեջանի կառավարութիւնը⁸: Դրան ի պատասխան, ԱՊՀ հաաքական զինուած ուժերի հրամանատար զօրավար Եւգենի Շապրոշնիկովը յայտարարեց, որ «Թուրքիայի ներխու-

⁷ Գ. Արշակեան, *Թուրքիայի ցարածաշրջանային քաղաքականութիւնը Հարաային Կովկասում «Արդարութիւն եւ Զարգացում» Կուսակցութեան իշխանութեան շրջանում*, Երեւան, Արտագերս, 2019, էջ 47:

⁸ Գ. Демоян, *Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Историко-сравнительный анализ*, Авторское издание (Թուրքիան եւ դարաքաղեան հակամարտութիւնը Ի. վերջ-ԻԱ. դարերի սկզբին. պատմահամեմատական վերլուծութիւն), Երեւան, հեղինակային հրատ., 2006, էջ 128:

ժամը կարող է խնայել երրորդ համաշխարհային պատերազմի»⁹: Այս ենթահողում յատկանշական էր ՌԴ պաշտպանության նախարար Պալեյ Գրաչովի և ՌԴ նախագահ Բորիս Ելցինի ներկայացուցիչ Գենադի Բուրբուլիսի այցը ՀՀ, որի նպատակը հայ-թուրքական սահմանը պաշտպանելու և Թուրքիայից եկող վտանգը ետ մղելու Մոսկուայի պատրաստակամության վերահաստատումն էր¹⁰: Այցից յետոյ Անկարան ստիպուեց մեղմացնել թուրքական աշխուժությունը հակամարտության նկատմամբ:

ՌԴ-Թուրքիա աշխարհաքաղաքական մրցակցության տեսանկյունից յատկանշական է Թուրքիայում ՌԴ դեսպան Ալբերտ Չեռնիշեևի 1993ի Ապրիլին թուրքական լրատուամիջոցներին տուած հարցազրույցը, որում նա նշել է՝ «*մանք կարծում են, որ Թուրքիան պէտք է լցնի դադարկությունը, սակայն դադարկություն գոյություն չունի: Ռուսաստանը խորը պատմական, տնտեսական և քաղաքական շահեր ունի տարածքում*»¹¹: Ռուս-թուրքական մրցապայքարը անելի խորացաւ, երբ ՌԴ-ն 1993ին առաջարկեց ԼՂ հակամարտության գոտում տեղակայել իր խաղաղապահները, ինչին անմիջապէս յաջորդեց Թուրքիայի յայտարարութիւնը, որ նման դէպքում Թուրքիան ես կ'ուղարկի իր խաղաղապահներին¹²:

1994 Յունիսին արցախեան հակամարտութիւնում Անկարայի դիրքորոշումները վերստին կոշտացան, երբ Թուրքիայի սպայակոյտի պետ զօրավար Դողան Գիրեշը յայտարարեց, որ ադրբեջանական բանակին աջակցելու համար պատրաստ է թուրքական զօրքեր ուղարկել: ՌԴ պաշտպանութեան նախարար Գրաչովը, իր հերթին, անմիջապէս հակադարձեց՝ նշելով, որ ՌԴ-ն թոյլ չի տայ թուրքական բանակի միջամտութիւնը՝ յաւելելով, որ «*Ռուսաստանն իր սեփական շահերն ունի Ադրբեջանում*»¹³:

Արցախեան հակամարտութիւնում Անկարայի և Մոսկուայի միջեւ մրցակցութիւն կար հակամարտութիւնում որպէս միջնորդ հանդէս գալու հարցով: Թուրքիան աշխուժ քաղաքականութիւն էր վարում արցախեան հակամարտութեան բանակցային գործընթացում ընդգրկուելու համար:

⁹ W. Hale, *Turkey, the Black Sea and Transcaucasia, In Transcaucasia Boundaries*, New York, St. Martin's Press, 1996, էջ 64:

¹⁰ Th.D. Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War*, NYU Press, New York and London, 2003, էջ 203:

¹¹ F. D. Пау, *Политика Турции в Закавказье. Спорные границы на Кавказе*, (Թուրքիայի քաղաքականութիւնը Կովկասում. վիճելի սահմաններ Կովկասում), Մոսկուա, Весь Мир հրատ., 1996:

¹² S.G. Harris, *The Russian Federation and Turkey, Regional Powers Rivalries in the New Eurasia: Russia, Turkey, and Iran*, Routledge, Armonk-London, 1995, էջ 18:

¹³ О. Коджаман, *Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период* (Հարաւային Կովկասը Թուրքիայի և Ռուսաստանի քաղաքականութեան մէջ յետխորհրդային շրջանում), Մոսկուա, 2004, էջ 119-20:

Պարզ է, որ Մոսկոյայի համար դա ընդունելի չէր եւ վերջինիս յաջողուեց զսպել Անկարային եւ վերապահեց նրան միայն երկրորդական դեր¹⁴:

Պատերազմում հայկական կողմի յաղթանակը, ինչպէս նաեւ Մոսկոյայի միջնորդութեամբ 1994ին զինադադարի հաստատումը յանգեցրեցին տարածքում ՌԴի ազդեցութեան ամրապնդմանն ու հեղինակութեան բարձրացմանը: Ռուսական ներկայութեան ամրապնդումը մեծապէս մտահոգում էր թուրքական ռազմական շրջանակներին: Այս առումով յատկանշական է 1994ի կէսերին Թուրքիայի զինեալ ուժերի պետ Գիլտէի յայտարարութիւնը, թէ՛ Կովկասում եւ Ղրիմում իր քաղաքականութեան հետեանքով ՌԴն աւելի մեծ սպառնալիք է Թուրքիայի համար, քան «Սառը պատերազմ»ի ողջ ժամանակում¹⁵:

Արցախեան առաջին պատերազմին զուգահեռ ռուս-թուրքական աշխարհաքաղաքական պայքար էր ընթանում նաեւ արխազական մարտադաշտում, որտեղ եւս Մոսկոյան եւ Անկարան ունէին հակասող շահեր եւ հետաքրքրութիւններ: Իր դիրքի շնորհիւ Արխազիան մշտապէս աշխարհաքաղաքական եւ ռազմավարական մեծ կարեւորութիւն է ներկայացրել Ռուսաստանի համար եւ հենց այստեղ է Մոսկոյան տեղակայել ռուսական ռազմական ստորաբաժանումներ՝ ապահովելով իր ներկայութիւնն ինչպէս տարածաշրջանում, այնպէս էլ Սեւ Ծովում: Յատկանշական է նախապէս Գրաչովի յայտարարութիւնը, որ «Ռուսաստանն Արխազիայում ունի որոշակի ռազմավարական շահեր եւ քայլեր կը ձեռնարկի ապահովելու ռուսական զորքերի ներկայութիւնը, քանի որ հակառակ պարագայում Ռուսաստանը կը կորցնի Սեւ Ծովը»¹⁶: Աւելին, Արխազիան սահմանակից է ՌԴի կազմում գտնուող հիւսիսկովկասեան հանրապետութիւններին, հետեւաբար տարածաշրջանում անկայուն եւ պայթումավտանգ իրավիճակը լուրջ սպառնալիք է ապակայունութեան պատճառ կարող էր հանդիսանալ ՌԴի մաս կազմող տարածքների համար եւս¹⁷:

Պատերազմի սկսուելուն պէս ձեւաւորուել էր կամաւորական հզօր շարժում ՌԴից, մասնատրապէս Հիւսիսային Կովկասից, դէպի Արխազիա: Պատերազմի սկզբում, երբ վրացական բանակը զգալի յաջողութիւններ էր գրանցում, Արխազիայի նախագահ Վլադիսլաւ Արձինբայի արտերկրում ապրող բոլոր արխազներին եւ հիւսիսկովկասեան ժողովուրդներին

¹⁴ Z. Brzezinski, P. Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: Documents, Data, and Analysis*, Routledge, New York, 1997, էջ 145-46:

¹⁵ E. S. Cornell, "Turkey and the Conflict of Nagorno Karabakh: A Delicate Balance," *Middle Eastern Studies*, January 2018:34(1), էջ 51-72:

¹⁶ M. Smith, "Pax Russia's Monroe Doctrine, Whitehall Paper Series," *Royal United Services Institute for Defence Studies*, January 1993, էջ 54:

¹⁷ N. Akaba, "The North Caucasus Factor in the Abkhaz-Georgian Armed Conflict of 1992-1993. The North Caucasus Factor in the Georgian-Abkhaz Conflict Context," *International Alert*, July 2012, էջ 25-32:

դիմանով ձեատրուեց Կովկասի Լեռնական ժողովուրդների Համադաշնությունը¹⁸: Իրավիճակը ծայրաստիճան լարուեց, երբ ՌԴի մաս կազմող հիսխսկովկասեան հանրապետութիւնների առաջնորդները իրենց աջակցութիւնը յայտնեցին համադաշնութեանը, իսկ Բաշկիրիայի իշխանութիւնները պահանջեցին Վրաստանից դուրս բերել զօրքերը Աբխազիայից՝ սպառնալով համարժէք միջոցներ կիրառել¹⁹: Ստեղծուած վտանգատր պայմաններում ՌԴն ստիպուած էր քայլեր ձեռնարկել՝ կանխելու տարածքին սպառնացող ապակայունացման վտանգը: Բացի այդ, վրաց-աբխազական հակամարտութիւնում Մոսկուան, ձգտելով ստանձնել միջնորդի դեր, նպատակ ուներ իր ներկայութիւնը մեծացնելու Վրաստանում եւ բացառելու այլ դերակատարների մուտքը տարածաշրջան:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա պաշտօնական Անկարան վրաց-աբխազական պատերազմի սկզբում բաական բարդ կացութեան մէջ էր յայտնուեց: Մի կողմից՝ Թուրքիայի համար կարեւոր էր Վրաստանը, որը առանցքային պետութիւն էր Անկարայի տարածաշրջանային քաղաքականութեան մէջ եւ կապող օղակ՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ: Միւս կողմից՝ Թուրքիայում ապրում է շուրջ 500,000 էթնիկ աբխազ²⁰, իսկ վրաց-աբխազական պատերազմի սկսուելուն պէս՝ Թուրքիայում աշխուժացաւ հիսխսկովկասեան, մասնատրապէս աբխազական եւ չերքէզական համայնքների գործունէութիւնը, ինչի արդիւնքում թուրքական հասարակութիւնը վրաց-աբխազական հակամարտութիւնում ունեցաւ աբխազամէտ դիրքորոշում: Աբխազական համայնքի լոբբիստական աշխատանքի շնորհիւ Անկարան հակամարտութեան սկզբում հանդէս չէր գալիս վրացամէտ քաղաքականութեամբ, ինչի արդիւնքում թուրք-վրացական յարաբերութիւններում լարուածութիւն գրանցուեց²¹:

Այնուամենայնիւ, ՌԴի տարածաշրջանում ազդեցութեան վերականգնման յաջողութիւնների յենքին, Թուրքիան 1993-94ից սկսեց բարելաւել իր քաղաքականութիւնը Վրաստանի հանդէպ՝ սատարելով նրա տարածքային ամբողջականութեանը: Սա պայմանատրուած էր նաեւ այն հանգամանքով, որ Թուրքիան մի շարք նախագծեր ուներ Վրաստանի հետ՝

¹⁸ O. Cem, "The Unity of the North Caucasian Peoples: The Case of the Confederation of the Peoples of the Caucasus," *Perceptions: Journal of International Affairs*, June-August 1999:4, էջ 126-48:

¹⁹ Արշակեան, էջ 51:

²⁰ E. R. Eissler, "Can Turkey De-isolate Abkhazia?," *Turkish Policy Quarterly*, Fall 2013:12(3), էջ 125-35:

²¹ M. Çelikpala, "From Immigrants to Diaspora: Influence of the North Caucasian Diaspora in Turkey," *Middle Eastern Studies*, May 2016:42(3), էջ 423-46:

կասպեան աազանի ուժանիւթի աղբիւրների տեղափոխման երթուղիների խնդրով²²:

Մոսկուային յաջողութեց աշխուժորէն ներգրատուել հակամարտութեան կարգաւորման գործընթացում եւ իր միջնորդութեամբ արխագական կողմի յաղթանակի յենքին, 1994ին Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ ստորագրութեց հրադադարի համաձայնագիր: Այսպիսով, Մոսկուան այս անգամ եւս, ամրապնդեց իր ներկայութիւնը Վրաստանում եւ ռուսական ուժերի ներկայութեամբ Աբխազիայում - ԱՊՀ խաղաղապահ ուժերի շրջանակներում - Կրեմլինին յաջողութեց կասեցնել Անկարայի աշխուժ քաղաքական եւ ռազմական ներթափանցումը տարածաշրջան: Անելին, Մոսկուային յաջողութեց ռուսական ռազմախարսիսիներ հիմնել թէ՛ Վրաստանում եւ թէ՛ Հայաստանում:

Տարածաշրջանում ՌԴի գրանցած յաջողութիւնները մտահոգութեան լուրջ աղիթ էին հանդիսանում Թուրքիայի համար: Ուշագրաւ է Թուրքիայի զինուած ուժերի սպայակոյտի նախկին պետ Նեջիփ Թորումթայի յայտարարութիւնը 1996ին, որով նա մեղադրում էր ՌԴին՝ Հարաային Կովկասում իր զինուած ուժերի ներկայութեան ուժեղացման մէջ եւ պնդում, որ Հարաային Կովկասում բացառուած չեն ռազմական ոլորտի «նոր զարգացումներ» եւ «նոր խնդիրների առաջացում»²³:

ՌՌՍ-ԹՌՒՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ. ՌՌՍ-ՎՐԱՅԱԿԱՆ «ՀՆԳՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ»

Հարաային Կովկասում աշխարհաքաղաքական վերադաստորումների յաջորդ փուլը տեղի ունեցաւ 2008ին, որի առանցքային իրադարձութիւնը ռուս-վրացական օգոստոսեան պատերազմն էր: Այն ազդարարեց յետխորհրդային տարածքում ռուս-ամերիկեան մրցակցութեան թեակկոխումը կոշտ բախումների փուլ²⁴:

Ռուս-վրացական պատերազմի արդիւքնում Մոսկուան որոշակի յաջողութիւններ արձանագրեց տարածաշրջանում իր գերակայութիւնը հաստատելու հարցում: Կրեմլը վերստին աշխուժացրեց իր ռեքակաւտարութիւնը տարածաշրջանային հակամարտութիւններում, սակայն ի տարբերութիւն 1990ականներին, ՌԴն, ուղղակի ներգրատուելով պատերազմում, վերածուեց ոչ թէ հակամարտութեան կարգաւորման միջնորդի, այլ դար-

²² B. Aras, P. Akpinar, "The Relations between Turkey and the Caucasus," *Perceptions*, Autumn 2011: XVI(3), էջ 53-68:

²³ N. Torumtay, *Deg'is, en Stratejilerin Odag'ında Tu'rkiye*, Istanbul, AD Yayincilik, 1996, էջ 25:

²⁴ Տ. Թորոսեան, *Լեւոնային Ղարաբաղ եւ Կոտլօ. հակամարտութիւններ, բանակցութիւններ, աշխարհաքաղաքականութիւն*, Երեւան, Տիգրան Մեծ, 2012, էջ 53-78:

ծառ հակամարտության ուղղակի մասնակից: Հնգօրեայ պատերազմի արդիւնքում Մոսկուան, օգտագործելով յարմար առիթը, ճանաչեց Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի Հանրապետութիւնների անկախութիւնը եւ ամրապնդեց իր ռազմական ներկայութիւնը այդ տարածքներում:

Չնայած Թուրքիան Հարաւային Կովկասում 2008ին ընթացող աշխարհաքաղաքական մրցակցութեան մէջ էական դերակատարութիւն չի ունեցել՝ այնուամէնայնիս փորձել է օգուտներ քաղել ստեղծուած նոր իրավիճակից: Անկարայում համարում էին, որ Թուրքիան ուներ բազմակողմ արտաքին քաղաքականութիւն վարելու բոլոր հնարատրութիւնները²⁵ եւ կարիքն ուներ որդեգրելու անցի հասասարակչուած դիրքորոշում՝ ԱՄՆին անվերապահ աջակցելու փոխարէն²⁶: Այդ է պատճառը, որ ռուս-վրացական պատերազմից յետոյ շրջադարձային փոփոխութիւններ տեղի ունեցան ռուս-թուրքական յարաբերութիւններում: Անցին, Թուրքիան հանդէս եկաւ մի շարք ռուսամէտ նախապատուութիւններով:

Պատերազմից յետոյ Անկարան չհամաձայնեց ամերիկեան կողմի պահանջին՝ վերանայելու Մոնթրէոյի պայմանագրի դրոյթները, փաստացի Անկարան աջակցեց ՌԴին՝ թոյլ չտալով թուրքական ներուցներով ամերիկեան ռազմանաւերի մուտքը Սեւ Ծով²⁷, ինչը խիստ քննադատութեան առիթ տուեց Թուրքիայի արեւմտեան գործընկերներին: Ըստ Անկարայի՝ Մոնթրէոյի դրոյթների փոփոխութիւնը խնհրայարոյց էր եւ անընդունելի թուրքական կողմի համար²⁸: Չնայած որոշ թուրք մասնագէտներ այդ քայլը ներկայացնում էին որպէս խուսափում ՌԴի հետ առճակատմից²⁹ ակնյայտ էր, որ այն դրական քայլ էր Կրեմլի նկատմամբ³⁰:

Այնուհետեւ, Թուրքիան հանդէս եկաւ մէկ այլ հետաքրքիր քայլով: Թուրքիայի վարչապետ Ռեջեօ Թայիփ Էրդողանը հնգօրեայ պատերազմից անմիջապէս յետոյ՝ Օգոստոսի 12ին, առաջարկեց ստեղծել «3+2» ձեւաչափով «Կովկասի կայունութեան եւ համագործակցութեան հարթակ»ը, որում կ'ընդգրկուէին հարակովկասեան երեք պետութիւններն, նաեւ՝

²⁵ A. Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul, Küre Yayinlari, 2001, էջ 119:

²⁶ A. Davutoğlu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007," *Insight Turkey*, 2008:10(1), էջ 77-96:

²⁷ A. Weiss, Y. Zabanova, "Georgia and Abkhazia Caught between Turkey and Russia," *SWP Comments 54: German Institute for International and Security Affairs*, December 2016, էջ 2-3:

²⁸ Z. Öniş, S. Yılmaz, "Turkey and Russia in a Shifting Global Order: Cooperation, Conflict and Asymmetric Interdependence in a Turbulent Region," *Third World Quarterly*, 2016:37(1), էջ 71-95:

²⁹ Z. Özel, S. Yılmaz, "Turkish-American Relations for a New Era: A Turkish Perspective," TÜSİAD Report, İstanbul, April 2009, էջ 73:

³⁰ Öniş, Yılmaz:

Թուրքիան եւ ՌԴ-ն³¹: Հարթակի սկզբնական տարբերակում ակնկալում էր նաեւ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի մասնակցութիւնը³², սակայն յետագայում դրանք չընդգրկուեցին նախագծում:

Հարթակի միջոցով Թուրքիան նպատակ ունէր վերահաստատելու իր տարածաշրջանային դերակատար լինելու ձգտումը եւ պատերազմով պայմանատրուած աշխարհաքաղաքական փոփոխութիւնները օգտագործել իր օգտին: Այս տեսանկիւնից Անկարայի համար կարեւոր էր սահմանափակելու ԱՄՆ-ի ներկայութիւնը տարածաշրջանում, քանի որ Թուրքիայի գլխատըր հովանատրի աշխուժացման պայմաններում անխուսափելիօրէն կը նուազէր վերջինիս դերն ու նշանակութիւնը տարածաշրջանում: Չնայած ՌԴ-ի դրական արձագանգի՝ Մոսկուայի համար նման գործակցութեան ձեւաչափը անթոյլատրելի էր ռազմավարական տեսանկիւնից, քանի որ այն ենթադրում էր Թուրքիայի դիրքերի ամրապնդում տարածքում: Իհարկէ, այս ձեւաչափով համագործակցութիւնը Հարաային Կովկասում անիրատեսական էր՝ հաշուի առնելով տարածքի պետութիւնների միջեւ եղած քաղաքական բազմաթիւ խնդիրները, եւ այդ պատճառով այն իրականութիւն չդարձաւ:

Վերունշեալ իրադարձութիւններից յետոյ Մոսկուայի ու Անկարայի յարաբերութիւններում արձանագրուեց կտրուկ մերձեցում: Երկկողմ յարաբերութիւնների աշխուժացման մասին են վկայում բարձր մակարդակի հանդիպումների յաճախականութիւնը, առետրատնտեսական յարաբերութիւնների չորս տասնեակից անէի պայմանագրերի կնքումը³³ եւ ուժանիւթի ոլորտում գործակցութեան նոր որակի ապահովումը: Այս առումով առանցքային են յատկապէս Թուրքիայում առաջին ատոմակայանի («Աքքոյոս» ԱԷԿ), Սամսուն-Ջէիհան նաթամոտի եւ առանցքային նշանակութիւն ունեցող «Հարաային հոսք»ի կառուցման նախագծերի³⁴ համատեղ իրագործման վերաբերեալ պայմանատրուածութիւնները: Նման ուժանիւթային գործարքները նպաստեցին ուժանիւթի երկկողմ գործակցութեան ամրապնդմանը, որը վերածուեց աշխարհառազմավարական գործօնի՝

³¹ D. Devrim, E. Schulz, "The Caucasus: Which Role for Turkey in the European Neighbourhood?" *Insight Turkey*, 2009:11(3), էջ 177-93:

³² C. K. J. Daly, "Turkey and the Problems with the BTC," *Eurasia Daily Monitor*, Vol. 5, № 155, available at: <https://jamestown.org/program/turkey-and-the-problems-with-the-btc/>:

³³ F. Özbay, "The Relations between Turkey and Russia in the 2000s," *Perceptions: Journal of International Affairs*, Autumn 2011:XVI(3), էջ 777. նաեւ՝ O. Kolobov, A. Kornilov, "Middle East Policy of Russia Under President Medvedev: Strategies, Institutes, Faces," *Bilge Strateji*, Bahar 2011:2(4), էջ 30:

³⁴ E. Erşen, "Turkey and Russia: An Emerging 'Strategic Axis' in Eurasia," *EurOrient*, January 2011:35-36, էջ 263-82:

կայունացնող դերակատարությունն են նաև անալոլ երկկողմ յարաբերությունների մերձեցման գործում:

Թուրքիայի ուսամէտ վերոնշեալ քայլերը պայամանարուած էին նոր աշխարհաքաղաքական իրողութիւնների հետ: Բանն այն է, որ ԻԱ դարակգբին Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ եական փոփոխութիւններ էին տեղի ունեցել, ինչը պայամանարուած էր էրդողանի գլխատարած Արդարութիւն եւ Զարգացում Կուակցութեան իշխանութեան անցնելու հետ: Թուրքիայի արտաքին քաղաքականութեան հիմքում առաջ քաշուեց «ուզմավարական խորութիւն» վարդապետութիւնը, որը շրջանատութեան մէջ էր դրուել յետագայում արտաքին գործերի նախարարի եւ վարչապետ Ահմէդ Դատութօղլուի կողմից դեռ 2001ին: Վարդապետութեան հիմքում ընկած էր «նրօսմանականութեան» գաղափարախօսութիւնը³⁵ չնայած որ սկզբնական շրջանում Դատութօղլուն չէր ընդունում այդ արտայայտութեան օգտագործումը՝ Թուրքիայի քաղաքականութեան քնութագրման նպատակով:

«Ռազմավարական խորութեան» վարդապետութեան համաձայն՝ իւրաքանչիւր պետութեան դերն ու նշանակութիւնը որոշում է նրա աշխարհագրական դիրքով եւ պատմական անցեալի խորութեամբ³⁶: Ըստ Դատութօղլուի՝ այս տեսանկիւնից Թուրքիան բաականին լաւ դիրքերում է գտնում: Նախ՝ այն ունի հիանալի աշխարհագրական դիրք, գտնում է տարբեր տարածաշրջանների եւ քաղաքակրթութիւնների խաչմերուկում եւ կամուրջ է հանդիսանում Եւրոպայի եւ Ասիայի միջեւ: Ինչ վերաբերում է պատմական անցեալին, պա, լինելով Օսմանեան Կայսրութեան իրաալաջորդը, Թուրքիան կարող է դառնալ տարածաշրջանում կենտրոնական ուժ³⁷: Որդեգրելով արտաքին քաղաքականութեան այս վարդապետութիւնը՝ Թուրքիան նպատակ ունէր դառնալու միջազգային յարաբերութիւնների կարեւոր *սուբեկտի*՝ վերածուելով համաշխարհային դերակատարի³⁸: Միջազգային յարաբերութիւններում կարեւոր *սուբեկտ* վերածուելու գործում Թուրքիայի համար անհրաժեշտ էր ուզմավարական ինքնու-

³⁵ Նրօսմանականութիւնը հիմնուած է «Մեծ Թուրքիայի» վերածննդի գաղափարախօսութեան վրայ, ինչն ենթարդում է Օսմանեան Կայսրութեան ժառանգութեան դասական եւ քաղաքակրթական մողէլի վերականգնում՝ տնտեսական, ուզմական եւ քաղաքական ուժի միջոցով (A. Sözen, "A Paradigm Shift in Turkish Foreign Policy: Transition and Challenges," *Turkish Studies*, 2010:11(1), էջ 103-23. նաև՝ H. Mandeville, "Turkey – Neo-Ottomanism. Islam as Statecraft: Turkey Cast the Diyanet," *Foreign Affairs*, 2015:17, էջ 8-15:

³⁶ Davutoğlu, *Stratejik*, էջ 118:

³⁷ Նոյն, էջ 119:

³⁸ J. Walker, "Turkey's Imperial Legacy: Understanding Contemporary Turkey through its Ottoman Past," *Perspective on Global Development and Technology*, April 2009:8(2-3), էջ 494-508:

րոյնութեան ձեռքբերումը, ինչը հնարատր էր հարեանների հետ հաասարակչիո յարաբերութիւններ հաստատելով եւ բազմակողմ արտաքին քաղաքականութիւն իրականացնելով: Ոստի, Թուրքիայի համար կարեւոր էր թէ՛ իր դաշնակից ԱՄՆի հետ յարաբերութիւնների զարգացումը, թէ՛ տարածաշրջանում կշիռ ունեցող ՌԴի հետ գործընկերային յարաբերութիւնների հաստատումը:

Ռուս-թուրքական յարաբերութիւնների մերձեցումը բխում էր ՌԴ ազգային եւ պետական շահերից եւ: Դարասկզբին ՌԴին յաջողութեց յաղթահարել յետխորհրդային փոխակերպումի գործընթացով պայմանատրուած ներքին մարտահրաւիրները, դուրս գալ տնտեսական ճգնաժամից եւ քայլեր ձեռնարկել աշխարհում ինքնուրոյն քաղաքական բեւեռ դառնալու ուղղութեամբ: Այս ելթահողում Կրեմլի համար կարեւոր էր Անկարայի հետ յարաբերութիւնների կայունացումը:

Այնուամէնայնիւ, երկու երկրների միջեւ առկայ էին բազմաթիւ խնդիրներ. ՌԴի ու Թուրքիայի միջեւ մի շարք հակասութիւններ էին առաջացել՝ ուժանիթի ոլորտի առնչութեամբ: Մոսկուան ձգտում էր մեծացնել Թուրքիայի կախուածութիւնը՝ ռուսական գազից, դրանով իսկ կանխելով ՌԴն շրջանցող ուժանիթի աղբիւրների խողովակաշարերի նախագծերը: Իսկ Անկարան, օգտագործելով ՌԴի եւ ԵՄի միջեւ կարուածութիւնը, քայլեր էր ձեռնարկում այլազանեցնելու ուժանիթի պաշարների իր մատակարարներին, ինչպէս նաեւ դառնալու ուժանիթի աղբիւրների միջանցիկ կենտրոն: Հետեւաբար, Անկարան աշխուժութեւն աջակցում էր կասպեան ուժանիթի աղբիւրների դէպի Եւրոպա տեղափոխող եւ ՌԴն շրջանցող խողովակաշարերի կառուցման նախագծերը, մասնատրապէս «Նաբուկո» գազատարի գաղափարը³⁹:

Թուրքիային յաջողութեց մի կողմից՝ Մոսկուայի հետ յարաբերութիւնների բարելաման յենքին քննարկել «Նաբուկո»ի այլընտրանք՝ ռուսական «Հարաւային հոսք» նախագծին Թուրքիայի միանալու հարցը, միա կողմից՝ «Նաբուկո»ի կառուցման միջկառավարական համաձայնագիրը ստորագրութեց հենց Անկարայում 2009ին: Յետագայում, Բրիւսէլի ակնյայտ ճնշման պայմաններում՝ «Նաբուկո»ի նախագծի ռուսական այլընտրանքի՝ «Հարաւային հոսք» ծրագրի մաս կազմող Բուլղարիան, դուրս եկաւ այս

³⁹ J. M. Roberts, "The Black Sea and European Energy Security," *Southeast European and Black Sea Studies*, 2006:6(2), էջ 207-23. նաեւ՝ S. Kardas, "Nabucco Intergovernmental Agreement Signed in Ankara," *Eurasia Daily Monitor*, Vol. 6, № 134 (http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Btt_news%5D=35262&no_cache=1,14.07.2009). նաեւ՝ D. Freifeld, "The Great Pipeline Opera," *Foreign Policy*, September 2009:174, էջ 120-27:

ծրագրից՝ փաստացի տապալելով այն⁴⁰: Շուտով, Մոսկուան ձեռափոխեց գազատարի երթուղին և յայտարարեց «Թուրքական հոսք» գազատարի կառուցման մասին:

ՌԴ-Թուրքիա երկկողմ յարաբերություններում յաջորդ առանցքային իրադարձությունը եղաւ ուկրաինական ճգնաժամը, որը յանգեցրեց Ղրիմի միացմանը Ռուսաստանին և զինուած բախումների՝ Դոնբասի և Լուգանսկի շրջաններում, ինչի արդիւնքում Մ. Նահանգները լուրջ պատժամիջոցներ կիրառեցին ՌԴի նկատմամբ, որոնց միացաւ նաեւ ԵՄ⁴¹: Ղրիմի միացումով ամրապնդուեցին ռուսական դիրքերը Սև Ծովում, որը համարում է նաեւ Թուրքիայի շահերի գոտի: Ճիշտ է՝ Անկարան յայտարարեց, որ պաշտպանում է Ուկրաինայի տարածքային ամբողջականութիւնը, սակայն Մոսկուայի նկատմամբ սուր քննադատութեամբ հանդէս չէկաւ⁴²: Ըստ Սելահաթին Դեմիրթաշի՝ «Թուրքիան չի վարանգի Ռուսաստանի հետ իր յարաբերութիւնները՝ Ղրիմի համար»⁴³: Կարեւորելով Մոսկուայի հետ յարաբերութիւնները՝ Անկարան նոյնիսկ չմիացաւ ՌԴի դէմ կիրառած արեւմտեան պատժամիջոցներին: Աւելին, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլուժ Չաուշօղլուն նշել էր, որ Թուրքիան չի միանալու ՌԴի դէմ ԵՄ պատժամիջոցներին՝ յայտարարելով, որ Մոսկուան Թուրքիայի կարեւոր առետրային գործընկեր է: Բանն այն է, որ ԵՄ-ՌԴ-ԱՄՆ յարաբերութիւնների յարուածութեամբ պայմանատրուած բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում Անկարան փորձում էր ճկուն քաղաքականութիւն իրականացնելով, օգուտներ քաղել և նոր հնարաարութիւններ ստեղծել իր դիրքերի ամրապնդման ուղղութեամբ:

Ռուս-թուրքական յարաբերութիւններում միա կարեւոր մարտահրաւէրը սիրիական թնջուկն է: Սիրիական ճգնաժամի կարեւորութիւնը Անկարայի համար պայմանատրուած է միջանի գործօններով: Այն մի կողմից նոր հնարատրութիւններ էր առաջացրել Թուրքիայի համար մերձարեւելեան տարածաշրջանում դիրքերի ամրապնդման, միա կողմից էլ մի շարք մարտահրաւէրներ է ի յայտ բերել: Թուրքիան մտահոգուած էր սիրիական ճգնաժամի հետեանքով քրդական հիմնահարցի աշխուժացմամբ, ինչն Անկարայի համար համարում է ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին լուրջ սպառնալիք: Սիրիայի հիախում քրդական ինքնորոշման հնարատր

⁴⁰ J. Sharples, "South Stream - as Gazprom Abandons the Project and Announces a New Gas Pipeline to Turkey," *European Union Foreign Affairs Journal*, January 2015:1, էջ 41-55:

⁴¹ R. Nelson, "U.S. Sanctions and Russia's Economy," *Congressional Research Service Report*, February 2017, էջ 1:

⁴² S. Demir, *Turkey's Foreign Policy and Security Perspectives in the 21st Century: Prospects and Challenges*, Brown Walker Press, Florida, 2016, էջ 169:

⁴³ S. Demirtas, "Turkiye, Kirim'da Rusya ile Iliskilerini Riske Atmayacak," *BBC Turkce*, (www.bbc.co.uk/turkce/haberler/2014/03/140315_kirim_turkiye.shtml 15.03.2014):

իրաքանչիւր զարգացում - Իրաքի Հիսիսային Քրդստանի օրինակով - կարող է լրջօրէն վտանգել Թուրքիայի տարածքային անբոջականութիւնը: Ուստի, Անկարան ձգտում է կանխել քրդական ինքնորոշման ցանկացած դրսեւորում⁴⁴: Սիրիական հակամարտութիւնում Անկարան հակաասադեան քաղաքականութիւն էր վարում՝ լրջօրէն ջնակցելով Ասադի դէմ պայքարող ուժերին, այդ թւում «Իսլամական Պետութիւն» ահաբեկչական խմբաւորմանը, ինչպէս նաեւ դիւանագիտական ու քարոզչական պայքար մղելով պաշտօնական Գամասկոսի դէմ⁴⁵:

Ինչ վերաբերում է ՌԴին, ապա Սիրիան Ռուսաստանի կարեւոր դաշնակիցն է տարածաշրջանում (ԽՍՀՄ փլուզումից յետոյ Տարսուսում 1971ին հիմնուած ռազմածովային կայանը ՌԴի կարեւոր ծովային յենակէտն է Միջերկրականում եւ Մերձատր Արեւելքում): Խ. Միոսթեան փլուզումից յետոյ Սիրիան առաջին դէպքն է, երբ Մոսկուան աշխուժ դերակատարութիւն ունի իր սահմաններից հեռու ծաւալուող աշխարհաքաղաքական նշանակութիւն ունեցող գործընթացում՝ զինուած ուժերի կիրառութեամբ: Մոսկուայի հետաքրքրութիւնները Սիրիայում եւ առհասարակ Մերձատր Արեւելքում ռազմավարական բնոյթի են, քանի որ անկախութիւնն այդ տարածաշրջանում սպառնալիք կարող է լինել ՌԴի համար ռազմավարական եւ անվտանգային ոչ-պակաս կարեւոր մէկ այլ տարածքի՝ Հարաւային Կովկասի համար, որտեղից էլ այդ սպառնալիքը կարող է հեշտութեամբ ներթափանցել Հիսիսային Կովկաս⁴⁶, որը համարում է ՌԴի իսլամական արմատականութեան թէժ կէտերից մէկը: Ուստի եւ, որդեգրած դիրքորոշման ու իսլամական ծայրայեղական գաղափարներ ունեցող ահաբեկչական խմբաւորումների դէմ պայքարով ՌԴն փորձում էր կասեցնել ԻՊի գաղափարախօսութեան հնարատր տարածումն ինչպէս իր ազդեցութեան գօտիներում, այնպէս էլ երկրի ներսում:

Բացի այդ, ՌԴին նաեւ անհանգստացնում էր սիրիական ճգնաժամում այլ դերակատարների աշխուժ ներգրաւուածութիւնն ու ազդեցութեան հաստատման հնարատր փորձերը: Հետեւաբար, սիրիական մարտադաշտում յաջողութիւնը Մոսկուայի համար ունի բացառիկ նշանակութիւն մի-

⁴⁴ С. Маркедонов, “Российско-турецкие отношения и проблемы безопасности Кавказского региона.” (Ռուս-թուրքական յարաբերութիւնները եւ կովկասեան տարածաշրջանի անվտանգութեան խնդիրները), <http://www.globalaffairs.ru/valday/Rossiiskoturetskie-otnosheniya-i-problemy-bezopasnosti-Kavkazskogo-regiona-18188> (30.05.2016):

⁴⁵ P. S. Brooker, “Russia vs. Turkey: Competition for Influence,” 12.12.2015, <http://www.valuewalk.com/2015/12/russia-vs-turkey-competition-for-influence/>.

⁴⁶ С. Багдасарян, С. Петрова, “Геополитические позиции России и США в сирийском конфликте, Государственное и муниципальное управление.” (Ռուսաստանի եւ ԱՄՆի դիրքորոշումները սիրիական հակամարտութիւնում, պետական եւ համայնքային կառավարում), *Ученые записки СКАГС*, 2018:2, էջ 110-15:

ջազգային ասպարեզում գլխաոր դերակատարներից մեկը լինելու ձգտումների տեսակէտից: Հակամարտութեան հենց սկզբից Մոսկոան աշխուժօրէն աստարում էր Ասադի կտաակարութեանը՝ համարելով օրիական իշխանութիւն:

Եթէ սիրիական ճգնաժամի սկզբնական փուլում թուրք-ռուսական բարձր մակարդակի երկկողմ յարաբերութիւնները հնարատրութիւն էին տալիս կողմերին համադրել տնտեսական յարաբերութիւնները եւ աշխարհաքաղաքական մրցակցութիւնը՝ նուազեցնելով քաղաքական հարցերի շուրջ ունեցած տարակարծութիւնների ազդեցութիւնը բազմողորտ գործակցութեան վրայ⁴⁷, ապա 2015ի վերջից, երբ պաշտօնական Դամասկոսի խնդրանքի համաձայն՝ Մոսկոան իր ռազմօդային ուժերի կիրառամամբ աշխուժօրէն ներգրաուեց հակամարտութեանը, ռուս-թուրքական յարաբերութիւնները կտրուկ փոփոխութեան ենթարկուեցին: ՌԴի աշխուժ միջամտութեան շնորհիւ փոխուեց ուժերի յարաբերակցութիւնը եւ ամրապնդուեցին Ասադի դիրքերը, որոնք բաականին տկարացել էին մինչ այդ:

ՌԴի աշխուժութիւնը սիրիական հակամարտութիւնում տարակարծութիւնների լուրջ առիթ դարձաւ ՌԴի եւ Թուրքիայի միջեւ, իսկ 2015 Նոյեմբերին թուրքական օդուժի կողմից ռուսական ումբակոծիչը խոցելուց յետոյ երկու երկրների յարաբերութիւնները լարուեցին՝ յանգեցնելով քաղաքական 7ամսեայ ճգնաժամի: Ծգնաժամից յետոյ Մոսկոայի եւ Անկարայի միջեւ յարաբերութիւնների կարգատրման արդիւնքում 2016ի վերջից ՌԴն ու Թուրքիան սկսեցին գործակցել Սիրիայում՝ ռազմական գործողութիւնների դադարեցման ռեժիմի վերահսկման գործընթացում, իսկ 2017 Յունուարին ՌԴի ռազմօդային ուժերը Թուրքիայի օդուժի հետ սկսեց հարուածներ հասցնել Սիրիայի ահաբեկչական խմբատրումների դիրքերին, որով Թուրքիան հնարատրութիւն ստացաւ Սիրիայում իրականացնել «Եփրատի վահան», «Ձիթենու ճիւղ» ռազմական գործողութիւնները⁴⁸, ինչպէս նաեւ ՌԴի ու Իրանի հետ մասնակցել սիրիական խնդրի կարգատրման Աստանայի գործընթացին, որը սկսուել էր 2017 Յունուարին⁴⁹:

Ռուս-թուրքական յարաբերութիւնների կարգատրման առիթ հանդիսացաւ 2016ի Յուլիսի 15ին Թուրքիայում իրականացրած ռազմական յեղա-

⁴⁷ Öniş, Yılmaz:

⁴⁸ M. Yeşiltaş, M. Seren, N. Özçelik, "Operation Euphrates Shield Implementation and Lessons Learned," *SETA: Foundation for Political, Economic and Social Research*, İstanbul, 2017, էջ 1-57. նաեւ՝ C. Kasapoğlu, S. Ülgen, "Operation Olive Branch: A Political-Military Assessment," *Edam: Centre for Economics and Foreign Policy Studies, Foreign Policy & Security*, 2018/2, էջ 1-16:

⁴⁹ K. Mezra, A. Varvelli, "MENA Region: A Great Power Competition," *ISPI and Atlantic Council*, 2019, էջ 56-57:

շրջման փորձը⁵⁰: Արեւմուտքը խստորէն դատապարտեց Թուրքիայի իշխանութիւններին երկրի ներսում կոշտ գործողութիւններ իրականացնելու համար⁵¹, իսկ Վլադիմիր Պուտինը առաջինն էր, ով հրապարակայնօրէն իր աջակցութիւնը յայտնեց Էրդողանին⁵²: Եւ պատահական չէ, որ յեղաշրջման ծախսողոճած փորձից յետոյ Թուրքիայի նախագահին առաջինն այցելեց ոչ թէ ՆԱՏՕի անդամ երկրներից մէկն, այլ ՌԴ:

Այս ժամանակաշրջանում վերականգնուեցին երկկողմ յարաբերութիւնները եւ նոր ընթացք ստացաւ երկկողմ առետրատնտեսական, ուժանիւթի, արդիւնաբերական եւ ռազմարհեստագիտական համագործակցութիւնը: Շօշափելի քայլեր ձեռնարկուեցին «Թուրքական հոսք» խողովակաշարի եւ «Աքքոյոս» ատոմակայանի շինարարական նախագծերի վերաբերեալ, որոնց շուրջ գործակցութիւնը ստեղծուել էր ճգնաժամի հետեւանքով: Այս գործարքները ռազմավարական հսկայական նշանակութիւն են ներկայացնում թէ՛ Մոսկուայի, թէ՛ Անկարայի համար:

«Թուրքական հոսք»ի կառուցման վերաբերեալ միջկառավարական համաձայնագիրը ստորագրուեց 2016 Հոկտեմբերին՝ վերջնական շահագործման յանձնուելով 2020ի Յունուարին⁵³: Երկարաժամկէտ կարուածքով «Թուրքական հոսք»ի կառուցումը նպաստում է Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը համաշխարհային ուժանիւթի շուկայում, բարձրացնում թուրքական կախումազրկութիւնը ռուսական բնական գազից: Անելին, ռուսական կողմի համար «Թուրքական հոսք»ը այլընտրանք էր գազի արտահանման ուղիբխնական ուղուն: Նպաստաւոր իրավիճակ է ստեղծուել նաեւ Անկարայի համար: Նախ՝ ռուսական գազի միջոցով Անկարան բաարարելու է ուժանիւթի հսկայական պահանջարկը, բացի դրանից՝ այն ամրապնդում է թուրքական դիրքերը ուժանիւթերի տեղափոխման խոշոր հանգոյց դառնալու գործում: Թուրքիայում առաջին ատոմակայանի կառուցումը եւս թուրք-ռուսական գործակցութեան առանցքային բաղադրիչներից է հարատւում: 20 մլրդ. դոլար արժողութեամբ նախագծով նախա-

⁵⁰ B. Coskun, "Turkey's Relations with Russia after the Failed Coup: A Friend in Need or a Friend Indeed?," *New Middle Eastern Studies*, March 2019:9(1), էջ 36-52:

⁵¹ H. Bodkin, D. Millward, J. Ensor, J. Rothwell, "Turkey Coup Attempt: Worldleaders Warn President Erdogan not to use Uprising as Excuse for Crackdown as more than 6,000 Arrested," *The Telegraph*, 18.07.2016 (<https://www.telegraph.co.uk/news/2016/07/17/turkey-coup-plot-president-erdoganrounds-up-thousands-of-soldie/>):

⁵² M. Çelikpala, E. Erşen, "Turkey's Black Sea Predicament: Challenging or Accommodating Russia?," *Perceptions*, Summer 2018:23(2), էջ 72-92. նաեւ՝ S. Özertem, "Turkey and Russia: A Fragile Friendship," *Turkish Policy Quarterly*, 2017:15(4), էջ 121-34:

⁵³ Y. Furuncu, "The New Dimension of The Turkey-Russia Energy Cooperation Turkstream," *SETA: Analysis*, № 57, 2020, էջ 1:

տեսում է կառուցել ատոմակայան 1200 մեգաատ հզորութեամբ 4 ռեակտորով⁵⁴, որոնցից երրորդի շինարարությունը մեկնարկել է 2021ին⁵⁵:

Յարաբերությունների կարգադրման գործում առանցքային նշանակություն ունեցաւ ռուսական C-400 հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) համակարգերի ձեռքբերումը Թուրքիայի կողմից 2017ին, ինչը լուրջ ճգնաժամ առաջացրեց ԱՄՆի եւ ՆԱՏՕի հետ Թուրքիայի յարաբերություններում: Չնայած ԱՄՆի ճնշումներին՝ Էրդողանը չիրաժարուեց ռուսական ՀՕՊ համակարգերի գործարքից, անլին, նաեւ ցանկութիւն էր յայտնել խորացնել ՌԴի հետ գործակցութիւնը ռազմարհեստագիտական ոլորտում: Գործարքի առանձնայատկութիւնը այն է, որ այն թուրք-ամերիկեան յարաբերություններում առաջացած քաղաքական դատարկութեան⁵⁶ արդիւնք է: Օգտուելով թուրք-ամերիկեան լարուածութիւնից եւ Անկարայի յարաբերական դիւանագիտական մեկուսացումից՝ ՌԴին յաջողուեց լցնել թուրք-ամերիկեան յարաբերութիւններում գոյութիւն ունեցող քաղաքական պարապը եւ քայլեր ձեռնարկել Թուրքիային Արեւմուտքից հեռացնելու համար: Բացի այդ, ՆԱՏՕի անդամին գէնք վաճառելը հիանալի հնարարութիւն էր ՌԴի համար՝ խարխլելու ՆԱՏՕի հեղինակութիւնը:

Յարաբերությունների նման բարելամանը նպաստեց այն, որ այդ շրջանում թե՛ Թուրքիան, եւ թե՛ ՌԴ-ն գտնուեցին քաղաքական «մեկուսացման» մէջ: Կողմերի համար չկար միջազգային գործակցութեան ընտրութեան լայն հնարաւորութիւն, ուստի կարեւոր էր երկկողմ յարաբերութիւնների կարգաւորումն ու ամրապնդումը: Թուրքիայում ներքին քաղաքական եւ տնտեսական ծանր իրավիճակը, ՌԴի հետ ուժանիւթի գործակցութեան պատճառով Արեւմուտքի հետ յարաբերությունների վատթարացումը, «նորսմանականութեան» քաղաքականութեան ժամանակատրապէս նահանջումը դժուարին կացութեան մէջ էին դրել Թուրքիային: Անկարան ստեղծուած իրավիճակում ստիպուած էր շրջուել ՌԴ: Վերջինս էլ, իր հերթին, ուկրաինական ճգնաժամի հետեանցով յայտնուել էր քաղաքական եւ տնտեսական բարդ իրավիճակում եւ կարեւոր էր Թուրքիայի հետ իր յարաբերութիւնների բարելաւումը, առետրատնտեսական համագործակցութեան խորացումն ու ուժանիւթի գործարքների ընդլայնումը:

⁵⁴ G. Winrow, “Turkey and Russia: The Importance of Energy Ties,” *Insight Turkey*, 2017:19(1), էջ 17-32:

⁵⁵ “Erdogan, Putin Remotely Start Nuclear Reactor Construction,” *The Washington Post*, 10.10.2021 (<https://www.washingtonpost.com/business/erdogan-putin-remotely-start-nuclear-reactorconstruction>):

⁵⁶ Թուրքիա-ԱՄՆ անկայ խորը ճգնաժամը պայմանաւորուած է մի շարք հիմնախնդիրներով, որոնց շուրջ Անկարան եւ Վաշինգտոնը ունեն տրամագծորէն հակառակ դիրքորոշումներ եւ շահեր, մասնաւորապէս՝ սիրիական ճգնաժամն ու քրդական հարցը, Ֆեթիհլլահի Գիլէնի գործը, ամերիկացի բողոքական հոգեւորական Էնդրիւ Բրանսոնի քրէական հետապնդումը Թուրքիայում:

Այնուամենայնիւ, չնայած իրավիճակային մակարդակում ռուս-թուրքական գործակցութեանը՝ ՌԴի դիրքերի ամրապնդումը Սեւ Ծովում եւ Մերձատր Արեւելքում, Անկարայի կողմից դիտարկում է որպէս անհանգստութեան լուրջ առիթ եւ հակասում է Թուրքիայի պետական շահերին, քանի որ ռուսական ազդեցութեան ուժեղացումը հարեան տարածաշրջաններում վտանգում է թուրքական ծրագրերը տարածաշրջանային առաջնորդ վերածուելու գործում: Այդ է պատճառը, որ 2020 Սեպտեմբերին Թուրքիան մէկ այլ փորձ կատարեց Հարաային Կովկասում ազդեցութիւնների վերանայման ուղղութեամբ եւ որոշիչ մասնակցութիւն ունեցաւ Արցախի դէմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում:

ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆՆԸ ԱՐՑԱԽԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՆԹԱՀՈՂՈՒՄ

Եթէ արցախեան առաջին պատերազմում հայկական կողմի յաղթանակը եւ Մոսկուայի միջնորդութեամբ զինադադարի հաստատումը յանգեցրեցին տարածաշրջանում ՌԴի ազդեցութեան ամրապնդմանը, որով կասեցուցեց Թուրքիայի աշխուժ ներթափանցումը հարավկովկասեան տարածաշրջան, ապա արցախեան երկրորդ պատերազմի հետեւանքով տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը միանգամայն այլ է: 44օրեայ պատերազմի արդիւնքում Հարաային Կովկասում տեղի ունեցաւ աշխարհաքաղաքական վերադասարտումների մեկնարկ: Այն դարձաւ ՌԴի եւ Թուրքիայի միջեւ 'փոխանորդով ընթացող պատերազմի' վայրերից մին: Աւելին, ՌԴն եւ Թուրքիան, որոնք վերջին տասնամակում զգալիօրէն իրենց ներկայութիւնն են ամրապնդել Մերձատր Արեւելքում, դառնալով տարածաշրջանի գլխատր դերակատարները, Հարաային Կովկասում իրենց քաղաքական փոխգործակցութիւնը սկսել են դիտարկել Մերձատր Արեւելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների ենթահողում, ինչը միանգամայն նոր իրողութիւն է հարավկովկասեան տարածաշրջանի համար:

2020ին Թուրքիան փորձեց լուծել իր համար կարեւոր նշանակութիւն ունեցող արցախեան հակամարտութեան հիմնահարցը⁵⁷, որի կարգաւորման վերջնարդիւնքը էապէս կ'ազդի Հարաային Կովկասի աշխարհաքաղաքական ուժերի նոր համապատկերի վրայ: Ի տարբերութիւն արցախեան առաջին պատերազմի, Թուրքիայի մասնակցութիւնն Արցախի դէմ Ադրբեջանի ռազմական սանձազերծմանն աննախադէպ էր: Թուրքիան փաստացի զբաղուեց պատերազմի մշակմամբ եւ համակարգմամբ, հակամարտութեան գօտի տեղափոխեց Սիրիայից վարձկան ահաբեկիչներ

⁵⁷ T. Torosyan, A. Vardanyan, "The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland," *Geopolitics*, August 2015:20(3), էջ 559-82:

րի⁵⁸, քաղաքական եւ ռազմարհեստագիտական հսկայական օժանդակութիւն ցուցաբերեց Ադրբեջանին⁵⁹ մատակարարելով ինչպէս սեփական արտադրութեան զինատեսակներ, այնպէս էլ ամերիկեան F-16 կործանիչներ: Անկարայի նման աշխուժ աջակցութիւնը նպաստեց արցախեան ճակատում ուժերի յարաբերակցութեան փոփոխութեանը յօգուտ թուրք-ադրբեջանական առանցքի:

Անկայտ է, որ արցախեան երկրորդ պատերազմը Թուրքիայի նորոմանականութեան գաղափարախօսութեան դրսեւորումներից է: Այնուամենայնիւ, նորոմանականութեան կիրառութեան գործիքակազմը վերջին տասնամեակում էական փոփոխութիւնների է ենթարկուել: Եթէ սկզբում «Ռազմավարական խորութիւն» հայեցակարգը նախատեսում էր նորոմանականութիւնը իրացնել փափուկ ուժի միջոցով, ապա ԻԱ դարի երկրորդ տասնամեակից նորոմանականութեան փափուկ ուժը սկսել է վերափոխուել կոշտի (*hard power*)⁶⁰: Վերջին տարիներին Անկարայի արտաքին քաղաքականութեան մէջ նկատելի է հետեւեալ օրինաչափութիւնը՝ հրահրել հարեան տարածաշրջաններում արդէն իսկ գոյութիւն ունեցող հակամարտութիւններ, սկսել աջակցել հակամարտող կողմերից մէկին՝ այդպէս նպաստելով այդ կողմի դիրքերի բարելաւմանը եւ հաստատել սեփական քաղաքական ու ռազմական ներկայութիւն երբեմնի Օսմանեան Կայսրութեան մաս կազմող պետութիւններում: Թուրքիայի վարած քաղաքականութիւնը Մերձարտ Արեւելքում, Հիւսիսային Աֆրիկայում, Արեւելեան Միջերկրականում եւ Հարաւային Կովկասում այս տեսութեան վառ ապացոյցն է:

Մինչեւ արցախեան երկրորդ պատերազմը Թուրքիան տարածաշրջանում ներկայութիւն ունէր տնտեսական առումով⁶¹: Թուրքիան Վրաստանի ամենակարեւոր օտարերկրեայ ներդրողներից է: Աշխուժ ներդրումային

⁵⁸ E. Butler, "The Syrian Mercenaries Used as 'Cannon Fodder' in Nagorno-Karabakh," *BBC*, 10.12.2021 (<https://www.bbc.com/news/stories-55238803>). նաեւ՝ "Comment by the Information and Press Department on the Movement of Foreign Mercenaries to the Nagorno-Karabakh Conflict Zone," https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363834?p_p_id=101_INSTANCE_cKNonkJE02Bw&_101_INSTANCE_cKNonkJE02Bw_languageId=en_GB (30.09.2020):

⁵⁹ Th. de Waal, "Unfinished Business in the Armenia-Azerbaijan Conflict," *Carnegie Europe - Carnegie Endowment for International Peace*, February 2021, էջ 2:

⁶⁰ S. Cagaptay, *Erdogan's Empire: Turkey and the Politics of the Middle East*, I.B. Tauris, London, 2019, էջ 192-94:

⁶¹ O. Frahm, K. Hoffman, "Dual Agent of Transition: How Turkey Perpetuates and Challenges Neo-Patrimonial Patterns in its Post-Soviet Neighbourhood," *East European Politics*, February 2020, էջ 1-29. նաեւ՝ A. Alipour, "Turkey's Stance towards the Main Developments in the South Caucasus," *Insight Turkey*, Winter 2005:17(1), էջ 191-211:

քաղաքականության շնորհի Անկարային յաջողուել է բազմաթի լծակներ ստեղծել վրացական տնտեսության մէջ՝ թուրքական ներկայութեան մեծացման եւ Վրաստանի տնտեսութեան վերահսկողութեան համար⁶²։ Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այստեղ թուրքական ներկայութիւնը էլ անելի ցայտուն է՝ տեղատրուելով «մէկ ազգ՝ երկու պետութիւն» տրամաբանութեան մէջ⁶³։ Անկարայի դիրքերը հարավկովասկեան այս երկու պետութիւններում մեծապէս ամրապնդուել էին նաեւ ուժանիւթի ուղիներին՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի (2006), Բաքու-Թբիլիսի-Ջէյհան նաւթատարի (2006), ինչպէս նաեւ Բաքու-Թբիլիսի-Կարս (2017) երկաթուղու կառուցման շնորհիւ։ Յիրափ, առաջին անգամ է, ինչ ԽՍՀՄ փլուզումից յետոյ Թուրքիան կարողացաւ այս տարողութեամբ ամրապնդել իր ազդեցութիւնը տարածաշրջանում ռազմական եւ անվտանգային տեսանկիւնից, որը աշխարհաքաղաքական ձեռքբերում է Անկարայի համար։

Ճիշտ է՝ պատերազմի արդիւքնում Անկարան չստացաւ այն, ինչն ի սկզբանէ ակնկալում էր, քանի որ Մոսկուան զսպեց Անկարայի ձգտումը՝ համատեղ ռուս-թուրքական խաղաղապահ առաքելութիւն ձապելու ուղղութեամբ⁶⁴։ Թուրքական ներկայութիւնը արցախեան հակամարտութեան գոտում սահմնափակուեց միայն ռուս-թուրքական մշտադիտարկման կենտրոնի շրջանակներում։ Այնուամէնայնիս, Անկարան ունեցաւ մի շարք զգալի ձեռքբերումներ։ Թուրքիան նպաստեց 30ամեայ *status quo*-ի փոփոխութեանը յօգուտ Ադրբեջանի, իրողապէս դարձաւ հակամարտութեան կարգաւորման կողմ, ցոյց տուեց, որ կարող է այլընտրանք լինել ՌԴ-ին որպէս յուսալի դաշնակից, ցուցադրեց թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի արդիւնաւտոութիւնը՝ նախադրեալներ ստեղծելով «Թուրանի բանակ» թիրքամահմեդական միացեալ բանակի ստեղծման հեռանկարում։ Աւելին, արցախեան երկրորդ պատերազմի կրակի դադարեցման վերաբերեալ յայտարարութեան համաձայն՝ ՀՀն պէտք է երաշխատրի Ադրբեջանի եւ Նախիջեանի Ինքնավար Հանրապետութեան միջեւ երթուղային հաղորդակցութեան անվտանգութիւնը⁶⁵։ Յայտարարութեան այս կէտը յաղթանակ է Անկարայի համար, քանի որ դրա իրականացման պարագայում Թուրքիան փաստացի ստանալու է ՀՀ տարածքով ցամաքային ճանապարհային կապ դէպի Ադրբեջան, ինչի արդիւնքում իրականութիւն է դառնալու դէպի Արեւելք, մասնատրապէս դէպի կասպեան սաազան եւ

⁶² L. Aleksanyan, "Turkish-Georgian Relations in the Context of Turkey's Regional Policy at the Current Stage", *Post-Soviet Issues*, 2017:44(4), էջ 307-20:

⁶³ B. Balci, "Strengths and Constraints of Turkish Policy in the South Caucasus," *Insight Turkey*, 2014:16(2), էջ 43-52:

⁶⁴ De Waal, էջ 2:

⁶⁵ "Statement by President of the Republic of Azerbaijan, Prime Minister of the Republic of Armenia and President of the Russian Federation, 10.11.2020," <http://en.kremlin.ru/events/president/news/64384> :

Կենտրոնական Ասիա ծալուելու Անկարայի պանթոնը քիստական հեռու գնացող ծրագրերը:

Ինչ վերաբերում է ՌԴին, ապա ԽՍՀՄ փլուզումից յետոյ Հարաային Կովկասում առաջին անգամ ստեղծուել է մի իրավիճակ, երբ արտաքին ալլ դերակատար գործու եւ ազդու մասնակից է տարածաշրջանում ընթացող հակամարտութանը, աւելին՝ ալլ դերակատարը կարողանում է ամրապնդել ներկայութիւնը եւ մասամբ դիրքաւորուել այնտեղ: Պատերազմի արդիւնքում մի կողմից՝ Մոսկուան ամրապնդեց իր ռազմական ներկայութիւնը տարածաշրջանում՝ խաղաղապահ առաքելութիւն ծաւելուլ Արցախում եւ իր վերահսկողութիւնը հաստատեց ռազմավարական նշանակութիւն ունեցող տարածաշրջանային հաղորդակցային հանգոյցների, մասնատրապէս ՌԴն շրջանցող հնարաւոր առետրային ուղիների եւ ուժանիւթի երթուղիների նկատմամբ, միա կողմից՝ չդիմակայեց Անկարային տարածաշրջան մուտք գործելը եւ վերջինիս հետ փաստացի գնաց երկխոսութեան եւ ճանաչեց նրա շահերը Հարաային Կովկասում: Վերջին պնդման վառ ցուցիչն է ՌԴ անվտանգութեան խորհրդի նախագահի տեղակալ, նախկին նախագահ եւ վարչապետ Դիմիտրի Մեդվեդեւի խօսքերը, որ «Արցախեան հակամարտութեան հարցը պէտք է բննարկել Թուրքիայի հետ, քանի որ վերջինս ՌԴ հարեանն է եւ Ադրբեջանի համար շաղ մտերիմ երկիր»⁶⁶:

Պատերազմի ընթացքում Կրեմլին յաջողուեց, կատարելուլ հակամարտութեան միջնորդի իր պարտատրութիւնները եւ պահպանելուլ համապատասխան չէզոքութիւն, խոսափել Թուրքիայի հետ ուղղակի առճակատումից, մեծացնել ՀՀ քաղաքական կախաւածութիւնը ՌԴից՝ միաժամանակ չօտարելուլ Ադրբեջանը: Այսուհետեւ ՌԴ-Թուրքիա աշխարհաքաղաքական մրցապայքարում առանցքային նշանակութիւն է ունենալու ադրբեջանական գործու, քանի որ Մոսկուան ամէն գնուլ ձգտելու է նուազեցնել թուրքական ներկայութիւնը եւ ընդգրկել Բաքուին ռուսական համարկման ծրագիրների:

Հարակուլկասեան թատերաբեմում ՌԴ-Թուրքիա աշխարհաքաղաքական մրցակցութեան տեսանկիւնից յատկանշական է թուրք-ադրբեջանական 2020 Դեկտեմբերի 11ի Բաքում կազմակերպուած ռազմական շքերթն ու 2021ի փետրուարեան թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժութիւնները Կարսում: Թուրքիայի նախագահի մասնակցութեամբ Բաքում կայացած ռազմական շքերթը, ըստ երեսոյթին, հանդիսանում է թուրք-ադրբեջանական յարաբերութիւնների նոր մակարդակի հանրայնա-

⁶⁶ Д. Медведев, “Интервью Заместителя Председателя Совета Безопасности России, 01.02.21” (Ռուսաստանի անվտանգութեան խորհրդի նախագահի տեղակալի հարցազոյրը), <http://www.scrf.gov.ru/news/allnews/2925/> :

ցումն⁶⁷ ու թուրքական նորսմանականության քաղաքականության օրինականացման մեկնարկը: Շքերթին շուրջ 3000 թուրք զինծառայողների մասնակցությունը վկայում է որ Թուրքիան փաստացի ընդունում է իր մասնակցությունն Արցախի դեմ կազմակերպում ավատերազմում: Անեյին, շքերթի ժամանակ Էրզրոլանի հնչեցրած օսմանական տարրերով ողորդում է ելույթը, որի ժամանակ Թուրքիայի նախագահը յիշատակել էր էնվեր, Նուրի փաշաներին, խօսել Կովկասի իսլամական բանակի (1918) մասին, ինչպես նաև տարածքային նոր պահանջներ արտայայտել Իրանի նկատմամբ⁶⁸, յստակ ուղերձ էր ոչ միայն ՀՀ-ին, այլև տարածաշրջանային տերություններ հանդիսացող ՌԴ-ին եւ Իրանին, որ Անկարան մտադիր է դառնալու տարածաշրջանում գլխատոր դերակատարներից մեկը:

Կարսի թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունները եւ քաջայայտ քաղաքական ուղերձ էին պարունակում: Պատահական չէ զորավարժության անցկացման ընտրության վայրը եւ այն աշխարհաքաղաքական միջավայրը, որում այն անց է կացում: Յարձակողական բնույթի զորավարժությունների կազմակերպումը ռուսաստաններձ գոտիներում յստակ ցուցիչ է Անկարայի շարունակական պանթուրքիստական մտադրությունների՝ աւանդաբար ռուսական շահերի գոտի հանդիսացող Հարաւային Կովկասում իր դիրքերի ամրապնդման ուղղութեամբ: Անկարան փորձում է ցոյց տալ, որ չի սահմանափակուելու արցախեան հիմնահարցի *status quo*ի փոփոխութեամբ եւ շարունակելու է աշխուժ քաղաքականութիւն վարել տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի նոր դասատրոփին ձեւաւորելու ուղղութեամբ:

Արցախեան երկրորդ պատերազմի ենթահողում թուրք-ադրբեջանական կողմի ռազմական յաջողությունների յենքին առաւել աշխուժացաւ «Թուրանի բանակ» թուրք-մահմեդական միացեալ զինուած ուժերի ստեղծման գաղափարը: Այս փաստն եւ առանցքային իրողութիւն է ՌԴ-Թուրքիա աշխարհաքաղաքական պայքարի գործում: Լինելով մէկ այլ ռազմական դաշինքի՝ ՆԱՏՕի անդամ՝ Անկարան մտադիր է ձեւաւորել սեփական ռազմական բլոկ, որում ներգրատած կը լինեն նաեւ թիւրքական յետխորհրային հանրապետությունները: Ընդ որում՝ յատկանշական է այն, որ այս պետությունների շարքում են նաեւ ՀԱՊԿի անդամ պետություններ՝ Ղազախստանն ու Դրոզստանը: Վերջիններիս անդամակցութիւնը մէկ այլ ռազմական դաշինքի՝ Մոսկուայի համար յետխորհրդային տարածաշրջա-

⁶⁷ W. Górecki, M. Chudziak, "The (pan-) Turkic Caucasus: The Baku-Ankara Alliance and its Regional Importance," *SWP: Centre for Eastern Studies*, November 2020:374, էջ 6:

⁶⁸ "Эрдоган в Баку: Парад Победы над Арменией и Отголоски Османской Империи" (Էրզրոլանը Բաքում. յաղթանակի շքերթ Հայաստանի նկատմամբ եւ Օսմանեան Կայսրութեան արձագանգները), *Бу-бу-си Русская Служба*, 10.12.2020, <https://www.bbc.com/russian/news-55239689> :

նում նոր մարտահրավերներ կ'առաջացնի եւ կասկածի տակ կը դնի ՀԱՊԿի արդիւնաւտուրօթիւնը որպէս ռազմական կառոյց: Չնայած միացեալ թիրջական բանակի ձեւատրմանը վերաբերող առարկայական քայլերի բացակայութեանն, արցախեան պատերազմի ժամանակ թուրք բարձրաստիճան պաշտօնեաների կողմից եղան մի շարք նշանակալի այցելութիւններ դէպի Կենտրոնական Ասիա: Այս տեսանկիւնից կարելուք են 2020 Հոկտեմբերի 26-27ին Թուրքիայի ՊՆ նախարար Խուլուսի Աքարի այցերը Ղազախստան եւ Ուզբեկստան, որոնք ընթացքում քննարկուել են ռազմական ոլորտում գործակցութեան ամրապնդումը եւ խորացումը⁶⁹, ինչը նախադրեալներ է ստեղծում թիրջա-մահմեդական միացեալ բանակի ստեղծման հեռանկարի ուղղութեամբ:

Տարածաշրջանում իր «մուտքը» ամրապնդելու համար թուրքական կողմը պատերազմից անմիջապէս յետոյ առաջարկեց ստեղծել «3+3» ձեւաչափով (Ռուսաստան, Իրան, Թուրքիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) համագործակցութեան հարթակի նոր նախագիծ, որը ըստ թուրքական կողմի՝ կը զբաղուի նաեւ արցախեան հակամարտութեան կարգաւորմամբ⁷⁰: Համագործակցութեան այս նոր նախագիծը եւ իրատեսական չէ՝ հաշուի առնելով այն բարդ քաղաքական յարաբերութիւնները, որոնք առկայ են այդ վեց պետութիւնների միջեւ⁷¹: Չնայած տարածքում խոշոր դերակատարներ ՌԴն ու Իրանը դրական արձագանգ են տուել համագործակցութեան այս նախագիծին՝ այնուամէնայնիս, հաւանականութիւնը շատ ցածր է, որ Մոսկուան եւ Թեհրանը կեանքի կոչեն այն, քանի որ վերջիններիս համար անթոյլատրելի է թուրքական ադեցութեան խորացումը տարածաշրջանում:

Չնայած մի շարք հակամարտային գոտիներում ունեցած հակոտնեայ շահերին, թէ՛ ՌԴն, թէ՛ Թուրքիան չեն գնում բացայայտ առճակատման: Պատճառը՝ ռուս-թուրքական յարաբերութիւնների իրավիճակային բնոյթն

⁶⁹ А. Тарабановский, “Турецкий гамбит в Средней Азии. «Армия Турана» вместо ОДКБ?» (Թուրքական բախտախաղ Կենտրոնական Ասիայում. «Թուրանի բանակը» ՀԱՊԿի փոխարէն), *ИА Красная Весна*, <https://rossaprimavera.ru/article/966795c9> (13.01.2021):

⁷⁰ Վերելում անդրադարձել են 2008ին ռուս-վրացական հնգօրեայ պատերազմից յետոյ Թուրքիայի նման առաջարկին (Т. Gumrukcu, E. Toksabay, “Turkey can open border if Armenia takes steps for peace – Erdogan,” *Reuters*, 11.12.2020, <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-turkey/turkey-can-open-border-if-armenia-takes-steps-for-peace-erdogan-idUKA4N2FR01B?edition-redirect=uk>):

⁷¹ Նախագիծը ընդգրկում է Վրաստանը արդէն իսկ յայտարարել է, որ մաս ցի կազմելու տարածաշրջանային համագործակցութեան այս հարթակին՝ ՌԴի ներկայութեան պատճառով (Z. Anjaparidze, “The Second Karabakh War and Georgia’s Threatened Transit Role,” *The Jamestown Foundation-Global Research and Analysis. Eurasia Daily Monitor*, 2021:18(26), էջ 1):

է, որը մշտապէս կախուած է միջազգային ասպարեզում իրենց նկատմամբ եղած դիրքորոշումից: Երկու երկրներն էլ միջազգային յարաբերութիւններում ունեն լուրջ բարդութիւններ եւ նրանցից իւրաքանչիւրի համար միմեանց հետ յարաբերութիւնները կարետոր են՝ չնայած որոշ հարցերում առկայ լուրջ տարակարծութիւններին: Սրանով է պայմանատրուած երկակի բնոյթը երկկողմ յարաբերութիւններին, որոնք զարգանում են մրցակցութեան եւ համագործակցութեան համադրութեամբ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԽՍՀՄ փլուզումից յետոյ ռուս-թուրքական աշխարհաքաղաքական մրցակցութեան վերլուծութիւնը Հարաային Կովկասի հակամարտութիւնների ենթահողում ցոյց է տալիս, որ.-

- Առաջին տասնամեակում Անկարան քայլեր ձեռնարկեց դառնալու Հարաային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի ազդեցիկ դերակատարներից մէկը, սակայն ճախողութեց, քանի որ չունենալով համապատասխան քաղաքական եւ տնտեսական ներուժ, չկարողացաւ փոխարինել ՌԴին: Այս փուլում ՌԴ-Թուրքիա աշխարհաքաղաքական մրցապայքարում առանցքային նշանակութիւն ունեցան հարակովկասեան հակամարտութիւնները: Արցախեան առաջին պատերազմում՝ հայկական, իսկ վրացաբխակականում՝ արխազական կողմի յաղթանակները, ինչպէս նաեւ Մոսկուայի միջնորդութեամբ զինադադարների հաստատումը յանգեցրեցին տարածաշրջանում ՌԴի ազդեցութեան ամրապնդմանը:

- ԻԱ. դարասկզբին ռուս-թուրքական յարաբերութիւններում արձանագրուեցին էական փոփոխութիւններ, ինչը պայմանատրուած էր նոր իրողութիւնների հետ: Թուրքիայում Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութիւնը իշխանութեան անցնելով որդեգրեց «Ռազմավարական խորութիւն» արտաքին քաղաքականութեան նոր հայեցակարգը՝ հիմքում ունենալով «նորօսմանականութեան» գաղափարախօսութիւնը: Նպատակ ունենալով վերածուելու միջազգային յարաբերութիւններում կարետոր սուբեկտի՝ Անկարան քայլեր ձեռնարկեց տարածաշրջանում կշիռ ունեցող ՌԴի հետ գործընկերային յարաբերութիւններ հաստատել:

- Տարածքում աշխարհաքաղաքական գօտիների վերադասատրման յաջորդ փուլը տեղի ունեցաւ 2008ին, որի առանցքային իրադարձութիւնը եղաւ ռուս-վրացական հնգօրեայ պատերազմը: Պատերազմից յետոյ ՌԴն շարունակեց զբաղեցնել առաւել ազդեցիկ դիրք աշխարհաքաղաքական մրցակցութեան մէջ ներգրատած երկրների շրջանում: Իսկ Անկարան, ՌԴի ու ԱՄՆի միջեւ խորացող աշխատաքաղաքական պայքարի յենքին, բախտեց մի շարք մարտահրավերների՝ տարածաշրջանային առաջնորդ դառնալու ծրագրի իրագործման առումով: Ստեղծուած բարդ իրավիճակից նուազագոյն կորուստներով դուրս գալու համար Թուրքիան ստիպ-

ուած էր ճկուն քաղաքականութիւն վարել եւ հանդէս եկաւ ուսամէտ նախապատուութիւններով:

- Չնայած մերձարեւելեան հակասութիւններին, որը յանգեցրեց երկկողմ յարաբերութիւններում քաղաքական ճգնաժամի՝ Մոսկուան եւ Անկարան քայլեր ձեռնարկեցին երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման: Պատճառը՝ միջազգային յարաբերութիւններում ՌԴի եւ Թուրքիայի զգալի բարդութիւններն են, որոնք դրսեւորում են մեկուսացումութեան լուրջ նշաններ:

- ՌԴի դիրքերի ամրապնդումը Սեւ Ծովում եւ Մերձաւոր Արեւելքում, ինչի արդիւնքում վտանգում են Թուրքիայի ծրագրերը տարածաշրջանային առաջնորդ դառնալու գործում, ստիպեցին Անկարային եւս մէկ փորձ ձեռնարկել Հարաւային Կովկասում ազդեցութեան գոտիների վերադասարման ուղղութեամբ՝ հրահրելով եւ անմիջական մասնակցութիւն ունենալով 2020 Սեպտեմբերին Արցախի դէմ Ադրբեջանի ռազմական սանձագերծումին: Արցախեան 44օրեայ պատերազմի արդիւնքում մի կողմից՝ Մոսկուան ամրապնդեց իր ռազմական ներկայութիւնը տարածաշրջանում՝ խաղաղապահ առաքելութիւն ծաւալելով Արցախում եւ իր վերահսկողութիւնը հաստատեց ռազմավարական նշանակութիւն ունեցող տարածաշրջանային հաղորդակցային հանգոյցների նկատմամբ, միւս կողմից՝ չդիմակայեց Անկարային տարածաշրջան մուտք գործելը եւ վերջինիս հետ գնաց փաստացի երկխօսութեան ու ճանաչեց նրա շահերը Հարաւային Կովկասում:

- Չնայած միաժամանակ տարբեր տարածաշրջանների հակամարտային գոտիներում Անկարայի եւ Մոսկուայի միջեւ փոխանորդեալ պատերազմներ են ընթանում, Ռուսաստանն ու Թուրքիան չեն դիմում ուղղակի առճակատման՝ հաշտի առնելով միջազգային համագործակցութեան ոլորտում առկայ դժուարութիւններն ու երկկողմ բազմուղի, խորը առեւտրատնտեսական յարաբերութիւնները, որոնց շարքում առանցքային դերակատարութիւն ունի ուժանիւթի համագործակցութիւնը:

- Հաշտի առնելով Հարաւային Կովկասի անկայուն եւ բռնկուն թնոյթը՝ ՀՀն պէտք է ճկուն արտաքին քաղաքականութիւն իրականացնի ու համագործակցութեան նոր եզրեր նախաձեռնի համաշխարհային եւ տարածաշրջանային ազդեցիկ դերակատարների հետ, մասնատրապէս այսօր, երբ թուրքական գործօնի աշխուժացում է գրանցուել տարածաշրջանում արցախեան մարտադաշտում *status quo*-ի փոփոխութեան պատճառով, ինչի արդիւնքում Արցախի հիմնահարցի կարգաւորմանը եւ պետականութեան անվտանգային համակարգին առնչուող լուրջ մարտահրաւրներ եւ դժուարութիւններ են ի յայտ եկել:

**RUSSIAN-TURKISH GEOPOLITICAL RIVALRY
AND THE SOUTHERN CAUCASUS CONFLICTS (1990-2020)**

(Summary)

GRIGOR ARSHAKYAN (garshakyan@mail.ru)

SYUZANNA MARTIROSYAN (martirosyansuzie@gmail.com)

The article examines the main aspects of Russian-Turkish geopolitical rivalry over the past 30 years, especially in the context of ethnic conflicts in the South Caucasus. Russia and Turkey view ethnopolitical conflicts as a plausible means of gaining influence in the South Caucasus and use them to arrive at the desired course of events in the region. Indeed, the locations of the first Artsakh war (1992-1994), the Georgian-Abkhazian (1992-1993) and the Russo-Georgian five-day wars (2008), as well as the 44-day war in Artsakh (2020) have been strategic playgrounds where Moscow and Ankara had and have opposing interests.

The article argues that the above-mentioned conflicts and the fluctuation of Russo-Turkish rivalry have led to an initial redrawing of the spheres of influence in the region. It notes, however, that the new balance of power in the South Caucasus will mainly depend on the final outcome of the settlement of these conflicts.

The article studies as well the patterns of Russo-Turkish bilateral relations, which reflect a combination of both rivalry and cooperation.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՓԱՍՏԱՏԹՈՒՂԹԵՐ ԾԵԶԻՐԵԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԷԼ ՊՐԱՔԻ ՔՈՎ ՍԱՀԱԿԱՇԷՆ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՇԷՆ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (գաղթականաց տեղաւորման յանձնախումբի թղթածրար, 1930)

ՅԱԿՈՐ ՉՈՒԱՔԵԱՆ (hagopcholakian@hotmail.com)

1929ին Թուրքիոյ հարաւ-արեւելեան շրջաններէն մեծամասնաբար քրտախօս հայեր մեծ խումբերով կը փախչին Սուրիա՝ Գամիշլի, ու ոմանք կը հասնին Հալէպ: Երեք համայնքներու հովանատրութեամբ կը կազմով Հալէպի Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը (ՀՀԳԽԿՅ), որ իր կարգին կը յառաջացնէ օժանդակ յանձնախումբ մը, «որ կացութիւնը ուսումնասիրելով՝ տեղեկագիրով մը լրատարութիւններ ու թելադրանքներ ընէր կեդրոնի վարչութեան, գործակցաբար օգտակար հանդիսանալու համար դժբաղդ տարագրելոց»:

Սերտողութիւնները ցոյց կու տան, որ Սուրիա հասած եւ գալիք գաղթականները պէտք է տեղաւորուին Ճեզիրէի շրջան, քանի՜ նորեկ գաղթականները միասին ապրիլ ուզելով՝ կը նախընտրէին մնալ Գամիշլիի եւ Հասիչէի կողմերը, այն երազանքով, թէ գուցէ օր մը դարձեալ Երկիր կրնան վերադառնալ: ՀՀԳԽԿՅը նոր կազմ մը կը յառաջացնէ՝ գաղթականաց տեղաւորման յանձնախումբը (ԳՏՅ), յայտնելով, որ «Հողերու իւրացման, գնման, առողջապահական եւ հաղորդակցութեան դիւրութիւններու վերաբերեալ այլ ու այլ պարագաներու ճշտումը եւ գործադրութեան հոգը կը յանձնէ յանձնախումբի յոյժ նկատարման՝ թելադրելով միեւնոյն աստիճանաբարութիւն փայլ «մատիոյ» հողերու, որոնց սահմանները եւ տեղական անունները ու վարածութեան չափերը մանրակրկիտ քննութեան անցնելով տեղեկագրել՝ որպէսզի երբ ապագային հողերուն տիրանալու դիմում կատարուի կառավարութեան, դիւրութիւններ ունենայ իր ձեռքին փակ»²:

ԳՏՅի անդամներն էին վեր. Ահարոն Շիրաճեան, տոքթ. Թորոս Պասմաճեան, Միսաք Մելքոնեան, Տիգրան Ռշտունի, Ճեմիլ Տիլանճի, Միշէլ Թերճանեան, Եագուպ Մանկալօ: Գործը կը ղեկավարէ Հալէպէն վերապատուելի Շիրաճեանը, որ ամէն բանի համար հաշուետու կը դառնայ ՀՀԳԽԿՅին: Ֆրանսացի իշխանատրներու թելադրութեամբ կը նշանակ-

¹ Գաղթականաց տեղաւորման յանձնախումբի թղթածրար, նամակ 8 Յունուար [1]930:

² Նոյն, նամակ 12 Փետրուար [1]930:

ովին Թէլ Պերրի եւ Թէլ Պրաք վայրերը: Շինարարական եւ տեղատրման աշխատանքները կը սկսին, սակայն ֆրանսացիք կը թելադրեն տեղերը փոխել ու նոր վայր կը նշանակեն՝ Թուրքիայէն 50 քիլոմետր հարա գտնուելու պայմանը պատճառաբանելով: 1930ին ԳՏՅը կը յաջողի Թէլ Պրաքի մօտ հաստատել երկու գիւղեր՝ Սահակաշէնն ու Մեսրոպաշէնը:

Շիրահեան իր պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ իր մահը՝ բազմիցս ճամփորդելով ու երկար ժամանակ մնալով յիշեալ գիւղերուն մէջ՝ հայ, արաբ, քիւրտ, ֆրանսացի, անգլիացի պաշտօնատար անձանց հետ բանակցելու, գաղթականներուն հետ հաղորդակցելու, տարուող բոլոր աշխատանքները ուղղորդելու, մասնագէտներուն դիմելու, տարատեսակ վեճեր եւ խնդիրներ լուծելու դերին մէջ: Իր բացակայութեան՝ գործը կը ղեկավարեն ԳՏՅի միա անդամները: Այս գործունեութիւնը ամփոփուած է ԳՏՅի թղթածրարին մէջ, որ կը պարունակէ հայերէն, արաբերէն, թրքերէն, անգլերէն, ֆրանսերէն հազարաւոր էջեր՝ ՀՀԳԽԿՅէն, հայ եւ միջազգային կազմակերպութիւններէ, հաստատութիւններէ, կրօնապետերէ, Սուրիոյ ֆրանսական եւ տեղական իշխանութիւններէ ստացուած նամակներ, առաքուած նամակներու պատճէններ, տեղեկագիրներ, վիճակագրական տախտակներ, հաշուետախտակներ, կալուածագիրներ են.³:

Ստորեւ կը հրապարակենք այդ թղթածրարին մէջ տեղ գտած միայն 1930ին վերաբերող շարք մը նիւթեր, որոնք շատ կարեւոր տեղեկութիւններ կը փոխանցեն Ճեզիրէի շրջանի բազմազգ ու բազմադասան բնակչութեան մասին, մանաւանդ՝ հայ գաղթականներու տեղատրման վայրի ընտրութեան, ֆրանսական իշխանութիւններու առջեւ Թուրքիոյ յարուցած դժուարութիւններուն, արաբ շէյխերու բարեկամութիւնը շահելու, Թէլ Պրաքի մօտ երկու գիւղերու՝ Սահակաշէնի եւ Մեսրոպաշէնի հաստատման, բնակեցման, տուներու եւ ենթակառոյցներու շինութեան, գիւղացիներուն ապրուստը ապահովելու աշխատանքներուն եւ միջոցներու հաստատման եւ այն մասին, թէ «*Settling in a few thousand Armenian immigrants in a remote corner of Der-Zor, a province of 40,000 sq. kilo of extent and of a population of half a million souls, is not worth the temporary mental anguish of a few sentimental journalists*»⁴.

³ ԳՏՅի մշտական նախագահը եղած է վերապատուելի Շիրահեան (1864, Մարաշ-1939, Հալէպ): Եկեղեցականի կողքին եղած է հանրամուտը հանրային գործիչ: 1915ին Հալէպ է, ուր կը հիմնէ հայկական որբանոցը: Սերտ գործակցութիւն ցուցաբերած է Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանին, ՀԲԸՄի եւ անգլիական ու ամերիկեան նպաստամատոյց կազմակերպութիւններուն հետ: Մեծ դեր ունեցած է Հալէպի հայ գաղթականները տեղատրելու գործին մէջ: Եղած է Հալէպի Կարմիր Խաչի եւ Ծերանոցի հիմնադիրներէն: Թէլ Պրաքի մօտ հայկական երկու գիւղերու վերաբերեալ մինչեւ 1939 թուական հասնող բոլոր գրաւոր նիւթերը պահած է յատուկ խնամքով: Այժմ՝ Յակոբ Չոլաքեան անձնական արխիւ:

⁴ Նոյն, վեր. Շիրահեանի 31-3-[19]30 թուակիր անգլերէն տեղեկագիրը:

Հոս տեղ գտած են նաեւ վերապատուելի Շիրաճեանի հայերէն եւ անգլերէն կարգ մը նամակներ եւ տեղեկագիրքեր: Պէտք է նշել, որ անոր գրատր խօսքը խնամուած չէ, ունի խօսակցականի զօրատր յատկանիշներ, ինչպէս յոգնակի ենթակայի եւ ստորոգիչի թիւի անհամաձայնութիւն, յատկացուցիչը շատ անգամ ուղիղ ձեւով գործածելու պարագաներ, քերականական եւ ուղղագրական զարտուղի ձեւեր: Բացի կը եւ կ' մասնիկներու միօրինականացման պարագաներէն՝ միւսերը ձգած ենք ինչպէս որ են:

ԲԱՌԱՐԱՆ⁵

Ամէլէ – ա.՝ օրականով աշխատող քանոտրներ	Նստեցուցած չէ – կայք հաստատել տուած չէ
Աշիրէք – ա.՝ արաքական ցեղայնամբ	Նօզթա – աթ.՝ կէտ, յենակէտ
Արապա – աթ.՝ կառք՝ լծկան անասունով	Նօզթա գուլուզ – հոս՝ պահակազօրի
Արապահի – կատապան	յենակէտի նշանակում
Արապահութիւն – կատապանութիւն	Նօզթա ձգել – ոտիկանական հսկող կայան տեղադրել
Գազան – թ.՝ խոշոր կթօթայ	Շէյն – աթ.՝ աշիրէթի ասագանիի անդամ, իլպա՛ն կրօնատր
Գաթօիք – ֆա.՝ կաթողիկէ	Որդի ճիւղեր – նկատի ունի շերամի դարակի պատրաստութեան համար գործածուած ոստերը
Գամիտ – ֆա.՝ քեռնատար ինքնաշարժ	Չազալ – թ.՝ թուպիկ, շեազայլ՝ վիճակով պտտող զազան
Գանթար – ծակրութեան արեւելեան չափ. մօտադրապէս 148,8 քիլօ	Չէթիլ – թ.՝ սածիլ, տունկ
Գապալ տալ – ոչ թէ օրականով, այլ որոշուած գումարով մը ամբողջ գործը աշխատողին տալ	Չէլ – թ.՝ անապատ
Գըւէ – տն՛ն ցըւէ	Չիֆթ – թ.՝ երկու եզով քաշուող արօր
Գիլպ միքը – ֆա.՝ խորանարդ	Չօճուզ – թ.՝ մանուկ, երեխայ
Գործը քշուեցաւ – գործը առաջ տարուեցաւ, գործը կատարուելու ընթացքի մէջ մտաւ	Պագ – պահք, պահեցողութիւն
Գորդա – ա.՝ կալուած մը մասնակիցներուն միջեւ բաժնկուլու քախտի վիճակ	Պազար – աթ.՝ քաջօթեայ շուկայ՝ գիտատնտեսական ապրանքներու
Գորդայի դէնել – քախտի վիճակով բաժնել	Պաղ արինով – հանդարտութեամբ, առանց վիրատրանք արտայայտելու
Գօմիսին – ֆա.՝ յանձնաժողով	Պարպութ – հաւանաքար՝ պարղութ. օսանանեան արծաթեայ դրամական միատր, երկու տեսակ՝ մեծ պարղոտ եւ փոքր պարղոտ: Տասը մեծ պարղոտը արծած է մէկ մեճիտիկ, իսկ փոքրը ունեցած է անոր կէս արծէքը:
Գօնթրօլ – ֆա.՝ վերահսկողութիւն	Պէլէտիլէ ռէիսի – աթ.՝ քաղաքապետ
Երդատութիւն ընել – բանտորութիւն ընել	Պուկլոր – աթ.՝ ձաւար
Ելէքը – ծակրութեան արեւելեան չափ՝ 18-21 օգգա	Պուկլորու – ձաւարի համար ընտրուած ցորեն
Ըրդատ – թ.՝ բանտր (Թագսիթ – աթ.՝ մասնակճար	Ուաիթթ – տեղեկագիր
Թագսիթ թագսիթ վճարում – մասնակճարով պարտքը մարել	Սանթիմ – սանթիմնթր
Թափու – պաշտօնական կայուածագիր	Սէնէտի ռապթ – աթ.՝ զրաւոր
Թէվէթ – թ.՝ շեղ՝ խտտի, փայտի, ցակի	
Թէնտուր – ա.՝ թոնիթր	
Թիմար – թ.՝ խմամբ՝ տան, կենդանիներուն են.	

⁵ Փաստաթղթերուն մէջ օգտագործուած կարգ մը բառեր հաւանաքար բացատրութեան կը կարօտին. ա՝ արաքերէն, թ.՝ թրքերէն, աթ.՝ արաքերէն եւ թրքերէն, ֆա.՝ յատկապէս ֆրանսերէնէ եւ անգլերէնէ սերած բառեր: Լայն տարածում ունեցող այլ բառեր բացատրելու կարիք չենք զգացած:

Թիպիկնի չէթիլ – արթ՝ ծխախոտի սածիլ Թոզմազ – թ.՝ ցորեն ծնծելու թակ Թրիչ – ֆա.՝ շոգեկաղը Իկ – անգլիական մատնասլափ, 2,51 սմ. Իսթիլապարաթ գապիթ – գաղտնի ոստիկանություն սպայ Լաղըմ – թ.՝ կյուրտի Լիպեան – ֆա.՝ licutenant, քանակային աստիճանադր Լճկաններով գիծ քաշուած է - արօրով ակօս քաշուած իբրև ասինանագիծ Կառթ – մէկ կամ երկու լծկան անասունով երկանիւ փոխադրամիջոց՝ Կարած – կառքերու կայարան, նաեւ՝ ակտո Հալ – արթ՝ վիճակ Մալ – արթ՝ ապրանք՝ ըստ արժէքի Մահիլով հող – սեփականութենէ լուծարուած գետին Մելթօ – ֆա.՝ մելթօ Մեճիտ – օսմանեան դրամ. մէկ ոսկեդրամ 14 ½ -15 մեճիտի հաշուով: Մէրդէլէք - քարակ վիայունայ ճողեր՝ մարդակ, տանիքներուն ծածկին համար Մըղթար – արթ՝ զիտլապետ, զիտլական կամ թաղային պետ Միտիր – արթ՝ կառավարիչ Մուրիակ – պարտաթուղթ Մօթօր – ֆա.՝ ցրիան կամ եղեկորակնութիւն տուող շարժիչ Նաճար – արթ՝ հիւան, ատաղճագործ	համաձայնութիւն Միթբան – եղանակ, կերպ Վարուլ – ֆա.՝ երկաթեայ տակաո Տաճկերէն – թրքերէն Տեիօ – մատան, պահեստարան Տեօնիմ – տարածութան չափ, 100 քառ. մէթր Տրիամ – ծանրութեան արեւելեան թեթեազոյն չափ, մօտաւորապէս 28,39 կրամ Փոթթա – ֆա.՝ նամակաւորուն Փրովականտ ընէլ – ֆա.՝ դրական կամ քացատական տեղեկանք տարածել Քարիիճ – արթ՝ աղիս Քարիիճ թափել – աղիս պատրաստել Քիլունթօր – քիլունթօր Քուէ – ըուէտունով բախտի վիճակ Օզգա – ծանրութեան արեւելեան չափ Օթօժօպիլ – ֆա.՝ մարդատար ինքնաշարժ Օսմանեան ոսկի – օսմանեան ոսկեդրամ, արժէքը 80 դրուշ Օսմանցի ոսկի – օսմանեան ոսկեդրամ
--	--

Ա.⁶

ԳԱՂԹԱԿԱՆ[Ս]Կ[Մ]Ն ԻՆՍՏԻՏՍԱՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄ - ՀԱԼԷՊ
Հալիպ, 8 Յունտար [1]930

Վերապատուելի

Ահարոն Շիրաճեան

Աստ

Մեծ. Տիար

Գաղթականաց Կեդր. Ինսամատրութիւնը իր երրորդ նիստին մէջ անդրա-
դառնալով Հալիպ հասած նորեկ գաղթականներու անստոյգ վիճակին, եւ փափա-
քելով մօտէն ծանօթանալ անոնց ապրելու, պատասպարուելու միջոցներու մասին,
նոյնպէս նիթական եւ առողջապահական պայմաններուն, որպէսզի կարենար
հարկաւոր օգնութիւնները մատուցանել, յարմար դատեց կազմել Օժանդակ Յանձ-
նախումբ մը, որ կազմութիւնը ուսումնասիրելով՝ տեղեկագրով մը լուսաբանութիւն-

⁶ ՀՀԳԽԿԸ իր երրորդ նիստին կը կազմէ օժանդակ յանձնախումբ նոր հասած
գաղթականութեան վիճակին մասին տեղեկագիր մը պատրաստելու պարտա-
կանութեամբ: Նամակը ուղղուած է վերապատուելի Ահարոն Ա. Շիրաճեանին:
Մեքենագիր, մէկ էջ, ստորագրութիւնները՝ ծեռագիր:

ներ ու թելադրանքներ ընդ կեդրոնի վարչության, գործակցաբար օգտակար հանդիսանալու համար դժբաղդ տարագրելոց:

Սոյն Յանձնախումբի կազմը լրացած է հետեւեալ կերպով.

- Վեր. Ահարոն Շիրաճեան
- Տիար Միհրան Բիզանդեան
- » Տօրթ. Խ[աչիկ] Պօղոսեան
- » Սարգիս Սելեան
- » Միհրան Հերարդեան
- » Միհրան Պասամճեան

Վստահելով ձեր բարի տրամադրութիւններուն, կը յուանք որ անձնփոխաբար կը կատարէ ձեր ազգային պարտականութիւնը, եւ կը հաճիք այս Ուրբաթ, 10 Յունուար, երեկոյեան ժամը 9-ին ներկայ գտնուիլ Բժշկապետ Ալթունեանի բնակարանը, ուր տեղի պիտի ունենայ առաջին խորհրդակցական ժողովը:

Յարգանքներով՝

Ի դիմաց Գաղթ. Խնամատարթ, Կեդր. Յանձնախումբի
Ատենադպիր Ատենապետ
Տօրթ. Յ[աւր]ի[ով]թ[իւն] Տէր Ղազարեան **A[sadour] A. Altounian**

Յ. Գ. Յանձնախումբի դիւանական գործերը պիտի կատարէ Հ. Բ. Ը. Միութեան Քարտուղար Պրն. Արամ Տ. Յակոբեան

Բ.⁷

ԳԱՂԹԱԿԱՆԱՅ] ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ - ՀԱՆԷՊ

Հալէպ, 12 Փետրուար [1]930

- Վեր. Ահարոն Շիրաճեան
- Տիար Միսաք Մեքրնեան
- » Միշէլ Տօմ
- » Տիգրան Ռշտունի
- » Ճեմիլ Տիլէնճի
- » Միշէլ Թէրճանեան
- » Եագոպ Մանկալօ [ձեռագիր]

Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբս իր 8 Փետր[ուար] նիստին մէջ անդրադառնալով Գամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ գտնուող հին ու նոր գաղթականներու անմիջական տեղաւորման հարցին եւ փափաքելով գործնական միջոցներ ձեռք առնել ապահովելու համար անոնց գոյավիճակը, որոշեց կազմել վերոգրեալ յարգելի անձնատրութիւններէն բաղկացեալ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ՏԵՂԱՒՈՐՄԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ մը, որ պիտի փութացնէ օր առաջ գիւղեր հաստատելու գործը:

Խնամատարութեան Վարչութիւնս լիազօրութիւն կու տայ յիշեալ յանձնախումբին ընտրելու յարմար հողեր՝ Հասիչէի շրջաններուն մէջ:

⁷ ՀՀԳԽԿը կը կազմէ Գաղթականաց տեղաւորման յանձնախումբ՝ գայն լիազօրելով Հասիչէի շրջանին մէջ գաղթականներուն համար գիւղեր հաստատելու՝ նախընտրաբար մամլուլ հողերու մէջ: Մեքենագիր, մէկ էջ, աջ կողմէն պատռուածքի հետեանքով կարգ մը բառեր ամբողջական չեն: Ըստ երեսոյթին՝ նա՝ մակ-հրաւէրը առանձին պահարանով դրկուած է բոլոր անդամներուն:

Հողերու իւրացման, գնման, առողջապահական եւ հաղորդակցութեան դիւրութիւններու վերաբերեալ այլ ու այլ պարագաներու ճշդումը եւ գործադրութեան հոգը կը յանձնէ յանձնախումբի լուրջ նկատառման՝ թելադրելով միեւնոյն ատեն նախընտրութիւն տալ «ՄԱՀԼԻԼ» հողերու, որոնց սահմանները եւ տեղական անունները ու տարածութեան չափերը մանրակրկիտ քննութեան անցընելով տեղեկագրել՝ որպէս զի երբ ապագային հողերուն տիրանալու դիմում կատարուի կառավարութեան, դիւրութիւններ ունենայ իր ձեռքին տակ:

Հողային ճշդումէն անմիջապէս յետոյ գործի ձեռնարկել՝ տուներ շին(...)՝⁹ իւրաքանչիւր գաղթականի իր իսկ աշխատութիւնովը:

Նկատի ունենալով գաղթականներու իրենց հին հայրենիքին մէջ ուն (...)տրամները, համագիւղացի անձերը տեղափոխել միեւնոյն նորաշէն գիւղերուն մէջ:

Հ.

Գ.⁹

Notes for the Aleppo Refugee Settlement Committee

Badvelli Shirajian and I did well to start from Aleppo on Feb. 26, as we reached Deir-el-Zor just in time to interview Col. Cailley, who desired to see us, before he left for Mousoul.

He gave us a special letter for Captain at Hassitche in addition to the letter of introduction that I had already received from British Consul at Aleppo.

Arrived at Hassitche we found Captain Derreumaux very ready to help our search for good sites.

Badvelli has a wonderful way of getting into touch with people of all sorts on the way so as to gain the fullest possible information about the land.

We went quickly on to Kamichlie and talked with the refugees waiting to get on to their own work. The land lying near the frontier is good and fertile and some of them desire to stay there. Personally I should not like to take responsibility for placing refugees thus closs to Turkey, and as the French government gives a limit of 50 kilo distance, I strongly advise that as far as our collective action go, we should respect these bounds so as to lose no moral support or financial help that may come in the future from the mandatory power or from the League of Nations.

Other good sites were pointed out, for one of which, i.e. the hill of Chakel Bazar, a petition is especially being sent by the Armenian population of Amoudie. These sites lack running water but good water can be obtained through well-digging. They appear to be quite good for grain and other kinds of food-growing, and also for pasturage.

Application for several has been made to the government on our behalf

⁸ Փակագիծի կախման կէտը կը նշէ անընթեռնելի կամ պատռուած բառը:

⁹ Edith Robertsի 26 Փետրուար 1930ին սկսած շրջագայութեան տեղեկագիրը: Երկու թերթ, երկու երես, անգլերէն, մեքենագիր: Ստորագրութիւնը՝ ձեռագիր: Վեր. Շիրաճեանի հետ գաղթականներուն կայք փնտռելու համար անգլիական նպաստի կազմակերպութեան ներկայացուցիչ Ռուպըրը Գաղթականաց խնամատարութեան կեդրոնական յանձնախումբին յղած իր նամակով կը յայտնէ իր կապերը Հասիչէի ֆրանսական իշխանութեան ներկայացուցիչներուն եւ Գամիշլիի հայ գաղթականներուն հետ, հայ գաղթականները սահմանէն 50 քիլոմետր հեռու տեղափոխելու եւ իր յարմար տեսած վայրերուն մասին:

[ձեռագիր].

But the site that lightens my eyes more than any other is the hill Tel Mege Del. It lies about 15 kilos west of Hassitche with arable land stretching up to the mountain Abd-el-Asis.

This hill appears to have been the site of the leading town of the district in ancient time. It overlooks the Khabour River, and if ancient system of irrigation from an upper reach of the Khabour be reconstructed the land should be very productive.

Tel Mege Del belongs to an absentee Turk, and as it has laid unused it seems for 12 years, we have hope to obtain it at low cost. The irrigation would be a more costly business, but it would give work to the refugees, and as one branch of the canal would benefit Hassitche, the local gentlemen have volunteered to bear half the expense.

The space available is so extensive that we envisage bringing the newly-arrived peasants from Aleppo to start life on the land again in this land of promise.

Edith Roberts [ձեռագիր]

Գ.¹⁰

ՀԱՅ ԳԱՂԹ. ԿԵԴՐ. ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱԼԷՊ-ՍԻՒՐԻԱ
Փոստարկը - 20

Հալեպ, 20 Մարտ 1930

Վերապատուելի
Տիար Ահարն Շիրահեան
Նախագահ Գաղթականաաց Տեղադրման Յանձնախումբի
Աստ

Գաղթ. Խնամատարության Կեդր. Յանձնախումբը Մարտ 16-ի նիստին մէջ նկատի առնելով Գամիշլիի նոր գաղթականներու մասին Ձեր գրասր [....]ցի տեղեկագիրները, որոշեց անոնցմէ հարիւր ընտանիք առանձնաբար տեղադրել Թէլ-Պէյտար, մահուլ հողերու վրայ:

Այս ընտանիքներու տեղադրման հոգը կը յանձնուի Ձեր իսկ նախագահութեան տակ կազմուած Յանձնախումբին, իրաւաստօքն տալով Ձեզ մասնատրապէս գործել յարմար տեսնուած եղանակով լծկան եզներու, ոչխարներու, սերմնցու եւ այլ պիտոյքներու գնման մասին, Ժողովս յարմար դատեց առ այժմ յիշեալ գաղթականները րնակեցնել վրաններու տակ, որով հարիւր ընտանիքներու վրանները պիտի գնուին տեղոյս մէջ, ինչպէս նաեւ կառքերու գնումն ալ պիտի կատարուի հոս, Հալեպի մէջ:

Այս առաքելութեան պահուն Ձեզի պիտի ընկերանայ համեստաբայալ Օր. Էտիթի Րոպէթս, որ գիղացիներու կարիքներուն իր յարմար դատած օգնութեան գործին պիտի օժանդակէ:

Այժմէն իսկ յաջողութիւն մաղթելով թափելիք Ձեր ջանքերուն համար սրտագին շնորհակալութեամբ,

¹⁰ ՀՀԳԽԿի նամակը ԳՏՏի նախագահ վերապատուելի Շիրահեանին՝ 100 ընտանիք տեղադրելու Թէլ Պայտար, մահուլ հողերու վրայ, եւ այդ գծով այլ որոշումներու մասին: Վեր. Շիրահեանին պիտի ընկերանայ Էտիթ Րոպէթսը: Աքթե-նագիր, մէկ էջ, աջ կողմէն պատողածքի հետեանքով առաջին երեք տողերը ամբողջական չեն: Ստորագրութիւնները՝ ձեռագիր:

Ե.¹¹

The Hassetchi¹²- Kamaishli region and Recently arrived Armenian Refugees

With the intention of giving the Armenians in general some information concerning the 450 Armenian families recently arrived from Turkey we give the following concise account of their condition and the efforts that are being made for their settlement within the boundaries of Syria.

I had to visit twice the district of Der-Zor in order to become well acquainted both with the country and the new immigrants.

I will not say much about Der-Zor itself – very interesting though it may be, and will limit my descriptions only to the district beyond Der-Zor.

The distance from Aleppo to Der-Zor is 385 kilometers.

Der-Zor is built on the southern border of the river Euphrates. We crossed the river in boats, because the bridge across it – that is in process of construction since 4-5 years, is not finished yet.

There is a desert some 50 or 60 kilometers long on the road leading from Der-Zor to Hassidji. There are two roads from Der-Zor to Hassidji, one 180 kilometers long, the other a shorter cut, of 145 kilometers.

Hassidji is built on the river Khabour. This stream Khabour is a body of water (according to the old way of reckoning) sufficient to run 60 to 70 mill-stones for grinding wheat: It empties itself into Euphrates below Der-Zor.

Hassiche is the centre of the Kaza [province] of that name.

Some seven or eight years ago, this place contained only twenty houses, but within the last few years it has rapidly grown, and has at present 900 houses, of whom 50 are mohammedans, 300 are Syrian Orthodox, 50 Syrian Catholics, 30 Chaldean Catholics, 7 Syrian Protestants, 300 Nestorian Orthodox, 100 Armenian Catholics and 100 Armenians, settled before and lately. In Hassiche there are a number of good intelligent and business like people.

¹¹ Տեղեկագիր, կապոյտ թանձր համաչափ 11 թուղթ, մէկ երեսին ձեռագիր, անգլերէն: Ստորագրած է A. Shirajyan, 31-3-[19]30: Վերապատուելին Հասիչէ, Գամիշլի. Գարամանիէ եւ Ամոտա կատարած իր շրջագայութիւններու մասին ընդարձակ տեղեկագիրով կը ներկայացնէ յիշեալ վայրերուն աշխարհագրական դիրքը, կը խօսի տեղոյն թիւրքերուն, արաբներուն, հրեաներուն, հայերուն, ասորիներուն եւ քաղղէացիներու մասին: Կը ներկայացնէ հայ հին՝ եւ վերջերս Սուրիա հասած նոր գաղթականութիւնը, կ'առաջարկէ յառաջիկայ ձմեռն առաջ տեղադրել Խապուր եւ Ճաղճաղ գետերու առաջանին մէջ՝ հաստալով որ ա-նոնց երկրագործական հմտութիւնները բարիք կը դառնան Սուրիոյ: Ան նաեւ ծրագիրը անտեղի կերպով քննադատող կողմերուն պատասխան կու տայ:

¹² Նոյն են Hassetchi, Hassidji, Hassiche, այլ տեղ՝ Հասիչէ, Հասաքէ:

Hassiche is a centre for wool, butter and cheese production, and during the months of April and May no less than 30 to 35,000 gold lirees worth of transaction in these products take place in it.

We travelled from Hassiche to Kamishli by both roads,- one road is by the brink Jaghjagh and Tel Hamid a distance of 95 kilometers and other by the Karamanie and Amouda villages which is 165 kilometers:

Kamishli is the centre of the Kaza [province], it is on the stream Jaghjagh - This stream has in the winter sufficient water to run from 20 to 25 mill-stones. In the summer it diminishes considerably in amount.

Kamishli is just on the Turkish boundary line right opposite the Turkish city of Nisibin. The distance between the two cities being only one and half kilometers.

Kamishli had started five years ago and is now a town of 1050 houses. There are 120 Mohammedean families, 100 Jewish families who had immigrated from Nisibin, 300 families of Assyrians [Orthodox], 40 Catholic Assyrians, 30 Catholic Armenians and nearly 400 families of Armenians of whom more than 300 families are immigrants from Turkey. They speak Kurdish and entered Syria 5-6 months ago.

There are some building for the boundary guards in Kamishli and market place here like a similar place in Hassiche, where come the villagers and nomads of the neighborhood to do their purchase and sale.

Between these two kazas, centre of Kamishli and Hassiche - there are also two villages by the name of Karamanie and Amouda.

Karamanie consisted of twenty houses four years ago - it has at present nearly 150 houses, of whom 80 are Mohamedeans, 25 Syrian Christians, and 15 families Armenians and Armenian Catholics. Beside these there are some 50 stores and shops belonging to wealthy Armenians, whose families are in Aleppo and other places: All the Kurds of this village are farmers. The Syrians and the Armenians are artisans, there are 12 Armenian new immigrant families in this place.

Amouda village is recently built. Has 450 families of whom 250 are Mohammedeans, Kurds and Arabs, 40 Orthodox Syrians, 20 Catholic Syrian, 20 Catholic Armenians, 40-50 Armenian new refugees.

To the East of Hassiche, toward Kamishli and Demir Kapou,- ie. on the Irako-Turkish boundary - is an extensive land. There are hundreds of hills constructed by earth which were in ancient times centers of cities and villages, for example Tel Arous, Tel Uzoum, Tel Injir, Tel Beydar, Tel Mejdal etc. etc.

The present population of this region besides the Christians consists of Kurds mostly, Kurdish villages appearing on all sides.

Nomadic Arabs are also trying to establish themselves in this region by building villages.

Four or five months ago there came from the neighbourhood of Diarbekir and Sighet (in Turkey) some 450 families and two months later 30 homes more came to settle in Syria; there are some amongst them who know Armenian, but the majority speak Kurdish, being Kurdish speaking Armenians, some had with them their flocks and certain articles of furniture but nearly 400 families of them were robbed and miserable, and reduced to poverty.

It is a satisfaction to see that these unfortunate people not being used to look to others for help were willing to do any kind of work and ready to help each other in

these difficulties. Those who had been fortunate to escape robbery had cheerfully shared their virtals [sic!] with their needy neighbours and earned them with their own extra clothing. Some of them travelled on foot Der-Zor a distance of 260 kilometers in search of work on the bridge. But the great majority remain idle, because of lack of land and implements of agriculture, farming being their usual occupation.

During the period the French government has given them 1375 okes of wheat.

In 1929, Dec. 19, the Central committee of Aleppo and its auxillary branch for the care of refugees, sent on two occasions their agents and medical aid, the physician has helped the the sick as well as he could, but some 120 of these poor refugees mostly children has sub(...) to the prevalant diseases - mostly epidemic - like measles, small (...) etc. their hardships and deprivation has made them ready preys to malaria which undoubtedly some of them had brought with them - The Committee has supplied to this immigrants kilos of quinine and other drugs. We are glad to state there is hardly any sickness at present amongst them, and those who were suffering from malaria are up and on their feet now.

The 47 bales [package] of clothing sent by Friends have been distributed both to reffugees coming to Aleppo and sent to those in Kamishli.

The refugees now in Kamishli, Hassiche, Amouda and Karamanie live in small houses hired for small sums, mostly two or three families in one house, eagerly waiting for a chance to better their condition and come into position of permanent work, lands-homes and a safe and peaceful existence.

The Central Relief Committee ambitions sincerely to help these people, and hopes that the necessary lands for their work of farming will be provided by the competent authorities.

It has made arrangements - for a provisional aid - and according to the amount of funds at its disposal. The Committee intends to shelter some 200 or 220 families in tents, and give them a start in farming and cattle or sheep raising - Up to the present time the Committee has had 1800 L.T. in gold - contribruted solely by Armenian individuals and Arm. institution with 1200 L.T. in gold from foreign benefactors.

It is decided to give each farmer one ox, one sheep and one goat. To a few industrials the tool they need. And also a sheep and a goat per family. To each family a tent will also be given and also sufficient food for 2 or 3 months.

If we could provide to this people the fields in time, this Spring so that they could do some saving, it would be an immense help to them this year.

With the funds at our disposal from 200 to 220 families can be camped under shelter, and we think that some 50 more families can manage their affairs themselves if we can provide them with necessary fields to cultivate. That means that there still remain 210 families to be sheltered and for which job 600 L.T. in gold is needed.

If cottages were to be substituted to tents - a change that would seem inevitable because of the winter season, when living under tents is impossible - then no less than a sum of ten or twelve thousands gold liras is required, at least, in order to modestly house them.

The sadest part of the whole problem is that the number of the new commers is continually increasing. And according to certain reliable informations the general fear

is that we may at any time be forced with a new batch of 600-700 families of new refugees from Turkey.

The benevolence and generous dispositions of both our Mandatary and local governments, inspire us with full confidence and encourage us to hope that an extension tract of fertile and salubrious land will soon be granted to these Armenian immigrants for cultivation.

The unfavourable and uncharitable views taken by some persons concerning the wisdom and safety of such a procedure we have heard and noticed in the papers, yet we are sure that if once they see these lands abandoned totally for centuries, tree-less, forest-less, fruit-less and life-less, they would not object to any efforts for their reclamation and transformation into useful and valuable arable fields, and if they are wise and decent enough, they would not continue to begrudge the hardy and patient Armenian trying to accomplish this arduous task for his own good and for the prosperity of Syria.

We read in history that present city of Nisibin their once received a queen over these regions which produced wheat, vegetable and fruits in immense quantities, various objects of industry and commerce.

Kings had chosen this city for their treasure city, and great arab historians have with amazement recorded its extensive agriculture and beautiful gardens and vineyards.

In the year 969 (about 1000 year back) the income of Nisibin and its surrounding states amounted to five millions drachmas and 32,000 dinars, because of wars and various other abuses and misgovernment it has fallen to its present useless and desert state.

Would it not be profitable to cultivate it and add it to the class of Syrians presentive class of lands. In other words change it from a desert and vast waste to a fruitful land?

Settling in a few thousand Armenian immigrants in a remote corner of Der-Zor, a province of 40,000 sq. kilo of extent and of a population of half a million souls, is not worth the temporary mental anguish of a few sentimentalist journalists.

A[haron] A. Shirajyan
31-3-[19]30

Ձ.¹³

Armenian Settlement on the Jagh-Jagh
Postal Address still B. Post 280 Alep

4.5.[19]30

¹³ Էտիթ Ռոպրոցի նամակը Major Johnsonին: Մեքենագիր, կրկնօրինակ, երկու էջ: Բովանդակություն՝ պատուելի Շիրահենսի ջանքերը զաղթականները անկախ ու ինքնավար դարձնելու հարցով: Հասիչի կառավարիչ Captain Derreumaux կողմէ նշանակրած վայրերուն մեջ երկու գիւղեր կառուցելու գործը: Սուաջիլը Թէլ Պերրի: Տուներու կառուցում, հողի վարում, ջրհորներու բացում: Ապահովութեան հարցեր: Երկրորդը՝ Թէլ Պրաբ: Թէլ Մեճուլը գնելու եւ այնտեղ երրորդ գիւղ մը հաստատելու առաջարկ՝ անգլիական կառավարութեան կամ Ազգերու Լիկային: Աշխատանքային հնարաւորութիւններ:

Dear Major Johnson

Thank you very much for your welcome letter and the report.

I have lately been living in the midst of the new settlers on the most northerly of the sites given by Captain Derreumaux, the officer in charge at Hassitche.

Badvelli Shirajyan of Aleppo has organized the work for Armenian Commuttee of Aleppo, being especially anxious to get his people on to independent work, neither dependent on charity when their slender means run out, nor working for Kurds or others, as it seems a considerable number of the new-arrivals are now doing, nor joining the army in despair of finding a more peaceful way of life, as others have done.

Our two first settlements are showing signs of vitality.

At first we are living in tents, but already the «karpage» is being prepared for house-builging before the heat of summer.

A considerable stretch of land has been twice ploughed for Autumn sowing, and today we have the joy of our first little pumping machine, for pumping the Jagh-Jagh water over a part of the ground so as to make possible the growing of some fruit and green stuff for Summer consumption. I hope also that now in the second settlement Tel Brak we shall be able to (...) water the grass that the sheep and goats will no longer be in search of food and therefore sparse of milk.

The well-digging proved rather difficult, the water in one case tainted, from the site of an old city, in others difficult to arrive at the water, but we are getting through now I hope, of special interest being the very hard stonny digging of a new well some little distance from here, beside the two little hills to which we hope to move for house-and school building, as they are much more airy and healthy.

One feels this further site to be just a bit far from the Hassitche center, our people feeling that they want to possess arms for protection from arab thieves as well as the wolves or jackals, and I am glad what we are going to test the well-possibilities of Tel Assouad, the site on the Hassitche side.

The idea being to have three villages of 100 families each wich can expand as new relatives and friends appear from Turkey.

I have also written to Mr. Burnier to ask his help to buy if possible Tel Mege Dell, where we could plant peasants from the Aleppo Camp, a site which above all others seems excellent, but which could more gracefully be bought in the name of the League than in that of a British subject at present.

This week I hope to return to Aleppo, especially with a view of helping the appalling lot of their same there.

I look forward a meeting Mons. Le Nail.

This is a centre of wool industry, and it looks as though we might be a very successful work in starting the kilim rug-weaving among the women who already know it here.

With very kind regards to Mrs. Johson and yourself,

Yours sincerely
Edith Roberts

Է.¹⁴

ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԿԵՂՐ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ - ՀԱԼԷՊ

Փոստարկղ. Նո 10

Հեռագրի հասցե: ԱԼԹՈՒՆԵԱՆ - ՀԱԼԷՊ

Հալեպ, 6 Մայիս 1930

Թիւ 15

Վերապատուելի Տիար

Ահարոն Շիրաճեան

Գամըշի

Ատենապետ Ձեռնդման Յանձնախումբի - Թէլ Պրաք

Գաղթ. Կեդրոնական Խնամատարութեան ժողովս իր Մայիս 4-ի նիստին հետեւեալ որոշումները տուած է զորս հողորդելով ձեզ կը խնդրէ անմիջական գործադրութիւն:

Ա.- Առանց օր մը իսկ կորսնցնելու անմիջապէս ձեռնարկել բնակարաններու շինութեան, որոնց աղիսը պէտք է հոգան գաղթականք իրենք իսկ անձամբ, յարդը տրամադրել ձեր կողմանէ:

Բ.- Իւրաքանչիւր չորս տուներ յարակից պիտի լինեն ըստ ներփակ քարտէզի եւ ամէն մէկ տան համար 25 մեթր լայն 50 մեթր երկայն հող պիտի յատկացուի՝ տուն, բակ եւ բանջարանոցի յատուկ:

Գ.- Հողին պաշտօնական թափուի մուրհակը նոյն ինքն գիւղացի եղող գաղթականաց անտան պիտի առնուի ամէն մէկ ընտանիքի մշակութեան համար 200 երկու հարիւր արտավար [տէօնիմ] հող պիտի տրուի եւ իւրաքանչիւրին բաժինը յառաջիկային վիճակաւ պիտի որոշուի:

Դ.- Բնակարաններու պատերը աղիսէ շինուելէ յետոյ ծածկը եւ տախտակեղէններու ծախքը պիտի հոգացուի խնամատարութեան կողմանէ:

Ե.- Առ այժմ հարիւր տուն միայն տեղատրել եւ 50 յիտանական տունով երկու գիւղ հաստատել վերջնականապէս որոշուած է, Թէլ Պրաք եւ Թէլ Պերրիյէ ըսուած տեղեր:

Պաշտօնապէս հաղորդելով ձեզ եւ խնդրելով օր ատաք գործադրութեան ձեռնարկել եւ հսկել Մնամք յարգանքօք

Ի դիմաց Գաղթ. Կեդր. Խնամատարութեան

Վ. Ատենադպիր

Ատենապետ

Հ. Գ. Սիլահեան

A. A. Altounyan

Յ. Գ. Այս բոլոր լծկան եզերը եւ կաթնտու կենդանիները որոնք կը տրուին նորեկ գաղթականաց՝ պէտք է մուրհակաւ եւ ստորագրութիւնները փոխադարձ երաշխատորութեան սխրթեմով ստորագրել տալով տրուին եւ երբ ապագային ի վիճակի ըլլան վճարելու՝ գանձուի իրենցմէ: Խնամատարութեանս որոշումներէն է նաեւ այս:

Վ. Ատենադպիր

Ատենապետ

Հ. Գ. Սիլահեան

A[ssadour] A. Altounyan

Ը.¹⁵

¹⁴ ՀՀԳԽԿի նամակը վեր. Շիրաճեանին՝ խնամակալութեան որոշումներուն մասին: Պաշտօնական նամակաթուղթ, ձեռագիր, երկու երես:

¹⁵ Օրագրութիւն, գոյգ **գճաւոր** թերթ, երկու երես, անգլերէն, ձեռագիր, անստորագիր: 10 Ապրիլ 1930. Թէլ Պերրիի մէջ գիւղ կը կառուցուի: 10 Մայիս 1930. ֆրանսական իշխանութեան ներկայացուցիչներ կը կատեսնեն շինարարութիւնը՝

10/4/[19]30 people were transported to Tel-Berry. They were under tents. Started to dig wells and to make bricks and to plough the land.

Before this date just three months, preparations – that is to buy oxen, necessary farming utensils, tents etc. – were prepared.

10/5/[19]30 M. de Nay, M. Burnier and Capt. of Hassitche [Captain Derreumaux, the officer in charge at Hassitche] visited the site and asked to be removed to Tel-Brak site only 7-8 kilometers east, to make the distance over 50 kilometers far from Turkish boundry. It is a fact that the Armenian Comm. desired to be establish in the same (...) site, but the Military headquarter of Der Zor, General Calais, insisted to have the Tel-Berry, Tel-Brak site and no other place. General Calais himself came and congratulated and encouraged the start at Tel Berry.

14/5/[19]30 The present Tel-Brak two villages were started to be built.

During this time visited Musteshar M. Flarimou and Reis-el-Emlake Devle' El- Emir Moustafa Bey el-Shehabi from Damascus and they did approve also the site, The rooms or houses built were 140, and the stables built were 10. And the shops 8. Wells many and all people drank fine well water and not water of Jaghjagh.

Those houses and stables, shops, costed in all 2419 Turkish gold=266090 francs.

The land given to those two villages was 16500 hektars, of those 2756 hektars were ploughed and sown.

At present there are all house buildings etc., as before added one motor, costed STG. 120. Two large water wheels costed STG. 190.

People there – Tel-Brak, with 6 mules are sawing wheat, barley etc.

Թ.¹⁶

Հալեպ, 7-6-[1930]

Պատարժան Կեդր. Ինսամատարութիւն Հայ Գաղթականաց – Հալեպ

Պատարժան տիարք

Ինչպէս յայտնի է՝ Մայ[իս] 9 ուրբաթ օրը թողուցինք Հալեպ դէպի գաղթա-վայրը: Որոշած էինք Մայ[իս] 12-էն տուներու շինութեան սկսիլ: Բայց ճիշդ այդ երկուշաբթի ատուն միսիս 1-է Նայ մեզի հաղորդեց որ Թէլ Պերրին թողուլու ենք:

յայտնելով որ ան պէտք է կառուցուի Թէլ Պրաքի կողմը, որպէսզի 50 քիլօմէրը հեռաւորութիւն ապահովուի Թուրքիոյ սահմանէն: 14 Մայիս 1930. Թէլ Պրաքի երկու գիւղերը կառուցման մէջ են: Գիւղ կ'այցելեն պետական պաշտօնատարներ, կը հետեւին բոլոր կարգադրութիւններուն եւ գոհ կը մնան:

¹⁶ Վեր Ահարոն Ա. Շիրաճեան, Հալեպ [Սուրիա] հայերէն, արաբերէն եւ անգլերէն վերտառութեամբ պաշտօնական նամակի թուղթ, մէկ երես, 11 էջ, ձեռագիր, նամակ՝ վեր. Շիրաճեանէն ՀՀԳԽԿԻ. Թէլ Պերրիի աշխատանքի կասեցումը ֆրանսացի զինուորական պաշտօնատարներու կողմէ եւ վեճ՝ Էտիթ Ռոպլըրի եւ քեփթըն Derraumaux միջեւ. արաբներուն մէջ շրջանառող վտանգատր ամբաստանութիւնները նոր հաստատող հայոց դէմ եւ Շիրաճեանի խաղաղեցման ճիգերը: Թէլ Պրաք բլուրին մօտիկ երկու գիւղերու հաստատումը՝ Թէլ Պրաք ա.՝ Մեսրոպաշէն, Թէլ Պրաք բ.՝ Մեսրոպաշէն, տուններուն թիւը, գործ եւ գործողներ, օրականներ եւ առատոր, ժողովուրդին ունեցածները, տուներու շինութիւնը, կլիմայ եւ առողջութիւն, ապագայ գործեր՝ խանութներ, մառաններ, ներքին կազմակերպութիւն, արհեստներ, հաշուեցուցակ:

Աէլ քանի օր վերջ հասկցանք որ Թէլ Պրաքն ալ թողուլու ենք եղեր: Բոլորս ալ յուսախաբ սկսանք տեղափոխութեան: Միեւնոյն ատեն Հասըչէի կառավարիչ քեփ-թըն Derraumaux շատ անքաղաքավար վարուեցաւ միսս Ռուպըթօի հանդէաւ: Լորրիեցայ անկի լաւ է միսս Ռուպըթօը հեռացնել որ անկի անխորճայի վիճակ մը թող չառնէ: Վերջը հասկցանք, մեր համոզումը սա եղած է որ, մանաւանդ միաւի Պուրնիէի ազդեցութեամբ քեփթըն Derraumaux-ի շատ նեղեցին որ 50 քիլոմետրօ հեռու նստեցուցած չէ: Քեփթընը ստիպուած ինքզինք ազատելու համար ցոյց կու տայ իրրեւ թէ այս բոլոր բաները ընողը միսս Ռուպըթօս է, ինք յուր հոնի: Ինչ օգուտ, ճեներալ Գալէ եւ քեփթընը իրենք անձամբ ըսեր եւ ցոյց տուած էին: Բայց յանցատրը միսս Ռուպըթօս եղաւ: Մայիս 15-ին միսս Ռուպըթօս թողուց Թէլ Պերրի գաղթավայրը եւ դարձաւ Հալէա: Մայիս 16-23 երկու տեղի տուներն ալ փոխադրեցինք: 25000 չափ աղիաները թողուցինք ու դարձեալ գործի սկսեցինք: Բաւական յուսախաբ ոմանք կը մոռնային: Նոր յարդ, նոր ջանք պէտք էր, նոր հոր, նոր ջուր, նոր աշխոյժ ու նոր քաջակերամ պէտք էր:

Եւ թէ ճիշդ այս փորձանքի ատենները տեղական արապներու կողմանէ գէշ նայուածք եւ գողցանք կը շրջէր: Գամըշի, Հասիչէ եւ ուրիշ տեղեր եւ թէ Սիճնար շատ հայեր, որ միշտ գործերը արապներուն մէջն է, բաւական վախցան ու վախ տուին իրրեւ թէ արապ աշիրէթներ շատ գէշ լարուած են եւ կարելի է յարձակին: Պէտք էր անկի ջանքեր ընել: Չխորհեցայ կառավարութեան բան մը ըսել: Զրոյցներ շատ զարմանալի եւ տգէտ էր: Իրրեւ թէ որ արապ հայերուն թով գալ՝ գաղտնի (...)-ով կը մեռցունեն, թունաւոր կերակուր կու տան եւ կը մեռցունեն, եւ Ճաղճաղ գետին ներքը խորունկ վայր մը գտած են ու մարմինները հոն կ'անստեացնեն: Իրրեւ թէ հայերը Թէլ Պրաքի հին աներակին մէջ իրենց հին թագաւորներուն գիրքերը գտած են եւ հոն նոր թագաւորութիւն պիտի հիմնեն: Եւ կամաց-կամաց բոլոր երկիրը պիտի գրասն եւ աշիրէթներուն տեղ չպիտի թողուն: Երբ Սիճնար հայ գաթօիք Եագուպ Ամսօ Փանսօի տունն էինք, Շէլիս Ապտիպ Քերիմին գործակատարը ու իին աագակապետը իսկոյն պատմութիւն ըրաւ ի: Այս մարդը Մուհամմէտ Ալէտի պատմեց. «Իր շէլյը Ապտիպ Քերիմ, բոլոր աշիրէթներու մէջ երեք մեծերուն մէկն է, իրեն ըսած է գնա, եւ նայէ՛ ինչ են այս հայերը եւ ինչ բաներ կ'ընեն Թէլ Պրաք»: Պատասխան տուեր է՝ «Ես չեմ ուզեր երթալ ու հայերուն կողմէ զարնուիլ ու ոտուիր»: Երկու օր վերջը Շէլյը դարձեալ ստիպեր է որ երթայ յուր բեր: Ատիպուած զենքը առած ու կամաց-կամաց դէպի հայերուն մօտեցեր է: Ինչ կ'ըսէ՝ «տեսայ երեք հայ կու գար դէպի ինձի. շուտով իրացանս պատրաստեցի: Կը խորհէի որ անշուշտ իմ վրաս պիտի յարձակին. ես ալ պատրաստուեցայ զիրենց զարնելու: Բայց իմ թուկ մօտեցան, ձեռք չվերցուցին, բարեւ տուին ու հարցուցին արդեօք զենքը ծախսել կ'ուզես»: Վերջը գացին: Ես ալ դէպի գիւղ մօտեցայ եւ տեսայ հայերը հողը կը հերկեն, աղիաներ կը թափեն են.: Գացի Շէլիս Ապտիպ Քերիմին պատմեցի: Այս Մոհամմէտ Ալէտին կտորիճ մարդ է. գիշերը մէկտեղ մնացինք: Առտու ալ մեր Օթօմանի տեղ տուինք ու բաւական տեղ եկաւ: Շատ երկայն խօսած էինք. մարդը շատ լաւ ազդուեցաւ եւ պաշտօն առաւ որ բոլոր արապներուն մէջ հայերուն համար շատ լաւ պիտի խօսի եւ փրփականտ պիտի ընէ: Այդ գիշեր հող եղող հայեր Եուսափ Մալօ Ապտօ Խուտայ, Իսկէնտէր Թազէ, Ապտըլ Սիաւտ Ամսօ Փանսօ շատ ուրախացան. քանզի ասոնք շատ մտահոգ էին այս նոր գիւղերուն համար: Ճեմիլ Էֆէնտի Տիլլենի ալ իմ հետս էր:

Լորրիեցանք շատ պէտք է մեր դրացի շէլիսերուն հետ լաւ տեսնուինք եւ քարեկամութեամբ յարթենք: Կերպեր գտնուեցաւ: Եւ Հասըչէ պէկտիլի ըկիսի միաւի

Եունան Կարօի հետ մեզի դրացի Շելյի Մուհամմետ Ազուզի այցելեցինք: Շատ սիրով ընդունեց. արդէն ըսած էր որ կ'ուզէ զինք այցելենք: Իր ըովը կար 40-էն անոյի արապներ: Ինք զօրաւոր, խելացի կտրիճ մարդ մըն է: քաական փայլուն հագած: Կատահելի մարդիկ Եունան էֆ., Ճեմիլ էֆ. [Տիլնճի], Եագապ Մանկայօ եւ ուրիշներ կ'ընեն որ Շելյի Մուհամմետ Ազուզի շատ խօսքի տէր է, այս կողմերը ամէնէն զօրաւորն է. մինչեւ իսկ Մուշէլ Փաշա, Շելյի Ապտիպ Քերիմ եւ ուրիշներ զինք կը յարգեն եւ իրմէ կը վախնան: Մեծ ազդեցութիւն ունի բոլոր արապներուն վրայ: Ինքն ալ մեզ այցելեց: Շատ ուրախ է որ իրենց մօտ նստեր ենք եւ գիտ կը հաստատենք: Պատուոյ վրայ խօսք կու տայ որ միշտ հայերուն համար լաւ դրացի պիտի ըլլայ եւ ինչ որ պէտք է պիտի ընէ են, են: Ես դիտմամբ պելտիլէ ռէհի միախա եունանը իբրեւ թարգման առի որ իրենց այցերուն պզտիկ չերեամ, ուրիշ շէյխերուն հետ ալ մէկ քանի անգամներ տեսնուեցանք: Կերակուրի կը հրաւիրեն. երբեմն ընդունեցինք: Հիմայ արապներ շատ սիրով մեզի կու գան, ոչխարներ կը բերեն: Ժողովուրդին ըսեր եմ միսի գործը իրենք թող ընեն: Հիմայ իրենց խամր խոմբ ըլլալով ծախու կ'առնեն ու կը մորթեն: Խորհեցանք որ մեր խանութներէն բրինձ, շաքար, են, թող ծախուի արապներուն՝ մեզի անունը վճախ: Շատ մտաւոհ յղած էի: Բայց ուրախ եմ ըսելու որ գրոյցներ գրեթէ վերջացաւ. դրացի արապներ լաւ ճանչցան եւ ալ վախ մը չեմ զգար: Կառավարութենէն նօզթա գուլլուզ մը ուզեր էինք եւ գիշերուան համար զէնքեր: Խօսք եղաւ, բայց մէկն ալ գործ չեղաւ: Խորհեցանք այս կերպը լաւ է: Գիշերուան գայլերուն եւ չազալներուն դէմ դնելու չափ զէնքեր կայ եւ կառավարութենէն հրաման ատնուած է: Բայց դարձեալ ցաալի է, որ մայիսի 31 գիշեր գայլ մը եկած է եւ առանց ծայրի այժ մը առած է. քիչ մը հեռու կ'էւր թողուցեր է: Ամէն գիշեր 9 մարդ երեք երեք ժամ գիշերապահութիւն կ'ընեն առանց վճարումի: Շուներ կը պատրաստենք:

Ուրախ ենք փոթորիկը շուտ անցաւ. գիտացիներուն սիրտը հանդարտ է: Ադիաներ կը թափուի: Բոլորն ալ կը ջանան: Մինչեւ մայիսի վերջը մէկ շաբթուան մէջ շինուած է 6 խումբ տուն, այսինքն 24 սենեակ եւ 5 խանութ կամ մատան: Եւ այնպէս կարգադրած ենք որ ամէն օր մէկ խումբ սենեակներ, այսինքն 4 սենեակ պիտի լրանայ: Դեռ վրայները գոցուած չէ. բայց տաք վրաններէն շատ լաւ է եւ մէջը կը նստին:

Տուներուն թիւը: Թէլ Պրաք ա. կայ 85 տուներ ու Թէլ Պրաք ք. 80 տուներ: Շատ հաւանական է մօտ օրերս 200 ըլլայ. առանց բան ըսելու կու գան, գալ կ'ուզեն, մենք ալ չենք արգիլեր:

Գործ եւ գործողներ: Երկու գիտիւն մէջ կան մօտ 300 էրիկ մարդ գործաւոր եւ 200 կիս գործաւոր: Բոլորն ալ կ'ուզեն ամէն օր աշխատիլ: Հիմակուան գործերը (ա) հերկել, (բ) աղիա շինել, (գ) շինութեան մէջ աշխատիլ, աղիա կրել, եղաւտութիւն ընել են. (դ) հոր բորել. (ե) պարտէզի մէջ աշխատիլ:

Օրական 30-35 մարդ հող կը հերկէ. 40-50 մարդ աղիա կը թափէ. 40-50 մարդ շինութեան վրայ կ'աշխատի. 60-70 կիներ մանասանդ պարտէզները կ'աշխատին. 3-4 մարդ հոր կը փորէ, 5-6 մարդ արապաճութիւն եւ հովուտիւն կ'ընէ: Կիներն ալ կ'աշխատին: Լաւ է որ ձմեռուան փայտի ու ածուխի խնդիր չիպիտի ունենանք, կիներ կ'երթան չէօլէ՝ Ճաղճաղի եզերքէն ամէն կողմէն կը հաւաքեն փայտեր, խոտեր, վառելիքներ, կը շինեն թէզէքներ: ամէն բան կը խնայեն եւ իրենց փայտերը, վառելիքները կը հայթայթեն: Թէննուրներ կը շինեն եւ իրենց հացերը կ'եկին: Եթէ առտու կորիկ պէս ծայներ լսես՝ թէզէքներուն համար է:

Օրականներ եւ առուտոր: Գամբլի օրականներ են մեծիտն մեծիտ ու կէ: Մենք զիրենք քաջալերելու համար օրականները 1/4 ըրած ենք. ով որ կ'աշխատի օրական կ'անէ, եթէ ոչ՝ մարդու մը դրամ չի տրուիր: Իրենք ալ մեր տեփօ կամ խանութէն ինչ որ առնեն դրամ կը վճարեն: Առանց դրամի բան չտրուիր: Շիտակ է որ այս տէփօներու գործերը մեր ուզածին չափ լա կարգադրուած չէ: ատն չեղաւ: Վերջին օրերս ապրանքները շէնքի մէջ անուոնցաւ եւ վատահ եմ. արն. Մուշեղ Թէրճանեան երկու մատանապետ-խանութպաններ Գրիգոր Մուրատեանի եւ Պապուշ Ուսանեանի հետ լա պիտի կարգադրէ: Ժողովուրդը չտաահատելու եւ քաջալերելու համար զինքը Գամբլի եւ Հասիչէն անելի ընել չուզեցի: Այսինքն հիմակոմիմայ փոխարդութեան ծախսը շատ չեմ բարդեր: Բայց միննոյն ատնն երկրին ամէն կողմը լա սերտեցինք եւ այնպէս կարգադրեցինք որ ժողովուրդը ալիւրը պովկուրը անելի յարմար գնով կրնայ առնել եւ փոխարդութեան ծախսը կրնանք դնել եւ դարձեալ յարմար գին կրնայ ըլլալ:

Այնպէս կարգադրած ենք՝ միշտ տեփօն թող գտնուի երկու շաբաթուան համար, ուտեստեղէներ: Մինչեւ Յունիսի վերջը գրեթէ մէկ ամսուան մօտ 800 մարդու համար բանելիք ուլիւր, պովկուր, իւր, աղ են պատրաստ է:

Ժողովուրդին սնեցածները: Այս մօտ 170 ընտանիքներ ունին գէշ աղէկ իրենց անկողիները, չունեցող շատ քիչեր կան: Բոլորը մէկ ունին 183 ոչխար, 61 այծ 13 եգ. 6 ջորի 15 էշեր: Ատնք կը պատկանին մօտ 30 ընտանիքին որոնց մենք կաթնտու ոչխար այծ տուած չենք. չունեցող մնացած տուներուն համար ծախսու առնուած է գրեթէ բաժնուած է 255 այծեր: Տուն մը չկայ որ առանց կաթի ըլլայ:

Տուներու շինութիւնը: Եթէ օրական մէկ խումբ, այսինքն 4 սենեակ շինուի, 40 օրուան մէջ կրնայ շինուիլ 160 սենեակներ: Ամէն սենեակ վրայ գոցուելու պայմանաւ 7 ոսկիի մալ կ'ըլլայ: Առանց պատուիսն ու դուրերու պէտք է շուտով քաշուի որ ժողովուրդը տաքէն ազատուի:

Կլիմայ եւ առողջութիւն: Կլիման լա է. զիդացիներ հողը շատ կը հանին: Օդը շատ լա է: Հիանդութիւն գրեթէ չիկայ: Պատմանեան երբեմն կ'այցելէ: Ամէն զիւր 3 հոր ունի. ջուրը լա են: Հորերուն թիւը կ'աւելցնենք:

Ապագայ գործեր: Պէտք է անելի գործ: Ամէն մարդ կ'ուզէ աշխատիլ ու կամաց կամաց տիրանալ վճարումով իրեն յանձնուած եգ, այծ եւ տուներուն: Յունիս սկիզբէն մինչեւ կէսը ըսեր եմ կարելի եղածին չափ ամէնէն աղքատներ թող աշխատին: Կամ ամէն մարդ թող շաբաթը երեք օր աշխատի: Ասիկայ ամէնէն լաւը չէր: Բայց ստիպողական տեսայ: Գործ հայթայթելու է: Առաջին գործը ըլլալու է ճահճարէն ջուր հանել: Պէտք է արագ շինուի: Ճահճար գետը ջուր կայ եւ հոսանքը մեթօրին կէս անթիմ կու գայ. գետը գետնի երեսէն 3-3 1/2 մեթօն ցած է. ջուր կրնայ հանուիլ. թէ գործ կ'ըլլայ եւ թէ ապագայ ապագայ աշուն եւ ծմեռ, զարուն ամառ կրնայ գործածուիլ: Այս հողերուն վրայ ամէն սերմ կրնայ ցանուիլ. ամէն տեսակ կանաչեղէն կրնայ ըլլալ. ամէն տեսակ ծառ կրնայ տնկուիլ: 10,000 թիւթիսի չէթի ապա-ջրած ենք որ այս տարի ցանուի. կատակարութենէն հրաման առնուած է: Ուրիշ գործ մը՝ զիւրերուն լաղըմները կրնայ շինուիլ: Աշնան վերջերը կրնայ տնկուիլ հարիւր հազարներով թէ պողպէր եւ թէ անտառի ծառեր: Հարկաւ աշունը պատրաստ հողի վրայ մեծ քանակութեամբ ցորեն են պիտի ցանուի:

Խանութներ, տեփօներ: Պէտք է 300-400 ոսկի երկու զիւրերուն խանութներուն յատկացուի: ա. Բոլորովին զատ հաշիւներ ունենայ: Ինքզինք կրնայ մնայուն պահել: Հիմակուան կարգադրութեամբ երթանք, թէ փոխարդութեան վարձքը եւ թէ քիչ մըն ալ շահ կրնանք դնել: Ալիւրին օգգան 30 փարա եւ պովկուցու ցորենին

օգգան 30 փարա ոսկի դրամ, որ փոխադրության վարձքը եւ քիչ մըն ալ շահ կայ եւ Գամըշի հրապարակաւ աժան է: Օրէ օր շրջակայ արապներ ոչխար, աղ, ցորեն են պիտի բերեն եւ Հասիչէ եւ Գամըշիլէն անկի յարմար գններով պիտի առնուի եւ տրուի:

Ներքին կազմակերպութիւն: Թէլ Պրաք ա.ի համար Տիգրան Ռշտունի մխթար եւ գործերու պատասխանատու: Պոպուշ Օհանեան տեփօի պատասխանատու: Ասկէ զատ Տիգրան Ռշտունի, Պոպուշ Օհանեան, Մանուկ Սարգիս, Գէորգ Մանուկ եւ Յարութիւն Միրզօ տեղական ժողովք մը ընտրուած է: Դարձեալ Թէլ Պրաք բ.ի համար. Գրիգոր Մուրատեան մխթար ու տեփօի պատասխանատու, Ղազար Ղուկաս գործերուն պատասխանատու. այս երկուքին մէկտեղ Ազատ Ազատեան, Ղուկաս Էմիշ, Ներսէս Թումասեան՝ տեղական ժողովք: Ասոնք 10 հոգի, կարող բարի եւ խելացի մարդիկ են: Կրնան իրենց գիտացիներուն ազդեց: Իրենք հրապարած են ցնոր տնօրէնութիւն: Պրն. Մուշեղն ալ իրենց հետ պիտի ըլլայ: Հալէլպ գրուելիքները պրն. Մուշեղի ձեռամբ պիտի գրուի: Վերջին օր այս երկու տեղական ժողովքները միացունելով պէտք եղած հրահանգները ու խրատականները տուի. խօսք տուին. շատ սիրով պիտի ապրին եւ երկու գիտներու մէջ դժուարութիւն չի պիտի հանեն: Ամէնէն շատ վախս ատիկայ է, բայց վստահ են պրն. Մուշեղը այդ պակասը պիտի լրացնէ եւ յաջող պիտի երթան:

Կարգադրուած է երկու գիտերը զիրար կապող ճամբան շտկուի ու ձմեռուան ցեխին դէմ պատրաստութիւն թող ըլլայ: Քիչ ծախսով ճարճադէն աւագ պիտի բերուի ու շտկուի: Եթէ յարմար ըլլայ այս երկու գիտին մէջտեղը եկեղեցի եւ դպրոցի տեղ դրոշեր ենք եւ հիմայ հոն հոր ալ կը փորուի: Արդէն հիմայ չճոճագներ խաղալով գիտէ գիտ կ'երթան:

Գիտացիներուն բարոյականը լաւ է: Շատ խօսք չի կայ: Կիրակին, պագ ու տօներ օրերը շատ լաւ կը բռնեն: Էրիկ մարդիկ կօշիկ կը հագնին. կինները երբեք չեն հագնիր: Անուններ գրելու առնն անշուշտ տղայոց անունները առաջ գրել կու տան եւ աղջիկները վերջը: Հարիւրին տասը կարելի է հայերէն գիտէ, նոր սերունդը շատ տրովելու է: Պէտք է դպրոց:

Մանաանդ երկու մարդ մեզի շատ օգտակար եղած են: Մուշեղ էֆ. Տօմ¹⁷ Գամըշի, 30-32 տարեկան մարդ մը, արապերէն, տաճկերէն, ֆրանսերէն, քիւրտերէն լեզուներ կը խօսի: Անգլիերէն հայերէն շատ քիչ գիտէ. դեռ չամուսնացած. բայց պատուաւոր՝ մայր, եղբայրներ, տունի տէր: Միշտ պաշտօնեայ: Հիմայ նոր գրուած տեղերուն կանչուած է միտիր ըլլալու. լաւ էֆէնտի մի ճանչցուած բոլոր աշիրէթարապ-քիրտ շէխերէն: Կ'արժէ կերպով մը գնահատել:

Հասրէլ Ճեմիլ էֆ. Տիլէնի¹⁸. 30-32 տարեկան մարդ մը, մայր ու կին ունի, բարոյականը լաւ, շատ ճարպիկ ու աշխատասէր, մօտ երկու հազար ոսկի տէր. Հորթի եւ իւղի վաճառական, գիտէ արաբերէն, քիւրտերէն, թրքերէն լեզուներ, գիտէ քիչ մը հայերէն ու ֆրանսերէն: Ճիշդ գործի մարդ, գրեթէ Հասրէլ, Սինճար ու շրջակայք բոլոր արապ, քիւրտ, եւ եկեղեցի աշիրէթներու շէխերու հետ գործ ու յարաբերութիւն ունեցող լաւ ճանչցուած մէկն է: Մեր բոլոր գործերը լաւ կերպով ըրած է եւ դրամական խնդրոյն մէջ հաւատարիմ: Կ'արժէ գնահատել:

¹⁷ ԳՏՅի գործունեայ անդամներէն մէկը:

¹⁸ ԳՏՅի գործունեայ անդամներէն մէկը:

Արհեստներ: Գիտլացիներուն մէջ քաական արհեստարուներ կան կամաց կամաց պիտի կազմակերպուին: Լաւ բրուտներ կան: Հողերը կը գնեն, կարասներ, կղմինարներ են շինող փորձառու վարպետներ են, իրենց համար ալ տեղ ու շէնք յատկացնելու խօսք տուած ենք: Ուրիշ մը կայ, օրի կրնայ անել. երկրի մէջ արհեստն է եղեր: Հրաման ուզեց. ես այդ կամ ոչ ըսել չուզեցի: Ինձամատարութեան թողուցեր են:

Յայտնի է երկու կեդրոններէն Գամըշի Հասըչէ 50-40 քիլօմետր հեռու անապատ տեղեր գիւղեր հաստատել իրենց մասնատր դժուարութիւնները պիտի ունենար: Մանաւանդ տեղի որոշումը յոգնեցուցիչ եւ ծախսատր սխալներու պատճառ եղած է: Ինչ եւ իցէ, ասկէ վերջ օթօծօպիլի ծախսերը գրեթէ վերջացած է: Եւ կարգադրուած է ալ անելի մեր անասուններ եւ արապաներ թող աշխատին: Երբեք չեն խորհիր որ որսէլ մարդ այս ծախսէն պակասով այս գործերը կրնար ընել:

Թէլ Պերրի եւ Թէլ Պրաք մեր հերկած ու թողուցած հողերը գտնէ զալ տարուան համար պիտի կրնանք գործածել:

Մինչեւ Մայիսի վերջը [1930] 21 Հալէպ եւ թէ Գամիշլի Հասիչէ ծախսուած 2150.64 օսմանցի մետաղ ոսկի ծախս եղած է որ հետեւեալ կերպով են

88 եգերու, 253 այծերու, 1 ձիու, 3 ջորիի, 2 կառքերու (...), արօրներ, երկաթեղէն, վրաններ ունի տրուած	971.84.96
Սերմնացոյի վճարուած	016.08.75
Խանութներու համար առնուած նպարեղէններ	056.69.77
Դեղորայք [...] են.	058.61.19
Գիտլացիներուն վճարուած վարձքեր	605.93.37
Այս գումարին դիմացը կայ 60 տէօնիամ ծմերով են	
Ցանուած հող 90.000 աղիաներ, շինուած 24 սենեակներ	
300. 000 քիլօ սերմնացոյ ցանուելիք, 30 000 տէօնիամ հերկուած հող	
Գիտլացիներուն են փոխադրութեան ծախսերը՝ 180 ընտանիք	198.71.80
Ցանձնախումբի երթեւեկութեան ծախսեր	169.99.61
Վարչական եւ զանազան ծախսեր	072.75.39
	2150.66.84
Պատրաստ	55.43
	2151.19.27

Ա[հարոն] Ա. Շ[իրաճեան]

Ժ.¹⁹

Ներքին կազմակերպութիւն եւ աշխատութիւնք

¹⁹ «Ներքին կազմակերպութիւն եւ աշխատութիւնք» վերնագրուած այս գրութիւնը թուական չունի, գրուած պէտք է ըլլայ Ապրիլ-Մայիսին: Նամակի գծատր զոյգ թերթ, ձեռագիր, 3 էջ: Վերջին՝ «Յանելում» պարբերութիւնը՝ մատիտով: Կը ներկայացնէ հողի սեփականութիւնը գիտլացիներուն անցընելու կերպերը, աշխատավարձերը, գիտլացիներուն յանձնուած կենդանիներն ու կառքերը եւ անոնց տէր դառնալու հնարատրութիւնը, խանութ ու առետուր, գիւղի մաքրութիւն ու արաքներուն եւ քիւտերուն հետ բարիդրացիական յարաբերութիւններ, տեղական ժողով ու գիտլապետ, կենցաղային կարիքներու հայթայթում:

1. Հայկաի պատարծան Կեդրոնական խնամատարութիւն հայ գաղթականաց՝ որոշած է թափուի ընել տալ այդ հողերը որ կառավարութիւնը կը տրամադրէ գաղթականներուն վրայ եւ իրենց անուններով:

2. Այս նոր հաստատուած գիւղերուն նպաստ պիտի չտրուի: Մինակ աշխատութեանց վարձքերը պիտի վճարուի: Մուրացականներ եւ ծոյլեր չըսպիտի պահուի: Չաշխատողը բան մը ուզելու երբեք իրատնք պիտի չունենայ:

3. Աշխատութեանց վարձքերը հիմակուհիմայ հետեւեալ ձևով պիտի վճարուի.

ա. Հող հերկողներուն օրականը 1 ¼ մէհիտ. օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

բ.- հովիներուն օրականը 1 ¼ մէհիտ, օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

Դգտիկ հովիներուն վճարուող պակաս է:

գ. Օրական աշխատողներուն (ամէլէ) օրականը 1 ¼ մէհիտ, օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

դ. Որմնադիրներուն օրականը (քարիիճ պատողներուն) 2 մէհիտ. օսմ. ոսկի 1 ¼ մէհիտ, օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

ե.- Հիաներուն – նաճար – օրականը 2 ½ մէհիտ, օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

զ.- Լաւ նաճարներուն համար բացառութիւն:

Կառապաններուն օրականը 1 ¼ մէհիտ. օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

է.- Կիներուն օրականը ¾ մէհիտ. օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով, օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

ի.- ամէն 1000 քարիիճ թափելու վարձքը 13 մէհիտ. օսմ. ոսկի 14 ½ -15 մէհիտի հաշուով:

Յարող պիտի հայթայթուի խնամատարութեան կողմանէ:

4.- Եզեր եւ այծեր, ձի, ջորի եւ կառքեր.

Ամէն հողագործ մարդ իրեն յանձնուած եզերուն պատասխանատու է. լաւ նախելու եւ միշտ զօրաւոր պահելու է: Օրական հերկած հողն ալ բաական չափ ըլլալու է: Օրական 2 տէօնիս:

Ամէն հայ կին որ իրեն յանձնուած է այծեր, լաւ պահելու է. պիտի անէ կաթը, բայց պէտք է ուշադրութիւն ընել որ կաթը շատ աննելով ուլերը չտկարացնէ:

Կառապաններ որ իրենց յանձնուած է ձի կամ ջորի եւ կառքեր, ատոնց համար պատասխանատու է. անասուններ ամէն օր թիմար տեսնելու են: Կառքը միշտ պէտք եղածին չափ իւր տեսնելու է:

Սա յայտնի թող ըլլայ որ ամիսը կամ երկու ամիսը անգամ մը անասուններ, մանաանը եզեր ու ջորիներ եւ ձիեր գօնթօրով պիտի ըլլայ եւ թէ գործը լաւ ընող եւ թէ անասունները առողջ պահողներ նուէրով պիտի վարձատրուին:

Կեդրոնական խնամատարութիւնը կ'ուզէ որ կամաց-կամաց ամէն մարդ ու կին իրենց յանձնուած եզ եւ այծերուն տէր թող դառնան թագսիթ թագսիթ վճարումով: Այս կարգադրութիւնները պիտի ըլլայ յարմար ատենը:

5.- Խանութներ եւ առեսուր

Ամէն գիւղի մէջ մէկ կեդրոնական խանութ կամ ամբար պիտի գտնուի: Այս խանութներուն մէջ պիտի ըլլայ պէտք եղած ուտեստեղէնը, հագուստեղէն են, են, կարելի եղածին չափ կատարեալ:

Այս խանութներէն ամէն մարդ եւ կին ինչ որ կ'ուզէ կրնայ գնել. կանխիկ դրամով պիտի գնուի: Քանի որ ամէն աշխատողին վարձքը ճիշդ ատենը եւ վճան կը վճարուի. այնպէս ալ ամէն մարդ խանութէն ինչ որ անէ կանխիկ պիտի վճարուի: Կամ անշուշտ ամէն շաբթուան վերջը հաշիւներ մաքրուած պիտի ըլլայ: Ինչպէս

խանութներ իրենց կանոնադր տեսրակները ունին, միեւնոյն ատեն մարդուն ձեռքը իր տեսրակը պիտի ըլլայ, որ միշտ իր ըով պահելով հաշիւները գիտնայ:

6.- Ամէն մարդ, այր եւ կին, որ այս գիտելուն մէջ կը բնակի՝ ըլլալու է բարի եւ նկարագրի տէր, յարմարող թէ գիտիս մարդոց հետ եւ թէ լաւ վարուող դրացի արապ եւ բիրտներուն հետ: Գիտելը մարդը պահելու համար հակառակ պարագայի տակ խնամակալութիւնը կտրուի միջոցներու կրնայ դիմել:

7.- Ամէն գիւղ պիտի ունենայ չորս հոգիէ բաղկացեալ տեղական ժողովք մը եւ ուրիշ հաստ մըն ալ իբրեւ մխթար: Մխթար պէտք է այս ժողովին հետ աշխատի:

Հիմակ ու հիմայ այս մըխթարը ու չորս անդամները պիտի ընտրուին խնամատարութեան կամ իրենց պատուիրակներուն կողմանէ:

Ծանօթութիւններ

ա.- Շարաթը անգամ մը միս պիտի մորթուի ու ամէն ուզող ծախու կրնայ առնել: Եթէ ժողովուրդէն մէկը կ'ուզէ իրեւ մսագործ այս գործը իրեն վրայ առնել՝ կրնայ ընել: Եթէ դարձեալ մէկը կ'ուզէ ճաղճաղէն ծով բռնել ու իբրեւ ձկնորդ աշխատիլ՝ կրնայ ընել:

բ.- Հոս գիտելը ցանոսած կանանչեղէններ մինչեւ որ հասնին՝ շարաթը երկու անգամ պիտի բերուի Գամըշլիէն եւ Հաւքէէն եւ պիտի ծախուի հոս:

գ.- Հոս գիտելու մէջ ցանոսած կանանչեղէն՝ ձմերուկ են հասոյթ բերեն. անոնց մէկ երրորդը մարդու զլուխ ձրի պիտի տրուի, մնացած 2/3ը պիտի ծախուի:

դ.- Պէտք է ժողովուրդը կանոնները յարգէ եւ խանութներուն կանոնները եւ գործի հսկիչները ու պաշտօնեաները յարգէ ու հնազանդի: Միայ կողմէ ալ հսկիչ եւ պաշտօնեաներ պէտք է արդարութեամբ վարուին: Գործին հասատարիմ եւ միեւնոյն ատեն ժողովուրդին հետ համեստ եւ բաղաքաւար վարուին եւ ազգը ներկայացունող կեդրոնական խնամատարութեան պատասխանատու տեսնեն իրենց զիրենք:

Ամէն մարդ երբ իր տունը շինել կ'ուզէ՝ իրեն պիտի տրուի 2500-3000 բարսիիմ կամ որչափ որ պէտք է: Իր տունը լրանալէն վերջ 3 շարթուան մէջ այս բարսիիմները ետ պիտի դարձունէ:

ԺԱ.²⁰

Պատուարժան Կեդրոնական խնամատարութիւն Գաղթականաց Հայոց

²⁰ Վեր. Շիրաճեանի նամակը ՀՀԳԻՄԿին: Յուլիս ամսու սկիզբ, 1930, տեղեկագիր պաշտօնաթուղթի վրայ, վերտառութիւնը՝ վեր. Ահարոն Ա. Շիրաճեան, արաբերէն, հայերէն, անգլերէն. P. O. B. 248, Aleppo, Syria: Ձեռագիր, հայերէն, 7 էջ մէկ երեսով: Բովանդակութիւն՝ 120 սենեակներ շինոսած են, առաստաղի գերաններու եւ տախտակներու տեղադրման աշխատանքի շարունակութիւն, փոքրիկներու հիւանդութեան պարագայ, մահեր, գիւղացիներուն տրուած դրամական նպաստները հունձքին ետ գանձելու հարց, օրականներու նուազում, բողոքներ, խառնակցութիւն: Գամիշլիէն տոքթ. Պասմաճեանի եւ Հասիչլի գինտրական բժիշկի կատարած քննութիւնները եւ տեղեկագիր: Մկրտիչ քիւյ. Մուրատեանի²⁰ եւ վեր. Մ[անասէ] Փափագեանի²⁰ առանձին այցելութիւնները: Ստիպողական ընկիթներ՝ երկու գիւղերը կապող ճամփայ, եկեղեցւոյ եւ դպրոցի վայր, ջրհան շարժիչի գնում՝ Հրաչ Փափագեանի²⁰ եւ տոքթ. Պասմաճեանի առաջարկով, Ռուպրոցի ղեկավարութեամբ կանանց մանելու աշխատանքի կազմակերպում:

Պատարժան Տիարք

Յուլիս 1-ին Թէլ Պրաք հասանք. տեսարաններ իմ խորհածէ տարբեր էր: Մէկ քանի վրան տեսայ: Երկու գիւղի մէջ 120 սենեակներ շինուած էին: Վրաններուն մեծ մասը շոք ըլլալու համար տանիքներու վրան դրուած էր: Արդէն 1100-էն անկի գերաններ եկած էին: Մէկ զամիօն տախտակները գրեթէ հետս հասաւ: Որչափ ջանք ըրի որ արտնջ հետ քաական տուններ թող գոցուի, կարելի չեղաւ: Գրեթէ ամէն տան մէջ տաքութենէն ազդուած հիւանդ սգոտիկներ կար եւ հինգ վեց մահ ալ պատահած էր: Տեսարանը եւ վիճակը խճալի էր: Պէտք եղած քաջաւերութիւնը տուինք խնամատարութեան անունով: Ամէն ալ աղաչեցին որ գոնէ ամէն տանիքի վրայ 6-7 տախտակ թող դրուի եւ հիւանդները շոք թող վայելն: Ստիպուած ընդունեցի: Մեր առջի պայմանը սա էր որ ամէն մարդ իր տան աղիաները թափէ, բայց տեսայ որ քաական աղիաներ թափուած էին եւ անիլ թափելու պէտք չկայ: Շինուած սենեակները գուշով բաժնել ուզեցի, բայց անկարելի եղաւ: Մէկ ձայն կ'ըսէին թող վերջանայ եւ վերջը բաժնուի: Մեր պաշտօնեաններն ալ այդ գաղափարէն էին կ'երեւի. քնական ալ այդպէս էր: Իրենց բացատրած էի որ իրենց ինչ որ տրուած է, սննէտի ռապթ պիտի ըլլայ եւ գալ հունձքէն սկստալ կամաց-կամաց պիտի վճարուի: Յօժար էին պայմանները ընդունիլ, բայց ոմանք ապստամբ հոգի կը ցուցնէին: Օրականներ դեռ մէճիտ մի քառորդ վճարում կ'ըլլար, ստիպուեցայ ծանուցանելու որ յարմար խօսքերով Յուլիս 1-էն վերջ էրիկ մարդոց օրականները պիտի ըլլայ մէկ մէճիտ եւ կիներուն օրականները պիտի ըլլայ 6 պարպոյթ: Հարկաւ այս ալ զիրենք թիչ մը զայրացուց, բայց առանց կոխի ջանք ըրինք զիրենք համոզեց: Ինձի շատ պարզ երեցաւ քանի որ աղիաներ շատ թափուած էր. պէտք է գոնէ ասոնց դրամը պահանջել: Եւ կը զգայի որ անյարմար ու խառնակիչներ կայ թող յայտնի ըլլայ: Այս մտածումներով առաջարկեցի ամէն տուն մէկ մէկ օսմանցի ոսկի թող վճարէ: Տրտուեցանք շատցաւ: Բաական մաս մը ըսին Գամբըլի կը վերադառնանք: (...) շատ էր: Պաղ արիւնով հասկուցունել տուինք, պէտք է վճարուի. Մանասանդ որ աղիաներու գործը վերջացած է: Բաական համոզուեցան: Ես ալ խօսք տուի որ շուտով տանիքները պիտի գոցենք ու զիրենք տաքէն պիտի ազատենք: Իմ միտքիս մէջը կը խորհէի որ իրենցմէ առնուած 100 ոսկիէն անիլն շուտով տախտակ եւ գերաններուն կու տանք եւ այս գործը կը լրանայ: Ասոր համար շատ կարճ ընել ուզեցի եւ նաճարին հեռագրեցի, որ շատ շուտ թող դրկուի ճիշդ առաջարկան պէս: Բայց շատ կը ցաւիմ որչափ որ ժողովուրդէն գանձեցինք 116 ոսկի 80 դրոշ ոսկեդրամ, բայց այս ալ հաշտյն մէջ մտաւ եւ իմ ձեռքիս կանխիկ բան մը չմնաց: Առջի օր Գամբըլի գացած էի. տօքթ. Պասմանեան ալ մէկտեղ ըլլալով երկու կտօք ձիերով աօրնք 36 օսմանցի ոսկիով եւ հիմայ չորս կտօքեր կ'աշխատին: Երբ գացի եւ տեսայ կառքեր պէտք եղածին չափ չեն աշխատիր եւ քաական մեծ գումար կ'երթայ զամիօններուն, ստիպողական տեսայ այսպէս ընել:

Տօքթ. Պասմանեանը Գամբըլիէն մէկտեղ արի որ նայի հիւանդներուն եւ օգնէ գործին: Երեք օր մէկտեղ էինք, տօքթ. Պասմանեան ալ ռափօրք ըրաւ, որ մանասանդ պոտիկներ տաքութենէն կը ներդուին եւ պէտք է տանիքներ գոցուին:

Օրեր վերջ երբ Հասըչէն մեր գիւղերը պիտի երթանք՝ Հասըչէ գինուորական բժիշկն ալ եկաւ եւ ըսաւ մէկտեղ երթալ կ'ուզէ: Եկաւ, այն օր մինչեւ իրիկուն մնաց հիւանդներուն նայեցաւ: Գրեւ տուաւ այսինչ դեղեր պէտք է: Գիւղերուն տեղը, օղը, եւ մանասանդ հորերուն ջուրերը շատ համեցաւ, շատ գովեց: Արժ: Տէր Մկրտիչ քինչ. Մուրատեան ալ մէկ օր այցելեց մէկ գիշեր հոն մնաց: Վեր. Մ. Փափագեան ալ այցելեց երկու գիւղերը աչքէ անցուց. շատ գոհ մնաց, այնպէս պատահեցաւ

երբ Գամբլյի էինք եւ վեր. Մ. Փափագեան մեր հետ, ճիշդ Տաճկաստանէն եկած երկու հոգի որ ազգականները մեր գիտերուն մէջն էին, աղաչեցին գիտը երթալ: Ես հրաման չտուի: Գիտէի որ խնամատարութիւնը անյի ծանրութիւն չ'ուզեր: Բայց վեր. Մ. Փափագեան միջամտեց ըսելով թող երթան, մենք Ամերիկայէն Բարեգործականի²¹ խողովակով բաւական դրամ դրկեցինք եւ պիտի ջանանք անյի դրկելու եւ ըսաւ ասոնց համար «Ես մասնաւոր պատասխանատուութիւն կ'առնեմ». բայց ես կը ջանայի որ ներկաներէն պակսեցունենք, դրամ ուզած ատեննիս ոմանք շատ դէմ դրին եւ ըսին կ'երթանք. անոնք որ մենք ալ կ'ուզէինք երթան՝ թողուցինք որ երթան: Երկու գիտէն մեկնեցան մօտ 10 տուն, մեծ մասը առանց ընտանիքի եւ ասոնցմէ առինք օթօժօպիլի դրամ 210 դրշ. ոսկեդրամ. ասոնց երթալէն վերջ գիտերը հանդարտեցան: Տէր Ջօր բանտէն ելլողներէն երեք մարդ ալ մեր գիտերը եկան: Ամստան մէջ ծախսեր

90.00	գերաններու համար առ հաշի
47.83	դրկուած 10 գիպ մեթր տախտակներ
36.00	երկու կառք ու երկու ձիեր
76.00	մատանի համար գնուած բաներ
23.00	յարդ՝ աղիաներու համար
498.18	5 շաբթուան մէջ տրուած օրավարձեր
150.00	փոխադրութիւնք
921.01	

Գանձումներ

81.89	մատանէն ծախուած փոխարժէքը
116.80	տուներու համար գաղթականներէ գանձում
2.10	վերադարձող գաղթականներէ օթօժօպիլի դրամ
47.83	դրկուած տախտակներու արժէքը
708.18	ուղղակի գանձապահէն քաշուած
936.82	

Յուլիս ամստան մէջ ստիպողական ըլլալիքներ

1. Տուներ լրանալու են. տանիքներ եւ վերջը ամէն տան երկու պատուան եւ մէկ դուռ:

2. Գունէ 40-50 եգեր, որ ամէն հողագործ ընտանիք մէկ եգ ունենայ:

3. Երկու ձիեր կառքերու համար եւ մէկ ձի մանաւանդ Հասրէշ երթալ-գալու համար. եթէ ոչ օթօժօպիլ շատ ծախսի պատճառ պիտի ըլլայ:

4. Աերմացու ցորեն են. ճիշդ ատենն է ծախու առնելու:

5. Պրն Մուշէլին [Թէրճանեան] ամսականը դրկուելու է. քանի անգամ յիշեր են. այս անգամ աշխատիլ չուզեց, իրեն գրութիւն մը տուի որ Յուլիսէն սկսեալ իրեն յարմար յաւելում պիտի ըլլայ:

6. Յարմար է ամէն տան պուկուրցու ցորեն ու ալիւր տալ եւ այսպիսով Յուլիսէն վերջ օրականները թողուլ եւ ամէն մարդ ազատ իրեն յարմար թող աշխատի. մատանը, ախոռը ել թող շինեն:

- Իմ կարծիքով պէտք է.
- 250 ոսկի տուները լրացնելու
- 250 ոսկի Յուլիս ամսականներ

²¹ ՀՔԸՄ:

200 ոսկի եզեր

300 ոսկի տուներուն բաժնուելիք ցորեն են.

350 ոսկի սերմցու ցորեն

1350

Եթէ կարելի է բոլորն ալ այս 3-4 շաբթուան մէջ ըլլայ աւելի աճան կ'ըլլայ եւ դիպին է:

Չհերկող 6 եզերը պիտի ծախտի եւ հերկողներ պիտի առնուի:

Ապագայ վճարում: Հաշիւ ըրինք. մէկ սենեակ 8 ոսկիի մալ կ'ըլլայ եւ մեզի երեցաւ տուն մը, եզ մը, այժմ մը հերկելու գործիքներ են. 17 ոսկիի մալ կ'ըլլայ: Արդեօք յարմար չէ՞ որ ամէն ընտանիք 15 ոսկիի պարտական ելլայ. մէկ ոսկին վճարեց եւ մնացած 14 ոսկին ալ գալ հունձքին վերջը ամէն երեք ամիս մէկ ոսկի վճարէ: Այս որոշումը, ինչ որ պիտի ըլլայ, խնամատարութիւնը կրնայ որոշել:

Երկու գիւղերը ուղղակի ճամբայով իրար կապուի. քայելով քնական կերպով 20 րոպէ կը տես: Թէ ապագայ ցեխերէն փրկուելու եւ թէ երկի մարդոց քիչ մը գործ ըլլալու համար ճամբան շտկել կու տանք:

Եկեղեցի եւ դպրոց: Գաղափար մը եղած է, որ երկու գիւղերուն ճիշդ մէջտեղը եկեղեցի եւ դպրոց շինուի: Կամ ամէն գիւղ իրեն համար. արդեօք խնամատարութիւնը կ'ուզէ՞:

Ջուրի եւ առուի խնդիրը: Եթէ ջուր կայ՝ այս գիւղերուն ապագան շատ փայլուն է: Ջուր չըլլալուն համար անջուր սերմեր ալ լաւ չեղան: Վերջին օրերս 20.000 թիւթին չէթիլի տնկուեցաւ: Թիթերըներով կը ջրուի. տեսնենք արդիւնքը: Ճաղճաղ գետին հոսանքը դարձեալ չափեցինք տօքթ. Պասմաճեան ալ մէկտեղ ըլլալով: Դարձեալ վստահ եղանք որ Ճաղճաղին հոսանքը ամէն քիւմբէթոյի զլովս 4-5 մետրօ է որ երեք քիլոմետր հեռունէն ամուռի մեր գետինին մէկ մասը կրնայ ջրել եւ թէ ջարդացք կրնայ շինուի: Թէ՛ առեն նեղ էր եւ թէ Հասըջի քեփթընը հիւանդ եղած էր, յարմար չեղաւ սկսիլ:

Պրն. Հրաչ Փափագեան եւ Տօքթ. Պասմաճեան առեն տուած եւ քննած են մէկ մօթօրի համար որ 6 ինչ է եղեր եւ թէ՛ ջարդացքի եւ թէ արտերը ջրելու համար կը քաւէ եղեր. շուտ կ'ուզեն որ այս գործը կատարուի եւ 200 ոսկի կ'երթայ եղեր:

Պրն. Կարապետ Եւտայեան բոլոր առեն աշխատեցաւ հաշիւները տեսնելու եւ վերջացնելու համար. շատ օգտակար եղաւ:

Միսս Ռոպրթօս ջանք կ'ընէ բոլոր մանելու գործը զօրացնելու. արդէն կ'իներ դրամ առնելու սկսեք են: Այս երկու ամսուան մէջ կ'իներուն ուրիշ օրականով գործ ընել շատ յաւաքի չէ:

Միսս Ռոպրթօսի հետ տեսնուեցայ եւ այս տանիքները գոցելու համար 50 օսմանցի ոսկի տուաւ:

ԺԲ.²²

5/7/[19]30

Մեծ. Տիար Մ. Թէրճանեան

Հետեւեալ կէտերը հաճեցէք գործադրել.

²² Վեր. Շիրաճեանի նամակը ԳՏՅի անդամ Թերճանեանին: Գծարտ թուղթ, առանց վերտառութեան, ձեռագիր, երկու էջ: Բովանդակութիւն՝ բանտորներուն, կանանց եւ կառապաններուն օրականներու նոր սահմանափակում, աշխատանքի հնարաւորութիւններու սահմանափակում եւ այլ կարգադրութիւններ:

1.- Յուլիսի սկիզբին սկսեալ երիկ մարդոց օրականները - հողագործ եւ գործատր - թող վճարուի մէկ մէծիս:

2.- Կիներուն օրականները թող ըլլայ 6 պարպուք: Քանի որ գործը շատ չէ, այ անոյ երիկ մարդիկ թող աշխատին:

3.- Չորս կտուապաններուն օրականները թող ըլլայ 1 ¼ մէծիս, պայմանաւ որ կանոնս գործին կ'երթան եւ անատունները թիմարներով որջ-ատող կը պահեն: 6 ջորի եւ ձիերուն ատուո իրիկուան գարիները ամէն ատեն ամպարի պաշտօնեայէն թող առնեն: Կառքերը Կիրակի օրերը թող չաշխատին: Անատունները հանգիստ թող ընեն: Կառքերուն հաշիւները գատ թող բռնուի:

4.- Քանի որ գործ քիչ է, մէկ տունէն եթէ կայ 3-4 հոգի աշխատող, ատնցմէ մինակ երկուքը թող աշխատի: Կարելի եղածին չափ գործ հասասար կերպով թող տրուի:

5.- Մեծ ընտանիքի տէր մէկ աշխատող առհասարակ գործ թող ունենայ:

6.- Ինչպէս որ զամիսներու ծախսին վերջ տուած ենք, մեր չորս կառքերը թող միշտ զբաղին: Թէ Հասըչէլէն եւ թէ Գամըշլիլէն փոխադրութիւններ մեր կառքերով թող ըլլան: Ամէն երկուշաբթի օրերը մէկ կառք-երկու ձիով, Գամըշլի երթալու է եւ բաական չափ կանանչեղէն ու պտուղներ բերուելու եւ ժողովուրդին ծախուելու է: Եթէ այս բաները ծախու առնելու համար Գամըշլի յարմար մէկը չկայ, արապաճիին հետը ուրիշ յարմար մարդ մը կրնայ դրկուի: Դարձեալ ամէն երկուշաբթի օրերը մէկ կառք - երկու ձիով - Հասըչէ թող երթայ: Երթալու ատեն մանուած թելերը կռնելով մէկտեղ դրկեցէք Հասիչէ Ճէմիլ [Տիլէնճի] Էֆէտտիին: Փոսթան թող բերէ: Եւ եթէ փոխադրելիք ուրիշ բան չկայ՝ Հասիչէլէն բուրջ թող տանի: Փոխադրութեան վարձ՝ Հասըչէլէն զանթարը - 200 օզգան - հաշիւ ըրէք 20 դրջ: ոսկեդրամ: Գամըշլիլէն զանթարը 25 դրջ: ոսկեդրամ:

7.- Ամէն ջանք ընելու ենք որ դրամը դուրսը թող չելլէ: Փոխադրութեան ծախսը պակսի եւ դրամը ժողովուրդին թող երթայ: Արապաներով աղիս թող չկրուի: Ամէն հարիւրի մէկ-երկու դրջ, անոյ թող տրուի: Եւ աղիսներ ձեռքի արապաններով թող փոխադրուին:

8. Բուրջ մանելու համար կիներուն մէկ մէկ օզգա թող տրուի եւ բոլորը մանելով թող բերեն եւ թելը կռնելով թող առնուի: Աղտոտ սեպած կտորներն այ մէկտեղ բերելու են: Մէկ օզգայի մէջ 10-15 տրիէմէն անոյ պակսելու չէ: Բուրջին պզտիկ կտորները թող բերեն եւ մէկտեղ թող կշռուի եւ զատէն թող պահուի: Կարձքը բերածին պէս թող վճարուի:

Ա. Ա. Շիրաճեան

5/7/[19]30, Թէլ Պրաք

Յանելում. մէկ քանի մարդոց, որ տուն տեղ ցուցուցեր են, անոնց գերանները եւ տախտակները եւ քարփիճները մենք տանք: Աղիաներու փոխադրութիւնը եւ շինելու իրենք թող ընեն եթէ կը տեսնես որ կարելի է:

ԺԳ.²³

²³ ՀՀԳԽԿի նամակը վեր. Շիրաճեանին: Տպուած նամակափոխութիւն, մերենագիր, մէկ էջ: Ստորագրութիւնները՝ ձեռագիր: ՀՀԳԽԿն բարձր կը գնահատէ վեր. Շիրաճեանի ծառայութիւնը ԳՏՏին մէջ եւ կը խնդրէ, որ շարունակէ այցելել այդ վայրերը «գիւղերու շինութեան եւ հողերու բաժանման աշխատանքները զլուս հանելու համար՝ տեղւոյն վրայ գործող յանձնախումբի միա անդամներուն եւ ի

Հեռագիրի հասցե: ԱՆԹՈՒՆԵԱՆ - ՀԱԼԷՊ
Թիւ

Հալեպ, 19 Օգոստոս [1]930

Վերապատուելի
Տիար Ահարոն Շիրաճեան
Աստ
Ազնի Տէր

Խնամատարութիւն սրտագին պարտք կը համարէ ներկայիս իր անկեղծ շնորհակալիքը յայտնել Ձեր Ազնուութեան, որ այնքան աստե՛ն է ի վեր ազգասիրարար, խղճալիտ եւ օգտաշատ քանքերով մեծապէս սատարեց Գամիշլի եւ շրջանները հասնող գաղթականներու տեղատրման գործին՝ կարի արդիւնատու ընծայելով:

Մեր գնահատումը փութացնելով Ձեզ՝ պիտի խնդրլինք որ հաճէիք տակաին չզանալ մեզ Ձեր թանկագին աջակցութիւնը եւ բարի ըլլալիք դարձեալ այցելել այդ շրջանները՝ զիտներու շինութեան եւ հողերու բաժանման աշխատանքները զլուս հանելու համար:

Ձեզ յանձնուած սոյն խիստ կարևոր պաշտօնը լաազոյնս արդիւնատուրելու եւ ապագային քննադատութեանց եւ վիճաբանութեանց տեղի չտալու համար, յարմար կը տեսնենք որ տեղոյն վրայ գործող Յանձնախումբին եւ ի մասնատրի տօքթ. Թ[որոս] Պասամճեանի հետ խորհրդակցարար առաջ տանիք:

Այս տեղէն իբր հաշուակալ պաշտօնեայ Ձեզի պիտի ընկերանայ տիար Կ[արապետ] Եւտալեան. տիար Մ[իշէլ] Թերճանեան իր հաշուական գործերուն համար պատասխանատու եւ ենթակայ պիտի մնայ տիար Կ[արապետ] Եւտալեանի իրաւատութեանը:

Յաջողութիւն մաղթելով ձեր ազգանուէր գործունէութեան, կրկին կը յայտնենք մեր ջերմ շնորհակալութիւնները:

Խորին յարգանքներով

Ի դիմաց գաղթակնց. Խնամտ. Կեդր. Յանձնախումբի
Վ[ասն] Ատենադպիրի Ատենապետ
Տքթ. Յ[ա]ր[ո]թ[ի]ն Տէր Ղազարեան A[sadour] A. Altounyan

Ժ.Ղ.²⁴

26th August 1930

Mr. L. B. Golden. General secretary of Save the Children Fund and Lord Mayers Fund.

մասնատրի տօքթ. Պասամճեանի հետ գործակցարար: Թերճանեան իր հաշուական գործերուն համար պատասխանատու եւ ենթակայ պիտի մնայ Ետալեանի իրաւատութեան:

²⁴ ՀՀԳԽԿին նամակը Save the Children եւ Lord Mayers հիմնադրամներու գլխատու քարտուղարութեան: Թուղթի երկու երես, մերենագիր, անգլերէն, պատճեն: Շնորհակալութիւն կը յայտնուի Կրէյսիի՝ գաղթականներու քնակավայրեր տուած այցելութեան համար: Կը տեղեկացուի հայ եւ օտար բարերարներու օժանդակութեամբ կառուցուած 130 տուններու, շարունակուող ցանքերու, ակնկալուող նոր գաղթականներու ունենալիք նոր կարիքներու մասին:

26 Gorden Street
London, W. C. I.

Dear Sir

We believe that Captain Gracy on his arrival would have told you the story of our recent Armenian refugees from Turkey.

Since his return we have made considerable progress in their settlement.

Through the generous help of Armenian, British and other benevolent individuals we have [been] able to build over 130 rooms for 180 families, these being mostly agricultural in profession.

They have equipped with the necessary outfits, they have been able to plough extensive land and will be able to sow in a few weeks time, while, D. V. in next harvest time, in June, they will be to a great extent self-supporting.

But unfortunately this does not end our labour. Refugees are continually coming in small groups. There are still several hundred families homeless and penniless. We have sent new circulars and statement of the work that has been done and are hoping that help will come.

I wish to add also that our Committee and all our people feel very grateful to you and to all your associates for the great privilege of having Captain Gracy with us. His personal visit to the refugee centers, his valuable practical knowledge, and sound judgement has a great help to us.

We shall not forget it.

We are, Dear Sir,

Yours very gratefully.

Secretary

Treasurer

President

ԺԵ.²⁵

Թէլ Պրաք, 30 Օգոստոս 1930

Վերապատուելի Ա. Շիրաճեան
Հալէպ

Ազնի Տէր

Այս թուականով պատ. Խնամատարութեան ուղղուած նամակին օրինակը ստորեւ պարտք կը համարեմ Ձեզ եւս հաղորդել:

Պատիւ ունիմ Ձեզ հաղորդելու որ ամսոյս 28-ին ողջամբ Թէլ Պրաք հասայ: Բոլոր գիտացիները եւ պ. Միշէլը [Թէրճանեան] ողջ առողջ գտայ, նշանակելի հիւանդութիւն եւ այլն արդէն չկայ. քիչ մը աչքի ցաւ եղած է, բայց բարեբաղդաբար այժմ անցած է, մահուան դէպքեր չէ պատահած մօտ 40 օրէ ի վեր. երկու գիտին մէջ, ինչպէս արդէն գրուած է մօտ 30 սենեկի չափ չի զոցուած տանիքներ կան, որոնց համար պէտք եղած գերանները պ. Միշէլը [Թէրճանեան] պատրաստած ը-

²⁵ Թէլ Պրաք գտնուող հայուքնեկէ Ետայեանի նամակը ՀՀԳԽԿին: Այս օրինակն ալ ղրկուած է վեր. Շիրաճեանի: Կը ներկայացնէ գիտացիներու առողջական ընդհանուր պատկերը, տանիքներու ծածկի ընթացքը եւ գերաններու պէտքը, անհրաժեշտութիւններ՝ առուի եւ ջրանցքի բացում, բրինձի փոխարէն ոսպ, դպրոցական գրնակական պիտոյք: Տոքթ. Պատմանեան արտորական է Տէր Զօր ու անկարող՝ գործին հետեւելու: Վերջապարտութեան երկտողով մը Թերճանեան վերապատուելի Շիրաճեանէն կը խնդրէ գալ, որ ինք Հալէպ իջնէ:

լալուն Բշ. օրէն սկսեալ գերանները պիտի շարուն: Այս սենեակներու համար նորէն 1 գամին տախտակի պէտք ունինք, բացի պատուհաններու եւ դուռներու համար որոշուած տախտակէն:

Հոս տեղեկացայ որ ժողովուրդին բրինձ շաքար եւ այլն բերելու պէտք չկայ. նախ ժողովուրդը բրինձ գործածել չի գիտեր, 7/8 ամիս առաջ Հալէպէն բրինձ դրկուած էր, գրեթէ նոյնութեամբ կը կենայ. երկրորդ՝ Գամիշլի բրինձը Հալէպէն աման է:

Քուրի առուակի բացման եւ ջաղացքի շինութեան գործը ամենակենսականն է անշուշտ, պատ. Խնամակալութիւնը այս մասին պէտք եղած հրահանգները վեր. Ա[խարուն] Շիրաճեանին տուած էք, նոյն օրը ժողովուրդը անուսելիք մտրահակներու թիւին եւ գումարին մասին հրահանգած կ'ըլլաք:

Գիւղի զոյգ վարժարաններուն համար մաս մը մանկապարտէզի եւ նախակրթարանի Ա. կարգերուն յասակարգերուն եւ տետրակներ ու թուղթ մատիտ եւ այլնք պէտք կ'այ, եթէ յարմար տեսնէք՝ վերապատուելիին ըսէք թէ միասին բերէ, նոյնպէս ժողովուրդին, փոխան բրինձի, մաս մը ոսպ, 10 գանթարի չափ:

Այս նամակին մէկ օրինակը վերապատուելիին դրկած եմ առ ի գործադրութիւն:

Այս յօդուածի շրջանակներում փորձել ենք ներկայացնել ՀՀ Շիրակի
մարզի նորակառոյց (1991-2017)ին կառուցուած) եկեղեցիներն ու մատուո-
ները (Գիւմրիի Ս. Հռիփսիմէ, Ս. Յակոբ Մծբնեցի, հակաօդային պաշտ-

¹ Շիրակի (Անի-Շիրակի) ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչների եւ
ճարտարապետական կոթողների մասին մանրամասն տե՛ս՝ Ա. Բարխուդար-
եան, *Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ*, Հայկ.
ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1963. նաե՛ Հ. Իսաբէկեան, *Հայկական ռե՛նեսանսի ճարտա-
րապետութիւնը*, Հայաստան իրաւո., Երեւան, 1980. նաե՛ Ա. Մնացականեան,
Վարպետաց վարպետներ, *Մանուէլ, Տրդատ, Մոմիկ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան,
1982. նաե՛ Վ. Յարութիւնեան, *Հայկական ճարտարապետութեան պարմու-
թիւն*, Լոյս իրաւո., Երեւան, 1992. նաե՛ Մ. Հարսրբեան, *Հայկական ճարտա-
րապետութեան պատմութիւն*, Երեւան, 2002:

պանութեան զօրամասի Ս. Սարգիս, Ս. Մինաս, Սրբոց Նահատակաց, Ս. Սարգիս, Անուշաանի Ս. Վարդան, Արթիկի ՔԿՀի Ս. Գրիգոր Լուսատրիչ, Գտաշէնի Ս. Կարապետ, Եղնացիի Ս. Սարգիս, Ջոզպաղբիրի Ս. Խաչ, Լեռնակերտի Սրբոց Վարդանանց, Կաքաւասարի Ս. Նարեկ, Կրասարի Ս. Բարսեղ, Հայկաանի Ս. Խաչ Աւետարան, Ղարիբջանեանի Ս. Հոգի, Շիրակաանի Ս. Աստուածածին, Սպանդարեանի Ս. Ամէնափրկիչ, Ոսկեհասկի Ս. Նարեկ եւ Ս. Ոսկեկող Աւետարան): Յօդուածում անդրադարձել ենք վերոյիշեալ եկեղեցիների ու մատուռների ճարտարապետական ձեւերին, կառուցման պատմութեանը եւ յարակից այլ հարցերի:

1991ից յետոյ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցուեցին նոր եկեղեցիներ: Անմասն չմնաց նաեւ Շիրակի մարզը: Մարզի նորակառոյց եկեղեցիներից իրաքանչիւրն իր յօրինուածքով ու յարդարանքով ինքնատիպ է եւ հայկական նորագոյն ճարտարապետութեան գանձարանում պատուարտ տեղ է զբաղեցնում:

ԳԻՒՄՐԻԻ ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանի տարածքի շուրջ 40%ն ընդգրկած 1988 Դեկտեմբերի 7ի աղէտայի երկրաշարժի հետեանքով զոհուեցին հազարաւոր մարդիկ, աւերուեց հանրապետութեան ամբողջ բնակֆոնդի շուրջ 17%ը, դադարեցին գործելուց մօտ 170 արդիւնաբերական ձեռնարկութիւններ, մեծ վնաս կրեցին բնակավայրերն ու երկրագործական համալիրը: Ամբողջովին կամ մասամբ աւերուեցին նաեւ բազմաթիւ պատմաճարտարապետական յուշարձաններ եւ արուեստի ստեղծագործութիւններ, տուժեց շուրջ 917 կրթական օջախ²: Տարերային աղէտը ծանր ու անամոք կորուստներ պատճառեց նաեւ հայրաքաղաք Գիւմրիին:

1988ի արհաւիրքից դէպի վերածնունդ ընթացող Գիւմրիում կառուցուած քրիստոնէական պաշտամունքային առաջին կառոյցը Սուրբ Հոփիսիմէ եկեղեցին է³, որի շինարարութիւնը սկսուել է 1991ին, աւարտուել՝

² «1988 թ.-ի Սպիտակի երկրաշարժը», <http://www.nssp-gov.am/spitak.htm> , մատչում՝ 03. 06. 2020:

³ Ամէնայն հաւանականութեամբ՝ կառոյցի համեստ չափերն ի նկատի ունենալով Ս. Հոփիսիմէն համարում են մատուռ, ոչ թէ եկեղեցի: Սակայն մատուռները (վկայարաններ) քրիստոնէական պաշտամունքային կառոյցներ են, որոնք կառուցում են վկայի՝ մարտիրոսի, նահատակի գերեզմանի կամ մասունքների վրայ: Մատուռները, ըստ էութեան, պարզ յօրինուածքով փորրաչափ եկեղեցիներ են՝ ուղղանկիւն յատակազօժով, թաղածածկ, երկթեք կտուրով, որոնք յաճախ կառուցուել են բնակավայրերում, ճանապարհների, աղբիւրների ակունքների

1992ին: Արտաքննապետական ճարտարապետական յօրինումաձեռքով հայկական եկեղեցական ճարտարապետության կառույցներից տարբերող է աստրիական կաթոլիկ եկեղեցիների նմանությամբ կառուցում այս եկեղեցին ունի ուղղանկյուն յատակագիծ, չորս ուղղանկյուն սիւներով շքամուտք, կարմիր կղմինդրէ տանիք: Շքամուտքը, որից բացում է դէպի աղօթասրահ տանող դուռը, տանիքին ունի փոքրիկ զանգաշտարակով տխուկանման գմբէջ: Եկեղեցին լուսատրում է հիսախային եւ հարաային պատերին գտնուող երեքական լուսամուտներով: Պարզ յօրինումաձեռքով Ս. Հռիփսիմէ եկեղեցին զարդարում են Տիրամօր, Միքայել Հրեշտակապետի, Ս. Գայիանեանց կոյսերի եւ Ս. Հռիփսիմէի բարձրաքանդակները⁴:

Շիրակի թեմի քարեխնամ առաջնորդ Տէր Միքայել եպիսկոպոս Աջապահեանը Գիւմրիի Աստրիական թաղամասում գտնուող Ս. Հռիփսիմէ եկեղեցու ուխտի օր է հռչակել Հոգեգալստեան տօնին յաջորդող Երկուշաբթին՝ «Տօն Սրբոց Կոստանացն Հռիփսեանց», որը Հայ Առաքելական Եկեղեցին տօնում է Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնի նախընթաց Երկուշաբթին (կամ Սուրբ Գրիգոր Լուսատրչի ելքը Խոր Վիրապից տօնին նախորդող Երկուշաբթին): Այդ օրը Ս. Հռիփսիմէ եկեղեցում մատուցում է ուխտի սուրբ եւ անմահ պատարագ⁵:

ԳԻՒՄՐԻԻ ՍՈՒՐԻ ՅԱԿՈՐ ՄՇԲՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանի Երրորդ Հանրապետության փառահեղ եկեղեցական կառույցներից է Գիւմրիի Սուրբ Յակոբ Մժնեցի եկեղեցին, որի կառուցումն

մօտ, գերեզմանատներում, վանական համալիրներում: Յետագայում մատուտ են անուանել ընդհանրապէս փոքրածապ եկեղեցիները, սակայն իրականում մատուտի եւ եկեղեցու տարբերութիւնը ոչ թէ մեծութիւնն է, չափսերը, այլ մատուտի հիմքերը օրինում են օժտած քարերով նուիրագործուած չլինելը: Մատուտներ են կոչում նաեւ եկեղեցիների օժտած ասանդատները, որոնք պատարագամատուց անշարժ սեղան ունեն (Մաղաքիա արք. Օրմանեան, *Չիսական քառարան*, հրատ. ԿՎՄՏԿ, Անթիլիաս-Լ.Իրանան, 1979, էջ 157-58. նաեւ՝ *Քրիստոնեայ Հայաստանի հանրագիտարան*, գլխ. խմբ.՝ Յովհ. Այվազեան, հայկական հանրագիտարանի հրատ., Երեւան, 2002, էջ 696):

⁴ Գոհար Նաասարդեան, «Գիւմրի քաղաքի հայկական եկեղեցիների ճարտարապետութիւնը (հատուած դիպլոմային աշխատանքից)», http://deesim.blogspot.com/2014/07/blog-post_5593.html առ 03. 06. 2020 թ.:

⁵ Ավարդ Կարգուանցեան, «Հռիփսիմէ, մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի...», Ուխտի սուրբ պատարագ Սուրբ Հռիփսիմէ մատուտում», *Ս. Եօթ Կէրք*, Ժ. տարի, Յունիս, 2009:6(114), <http://yotverk.am/datei/090631/s090603.htm>, մատչում՝ 3. 06. 2020. նաեւ նոյնի՝ «Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դատերք վերին Սիոնի...». ուխտի սուրբ պատարագ Սուրբ Հռիփսիմէ մատուտում», *Ս. Եօթ Կէրք*, ԺԲ. Տարի, Յունիս, 2011:6(138), <http://www.yotverk.am/datei/110631/s110605.htm> առ 03. 06. 2020 թ.:

աւարտուել է 2002ին եւ Գարեգին Բ. կաթողիկոսի ձեռամբ օծուել 2002 Օգոստոսի 29ին: Եկեղեցին կառուցուել է ԱՄՆի Փենսիլվանիա նահանգի Իսթոն քաղաքի բնակիչներ, Սարգիս եւ Բաբի Յակոբեան ամոլի բարերարութեամբ⁶: Խաչածե կենտրոնագմբէթ յորինածքով Ս. Յակոբ Մծբնեցի եկեղեցին նախագծել է ճարտարապետ Բաղդասար Արզումանեանը⁷, հոյակերտ քանդակները հեղինակել է Գետիկ Բաղդասարեանը, իսկ շինարարական աշխատանքները ղեկավարել է Մկրտիչ Լամբարեանը: Ընդարձակ աղօթատարած եկեղեցու գլխաւոր մուտքն արեւմտեան կողմից է, միա մուտքը՝ հարաւային կողմից: Եկեղեցուն մի առանձին վեհուփին են հաղորդում վեղարն ու 16-նիստանի թմբուկով գմբէթը: Առաջին յարկում խաչաթեւերն ու անկիւնային չորս աստղատներն են, երկրորդ յարկում՝ խաչաթեւերը միացնող անկիւնային սենեակները, որոնք որպէս վերնատուն են ծառայում, իսկ երրորդ յարկում երեք յարկ միասնական բարձրացող գմբէթածածկ կենտրոնական շրջանածե աղօթատարան է: Ուշագրաւ է նաեւ եկեղեցու գետնայարկը, որը նախատեսուած է բազմամարդ հաւաքների ու հանդիսութիւնների համար:

Եկեղեցու տարածքում 2010ին տեղադրուել է 1988ի երկրաշարժի զոհերին նուիրուած յուշակոթող (քանդակագործ՝ Զաւէն Կոչտոյեան)⁸:

Ամէն տարի Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի տօնի⁹ առիթով Գիւմրիի նոյնանուն եկեղեցում մատուցում է Սուրբ եւ Աննահ պատարագ: Տարին տաջ Մծբնի քաղաքից՝ սուրբ Յակոբ Մծբնեցու մատուքների վոյա կառուցուած եկեղեցուց, Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ Աջապահեան եպ.ը բերել եւ Գիւմրիի Ս. Յակոբ Մծբնեցի եկեղեցուն է նուիրել քար¹⁰:

⁶ Մարինէ Մարտիրոսեան, Վահէ Սարուխանեան, «Շիրակի նոր եկեղեցիները. 'սիրուն ժամից' մինչեւ բանտի աղօթատուն», <https://hetq.am/hy/article/73775>, մատչում՝ 03. 06. 2020:

⁷ Ճարտարապետ Բ. Արզումանեանի կենսն ու գործունէութիւնը հանգամանալից ներկայացուած են Վարազդատ Յարութիւնեանի *Նորորեայ ոսկեծեղիկը. Ճարտարապետ Բաղդասար Արզումանեանի կենսն ու սրբեղծագործական վաստակը* աշխատութեան մէջ, Ս. Էջմիածին, 2004:

⁸ Նաասարդեան. նաեւ նոյնի՝ «Գիւմրու Սբ Յակոբ Մծբնեցի եկեղեցի», http://deesim.blogspot.com/2014/07/blog-post_8.html, մատչում՝ 03. 06. 2020:

⁹ Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յակոբ Մծբնացի հայրապետի, Մարուգէ ճգնատրի եւ Մելիտոս եպիսկոպոսի յիշատակը տօնախմբում է Յիսնակաց երրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը (Յիսնակաց նշանակում է յիսնօրեայ պահ: Ս. Ծննդեանը նախորդող այս յիսնակը, որի միջակայքում է գտնուում «Ս. Յակոբի շաբաթապահք»ը, սկսում է Նոյեմբերի 18ի մերձակայ Կիրակիից յետոյ):

¹⁰ Լուսինէ Գրիգորեան, «Նշուց Սուրբ Յակոբի տօնը նոյնանուն եկեղեցում», *Ա. եօթ Վերք*, Գեկտեմբեր, 2018:12(224),

ԳԻՒՄՐԻԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌ

Շիրակի մարզի նորակերտ քրիստոնէական պաշտամունքային կառույցներից է Գիւմրիի Սուրբ Սարգիս մատուռը, որը կառուցուել է նշանատր Աեւ Ղուկից քիչ հեռու՝ նախկին մանկական երկաթուղու տարածքում: Ս. Սարգիսը համեստ չափերով, միախորան խաչածե կենտրոնազմբէթ պարզ կառոյց է, միակ մուտքն արեւմտեան կողմից է: Մատուռը լուսատուտամ է թմբուկի չորս եւ արեւմտեան ու արեւելեան կողմերին բացուած երկուական նեղ, երկարատուն, քանդակազարդ պսակներով լուսամուտներով: Մատուռը նախագծել է ճարտարապետ Ռաֆիկ Եղոյեանը, իսկ կառուցումը հովանատրել է քարերար Արտաշէս Սարգսեանը¹¹: Մատուռի հիմնարկէքը կատարուել է Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ 2005ին¹²: Օծման արարողութիւնը եւս կատարել է թեմակալ առաջնորդ Միքայել սրբազանը 2011 Փետրուարի 19ին՝ Ս. Սարգիս Զորավարի տօնին¹³:

ԳԻՒՄՐԻԻ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՐԱՄԱՍԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌ

Շիրակի մարզի յաջորդ նորակառոյց սրբավայրը Գիւմրիի հակաօդային պաշտպանութեան զօրամասի Սուրբ Սարգիս մատուռն է, որը կառուցուել է ժամկետային զինձառայողներ Սարգիս Ասատրեանի եւ Թորգոմ Խաչատրեանի նախաձեռնութեամբ եւ իրենց ծառայակից ընկերների ու ծնողների աջակցութեամբ: 2012 Ապրիլի 12ին Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպ.ի ձեռամբ ու հանդիսապետութեամբ տեղի է ունեցել մատուռի հիմնարկէքի արարողութիւնը¹⁴: Նոյն թուականի Հոկտեմբերի

<http://www.yotverk.am/datei/181231/s181209.htm> , մատչում՝ 03. 06. 2020:

¹¹ Նաասարդեան. նաեւ նոյնի՝ «Գիւմրու Սբ Սարգիս մատուռը», <http://deesim.blogspot.com/search/label/%D5%8D%D5%A2.%20%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%AB%D5%BD%20%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BC> , մատչում՝ 03. 06. 2020:

¹² Ա. Կաղզղանցեան, «Եթէ ոչ տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինօքը նորա՛. օձուեց Սուրբ Սարգիս մատուռը» *Ս. Եօթ Վերք*, Փետրուար, 2011:2(134), <http://www.yotverk.am/datei/110231/s110219.htm> , մատչում՝ 04. 06. 2020:

¹³ «Օձուց Գիւմրու Սբ Սարգիս մատուռը», <https://armenpress.am/arm/news/640975.html> , մատչում՝ 04. 06. 2020:

¹⁴ «Զօրամասային Ս. Սարգիս մատուռի հիմնարկէքը», <https://terhambardzum.do.am/news/2012-04-20-1016> , մատչում՝ 04. 06. 2020:

29ին մատուռն օծուել է ձեռամբ թեմի առաջնորդ Աջապահեան եպս.ի եւ հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի¹⁵:

ԳԻՒՄՐԻԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ՄԱՏՈՒՌ

Մարզի յաջորդ նորակառոյց աղօթատունը Գիւմրիի Ա. Մինաս մատուռն է: Կարմիր սրբատաշ տուֆով կառուցուած մատուռը խաչաձեւ կենտրոնագմբէթ յօրինուածք ունի, հարապիտի պատին կայ շինարարական արձանագրութիւն¹⁶: Մուտքն արեւմտեան կողմից է: Օծուել է 2013 Դեկտեմբերի 3ին՝ Ա. Մինասի յիշատակութեան օրը, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպս.ի: Մատուռը կառուցուել է ճարտարապետ Մաքսիմ Եշիբաշեանի նախագծով եւ ՌԴ Խաբարովսկ քաղաքում բնակուող գործարար, ձնունդով գիւմրեցի Սամուզ Սողոյեանի բարերարութեամբ¹⁷:

ԳԻՒՄՐԻԻ ՍՐՔՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Գիւմրիի Սրբոց Նահատակաց նորակառոյց եկեղեցին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէների առաջնորդանիստ եկեղեցին է, որը հիմնադրուել է Սուրբ Խաչ անուամբ¹⁸: Շինարարական աշխատանքները սկսուել են 2010ին՝ Առաքելական պատուիրակ նշանակուած հայր Վահան Ծ.Վ. Օհանեանի օրօք՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսի օրհնութեամբ, ՀՀ կառավարութեան աջակցու-

¹⁵ Հ. Մոսիսեան, «Օծուեց զօրամասի մատուռը», *Ա. Եօթ Վէրք*, Հոկտեմբեր, 2012:10(154), կամ <http://www.yotverk.am/datei/121031/s121011.htm>, մատչում՝ 04. 06. 2020:

¹⁶ Ա. Կաղզուանցեան, «Նոստովան եղիցուք անուան քում սրբոց եւ պարծեսցուք յօրհնութիւնս քո.՝ ուխտի սուրբ պատարագ Ա. Մինաս մատուռում», *Ա. Եօթ Վէրք*, Դեկտեմբեր, 2014:12(180), <http://www.yotverk.am/datei/141231/s141209.htm>, մատչում՝ 04. 06. 2020. նաեւ նոյնի՝ «Նոստովան եղիցուք անուան քում սրբոց եւ պարծեսցուք յօրհնութիւնս քո.՝ ուխտի սուրբ պատարագ Ա. Մինաս մատուռում», *Ա. Եօթ Վէրք*, Դեկտեմբեր, 2018:12(224), <http://yotverk.am/datei/181231/s181205.htm>, մատչում՝ 04. 06. 2020. նաեւ նոյնի՝ «Ոչ միայն ի նա հաատայ, այլեւ վասն նորա չարչարիցէ:՝ ուխտի սուրբ պատարագ Սուրբ Մինաս մատուռում», *Ա. Եօթ Վէրք*, Դեկտեմբեր, 2016:12(204), <http://www.yotverk.am/datei/161231/s161203.htm>, մատչում՝ 04. 06. 2020:

¹⁷ Արարատ սրկ. Սարգսեան, «Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ...՝ ձեռամբ առաջնորդ սրբազանի օծուեց Սուրբ Մինաս եկեղեցին», *Ա. Եօթ Վէրք*, Դեկտեմբեր, 2013:12(168), <http://www.yotverk.am/datei/131231/s131205.htm>, մատչում՝ 04. 06. 2020:

¹⁸ «Տեղի ունեցաւ Գիւմրիի Սուրբ Խաչ կաթողիկ եկեղեցու հիմնարկեցը», <https://armenpress.am/arm/news/631750/arm/>, մատչում՝ 04. 06. 2020:

թեամբ եւ ասարտուել 2015 Սեպտեմբերին: Եկեղեցու շինարարական աշխատանքները շարունակել եւ ասարտին է հասցրել 2011ից թեմի առաջնորդի պաշտօնը ստանձնած գերաշնորհ Տէր Ռաֆայէլ արք. Մինասեանը, ում որոշմամբ էլ, որպէս Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցի խորհրդանիշ եւ ի նշան նահատակների անմար յիշատակի, եկեղեցին օծուել է Սրբոց Նահատակաց անունով¹⁹:

Եկեղեցին կառուցուել է ճարտարապետ Յակոբ Զիանեանի նախագծով, շինարարական աշխատանքները ղեկավարել է Յակոբ Բաղդասարեանը, իսկ քանդակների հեղինակը Ռազմիկ Աազեանն է²⁰: Սրբոց Նահատակաց եկեղեցու կառուցմանն աջակցել են Վատիկանի Սուրբ աթոռի Արեւելեան Եկեղեցիների Ժողովը, Իտալիայի կաթողիկէ եպիսկոպոսների խորհուրդը, ԱՄՆի կաթողիկէ եպիսկոպոսների խորհուրդը, «Ռենովաբիս» բարեսիրական միջազգային կազմակերպութիւնը, Քէօլիի թեմը, «Church in Need» կազմակերպութիւնը, «Աշխատանք Արեւելքում» ընկերակցութիւնը, Հռոմի Լեոնեան վարժարանը եւ Հռոմի Սուրբ Վլաս եկեղեցին: Ս. Նահատակաց եկեղեցին ութանիստ եռալարկ զոարթնոցատիպ կառոյց է, որի նաակատիպը կատարուել է 2015 Սեպտեմբերի 24ին Հռոմի Սրբազան Պապի ներկայացուցիչ կարդինալ Լեոնարդո Սանդրիի (Արեւելեան կաթողիկէ եկեղեցիների ժողովի նախագահ) եւ Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց պատրիարք-կաթողիկոս Գրիգոր Պետրոս 20րդի հանդիսապետութեամբ²¹:

Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցի շրջանակներում Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում տեղադրուել է նահատակների յիշատակը յանրժաանող խաչքար²²:

¹⁹ «ՀՀ նախագահը Գիւմրիում ներկայ է գտնուել Հայ Կաթողիկէ Սրբոց Նահատակաց եկեղեցու օծմանը», <https://news.am/arm/news/287557.html> , մատչում՝ 04. 06. 2020. նաեւ՝ Լիլիթ Յարութիւնեան, «Սուրբ Նահատակաց եկեղեցի. Ինչպէս Հայաստանի կաթողիկները մայր տաճար ունեցան», <https://armeniasputnik.am/exclusive/20190203/17098850/gyumri-katolikner-trndez.html> , մատչում՝ 04. 06. 2020:

²⁰ Նասասարդեան. նաեւ նոյնի՝ «Սբ Խաչ հայ կաթողիկների եկեղեցի», http://deesim.blogspot.com/2014/08/blog-post_77.html մատչում՝ 4. 06. 2020:

²¹ «Օծուեց Գիւմրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ եկեղեցին», <http://shirak.mtad.am/news/item/2015/09/24/katolik/> , մատչում՝ 4. 06. 2020. նաեւ նոյնի՝ «Գիւմրիում օծուեց Հայ կաթողիկէ Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ եղեկեղեցին», <https://www.youtube.com/watch?v=ef2ilHLJNOU>. նաեւ՝ «Օծուել է Հայ Կաթողիկէ Սրբոց Նահատակաց աթոռանիստ եկեղեցին», https://www.youtube.com/watch?v=oX_xVN7mdOs մատչում՝ 4. 06. 2020:

²² «ՀՀ նախագահի», նաեւ՝ «Գիւմրիում օծուել է Հայ Կաթողիկէ Սրբոց Նահատակաց եկեղեցին»:

2016ին Հռոմի Ֆրանցիսկոս պապը Գիմրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ հայ կաթողիկե տաճարին խորհրդանշական քար է նուիրել, որը վերցրած է Հռոմի Ս. Պետրոս Մայր տաճարի պատից²³: Պապի նուիրած քարը զետեղուած էր Ս. Պետրոսի տաճարի պատին 2000ին՝ ձեռամբ Յովհաննէս Պօղոս Բ. պապի: Քարը Ս. Պետրոսի տաճարից վերցունել է Ողորմութեան յոբելեանական տարուայ բացման առթի՝ 2015 Դեկտեմբերի 8ին՝ Անարատ Յղութեան տօնին: Քարը նուիրուել է «որպէս նշան սերտ հաղորդութեան Սրբազան Քահանայապետի հետ, որը յաջորդն է Պետրոս առաքելի, եւ որպէս մասնակցութիւն հոգետր շնորհների յոբելեանական տարուայ»²⁴: Խորհրդանշական քարն ազուցուելու էր Գիմրիի Սրբոց Նահատակաց եկեղեցու պատին:

ԱՆՈՒՇԱՒԱՆԻ ՍՐՔՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՅ (ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ) ՄԱՏՈՒՌ

Անուշան գիւղի Սրբոց Վարդանանց (Սուրբ Վարդան) մատուղ գտնուում է գիւղամիջում: Այն կառուցուել է 2009ին՝ Մոսկուայում բնակուող Արտաշէս Յարութիւնեանի եւ Աբգար Մկրտչեանի նախաձեռնութեամբ եւ տրամադրած միջոցներով: Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպս.ի ձեռամբ 2009 Մայիսի 7ին²⁵ կատարուել է մատուղի օծման արարողութիւնը:

ԱՐԹԻՎ ՔՎԿՏ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Հառիճ գիւղի վարչական սահմաններում գտնուող «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցու հիմնարկէը կատարուել է 2010 Մայիսի 13ին Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ եւ ընթերակայութեամբ Հառիճավանքի վանահայր Տ. Կորին աբեղայ Առաքելեանի ու Լմբատավանքի հոգետր հովիւ Տ. Լե-

²³ «Հռոմի Պապը միութեան խորհրդանիշ քար է նուիրել Գիմրիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն», <http://lur.am/am/archives/250908> մատչում 04. 06. 2020:

²⁴ «Հռոմի Ֆրանցիսկոս պապը միութեան խորհրդանիշ քար է նուիրել Գիմրիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն», <https://shabat.am/am/article/33836/Hromi-Franciskos-Papy-miuty-an-khorhrdanish>, https://www.panorama.am/am/news/2016/03/08/%D5%80%D5%BC%D5%B8%D5%B4%D5%AB-%D5%8A%D5%A1%D5%BA/1541268?fbclid=IwAR2I6DDU6OZlIacRjI03jwHqgWacsfL87v_YWzawlsQmmj6UfyQhi73Lew4 առ 04. 06. 2020 թ.:

²⁵ Ա. Կաղզուանցեան, «Օրինեցից զՏէր յամէնայն ժամ, յամէնայն ժամ օրինութիւն նորա ի բերան իմ.» եպիսկոպոսական տուր պատարագ Անուշանում», *Ա. Եօթ Վէրք*, Յունիս, 2012:6(150), <http://yotverk.am/datei/120631/s120608.htm> մատչում 05. 06. 2020:

ուն քահանայ Յովհաննիսեանի²⁶: Խաչածե կենտրոնազմբէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը կառուցուել է ՔԿՀի վարչակազմի նախածնունդեամբ եւ դատապարտեալների գործուն մասնակցութեամբ²⁷: Եկեղեցու կառուցման գործում մեծ ներդրում է ունեցել ՔԿՀի նախկին պետ, արդարադատութեան գնդապետ Վարդան Սարգսեանը²⁸: Եկեղեցու քանդակագործն է Տիգրան Յակոբեանը: Եկեղեցին ունի մէկ մուտք, իրաքանչիւր խաչաթեփ ճակատային մասում՝ մէկական նեղ, երկարատուն լուսամուտ: Հիւսիսային կողմում զանգակատունն է, իսկ հարաւային կողմում՝ մոնավառութեան սրահը: Եկեղեցին օծուել է 2010 Դեկտեմբերի 11ին ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի²⁹:

ԳՏԱԾԷՆԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի յաջորդ նորակառոյց եկեղեցին Գտաշէնի Ս. Կարապետն է, որի հիմնարկէքի արարողութիւնը կատարել է Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպ.ը 2010 Դեկտեմբերի 6ին³⁰: Մուկուայում հաստատուած ջաախեցի գործարար Կարապետ Պողոսեանի բարերարութեամբ եկեղեցին կառուցուել է 2011ին: Վարդագոյն սրբատաշ տուֆով կառուցուած եկեղեցին միանաւ բազիլիկ է՝ քառասփն փոքրիկ գմբէթով. միակ մուտքն արեւմտեան կողմում է: Հիւսիսային, հարաւային եւ արեւմտեան ճակատներում կան մէկական նեղ, երկարատուն լուսամուտներ: Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպ.ը Ս. Կարապետ եկեղեցին հանդիսատրապաւս օծել է 2011 Սեպտեմբերի 3ին³¹:

²⁶ Լիլիթ Եղեան, «Մատուռի հիմնարկէք «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում», *Ս. Եօթ Կէրք*, Մայիս, 2010:5(125), <http://www.yotverk.am/datei/100531/s100502.htm> մատչում՝ 05. 06. 2020:

²⁷ «Արթիկ ՔԿՀ-ի կայանաւորներն իրենց միջոցներով եկեղեցի են կառուցելու», <https://news.am/arm/news/66103.html> մատչում՝ 05. 06. 2020:

²⁸ Մարտիրոսեան, Սարգիսեան:

²⁹ Ա. Կաղզուանցեան, «Նորոգող հնութանց, նորոգեա եւ զիս, նորոգ զարդարեա.՝ օծուեց «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի մատուռը», *Ս. Եօթ Կէրք*, Դեկտեմբեր, 2010:12(132), <http://www.yotverk.am/datei/101231/s101204.htm> . նաեւ՝ <https://armenpress.am/arm/news/632207> , մատչում՝ 05. 06. 2020:

³⁰ «Մատուռի հիմնարկէք Գտաշէնում», *Ս. Եօթ Կէրք*, Հոկտեմբեր, 2010:10(130), <http://www.yotverk.am/datei/101031/s101003.htm> , մատչում՝ 05. 06. 2020:

³¹ Ա. Կաղզուանցեան, «Եղիցի ձեռն Քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս Քո ընտրեցի.՝ օծուեց Գետաշէն գիւղի Սուրբ Կարապետ մատուռը», *Ս. Եօթ Կէրք*, Սեպտեմբեր, 2011:9(141), <http://www.yotverk.am/datei/110931/s110907.htm> . նաեւ նոյնի՝ «Ընդ անառակին որդոյ գոչեմք առ Հայրդ, գթած... .՝ սուրբ պատարագ Գետաշէնի Սուրբ Կարապետ մատուռում», *Ս. Եօթ Կէրք*, Մարտ, 2017:3(207), <http://yotverk.am/datei/170331/s170301.htm> մատչում՝ 05. 06. 2020:

ԵՂՆԱՋՐԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Եղնաջրի Ա. Սարգիս եկեղեցին կառուցուել է 2006ին, «KASA» շուկցարական մարդասիրական հիմնադրամի բարերարությամբ³²; Խաչածե կենտրոնագմբէթ Ա. Սարգիս եկեղեցու մուտքն արեւմտեան կողմից է: Եկեղեցին լուսատրում է խաչաթեւի հիախային եւ հարաային ճակատների մէկական նեղ, երկարատուն եւ գմբէթի թմբուկի լուսամուտներով: Եկեղեցին օծուել է 2007 Օգոստոսի 8ին ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի³³:

ԶՈՅԳԱՂՔԻՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

Զոյգաղբիւրի Ա. Խաչ եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը կատարուել է Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ 2007ին: Խաչածե կենտրոնագմբէթ եկեղեցին կառուցուել է ծագումով զոյգաղբիւրցի Վոլոդիա Մաթեստեանի բարերարությամբ: Եկեղեցին Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ օծուել է 2008 Յունիսի 28ին³⁴:

ԼԵՆԱԿԵՐՏԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ (ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ) ԵԿԵՂԵՑԻ

Լեռնակերտ գիւղի մուտքը զարդարող Ա. Վարդան (Սրբոց Վարդանանց) եկեղեցու կառուցումը նախաձեռնել եւ իրագործել է Ռուսաստանի Դաշնութեան Եկատերինբուրգ քաղաքում հաստատուած լեռնակերտցի գործարար Գագիկ Յովհաննիսեանը: Խաչածե կենտրոնագմբէթ յորինուածքով եկեղեցին կառուցուել է 2005-06ին³⁵: Շիրակի թեմի առաջնորդ

³² «ԿԱԶԱ՝ շվէյցարական մարդասիրական հիմնադրամ, հաշուետուութիւն 1997-2017», էջ 28, http://kasa.am/wp-content/uploads/2015/12/KASA_report_arm.pdf, մատչում՝ 05. 06. 2020:

³³ Լուսինէ Գրիգորեան, «Ամառը Եղնաջրի ճամբարում», *Ա. Եօթ Կէրք*, Օգոստոս, 2007:8(92), <http://www.yotverk.am/datei/070831/s070804.htm>, մատչում՝ 05. 06. 2020:

³⁴ Ա. Կաղզուանցեան, «Զոյգաղբիւրում օծուեց Սուրբ Խաչ մատուրը», *Ա. Եօթ Կէրք*, Յուլիս, 2008:7(103), <http://www.yotverk.am/datei/080731/s080703.htm>. նաեւ նոյնի՝ «Ուղիղ եղիցին աղաչանք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր.» եպիսկոպոսական սուրբ պատարագ Զոյգաղբիւրում», *Ա. Եօթ Կէրք*, Սեպտեմբեր, 2016:9(201), <http://www.yotverk.am/datei/160931/s160901.htm>, մատչում՝ 06. 06. 2020:

³⁵ Լուսինէ Սողոյեան, «Լեռնակերտի 4-5-րդ դարերի բազիլիկ եկեղեցին արդէն զանգակատուն ունի», <https://hetq.am/hy/article/78330> մատչում՝ 06. 06. 2020:

Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ 2006 Հոկտեմբերի 28ին³⁶ օծուել է Ա. Վարդան եկեղեցու խաչքը, իսկ 2007ին՝ եկեղեցին³⁷:

ԿԱՔԱԻԱՍԱՐԻ ՍՈՒՐԲ ՆԱՐԵԿ ԵԿԵՂԵՑԻ

Շիրակի մարզի նորակառոյց Ա. Նարեկ եկեղեցու շինարարական աշխատանքները սկսուել են 2008 Օգոստոսի 23ին եւ աւարտուել նոյն տարւոան Հոկտեմբերի 30ին³⁸: Խաչածե կենտրոնազմբէթ յօրինաածքով եկեղեցու կառուցումը հովանաւորել է ծնունդով կաքաասարցի, արդարադատութեան զօրավար Աշոտ Մարտիրոսեանը: Ա. Նարեկ եկեղեցու օծման արարողութիւնը կատարել է Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսը 2009 Օգոստոսի 1ին:

ԿՐԱՍԱՐԻ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԵԿԵՂԵՑԻ

Կրասարի Ա. Բարսեղ եկեղեցին կառուցուել է Գառնիկ, Գագիկ, Տարօն եւ Տարոս Պապիկեանների բարերարութեամբ: Կարմիր սրբատաշ տուֆով կառուցուած եւ բազիլիկ յօրինաածքով եկեղեցուն արեամտեան կողմից կից է զանգակատունը, որն ունի ութսիւնանի *ռոբոնդայով* գմբէթ: Եկեղեցու մուտքն արեամտեան կողմից է: Հարաային ճակատին կան երեք նեղ, երկարատուն լուսամուտներ. եւս երկու լուսամուտներ կան դռան աջ ու ձախ կողմերին: Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսը Կրասարի Ա. Բարսեղ եկեղեցու հիմնօրհնէջի արարողութիւնը կատարել է 2016 Օգոստոսի 17ին³⁹, իսկ օծման արարողութիւնը՝ 2017 Յուլիսի 29ին⁴⁰:

³⁶ «Օծուեցին Ա. Սարգիս եւ Ա. Վարդան մատուների խաչերը», *Ա. Եօթ Վէրք*, Հոկտեմբեր, 2006:10(82), <http://www.yotverk.am/datei/061031/s061004.htm>, մատչում՝ 06. 06. 2020:

³⁷ Մարիամ Վարդանեան, «Հայի մեր պարտքն է օրերից վեր թեմե, պատմութիւն կերտել եւ դառնալ յաւերժի ճամբորդ», *Ա. Եօթ Վէրք*, Դեկտեմբեր, 2007:12(96), <http://www.yotverk.am/datei/071231/s071202.htm>, մատչում՝ 06. 06. 2020:

³⁸ Ա. Կաղզուանցեան, «Օծուեց Կաքաասարի Սուրբ Նարեկ մատուրք», *Ա. Եօթ Վէրք*, Օգոստոս, 2009:8(116), <http://www.yotverk.am/datei/090831/s090807.htm>. նաեւ նոյնի՝ «Գոտայ այնցիկ, որ զիս ոչ խնդրէին եւ յայտնի եղէ այնցիկ, որ զիս ոչ ճանաչէին.» եպիսկոպոսական սուրբ պատարագ Կաքաասարում», *Ա. Եօթ Վէրք*, Յունուար, 2010:1(121), <http://www.yotverk.am/datei/100131/s100107.htm>, մատչում՝ 06. 06. 2020:

³⁹ Սամուէլ սրկ. Սարգսեան, «Հիմնարկէջի արարողութիւն Կրասար համայնքում», *Ա. Եօթ Վէրք*, Օգոստոս, 2016:8(200), <http://www.yotverk.am/datei/160831/s160804.htm>, մատչում՝ 06. 06. 2020:

⁴⁰ Ավարդ Կաղզուանցեան, «Ապաշխարենք կառուցելով. Կրասար գիւղում օծուեց Սուրբ Բարսեղ եկեղեցին», *Ա. Եօթ Վէրք*, Յուլիս, 2017:7(207), <http://www.yotverk.am/datei/170831/s170801.htm>. նաեւ՝ Արմէնուի Մխչյան, «Կրասար գիւղը նոր եկեղեցի ունի»,

ՀԱՅԿԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԱԻԵՏԱՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի յաջորդ նորակառույցը Հայկաանի Ս. Խաչ Անետարան եկեղեցին է, որը կառուցուել է 2008ին Աբրահամ եւ Սպարտակ Խաչատրեան եղբայրների բարերարութեամբ: Եկեղեցին խաչածե կենտրոնազմբէթ յօրինուածք ունի: Մուտքն արեւմտեան կողմից է: Հիւսիսային եւ հարաւային ճակատներին կան մէկական նեղ, երկարատուն լուսամտուներ: Եկեղեցին Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ օծուել է 2008 Նոյեմբերի 15ին⁴¹:

ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի նորակառույցներից է Ղարիբջանեանի Ս. Հոգի եկեղեցին, որը կառուցուել է 2008ին Սամուէլ Տոնոյեանի բարերարութեամբ՝ ի յիշատակ իր վաղամեռիկ կնոջ՝ Սաթենիկ Տոնոյեանի: Եկեղեցին նախազծել է «Երանգ» ՄՊԸի տնօրէն Անատոլի Դոգուզովը⁴²: Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսը Ղարիբջանեանի Ս. Հոգի եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը կատարել է 2007 Մայիսի 4ին⁴³, իսկ օծման արարողութիւնը՝ 2013 Օգոստոսի 31ին⁴⁴: Եկեղեցին խաչածե կենտրոնազմբէթ յօրինուածքով կառույց է: Մուտքն արեւմտեան կողմից է: Եկեղեցին լուսատրում է խաչաթեի հիւսիսային եւ հարաւային ճակատների մէկական նեղ, երկարատուն եւ գմբէթի թմբուկի լուսամտուներով:

Նշենք, որ հայ իրականութեան մէջ շատ չեն Սուրբ Հոգի անունով եկեղեցիները: Այս անունով եկեղեցիներ են յիշատակուած Կիլիկիայում՝ Սիս մայրաքաղաքում, Գօշավանքի համալիրի կազմում մի փայտաշէն եկեղեցի, որը չի պահպանուել եւ 1714ից Ամստերդամում յիշատակուող եւ այժմ էլ գործող հայկական եկեղեցին:

<https://armenpress.am/arm/news/900282/krasar-gyuxy-nor-ekexeci-uni.html>. Նանս՝ «Կրասարը նոր եկեղեցի ունի», <http://shirak.mtad.am/news/item/2017/07/29/krasarek/>, https://www.youtube.com/watch?v=HGB_T0TNN90&feature=emb_logo առ 06. 06. 2020:

⁴¹ Ա. Կաղզուանցեան, «Հայկաանում օծուեց Սուրբ Խաչ եկեղեցին», *Ս. Եօթ Վէրք*, Նոյեմբեր, 2008:11(107), <http://yotverk.am/datei/081131/s081104.htm> մատչում՝ 06. 06. 2020:

⁴² Մարտիրոսեան, Սարուխանեան:

⁴³ «Հիմնարկէք Ղարիբջանեան գիղում», *Ս. Եօթ Վէրք*, Մայիս, 2007:5(89), <http://www.yotverk.am/datei/070531/s070505.htm>, մատչում՝ 07. 06. 2020:

⁴⁴ Ալվարդ Կաղզուանցեան, «Եթէ ուրուք գործն գոր շինեաց՝ կացցէ, վարծն աոցէ՝ Ղարիբջանեանում օծուեց Սուրբ Հոգի եկեղեցին», *Ս. Եօթ Վէրք*, Սեպտեմբեր, 2013:9(165), <http://www.yotverk.am/datei/130931/s130903.htm>, մատչում՝ 07. 06. 2020:

ՇԻՐԱԿԱՆՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Շիրակաանը վաղուց եկեղեցի ունեցել է: Սակայն Ախուրեանի ջրամբարի կառուցման հետեանքով, երբ գիտը տեղափոխեցին, եկեղեցին միայնակ, առանց աղօթքի ու աղօթողի է մնացել, դարձել լացող եկեղեցի, յետոյ էլ անցել ջրի տակ: Պատմում են, որ մի օր էլ սահմանապահները եկել են ու ասել, թե ջրի տակից լոյս է ճառագում: Գիտից ու այլ բնակավայրերից շատերն են գնացել ու տեսել այդ հրաշքը. ջրի տակից վառ լոյս էր արձակում, հենց նոյն տեղից, որտեղ եկեղեցու խորանն էր: Յետագայում եկեղեցու բոլոր քարերը մեկառմէկ դուրս են բերուել՝ նոր եկեղեցի կառուցելու նպատակով⁴⁵:

Շիրակաանի Ս. Աստուածածին եկեղեցին 2016ին կառուցուել է Մուկուայում հաստատուած, ծնունդով շիրակաանցի Արթուր, Վահան եւ Արման Թարիզեան եղբայրների բարերարութեամբ ու համայնքապետ Մարատ Մկրտչեանի ջանքերով՝ ի յիշատակ բարերարների հօր՝ Ստիոպա Թարիզեանի: Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Ռաֆայել Եղոյեանը: Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի ձեռամբ եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը կատարուել է 2015 Յունիսի 4ին⁴⁶: Եկեղեցին բազիլիկ յօրինուածք ունի, կառուցուած է կարմիր ու սեւ սրբատաշ քարերով, ունի երկու դուռ: Հարաւային կողմում կան երեք մեծ կամարակապ լուսամուտներ, իսկ դռան աջ եւ ձախ կողմերով՝ եւս երկուսը, որոնք նեղ են ու երկարատուն: Արեւմտեան կողմին կից է գանգակատունը, որի վրայ բարձրանում է ութ սիւնանի *ռոյտնդայով* պսակուած գեղեցկաշէն զմբէթը: 2016 Փետրուարի 6ին Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսն օծել է եկեղեցու խաչը եւ զանգը⁴⁷, իսկ Յունիսի 4ին⁴⁸ կատարել Ս. Աստուածածին եկեղեցու նաակատիքը:

⁴⁵ «Լոյս արձակող եկեղեցին», <https://armeniasputnik.am/society/20160604/3745359.html>, մատչում՝ 07. 06. 2020:

⁴⁶ Արմէնուի Մխչեան, «Շիրակաան համայնքում եկեղեցի է կառուցուում», <https://armenpress.am/arm/news/807950.html>. նաեւ՝ Վարդան սրկ. Ալեքսանդրեան, «Կառուցուելիք եկեղեցու հիմնարկէքի արարողութիւն Շիրակաան համայնքում», *Ս. Եօթ Վէրք*, Յունիս, 2015:6(186), <http://www.yotverk.am/datei/150631/s150604.htm> մատչում՝ 07. 06. 2020:

⁴⁷ Արարատ սրկ. Սարգսեան, «Խաչի եւ զանգի օծում Շիրակաան համայնքում», *Ս. Եօթ Վէրք*, Փետրուար, 2016:2(194), <http://www.yotverk.am/datei/160231/s160202.htm> մատչում՝ 07. 06. 2020:

⁴⁸ Ավարդ Կաղզուանցեան, «Տէր, բարուօք է մեզ աստ լինել.» օծուեց Շիրակաանի նորակառոյց եկեղեցին», *Ս. Եօթ Վէրք*, Յունիս, 2016:6(198), <http://www.yotverk.am/datei/160631/s160603.htm>. նաեւ՝ «Շիրակաան համայնքում բացուեց 'Սուրբ Աստուածածին' եկեղեցին»,

ՈՊԱՆԴԱՐԵԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Սպանդարեանի Ա. Ամենափրկիչ եկեղեցին կառուցուել է 2001ին՝ համայնքի նախկին բնակիչ Արտուշ Մկրտչեանի եւ իր որդիների բարերարութեամբ: Պարսպապատման աշխատանքները կատարուել են Յովիկ Սարգսեանի հովանատրութեամբ: Եկեղեցին օծուել է 2001 Նոյեմբերի 6ին⁴⁹ ձեռամբ ՏԻՐ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանի: Աւելի ուշ Ակսել Ստեփանեանը, որը 2016ից եկեղեցու խաչքաւորն էր, խաչ ու զանգ է նուիրել եկեղեցուն⁵⁰: Զանգն օծուել է 2016 Մայիսի 23ին⁵¹ ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Աջապահեան եպիսկոպոսի:

ՈՍԿԵՀԱՄԿԻ ՍՈՒՐԲ ՆԱՐԵԿ ԵԿԵՂԵՑԻ

Ոսկեհասկի Ա. Նարեկ եկեղեցին կառուցուել է Մուկաբանակ Մխիթարեան ընտանիքի բարերարութեամբ: Եկեղեցին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջեանի, օծուել է 2005 Յուլիսի 10ին⁵² Եւ իր հիւրընկալ դռներն է բացել բարեպաշտ հայորդիների առջեւ:

ՈՍԿԵՀԱՄԿԻ ՍՈՒՐԲ ՈՍԿԵԿՈՂ ԱՒԵՏԱՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ոսկեհասկի Ա. Ոսկեկող Աւետարան եկեղեցին կառուցուել է 2015ին Վարդան Ասատրեանի բարերարութեամբ: Եկեղեցին կառուցուել է ընտանեկան սրբութիւն «Ոսկեկող Աւետարան»ի⁵³ պատուին: Աւետարանը

<http://shirak.mtad.am/news/item/2016/06/04/sirakavan/>. նաեւ՝

«<https://www.youtube.com/watch?v=oCBEPlJaCYg>». նաեւ՝

«<https://www.youtube.com/watch?v=5Fe6KqxyoHc> մատչում՝ 07. 06. 2020:

⁴⁹ Գ. «Հոգեւոր-եկեղեցական կեանք», *Էջմիածին*, 2002:Ա., էջ 32. նաեւ՝ «Շիրակի թեմ», *Էջմիածին*, 2002:Ա., էջ 62

[http://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2002/2002\(1\).pdf](http://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2002/2002(1).pdf), մատչում՝ 07. 06. 2020:

⁵⁰ Մարտիրոսեան, Սարովանեան. նաեւ՝ «Շիրակի մարզի Սպանդարեան գիւղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու զանգի տեղադրումը»,

<https://www.youtube.com/watch?v=E2gOTYOBHJl> մատչում՝ 07. 06. 2020:

⁵¹ Լեւոն քնյ. Յովհաննիսեան, «Զանգի օծում Արթիկի թեմի Սպանդարեան համայնքում», *Ս. Եօթ Վերք*, Մայիս, 2016:5(197),

<http://www.yotverk.am/datei/160531/s160506.htm> մատչում՝ 07. 06. 2020:

⁵² Ա. Կաղզուանցեան, «Օծուեց Ոսկեհասկի Ա. Նարեկ մատուղը», *Ս. Եօթ Վերք*, Յուլիս, 2005:7(67),

<http://webcache.googleusercontent.com/search?q=cache:vS8zB2eujgJ:www.yotverk.am/datei/050731/s050704.htm+&cd=2&hl=en&ct=clnk&gl=am>, մատչում՝ 08. 06. 2020:

⁵³ Աւետարանի մասին տե՛ս՝ *Ոսկեկող Աւետարան եկեղեցի (Ոսկեհասկ)* ֆիլմը (բեմադրի հեղինակ եւ ռեժիսոր՝ Արթուր Էշար, գլխատր օպերատոր՝ Մարտին Սուքիասեան), <https://www.youtube.com/watch?v=nAzbvAGbbIQ>, մատչում՝ 08. 06. 2020:

տպագրուել է 1732ին Վենետիկում, ապա յայտնուել Մշոյ Ավվադինջ գիւղում, անցել գաղթի ճամփաներով, հասել Գիւմրի, այնուհետեւ հանգրոսանել Ոսկեհասկում: Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Վարդան Շախուպեանը, իսկ շինարարական աշխատանքները ղեկավարել է Գուրգէն Մարտիկեանը⁵⁴: Եկեղեցին ունի խաչաձեւ կենտրոնագմբէթ յօրինուածք: Կառուցուել է սրբատաշ դեղնաւուն տուֆով: Մատուռը մեծ հանդիսութեամբ բացուել է 2017 Յունուարի 13ին⁵⁵:

Այսպիսով՝ 1991ից յետոյ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետերն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր արհեստամիջոցներ, լուծումներ ու մտայղացումներ, նորակառոյց եկեղեցիները, այդ թում նաեւ Շիրակի մարզի եկեղեցիները, գլխատրապէս նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան լուսագոյն ասանդները:

THE NEWLY CONSTRUCTED CHURCHES OF THE SHIRAK REGION IN THE REPUBLIC OF ARMENIA (1991-2017)

(Summary)

ARMAN MALOYAN (armanmaloyan1976@gmail.com)

The architectural school of Shirak (Ani-Shirak), with its talented architects, master builders and khachkar masters, occupies an outstanding place in the history of medieval Armenian Church architecture.

As of 1991, with the proclamation of independence in the Republic of Armenia, Armenian Church architecture has experienced a revival and a new period of growth. Modern Armenian architects and master builders, have applied new ideas, solutions and technologies to the newly built churches in line with the legacy of the local school of Medieval Armenian Church architecture.

The paper focuses on the newly built churches and chapels of the Shirak region of the Republic of Armenia. It details the architectural forms and characteristics of each construction and highlights their traditional elements.

⁵⁴ Ռաֆիկ Սազեան, *Ոսկեկող Աւերասրան*, Արմա հրատ., Երեւան, 2017, էջ 12-13:

⁵⁵ «Մատուռի բացման արարողութիւն Ոսկեհասկ գիւղում», <http://shirak.mtad.am/news/item/2017/01/13/voske/>, https://www.youtube.com/watch?time_continue=35&v=rQczsM30RaE&feature=emb_logo մատչում՝ 08. 06. 2020:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՔՐԻՍՏՈՑԵՐ ՈՒՈՔԸՐ
(1942–2017)

Քրիստոֆըր Ուոքըր ծնած էր 1942ին, Անգլիա: Բաժնրագրյն ուսումը ստացած էր Լանսինկ Քոլեճի եւ Օքսֆորդի Պրասնոգ Քոլեճին մէջ: Շրջան մը աշխատած էր Սոթսլիգ աճուրդի տան մէջ, ապա՝ Փենկուէն Հրատարակչատան խմբագրական բաժինը: Աշխատակցած էր միջինարեւելեան հարցերով զբաղող պարբերաթերթերու: Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի իր հետաքրքրութիւնը զինք առաջնորդած էր հայերուն: Ուինսթըն Չըրչիլ ուսումնական-ուղեւորական մրցանակը շահած էր եւ այդ միջոցով այցելած Կան, Կարս, Անի, Երեւան եւ Էջմիածին: Նոյն միջոցով 1971ին եկած էր Լիբանան եւ մեկնած Մ. Նահանգներ: Լիբանան իր այցելութեան՝ *Ջարթօնքի* խմբագիր Գերսամ Ահարոնեանի միջոցով ծանօթացած եւ բարեկամացած էի հետը, օժանդակած իրեն եւ պատասխանած իր թագմաթիւ հարցումներուն: Տասնամեակ մը աշխատելէ ետք, 1980ին Անգլիոյ Քրոմ Հելմ եւ Մ. Նահանգներու Սենթ Մարթինգ Փրէս հրատարակչատուները լոյս ընծայեցին իր գիրքը՝ *Armenia, the Survival of a Nation*: Այդ գիրքին մէջ նշուած է որ կենսագրական բաժինը (էջ 379-428) ստորագրեալս տրամադրած է:

Իր կեանքի տեսողութեան, զանազան առիթներով հայանապատ յօդուածներով հանդէս եկած է Լոնտոնի կարեւոր թերթերէն *Թայմզ*ի մէջ եւ այլուր: Հայկական գաղութներ, յատկապէս Մ. Նահանգներ, գիտաժողովներու եւ կամ դասախօսութեանց հրապարակած է: Ոչնչորտ Յովհաննէսեանի *The Armenian People from Ancient to Modern Times* գիրքին Բ. հատորին մէջ գրած է “World War I and the Armenian Genocide” ուսումնասիրութիւնը:

Հելինակած է *Armenia and Karabagh* (1991), *Visions of Ararat (writings on Armenia)* (1997, 2005), *At History's Crossroad: The Making of the Armenian Nation (The Armenians: From Kings and Priests to Merchants and Commissars)* (2006): 1976ին, Տէլվիտ Լենկին հետ գրած է *The Armenians 24* էջնոց գրքոյկը փոքրամասնութեանց իրաւունքներու խոմբին համար: Ռուբէն Գայիջեան Երեւանի մէջ հրատարակած է իր 28 էջնոց *Armenia a Very Brief History* գիրքը²:

Ուոքըր հայկական նիւթերէ գատ այլ նիւթերով այլ հետաքրքրուած էր: Ան լոյս ընծայած էր *Oliver Baldwin: A Life of Dissent* (2003), *Islam and the West* (2005), *Reason and Religion in Late-seventeenth Century England – the Politics and Theology of Radical Dissent* (2013) գիրքերը: Ուոքըր աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէսի* ժե. եւ ժԷ. հատորներուն՝ “Writing about the Armenian Genocide” եւ “Britain and the Armenian Genocide, Reflections in 1995” յօդուածներով:

ԶԱՒԷՆ ՄԱՐԴԼԵԱՆ

¹ Ասոր բարեփոխուած տարբերակը լոյս տեսաւ 1977ին: Գրքոյկը ունեցած է հինգ վերատպութիւն:

² Գիրքը յետագային 52 էջի վերածուած է եւ իր անունով լոյս տեսած է: Գիրքին 36-41 էջերը գրուած են ուրիշի մը կողմէ առանց իր գիտակցութեան:

ՌԴ ՊԵՐԹ ԹԻՆԱՆԸ
(1934–2018)



Լ. Նահանգներու ոչ-հայ հայագէտներու մեծա-
ւոյն ներկայացուցիչներէն փրոֆեսոր Բուպրո
Ռիփիմ Թոնան ծնած է 24 Մարտ 1934ին, Անգ-
լիա: Համալսարանական կրթութիւնը ստացած է
Անգլիոյ Քեմպրիժ Համալսարանին մէջ (մագիստր-
ական՝ 1958, դոկտորական՝ 1962): Հետեւելով
փրոֆեսոր Կարիթի դասընթացներուն եւ խորա-
ւալով հ.ս.երէնի, արաբերէնի եւ վրացերէնի մշջ
Պեյքիքայ Լուսն Համալսարանէն ստացած է նա-
եւ միջինարեւելեան լեզուներ դասատուելոյ վկա-
յագիր (1962): Արդէն 1958ին կը ս.ս.ու հայերէն սորվիլ, ստաջին դասեր սովորելով
Վիննայի մէջ Թոնանը առիթ կ'ունենայ առիթ մը Բուսակոյ Ինստիտուտի Հոմերոսի
Ի հոոլոցիքոլ Ըոլ ճջի դասընթացներուն. այնուհետեւ մի քանի ամառ վերադառնալու
հոն եւ գիտահետազոտական որոնումներ կատարելու Ինստիտուտէն մինչեւ Տրայի-
զոն երկարող թիզանդական, յունական եւ հայկական հնավաւոյններու մէջ: Պարզ մէջ
ան կապեր կը հաստատէ հայոց պատրիարքի եւ հայ համայնքին հետ:

1960-61՝ Տամպլթըն Օքսի զրտեր գլխաւորող ըլլալով Թոնանը կը ծանո-
թանայ մեծամ.ոն արուեստագիտ, թուանդագէտ-մանրամասնաբան Սիրարփի
Տըլնեյր.սեանսին, ոյ տեսելով Թոնանի գեղազօտութիւնը Ս. Արամասիոս Աղեց-
սանրաւոյի առիւթով եւ հայերէն բնագրերուն մասին, Լ.ճոյն, անոր եւ գայ. կը մղ.
հաղկական անուղեւած: այ պրպտումներու: ՏԼնննրսւսան Թոնանը կը մղ. նաւ.
կրթալու Հարվըտ. ոյ Պրտունի եւ շրջակայից հայերը եւ ջանային հայկական
ամբող մը հաստատել, ոյ Աետիս Անննան արդէն պաշտօնակոչուած էր իբրեւ
կրտելը գիտաշրատող: 1961-63 ան կը պաշտօնակոչուի Հարվըտ Համալսարան,
որուն հայագիտական ամբիոնին (ե.ս.քը վերանուանուած Մետրոպ Մաշտոցի անու-
նով) վարիչը կ'ըլլայ 1969ին 1990: Իր ջանքերով հայագիտութիւնը կը տեղադրուի
Հարվըտի դաստի թերու ջոզումսին վրայ եւ կը հրամցուի այն հոգի ազիտու ուսա-
նողներուն, ոյմնք կրնային հետաքըքրում ըլլա հոգաւորական նիւթերով: Այս
շրջանին Ս. Նահանգներու արեւմտեան նահանգներուն մէջ Իս. ազիտութիւն ուրոյն
տեղ կը սկսի գրան թիզանդագիտութեան մեծ թ.արուշսին լէջ. հակառակ որ ըն ոմ-
սընր հետաքըքրութիւնները յատկապէս հայ մասեւագրութեան եւ հայ դասական
ու միջնադարեան պատմութեան շրջաններուն կ'առնուիլին: Ըն ոմ.ըն կը հաստտէ
թ. կը սիրել դասասանել, եւ թէ՛ գիտէի, շուրջս ուիչ ոչ ոչ հայերէն պիտի դասա-
անել էր...: Ա նուհանոն՝ 1993-2001, ան կը պաշտօնակոչուի Օքսֆորտի Համալսար-
անի Գրտու. Կիլլակնէլէանի անուան հաւաւորական ուսմանց ամբիոնի վարիչի
պաշտօնին:

1979-83՝ Եղած է կրկ պատշաւուր Տամպլթըն Օքսի մէջ. միամասնաւ.
1984-89. վարած անոր հետազօտական գրաւարանին եւ հասարակարգի տնօրէնու-
թանը, հասել եղած է պատրաստակարար անդամը նրջն հաստատութեան: Ըն ոմ.ըն հիմնա-
դիւ-անդամ էր the Society for Armenian Studiesի, ապա անոր ակադեմական խոր-
հրդաւարութեան մարմնին անենապետը եղած էր երկար տարիներ:

Թոնանի նպատը բացատրիկ լէծ է հայկական, ասորական, վրացական եւ թիւ-
զանդական սպատագիտութեան եւ բանասիրութեան:

Անոր հայագիտական բերքին ոչ-ամբողջական ցանկը կ'ընդգրկե հետևեալները.- *The Teaching of Saint Gregory: An Early Armenian Catechism* (1970), *An Introduction to Classical Armenian* (1975), *A Textbook of Modern Western Armenian* (Գէորգ Պարտաբնեալի հետ, 1977), *Studies in Armenian Literature and Christianity* (1994), *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD* (1995), *Rewriting Caucasian History: The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles. The Original Georgian Texts and The Armenian Adaptation* (1996), *Saint Basil of Caesarea and Armenian Cosmology* (2012):

Ան մեծ նպաստ ունի վրացի, ասորի րայց մանաանդ հայ մատենագիրներու երկերուն անգլերէն թարգմանութեան, հարուստ ծանօթագրութեան ու հրատարակութեան գործին: Իր թարգմանութեամբ լոյս տեսած են.- *Agatangeghos: History of the Armenians* (1976, 2001), *Moses Khorenatsi: History of the Armenians* (1978, 2006), *History of Vardan and the Armenian War* (1982), *Definitions and Divisions of Philosophy by David the Invincible Philosopher* (1983), *History of the House of Artsrunik* (1985), *The Historical Compilation of Vardan Arewelc'i* (1989), *The History of Lazar Parpeci* (1991), *The Armenian History Attributed to Sebeos* (Ճէյմս Հաուլըրտ-ճոնսընի եւ Թիմ Կրիստուտի հետ, 1999), *The Lawcode (Datastanagirk) of Mxitar Gos* (2000), *The Armenian Adaptation of the Ecclesiastical History of Socrates Scholasticus* (2001), *Hamam, Commentary on the Book of Proverbs* (2005), *Nersēs of Lambron: Commentary on the Dormition of Saint John* (2007, 2017):

Իր երկերէն ոճանց երկրորդ հրատարակութիւնը ենթարկուած է լրամշակման: Եղան է պարագան իր բազմաթիւ յօդուած ուսումնասիրութիւններուն, որոնք ունեցած են մասնակի կամ ծաայուն վերամշակումներ՝ իրենց երկրորդ հրատարակութիւններուն առնել:

Թմուցնի հայագիտական նպաստին մէկ իւրայատկութիւնը այն է, որ ան հայ միջնադարեան մատենագրութիւնը, Հայաստանի քրիստոնէացումը, վաղ միջնադարու Հայաստանի պատմութիւնը դիտած է Կովկաս-Բիւզանդիոն-Իրան եւ շրջանի ժողովուրդներու մշակութաբանական փոխառնչութիւններու համապատկերին մէջ: Անոր հետազօտութիւններուն կարգ մը խնդրայարոյց եզրայանգումներու ու մեկնաբանութիւնները դոտ բացին սուր հակադրութիւններու, որոնք երբեմն դուրս եկան իրենց գիտական ճիրէն:

Ակադեմական իր ուսումնասիրութիւններուն կողքին, Թմուցն մասնակցած է դասախօսութիւններու, գիտաժողովներու՝ հայոց լեզուի, հայ քնագրագիտութեան, ինքնութեան եւ ծովման, հայագիտութեան հորիզոնին, հայ իրականութեան ժողովրդավարութեան եւ հեղինակութեան մասին:

Ոչ-հայ հայագէտներու քնտրանքին ամենաբերուն առաջին հնգեակին մաս կազմող փրոֆեսոր Բոպորթ Թմուցն մահացաւ 20 Եղևմեք 2018ին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)

ԱՐԱ ԿԻՒԼԷՐ
(1928–2018)

«Պոլսոյ այք» անունով յայտնի լուսանկարիչ Արա Կիւլեր ծնած է Իսթանպուլ, 16 Օգոստոս 1928ին: Մինչեւ միջնակարգ եղած է Բանկայթի Մխիթարեան Վարժարանի աշակերտ, ապա շրջանաարտած է Պոլսոյ Կեդրոնականը՝ 1951ին: Հայրը դեղագործ ըլլալով հանդերձ բազմաթիւ արուեստագէտ բարեկամներ ունէր, որոնց

հետ շվուռով՝ ան սկիզբը որդեգրեց ֆիլմ-սինեմայի ասպարեզը, հետևեցա Աուի-սին Էրթոտյուպի թատերական դասընթացներուն, ապա թեքեցա մամուլին, իրեն ֆոթոթղթակից աշխատակցեցա *Ենի Նսթանպոլին*, Հիլրիդէթին, միաժամանակ Իսթանպուլի Համալսարանին մէջ հետևեցա տնտեսագիտութեան:

1958ին երբ *Time-Life* (Թուրքիոյ իր մասնաճիւղը բացա՝ Կիլեր դարձա անոր սկզբնական թղթակիցը եւ հոջակուելով աշխակացեցա *Starrին*, *Paris Match*ին եւ *Sunday Times*ին, միաժամանակ միացա *Magnum Photos*ին ու տեղ գրանց *British Photography*ի 1961ի տարեգիրքին մէջ, նոյն տարին *American Society of Magazine Photographers*ը զինք անդամագրեց իրեն առաջին թրքական լուսանկարիչը:

1960ականներէն Կիլերի արուեստի եւ պատմութեան նւիրումը լուսանկարները օգտագործուեցան հեղինակներու եւ *Horizon, Life, Time* եւ *Newsweek*ի կողմէ, ցուցադրուեցան՝ ցուցահանդէսներու մէջ: 1968ին իր գործերը ցուցադրուեցան Նիւ Եորքի *Museum of Modern Art*ի *Ten Masters of Color Photography* ցուցադրութեանը, այնուհետեւ նաեւ լուսանկարչութեան միջազգային ցուցահանդէսներու մէջ:



1970ականներուն լուսանկարչական հարցադրոյցներ ունեցա Սալվատոր Տալիի, Մաքք Շակալի, Էսալ Էսըմզի, Ալֆրէտ Հիչքորթի, Կիլի Պրանստի, Սարվա Քալասի, Պերթրլնտ Ռասլլի, Փայլօ Փիքաստի, Ինտիրա Կանտիի, Ուինսթըն Չրիլիի եւ այլոց հետ: Բնադրեց նաեւ *The End of the Hero* վանդագրական ֆիլմը 1975ին՝ Ա. աշխարհամարտին մասին: Իր լուսանկարները կը պահպանուին աշխարհի տարբեր հասարածներու մէջ: Իր ասպարեզին բերմամբ ճամփորդեց Քենիա, Պորնո, Նիւ Կիւնի, Հնդկաստան, Փաքիստան, Աֆղանիստան, Ղազախստան, Իրան եւ Թուրքիոյ նեիրտեր:

Կիլերի կենսագործունէութեան մասին դրուատիքով կը խօսի Նեզհի Թալաս իր հրատարակած *Foto Muhabiri* գիրքին մէջ:

Կիլեր մեծ կարեւորութիւն կու տար իր լուսանկարներուն մէջ երեցող մարդոց, ինքզինք կը նկատեր անկոյր պատմաբան: Ըստ իրեն լուսանկարը պարտի ցոյց տալ մարդիկը իրենց կեանքի եւ տառապանքի յիշողութեամբ:

«Թուրքիոյ քաններորդ դարու լուսանկարիչը»ի մրցանակակիր (1999), «Թուրքիոյ մշակոյթի եւ արուեստի մեծ մրցանակ»ակիր (2005) Արա Կիլեր արժանացած է մեծամեծ պատիւներու՝ Թուրքիոյ եւ աշխարհի տարբեր մայրաքաղաքներու մէջ:


Արա Կիլերի հայագիտութեան նպատը կը կայանայ մանաւանդ իր նկարագիրներուն մէջ:– *Living in Turkey* (1992, 1993), *Sinan: Architect of Süleyman the Magnificent* (1992), *Ara Güler's Creative Americans, Ara Güler's Movie Directors* (1989) եւ *Ara Güler: Photographs* (1980), ուր կը տեսնենք իմիջիպօլը Հայկական Կիլալթըներու, գառաղի եւ հայաբնակ վայրերու հայկական մշակոյթի եւ կենցաղի կոթողներու փաստաւկերագրական լուսանկարներ, որոնք յետեղեցնեան ժամանակի ամենէն անորոջական հասարածն կը կազմեն: Իր կը հաշու, շուրջ 800,000 լուսասահիկներ:

Արա Կիլեր նաեւ գրող է. իր առաջին գրութիւնը լոյս տեսած է Հապէր թերթին մէջ: 1950ին, իր «Կարգանդի տարօրինակ գիշեր մը» պատմածքով դասուած է թուրք լաւագոյն նորավիպագիրներու կարգին. Ասկայն հեռոցիսէ կը դասնայ հայ գրական կալուած, *Ժամանակ* թերթին մէջ վարելով գեղարուեստական բաժնի

խմբագրությունը և Մխրթարեան Սանուց Մուրթեան Սան, Կեղղոնական Ճանուց Միութեան Հանդէս Մշակոյթի եւ Ճառագայթ գրական հանդէսներուն շարձաթարթիւն մեջ հիսուսարակելով իր պատմութեանը հերոսը, որոնք այրուեստի նորագոյն դպրոցներու ազդեցութիւնը կր կրնէ:

Արա Կիլիկ մ. յ. յ. 17 Հոկտեմբեր 2018ին ա թողունքա Պոլսոյ հաշտառ Շիլլի շրջանի հայական գերեզմանատան մէջ: Պիտրոյի Ա. Երրորդութիւն կկկկկկոյ իր յուրակապութեան ասան հրապարակընցաւ Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Էրտողանի ցաակցական պատգամը:

<<<



ԱՐԱ ԿԻԼԻԿ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (1928–2019)

Արամապր բանագլտ, հայազգ. թարգմանագլտ Ապրիլի Զարթոսթիմուկի Յարութիւնանը ծնուկ է ալաշկերտի եւ մշեզի ծնողների ընտանիքում, 22 Սեպտեմբերի 1928ին, Ղազակի գիւղ, Շիրակի մարզ: Նա փոքրուց հաղորդակից է եղել ժողովրդական բառ ո. բանին, հասատալիքներին եւ վիպաշխարհին:

Ի. Դպի կկկկկկ Յար թիմանը դարձկ կր հայազխտութեան եւ մասնապրտակն հայ բանագլտութեան նուիրուած ժրպան մշակը: Այս բորտում նա ճանաչուած հեղինակութիւն էր եւ ՝ թէ՛ Հայաստանում, թէ՛ արտերկրում: Իրասուք վաստակելով «հայ բանագլտութեան նահապետ» ա նապաշտոն տիտըրը՝ Յարութիւնանը հայ բանահիտութեան շնորհալի կրողն ու վերապատմողն էր նաեւ:

1940ին Յարութիւնանների ընտանիքը տեղափոխուել է Թբիլիսի: 1947ին ընդունուած է ԴԿ բանագլտընքան. Գալուրիտի արուելեան բաժնի, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու եւ գրականութիւն: Եղկ է Ա. Սեփան Մալխասանցի եւ Անտիք Իսահականի անտանանն թշակարտը: Նաւորակն տարիներէջ: անհանդի իրանական մշակութիւն՝ նա թրծում ՝ որպէս լայնածիր ընդհանրան հայագետ, որը բազատեղեակ էր նաեւ հարեան ժողովրդների փոխանցութիւններին ու պատմամշակութային կապերին⁵: Համալարանում Յարութիւնաննին բախտ է վիճակում ունկնորե ու Հրաչեայ Աճառեանի, Գրիգոր Ղափանցեանի, Էղուար Աղայեանի, Վ. Բորան Միլիքեանի դ. ա. ա. ու թիւնները: 1952ին Յարութիւնանն անարտան. ՝ գրում «Պարակիրնի՝ տարրերը Մայեթը-Նուրիի հայերն խաղերում» թանալով:

1952-56՝ աշխատկ է Հայպոլիգրափիատ եւ արքի անալիի վարչութիւններում: 1959ին պաշտպանկ է թեկնածուական «Հայ ժողովրդական հանկը մկեր» նիթով, 1971ին՝ դոկտորական՝ «Մանուկ Արեղեան. կանն ու գրծը» նիթով: 1956ից, Յարութիւնանի գիտական գործունէութիւնն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Մ Արեղեանի անուն գրականութեան ինստիտուտում: 1950ին նա տեղափոխուել է Ակադեմիալի

⁵ Նա իր գիտական պրոպուններն ընթացրում քազմից. անդրադառնում է հայերի հետ ընուց շխաններ ունեցած ձգակից ժողովրդների մշակութիւններին:

նորակազմ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ (ՀԱԻ), ուր աշխատել է սկզբում՝ իրրե կրտսեր, այնուհետեւ՝ ասագ գիտաշխատող, եւ իր հարուստ գիտելիքները երիտասարդներին է փոխանցել մինչեւ իր մահը՝ հայ ժողովրդական բանահիտության բաժնում: **1995-2018**՝ եղել է հայ բանահիտության գծով գլխատր գիտաշխատող եւ ղեկավարել ՀԱԻ բանահիտության տնտեսական եւ պատմության բաժինը: **1971-73**՝ եղել է «Ասանայ ծռեր»-ի նոր պատումների գրառման նպատակալին գիտարշաախմբի ղեկավար, **1972-2003**՝ բանահիտական սկզբնաղբիրների վաներագրման բաժնի վարիչ: **1992-2007**՝ եղել է ՀԱԻ-ի գիտական գծով փոխտնօրէնը: **2000**ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Յարուբնեանը ղեռ երիտասարդ տարիքից է իրեն դրսեորել որպէս գիտութեան բանիմաց կազմակերպիչ: **1971**ին նորագոյն մեթոդներով բանահիտական արխիւային նիւթերի գիտական դասատրման, մշակման եւ վաերագրման նպատակով, նրա ղեկավարութեամբ կազմատրուեց աշխատանքային խումբ, որի հիման վրայ ստեղծուեց բանահիտական սկիզբնաղբիրների վաերագրման բաժինը: Այդ աշխատանքներին զուգահեռ՝ ընթացել է հայ ժողովրդական **16,000** երգ-խաղիկների մոտիւային իր բանագիտական ցործունէութիւնը սկսել է նշանատր բանագէտ, ակադեմիկոս Արամ Ղանայանեանի ղեկավարութեամբ, սակայն նրա համար գիտական անաաարկելի հեղինակութեան եւ «հեռակայ գիտական ուսուցչի» դեր է խաղացել հայ մեծաուտ բանատր Աբեղեանը: Ինք է կազմել, ծանօթագրել եւ խմբագրել Աբեղեանի երկերի ութհատրեակի է. եւ Ը. հատրները (**1975, 1985**):

Ժաանագելով է ամբողջ էութեամբ իւրացնելով Աբեղեանի յաագոյն ասանդեները՝ Յարուբնեանը յաջողութեամբ խորամուխ եղաւ վիպական բանահիտութեան յատկապէս հայոց ազգային հերոսավէպի, հմայական բանահիտութեան տարբեր սեների՝ առասպելաբանութեան, հայ հին գրականութեան, բանագիտութեան պատմութեան, արեւելագիտութեան բնագաատներին: Իր բազմամեայ հետազոտական աշխատանքը նշանատրուեց մի շարք կրթողային մենագրութիւններով, ինչպէս.- *Հայ ժողովրդական հանելուկներ* (**1960**), իսկ **1965**ին՝ բնագրերի համահաար գիտաքննական ներկայացմամբ), *Անէծքի եւ օրհնակրի ժաերը հայ բնահիտութեան մէջ* (**1975**), *Հայ հմայական եւ ժողովրդական աղթքներ* (**2006**), դարցական տարիքի երեխաների համար նախատեսուած *Հայ հին վիպաշխարհը* (**1987**), *Հայ առասպելաբանութիւն* (**2000**), *Հին հայոց հաաւարայիքները, պաշտամուեքը, կրօն եւ դիցարանը* (**2001**):

Հայոց հեթանոսական առասպելների եւ ժողովրդական հաատայիքների վերաբերեալ Յարուբնեանի ուսումնասիրութիւնները՝ թէեւ ամփոփ, քայց խիստ տարողունակ եւ հարուստ շարաղանքով, տեղ գտան Մոսկուայում լոյս տեսած *Мифы народов мара* (Աշխարհի ժողովուրդների առասպելները) երկհատր հանրագիտարանում (**1981, 1982**, վերիւտ. **1990**):

Յարուբնեանի բանագիտական ցործունէութեան միա կարեոր բնագաատն ընդգրկում է հմայական բանահիտութեան գրեթէ բոլոր կարեոր ժանրերը՝ անէծքները, օրհնանքները, աղթքները: Բանաձեալային բանարուեստի այս փոքրաձաալ տեսակները, հենց Յարուբնեանի հետետղական ցանքերի շնորհիւ, մեզանում դրուեցին գիտական ամուր հիմքերի վրայ: Իր աշխատութիւններով Յարուբնեանը սկզբնատրեց հայ ժողովրդական հանելուկների եւ հայ հմայական բանահիտութեան գիտական ուսումնասիրութիւնը:

